Շիրվանշեխ գյուղ — 261
Շխնոց — 296
Շղնոց — 296
Շուշի — 282
Շտուտգարտ — 312
Ուաշինգտոն — 193
Ուիչիտա — 289
Ումուտում — 296
Չարտորիսկի Մատենադարան — 197
Չիկագո — 193
Չիֆթլիկ — 296
Պալատ, Պալաթ. տես՝ Կոստանդինուպոլիս
Պատիշեն — 296
Պարտիզակ — 189
Պետական Մատենադարան. տես՝ Երևան
Պերկամա. տես՝ Բերգամա
Պերուջիա — 344
Ջրառատ — 179
Ջրիկ գյուղ — 261
Ռիմինի — 344
Ռումինիա — 180
Ռստամգետուկ գյուղ — 261
Սանահին — 218, 280
Սան Մարինո — 193
Սեբաստիա — 199, 350, 353
Սիս — 287
Սողչերմուկ — 296
Սուրբ Ամենափրկիչ վանք. տես՝ Նոր-Ջուղա
Սուրբ Առաքելոց-Թարգմանչաց վանք. տես՝ Մուշ
Սուրբ Գևորգի վանք. տես՝ Մուղնի.
Սուրբ Դանիելի վանք. տես՝ Կեսարիա
Սուրբ Թադեոս առաքյալի վանք. տես՝ Արտազ
Սուրբ Թովմա առաքյալի վանք. տես՝ Ագուլիս
Սուրբ Խաչ դպրեվանք. տես՝ Կոստանդինուպոլիս
Սուրբ Կարապետի վանք. տես՝ Երզնկա
Սուրբ Կարապետի վանք. տես՝ Կեսարիա
Սուրբ Կարապետի վանք. տես՝ Մուշ
Սուրբ Հակոբի վանք. տես՝ Երուսաղեմ
Սուրբ Ղազար. տես՝ Վենետիկ
Սուրբ Մեսրոպի վանք — 244
Սուրբ Նշանի վանք. տես՝ Սեբաստիա
Սուրբ Վլաս. տես՝ Հռոմ
Ստանիսլավով — 184
Վասպուրական — 196, 350
Վատիկան — 297
Վենետիկ — 251, 281, 285, 318, 326
Վերի Ակներ գյուղ — 261
Վերծանության Թանգարան Օրթագյուղի. տես՝ Կոստանդինուպոլիս
Վիեննա — 266, 267
Տաթեվ — 211
Տանակերտ գյուղ — 244
Տարոն — 350
Տըպլին. տես՝ Դուբլին
Տինարիգոմ — 296
Տյուբինգեն — 312
Տյուկնուկ գյուղ — 261
Տրանսիլվանիա — 352
Փարիզ — 195, 328, 330, 334
Փերիա գավառ — 257, 259
Փլորենտիա — 299
Քեքեոլու գյուղ — 261
Քյոթահիա. տես՝ Կուտինա
Քրաքով. տես՝ Կրակովիա
Օթտավա — 193
Օքսֆորդ — 332
Ֆիլադելֆիա — 193
Ֆուլդա — 312

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.	= ածական
Ամ.	= Ամատունու ցուցակ (Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի)
Ամեր. վարժ.	= Ամերիկյան վարժարան (Հալեպ)
անգլ.	= անգլերեն
անթվ.	= անթվական
անխոր.	= անխորագիր
Անտ. Մատ.	= Անտոնյան Մատենադարան (Կ. Պոլիս)
ասոր.	= ասորերեն
ար.	= արաբերեն
արխ.	= արխիվ, արխիվային
արտատպ.	= արտատպված, արտատպություն
արքեպս.	= արքեպիսկոպոս
բն.	= բնագիր
ԳԱ	= Գիտությունների Ակադեմիա
Գե.	= Գեորգյան ցուցակ (Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի)
գերմ.	= գերմաներեն
գոյ.	= գոյական
գրադ.	= գրադարան
դ.	= դար
դդ.	= դարեր
եբր.	= եբրայերեն, եբրայական
եկ.	= եկեղեցի
եպս.	= եպիսկոպոս
ևն	= և այլն
Էջմ. Մատ.	= Էջմիածնի Մատենադարան
ընկ.	= ընկերներ, ընկերություն
թ.	= թվական
թթ.	= թվականներ
թարգմ.	= թարգմանիչ, թարգմանեց, թարգմանություն
թղթ.	= թղթապանակ
թվ.	= թվագրություն, թվականություն (aera)
թրք.	= թուրքերեն
ժող.	= ժողովածու
իտալ.	= իտալերեն
լատ.	= լատիներեն
լծ.	= լուծումն, լուծմունք
խոր.	= խորագիր
ծ., ծան.	= ծանոթագրություն
ծավ.	= ծավալ, ծավալով
ծն.	= ծնված, ծնվել է
Կար.	= Կարինյան ցուցակ (Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի)
Կենտր. Պատմ. Արխ.	= Կենտրոնական Պատմական Արխիվ (Թբիլիսի)
Կենտր. վարժ.	= Կենտրոնական վարժարան (Կ. Պոլիս)
կթղ.	= կաթողիկոս, կաթողիկոսական
հայ.	= հայերեն
հայկ.	= հայկական
Հայկ. Մատ. / Հայոց Մատ.	= Հայկական Մատենադարան (Սրբոց Հակոբյանց Մատենադարան, Երուսաղեմ)
Հանր. Գրադ.	= Հանրային Գրադարան կամ Հանրապետական Գրադարան (Երևան)
հաս. գիտ.	= հասարակական գիտություններ
հմմտ.	= համեմատել
Հն., հն.	= Հնատիպների բաժին, հնատիպ գիրք
հող.	= հոդված
հուն.	= հունարեն
ՀՍՍՀ	= Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն
ՀՍՍՌ	= Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա
հտ.	= հատոր
հրատ.	= հրատարակիչ, հրատարակություն
Հրց.	= Հարց, Հարցումն
ձեռ.	= ձեռագիր
Ձեռագր. Ինստ.	= Ձեռագրերի Ինստիտուտ (Թբիլիսի)
մատ.	= մատենադարան
մեռ.	= մեռած, մեռել է
Մխիթ. Մատ.	= Մխիթարյան Մատենադարան
մոտ.	= մոտավորապես
յղ.	= յաղագս
Յս.	= Յիսուս
շար.	= շարունակելի

շարվ.	=	*շարվածք (տպագրական)*
ուղղ.	=	*ուղղական (հոլով)*
Ուն.	=	*Ունիկումների բաժին*
Պետ. Թանգ.	=	*Պետական Թանգարան (Թբիլիսի. այստեղի ձեռագրերն այժմ պահվում են Ձեռագրերի Ինստիտուտում)*
Պետ. Կենտր. Պատմ. Արխ.	=	*Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ (Թբիլիսի)*
Պետ. Մատ.	=	*Մաշտոցի անվան Պետական Մատենադարան (Երևան)*
Պետ. Պատմ. Թանգ.	=	*Պետական Պատմական Թանգարան (Երևան)*
պհլ.	=	*պահլավերեն*
Պտ.	=	*Պատասխանի*
պտկրզ.	=	*պատկերազարդ*
պտր.	=	*պատրիարք*
պրսկ.	=	*պարսկերեն*
ռուս.	=	*ռուսերեն*
Ս., ս., սբ.	=	*Սուրբ*
սեռ.	=	*սեռական (հոլով)*
սկ.	=	*սկզբնատող, սկզբնավորություն*
սրկ.	=	*սարկավագ*
վավ.	=	*վավերագիր*
վն.	=	*վան*
վրաց.	=	*վրացերեն*
վրդ.	=	*վարդապետ*
տ.	=	*տող*
տպ.	=	*տպագրություն*
փխ.	=	*փոխանակ*
Քառ.-մանկ.	=	*Քառասուն-մանկունք (եկեղեցի Հալեպում)*
քհ.	=	*քահանա*
Քս.	=	*Քրիստոս*
ֆրնս.	=	*ֆրանսերեն*
арм.	=	армянский (— ая, — ое)
вып.	=	выпуск
Имп. Публ. Библ.	=	Императорская Публичная Библиотека (*Պետերբուրգ*)
Инст. Вост.	=	Институт Востоковедения
рук.	=	рукопись
стр.	=	страница
т.	=	том
ч.	=	часть

Add.	=	Additional
Anc. Fonds	=	Ancien Fonds
Arm.	=	Armenus (codex)
Arm.	=	Arménien (manuscrit)
Ball. Coll.	=	Balliol College
Barb.	=	Barberinianus (codex)
Bd.	=	Band
Bibl. Nat.	=	Bibliothèque Nationale (*Փարիզ*)
Bibl. Vat.	=	Bibliotheca Vaticana (*Հռոմ*)
Bodl. Libr.	=	Bodleian Library (*Օքսֆորդ*)
Borg.	=	Borgianus (codex)
Brit. Mus.	=	British Museum (*Լոնդոն*)
BU	=	Bibliotheca Universitatis (*Լվով*)
Can.	=	Canonici
Chis.	=	Chisianus (codex)
Cod.	=	Codex
etc.	=	etcaetera
fasc.	=	fasciculus (*և ուրիշ լեզուներով*)
fol.	=	folium
Gr.	=	Graecus (codex)
hrsg.	=	herausgegeben
HStB	=	Kaiserliche Hof- und Staatsbibliothek (*Մյունխեն*)
KKHB	=	K. K. Hofbibliothek (*Վիեննա*)
Kön. Bibl.	=	Königliche Bibliothek (*Բեռլին*)
KUB	=	Königliche Universitätsbibliothek (*Տյուբինգեն*)
Lat.	=	Latinus (codex)
Lew. Coll.	=	John Frederick Lewis Collection (Free Library) (*Ֆիլադելֆիա*)
Ms.	=	Manuscriptus
Or.	=	Oriental
p.	=	pagina (*և ուրիշ լեզուներով*)
S.	=	Seite
ser. gr.	=	series graeca
ser. lat.	=	series latina
StB	=	Stadtbibliothek (*Նյուրնբերգ*)
Suppl. Arm.	=	Supplément Arménien
t.	=	tomus (*և ուրիշ լեզուներով*)
Vat.	=	Vaticanus (codex)
vol.	=	volumen (*և ուրիշ լեզուներով*)
WdtB	=	Westdeutsche Bibliothek (*Մարբուրգ*)

ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ

Կիր. — կիրակի
Բշ. — երկուշաբթի
Գշ. — երեքշաբթի
Դշ. — չորեքշաբթի
Եշ. — հինգշաբթի
Ուր. — ուրբաթ
Շբ. — շաբաթ

Ա

ԱՌԱՔԵԼ [ԱՌԱՔԵԱԼ] ՍՅՈՒՆԵՑԻ

Հայտնի է նաև Որոտնեցի մականվամբ։ Հայ բանաստեղծ ու մատենագիր, ծն. մոտ. ԺԴ դարի կեսերին։ Որդի Դավթի և Մելիքի։ Գրիգոր Տաթևացու քեռորդին ու աշակերտն էր։ Սյունյաց եպիսկոպոս և Տաթևի վանահայր է եղել ԺԵ դարի սկզբներին։ Առ. Սյունեցին հայ եկեղեցական բանաստեղծության աչքի ընկնող ներկայացուցիչն է այս շրջանում։ Ունի գիտական, պատմական, ներբողական, փիլիսոփայական, խրատական և հոգևոր բազմաթիվ քերթվածներ ու տաղեր[1], որոնց մեջ նշանավոր է «Ադամգիրք»-ը։ Վերջինս նկարագրական ու մենախոսական ոճով գրված մի ողբերգություն է, որը վիպերգում է աշխարհի ու մարդու ստեղծումը և նախամարդու անկումը, հիմնված՝ Ծննդոց գրքի և հինկտակարանային անվավերականների վրա։ Դա աստվածաբանական իմաստասիրությամբ հագեցված գեղարվեստական մի աշխատություն է, որն ունի բազմաթիվ հաջող հատվածներ։ «Ադամգիրքը»-ը, որ կոչվում է նաև «Դրախտագիրք» կամ «Կողգիրք», ծանոթ է չորս խմբագրություններով։ Առաջին «Ադամգիրք»-ն ունի նույնիսկ երկու տարբեր մշակումներ։ Առ. Սյունեցու չափածո մյուս երկերի շարքին հոգևոր ու բարոյական բնույթ կրող տաղերի մեջ թաքնված են նաև սիրային բազմաթիվ հատվածներ։ Այդպիսիներից է, օրինակ, «Տարփմամբ սիրոյ քեզ տագնապիմ» տաղը, որը հիանալի սիրերգ է. նմանապես՝ «Ահա բաղձամ քեզ ցանկալի», «Ահա մեծ լեառն և ահագին» սկզբնավորությամբ տաղերը և ուրիշ շատեր։ Այդպիսի սիրային հատվածներից քաղվածաբար 19 քառյակներ հրատարակվել են ռուսերեն՝ „Молитва" (Աղոթք) խորագրով, Մ. Կուզմինի թարգմանությամբ[1]։ Առ. Սյունեցին ունի նաև արձակ գրվածքներ՝ մեծ մասամբ անտիպ։ Նրա գիտական և կրոնական արձակ երկերի մի կարևոր մասը մեկնողական բնույթի է, ինչպես են, օրինակ, Դավիթ Անհաղթի «Գիրք Սահմանաց»-ի մեկնությունը, «Քերականության» մեկնությունը, են։ Հեղինակության հարցի տեսակետից հաճախ շփոթվել են Առ. Սյունեցու և Առ. Բաղիշեցու երկերն իրար հետ. այսպես՝ Առ. Բաղիշեցու գործերից «Աստուածածին կոյս պատուական» տաղը ձեռագրերում պատահում է նաև Առ. Սյունեցու անու-

[1] Առ. Սյունեցու տաղաչափության մասին մեր դիտողությունները տեսնել հաջորդ հոդվածում՝ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ

[1] Տես „Антология армянской поэзии с древнейших времен до наших дней" (под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпотина), Москва, 1940, стр. 259—261.

նով[1]։ Ուսումնասիրողների մոտ ավելի մեծ է եղել շփոթությունը Առաքել անունով հայտնի բազմաթիվ բնագրերի վերագրման խնդրում։ Մ. Պոտուրյանը շփոթության ենթակա տաղերի մի մասը ոճական ու տաղաչափական առանձնահատկությունների հիման վրա հաջող կերպով տվել է Առ. Սյունեցուն և նրա հետ միասին մենք ևս ընդունում ենք Առ. Սյունեցու անունով նրա հրատարակած երգերը մինչև ԼԳ-ը ներառյալ։ Մնացածների, ինչպես և մի շարք անտիպների նկատմամբ մենք ունեցել ենք մեր ինքնուրույն կողմնորոշումը. օրինակ՝ մի քանի չափածոների վերաբերմամբ («Ահա մեծ լեառն», «Այրեն մինչև ի ՔեՆ, Այրեն մինչև ի ՔեՆ գոհանամ ես», «Անճառ լոյսն եական», «Գոհար վարդն ի ծոցոյն») Առ. Սյունեցու հեղինակությունը մենք կարողացանք հաստատել Երևանի Պետ. Մատ. № 83 ձեռագրի միջոցով, որի առաջին մասում (էջ 2ա—183բ) Հերապետ Ջուղայեցու կողմից 1664 թվականին ամփոփված և հատուկ հաշվառմամբ դասավորված է Սյունեցու քերթվածների մի մասը։ Մենք Մ. Պոտուրյանի հետ համաձայն ենք նաև այն բանում, որ իր տաղերում իրեն Տէր Առաքեալ անվանողն Առ. Սյունեցին է։ Երկբայելի տաղերը դրել ենք ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ընդհանուր անվան տակ։ Մի քանի արձակ երկերի հեղինակության հարցում ևս ունեցել ենք մեր կողմնորոշումը։ Առ. Սյունեցին ձեռագրերից հայտնի է նաև որպես գրիչ և ծաղկող։ 1407 թ. նա ծաղկել է մի ձեռագիր, որի հիշատակարանում պատմում է իր եղբոր՝ Բարսեղի նահատակության մասին[2]։ Երևանի Պետ. Մատենադարանում գտնվում են նրա ընդօրինակությամբ երկու գրչագրեր, որոնցից մեկը՝ № 2522-ը կրոնական նյութերի մի անթվական ժողովածու է, հետևյալ հիշատակագրությամբ. «Զգծող գրոցս զնուաստոգի տէր Առաքեալ Սիւնեաց յիշեցեք ի Քրիստոս» (էջ 50ա). մյուսը՝ № 3713-ը 1422 թ. գրված մի ավետարան է հետևյալ հիշատակարանով. «Փառք... կատարեցաւ սուրբ և աստուածախօս աւետարանս ձեռամբ տէր Առաքելոյ Սիւնեաց, յանապատիս Անգեղակոթոյ, ի թվիս Հայոց ՊՀԱ ամի» են (էջ 212ա)[1]։ Այն փաստը, թե Առ. Սյունեցին 1422 թ. գտնվում էր Անգեղակոթում և գրչությամբ պարապում, ցույց է տալիս, որ նա հեռացել էր Տաթևի վանահայրությունից և Սյունյաց աթոռից. այդ է հաստատում նաև Թումա Կափայեցին 1421 և 1422 թթ. ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում, նշելով, որ նույն շրջանում Սյունյաց առաջնորդը Սմբատ Օրբելյանի որդի Ստեփանոսն էր[2]։

* * *

ՉԱՓԱԾՈ ԵՐԿԵՐ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Հայ աշուղներ = *Հայ աշուղներ։ Ժողովրդական հայ երգիչներ և տաղասացք։ Հաւաքեց Տրդատ եպս. Պալեան։ Հատոր Ա։ Իզմիր, 1911։*

Քերթուածներ = *Առաքել Սիւնեցի և իր քերթուածները։ Ուսումնասիրութեամբ հրատարակեց Հ. Մկրտիչ Պոտուրեան, ի Մխիթ. ուխտէն։ Վենետիկ, 1914։*

Ros. I = La Roseraie d'Arménie. Tome premier. Arakel de Sunik. Pages Choisies: Visions de l'Enfer et du Ciel; Effusions d'amour spirituel; Le désir du Bien; De la côte; D'où procède le Mal et qu'est-il? et la Sainte Vierge; Le Livre d'Adam. Traduction précédée d'une étude et suivie de notes par Archag Tchobanian. Ouvrage illustré de 29 hors-textes et de 26 gravures. Paris, Ernest Leroux, 1918.

Ros. III = La Roseraie d'Arménie. Tome troisième. Pages choisies des meilleurs poètes du moyen âge et de la période suivante.... Traduction précédée d'une Introduction et accompagnée de notices par Archag Tchobanian... Paris, Librairie Ernest Leroux, 1929.

---

1 Տես սատ, հտ. Ա, էջ 1127, § 4։

2 Հ. Աճառյան, «Ցուցակ հայ. ձեռ. Թավրիզի», Վիեննա, 1910, էջ 82—83։ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայ. ձեռ. հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 602—603։

1 Հմմտ. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայ. ձեռ. հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 292—293։

2 Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2064, էջ 405բ. և Երուսաղեմի հայկ. Մատ. ձեռ. № 1248։ Հմմտ. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայ. ձեռ. հիշ.», մասն Ա, էջ 257—258 և 292։

Ա.—ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ՏԱՂ

Վասն երկոտասան կենդանակերպիցն, երկոտասան ազգաց, և երկոտասան անդամոց, ասացեալ ի յԱռաքել վարդապետէ. *տես՝ «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի», Ա տպ., Նոր-Նախիջևան, 1792 (հունիսի 22), էջ 62—73:*

Բնագրի ներքին բաժանումների մասին տես ստորև:

Այլ տպ.—Վասն երկոտասան կենդանակերպիցն, երկոտասան ազգաց, և երկոտասան անդամոց, ասացեալ ի յԱռաքել վարդապետէ. *տես՝ «Տետրակ համառօտ... Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի», Բ տպ., Նոր-Նախիջևան, 1792 (դեկտեմբերի 17), էջ 56—66:*

Բնագրի ներքին բաժանումների մասին տես ստորև:

Այլ տպ.—Վասն երկոտասան կենդանակերպիցն՝ երկոտասան ազգաց և երկոտասան անդամոց (*հրատ. Մ. Պոտուրյան*). *տես՝ «Բերթուածներ», էջ 177—192:*

Բնագիրը, որ 86 տուն է, բաժանված է հետևյալ մասերի, որոնք ձեռագրերում պատահում են նաև առանձին.

—Աշխարհս ունի ըզձև մարդոյ, Երկոտասան անդամք մարմնոյ, Կենդանակերպքն ըստ խորհըրդոյ է բաժանեալ վերայ մարդոյ. «Խոյն է գըլուխ՝ որ է պարսիկ, | Յուլն պարանոց՝ Բաբելացիք...»:

10 տուն: 6-րդ տունը՝ «Տէր Առաքել գրեցի զայս բան՝ | Ի յայտնութիւն մըտաց մարդկան, | Զի որք լըսեն ճարտարանան, Ի քըննութիւն բանիս փութան»:

—Վասն եօթն մոլորակացն և երկոտասան կենդանակերպացն՝ թէ ո՞րք որոյ են, կամ ո՞րպէս ընթանան, և կամ զի՞նչ է գործ նոցա. «Կան եօթն աստեղք մոլորական, | Կենդանակերպք երկոտասան...»:

37 տուն:

—Վասն երկոտասան հողմոցն. «Հընչեալ հողմունքըն զանազան, | Ի չորս կողմանց աշխարհի զան...»:

11 տուն:

—Վասն թուոց աստեղաց կենդանակերպից. «Խոյն որ իշխան է ամպրոպայ, | Տասնևվեց աստղ կայ ի նըմայ...»:

11 տուն:

—Վասն ընթացից արեգական՝ առ կենդանակերպսն. «Այլ և յայտնեալ մեկնեմ զայս բան, | Յատուկ յատուկ առանձնական...»:

4 տուն:

—Թէ յորո՞ւմ աւուր ամսոյն մտանէ արեգակն ի կենդանակերպսն. «Ի քսան ՚ւ երկուսըն մարտ ամսին, | ՚Ի ի չորեքտասան արեգի...»:

13 տուն:

Հրատարակվել է նախորդ տպագրությունների (Նոր-Նախիջևան, 1792) և Վենետիկյան № 1119 և 780 ձեռ. օրինակների հիման վրա: Սույն տպագրության մեջ զետեղվող վերջին գլուխը, որ է՝ «Թէ յորո՞ւմ աւուր ամսոյն մտանէ արեգակն ի կենդանակերպսն», *բացակայում է նախորդ հրատարակություններում:*

□ *Բնագրի ձեռ. օրինակներում գտնվում են ուրիշ գլուխներ ևս, ավելի կամ պակաս թվով: Այսպես՝ Երևանի Պետ. Մատ. № 5613 ձեռագրում (էջ 186ա — 194բ) կան նաև հետևյալ գլուխները.*

—Թէ յորո՞ւմ ժամու մտանէ արեգակն ի կենդանակերպսն. «Յորժամ ի խոյն գայ մըտանի. | ԺԲ. ժամն ի տըւընջենի..» *(էջ 192ա—192բ):*

7 տուն:

—Վասն ժամուց անուանքն. «Այլ և զասիկ (sic) ցուցեալ յայտնեմ | Զանուանք ժամուց թէ ո՛րպէս են...» *(էջ 192բ — 193ա):*

8 տուն:

—Աւուրք պահպանութեան այս են. «Յունվար Բ. և ի Դ.ին, | Փետրվարի Զ. և ի Ի.ին...» (էջ 193ա — 193բ):

4 տուն:

—Վասն երկոտասան կենդանակերպից թէ ո՞րպէս ունին զբնութիւն չորից տարերացս. «Կենդանակերպքն ամենեքին | Զբնութիւն տարերց[1] այսպէս ունին...» (*էջ 193բ*)։

2 տուն։

—Վասն ազգմանց կենդանակերպիցն և մոլորակաց, թէ ո՞րպէս ազդեն առ միմեանս ըստ բնութեան իւրեանց. «Կենդանակերպքն ամենեքին | Ըզգործ բնութեանըն զոր ունին, | Երեսուն օր ազդեն մին մին...» (*էջ 194ա—194բ*)։

11 տուն։

Այս բնագրից բազմաթիվ օրինակներ կան Երևանի Պետ. Մատ. ձեռագրերում. տես № 35 (էջ 122բ—123ա թերի), № 739 (էջ 48ա—55ա), № 861 (էջ 510բ—514ա), № 1151 (էջ 219ա—222բ), № 1661 (էջ 278բ—284բ), № 1887 (էջ 391բ—396բ), № 2462 (էջ 99բ—102բ թերի), № 3119 (էջ 334ա—339բ), № 3190 (էջ 207ա—214բ), № 3206 (էջ 162ա—168ա), № 3240 (էջ 110ա—115ա), № 3286 (էջ 312բ—317բ), № 3504 (էջ 213բ—217ա), № 4335 (էջ 93բ—96բ), № 5613 (էջ 186ա—193բ), № 6573 (էջ 307ա—311բ), № 6731 (էջ 209բ—210ա թերի), № 7898 (էջ 381բ—384բ), № 8258 (էջ 93բ—104ա) են։ Տես նաև Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. F. 3 (fol. 158v), Ms. Arm. E 12 (fol. 9r). *Արմաշի Մատ. ձեռ. № 208 (էջ 2ա). Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. № 18=հին № 20 (էջ 136բ, ով.* «Խոյն է գլուխն որ են աշխարհն Պարսկական, ցուլն պարանոց որ են կողմանք Բաբելական»)։

Ձեռագրերում բնագրի խորագրերը նման են տպագրին. որոշ ձեռագրեր խորագրում ավելացնում են՝ «...հոմերապէս ոտանաւոր», *և կամ նշում են բնագրի տների ընդհանուր քանակը՝* «...տունս Հ», «...տունս Դ»։ *Որպես սկզբնատող՝ ձեռագրերն ընդհանրապես ցույց են տալիս* «Աշխարհս ունի ըզձև մարդոյ» *բառերը, որոնք իրականության մեջ բնագրի առաջին հատվածի չափածո վերնագրի առաջին բառերն են։*

Բ. — ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ՏԱՂԵՐ

1. Վասն շարական արարողաց. «Յաստուածային շնորհաց վերին, | Իմաստութիւն նոր միածին...» (*հրատ. Մ. Պոտուրյան*), *տես՝ «Քերթուածներ», էջ 321—323։*

13 տուն։ Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 171 (հին) ձեռագրից։ Ձեռագրում խորագիրն՝ է «ՅԱռաքել Սիւնեաց վարդապետէ շինեալ ոտանաւոր վասն շարականաց արարողաց»։

Այլ տպ.—ՅԱռաքելէ Սիւնեաց վարդապետէ շինեալ ոտանաւոր շարականաց արարողաց. «Յաստուածային...» (*հրատ. Հ. Ս. Անասյան*), *տես ատ, հտ. Ա, Երևան, 1959, էջ* LXIX—LXX։

13 տուն։ Սկզբնատառերը՝ «ՅԱռաքել վարդապետէ այս բան յ գ»։ *Վերջում՝ «ՅԱռաքելէ բարեաց անծին, | Ծընեալ եղև բանս ի կարգին, | Զձեզ աղաչեմ զամենեսին՝ | Յիշման առնել զիս ի բարին»։ Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերից. № 2079՝ խոր. նույն (էջ 360բ—361ա) և № 7703՝* «Գովեստ վասն շարականաց» (*էջ 30ա — 31ա*). *օգտագործվել է նաև նախորդ հրատարակությունը։*

2. Անուանք Աստուածաշունչ գրոց, հոթանասուն և երկուց. «Տէր Առաքել դիտող Սիւնեաց, | Զուրկ և թափուր [յ]ամեն շնորհաց, | Զարդարեցի ըզկարգ գրանց...», *տես՝ Ս. Հայկունի, «Բագրևանդ ջրաբաշխ գաւառ», մասն Ա, Էջմիածին, 1894, էջ 375—378։*

33 տուն։ Հրատարակվել է Թավրիզաբնակ Նարիման Մելիք-Զոհրաբյանին պատկանող մի ձեռագրից։

Այլ տպ.—Համառօտ համարք Աստուածաշունչ գրոց. «Տէր Առաքել դիտող Սիւնեաց...», *տես՝* Месроп Тер-Мовсесян, „История перевода Библии на армянский язык", Петербург, 1902, стр. 264—266.

[1] *Ձեռագրում* տարերածոց։

34 տուն։ Միայն հայերեն բնագիրն է, հրատարակված՝ Գր. Խալաթյանցին պատկանող մի ձեռագրի և էջմ. Մատ. № 599 (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. № 702) ձեռագրի հիման վրա։

Այլ տպ.—Նորին Առաքել վարդապետի Սիւնեաց թիւք գրեանց հին և նոր կտակարանաց. «Տէր Առաքել դիտող Սիւնեաց...» *(հրատ. Մ. Պոտուրյան), տես՝ «Բերթուածնիր», էջ 193—198։*

33 տուն։ Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 171 (հին) ձեռ. օրինակի և Մ. Հայկունու հրատարակության հիման վրա։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 702 (էջ 186ա—189բ), № 711 (էջ 116ա—119ա), № 1487 (էջ 50բ—52ա), № 1495 (էջ 135բ—136բ), № 2079 (էջ 359ա—360բ), № 2190 (էջ 72ա—74ա), № 3119 (էջ 339բ—341բ), № 3218 (էջ 333բ—337ա), № 3504 (էջ 217ա—218ա), № 4205 (էջ 470ա—471ա), № 5971 (էջ 266ա—267բ), № 7029 (էջ 183բ—187բ), № 7703 (էջ 5ա—8ա) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ, ձեռ. № 149/1240 (էջ 356բ—360ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1208 (էջ 1009)։*

Բնագիրը, տպագրերում նշված խորագրերից բացի, ձեռագրերում պատահում է նաև «Համարք աստուածաշունչ գրոց» «Յիշատակարան աստուածաշունչ գրոց», «Յաղագս աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց», «Վասն աստուածաշնչին ՀԲ փերբ գրոցն» *և նման խորագրերով։*

3. Տէր Առաքելի եռամեծի և քաջ հռետորի, աշակերտի երից[ս] երանելոյն Գրիգորի Տաթևացւոյ տիեզերալոյս վարդապետի արարեալ բանս։ Գովութիւն ի վերայ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. «Արփիական լոյս երկնային, | Յիսուս Քրիստոս հօր միածին, | Լցեր շնորհիւ քո անքըննին...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք Աղօթից», Կ. Պոլիս, 1700, հավելված՝ էջ 145—149։*

Այբբենական կարգով, 36 տուն։

Այլ տպ. — Տէր Առաքելի *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1726, էջ 395—397։*

Այլ տպ. — Տէր Առաքելի *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1736, էջ 525—528։*

Այլ տպ. — Տէր Առաքելի *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1755, էջ 528—530։*

Այլ տպ. — Տէր Առաքելի *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1763, էջ 593—596։*

Այլ տպ. — Տէր Առաքելի *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1782, էջ 593—596։*

Այլ տպ. — Տէր Առաքելայ եռամեծ հռետորի՝ աշակերտի երիցս երանելւոյ Գրիգորի Տաթևացւոյ տիեզերալոյս վարդապետի ասացեալ սոյն ներբողեան ի սուրբ Գրիգոր Նարեկացին. «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Գիրք աղօթից», Կ. Պոլիս, 1807, մասն Բ, էջ 231—234։*

Այլ տպ. — Տէր Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան ի սուրբ Գրիգոր Նարեկացին. «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1845, էջ 329—332։*

Այլ տպ.—Տէր Առաքել *ևն.* «Արփիական...», *տես՝ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1850, էջ 325—328։*

Այլ տպ. — Տէր Առաքել *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1852, էջ 363—366։*

Այլ տպ. — Տէր Առաքել *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1858, էջ 319—322։*

Այլ տպ. — Տէր Առաքել *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1864, էջ 437—440։*

Այլ տպ. — Տէր Առաքել *ևն.* «Արփիական...», *տես՝ Գր. Նարեկացի, «Մատենագրութիւնք», Թիֆլիս, 1905, էջ 366—369։*

Այլ տպ.— Անձինք Նարեկացւոյն. «Արփիական...» (*հրատ. Մ. Պոտուրյան*), *տես*՝ «*Բերթուածներ*», *էջ 301—307*։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. «Հուաքումն ոտանաւորաց Ը» ձեռագրից։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. №2083 (էջ 338բ—341բ), №3498 (էջ 272ա—274բ), №3895 (էջ 2ա—4ա), №4272 (էջ 2ա—4բ), №5085 (էջ 259ա—261բ), №5177 (էջ 1բ—3ա), №6933 (էջ 48ա—51ա), №8702 (էջ 7ա—10բ թերի), № 8793 (էջ 181բ—183ա)։ Տես դարձյալ Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 79 (fol. 26r-v). *Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. №3=հին №1 (էջ 213բ)։*

Որոշ օրինակներում, ինչպես Երևանի վերոնշյալ №3895 ձեռագրում, հեղինակը տաղի վերջում ունի հետևյալ հիշատակարանը. «Յամենամեղ և եղկելի, | Այսքան բանիբուս շարագրի, | Ոսկին քաղցրիկ բանասիրի, | Աղօթարար կրօնաւորի, | Քահանայից սարկաւագի, | Եւ գծագրի ըստ մեր տաղի, | Լուսապայծառ այբուբենի, | Երանելոյն սուրբ Գրիգորի, | Սեռի կոչեալ Նարեկեցի, | Այս գովութիւն ներբողենի, | ՅԱռաքելէս վերաբերի, | Սա ախորժակ նըմա լիցի, | Բանաստեղծին սուրբ Գրիգորի, | Այն բանիբուն վարդապետի, | Նուէր բանիս ընծայեսցի»։

4. Վասն սուրբ լուսաւորչին Գրիգորի. «Ահա մի ծառ տեսի ծաղկեալ, | Լուսաբողբոջ նոր փթթեալ...» (*հրատ. Մ. Պոտուրյան*), *տես*՝ «*Բերթուածներ*», *էջ 8—15*։

Այբբենական կարգով, որոշ տառերի կրկնումով՝ *43 տուն։ Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. №47 (հին), 1119, 160 (հին) ձեռագրերից, ուր տաղը կրում է* «Վասն Լուսաւորչին Գրիգորի», «Գովեստ Լուսաւորչին...», «Բանք բաղձանք...» *խորագրերը*։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. №83՝ «Վասն Լուսաւորչին Գրիգորին մերոյ տեառն սուրբ հայրապետին, տունս խե» (*էջ 167բ—170բ*). *այս օրինակում տաղն ունի նաև մի համեմատական մաս (սկ.* «Տեսեալ սրբոյ Լուսաւորչին | էկեալ յերկնից աստուածորդին»), *որի սկզբնատառերը հյուսում են*՝ «Տէր Առաքեալ»։

Տաղի ֆրնս. թարգմանությունը՝ „Éloge de saint Grégoire l'Illuminateur» (*թարգմանիչ*՝ *Ա. Չոպանյան*), *տես*՝ «Ros, I“, p. 81—88։

5. Տաղ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին. «Անճառ միած[ն]ին, հօրն երկնաւորին | Ընտրեալ ի յերկրի, սուրբ Յակոբ, քբրբէ մարմնային...», *տես*՝ «*Գիրք պղտութեան, և Տաղարան վայելուչ և գեղեցիկ*», *Կ. Պոլիս, 1723 էջ 203—205*։

16 տուն։ Սկզբնատառերը՝ «Առաքել վարդապետի է»։

Այլ տպ. — Տաղ *են.* «Անճառ...», *տես*՝ «*Գիրք պղտութեան, և Տաղարան վայելուչ և գեղեցիկ*», *Կ. Պոլիս, 1738, էջ 237—239*։

16 տուն։

Այլ տպ.— Տաղ *են.* «Անճառ...», *տես*՝ «*Փոքրիկ տաղարան*», *Կ. Պոլիս, 1739, էջ 189—190*։

15 տուն։

Այլ տպ.— Տաղ *են.* «Անճառ...», *տես*՝ «*Գրքույկ որ կոչի Տաղարան*», *Կ. Պոլիս, 1740, էջ 258—260*։

15 տուն։

Այլ տպ. — Տաղ *են.* «Անճառ...», *տես*՝ «*Տաղարան վայելուչ և գեղեցիկ*», *Կ. Պոլիս, 1752, էջ 359*։

4 տուն։

Այլ տպ. — Մծբնացւոյն. «Անճառ...», *տես*՝ «*Տաղարան վայելուչ և գեղեցիկ*», *Կ. Պոլիս, 1788, էջ 320*։

4 տուն։

Այլ տպ.— Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», *տես*՝ «*Տաղարան հարուստ, վայելուչ և գեղեցիկ*», *Կ. Պոլիս, 1816, էջ 241*։

4 տուն։

Այլ տպ.— Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», *տես*՝ «*Տաղարան հարուստ, վայե-*

լուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս (Օրթագյուղ), 1825, էջ 241։

4 տուն։

Այլ տպ. — Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Կ. Պոլիս (Օրթագյուղ), 1850, էջ 248—249։

4 տուն։

Այլ տպ. — Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն», Թիֆլիս, 1856, էջ 220։

4 տուն։

Այլ տպ. — Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1882, էջ 227։

4 տուն։

Այլ տպ.— Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, Բ տպ., 1895, էջ 231։

4 տուն։

Այլ տպ. — Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, Գ տպ., 1907, էջ 231։

4 տուն։

Այլ տպ. — Յակոբայ Մծբնացւոյն. «Անճառ...», տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, Դ տպ., 1949, էջ 279։

4 տուն։

Այլ տպ. — Ի սուրբ Յակոբ Մծբնացի. «Անճառ միածնին...» (հրատ. Մ. Պոտուրյան), տես՝ «Բերթուածներ», էջ 202—204։

18 տուն։ Սկզբնատառերը՝ «Առաքել վարդապետի ե գ ո»։ Վերջին երեք տները կազմում են հիշատակարանը. «Ես Տէր Առաքեալ, անձամբ տառապեալ | Վասն իմ հայցեցէք աստուծոյ զթողութիւն շնորհեալ։ | Զեղբայրն իմ Բարսեղ, ղքահանայն անմեղ | Եւ հայրն իմ Դաւիթ յիշեցէք ի յաղօթըս ձեր։ | Ով որ զմեղ յիշէ ուղիղ ի սըրտէ, | Ծաղկալից պըսակն ընկալցի յաստուծոյ մերմէ»։ Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. №№ 1330, 1289, 171, 1823 և 1683 ձեռագրերի համեմատությամբ։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 424 (էջ 306ա—306բ), № 1887 (էջ 232բ—233ա), № 1989 (էջ 130բ—133ա), № 2079 (էջ 362ա—362բ), № 2672 (էջ 311ա—311բ), № 2676 (էջ 184ա—184բ), № 3081 (էջ 73ա—73բ), № 3189 (էջ 40ա—41բ), № 3498 (էջ 288ա—288բ), № 5623 (էջ 160բ—162ա), № 6985 (էջ 36ա—37բ), № 7193 (էջ 52բ—54ա), № 7707 (էջ 191ա—192բ), № 7717 (էջ 177ա—178բ), № 7723 (էջ 37ա—38ա թերի), № 8323 (էջ 226բ—228ա), № 8968 (էջ 269բ—271ա), ևն։ Տես զարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 69 (էջ 155ա), № 344 (էջ 74ա), № 390 (էջ 31ա), № 405 (էջ 19ա), № 499 (էջ 113բ), № 514 (էջ 80բ), № 577 (էջ 45բ), № 663 (էջ 82ա), № 781 (էջ 2ա), № 1002 (էջ 108ա), № 1016 (էջ 84բ), № 1041 (էջ 47ա), № 1215 (էջ 91բ) և № 1252 (էջ 95բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 280 (էջ 45բ). Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 154 (էջ 254). Արմաշի Մատ. ձեռ. № 218 (էջ 221ա). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 6449 (fol. 33^{r}). Թբիլիսիի Ձեռագրերի Ինստ. հայ. ձեռ. № 129 (էջ 58բ). Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 360ա), № 82 (էջ 124բ), № 84 (էջ 74բ). Լվովի Uniw. Jana Kazimiesza Cod. Arm. 52 (fol. 288^{r}).

Բնագիրը ձեռագրերում կրում է «Տաղ սրբոյն Յակոբայ ի տեր Առաքելէ ասացեալ», «Տաղ Յակոբայ Մծբնայ հայրապետին» և նման խորագրեր։ Ձեռագրերում հաճախ պատահում է նաև սկ. «Անճառ միածին», որ սխալ է։

6. Տաղ Լուսաւորչին, յԱռաքել վարդապետէ. «Յիսուս միածին որդին հօրն երկնաւորին | Ընարեաց յազգես հողածին զքրովբէն մարմնային...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8294, էջ 118բ—120բ։

Սկզբնատառերը՝ «ՅԱռաքել վարդապետե այս»: *Տես նաև նույն մատ. ձեռ. №6527 (էջ 88ա), №7343 (էջ 169ա) և 7961 (էջ 70ա):*

Տաղի առաջին տունը գրեթե բառացի կաղապարված է նախորդ (§5) տաղի առաջին տան վրա: Բացի այդ՝ երկու տաղերի միջև կան նաև արտահայտությունների որոշ ընդհանրություններ՝ «առհ բացեալ» (և «առհին վերընթաց»), «Գրիգոր սքանչելին» (և «սքանչելագործող սուրբ Յակոբ»), «զմոլորեալ հօտըս դարձոյց առ հովին բարին» (և «քաջ հովիւ բարի որդոց Սիոնի»): Հիմնվելով այս հանգամանքների վրա՝ տաղի հեղինակությունը վերագրում ենք Սյունեցուն: Տաղի չափը ևս, որ է 4—3—5 | 4—3—5, խոսում է հօգուտ Սյունեցու, որովհետև այսպիսի խառն չափերը միայն նրան են հատուկ (ինչպես է նրա «Տեսեալ Մարիամն բզաւերն ի վերայ խաչին» *տաղը):*

7. Տաղ անուշ. «Այբեն մինչև ի քեն քենէ զանզատիմ ես. | Բանեբս, ես ո՞ւմ աւեմ, երբ դու լըսել չես...», *տես՝ Ա. Չոպանյան, «Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ 30—31:*

Հրատարակվել է Էջմ. Մատ. №1998 (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. №1989) ձեռագրից:

Այլ տպ. — Առ վարդապետն իւր Գրիգոր մեծ րաբունի. «Այբեն մինչև ի քեն քենէ զանզատիմ ես,..», *տես՝ Ն. Ակինյան, «Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարի», Վիեննա, 1958, էջ 38—39:*

Հրատարակվել է Վիեննայի Մխիթ. Մատ. №344 (էջ 156ա—158ա) ձեռագրի և նախորդ հրատարակության հիման վրա:

Այլ տպ. (Անխորագիր) «Այբեն մինչև ի քեն քենէ զանզատիմ ես...», *տես՝ Մ. Ավդալբեկյան, «Գրիգորիս Աղթամարցի», Երևան, 1963, էջ 157—159:*

□ *Ձեռագիր տաղարաններում ընդհանրապես անանուն է այս տաղը. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. №344՝* «Տաղ գեղեցիկ ողորմ ձայնիւ ասա...» *(էջ 156ա), Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. №242՝ անխոր. (էջ 7բ). ևն: Որոշակի տվյալների համաձայն նրա հեղինակն Առ. Սյունեցին է. տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. №2676՝* «Ի Սի[ւ]ն[ե]աց տէր Առաքելէ» *(էջ 196բ—197ա). իսկ №1989 ձեռագրում՝* «Տաղ անուշ» *(էջ 136բ—138բ) թեև հեղինակի անունը չի կրում, բայց նրան հաջորդող տաղը՝* «Այբեն մինչև ի քեն Քրիստոս մեղայ քեզ», *որը հաստատ Առ. Սյունեցու հեղինակությունն է, խորագրված է՝* «Նորին Առաքելէ» *(էջ 138բ—140ա): Տես նաև Հալեպի Բառ.-Մանկ. եկ. ձեռ. №121՝* «Տաղ Առ. վրդ.ի» *(էջ 18):*

Անցյալում այս տաղը Գրիգորիս Աղթամարցուն են վերագրել Հ. Տաշյանը[1] *և Մ. Պոտուրյանը*[2]*: Ն. Ակինյանը նշել է, որ Զմմառի Անտոնյան Մատ. №124 ձեռագրում այս տաղը խորագրված է՝* «Ի Գրիգոր բանէ աշակերտէ ասացեալ» *(էջ 15ա), այնուհանդերձ երկբայելի է համարել տաղը որպես Գրիգորիս Աղթամարցու*[3]*, թեև հրատարակել է նրա գործերի շարքում: Այս հարցում վերջերս Մ. Ավդալբեկյանը ևս հանդես եկավ ի նպաստ Գրիգորիս Աղթամարցու*[4]*:*

Առ. Սյունեցու այս տաղից ժամանակի ընթացքում առաջացել են սիրային բովանդակություն ընդունած մի քանի խմբագրություններ[5]*:*

ա. «Այբեն մինչև ի քեն քենէ զանզատիմ ես, | Բարև է՞ր չես ի տալ, սուտ խըռովեր ես», *կամ՝* «Այբեն մինչև ի քեն զանզատ անեմ ես» **ևն**[6]:

բ. «Այբեն մինչև ի քեն քենէ զանզատիմ ես, | Բազում խոց կայ սըրտիս՝ ամենըն դու ես»[7]:

գ. Այբեն մինչև ի քեն, այբեն մինչև ի քեն, | գովեմ քանի յիմ լեզուեն միտքըս կու բաւէ, | Միտքըս կու բաւէ»[8]:

---

[1] *Հ. Տաշյան, «Ցուցակ հայ. ձեռ. Մատ. Մխիթ.», էջ 1073:*

[2] **Բազմավէպ**, *1905, էջ 499:*

[3] *Ն. Ակինյան, «Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի», Վիեննա, 1958, էջ ճժԶ—ճժԷ:*

[4] *Մ. Ավդալբեկյան, «Գրիգորիս Աղթամարցի», Երևան, 1963, էջ 307—308:*

[5] *Հմմտ. Ն. Ակինյան, էջ ճժԶ—ճժԹ:*

[6] *Տես Ա. Չոպանյան, «Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ 26—29: Տես նաև* Երկրագունդ, *1887, էջ 71—72:*

[7] *Տես Ա. Չոպանյան, «Հայ էջեր», էջ 29—30:*

[8] *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ.* №344, *էջ 64ա:*

8. Գովասանք ի յԱռաքեալ վարդապետն. «Ի յայս անուն վարդապետն | Միրոյ նաւակ առ քեզ հասցէ, | Տէր այս անուն ընտրեալ յերկրէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2263, էջ 314ա—315բ։*

Սկզբնատառերը՝ «Ի յԱռաքել վարդապետն»: *Ձեռագիրը Գր. Տաթևացու քարոզներն է պարունակում։*

Սույն տաղի մի ուրիշ օրինակ է նույն Մատ. ձեռ. № 706՝ «Թէ ուզես որ սիրելոց բարև ուղարկես՝ գայս» *(էջ 176բ—177բ, սկ.* «Անուամբդ յաղթող և ցանկալի, | Գեղով նըման հայրապետի»), *որի մի քանի տները նույնն են վերոնշյալի հետ, բայց այստեղ կան մի շարք ուրիշ տներ ևս, որոնք բացակայում են նախորդում։*

Գ.—ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՏԱՂԵՐ

1. Ադամգիրք։ Այս գործը բաղկացած է չորս հատորներից։ Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտների երկերին նվիրված մատենագիտական մի հին ցուցակում ասված է. «ԶԱդամգիրքն Սիւնեաց տէր Առաքելն է արարեալ Դ հատոր, երեք՝ ըստ նախաստեղծիցն և մէկ՝ ի վերայ ժԲ. այլութենիցըն»[1]։ Չորս հատոր է եղել նաև ըստ Ստեփանոս Ռոշքայի տեղեկութեան[2]։ Ըստ Հ. Տաշյանի՝ Ադամգիրքը կոչվում էր նաև Կողգիրք[3], *իսկ ըստ Ղ. Ալիշանի՝* Դրախտագիրք *կամ* Կողգիրք[4]*։ Մ. Պոտուրյանը* Դրախտագիրք *է անվանել Ադամգրքի միայն 4-րդ հատորը[5], և այդպես էլ տեղ է գտել այդ կարծիքը գրականության մեջ։ Ադամգրքի հատորների հերթականության համար Մ. Պոտուրյանը կատարել է որոշ սահմանում, որը հետևում է ոչ թե նրանց շարադրման ժամանակագրական կարգին, այլ բնագրական առնչությունների և խմբագրումների ընթացքին[1]. ըստ այդ դասավորման՝ հատորներն անվանվում են «Ադամգիրք Ա», «Ադամգիրք Բ», «Ադամգիրք Գ» և «Ադամգիրք Դ»։ Կան Ադամգրքի հատորները պարունակող չորս առանձին հրատարակություններ, որոնցից առաջին երեքը ժողովածուներ են։*

1 *Տես աստ, հտ. Ա, էջ* LXIV, *տող 36—37։*

2 *Հմմտ. Մ. Պոտուրյան, «Առաքել Սիւնեցի և իր քերթուածները», Վենետիկ, 1914, էջ ԽԶ։ Պոտուրյանը չի նշում, թե տեղեկությունը Ռոշքայի ո՛ր երկից է. նրա «Ժամանակագրութիւն»-ում այդ մասին խոսք չկա։*

3 *Հ. Տաշյան, «Ցուցակ հայ. ձեռ. Մատ. Մխիթ.», էջ 1062։*

4 *Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 126։*

5 *Մ. Պոտուրյան, «Առաքել Սիւնեցի և իր քերթուածները», էջ ԽԵ—ԽԷ։*

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Բաղդասար դպիր 21 = *Ադամ գիրք։ Անգք Ադամայ նախաստեղծին. Դընին ի սմա և ցուցանին. Այնք որք սիրով լըսել կամին. Մըտցեն ի սա՛ և շահիցին։ [Կ. Պոլիս, 1721]։*

288 էջ։ Բովանդակում է Ադամգրքի միայն Ա և Գ հատորները։ Տպագրության հիշատակարանում՝ «Օգնականութեամբ և շնորհիւ մեծին աստուծոյ՝ յա՛նկ ելեալ աւարտեցաւ տպեցումն գրքիս։ Ի թուին Հայոց 1170, ի քանիս մայիս ամսոյն ...Եւ տպեցաւ ի տպարանի Կարապետի որդի մեղաւոր և անպիտան Աստուածատուրի։ Ի մայրաքաղաքին կոստանդնուպոլիս։ ...Իսկ և զաշխատաւոր սրբագրող տասիս՝ զանպիտան ծառայ ծառայից աստուծոյ՝ զՊաղտասար չնչին դպիրս յիշել յաղօթս ձեր՝ յոգո՛ց զեղերիմս են։

Բաղդասար դպիր 99 = *Ադամ գիրք։ Անգք Ադամայ նախաստեղծին. Դընին ի սմա և ցուցանին. Այնք որք սիրով լըսել կամին. Մըտցեն ի սա և շահիցին։ Տպագրեցեալ ի հայրապետութեան լուսակառոյց աթոռոյ սուրբ էջմիածնի տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի Ամենայն Հայոց, և սրբոյ Երուսաղէմի տեառն Պետրոսի շնորհափայլ պատրիարգի, և Կոստանդնուպոլսոյ տեառն Դանիէլի աստուածաբան վարդապետի և արժանաժառանգ պատրիարգի, որոյ հրամանաւն իսկ, ի Կոստանդնուպոլիս, յամի 1799։ Արդեամբք ի յԱնդրիանուպոլիս բնակեալ Դաբբինեանց ի Բրիտոսս հանգուցեալ Մահտեսի Պետրոս Ամիրայի որդւոց՝ Ղազար, Յոհաննէս, Խաչատուր ազնուացն Բենկացւոց. ի յիշատակ. իւրեանց և իւրայնոց ամենեցուն կենդանեաց և ննջեցելոց»։*

276 էջ։ Բովանդակում է Ադամգրքի միայն Ա և Գ հատորները։ Արտատպվել է նախորդ հրատա-

1 *Անդ, էջ ԽԵ։ Տես նաև Մ. Պոտուրյանի առաջաբանը, էջ Զ—Է, հետևյալ հրատ. մեջ. Առաքել Սիւնեցի, «Ադամգիրք», Վենետիկ, 1907։*

րակությունից: Տպագրության հիշատակարան ում՝ «Օգնականութեամբ... յանկ եղեալ աւարտեցաւ տպեցումն գրքոյս ի ՌՄԽԸ Թուականիս մերոյ յունիս ամսոյ 8: ... Ըստ օրինակի սրբագրեցելոյ ի ձեռացու Պաղտասար ծերունազարդ դպրէ Կեսարացւոյ, արդէն առ տէր հանգուցելոյ: Ի Կոստանդնուպօլիս... ի տպարանի Մատթէոս դպրի, որ ընդ հովանեաւ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ ի Թաղն Այ Վլաչհէրը» են:

Պոտուրյան = *Առաքել Սիւնեցի: Ադամգիրք: Հրատարակեց Հ. Մկրտիչ Պոտուրեան, ի Մխիթ. ուխտէն: Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1907: (= Թանգարան հին և նոր դպրութեանց, Դ):*

ԺԶ+332 էջ (18.5×11.5 սմ.): Բովանդակում է Ադամգրքի Ա, Բ և Գ հատորները: Գրքի սկզբում՝ հրատարակչի «Յառաջաբան»-ը (էջ Ե—Է). իսկ Ադամգրքի ամեն մի հատորից առաջ տրված են տպագրության համար օգտագործված ձեռ. օրինակների նկարագրությունները:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ա. Զոպանյան, Անահիտ, *Ժ տարի, 1908, էջ 1—10: Ե. Գ. Յ[երհաթյան],* Հանդէս Ամսօրեայ, *1908, էջ 92:*

Տէր-Ներսեսյան = *Առաքել Սիւնեցի: Դրախտագիրք: Հրատարակեց Հ. Ներսէս Տէր Ներսէսեան, Մխիթարեան ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1956: (= Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Ը.):*

205 էջ (18.5×11.5 սմ.): Բովանդակում է Ադամգրքի միայն Դ հատորը: Գրքի սկզբում՝ հրատարակչի «Յառաջաբան»-ը (էջ 7—59), ուր նկարագրվում է նաև հրատարակությանը հիմք ծառայած ձեռագիրը: Վերջում՝ «Յաւելուած» (էջ 195—199), որը նվիրված է Հ. Բյուրատյանին պատկանող մի ձեռագրի նկարագրությանը, և «Բառարան 'Դրախտագիրք'-ի մէջ գործածուած օտար, գաւառական և հազուագիւտ բառերու» (էջ 201—204):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ա. Խ., Էջմիածին *(ամս.), 1958, № 7, էջ 62—63:*

Ադամգրքի հատորները մենք դասավորում ենք ըստ Մ. Պոտուրյանի ընդունած դասավորության:

1ա (Ադամգիրք Ա).

Ա տպ.—Ադամ գիրք, յորում պարունակին բանք յարմարականք և պատմութիւնք պատշաճաւորք *են. տես՝ «Բաղդասար դպիր 21», էջ 2—233:*

Բ տպ.— Ադամ գիրք, յորում պարունակին բանք յարմարականք և պատմութիւնք պատշաճաւորք *են. տես՝ «Բաղդասար դպիր 99», էջ 3—229:*

Գ տպ. — Ադամգիրք յորում պարունակին բանք յարմարականք և պատմութիւնք պատշաճաւորք յաղագս նախնեացն Ադամայ և Եւայի, զանազան խորհրդով համեմատեալ, յԱդամայ ի Քրիստոս և յԵւայէ յԱստուածածինն և յօձէն ի Յուդա: Եւ վասն կողին զանազան խորհրդով. ի դրախտէն ի խաչն, յառաջին արարչութեանցն յերկրորդ նորոգութիւնս. և այլ զանազան բանք պիտանիք և հարկաւորք ի տէր յԱռաքելոյ Սիւնեաց ասացեալ ոտանաւորաբար՝ հրամանաւ մեծ և տիեզերալոյս վարդապետի և հռետորին Գրիգորի, առեն ՌՄ. և ԻԶ գլխով բաժանեալ: *Տես՝ «Պոտուրյան», էջ ԺԳ—ԺԶ և 1—232:*

Բովանդակություն.

Ա. Վասն վեցօրեայ արարչութեանցն և կազմութեան նախնեաց: Տուն ԻԹ:

Բ. Վասն գեղազարդութեան նոցին: Տուն ԺԶ:

Գ. Վասն բանսարկուին օձին խաբելոյն: Տուն Ծ և Ե:

Դ. Վասն ողբալոյն և սգալոյն նախնեացն: Տունքս ԺԲ:

Ե. Վասն հոգեվարին և ճանապարհի հոգոցն և պատերազմի դիւացն և կայանին հոգոյ: Տուն ԻԵ:

Զ. Վասն ահեղ դատաստանին և քննութեանց ամենայն մարդկան: Տուն ԼԴ:

Է. Վասն պէսպէս տանջանաց դժոխոցն: Տուն ԻԴ:

Ը. Վասն չարին թէ ուստի՞ և կամ զի՞նչ: Տուն ԿԸ:

Թ. Վասն բաղձանալոյ բարոյն ամենայն էից: Տուն ԺԶ:

Ժ. Վասն պատկերակցութեան մարդոյն առ աստուած և առ հրեշտակս և թէ ո՛րպէս ունի զնմանութիւն անմարմնոցն: Տուն ԼԴ:

ԺԱ. Վասն յետ յանցման նախնեացն, հարցաքննելոյն յաստուծոյ՝ որ ասաց. Ու՞ր ես: Տուն Ի:

ԺԲ. Վասն կրկնակի խորհրդով հարցմանն որ ոչ բանիւ՝ այլ արդեամբք՝ զի առաջինն ըստ հրամանացն աւարտեցաւ և երկրորդն ըստ կամացն աստուծոյ աւարտեցաւ: Տուն Կ:

ԺԳ. Վասն օձին ըստ երկրորդ հարցմանն: Տունքս ԾԲ:

ԺԴ. Վասն տարակուսանօք նախատելոյն զինքեանս կսկծմամբ փոշիմանելոյ նախնեացն: Տուն Կ:

ԺԵ. Վասն զղջմամբ ողբալոյն Եւայի: Տուն Լ:

ԺԶ. Վասն կողին որ պատճառ եղև խաբմանն: Տուն Լ:

ԺԷ. Այլ խորհուրդ վասն կողին զոր արար ընդ նախնին պէսպէս պակասութեան: Տուն Խ:

ԺԸ. Դարձեալ վասն կողին բնութեան կրից զոր և այժմ բազում կանայք ցուցանեն բայց ոչ ամենայն:

ԺԹ. Վասն է՞ր ի հողոյ ստեղծ զմարդն և ոչ յայլ նիւթոց։ Տունս ԺԷ։

Ի. Վասն տարերացն որք են մատունք տեսանս։

ԻԱ. Վասն համեմատութեան նախնոյն ընդ աստուծոյ, զի որպէս պատկերակից էր աստուծոյ, այսպէս և գործակից եղև նախատիպին։ Տունս ԺԵ։

ԻԲ. Դարձեալ վասն կողին համեմատեալ յԱստուածածինն և զոր ինչ եղև ի դրախտին։ Տունս ԶԵ։

ԻԳ. Վասն կնքելոյ զերեզմանին տեսանս։ Տունս ՂԶ։

ԻԴ. Դարձեալ յառաջին արարչութենէն յերկրորդ նորոգութիւնս համեմատութիւն։ Տունս ԾԺԱ։

ԻԵ. Վասն մահուան և յարութեան տեսանս ի մեզ համեմատութիւն։ Տունս Ի։

ԻԶ. Վասն երկոտասան սքանչելեացն զոր արար Քրիստոս յաւուր խաչելութեանն և աւարտմանց բանիս։ Տունս Հ։

Բնագրի սկ. «Նախ քան զեղեալըս ամենեքեան՝ | Երրորդութիւնն անեղական»: *Հիշատակարանում՝ «Ի յութ հարիւր Հայոց թուական, | Յիսուն և երկու մըտեալ նոր ամ (1403)՝ | Խորհրդաւոր բանըս գրեցան՝ | Ի խրատութիւն սըրտից մարդկան։ | Զձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք, | Եւ աննախանձ օրինակողք, | Զհայր իմ Դաւիթ յիշէք մըտօք, | Ի սուրբ յաղօթս ձեր պատասաւոք: | Այլ և զեղբայրն իմ ըզԲարսեղ, | Սուրբ քահանայ և հանճարեղ, | Զի վախճանեալ էր նա անմեղ, | Յիշէք յաղօթս ձեր պատասանեղ: | Այլ և ըզմայրն իմ ըզՄելիք | Եւ զՄարիամ հանն իմ՝ բարիք. | Ըզննջեցեալսն և զկենդանիք, | Յիշէք յաղօթս ձեր նաղելիք» են։ Հրատարակությունը կատարվել է Վենետիկի Մխիթ. Մատ. հետևյալ ձեռագրերից. №№ 568, 1289, 171, 160, 139, 829, 644, 946, 47 և 1119։*

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3888՝* «Ադամգիրք... բանք յարմարականք...» *(էջ 2ա—1116ա), № 2079՝* «Բանք յարմար[ակ]անք...» *(էջ 284ա—339ա), № 83՝* «Բանք խրատականք և պատմութիւն[ք] պատշաճաւորք...» *(էջ 2ա—100ա), № 1450՝* «Տեառն Առ.ի Սիւնեցւոյ ասացեալ ի վերայ վեցօրեայ արարչութեանն» *(էջ 59բ—100ա). № 2196՝* «Տեառն Առ.ի Սիւնեաց ի վերայ վեց աւուր արարչութեան ասացեալ» *(էջ 19բ—217ա), № 8284՝* «Տեառն Առ. վրդ.ի ասացեալ ոտանաւորս մեկնողաբար յղ. ստեղծագործութեանն աստուծոյ զնախնին մեր զԱդամ և վասն անկման ի փառացն» *(էջ 95բ—189բ), № 1՝ անխոր. (էջ 1ա—49բ), № 8350՝ անխոր. (էջ 1ա—125ա), № 8451՝ անխոր. (էջ 269բ—315բ, վերջից թերի), են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 381 (էջ 3ա) և № 746 (էջ 89ա). Հալեպում Պարթև Թափաճյանի ձեռագիրը, որն ընդօրինակված է 1653 թ. (էջ 1)[1]. Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Marsh 85 (fol. 207r).

Ձեռագրերում պատահում ենք նաև այս բնագրի մի տարբեր խմբագրությանը, որի մեջ հիմնականում օգտագործված են նույն նյութերը՝ մասերի տեղափոխություններով, կրճատումներով ու հավելումներով, և որի մեջ ագուցված են նաև Գ Ադամգրքի Ա և Ը գլուխները։ Այս խմբագրությունից են Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 33՝ «Ադամ գիրք վեցօրեայ արարչութեան...» *(էջ 1ա—130բ), № 1661՝* «Ի Տէր Առ. Սիւնեաց ճռետորէ բանք զանազանք և պիտանիք և հարկաւորք և գեղեցիկք, ասացեալ ոտանաւորաբար...» *(էջ 215ա—378բ և 333ա—364բ) և № 4285՝ անխոր. (էջ 76ա—92բ, թերի). խմբագրության մի փորձ է նաև ձեռ. № 1637՝* «Յիսուս Որդւոյ ձայն է» *(էջ 3ա—129ա)։*

Ա Ադամգրքի մասերից են հետևյալ բնագրերը, որոնք ձեռ. տաղարաններում պատահում են որպես առանձին գործեր և որոնցից մի քանիսը հրատարակված են.

ա. (Գլ. Դ) «Վա՜յ այն աւուրն որ ես ստեղծայ, | Վա՜յ այն ժամին որ խաբեցայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 424, էջ 347բ—349ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 39 (էջ 48բ—49բ), № 2236 (էջ 420ա—421բ), № 2335 (էջ 268ա), № 2394 (էջ 27ա—28բ), № 2736 (էջ 441ա—442բ), № 3411 (էջ 107ա—110ա), № 7714 (էջ 4ա—8բ), № 7732 (էջ 422ա—424ա) և № 8873 (էջ 263բ—265բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 63 (էջ 2ա). Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 401բ)։ Որոշ

---

[1] *Ա. Սյուրմեյան, «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 122—123։*

օրինակներ ունեն սկ. «Վա՜յ այն աւուրն որ ես ծընայ»:

բ. (Գլ. Ե) «Վա՜յ իմ աւուր ծոզեկաբին, | Վա՜յ որ առեալ զհոգիս տանին...», Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 39, էջ 49բ—51ա:

գ. (Գլ. Զ) «Յորժամ գըրունք երկնից բանին, | Լինի հընչմունք ահագնագին...», Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 424, էջ 349ա—350բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 39 (էջ 38բ—42բ), № 2335 (էջ 264ա—265բ), № 2736 (էջ 443ա—444բ), № 3411 (էջ 110ա—113ա), № 7714 (էջ 8բ—11ա) և № 7732 (էջ 424ա—425բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 63 (էջ 3բ). Զմմառի Մատ. ձեռ. №81 (էջ 403բ): Որոշ օրինակներ ունեն սկ. «Յորժամ գըրունք երկնից բացուին (կամ բացցին)»:

դ. (Գլ. Է) «Յեա քըննութեանն դատաստանին, | Երբ ամենայն բանք վըճարին...» (հրատ. Ա. Չոպանյան), Անահիտ, 1902, էջ 148—150:

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ № 559 ձեռագրից: Հեղինակի անուն չի կրում.

Այլ տպ. տես՝ Մ. Պոտուրյան, «Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և իւր քերթուածները», Վենետիկ, 1905, էջ 160—168:

Հրատարակվել է Վենետիկի նույն ձեռագրից և վերագրվել է Կոստ. Երզնկայուն:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ՝ № 39 (էջ 42բ—43բ), № 101 (էջ 382բ), № 424 (էջ 350բ—351բ), № 2236 (էջ 422ա—423ա), № 2335 (էջ 265բ—267ա), № 2736 (էջ 444բ—445բ), № 3411 (էջ 113ա—114բ), № 7714 (էջ 11ա—13բ), և № 7732 (էջ 425բ—427ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 63 (էջ 4բ). Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 405ա):

ե. (Գլ. ԺԴ) «Յեա այս հարցմանցըս քըննութեան | Տարակուսեալ նախնիքն ողբան...», տես՝ Ա. Տեվկանց, «Հայերգ», Թիֆլիս, 1882, էջ 169—172:

զ. (Գլ. ԻԶ, տուն 19—28) «Չորեքկերպեան բեւքըն խաչին՝ | Գործ սքանչելեաց ցուցին նոքին...», Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 2672, էջ 277բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 424 (էջ 259բ—260ա) և № 3504 (էջ 152բ—153ա). Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 310բ): Ադամգրքում՝ սկ. «Եւ չորեքին բեւքըն խաչին»

Ա. Ադամգրքից Ա. Չոպանյանի ֆրնս. թարգմանությամբ հրատարակվել են հետևյալ հատվածները.

ա. De l'œuvre des six jours et de la création des ancêtres (Գլ. Ա. սկ. «Նախ բան զեղեալքս ամենեքեան»), տես՝ „Ros. I", p. 73—77.

բ. De la beauté d'Adam et du Paradis terrestre (Գլ. Բ. սկ. «Էր փառք դրախտին անպատմելի»), ibidem, p. 78—81.

գ. De L'Imposteur, du Serpent et de la Séduction (Գլ. Գ. սկ. «Զայս ամենայն տեսեալ չարին»), ibidem, p. 82—102

դ. De L'interrogatoire du terrible Jugement (Գլ. Զ. սկ. «Յորժամ գըրունք երկնից բանին»), ibidem, p. 23—28.

ե. Des tortures de l'Enfer (Գլ. Է. սկ. «Յեա քըննութեանց դատաստանին»), ibidem, p. 29—37.

զ. D'où procède le Mal et qu'est—il? (Գլ. Ը. սկ. «Ո՞վ հիացմամբ զարմանալի»), ibidem, p. 59—67.

է. Le désir du Bien (Գլ. Թ. սկ. «Բնութիւնք հանուրց եղանակին»), ibidem, p. 52—54.

ը. Dieu interroge Adam après la faute (Գլ. ԺԱ. սկ. «Յեա ողբալոյն տեառն Ադամայ»), ibidem, p. 105—109.

թ. Complainte d'Adam (Գլ. ԺԴ, տուն 51—60. սկ. «Տեղիք չունիմ ես հանգըստեան»), ibidem, p. 103—104:

ժ. De la côte (Գլ. ԺԸ. սկ. «Կամ զի կողն ոսկր Ւ անըզգայ»), ibidem, p, 55—58.

ժա. Mémorial (Յիշատակարան. սկ. «Ի

յուր հարիւր Հայոց թուական, | Յիսուն և երկու մրտեալ նոր ամ»), ibidem, p. 110—113.

1բ (Ադամգիրք Բ).

Պատմութիւնք հարկաւորք և դիտաւորութիւնք պիտանացուք, յաղագս մեծի նախնեացն Ադամայ և Եւայի, զանազան կերպիւ ասացեալ ոտանաւորաբար ի Տէր Առաքելոյ Սիւնեաց՝ վայելուչ եղանակաւ, ի զուարճութիւն մարդկան և ի ճաշակ մըտաց, յայտնիչ ծածուկ խորհրդոյ: Վասն գեղազարդութեան Նախնեացն և զուշակութիւնք սուրբ Աստուածածնին և զօրութիւն պատուիրանին տեառն, և վասն կողին խորհրդոյ ի խաչն և յարութիւնն Քրիստոսի համեմատեալ: Ութ գլխով բաժանեալ, ունի տունս ՅԻ: *Տես՝ «Պոտուրյան», էջ 237—272:*

Բովանդակութիւն.

Ա. Նախ՝ վասն գեղազարդութեան Նախնեացն և վայելչութեան դրախտին: Տունս Լ:

Բ. Երկրորդ՝ վասն կողին խորհրդոյ ի դէմս սուրբ Աստուածածնին: Տունս Ի:

Գ. Երրորդ՝ վասն պայծառակերպութեան նոցին և խնամով խրատելոյն տեառն զնոսա: Տունս ԻԲ:

Դ. Չորրորդ՝ վասն պատուիրանին տեառն: Տունս ԻԴ:

Ե. Հինգերորդ՝ վասն նախանձու բանսարկուին և խաբման և փոշիմանելոյ: Տունս ԾԿ:

Զ. Վեցերորդ՝ վասն կողին խորհրդոյ՝ որ պատրեաց զնա: Տունս ԻԷ:

Է. Եօթներորդ՝ դարձեալ վասն Ադամայ և կողին համեմատեալ ի խաչն և յարութիւնն Քրիստոսի: Տունս Ի:

Ը. Ութերորդ՝ վասն յիշատակարանի գրոյս: Տունս Ի:

Բնագրի սկ. «Յորժամ Ադամ ստեղծաւ զերդ զարեգակն էր, | Իւրոյ արարողին կերպին նըման էր»: *Հիշատակարանում՝ «Ի յայս ժամանակիս սուլթան Թամուրն էր, | Թվականս մեր ութ հարիւր յիսուն և երկու էր (1403). | Բարեմիտ ընթերցողք յիշեցէք առ տէր, | Զեղբայրն իմ ըզԲարսեղ, սուրբ քահանայ էր: | Ըզհայր իմ ըզԴաւիթ և զՄելիք իմ մէր, | Արեամբ մերձաւորօք յիշեցէք առ տէր» ևն: Հրատարակությունը կատարվել է Վենետիկի Մխիթ. Մատ. №№ 568, 47 և 171 ձեռագրերից:*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1450՝ «Պատմութիւնք հարկաւորք...» *(էջ 100բ—112ա, սկզբից թերի), № 1՝ խոր. նույն (էջ 49բ—63ա, սկզբից թերի), № 83՝ անխոր. (էջ 100բ—120ա), № 2079՝ անխոր. (էջ 339ա—343բ, թերի օրինակ), № 3469՝ անխոր. (էջ 4ա—18ա, սկզբից թերի), ևն: Տես նաև Զմմառի Մատ. ձեռ. № 83 (էջ 24ա—29բ, թերի):*

Բ Ադամգրքից է հետևյալը, որ ձեռագրերում պատահում է առանձին.

(Գլ. Ա) «Յորժամ Ադամ ստեղծաւ զերդ զարեգակն էր, | Իւրոյ արարողին կերպին նման էր...», *տես՝ Ստ. Կանայանց, «Ցուցակ հայ. ձեռ. Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի», Թիֆլիս, 1893, էջ 61—62:*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1153 (էջ 144ա—145բ), № 1887 (էջ 235ա—236բ), № 1989 (էջ 230բ—234ա), № 5985 (էջ 119բ—120բ), № 7720 (էջ 9ա—11բ) և № 8605 (էջ 118ա—119բ):

1գ (Ադամգիրք Գ).

Ա տպ.—Բանք հարկաւորք և պատմութիւնք հոգեզուարճք *ևն. տես՝ «Բաղդասար դպիր 21», էջ 234—281:*

Բ տպ.— Բանք հարկաւորք և պատմութիւնք հոգեզուարճք *ևն. տես՝ «Բաղդասար դպիր 99», էջ 230—281:*

Գ տպ.— Բանք հոգեզուարճ[ք] և պատմութիւնք հարկաւորք: Յաղագս Նախնեացն Ադամայ և Եւայի բարառնաբար ասացեալ: Այլ և զանազան խորհուրդ վասն Նախնեացն և վասն մեր, և վասն Տեառն և վասն օձին և բանսարկուին և պատրանացն: Ասացեալ ոտանաւորաբար ի Տէր Առաքելոյ Սիւնեաց: Տունս երկու հարիւր քսան: Տասն գլխով բաժանեալ: *Տես՝ «Պոտուրյան», էջ 274—327:*

Բովանդակություն.

Ա. Նախ՝ վասն Նախնեացն մի առ մի պատասխանիք յանդիմանութեամբ: Տունս Լ:

Բ. Երկրորդ՝ թէ վասն է՞ր այնպիսի փորձանաց դիպեցան: Տունս Է:

Գ. Երրորդ՝ զոր մեք պարսաւեմք զնոսա վասն յանցմանն. այլ և ի խրատ բազմաց: Տունս ԻԳ:

Դ. Չորրորդ՝ զոր Նախնիքն պատասխանելով յանդիմանեն զմեզ և խրատեն: Տունս ԺԳ:

Ե. Հինգերորդ՝ զոր Նախնիքն բազմամբ բարոյն՝ փոշիմանեալ ի չարէն վասն յանցմանն: Տունս ԺԶ:

Զ. Վեցերորդ՝ վասն բանսարկուին և օձին նախանձուն: Տունս ԻԳ:

Է. Եօթներորդ՝ զոր դիք մեզ պատասխանեն, անմեղադրելի զոլ զինքեանս: Տունս ԺԲ:

Ը. Ութերորդ՝ վասն կերպի օձին: Տունս ԺԱ:

Թ. Իններորդ՝ վասն արարչութեանն: Տունս Ի:

Ժ. Տասներորդ՝ վասն օձին և բանսարկուին, և թէ ո՛րպէս պատրեաց զնախնիսն: Տունս ԿԷ:

Բնագրի սկ. «Ընդ բանսարկուին յոյժ զարմացայ, | Թէ նա վասն է՞ր այսքան մախայ»: *Հիշատակարանում՝ «Ի յոթ հարիւր Հայոց թուական, | Եւ յիսներորդ սկըսեալ նոր ամ՝ (1401) | Ոտանաւոր բանքըս գրեցան, | Հարցմունք և պատասխան: | Տէր Առաքել նըւաստոգի, | Շնորհաց թափուրս յամենայնի, | Զոտանաւորս շարագրեցի՝ | Վասն Ադամայ և Եւայի» են: Հրատարակությունը կատարվել է Վենետիկի Մխիթ. Մատ. №№ 568, 171 ու 47 ձեռագրերի և նախորդ տպագրությունների հիման վրա:*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1՝ «Բանք հոգեզուարճ...» *(էջ 63ա—73ա), № 83՝ խոր. նույն (էջ 120ա—138ա), № 1450՝ խոր. նույն (էջ 112ա—120բ), № 3469՝ խոր. նույն (էջ 18բ—29ա, թերի օրինակ), №№ 3888՝* «Բանք հարկաւորք...» *(էջ 116բ—147ա), № 1637՝ անխոր. (էջ 129բ—149բ, թերի օրինակ), № 2079՝ անխոր. (էջ 344բ—354բ), № 8284՝ անխոր. (էջ 189բ—193ա, թերի օրինակ), № 8350՝ անխոր. (էջ 125ա—130ա, շատ պակասավոր), են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 381 (էջ 117ա). Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Marsh 85 (fol. 297^{v}). *Զմմառի Մատ. ձեռ. № 83 (էջ 30ա—41ա, թերի):*

Գ. Ադամգրքից են հետևյալները, որոնք ձեռագրերում պատահում են առանձին.

ա. (Գլ. Ա) «Ընդ բանսարկուին յոյժ զարմացայ, | Թէ նա վասն է՞ր այսքան մախայ...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 381, էջ 115ա—117ա:*

բ. (Գլ. Ը) «Օձին ասեմք դըժնեակ չարին, | Որ արբանեակն էր բանսարկուին...», *անդ, էջ 120բ (թերի):*

1դ (Ադամգիրք Դ).

Բանք խրատականք և յոյժ հարկաւորք, որք քակտեն զխորհուրդ մարմնական և տան ուրանալ զսնոտի խաբէութիւն աշխարհիս, և այլ իմն չինեն զխորհուրդ մարդկան: *Տես՝ «Տեր-Ներսեսյան», էջ 61—194:*

Վերնագրին հաջորդում է առաջաբանը և 20 գլուխների բովանդակությունը. «Եւ այսպէս սկսանի բանս զի ի դրախտ և քաղաք եւթն ազգ են յարարածս...: Ասացեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց՝ վասն այնմ քաղաքին, որ քաղէ զամենայն ծնունդս մարդկան»:

Բովանդակութիւն.

Եւ նախ առաջին. Վասն դրախտի աստուածաշունչ գրոց. և ունի տունս ԼԷ:

Երկրորդ հառս. Վասն երկրորդ քաղաքին՝ որ է բուն քաղաք մեր այսինքն՝ գերեզմանքն: [Տունս] ԺԳ:

Երրորդ հառ. Զի պարտ է յամենայն օր գնալ և տեսանել զայն քաղաքն և տեղիք պատրաստել մեզ: [Տունս] Է:

Չորրորդ հառ. Տեսանել թէ քանի՞ ազգ զանազան բարիք կան յայն քաղաքն, զոր աստ ոչ գոյ: [Տունս] ԻԹ:

Հինգերորդ հառ. Թէ ո՞ւր է քաղաքն այն, կամ վասն է՞ր քաղաք կոչի: Տունս ԺԳ:

Վեցերորդ հառ. Թէ զի՞նչ է անուն այն քաղաքին, այսինքն գերեզմանն և հողմէրք, հանգիստ և շիրիմ: [Տունս] ԻԲ:

Եօթներորդ հառ. Թէ զի՞նչ է դուռն այնմ քաղաքին: [Տունս] ԻԵ:

Ութերորդ հառ. Թէ յորո՞ւմ տեղոջ գտանեմք զայն քաղաքն: [Տունս] ԻԱ:

Իններորդ հառ. Վասն բարբառաբար խօսելոյ մեզ ընդ այն քաղաքացիսն, և թէ զի՞նչ պատասխանի կու տան նոքա մեզ առ ի խրատ մեզ: [Տունըս] ՀԵ:

Տասներորդ հառ. Թէ զի՞նչ խնդրեն ննջեցեալքն ի կենդանեաց: Տունս ԻԱ:

Մետասաներորդ հառ. Զի վասն ոչ յիշելոյ զաղքատ ննջեցեալսն՝ կրկին պատժին յիշատակք նոցա: [Տունս] ԺԷ:

Երկոտասաներորդ հառ. Զի որպէս զանազան են փառք սրբոցն, այնպէս և զանազան են տանջանք մեղաւորացն, և դասք դասք որոշին: Տունս Թ:

Երեքտասաներորդ հառ. Զի ողորմութիւն է բանալիք արքայութեան երկնից: Տունս Խ:

Չորեքտասաներորդ հառ. Զի կամին հոգիքն որ զայն կենաց խաբարն յուղարկել մեզ, որպէս մեծատունն: Տունս ԼԱ

Հինգետասաներորդ ճառ. Վասն իմանալոյ մտօք՝ թէ գնացեալքն զորպիսի կիրս կրեն։ Տունըս ԽԴ։

Վեցտասաներորդ ճառ. Թէ յանցանք մարդկան որ գրին՝ գի՞նչ լինիցին գրեանքն այն։ [Տունըս] ԾԳ։

Եւթնևտասաներորդ ճառ. Զի գնացեալ հոգիքն են կատարեալ էութիւն, կենդանի և իմացօղ, և անպակաս անդամօք և զգայարանօք։ [Տունս] ԻԷ։

Ութևտասաներորդ ճառ. Զի ի կայեանք հոգոցն ահն և համարն դատաստանին զարհուրեցուցանէ զնոսա։ [Տունս] ԻԳ։

Իննևտասաներորդ ճառ. Զի յետ համբաւոյ դատաստանին՝ այլ մեծ համբաւ գայ դաւանութեան, թէ հուր անշէջ և տանջանք պատրաստեալ կայ մեղաւորաց։ Տունս ԺԲ։

Քսաներորդ ճառ. Զի ահագին համբաւս՝ զոր կրեն գնացեալ հոգիքն՝ բարանարար խրատեն զմեզ զգուշանալ։ Տունս Լ։

Բնագրի սկ. «Զարմանալի բան մի տեսայ, եկայք պատմեմ ձեզ. | Ծածկեալ խորհուրդ կայ հրաշագան, զոր չէ յայտնեալ մեզ»: Հիշատակարանում՝ «Ոտանաւորքս այս որ գրեցաք առ ի խըրատ ձեզ, | Հինգ հարիւր տուն է ւ երեսուն ի յիշատակ մեզ. | Եւ սա քսան ճառ է զանազան բանք պիտանի ձեզ. | Զոր ինչ կամիս՝ այս գըտանես, պէսպէս խըրատ ձեզ: | Նըւաստոգի Տէր Առաքեալ՝ յոտս անկանիմ ձեզ. | զմեզ յիշեցէք յաղօթըս ձեր և զննջեցեալսն մեր» են: Հրատարակությունը կատարվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 363 ձեռագրից, որի մեջ բնագիրն ամբողջությամբ ընդօրինակված է երկու անգամ (էջ 226ա—263բ և 263բ—304ա): Հրատարակությանը կցված է 1664 թ. Հերապետ Ջուղայեցու ընդօրինակած և այժմ Հ. Քյուրոյանի սեփականություն եղող ձեռագիր օրինակի ունեցած տարընթերցվածների ցուցակը (էջ 195—199):

Նախքան հատորի լույս տեսնելը՝ բնագրի Ա—Ե գլուխները հրատարակվել են Բազմավեպ-ում, 1956, էջ 8—14 և 150—155:

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 83՝ «Բանք խրատական...» (էջ 229բ—271բ) և № 3469՝ անխոր. (էջ 46բ—89բ):

○ Տպագիր օրինակների հետ համեմատած՝ Ադամգրքերը ձեռ. տաղարաններում ընդհանրապես շատ ունեն հավելյալ տներ:

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1՝* «Վասն սրբոց առաքելոցն Քս.ի, ասունըս ԼԶ» *(էջ 98ա—100ա), № 83՝ խոր. նըման (էջ 159բ—162ա), № 1096՝ խոր. նման (էջ 139բ—141բ), № 1450՝ խոր. նման (էջ 143ա—143բ), № 424՝* «Տաղ Առ. վրդ.է» *(էջ 224բ—226ա) և № 2672՝* «Գովասանք սբ. առաքելոցն Քս.ի» *(էջ 214ա—215ա և շար. 216բ—217ա): Վերջին ձեռագրում տաղը երկու մասի է բաժանված. առաջին մասը (էջ 214ա—215ա) պարունակում է միայն Ա—Ղ տները՝ վերոնշյալ խորագրով. իսկ երկրորդ մասը (էջ 216բ—217ա), որ ընդգրկում է Ճ—Ք տները, որպես առանձին տաղ կրում է* «Տաղերս յԱռ. վրդ.է ասացեալ» *խորագիրը և ունի* «Ճառագայթիւք ճաճանչանման, | Բազմիք ի փառս անզուգական» *սկզբնավորությունը:*

Տես դարձյալ Տյուբինգենի KUB Ma XIII 97՝ «Ի Սիւնեաց տէր Առ.է...» (fol. 18^{r}—22^{r}, *սկ.* «Այգի տընկեալ ես վայելուչ». *Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 266ա, սկ.* «Այգի տընկեալք էք վայելուչ»), *№ 83 (էջ 557բ, սկ.* «Այգի տընկեալ էք վայելուչ»):

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Éloge des Saints et des Apôtres du Christ“ *(թարգմ. Ա. Զոպանյան), տես՝* „Ros. III“, p. 89—94.

38. Տաղ Յովաննու, ի յԱռաքել վարդապետէ. «Այսօր երկնային դասք հրաբուն սեռին | Տօնեն զյիշատակ Յովաննու մեծ

Կարապետին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 25բ—26բ:*

Սկզբնատառերը՝ «Այս Յովանու յԱռաքել վարդապետէ»: *Չափը՝ 5—5 | 5—3—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

39. Տաղ ազնիւ [Թէոդոսի և այլ թագաւորացն], ի յԱռաքել վարդապետէ. «Անեղ անմահին, անճառ արքային | Դուք անուանակիցք կոչեցայք ի յերկրի ստորին...», *անդ, էջ 33բ—34ա:*

Սկզբնատառերը՝ «Այս յԱռաքելէ»: *Չափը՝ 5—5 | 5—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

40. Տաղ ազնիւ [Վարդանանց և Ղևոնդեանց], Դասք հրէականի ձայնն է. «Այսօր միաբան ազգըս Հայաստան | Տօնեմք զյիշատակ Վարդանանցն, | Որք պըսակեցան...», *անդ, էջ 60ա—60բ:*

Ստորին լուսանցքում նշված՝ «Ի յԱռաքել վարդապետէ»: *Տես նաև նույն մատ. ձեռ. № 7349 (էջ 130ա): Չափը՝ 5—5 | 5—3—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

41. Յորդորակ [Թէոդորոսի զօրավարին]. Դասքն հրէական. «Այսօր միաբան ժողովք ամենայն | Տօնեմք զյիշատակ վըկային մեծ եւ պատուական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 61ա—61բ:*

Թեև հեղինակի անուն չի կրում, բայց նախորդ տաղի (§ 40) սկզբնատողով ու չափով է գրված, ուստի և այն նմանապես վերագրում ենք Առ. Սյունեցուն:

42. Յորդորակ [Պետրոսի հայրապետին], յԱռաքել վարդապետէ. «Այսօր զուարճանայ մերս եկեղեցի, | Տօնէ զյիշատակ Պետրոսի սուրբ հայրապետի...». *անդ, էջ 28բ—29ա:*

Սկզբնատառերը՝ «Այս Առաքելի»: *Չափը՝ 5—5 | 5—3—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

43. Տաղ մեծատան և Ղազարու, ի յԱռաքել վարդապետէ, «Արդ ունկըն դըրէք եւ զբանս լըսեցէք, | Ով աշխարհասէր մեծատունք, եղուկ ասացէք...», *անդ, էջ 79ա—80ա:*

Սկզբնատառերը՝ «Այս Առաքել վարդապետի»: *Տես նաև նույն մատ. ձեռ. № 7349՝ խոր. նույն (էջ 156ա): Չափը՝ 5—5 | 5—3—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

44. Տաղ գեղեցիկ [անառակին], ի յԱռաքել վարդապետէ. «Ի քեն մաղթելով հայցեմք Յիսուս միածին, | Տուր մեզ քաւութիւն մեղաց ըստ անառակին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 70ա—70բ:*

Սկզբնատառերը՝ «Ի յԱռաքելէ»: *Չափը՝ 4—3—5 | 4—3—5: Վերագրում ենք Առ. Սյունեցուն:*

Սույն տաղի մասը կամ շարունակությունն է՝

45. Ձայն փոխէ [յԱռաքել վարդապետէ[1]]. «Վարդապետըն ամենայնի, | Հօր ծնուածին ծընունդ որդի, | Որ ի հօրէ անմեկնելի...», *անդ, էջ 70բ—71բ:*

Սկզբնատառերը՝ «Վարդապետին երգ բան»: *Չափը՝ 4—4 | 4—4: Վերագրում ենք Առ. Սյունեցուն: Մասն է նախորդ տաղի (§ 44):*

Տաղն այսպես երկմասնյա է նաև նույն մատ. № 7349 ձեռագրում, ուր առաջին մասը կրում է «Տաղ գեղեցիկ և լաւ» *խորագիրը (էջ 149բ), իսկ երկրորդը՝* «Ի նոյն Առաքելէ» *(էջ 149բ):*

46. Տաղ ձեռնադրութեան ասա, յԱռաքել վարդապետէ ասացեալ. «Տարփացեալ ըղձանամք տէր Յիսուս քոյդ զենմանցդ, | Զոր բաշխես ի հրեղէնսն անըսպառ ծաւալմամբ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3189 էջ 34բ—36բ:*

Սկզբնատառերը՝ «Տեր Առաքեալ ասե է»: *Տես նաև նույն մատ. ձեռ. № 423 (էջ 250բ—251ա), № 425 (էջ 336բ—337ա), № 1082 (էջ 66ա—67բ), № 1225 (էջ 77ա—78ա), № 2027 (էջ 192ա—192բ), № 7129 (էջ 77ա—78բ), № 7717 (էջ 50ա—51ա), № 5328 (էջ 285ա—285բ), և Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1284 (էջ 28բ), № 1252 (էջ 111բ, սկ.* «Տարփացեալ ըղձանաւք»*). Զմմառի Մատ. ձեռ. № 92 (էջ 54ա, սկ.* «Տարփացեալ ըղձամբ»*):*

---

[1] *Ավելացված է ստորին լուսանցքում:*

Ձեռագրերում կրում է «Տաղ ձեռնադրութեան», «Տաղ օծման քահանայից» և նման խորագրեր. Երևանի վերոնշյալ № 2027-ում՝ «Ի տէր Առաքելէ Սիւնեաց»:

47. Տաղ ձեռնադրութեան ի յԱռաքել վարդապետէ. «Ի մեծի հրաշափառ հանդիսիս, | Ծնորհաբաշխ պարգևաց սուրբ տօնիս...», տես՝ «Գիրք աստիճան տալոյ դըպրաց և սարկաւագաց և քահանայից և գաւազան տալոյ վարդապետացն», Կ. Պոլիս, 1752, էջ 153—155:

10 տուն, որոնց սկզբնատառերը՝ «Ի տէր Առաքել»:

Այլ տպ.— Տաղ ձեռնադրութեան ի յԱռաքել վարդապետէ. «Ի մեծի հրաշափառ...», տես՝ «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 279:

10 տուն:

Այլ տպ.— Տաղ ձեռնադրութեան. «Ի մեծի հրաշափառ...» (հրատ. Մ. Պոտուրյան), տես՝ «Բերթուածներ», էջ 173—174:

9 տուն: Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 651 ձեռագրից:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3189 (էջ 36բ—38ա), № 1082 (էջ 67բ—69ա), № 1225 (էջ 78ա—79ա), № 1059 (էջ 119ա—120ա), № 1069 (էջ 91բ—93ա), № 5328 (էջ 285բ—286ա), են. Վիեննայի Մըխիթ. Մատ. ձեռ. № 25 (էջ 133բ), № 645 (էջ 63ա), № 1041 (էջ 539ա) և № 1252 (էջ 110ա, սկ. «Մեծի հրաշափառ»). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 398 (էջ 240բ) և № 444 (էջ 147բ). Զմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 383բ):

Ձեռագրերում բնագիրը կրում է նաև «Տաղ պատուական» և «Յորդորակ» վերնագրերը: Տաղի լրիվ օրինակներում տների թիվը 12 է՝ «Ի տէր Առաքելոյ» սկզբնատառերով:

48. Վասն առաքինեաց է բանքս. «Աստուածային գըրախտ տընկեալ, | Ծառ լուսեղէն պըտղաբերեալ...» (հրատ. Մ. Պոտուրյան), տես՝ «Բերթուածներ», էջ 71—78:

Այբբենական կարգով. երեք տուն հորդորակով՝ ընդամենը 39 տուն: Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 47 (հին) ձեռագրից:

Տես նաև Զմմառի Մատ. ձեռ. № 83 (էջ 64ա). Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 83 (էջ 171բ—174ա) և № 1450 (էջ 139ա—139բ): Վերջին ձեռագրում այբբենական այս տաղին, որպես անմիջական շարունակություն, հաջորդում է մի նոր մաս (էջ 140ա—140բ), որի սկզբնավորությունն է՝ «Պայծառազեղ հոգով ծաղկեալ, | Ի յառագաստըն հրաւիրեալ», իսկ երկտողերի սկզբնատառերը կազմում են՝ «Պայծառացիս հոգով քոյին ի լուսեղէն առագաստին»: Այս մասը փաստորեն նախորդ՝ այբբենական մասի մի նոր խմբագրությունն է:

49. Գանձ հրաշափառ սուրբ էջմիածնին, ասացեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց. «Տեսիլ անճառ, անեղ ու անքընին | Զարմանազան հիացմամբ ի լին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1042, էջ 342բ—359բ:

Սկզբնատառերը՝ «Տէր Առաքեալ»:

50. Տաղ [Ծողակաթին], ի Դասք հրեականի ձայնն. «Այսօր բանն աստուած ի յերկնից իջեալ, | Ի Վաղարշապատ քաղաքին տաճար հաստատեալ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 174բ—175ա:

Հեղինակի անուն չի կրում: Նկատի ունենալով, որ ձեռագիրը հիմնականում Առաքելների ժողովածու է և մյուս կողմից տաղը գրված է 5—5 | 5—3—5 չափով, վերագրում ենք Առ. Սյունեցուն:

51. Յորդորակ [ծաղկազարդի], յԱռաքել վարդապետէ. «Արարիչն արարածոց՝ այսօր յայտնեցաւ, | Ի յաւանակի նորոյ՝ սիրով բազմեցաւ...», անդ, էջ 96ա—96բ:

Սկզբնատառերը՝ «Այս յԱռաքելէ»: Նույն մատ. № 7349 ձեռագրում «Տաղ [ծաղկազարդի]» խորագրի տակ (էջ 180բ—181ա) գտնում ենք նույն տաղն սկզբից երեք տուն կրճատված բնագրով՝ սկ. «Յիսուս արքայն երկնաւոր՝ մարմնով նիւթական, | Ի յաւանակի նըստեալ՝ գովեալ թագաւոր». սկզբնատառերը՝ «ՅԱռաքելէ»: Չափը՝ 4—3—5 | 4—3—5:

52. Յորդորակ [յարութեան], ճանապարհ բարի Քրիստոսի ձայնն է. «Անտեսըն հրեղէն գաւուն՝ յերկրի երեւեալ, | Կամաւ հօր և սուրբ հոգոյն՝ ի խաչ բարձրացեալ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 115ա—115բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 7961՝ «Այլ տաղ յԱռաքելէ՝ յարութեան» *(էջ 112բ)։ Չափը՝ 4—3—5* | *4—3—5։*

53. Յորդորակն է [մարտիրոսաց]. «Ի յաստուածորդոյն ընտրեալ՝ գունդք երանեական, | Ժողովք համօրէն սրբոց՝ վըկայք պատուական...», *անդ, էջ 43բ—44ա։*

Սկզբնատառերը՝ «Ի յԱռաքելէ»: *Չափը՝ 4—3—5* | *3—3—5:*

54. Օրհնութիւնք. «Տէրն որ օրհնեաց զնախնեին Ադամ, | Զենովք, ըզՆոյ և զԱբրահամ...» *(հրատ. Մ. Պոտուրյան), տես՝ «Բերթուածներ», էջ 164—166։*

15 տուն։ Տների սկզբնատառերը՝ «Տէր Առաքեալ ասե ա ա»: *Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 1330 և № 1289 ձեռագրերի հիման վրա։ Ձեռագրերում խորագրված է* «Օրհնութիւնք աստուծոյ Առ.է» *և* «Տաղ օրհնութեան զոր ասացեալ է Առ. վրդ.է»:

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7717՝ «Օրհնութիւն հասարակաց» *(էջ 234ա—235բ). Հռոմի* Bibl. Vat. Cod. Vat. Arm. 6՝ «Մաղթանք ի սբ. Առ.է ասացեալ վասն օրհնութեան» *են*[1]. *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1002՝ անխոր. (էջ 11ա)։*

55. Տաղ ի յԱռաքել երիցէ. «Մեծ խորհուրդ յերկրի այսօր յայտնեցաւ, | Արարիչն աստուած ընդ մարդկան դատապարտեցաւ...»:

Այս տաղը, որ մենք արդեն տեղադրել ու նկարագրել էինք ԱՌԱՔԵԼ ԵՐԷՑ անվան տակ[2], *այժմ վերագրում ենք Առ. Սյունեցուն՝ նկատի ունենալով, որ գրված է Սյունեցուն հատուկ տաղաչափությամբ (5—5* | *5—3—5)։*

Սյունեցու «Աստուածն ամենի միածին որդի» *սկզբնավորությամբ տաղը (տես վերևում՝ § 9) ևս, որը գրված է նույն չափով, վիեննական ձեռագրերից մեկում կրում է* «Առաքել երէց» *անունը։*

ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐ

Ա.— ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1. Լուծմունք յաղագս Սահմանացն Դաւթի անյաղթ փիլիսոփայի: Տէր Առաքելի՝ եռամեծի և քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, աշակերտի երիցս երանելւոյն Գրիգորի Տաթևացւոյ տիեզերալոյս վարդապետի արարեալ բանս խրատական ոգեշահս, և հանճարս իմաստայեղս ի մեկնութիւն Սահմանաց գրոցն Դաւթի անյաղթ փիլիսոփայի, ի յիղձ մաղթանաց ոմանց բանասիրաց եղբարց հարազատաց նորին աշակերտաց: Վասն Նախերգանացն Սահմանացն Դաւթի. «Սահման՝ թէ քանի նշանակութիւն ցուցանէ: Լծ. Այսինքն տասն յատկութեամբ զանազանի: Նախ թէ զի՞նչ է սահման բառ անուանն...»: *Տես հետևյալ հրատ. մեջ, «Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի անյաղթ փիլիսոփայի՝ Հայոց իմաստասիրի, շարադրեալ ընդդէմ իմաստակ Պիհռոնացւոց, որք ուրանային զճշմարտութիւն իմաստասիրութեան, և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ տեառն Առաքելի եռամեծ վարդապետի, աշակերտի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ», են, Մադրաս, 1797, էջ 147—650։*

Բուն Սահմանաց գրքի մեկնությունն ունի այսպիսի վերնագիր. «Նորին տէր Առաքելի հոգեհնորոգ վարդապետի վասն Սահմանացն Դաւթի քաղուածու բան» *(էջ 173, սկ.* «Որբ միանգամ: Լծ. Բազմաւորակի դնէ: Այսինքն՝ զի ամենեցուն է իմաստութիւն, որ ունին զտենչումն»):

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1110 (էջ 87ա—273ա), № 1148 (էջ 85ա—266բ), № 1234 (էջ 8ա—116ա), № 1281՝ հատվածներ (էջ 172ա—180բ), № 1441 (էջ 62բ—88բ, քաղված.), № 1689 (էջ 264ա—496բ), № 1694 (էջ 186ա—412բ), № 1748? (էջ 291ա—297բ), № 1757 (էջ 3ա—302բ), № 1758 (էջ 5ա—269ա), № 1759 (էջ 3ա—

---

[1] *Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1892, էջ 274։ Նաև՝* «Codices armeni Bybliothecae Apostolicae Vaticanae», etc., Romae, 1927, p. 227.

[2] *Տես սույն, հտ. Ա, էջ 1156, § 3։*

240ա), № 1761 (էջ 5ա—174բ), № 1762 (էջ 3ա–230բ), № 1764 (էջ 176ա—305ա), № 1834 (էջ 3ա—172բ), № 1835 (էջ 8ա—83ա), № 1836 (էջ 7ա—115բ), № 1837 (էջ 3ա—84ա), № 1838 (էջ 9ա—174ա), № 1839 (էջ 7ա—132ա), № 1840 (էջ 2ա—61ա), № 1841 (էջ 13ա—268ա), № 1842 (էջ 2ա—169ա), № 1843 (էջ 3ա—100բ), 1844 (էջ 7ա—140բ), № 1845 (էջ 51բ—164բ), № 1846 (էջ 3ա—302բ), № 1847 (էջ 3ա—186ա), № 1848 (էջ 1ա—139ա, սկզբից թերի), № 1849 (էջ 1ա—114ա), № 1922 (էջ 3ա—132ա), № 2108 (էջ 413ա—507ա), № 2332 (էջ 192ա—270բ), № 2333 (էջ 277ա—404բ), № 2334 (էջ 123ա—325բ), № 3128 (էջ 219ա—355բ), № 3329 (էջ 1ա—231ա), № 4027 (էջ 365—714), № 4476 (էջ 11ա—77բ, քաղվածք), № 4982 (էջ 99ա—331բ), № 5024 (էջ 2ա—126ա), № 5051 (էջ 3ա—135ա), № 5747 (էջ 83ա—232բ), № 7550 (էջ 21ա—83բ, քաղվածք), № 8082 (էջ 1ա—151բ), № 8371 (էջ 100ա—206բ, քաղվածք) ևն: Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 797 (էջ 1ա, սկ. «Արդեօք գիրքս այս քանի՞ նշանակութիւն ցուցանէ»). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 33 (fol. 1). Անկյուրիայի Կարմիր-վանքի ձեռ. № 3 (մասն Բ, էջ 1), № 105 (էջ 419բ) և № 138 (էջ 93). Նիկոմիդիայի—Անթիլիասի ձեռ. № 22=հին № 19 (էջ 3ա). Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 64 (էջ 1), № 80 (էջ 3), № 107 (էջ 9). Սեբաստիայի Ս. Նշանի վանքի ձեռ. № 168, № 207 և № 210. Արմաշի Մատ. ձեռ. № 55 (էջ 3ա—138ա) և № 189 (էջ 1ա—127բ). Զմմառի Մատ. ձեռ. № 136 (էջ 249ա—250ա):

Ձեռագրերում սույն երկի խորագիրն առհասարակ այսպես է. «Տէր Առաքելի եռամեծի և քաջ հռետորի, և անյաղթ փիլիսոփայի, աշակերտի երիցս երանելոյն Գրիգորի տիեզերալոյս վարդապետի արարեալ բանս խրատականս, ոգեշահս և հանճարս իմաստայեղս ի մեկնութիւն Սահմանաց գրոց, ի յիղձ մաղթանաց ոմանց բանասիրաց, եղբարց հարազատաց նորին աշակերտացն»: Իսկ բնագրի սկզբնավորությունը մի քանի ձեռագրերում պատահում է նաև «Քանի՞ նշանակութիւն ցուցանէ» բառերով:

Աղեքսանդր Ջուղայեցու կազմած «Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք» կոչված ժողովածուի մեջ գտնվում է Առ. Սյունեցու այս երկից մի քաղվածք՝ հետևյալ խորագրով. «Ի բանից Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի ի Սահմանաց լուծմանցն, ժողովեալ ի նոյն սրբազան Աղեքսանդր կաթողիկոսէ Ամենայն Հայոց» (սկ. «Սահմանն է անուն ծաւալեալ: Անունն է սահման կարճառօտ: Անունն յերից իրաց լինի՝ ի յիրէն, ի ձայնէն և ի գործոյն»), տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1987 (էջ 301ա), ևն. տես նաև Հալեպի մասնավոր անձանց ձեռ. № 24 (էջ 480, սկ. նույն)[1]:

2. Նորին տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի, ի տեսութիւն բանին որ ասէ՝ Ամենայն չար տանջելի. «Հրց. Զի՞նչ է որ ասէ՝ Ամենայն չար տանջելի: Պտ. Ի վերայ այսր բանի երեսուն և երեք ինչ խնդրելի է: Նախ թէ յի՛նչ պէտս հարկ եղև փիլիսոփայիս գրել զայս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1838, էջ 174ա—188ա:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1110 (էջ 275ա—291բ), № 1148 (էջ 266բ—282բ), № 1234 (էջ 116ա—126ա), № 1689 (էջ 496բ—518ա), № 1757 (էջ 303ա—327բ), № 1758 (էջ 269ա—287բ), № 1759 (էջ 240ա—260բ), № 1761 (էջ 174բ—186բ), № 1762 (էջ 233ա—253ա), № 1764 (էջ 305բ—316բ), № 1834 (էջ 172բ—187ա), № 1835 (էջ 83ա—88բ), № 1836 (էջ 116ա—125բ), № 1837 (էջ 84ա—89բ), № 1839 (էջ 132ա—143ա), № 1840 (էջ 61ա—63ա, սկ. «Նախ գիտելի է զի վասն երեք բանի հարկեցաւ իմաստասէրս գրել զայս»), № 1842 (էջ 169ա—183ա), № 1843 (էջ 101ա—108բ), № 1844 (էջ 141ա—151ա), № 1845 (էջ 164բ—174ա), № 1846 (էջ 302բ—329բ), № 1847 (էջ 186ա—202ա), № 1848 (էջ 140ա—150ա), № 1849 (էջ 114ա—123ա), № 1922 (էջ 132ա—143ա), № 2108 (էջ 507ա—515ա), № 2332 (էջ 271բ

[1] Հմմտ. Ա. Սյուրմեյան, «Մայր ցուցակ», հտ. Ա, էջ 375:

—278ա), № 2333 (էջ 405ա—415բ), № 2334 (էջ 330ա—343ա), № 3128 (էջ 355բ—367ա), № 4027 (էջ 714—743), № 4982 (էջ 332ա—348բ), № 5024 (էջ 127բ—137բ), № 5051 (էջ 135ա—148ա), № 5747 (էջ 232բ—244բ), № 7550 (էջ 83բ—89ա), № 8082 (էջ 151բ—163բ), են։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 442 (էջ 1ա), № 797 (էջ 73ա). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 3 (fol. 141^r). Անկյուրիայի Կարմիր-վանքի ձեռ. № 3 (մասն Բ, էջ 125). Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 22=հին № 19 (էջ 82բ). Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 64 (էջ 425), № 107 (էջ 322). Արմաշի Մատ. ձեռ. № 55 (էջ 138ա—148բ)։

Օրինակներից մի քանիսում վերնագրին կցված է այսպիսի հիշատակություն. «Զկլայեցւոյ մեկնածն սա կու պարզէ»։ Որոշ օրինակներ սկզբնավորության «Հարց» կամ «Հարցումն» բառը չունեն և սկսվում են ուղղակի «Զի՞նչ է որ ասէ» բառերով։

3. Յաղագս քերականութեան։ Համառօտ լուծմունք ի տէր Առաքելէ Սիւնեաց եպիսկոպոսէ ի մեկնութիւն քերականութեանս, պէս պէս յաւելութեամբ պարզեալ վասն դիւրալուր հասկանալոյ զխորութիւն բանից քերականին. «Յաղագս նախերգանի քերականութեան։ Առաջին որ ասէ՝ Յաղագս քերականութեան։ «Նախ պարտ է գիտել, զի ամենայն խորագիր ցուցանէ զաս[ացող] գրոցն, որպէս այն որ ասի Ներածութիւն Պորփիւրի...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2333, էջ 3ա—46ա։

Քերականության բնագրի մեկնությունն ունի այսպիսի խորագիր. «Յաղագս քերականութեան» (էջ 6ա, սկ. «Քերականութիւնն է հմտութիւն, որք ի քերդողաց և ի շարագրաց իբրու բազում անգամ ասացելոց։ Լծ. Ոմանք ասացին, թէ նիւթ և սկիզբն բանականութեանս ձայնն է»)։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2332՝ խոր. նույն (էջ 3ա—31ա), № 2334՝ խոր. նույն (էջ 4ա—53բ), № 2380՝ խոր. նույն (էջ 390ա—446բ), № 3883՝ խոր. նույն (էջ 213բ—288ա), № 1100՝ խոր. նույն (էջ 191ա—231ա, վերջից թերի), № 55՝ «Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք։ Արարեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց եպիսկոպոսէ, աշակերտի եռամեծի Գրիգորի քաջ հռետորի, ի խնդրոյ երկուց ոմանց աշակերտակաց՝ նախ զերիմաստ և քաջ վարդապետի Եզեկիէլի Կապանեցոյ և երկրորդ մեծահանճար գրոց աշակերտեալ անձին Շմաւոն քահանայի. որք բախանձեցուցին զմեզ յայս գործ։ Եւ մեք ըստ ջերմեռանդ խնդրոց նոցին արարաք լուծումն քերականութեանս, ի յորդորումն ուսումնականաց բանաւոր արհեստից. մատուակել բանաւոր մտաց զանազան հանճարս, ի մեկնութիւն քերականութեանս պէս պէս յաւելութեամբ պարզեալ, վասն դիւրալուր հասկանալոյ զխորութիւն բանից քերականին» (էջ 406ա—466ա), № 1770՝ խոր. նման (էջ 262ա—295ա), № 530՝ սկզբից թերի (էջ 78ա—116բ), են։ Տես դարձյալ Լենինգրադի Инст. Вост. арм. рук. А—1. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատ. գրոց 14 ձեռ. № 142. Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 21=հին № 28 (էջ 264ա—293ա)։

4. Վասն կենդանակերպիցն, Առաքել վարդապետէ ասացեալ. «Արդ երկոտասան տեղիք առերեսօք աշխարհիս և բաժանեցին զամէն մէկ երեսուն աստիճան...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6731, էջ 200բ—201ա։

Բ.— ՃԱՌԵՐ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԿԵՐ

1. Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի և հոգենորոգ վարդապետի քարոզ տարեմըտին ի բանն որ ասէ. Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր զի սքանչելիս արար. «Սքանչելի է աստուած և սքանչելի են ամենայն գործ[ք] նորա զի քննութեամբ ոչ ոք կարէ հասանել ի վերայ թէ ո՛րպէս արարչագործեաց աստուած զարարածս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 8ա—10բ։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2229 (էջ 12ա—15ա), № 2114 (էջ 21ա—22ա), № 662 (էջ 307ա—312ա), № 6287 (էջ 6ա—10բ), № 4121 (էջ 5—11, սկ. «Սքանչելի է աստուած և սքանչելի են գործք») և № 969 (էջ 12ա—15բ, սկ. «Աստուած և սքանչելի են ամե-

նայն զործ նորա»). *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 1). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ.* № *749 (էջ 18ա)*։

2. Նորին տեր Առաքելի քարոզ ծննդեան ի բանն որ ասե. Սիրելին ի սենեակ մեր երգեսցուք զսեր. «Ասե ուրեմն նոգեբուղխն և մեծն յիմաստունս արքայածինն Սողոմոն, խանդակաթ սրտիւ և փաղաքշագիմեալ ոգւով...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584 էջ 10բ—14բ*։

Տես նաև նոյն մատ. ձեռ. № *2229 (էջ 15ա—19բ),* № *2114 (էջ 23ա—27բ),* № *4121 (էջ 11—23),* № *82 (էջ 197ա—200ա),* № *662 (էջ 217ա—227ա),* № *665 (էջ 263բ—269ա),* № *6287 (էջ 10բ—13բ, վերջից թերի) և* № *969 (էջ 15բ—22ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 3)*։

3. Նորին առ նոյն քարոզ ծննդեանն ի բանն Սողոմոնի որ ասե յերգսն ի դեմս Աստուածածին կուսին այսպես. Սրացուցեր զմեզ. «Խանդաղատմունք՝ սիրոյ երկնային բաղձանացն զոր եդ աստուած ի նոգիս մեր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584, էջ 14բ—21ա*։

Տես նաև նոյն մատ. ձեռ. № *2229 (էջ 19բ—28բ),* № *2114 (էջ 27բ—34ա),* № *4121 (էջ 23—40),* № *82 (էջ 174բ—178բ),* № *969 (էջ 22ա—31բ),* № *2222 (էջ 36բ—43բ, սկ.* «Խանդաղատմունք սիրոյ երկնայնոցն զոր եա աստուած»), № *662 (էջ 227ա—246ա, սկ* «Արդ նախ եկեսցուք ի տեսութիւն բանիս թէ յորոց դեմս կամ որոց բանի ասե զայս Սող.»), № *6287 (էջ 16ա—21ա, սկզբից թերի). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 9). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ.* № *828 (էջ 163ա, սկ.* «Առ որ ասե արքայածինն Սողոմոն ի յերգսն՝ Սրացուցեր զմեզ, հարկ է ի վերայ իմ այժմ քննել»)։

4. Նորին առ նոյն քարոզ ծննդեանն տեառն ի կուսեն ի բանն Սողոմոնի որ ասե. Ես ծաղիկ դաշտաց. «Ասե ուրեմն յերգս երգոցն. անեղական բնութիւնն՝ ինքն վասն իւր վկայելով ասե այսպես. Ես ծաղիկ դաշտաց եմ: Խոր և զանազան է խորհուրդ աստուածային տնօրենութեան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584, էջ 21ա—28բ*։

Տես նաև նոյն մատ. № *2229 (էջ 28բ—38ա),* № *2114 (էջ 34ա—42ա),* № *4121 (էջ 40—60),* № *2241 (էջ 101ա—105բ),* № *662 (էջ 246ա—261բ, սկ.* «Արդ ի վերայ այսր բանի տասն ինչ զանազանելի է»), № *6287 (էջ 21ա—28բ),* № *2854 (էջ 172ա—176ա) և* № *969 (էջ 31բ—42ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 19). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ.* № *749 (էջ 24ա, սկ.* «Ասե ուրեմն Երգս երգոյն»)։

5. Նորին տեր Առաքելոյ ի նոյն բանն Սողոմոնի որ ասե. Գեղեցիկ ես մերձաւոր իմ. «Անեղական բնութիւնն՝ և անճառից թագաւորն, աննման յեղելոցս և բաղձալին լուսեղինաց դասուց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584, էջ 28բ—38բ*։

Տես նաև նոյն մատ. ձեռ. № *2229 (էջ 38ա—50բ),* № *2114 (էջ 42ա—53ա),* № *4121 (էջ 60—87),* № *82 (էջ 120ա—128բ, սկ.* «Անեղ բնութիւնն և անճառից թագ.»), № *662 (էջ 261բ—290ա),* № *2854 (էջ 168ա—172ա),* № *2170 (էջ 167բ—178ա),* № *6287 (էջ 28բ—38ա) և* № *969 (էջ 42ա—57ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 31)*։

6. Նորին քարոզ ծննդեան տեառն ի կուսեն ի բանն Եսայեայ մարգարեի որ ասե. Եւ յաւել տեր խօսել. «Ահա մեծ և անճառելի քաղցրութիւն անճառելոյն աստուծոյ առ մարդկային ազգս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584, էջ 38բ—44ա*։

Տես նաև նոյն մատ. ձեռ. № *2229 (էջ 50բ—57բ),* № *2114 (էջ 53ա—58բ),* № *4121 (էջ 87—101),* № *6287 (էջ 38ա—43բ) և* № *969 (էջ 58ա—65բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ.* № *214 (էջ 43)*։

7. Նորին քարոզ ծննդեանն տեառն ի կուսեն ի բանն որ ասե. Գտեալ զքեզ արտաքոյ՝ համբուրեցից. «Զբաղձումն անճառաբար սիրոյն զոր առ ի նախաստեղծն ըստ պատկերակցութեան, այլ և նոյն բաղձումն բարոյ արծարծե[ա]լ բորբոքեցաւ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № *7584, էջ 44ա—51ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2229 (էջ 57բ—65բ), № 2114 (էջ 59ա—66ա), № 4121 (էջ 101—119), № 969 (էջ 66ա—75ա), № 6287 (էջ 43բ—49բ), № 662՝ «Նորին տեր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի» * են (էջ 290բ—293բ, սկ.* «Ի բաղձումն անճառաբար սիրոյն»). *իսկ № 665-ում՝* «Նորին [Մատթէոսի]» *են (էջ 254ա—263բ, սկ. նույն), հաջորդելով* «Բազմազան է խորհուրդ» *սկզբնավորությամբ ճառին, որն այս ձեռագրում Մատթեոս Ջուղայեցու անունով է (տես ստորև § 17): Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214՝* «Նորին [Տէր Առաքելոյ]...» *(էջ 51). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749՝* «Ի Տէր Առաքելէ...» *(էջ 21ա):*

8. Քարոզ ի բանն՝ Ուրախ եղիցին երկինք ի վերուստ և ամպք ցօղեսցեն զարդարութիւն. «Արդ որպէս ի գալ[1] մեծի և տիեզերակալ թագաւորի, յորժամ բարբառք և ձայնք փողոցն հնչիցեն, և կարապետք և հրաւիրակք առաջի ընթանայցեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 51ա—59ա:*

Այս և ուրիշ ձեռագրերում սույն ճառն Առ. Սյունեցու քարոզների շարքին է գրանցվում, բայց առանց «Նորին» *նշման, այնպես որ հեղինակությունը երկբայելի է. տես նույն մատ. ձեռ. № 2229 (էջ 65բ—75բ), № 2114 (էջ 66ա—75բ), № 969 (էջ 75ա—86բ) և № 6287 (էջ 50ա—58ա). իսկ № 4121-ը չունի շարքում այս ճառը: Տես դարձյալ Երուսաղէմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 61):*

9. Քարոզ ծննդեան տեառն ի կուսէն ի բանն որ ասէ. Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ. «Արդ ի չորից աւետարանչացն պատուականագոյն զաանի Յովհաննէս, որպէս ցուցանէ արծուանն պատկեր ի կարքն Եզեկիելի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 59ա—66բ:*

Սույն ճառը ևս այս և ուրիշ ձեռագրերում գտնվում է Առ. Սյունեցու քարոզների շարքին, բայց առանց «Նորին» *նշման, տես՝ նույն մատ. ձեռ. № 2229 (էջ 75բ—85ա), № 2114 (էջ 75բ—84բ), № 969 (էջ 86բ—98ա), № 6287 (էջ 58ա—65ա) և № 2222 (էջ 30ա—36բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 74): Բայց Երևանի Պետ. Մատ. № 662 ձեռագրում խորագրված է՝* «Նորին Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի քարոզ ծննդեան» *են (էջ 294ա—306բ). իսկ ընդհակառակն՝ № 4121 ձեռագրում գտնվում է Մատթեոս Ջուղայեցու քարոզների շարքում (էջ 525—545), թեև բնագրի խորագրում նրա անունը չի նշվում:*

10. Տէր Առաքելի հոգէնորոգ հայրապետի ի բանն Մովսէսի մարգարէին որ ասէ. Մարգարէ յարուսցէ. «Հրց. Ասէ Մովսէս՝ Մարգարէ յարուսցէ ձեզ տէր աստուած ձեր յեղբարց ձերոց, իբրև զիս նմա լուիջիք. այսինքն օրինակ տայ զինքն Քրիստոսի...,», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 299ա—309ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 217—247) և № 6287 (էջ 285ա—302ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 335). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749 (էջ 47ա):

11. Տէր Առաքելի հոգէնորոգ հայրապետի և քաջ բաբունապետի ի բանն որ ասէ. Ի վեցից վշտաց փրկեսցէ զքեզ. «Հրց. Զի՞նչ է որ ասէ՝ Ի վեցից: Պտ. Այսինքն, որ զալստեամբն Քրիստոսի փրկեցաւ բնութիւնս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 309ա—328բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 247—304) և № 6287 (էջ 302ա—336ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 352). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749 (էջ 128բ):

12. Տէր Առաքելի հոգէնորոգ հայրապետի ի բան մարգարէին Դանիէլի որ խա նշան լերանցն. «Հրց. Զի՞նչ է նշան լերանցն որ ի վերայ Բաբելոնի, թէ ծխեսցի հի[սի]սայինն, յայնժամ եկեսցէ վախճան Բաբելոնի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 328բ—330բ:*

---

[1] *Այս և մի քանի այլ ձեռագրերում՝* որպիսի գալ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 304—328). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 383). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749 (էջ 55բ)։

13. Քարոզ վասն տեառնեւնին ի բան աւետարանին որ ասէ. Ո՞ մերձացաւ. «Ասէ տերն. Ո՞ մերձեցաւ յիս։ Ասեն աշակերտքն. Ժողովուրդդ պնդեն և նեղեն զքեզ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 330բ—331բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 137—140), որը նմանապես չի նշում հեղինակի անունը. բայց № 6287՝ «Նորին [Առաքելի]» *(էջ 336ա—337բ)։ Անանուն են նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 387) և Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749 (էջ 57ա)։*

14. Ի տեր Առաքելէ Սիւնեաց եպիսկոպոսէ վասն Քանանացի կնոջն ի բանն որ ասէ. Ո՞վ կին դու, մե՛ծ են հաւատք քո. «Եւ պարտ է գիտել՝ ո՞վ հրաւիրեաց զաս այսպիսի զովութեանս արժանի լինել։ Նախ վիշտ նեղութեանցն հրաւիրեաց զնա ի հաւատն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 331բ—334բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 140—149) և № 6287 (էջ 338ա—343ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 389). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749 (էջ 57բ)։

15. Ի տեր Առաքելէ Սիւնեաց եպիսկոպոսէ ի բան մարգարէին որ ասէ. Աստուած, մտին հեթանոսք *են.* «Վառեալ նախանձովն աստուծոյ՝ ո՛չ հանդարտէ, այլ ողոքելով ի զուրս արկանէ զամենատեսն անելով. Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 334բ—337բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 149—158) և № 6287 (էջ 343ա—347ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 394)։

16. Նորին քարոզ ի բանն որ ասէ. Սիրեցէք զթշնամիս ձեր *են.* «Որպէս զամենայն ինչ ի հակառակաց կազմեաց աստուած, այսինքն ի յանգոյից ի գոյութիւն եած և զչորս տարերս միմեանց հակառակ կազմեաց, և զհոգի և զմարմին ներհակ ի մի կապեաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 337բ—340բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 119—126) և № 6287 (էջ 347ա—352ա, սկ. «Որպէս ամենայն ինչ ի հակառակաց կազմեաց»*). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 400)։*

17. Նորին քարոզ ի բանն որ ասէ. Ահա մեղաւորք կորիցեն, այլ թշնամիք տեառն *են.* «Բազմազան է խորհուրդ Աստուածաշունչ գրոց, զի միով բանիւ զսկիզբն և զկատարումն ցուցանէ [զ]պատճառն և զգործն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 340բ—343բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4121 (էջ 127—136) և № 6287 (էջ 352ա—357բ). Իսկ № 665՝ «Ի Մատթէոսի...» *(էջ 248բ—253բ) վերագրում է Մատթեոս Պարթևին։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214՝* «Նորին [տեր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի] քարոզ» *են. (էջ 404). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 749՝ անխոր. (էջ 25ա)։*

18. Նորին քարոզ յարութեան ի բան աւետարանին որ ասէ. Ահա շարժումն մեծ եղև զի հրեշտակ տեառն իջեալ. «Հիացեալ ընդ անհասութիւն դատաստանացն աստուծոյ, ասէ Պօղոս. Ո՜վ խորք մեծութեան և զօրութեան և գիտութեան աստուծոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7584, էջ 343բ—346բ (վերջից թերի)։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 6287 (էջ 357բ—363ա), № 4130 (էջ 690ա—693ա), № 3527 (էջ 23ա—27ա) և № 2222 (էջ 43բ—48ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 214 (էջ 409?)[1]*։*

19. Նորին տեր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի և քաջ հռետորի արարեալ քարոզ ի բան առաքելոյն որ ասէ. Ուր առա-

---

[1] *Հմմտ. «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 209։*

ւել եղեն մեղքն՝ առաւել եղեն շնորհք. «Տեսողն աննառից և բարձացեալն ի բնաբարձութիւնս, յափշտակեալն յերրորդն յերկինս, որ եւես և լուաւ բանս աննառս, զոր ենեալ պատմէ մեզ զխորս աննառից...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4121, էջ 158—183։*

20. Ի տեր Առաքելէ, ի բան սաղմոսին՝ Զի փշրեաց զդրունս պղնձ. «Յայտ է զի վասն երթալոյն տեառն ի դժոխս ասէ զայս. բայց թէ զի՞նչ էր դրունք պղնձի, և զի՞նչ նիգք երկաթի: Այսինքն է զի պղինձ զժահնռութիւն ասէ մեղաց, որով անձնչէին գործողքն...», *անդ, էջ 183—186։*

21. Նորին վասն խոստովանութեան, ի բան՝ խոստովան եղերուք տեառն զի քաղցր է. «Նախ պարտ է գիտել թէ զի՞նչ է խոստովանութիւն: Երկրորդ՝ վասն է՞ր ասէ եղերուք: Երրորդ՝ զի՞նչ է ասելն թէ քաղցր է: Չորրորդ՝ զի՞նչ է յաւիտեան ողորմութիւնն: Արդ՝ խոստովանութիւնն երիս իրս բացայայտէ...», *անդ, էջ 186—188։*

Տես նաև նոյն մատ. ձեռ. № 737 (էջ 143ա—144բ)։

22. Նորին ի բան սաղմոսին՝ Օտար եղէ ես եղբարց իմոց *ևն*. «Արդ ամենայն բանք մարգարէիս յերիս դեմս իմանի: Այսինքն՝ նախ ընդդէմ բնութեանս և սատանայի: Երկրորդ՝ ի դեմս Քրիստոսի և Հրէից: Երրորդ՝ ընդդէմ իւրն և Սաւուղացոցն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4121, էջ 188—192։*

23. Նորին քարոզ [ի բանն]՝ Փրկեսցէ զիս տէր ի ճակառակութենէ ժողովրդոց. «Նախ տեսցուք թէ վասն է՞ր ասէ փրկեսցէ և ոչ թէ փրկեաց: Երկրորդ՝ վասն է՞ր ասէ զիս և ոչ զմեզ...», *անդ, էջ 192—195։*

24. Նորին ի բանն՝ Երկինք պատմեն. «Եթէ վասն է՞ր ինքն[1] ոչ պատմէ, այլ երկնիցն աւանդէ զպատմելն: Այսինքն է, զի երեք իր գոյ զանազան ի մարդն և երիւք ճանաչի ի մենջ...», *անդ, էջ 195—198։*

[1] *Ձեռագրում՝* ինքս։

25. Նորին քարոզ ի բանն՝ Ես որպէս ջուր հեղայ և ցրուեցան. «Նախ տեսցուք[1], թէ վասն է՞ր ասէ. Ես որպէս ջուր հեղայ: Երկրորդ՝ զի՞նչ է որ ասէ. Ցրուեցան ամենայն ոսկերք իմ...», *անդ, էջ 199—202։*

26. Նորին ի բան՝ Առ քեզ տէր համբարձի զանձն իմ. «Գիտելի է, զի չորս իրս բացայայտէ բանս այս: Նախ՝ զի ասէ. Առ քեզ տէր համբարձի զանձն իմ: Երկրորդ՝ Աստուած իմ ի քեզ յուսացայ...», *անդ, էջ 202—206։*

27. Նորին [ի] բանն՝ Դուք տաճար աստուծոյ էք և հոգի աստուծոյ բնակեալ. «Պարտ է գիտել, թէ ո՛րպէս եմք տաճար աստուծոյ: Արդ՝ ո՛չ թէ զմարմինս ասէ տաճար աստուծոյ, այլ զհոգին...», *անդ, էջ 206—208։*

28. Նորին ի բանն՝ Զօրութիւն իմ և օգն. «Կրկին է ակիզբ գործոյ մարդոյն. մէկըն ի կողմանէ մարդոյն, որ է բանականութիւնն, և միւսն ի կողմանէ աստուծոյ, որ է աստուածային զօրութիւնն...», *անդ, էջ 208—211։*

29. Նորին տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի քարոզ. Ոչ է պիտոյ բժիշկ ողջաց *ևն*. «Արդ որպէս պիտոյ է լոյս՝ աչաց և ձայն՝ ականջաց և խօսք՝ լեզուի, և այլն, և սոյնպէս պիտոյ է բժիշկ հիւանդաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8233, էջ 137բ—139բ։*

Տես նաև Համբի Հայոց Ս. Վլաս եկ. ձեռ. № 25 (էջ 159բ)։

30. Քարոզ Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ Առաքել վարդապետի. «Ո՞վ է ի ձենջ որոյ իցէ բարեկամ և երթայցէ առ նա ի մէջ գիշերի և ասիցէ ցնա. Բարեկամ տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս: Զայս առակ և դատաւորին միապէս խրատեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8233, էջ 140ա—144ա։*

31, Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի հոգինորոգ (sic) վարժապետի քարոզ ի

[1] *Ձեռագրում՝* նախատեսցուք։

բանս Երգս երգոյն՝ Կալարուք աղուեսունս փոքունս զապականիչս. «Ամենայն աստուածային բանք ի ձեռն առակախօսութեանն զանազան խորհուրդս յայտնեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6287, էջ 363ա—370ա։*

Տես նաև Թբիլիսիի Ձեռագր. Ինստ. հայ. ձեռ. № 180 (էջ 119բ). Համի Հայոց Ս. Վլաս եկ. ձեռ. № 25 (էջ 189ա)։

32. Ճառ համառօտ, Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսէ. «Արարիչն աստուած բոլորից համատարած զաշխարհ զի մնայ յաւիտեան, ասէ մարգարէն: Եւ որպէս ինքն աստուած մնացական է և յաւիտենական, նոյնպէս և աշխարհն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2108, էջ 515բ—519ա։*

Բնագրի խորագիրն այլ ձեռքով է ավելացված։

33. Նորին վասն օրհնութեան մեռոնի. Իւղ թափեալ է անուն քո. «Գիտելի է, զի առաքինութիւնն և սրբութիւն է աստուածատեսակ նմանութիւն ըստ կարողութեան մարդկան, ասէ փիլիսոփին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 20, էջ 339ա—341բ։*

Սույն ճառի հեղինակը որոշելու համար չի օգնում նրա վերնագրի «Նորին» *բառը, քանի որ ձեռագրում նրան նախորդող ճառն անանուն է։ Բայց կարծում ենք, որ նրան հաջորդող ճառի վերնագրի նշումը՝* «Նորին տէր Առաքելի Սիւնեաց հայրապետի» *(տես ստորև § 34) հիմք է տալիս ենթադրելու, որ սա ևս նրա հեղինակությունն է։*

34. Նորին տէր Առաքելի Սիւնեաց հայրապետի քարոզ ի բանն՝ Տեսեք զծառայն իմ Յոբ. «Ասէ գիր թէ յորժամ եկին հրեշտակ[ք] աստուծոյ կալ առաջի տեառն, եկն և սատանայ ընդ նոսա. և ասէ ցնա տէր. Եւ դու ուստի՞ գաս...», *անդ, էջ 341բ—344բ։*

35. Նորին տէր Առաքելի Սի[ւ]նեաց վարդապետի վասն պատուհասից քարոզ ի բան մարգարէին Միքիայ որ ասէ. Բարկութեան տեառն համբերեցից՝ զի մեղայ նմա. «Բանական բնութեանս է գործ քննել զարգար իրաւունս աստուծոյ...», *Կ. Պոլիս—Օրթագյուղի № 60 ձեռագրում*[1]*։*

Գտնվում է նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերում (տե՛ս «Բանականութեանս է»)[2]։

36. Քարոզ վասն պատուհասի, ի բան տեառն որ ասէ. Ամենայն որ խնդրէ՝ առնու *ևն.* «Այս դուռն յուսոյ բանայ ամենայն մարդոյ...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերում*[3]*։*

37. Նորին [Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի]. «Հրց. Զի՞նչ է, որ ասէ Քրիստոս թէ՝ Որ հաւատայ յիս՝ զմահ մի՛ տեսցէ. ապա վասն է՞ր այժմ հաւատացեալքս մեռանիմք: Պա. Վասն բազում պատճառի: Նախ՝ զի անհնար էր ամենին անմահ և անապական լինել բնութեամբ և յապականեալ և ի մահկանացու երկիրս բնակել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4121, էջ 211—217։*

38. Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց, որք հրաւիրեալ են յաստիճան քահանայութեան: Խըրատք հարկաւորք և պիտանիք արարեալ ի տէր Առաքելոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ և ի Գրիգորէ քաջ հռետորէ. «Արդ՝ ըստ կարգի ժամանակին՝ պարտ է վարժել զմանկունսն ի սնունդ սրբութեան և իմաստութեան յերկիւղն աստծոյ...», *տես՝ «Գիրք ստուհան տալոյ դպրաց և սարկաւագաց և քահանայից, և գաւազան տալոյ վարդապետացն», Կ. Պոլիս, 1752, հավելված՝ էջ 237—262։*

Այլ տպ.— Սահմանադրութիւն դաստիարակութեան *ևն.* «Արդ՝ ըստ կարգի ժամանակին պարտ է վարժել...», *տես՝ «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 337—342։*

☐ *Երևանի Պետ. Մատ. ձեռագրերի մի մասը սույն երկի որպես հեղինակ նշում է*

---

1 *Ըստ Գևորգ Բամպուքճյանի տեղեկատվության։*

2 *Հմմտ. Մ. Պոտուրյան, «Առաքել Սյունեցի և իր քերթվածները», Վենետիկ, 1914 էջ, ԽԲ։*

3 *Հմմտ. անդ, էջ ԽԲ։*

Առ. Սյունեցու և Գր. Տաթևացու անունները միաժամանակ, ինչպես է վերոնշյալ երկու հրատարակություններում, տես՝ ձեռ. № 887 (էջ 3ա—10ա), № 1059 (էջ 2ա—16ա, սկ. «Արդ ըստ կարգի օրինակին վարժել») և № 6002 (էջ 1ա—15ա). բայց մեծ մասը տալիս է միայն Առ. Սյունեցուն, տես՝ ձեռ. № 641 (էջ 88ա—106բ), № 889 (էջ 48ա—56բ), № 896 (էջ 4ա—10բ), № 1114 (էջ 208ա—213բ), № 1225 (էջ 5ա—12բ), № 1242 (էջ 125բ. թերի), № 3433 (էջ 128ա—135բ), № № 7241 (էջ 4ա—18բ) և № 5022 (էջ 1ա—24ա). իսկ մի քանի ձեռագրեր տալիս են միայն Գր. Տաթևացուն, տես՝ № 80 (էջ 101ա—105բ) և № 5909 (էջ 1ա—4ա):

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 25՝ Սյունեցու և Տաթևացու անունով (էջ 1^ա), № 35՝ Սյունեցու անունով (էջ 2ա), № 645՝ նույնպես (էջ 1ա, սկ. «Արդ ըստ նարգին ժամանակի»), № 868՝ նույնպես (էջ 45բ, սկ. «Արդ պարտ է ըստ կարգի ժամանակին»), № 888՝ նույնպես (էջ 5ա), № 331՝ Տաթևացու անունով, բայց «ի խնդրոյ Սիւնեաց եպս.ի տէր Առ.ի» (էջ 3ա), № 338՝ նույնպես (էջ 1ա). Զմմառի Մատ. ձեռ. № 167՝ նույնպես (էջ 226ա, սկ. «Իսկ ի յաւուր ձեռնադրութեան»). Վիեննայի KKHB Cod. Arm. 28՝ Սյունեցու անունով (fol.1^r). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 361՝ Սյունեցու անունով (էջ 186ա), № 386՝ նույնպես (էջ 1ա), № 398՝ նույնպես (էջ 3ա), № 442՝ նույնպես (էջ 54բ), № 406՝ Տաթևացու անունով և «ի խնդրոյ Սիւնեաց եպիսկոպոսին տէր Առ.ի» (էջ 61ա). Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 237՝ Սյունեցու անունով (էջ 221). Սեբաստիայի Ս. Նշան վանքի ձեռ. № 87՝ նույնպես (էջ 1—44). Զմմառի Մատ. ձեռ. № 92՝ նույնպես (էջ 5ա). Անկյուրիայի Կարմիր-վանքի ձեռ. № 138՝ անանուն (էջ 282):

Ձեռագրերում բնագիրը կրում է «Սահմանադրութիւն դաստիարակութեան» և կամ «Յաղագս հրաւիրելոցն ի քահանայութիւն» խորագիրը և մեծ մասամբ սնի սկ. «Արդ ըստ կարգի ժամանակին վարժել»: Տարբեր օրինակների միջև կան խմբագրական տարբերություններ:

Գ.—ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

1. Առաքել վարդապետի ասացեալ ներբողական առ քաջ հռետորն և ոսկեզերալոյս վարդապետն մեծն Գրիգոր Տաթևացի աշակերտ Յոհաննու Կախիկ կոչեցելոյ. «Արփիական լուսոյն անշիջանելի ճառագայթ, կենդանութեան աղբիւր, լայնատարած ծով, յորդահոս գետ, անհատաբար վըտակ, լուսաճաճանչ ցող...», տես՝ «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետի», Կ. Պոլիս, 1741, էջ 716—719:

Տես նաև Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 3=հին № 1 (էջ 213բ—216բ):

2. Ներբողեան Աթանագինեայ՝ պատմագրաբար. «Օրհնեալ[1] է մեծ պսակաւորն և յաղթող քաջ նահատակն Քրիստոսի սուրբն Աթանագինէս, ի բարոյն բարի հոլիւն...», Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 219, էջ 438ա—439ա:

Վերջում՝ «Ո՜վ սուրբ Աթանագինէ, եւ անարժան ծառ[այ] Առաքել եպիսկոպոս երկրամերձ գիմաւք անկանիմ առաջի գարշապարաց քոց» են: Հեղինակությունը վերագրում ենք Առ. Սյունեցուն՝ հետևելով Տաշյանին[2]:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Ման.— «Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, Երևան, 1946, էջ 68—87:

Ալիշան Ղեվ.— «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 21, 29—30 և 235:

Ալիշան Ղեվ,— «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 126, § 115:

Ակինյան Ներս.— «Կոստանդին Երզընկացւոյ վերագրուած անհարազատ տաղ մը», Հանդէս Ամսօրեայ, 1909, էջ 351—352: Ստորագրված՝ «Հ. Ն. Ա.»:

Ակինյան Ներս.— „La Roseraie d'Arménie. Tome premier... Paris, Ernest Leroux, 1918" (գրախոսություն): Տես ստորև **Tchobanian A.**

---

1 Ձեռագրում՝ արհնեալ:

2 Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 1062:

Ակինյան Ներս.— «Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցի», Հանդէս Ամսօրեայ, 1956, էջ 156—158՝ «Առաքել Սիւնեցի, Պատճառ Սահմանաց գրոց»։

Ակինյան Ներս.— «Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի», Վիեննա, 1958, էջ ԾԺԶ—ԾԺԷ։

Աճառյան Հր.— «Հայերէն նոր բառեր Առաքել Սիւնեցւոյ Ադամգրքին մէջ (Տպ. Վենետիկ 1907)», Բազմավէպ, 1924, էջ 14—16։

Աճառյան Հր.— «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», հտ. Բ, Վենետիկ, 1926, էջ 146—154՝ «Հայերէն նոր բառեր Առաքել Սիւնեցւոյ Ադամգրքին մէջ (Տպ. Վենետիկ 1907)»։

Աճառյան Հր.— «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 211, § 57։

Անդրիկյան Ներս.— «Ուրուագիծ հայ մատենագրութեան», Բազմավէպ, 1911, էջ 436—437։

Երեմյան Սիմ.— «Դրուագէտ հայեր», շարք Բ, Վենետիկ, 1913, էջ 96—102։

Զամինյան Ար.— «Հայ գրականութեան պատմութիւն», հտ. Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 218—219։

Զամինյան Ար.— «Պատմութիւն հայոց հին գրականութեան», Բ տպ., Բեյրութ, 1941, էջ 207։

Զարբհանալյան Գար.— «Պատմութիւն հայերէն նոր դպրութեան», Վենետիկ, 1878, էջ 232 և 248—251։

Թահմիզյան Նիկ.— «Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում (X—XV դդ.)», Բանբեր Մատենադարանի, № 8, 1967, էջ 100—104։

Խաչիկյան Լ. Ս.— «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 602—603։

Խաչիկյան Լ. Ս.— «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Ա, Երևան, 1955, էջ 10—14, 37—38, 42, 73, 292—293 և 336։

Խաչիկյան Լ. Ս.— «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը», Բանբեր Մատենադարանի, № 9, 1969, էջ 193—194։

Հովհաննիսյան Աշ.— «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք Ա, Երևան, 1957, էջ 465—466։

Հովսեփյան Գար.— «Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններում», Արարատ, 1898, էջ 546—547 և 550—551։

Ղազիկյան Արս.— «Հայկական նոր մատենագիտութիւն» ևն, հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 189—192։

Ղազինյան Ա. Ա.— «Միջնադարյան մի տաղի հեղինակային պատկանելության մասին», Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, հաս. գիտ., 1964, № 3, էջ 85—94։

Ղազինյան Ա. Ա.— «Առաքել Բաղիշեցի (կյանքը)», Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1966, № 11 (282), էջ 82—89։

Ղազինյան Ա. Ա.— «Առաքել Սյունեցի», Հայրենիքի Ձայն, 13 հունվ. 1971, № 2 (286)։

Ղազինյան Ա. Ա.— «Առաքել Բաղիշեցի» (տպագրության ընթացքի մեջ)։

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ այս աշխատության մեջ, որ լույս կտեսնի 1971 թ. ընթացքում, շոշափվում են «Առաքել» անունը կրող գործերի հեղինակության հարցերը։ Այդպես թյուրիմացություններից խուսափելու համար հայտնենք, որ սույն տողերը գրում ենք 1971 թ. մարտի վերջերին, երբ սկսում է շարվել «Հայկական մատենագիտության» ներկա հատորը։ Այս վաղաժամ ճըշտումն անհրաժեշտ ենք համարում նրա համար, որ մեր հատորը լույս կտեսնի շատ ավելի ուշ, քան Ղազինյանի ուսումնասիրությունը։

Մազոյան Ա.— «Առաքել Սյունեցու բանաստեղծությունները», Բանբեր Երևանի Համալսարանի, 1969, № 3 (9), էջ 217—225։

Մազոյան Ա.— «Առաքել Սյունեցու Ադամգիրքը և անվավերականները», Բանբեր Երևանի Համալսարանի, 1970, № 3 (12), էջ 198—206։

Նորայր Ն. Բյուզանդացի— «Առաքել և Բարսեղ Սիւնեցիք», Հանդէս Ամսօրեայ, 1908, էջ 96։

Նորայր Ն. Բյուզանդացի— *«Առ մեծարգոյ Հ. Ներսէս Ակինեան [Նամակ]»*, Հանդէս Ամսօրեայ, *1908, էջ 155—156։*

Նորայր Ն. Բյուզանդացի— *«Առաքել Սիւնեցւոյ տաղաչափութիւնք» (անտիպ)*[1]։

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 452։*

Չոպանյան Արշ.— *«Գրական նորութիւններ։ Առաքել Սիւնեցիի Ադամգիրքը»*, Անահիտ, *Ժ տարի, 1908, էջ 1—10։*

Չոպանյան Արշ.— *«Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ ԻԵ։*

Չոպանյան Արշ.— *«Միջնադարեան հայ գրականութիւնը»*, Գեղունի, *Վենետիկ, 1947, էջ 19—24։*

Պալյան Տրդ.— *«Հայերէն հին տպագրութիւնք (Գ)»*, Արևելյան Մամուլ, *ԻԶ տարի, 1896, էջ 526—529։ Ստորագրված՝ «Տ. Վ. Պ.»։*

Պալյան Տրդ.— *«Հայ աշուղներ», հտ. Ա, տետր Ա, Զմյուռնիա, 1911, էջ 190—253։*

Պոտուրյան Մկ.— *«Անտիպ էջեր»*, Բազմավէպ, *1906, էջ 546—548։*

Պոտուրյան Մկ. *(հրատ.)— «Առաքել Սիւնեցի. Ադամգիրք», Վենետիկ, 1907, առաջաբան, էջ Ե—ԺԲ, ևն։*

Գրախոսություն.— *Պ. Ֆերհաթյան*, Հանդէս Ամսօրեայ, *1908, էջ 92։*

Պոտուրյան Մկ.— *«Առաքել Սիւնեցւոյ նորագիւտ տաղեր»*, Բազմավէպ, *1909, էջ 359—360։*

Պոտուրյան Մկ.— *«Առաքել Սիւնեցւոյ Վասն տանջանաց պժոխոց-ի մասին»*, Բազմավէպ, *1909, էջ 524։ Ստորագրված է՝ «Հ. Մ. Պ.»։*

Պոտուրյան Մկ.— *«Քերթուածք Առաքել Սիւնեցւոյ»*, Բազմավէպ, *1912, էջ 572—574։*

Պոտուրյան Մկ.— *«Միջնադարեան բանաստեղծ Առաքել Սիւնեցի»*, Բազմավէպ, *1913, էջ 49—53։*

Պոտուրյան Մկ.— *«Մատենագրութիւնք Առաքել Սիւնեցւոյ»*, Բազմավէպ, *1913, էջ 97—101։*

Պոտուրյան Մկ.— *«Առաքել Սիւնեցի և իր քերթուածները», Վենետիկ, 1914։*

[1] *Հմմտ.* Էջմիածին *(ամս.), 1949, № 3—4, էջ 68։*

Ջահուկյան Գև.— *«Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում», Երևան, 1954, էջ 298—321։*

Սահակյան Հ. Ս.— *«Առաքել Սյունեցի» (անտիպ)։*

Սերուլա Օ.— *«Նոր Կտակարանի գրքերու կարգը Հայոց քով»*, Հանդէս Ամսօրեայ, *1947, էջ 188—189։*

Սրապյան Արմ.— *«Կոստանդին Երզնկացին և իր տաղերը», հետևյալ հրատ. մեջ. «Կոստանդին Երզնկացի. Տաղեր» (աշխատասիրությամբ Ա. Սրապյանի), Երևան, 1962, էջ 109—110։*

Տեր-Ներսեսյան Ներս.— *«Դրախտագիրք Առաքել Սիւնեցիի»*, Բազմավէպ, *1956, էջ 3—7, 148—149, 200—205 և 241—245։*

Տեր-Ներսեսյան Ներս. *(հրատ.)— «Առաքել Սիւնեցի. Դրախտագիրք», Վենետիկ, 1956, առաջաբան, էջ 7—59։*

Քասունի Եղ. Ս.— *«Էջեր հայ հին դատափարակութեան պատմութենէն և վերապրումներ (1375—1638)», տես՝* Հասկ *(տարեգիրք), Անթիլիաս, Բ տարի, 1949—50, էջ 72—95։*

Քասունի Եղ Ս.— *«Պատմութիւն հին հայ դատափարակութեան», Բեյրութ, 1959, էջ 256—257՝ «Առաքել Սիւնեցի»։*

Օգանյան Գագ.— *«Պատմութիւն հայ լեզուի և բանաստեղծութեան», Մարզվան, 1913, էջ 166 և 224։*

Ֆերհաթյան Պետր.— *«Առաքել Սիւնեցի. Ադամգիրք... Վենետիկ, 1907» (գրախօսութիւն)։ Տես՝* **Պոտուրյան Մկ.** *անվան տակ։*

Адонц Н.— „Дионисий Фракийский и армянские толкователи“, Петроград, 1915, гл. I.

Назарянц Ст.— „Обозрение истории гайканской письменности“, Казань, 1846, стр. 18—19.

Тер-Мовсесян Месроп.— „История перевода Библии на армянский язык“, Петербург, 1902, стр. 264—266.

Чалоян В. К.— „Философия Давида Непобедимого“, Ереван, 1946, стр. 63—65.

Чалоян В. К. — “Основные вехи развития философской мысли в Армении

(V—XVIII вв.)", ՀՍՍՌ Գիտութ. Ակադ. Փիլիս. Սեկտորի Աշխատությունններ, № 1, Երևան, 1950, էջ 136—137:

Чалоян В. К.— „История армянской философии (Древний и средневековый период)", Ереван, 1959, стр. 291—297.

Neumann C. F.— „Versuch einer Geschichte der armenischen Literatur", Leipzig, 1836, S. 221—222.

Raffi Aram.— „Armenia: Its epics, folksongs and medieval poetry", *հետեւյալ հրատ. մեջ*. „Armenian Legends and poems illustrated and compiled by Zabelle C. Boyajian", London—New York, 1916, p. 179—180. *Այլ տպ.* London, 1958, p. 179—180.

Réval Gabrielle.— „Arakel de Sunik. La Roseraie d'Arménie. T. I." *(գրախոսություն). տես՝* **Tchobanian A.** *անվան տակ:*

Somal P. S.— „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 139—140.

Tchobanian A.— "La Roseraie d'Arménie. Tome premier. Arakel de Sunik. Pages choisies.... Traduction précédée d'une étude et suivie de notes", Paris, Editions Ernest Leroux, 1918.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ.— Ն. Ակինյան, Հանդէս Ամսօրեայ, *1920, էջ 51—54:* Gabrielle Réval, *Revue des Etudes Arméniennes*, t. I, 1920/21, p. 174—177. *Հրաչ Զարդարյան,* «Տարեցոյց Վերածր-նունդ-ի 1920 *(կազմեց՝ Լ. Համբարձումյան), Փարիզ, էջ 228—246:*

Tchobanian A.— „La Roseraie d'Arménie. Tome troisième. Pages choisies des meilleurs poètes du moyen âge et de la période suivante.... Traduction précédée d'une Introduction et accompagnée de notices", Paris, Librairie Ernest Leroux, 1929, p. 69—103.

Thorossian H.— "Histoire de la littérature arménienne", Paris, 1951, p. 217—218.

ԱՌԱՔԵԼ ՎԱՌ

Տե՛ս ԱՌԱՔԵԼ ԱՆԵՑԻ:

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ

Այս անվան տակ դնում ենք այն մի շարք բնագրերը, որոնք կրում են պարզապես Առաքել կամ Առաքել վարդապետ հեղինակային անունը, առանց մականվան[1]: Դրանցից մի կարևոր մաս Ա. Սյունեցու և Ա. Բաղիշեցու հեղինակությունը պիտի լինի և արդեն մասամբ հրատարակված է նրանց անուններով. բայց, ի հարկե, մի մասն էլ պատկանում է համանուն այլ անձերի[2]:

Այս հարցում որոշ ճշտումներ ձեռք բերելու նպատակով մենք դիմել ենք Երևանի Պետ. Մատ. № 5328 ձեռագրին, որը Ա. Բաղիշեցու ուսուցիչ Գրիգոր Ծերենցի կազմած ինքնագիր Գանձարանն է, հույս ունենալով, որ այնտեղ Բաղիշեցու գործերը կարող են զանազանվել այլ Առաքելների գործերից: Այդ ձեռագրում հեղինակների ինքնության ճանաչելիության տեսակետից նկատելի է, որ Առաքելներին պատկանող գանձերն ու տաղերը ներկայանում են հեղինակային հանգամանքներով: Առաջին՝ Ծե-

---

[1] Մեր «Հայկ. մատենագիր.» Ա. հատորում «Այսօր ցնծացէք եղբարք» *տաղը վրիպմամբ հղված է ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ անվանը (էջ 1101, տող 28—30): Պետք է լինի ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ:*

[2] Այսպիսի բնագրերի թիվը վերջերս ավելացավ նրանով, որ Ա. Քյոշկերյանը Երևանի Պետ. Մատենադարանում հայտնաբերեց անծանոթ մնացած մի գանձարան՝ ձեռ. № 6527, որն ընդօրինակված է 1528 թ. Ղուլթիկ գյուղում և 154 գանձեր, տաղեր ու հորդորակներ է բովանդակում՝ բոլորը Առաքել վարդապետ *հեղինակային անվամբ, առանց մականվան: Տե՛ս Արմինե Քյոշկերյան, «Մի նորահայտ անհատական գանձարան»,* Էջմիածին *(ամս.), 1970, № 6—7. և «Առաքել վարդապետ Բաղիշեցու նորահայտ գանձարանի նյութերի ցանկը՝ ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6527 ձեռագրի», անդ, № 10:*

Այդ նյութերի մի կարևոր մասն առաջին անգամ այս ձեռագրով է ի հայտ գալիս: Հենվելով մի շարք հանգամանքների համադրության վրա՝ Ա. Քյոշկերյանը ձեռագրի պարունակած նյութերի հեղինակությունը վերագրում է Առաքել Բաղիշեցուն: Մեր կարծիքով՝ № 6527 ձեռագրում ընտրովի եղանակով, գուցե և ուսումնասիրման նպատակով, ամփոփված են «Առաքել» անունը կրող այն գործերը միայն, որոնց հեղինակ Առաքելի ինքնությունն անհայտ է մնացած եղել ժողովածուի կազմողին, այսինքն՝ դուրս են թողնվել հատկապես այն գործերը, որոնք խորագրով կամ ներքին տվյալներով (սկզբնատառեր, հիշատակագրություններ) կազմողին հայտնի են եղել որպես Սյունեցու և Բաղիշեցու հեղինակություններ:

րենցը բնագրերի վերնագրերում Առաքել անունը նշում է միայն այն դեպքում, երբ բնագիրն ինքը չի պարունակում հեղինակի անունը՝ սկզբնատառերի կամ հիշատակագրության ձևով (ինչպես՝ «Տաղ յԱռաքելէ» խորագրի տակ «Յունան քարոզըն» տաղը, որը Բաղիշեցունն է. և «յԱռաքել երիցուէ» խորագրի տակ «Մեծ խորհուրդ յերկրի» տաղը, որ մենք արդեն նշել ենք ԱՌԱՔԵԼ ԵՐԷՑ անվան տակ): Երկրորդ՝ Ծերենցը բնագրի վերնագրում չի նշում Առաքել անունը այն դեպքերում, երբ ինքը տեղյակ չի լինում, թե այդ բնագիրը մի որևէ Առաքելի գործ է («Այլ տաղ Յարութեան» խորագրի տակ «Դասքըն հրեշտակաց» տաղը, որ Առ. Սյունեցունն է): Երրորդ՝ Ծերենցը բնագրի վերնագրում չի նշում Առաքել անունը նաև այն բոլոր դեպքերում, երբ այդ անունը բնագրում արդեն կա սկզբնատառերի և կամ հիշատակագրության ձևով: Այս վերջին խմբի մեջ Առ. Սյունեցու գործերը ճանաչվում են իրենց Տէր Առաքեալ կամ Տէր Առաքեալ Սիւնեաց սկզբնատառերով («Տաճար լուսոյ տուն արքային», «Տարփացեալ ըղձանամբ» և «Ի մեծի հրաշափառ» տաղերը). մյուսները, որոնք արդեն ոչ թե Առաքեալ, այլ Առաքել ձևով են, մեր համոզմունքով հեղինակությունն են Ծերենցի աշակերտ Առ. Բաղիշեցու, որի մականունը, որպես մերձավորի և անմիջականորեն ծանոթ անձնավորության, նա կարիք չի զգացել բացահայտաբար հիշատակելու վերնագրերում: Դրանցից մեկի՝ Մինաս և Երմոգենես վկաներին նվիրված գանձի սկզբնատառերը արդեն ուղղակի տալիս են «Ի Բաղիշեցոյ Առաքելէ» բառերը: Այս կապակցությամբ նշենք, որ Ծերենցն ինքն էլ այս ձեռագրում անցած իր 50-ից ավելի գանձերում ու տաղերում հանդես է գալիս լոկ Գրիգոր սկզբնատառերով՝ առանց որևէ մականվան, որպես արդեն ինքնին հասկանալի, այնինչ՝ ուրիշ Գրիգորներին նա, իրենից տարբերելու համար, վերնագրերում նշում է մականուններով (Նարեկացի, Մագիստրոս, Ոստանցի): Այս հիմքերով՝ սույն № 5328 ձեռագրում Առ. Բաղիշեցու գրչին են պատկանում հետևյալ բնագրերը.

ա. Յոհաննու Ոսկեբերանին գանձ. «Օրհնեալ ւ ընտրեալ», էջ 10ա—11բ: Եվ նույնի տաղը. «Ի յորովայնէ ընտրեալ», էջ 11բ—12ա:

բ. Տաղ յԱռաքելէ. «Յունան քարոզըն Նինուէին»[1], էջ 103բ—104ա:

գ. [Գանձ] Սրբոյն Թէոդորոսի զօրավարի. «Ի քեն հայցեմ աղբեւր բարութեան», էջ 126բ—128բ:

դ. [Գանձ] Կիւրղի և մօր նորա Աննայի Երուսաղէմացւոյ. «Անեղ ւ անման ծընունդ հայրական», էջ 132բ—134ա:

ե. [Գանձ] Սուրբ տապանակին. «Իմաստութիւն անճառ անեղին», էջ 237ա—238բ:

զ. Գանձ գիշերապաշտաման ԼՆ. «Անտանելիդ երկնի և երկրի»[2], էջ 288ա—288բ:

է. Գանձ սրբոյն Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի(=Եւգրափոսի). «Ի յերկնային լուսոյն»[3], էջ 290ա—291բ:

Առաքել անունը կրող գործերի հեղինակության հարցում մենք որոշ չափով առաջնորդվել ենք նաև տաղաչափական այն տվյալներով, որ ընձեռում են անառարկելիորեն Սյունեցու և Բաղիշեցու գրչին պատկանող գործերը: Կան չափեր, որոնք հավասարապես օգտագործվել են նրանց կողմից, ինչպես է՝ 4—4 | 4—4 (օրինակ՝ Սյունեցու Ագամգրքեր Ա և Գ, Բաղիշեցու «Այնքան որդիք են մարմնական | Ախտի ծընունդ ւ անասնական» տաղը) և 4—4—5 | 4—4—5 (Սյունեցու Ագամգիրք Դ, Բաղիշեցու «Ահա եհաս ինձ օր մահու մարմնոյս նիւթական, | Եւ ըղձոգիս իմ կու տանին յերկիր հեռաստան»): Բայց կան այնպիսիներ, որոնք յուրահատուկ են մեկին կամ մյուսին: Օրինակ՝ 5—5 | 5—3—5 չափը բացառապես Սյունեցուն է պատկանում («Անճառ միածնին, հօրն երկնաւորին | Ընտրեալ ի յերկրէ սուրբ Յակոբ, քրոբէ մարմնայինն», «Անքանակ էին, անորակ գոյին, | Անեղ ւ անվախճան ւ անսահման, երից միակին», «Աչք իմ ծովացեալ, գետք յինէն հոսեալ | Յահեղ համբաւէն դըժոխոց որ կայ ինձ

---

[1] Սույն տաղի մասին տես՝ աստ., հտ. Ա, էջ 1127, § 3:

[2] Տես աստ, հտ. Ա, էջ 1130, § 9:

[3] Տես աստ, հտ. Ա, էջ 1131, § 17:

պանծալ», «Այսօր բանն աստուած կացեալ յառենի, | Վասըն յանցանաց նախահօրըն դատապարտի», «Այրեն մինչ ի քեն՝ զովիս զու յինեն, | Լուսածին մըտօք իմացմամբ բանիւ հոգեղենն», «Անճառ ւ անքընին, ծագին լուսածին, | Բոբոքեալ վառիմ քո սիրովդ՝ սուրբ Աստուածածին»), *ասաի և այդ չափը կրող մի շարք տաղեր և հորդորակներ մենք անվերապահորեն վերագրում ենք Սյունեցուն։ Ընդհանրապես՝ 4—5 | 4—5 չափը Բաղիշեցունն է և հատկացված է գանձեր գրելու* («Այսօր իջեալ պետըն վերնական | Առ Մարիամ կոյսն անապական», «Անտանելիդ երկնի և երկրի | Պարագրեցար յարգանդի կուսի», «Այսօր ծագեաց լոյսն արփիական | Ի Սեպունոյ լեառըն պատուական», «Ի յերկնային լուսոյն հայրական | Որդիք մարդկան լուսաւորեցան», «Իմաստութիւն անճառ անեղին, | Հօր արարչին և մարդասիրին», «Օրհնեալ ւ ընտրեալ զունդն երկոտասան, | Որք յընդհանուր աշխարհ սըփռեցան», «Անեղ ւ անմահ՝ ծընունդ հայրական, | Խոնարհեցար յարգանդ կուսական», «Ի քեն հայցեմ աղբիւր բարութեան, | Լոյս ի լուսոյ աննաս անսահման», «Անճառելի բանն ի սկըզբանէ | Որ մարմնացաւ ի կոյս արգանդէ»)։ *Այս վերջին՝ 4—5 | 4—5 չափով, որպես հազվադեպ երևույթ, Սյունեցուց մեզ հայտնի է միայն մեկ գանձ* («Տեսիլ անճառ, անեղ ւ անքընին | Զարմանազան հիացմամբ ի լին»), *որն, ի տարբերություն Բաղիշեցու գանձերի, Սյունեցու հոգևոր ու կրոնական տաղերի ճնշող մեծամասնության նման, սկսվում է* Տ *տառով և հոգում* Տէր Առաքեալ: *Այս չափը կրող գանձերը, որոնց թիվը բավականին մեծ է, հիմնականում վերագրելի են Բաղիշեցուն, թեև հնարավոր է, որ նրանցից մի քանիսը կարող են լինել Սյունեցու և կամ ուրիշ Առաքելների հեղինակություն։*

Տաղաչափական առումով ընդհանրապես կարելի է ասել, որ Բաղիշեցին օգտագործում է պարզ չափեր, ինչպես՝ 4—4—4 | 4—4—4 («Օրհնեալ ես սուրբ Աստուածածին դուսաբեր լուսոյ, | Որ ընտրեցար յազգէ մարդկան մայր աստուծոյ») *կամ՝ 5—5 | 5 | 5* («Մեծացիր այսօր սուրբ Աստուածածին, | Իջմամբ միածնին առ քեզ հրեշտակօք»)․ *մինչ Սյունեցին նույնպես կիրառելով հանդերձ այնպիսի պարզ չափեր, ինչպես են 3—3—3 | 3—3—3* («Ի մեծի հրաշափառ հանգիսիս, | Շնորհաբաշխ պարգևաց սուրբ տօնիս») *և 3—3—3—3 | 3—3—3—3* («Տարփացեալ ըղձանամբ տէր Յիսուս քոյդ գեղմանցդ, | Զոր բաշխես ի հրեղէնսն անըսպառ ծաւալմամբ»), *ավելի շատ է սիրում օգտագործել բարդ և խառն չափեր, ինչպես են՝ 4—4—3 | 4—4—3 (Ադամգիրք Բ), 4—4—5 | 4—4—4—3* («Տարփմամբ զոչեմ առ քեզ Յիսուս լոյս ողորմեաց մեզ, | Մոլորելոցն ես դարձուցիչ, ու խիստ մոլորեալ եմ ես»), *4—3—5 | 4—3—5* («Տեսեալ Մարիամն ըզտէրն ի վերայ խաչին, | Հառաչմամբ զոչէր ուժգին կըսկըծմամբ սըրտին»), *5 | 5—2 | 5* («Այրեն մինչ ի քեն | Զքեզ Աստուածածին զովեմ, | Սիրտըս կու բաւէ»), *5 | 5—3 | 5* («Այրեն մինչ ի քեն | Զբանըն դատաստանին պատմեմ՝ | Որ խիստ ահեղի չէ»)։

Հռչակավոր հույն բժիշկ, ծն. Պրուսայում (Բյութանիա): Ապրել ու գործել է Հռոմում՝ մեր թվ. առաջ Բ/Ա դարերում: Հիմնադիրն է եղել բժշկության մեջ մեթոդական *անունով հայտնի դպրոցի, որով պայքար է մղել Հիպպոկրատեսի տեսությունների դեմ: Նրա հետևորդները կոչվեցին մեթոդականներ: Ասկ.-ի գրվածքներից հուն. լեզվով մնացել են հատակոտորներ, որոնք և հրատարակվել են Քր. Գումպերտի կողմից,* „Asclepiadi Bithyni fragmenta“ (Vinariae, 1798). *Ասկղեպիադեսի անունով հատակոտորներ կան նաև հայ. հին թարգմանությամբ* («Վասն չորից բնութեանց» *են, տես ստորև), բայց նրանց սկզբնագրերը չեն երևում հուն. վերոհիշյալ հրատարակության մեջ. այդ պատճառով իրավամբ կարծիք է գոյացել, թե Ասկղեպիադեսի անունը կրող հայ. այդ հատվածները նրա դպրոցի հետևորդների գրվածքներից պիտի լինեն:*

* * *

Ասկ[ղ]եպիադայ՝ վասն չորից բնութեանց մարդոյ և տարոյ և ամսոյ. «Բնութիւն մարդոյ բաժանեալ է ի չորս առաջս, և զմի մի ի նոցանէ պարտ է գիտել՝ եթէ զի՞նչ զօրութիւն ունի...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 310, էջ 7բ—8բ:*

Հետևյալ ծանոթությունն է տրված այս բնագրի մասին. «Աշխարհաբար գրուածս բաժնուած է 12 համառօտ գլուխներու, որոնցմէ՝ այսինքն 2—5 գլուխներուն խորագիր չունին, այլ միայն լուսանցքը վրայ խաչաձևեր գծուած են: Հաւանօրէն այս գլուխներս՝ առաջին գլխու խորագրին ստորաբաժանեալ են: Վեցերորդ գլուխը խորագրուած է. 'Վասն բնութեան մարդկան'.— Է.րդն. 'Յաղագս բնակութեան'.— Ը.րդն. 'Յաղագս եկամըտից'.— Թ.րդն. 'Յաղագս բնութեան հոգոյ' (թերի մնայ).— Ժ.րդն. 'Յաղագս բնակութեան հոգոյ'.— ԺԱ.րդն. 'Յաղագս եկամըտից': ... Շարադրութեան լեզուն յստակ է և զերծ ոչ միայն միջնադարեան մեր բժշկարաններու ռամկօրէնէն, այլ և Ը դարու հայերէն թարգմանութեանց յունաբանութիւններէն և խրթնութիւններէն. սակայն այս թարգմանութիւնս կրկնակի հետաքրքրաշարժ է, թէպէտև ասկէ չենք կրնար հետևցնել՝ որ Ասկղեպիադեայ բժշկարանին հայեցի ամբողջ թարգմանութիւն մ'եղած ըլլայ ի նախնեաց, մինչև որ

[1] *Ձեռագրում՝* բեբայիրոյ.

արիշ ընդարձակագոյն գրուած մը յայտնուի»[1]:

Վենետիկի Մխիթ. Մատ. № 310 ձեռագիրը, որում գտնվում է Ասկղեպիադեսի այս աշխատությունը, ընդօրինակված է Փարիզի Bibl. Nat. Anc. Fonds Arm. 92 (այժմյան՝ Ms. Arm. 179) ձեռագրից, որի մեջ, սակայն, այժմ բացակայում է Ասկղեպիադեսի գրվածքը, ինչպես և այն մյուս նյութերը, որոնք գտնվում են վենետիկյան ձեռագրում: Հետևաբար նրանք գտնվում էին փարիզյան ձեռագրի այն մյուս մասերում, որոնք ընկած են, որովհետև, ըստ արված նկարագրության, այժմ այդ ձեռագիրը թերի է սկզբից և վերջից[2]:

Ն. Ակինյանը ձեռագրերում գտել է Ասկղեպիադեսի անունը կրող նոր նյութեր, որոնց մասին ասում է. «Հատուածք Որիբասայ բժշկապետի Բժշկարանէն, ուր կան հատակտորներ նաև Ասկղեպիադեայ և Դիոկղետեսի և այլ հին բժշկարաններէ, ու թարգմանուած յոյն բնագրէ»[3]: Ակինյանն այդ նյութերի տեղը չի նշում, սակայն նկատելի է, որ Որիբաս Պերգամացի բժշկապետի հետ կապված այս տեղեկությունը խիստ նմանություն ունի վենետիկյան վերոհիշյալ № 310 ձեռագրում Իբաս բժշկապետի անվանը կապակցվող նյութերի հետ (էջ 6բ—8բ)[4], որոնց մեջ են Ասկղեպիադեսի արդեն ծանոթ հատակտորները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարբհանալյան Գար.— «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 316—317:

1 Տես Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայ. ձեռ. Մատ. Մխիթ. ի Վենետիկ», հտ. Բ, էջ 1227:

2 Հմմտ. Fr. Macler, „Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale“, Paris, 1908, p. 100.

3 Ն. Ակինյան, «Տեղեկագիր գիտական ուղևորութեանս դէպի Մերձաւոր Արևելք», Հանդէս Ամսօրեայ, 1946, էջ 122:

4 Հմմտ. Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ» ևն, հտ. Բ, էջ 1226—1227:

Оганесов=Оганесян Л. А.—„История медицины в Армении от древнейших времен до конца XVIII столетия“, Ереван, 1927, стр. 47.

Оганесян Л. А.— „История медицины в Армении с древнейших времен до наших дней“, часть I, Ереван, 1946, стр. 174—176.

ԱՍՄԱՆ

Տես՝ ՖԱՐՄԱՆԻ ԱՍՄԱՆ:

ԱՍՈՂԻԿ կամ ԱՍՈՂՆԻԿ

Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ:

ԱՍՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Տես՝ ԱՍՈՐԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ:

ԱՍՈՐԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
(Codex syriaco-romanus)

Քաղաքացիական օրենքների ժողովածու, որը բանասիրության մեջ ընդհանրապես հայտնի է «Ասորա-հռոմեական օրենսգիրք» անունով, բայց, ըստ տիրող կարծիքի, ասորական ծագում ունի: Ձեռագրերում ընդհանրապես կրում է այսպիսի խորագիր. «Օրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի» կամ «Օրէնք թագաւորացն Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի՝ թագաւորաց Հռոմայեցւոց»: Գ. Զարբհանալյանը, հիմնվելով Ներսես Լամբրոնացու մի հիշատակարանի վրա, համարել է, որ նա է հայերենի թարգմանել այս օրենսգիրքը 1196 թ.[1], սակայն Կ. Հ. Բասմաջյանը նկատել է, որ տվյալ հիշատակարանը վերաբերում է հունա-հռոմեական օրենքների ժողովածուին և ոչ թե այս օրենսգրքին[2]: Հայտնի են նաև այս դատաստանագրքի ասորերեն և արաբերեն խմբա-

1 Հմմտ. Գ. Զարբհանալյան, «Մատենադարան», էջ 754—755:

2 Կ. Հ. Բասմաջյան, Բանասէր, 1907, էջ 14—18:

գրությունները, որոնք, հայկականի հետ միասին, ներկայացնում են երեք հիմնական տարբերակներ: Նրանց մեջ հայկականն ամենից ընդարձակն է, պարունակելով 150 կամ 151 հոդվածներ: Այս երեք տարբերակները հրատարակվել են ձեռագրերի բաղդատությամբ և գերմ. թարգմանության հետ միասին, տես՝ K. G. Bruns u. E. Sachau, „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert", երկու հատորով (Leipzig, 1880. Բ. հրատ. Leipzig, 1961): Հայկական տարբերակից է առնված սույն օրենքների այն վրացերեն խմբագրությունը, որը Վախտանգ Զ-ի օրենսգրքի «Հայկական օրենքներ» խորագրված մասի 1—150 հոդվածներն է կազմում: Հայկ. բնագրից ինչ-ինչ կետեր անցել են նաև Լեհահայոց Դատաստանագրքի մեջ: Հայ. ասորա-հռոմեական օրենքները մի քանի ձեռագրերում գտնվում են Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ միասին արտագրված. այդ պատճառով ոմանք սխալմամբ Գոշի Դատաստանագրքի մասն են համարել դրանք, իսկ ուրիշներ այդ օրենքների հայ. թարգմանությունը վերագրել են Գոշին:

* * *

Օրէնք թագաւորաց Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի՝ թագաւորաց Հռովմայեցւոց. «Օրէնս բարի և ճշմարիտ տէր աստուած ի սկզբանէ ետ մարդոյն՝ որպէս յառաջին գիրս արարածոց եցոյց մեզ օրէնս և գրեաց Մովսէս...», տես՝ K. G. Bruns u. E. Sachau (հրատ.), „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert", Leipzig, 1880, 1. Theil, S. 95—141.

Հրատարակվել է Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Oct. 278-ից:

Այլ. տպ.— **Քաղաքային օրէնք Ներսէսի Լամբրոնացւոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի թագաւորաց Հռովմայեցւոց. «Օրէնք բարիեաւ ճշմարիտ տէր աստուած ի սկզբանէ [ետ] առաջին մարդոյն...»**, հետևյալ հրատ. մեջ. Կ. Հ. Բասմաջյան (հրատ.), «Քաղաքային օրէնք Ներսէսի Լամբրոնացւոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեւոնի թագաւորաց Հռովմայեցւոց», Փարիզ, 1907, էջ 9—41:

Հրատարակչի առաջաբանով (էջ 3—8). վերջում՝ «Մեկնութիւն բառից» (էջ 43): Բնագիրն առնված է Փարիզի Bibl. Nat. Suppl. Arm. 103 (այժմյան՝ Ms. Arm. 177) ձեռագրից: Ձեռագրում բնագիրը խորագիր չունի:

Առաջաբանում հրատարակիչը տալիս է հետևյալ բնագրագիտական տեղեկությունները. «Ձեռագրիս օրինակներէն ամենահինն է Վենետիկի մէկ օրինակը, որ 1328-ին գաղափարուած է. իսկ ամենէն նորը Պարիսի ձեռագիրն է, զոր Բերլինի ձեռագրին հետ բաղդատած և գլխաւոր տարբերութիւնները նշանակած եմ տեղ տեղ, ինչպէս կը տեսնուի ներկայ հրատարակութեանս մէջ: Պարիսի և Բերլինի ձեռագրերուն իրարմէ ունեցած տարբերութիւնը շատ է. ես միայն գլխաւոր կէտերը նշանակած եմ հոս: Բերլինի ձեռագիրը, որ Պետերմանի սեփականութիւնն եղած է, անոր կողմէ բաղդատուած է ուրիշ ընտիր ձեռագրի մը հետ, բայց յայտնի չէ թէ ո՛ր է այն ձեռագիրը: Սախաուի հրատարակութեան մէջ նշանակուած են այս բաղդատութիւնները: Ձեռագրիս լեզուն աղաւաղուած է, անշուշտ օրէնքները ժողովրդականացնելու դիտումով կատարուած: Ներկայ հրատարակութեան մէջ ոեւէ փոփոխութիւն չեմ ըրած ո՛չ լեզուի, և ո՛չ ուղղագրութեան. նոյն իսկ բնագրին կէտադրութիւնը պահած եմ նոյնութեամբ, տեղ տեղ աւելցնելով սակայն անհրաժեշտ հարկ եղած սրբագրութիւնը, փակագծի մէջ»:

Այլ տպ.— **Օրէնք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի. «Օրէնս բարի և ճշմարիտ ետ տէր աստուած ի սկզբանէ մարդոյն...»**, հետևյալ հրատ. մեջ. Ա. Ղլտճյան (հրատ.), «Ասորական դատաստանագիրք», Էջմիածին, 1917, էջ 1—56:

Հրատարակիչն ունի առաջաբան (էջ Գ—ԺԵ), ուր գրում է. «Մեր ներկայ բնագիրը կազմելիս օգտագործել ենք ոչ միայն Bruns-ի հրատարակութեան նիւթը, այլ նաև երեք այլ ձեռագրերի ընթերցուածներ», բայց չի ասում, թե որո՛նք են համեմատության առնված ձեռագրերը:

Այլ տպ.— Օրէնք թագաւորաց Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի՝ թագաւորաց Հոռվմայեցւոց. «Օրէնս բարի և զճշմարիտ տէր աստուած ի սկզբանէ ետ մարդոյն...», *տես՝* K. G. Bruns u. E. Sachau (*հրատ.*), „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert“ (Neudruck der Ausgabe Leipzig, 1880), Leipzig, 1961, 1. Theil, S. 95—141.

Արտատպություն՝ Ա. հրատարակությունից։

☒ *Երևանի Պետ. Մատ. ձեռագրերում Դատաստանագրքի հնագույն օրինակներ են ձեռ. № 488 (էջ 87ա—103ա) և № 556 (էջ 74ա—82ա և 87ա—142ա), որոնք ԺԳ դարի ընդօրինակություններ են. սույն օրինակների խորագիրն է՝* «Օրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի և Թէոդոսի և Լևոնի թագաւորաց Հոռվմայեցւոց» (*սկ.* «Զօրէնս բարի և զճշմարիտ տէր աստուած ի սկզբանէ ետ մարդոյն»)։ *Նույն մատ. մյուս օրինակներն են ձեռ. № 8926՝ խոր. նույն (էջ 316ա—336բ, սկ. նույն), № 795. խոր. նույն (էջ 313բ—334ա, սկ. նույն), № 2635՝ խոր. նույն (էջ 219ա—234ա, սկ. նույն), № 6496՝ խոր. նույն (էջ 357ա—382ա, սկ. նույն), № 2655՝ խոր. նույն (էջ 270ա—289բ, սկ. նույն), № 8103՝ խոր. նույն (էջ 19բ—33ա, սկ. նույն), № 487՝* «Օրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, Թէոդոսի թագաւորաց Հոռոմոց» (*էջ 4ա—5բ, սկ.* «Օրէնս բարի և ճշմ.», *միայն առաջաբանն է՝ որոշ խմբագրման ենթարկված*), *№ 3562՝* «Օրէնք յաղթող թագաւորաց՝ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի» (*էջ 12ա—46ա, սկ.* «Զօրէնս բարի և զճշմ.»), *№ 3788՝ խոր. նույն (էջ 320—345, սկ. նույն), № 8938՝ խոր. նույն (էջ 414բ—442բ, սկ.* «Յօրէնս բարի և զճշմ.»), *№ 10311՝ խոր. նույն (էջ 364ա—391բ, սկ. նույն), № 778՝* «Օրէնք Կոստանդիանոսի թագաւորի և Թէոդոսի և Լևոնի, յաղթող և սուրբ թագաւորացն քրիստոնէից» (*էջ 294ա—324ա, սկ.* «Զօրէն բարի և զճշմ.»), *№ 2886՝* «Օրէնք Կոստանդիանոսի թագաւորին և Թէոդոսի թագաւորին և Լէոնի թագաւորին, յաղթող և սուրբ թագաւորաց քրիստոնէից» (*էջ 1բ—27ա, սկ. նույն*), *№ 6890՝* «Յաղթող օրէնք թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի և Թէոդոսի և Լևոնի թագաւորաց Հոռվմայեցւոց» (*էջ 16բ—31բ, սկ. նույն*), *№ 209՝* «Յաղագս օրէնք թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի և Թէոդոսի և Լևոնի թագաւորաց Հոռվմայեցւոց» (*էջ 20ա—41բ, սկ. նույն*), *№ 2593՝* «Գիրք նոմոսի և դատաստանաց զոր սահմանեալ են աստուածային առաքեալքն և հայրապետքն» (*էջ 180ա—219բ, սկ. նույն*), *№ 7580՝* «Գիրք նոմոսի, զոր առնեն դատաւորք» (*էջ 27ա—52ա, սկ.* «Եւ զօրէնս բարի և ճշմ.»), *№ 3291՝ խոր. նույն (էջ 124ա—156ա, սկ. նույն), № 3059՝ խոր. նույն (էջ 110ա—138ա, սկ. նույն), № 485՝ անխոր. (էջ 170բ—214բ, սկ.* «Օրէնս բարի և զճշմ.»), *№ 2776՝ անխոր. (էջ 177ա—218բ, սկ. նույն), № 8245՝ անխոր. (էջ 66ա—78ա, սկ. նույն), № 2880՝ անխոր. (էջ 13բ—33ա, սկ.* «Զօրէնս բարի և զճշմ.»), *№ 2750՝ անխոր. (էջ 1բ—29ա, սկ.* «Երէ եդ աստուած օրէնս մարդոյ ի ծառոյն որ էր ի մէջ դրախտին»), *№ 6398 (էջ 38ա—47բ, սկզբից թերի), են։ Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 579 (էջ 414բ), № 581 (էջ 297ա), № 582 (էջ 71ա) և № 888 (էջ 111ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 1223 (էջ 377)*[1] *և № 1237*[2]. *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 157 (էջ 511), № 182 (էջ 320ա), № 366 (էջ 180), № 849 և № 1183*[3]. *Արմաշի Մատ. ձեռ. № 28. Զմմառի Մատ. ձեռ. № 180=հին № 226 (էջ 255ա)*[4] *և № 183=հին № 202 (էջ*

1 *Ն. Ակինյան,* Հանդէս Ամսօրեայ, *1954, էջ 188։*

2 *Նկարագրել է՝* J. Mécérian, „Bulletin Arménologique“, cahier I, Beyrouth, 1947/48, p. 214—217. *Ավելի առաջ, երբ այս ձեռագիրը դեռ համար չուներ, նկարագրվել է Ղ. Ալիշանի կողմից,* Բազմավէպ, *1848, էջ 117—122։*

3 *Վերջին երկու ձեռագրերի մասին տես՝ Բաբգեն եպս. [Կյուլեսերյան],* Հանդէս Ամսօրեայ, *1926, էջ 144—146։*

4 *Հ. Մըսըրյանն այս ձեռագիրը նկարագրել է որպես Զմմառի «№ 8 ձեռագիր», տես՝* J. Mécérian, „Bull. Arm.“, cahier I, p. 209—214; cahier II, Beyrouth, 1953, p. 240—242.

5բ)[1]. *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Arm. E. 28 (fol. 32^{v}). *Բեռլինի* Kőn. Bibl. Ms. Or. Oct. 278 (fol. 1). *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 177=*Նախկին* Suppl. Arm. 103. *Հալեպի Ամեր. վարժ. ձեռ. Դատաստանագիրք՝ 1629 թվականից (էջ 11):*

Բովանդակություն (ըստ Երևանի Պետ. Մատ. № 488 ձեռագիր օրինակի).

Առաջին կանոն վասն ժառանգութեան: Վասն որ մեռանի և ոչ գրէ կտակ և ունի ուստերս և դստերս:

Բ. Վասն որ մեռանի յանկարծ, ոչ ունի հայր և մայր, և ոչ որդի:

Գ. Վասն որոյ չեն որդիք և դստերք՝ ա՛յլ հեռի ազգ առնու:

Դ. Վասն որոյ թէ քանի՛ ամաց և կամ ո՛ր կերպ գրեն կտակ:

Ե. Վասն որ մեռանի փեսայն և հայր կնոջն հոգայ զորդիս:

Զ. Վասն որոյ գան որդիքն ի կատարելութիւն և անարգեն զհայր:

Է. Վասն որ գրեն զոք ի կտակ և նա ոչ կամի առնուլ զնա:

Ը. Վասն որ երես փոխանն վաճառէ յ[ը]նչիցն և տայ ի հարկսն:

Թ. Վասն որ ոք առնէ տուայր որ է մահր, և կամի յետ առնուլ:

Ժ. Վասն որ գրէ ոք տուայր և հաստատէ, և յետոյ աւերել կամի:

ԺԱ. Վասն որ ոք տիրաթկով զամենայն գոյս իւր տայ օտարաց:

ԺԲ. Վասն մարդոյ որ ունի երկու կին՝ պռուգօք և յանինչք:

ԺԳ. Վասն որ որդին առաջի հօրն մեռանի յանորդի:

ԺԳ.[2] *Վասն որ հայրն կամի բաժանել զիւր որդին և զորդիս որդւոց:*

ԺԴ. Վասն որ հատանէ գին գնել ինչ և չտայ ախման:

ԺԵ. Վասն որ զորդիս իւր զատէ՝ պարտ է գրով ազատել:

ԺԶ. Վասն որ երբ առողջ է կամ հիւանդ՝ գրով ազատէ զծառայն:

ԺԷ. Վասն որ ազատէ զծառայն իւր վկայութեամբ եպիսկոպոսի կամ քահանայից:

ԺԸ. Վասն որ ազատէ զծառայն իւր՝ զինչս ծառային ընդ նմին:

ԺԹ. Վասն որ ազատէ զծառայն իւր՝ կարող է առնուլ յետոյ թէ ոչ:

Ի. Վասն որ ազատէ զիւր ծառայն՝ կարող է երես փոխան գնել:

ԻԱ. Վասն որ ստանայ ծառայ և վկայեն թէ բարեմիտ է, և ոչ լինի:

ԻԲ. Վասն որ ծախէ ծառայ պոմանով[1] *թէ լաւ է, և դիւահար լինի:*

ԻԳ. Վասն որ թէ պարտէ ծառային՝ յատենի փոխան իւր խօսել:

ԻԴ. Վասն որ առ ինքն առ իւր զփախուցեալ ծառայն և պահեաց:

ԻԵ. Վասն որ ընդունի զինուոր որ գրած է յայլոց զիւան[ա]գիր:

ԻԶ. Վասն որ ծախէ ինչ և առնու ռիմոն և դարձուցանել կամի:

ԻԷ. Վասն որոյ թէ ծառայ գնէ ինչ՝ տեառն իւրոյ հրամանաւ:

ԻԸ. Վասն որոյ ոչ տայ հրաման օրէնքս սպանանել զծառայ:

ԻԹ. Վասն որ ազատէ ծառայ պոմանով, և ասէ որ զկնի ամաց որդի:

Լ. Վասն որ կամի, որ զպոման ծառային ցուցանէ առաջի եկեղեցւոյն:

ԼԱ. Վասն որ ազատ է, ի հարցանել նմա յատենի թէ ծառայ է:

ԼԲ. Վասն որ ասէ կինն՝ անձնիշխան եմ, և ծառայ լինի:

ԼԳ. Վասն որ թէ այր կամ կին որ զծառայ գողացեալ պահէ:

ԼԴ. Վասն որ ստանայ ծառայ պոմանով և գտանի ի նմա ախտ:

ԼԵ. Վասն որ թէ որ ծախէ ծառայ անդառնալի պոմանով այր և կին:

ԼԶ. Վասն որ ծառայ ազատի և մնայ առ իւր տէրն և առնու կին յիւր ծառայից:

ԼԷ. Վասն որ ազատէ ծառայ՝ պարտ է առաջի եպիսկոպոսի և վեց իրիցու:

ԼԸ. Վասն որ գնէ գեղ կամ տուն, ծառ կամ այլ ինչ:

ԼԹ. Վասն որ երկու ոսոխք գան ի դատաստան:

Խ. Վասն որ տայ նմա համբերութիւն չորս ամիս:

ԽԱ. Վասն որ ի Կոստանդիանոսէ պարգեւք տուան եկեղեցւոյ:

ԽԲ. Վասն որ Կոստանդիանոս պատուեաց զառաքելական աթոռ:

ԽԳ. Վասն զի Լևոն Թագաւոր պատուեաց զօր կիրակէի:

ԽԴ. Վասն որ սա եդ օրէնս վասն պռուգաց և սահմանաց:

ԽԵ. Վասն որ եդ Նաւմաւս թէ զինչ պարտ է առնել յետոյ պսակին:

ԽԶ. Վասն որ մին ի նոցանէ եթող զընկեր իւր մխալանօք:

---

1 *Հավանաբար այս ձեռագիրն է, որ Մըսըրյանն անցողակի նշում է որպես Զմմառի «№ 10 ձեռագիր»՝ առանց տալու նրա նկարագրությունը*, „Bull. Arm.", II, p. 240.

2 *Այսպես՝ Ժգ-ը կրկնված:*

1 *Այսինքն՝ պայմանով:*

ԽԷ. Վասն որ թէ սիրով են առ միմեանս այրն և կինն։

ԽԸ. Վասն որ կինն մեռանի և ունի որդի՝ արգելու զպռոյգսն։

ԽԹ. Վասն որ թէ կինն մեռանի և ոչ ունի որդիս՝ առնու այրն ի պռուգաց։

Ծ. Վասն որ մեռանի կինն որոյ եղեն որդիք, և մեռանի առաջի։

ԾԱ. Վասն որ թէ է՛ աշխարհ որ զպռոյգքն և զտուայրն չգրեն։

ԾԲ. Վասն որ թէ քրիստոնեայ պարտի ինչ ընկերին մինչ յերեսուն ամի։

ԾԳ. Վասն որոյ հրամայէ օրէնքս՝ ոչ առնուլ ի կնութիւն զկին եղբօր։

ԾԴ. Վասն որ արգելու օրէնքս և զդուստր եղբօրն առնուլ։

ԾԵ. Վասն որ այր առնու կին օրինաւոր պռուգօք և լինի որդի։

ԾԶ. Վասն որ աղջիկ հանդերձի յամուսնութիւն, և տան խաչ և այլ ինչ։

ԾԷ. Վասն որ ոք կամի առնուլ կին և ձեռն տայ եղբարց կնոջն և ազգին։

ԾԸ. Վասն որ հանդերձի ամուսնացուցանել զդուստրն և ասէ պռոյգք։

ԾԹ. Վասն որ աղջիկ որբ է ի հօրէ և ունի մայր և եղբարք նոցա։

Կ. Վասն առնակնոջ որ այրն յիւր անուն գնէ գեղ կամ այլ ինչ։

ԿԱ. Վասն որ գնէ մարդ գեղ կամ զարդարանք յանուն կնոջն։

ԿԲ. Վասն որ ոք յափշտակէ զկոյս կամ զկին որ ոչ ունի այր։

ԿԳ. Վասն որ թէ է՛ կարողութիւն կնոջն ի պռոյգսն յաւելուած առնել։

ԿԴ. Վասն թէ յետ մերձաւորութեանն կարեն տալ ինչ այրն [և] կինն։

ԿԵ. Վասն որ թէ է՛ կարուղութիւն առնն բամբասել զկինն վասն շնութեան։

ԿԶ. Վասն թէ զինչ իրք անարգել տայ զկինն յետ մեռանելոյ առնն։

ԿԷ. Վասն թէ զինչ բաժին տան որդիքն մարցն ի հայրենեացն։

ԿԸ. Վասն թէ յորմէ՛ պատույ զրկին մարդիկ որ լինին նախատած։

ԿԹ. Վասն որ թէ կենդանի է հայր կնոջն կամ հօրն հայր, ոչ [ունի՞] իշխանութիւն կանգնել պռուգաց իւրոց ժառանգեցուցիչ]։

Հ. Վասն որ երբ է կարող լինել կինն իշխան ի վերայ պռուգացն։

ՀԱ. Վասն զի ոչ տայ օրէնքս զայր իւր բամբասել յատենի։

ՀԲ. Վասն զի թէ կին մեռանի առաջի առն և որդւոցն։

ՀԳ. Վասն որ թէ լինի մարդոյ երկու կին, և մին է յանպռոյգք։

ՀԴ. Վասն թէ կին ամուսնացաւ առն ծառայի և բնակէ [ի տուն տեառն նորա]։

ՀԵ. Վասն, որ ծառայ սիրէ զկին որ է ազատ և առնու զկինն։

ՀԶ. Վասն զի թէ է՛ կարողութիւն առն գրել կտակ կնոջ իւրոյ։

ՀԷ. Վասն զի ոչ է նման լինել կնոջ երաշխաւոր։

ՀԸ. Վասն զի հրամայէ օրէնքս կանանց՝ զի խնդրեն զգոյս իւրեանց։

ՀԹ. Վասն զի գրէ կին կտակ և թողու զժառանգութիւն թոռանց։

Ձ. Վասն զի առնու այր կին և բերէ պռոյգս, ծառայք, ոչխար և այլ ինչ։

ՁԱ. Վասն զի առնու այր կին և գտանի դիւահար՝ զի՞նչ է պարտ առնել։

ՁԲ. Վասն զի հանդիպի կնոջ նեղութիւն մարմնոյ յետ պսակին։

ՁԳ. Վասն զի է՛ կարուղութիւն կնոջ որ եբեր որդիք և բաժանի յառնէն։

ՁԴ. Վասն զի է՛ կարողութիւն կնոջ անձնիշխանութեամբ մեկնել յառնէն։

ՁԵ. Վասն որ լինի բաժանումն մահուամբ առն և կնոջ։

ՁԶ. Վասն զի թէ է՛ կարողութիւն առն արձակել զկինն և առնուլ զպռոյգն։

ՁԷ. Վասն թէ է՛ կարողութիւն կնոջ տալ թուղթ արձակման առն։

ՁԸ. Վասն որ մեռանի առանց գրի՝ որդիքն և դստերքն ժառանգեն։

ՁԹ. Վասն զի հայր որ թողու որդիս առանց կտակի և նորա մեռանին։

Ղ. Վասն զի այր էառ կին և մեռաւ և ոչ եթող որդի։

ՂԱ. Վասն զի հրամայէ օրէնք որք գործակալք են թագաւորի։

ՂԲ. Վասն զի որ ազատեաց զորդի և զդուստրն հայրն։

ՂԳ. Վասն զի հայր արձակէ զմանուկ՝ հրամայէ օրէնքս։

ՂԴ. Վասն զի հնազանդեցուցանէ օրէնք զորդիս։

ՂԵ. Վասն զի որ առնէ նախագիծ կտակի իսաւն։

ՂԶ. Վասն զի գրէ մարդ որ մեռանի կտակ և թողու լիղատան։

ՂԷ. Վասն որ կացի այր ընդ ընկերի իւր ի վերայ ընչից։

ՂԸ. Վասն որ կամի ծախել ինչս և առնու ռհմոն։

ՂԹ. Վասն զի է՛ կարելի մարդոյ առնել որդի զորդեգիրս։

Ճ. Վասն որ թողու մարդ տիաթկով լիղատան ումեք։

ՃԱ. Վասն եպիտրապոսին յոր հաւատացին զորբս և զինչս։

ՃԲ. Վասն որ կամի գրով առնուլ որդի առաջի դատաւորի։

ՃԳ. Վասն որ թէ մայրն ընդ որդւոյն չվճարէ զինչս, բայց [թէ իւր հօրն հրամանաւն արար ըզպարտսն]։

ՃԴ. Վասն զի որբերայն կարող է երես փոխանն խնդրել ինչ։

ՃԵ. Վասն զի ոչ է հրաման սպանանել զգողն, այլ ի դատաւոր տարցի։

ՃԶ. Վասն որ մարդ առնէ կռիւ և դարան գործեալ առնէ սպանումն։

ՃԷ. Վասն որոյ թէ մարդ զրկէ զիւր ընկերն։

ՃԸ. Վասն մարդոյ թէ ասէ ոք թէ սպանող է։

ՃԹ. Վասն որ գնէ գեղ կամ ծառայ և ի՛ւր է գինն որ էառ։

ՃԺ. Վասն որ հաւատացին յինք զվերակացութիւն քաղաքին։

ՃԺԱ. Վասն որ անարգի հայր յորդւոյ, կամ թէ չար գործէ [իւր որդին]։

ՃԺԲ. Վասն զի որդիք ընդ հօր իւրեանց ոչ մտանեն ի թէատրոն։

ՃԺԳ. Վասն զի որ տայ գեղ կամ ստացուած ի պատիւ նորա։

ՃԺԴ. Վասն զի զհայրենիսն բաժանեն ի մէջ եղբարց։

ՃԺԵ. Վասն որ քամբասէ մարդ զմարդ վասն պեղծ գործոց։

ՃԺԶ. Վասն զի մարդ որ առնու մանուկ և գրէ զնա իւր յորդեգիրս։

ՃԺԷ. Վասն զի է՛ կարողութիւն որ ասէ մարդ զմարդոյ թէ սպանող է։

ՃԺԸ. Վասն որ քամբասէ զայլ ոք ի պեղծ գործ։

ՃԺԹ. Վասն զի թէ որ գողք են՝ պարտական են մահու։

ՃԻ. Վասն զի որ գողանան զազատս ի ծառայութիւն։

ՃԻԱ. Վասն զի որ լինին բանսարկուք և քսիուսք։

ՃԻԲ. Վասն զի են մարդիկ որ գերեն անասունք։

ՃԻԳ. Վասն զի որ պատառէ զտուն վասն գողութեան։

ՃԻԴ. Վասն զի որ գործ առնէ մահու՝ ըստ նմին լիցի։

ՃԻԵ. Վասն զի որ թողուն ժառանգութիւն կտակով։

ՃԻԶ. Վասն զի որ գրէ զժառանգութիւն կտակով։

ՃԻԷ. Վասն զի որ թողու կտակաւ զժառանգութիւն։

ՃԻԸ. Վասն զի որ առնէ մարդ բան ինչ զկնի ընկերի իւրոյ։

ՃԻԹ. Վասն որ գրեն թուղթ եղբայրութեան ընկերին։

ՃԼ. Վասն զի որդիք դստերն ոչ պարտին հնազանդել։

ՃԼԱ. Վասն բաժանման որ լինին ի մէջ եղբարցն։

ՃԼԲ. Վասն որ առնու որբ արու կամ էգ, թէ ի շնութենէ է։

ՃԼԳ. Վասն որ տայ մարդոյ ի փոխ համարով դահեկան։

ՃԼԴ. Վասն որ տայ մարդ ընկերի ինչ ի փոխ և գրաւական չդնէ։

ՃԼԵ. Վասն որ լինի ներքնատունն այլում և վերնատունն այլում։

ՃԼԶ. Վասն որ գրաւկնէ զիւր հողն այլում կամ զկով։

ՃԼԷ. Վասն փոխոյ և երաշխաւորի և գրաւականի։

ՃԼԸ. Վասն որ ասէ մարդ՝ տուր այս անուան ի փոխ։

ՃԼԹ. Վասն զի թէ ա՛ռ մարդ ի փոխ ի բազմաց և գրէ զանունն։

ՃԽ. Վասն որ առնու մարդ ի փոխ համարով ոսկի և գրէ։

ՃԽԱ. Վասն բժշկաց և գիտնականաց և վարդապետաց։

ՃԽԲ. Վասն որ հոգայ բժիշկն զմարդ և ոչ ողջանայ։

ՃԽԳ. Վասն զի թէ տայ մարդ մարդոյ ի փոխ և դնէ պայման։

ՃԽԴ. Վասն զի թէ է՛ կարողութիւն կուրատորին ի վերայ որբերոյն ան[դեան]։

ՃԽԵ. Վասն զի թէ մեռանի մարդ առանց կտակի և թողու ժառա[նգաւորս]։

ՃԽԶ. Վասն զի թէ մի որդի է հօրն և մեռանի զկնի [հօրն]։

ՃԽԷ. Վասն որ մարդ մնուցանէ վասն աստուծոյ որբ և չառնու կուրա[տորութիւն նամաւսով]։

ՃԽԸ. Վասն զի են մարդոյ որդիք և մին ի նոցանէ [գնայ առնու դահեկան փոխ]։

ՃԽԹ. Վասն զի թէ որդի կամ դուստր գողանայ [ի ստացուածոց ծնողացն]։

ՃԾ. Վասն զի որ ժառանգէ յիւր հայրենի ազգէն։

ՃԾԱ. Վասն զի գնէ մարդ աւանդ՝ կրակ անկանի։

ՃԾԲ. Վասն որ օթի մարդ ի պանդոկի և անի ուղտ։

ՃԾԳ. Վասն որ թողու մարդ զգրաստ իւր ի պանդոկն և չաւանդէ։

Հայկ. բնագրի գերմ. թարգմանությունը՝ Ե. Զախաուի կողմից, տես՝ K. G. Bruns u. E. Sachau *(հրատ.)*, „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert“, Leipzig, 1880, 2. Theil, S. 115—150.

Այլ տպ.— տես K. G. Bruns u. E. Sachau *(հրատ.)*, „Syrisch-römisches Rechtsbuch“ etc. (Neudruck aus der Ausgabe Leipzig, 1880), Leipzig, 1961, 2. Theil, S. 115—150.

Սույն օրինագրքի վրացական խմբագրությունը, որը 1703 և 1711 թթ. շրջանում հայկականից է առաջացել, ունեցել է երկու հրատարակություն։

1. Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակությունը.

სამართალი სომხური, ქართული ვერსია შესრულებული ვახთანგ მე-VI-ის ბრძანებით. გამოსცა ლეონ მელიქსეთ-ბეგმა. ტფილისის უნივერსიტეტის გამოცემა. ტფილისი, 1927. (ქართული ძეგლები. IV. კანონმდებლობა, № 2)[1].

Ասորա-հռոմեական օրենսգիրքը, որն այս հրատարակության «Հայկական օրենք[ներ]» (სამართალი სომხური) *բաժնի 1—150 հոդվածներն է կազմում, գրավում է 3—41 էջերը։*

2. Ի. Դոլիձեի հրատարակությունը.

ვახტანგ VI-ის სამართლის წიგნთა კრებული. ტექსტები გამოსცა, გამოკვლევა და ლექსიკონი დაურთო პროფ. ი. დოლიძემ. საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის გამომცემლობა, თბილისი, 1963. (ქართული სამართლის ძეგლები, ტ. I)[2].

Ասորա-հռոմեական օրենսգիրքը, որն այս հրատարակության մեջ ևս «Հայկական օրենք[ներ]» (სამართალი სომხური) *բաժնի 1—150 հոդվածներն է կազմում, գրավում է 225—270 էջերը։*

Վրացական խմբագրության մասին Հ. Կարստը գրում է.

„Le Code dit *syro-romain* fut traduit au 12e siècle, par St. Nersès de Lambron (Lampronatzi), archevêque de Tarse en Cilico-Arménie, de l'original grec, en arménien; c'est de cette version *arménienne* du *Code Syro-Romain* qu'a été au début du 18e siècle (entre 1703—1711), par ordre du roi Vakhtang VI, confectionné une rédaction en langue *grusinienne*, laquelle version grusinienne fut ensuite incorporée par le même Vakhtang dans son Code-Recueil législatif sous le titre de „*Loi arménienne*", en combinaison avec le Livre des Jugements de Mékhithar Gosh. — Il s'agit donc d'une compilation du Livre justicier dit „*Syro-romain*" en version arménienne, avec les Datastanagirkh de la Grande Arménie (XIIe siècle); en premier lieu sont posées les „*Lois des rois victorieux chrétiens Constantin, Théodose et Léon, rois des Romains*" (§§ 1—150) i. e. le Code Syro-Romain; en second lieu *Le Code justicier de Mékhithar Gosh* (§§ 151 (152)—431). Ces documents géorgo-arméniens se trouvent édités en texte original-carthvélien dans *Monumenta Georgica, IV, Leges, № 2*... — Il est à remarquer que la version carthvélienne, reçue dans le Code-Recueil-Vakhtang de cette législation syro-romaine-arménienne, présente de notables variations et divergences par rapport au texte original syro-romain, resp. arménien".

Վրացական խմբագրությունից կատարված ռուս. թարգմանությունը տես՝ „Сборник законов грузинского царя Вахтанга VI", изд. Правительствующего Сената, С.-Петербург, 1828, стр. 32^{r}—56^{v}.

Այլ տպ. տես՝ „Сборник законов грузинского царя Вахтанга VI", изд. А. С. Френкеля, под. ред. Д. З. Бакрадзе", Тифлис, 1887, стр. 233—260.

Վրացական խմբագրությունն ունեցել է և ֆրնս. թարգմանություն՝ Մ. Բրոսեի ձեռքով, Պետերբուրգում, 1829 թ., բայց մնացել է անտիպ[1]*։*

---

1 *Այս հրատարակությունն ունի նաև լատ. անվանաթերթ.*

Corpus juris armeniaci. Versio georgica jussu regis Wachtangi VI facta. Edidit Leo Melikset-Bek. Sumptibus Universitatis Tphilisiensis. Tphilisiis, 1927. (Monumenta georgica. IV. Leges. № 2).

2 *Այս հրատարակությունն ունի նաև ռուս. անվանաթերթ.*

Сборник законов Вахтанга VI. Тексты, исследование, словарь проф. И. С. Долидзе. Издательство Академии Наук Грузинской ССР. Тбилиси, 1963. (Памятники грузинского права, т. I).

1 *Հմմտ.* Laurent Brosset, „Bibliographie analytique des ouvrages de Monsieur Marie-Félicité Brosset", St.-Pétersbourg, 1887, p. 13.

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղեվ.— «Մարաշու վանքին Դատաստանագիրքը», Բազմավէպ, 1848, էջ 40—44։

Ալիշան Ղեվ.— «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 90։

Ակինեան Ներս.— «Ակնարկ մը հայ իրաւանց պատմութեան վրայ և Յ. Կարստի նոր երկասիրութիւնները», Հանդէս Ամսօրեայ, 1907, էջ 339—344, 358—362. 1908, էջ 37—44, 215—219։

Ակինեան Ներս.— «Ներսէս Լամբրոնացի. Կեանքն և գրական վաստակները», Հանդէս Ամսօրեայ, 1954, էջ 188—195։

Նոյնն է նաև հետևյալը.

Ակինեան Ներս.— «Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի. Կեանքն և գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթումեանց», Վիեննա, 1956, էջ 244—255։

Ամատունի Կար.— «Ազդեցութիւն Յուստինեան-հռոմէական օրինաց հայկական իրաւունքին վրա և ատիճան այդ ազդեցութեան», Բազմավէպ, 1935, էջ 182—188։

Բասմաջյան Կ. Հ. (հրատ.)— «Քաղաքային օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի թագաւորաց Հռովմայեցւոց։ Հրատարակեց Կ. Յ. Բասմաջեան», Փարիզ, 1907։

Բասմաջյան Կ. Հ.— «Հայկական օրէնք Կիլիկեցւոց (Անտիպ ձեռագիր Ազգ. Մատենադարանէն Պարիսի)», Բանասէր, 1907, էջ 14—18։

Բասմաջյան Կ. Հ.— «Հայկական իրաւունք ի սկզբանէ մինչև մեր օրերը»։ Տես ստորև՝ Basmadjian K. J.

Բաստամյանց Վահ.— «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց։ Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան վարդապետի Բաստամեանց...», Վաղարշապատ, 1880, էջ 116—121։

Զարբհանալյան Գար.— «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 750—755։

Թումայան Արշ.— «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք», Երևան, 1962, էջ 96—104՝ «Ասորա-հռոմեական Դատաստանագիրքը և բյուզանդական Զինվորական օրենքը»։

Թորոսյան Խոսր.— «Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը», Բանբեր Մատենադարանի, № 11, 1973, էջ 73—124։

Թոփճյան Հակ.— «Անծանօթ հայկական օրինագիրք մը», տես՝ Թեոդիկ, «Ամենուն տարեցոյցը», ԺԸ տարի, Փարիզ, 1924, էջ 144—147։

Կյուլեսերյան Բաբգ.— «Մխիթար Գօշի վերաբերեալ ձեռագիրք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց ձեռագրաց մատենադարանին մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1926, էջ 137—147։ Ստորագրված՝ «Բաբգէն եպիսկոպոս»։

Կոլեր Հ.— «Իրաւունք հայոց»։ Տես ստորև՝ Kohler J., „Das Recht der Armenier".

Հակոբյան Գր.— «Ներսես Լամբրոնացի», Երևան, 1971, էջ 312—315։

Հարությունյան Վ. Ա.— «Բյուզանդագիտական IX համամիութենական նստաշրջանը», Լրաբեր Հասարակական Գիտությունների (ՀՍՍՀ Գիտ. Ակադ.), 1971, № 8 (344), էջ 107։

Հովհաննիսյան Ս. Հ.— «Ասորական կամ Ասորա-հռոմեական կոչված դատաստանագրքի աղերսը հայ իրաւունքի հետ», Պատմա-Բանասիրական Հանդես, 1970, № 2 (49), էջ 159—177։

Ղլտճյան Արս.— «Հայոց հին իրաւունքը», Ալեքպոլ, 1913, էջ 8—9։

Ղլտճյան Արս. (հրատ.)— «Ասորական դատաստանագիրք։ Ձեռագրերի համեմատութեամբ լոյս ընծայեց Արսէն վարդ. Ղլտճեանց», Էջմիածին, 1917, էջ Գ—ԺԵ (առաջաբան)։

Պողոսյան Յ. Գ.— «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», Երևան, 1967։

Սամուելյան Խաչ.— «Հին հայ իրավունքի պատմություն», հտ. Ա, Երևան, 1939, էջ 59—63։

Տէրոյենց Յովհ. — *«Քանի մը ձեռագրաց վրայ տեղեկութիւն», Հայաստան (շաբաթ.), Կ. Պոլիս, 1847, № 63։*

Арутюнова В. А.— „IX всесоюзная византиноведческая сессия“, *Вопросы Истории*, Москва, 1971, №11, стр. 157.

Краснокутский В. А.— „[Обзор источников римского частного права] Позднейшие литературные памятники“, *տես հետևյալ հրատ. մեջ.* „Римское частное право“, Москва, Юридическое изд-во Министерства Юстиции СССР, 1948, стр. 41—42.

Покровский И. А.— „Лекции по истории римского права“, С.-Петербург, 1907, стр. 96.

Покровский И. А.— „История римского права“, С.-Петербург, 1917, стр. 228—229.

Райт В.— „Краткий очерк истории сирийской литературы“. *Տես ստորև* **Wright W.**

Самодурова З. Г.— „Девятая Всесоюзная византиноведческая сессия в Ереване“, *Византийский Временник*, т. 33, Москва, 1972, стр. 259.

Сокольский Вл.— „Греко-римское право в Уложении грузинского царя Вахтанга VI. Очерк по истории распространения византийского права на Востоке“, *Журнал Министерства Народного Просвещения*, 1897, ч. CCCXIII, отд. II, 1898, стр. 56—93.

Հոդվածի ամփոփումը տես՝ Византийский Временник, том V, вып. 1 и 2, 1898, стр. 298—299.

Сукиасян А. Г.— „Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III—IX вв. н. э.)“, Ереван, 1963, стр. 438—439.

Тер-Иоаннисян Я.— „Армянские законы в Сборнике царя Вахтанга“, *Юридическое Обозрение*, т. XVII, 1886, стр. 177—179.

Френкель А. С. *(հրատ.)*—. „Сборник законов грузинского царя Вахтанга VI. Издание А. С. Френкеля“, Тифлис, 1887, предисловие первое.

დოლიძე ი.— „ვახტანგ VI-ის სამართლის წიგნთა კრებული“, თბილისი, 1963, გვ. 225—270, 593—595.

[**Դոլիձե Ի.** — *«Վախթանգ Զ-ի օրենսգրքերի ժողովածու», Թբիլիսի, 1963, էջ 225—270, 593—595*]։

მელიქსეთ-ბეგი ლ.— „სამართალი სომხური, ქართული ვერსია შესრულებული ვახტანგ მე VI-ის ბრძანებით“, ტფილისი, 1927, გვ. 3—41, 157, 160, 237—240, 247—253.

[**Մելիքսեթ-Բեկ Լ.**— *«Հայկական օրենքներ: Վրացերեն խմբագրություն, կազմըված Վախթանգ Զ-ի հրամանով», Թբիլիսի, 1927, էջ 3—41, 157, 160, 237—240, 247—253*]։

Aptowitzer V.— „Beiträge zur mosaischen Reception im armenischen Recht“, *Sitzungsberichte der Kaiserliche Akademie der Wissenschaften in Wien*, philosophisch-historische Klasse, Bd. CLVII, Jahrg. 1907, IV. Abhandlung, S. 1—42.

Basmadjian K. J.— „Le droit arménien depuis l'origine jusqu'à nos jours. Mémoire présenté au Congrès International d'Histoire Comparée, Paris, 1900. Extrait des Annales Internationales d'Histoire“, Macon, 1901.

Սույնի հայ. թարգմանությունն է՝ Կ. Հ. Բասմաջյան, «Հայկական իրաւունք ի սկըզբանէ մինչև մեր օրերը (Բանախօսութիւն Համեմատական Պատմութեան Բ Համաժողովին մէջ)», Բանասէր, *Փարիզ, 1901, էջ 65—70։*

Baumstark Ant.— „Geschichte der syrischen Literatur mit Ausschluss der christlich-palästinischen Texte“, Bonn, 1922, S. 83.

Bonfante P.— „Di un' influenza orientale nel diritto romano“, *Rendiconti dell' Accademia Nazionale dei Lincei*, classe di scienze morali, storiche e filologiche, ser. VI, vol. 4, 1928.

Bruns K. G. u. Sachau E.— „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert. Mit Unterstützung der Akademie der Wissenschaften zu Berlin aus den orientalischen Quellen herausgegeben, übersetzt und erläutert“, Leipzig, F. A. Brockhaus, 1880.

Բաղկացած է 3 մասերից. Ա. Ասորերեն, արաբերեն և հայերեն բնագրերի հրատարակությունը (էջ 1—141). Բ. Նույն բնագրերի գերմ. թարգմանությունը (էջ 1—150). Գ. Ծանոթագրություններ (էջ 151—347):

Bruns. K. G. u. Sachau E.— „Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert... Neudruck der Ausgabe Leipzig, F. A. Brockhaus. 1880, [Leipzig], Scientia Aalen, 1961.

Duval R.— „La littérature syriaque“, 3ème éd., Paris, 1907, p. 173—175.

Holldack F.— „Zwei Grundsteine zu einer grusinischen Staats— und Rechtsgeschichte“, Leipzig, J. C. Heinrichs, 1902, S. 99—102.

Hube (Von) R.— „Zur Beleuchtung der Schicksale des sogenannten syrisch-römischen Rechtsbuches“, *Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte*, Bd. III, Romanistische Abteilung, Weimar, 1882, S. 17—21.

Ialowicz H. F.— „Historical Introduction to the Study of Roman Law“, Cambridge, 1939, p. 477.

Karst Joseph.— „Grundriss der Geschichte des armenischen Rechtes“, *Zeitschrift für Vergleichende Rechtswissenschaft*, Stuttgart, Bd. XIX, 1906, S. 313—411; Bd. XX, 1907, S. 14—112.

Սույն աշխատությունից մի հատված՝ «Ուրուագիծ հայկական իրաւագիտութեան պատմութեան» (թարգմ. Ա. Աստուրյան), տես Բազմավէպ, *1907, էջ 71—73 և 109—112:*

Karst Joseph *(հրատ.)*.— „Le Code de Vakhtang VI, édité en version française et annoté par Joseph Karst“, Strasbourg, Heitz et Cie, 1934. (Corpus Juris Ibero-Caucasici. Ire section: Droit, national géorgien codifié.— Tome I[1]). *Տես առաջաբանը:*

Kohler J.— „Das Recht der Armenier“, *Zeitschrift für Vergleichende Rechtswissenschaft*, 1888, S. 385—436.

Սույնի հայ. թարգմանությունը՝ Հ. Կոլեր, «Իրավունք Հայոց», հետևյալ հրատ. մեջ, «Ուսումնասիրութիւն Լեհահայոց դատաստանագրոյն: 1. Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը. 2. Գոլէր, Իրաւունք Հայոց» (թարգմ. Գրիգորիս Գալեմքյարյան), Վիեննա, 1890: Այս հրատարակության մեջ հեղինակի անունը արևմտահայ ուղղագրությամբ գրված է «Գոլէր»:

Kohler J.— „Altsyrisches und armenisches Recht“, *Zeitschrift für Vergleichende Rechtswissenschaft*, Bd. XIX, 1906, S. 103—130.

Leist B. W.— „Alt-arisches jus civile“, I Abtheilung, Jena, Gustav Fischer, 1892.

Mécérian Jean.— „Bulletin arménologique“, cahier II. Beyrouth, 1953, p. 238—242: „Chronique de droit arménien. § I. Un prétendu codificateur anonyme Cilicien“.

Mitteis L.— „Reichsrecht und Volksrecht in den östlichen Provinzen des Römischen Kaiserreichs“, Leipzig, 1891.

Müller Dav.— „Das mosaische Receptionsrecht im armenischen Recht“, *Sitzungsberichte der Kaiserlichen Akademie der Wissenschaften in Wien*, philos.-histor. Klasse, Bd. CLIII, Jahrg. 1906, III. Abhandlung, S. 1—48.

Müller Dav.— „Das mosaische Receptionsrecht im armenischen Recht“, *Sitzungsberichte der Kaiserlichen Akademie der Wissenschaften in Wien*, philos.-histor. Klasse, Bd. CLIV, Jahrg. 1906, III. Abhandlung, S. 1—87.

Nallino C. A.— „Sul Libro Siro-Romano e sul presunto diritto siriaco", *հետևյալ հրատ. մեջ*, „Studi in onore di Pietro Bonfante", vol. I, Milano, 1930.

Ortiz de Urbina I.— „Patrologia syriaca", Romae, 1958, p. 225.

Petermann Hr.— „Über die armenische Übersetzung der Gesetze Constantin's", *Monatsbericht der Königlich Preussischen Akademie der Wissenschaften zu Berlin*, 1867, S. 419--424.

Taubenschlag R.— „Il diritto provinciale romano nel Libro Siro-Romano", *The Journal of Juristic Papyrology*, vol. VI, 1952, p. 103—119.

Taubenschlag R.— „Opera minora", t. I, Warszava, 1959, p. 291—312.

Wright W.— „A short history of syriac literature", London, 1894, p. 96—97

Ռուս. թարգմանությունը՝ В. Райт „Краткий очерк истории сирийской литературы" (пер. с англ. К. А. Тураевой), С.-Петербург, 1902, стр. 66—67.

ԱՍՈՐԻ

(Զանազան անձեր)

Տես՝ ԳԼՈՐԳ ԱՍՈՐԻ:
ԴԱՆԻԷԼ ԱՍՈՐԻ ՍԱԼԱՀԵՑԻ:
ԵՂԻԱ ԱՍՈՐԻ:
ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ:
ԶԵՆՈԲ ԱՍՈՐԻ:
ԻՇՈԽ ԱՍՈՐԻ:
ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ:
ՅԱԿՈԲ ԱՍՈՐԻ:
ՆԱՆԱ ԱՍՈՐԻ:
ՑԱՐԱՋ ԱՍՈՐԻ:

ԱՍՊԱՀԱՆՑԻ (Աբր.)

Տես՝ ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏԵՑԻ անվան տակ[1]:

ԱՍՍԻԶԱՑԻ (Ֆր.)

Տես՝ ՖՐԱՆԿԻՍԿՈՍ ԱՍՍԻԶԱՑԻ:

[1] *Տես՝ ստո, հտ. Ա, էջ 90, տ. 35—36:*

ԱՍՍԻԶԻ ԱՆՏԻՈՔԱՑ

Տես՝ ԱՆՍԻԶ ԱՆՏԻՈՔԱՑ:

ԱՍՏԱՊԱՏԵՑԻ (Աբր.)

Տես՝ ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏԵՑԻ:

ԱՍՏԱՍԻՈՍ

Տես՝ ԱՆԱՍՏԱՍ ՊԱՐՍԻԿ[1]:

ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ

Տես՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՐԿՐԱՉԱՓ[2]:

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ, ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տես՝ ԳՈՒՇԱԿՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ: ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՍՏԵՐԻՈՍ ԻՍԱՒՐԱՑԻ

Տես՝ ԿՂԱՒԴԻՈՍ ԻՍԱՒՐԱՑԻ:

ԱՍՏԻՈՍ*

(Asteius կամ Astius)

Դուրրաքիոնի եպիսկոպոս, որը վկայացավ Տրայանոսի կայսրի հալածանքների ժամանակ, Բ դարի սկզբին: Հայոց Հայսմավուրքներում գտնվում են նրա վկայաբանության մի քանի խմբագրությունները:

* * *

1. (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Աստիոսի եպիսկոպոսին Դորաքիոյ. «Յաւուրս Տրայիանոսի ամբարիշտ արքային՝ էր սուրբն Աստիոս եպիսկոպոսն Դորաքոյ քաղաքին ի կողմանս Արևմտից, և նախարարք քաղաքին՝ Նումերիանոս, Նեարքոս, Ագգայիդոս և Արիանոս բռնադատեցին զնա զոհել կռոցքն...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 8—9:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն Աստիոսի եպիսկոպոսի. «Յաւուրս Տրայիանոսի...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1927/1930, p. 683—684.

[1] *Տես՝ ստո, հտ. Ա, էջ 819, տ. 21:*

[2] *Տես՝ ստո, հտ. Ա, էջ 558, տ, 37:*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* J. Pinius, „De S. Asteio, Astio, vel Aberisto episcopo et martyre", *Acta Sanctorum*, Julii t. II, Parisiis, 1867, p. 284.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Passion de l'évêque Astius", *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից:*

2. (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն Աստիոսի սրբոյ եպիսկոպոսին. «Յամս Տրայիանոսի ամբարիշտ արքային, էր սուրբն Աստիոս եպիսկոպոս Դորադայ (sic) քաղաքին որ է յարևմուտս, և էր վարդապետ ճշմարտութեան...», *տես՝ «Ծառ սրբոց վկայից» ևն, այն է՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706, էջ 876:*

Այլ. տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Յամս Տրայիանոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 788:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Յամս Տրայիանոսի...», *տես՝ «Գիրք որ կոչի Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 599:*

3 (Անանուն խմբագր.).

Աստիոսի եպիսկոպոսին. «Էր սուրբ եպիսկոպոսն յամս Տրայիանոսի արքային...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 231ա:*

⊠ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 376ա—376բ) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 551բ), № 10 (էջ 480ա), № 213 (էջ 347բ), № 219 (էջ 422ա) ևն. Մարբուրգի* WdtB Ms. Or. Fol. 4254 (fol. 551v).

Հմմտ. հունական հայսմավուրքը՝ „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae„ (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 797—799.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աւգերեան Մկ.— *«Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 66—67:*

ԱՍՏՂ ՎԱՐԴԱՊԵՏ

Գրչական թյուրիմացությունների շարքին պատկանող անուն: Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. № 225 ձեռագրում (էջ 23) հեղինակային այսպիսի անունով է Կ. Պոլսին նվիրված այն հայտնի Ողբը, որի հեղինակն Առաքել Բաղիշեցին է (սկ. «Արդ ամենայն ազգք և ազինք»*)[1]: Թյուրիմացության ծագումն, անշուշտ, պիտի որոնել* «Առքլ» *(Առաքել) համառոտված ձևի մեջ: Մեսրոպ Մագիստրոսն իր «Հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակ» անտիպ գործում Ղալաթիայի այս № 225 ձեռ. օրինակը սխալմամբ նշել է Աբրահամ Անկյուրացու անվան տակ, որին հետևել էինք նաև մենք՝ մեր Նախորդ հատորում[2], ցույց տալով աղբյուրը, քանի որ Ղալաթիայի ձեռագրերի ցուցակն այդ ժամանակ դեռ լույս չէր տեսել:*

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ, ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տես՝ ԳՈՒՇԱԿՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ: ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

Տես՝ ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ: ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Theologia et varia dogmatica)

Հասարակական գիտությունների բնագավառում, պատմագրական և հնագիտական նյութերի հետ միասին, առաջնակարգ արժեք են ներկայացնում աստվածաբանական և դավանաբանական նյութերը: Միջնադարյան Հայաստանում, ավատական հարաբերությունների տիրապետության պայմաններում, երբ եկեղեցին իշխող դեր էր գրավում երկրի հոգևոր ու մշակութային կյանքում, նրա հեղինակության պահպանման համար տարվող պայքարում խոշոր նշանակություն ուներ գաղափարախոսական գրականությունը: Սկզբնական շրջանում, քրիստոնեության պետական կրոն հռչակմամբ և հատկապես տաճերի գլուխից հետո, նախ հեթանոսական մնացուկ-

[1] *Տես՝ Բ. Կյուլեսերյան, «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ...», էջ 1136:*

[2] *Աստ, հտ. Ա, էջ 85, ծ. 19:*

ների դեմ պայքարի որպես գաղափարական զենք, տեսական գրականության մեջ հարկադրաբար ծնունդ առավ աստվածաբանական-ուսուցողական սեռը, որի նպատակն էր պաշտպանել Հայաստանում կրոնական նոր ըմբռնումների հաղթանակը հների դեմ: Այդ գրականության մեջ անխուսափելիորեն նշանակալի տեղ էր գրավում նաև քրիստոնեության առաջին դարերում ծագած աղանդավորական գաղափարների քննադատությունը, ինչպես կարելի է տեսնել սուրբ և հույն եկեղեցական հայրերի երկերի հայերեն թարգմանություններից, ինչպես և հայ հեղինակների գործերից, օրինակ՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքից: Սակայն քննադատական այդ գիծը հայ մատենագրության մեջ գնում էր ուղղակի հակաքրիստոնեական շահերի հունով, քանի որ այդ շրջանում դա համընկնում էր տեղական շահերին: Տեսական գրականության մեջ եղած քննադատական այդ տարրի զարգացմամբ իր իսկական և լայն առումով հանդես եկավ դավանաբանական-հակաճառական սեռը՝ 451 թվականի Քաղկեդոնի ժողովին հաջորդող շրջանում, հատկապես Դվինի 506 թվականի եկեղեցական ժողովից հետո, երբ Հայ եկեղեցին, զուգորդելով իր շահերը հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության շահերի հետ, խզեց իր պաշտոնական կապերը Բյուզանդիոնի ու Հռոմի հետ, և դիրքավորվեց Քաղկեդոնի դեմ: Այդ ժամանակվանից սկիզբ առան դավանաբանական բուռն վեճեր քաղկեդոնականների կամ երկաբնակների հետ՝ ի պաշտպանություն միաբնյա վարդապետության, ճշտվեցին և որոշվեցին հայադավան ուղղափառության սահմանները, և դավանական ասպարեզում հունական և հռոմեական եկեղեցիների դեմ հայ եկեղեցու այդ պայքարը, որը հիմնականում պաշտպանողական բնույթ էր կրում, տևեց երկար դարեր, կուտակելով հսկայական քանակությամբ ինքնուրույն ու թարգմանական գրականություն: Անշուշտ կան նաև բազմաթիվ այնպիսի երկեր, որոնք Հայաստանում ուղղակի քաղկեդոնական գաղափարները տարածելու նպատակով թարգմանված օտար գործեր են (հունական կամ լատինական ծագումով) և կամ՝ հայ երկաբնակ հեղինակների գործեր (հայ-հույն, հայ-հռոմեական): Աստվածաբանության և դավանական պայքարի զուտ տեսական հարցերին զուգորդվել են նաև գործնական բնույթի հարցեր (ծիսական և սովորութական կարգի հարցեր, եկեղեցական իրավունքի հարցեր են), որոնք բխում էին թե՛ ընդհանրապես եկեղեցական կարգերի և թե՛ նաև ազգային-եկեղեցական առանձնահատկությունների անխախտ պահպանության մտահոգությունից: Գաղափարաբանական առումով՝ դավանաբանական տարակարծությունները ուրիշ բան չէին, եթե ոչ աստվածաբանական հարցերում արտահայտվող տարընթացություններ, որոնք, սակայն, իրականության մեջ հասարակական ու քաղաքական կյանքի իրադարձությունների արտացոլումն էին: Այդ առումով՝ աստվածաբանական և դավանաբանական երկերն առատ նյութ են տալիս միջնադարյան Հայաստանի ներքին կյանքում երևան եկած հասարակական խմորումների և շարժումների պատմության համար, իսկ արտաքին կյանքում՝ հարևան և այլ երկրների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Ստորև նկարագրում ենք միայն այն բնագրերը, որոնք անհեղինակ են և կամ հավաքական հեղինակություն են հանդիսանում (վավերագրեր, որոնք կրում են մեկից ավելի ստորագրություններ): Անհրաժեշտ ենք համարել հաշվի առնել նաև եկեղեցական ժողովների պատմությունը վերաբերող մի քանի կարևոր բնագրեր, նկատի ունենալով, որ դրանք մեզ հետաքրքրող նյութերի՝ տեսական հարցերի լուսաբանումն են տալիս պատմականորեն և հանգամանորեն: Հեղինակ ունեցող երկերը և վավերագրերը նշում ենք վերջում առանձին՝ հեղինակների անուններով, հիման կարգով: Առանձին տեսնել՝ ԺՈՂՈՎՆԵՐ, ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՈՒՆԻԹՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ են: Ներկա հոդվածի էությունն ու նյութերը շոշափող ուսումնասի-

բանաձևերը կնշենք ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ հոդվածում:

* * *

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Գիրք թղթոց=*Գիրք Թղթոց: Մատենագրութիւն նախնեաց: Թիֆլիս, 1901: (Սահակ-Մեսրոպեան Մատենադարան: Ե):*

1. Վասն տիեզերական սիւնհոդոսացն թէ ե՞րբ և վասն որո՞յ և յորո՞ւմ տեղւոջ ժողովեցան և զո՞վ որ նզովեցին. «Պարտ է գիտել եթէ եօթն[1] ժողովք եղեն: Առաջինն՝ սուրբ և տիեզերականն[2] սինհոդոսն եղև ի Նիկիա, յաւուրս մեծին և սրբոյն Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի Հռոմայ պապուն...», *տես՝* *Zeitschrift für Armenische Philologie,* Marburg, Bd. I, 1901/1902, S. 185—189.

Հրատարակվել է Էջմ. Մատ. (այժմ Երևանի Պետ. Մատ.) № 1898 ձեռագրից:

2. Համառօտ նախապատմութիւն սուրբ ժողովոյն Նիկիայու, որ է առաջին տիեզերական ժողով *(թարգմ. Հակոբ Կոստանդնուպոլսեցի Ճաճեի-օղլի), Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2620, էջ 1ա—33ա:*

3. Պատմութիւն սրբոյ ժողովոյն Սարդիկայ, իբր մասն ինչ առակցական Նիկիայու *(թարգմ. Գեորգ Մխլայիմ), անդ, էջ 34ա—52բ:*

4. Պատմութիւն Կոստանդնուպոլսոյ ժողովոյն, որ է երկրորդ ընդհանրական ժողով *(թարգմ. Գեորգ Մխլայիմ), անդ, էջ 53ա—70ա:*

5. Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի, որ է երրորդ տիեզերական ժողով *(թարգմ. Գեորգ Մխլայիմ), անդ, էջ 70ա—381բ:*

6. Սուրբ և տիեզերագումար երկրորդ ժողովն Եփեսոսի ընդդէմ Փլաբիանոսի երկարեան պատրիարքին Կոստանդնուպոլսոյ, արարեալ ի մեծ վկայէն Քրիստոսի սրբոյն Դէոսկորոսէ հայրապետէն Աղեքսանդրիայու, արտահանեալ ի գործոց գրքէն Քաղկեդոնի ժողովոյն, և թարգմանեալ ի Հելլենացւոց լեզուէն ի հայ բարբառ ի Կոստանդնուպոլսեցի Գէորգ վարդապետէն, ի մէջ Դպրատանն Փարիզու՝ մայրաքաղաքին Ֆրանցայու, ի թուին Քրիստոսի ՌՉԺ (sic) և Հայոց ՌՃԾԵ-ին *(թարգմ. Գեորգ Մխլայիմ), Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4036:*

7. Գործք Քաղկեդոնի ժողովոյն *(թարգմ. Գեորգ Մխլայիմ), Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1777, էջ 2ա—249բ:*

8. Պատմութիւն սուրբ ժողովոյն Ֆլորենցիայու *(թարգմ. Կարապետ Հռոմայեցի), Արմաշի Մատ. ձեռ. № 88:*

9. [Պատմութիւն Տրիդենտեան ժողովոյն] *Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 53:*

10. Աստուածաբանութիւն յաղագս աստուածագիտութեան, թէ ո՞րպէս է աստուածութիւնն *եւն.* «Զի աստուած հայր է ամենայն արարածոց, երևելեաց և աներևութից, անշարժելի է և աներևելի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3854, էջ 88բ—92ա:*

11. Վկայութիւն արտաքնոց փիլիսոփայից վասն աստուածութեանն. «Հոմերոս նշանաւոր փիլիսոփայ ասէ. Երեք զօրութիւնք յերկնից...», *տես՝* Բազմավէպ, *1922, էջ 4—5:*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. «Ոսկեփորիկ Գ» ձեռագրից: Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5254՝ «Յաղագս աստուածութեանն իմաստասիրութիւն» *(էջ 202բ—204ա, սկ.* «Հերմէս նշ. փիլիս. ասէ»), *№ 2334՝* «Յաղագս աստուածաբանութեան իմաստասիրացն բանք ասացեալ» *(էջ 95ա, սկ.* «Թերէս նշ. փիլիս. ասէ»):

12. Այս է Աստուծոյ հազար և մէկ անուններն *են.* «Անեղ աստուած, անսկիզբն աստուած, անիմանալի աստուած ...», *Երե-*

[1] *Բնագրում՝* է երրորդ:

[2] *Բնագրում՝* տիեզերակալն:

վանի Պետ. Մատ. ձեռ. № 9098, էջ 217ա—224բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 9547 (էջ 1ա—34բ):

13. Վասն անուանցն, որք պատկանին Աստուծոյ մերոյ. «Եւ գիտելի է՝ զի ասէ Դիոնեսիոս, թէ բարեխնամ կամացն ներգործութեանց կոչեցան ամենայն անուանք աստուածայինք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2220, էջ 296բ—297ա:*

14. Այս անուանք Աստուծոյ են, եօթանասուն և երկու լեզու են. «Թերնիթաս, Ակիաւ, Սաւթէր, Մեսիար, Էմանուէլ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8675, էջ 93բ—95ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 9155 (էջ 7ա, սկ. նույն), № 4625 (էջ 107ա—111բ՝ սկ. «Թէրն իթաասկիաւ»*), № 8632 (էջ 4բ, սկ.* «Թերնին թաս ակիաւս»*), № 8428 (էջ 176ա, սկ.* «Թերնիաթաս ակիրաւ»*), № 3248 (էջ 70բ—71բ, սկ.* «Կերնիթաս, ակիաւ»):

15. Աստուածաբանութիւն[1] անջատեալ յերկուս հատոր[ս]: Առաջին՝ Յաղագս յաւիտենական օրինացն և նախախնամութեան աստուծոյ: Յաղագս կառավարութեան աստուծոյ: Յաղագս բնական, աստուածային և մարդկային օրինացն և այլոց: Մանաւանդ՝ Յաղագս տասնաբանեայ օրինացն ընձեռեսցուք: Ի փառս ամենամեծին աստուծոյ, և ի պատիւ ամեներանուհւոյ կուսին Մարիամայ Աստուածածնին, և ի յօգուտ մանկանց Սիոնի: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9069, էջ 1ա—284ա:*

Սկ. «Յաղագս յաւիտենական օրինացն և նախախնամութեանն աստուծոյ: Հրց. Թէ զի՞նչ է յաւիտենական օրէնք և նախախնամութիւն աստուծոյ...»:

Վերջում՝ հիշատակարան. «Փառք...: Կամօքն ամենազօրին աստուծոյ և ի հնազանդութիւն հրամանաց առաջնորդիս իմոյ եղբայր Մաթէոսին, այսր ժամանակի արժանագոյն դաստապետին, ի սպասաւորութիւն մերոյ Քարոզողացն կարգիս ի ուխտ եղբայրութեան ուսումնասիրաց, ի թուին փրկչին ՌՃԿԳ (1664), մայիսի 16-ին: Ես աններհուն եղբայր Սերաստիանոս աստուածաբան վարդապետ ի կարգէն Քարոզողաց, ազգաւ Ալամանցի, ի քաղաքէն Պամպերգայ որ ի գաւառէն (sic) *Ֆռանկոնիա, ամալ մտօք այլոյ բարբառ՝ անհմուտ ձեռօք գծիս այս թարգմանեցի ի գիւղաքաղաքին, որ է Ապարանէր, ի վանս Ամենայն Սրբոց: Արդ՝ դու, ո՛վ ընթերցող, զոր ինչ նուազութիւն գտցես...» Մնում է անավարտ (էջ 279բ):*

Անվանաթերթի համաձայն՝ ձեռագիրն ընդօրինակված է Կ. Պոլսում (Ղալաթիա) 1795 թ. մարտի 16-ին (էջ 1ա):

16. Եզրակացութիւնք աստուածաբանականք. «Յաղագս սրբազանի վարդապետութեան: Ա. Սրբազան վարդապետութիւն ուղղակի առորագրի...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Vat. Arm. 22.

Աշխատության լատ. վերնագիրն է. „Conclusiones latino-armenae ex sacra theologia, palam ad disputandum propositae, quas Eminentissimis ac Reverendissimis Principibus S. R. E. de Propaganda Fide Cardinalibus D. D. D. Alumni Collegij Pontificij Leopoliensis sub directione Clericorum Regularium, S. Sedis Apostolicae Missionariorum. Anno Domini 1709"[1].

17. Բարոյական աստուածաբանութիւն, ընձեռեալ զպատուիրանաց աստուծոյ, յորս պարունակէ պեսպես դիպուածք պիտանիք պատկանեալք խոստովանահարց: Հաւաքեալ ի գրեանց բազում և պեսպես սրբազան վարդապետաց Լատինացւոց և դիպուածախնդիր աստուածաբանից, և եդեալք ի մի վայր՝ ի լոյս և ի շաւիղ հոգաբարձու քահանայից մերոց. «Նախերգանք: Որպէս սովորութիւն է յընթացս աշխարհի և ի կացութիւնս ամենայն ազատական և ծառա-

---

[1] *Խնամքով ջնջված է* աստուածաբանութիւն *բառը:*

[1] *Տես* E. Tisserant, „Codices armeni Bybliothecae Vaticanae", Romae, 1927, p. 299.

յական արհեստաւորաց...“, *Թբիլիսիի Պետ. Թանգ.*[1] *հայ. ձեռ. № 57, էջ 1ա—334բ:*

18. Հանգանակ հաւատոյ որով վարի եկեղեցի Հայաստանեայց. «Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից...», *տես՝ Հ. Գաթըրճյան, «Հանգանակ հաւատոյ որով վարի Հայաստանեայց եկեղեցին», Վիեննա, 1891, էջ 1—2:*

Բազմիցս հրատարակված այս հանգանակը սույն հրատարակության մեջ բնագրաբանական հետազոտության է ենթարկված (էջ 1—39 և 47—49):

19. Սահմանք հաւատոյ որ ի Նիկիա ժողովեցան սուրբ եպիսկոպոսունք ՅԺԸ. «Խոստովանիմք զտեր մեր Յիսուս Քրիստոս, զ'ի հօրէն յառաջ քան զյաւիտեանս ծնեալ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1712, էջ 45բ—46բ:*

20. Յաղագս սրբոյ Երրորդութեանն. «Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ, բոլորիցս արարիչ, երևելեացս և աներևութից...»: *Տես՝ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ:*

21. Արտադրութիւն յաղագս աստուածային մարմնաւորութեան բանին *եւ*. «Խոստովանիմք զորդին Աստուծոյ՝ նախ քան զյաւիտեանս մշտնջենարար ծնեալ...»: *Տես՝ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ:*

22. Դաւանութիւն. «Անսկիզբն հայր ամենակալ և մշտնջենազով...»: *Տես՝ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ:*

23. Դաւանութիւն Քաղկեդոնականաց զոր ինքեանք Աթանասի ասեն. Է' ինչ որ ուղիղ է և է' ինչ՝ որ թիւր. «Որ ոք կամիցի փրկիլ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 467, էջ 218ա—219ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1712 (էջ 86ա—88ա), № 4607 (էջ 238ա—238բ, սկ. «Որք կամիցին փրկիլ »): *Տես նաև ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ (Դավանական և արարողական երկեր. § 3):*

24. Դաւանութիւն Քաղկեդոնացւոց, տե'ս և զգոյշ լեր՝ որ թիւր կայ և ուղիղ. «Գիտելի է, զի են ոմանք որ մի բնութիւն ասեն ի Քրիստոս, զոր դատապարտէ եկեղեցի Աստուծոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1760, էջ 244ա—247ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1756 (էջ 216ա—219ա), № 1850 (էջ 148բ—149բ), № 1712 (էջ 90բ—93բ), № 4246 (էջ 18ա—21բ), № 467 (էջ 220բ—222բ), № 4607՝ «Դաւան. Քաղկեդոնականացն, զոր միայն առ ի գիտենալ տեսանելի է» *(էջ 240ա—242ա):*

25. Դաւանութիւն պատուական և ցանկալի յոյժ, հաւաքեալ ի մի՝ ի բազմաց ասացելոց վարդապետաց. «Խոստովանիմ և հաւատամ զգուգափառ միութիւն զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յերիս յանձնաւորութիւնս բաժանեալ...», *տես՝ «Գիրք որ կոչի Հարանց վարք», Կ. Պոլիս, 1720, էջ 549—552:*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 685 (էջ 353ա—355ա):

26. Յաղագս անօրէնութեան մարդացելոյ բանին Աստուծոյ՝ դաւանութիւն. «Դարձեալ դաւանեմ և հաւատամ զմարդեղութիւն տեառն այսպէս: Մինն ի սրբոյ երրորդութենէն՝ յերջանկարար համազօր ահաւորութենէն...», *տես՝ «Գիրք որ կոչի Հարանց վարք», Կ. Պոլիս, 1720, էջ 552—555:*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 685 (էջ 355ա—356բ):

27. Դաւանութիւն. «Խոստովանիմք և դաւանիմք զսուրբ Երրորդութիւնն և զմի աստուածութիւնն անքերի...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 284, էջ 242բ—246ա:*

28. Խոստովանութիւն ճշմարիտ ուղղափառաց. «Հաւատամք ի Հայր և յՈրդի և ի

---

1 Հմմտ. Ս. Լալաֆարյան, «Ցուցակ» (անտիպ):

Հոգի սուրբ, յերիս անձինս կատարեալ և ի մի աստուածութիւն փառաւորեալ...», *տես՝ «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Մոսկվա, 1858, էջ 199—202:*

Բնագիրը ժամանակակից է Հովհաննես Վանականին:

Այլ տպ.— Խոստովանութիւն հաւատոյ ուղղափառաց. «Հաւատամք...», *տես՝ «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն...», Վենետիկ, 1865, էջ 189—193:*

Այլ տպ.— Խոստովանութիւն ճշմարիտ ուղղափառաց. «Հաւատամք...», *տես՝ «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 318—324:*

Այլ տպ.— Խոստովանութիւն ճշմարիտ հաւատոյ ուղղափառաց. «Հաւատամք...», *տես՝ «Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 333—338:*

□ *Բնագրի լատ. թարգմանությունը՝* „Professio vera orthodoxorum" *(թարգմ.* J. H. Petermann), *տես հետևյալ հրատ. մեջ.* „Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, XIIIe s., Histoire d'Arménie; Oukhtanès d'Ourha, Xe s., Histoire en trois parties" (trad. par M.-F. Brosset), 1re livraison, St.- Pétersbourg, 1870, p. 200—202.

Ռուս. թարգմանությունը՝ „Исповедание праведников православных", *տե՛ս հետևյալ հրատ. մեջ.* Киракос Гандзакеци, „История" (пер. Т. Тер-Григорьяна), Баку, Изд. Академии Наук Азербайджанской ССР, 1946, стр. 167—169.

29. Խոստովանութիւն հաւատոյ քրիստոնէից. «Խոստովանիմ և հաւատամ՝ անեղ և անսկիզբն, անվախճան և անհատաբած, միայն զհամագոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 732, էջ 754ա—756ա:*

30. Յաղագս չորեքտասան ատինանց. «Հաւատամք թէ է՛ Աստուած, և մի՛ է Աստուած, անճառ, անորակ, անքանակ, անուր, աներ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6031, էջ 251բ—253բ:*

31. Այլ դաւանութիւն չորեքտասան գլուխ. «Հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին: Հաւատամ զՀայր՝ Աստուած անսկիզբն և անպատճառ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1850, էջ 141ա—141բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1760 (էջ 260ա—260բ):

32. [Դաւանութիւն հաւատոյ] «Խոստովանիմք զՈրդին Աստուծոյ զԲանն Աստուած զծնեալ Հօր և փառակից սուրբ Հոգւոյն...»: *Տես՝ ՍԱՀԱԿ ՄՌՈՒՏ, «Պատասխանի թղթոյն Փոտայ»:*

33. [Դաւանութիւն հաւատոյ] «Խոստովանիմք, որպէս ուսաք ի հարցն սրբոց, զՀօր յատկութիւն առանձնաւորութեանցն...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ»:*

34. [Դաւանութիւն հաւատոյ] «Խոստովանիմք զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յերիս անձնաւորութիւնս բաժանեալ...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»:*

35. [Դաւանութիւն հաւատոյ] «Պարտ և արժան է Քրիստոսի երկրպագուաց և յանուն սուրբ Երրորդութեանն մկրտելոց...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Թուղթ ընդհանրական»:*

36. [Դաւանութիւն հաւատոյ] «Խոստովանիմք համագոյ և անեղ զամենասուրբ զԵրրորդութիւնն յերիս անձնաւորութիւնս բաժանեալսն...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Պատասխանի թղթոյն մեծի թագաւորին Յունաց Կիւռ Մանուէլի... վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ»:*

37. Դաւանումն ուղղափառ հաւատոյ. «Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զգուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն Հօր

և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Հայր անսկիզբն և անպատճառ...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ»:*

38. Տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ. «Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զգուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն...: Հայր անսկիզբն և անպատճառ, որոց ինքն է սկիզբն և պատճառ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4246, էջ 21բ—44բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1712՝ խոր. նույն (էջ 93բ—113բ, վերջից թերի):

Վիճաբանական գրվածք է, սկզբում ունենալով մի համառոտ դավանություն: Կարծում ենք, որ բնագրի խորագրի ցուցմունքը վավերական հանգամանք չունի՝ նրա հեղինակությունը Ներսես Շնորհալուն վերագրելու: Ուրիշ ձեռագրերում այս բնագիրը վերագրված է նաև Պողոս Տարոնացուն: Մենք վերագրելի ենք համարում Սահակ Միայնակյացին.

39. Ներսէսի դաւանութիւն. «Հաւատով խոստովանիմ զքեզ ամենասուրբ Երրորդութիւն՝ անմահ Հայր, և Որդի և սուրբ Հոգի: Հաւատամ և խոստովանիմ զքեզ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ՝ անսկիզբն, անծին, անեղ, աներբ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2268, էջ 94ա—94բ:*

Բնագիրը կազմված է Ներսես Շնորհալու գրվածքների ազդեցության տակ:

40. [Դաւանութիւն հաւատոյ] «Խոստովանիմ և հաւատամ, որպէս ուսաք ի հարցն սրբոց, զՀայր սուրբ Աստուած ճշմարիտ՝ անսկիզբն և անեղ, անծին և անպատճառ, աներբ և անուր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1712, էջ 42ա—45բ:*

Բնագիրը կապեր ունի նախորդի հետ, բայց ավելի ընդարձակ է:

41. Սկիզբն դաւանութեան սուրբ Երրորդութեանն զոր խոստովանի և փառաւորէ ընդհանուր կաթուղիկէ եկեղեցի *են.* «Հաւատամք և խոստովանիմք զքեզ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ՝ անսկիզբն, անեղ, և աներբ, անճառ և անպատում...», *Երևանի Պետ. Մատ, ձեռ. № 614, էջ 42բ—51բ:*

Կապեր ունի նախորդ երկու բնագրերի հետ, բայց շատ ավելի ընդարձակ է:

42. [Դաւանութիւն հաւատոյ] «Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ՝ բոլորից արարիչ երևելեաց և աներևութից, որ ունի զգոյն առ յինքեանէ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց՝ պատասխանի թագաւորին Հոռոմոց Մանուէլի, յորում և ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ արքային»: (Քաղված է Աթանաս Աղեքսանդրացու «Յաղագս սրբոյ Երրորդութեան» ճառից):*

43. [Դաւանութիւն հաւատոյ] «Հաւատամք և խոստովանիմք զպաշտելի և զերկրպագելի սուրբ զԵրրորդութիւնն...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց և ընդհանուր Հայաստանեայց ժողովոյ՝ գրեալ ի կաթողիկէ եկեղեցին Հոռոմոց»:*

44. Ուղիղ դաւանութիւն հաւատոյ *են.* Զաստուածութիւն անճառելի և անիմանալի և անհասանելի ուսուցին մեզ...»: *Տես՝ ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, «Ուղիղ դաւանութիւն հաւատոյ»:*

45. [Դաւանութիւն] «Հաւատով խոստովանիմ զհամագոյ զամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի, անսկիզբ և անվախճան, որ զոյացոյց յոչնչէ...»: *Տես՝ ԱՐՄԱՍ ՀԱՒԱՏՈՅ (գլ. Գ):*

46. [Դաւանութիւն] «Հաւատով խոստովանիմ անքերի մտօք զհամագոյ և զամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի, յամենայնի կատարեալ: Հաւատով խոստովանիմ ուղիղ խորհրդով զանսկզբնակից...»: *Տես՝ ԱՐՄԱՍ ՀԱՒԱՏՈՅ (գլ. Ը):*

47. Այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն. «Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, գոյ կատարեալ, անեղ, անսկիզբն...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ, «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ»:*

48. Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց (*կամ* Դաւանութիւն հաւա-

տոյ չորեքտասան ատինանաւ). «Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրբութիւ զՀայրն Աստուած անեղ, անծին...»: *Տեր՝ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ»:*

49. [Դաւանութիւն ի մարդեղութիւն Բանին Աստուծոյ] «Խոստովանիմք հաւատով, ըստ չորեքտասան ատինանին հաւատոյ, այսինքն՝ զի եղեալն մարմին, անեղական աստուածութիւնն էր...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 245, էջ 164ա—168բ:*

Բնագրի մասին Բ. Սարգիսյանն ասում է, թե «հաւանօրէն Գրիգոր Տաթևացւոյն է, քաղուած ի Գր. Նազիանզացւոյ»[1]*:*

50. Դաւանութիւն հաւատոյ սուրբ հօրն մերոյ երկրորդ լուսաւորչի՝ քաջ հռետորին Գրիգորի. «Հաւատամ և խոստովանիմ, դաւանեմ և երկրպագեմ ըստ հարցն աւանդութեանց սրբազանից, զՀայր և զՈրդի և զՀոգի սուրբ, երրեակ միութիւն, անքակ առանձնաւորութիւն, անանուն սահման...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1712, էջ 34բ—40բ:*

Հնարավոր չեղավ գտնել այս բնագիրը ո՛չ Նարեկացու, ո՛չ Սկևռացու, ո՛չ էլ Տաթևացու երկերի մեջ:

51. [Դաւանութիւն Յունաց] «Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, ամենախնամ, անեղ, անսկիզբն և անժամանակ, անուր և անեբր, անվայրափակ, անորակ և անքանակ...»: *Տեր՝ ՎԱՀԱՆ ՆԻԿԻԱՑԻ, «Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք»:*

52. Դաւանութիւն սուրբ և ուղղափառութեան սուրբ հաւատոյն Հռոմէական սուրբ եկեղեցւոյն է. «Ես... հաստատ հաւատով հաւատամ և դաւանեմ ըզզամենայն (sic) որ ինչ որ կան ի միաբանութիւն հաւատոյ զոր պահէ սուրբ եկեղեցի այսպէս: Հաւատամ ի մի աստուած ի հայրն ամենակարող, արարողն երկնի և երկրի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1869, էջ 315բ—318ա:*

1 *Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 660:*

Վերջում՝ հետևյալ հիշատակարանը. «Թարգմանեցաւ դաւանութիւնս ի Լատին լեզուէ ի Հայս, և ի տիպ արկաւ ի նոյն քաղաքն ի մեծն Հռոմ, առ ոտս գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի. ձեռամբ Հայոց վերակացուին Սուլթանշայ Թոխաթցւոյ, զոր Ֆռանկքն Մարգանտոն կոչեն[1]*, թելադրութեամբ տէր Յովաննէս Տէրզընցոյ, ի թուականի ծննդեանն Քրիստոսի ՌՇՁԴ (1584), զոր Հռոմայեցիք վարին, և Հայոց մեծաց Ռ և ԼԴ, հրամանաւ սուրբ փափին Գժան Գրիգորի, զոր ի բազում վարդապետաց հաստատեալ և քննեալ և աններհակ գտեալ ի դէմ ուղղափառութեանն. և ի ժողովն Տրընթոյ վերստին հաստատեալ և կնքեալ եղև, և զաւրինակն ի տիպ արկեալ տարածեցին ընդ ամենայն յաշխարհս: Արդ՝ թէ ոք ընթեռնելով զդաւանութիւնս կամ աւրինակելով ժպրհեսցի այլայլել, կարծեսցէ նայ թէ նուազեալ է ի նմանէ ողորմութիւնն աստուծոյ: Եւ յետ ամին յիշման արժանի արարէք զվերոյ գրեալս և զաշխատողքն, և աստուած յիշողացդ ողորմեսցի յիւր միւս անգամ գալստեան. ամէն»:*

Ինչպես պարզվում է այս հիշատակարանից՝ բնագիրն արտագրվել է 1584 թվականին Հռոմում տպագրված օրինակից, որից, սակայն, ոչ մի նմուշ չի հասել մեզ: Մատենագիտական աղբյուրներն անգիտանում են այդ հրատարակության գոյությունը: Այս տեսակետից սույն ձեռագիրը կարևոր նշանակություն ունի նաև հայ տպագրության պատմության համար:

Ըստ երևույթին այս նույն բնագիրն է նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 309՝ «Դաւանութիւն մեծի Հռովմայ եկեղեցւոյն» *(էջ 167բ):*

53. Դաւանութիւն ճշմարիտ և ուղ[ղ]ափառ հաւատոյ վասն առնելոյ եկելոցն յարևելից. «Ես... հաստատ հաւատով հաւա-

1 *Ձեռագրում՝* կոչէ:

տամ և դաւանիմ զամենայն մի բառ միոջէ...», *տես հետևյալ հրատ. մեջ.* „Professio orthodoxae fidei ab orientalibus facienda, jussu SS. D. N. Urbani PP. VIII. edita", Romae, Typis et impensis Sacr. Congreg. de Propag. Fide, 1642.

Բնագիրը, որ լատ. և հայ. է, տարբերվում է նախորդից թե՛ ընդարձակությամբ, թե՛ խմբագրությամբ: Հավանական է նաև, որ տարբեր թարգմանություն է:

Այս նույն բնագիրը հետագայում ևս հրատարակվել է երեք անգամ՝ բոլորովին ուրիշ թարգմանություններով[1]:

54. Հարցումն առաջին, եթէ ո՛րպէս խոստովանել զեռանձնեան և զեզականութիւն. «Զհայր զոյ սկիզբն և պատճառ Որդոյ և Հոգոյ, զՈրդի ծնեալ և զՀոգի սուրբ բխումն ի Հօրէ...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 206, էջ 41ա—54բ:*

55. Կարգաւորութիւն սուրբ և ուղղափառ հաւատոյ Հայաստան եկեղեցւոյ, որով յամօթ առնէ զհերձուածողս: Յառաջ բան զամենայն տուր նոցա պատասխանի՝ որ հայհոյեն՝ այսպէս. «Ո՞վ դուք՝ որդիք և աշակերտք Նեստորի և Պօղոսի Սամոսատցւոյն և ժողովոյն Քաղկեդոնի, լուարուք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6907, էջ 124բ—125ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 501 (էջ 124ա), № 4251 (էջ 82բ—83բ), № 614 (էջ 205ա—205բ, սկ. «Ո՞վ դաւք և աշակ.»). *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 256 (էջ 137ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 324 (էջ 56բ):*

Կան օրինակներ, որոնց սկզբնատողը կազմում են վերոնշյալ խորագրում գտնվող «Յառաջ բան զամենայն տուր նոցա պատասխանի...» *բառերը: Վիեննայի ձեռագրի նկարագրության մեջ*[2] *այս բնագրի մասն են համարվել ուրիշ 10 հատվածներ* («Վասն ծննդեան և մկրտութեանն» *են), սակայն եբնանի ձեռագրերի հետազոտությամբ կարելի եղավ հաստատել, որ դրանք իրարից անկախ միավորներ են:*

56. Այս է դաւանութիւն երեք ժողովոյն. «Ամաչեսցէ Թէոդորիտոն և նմանք նոցա հերձուածողքն որ ասեն. «Ոմն կարգայր և ոմն լսէր: Անա բան լի յիմարութեամբ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 682, էջ 49ա—49բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3527 (էջ 62բ—65ա), № 4669 (էջ 57ա—58բ):

57. [Յաղագս հերձուածոց որք ի Հրբեայսն]. «Ի ժամանակս տեառն մերոյ գտաւ ի Հրեայսն եօթն հերձուածս...», *տես՝ ատտ, հտ. Ա, էջ 534, § 20:*

58. Ընդդէմ պեղծ Սադուկեցւոց յաղագս համօրէն յարութեան *են.* «Զի ինքնին տէր հրամանաւ...», *տես՝ ատտ, հտ. Ա, էջ 533, § 14: Տես նաև ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԻԱՑԻ, § 3:*

59. Վասն հերձուածողաց բանք և գրոյցք, իբրև առասպելաբանութիւնք. «Քանզի ի մէջ միում Հայոց գրքի...», *տես՝ ատտ, հտ. Ա, էջ 534, § 19:*

60. Սակս հերձուածողաց. «Առաջին հերձուածող ոմն Սամարացի Մենադրոս...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 115, էջ 34բ:*

61. Վասն Արիանոսաց հերձուածոյն. «Ըստ ամենայնի որպէս լուաք և տեսաք և պատմեցաք ձեզ, զկնի այսմ եղելոյ՝ յորժամ սատակեցաւ ամպարիշտն Յուլիանոս, աստուածամարտն Վաղենտիանոս կալաւ զթագաւորութիւնն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 993, էջ 731բ—732բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1522 (էջ 385բ):

62. Տարացուցութիւն հերձուածողաց և աղանդից *են.* «Ո՛չ է պարտ եղծանել զգիրս սուրբս...», *տես՝ ատտ, հտ. Ա, էջ 533, § 13:*

---

[1] *Հմմտ. Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատեն.», հտ. Ա, էջ 520.*

[2] *Տես Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 768:*

63. Վասն թէ քանի՛ են հերձուածողք յաշխարհս. «Ա. Առաջին հերձուածողք հեթանոսք...», *տես՝ նույն, հտ. Ա, էջ 531, § 1։*

64. Յաղագս անուղղայ գնացից ի նենգաւոր խորհրդոց և յաստուծուց յանդուգն խօսից հերձուածողաց *Ն.* «Եւ զի տէր մեր...», *տես՝ նույն, հտ. Ա, էջ 532, § 5։*

65. Վկայութիւնք՝ թէ Հոգին սուրբ Աստուած է, և ոչ պաշտօնեայ կամ ստեղծուած ըստ կարծեաց անիծելոյն Մակեդոնի, և այլն։ «Նախ այսպէս՝ ոչ ումեք սրբի տաճար...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 614, էջ 115ա—117բ։*

66. Սրբոց վարդապետացն ասացեալ վասն հաւատոյ ընդդէմ հերձուածողաց. «Զոր օրինակ որ շինուածս կամիցի հաստատել՝ զհիմն ի վերայ հաստատուն վիմի դնէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. 2174, էջ 216ա—227ա։*

67. Հարցմունք բազմադիմի՝ աղանդից. «Պա՞րտ իցէ անշունչ և անզգայ ասել ստեղծեալ Աստուծոյ զնախաստեղծն և ապա փչեալ ի նա հոգի...», *տես՝ նույն, հտ. Ա, էջ 533, § 12։*

68. Հարցումն Արիանոսաց. «Մի՞ է անեղութիւն, եր՝ երկու, զի եթէ մի է, զայն ունի Հայր. իսկ եթէ երկու՝ զի՞արդ իմանի երկու անեղութիւնք...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 206, էջ 33ա—41ա։*

69. Թուղթ ընդդէմ մոլորութեանն Եւտիքեանց։

Հրատարակված բնագիր, որը մեզ ծանոթ չէ։ Վենետիկի Մխիթ. Մատենադարանում է գտնվում նրա առայժմ միակ հայտնի օրինակը, որը, տրված նկարագրությունների համաձայն, անվանաթերթ չունի, բաղկացած է 59 էջից, տպագրված է ի «Հռոմ, ի տպարանի Տարածման Հաւատոյ»[1], կամ «Թոփ տպագրութիւն Տարածման Հաւատոյ ի Հռոմ»[1]։

1 *Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատենագիր.», էջ 217։*

70. Վկայութիւնք ընդդէմ նոցա, որք ապականացու ասացին զանապական մարմինն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և անզգանելի կիրք ետուն նմա, որ է կերակրոց և ըմպելեաց ախտաբար հոսումն. «Երինոսի հետևողի առաքելոցն. Անարգեն զորդին աստուծոյ և զմարմնոյն փրկութիւնն ուրանան...»։

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ (գլ. Ը)։

71. Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. «Իսկ որ ի մարդեղութիւն բանին աստուծոյ կիրք ապականութեան ասիցէ՝ նզովեալ եղիցի։ Զի ապականութիւն՝ մեղաց է ծնունդ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 85ա։*

Հմմտ. «Գիրք Հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյ», Կ. Պոլիս, 1729, էջ 498—503։

72 Հարցմունք պիտանիք և օգտակարք։ *Երևանի Պետ. Մատ, ձեռ. № 6907, էջ 51ա—54ա։*

Բաղկացած է երեք հարցերից. «Թէ ո՞րպէս պարտ է զանձնաւորութիւն Երրորդութեան հաւատալ կամ ասել», «Քս. աստուածային բնութեա՞մբն մարդ է, թէ մարդկային բնութեամբ աստուած է», «Աստուածածին կոյսն մայր արարչին, անհայր Որդւոյն ծնո՞ղ է, թէ անմայր Որդւոյն ծնիչ, թէ միանգամայն աստուածածին և մարդածին»։

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 256 (էջ 135ա—137ա)։

73. Հարցմունք և պատասխանիք յաղագս երկաբնակաց։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6031, էջ 213ա—214բ։*

Բաղկացած է չորս հարցերից. «Քս. աստուածային բնութեա՞մբն մարդ է, թէ

1 *Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատենագիր.», հտ. Ա, էջ 795։*

մարդկային բնութեամբն Աստուած», «Թէ այնոքիկ որ Քս.ի երկու բնութիւն ասեն յետ միաւորութեան...», «Թէ Ֆրանկն ասէ ընդ իս թէ ոչ է պարտ զմարմինն Քս.ի Աստուած ասել...», «Սրբունի կոյսն՝ Աստուածածին Մարիամն զբնութիւն մարդոյն ըստ ինքեան գոյացութեա՞ն ծնաւ, եթէ զբնութիւն Աստուծոյն ըստ իւրում կատարելութեանն»:

74. Վկայութիւնք մարգարէից վասն տնօրէնութեան բանին աստուծոյ մարդացելոյ՝ յաղագս քան զյաւիտեանս ծնեալ ի Հօրէ. «Յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1217, էջ 131ա—133ա*:

Ունի առանձին հատվածներ՝ «Յղ. թէ առաքեցաւ ի Հօրէ», «Յղ. թէ ի կուսէն ծնցի» *ևն*:

75. Յաղագս միաւորութեան և բնութեան և դիմի և անձնաւորութեան. «Միաւորութիւն է ստոյգ և ճշմարիտ համանիւթ մասնաբար որոշելոց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6907, էջ 53ա—53բ*:

Տես նաև Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Marsh. 467 (fol. 287^{v}).

76. Յաղագս բնութեան զոր հրամայեցիք. «Արտաքին իմաստասէրքն այսպէս ասացին: Բնութիւն՝ տեսակն է որ երևի, այսինքն մարդոյն տեսակն՝ մարդոյն բնութիւն է...»:

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը Վարդան Արևելցու գործերից է. տես՝ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, «Լուծմունք ի սուրբ գրոց» (ժղլանք):

77. Այլ ոճ վիճելոյ ընդ Քաղկեդոնացիսն. «Հրց. թէ Մարիամ զո՞ր բնութիւն ծնաւ: Թէ ասեն՝ Աստուած և մարդ, ապա աստուածածին և մարդածին ասեն կատաղեալքն...»:

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը նմանապես Վարդան Արևելցու գործերից է. տես՝ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, «Լուծմունք ի սուրբ գրոց» (ժղլանք):

78. Յաղագս մի բնութեան. «Հարցից զքեզ՝ որ երկու բնութիւն սահմանես ի Քրիստոս. երկու բնութիւնքն երկրպագելի՞ք թէ ոչ...», *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Marsh. 467, fol. 275^{v}.

79. Վասն հաստատելոյ զճշմարտութիւն ուղիղ կարծեաց յաղագս բնութեանց ի Քրիստոս, և վասն ի միջոյ բառնալոյ զվիճաբանութիւնն զայն, որ է ի մէջ Հռոմայեցւոց և Հայոց. «Ուսուցանէ մեզ սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի, թէ միածին Որդին Աստուծոյ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7255, էջ 275ա—296բ*:

80. Վկայութիւնք ի Նոր Կտակարանացն՝ յաղագս մի բնութեան Քրիստոսի. «Եւ իբրև մկրտեցաւ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1217, էջ 128ա—131ա*:

81. Վկայութիւնք ի Նոր Կտակարանաց, թէ նոյն է մարմնովն ընդ աջմէ Հօր՝ մի բնութեամբ. «Բայց ասեմ ձեզ՝ յայսմհետէ տեսանիցէք...», *անդ, էջ 131ա*:

82. Ի Նոր Կտակարանէն՝ վասն միութեան Քրիստոսի. «Ասէ առաքեալ յեբրայեցւոց. Որք ի Քրիստոս մկրտեցաք...», *անդ, էջ 133ա—136ա*:

83. Տեսցուք առկաւ ինչ յաղագս կամացն և ներգործութեանց Քրիստոսի. «Հռովմայեցւոց եկեղեցի որպէս խոստովանի և ուսուցանէ աշակերտաց իւրոց երկուս բնութիւնս միաւորեալ, նմանապէս և երկուս ներգործութիւնս և զկամս...: Իսկ Հայաստանեայց եկեղեցի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1495, էջ 12ա—13ա*:

84. Վկայութիւնք մարգարէից և հայրապետաց յաղագս Քրիստոսի, որ հանդերձեալ էր կատարել յետին ժամանակս. «Եթէ յառաջ քան զյաւիտեանս Որդի ծնաւ ի Հօրէ...», *Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 18 (հին № 20), էջ 117բ—121բ*:

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ, № 253 (էջ 155ա—158բ):

85. Յաղագս խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ առ համարակ. «Գլուխ Ա. Սովորութիւն է իմաստնոց նախ խնդրել, թէ է՛ իրն, զորմէ ճառեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4407, էջ 166բ—192բ:*

Այստեղ ընդօրինակված են միայն առաջին երկու գլուխները: Հաջորդները պակասում են:

86. Յաղագս նիւթոց կերպից և պաշտօնէից և զօրութեանց եօթանց խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ նորոյ օրինացս. «Յաղագս մկրտութեան: Հեռաւոր նիւթ մկրտութեան է ջուր տարրական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1653, էջ 232ա—237ա:*

87. Յաղագս մկրտութեան. «Արդ մկրտութիւնն ըստ Օգոստինոսի է լուացումն ի ջուրն արտաքին մարմնոյ...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 240, էջ 266բ—267բ:*

88. Յաղագս սրբազնութեան վերջնոյ օծման. «Վերջնոյ օծման սրբազնութիւն ի Քրիստոսէ տեառնէ ներկայացեալն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1653, էջ 208ա—213ա:*

89. Հարցմունք և պատասխանատրութիւնք ի վերայ խորհրդոյ կարգին, շարադրեցեալք ի յատուածաբանից վարդապետաց, առ ի յօգտակարութիւն և ի դիւրավարժութիւն այնոցիկ, որք պարտին անցանել զքննութեամբ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6868, էջ 172ա—189ա:*

Ունի բաժանումներ՝ «Յղ. խուզմանն հերացն», «Յղ. ատիճանաց համարակի», «Յղ. ատիճանաց փոքրագունից ի մասնաւորի», «Յղ. մեծագունից ատիճանացն ի մասնաւորի», «Յղ. սրբազնագունեղի ատիճանի քհ.ութեան» *և* «Յղ. պատարագի»:

90. Վասն երկուս դրախտիս երկրային և երկնային, և վասն սահմանից հրեղէն երկնից. «Գլուխ Ա. Հասարակաբար ասեն, թէ մեր երջանկութիւնն ի այլ տեղիք ոչ գտանի, բա[յ]ց միայն ի դրախտն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1780, էջ 44ա—64բ:*

Բաղկացած է 4 գլուխներից: Հովհաննես Անկյուրացու թարգմանությունն է «ֆռանկ» լեզվից (տես հաջորդ բնագրի հիշատակարանը):

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1788 (էջ 5ա—15բ):

91. Սուրբ հրեշտակքն կու բազմացնեն փառքն ոչ սակայն երկնային բնակարանին. վասն նոցա ի թիւն մեծագոյն լինելն որպես յայտնեսցուք. «Գլուխ Ա. Ի այս տեղս որ վերն ասացաք, կան այն կարգապետութիւնքն գեղեցկագոյն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1780, էջ 64բ—80ա:*

Բնագիրը, որ բաղկացած է 3 գլուխներից, ըստ երևույթին՝ նախորդ բնագրին որպես շարունակություն է գրված անծանոթ հեղինակի կողմից: Վերջում կա թարգմանիչ Հովհաննես Անկյուրացու հիշատակարանը. «Վերջ և կատարումն հրեշտակաց թուղթս. թարգմանեալ ի մեղաւոր Ֆռանկ Յոհաննէսէն, ի ֆռանկ բառէն ի հայուն» (էջ 80ա):

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1788 (էջ 15բ—22ա):

92. *(Անխորագիր)* «Հրց. Զի՞նչ է գոյութիւն հրեշտակի անմարմնոյ: Պտ. Հրեշտակն կենդանի գոյութիւն է աննիւթ և բանաւոր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 82, էջ 189ա—192ա:*

93. Յաղագս կարգաւորութեանցն վերնոց. «Նախ և առաջինք են դասք աթոռոցն, և է փառաբանութիւն նոցա՝ Աթոռ քո...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 772, էջ 236բ—237բ:*

Այս բնագրի սկզբի մասը՝ «Կարգաւորութիւնք ինն դասուց հրեշտակաց» *խորագրով (սկ.* «Առաջին՝ աթոռոց դասքն») *Կ. Պոլսում տպագրվել է «Ժողովածու» անունով հայտնի գրքի որոշ հրատարակություններում. տես՝ տպ. 1710 թ., էջ 278—279. 1713 թ., էջ 226. 1717 թ., էջ 277—278. 1730 թ., էջ 256—257. 1747 թ., էջ 239—240. 1793 թ., էջ 219:*

94. Հարցմունք յաղագս դաւանութեանց երկնայնոց և երկրայնոց. «Առաջինն ներքին դասք հրեշտակաց, որ են պատգամաւորքն և հրամանակատարք...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 287, էջ 89ա—96ա։*

95. (Անխորագիր) «Հրց. Իչանէ՞ Հոգին սուրբ ի պատարագ արատաւոր քահանային, եթէ պիղծ համարեսցի պատարագն նորա։ Պտ. Վասն ժողովրդեանն որչափ և արատաւոր է քահանայն՝ Հոգին սուրբ ոչ արգելու զշնորհս իւր...», *Երևանի Մեւ. Մատ. ձեռ. № 2111, էջ 297բ—299ա։*

96. Յաղագս թէ հրաժարեալքն ի մեղս արդարքն և մեղաւորքն *են.* [Վկայութիւնք ի Նոր Կտակարանացն]. «Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Որ սերմանէ սերմն բարի...», *Երևանի Մեւ. Մատ. ձեռ. № 1217, էջ 137ա—138ա։*

97. Յաղագս դժոխոց, արքայութեան և քաւարանի բան. «Ասեն ոմանք թէ Քրիստոս յորժամ ի դժոխս իջաւ...», *Երևանի Մեւ. Մատ. ձեռ. № 1653, էջ 143բ—186բ։*

Տես նաև Լոնդոնի Brit. Mus. Ms. Egerton 706 (fol. 2r).

98. Վասն քաւարանին. «Զայդ ոչ տերն և ոչ առաքեալքն և ոչ սուրբ հայրքն ասացին մինչև Գրիգոր պապն որ և գրեալ է ի Բենեդիկորոն գիրքն...», *Երևանի Մեւ. Մատ. ձեռ. № 4251, էջ 136բ—139ա։*

99. Վասն հոգոցն որ կան այժմ. «Բայց այժմ ըստ Յոհաննու որ ասաց թէ կան հոգիք սրբոցն ի ներքոյ սեղանոյն Աստուծոյ, և դու մի՛ խաբիր, ոչ արդարքն պսակ ունին և ոչ մեղաւորքն տանջանք...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 240, էջ 226ա—226բ։*

100. Հարցմունք սրբոյն Բարսղի Կեսարացւոյն և պատասխանիք եղբօր իւրոյ սրբոյն Գրիգորի։ *Տես՝ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵՒ ԲԱՐՍՂԻ ՀԱՐՑՄՈՒՆՔ։*

101. Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի բան հաւատոյ, և նորին նմանեացն։ *Երևանի Մեւ. Մատ. ձեռ. № 1760, էջ 230ա—237բ։*

Ա—ժե գլուխների մեջ ամփոփված են հատվածներ Գրիգոր Լուսավորչից, Դիոնեսիոս Աթենացուց, Եփրեմ Խուրի Ասորուց, Հիպպոլիտոս Պոստրացուց, Գրիգոր Նեոկեսարացուց, Գրիգոր Նյուսացուց, Դամասոս Հռոմայեցուց, Կյուրեղ Երուսաղեմացուց, Գրիգոր Նազիանզացուց, Հովհաննես Ոսկեբերանից և այլ աղբյուրներից։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1850 (էջ 141բ—145ա)։

Սույն բնագրի հետ պետք չէ շփոթել հետևյալ՝ «Սրբոյն Գրիգորի լուսաւորչին Հայոց վկայութիւնք, և այլ սրբոցն» *խորագրով հատվածների շարքը (սկ.* «Խոնարհեցաւ և խառնեցաւ աստուածութիւնն ընդ մարդկութիւնս»*), որը գտնվում է Վարդան Այգեկցու կազմած «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» ժողովածուի մեջ (տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ) և բաղկացած է բացառապես հայկական աղբյուրներից (Սահակ Պարթև, Մովսես Քերթող, Անանիա վրդ., Պողոս վրդ., Կոմիտաս կթղ., Մանազկերտի ժողով, «Կրոնաւոր» գիրք, Սամուել կթղ., Տիրանուն վրդ., Սահակ վրդ. և խոսրով հռետոր)։*

102. Գիրք որ կոչի Յանախապատում։ *Տես՝ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ։*

103. Կանոնագիրք Հայոց։ *Տես՝ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ։*

104. Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, յուղղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց։ *Տես՝ ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ։*

105. Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, և պատասխանիք ընդդէմ Արիանոսացն[1], զի ասեն ներեստիկոսքն, եթէ ոչ միացաւ աստուածութիւն ընդ մարմնոյն (*կամ* Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց

[1] *Որոշ օրինակներում՝ ընդդէմ նեստորականացն,*

յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն՝ ընդդէմ հերձուածողաց հականառութիւնք): *Տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ։*

106. Յաղագս երից ժողովոցն ուղղափառ հաւատոյ դաւանութեան ... յանգումն և ի կործանումն և յանէծս կորստեան որդւոցն սատանայի, ի մաղաղաւան երկաբնակացն և չարափառ հերձուածողացն. «Իսկ յետ արձակման սուրբ ժողովոյն Եփեսոսի, գնացին ի Հռոմ առաքեալքն ի պղծոյն Լևոնէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 774, էջ 86բ—92ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2268 (էջ 67բ—70ա)։

107. Մեծահանդէս հականառութիւն փառաւոր և յոգնազեղ իմաստիւք լցեալ՝ երանելեացն սրբոց մեծին Մովսէսի քերթողի և Դաւթի անյաղթ փիլիսոփայի, որ եղև ի մայրաքաղաքն կայսերական ի Կոստանդնուպոլիս, առաջի ամբարիշտ թագաւորին Մարկիանոսի, որ արար [զ]ժողովն Քաղկեդոնի. որ յետ միոյ ամի եկին Մովսէս և Դաւիթ, ազգաւ Հայք, յԱթենայ ի Կոստանդնուպոլիս և մեղադիր եղեն ամբարշտին Մարկիանոսի վասն պիղծ ժողովոյն, որոյ աղագաւ եղև վիճաբանութիւնս, որովք բանիւք յաղթահարեալք եղեն Քաղկեդոնականացն զումարք որոց բանքն և հականառութիւնք կարգեցաւ ի ներքոյ. «Բան առաջին: Ողիք լուսոյ և վերինն Սիոնի, տեսանեմ զձեզ[1] այսօր ասուածային և երկնային լուսով փայլեալ ի վարդապետաց սրբոց հարցն, որպէս զարեգակն անճուազելի և անկարօտ...», *տես՝ «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց, մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն Քաղկեդոնի, արարեալ սրբազանից վարդապետաց», Նոր-Ջուղա, 1688, էջ 3—272։*

Լիակատար բնագիր է, բայց աղավաղված է, նրա վերջում գտնվող հիշատակարանը (հիշատակարանը տես ստորև՝ ձեռագրերի նկարագրության մեջ)։ Նկարագրում է հայոց վարդապետների վիճաբանությունը՝ Հոբնաղ Երուսաղեմացու, Դորան երեցի, Մամբրե Կորնթացու և Մելիտես Մակեդոնացու հետ[1]*։*

Այլ տպ. — Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսիսի և Դաւթի. «Ողիք լուսոյ...», *տես՝ Գար. Սրվանձտյանց (հրատ.), «Հնոց և նորոց», Կ. Պոլիս, 1874, էջ 39—87։*

Բնագրի որոշ մասեր կրճատված են, հատկապես վիճաբանական մասերը։

Այլ տպ.— Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի հարցմունք ընդ[2] երկաբնակացն. «Ողիք լուսոյ...», *տես՝* Արարատ, *1879, էջ 180—188 և 210—217։*

Հրատարակվել է էջմ. Մատ. ձեռագրերից։ Բնագիրը թերի է. ընդհատվում է այն մասում, ուր տեղի է ունենում Հոբնաղի և Դավթի վիճաբանությունը։

Այլ տպ.— Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն. «Ողիք լուսոյ...», *տես հետևյալ հրատ. մեջ. «Մովսէս Խորենացու Հայոց պատմություն. Աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն եպիսկոպոս Ստեփանէ», Պետերբուրգ, 1897, էջ 537—557։*

Հրատարակվել է էջմ. մատ. № 2048 (այժմ Երևանի Պետ. Մատ. № 2018) ձեռագրից։ Կրճատված են վիճաբանական մասերը։

Այլ տպ.— Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն. «Ողիք լուսոյ...» *(հրատ. Փ. Կոնիբիր), տես՝* Հանդէս Ամսօրեայ, *1903, էջ 152—155։*

Հրատարակվել է էջմ. Մատ. ձեռագրերից Կրճատված են վիճաբանական մասերը։

☐ *Ձեռագրերում այս բնագիրը կրում է այլազան խորագրեր.* «Մեծահանդէս հականառութիւն...», «Սրբոց վրդ.ացն... ընդ երկաբնակացն» *կամ* «...ընդ երկաբնակ չարափառսն» *են*[3]*. տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ.*

---

[1] *Բնագրում՝* զբեզ։

[1] *Սույն բնագրի մասին տե՛ս Փ. Կ. Կոնիբիր, «Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի», Վիեննա, 1893, էջ 16—21։ Մ. Օրմանյան, «Ազգապատում», § 378։ Ն. Ակինյան, «Դասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը», Վիեննա, 1932, էջ 115—117։ Ն. Ակինյան, «Դաւիթ Անյաղթ և Դաւիթ Հաղբացի»,* Հանդէս Ամսօրեայ, *1956, էջ 142—149։*

[2] *Բնագրում՝* ընտ։

[3] *Անգյալում Օձուն գյուղում գտնված մի ձեռագրի մասին տես՝ Հ. Գասպարյան, «Մի գրչագրի առիթով»,* Նոր-Դար, *1890, 7 սեպտ., № 133։*

№ 1754 (էջ 289ա—340բ), № 2018 (էջ 119ա—156բ), № 2080 (էջ 103բ—111բ), № 6983 (էջ 2ա—49բ), № 8721 (էջ 1ա—50բ). իսկ № 7217՝ «Սրբոց վրդ. ացն Հայոց… ընդ երկարճակ ջրայխսղսն (sic)» (էջ 1ա—39բ) և № 1756՝ «Տրամաբանութիւն Մովսէսի և Դաւթի ընդ Քաղկեդոնականացն» (էջ 219բ—267բ)։ Տե՛ս դարձյալ Զմմառի Մատ. ձեռ. № 223 (էջ 3ա) և № 224 (էջ 1ա)։

Այս բնագրից առանձնացված մի հատված է՝ «Հարցումն Յոբնայի և պատասխանի Մովսէսի Հայոց քերթողի և Դաւթի անյաղթ փիլիսոփայի» (սկ. «Հզ. կա՞կք են երկուքն ի բնութեանցն Քրիստոսի, եթէ անէակք» կամ «էակք երկու են» են). տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4027 (էջ 985ա—1001ա), № 4063 (էջ 158ա—167ա), № 1337 (էջ 145բ—153բ), № 5411 (էջ 56ա—61ա), № 6886 (էջ 164ա—181բ), № 6897 (էջ 365ա—374բ). Համմտ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 1380 (էջ 1—44)։ Այս հատվածի միջից է նաև՝ «Հարցմունք Մամ[բ]րէի, որ գիտակ էր ար[ուես]տին փիլիսոփայութեան, և պատասխանիք Դաւթի եռամեծի անյաղթ փիլիսոփայի» (սկ. «Զի՞նչ են սահման մարդազոյին»), Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1555 (էջ 285ա—290ա)։

Մի ուրիշ հատված է՝ «Այս է վինաբանութիւն Մելիտէսի՝ ընդ Մովսէսի քերթողին» (սկ. «Ասէ Մելիտէս. Դէմ ի բնութեա՞ն է, եթէ բնութի՛ւն ի դիմի»)։ Այս հատվածին չենք պատահել ձեռագրերում, բայց տպագրվածը տեսել ենք։ Տպագրությունը բաղկացած է 8 թերթից և համարակալված՝ էջ 1—16։ Դրանից մեզ հայտնի են երկու նմուշներ, որոնք երկուսն էլ թերի են (Երևանի Հանրային Գրադարան, հն. 4363։ Երևանի Պետ. Մատ., տպագիր գրքերի բաժին, հն. 1637)։ ԺԸ դարի պոլսահայ հրատարակություն է թվում։ Անշուշտ մի որևէ գրքի որպես հավելված է տպագրվել, բայց վերոհիշյալ նմուշներն այժմ երկուսն էլ իրենց տեղում չեն։ Այս հատվածը, որոշ խմբագրման ենթարկվելով, մտել է Սիմեոն Ջուղայեցու «Տրամաբանութիւն» գրքի մեջ՝ այսպիսի խորագրով. «Վինումնական հարցաբանութիւնքն Մելիտոսի Յունաց փիլիսոփայից՝ ընդ աթենականն Մովսէս փիլիսոփայն Հայոց. տրամաբանական ոճիւ» (սկ. «Դէ՞մ ի բնութեան է, թէ բնութի՛ւն ի դիմի»). տես՝ «Գիրք Տրամաբանութեան Սիմէոնի Ջուղայեցւոյ գերիմաստ վարդապետի արարեալ», Կ. Պոլիս, 1728, էջ 267—275.— այլ տպ. Կ. Պոլիս, 1794, էջ 215—221։

Բնագրի լրիվ օրինակներն ունեն հետևյալ հիշատակարանը. «Եւ յետ բազում ժամանակաց գրեաց զգիրս զայս, իբրև Աստուած հատոյց զմեզ ի ժամանակս յայս, յորում Հ և Զ էր թուականն Հայոց։ Ես Գուրգէն՝ բարապաղար Հայոց Մեծաց և սուրբ թագաւորացն պռոտոյսպաթար, ստացող եղէ գրոցս այսմ. բայց զարմանալի է ի նախկի յիշատակի գրոցս այսմիկ եթէ՝ գրեցաւ գիրքս այս էակքս հրամանաւ՝ թարգմանեալ ի Յունացի Հայս՝ տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի Գաբեղենացւոյ, ի ԻԵ թուականութեանն Հայոց։ Վկայէ այսմիկ Սարգիս Արարացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ» (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2018, էջ 156բ)։

Այս բնագրի որոշ մասերը համմտ. ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ, «Էակաց գիրք»։

108. Միաւորութեան գիր՝ որ տուաւ բերել ի ձեռն երանելւոյն Պերգմիոս Ագատեղիոսի ի բարեբար արքայէ Զենոնէ և յԱկակայ, գլուխ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնուպոլիս, առ երանելին Պետրոս, գլուխ եպիսկոպոսաց և հայրապետ հաւատարիմ քաղաքին Աղեքսանդրացւոց. «Ինքնակալ կայսր Զենոն բարեպաշտ և յաղթող և նշանաւոր, մեծ և միշտ բարի…». տես՝ «Գիրք թղթոց», էջ 269—271։

Այս վավերագիրը, որ 482 թվականից է, պատմագիտության մեջ հայտնի է «Զենոն կայսրի Հենոտիկոն» (Τὸ Ἑνωτικὸν τοῦ Ζήνωνος) անունով[1]։

---

[1] Ն. Տեր-Մինասյան, «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 64—66։ Ն. Ակինյան, «Կիւրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 91—92։

Հենոտիկոնը Եվագր Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» Գ գրքի ԺԴ գլուխն է կազմում, տես՝ J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. LXXXVI 2, p, 2619—2626. *Այս էջերում հուն. բնագիրը Հ. Վալեսիոսի լատ. թարգմանության հետ միասին է։*

Հենոտիկոնի վերոնշյալ հայ. բնագրի անգլ. թարգմանությունը („The document of union which was sent by the hand of the blessed Pregmius, the Augustal, from the sovereign, Zeno, of good-will, and from Acacius, chief of the bishops that are in Constantinople, to the blessed Peter, chief of the bishops and true patriarch and faithful of the city of Alexandria“) *տես՝ The American Journal of Theology*, Chicago, vol. IX, 1905, p. 735—737.

Հենոտիկոնի ասոր. թարգմանությունը, որը պահված է Զաքարիա Հռետորի «Եկեղեցական պատմության» մեջ (գիրք Ե, գլ. Ը), տես՝ J. P. N. Land, „Anecdota syriaca“, t. III („Zachariae episcopi Mitylenes aliorumque scripta historica graece plerumque deperdita“ *խորագրով*), Lugduni Batavorum, E. J. Brill, 1870, p. 179—182. *Նույնի անգլ. թարգմ. տես՝* „The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene“ (transl. into English by F. J. Hamilton and E. W. Brooks), London, Methuen and Co., 1899, p. 121—123.

Ասոր. բնագրի այլ տպ. տես՝ Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 83 („Historia ecclesiastica Zachariae Rhetoris vulgo adscripta. I. Edidit E. W. Brooks“, Louvain, 1953), p. 227—231. *Նույնի լատ. թարգմանությունը՝* ibidem, vol. 87 („Hist. eccl. ... I. Interpretatus est E. W. Brooks“, Louvain, 1967), p. 157—159.

109. **Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս [I]. «Սրբասէր և ճշմարտասէր և սուրբ ճաւատոց և առաւել Քրիստոսի ծառայելոց...»**, *տես՝ «Գիրք թղթոց», էջ 41—47։*

Այս վավերագիրը գրականության մեջ հայտնի է Բաբկեն կթղ.-ի (Ոթմսեցու) առաջին թուղթ կամ Դվինի 506 թ. ժողովի թուղթ անունով[1] (տես նաև՝ ԲԱԲԳԷՆ ՈԹՄՍԵՑԻ)։ Ուղղված է հետևյալ անձերին. «Տէր Դանիէլ Քարմայ եպս., և Մաղքայ և Շաւտայ քովրիսկոպոսնս (sic)*, և Աբայ և Մարի երիցունք, Միրհորմիզդ և Աբղահայ սարկաւագունք, և ազատ մարդիկ Արտաշիր և Բրատոկ և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք յՈրմբան շահաստանի, ի Գարմեկան շահաստան՝ ի Կարմենոանն նահանգ, Յոհան երիցապետ և ազատ մարդիկ, և Վարազպանդակ ի Մաղոկան՝ Տաճկաց պահապետ, և Հայթայ ի Մուշեղեան, և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք, որք ի Պերոզշապուհ ի Տաճկաց քաղաքի, Յովնաթան անապատաւոր և այլ սուրբ հաւատացեալք քրիստոնեայք յԱսորեստանի՝ և ի Խուժաստանի և ի Հերթ և ի Նսնաքարսադէ. Որիկնի անապատաւոր, և Սահակ՝ Բղադ շահաստանի քովրիսկոպոս* (sic). *Յակոբ Բեղևկաթարա, և որ այլ սուրբ հաւատացեալ քրիստոնեայք յԱսորեստան ի Մծբին նահանգ, և Բասաղէ Իմաթեան անապատաւոր և ազատ մարդիկ՝ Գնիբա և այլ հաւատացեալ քրիստոնեայք Նոշիրականին ի Նինուէ նահանգ» ևն։ Ստորագրված է՝ «Ի Մեծաց Հայոց ի Բաբգենայ ի Հայոց եպիսկոպոսապետէ և ի նորին աթոռակցաց՝ ի Մերշապհոյ Մամիկոնից եպս.է, ի Ներսեսէ Մարդպետական եպս.է, ի Տեառնտրոյ Հարքայ եպս.է, ի Սամուելէ Բզնունեաց եպս.է, ի Փովկասայ և ի Սամուելէ Բասենոյ եպս.աց, ի Թաթլոյ Արշարունեաց եպս.է, ի յԱղանայ Խորխորունեաց եպս.է, ի յԱտատեայ Տայոց եպս.է, ի Տաճատայ Արշամունեաց եպս.է, ի Դանիելէ Ռշտունեաց եպս.է, ի Յափկանէ Մոկաց եպս.է, ի Խաբբայ Արծրունեաց եպս.է, ի Շահեէ Ամատունեաց եպս.է, ի Սահակայ Պալունեաց եպս.է, ի Պաւղոսէ Գնունեաց եպս.է, ի Մովսեսէ Զարիհաւանի եպս.է, ի Դաւթայ Տմորեաց եպս.է, ի Դանիելէ Ան-*

[1] *Հմմտ. Ե. Տեր-Մինասյան, էջ 65—78։ Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912։ §§ 339—342։*

ձեացեաց եպս.է, ի Թէմրայ Մեհնունեաց եպս.է», ինչպես նաև՝ «Վարդ Մամիկոնեան, Սահակ Կամսարական Արշարունեաց տէր, Սպանդիատ Հայոց ասպետ, Արտաշիր Հայոց Մախազ, Ջիկ Վանադայ (sic) *տէր, Մանգեն Ամատունեաց տէր, Տիրոտ Պալունեաց տէր, Վարազներսեհ Դաշտակարանի տէր, Վստամ Ապահունեաց տէր, Գնէլ Գնունեաց տէր, Բաշխեն Վահեւունեաց տէր, Արտաշիր Սիւնեաց տէր, Ատրներսեհ Ռշտունեաց տէր, Արտաշիր Սաւեղինից տէր» են։*

Այլ տպ.— Թուղթ Հայոց ևն. «Երբաւէր...», *տես՝* Արարատ, *1898, էջ 383—386։*

Բնագրի գերմ. թարգմանությունը՝ „Der Brief der Armenier nach Persien an die Orthodoxen (d. h. Monophysiten)“, *տես հետևյալ հրատ. մեջ.* E. Ter-Minassiantz, „Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts, nach den armenischen und syrischen Quellen bearbeitet“, Leipzig, 1904, S. 152—157.

110. Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս [II]. «Եղբարց մերոց սիրելեաց ուղղափառաց և հաւատարմաց...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 48—51։*

Վավերագիրը գրականության մեջ հայտնի է Բաբգեն կթղ.-ի (Ոթմսեցու) երկրորդ թուղթ անունով (տես նաև՝ ԲԱԲԳԷՆ ՈԹՄՍԵՑԻ). պետք է գրված լինի մոտ. 507/508 թվականներին[1]*։ Ուղղված է նախորդ վավերագրի հասցեատերերին։ Ստորագրված է՝ «Բաբգէն Հայոց եպիսկոպոսապետ, Մերշապուհ եպս. Տարաւն գաւառի ի Հայս, և այլոց եպիսկոպոսաց Հայոց որք ըստ գաւառաց և ըստ տանց», և դրանց հետ միասին՝ «ի Վարդայ Մամիկոնից տեառնէ և ի Հայոց մարզպանէ, և ի Սահակայ Կամսարականէ, և յԱրտաշրէ Մաղխազէ և յամենայն ազատաց մեծամեծաց և փոքունց»։*

[1] Հմմտ. Ե. Տեր-Մինասյան, էջ 82—83։ Մ. Օրմանյան, § 343։

Այլ տպ.— Թուղթ Հայոց ևն. «Եղբարց մերոց...», *տես՝* Արարատ, *1898, էջ 471—472։*

111. Թուղթ Ասորեաց ուղղափառաց ի Հայս. «Լաւաց ճշմարտից և աստուածասիրաց, հովուաց արդարոց և հարանց հոգևորաց...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 52—54։*

Վավերագիրը Ներսես Բ Բագրևանդացու կաթողիկոսության (548—557 թթ.) շրջանից է[1]*։ Ուղղված է առ «Տէր Ներսէս կթղ. Հայոց Մեծաց, և Մերշապուհ եպս. Տարաւնոյ և Մամիկոնենից, և այլ աթոռակցաց և իշխանաց աշխարհիդ»։ Ստորագրված է՝ «Սամուիէլ* (sic) *քորեպիսկոպոս, և Դանիէլ վանից երէց և սինական Սարեբայի, Գաբրիէլ վանից երէց Ովփեսի, և Եղիա սինական և վանից երէց Սուսինայի, և Շապուհ վանից երէց Գնիսթայի, և Յազդեն վանից երէց Գումայի, և Դանիէլ վանից երէց Բղնայի, և Բղեշխ վանից երէց Սաղիմայի, և Մեղքի վանից երէց Յովգամնայի, և Դաւիթ վանից երէց Սորփոնեի, և այլ երիցունք և սարկաւագունք գաւառիս եկեղեցեաց, և վանից սպասաւորք, և ամենայն ժողովրդականք ուղղափառք»։*

Բնագրի գերմ. թարգմանությունը՝ „Der Brief der orthodoxen Syrer nach Armenien“, *հետևյալ հրատ. մեջ.* E. Ter-Minassiantz, „Die Armenische Kirche in ihren Beziehungen“ etc., S. 157—161.

112. Պատասխանի թղթոյն Ասորեաց ի Ներսեսէ Հայոց կաթուղիկոսէ և ի Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսէ. «Ի բազում ժամանակաց լուեալ զեղբայրութեանդ ձերոյ ուղղափառութիւն համբաւով...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 55—58։*

Նախորդ թղթի պատասխանն է։

Բնագրի գերմ. թարգմանությունը՝ „Des Nerses, Katholikos’ der Armenier, und des Meršapuh, Bishofs der Mamikonier, Antwort auf das Schreiben der Syrer“, *հետևյալ հրատ. մեջ.* E. Ter-Minassiantz, „Die armenische Kirche in ihren Beziehungen“ etc., S. 162—164.

[1] Հմմտ. Ե. Տեր-Մինասյան, էջ 90—102, Մ. Օրմանյան, § 360։

113. Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն. «Սրբասիրաց և քրիստոսասիրաց աթոռակցաց մերոց...», տես՝ «Գիրք թղթոց», էջ 70—71։

Նմանապես Ներսէս Բագրևանդացու կաթողիկոսության շրջանից է։ Գրված է Դվինի 554 թվականի ժողովի գումարման առթիվ[1]։ Ուղղված է՝ «Գրիգորի Արծրունեաց եպս.ի, Սահակայ Ռշտունեաց եպս.ի, Սողոմոնի Մոկաց եպս.ի, Ստեփաննոսի Անձևացեաց եպս.ի, Հոռոմանոսի Ակիոյ եպս.ի, Քրիստափորի Պալունեաց եպս.ի, Միքայէլի Ջարեհաւանից եպս.ի, Աստուածատրոյ Բժնունեաց (sic) եպս.ի, Թադէոսի Մեհնունեաց եպս.ի»։ Ստորագրված է՝ «Ի Ներսիսէ Հայոց կթղ.է, ի Մերշապհոյ Տարաւնոյ և Մամիկոնեաց եպս.է, ի Գրիգորէ Մարդպետական եպս.է, ի Պարգևեայ Հարքայ եպս.է, ի Տիրկանէ Բագրևանդայ եպս.է, ի Գրիգորոյ Բասենոյ եպս.է, ի Պետրոսէ Սիւնեաց եպս.է, ի Մաշդոցէ Խորխոռունեաց եպս.է, ի Խոսրովայ Ամատունեաց եպս.է»։

114. Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի, և Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, և Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, և այլոց աթոռակցաց և տանուտերանց և ազատաց, և համօրէն ժողովրդականաց. «Վասն զի եհաս մեզ վտանգ հոգևոր դիպուածի, որ եղև հանապազորդեան հիւանդութիւն...», տես՝ «Գիրք թղթոց», էջ 72—75։

Դվինի 554 թվականի ժողովի արձանագրությունն է[2]։ Ստորագրված է՝ «Ներսէս Հայոց կաթուղիկոս [Բագրևանդացի] և Մերշապուհ Տարօնու և Մամիկոնէից եպս., Գրիգոր սեպհական գնդին եպս., Պարգև Հարքայ եպս., Տիրակ Բագրևանդեայ (sic) եպս., Գրիգոր Բասենոյ եպս., Ներսէս Մարդաղոյ եպս., Վաղոտ Արշամունեաց եպս., Պետրոս Սիւնեաց եպս., Գրիգոր Արծրունեաց եպս., Մարկոս Բագրևանդեայ (sic) եպս., Մաշդոց Խորխոռունեաց եպս., Յոհան Ապահունեաց եպս., Աբդիսոյ Ասորեաց ուղղափառաց եպս., Յովնան Վանանդայ եպս., Հաւուկ Արշարունեաց եպս., Քրիստափոր Պալունեաց եպս., Յոյս Գողթան եպս., Թադէոս Մեհենունեաց եպ., և ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհիս. և իշխանք՝ Համազասպ ի Գուգվառամեան ի տանէ Մամիկոնից, Գարջոյր Հայոց մաղխազ, Սամէղ յԱրդտաւազդան սպարապետ, Գրիգոր ի Հմայական, Սահակ ի Վարդանեան, Աստուածատուր Վանանդայ տէր, Դատոյ ի Գարջուղեան, Գրիգոր և Վարդան ի Վասակայ, Ջաւրակ ի Գղաւոնեան, Վարազ Յոհան ի Յոհանեան, Վարդան ի Մուշեղեան, Համազասպ, Սահակ ի Հմայակեան, Գնեալ Գնունի, Վարազ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Մերշապուհ ի Ծինական, Համազասպ Ջինականեան, Աստուածատուր Հաւենունի, Արշոտ ի Վարազտիրոցեան, Մուշեղ ի Հմայեկեան, Վրիւ յԱրտաշրան, Աստուածատուր Արշաւրեան, Սամուեղ ի Մամական, Վարդ ի Հմայական, Ներսէս ի Սամոնեան, Վարդան Վահևունի, Հմայեակ Վարաժնունի, Մանուեղ Սպանդունի, Վարդ և Արտաւազդ ի Մամական, Համազասպ ի Սահական, Սահակ ի Մանուեղեան, Վարդան ի Մուշեղեան»։

115. Որոշումն Նեստորականացն ի սրբոյ եկեղեցւոյ. «Ուղղափառաց և ճշմարիտ հաւատացելոց աթոռակցաց մերոց...», տես՝ «Գիրք թղթոց», էջ 76—77։

Վավերագիրը Դվինի 554 թվականի ժողովի նյութերից է։ Ուղղված է «Գրիգորի Մարդպետական եպս.ի, Գրիգորի Արծրունեաց եպս.ի»։ Ստորագրված է՝ «Ի Ներսէսէ Հայոց կթղ.է [Բագրևանդացւոյ], ի Մերշապհոյ Տարաւնոյ և Մամիկոնենից եպս.է, ի Պետրոսէ Սիւնեաց եպս.է»։

116. Թուղթ զոր տէր Յովհաննէս Հայոց կաթուղիկոս և այլ եպիսկոպոսունքն առ Սիւնեաց եպիսկոպոսն և առ տէրն արարին. «Քրիստոսիւ պայծառացելոյ սիրելի եղբօր և աթոռակցի մերոյ տեառն Վրթանէսի Սիւնեաց եպիսկոպոսի, և մեծավայելչի և փառաւորելոյ Միհր Արտաշրի Սիւնեաց տեառն...», տես՝ «Գիրք թղթոց», էջ 78—80։

[1] Հմմտ. Մ. Օրմանյան, § 368։

[2] Հմմտ. Ն. Տեր-Մինասյան, էջ 106—107 և 110 (ծան. 1)։ Մ. Օրմանյան, § 367—369։

Վավերագիրը Հովհաննես Գաբեղենացու կաթողիկոսության շրջանից է. հավանաբար գրված է 564 թվականից հետո[1]*: Ստորագրված է՝ «Ի Յովհաննիսէ Հայոց կթղ.է, յԱբրահամայ Տարաւնոյ և Մամիկոնենից եպս.է, ի Ներսայ*[2] *Բասենոյ և Մարդաղոյ եպս.է, ի Մաշդոցէ Խոռխոռունեաց եպս.է, ի Գտայ Վանանդեայ* (sic) *եպս.է, յԱբդիսոյ Ասորեաց ուղղափառաց եպս.է, ի Բաբայ Ամատունեաց եպս.է»:*

Այլ տպ.— **Թուղթ նն. «Քրիստոսի պայծառացելոյ...»**, *տես՝ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արք եպիսկոպոսի Սիւնեաց», հտ. Ա, Փարիզ, 1859, էջ 134—138:*

Այլ տպ.— **Թուղթ զոր Հայոց կաթողիկոսն տէր Յովհաննէս և այլ եպիսկոպոսք արարին առ Սիւնեաց եպիսկոպոսն և իշխանն. «Պայծառացելոյ և սիրելւոյ եղբօր և աթոռակցի մերոյ տեառն Վրթանիսի...»**, *տես՝ «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 66—69:*

Այլ տպ.— **Թուղթ նն. «Քրիստոսի պայծառացելոյ...»**, *տես՝ «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 92—96:*

□ *Բնագրի ֆրանս. թարգմանությունը՝* „Lettre du catholicos d'Arménie Ter Hovhannès et des autres évêques, à Ter Vrthanès, évêque, et au prince de Siounie", *տես հետևյալ հրատ. մեջ.* „Histoire de la Siounie, par Stéphannos Orbélian" (trad. par M.-F. Brosset), 1re livraison, St.-Pétersbourg, 1864, p. 54—56.

117. **Թուղթ զոր տէր Յովհաննէս Հայոց կաթուղիկոս և այլ եպիսկոպոսունք առ Աղուանից եպիսկոպոսունս արարին. «Լուսոյ և ճշմարտից աստուածասիրաց, սիրելի եղբարց և աթոռակցաց մերոց...»**, *տես՝ «Գիրք թղթոց», էջ 81—84:*

Վավերագիրը ժամանակակից է նախոր-

[1] *Հմմտ. Մ. Օրմանյան, §§ 375—376:*

[2] *Ստ. Օրբելյանի Պատմության 1861 թ. հրատարակության մեջ՝* ի Ներսիսէ:

դին[1]*: Ուղղված է՝ «Աբասու Պարտաւայ եպս.ի*[2]*, Մովսէսի Բ....զատու*[3] *եպս.ի, Գրիգորի Կապաղականու*[4] *եպս.ի, Հոռոմակայ*[5] *Ամարասու եպս.ի, Տիմոթէի Բաղասականու եպս.ի, Ամբակումայ Շաքիոյ*[6] *եպս.ի, Յոհանկայ Գարդմանայ եպս.ի, Ղեւոնդի Մեծկուանց*[7] *եպս.ի»: Ստորագրված է՝ «Ի Յովաննիսէ Հայոց կթղ.է [Գաբեղենացւոյ], յԱբրահամայ Տարաւնոյ և Մամիկոնենից եպս.է, ի Գրիգորէ Մարդպետական եպս.է, ի Ներսայ Բասենոյ և Մարդաղոյ եպս.է*[8]*, ի Ստեփանոսէ Տայոց եպս.է, ի Մաշդոցէ Խոռխոռունեաց եպս.է, ի Գտայ*[9] *Վանանդեայ* (sic)[10] *եպս.է, յԱբդիսոյէ Ասորեաց ուղղափառաց եպս.է, ի Քրիստափորէ Ռշտունեաց եպս.է, ի Բաբայ*[11] *Ամատունեաց եպս.է, ի Սեկունդոսէ Մոկաց եպս.է, և յայլ եպս.աց աշխարհիս»:*

Այս բնագիրը խմբագրական մանր փոփոխություններով պահպանված է նաև Մովսես Կաղանկատվացու մոտ.

Թուղթ Յովաննիսի Հայոց կաթուղիկոսի առ տէր Աբաս Աղուանից կաթուղիկոս սակս հաւատոյ հաստատութեան երկնաւոր շնորհօք աւլցեալ. «Լուսոց ճշմարտից աստուածասիրաց...», *տես՝ «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի» (հրատ. Մկ. Էմինի), Մոսկվա, 1860, էջ 94—97:*

Այլ տպ.— **Թուղթ Յովհաննիսի՝ Հայոց կաթողիկոսի նն. «Լուսոց, ճշմարտից...»**, *տես՝ «Պատմութիւն Աղվանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ» (հրատ. Կար. Շահնազարյանի), Փարիզ, 1860, հտ. Ա, էջ 224—229:*

[1] *Հմմտ. Մ. Օրմանյան, § 377:*

[2] *Հաջորդ հրատարակություններում՝* աբասայ աղուանից կթղ.ի:

[3] *Անդ՝* բախաղատոյ *կամ* բաղաձատու:

[4] *Անդ՝* կապաղակայ:

[5] *Անդ՝* հռոմկայ:

[6] *Անդ՝* շաքւոյ:

[7] *Անդ՝* մեծ կողմանց:

[8] *Անդ՝ չկա* ի Ներսայ բասենոյ և մարդաղոյ եպս.է:

[9] *Անդ՝* ի գտայ *կամ* ի գիւտայ:

[10] *Անդ՝* վանանդայ:

[11] *Անդ՝* ի բաբայ *կամ* ի պապայ:

Այլ տպ.— Թուղթ Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի նն. «Լուաց ճշմարտից...», *տես՝ «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 137—142։*

□ *Բնագրի ռուս. թարգմանությունը՝* „Письмо Иоанна католикоса армянского, к Аббасу католикосу агванскому об утверждении веры", *տե՛ս հետևյալ հրատ. մեջ.* „История Агван Моисея Каганкатваци, писателя X века" (пер. К. Патканяна), С.-Петербург, 1861, стр. 93—97.

Անգլ. թարգմանությունը՝ „The letter from Yovhannēs, catholicos of Armenia, to Tēr Abas, catholicos of Albania, concerning the confirmation of the faith", *տես հետևյալ հրատ. մեջ.* „The History of the Caucasian Albanians by Movsēs Dasxurançi" (transl. by C. J. F. Dowsett), London, 1961, p. 72—74.

118. Կանոնք որ եղան ի Դուին, մինչդեռ մտածութիւն էր ձողովելոյ եպիսկոպոսացն կարգել կաթողիկոս Հայոց յետ մահուանն Մովսէսի կաթողիկոսի, և խափանեցան այնմ անգամ. «Վասն զի յառաջագոյն սուրբ հարցն և ուղղափառ վարդապետացն մերժեալ էր և ի բաց ընկեցեալ սոսկալի նզովիւք զամենայն հերձուածողս՝ զՍաբելլիոս և զԱրիոս, և զնեստորիոս և զՄանի...», *տես՝ «Գիրք Թղթոց», էջ 146—148։*

Վավերագիրը Դվինի 606 թվականի ժողովին է պատկանում[1]*։ Ստորագրված է՝ «Թէոդորոս Մարդպետական եպս., Յովհաննէս Արծրունեաց եպս., Քրիստոփոր Սիւնեաց եպս., Մանասէ Բասենոյ եպս., Աբրահամ [Աղբաթանեցի] Ռշտունեաց եպս., Յովհաննէս Ամատունեաց եպս., Գրիգոր Անձևացեաց եպս., Սիոն Գողթան եպս., Ահարոն Մեհնունեաց եպս., Ներսէս Բոժունեաց եպս., Յոհանիկ Եղոյ եպս., Թադէոս Առնայոյ եպս.» են։*

[1] *Հմմտ. Ն. Ակինյան, «Կիւրիոն կաթողիկոս Վրաց», էջ 149։ Մ. Օրմանյան, §§ 410—411։*

119. Ձեռնարկ՝ զոր խնդրեաց Սմբատ Վրկան մարզպան, ցայն եպիսկոպոսունս, որք դարձեալ ժողովեցան նորին հրամանաւ ի Դուին, կարգել կաթողիկոս Հայոց, յետ մահուանն Մովսէսի, և զայս ձեռնարկ ետ նոցա. «Ամենազովելոյ[1] և փառաւորելոյ և աստուածաշնորհ պատուովք պայծառացելոյ տեառն Սմբատայ Վրկան մարզպանի և տերանց[2] զինուորի, և տեառն Գիգայ դաշտկարանի[3] և վարդապետի Հայոց շարսաղարի...», *տես՝ «Գիրք Թղթոց, էջ 149—150։*

Վավերագիրը Դվինի 607 թվականի ժողովից է[4]*։ Ստորագրված է՝ «Ի Մանասէէ Բասենոյ եպս.է, ի Քրիստոփորէ*[5] *Սիւնեաց եպս.է, յԱբրահամայ Ռշտունեաց եպս.է, ի Յովհաննէսէ Ամատունեաց եպս.է, ի Գրիգորէ Անձևացեաց եպս.է, ի Սիովնէ Գողթան եպս.է, ի յԱհարոնէ Մեհնունեաց եպս.է, ի Ներսէսէ Բոժունեաց*[6] *եպս. է, ի Յոհանկայ Եղոյ եպս. է*[7] *ի Թադէոսէ Առանոյ*[8] *եպս.է»*[9]*։*

Այլ տպ.— Ձեռնարկ՝ զոր խնդրեաց Սըմբատ Վրկան մարզպան յայն եպիսկոպոսացն, որք դարձեալ էին, և նորին հրամանաւ ի Դուին կարգեալ կաթողիկոս Հայոց յետ մահուանն Մովսիսի, և զիւր ձեռնարկն ետ նոցա. «Ամենազովելոյ և փառաւորելոյ...», *տես՝ «Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 57—59։*

Բնագրի վերջին մասն անջատված է և գրված հետևյալ առանձին խորագրի տակ. «Ձեռնարկ Սմբատայ՝ զոր ետ եպիսկոպոսացն, զորոց անուանսն վերագոյն գրեցաք՝ հանդերձ Վրթանիսիւ և այլովք միաբանելովք» *(էջ 58—59)։ Բնագրի (երկու մասեր)*

[1] *Բնագրում՝* ամենազովիլի։

[2] *Հաջորդ հրատ. մեջ՝* տիրանց։

[3] *Անդ՝* գեգայ դաշտականի։

[4] *Հմմտ. Ն. Ակինյան, էջ 149։ Մ. Օրմանյան, § 412։*

[5] *Հաջորդ հրատ. մեջ՝* ի քրիստափորէ։

[6] *Անդ՝* բզնունեաց։

[7] *Անդ՝* ի յովհանննէ կայելոյ եպս.է։

[8] *Անդ՝* առնոյ։

[9] *Հաջորդ հրատ. ավելացնում է.* ի թէոդորոսէ մարդպետական եպս.է։

ֆրնս. թարգմանությունը՝ „Une cédule est demandée par Sembat, marzpan d'Hyrcanie, aux évêques de retour à Dovin“ *և* „Cédule donnée par Sembat aux évêques ci-dessus nommés, dans cet écrit, de concert avec Vrthanès et d'autres“, *տես հետևյալ հրատ. մեջ.* „Deux historiens arméniens...“ (trad. par M.-F. Brosset), 2e livraison, St.-Pétersbourg, 1871, p, 310—311.

120. Ձեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի ի միաբանութեանն աշխարհիս Հայոց, այնոքիկ որ էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաւորութեանն Մաւրկան. «Եւթն ու տասներորդ ամի Ապերուէզ Խոսրովու արքայից արքայի, իմ՝ Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, և աթոռակցաց իմոց...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 151—152:*

Վավերագիրը Դվինի 607 թվականի ժողովի նյութերից է[1]: Աբրահամ Աղբաթանեցին և պարսկական Հայաստանի թեմակալներն արձանագրում են, որ «Իմ՝ Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, և աթոռակցաց իմոց՝ Մանասէի Բասենոյ եպս.ի, Քրիստափորի Սիւնեաց եպս.ի, Յովանիսի Ամատունեաց եպս.ի, Գրիգորի Անձևացեաց եպս.ի, Սիովնի Գողթան եպս.ի, Ահարոնի Մեհնունեաց[2] եպս.ի, Ներսէսի Բոժունեաց[3] եպս.ի, Յոհանկայ Էղոյ եպս.ի[4], Թադէոսի Առանայ[5] եպս.ի, և իշխանաց մերոց՝ տեառն Սմբատայ Վրկան մարզպանի և տերանց զինուորի, և Գիգայ դաշտկարանի[6] և վարդապետի Հայոց շարսաղարի[7], և այլ իշխանաց և աշխարհականաց և ուղղափառաց առաջի կացեալ» իրենց դավանությունն են տվել բյուզանդական Հայաստանի հետևյալ եկեղեցականները. «Թէոդորոս Սեպհական[8] գնդին եպս., Ստեփանոս

1 *Հմմտ. Ն. Ակինյան, էջ 149—150: Մ. Օրմանյան, §§ 413—414:*

2 *Հաջորդ հրատ. մեջ՝* վեհնունեաց:

3 *Անդ՝* բժնունեաց:

4 *Անդ՝* յեհան (sic) կայղոյ եպս.ի:

5 *Անդ՝* առնոյ:

6 *Անդ՝* գիգայ դաշտակարանի:

7 *Անդ՝* և վրթանիսի վարդապետի հայոց շարսաղարի:

8 *Անդ՝* եփական:

Բագրաւանդայ[1] եպս., Մովսէս Խոռխոռունեաց[2] եպս., Քրիստափոր Ապահունեաց եպս., Ներսէս Վանանդայ եպս., հանդերձ վանից երիցամբքս այսոքիւք՝ Աբրահամ սրբոյ կաթուղիկէի[3] վանից երէց, Սամուէլ՝[4] սրբոյ Հռիփսիմէի, Բաբիլաս՝[5] սրբոյ Յովհաննու վանաց երէց, Խոսրով՝ Աւշականու[6], Յաւիտեան՝ Եղիվարդայ, Դաւիթ՝ Երևանայ, Իսմայէլ՝ Գառնոյ, Յունանէս՝[7] Աւանի, Իսրայէլ՝ Պտղավանից[8], Ջոջիկ՝ Երևանից[9], Յոհանիկ՝ Արտաւազդայ Ապարանից, Աբաս և Որդեակ և Աբրահամ՝ Փարպիոյ[10], Միքայէլ՝ Աղցից, Գիորգիս[11] Արճոյ, Կոզմաս՝[12] Ուրդայ, Մայէն՝ միւս Արճոյ, Յոհանիկ՝ Արծափաց, Սիմոն՝ Դատաւանից[13], Սամոտ՝ Բագարանի[14], և այլ վանից երիցամբ[ք] հանդերձ»:

Այլ տպ.— Ձեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի՝ ի միաբանութեն աշխարհիս Հայոց, այնոքիկ՝ որք էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաւորութեանն Մուրկայ և յաշխարհակալութեանն Խոսրովու Պարսից արքայից արքայի. «Իմ՝ Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, և աթոռակցաց իմոց...», *տես՝ «Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 63—65:*

□ *Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝* „Cédule donnée unanimement à Abraham, catholicos d'Arménie, par les Arméniens appartenant à l'empire grec, sous le règne de Maurice et sous l'autorité de Khosro,

1 *Անդ՝* բագրևանդայ:

2 *Անդ՝* խորխոռունեաց:

3 *Բնագրում՝* կաթուղկեի:

4 *Հաջորդ հրատ. մեջ՝* սամուէլ:

5 *Անդ՝* բաբեղաս:

6 *Անդ՝* օշականու:

7 *Անդ՝* յուսանէս:

8 *Անդ՝* իւղ պտղունից:

9 *Անդ՝* արամունից:

10 *Անդ՝* փարբոյ:

11 *Անդ՝* գրիգորիս,

12 *Անդ՝* կոզմ:

13 *Անդ՝* դարունից.

14 *Անդ՝* սամաս բագրանի:

roi des rois de Perse", *տես հետևյալ հրատ. մեջ.* „Deux historiens arméniens..." (trad. par M.-F. Brosset), 2e livraison, p. 315.

121. Թուղթ տեառն Սմբատայ՝ Վրկան մարզպանի առ Կիւրիոն՝ Վրաց կաթուղիկոս. «Սրբասիրի տեառն Կիւրոնի՝ Վրաց կաթուղիկոսի և այլ եպիսկոպոսաց՝ աթոռակցաց ձերոց...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 168—169։*

Թուղթը ստորագրված է ոչ թե միայն «ի Սմբատայ Գուրկան մարզպանէ և տերանց զինուորէ», այլև, ինչպես նշվում է բնագրում, «ի Գիգայ դաշտկարանէ և ի վարդապետէ Հայոց շարսաղարէ, և յայլ ազատ որերոյ»։ Ուղղված է վրաց կաթողիկոս Կյուրիոնին, նրա աթոռակից եպս.ներին և «իշխանաց աշխարհիդ Ատրներսեհի և ամենայն լաւաց»։

Այլ տպ.— Թուղթ տեառն Սմբատայ ևն. «Սրբասիրի տեառն...», *տես՝ «Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 93—94։*

Բնագիրը կրճատ է։ Ֆրնս. թարգմանությունը՝ „Lettre de Ter Sembat, marzpan d'Hyrcanie, à Kyron, catholicos d'Ibérie", *տես հետևյալ հրատ. մեջ.* „Deux historiens arméniens..." (trad. par M.-F. Brosset), 2e livraison, p. 332—333.

122. Պատասխանի. «Փառաւորելոյ տեառն՝ Սմբատայ Գուրկան մարզպանի...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 170—171։*

Ուղղված է «Սմբատայ Գուրկան մարզպանի և տերանց զինուորի, և Գիգայ դաշտկարանի և վարդապետի Հայոց շարսաղարի, և այլոց ազատ որերոյ Հայոց աշխարհիդ»։ Ստորագրված է «ի Կիւրովնէ Վրաց կաթուղիկոսէ, և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց», ինչպես և «յամենայն լաւաց աշխարհին Վրաց»։

Այլ տպ.— Պատասխանի թղթոյն տեառն Սմբատայ Վրկան մարզպանի ի Կիւրոնէ Վրաց կաթուղիկոսէ. «Փառաւորելոյ տեառն ...», *տես՝ «Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 95—96։*

Բնագիրը կրճատ է։ Ֆրնս. թարգմանությունը՝ „Réponse à la lettre de Ter Sembat, marzpan d'Hyrcanie, par Kyron, catholicos d'Ibérie", *տես հետևյալ հրատ. մեջ.* „Deux historiens arméniens..." (trad. par M.-F. Brosset), 2e livraison, p. 333—334.

123. Պատասխանի ի Հայոց՝ թղթոյն Աղուանից, Վրթանիսի Քերթողի. «Պատուական գտելոցդ և վեհ հռչակելոցդ, որք զկարութիւն բերել յօժարութեամբ յառարկութեան և զանտեղիս բացասողք...», *տես՝* Ա ր ա ր ա տ, *1896, էջ 477—488։*

Վավերագիրն Աբրահամ Աղբաթանեցու կաթողիկոսության (607—615 թթ.) շրջանից է[1]։ Ուղղված է առ «տէր Մխիթար Ամարասու եպս. և Սիմոն Մեծ-կողմանց[2], և թէ այլ եպս.ունք նմին համախոհակք, և ուխտ սրբոյ եկեղեցւոյ, և ազատ մարդիկ կամ այլք ի ժողովրդականաց միաբնակք»։ Ստորագրված է՝ «յԱբրահամայ Հայոց կթղ.է, և ի Թէոդորոսէ Մարդպետական եպս.է, ի Ստեփաննոսէ Բագրևանդայ եպս.է, ի Դաւիթէ Սիւնեաց եպս.է, ի Մովսիսէ Խորխոռունեաց եպս.է, ի Քրիստափորէ Ապահունեաց եպս.է, ի Մատթէոսէ Ամատունեաց եպս.է, և յայլ եպս.աց և յուխտէ սրբոյ եկեղեցւոյ, և յազատ մարդկանէ և ի ժողովրդականաց»։

Հրատարակվել է էջմ. Մատ. Գեորգ. № 58 և № 100 ձեռագրերից (այժմ Երևանի Պետ. Մատ. № 3062 և № 2966)։

Այլ տպ.— Պատասխանի ի Հայոց՝ թղթոյն Աղուանից, Վրթանիսի Քերդողի. «Պատուական գտելոցդ...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 196—211։*

Սույն հրատարակության բնագիրը եղծված է ու վերջից թերի։

Մովսես Կաղանկատվացու մոտ պահպանված է այս բնագրի մի համառոտությունը.

Պատասխանի թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի՝ ի Հայոց. «Պատուական

1 *Հմմտ. Մ. Օրմանյան, § 428։*

2 *Բնագրում՝* մեծ իւրեանց, *որը պետք է լիներ* մեծիրանց։ *Վերոնշյալ ուղղումը կատարել ենք ըստ հաջորդ հրատարակության։*

գտելոցդ...», տես՝ «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի» (հրատ. Մկ. Էմինի), Մոսկվա, 1860, էջ 219—222:

Այլ տպ.— Պատասխանի թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի՝ ի Հայոց, զոր հայհոյականս էր ուրեք բերեալ ի գրեանսն. «Պատուական գտելոցդ...», *տես՝ «Պատմութիւն Աղվանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ» (հրատ. Կար. Շահնազարյանի), Փարիզ, 1860, հտ. Ա, էջ 412—417:*

Այլ տպ.— Պատասխանի թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի, ի Հայոց. «Պատուական գտելոցդ...», *տես՝ «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 313—317:*

□ *Բնագրի ռուս. թարգմանությունը՝* „Ответ на письмо Мхитара, епископа Амараса, от Армян“, *տես հետևյալ հրատ. մեջ.* „История Агван, Моисея Каганкатваци, писателя X века“ (пер. К. Патканяна), С.-Петербург, 1861, стр. 221—224.

Անգլ. թարգմանությունը՝ „The replay given by the Armenians to the letter of Mxit'ar, bishop of Amaras, concerning some blasphemies contained in his writings“, *տես հետևյալ հրատ. մեջ.* „The history of the Caucasian Albanians by Movsēs Dasxuranç̣i“ (transl. by C. J. F. Dowsett), London, 1961, p. 178—181.

124. Պատճէն պատասխանի թղթոյն եկելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսունքն և կաթուղիկոսն Ներսէս հանդերձ նախարարօքն և զօրավարաւն[1] Թէոդորոսիւ Ռշտունեաց տեառն: Ճշմարիտ և ուղղադաւան նամակ Նիկիական. «Աղաչեմ զՁեզ. ընթերցի՛ր՝ որ զՔրիստոնէական հաւատն ունիս աստուասէր: Հոգիընկալ մարգարէիցն և յառաքելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր...», *տես՝ «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» (հրատ. Թ. Միհրդատյանցի), Կ. Պոլիս, 1851, էջ 188—211:*

Վավերագիրը գրված է ի դիմաց Ներսես Գ Իշխանցի կաթողիկոսի և Դվինի 648 թ. ազգային-եկեղեցական ժողովի[1]:

Այլ տպ.— Պատճէն պատասխանի *են.* «Աղաչեմ զՁեզ...», *տես՝ «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» (հրատ. Ք. Պատկանյանի), Պետերբուրգ, 1879, էջ 120—134:*

Այլ տպ.— Պատճէն պատասխանի *են:* «Աղաչեմ զՁեզ...», *տես՝ «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» (արտատպ. նախորդից), Թիֆլիս, 1913, էջ 194—219:*

Այլ տպ.— Պատճէն պատասխանի *են.* «Աղաչեմ զՁեզ...», *տես՝ «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն» (հրատ. Ստ. Մալխասյանի), Երևան, 1939, էջ 122—137:*

□ *Բնագրի ռուս. թարգմանությունը՝* „Копия с ответа на письмо, происшедшее в Арменію от греческого царя Константина“ *են, տե՛ս հետևյալ հրատ. մեջ.* „История императора Иракла, сочинение епископа Себеоса, писателя VII века“ (пер. К. Патканяна), С.-Петербург, 1862, стр. 133—148. *Ռուս. այլ թարգմանությունը՝* „Копия с ответа на письмо, посланное армянам Константином, царем ромейским“ *են, տե՛ս հետևյալ հրատ. մեջ.* „История епископа Себеоса“ (пер. Ст. Малхасянца), Ереван, 1939, стр. 102—114.

Ֆրանս. թարգմանությունը՝ „Texte de la réponse à la lettre arrivée en Arménie de la part de Constantin, empereur des Grecs, qu'ont écrite les évêques d'Arménie et le catholicos Nersês, de concert avec les naxarars et le général Thêodoros, seigneur des Rštunis“, *տես հետևյալ հրատ. մեջ.* „Histoire d'Héraclius, par l'évêque Sebêos“ (trad. par Fr. Macler), Paris, 1904, p. 112—129.

---

1 *Բնագրում՝* զօրավարին:

1 *Հմմտ. Մ. Օրմանյան, § 484: Ն. Ակինյան, «Դաւիթ Անյաղթ և Դաւիթ Հարքացի», Հանդէս Ամսօրեայ, 1956, էջ 159—163:*

125. Թուղթ Հոռոմոց ի Հայս, ձայնակից և համախոհ ժողովոյն Քաղկեդոնի և տօմարի հայհոյութեանն Լևոնի, զոր եբեր աստուածապատիւ տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս՝ յառաջ քան զեպիսկոպոսութիւնն իւր, որ վասն թարգմանութեան հասեալ ի թագաւորական քաղաքն ի Կոստանդնուպոլիս, իսկ նոցին յաղագս միաբանութեան հաւատոյ՝ ընդ ձեռն նորա գրեալ և առաքեալ հայրապետին՝ կապարեայ կնքով, զոր ոչ ընկալեալ զնոցայն հայհոյութիւն՝ մերոյ աշխարհիս, այլ արձանացեալ ի հաւատս սուրբ առաքելոցն և ի խոստովանութիւն երիցս երանելոյ սրբոյն Գրիգորի, ամենևին անշարժ մնացեալք՝ ոչ ետուն տեղի դղրդելով ի շաւղաց ուղղափառութեան. «Քրիստոս է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեանն մի...», *տես՝ «Գիրք Թղթոց», էջ 358—372։*

Թուղթը հավաքական բնույթ ունի և անանուն է, բայց հայտնի է, որ խմբագրված է Կ. Պոլսի հունաց պատրիարք Գերմանոս Ա.-ի (715—730 թթ.) կողմից։ Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1 (էջ 139բ)։

Սույն թղթի պատասխանը տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ անվան տակ։

126. Պատճառ խնդրոյ միաբանութեան՝ թագաւորին Հոռոմոց Էմանուէլի, և սրբոց կաթուղիկոսացն Հայոց Ներսիսի և Գրիգորիսի թուղթքն՝ զոր գրեցին առ միմեանս. «Մարգարէն Դաւիթ՝ յաստուածային երգսն սաղմոսացն օրհնաբանէ...», *տես՝ «Գիրք, որ կոչի Թուղթ ընդհանրական... Ներսէսի Շնորհալւոյ», Պետերբուրգ, 1788, էջ 79—178։*

Նյութերի ժողովածու, որը պարունակում է 1165—1179 թթ. ընթացքում՝ Գրիգոր Պահլավունու, Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի կաթողիկոսության շրջանում հունական եկեղեցու հետ կատարված միութենական բանակցությունների վերաբերող վավերագրերը[1]*, հետևյալ կարգով*[2]*։*

— Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ՝ յեղբօրէ տեառն Գրիգորիսի կաթուղիկոսի Հայոց, ի խնդրոյ փառապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց Մանուէլի՝ Ալեքսի մեծի պռոտոստրատորի, յորժամ եկ յՈւռհա, և էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց, ի թուականութեան Հայոց՝ վեց հարիւր տասն և չորս. «Բանիւք դուզնաքեայ իմն խօսելով...»։ *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։*

— Թուղթ առաջին՝ թագաւորին Հոռոմոց Էմանուէլի առ սրբազան կաթուղիկոսն Հայոց տէր Գրիգորիս. «Մանուէլ ծիրանածնունդ արքայ...»։ *Տես՝ ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ։*

— Պատասխանի առաջին թղթոյն թագաւորին Հոռոմոց Մանուէլի, գրեալ Ներսիսի կաթուղիկոսին Հայոց. «Քրիստոսապսակեալ ինքնակալ ծիրանածին...»։ *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։*

— Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, գրեալ Ներսիսի կաթուղիկոսի Հայոց, ի խնդրոյ աստուածասէր թագաւորին Հոռոմոց՝ Էմանուէլի. «Թէպէտ և աղքատութիւն մտաց...»։ *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։*

— Նորին՝ յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ. «Ասացուք սակաւուք և յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ...»։ *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։*

— Թուղթ առաջին՝ թագաւորին Հոռոմոց Մանուէլի առ տէր Ներսէս կաթուղիկոս Հայոց յաղագս խնդրելոյ զմիաբանութիւն երկաբնչիւրոցս ազանց. «Մանուէլ Քրիստոսի աստուծոյ հաւատարիմ թագաւոր...»։ *Տես՝ ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ։*

— Պատասխանի թղթոյն մեծի թագաւորին Հոռոմոց Կիւռ Մանուէլի, գրեալ Ներսիսի կաթուղիկոսի վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ. «Հրամանք ինքնակալութեանն ձերոյ...»։ *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ։*

[1] **Հմմտ. Մ. Օրմանյան, §§ 950, 968—970, 972, 975—977, 980, 981, 983—985, 991, 996, 997, 1000—1004, 1008—1010, 1012—1017։** E. Dulaurier, „Histoire, dogmes, traditions et liturgie de l'Eglise Arménienne Orientale", 2e éd., Paris, 1857, p. 39—54.

[2] *Սույն հրատարակության մեջ մի քանի վավերագրեր բացակայում են, բայց մենք նրանց թիվը լրացված ենք ներկայացնում՝ հետևելով հաջորդ հրատարակություններին։*

— Թուղթ կրկին անգամ պատասխանի դարձեալ ի թագաւորէն Հոռոմոց Կիւռ Մանուէլէ, Ներսէսի կաթուղիկոսի Հայոց յաղագս նոյն խնդրոյ միաբանութեան երկաբանչիւրոց ազգաց եկեղեցւոյ ի տէր մեր ի Քրիստոս. «Մանուէլ ի Քրիստոս Աստուած հաւատացեալ թագաւոր ծիրանածին...»: *Տես՝ ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ:*

— Գլխակարգեալք խնդիրք առ ի Հոռոմոց առաքեալ ի թագաւորէն, զի ի գումարել ժողովոյ Հայոց՝ ընտրեսցեն զոր արժանն է ընդունել սակս միաբանութեան. «Ա. Նզովեսցե՛ք զասողսն մի բնութիւն զՔրիստոս...»:

Ինը կետերից բաղկացած հունական պահանջների այս ցուցակը կցված է նախորդ՝ Մանուել Կոմնենոսի նամակին:

— Թուղթ տեառն Միքայէլի պատրիարքին Կոստանդնուպոլսոյ՝ սակս այսր խնդրոյ առ սուրբ հայրապետն Ներսէս. «Պատուական և սուրբ, սիրեցելոյ սրբասնեալ կաթուղիկոսին ամենայն Հայաստանեայց...»: *Տես՝ ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՒՆԱՑ Կ. ՊՈԼՍԻ [Գ]:*

— Պատասխանի թագաւորական գրոյն՝ տեառն Ներսիսի երրորդ անգամ: «Քրիստոսապսակեալ, բարձր և յաղթող ինքնակալին Հոռոմոց...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ:*

— Թուղթ տեառն Ներսիսի կաթուղիկոսի առ տէր Միքայէլ պատրիարքն Հոռոմոց. «Սուրբ և ընդհանրական կաթուղիկէ եկեղեցւոյ թագաւորական քաղաքին...»: *Տես՝ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ:*

— Թուղթ Գրիգորի կաթուղիկոսի Հայոց՝ որ զկնի տեառն Ներսիսի յաջորդեաց զաթոռն, առ բարեպաշտ թագաւորն Հոռոմոց Մանուէլ. «Քրիստոսապսակ աստուածասէր արքայից Հոռոմոց...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ:*

— Թուղթ բարեպաշտ թագաւորին Հոռոմոց Էմանուէլի, զոր գրեաց պատասխանի Գրիգորի կաթուղիկոսի Հայոց. «Մանուէլ, Քրիստոսի Աստուծոյ հաւատարիմ թագաւոր ծիրանածին...»: *Տես՝ ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ:*

— Թուղթ պատրիարքին Կոստանդնուպոլսի առ կաթուղիկոսն Հայոց Գրիգոր, համաձայնութեամբ ամենայն ժողովոյն. «Միքայէլ, ողորմութեամբ Աստուծոյ արք եպիսկոպոս Կոստանդնուպոլսի Նոր Հռոմայ...»: *Տես՝ ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՒՆԱՑ Կ. ՊՈԼՍԻ [Գ]:*

— Թուղթ Գրիգորիսի կաթուղիկոսի Հայոց, ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց. պատասխանի թագաւորին Հոռոմոց Մանուէլի, յորում և ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ արքային, ձայնակցութեամբ և ձեռնագրով ամենայն Հայաստանեայց եպիսկոպոսաց. «Քրիստոսիւ զօրացեալ և նովաւ պսակեալ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ:*

— Թուղթ Գրիգորիսի կաթուղիկոսի Հայոց և ընդհանուր Հայաստանեայց ժողովոյ, գրեալ ի կաթուղիկէ եկեղեցին Հոռոմոց և յոր ի նմա սուրբ ժողովն. պատասխանի թղթոյն Միքայէլի պատրիարքին, որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս. «Սրբոյ և մեծի Աստուծոյ եկեղեցւոյդ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ:*

□ *Այլ տպ.*— Պատճառ խնդրոյ միաբանութեան *են.* «Մարգարէն...», *տես՝ «Թուղթ հանրական...Ներսիսի Շնորհալւոյ», էջ-Պոլիս, 1825, էջ 54—125:*

Այլ տպ.— Պատճառ խնդրոյ միաբանութեան *են.* «Մարգարէն...», *տես՝ «Թուղթ ընդհանրական... Ներսիսի Շնորհալւոյ», Էջմիածին, 1865, էջ 113—280:*

Այլ տպ.— Պատճառ խնդրոյ միաբանութեան *են.* «Մարգարէն...», *տես՝ «Ընդհանրական Թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Երուսաղեմ, 1871, էջ 85—201:*

Տես նաև Երևանի Մեծ. Մատ. ձեռ. № 581 (էջ 462բ—515ա), № 583 (էջ 84բ—175ա), № 912 (էջ 35ա—81բ), №4188 (էջ 101—114) են. Զմմառի Մատ. ձեռ. № 154 (էջ 80ա—121ա), № 161 (էջ 1ա—85բ):

Սույն ժողովածուի նյութերի հիմնական մասի ռուս. թարգմանությունը՝ „Переписка между греческим императором Мануилом и святыми кафоликосами армянскими, Нерсесом и Григорисом, касательно соглашения в вероисповедании“ *տե՛ս հետևյալ ժողովածուի մեջ.* „Исторические памятники вероучения Армянской Церкви, относящиеся к XII столетию“ (пер. с армянского Александра Ху-

добашева), С.-Петербург, 1897, стр. 119–280.

Ժողովածուի վավերագրերից մի քանիսի հուն. թարգմանությունը, հայ. բնագրերի հետ միասին, տես հետևյալ հրատ. մեջ. „Ἀκολουθία τοῦ ἁγίου βαπτίσματος κατὰ τὰς διατάξεις τῆς Ἀρμενικῆς Ὀρθοδόξου Ἐκκλησίας καὶ ἔκθεσις ὁμολογίας πίστεως ὑπὸ Νερσὲς τοῦ Χαρίεντος καὶ ἐπιστολαὶ διαμειφθεῖσαι μεταξὺ αὐτοῦ καὶ τοῦ αὐτοκράτορος Μανουὴλ πορφυρογεννήτου τοῦ Κομνηνοῦ καὶ Μιχαὴλ τοῦ οἰκουμενικοῦ πατριάρχου. Μεταφρασθεῖσαι ἐκ τοῦ Ἀρμενικοῦ ὑπὸ Δημητρίου Ἰ. Χ. Τζολακίδου„; Κ/πολις, Τύποις Ἀραμιάν, 1881, σ. 46–75 (Նույնի հայ. անվանաթերթը՝ «Կանոն սրբոյ մկրտութեան ըստ կարգաւորութեան Հայկական Ուղղափառ Եկեղեցւոյ, և Խոստովանութիւն հաւատոյ ի Ներսիսէ Շնորհալւոյ և թղթակցութիւնք նորին ընդ ինքնակալին Յունաց Մանուէլի ծիրանածին Կոմինոսի և Միքայէլի տիեզերական պատրիարքի։ Թարգմանեալ ի հայկականէ ի հելլէն բարբառ Տիմիթրիոս Ի. Խ. Չօլաքեան», Կ. Պոլիս տպագրութ. Արամյան, 1881, էջ 46–75)։

Ժողովածուից որոշ վավերագրերի լատ. թարգմանությունը (թարգմանիչ Հ. Կապպելլետտի) տես հետևյալ հրատ. մեջ. „Sancti Nersetis Clajensis Armeniorum catholici opera ... studio et labore D. Josephi Cappelletti, presbyteri Veneti“, vol. I, Venetiis, 1833, p. 173–245.

127. Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն որ ի Հաղբատ և ի Սանահին՝ առ պատուական կաթողիկոսն տէր Գրիգորիս. «Սուրբ և աստուածընկալ գլուխ մեր և պսակ պարծանաց Հայաստանեայց ...», տես՝ «Թուղթ ընդհանրական... տեառն Ներսէսի Շնորհալւոյ», Կ. Պոլիս, 1825, էջ 187–189։

Ուղղված է հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային (1173–1193 թթ.)[1]։ Ստորագրված է՝ «Բասիլ եպս. որ յարևելս հիւսիսոյ, վրդ. Գրիգոր Սանահնին, և հայր Յոհանէս, վրդ.ք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ, Խաչատուր վրդ. Հաղարծնին, Մխիթար վրդ. Խոռակերտոյ, և միւս Մխիթար վրդ. Գետկայ, և այլք աշակերտեալք ամենեքեան սրբոց կտակարանաց աստուծոյ»։

Այլ տպ.— Թուղթ վարդապետացն Հայոց են. «Սուրբ և աստուածընկալ...», տես՝ «Թուղթ ընդհանրական... տեառն Ներսիսի Շնորհալւոյ», Էջմիածին, 1865, էջ 426–433։

Այլ տպ.— Թուղթ վարդապետացն Հայոց են. «Սուրբ և աստուածընկալ...», տես՝ «Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Երուսաղեմ, 1871, էջ 307–312։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4188 (էջ 1–4). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 473 (էջ 206ա–207բ)։

Սույն թղթի պատասխանը տես ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ անվան տակ։

128. Գիրք որ անուանի Լուսարան։ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 573, էջ 337ա–385բ։

Շարադրված է հարցուպատասխանի ձևով։ Ունի «Նախերգան» (սկ. «Բազում անգամ աղաչեալ յաշակերտաց զխնդիրս ոմանս լուծանել, թախանձանաց նոցա ինչ ոչ եղև հնար...»)։ Հեղինակն այստեղ ասում է, որ «անուն գրոյս, թէ հանոյ թուեսցի ձեզ, Լուսարան յորջորջեսցի, զի ի սմա խրթնութիւն զանազան իրաց ի լոյս գայ. իսկ զանուն իմ վասն այնորիկ կամեցայ լռութեամբ ծածկել, զի մի՛ նախանձ հնացեալ ոմանց, մախացուցեալ զնոսա, զգործս օգտակարս արհամարհեալ ապախտ առնելով» են։

129. Ընդդէմ ախթարմայից. «Յիսուս Քրիստոս է գլուխ եկեղեցւոյ որպէս յայտ է ի սուրբ գիրս...», Տյուբինգենի KUB Ma XIII 56, fol. 172^r–181^v.

Բաղկացած է 15 գլուխներից։

[1] Մ. Օրմանյանի կարծիքով վավերագիրը 1178/1179 թվականից է, §§ 1004–1007։ Լ. Մելիքսեթ-բեկը համարում է 1184/1185 թվականից, տես՝ ლ. მელიქსეთ-ბეგი, „ჩრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი...», ტფ., 1923, გვ. 173։

130. Եւ որ ասեն թէ Հայք զեօթն խորհուրդս եկեղեցւոյն չգիտեն և ոչ զեօթն մահու մեղսն մեկնել. «Ասեմք առ այդ թէ ոչ է պարտ զմիոյ կամ զբազմաց տգիտութիւն ի վերայ բոլոր ազգին ասել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4251, էջ 139ա—154բ։*

131. Սուրբ հարցն ուղղափառաց հաստատեալ ի պատճառս նաւակատեացն անհասից. «Թէ հերձուածող կամ այլ ազգ քրիստոնէ հարցանէ զիս, թէ ընդէ՞ր զբոլոր աղուհացսն պահէք պինդ, և զշաբաթ երիկունն ուտէք զձուկն և մածուն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1633, էջ 241ա—249ա։*

132. Վկայութիւնք ընդդէմ նոցա որք ասեն թէ տէրն մեր զգառն ոչ եկեր յերեկոյին հինգշաբաթին. «Յովհաննու Ոսկեբերանի՝ յԱւետարանին մեկնութենէն. Վասն որոյ ի հին զատիկն սկսանի...»։

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ (գլ. ԺԲ)։

133. Զի՞նչ մտօք ասեմք մեռ[ել]ոցն՝ Ամբիծք. «Պտ. ՅԱդամայ գերեզմանին վերայ ասացեալ է Դաւիթ, վասն այնորիկ շատ օրէնք և պատուիրանք կայ ի նմա...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4251, էջ 15բ—17ա։*

134. Հարցումն Ֆրանկաց և պատասխանի Հայոց՝ վասն Պօղոսի և Պետրոսի. «Հրց. Թէ ընդէ՞ր ոչ երկրպագանէք Պետրոսի և Պօղոսի՝ իբրև Քրիստոսի։ Պտ. Մեք միայն սուրբ Երրորդութեանն երկրպագանեմք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2267, էջ 127բ—128ա։*

135. Յաղագս թէ իւրաքանչիւր ոք յերկոտասան առաքելոցն միապէս ունին զիշխանութիւնն ի Քրիստոսէ. [Վկայութիւնք ի Նոր Կտակարանէն]. «Ետես զժողովուրդն, ել ի լեառն, և իբրև նստաւ անդ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1217, էջ 136ա—137ա։*

136. Վկայութիւնք զի պարտ է զսուրբ պատարագն անխմոր և անջուր մատուցանել, անաղ և անձէթ. «Թադէոսի առաքելոյ. Արժան է զհաց պատարագին ջերմ հանել ի սեղանն»։

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ (գլ. ԺԴ)։

137. Վասն անխմոր նշխարին և անջուր բաժակին. «Սուրբն Եփրեմ ասէ. Խմորն սկսաւ[1] յեւայէ և ապականեաց զբնութիւնս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 581, էջ 223ա—227ա։*

Տես նաև նոյն մատ. ձեռ. № 2335՝ «Վասն խմորոյ հացին...» *(էջ 61ա—61բ, թերի). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 235 (էջ 7բ—8բ), № 260 (էջ 50բ—54ա). Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 6986 (fol. 187v).

138. Ասացից և սուղ բան վասն սուրբ պատարագին, զոր կանոնագիրքն ասացին՝ թէ ջերմ հաց հանել ի սեղանն. «Նշխար զի մի Հին Կտակարանաւ՝ այսինքն սաղմոսի աշտիճանաւորաց ձեռօք և ոչ կանանեաց (sic) զոր Հռոմք եղծանեն...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 235, էջ 8բ—9բ։*

139. Վասն ջրոյն զոր ասեն հերձուածողք թէ պարտ է արկանել ի սուրբ խորհուրդն. «Պտ. Զպատարագն նախ և առաջ Քրիստոս մատոյց ի սուրբ վերնատունն և ջուր բնաւ ոչ յիշեաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4251, էջ 134ա—136բ։*

140. Ընդդէմ այնոցիկ որ վասն բաժակին մոլին. «Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք, ասէ առաքեալ, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 583, էջ 207բ—218ա։*

Տես նաև նոյն մատ. ձեռ. № 581 (էջ 518բ—524ա), № 3916 (էջ 232ա—239ա). Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Marsh. 467 (fol. 277r).

---

[1] *Ձեռագրում՝* սկաւ։

141. Չէ պարտ ի խորհուրդն ջուր արկանել կամ խառնել. «Այլ գիտելի է, զի ոմանք հետևողք չար աղանդոյն Քաղկեդոնի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2267, էջ 133ա—133բ։*

142. Յաղագս ջրոյն զոր ոմանք ի խորհուրդն արկանեն. «Նախ է վկայութիւն անդուստ իսկ հակառակողացն, քանզի ասէ Ալպերն ի յառաջին գիրքն ԺԱ համարին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 523, էջ 147բ։*

143. Գինի և ջուր. «Քանզի սուրբ Յակոբ առաքեալ ի Պատարագամատուցին իւրում ասէ. Նմանապէս և յետ ընթրեաց առեալ զբաժակն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 771, էջ 144ա—145ա։*

144. Պատմութիւն յաղագս միաբանութեանն եկեղեցւոյ Յունաց և Հռոմայեցւոց, եթէ ո՛րպէս և [յ]ո՛ր ակս ընկալաւ եկեղեցին Հռոմայ զջուրն ի խորհուրդ սուրբ արեանն Քրիստոսի *ևն.* «Ի ժամանակս բարեպաշտ թագաւորին Յունաց, որում անունն կոչիւր Պալալոդ, որ կամեցաւ առնել խաղաղութիւն և միաբանութիւն ընդ Հռոմայեցիս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2939, էջ 565բ—570ա։*

Բնագիրը գրի է առնվել Կիլիկիայում՝ 1271 թվականին, մի հույն նավապետի պատմածի հիման վրա։

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 34 (էջ 305ա—309ա) և Արմաշի Մատ. ձեռ. № 9 (էջ 219ա—223ա?)։

145. Յաղագս տօնի ծննդեան տեառն մերոյ ի կուսէն անմիաբանութեան մերոյ եկեղեցւոյ ի Յունաց և ի Հռոմայեցւոց և յայլոց ազգաց. «Թէ ընդէ՞ր եկեղեցիք Հայաստանեայց զտօն ծննդեան և զմկրտութեան տեառն ի մի օր կատարեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6907, էջ 150ա—151բ։*

146. (Անխորագիր) «Եթէ հերձուածողն ասէ ցիս թէ պարտ է զաւետիս ծննդեանն ի մարտի Իէ տօնել, և զտօն ծննդեանն՝ ի դեկտեմբերի Իե, զմկրտութիւնն՝ ի յունուարի Զ...: Ասա նմա թէ ճշմարիտ տօն աւետեացն ի յապրիլի Զ է...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 70բ—72բ։*

147. Վկայութիւնք վասն ծննդեանն տեառն և մկրտութեանն, զի պարտ է ի միում աւուր տօնել ի վեցն յունուարի. «ի Կղեմայ յառաքելասահման կանոնաց. Կարգեցին առաքեալքն զօր ծննդեանն...»։

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ (գլ. ԺԱ)։

148. Վասն այլազգեաց, որք ապականեն զսուրբ քառասնօրեայ պահս ազգի ազգի խծբծանօք և զպահողքն բամբասեն զՀայք. «Սուրբ վարդապետքն մեր եդին հիմն հաստատութեան կարգաց սրբոյ եկեղեցւո՛յ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 774, էջ 164բ—168բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2268 (էջ 121ա—123ա)։

149. (Անխորագիր) «Եթէ հարցանէ զիս հերձուածողն թէ ընդէ՞ր զբոլոր աղուհացսն պահէք պինդ և զշաբաթ իրիկունն ուտէք ձուկն և մածուն և պանիր և ձու, և ոչ համբերէք մինչև յառաւօտն որ կատարեալ յարութիւն է...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 72բ—74ա։*

150. Վկայութիւնք զի պարտ է զխաչեցարն ասել յամենայն աւուր ի դէմս որդւոյ. «Նեքտառեայ Հռոմայ հայրապետի. Արդ՝ ոչ եղև հնար Յովսեփայ...»։

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը տես՝ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ (գլ. ԺԴ)։

151. Յաղագս թէ պարտ է երգել զՍուրբ Աստուածն խաչեցարւ. «Գրէ սիրելի աշակերտն Քրիստոսի սուրբն Յոհաննէս աւետարանիչն ի գիրս. Ես եմ կեանք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5084, էջ 83ա—95ա։*

152. Վասն Սուրբ Աստուածին՝ Որ խաչեցար. «Վասն որդւոյն Աստուծոյ սրբասացութեան Որ խաչեցար երգի յեկեղեցի Հա-

յաստանեաց...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 254, էջ 132ա—139բ:*

153. Պատճառ Սուրբ Աստուածին որ Հայք խաչեցար ասեն և հերձուածողքն՝ ոչ *են.* «Սրբասացութիւնս այս ճանապազ երգի յեկեղեցի Աստուծոյ ընդ ամենայն աշխարհս Հայաստանեայց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2039, էջ 301ա—305բ:*

154. Թէ պարտ է խաչեցար ասել ի Սուրբ Աստուածն. «Իսկ վասն զՍուրբ Աստուածն խաչեցար ասելն ի մեծէն Իգնատեայ Աստուածազգեցէն եղաւ...»:

Ձեռագրերում առանձին պատահող այս բնագիրը Վարդան Արևելցու գործերից է. տես՝ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, «Լուծմունք ի սուրբ գրոց» (ժղլանք):

155. Համառօտ հաւաքումն ընդդէմ հերետիկոսաց, որ կոչի Սուր Պետրոսի: *Տես՝ ՍՈՒՐ ՊԵՏՐՈՍԻ:*

156. Վարդապետութիւն յաղագս սրբազան աթոռոյն Հռոմայ, ըստ դիտաւորութեան Ցռանսզաց. «Պատճառ այսմիկ շարադրութեանս այս է: Որովհետև վասն մեծամեծ վնասուցն եկեղեցւոյ՝ սկսան յառնել տարբերութիւնք ընդ մէջ եպիսկոպոսացն Հռոմայ և թագաւորացն Կալլիայ...» *(Թարգմ. Մելքիսեդեկ Բանասերի), Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 838, էջ 1—199:*

157. Հրահանգք շուրջ զհաղորդութեամբ ուղղափառաց ընդ հերետիկոսաց և ընդ հերձուածողաց յաստուածայինս, ի լոյս ածեալ վասն միսիոնարաց արևելեայց: *Հռոմ, ի տպարանի Տարածման Ուղղափառ Հաւատոյ, 1719:*

Հրատարակությունը, որ մենք չենք տեսել, բաղկացած է 10 էջից[1]*:*

158. Համառօտ մեկնութիւն առաջարկութեանց, որք դատապարտեցան յԱղեքսանդր Եօթներորդէ, յԻննոչենցիոս Մետասաներորդէ և յԱղեքսանդրոս Ութերորդէ: *Տես՝ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆՑ:*

159. Հայելի ճշմարտացոյց, արտահանեցեալ ի Լատինացւոց և թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ, ի թուին փրկչին 1725, ի Վենետիկ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6619, էջ 227ա—317ա:*

Տես նաև Զմմառի մատ. ձեռ. № № 296, 297 և 298:

160. Հայելի ազգեցութեան, յորում ցուցանին թիւրութիւնք տետրակին կոչեցելոյ 'Գաւազան կրկնազօր', առ ի զգաստութիւն և յուղղութիւն հեղինակի նորա Սրմաքէշ Մանուէլի, արարեալ յումեմնէ ճշմարտասիրէ, ի փառս ճշմարտին Աստուծոյ և ի պատիւ սրբոյ Աստուածածնին և սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յամի տեառն 1781, ի թուականիս Հայոց ՌՄԼ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 675, էջ 4ա—157ա:*

Քննադատական երկ, որի հեղինակությունը վերագրվում է Գաբրիել Ավետիքյանին կամ Սուքիաս Աղամալյանին[1]*: Բաղկացած է հետևյալ մասերից.*

Կանխաբանութիւն առ Սրմաքէշ Մանուէլն:

Խնդիր Ա. Հակառակութիւնք Սրմաքէշ Մանուէլին ի վերայ ըղձման Հոգւոյն սրբոյ, և մեր առ ի նոյնս Աստուծով դիմադրութիւն:

Խնդիր Բ. Վասն պատարագելոյ ի տան. և վասն բնակելոյ կարգաւորաց ի տունս աշխարհականաց:

Խնդիր Գ. Ցորում յանդիմանին անճոռնի զրպարտութիւնք և մոլորութիւնք Սրմաքէշին, զորս դնէ ի չորրորդ գլուխն, ի 83 թղթահամարէն մինչև ի 119:

Խնդիր Դ. Ցորում յանդիմանի ազիտութիւն Սրմաքէշին ի վերայ գլխոյ սուրբ եկեղեցւոյ:

Վերջաբանութիւն և խրատք առ Սրմաքէշ Մանուէլն:

Բնագրի վերջում կա 5 տուն ոտանավոր. սկ. «Ի քօղ մանեալ՝ զանխուլ տաւի | Ամբոկ զործոյս՝ դիմաւորի...». *վերջ՝ «Յառակ բանից՝ կամ ի Տիգրիս, /Ոչ Դանիէլ՝ անդ ի կարծիս. /Գաբրիէլի՝ տեսիլն ի յիս,/ Թէ Մանուէլ՝ յուշի լինիս»:*

[1] *Հմմտ. Ա. Ղազիկյան, «Հայկ. Նոր մատենագիտ.», հտ. Ա, էջ 1616:*

[1] *Հմմտ.* Հանդէս Ամսօրեայ, *1958, էջ 71: Հասկ (հայագիտ. տարեգիրք), Բ տարի, 1949—1950, էջ 304: Հմմտ. Տերոյենց, «Իրաւախոհ», հտ. Բ, Կ. Պոլիս, 1868, էջ 62:* P. S. Somal, „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 190.

Տես նաև նույն մատ. ձեռ. № 782 (էջ 3ա—219բ), № 4342 (էջ 1ա—155բ), № 9328 (էջ 2ա—155բ), № 6584 (էջ 1գ—129ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № № 707 և 937. Թբիլիսիի Ձեռագր. Ինստ. Հայ. ձեռ. № 38. Արմաշի վանքի ձեռ. № 154. Զմմառի Մատ. ձեռ. № № 274—278. Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. E. 23 (fol. 1^{r}—129^{v}). *Հռոմի* Pont. Leon. Coll. Arm. Ms. Arm. 23.

161. Քննութիւն սահմանին... եկեղեցւոյ: *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Arm. D. 19, fol. 1^{r}—181^{v}.

*Քննադատական երկ՝ ուղղված Մանուել Սրմաքեշի «*Ակն լուսատու*» գրքի դեմ։ Հեղինակն, ինչպես երևում է, նույն է նախորդ բնագրի հեղինակի հետ։ Բաղկացած է հետևյալ գլուխներից.*

Գլ. Ա. Յաղագս ճշմարիտ ծանօթութեան եկեղեցւոյ։

Գլ. Բ. Յաղագս թե ո՞յք իցեն ի զինուորեալ եկեղեցւոյն Քրիստոսի և ո՞յք ոչ։

Գլ. Գ. Յաղագս հաւատի և ստոյգ նշանաց ճըշմարիտ եկեղեցւոյն Քրիստոսի։

Գլ. Դ. Արդեօք եկաց մնաց հանապազ և գոյ իսկ այժմ ի վերայ երկրի երեելապէս ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի մի՛ միայն, ընդհանրական, առաքելական և սուրբ։

Գլ. Ե. Խնդրի թէ ո՞ր իցէ արդեօք ճշմարիտ եկեղեցին Քրիստոսի մի՛ միայն, ընդհանրական... և ցուցանի թէ այն է եկեղեցին հռոմէական։

Գլ. Զ. Յաղագս գլխաւորութեան սրբոյ առաքելոյն Պետրոսի։

Գլ. Է. Յաղագս գլխաւորութեան քահանայապետին Հռոմայ և աթոռոյ նորա։

Գլ. Ը. Յաղագս մոլեգին ցնորից և զրպարտութեանց Կարճիկ Մանուէլին՝ ընդդէմ Մխիթարայ մեծի աբբային։

Գլ. Թ. Համառօտ բովանդակութիւն պէսպէս մոլորութեանց և հերձուածոց Կարճիկ Մանուէլին։

Գլ. Ժ. Յաղագս պէսպէս առթից և պատճառաց մոլորութեանց Կարճիկ Մանուէլին։

*Սույն բնագրի վերջում ևս կա «*Ի fօղ մանեալ...*» ոտանավորը, որը գտնվում է նախորդ բնագրի վերջում։*

Տես նաև Զմմառի Մատ. ձեռ. № 283՝ «Գիրfս այս որ կոչի Ճշմարտապէս ծանուցող զգլխաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ» *(էջ 2ա—282բ). Հռոմի* Pont. Leon. Coll. Arm. Ms. Arm. 15: «Աստուածաբանական վիճմունf յաղագս եկեղեցւոյ»:

162. Վիճաբանութիւն ի վերայ բանին թէ Քրիստոս կարէ ասիլ անօր աստուածային, գրգռեալ ի բանէն Պարտէզ գրfկանն ապելոյ ի Վէնէտիկ...: Նախ յայսմ տետրակի առձանագրին բանf տետրակի հակառակորդաց, և ապա լուծումն բանից նոցա, արարեալ փիլիսոփայական մէթոտոսիւ, յումեմնէ տրուպ բանասիրէ, որոյ անունն ի վերջոյ տետրիս հոմերաբանեալ լինի խորհրդաւոր ոտանաւորօf: Գրեալ ի Կոստանդնուպոլիս ի մայրաfաղաfն մեծ, յամի տեառն 1757, դեկտ. 25, ի փառս աստուծոյ և ի պատիւ սրբուհւոյ Աստուածածնին: *Երևանի Պետ Մատ. ձեռ. № 8121, էջ 243ա—307բ։*

Ուղղված է թվում՝ Մանուել Սրմաքեշի դեմ։ Հեղինակի անունը գրքի վերջում գտնըվող հետևյալ քառատողի մեջ է.

«Բանտակառաչ՝ Դիպակեցի,
Անուշ անունըն՝ Սափրեցի.
Սապատողըն՝ Յաղթ մատնեցի,
Համախոհիւքըն՝ Շիկնեցի»։

Այս ոտանավորը «ոչ միայն արտայայտէ զտառս անուան նորա զհնարաւորսն ի գտանել մաթէմաթիգական արուեստիւ, այլ և ցուցանէ զայլ բազում խորհուրդս, վասն զի իւրաքանչիւր բառք նորա են խորհրդաւոր, որպէս և իւրաքանչիւր տողքն են կրկնանշանակք» ևն։

Տես նաև Զմմառի Մատ. ձեռ. № 396 (էջ 1ա—64բ, վերջից թերի)։

163. Վահան հաւատոյ, յորում պարունակին գիտելիf ի վերայ աստուածաբանական առաfինութեան հաւատոյ և կանոնաց նորա, յաւելեալ ի վերջոյ և խնդիր ի վերայ Հայաստանեայց եկեղեցւոյ առանձին, յօրինեալ ի ճշմարտասիրէ ումեմնէ և յօգուտ մանկանց եկեղեցւոյ: *Թբիլիսիի Ձեռագրերի ինստ-ի Հայ. ձեռ. № 61, էջ 1ա—187ա (թերի)։*

164. Թէօփիլոս: Այսինfն՝ Խօսակցութիւն Թէօփիլոսի ընդ վարդապետին յաղագս ճըշմարտութեան և ջերմեռանդութեան: Ի հայրապետութեան տեառն Նահապետի կաթուղիկոսի ամենից Հայոց: Ի Ալիկօռնայ fաղա-

քի: Յամի տեառն 1701, յունվարի: Ի փառս մեծագոյնս Աստուծոյ:

240 էջ։ Հեղինակը, որ անհայտ է, գրքի նախաբանում («Տրակ առ ընթերցողս») գրում է. «Որովհետև շրջեցայ ի մէջ Հայոց, իմացեալ ճանաչեցի զնոսա ունողս զկատարեալ փափագ առ ի յիմանալ զճշմարտութիւնն հաւատոյ և ծառայել Աստուծոյ ջերմեռանդապէս. ուստի յայտ է, զի են որդիք բարձրելոյն ըստ տէրունական բանին...։ Որոյ աղագաւ յօժարեցայ և ես կարկառել զբանս ինչ խրատոյ պարզ և յստակ բառիւ. զի լաւ համարեցի թէ իմաստու[ն]ք զիս յանդիմանիցեն, և ռամիկք ընթեռնլով օժանդակ առնիցեն բարէըղձութեան իւրեանց։ Եւ բաժանեցաք յերկուս մասունս, որոց մինն յաղագս քրիստոնէական ճշմարտութեան պատասխանատրութեամբ Թէօփիլոսի, որ ուսեալ էր ի վարդապետէն իւրմէ, և միւսն յաղագս ջերմեռանդակերտութեան մտածական աղօթից, ուսուցանելով վարդապետն Թէօփիլոսի» են (էջ 2—3)։ Գիրքը շարադրված է հարցուպատասխանի ձևով։ Նրա առաջին մասը՝ «Յաղագս ճշմարտութեան» (սկ. «Բազումք մարդիկք քրիստոնեայք անուանին»), բաղկացած է 9 գլուխներից և գրավում է 5—81 էջերը, իսկ երկրորդը՝ «Յաղագս ջերմեռանդութեան» (սկ. «Հայր իմ պատուական, բազում անգամ լուսոյ»), բաղկացած է 13 գլուխներից և գրավում է 83—240 էջերը։

165. Ասացեալ ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ և կարգացն որ ի նմա և անուանակոչութեան նորա. «Խորհուրդ սուրբ եկեղեցւոյ ոչ այժմ և նորոգ ինչ էրևեցաւ, այլ յ՚ի սկըզբանց անտի...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1521, էջ 368ա—370ա։

166. Յաղագս եկեղեցական արարողութեանց Հայոց: Տես՝ J. J. Schröderus, „Thesaurus linguae armenicae“ (Արամեան լեզուին գանձ), Amstelodami, 1711, p. 325—337.

Զրույց՝ հայ քահանայի և եվրոպացի բողոքականի միջև։ Բնագրին առընթեր՝ նրա լատ. թարգմանությունը՝ „De rebus ac ritibus sacris Armenorum“.

167. Վասն աստիճանաց եկեղեցւոյ, զոր տէր մեր Յիսուս Քրիստոս կարգեալ ի վերայ սուրբ առաքելոցն. «[Հրց.] Քրիստոս զեկեղեցական աստիճանն ո՞րպէս եդոյց և որո՞ւմ տեղւոյ իմացուք: Պտ. Ի ժամ մկրտութեան զքրիստոնէութեան խորհուրդն եդոյց...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1887, էջ 260ա—261ա։

168. Արժանապատուութիւն ի կաթողիկէ եկեղեցւոջ, զոր կալցին ժառանգաւոր սարկաւագք. «Եպի տաւն արխաւնդաւն...», տես՝ Zeitschrift für Armenische Philologie, Marburg, Bd. I, 1902, S. 200—203.

Տես հաջորդ բնագրի հիշատակագրությունը։

169. Կարգ երգողացն, որք ոչ լինին սարկաւագք, այլ կէսսարկաւագաց, և երգողաց, և ընթերցողաց. և զայլ որ հանգոյն սոցին աշտիճանաց կալցին զձեռնադրութիւնս. «Դէմէսյիկոս. լաղին է...», Ibidem, S. 203—204.

Վերջում՝ թարգմանչի հիշատակագրությունը, որը վերաբերում է նաև նախորդ բնագրին. «Տեառն Ներսիսի է թարգմանեալ, եպիսկոպոսի Տարսոնի, այսորիկ կարգադրութիւնք»։

Հրատարակվել է Էջմ. Մատ. (այժմ Երևանի Պետ. Մատ.) № 1898 ձեռագրից։ Տես նաև Հռոմի Bibl. Vat. Cod. Vat. Arm. 3 (fol. 298^{r}—300^{r}). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 261 (էջ 115բ—117բ, սկ. «Պիտաւն արխաւնդօն»). Զմմառի Մատ. ձեռ. № 156= հին № 195 (էջ 201բ—202ա?)։ Վերջին ձեռագրի հիշատակարանն է՝ «Թարգմանեցաւ ի թուին Հայոց ՈԻԸ (=1179 թ.) ի ձեռն Ներսէսի եպիսկոպոսի Տարսոնի և Կոստանդեայ մետրապոլտի»։

170. [Յաղագս աստիճանաց եկեղեցւոյ] «Թէ զի[նչ է] դռնապանութիւն, ընթերցողութիւնք...», Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 317, էջ 191ա—191բ։

171. Այսոքիկ են ինն դասք աստիճանի յեկեղեցւոջ. «Առաջին՝ դասք պատրիարգաց.

որք թարգմանին առաջին հարք, այսինքն՝ հայրապետք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9121, էջ 88ա։*

172. *Վասն* կարգաց եկեղեցւոյ. «Յանիշխանութենէ ազգիս, նաև ի փառասէր և ի սնապարծ հակառակող բարուց մարդկան...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 253, էջ 137ա—139ա։*

173. Գաթեխիզմ Հռոմէական. այս է՝ վարդապետումն իւրաց սրբազանաց ըստ վճռոց սրբազնասրբոյ ժողովոյն Տրիտէնդինոյ, հրամանաւ Փիոսի Ե.երորդի քահանայապետին ծայրագունի...: Թարգմանեցեալ ի հայկական բարբառ յամի տեառն ՌՈՂԷ (1697) ի Լէոպոլիս, ի փառս մեծագոյնս Աստուծոյ: *Գեռլայի մայր-եկեղեցու հայ. ձեռ. № 5։*

Սույն երկի թարգմանիչն է՝ Վարդան Հունանյանը[1]*։*

174. *Վարդապետութիւն* քրիստոնէական կամ Կրթութիւն քրիստոնէական: *Տես՝ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ։*

175. *Գիրք* որ կոչի Բանալի ճշմարտութեան: *Տես՝ ԲԱՆԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ։*

Տես նաև հետևյալ անունները.

ԱԲԳԱՐ ԹՈԽԱԹԵՑԻ, «Դաւանագիր» («Դաւանութիւն հաւատոյ»)։

ԱԲԴԻՇՈՅ ԱՍՈՐԻ։ Երկու թղթեր առ Հայոց կաթողիկոս Ներսես Բագրևանդացի և երկու դավանական գրվածք՝ «Յաղագս անիծեալ Նեստորականաց և ամենայն հերձուածողաց» և «Յաղագս նզովելոյ զամենայն հերձուածողս, որք էին հակառակ ուղղափառաց»։ (Տես աստ, հտ. Ա, էջ 36—37, §§ 1—4)։

ԱԲԷԼ ԳՈՒԼԱՍՊԵԱՆ ԹԻՖԼԻԶԵՑԻ, «Գիրք որ կոչի Վահան հաւատոյ»։

ԱԲԻԲ (Հայր) կամ ՀԱԲԻԲ ԲԵՐԻԱՑԻ, «Դաւանութիւն Հայոց»։

ԱԲՐԱՀԱՄ ԱՂԲԱԹԱՆԵՑԻ, Թղթեր են։ Տես նաև վերևում §§ 118—120 բնագրերը՝ «Կանոնք որ եդան ի Դունի», «Ձեռնարկ զոր խնդրեաց Սմբատ Վրկան մարզպան» և «Ձեռնարկ զոր ետուն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի»։ Աբր. Աղբաթանեցու գործերի մասին տես նաև աստ, հտ. Ա, էջ 77—80։

ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏԵՑԻ [I], «Բանք պիտանիք ի վերայ սրբալոյս իւղոյն մեռոնի»։

ԱԲՐԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏԵՑԻ [II], «Բանք պիտանիք ի պէտս առ ձեռն քարոզութեան ի վերայ սրբուհւոյ Աստուածածնին և նորին անախտ և մաքուր ծննդեանն, այլ և վասն անճառ անշփոթ միաւորութեանն Քրիստոսի և նորին տնօրէնութեանն»։

*ԱԲՐԱՀԱՄ ՀՌԵՏՈՐ, «Յաղագս **ժողովոց,** արարեալ Աբրահամու Հայոց **վարդապետի,** ընկերակցի Մովսէսի Խորենացւոյ և Դաւթի փիլիսոփայի, ի խնդրոյ Սահակայ Արծրունւոյ մեծի իշխանի»։*

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի, որ եղև ի ժամանակս Թէոդոսի Փոքու վասն ամպարշտին Նեստորի», «Կանոնք Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչական Աղուանից արքայ»։

ԱԳԱԴՐՈՆ կամ ԱԳԱԹՈՆ, «Վասն բարի ժամանակին» (կամ «Վասն վերջին ժամանակին» կամ «Վասն Նեռին գալստեան»)։

ԱԳԱԹԱՆԳԵԼ, «Պատմութիւն վասն Նեռին ծննդեան»։

ԱԶԱՐԻԱ [ԶԱՔԱՐԻԱ] ՋՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ, «Դաւանութիւն հաւատոյ» և թղթեր։

ԱԶԱՐԻԱ ՍԱՍՆԵՑԻ, «Յաղագս աստուծոյ»։

ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, ճառեր, թղթեր և այլ երկեր։

ԱԹԱՆԱՍ ԳԱՄԱԼԱ, «Թուղթ առ Քրիստափոր կաթողիկոս Հայոց»։

ԱԼԲԵՐՏ ՄԵԾ, «Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան», «Դրախտ հոգւոյ յաղագս առաքինութեանց»։

ԱԼԻՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅ, Թուղթ առ Կյուրեղ Աղեքսանդրացի։

---

1 Տես «Ստեփաննոսի Ռօշքայ **Ժամանակագրութիւն և Տարեկանք եկեղեցականք»** (հրատ. Հ. Ոսկյանի), Վիեննա, 1964, էջ 198։

ԱԼՓՈՆՍՈՍ ՌՈԴՐԻԳՈՒԵՑ, «Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորականի առաքինութեան»։

ԱԿԱԿԻՈՍ ԲԵՐԻԱՑԻ, Թուղթ առ Կյուրեղ Աղեքսանդրացի։

ԱԿԱԿԻՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍԵՑԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ ՄՈՆԳՈՍ, Թղթեր։

ԱԿԱԿԻՈՍ ՄԵԼԻՏԻՆԱՑԻ, Թղթեր և ճառեր։

ԱՂԱՄԱԼ ԽՈՋԱՅ-ՄԻՆԱՍԵԱՆՑ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Գիրք որ կոչի Ծանաչումն ճշմարտութեան»։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, Թղթեր և ճառեր։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿԱԼԱՄԱՏՈՅ, «Անտառ նորագոյն մտածմանց»։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Գիրք առեւնական, որ ասի Վիճաբանական» (կամ «Գիրք որ կոչի Առեւնական վիճաբանութիւն»), «Բան ճշմարտութեան և ուղղութեան առ ուղղափառ և ճշմարտասէր, լուսաւորչածին և քրիստոսադաւան ժողովուրդսն Հայկական՝ հետևողացդ ճշմարտութեան և ատողացդ ստութեան» (սկ. «Ունկն դիք»), «Նորին դաւանութիւն» (սկ. «Իսկական անեղ բնութեան»), «Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք յաղագս առ ի պատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց բանի, ի պէտս քարոզութեան և թէ ի պէտս վիճաբանութեան, մանաւանդ ի պէտս գիտութեան»։

ԱՄԲՐՈՍԻՈՍ ՄԵԴԻՈԼԱՆԵՑԻ, Հատվածներ՝ ճառերից։

ԱՄՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, Թուղթ առ Սեւերոս Անտիոքացի։

ԱՄՈՆ ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Հատված։

ԱՄՓԻԼՈՔՈՍ ԻԿՈՆԱՑԻ, Հատվածներ՝ ճառերից։

ԱՅԻԹԱԼԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, «Թուղթ առ քրիստոնեայս Պարսից աշխարհին, վասն հաւատոյ»։

ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՑԻ, «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», «Պատճառ յաղագս զխոսրով նզովելոյն զԱնձևացեաց եպիսկոպոսն», «Յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին», «Նորին [Յաղագս որ ասեն, թէ ոչ ասի աստիճան եպիսկոպոսի, այլ աթոռ միայն]» (սկ. «Բայց արդ սակաւուք»)։

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, «Գիրք խոստովանութեան յաղագս սուտ կարծեացն որ վասն նորա» (սկ. «Որպէսզի ծանիցի»), «Ընդդէմ Թոնդրակեցւոց» (սկ. «Երկու են մեզ տեսակք եկեղեցւոյ»)։

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ կամ ՀԱՂԲԱՏԱՑԻ, «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» կամ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի մինն միածնել բնութիւն» են (3 խմբագրությամբ)։

ԱՆԱՍՏԱՍ ԿԱՅՍՐ, «Թուղթ ընդդէմ ամենայն հերձուածողաց»։

ԱՆԱՏՈԼԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, «Հարցումն Եւսեբի ժամանակագրի առ Անատոլի եպիսկոպոսն»։

ԱՆՏՈՆ ԳՈՎԴԻՆ, «Փիլիսոփայութիւն ըստ անըստերիւր և անսայթաք վարդապետութեան սրբոյն Թովմայի»։

ԱՆՏՈՆ ՍԵՐԵԲԿՈՅԵՆՑ, „Relatio brevis de publica facta professione fidei".

ԱՆՏՈՆ ՍՈՒԼԹԱՆԻԱՑԻ, «Գիրք ընդդէմ Մահմետականաց»։

ԱՆՏՈՎԻՆ ՊՕՂՈՍ ԳԱԲՐԻԷԼԻ, «Բարոյական աստուածաբանութիւն»[1]։

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻ, «Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց, որք հրաւիրելոց են յաստիճան քահանայութեան»։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ [ՆԵՐՍԷՍՈՎԻՉ] ԼԵՀԱՑԻ, «Վիճաբանութիւնք աստուածաբանութեան», «Ծանօթութիւնք բարոյականից աստուածաբանութեանց», «Արդարացութիւն եկեղեցւոյն Հայոց»։

ԱՐԱՄ, «Պատասխանի Առամոյ Անձևացեաց իշխանի ի սակս պէսպէս հարցմանց նորա»։

---

[1] *Նույն հեղինակի այս նույն գործն է մեր նախորդ համարում թյուրիմացությամբ ԱՆՏՈՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ անվան տակ հիշատակված աշխատությունը (տես աստ, հտ. Ա, էջ 950)։* P. G. Antoine.

ԱՐԳԵՆՏԷՍ (Եւստր.), «Զեռնարկիկս յաղագս մկրտութեան՝ կոչեցեալ Զեռնածութիւն մոլորելոց», «Գրքուկ... ընդդէմ մկրտութեան Ֆռանկաց։ Գլուխ 37՝ գրեալ ի Նմանէ վասն Հայոց», «Թուղթ առ եղբօրորդին իւր Լեոնի, յաղագս մկրտութեան և դաւանութեան Հայոց», «Գիրք որ կոչի Յաղագս սրբացուցման խորհրդոյ գոհութեան»։

ԱՐԻՍՏԻԴԷՍ ԱԹԵՆԱՑԻ, «Ինքնակալի Ադրիանոսի կայսեր յԱրիստիդեայ փիլիսոփայէ Աթենացւոյ»։

ԱՐՏԱՒԱԶԴ ՄԱԶԱԶՈՒՆԻ, «Լուծումն Արտաւազդայ Մազազունեաց տեառն, զոր բացայայտեաց սուրբ պատուիրանօք ի հրամանէ տեառն Ատոմայ Անձեւացեաց իշխանի»։

ԱՒԳՈՍՏԻՆՈՍ ՀԻՊՊՈՆԱՑԻ։ Տես՝ ՕԳՈՍՏԻՆՈՍ ՀԻՊՊՈՆԱՑԻ։

ԲԱԲԳԷՆ ՈԹՄՍԵՑԻ։ Տես վերևում երկու թղթեր՝ «Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս» խորագրի տակ (§§ 109—110)։

ԲԱՂԴԱՍԱՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, «Գրգուկս շահաւէտ...»։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԻԱՑԻ, «Գիրք կամ քարոզ վասն հաւատոյ դաւանութեան», «Գիրք վասն բանին մարմնացելոյ» (կամ «Գիրք մարդեղութեան բանին աստուծոյ»), «Գիրք ի վերայ երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս», «Գիրք յարութեան Քրիստոսի», «Գիրք յաղագս հասարակաց յարութեան», «Գիրք դատաստանաց», «Գիրք դժոխոց», «Յաղագս դրախտին», «Յաղագս վեցօրեայ արարչութեան», «Գիրք վասն սիրոյ»։

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ, «Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն», «Հարցմունք վասն հաւատոյ» (կամ «Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ երանելեացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի», սկ. «Բարսեղ ասէ. Կարողութի՞ւն իցէ արդեօք պատմել ինչ յաղագս որդւոյ նախ քան զլինելն աշխարհի»), «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի և Ապողինարի վիճաբանութիւն», «Գիրք հարցողաց», «Ի սկզբանէ էր բանն», «Յաղագս սուրբ Երրորդութեանն», «Թէ չէ պատճառ չարեաց Աստուած» (սկ. «Բազումք են վարդապետութեան օրինակք»), «Յաղագս պահոց», «Յաղագս ողորմածութեան և յաղագս աղօթից», «Յաղագս ապաշխարութեան», «Յաղագս գոհութեան», «Խօսք յորդորականք ի մկրտութիւնն», «Ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառն Որդւոյն Աստուծոյ քան զՀօրն, և իջուցանեն զՀոգին սուրբ ի հնազանդութիւն» են (սկ. «Գովեցի ես զփոյթ»), և այլ ճառեր ու թղթեր։

ԲԱՐՍԵՂ ՓԱՌԱԿԵՑԻ, «Սուրբ գիրք, որում անուն եդաւ Ծառ մեռոնի», «Համառօտ հաւաքումն ի գրոց սրբոց»։

ԲԵԴԱ, «Գիրք կայծականց»։

ԲԵԼԼԱՐՄԻՆՈՍ (Հռոբ.), «Վարդապետութիւն քրիստոնէական» (կամ «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան»)։

ԲԵԿԱՆ [ԲԵԿԱՆԵԱՆ] (Մարտ.), «Անալոճիայ, այսինքն՝ Համեմատութիւն հնոյ և նորոյս կտակի»։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՊ [ԺԴ], «Թուղթ հանրական առ միսիոնարս կարգեալս ընդ Արևելս, յաղագս պահպանութեան ծիսից եկեղեցւոյն Յունաց և այլոց Արևելեայց», «Սահմանադրութիւն, որով ընկերութիւնք ոմանք՝ Ֆռամազոնաց կոչեցեալք՝ կրկին դատապարտին և արգելանին»։

ԲԻԼԼՈՒԱՐՏ (Կար. Հռեն.), «Բովանդակութիւն սրբոյն Թովմայի, յօրինեալ ըստ օրինաց արդի դպրանոցաց»։

ԲՈՆԱ (Յովհ.), «Կերակուր քահանայից»։

ԲՈՆԻՖԱԿԻՈՍ ՊԱՊ [Գ] (1294—1303 թ.), թուղթ առ Գրիգոր Անավարզեցի։

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ, «Թուղթ առ կայսրն Յունաց Ռոմանոս, վասն հաւատոյ» (սկ. «Հովուապետի հանդարտի և զգօնացելոյ»)։

ԳԱԼԱՆՈՍ (Կղ.), «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ», «Աստուածաբանական վիճաբանութիւնք ոմանք, ըստ վարդապետութեան սրբոյն Թովմայի» (կամ «Յաղագս աստուածային բացարձակ կատարելութեանց, այսինքն՝ աստուածային ստորոգելեացն»)։

ԳԵՐՄԱՆՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ (պատրիարք 715—730 թթ.)։ Տես վերևում՝ «Թուղթ Հռոոմոց ի Հայս, ձայնակից և համախոհ ժողովոյն Քաղկեդոնի» (§ 125)։

ԳԷՈՐԳ ԵՐԶՆԿԱՑԻ, «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» (սկ. «Որք դաշս մտացն ի գլուխն ունին ըստ մեծին Սողոմոնի»)։

ԳԷՈՐԳ ԼՈՌԵՑԻ, «Պատասխանի թղթոյն Յովհաննիսի Ասորւոց պատրիարքի» (սկ. «Ջառ ի յաստուածուստ պարգևեալ»)։

ԳԷՈՐԳ ՄԽԼԱՅԻՄ, «Վկայութիւնք հայրապետաց յաղագս միոյ բնութեանն Քրիստոսի, ժողովեալք ի գրոցն Լատինացւոց», «Նոր ապացոյց անյաղթելի վասն միոյ բնութեանն Քրիստոսի» (սկ. «Անօթն ընտրութեան և վարդապետն հեթանոսաց Պօղոս առաքեալ հրամայէ»), «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց»[1], «Կաթողիկէութիւն լուսաւորչադաւանաց, համաձայն հին ընդհանրական եկեղեցւոյ, ցուցեալ ԽԳ վկայութեամբ սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ անուանեալ գրքին», «Անհաւատութիւն Ֆռանկ վարդապետաց...։ Ցուցանի կարճառօտապէս, որ հերձուածող պատրիքն Ֆռանկաց անհաւատ են» (սկ. «Ամենայն ազգք քրիստոնէից լաւ գիտեն»), «Ցուցանի կարճառօտապէս, որ Ֆռանկքն ոչ ունին զեօթն խորհուրդսն եկեղեցւոյ։ Յաղագս գոյացականաց խորհրդոցն եկեղեցւոյ» (սկ. «Գոյացականք իւրին անուանին այնոքիկ, առանց որոց իւրն ոչ լինի»), «Յաղագս քահանայագործութեանց եկեղեցւոյն Քրիստոսի», «Ջրպարտութիւն ուրումն անանուն հաբեղայի ընդդէմ Արմենաց»։

ԳԷՈՐԳ ՊԻՍԻԴԷՍ, «Յաղագս վեցօրեայ արարչութեան»։

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ, «Վասն հաղորդութեան»։

ԳԻԼԲԵՐՏՈՍ ՊՈՐՐԵՏԱՆՈՍ, «Գիրք վեց սկզբանց»։

ԳՐԻԳՈՐ ԱԲԱՍԵԱՆ, «Գիրք պատճառաց»։

ԳՐԻԳՈՐ ԱՆԱՒԱՐԶԵՑԻ, «Գրիգորի Հայոց կաթուղիկոսի ջրողի՝ երկաբնակի՝ ուրացողի» (սկ. «Վասն ջրոյն թէ պարտ է խառնել ի սուրբ խորհուրդն որպէս և այլ քրիստոնեայքըն»), «Թուղթ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հեթում, հայր արքային Հայոց Լևոնի»։

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ (1194—1203 թթ.), թղթեր՝ առ Իննովկենտիոս Գ պապ։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» (սկ. «Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ»)։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, թղթեր։

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ, «Առ Եւնոմիացիս» (կամ «Գիրք Առ որս»), «Յաղագս ի ձեռնադրութիւն անհաւանութեան և հրաժարելոյ» (կամ «Գիրք Յաղթեցայ»), «Ի ծնունդն Քրիստոսի» (կամ «Գիրք Քրիստոս ծնեալ»), «Յաղագս ուղղափառութեան հաւատոյ և ապաշխարութեան յանցաւորաց»։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, «Թուղթ... ի հոյակապ և յականաւոր ուխտն Կճաւայ, վասն կարծեացն անիծելոց Թոնդրակեանց Յանեսի և Յամբրեսի» են (սկ. «Տէր հայր, զոր գրեմս իբր չհաւատալի համբաւ չար տեղեկութեամբ»), «Բան վասն ուղիղ հաւատոյ» (սկ. «Տէրունեանն հաւանեալ խրատու»)։ Վերջինս սխալմամբ է վերագրված Նարեկացուն. տես՝ ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ։

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ, «Խօսք յինն երանութիւնն» (կամ «Գիրք ինն երանութեանց»), «Յաղագս կուսութեան» (կամ «Գիրք կուսութեան»), և այլ երկեր։

ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ, «Թագաւորին Հոռոմոց Մանուէլի պատասխանի՝ գրեալ ի Գրիգորէ կաթուղիկոսէ Հայոց»։

ԳՐԻԳՈՐ ՋԱՀԿԵՑԻ. տես՝ ՊԵՏՐՈՍ ՋԱՀԿԵՑԻ։

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ, «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ» (կամ «Դաւանութիւն», սկ. «Տէրունեանն հաւանեալ խրատու»)։ Այս գործը թյուրիմացաբար վերագրվել է Գրիգոր Նարեկացուն։

ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ, «Երկոտասան գլուխ նզովից ընդդէմ ամենայն հերձուածողաց» (սկ. «Եթէ կարծեօք ոք կամ կերպարանօք ասէ զՔրիստոս»), «[Յաղագս մարմնաւորութեան Բանին]» (սկ. «Էր Աստուած և եղև մարդ»), և այլ երկեր։

[1] Բաղկացած է երկու գլուխներից՝ «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան» և «Յաղագս հերձուածողութեան»։

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ, «Թուղթ վասն զատկին»:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ» (կամ «Հարցումն խոջայ Մաշդուսի բարեպաշտի և պատասխանիք Գրիգորի աշակերտի»), «Գիրք Հարցմանց», և այլ գործեր:

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, թղթեր:

ԳՐԻԳՈՐ ՔԵՐԹՈՂ, Թուղթ առ Աբրահամ կաթողիկոս Աղբաթանեցի:

ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ կամ ՀԵՐԵՏՆԱՑԻ, «Բան հաւատոյ... ամենայն ուղղափառութեան, ի մարմնաւորութիւնն Քրիստոսի և ընդդէմ հերձուածողաց» (սկ. «Բանն Աստուած կատարեալ»), «Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց» (սկ. «Պատրաստեցէք տալ պատասխանի»), «[Բան] ի հրամանէ Անաստասու Հայոց կաթողիկոսի» (սկ. «Այլ զի քո բարեփառութիւնդ յօժարեաց»), «[Բան] ի խնդրոյ Աշոտոյ պատրկի» (սկ. «Բան զոր հարցանէք»), «Հարցումն Դաւթի իմաստասիրի» (սկ. «Փրկչական կիրընկալութիւնքն միա՞պէ՞ս իմանին»), «Որ յիմաստասիրական և յիմաստասիրելի հարցուածս» (սկ. «Հց. Զի՞նչ է մարդ»), «Դաւիթ Հարքացի ասէ» (սկ. «Քանզի նախաժամանէր հոգին ի կոյսն»), «Վասն իւղոյն զոր արար Մովսէս» (սկ. «Զէթն Քրիստոսի օրինակեալ է»):

ԴԱՒԻԹ ՄԵԾ-ԿՈՂՄԱՆՑ, «Վասն պատկերաց և նկարագրութեանց, հայցուած ի Յովհաննէ Մայրագոմեցւոյ»:

ԴԻԴԱԿՈՍ ԴՈՒԱՐՏՈՍ, «Համառօտ մեկնութիւն դատապարտեալ նախադասութեանց»:

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, հատվածներ՝ Պօղոս Սամոստացու դեմ հակաճառությունից և այլ ճառերից:

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ, «Յաղագս երկնային քահանայապետութեան», «Յաղագս եկեղեցականին քահանայապետութեան», «Յաղագս աստուածայնոցն անուանց», «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» և թղթեր:

ԴԻՈՍԿՈՐՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, դաւանագիր՝ Ներկայացված Եփեսոսի երկրորդ ժողովին:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, «Գիրք ընդդիմութեանց» (կամ «Եղծ աղանդոց»), «Թուղթ առ Երանելին Մաշդոց վարդապետ»:

ԵՂԻԱ ԿԱՐՆԵՑԻ ՄՈՒՇԵՂԵԱՆ, «Վիճաբանութիւնք»:

ԵՈՆԱ: Տես ստորև՝ ՅՈՎՆԱՆ [ԵՈՆԱ]:

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ, «Հոլովմունք չար աղանդոց հերձուածողաց, որք ի սկզբանէ աշխարհի սերմանեցան ընդ ժամանակս ժամանակս», «Հերձուածողք երևելիք այսչափ են» (սկ. «Բարբարիմոսք, որ կոչին խուժադուժք»), «Ի ծնունդն Քրիստոսի», «Յաղագս միւսանգամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ» (սկ. «Եւ յորժամ եկեսցէ»), «Յաղագս վերջնումն ժամանակին և վասն յայտնելոյ որդւոյն կորստեան Նեռինն» (սկ. «Արդ, զանցելոց ժամանակաց»), ևն:

ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ, «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ և ժամուց» ևն (սկ. «Զիմաստայեղձ և գովելի նամակս»), «Վասն դաւանութեան հաւատոյ՝ ընդդէմ պարոն Հեթմոյ Կիւռիկոսցւոյն» (սկ. «Քև զօրացեալ ամենայն քաջութեամբ»), «Դաւանութիւն և խոստովանութիւն ի սուրբ երրորդութիւնն, ասացեալ Եսայի վարդապետի, ի յեզր Վիրապին» (սկ. «Աստուածային բնութիւն, սուրբ Երրորդութիւն»), «Դաւանութիւն հաւատոյ որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգի» (սկ. «Հոյակապ և հռչակաւոր աստուածապահ քաղաքաց»):

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵԲԻ, «Ջատագովութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ» (սկ. «Ըստ ժամանակիս ոմանք վէսք և ինքնահաւանք սկսան իւրաքանչիւր ոք բան մի առարկել և հաւանեցուցանել զայլս ջանիւ»):

ԵՒԳԻՆԻՈՍ ՊԱՊ [Դ], «Միաբանութիւն Հայոց ընդ Հռոմէական սուրբ եկեղեցւոյն»:

ԵՒՍԵԲԻՈՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ, «Գիր Եւսեբիոսի Նիկոմեդիոյ եպիսկոպոսին և Թէոգնիոսի Նիկիայ եպիսկոպոսին»:

ԵՒՍԵԲԻՈՍ ԴՈՐԻՒԼԷԱՑԻ, թղթեր:

ԵՒՏԻՔԷՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, «Յաղագս զանազանութեան բնութեան և առանձնաւորութեան» (սկ. «Որ զարտաքին իմաստութեանցն վարժեցան»), և դավանագիր՝ Ներկայացված Եփեսոսի երկրորդ ժողովին:

ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ, ճառեր և այլ երկեր։

ԶԱՔԱՐԻԱ ԶԱԳԵՑԻ, Թուղթ առ Փոտ պատրիարք Յունաց Կ. Պոլսի և ճառեր։

ԶԱՔԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ։ Տես՝ ԱԶԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

ԶԵՆՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ, «Վկայութիւն վասն մարդեղութեան» (սկ. «Եւ ոչ ասեմ եթէ մահ մարմնոյ միայն է»), եւն։

ԶՈՍԻՄՈՍ, «Յաղագս մկրտութեան բանին աստուծոյ»։

ԹԵՍԱԻՐՈՍ (էմմ.), «Իմաստասիրութիւն բարոյական»։

ԹԷՈԳՆԻՍ ՆԻԿԻԱՑԻ։ Տես՝ ԵՒՍԵԲԻՈՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ։

ԹԷՈԴՈՏՈՍ ԱՆԿԻՒՐԱՑԻ, ճառեր։

ԹԷՈԴՈՐԵՏՈՍ ԿԻՒՐԱՑԻ, «Թուղթ ի Քաղկեդոնէ, յուղարկեալ առ Աղեքսանդր վերատեսուչն Յերապոլսոյ», «Ճառ ասացեալ ի Քաղկեդոն, առաջի նուիրակացն հերձելոց և աշակերտացն Նեստորի», «Թուղթ առ Յովհաննէս վերատեսուչն Անտիոքայ»։

ԹԷՈԴՈՐՈՍ [ԹԷՈԴՈՐԵՏՈՍ] ԴԱԳՈՆ, «Առ երկաբնակսն ընդդիմադրութիւն» (սկ. «Անստացական բան աստուած»)։

ԹԷՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱՒՈՐ, «Ընդդէմ Մայրագոմեցւոյն» (սկ. «Ահա այժմ նորահրատ տաչոբեցան»)։

ԹԷՈՐԻԱՆՈՍ, «Առաքումն ի մեծէն կայսերէ Մանուէլէ առ Հայս, յորում դնի տրամաբանութիւնն, զոր արար հրեշտակն Յունաց Տրիանէ ընդ կաթողիկոսին Հայոց տեառն Ներսէսի»։

ԹՈՎՄԱՍ ԱԿՈՒԻՆԱՑԻ, «Համառօտութիւն աստուածաբանութեան» կամ «Աստուածաբանական բովանդակութիւն» (որից կան թարգմանված առանձին մասեր ևս), «Յաղագս զօրութեանց հաւատոյ և խորհրդածութեանց եկեղեցւոյ» կամ «Գիրք հանգանակաց», «Յաղագս եօթն խորհրդոց սուրբ եկեղեցւոյ», «Համառօտ գրգուկ իմն վասն նախասահմանութեան»։

ԹՈՎՄԱՍ ՔԱՐՄԵԱՆ, որ եւ ՇԱՐՄԷՍ, «Աստուածաբանութիւն»։

ԹՈՐՈՍՈՎԻՉ։ Տես ստորև՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹՈՐՈՍՈՎԻՉ [ԹՈՐՈՍԵԱՆ]։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՊԱՊ [Բ] (1130—1143 թթ.), Թուղթ առ Գրիգոր Պահլավունի։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՊԱՊ [Գ] (1198—1216 թթ.), Թղթեր առ Գրիգոր Ապիրատ կաթողիկոս և Լևոն Ա թագավոր Հայոց։

ԻՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (ԳԵՂԱՄԵՑԻ ?), «Բանք շահաւէտք և օգտակարք յաղագս խորհրդոյ եկեղեցւոյն ընդդէմ երկաբնակաց և ազինն Հռոմայեցւոց» (սկ. «Յիսուսաւանդ ողջունիւ և աստուածային գթութեամբն ծանիր»)։

ԻՍԱՀԱԿ «ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ» ԵՐԿԱԲՆԱԿ, «Τοῦ ὁσίου πατρὸς ἡμῶν 'Ισαὰκ τοῦ καθολικοῦ τῆς Μεγάλης 'Αρμενίας Λόγος στηλιτευτικὸς κατὰ 'Αρμενίων", „Λόγος στηλιτευτικὸς τοῦ 'Ισαὰκ περὶ τῶν κακοδόξων 'Αρμενίων και αἱρετικῶν".

ԻՐԵՆԷՈՍ ԼՈՒԳԴՈՒՆԱՑԻ, «Ընդդէմ հերձուածոց», «Յոյցք առաքելական քարոզութեանն»։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ [Ա] (1198—1219 թթ.), Թղթեր առ Իննովկենտիոս Գ պապ։

ԼԵՒՈՆ ՊԱՊ [Ա], «Տոմար Լևոնի» (կամ «Գլուխք չորեքտասանք, զոր գրեաց երանելին Ղևոնդիոս հայրապետ Հռովմայ առ Փլաբիանոս արքեպիսկոպոսն Կոստանդնուպոլսոյ, զոր ընկալաւ տիեզերական սուրբ ժողովն Քաղկեդոնի, ՈԼԶ հայրապետքն»)։

ԼՈՄԲԱՐԴՈՍ (Պետրոս) ՊԱՐԻՍԵՑԻ, «Չորս գիրք վճռոց»։

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԱԲԵԼԼԻ, «Ուղղ և ծուծ աստուածաբանութեան (կամ «Համառօտութիւն աստուածաբանականի վարդապետութեան»)։

ԼՈՒԿԻՈՍ ՊԱՊ [Գ] (1181—1185 թթ.), Թուղթ առ Գրիգոր Տղա։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՐԶՐՈՒՄԵՑԻ, «Լիակատար աստուածաբանութիւն», «Կարճառօտագունեղ համառօտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան խոհականի, ուսումնականի, դրականի, բարոյականի, և այլ»։

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ, «Առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձև, անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած Բան ի կուսէն», «Յաղագս թէ պա՞րտ է զմարմինն տէրունական համագոյ ասել Աստուածն Բանի,

կամ թէ մարմնոյն և Բանի մի բնութիւն ասե՞լ, թէ ոչ», «Առ այնոսիկ, որ չերկուս զմարդկային անջատեն բնութիւն, ա՛յլ գոլ ասեն յառաջ քան զյանցանսն և ա՛յլ՝ զկնի յանցանացն», «Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, թէ բնակա՞ն պարտ է ասել, թէ անբնական։ Նախագիր բանից առ Աթանաս Անտիոքացի», «Թուղթ առ տէր Սարգիս եպիսկոպոս Գիրադեկորայ»։

ԿԱՊՐԷՈԼՈՍ ԿԱՐՔԵԴՈՆԱՑԻ, «Թուղթ առ ժողովն Եփեսոսի»։

ԿԱՐԱՊԵՏ ԱՆԴՐԻԱՆԱՑԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԹԷՈԴՈՐՈՍԵԱՆ, «Վարդապետութիւն քրիստոնէական ըստ Հայոց»։

ԿԵԼԵՍՏԻՆՈՍ ՊԱՊ [Ա.], Թղթեր՝ առ Կյուրեղ Աղեքսանդրացի, Նեստոր, Հովհաննես Անտիոքացի և ուրիշներ։

ԿԻՏՏԱԴԻՆԻՈՍ (Պօղոս) ԲՈՆՈՆԻԱՑԻ, «Քրիստոնէական վարդապետութիւն»։

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ, «Խրատ առ ուղղափառ հաւատացեալս Հայոց ազգի» (սկ. «Առաջին այս, որում ասեն թէ յորժամ մկրտեն զոք), «Յաղագս ութ խորհրդոցն տեսութիւն» (սկ. «Զարմանալին քննութեամբ՝ անօթն ընտրութեան Պօղոս»), «Թուղթ խրատական» (սկ. «Յաստուծոյ ամենակալէն օրհնութիւն»), «Վասն ծննդեանն որ յունուարի Զ» (սկ. «Իսկ վասն ծննդեանն զոր նոքա» կամ «Արդ հազարապետն խորոցն Աստուծոյ»)։

ԿԻՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, «Գիրք պարապմանց՝ յաղագս մարդանալոյ միածնին», «Պատասխանի ի վերայ երկոտասան գլխադրութեանցն՝ առ վերատեսուչս Արևելից», «Ընդդէմ Նեստորի ջատագովացն՝ երկոտասան գլխադրութեանցն նզովոցն», «Գիրք գանձուց» (սկ. «Ոչ ի փոքունս մեզ հանդէսս ճեպիլ պարտ է»), «Ճառ վասն եղման հոգւոյ և հանդերձեալ դատաստանին Քրիստոսի». Թղթեր՝ առ Նեստոր, Կելեստինոս Ա պապ, Հովհաննես Անտիոքացի, Ակակիոս Բերիացի և ուրիշներ։

ԿԻՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ, «Կոչումն ընծայութեան»։

ԿԻՐԻՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՐԱՑ, Թղթեր։

ԿԼԻՄԱՔՈՍ (Յովհ.), «Սանդուղք աստուածային ելից»։

ԿՂՈԴԻՈՍ ԳԱԼԼԻԱՑԻ, «Ապացուցութիւն ճշմարտութեան կրօնին քրիստոնէականի»։

ԿՈՄԻՏԱՍ ԱՂՑԵՑԻ, «Թուղթ Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի ի Պարսս» (կամ «Տեառն Կոմիտասու Հայոց կաթուղիկոսի վասն հաւատոյ», սկ. «Ամենայն բան ջանիւ»), «Թըղթոյն պատասխանի՝ զոր գրեցին Հայք յԵրուսաղէմ առ Մոդեստոս», «Կոմիտասի Հայոց կաթուղիկոսի և Պիռոսի արքեպատրիարգի հարցաքննութիւն և վիճաբանութիւն վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ» (սկ. «Պատրիարքն ասէ. Աստուած բնութեա՞մբ է, թէ դրութեամբ անուն»)։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՁՐԲԵՐԴԵՑԻ, «Թուղթ Կոստանդեայ կաթուղիկոսի Հայոց զոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապահ դղեկէն՝ ի հայրապետական աթոռոյն՝ Հռոմկլայէն, ի մայրաքաղաքն Սիս։ Պատասխանի թղթին որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում ի ձեռն լիկաթին որ կոչէր Տիմանչ, ի թուին Հայոց ի ՈՂԵ. ի ձեռն արդինական վարդապետին Վարդանայ յարմար իրիս» (սկ. «Սուրբ թագաւոր ամենայն Հայոց, յառաքեալ գրոյ քո ծանեաք զքոյին հրամանսն» կամ «Քրիստոսապսակեալ սուրբ թագաւորի... Յառաքեալ գրոյդ քո»), «Թուղթ տեառն Կոստանդեայ շրջաբերական» (սկ. «Ազդմամբ խնամոց ամենակալ հոգւոյն աստուծոյ»), «Սահմանք կանոնականք տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի» (սկ. «Կոստանդին ծառայ Քրիստոսի... Հրաման է այս առաքելադիր»), «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, զոր խնդրեաց ի մէնջ առաքելական հայրն մեր պապան Ինունցունցն, ի ձեռն խոհեմագոյն լիկաթին փրէր Տիմանչին, որ է ի կարգի (sic) Փրէր Մնուրացն» (սկ. «Բանիւք դուզնաքեայ իմն խօսելով»), «Դաւանութիւն, զոր գրեաց Հայոց եկեղեցին և տէր Կոստանդին կաթողիկոսն ի Կոստանդինուպոլսոյ ի պատրիարքն և ի ժողովն» (սկ. «Մեծի աստուծոյ եկեղեցւոյդ պատուական գլխոյդ Մանուէլի եպիսկոպոսապետիդ Կոստանդինուպոլսի»)։

ՀԱԲԵՐՏ (Լուդ.), «Համառօտութիւն վարդապետութեան հաւատոյ և բարոյական աստուածաբանութեան»։

ՀԱԲԻԲ ԲԵՐԻԱՑԻ։ Տես՝ ԱԲԻԲ (Հայր)։

ՀԵՐՈՆԻՄՈՍ ԼԵՀԱՑԻ, «Թուղթ վիճաբանական յաղագս սուրբ ուղղափառ հաւատոյ, վասն պատասխանատրութեան առ նորատպեալ գիրսն Օձնեցական հերձուածողաց, զորս կոչեցին ներածութիւն անուղղից և համառօտ հաւաքումն, ի Թուոյն փրկչին 1688, որ է Հայոց ՌՃԼԷ»։

ՀԻՒՊՈԼԻՏՈՍ ԲՈՍՏՐԱՑԻ, «Վասն կատարածի աշխարհիս և վասն Նեռինն և վասն միւսանգամ գալստեան Քրիստոսի աստուծոյ»։

ՀՌԵԳԻՆՈՍ ԿԻՊՐԱՑԻ, «Ճառ ասացեալ յեփեսոս, յետ ընկեցմանն Նեստորի»։

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ, «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի»։

ՄԱԹՈՒՍԱՂԱ ՍԻՒՆԵՑԻ, «Թուղթ առ Թագաւորն Հերակլ վասն հաւատոյ» (սկ. «Ամենաբարեպաշտ և բարեյաղթող»)։

ՄԱԿԱՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ, «Կանոնական Թուղթ ի Հայս՝ վասն կանոնադրութեան կաթուղիկէ եկեղեցւոյ կարգաց» են (սկ. «Ահա վասն ահի և երկիւղի Աստուծոյ»)։

ՄԱԿԱՐ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ, «Հարցմունք Տիգրոնու ամիրային»։

ՄԱՆՈՒԷԼ ԿՈՄՆԵՆՈՍ (կայսր 1143—1180 թթ.), Թղթեր՝ առ Գրիգոր Պահլավունի, Ներսես Շնորհալի և Գրիգոր Տղա։

ՄԱՆՈՒԷԼ ՍՐՄԱՔԵՇ ԿԵՍԱՐԵԱՆ, «Տետրակ որ կոչի Գաւազան կրկնազօր, որ է ուղղափառաց հաստիչ և յենարան, և հերձուածողաց ձաղկիչ և կրթարան», «Գիրք որ կոչի Լուծիչ տարակուսանաց», «Տետրակ որ կոչի Ակնոց աչաց սրտի»[1], «Գիրք որ կոչի Ակն լուսատու», «Գիրք որ կոչի Հիմն ստուգութեան»։

ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ, Թուղթ առ Գէորգ Գառնեցի կաթողիկոս։

[1] Այս գիրքը, որ անանուն է հրատարակվել, մենք նկարագրել ենք առանձին, տես աստ, հտ. Ա, էջ 510—511։

ՄԱՏԹԷՈՍ ՊԱՐԹԵՒ, «Գիրք որ կոչի Վեցօրեայ»։

ՄԱՐԳԱՐ ԽՈՋԵՆՑ ԵՐԵՒԱՆՑԻ, «Համառօտ որպիսութիւն եկեղեցւոյ»։

ՄԱՐՈՒԹԱ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ «Ի ԿՈՂՄԱՆՍ ԱՍՈՐՈՑ», «Գիր ուղղափառ հաւատոյ» (սկ. «Մեք մեղաւորք և կրթասերք»)։

ՄԱՐՔԱՆՏԻՈՍ (Յակոբ), «Պարտէզ հովուաց»։

ՄԱՔՍԻՄՈՍ ՓԻԼԻՍՈՓԱՅ, «Եթէ ո՞յց նշանակմունք սրբոյ եկեղեցւոյ ըստ աստուածայնոյն ժողովմամբ կատարեալք զետեղին»։

ՄԵԴԻԿԵԱՆ (Պօղոս) ՓԼՈՐԵՆՏԱՑԻ, «Թուղթ գրեալ առ Եբրայեցիս Իտալիոյ»։

ՄԵԹՈԴԻՈՍ ՊԱՏԱՐԱՑԻ, «Տեսիլ յաղագս անցելոյն, ներկայիս և ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» (սկ. «Ի վերջում դարի արմատաքի խլեսցի թագաւորութիւնն Պարսից»)։

ՄԵՄՆՈՆ ԵՓԵՍԱՑԻ, «Թուղթ առ կղերիկոսունս Կոստանդնուպոլսոյ»։

ՄԻՆԻԱԴԷՍ (Ե.), «Գիրք որ կոչի Վէմ գայթակղութեան»։

ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, «Յաղագս քահանայութեան» (կամ «Յաղագս քահանայական կարգաց», սկ. «Սկիզբն քահանայութեան»), «Դաւանութիւն» (սկ. «Դաւանեմ զնա՝ սուրբ և զուգափառ երրորդութիւն»), «Վկայութիւնք պատմողաբար և յանդիմանութիւնք վասն չարաժողովոյն Քաղկեդոնի» (սկ. «Յովհաննէս անուն»), «Սրբոյն Միխայէլի պատրիարգի Ասորոց, զոր առ հասարակ Քաղկեդոնականսն գրեաց» (սկ. «Ի ժամանակի, յորում Թագաւորեաց Պարսից Ազատճատ»)։

ՄԻՔԱՅԷԼ ՋԱՄՉԵԱՆ, «Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայոց» (կամ «Հաստատութիւն ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»)։

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏՐԻԱՐՔ ՅՈՒՆԱՑ Կ. ՊՈԼՍԻ [Գ] (1169—1177 թթ.), Թղթեր՝ առ Ներսէս Շնորհալի և Գրիգոր Տղա։

ՄԻՔԱՅԷԼ ՎՈՒԼԳԱՐԱՑԻ, «Վասն եօթն տիեզերական սուրբ սինհոդոսաց» (սկ. «Այլ շնորհք իմն»)։

ՄԽԻԹԱՐ ԱՊԱՐԱՆՑԻ, «Գիրք ուղղափառաց...» (կամ «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց ըստ կաթոլիկէ սուրբ եկեղեցւոյ ընդդէմ հերձուածողաց»)։

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ», «Թուղթ Մխիթար վրդ.ին որ Գոշն կոչիւր»։

ՄԽԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ, «Թէ զի՞նչ է պատճառ մարդեղութեան Բանին Աստուծոյ» (սկ. «Եւ հարկ էր եղանիլ տնօրէնութեանն խորհրդոյ»), «Յաղագս միութեան՝ բնութեան և ներգործութեան կրից մարդացելոյ Բանին Աստուծոյ» (սկ. «Բանն Աստուած որդին Հօր միածին մարդն Յիսուս Քրիստոս որ ետ զանձն» կամ «Ամենայն ումեք պարտ էր ողբակից և ձայնակից լինել»), «Թէ որ ինչ ի բնութիւնս մեր անկարելիք են և հարկաւորք, այնոքիկ արարչին արարածոց՝ տեառն և Յիսուսի Քրիստոսի կարելիք են և կամաւորք» (սկ. «Ծնանելն և մեռանելն և յառնելն ի մեռելոց»), «Վասն Յիսուսի աստուածութեանն» (սկ. «Յաղագս Յիսուսի աստուածութեանն օժանդակեալք»), «Յաղագս կամաւորական կրիցն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարդացելոյ Բանին Աստուծոյ» (սկ. «Եւ արդ ահաւասիկ պարտիմք աստանօր»), «Յաղագս ամենայն նուաստական կրիցն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (սկ. «Վասն զի զամենայն նուաստական կիրս բնութեամբ ունելով ի մեզ»), «Այլ բան յաղագս նուաստական կրիցն տեառն Յիսուսի Քրիստոսի» (սկ. «Յամենայն ներգործութիւնս նուաստական կրից»), «Յաղագս տնտեսութեանն խորհրդոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (սկ. «Խորհուրդք տնտեսութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ներգործական կրիցն երկակի գոլով»), «Յաղագս սրբոյ պատարագին և մեղսաքաւիչ խորհրդոյն» (սկ. «Ներգործական զօրութիւնք աստուածային հրաշիցն»), «Առ այնոսիկ որք խմոր և ջուր արկանեն յահաւոր խորհուրդ սրբոյ պատարագին» (սկ. «Որք միանգամ ճշմարտութեան սիրողք»), «Յաղագս երկրորդ գալստեանն տեառն Յիսուսի Քրիստոսի» (սկ. «Հաւատք սուրբ են»), «Վասն խոստովանութեան մեղանաց» (սկ. «Ճշմարիտ և հաւաստի է սահման խոստովանութեան»), են։

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան», «Պատճառք որք առբերին ընդդէմ նոցին, որք ասեն թէ ո՛չ երբեք պարտ է գնալ ուղղափառաց ի ժամն Հայոց», «Պատասխանատրութիւնք բանից ոմանց Հայոց, որք ասեն թէ վասն է՞ր Լատինացիք զմարմինն Քրիստոսի առանց տեսակի արեան տան ժողովրդեան»։

ՄԽԻԹԱՐ ՍԻՒՆԱԿԵՑԻ, «[Յաղագս գլխաւորութեան եկեղեցւոյն Հռոմայ]» (սկ. «Ուստի՞ ունի եկեղեցին Հռոմայ... Գիտեմ զի հարցանեն ընդ մեզ, թէ ո՞ ետ ձեզ զպատիւ զայդ»)։

ՄԽԻԹԱՐ ՍԿԵՒՌԱՑԻ, «Յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոցն, ընդդէմ այնոցիկ որք նուազ ասեն զմետասանսն իշխանութեամբ քան զՊետրոս» (սկ. «Անհասանելի և անծանօթ ծոցոյ ծնունդ»)։

ՄԿՐՏԻՉ ԱՒԳԵՐԵԱՆ, «Աստուածաբանութիւն», «Քաղուած դասառական աստուածաբանութեան, յօրինելոյ ի ժամանակի դասառութեան մետասաներորդ դասուն՝ ի կարգի աշակերտութեան մեծին Մխիթարայ աբբահօր», «Բովանդակութիւն բարոյական աստուածաբանութեան, քաղեալ ի համառօտութենէ Շարմէսի՝ ի ձեռն վ. հ. Մկրտիչ վ. Աւգերեան, յաւելմամբ ծանօթութեանց ինչ, 1789»։

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ, «Պատասխանի Լատինացւոց թղթոյն»։

ՄՈՎՍԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ, «Բան պատասխանատուութեան վասն ուղղափառ հաւատոյ ընդդէմ երկաբնակաց» (սկ. «Բնաւից բարեաց պարգևատու»), «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն, ի թուականիս Հայոց ՉԾԸ (=1309 թ.)» (սկ. «Որդիք մարդկան, մինչև յե՞րբ էք խստասիրտք»)։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, «Երանելի մեծի քերդողահօրն Մովսէսի՝ Խորենացի եպիսկոպոսի» (սկ. «Յաղագս ի յոլովից կատարեալ կենդանի»)։

ՄՈՎՍԷՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Յաղագս վիպաբանութեանց հարց և պատասխանի վասն

միութեան և երկուութեան և այլ բանք մեկնողականք» (սկ. «Աստուածաբանութիւն գիտութիւն և մակացութիւն էից»), «Համառօտ ժողովածու վասն առ ի պատրաստ գոլոյ ի պէտս մտառութեան և սերտողութեան բանասիրաց» (սկ. «Խորհուրդ մարմնոյ մահ է»)։

ՄՈՎՍԷՍ ՑՈՒՐՏԱՒԵՑԻ, «Թուղթ շրջագայական Մովսէսի եպիսկոպոսի [առ եկեղեցին Ցուրտաւայ]», «Պատճառք չորրորդ ժողովոյն երկաբնակացն, Մովսէսի Վրաց ուղղափառ եպիսկոպոսի». թղթեր՝ առ Վրթանես Քերթող, Աբրահամ Աղբաթանեցի և Սմբատ Բագրատունի Վրկանի մարզպան։

ՄՈՒՇԵՂ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, «Խնդիր տեառն Մուշեղի ընդդէմ Արիանոսի, Եւտիքեայ, Նեստորի և Քաղկեդովնի»։ Տես՝ ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ։

ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆ, «Գիրք՝ Լոյս հաւատոյ, յորում պարունակի յայտարարութիւն ամենասուրբ Երրորդութեան և մարդեղութեան Բանին Աստուծոյ»։

ՅԱԿՈԲ ԾՊԱՏԵՑԻ, «Խօսք ընդդէմ Խուսրովայ իմացմանցն»։

ՅԱԿՈԲ ԿԻԼԻԿԵՑԻ, «Յաղագս յանձին յատկութեան բան ինչ, խօսեցեալ Յակոբ վարդապետի, ի խնդրոյ պարոն Օշնի» (սկ. «Արդ՝ գիտել պարտ է, զի անձն ի գոյանալ անհատին էանայ»)։

ՅԱԿՈԲ ՂԱԶԱՐԵԱՆ ԲԵՐԻԱՑԻ, «Աստուածաբանութիւն»։

ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՑԻ, «Գիրք որ կոչի Զգօն»։

ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, «Գիրք կոչեցեալ Վէմ հաւատոյ», «Գիրք կոչեցեալ Քրիստոնէական ուսանելի», «Ծրագ ճշմարտութեան», «Գիրք եօթն խորհրդոց եկեղեցւոյ»)։

ՅԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Դաւանութիւն» (սկ. «Ըստ անշուշտ և անհրաժեշտ»)։

ՅԱԿՈԲ ՍԻՄՈՆԵԱՆ ԿԱՐՆԵՑԻ, «Հայելի ուղղափառ խոստովանութեան»։

ՅԱԿՈԲ ՍՐՃԵՑԻ, ճառեր։

ՅԱԿՈԲԻԿ ՇՆՈՐՀԱԼԻՑ, «Վիճաբանութիւն ընդ ամիրապետին և ընդ Հրէից»։

ՅԵՐՈԹԷՈՍ ԱԹԵՆԱՑԻ, «Առ ի յաստուածաբանականաց ստիքերոնաց» (կամ «Յաղագս աստուածաբանականացն տարրութեանց»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԳԼՈՍ, «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ բանականին և զօրութեանց նորին» (սկ. «Ասէ Արիստոտէլ ի գիրս Գ. հոգւոյն»), «Յաղագս առաքինութեանց հոգւոյն» (սկ. «Յետ ասելոյ չէութենէ հոգւոյն»), «Համառօտ հաւաքումն յաղագս հրեշտակաց» (սկ. «Ասէ երանելին Դիոնեսիոս ի Գիրս երկնային քահանայապետութեանցն» կամ «Նախ խնդրի թէ ամենևին են անմարմին»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ, «Ճառ ասացեալ ի Քաղկեդոն, յետ ճառիցն Թէոդորետոս եպիսկոպոսին և Ափթոնիոս իրիցոյն, վասն քաջալերեցուցանելոյ գիւղսն», «Վասն խաղաղութեան և միաբանութեան սրբոյ եկեղեցւոյն» են, թղթեր՝ առ Նեստոր, Կյուրեղ Աղեքսանդրացի և ուրիշներ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՋՐՈՒՄԵՑԻ, «Վասն հաւատոյ ընդդէմ աղանդոց և մոլորութեանց հերձուածողաց»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԲԵՂԵՆԱՑԻ, «Ի յայտնութիւն Քրիստոսի» (սկ. «Զգարնանային ժամանակի աւուրսն նշանակելով»)։ Նրա անվան հետ կապված երկու թղթեր նշել ենք վերևում՝ «Թուղթ զոր տէր Յովհաննէս Հայոց կթղ. և այլ եպս.ունք առ Սիւնեաց եպս.ն և առ տէրն արարին» և «Թուղթ զոր տէր Յովհաննէս Հայոց կթղ. և այլ եպս.ունք առ Աղուանից եպս.ունս արարին» (տես վերևում՝ §§ 116—117)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ, «Ի ստորոգութեանց հռետորիցն» (Ա—ԽԹ գլուխ), «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» (Ա—Ճ գլուխ), «Բանք յաղագս Հռովմայեցւոց, թէ ո՛րպէս եղեն անմիաբան ի սոցանէ չորից եկեղեցեաց» են (սկ. «Էր երբեմն զի հանդարտութիւն ունէր եկեղեցական անդորրութիւն»), «Պատասխանիք առ Հրէայսն» (սկ. «Յաստուածայինս զամենայն յաստուած վստահանալ պարտ է»), «Բանք վասն հաւատոյ և ընդդիմադրութիւն Նեստորի» (սկ. «Պարտ է մեզ փրկելոցս ի ձեռն միածնի»), «Բանք ընդդիմականք ի քակտումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց» (սկ. «Եւ ոչ բարին բարի է

ասեն»), «Վասն որ ի Քրիստոս երկու բնութեանց և այլ ամենայն բնութեանց ինքնութեանց համառօտեալ» (սկ. «Որք երկու բնութիւնս և մի անձն խոստովանեսցին»), «Պատասխանի առ Հայս համառօտեալ» (սկ. «Եւ արդ իմ մինչև ցարդ ես»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ, «Թուղթ առ Աբաս Աղուանից կաթողիկոս»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՄԻՒՌՆԱՑԻ, «Վկայութիւնք արդիւնականք և կարևորք յաղագս առ պատրաստ գոլոյ ի ձեռս բանասիրաց»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՄԱԴԱՆՑԻ, «Աղբիւր բաղձալի»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈԼՈՎ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, «Հայելի ճշմարտութեան, պարունակող մասնաւորի ուրուք ներկրթութեան ուղղափառի հաւատոյ ի պէտս Հայոց ճշմարտասիրաց», «Բացայայտութիւն իսկականի ճըշմարտութեան սակս խառնման ջրոյ ընդ գինւոյ՝ ի սրբազնութեան պատարագի», «Պատասխանատրութիւնք թղթոյ ուրումն ընդդիմադրականի գրեցելոյ յեղբարց ոմանց Հայկազունեաց» (կամ «Թուղթ ընդդէմ այնոցիկ որք հակառակին ճշմարտութեան, ասելով թէ բանն աստուած անհաղորդ է կրից մարմնոյն»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ կամ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻ, «Խրատ վարուց» (ժողովածու 26 ճառերի, որոնք հրատարակված են Հովհ. Մանդակունու անունով) և այլ ճառեր՝ «Յոհաննու Մայրագոմեցւոյ վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և որ ի նմա կարգաց» (սկ. «Քանզի հարկաւորեալ ի գերագոյն իմաստից հանճարոյ»), «Սրբոյն Յոհաննու Մարգոմացոյ (sic) ասացեալ վասն խոստովանութեան» (սկ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս ուսոյց մեզ»), «Յովհաննու Մայրավանեցւոյ (?) յաղագս պահոց» (սկ. «Պարկեշտութիւն առաքինութեան պարաւանդեալ»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, «Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի բնութիւն» (սկ. «Եւ քանզի առաքելականն և մարգարէիցն կտակքն»), և այլ ճառեր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՐՔՈՒԶ ՋՈՒՂԱՅԵՑԻ [ՍՊԱՀԱՆՑԻ], «Համառօտ աստուածաբանութիւն» (սկ. «Ամենայն բանականութեան անկ և պատշաճ է»), «Յաղագս շարամանութեան աստուածութեան ընդ մարդկութեան անձն բանին ընդ բնութեանս մարդկային» (սկ. «Վասն զի մակացուացն է զմակացելին մակացել»), «Կրթութիւն հաւատոյ» (կամ «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան ուղղափառ կաթողիկէ ընդհանուր Հայաստան եկեղեցւոյ»), «Մակացութիւն ճըշմարտութեան», «Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն» (կամ «Ճաշակեցէք»), «Վկայութիւնք համառօտաբար յաղագս պիտոյից աստուածաբանութեան և սակս բանաստեղծից բանասիրաց» (սկ. «Արդ նախ կարծեմք զիմաստունն մեծապէս»), «Վիճաբանութիւն ընդ պատրի Էլիային, որ եղև ընդ տառապեալ անարժան Յովհաննէս վարդապետիս ի թուին Հայոց ՌՃԼԵ (=1686 թ.) և յամսեանն դեկտեմբերի ԻԹ», «Յոհաննու բանի սպասաւորի առ Բարսեղ տրամաբան վիպի երկաբնակի՝ գրեցելոցդ պատասխանի», «Անպիտան Յովհաննէս վարդապետի թուղթ առ Լեհացի Ստեփաննոս վարդապետ, զոր գրեցաւ ի թուին ՌՃԼԸ (=1689 թ.), յունուարի ԻԵ», «Թուղթ առ Լուդովիկոս եպիսկոպոս լատին», «Գիրք պատմութեան... Վիճաբանութիւն առ Շահ Սլէմանն Պարսից»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԻԿԻԱՑԻ։ Տես՝ ՎԱՀԱՆ ՆԻԿԻԱՑԻ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ, ճառեր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ ԿԱԽԻԿ, «Հաւատոյ դաւանութիւն... առ կաթուղիկոսն ի տէր Կոստանդին ի թուին ՊԻԴ (=1375 թ.)» (սկ. «Յանեղ և յանպարագիր լուսոյն կնքեալ լոյս համասփիւռ»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ, «Յաղագս նշանակ հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն», «Ի խնդրոյ Գագկայ կրօնաւորի՝ յաղագս Քաղկեդոնականացն գլուխ ԺԸ», «Վասն պատկերաց», «Վասն մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց դարձեալ», «Առ որս պիղծ զմիս վարկանին և զանձինս ոչ արգելուն», «Յաղագս՝ եթէ ո՛չ է արժան ըստ մասին բաժանել զաստուածայնոց ձայնս ի վերայ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ոչ զառ ի յինքենէ գործս կամ կիրս», «Յաղագս՝ եթէ

որք չեն միանալոյն երկու ասեն բնութիւնս ի Քրիստոս», «Թէ զիա՞րդ չարչարեալ Բանն մարմին եղեալ և անչարչարելի մնացեալ» են, «Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ և անբաժանելի», «Հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիւր գիտութեան» են, «Յաղագս բնութեան Բանի և միաւորութեան», «Եթէ զիա՞րդ ասի մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան», «Յաղագս կամացն», «Յաղագս ներգործութեան», «Յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ և յայլ ժամանակս յարանց բղջախոհաց», «Նորին դարձեալ» (սկ. «Առաջնում քան զայս զոր խնդրեցեր մատենի՝ ըստ կարողութեան արարի ըստ բանին»), «Վկայութիւնք սրբոցն եթէ մի՛ բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՂԲՈՍԵԱՆ, «Ջատագովութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց, մեկնաբանութեամբ Մաշտոցին և Խորհրդատետրին, և աստուածաբանական քննութեամբք», «Քննութիւնք արարողութեանց եկեղեցւոյն Հայաստանեայց ի մատակարարութիւն սուրբ խորհրդոց», „Dissertazione polemico-critica sopra due dubbj di coscienza concernanti gli Armeni cattolici sudditi dell'Impero Ottomano", „Compendio storico di memorie cronologiche concernanti la religione e la morale della nazione armena suddita dell'Impero Ottomano", „Lettera d'un teologo pacifico ad un teologo amico, che gli chiedeva una breve informazione della causa armena".

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՍԵՑԻ (կթղ. 1203—1221 թթ.), Թուղթ առ Իննովկենտիոս Գ պապ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԱԿԱՆ, «Խրատ դաւանութեան» (սկ. «Հոգւովն խօսել զհոգւոյն»), «Վասն հոգւոյն» (սկ. «Հոգի մի է, զի Աստուած մի է»), «Պատճառք վասն առաջաւորաց պահոցն... վասն հակառակողացն և այպանողացն զսուրբ պահսն» (սկ. «Յոլովագոյնք են բանք»)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՌՆԵՑԻ, «Թուղթ առ միաբանեալ եղբարսն Հայոց», «Վիճաբանութիւն ի վերայ...» կամ «Գիրք ի վերայ երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս»։ Տես նաև ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԻԱՑԻ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ, «Ատենաբանութիւն», «Ընդդէմ Պաւղիկեանց», «Ընդդէմ Երևութականաց», «Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», «Սակս ժողովոց որ եղեն ի Հայս», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» (սկ. «Զաստուածային և զկենդանարար»), «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» (սկ. «Իսկ ի տուրնջեան որոշեալ սահմանք աղօթիցն»), «Ընդդէմ այնոցիկ, որ ապականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ և ջրոյ» (սկ. «Ահա յառաջագոյն ծանուցեալ»)։

ՅՈՎՆԱՆ [ԵՈՆԱ] (Յովհ. Մկ.), «Համառօտութիւն քրիստոնէական վարդապետութեան»։

ՅՈՎՍԷՓ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Քննիկոն»։

ՆԵՍՏՈՐ, Թղթեր՝ առ Կյուրեղ Աղեքսանդրացի, Կելեստինոս Ա պապ և ուրիշներ։

ՆԵՐԻՄԲԵՐԳԵԱՆՑ (Յովհ. Եւս.), «Գիրք անուանեալ Կշիռ ժամանակի»։

ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ, «Խնդիր տեառն Մուշեղի ընդդէմ Արիանոսի, Եւտիքեայ, Նեստորի և Քաղկեդովնի» (սկ. «Ճշմարտութիւն ամենայն ուրեք յայտնի»)։ Նրա անվան հետ կապված մի քանի նամակներ նշել ենք վերևում՝ «Թուղթ Ասորեաց ուղղափառաց ի Հայս», «Պատասխանի թղթոյն Ասորեաց», «Թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն», «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» և «Որոշումն Նեստորականացն ի սրբոյ եկեղեցւոյ» խորագրերի տակ (տես §§ 111—115)։ Նրան ուղղված երկու նամակներ նշել ենք ԱԲԴԻՇՈՅ ԱՍՈՐԻ անվան տակ (տես աստ, հտ. Ա, էջ 36—37, §§ 1 և 2)։

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, «Ատենաբանութիւն», «Հարցումն պատրիարքին [Յունաց] և պատասխանի սրբոյն Ներսէսի», «Գլխադրութիւնք Հռոմոց, զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան, ընդ որս և լուծմունք առ ընթեր եղեալ», «Սակս միաւորութեան բնութեանցն Քրիստոսի» (սկ. «Խոս-

տովանիմք յերկուց բնութեանց միացեալ»), «Բացայայտութիւն արարեալ դաւանութեան սուրբ հաւատոյն» (սկ. «Հաւատամք ի մի Աստուած...։ Ոյք պաշտելի և զհամաշխարհական հաւատամքս կարգացին»), «Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լևոն», «Պատասխանի Յուսկանն արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք», «Խորհրդածութիւն վասն ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյ, որ ի սուրբ Երրորդութիւն և ի տնօրէնութիւնսն Քրիստոսի», «Քննութիւն կարգաց եկեղեցւոյ, և բացատրալէս որոշումն արտաքուստ մտեալ ի սա նորաձևութեանց», «Դարձեալ վերստին խորութիւն նորաձևութեանց որ մտին յեկեղեցի, և քննութիւն պատուոյ և աշտիճանաց» ևն, «Որոշումն ինն դասուց աստիճանաց եկեղեցւոյ», և այլ գործեր։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» (սկ. «Բանիւք դուզնաքեայ իմն խօսելով»), «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ», «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ», «Թուղթ ընդհանրական» և այլ թղթեր, «Բան հաւատոյ» (սկ. «Խոստովանիմ Աստուած ըզՀայր», ոտանավոր), «Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց» (սկ. «Այրն անսկիզբն ասէ զԱստուած», ոտանավոր), «Դաւանումն ուղղափառ հաւատոյ» (սկ. «Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք»)։ Վերջինս սխալմամբ է վերագրվել Ներսես Շնորհալուն. տես՝ ՍԱՀԱԿ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՊԱՊ [Դ] (1288—1292 թթ.), Թուղթ առ Հեթում Բ թագավոր Հայոց։

ՇԱՐՄԷՍ։ Տես վերևում՝ ԹՈՎՄԱՍ ՔԱՐՄԵԱՆ։

ՈՐՈՍԻՈՍ [ԱԻՐԱԻՋԻՈՍ]։ Տես ստորև՝ ՕԳՈՍՏԻՆՈՍ ՀԻՊՊՈՆԱՑԻ։

ՊԵՏՐՈՍ ԱԲԵՂԱՅ ՀԱՅ, «Հաստատութիւն հաւատոյ ի Մայրն Տեառն Քրիստոսի» (արաբերեն)։

ՊԵՏՐՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ ԹԱՓԻՉ, Թուղթ (սկ. «Հաւատարմագունի և իմաստագունի... Օրհնեալ է Աստուած՝ որ ամենայն բարւոյ տուիչն է»)։

ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ, «Գիրք առաքինութեանց», «Գիրք մոլութեանց», «Յաղագս եօթն պարգևաց Հոգւոյն սրբոյ» (սկ. «Ետ պարգևս մարդկան»), «Յաղագս ութից երանութեանց», «Յաղագս պահպանութեան հինգ զգայութեանց» (սկ. «Զգայութիւնք և խորհուրդք»), «Յաղագս պահպանման լեզուի» (սկ. «Լռեցո զլեզու իմ ի չարութենէ»), «Հաւաքումն յաղագս տասն պատուիրանացն» (սկ. «Եթէ կամիս ի կեանս յաւիտենականս մտանել»)։

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ, «Գիրք որ կոչի Կշիռ արդարութեան»։

ՊԵՏՐՈՍ ԹԷՈԴՈՐՈՍԵԱՆ։ Տես՝ ԿԱՐԱՊԵՏ ԱՆԴՐԻԱՆԱՑԻ։

ՊԵՏՐՈՍ ԹԻՖԼԻՍԵՑԻ, «Վարդապետութիւն ճշմարտութեան»։

ՊԵՏՐՈՍ ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ ՔՈՒԹՈՒՐ, «Համառօտ գումարումն հաւաքաբանականի աստուածաբանութեան»։

ՊԵՏՐՈՍ ՄՈՆԳՈՍ։ Տես վերևում՝ ԱԿԱԿԻՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ։

ՊԵՏՐՈՍ ՋԱՀԿԵՑԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՋԱՀԿԵՑԻ, «Համառօտ և շահաւէտ քրիստոնէական վարդապետութիւն»։

ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵՑԻ, «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի», «Յաղագս հաւատոյ»։

ՊԵՏՐՈՍ ՔՈՒԹՈՒՐ։ Տես՝ ՊԵՏՐՈՍ ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ։

ՊԻՆԵԼՈՍ [ՊԻՆԵԼԵԱՆ] (Ղուկաս), «Գիրք յորում ընձեռի զհանդերձելոյ կենէ»։

ՊԻՈՍ ՊԱՊ [Դ] (1559—1565 թթ.), «Նոմոս հայրապետական»։

ՊԻՐՈՄԱԼԼԻ (Պօղոս), «Յաղագս երկուց բնութեանց Քրիստոսի՝ պատասխանի առ տէր Սիմովն Հայոց վարդապետ», «Յաղագս աւերածոյ Հայոց եկեղեցւոյն, հաւաքումն ի սրբոց հայրեպետացն Հայոց ազգին», «Յաղագս ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէական առ Շահ Աբբաս արքայն Պարսից» (կամ

«Հակաճառութիւն վասն հաւատոյ ընդ Պարսից շահին») և այլ երկեր:

ՊԻՔԻՈՍ (Պետրոս) ՏՐԵԲԱՑԻ, «Ջծննդենէ Աստուածածնին՝ ընդդէմ Հրէից գիրք երեք»:

ՊՂԱՏՈՆ ՌՈՒՍ, «Աստուածաբանութիւն քրիստոնէական»:

ՊՐՈԿՂՈՍ ԴԻԱԴՈՔՈՍ, «Շաղկապք աստուածաբանականք»:

ՊՐՈԿՂՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, «Թուղթ առ սուրբն Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբն Մաշտոց» (սկ. «Որանի որ հանապազորդ լինիցին») և ճառեր:

ՊՕՂՈՍ ԵՄԵՍԱՑԻ, «Ճառ ի վերայ ծննդեան տեառն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և թէ Աստուածածին է սուրբ կոյս Մարիամն, և թէ ո՛չ զերկու որդիս ասեմ, այլ մի՛ որդի ևն», «Ճառ յաղագս մարդեղութեան տեառն մերոյ ևն», և Թուղթ առ Կյուրեղ Աղեքսանդրացի:

ՊՕՂՈՍ ՆԱԽՋԵՒԱՆՑԻ, «Առ Շահ Աբաս Պարսից թագաւորն պատասխանի յաղագս հաւատոյ քրիստոնէից»:

ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑԻ, «Թուղթ ընդդէմ գրոյն Թէոփիստեայ՝ երկադաւան հայ-հոռոմ փիլիսոփային» (սկ. «Ո՞վ գրողդ գրոյս այսորիկ»), «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի» (սկ. «Աստուածային և մեծն առաքելոցն Պօղոս»), «Վերլուծութիւնք կարգաց եկեղեցւոյ» (սկ. «Որք զթագս արքայականս շքեղազարդ յօրինեալ ձեռնարկեն»), «Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց, դաւանութիւն ի սուրբ Երրորդութիւնն» (սկ. «Հաւատով խոստովանիմք, պաշտեմք»: Վերջինս սխալմամբ է վերագրված Պողոս Տարոնացուն. տես՝ ՍԱՀԱԿ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ:

ՍԱՀԱԿ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ ԱՐԱՃԱՑԻ, «Պայման-նամակ» (խորագրված՝ «Սրբասէր եպիսկոպոսաց Մանասէի» ևն, սկ. «Ջսահման հաւատոյ»):

ՍԱՀԱԿ ՁՈՐՈՓՈՐԵՑԻ, «Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն մերոց» (սկ. «Աստուածային իմաստութեամբն միայն զօրացեալ Հայաստանեայք»):

ՍԱՀԱԿ ՄԱԿՈՒԵՑԻ, «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» (սկ. «Բայց այժմ տեսցուք թէ յո՞րս բաժանի քահանայութիւն»):

ՍԱՀԱԿ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ, «Յաղագս դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» (սկ. «Հաւատով խոստովանիմք և դաւանեմք»): Այս գործը վերագրվել է նաև Պողոս Տարոնացուն և Ներսես Շնորհալուն:

ՍԱՀԱԿ ՄՌՈՒՏ, «Պատասխանի թղթոյն Փոտայ, գրեալ Սահակայ Հայոց վարդապետի, հրամանաւ Աշոտայ Հայոց իշխանաց իշխանի» (սկ. «Քահանայապետ զգօնացեալ»), «Հարցումն Աշոտայ իշխանին վասն մատաղի և պատասխանի Սահակայ Հայոց վարդապետի»:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ, «Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելոյ ի Սահակայ և ի Մաշտոցէ սուրբ վարդապետացն Հայոց», «Պատասխանի տեառն Սահակայ՝ թղթոյն Ակակայ», «Գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ»:

ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ, «Պատասխանի թղթոյն Թէոդորոսի մետրոպոլտի Մելիտենոյ, գրեալ հրամանաւ Խաչկայ Հայոց կաթուղիկոսի» (կամ «Տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի բան խոստովանութեան»), «Յաղագս առաջաւոր պահոցն», «Յաղագս քառասնեկի պահոցն»:

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, «Գիրք որ կոչի Պարտավճար»:

ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Արտադրութիւն վասն անձին մարդոյ» (սկ. «Մտաց ըղձալի ճշմարտութիւն»):

ՍԻՔՍՏՈՍ [ՔՍԻՍՏՈՍ] ՊԱՊ [Գ], «Թուղթ սրբոյն Քսիստոսի պապին առ Կիւրեղն Աղեքսանդրացին, յետ խաղաղութեան եղելոյ ի մէջ Կիւրղի և Յոհաննու», «Թուղթ նոյն Քսիստոսի պապին առ Յոհան Անտիոքացին»:

ՍԿՈՏՈՍ (Յովհ.), «Աստուածաբանութիւն»:

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՎՐԿԱՆԻ ՄԱՐԶՊԱՆ, «Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսին Ցուրտաւայ՝ ի Սմբատայ Վրկան

մարզպանէ»։ Տես նաև վերևում նշված երկու վավերագրեր. § 119՝ «Ձեռնարկ զոր խնդրեաց Սմբատ՝ Վրկան մարզպան». § 121՝ «Թուղթ տեառն Սմբատայ՝ Վրկան մարզպանի առ Կիւրիոն՝ Վրաց կաթուղիկոս»։

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻ, «Համառօտ ընձեռումն վիճաբանութեան ընդդէմ հերձուածողաց ազգին Հայոց։ Գիրք երեք։ Առաջինն կոչի Մաղախ փշրանաց, երկրորդն անուանի Կոչնակ ճշմարտութեան, իսկ երրորդն յորջորջի Խնդիր ուղղութեան», «Գիրք հակաճառութեան զոր արարեալ է տեառն Աղեքսանդրի արհիեպիսկոպոսի Ջուղայեցւոյ և պատասխանատրութիւն նորին Ստեփանոսի Դաշտեցւոյ առ հայրն իր սրբազանն»։

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք համառօտաբար՝ իբր սահմանօրէն արտադրեալք և հաւաքեալք ըստ այբուբենից»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Գիրք հակաճառական ընդդէմ պապականաց»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ ԿԱՄԵՆԱՑԻ, «Աստուածաբանութիւն բարոյական», „Theologia scholastica“.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ, եպս. Սիւնեաց 728 (կամ 734)—735, «Վասն անապականութեան մարմնոյն, որք ասեն թէ՝ որ աճէ և նուազէ, ապականացու է» ևն (սկ. «Աստուածազան գրեցեալ գիրք»), «Ընդդէմ հերետիկոսաց» (սկ. «Արդ՝ եթէ զինչ է բնութիւնս յատկապէս»), «Պատասխանի թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպոլսի» (սկ. «Յոգնապատիկ հռչակելի փառաւորութեամբ»), «Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի զոր վասն հաւատոյ գրեալն էր» (սկ. «Գերագունւոյ, առաւել իմաստութեամբ աստուածային գիտութեանն») և այլ երկեր։

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ՉԾԱ» (կամ «Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն Որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել» ևն)։

ՍՏՐԱՏԵԱՆՑ (Նիկողայոս), «Թուղթ առ համօրէն ազգն Հրէից»։

ՎԱՀԱՆ [ՅՈՎՀԱՆ]ՆԻԿԻԱՑԻ, «Թուղթ առ երանելի կաթուղիկոսն Հայոց Զաքարիա, վասն տօնի ծննդեան և յայտնութեան» ևն (սկ. «Աստուածային առաքեալն Պօղոս»)։ Նրա «Դաւանութիւն»-ը տես վերևում՝ § 51։

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ ՍԵՒԼԵՌՆՑԻ, «Խոստովանութիւն հաւատոյ յաղագս սրբոյ Երրորդութեանն և մի աստուածութեանն և փրկական տնօրէնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (սկ. «Հաւատամք և խոստովանիմք մի աստուածութիւն յերիս անձինս.»), «Ի մարդեղութիւնն Քրիստոսի» (սկ. «Զկնի ճառից անճառելի տէրունեանն»)։

ՎԱՐԴԱՆ ԱՂՈՒԱՆԵՑԻ, «Թուղթ պատասխանի ընդդէմ Հռոմայ պապուն, ի պատճառս դաւանութեան համաձայնելոյ»։

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ կամ ՄԱՐԱԹԱՑԻ, «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» (կամ «Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն՝ ընդդէմ հերձուածողաց հակաճառութիւնք»), «Հարցումն տէր Միքայէլի Անտիոքայ եպիսկոպոսի, թէ որպիսի՛ օրինակաւ է մարդս պատկեր Աստուծոյ, և պատասխանի Վարդանայ վարդապետին Այգեկցւոյն», «Պատմութիւն վասն անքուն որդանցն», «Վասն դժոխոցն թէ կա՛յ և ստո՛յգ է, և չէ՛ լոկ սպառնալիք» (տարբեր է նախորդից), «Վասն տասն համարոյ, որ է թիւ կատարեալ և խորհրդական», «Բանք ի խորհուրդ կատարման տասն թուին, որ է պատճառ կատարեալ և բարձրագոյն աստուածաբանութեան», «Ուղիղ դաւանութիւն հաւատոյ» (սկ. «Զաստուածութիւնն անճառելի») և այլ երկեր։

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, «Լուծմունք ի սուրբ գրոց» (Ժղլանք), ճառեր, ևն։ «Թուղթ պատասխանի ընդդէմ Հռոմայ պապուն, ի պատճառս դաւանութեան համաձայնելոյ»։

ՎԱՐԴԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆ, «Թուղթ քաջալերական առ ուղղափառս մերազնեայս որք ի քաղաքին Ետոկիա», «Յաղագս կարգաց և աստիճանաց եկեղեցւոյ» (սկ. «Եկեղեցի կոչի համանգամայն առումն»)։

ՎԻԼԼՈՏ (Յակոբ), «Մեկնութիւն դաւանութեան ուղղափառ հաւատոյ», «Քրիստոնէական վարդապետութիւն ի պէտս ճշմարտասիրաց Հայոց»:

ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ, «Յաղագս պատկերամարտաց», «Թուղթ շրջագայական», և այլ թղթեր՝ առ զանազանս:

ՏԻՄՈԹԷՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ, «Քննութիւն հաւատոյ Ահարովնի թագաւորին առ մեծ հայրապետն Տիմոթէոս՝ զանազան խորամանկութեանց պէսպէս հարցմունս, նոյնպէս և յուղղափառէ անտի զպատասխանիս լուեալ»:

ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», «Ընտրութիւնք յաղագս ապացուցութեան եօրեայ յարութեանն տեառն, եթէ ճշմարիտ է տէրն», «Երանելւոյ Յովհաննու ի համառօտագունիցն որ յառաքեալ, յաղագս յարութեան մեռելոց», «Յաղագս ոչ պարծել և ի բաց տալ իւրեանց զիմաստունս և զկարողս մարդկան իմաստութեամբ ամփարթամութեան, այլ գիտել, եթէ զամենայն յԱստուծոյ ունի զաղնիւն մարդ» են:

ՏԻՐԱՆ կամ ՏԻՐԱՆՈՒՆ, «Տիրաննոյ Հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի և Փիլպէի» (սկ. «Ընկալեալ զհրամանս և զխնդիրս ձեր»), «Հաւատոյ թուղթ Տիրանոյ Հայոց վարդապետի, զոր գրեաց առ Սինաքարիմ» (սկ. «Զկնի երկու բնութեանն ասողի»):

ՓԵԲՈՒՐ [ՓԵԲՈՒՐԵԱՆ] (Միք.), «Մանաւանդականք առարկութիւնք որք հասարակապէս սովորք են լինիլ ի Մահմետականաց, ի Յուդայեանց և ի Հերետիկոսաց Արևելականաց» (կամ «Վահան հաւատոյ ի դէմս Մահմետականաց, Յուդայեանց և Հերետիկոսաց Արևելականաց»):

ՓԻԼԻՊՊՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ, «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց՝ ըստ կաթողիկէ եկեղեցւոյ, զոր խնդրեաց Պօղոս աստուածաբան տոքտորն եկեալ դեսպան ի մեծափառ պապէն» (սկ. «Հաւատամք ըստ սրբազան հարցն յերկրպագելի»):

ՓԻԼՈՔՍԵՆՈՍ ՆԱԲՈՎԿԱՑԻ, «Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի, ի խնդրոյ տեառն Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի» (սկ. «Ստորագրութիւն իրացս եղելոց»): Տես նաև ԱԲՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ:

ՓՈՏ ՊԱՏՐԻԱՐՔ, «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթուղիկոս Հայոց՝ վասն երկու միաւորեալ բնութեանց մի անձնաւորութիւն գոլոյ» են (սկ. «Յաւերժահրաշից արանց»), «Պատճէն թղթոյն հայրապետին Կոստանդինուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխանն» (սկ. «Քաջայայտ բարետոհմութեամբ»):

ՔՍԻՒՍՏՈՍ ՊԱՊ: Տես՝ ՍԻՔՍՏՈՍ ՊԱՊ [Գ]:

ՕԳՈՍՏԻՆՈՍ ՀԻՊՊՈՆԱՑԻ, «Թուղթ սրբոյն Օգոստինոսի առ Կասուլանոս էրէցն, ընդդէմ Հռոմայեցւոյ ուրումն, որ գրեալ էր վասն պահելոյ զաւուրս շաբաթու», «Դիալակուս սրբոյն Օգոստինոսի առ Աւրաւզիուս»:

☒ *Ամենևին լիակատար չենք համարում աստվածաբանական և դավանաբանական նյութերի այս հաշվառումը: Լիակատար կարող է լինել միայն այն ժամանակ, երբ հայ մատենագրության լիակատար հաշվառումն ավարտված կլինի:*

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեկն էր ավանդավորական այն 16 գրքերից, որոնք ասորիների միջոցով Հայաստան էին մուծվել Զ դարի վերջերում և հայերենի թարգմանվել[1]: Այս գրվածքը Նոր Կտակարանի անվավերների շարքից էր[2]:

ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ

Տես՝ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ, «Գիրք աղօթից որ կոչի Աստուածաղերս»:

ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Տես՝ ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ, «Գիրք որ կոչի Աստուածանմանութիւն»:

---

1 Տես՝ աստ, հտ. Ա, էջ XXXIX.

2 Հմմտ. աստ, հտ. Ա, էջ 908, տող 15—16:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ

(Bibliae Sacrae Versio Armena)

Համաշխարհային գրականության գլուխ-գործոցներից մեկն է Աստվածաշունչ մատյանը, որի բազմաթիվ հին թարգմանությունների շարքում հայկականը բանասիրական համբավ է վայելում որպես «Թագուհի թարգմանութեանց»՝ սկսած ԺԸ դարից։ Հայկական թարգմանությունը, որը կատարվել է Ե դարում, մեսրոպյան տառերով գրի առնված առաջին երկն է և հանդիսանում է հայ գրավոր մշակույթի հնագույն հուշարձանը։

Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանության մասին տեղեկություններ են հաղորդում պատմական աղբյուրները՝ Ե դարի մատենագիրներ Կորյունը, Ղազար Փարպեցին և Մովսես Խորենացին. իսկ մեր ժամանակների բանասիրական գրականության մեջ թարգմանության պատմական հանգամանքների, նրա լեզվական, բնագրական և այլ հարցերի հետազոտության են նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ։

Աստվածաշունչ մատյանի հայկական թարգմանությունն ունեցել է որոշակիորեն երկու տարբեր հանգրվաններ, կամ, ինչպես ընդունված է ասել, եղել են երկու թարգմանություններ։ Դրանցից առաջինը, որը մասամբ ասորերեն և մասամբ հունարեն սկզբնագրերից կատարված թարգմանություն էր, պատկանում է հայկական տառերի գյուտից (405/406 թ.)[1] մինչև Եփեսոսի տիեզերական ժողովն (431 թ.) ընկած շրջանին. իսկ երկրորդը, որը նախորդի վերանայումն ու սրբագրումն էր Բյուզանդիոնից ձեռք բերված հունարեն բնագրերի հետևողությամբ, պատկանում է Եփեսոսի ժողովին անմիջականորեն հաջորդող տարիներին։

Առաջին շրջանում՝ Մեսրոպ Մաշտոցը Եդեսիայում տառերի գյուտն անելուց հետո՝ անցնելով Սամոսատ, որպեսզի այնտեղ հույն գեղագիր Հռոփանոսի ձեռքով այդ տառերը գծագրական ձևավորման ենթարկի, այնտեղ էլ իր աշակերտներից Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ միասին կատարեց Աստվածաշնչի գրավոր թարգմանության առաջին փորձը՝ սկսելով Առակաց գրքից, ինչպես պատմում է նրա կենսագիր Կորյունը. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զԳիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ ՛Ծանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ՛, որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի»[2]։

Այնուհետև Մեսրոպը վերադառնում է Հայաստանի մայրաքաղաք Վաղար-

---

[1] Երվ. Տեր-Մինասյան, «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին», Բանբեր Մատենադարանի. № 7, Երևան, 1964, էջ 25—48։

[2] «Կորիւն. Վարք Մաշտոցի» (հրատ. Մ. Աբեղյանի), Երևան, 1941, էջ 50։

Կորյունի բնագրի այս և հարակից մասերի վերաբերյալ կարևոր դիտողություններ տեսնել՝ Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք Ա, Երևան, 1944, էջ 87—89։

շապատ. սկիզբ է դրվում Հայաստանի լուսավորության մեծ գործին ոչ միայն դպրոցների հիմնադրմամբ և նորագյուտ տառերի ուսուցմամբ, այլև թարգմանական եռանդուն գործունեությամբ։ Առակաց գրքից հետո՝ Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների աշխատանքով հայացվում են Մովսեսի Հնգամատյանը, մարգարեական գրքերը, Պողոսի և առաքելական ուրիշ թղթեր, ինչպես և ավետարանները։ Այդ մասին է գրում դարձյալ Կորյունը. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և առաջադէմն Պօղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»[1]*։*

Սակայն Կորյունի վերոհիշյալ տվյալներն այս շրջանում թարգմանված գրքերի մասին ամբողջական պատկերացում չեն տալիս։ Այդ մասին լրացուցիչ տեղեկությունը մենք գտնում ենք Մովսես Խորենացու մոտ, որի համաձայն թարգմանության գործը Առակաց *գրքից հետո շարունակվել էր՝ «բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն և զնոր Կտակս»*[2]*։ Այս տեղեկության հիման վրա մենք պիտի ընդունենք, որ Խորենացին այստեղ 22 «յայտնի» գրքեր*[3] *ասելիս նկատի ունի Հին Կտակարանի կանոնը՝ ըստ եբրայականի։ Եբրայական կանոնի համաձայն, ինչպես բացատրված է Հերոնիմոս Ստրիդոնացու կողմից լատինական Վուլգատայի առաջաբանում* (Prologus galeatus), *Հին Կտակարանն ամփոփվում էր 22 գրքերի մեջ, ըստ որում* Դատաւորաց *գիրքը և* Հռութ-*ը կազմում էին 1 միավոր,* Թագաւորութեանց Ա *և* Բ *գրքերը՝ 1,* Թագաւորութեանց Գ *և* Դ *գրքերը՝ 1,*Երեմիայի մարգարէութիւն-*ն ու* Ողբ-*ը՝ 1,* Երկոտասան մարգարէից *գրքերը՝ 1,* Մնացորդաց Ա *և* Բ *գրքերը՝ 1,* Եզրի Բ *և* Գ (Նեեմի) *գրքերը՝ 1. իսկ հետևյալ գրքերը կազմում էին 1-ական միավորներ.* Ծնունդք, Ելք, Ղևտականք, Թիւք, Երկրորդ Օրէնք, Յեսու Նաւեայ, Եսայի, Եզեկիէլ, Յոբ, Սաղմոսք, Առակք, Ժողովող, Երգ Երգոց ,Դանիէլ *և* Եսթեր[4]. *որոնց գումարն անում էր 22։ Սրանք, զատ-զատ հաշվելով, այն 39 գրքերն են, որոնք հայկական այժմյան կանոնում անվանվում են* նախականոն *գրքեր։ Միայն պիտի նկատի ունենալ, որ Դանիելի Գ գլխի 24—90 համարները և ԺԳ ու ԺԴ գլուխներն ամբողջությամբ, ինչպես նաև Եսթերի Ժ գլխի 4 համարից մինչև ԺԶ գլխի 24 համարը, եբրայական կանոնում չկան, այսինքն՝* նախականոն *չեն. այդ հատվածները պատկանում են այսպես կոչված* երկրորդականոն *գրքերի շարքին։*

Վերոգրյալ՝ 22 գրքերից բաղկացած կանոնի ծագումը Հայաստանում՝

---

[1] *«Կորիւն. Վարք Մաշտոցի», էջ 56։*

[2] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Թիֆլիս, 1913, էջ 327։*

[3] *Մեր ձեռագրական աղբյուրներում* յայտնի *և* գաղտնի *կամ ծածուկ տերմիններով են նշվում Աստվածաշնչի* կանոնական *(վավերական) և* անկանոն *կամ* պարականոն *(անվավեր) կոչված գրքերը։ Այդ մասին մենք արդեն խոսել ենք ուրիշ առիթով. տես՝ Հ. Ս. Անասյան, «Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դդ.», հտ. Ա, Երևան, 1959, էջ X և 898—910։*

[4] *Տես Հերոնիմոս Ստրիդոնացու «Վասն ի քսան և յերկուս գիրս» են,* Հանդէս Ամսօրեայ, *1920, էջ 411—428։ Հերոնիմոսի ցուցակը լիովին համապատասխանում է եբրայական կանոնին. հմմտ.* „La Sainte Bible qui comprend l'Ancien et le Nouveau Testament traduits sur les textes originaux hébreu et grec par Louis Segond", nouv. ed., Paris, 1937.

անշուշտ ասորական Պեշիտտայից էր[1], որը պարսկական գերիշխանության սահմաններում հեղինակություն էր վայելում ասորական եկեղեցու ունեցած քաղաքականապես արտոնյալ դիրքի շնորհիվ։ Ըստ երևույթին՝ այսպիսի կանոնի որդեգրման հետևանքով է, որ անհրաժեշտ էր դարձել նաև Հերոնիմոս Ստրիդոնացու Առաջաբանի թարգմանումը, որը, ինչպես կարծվում է, պետք է տեղի ունեցած լինի Ե դարում հունարենից[2]։

Ինչ վերաբերում է Նոր Կտակարանին՝ նրա կազմի մասին Խորենացու տված տեղեկությունը որոշակի չէ։ Կորյունի վերոհիշյալ տեղեկությունն այդ մասին թեև ավելի որոշ է, բայց թերի է։ Կորյունից, ինչպես նշեցինք վերևում, միայն հայտնի է, որ թարգմանվել էին ավետարանները, Պողոսի թղթերը և առաքելական մյուս թղթերը. բայց թե առաքելական թղթերից որո՛նք էին ընդունելի համարվում այդ ժամանակ և Նոր Կտակարանի մյուս գրքերը ևս թարգմանվե՞լ էին, թե ոչ, անհայտ է մնում։

Այս մասում մենք պիտի առաջնորդվենք նորից Խորենացու թելադրածուցիով, ըստ որում՝ եթե Նոր Կտակարանի կանոնն էլ հարկ է որոնել ասորական եկեղեցու ազդեցության սահմաններում, ինչպես Հին Կտակարանինը, ապա պիտի նշել, որ մեսրոպյան տառերի գյուտի ժամանակաշրջանում ասորիների մոտ գոյություն ուներ չորս ավետարանների մի հին թարգմանություն, որը Բ դարի հունարեն անտիոքյան բնագիրն էր ներկայացնում և որն այժմ բանասիրության մեջ հայտնի է Եւանգելիոն դա-Մեփարրեշէ անունով։ Ռաբուլասը, որը Եդեսիայի եպիսկոպոս եղավ 411—435 թթ., այդ թարգմանությունը վերանայեց ու մոտեցրեց հունական անտիոքյան այն բնագրին, որն օգտագործման մեջ էր Ե դարի սկզբներին։ Ռաբուլասի կողմից վերանայված այս թարգմանությունը հիմք հանդիսացավ Նոր Կտակարանի ասորական այն խմբագրությանը, որը հայտնի է Պեշիտտա անունով և որի կազմը համալրվեց Ե դարի ընթացքում։ Անկախ այն խնդրից, թե հայերեն թարգմանությունները ո՛ր լեզվից էին կատարվել,— ասորերենի՞ց, թե հունարենից,— կանոնի հարցում անկասկած ենթարկված էին ասորականին, որի ներկայացուցիչը Պեշիտտան էր։ Նախնական Պեշիտտան ուներ միայն Նոր Կտակարանի նախականոն համարվող գրքերը, այսինքն՝ Աւետարան-ը, Գործք առաքելոց-ը, կաթողիկյա թղթերից երեքը՝ Պետրոսի Ա-ը, Յովհաննու Ա-ը և Յակոբ-ի թուղթը. ինչպես նաև՝ Պօղոսի Ա—ԺԴ թղթերը։ Նրա կազմում չկային առաքելական մյուս թղթերը և Յայտնութիւն-ը, որոնք երկրորդականոն համարվող գրքեր են. բացակայում էին նաև Ղուկասու ավետարանի ԺԲ գլխի 17—18 տները և Հովհաննու ավետարանի Ը գլխի 1—11 տները[3], որոնք երկրորդականոն մասեր են։ Ապահովաբար այս պատկերն ուներ Նոր Կտակարանի կանոնը նաև Հայաստանում։

Այսպիսով՝ Հին և Նոր Կտակարանների հիմնական մասերը հայացվել էին հայկական թարգմանությունների այս առաջին շրջանում, և դա է, որ օգտագործման մեջ էր Հայաստանում մինչև Եփեսոսի տիեզերական ժողովը։

Թարգմանության երկրորդ շրջանն ընկնում է, ինչպես նշեցինք, Եփեսոսի ժողովին հաջորդող տարիներին։

---

[1] *Եբրայական կանոնի նման՝ Նախնական Պեշիտտան ևս չուներ Յոթանասնից բնագրի պարունակած երկրորդականոն գրքերը։* Rubens Duval, „La littérature syriaque", 3e éd., Paris, 1907, p. 30.

[2] *Տե՛ս Արիստ. Վարդանյան, «Յերոնիմեայ վասն ի քսան և յերկուս գիրս առ ի Հեբրայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ», Հանդէս Ամսօրեայ, 1920, էջ 385—428։ Ն. Ակինյան, «Դասական հայերէնը և Վիեննական Միխիթարեան դպրոցը», Վիեննա, 1932, էջ 38։*

[3] *Նոր Կտակարանի ասորական խմբագրությունների և հատկապես Պեշիտտայի մասին տես՝* Rubens Duval, „La littérature syriaque", p. 37—42.

Այս շրջանի գործունեությունը կայանում էր նախկինում կատարված թարգմանությունները վերանայելու և պակասները լրացնելու մեջ։

Նախկին թարգմանությունները, մեր աղբյուրների հաղորդման համաձայն, համարվում էին «փութանակի»՝ շտապ կատարված անբավարար թարգմանություններ։ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Բյուզանդիոնից բերում են Հին և Նոր Կտակարանների վավերական օրինակներ, որոնց հիման վրա ձեռնարկվում է նոր աշխատանքի կազմակերպումը։ Խոսելով այդ մասին՝ Կորյունն ասում է, որ «երանելւոյն Սահակայ ... առեալ հանդերձ Եղնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնն՝ հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք»[1]. իսկ Խորենացին ասում է, որ վավերական օրինակներն ստանալուց հետո՝ «առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ»[2]։ Ի հարկե՝ հասկանալի է, որ այդ աշխատանքին մասնակցում են մի խումբ թարգմանիչներ։

Բյուզանդիոնից բերված հունարեն բնագրերը, աղբյուրների օգտագործած տերմիններով, հանդիսանում էին ճաստատուն, ճշմարիտ և ստոյգ օրինակներ։ Դրանք Բյուզանդական Եկեղեցում Հին և Նոր Կտակարանների պաշտոնապես ընդունված այն բնագրերն էին, որ 311 թ. Կոստանդիանոս Մեծի պատվերով Եվսեբիոս Կեսարացին Կ. Պոլիս էր ուղարկել Պաղեստինյան Կեսարիայից։

Հին Կտակարանի կեսարական-բյուզանդական այդ օրինակներն ուրիշ բան չէին, եթե ոչ հունական աշխարհում ընդունված Յօթանասնից բնագիրը, որի կանոնը, բացի այն 39 նախականոն գրքերից, որոնք ասորական Պեշիտտայի կանոնն էին կազմում, ընդգրկում էր նաև այսպես կոչված երկրորդականոն գրքերը՝ Եզրի Ա, Յուդիթ, Տովբիթ, Մակաբայեցւոց Ա—Դ, Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Բարուք. ինչպես նաև Դանիել-ի և Եսթեր-ի գրքերի այն մի քանի հատվածները, որոնք բացակայում էին Պեշիտտայի կանոնում[3], ինչպես նշեցինք վերևում։ Յոթանասնից կանոնի այս գրքերն էին, որ նոր թարգմանվեցին հայերենի[4], ըստ երևույթին՝ բացառությամբ Մակաբայեցւոց Դ գրքի, որի թարգմանության հետքեր չեն նկատվել հայ մատենագրության մեջ. իսկ Թուղթ Երեմիայ առ գերեալսն ի Բաբիլոն գիրքը, որի հին թարգմանությունը հասել է մեզ, կարող էր կցված լինել Բարուք-ին։

Նոր Կտակարանը ևս վերանայվեց և լրացվեց նոր թարգմանություններով։ Եթե նախորդ շրջանում, Պեշիտտայի հետևողությամբ, թարգմանվել էին միայն նախականոն կոչված գրքերը, այժմ, հետևողությամբ Բյուզանդիոնից ստացված վավերական օրինակների, որոնք հենվում էին Եվսեբիոս Կեսարացու կազմած

---

[1] «Կորիւն. Վարք Մաշտոցի», էջ 76։

[2] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 343։

[3] Հմմտ. „The Old Testament in Greek according to the Septuagint; edited ... by Henry Barclay Swete“, vol. I—III, Cambridge, University Press, 1887—1894.

[4] Որպես բացառություն՝ Դանիելի գրքի թե՛ նախկինում թարգմանված մասերի վերանայումը և թե՛ նոր մասերի թարգմանումը եղել է ոչ թե հունարեն Յոթանասնից թարգմանության հիման վրա, այլ Թեոդոտիոնի հունարեն թարգմանության, որովհետև այդ գրքի Յոթանասնից հունարենը քրիստոնեական աշխարհում անհաստատ համարվում էր շատ թերի. տես և հայկականի հետ հմմտ. Յոթանասնից և Թեոդոտիոնի բնագրերը զուգահեռաբար՝ „The Old Testament in Greek according to the Septuagint“, vol. III, p. 498—593.

կանոնի վրա[1], թարգմանվում էին նաև մի քանի երկրորդականոն գրքեր, այսինքն՝ Պետրոսի Բ թուղթը, Յովհաննու Բ և Գ թղթերը, ինչպես և Յուդայի թուղթը։ Դուրս էր մնում դարձյալ Յայտնութեան գիրքը, որն այս շրջանում դեռ ճանաչում չուներ ինչպես ասորական եկեղեցու, այնպես և բյուզանդականի պաշտոնական կանոնում[2]։

Այսպիսով՝ Հին և Նոր Կտակարանների հայերեն թարգմանությունները պաշտոնական կանոնների վրա էին հիմնված թե՛ նախեփեսոսյան շրջանում (պեշիտտայական-ասորական կանոն) և թե՛ հետեփեսոսյան շրջանում (կեսարական-բյուզանդական կանոն)։ Աստվածաշունչ մատյանը, ինչպես ամեն տեղ, այնպես և Հայաստանում, չէր պատկերացվում առանց կանոնի. այդ պատճառով էլ Ղազար Փարպեցին իր հայտնի թղթում, իր ժամանակի տգետներին մեղադրելիս, նշում էր, որ նրանք Աստվածաշնչի գրքերի անուններն ու թիվն անգամ կարգին չգիտեն[3]։

Այս փաստերի արդյունքն այն էր, որ Ե դարի առաջին կեսում հայերն ունեին երկրորդ՝ վերանայված ու լրացված թարգմանությամբ կանոնյալ Աստվածաշունչ մատյանը, որի բնագիրը հասել է մինչև մեր օրերը և հանդիսանում է հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը։ Սույն ընկալյալ բնագրի օգնությամբ կատարված բանասիրական հետազոտությունները հնարավորություն են տվել մի կողմից թարգմանական որոշ բնագրերի մեջ հաստատելու թարգմանությունների առաջին շրջանում օգտագործված ասորերեն և հունարեն սկզբնագրերի առկայությունը, և մյուս կողմից որոնելու հայկական բնագրերի առնչությունները իրենց սկզբնագրերի հետ։

Կրկնակի թարգմանությունների հարցում՝ Հին Կտակարանի կապակցությամբ Հովհաննես Զոհրապյանը 1805 թ. նշում էր, որ ձեռագրերում նկատելի են Սռակաց, Ժողովողի և Երգ-երգոցի այլևայլ թարգմանություններ[4]։

Հենվելով բնագրական ցուցումների վրա՝ Ժողովողի գրքի կրկին օրինակների գոյության փաստի մասին ուշադրություն են հրավիրել նաև Ներսէս Բյուզանդացին[5] և Ն. Ակինյանը[6]։ Վերջինիս կարծիքով Ժողովողի գրքի ինչպես սրբագրված (երկրորդ թարգմանության) օրինակը, այնպես և սկզբնական (առաջին թարգմանության) օրինակը հունարեն բնագիր է ցույց տալիս։ Ծովականը (Նորայր Պողարյան) Ժողովողի բնագրի մասին համեմատություններ է կատարել Ոսկան Երևանցու[7] և Հ. Զոհրապյանի[8] հրատարակած բնագրերի միջև, որից և հանգել է այն համոզման, թե «մեր առջև ունինք Ժողովողի երկու հին և ուղղոյն թարգմանութիւններ»[9]։

---

[1] Եվսեբիոս Կեսարացու նորկտակարանային կանոնի մասին տես՝ Ֆր. Մուրադի ներածությունը հետևյալ հրատ. մեջ. «Յայտնութիւն Յովհաննու, հին հայ թարգմանութիւն, գառաջինն ած ի լոյս... Ֆրէտէրիք Մուրատ», Երուսաղեմ, 1905—1911, էջ ՄԺԸ—ՄԻԵ։

[2] Անդ, էջ ՄԺԳ—ՄԼԳ։

[3] «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի), Թիֆլիս, 1904, էջ 201։

[4] «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց» (հրատ. Հովհ. Զոհրապյանի, միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 6։

[5] Ներսէս Բյուզանդացի, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Թիֆլիս, 1900, էջ 384, ծան.։

[6] Ն. Ակինյան, «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը», Հանդէս Ամսօրեայ, 1935, էջ 560—561։

[7] «Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց ներ պարունակող», Ամստերդամ, 1668, երկրորդ մասի էջ 146—188։

[8] «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց» (միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 453—459։

[9] Ծովական, «Ժողովողի հին հայ թարգմանութիւնները», Սիոն, 1936, էջ 45—48։

Հ. Ոսկյանը Երգ-երգոցի սովորական բնագրի հետ միասին լույս է ընծայել մի նոր օրինակ, որը համարվում է առաջին շրջանի թարգմանություններից և ցույց է տալիս հունարեն սկզբնագիր[1]։ Տիրայր վարդապետը ուշադրություն է հրավիրել Եզեկիելի մարգարեության մի տարբեր թարգմանության վրա, որն անծանոթ է մնացել մինչև այժմ[2]։

1890-ական թվականներին Գրիգոր Խալաթյանցի հրատարակությամբ գիտական աշխարհին հայտնի դարձան Մնացորդաց Ա և Բ գրքերի այնպիսի օրինակներ, որոնք տարբերվում են սովորական բնագրից և ընդունվեցին որպես ասորերենից կատարված հին թարգմանության մնացորդներ[3]։

Այսօր հայտնի է, որ Սիրաքը ևս գոյություն ունի հնագույն երկու թարգմանություններով. դրանցից մեկը Զոհրապյանի հրատարակածն է[4], իսկ մյուսը՝ Ս. Բագրատունու[5]։ Բագրատունին ինքը՝ այս երկու բնագրերը համարել է սահակ-մեսրոպյան շրջանի առաջին և երկրորդ թարգմանություններ[6]։ Այս կարծիքին է նաև Ն. Ակինյանը[7]։ Ի հարկե՝ այնքանով, որքանով հայտնի է, թե նախեփեսոսյան թարգմանությունների շարքը, ինչպես տեսանք վերևում, միայն նախականոն գրքերն էր ընդգրկում, նրանց մեջ չէր կարող գտնվել Սիրաքը. սակայն բացառված չէ, որ մեր թարգմանիչներն արտականոն որոշ գրքեր ևս թարգմանած լինեն, այդ թվում նաև Սիրաքը։ Այդպիսի փաստեր մենք ունենք նաև Նոր Կտակարանի թարգմանություններից, օրինակ՝ Կորնթացվոց Գ թուղթը և նրա պատասխանը, որոնք Պ. Ֆետտերի կողմից համարվել են ասորերենից կատարված թարգմանություններ նախեփեսոսյան շրջանում[8]։

---

[1] *Հ. Ոսկյան, «Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանութիւնը. Ուսումնասիրութիւն և բնագիր», Վիեննա, 1924։*

[2] *Օքսֆորդի* Bodl. Libr. Arm. Ms. E. 35 *պարունակում է «Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ ի մարգարէն Եզեկիէլ» (էջ 2ա—120բ)։ Եզեկիելի այստեղ օգտագործված բնագիրը Զոհրապյանի հրատարակածից տարբեր բնագիր է ներկայացնում։ Տիրայր վարդապետը, որ տվել է նրա նկարագրությունը* (Tirayre Wardapet, „General catalogue of the armenian manuscripts in the Bodleian Library at Oxford", *անտիպ, Երևանի Պետ. Մատ., Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 121, վավ. 1ժէ և 1ժը, էջ 1534—1629), ընդարձակ համեմատություններ է կատարել երկու բնագրերի միջև։ Որպես նմուշ տալիս ենք այս հատվածը (Եզ. Ա. 4). «... և ի միջի նոցա որպէս տեսիլ ական բազմագունի ի մէջ հրոյն՝ և ճառագայթ ի նմա։ Եւ որպէս նմանութիւն չորից կենդանեաց. և այս տեսիլ նոցա. նմանութիւն մարդոյ ի վերայ նոցա։ Չորք թեք միոյ. և Դ. թեք միոյ։ Եւ կարգք նոցա յղորդք. և թեւոր ոտք նոցա։ Իսկ թեւոր ոտք. և արագունք ոտք՝ և կայծակունք. որպէս պղինձ որ փայլատակէր յորժամ սուրբ և ջինջ իցէ»։*

[3] *Գր. Խալաթյանց, «Մի կարևոր գիւտ Ս. Էջմիածնի Մատենադարանում. Ա և Բ Մնացորդաց գրքերի ասորերէնից հայ թարգմանութիւնը», Արարատ, 1896, էջ 311—317։ Նույնի «Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան», Մոսկվա, 1889։*

[4] *«Աստուածաշունչ մատեան» (միհատորյակ), Վենետիկ, 1805, հավելվածի էջ 2—12։*

[5] *Հրատարակվել է նախ առանձին՝ «Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ի Բաբիլոն», Վենետիկ, 1833, էջ 11—153. և ապա՝ Աստվածաշնչի կազմում՝ «Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 681—704։*

[6] *Տես վերոհիշյալ «Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ի Բաբիլոն», էջ 6—8։*

[7] *Ն. Ակինյան, «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը», էջ 559 և 561։*

[8] *«Հայկական ուսումնասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի, ի մի ամփոփուած և թարգմանուած» (հրատ. Հ. Տաշյանի), Վիեննա, 1895, էջ 142—193։*

Նոր Կտակարանի այժմյան՝ ընկալյալ բնագրում ևս բանասիրությունը նշել է ասորերենի բազմաթիվ հետքեր։

Ֆ. Կ. Կոնիբիրը ասորերենից կատարված հին թարգմանությունների մի բեկոր է համարում Մարկոսի ավետարանի վերջի 9—20 տները, այն հատվածը, որը կրում է Արիստոն Երիցու անունը[1]։

Ֆ. Մակլերը, հայերեն ավետարանի հատվածներ համեմատելով հունական և ասորական բնագրերի հետ, դիտել է տալիս ասորականի հետ մոտիկության կամ համաձայնության կետեր՝ դրանք համարելով ասորերենից կատարված հնագույն թարգմանության մնացորդներ[2]։

Ավգ. Մերկը հայերեն ավետարանների մեջ մատնացույց է արել ասորաբանություններ, որոնք, նրա կարծիքով, կարող են լինել ասորերենից կատարված մի նախկին թարգմանության մնացորդները, եթե չենթադրենք, որ հունարեն բնագրից թարգմանողը ձեռքի տակ ունեցել է նաև մի ասորերեն բնագիր՝ որոշ համեմատությունների համար[3]։

Այս խնդրում օժանդակ նյութեր է տալիս նաև Աստվածաշնչի վրացերեն հնագույն թարգմանության բնագրական հետազոտությունը։ Հայտնի արևելագետներ Ն. Մառի, Հ. Գուսենի, Ռ. Բլեյկի, Կ. Լեյկի, Ս. Նյուի, Ս. Լիոնեի, Ժ. Գարիտի, Լ. Լըլուարի, Ժ. Կյուանդեի և այլոց հետազոտությունները ցույց են տվել, որ վրացերեն Աստվածաշունչը սկզբնաբար հայերեն բնագրից է թարգմանված եղել։ Նորագույն ուսումնասիրությունները նրա առանձին գրքերում բացահայտել են նաև հունաբանություններ, ասորաբանություններ, նույնիսկ եբրայական բնագիր վկայող երևույթներ[4]։ Ամփոփելով վրա-

---

1 F. C. Conybeare, „Ariston, the Author of the Last Twelve Verses of Mark", *The Expositor*, 4th series, vol. VIII, 1893, p. 241—254. Idem, „The Authorship of the Last Verses of Mark", *The Expositor*, 4th series, vol. X, 1894, p. 219—232. Idem, „On the Last Twelve Verses of St. Mark's Gospel", *The Expositor*, 5th series, vol. II, 1895, p. 401—421.

2 F. Macler, „Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arménie turque (Juillet—Octobre 1909)", Paris, 1911, p. 24—27. Idem, „Le texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc", Paris, 1919.

3 Aug. Merk, „Die armenischen Evangelien und ihre Vorlagen", *Biblica*, VII, 1926, S. 40—72.

4 Մենք կարծում ենք, որ վրացերենում եբրայական բնագիր վկայող երևույթների ծագումը նույնպես պետք է բացատրել հայերենի միջնորդությամբ։ Մի ժամանակ հայերեն բնագրի կապակցությամբ ևս ոմանք տարվել էին եբրայական բնագրի երևույթներով, բայց դա խաբուսիկ էր։ Անդրադառնալով այդ հարցին՝ մենք նշել ենք, որ այդ երևույթը շատ հասկանալի և բացատրելի է՝ ո՛չ թե եբրայական բնագրի ուղղակի շփմամբ, այլ մեր թարգմանության բնագրի պատմական զարգացման երկու հանգամանքներով.

ա. Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը Ե դ. սկզբներին ասորական Պեշիտտայից էր կատարվել և որքան էլ հետագայում այդ թարգմանությունը վերանայվել ու սրբագրվել էր Կ. Պոլսից բերված հունական բնագրի հիման վրա, այնուամենայնիվ նրա մեջ շատ բան էր մնացել ասորականի հետքերից, իսկ ասորական Պեշիտտայի Հին Կտակարանը եբրայերենից էր թարգմանվել։ Մեր Հին Կտակարանի այժմյան բնագրում գտնվող այն ընթերցումները, որոնք մոտիկ են եբրայականին, մասամբ կարող են ծագած լինել այս ճանապարհով։

բ. Հայտնի է, որ նույն Ե դ. հունական օրինակի հիման վրա վերանայված ու սրբագրված հիշյալ թարգմանությունը ժամանակի ընթացքում որոշ ուղղումների է ենթարկվել հետևողությամբ հունարեն ուրիշ բնագրերի, որոնց թվում և Որոգինեսի Քառիջյանի, իսկ Քառիջյանը հաշվի էր առել նաև եբրայական բնագրի հունարեն այն թարգմանությունները, որ կատարել էին Ակյուղասը, Սիմաքոսը և Թեոդոտիոնը. վերջիններիս անունները հաճախ նշանակված ենք գտնում Հին Կտակարանի հայերեն ձեռագիր շատ օրինակնե-

ցագիտության նվաճումներն այդ բնագավառում, Կ. Կեկելիձեն եզրակացնում է, որ վաղաժամ է կտրուկ եզրակացություններ անել, բայց կասկածի չի ենթարկում հայերեն սկզբնագրի գոյության փաստը[1]*։ Առհասարակ Ե—Ը դարերի վրացական մատենագրությունը թարգմանություններ կատարում էր գերազանցապես հայերենից։ Հետագայում, հատկապես Ժ դարից, սկսում են ոչ միայն գերադասել հունարենից կատարվող թարգմանությունները, այլև վաղուց արդեն հայերենից կատարվածը վերանայել ու խմբագրել ըստ հունական օրինակների։ Այս կերպով՝ նաև վրացերեն սուրբգրական հնագույն թարգմանությունը ևս, որ հիմնականում հայերենից էր կատարվել, սրբագրության էր ենթարկվել հունական բնագրերի հիման վրա։ Այնու հանդերձ՝ բանասիրությունն այսօր հայտնաբերում է հայկական սկզբնագրերի հետքերը։ Աստվածաշնչի վրացերեն հնագույն թարգմանություններն այնքան հարուստ են հայկաբանություններով և հայերենին այնքան աղերսվող, որ բանասիրության մեջ փորձ է արվում նրանց օգնությամբ վերականգնելու հայերեն հնագույն բնագրի առանձին հատվածներ, այնպիսի հատվածներ, որոնք մեզ հասել են միայն հետագայում վերանայված վիճակում*[2]*։*

Գալով ասորականի հարցին՝ նշենք, որ Ն. Մառը դեռ անցյալ դարի վերջերին վրացերեն Հին և Նոր Կտակարանների հնագույն օրինակների՝ուսումնասիրությամբ եկել էր այն եզրակացության, որ նրանց հիմքում ակներևորեն առկա են ասորական ծագում ունեցող հայերեն բառեր[3]*։ Ռ. Բլեյկը ևս, Մարկոսի ավետարանի ուսումնասիրությամբ, գտնում է, որ վրացերենը գալիս է ասորերենից առաջացած հայերեն մի բնագրից*[4]*։ Նմանապես, Ժ. Գարիտի ուսումնասիրության համաձայն, գոյություն ունեն Գործք առաքելոցի վրացերեն օրինակներ, որոնք կապ ունեն ասորերեն մի բնագրից թարգմանված հայերենի հետ*[5]*։*

Վրացական թարգմանությունների հետ կապված նման փաստեր դեռ շատ կան, նրանց թվում նաև այնպիսիներ, որոնք մատնացույց են անում ոչ միայն ասորերենից թարգմանված հայերեն բնագրեր, այլև հունարենից թարգմանված

բի լուսանցներում։ Հետևում է՝ հայերեն այժմյան բնագրում գտնվող այն ընթերցումները, որոնք մոտիկ են եբրայականին, մեծ մասամբ կարող են եկած լինել Քառիցյանից։

Տե՛ս Հ. Ս. Անասյան, «Էջմիածնի տպարանի սուրբգրական հրատարակությունները», Էջմիածին (ամս.), 1972, № 12, էջ 87—88։

[1] კორნელი კეკელიძე, „ქართული ლიტერატურის ისტორია", I, თბილისი, 1960, გვ. 411—428.

[2] Н. Я. Марр, „Заметки по текстам св. Писания в древних переводах армян и грузин", *Христианский Восток*, т. II, вып. II, 1913, стр. 163—174. Его же, „Эчмиадзинский фрагмент древнегрузинской версии Ветхого Завета", там же, т. II, вып. III, 1913, стр. 378—379. *Հմմտ. Պ. Մուրադյան, «Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից (Ս. Գրոց թարգմանությունը)», Էջմիածին (ամս.), 1966, № 11—12, էջ 51—58։*

Պետք է ասել, որ վերջին տարիներին ի հայտ բերվեցին վրացերեն «խանմետյան» հնագույն խմբագրության պատառիկներ, որոնց համեմատությունից պարզվեց, որ աստվածաշնչական գրքերը վրացերենում բազմիցս վերանայվել ու խմբագրվել են։ Վերջնական կանոնացված խմբագրությունը պատկանում է Գեորգ Սուրբսարեցուն (ԺԱ դ.)։

[3] Н. Я. Марр, „Из поездки на Афон", *Журнал Министерства Народного Просвещения*, ч. CCCXXII, 1899, № 3, отд. 2, стр. 12—15.

[4] R. P. Blake, „The Old Georgian Version of the Gospel of Mark", *Patrologia Orientalis*, vol. XX, 1928, p. 439—574.

[5] G. Garitte, „L'ancienne version géorgienne des Actes des Apôtres d'après deux manuscrits du Sinaï", Louvain, 1955. (Bibliothèque du Muséon, 38).

հայերեն բնագրեր, որոնք պատկանում են հայկական թարգմանությունների նախեփեսոսյան շրջանին։

Հայկական կրկնակի թարգմանությունների հարցից[1] հետո ուսումնասիրությունները բավականաչափ լույս են սփռել նաև հայկական թարգմանությունների հիմք ծառայած սկզբնագրերի հարցի վրա։ Այս հարցում պետք է հիմնականում նկատի ունենալ Հին և Նոր Կտակարանների հունական խմբագրությունները[2], որոնցից մի քանիսը, ինչպես՝ Անտիոքյանը և Կեսարյանը, մուտք էին գործել նաև ասորական աշխարհը՝ ասորերեն թարգմանությամբ։

Հունական խմբագրությունների շարքում առաջին տեղը գրավում էր այսպես կոչված Որոգինյան բնագիրը, որը կազմվել էր Գ դարում և վերաբերում էր Հին Կտակարանի Յոթանասնից թարգմանության վերանայմանը։ Հաշվի առնելով, որ Յոթանասնից թարգմանության բնագիրն իր գոյության ավելի քան հինգ դարերի ընթացքում այլայլումներ ու զգալի աղավաղումներ էր կրել, Որոգինես Աղեքսանդրացին այն վերանայեց իր ժամանակի եբրայական բնագրի հիման վրա, այդ նպատակի համար օգտագործելով Բ դարում Ակյուղաս Պոնտացու, Սիմաքոս Սամարացու և Թեոդոտիոն Եփեսացու ձեռքով եբրայերենից կատարված հունարեն նոր թարգմանությունները։ Որոգինեսի երկը բնագրերի մի համադրություն էր, ամփոփված՝ վեց սյունակներում. 1. Եբրայական բնագիրը՝ եբրայական տառերով. 2. Նույն բնագիրը՝ հունական տառադարձությամբ. 3. Ակյուղասի թարգմանությունը. 4. Սիմաքոսի թարգմանությունը. 5. Յոթանասնից բնագիրը՝ Որոգինեսի համեմատություններով. 6. Թեոդոտիոնի թարգմանությունը։ Այս աշխատությունը կոչվում էր Վեցիչյան՝ Վեցսյունակյան՝ Վեցածալ (Hexapla). կար նաև՝ այստեղից առաջին երկու սյունակների վերացմամբ կազմված մի օրինակ, որը հայտնի էր Քառիչյան՝ Քառասյուն՝ Չորեքիչյան՝ Չորեքսյունակյան՝ Չորեքկնի (Tetrapla) անունով։ Ուրեմն Յոթանասնից թարգմանության որոգինյան համեմատություններն այս աշխատության վերջընթեր սյունակն էին, որի վրա Ակյուղասի, Սիմաքոսի և Թեոդոտիոնի թարգմանություններից ավելացված էին եբրայական բնագրի այն հատվածները, որոնք

---

[1] Կարելի է դեռ նաև հիշել, որ Սարգիս Հաճնեցի Մալյանը 1773 թ. Երուսաղեմում կազմել է «Համեմատութիւն օրինակաց Աստուածաշնչին» աշխատությունը, որի համար հիմք ընդունելով Աստվածաշնչի վենետիկյան 1733 թ. հրատարակությունը, օգտագործել է Ս. Հակոբի վանքում և այլ վայրերում գտնվող ձեռագրեր, Հին Կտակարան՝ 15 օրինակ, Նոր Կտակարան՝ 20 օրինակ, Եսայու մարգարեություն՝ 20 օրինակ։ Տես Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 244. և Վիեննայի Կայս. Մատ. (K. K. Hofbibliothek zu Wien) հայերեն ձեռ. № 4։

Այստեղ ևս շոշափվում է կրկնակի թարգմանությունների հարցը։ Սարգիս Մալյանը նկատել է, որ որոշ օրինակների միջև գոյություն ունեն թարգմանության արտակարգ տարբերություններ։ Նա, օրինակ, գրում է.

«Վեցերորդ գլուխն Բարուքայ Թղթոյն ի մի օրինակում միայն գտանեցաւ, և այն ևս ոչ էր յարմար ընդ տպագրեցելոյն, վասն որոյ ոչ եղև համեմատել. կարծէի թէ Ոսկան վարդապետն ոչ տեսանելով ի մէջ Հայոց՝ ինքն նորոգ թարգմանեալ է. զայս ասացի վասն անհամեմատութեանն և ոչ հաւաստի կարծեօք», «Հնգետասան Աստուածաշնչից երեքտասանքն համաձայնք էին միմեանց ի գիրս Յայտնութեան, և վեվ և մեծ գրով նշանագրեալ Աստուածաշնչիցն՝ միմեանց համեմատք. և վեվ գրով նշանագրեալ Աստուածաշնչի Առաջին և Երկրորդ Մնացորդաց գիրքն յամենից տարաձայն գտանեցան, գտեղիս տեղիս թէպէտ նայեցայ, սակայն կարի հեռի է ի տպագրեցելոյն»։

[2] Տես „The Encyclopaedia Britannica“, 9th ed., vol. XXI, Edinburgh, 1886, p. 668—669. F. G. Kenyon, „Our Bible and the Ancient Manuscripts“, London, Eyre and Spottiswoode, 1965, p. 103—109.

պակասում էին Յոթանասնից հին բնագրում և դրանք նշանակված էին աստղանշերով (※)․իսկ Յոթանասնից բնագրի այն հատվածները, որոնք չկային եբրայական բնագրում, նշանակված էին բրգաձև նշաններով (÷ կամ ~)։ Բացի այդ՝ Յոթանասնից թարգմանությունը նաև որոշ ուղղումների էր ենթարկված մյուս թարգմանությունների հիման վրա։

Որոգինեսից հետո, Դ դարում, հանդես էին եկել Հին և Նոր Կտակարանների հունարեն բնագրերի ուղղագրված այլ խմբագրություններ։ Դրանց շարքում ամենից հայտնին՝ Կեսարյան կամ Պամփիլյան բնագիրն էր, որը կոչվում էր նաև Պաղեստինյան կամ Երուսաղեմյան. դա կարգավորվել ու կազմվել էր Պաղեստինյան Կեսարիայում Պամփիլոս Բերյուտացու և Եվսեբիոս Կեսարացու ձեռքով ու տարածվել՝ Պաղեստինում և Փոքր Ասիայում։ Այնուհետև հայտնի էր այսպես կոչված Անտիոքյան կամ Լուկիանյան բնագիրը, որ կազմել էր Լուկիանոս Անտիոքացին և որը տարածված էր Անտիոքից մինչև Կ. Պոլիս։ Հայտնի էր նաև Աղեքսանդրյան կոչված օրինակը ,որը կազմվել էր Հեսիքիոս Եգիպտացու ձեռքով Աղեքսանդրիայում և տարածվել էր Եգիպտոսում ու շրջակա երկրներում։

Արդ՝ որո՞նք էին հայկական թարգմանությունների առնչությունները հունական վերոհիշյալ բնագրերի հետ։

Նախ ասենք, որ առաջին շրջանի թարգմանությունների սկզբնագրի հարցում մի որոշ նպաստ բերում են դարձյալ վրացական Աստվածաշնչի ուսումնասիրությունները։ Ռ. Բլեյկի և ընկերների բնագրական հետազոտությունները պարզեցին, որ վրացերեն Մարկոսի ավետարանը, որն անտարակուսելիորեն հայերենից է թարգմանվել, ներկայացնում է այսպես կոչված Կեսարյան բնագրի հատկանշեր, սակայն նրանք ենթադրում են, որ վրացականի մեջ պահված հայերեն այդ հին թարգմանությունը ավելի շուտ ասորերեն լեզվով սկզբնագիր պիտի ունեցած լինի, քան հունարեն[1]։ Ս. Լիոնեն վրացական և հայկական բնագրերի հարցում նոր ապացույցներով միանում է այս կարծիքին, այն տարբերությամբ, որ Կեսարյան բնագրի խնդրում որոշակիորեն հակում է հունարենին[2], իր այդ տեսակետը միաժամանակ տարածելով հայերեն Հին և Նոր Կտակարանների վրա առհասարակ[3]։ Լ. Լըլուարը ևս գտնում է, որ հնագույն շրջանում հայերենից թարգմանված վրացերեն ավետարանները Կեսարյան խմբագրություն են ներկայացնում[4]։

Դրան զուգընթաց՝ Ժ. Գարիտը նշել է, որ Գործք առաքելոցի հայերեն այն բնագիրը, որից թարգմանվել է վրացականը, ցույց է տալիս ասորական մի այնպիսի բնագիր, որը տարբերվում էր Պեշիտտայից[5]։ Խնդիրն այստեղ վերա-

---

[1] K. Lake, R. P. Blake and S. New, „The Caesarean Text of the Gospel of Mark", *The Harvard Theological Review*, 1928, № 4, p. 207—404. R. P. Blake, „The Old Georgian Version of the Gospel of Mark", *Patrologia Orientalis*, vol. XX, 1928, p. 439—574.

[2] St. Lyonnet, „Un important témoin du texte césaréen de Saint Marc: La version arménienne", Beyrouth, 1935.

[3] St. Lyonnet, „Aux origines de l'Église Arménienne. La traduction de la Bible et le témoignage des historiens arméniens", *Recherches de Science Religieuse*, 1935, p, 170—187. Idem „Les Versions arménienne et géorgienne du Nouveau Testament", Paris, 1935.

[4] L. Leloir, „La version géorgienne de la Bible", Բազմավէպ, *1958, էջ 197—203*.

[5] G. Garitte, „L'ancienne version géorgienne des Actes des Apôtres, d'après deux manuscrits du Sinaï", Louvain, 1955.

բերում է, ըստ երևույթին, Անտիոքյան բնագրին (դա-Մեփարրեշէ), որն ընդհանրապես ուշադրություն է գրավել նաև Ֆ. Կոնիբիրի։ Վերջինս նկատել է, որ Նոր Կտակարանի հայերեն այժմյան բնագրի մեջ կան առաջին թարգմանությունից դեռ հայտնի կերպով մնացած շատ ընթերցվածներ, որոնք նախապեշիտտայան բնագրի հետքեր են ցույց տալիս[1]։

Ինչ վերաբերում է հայկական ընկալյալ բնագրի և հունական խմբագրությունների առնչության հարցին, արդեն նշեցինք, որ Կ. Պոլսից բերված վավերական օրինակները բյուզանդական եկեղեցում ընդունված պաշտոնական բնագիրն էին և դա նույնինքն Կեսարյան կոչվածն էր։ Այդ օրինակն է, որ, անտարակույս, հիմք էր ծառայել երկրորդ թարգմանությանը[2]։

Բնագրական նորագույն հետազոտությունների արդյունքն ի նպաստ է այս կարծիքին։ Հայտնի է, որ Մակլերի ուսումնասիրությունների ցույց տված ուղղությունը տանում էր դեպի Կեսարյան բնագիրը[3]։ Ստրիտերը հակում էր ցույց տալիս դեպի այդ ուղղությունը[4] և Լիոնեն[5] ու Կոլուելը[6] հանդես էին գալիս ամրապնդող փաստերով։

Սակայն բանասիրական հետազոտությունները հիմնականում Կեսարյան բնագրին հանգելով հանդերձ, ցույց են տալիս, որ հայկական ընկալյալ բնագրում հունարեն սկզբնագրի հետքերը միատարր չեն։ Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ կա՛մ մեր թարգմանիչներն իրենց ձեռքի տակ միաժամանակ ունեցել են նաև տարբեր բնագրեր, կա՛մ էլ՝ թարգմանությունների վրա հետագայում ուղղումներ են կատարվել տարբեր բնագրերի հետևողությամբ։ Ավելի հավանական է այս վերջինը։

Դեռ 1715 թվականին Մ. Վ. Լակրոզն իր նամակներից մեկում այն կարծիքն էր հայտնում, թե Հին Կտակարանի հայերեն թարգմանությունը Աղեքսանդրյան սկզբնագիր է ունեցել[7]։ Հետագայում այդ կարծիքը բաժանել են Կաուլենը[8] և Էրմոնին[9]։

Ս. Կոգյանը Մակաբայեցվոց Բ գրքի բնագրական ուսումնասիրության արդյունքներով կարողացավ ցույց տալ, որ Աստվածաշնչի հայկական թարգ-

---

[1] F. C. Conybeare, „The Growth of the Peshitthâ Version of the New Testament; illustrated from the Old Armenian and Georgian Versions", *The American Journal of Theology*, vol. I, 1897, p. 883—912.

[2] Զոհրապյանի նախաբանը, տես՝ «Աստուածաշունչ մատեան» (մի հատորյակ), Վենետիկ, 1805, էջ 4։ Գ. Զարբհանալյան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», էջ 97։ Ֆ. Կ. Կոնիբիր, «Պամփիլեան օրինակ Սուրբ Գրոց», Բազմավէպ, 1895, էջ 209—212, 260—263։

[3] F. Macler, „Le texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc", Paris 1919.

[4] B. H. Streeter, „The Four Gospels", London, 1924.

[5] St. Lyonnet, „La version arménienne des Évangiles et son modèle grec", *Revue Biblique*, Janvier 1934.

Տես նաև այս հեղինակի հիշատակված նախորդ աշխատությունները։

[6] E. C. Colwell, „The Caesarean Readings of Armenian Gospel Manuscripts", *Anglican Theological Review*, vol. XVI, 1934, p. 113—132.

[7] „Thesauri epistolici Lacrosiani tomus III", Lipsiae, 1736, p, 201.

[8] F. Kaulen, „Einleitung in die Heilige Schrift des Alten und Neuen Testamentes", Freiburg, 1876.

[9] Վ. Էրմոնի, «Բննադատական ուսումնասիրութիւն Ս. Գրոց հայկական թարգմանութեան վրայ», Բազմավէպ, 1900, էջ 406—410։

մանության մեջ թե՛ Աղեքսանդրյան, թե՛ Վեցիցյան և թե՛ Լուկիանյան բնագրերի հետքեր կան[1]*։*

Ն. Ակինյանը հաստատեց և ընդհանրացրեց այս եզրակացությունը՝ հիմնըվելով Էջմիածնի Մատենադարանի № 193 (= այժմյան Երևանի Պետ. Մատ. № 193) ձեռագրի մի հիշատակարանի վրա, որը գրված է 1299 թվականին։ Այս ձեռագիրը բովանդակում է Սողոմոնի գրքերը և փոքր մարգարեները, որոնց վերջում հիշատակագրված է. «Ուղղեալ է զաւրինակս զայս յԱղեքսանդրացւոց և յԵրուսաղեմացւոց աւրինակէ. դարձեալ և ի Չորեքկնւոյն Ովրիգենի։ Գրեցաւ երկոտասան մարգարէս ըստ Եւթանասնիցն և երկուց թարգմանացն»[2]*։*

Այս հիշատակարանից երևում է, որ հայկական թարգմանությունները ճշտումների և ուղղումների էին ենթարկվել ոչ միայն Աղեքսանդրյան («Աղեքսանդրացւոց») և Որոգինեսի Քառիցյան բնագրերի հիման վրա, այլև կրկին անգամ ստուգվել էին Կեսարյան («Երուսաղեմացւոց») բնագրով, ժամանակի ընթացքում առաջացած այլայլումների վերացման համար[3]*։*

Հետևությունն այն է, թե հայկական թարգմանությունները պարբերաբար ստուգումների են ենթարկվել։

Այս կապակցությամբ ասենք, որ Որոգինեսի Վեցիցյանի կամ Քառիցյանի հետքերը՝ աստղանշերը և, երբեմն նաև, բրգաձևերը երևում են մեր հին գըրչագրերում. ինչպես նաև լուսանցներում որոշ ընթերցվածներ՝ Ակյուղասի, Սիմաքոսի և Թեոդոտիոնի թարգմանություններից։ Այսպիսի ձեռագրեր են՝ Երևանի Պետ. Մատենադարանի № 178 (1253—55 թթ.), № 4243 (1263 թ.), № 345 (1270 թ.), № 199 (1271 թ.), № 179 (1292 թ.), № 177 (1292թ.), № 180 (1295 թ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.) և այլն։ Այսպիսի մի օրինակ է նաև Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի վերոնշյալ № 1 ձեռագիրը։ Պայմանական այդ նշանների (աստղանշեր և բրգաձևեր) և լուսանցագրությունների հավաքումը, համադրումը և բաղդատական կարգով ուսումնասիրումն անտարակույս մեծ նպաստ կբերի հայկական Աստվածաշնչի բնագրական ուսումնասիրություններին։ Իբրև օրինակ բերենք Բ Թագավորությանց Գ գլխի 33 տունը, ուր միևնույն նախադասությունը կրկնվել է երկու տարբերակով.

«Միթէ որպէս մեռանիցի անզգամ, մեռաւ Աբեններ. **Եթէ ըստ մահուանն Նաբաղայ մեռաւ Աբեններ»:**

Ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ միևնույն նախադասության տարբեր ծագում ունեցող երկու թարգմանությունների միակցում է տեղի ունեցել։ Հունական Յոթանասնից բնագիրը, որը աղբյուրն է հայկական թարգմանության, ունի միայն «Եթէ ըստ մահուանն Նաբաղայ մեռաւ Աբեններ» ընթերցվածը[4]*, և այդպես է նաև մեր հնագույն ձեռագրերում.*

---

[1] *Ս. Կոգյան, «Մակաբայեցւոց Բ. գրքին հայերէն թարգմանութիւնը», Վիեննա,* **1923.** *տես հատկապես էջ 53—61։*

[2] *Ն. Ակինյան. «Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը», էջ 555։*

[3] *Մի ուրիշ առիթով մենք վրիպմամբ որպես այս կարգի փաստ էինք նշել նաև որոշ ձեռագրերում՝ Պողոսի թղթերի վերջում գտնվող «Ընդաւրինակեցաւ գիրքս այս ըստ Կեսարացւոց աւրինակաց...» հիշատակությունը (Էջմիածին ամս., 1966, № 11—12, էջ 81)։ Այդ հիշատակությունը Եվթաղ Աղեքսանդրացու հեղինակությունն է և վերաբերում է հուն. բնագրին. հմմտ. Ա. Վարդանյան, «Մատենագրութիւնք Եւթաղի. Քննութիւն և բնագիր», Վիեննա, 1930, էջ 45—46,*

[4] *Տես՝* „The Old Testament in Greek according to the Septuagint", vol. I, p. 618,

օրինակ՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 178 (էջ 165ա), № 345 (էջ 206բ) և № 177 (էջ 147բ), որոնցից առաջին երկուսը 1253—1270 թթ. ընթացքում են ընդօրինակվել, իսկ երրորդը՝ ավելի ուշ, 1292 թ. ընդօրինակություն է։ Այս նույն ձեռագրերում, որոնք Վեցիչյանից եկած լուսանցագրություններ ունեն, լուսանցներում գտնում ենք «Միթէ որպէս մեռանիցի անզգամ՝ մեռաւ Աբեններ» ընթերցումը, որը Սիմաքոսի հունարեն թարգմանությունից է, ինչպես ցույց է տալիս «Սիմ» նշումը։ Սակայն տեսնում ենք, որ հետագա ժամանակի մի շարք ձեռագրերում Սիմաքոսի այս ընթերցվածը լուսանցներից անցել է բնագրի մեջ՝ համատեղվելով նախկին ընթերցվածի հետ։ Այսպես՝ երկու ընթերցվածներն արդեն համատեղված ենք գտնում Երևանի Պետ. Մատենադարանի № 180 ձեռագրում (էջ 138բ), որը 1295 թվականից է, և № 353 ձեռագրում (էջ 152ա), որը 1317 թվականից է։ Այսպես և՝ ուրիշ շատ ձեռագրերում. բավական է ասել, որ Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակության համար օգտագործված 8 ձեռագրերն անխտիր բոլորն էլ նույն երկու տարբերակների համատեղված ընթերցումն են ներկայացնում[1]։ Այս երևույթի հետ պետք է հիշել և այն, որ Երևանի № 206 ձեռագրում Սիմաքոսի ընթերցվածը լուսանցից անցել է բնագրի մեջ՝ փոխարինելով նախկին ընթերցվածին, իսկ վերջինս դուրս է բերվել լուսանցի վրա (էջ 131բ)։ Հավանաբար կգտնվեն այսպիսի ուրիշ ձեռագրեր ևս։ Տարբերակների համատեղման և կամ փոխարինման վերոհիշյալ երևույթը Վեցիչյանի կամ Քառիչյանի ազդեցության փաստերից է։

Բայց նմանօրինակ փաստերը, լինեն դրանք ազդեցություններ Վեցիչյանից, թե մի այլ աղբյուրից, իրենց էության մեջ մնում են գրչական թյուրիմացություններ և բնագրական անմեղ խախտումներ։ Մյուս կողմից՝ ընդօրինակողների անուշադրության հետևանքով առաջ եկած պատահական աղավաղումներն, իրենց հերթին, ոչ միայն բնագրի լեզուն են աղճատում, այլև երբեմն նրա մտքերն են այլափոխում։ Մեզ համար ավելի ուշագրավ են բնագրի կամայական խաթարման երևույթները, նրանում գիտակցաբար կատարված սրբագրությունները՝ օտար և մեզ համար անհարազատ բնագրերի հիման վրա։ Բնագրի խաթարման այդպիսի փորձեր կատարվել են՝ հիմք ունենալով լատիներեն Վուլգատան, որը Հին ու Նոր Կտակարանների պաշտոնապես ընդունված բնագիրն է լատինական եկեղեցու կողմից։

Բանասիրության մեջ կարծիք է եղել, թե դեռ ԺԳ դ. վերջերին Հեթում Բ թագավորը հայկ. թարգմանության բնագիրը սրբագրությունների է ենթարկել լատ. Վուլգատայի հիման վրա։ Այդ կարծիքը 1730-ական թթ. հրապարակ է եկել Մ. Վ. Լակրոզի նամակներով[2]։ Հետագայում այդ կարծիքը բաժանել են ուրիշներ[3], այնպես որ նույնիսկ Ֆ. Մակլերը, 1911 թ. հաշվի նստելով դրա հետ, գտնում էր, որ «հայկական Ավետարանի բնագրի վերաբերյալ հետազոտությունների համար պետք է ամեն դեպքում ընտրել նախակիլիկյան շրջանի ձեռագրեր»[4]։ Բայց մենք ցույց ենք տվել, որ այդ կարծիքն անհիմն է և

1 Հմմտ. «Աստուածաշունչ մատեան» (հրատ. Հովհ. Զոհրապյանի, միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 194։

2 Տես՝ „Thesauri epistolici Lacroziani tomus III“, Lipsiae, 1736, p. 4 (Նամակ առ Անտոնիոս Աքարդոս), 69 (Նամակ առ Ալբերտոս Բենգելիոս)։

3 Հմմտ. Месроп Тер-Мовсесян, „История перевода Библии на армянский язык“. Петербург, 1902. стр. 59—60.

4 F. Macler, „Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arménie turque (Juillet—Octobre 1909)“, Paris, 1911, p. 24—25.

թե Հեթում Բ-ի կատարած գործը կայանում էր ո՛չ թե բնագրական սրբագրություններ կատարելու մեջ, այլ լոկ լատինականի գլխաբաժանումները հայկականի մեջ մուծելու և հայկականի նախկին գլխաբաժանումների հետ համատեղելու մեջ, մի նորություն, որը բացասական երևույթ չէր, այլ դրական, որովհետև դրանով հետագայում անսահման հնարավորություն ստեղծվեց Աստվածաշնչի հայկ. և օտար բնագրերի համեմատական ուսումնասիրության համար[1]։

Վուլգատայի ազդեցության տակ հայկ. բնագրի խաթարման փորձերն ավելի ուշ ժամանակների երևույթ են։ Այս տեսակետից մեր ուշադրությունն ամենից առաջ գրավում են Երևանի Պետ. Մատենադարանի № 2267 ձեռագրում Սաղմոսարանից և Երկրորդ Օրինաց գրքից բերված մի շարք քաղվածներ (էջ 43ա—52բ), որոնք Լուսիկ սարկավագի ձեռքով են գրվել Լվովում՝ 1581 թ.։ Այդ քաղվածները ներկայացնում են որոշ սրբագրությունների ենթարկված մի բնագիր, որի հետքերն ամենևին չեն երևում Զոհրապյան քննական հրատարակության տարընթերցվածներում։

Ուշադրության արժանի են հատկապես Երկրորդ Օրինաց գրքի ԺԲ գլխին պատկանող որոշ մասեր, որոնք գտնվում են ձեռագրի 47ա—47բ էջերում․ Դրանցից են հետևյալ օրինակները.

Ընկալյալ բնագիր[2]	**Ձեռագիր № 2267**
24. Մաշեալք սովով և կերակրով բոշնոց	Իւծեալք [և] զազանաբեկք զգէշ արկեալ
24. Քարշել զնոսա ընդ երկիր	Այսր և անդր քարշեսցեն
32. Յորթոյ Սոդոմայ է որթ նոցա	[Յ]այգոյն Սոդոմայ էր տունկք
33. Առանց բժշկութեան	Անհնարին
35. Սխալեսցի ոտն նոցա	Հարցի զքարի
38. Ճարպ զոհից նոցա	Ճարպս սպանդիցն

Դժբախտաբար այս քաղվածներն ամբողջական նախադասություններ չեն ներկայացնում, այլ միայն առանձին բառեր՝ հայերեն—կոմաներեն հավասարումներով[3], ուստի և բնագիրը հանգամանորեն ուսումնասիրելու հնարավորություն չեն տալիս։ Սակայն կարծում ենք, որ Լեհաստանի պայմաններում կատարված այս սրբագրությունների ծագումը պետք է որոնել Վուլգատայում։

Հայկական բնագրի խաթարման փորձերը հիմնականում ԺԷ դարում են կատարվել։ 1637 թ. սեպտեմբերից սկսած Հռոմի Պրոպագանդայի որոշմամբ ձեռնարկումներ են լինում հայկական հին թարգմանությունը համեմատելու Վուլգատայի հետ և սրբագրելու. այս աշխատանքներին մասնակցում են իտալացի երկու հայերենագետ հոգևորականներ՝ Հովհաննես Պիրոմալլին և Պողոս Պիրոմալլին, և երեք հայեր՝ փրանկիսկյան կրոնավոր Գասպարը, դոմինիկյան կրոնավոր Հովհաննեսը և Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաքարիա Վանեցու ներկայացուցիչ Հովհաննես Անկյուրացին, որը լատինական անվամբ կոչվում էր

---

1 *Տես՝* Էջմիածին *(ամս.), 1966, № 11—12, էջ 83—88։*

2 *Տես «Աստուածաշունչ մատեան» (մխիթարյան), Վենետիկ, 1805, էջ 131։*

3 *Մենք կոմաներենը բաց ենք թողել՝ հայերեն մասերը համեմատելու համար ընկալյալ բնագրի հետ։*

Հովհաննես Մոլինոս[1]։ Հայտնի է, որ այս աշխատանքների արդյունքը եղել էր Նոր Կտակարանի համեմատության ավարտումը 1639 թ. մարտին[2], բայց Հին Կտակարանի մասին տեղեկություններ չունենք։ Թե ինչո՞ւ չի տպագրվել գոնե Նոր Կտակարանի պատրաստի հատորը՝ հայտնի չէ, բայց հայտնի է, որ Վատիկանի կատարած այդ ձեռնարկումները հետագայում որոշ արդյունքներ տվին Պողոս Պիրոմալլիի ջանքերով։ Վերջինս 1642—47 թթ. էջմիածնում ծանոթություն հաստատելով Ոսկան Երևանցու հետ, նրան գաղափարակից ու գործակից է դարձնում իրեն։ Այդ մասին Միք. Չամչյանն ասում է. «Եւ յայսմ նուագի յորժամ ի Հայս էր Պօղոս կրօնաւոր, գտեալ զՈսկան վարդապետ՝ խօսեցաւ ընդ նմա վասն սրբագրութեան Աստուածաշնչին. յայնժամ վերստին բաղդատութեամբ յաւելին երկոքին նորա այլ ևս փոփոխութիւնս, և խանգարեցին բազում ուրեք զվայելչութիւն շարադրութեանն, ուրեք ուրեք և զմիտս բանին, այլազգ իմանալով»[3]։ Խանգարված այս բնագիրը 1666/68 թթ. տպագրությամբ լույս տեսավ Ամստերդամում և հայտնի է Ոսկանյան Աստվածաշունչ անունով։

Ոսկանյան հրատարակությունը բնագրական տեսակետից շատ է քննադատվել։ Առանց հաշվի առնելու, որ հայկական բնագիրը հունական ծագում ուներ, Ոսկան Երևանցին նրա վրա լատիներեն Վուլգատայից բազմաթիվ պատվաստումներ էր կատարել, որից և առաջացել էին բնագրական-իմաստային նկատելի խախտումներ. օրինակ՝ լատինականին յուրահատուկ Հովհ. Ա. թղթի 7 տունը, որը բանասիրական գրականության մեջ հայտնի է «Comma Johannaeum» անունով, նույնությամբ փոխադրվել էր հայկականի մեջ՝ խանգարելով նաև հարակից 6 և 8 տների բնագիրը. կամ թե՝ Առ Հռոմ. Ը. 38 տան մեջ հայկական բնագիրը խմբագրման էր ենթարկվել՝ լատինականի հիման վրա։ Մյուս կողմից՝ Ոսկանը կատարել էր լեզվական-քերականական անթիվ սրբագրություններ, որոնք աղարտել ու այլայլել էին հայկական բնագրի դասական դիմագիծը. օրինակ՝ Երեմ. ԺԵ. 10 տան մեջ «զօրութիւն իմ պակասեաց յանիծանելեաց իմոց» նախադասությունը սրբագրված էր՝ «զօրութիւն իմ պակասեցաւ յանիծողաց իմոց»։ Ոսկանի կատարած այսպիսի աղավաղումների մասին արժանի գնահատական է տվել Զոհրապյանը՝ գրելով. «Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստից ձևացաւ խառնարան այլ և այլ թարգմանութեանց՝ հելլենականին և լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ»[4]։

Ոսկանյան հրատարակությունը թյուրիմացություններ ստեղծեց բանասիրության մեջ։ Օրինակ՝ Ս. Կոգյանը Ոսկանին ազատ էր համարում ըստ Վուլգատայի սրբագրություններ կատարած լինելու կասկածանքից, համոզված լինելով, որ նրա հրատարակածը Հեթում Բ-ի 1295 թվակիր ձեռագրի հարազատ պատճենն է. և ըստ այնմ էլ՝ Մակաբայեցվոց Բ գրքի բնագրական քննություն-

[1] Գր. Գալեմքյարյան, «Հայ Աստուածաշունչի տպագրութեան ջանքեր Ոսկանէն յառաջ», Հանդէս Ամսօրեայ, 1914, էջ 14։

[2] Անդ, էջ 14։

[3] Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 621,

[4] Զոհրապյանի Նախաբանը, տես՝ «Աստուածաշունչ մատեան» (միհատորյակ), Վենետիկ, 1805, էջ 8։

ների համար նա Ոսկանյան բնագիրն օգտագործել է որպես Հեթում Բ-ի օրինակի ներկայացուցիչ[1]։

Ոսկանյան աղավաղ բնագիրը հետզհետե տարածվեց Աստվածաշնչի մի քանի նոր հրատարակություններով՝ Կ. Պոլսում (1705 թ.), Վենետիկում (1733 թ.), Պետերբուրգում (1817 թ.) և Սիրամպուրում (1817 թ.), դեռ չհաշվելով Հին և Նոր Կտակարանների առանձին մասերի զանազան հրատարակությունները։

Սակայն բնագրի հարազատության հարցը զբաղեցրել է հաջորդ սերունդներին։ Մխիթար Սեբաստացին, 1733 թ. նորից հրատարակելով Աստվածաշունչը, թեև Ոսկանյան բնագրի վերարտադրությունն էր տալիս, բայց միաժամանակ քննական որոշ վերաբերմունք էր ցուցաբերում այդ գործում։ Ձեռքի տակ ունենալով մի քանի գրչագիր օրինակներ, նա Հին և Նոր Կտակարանի բնագրում ուղղակի սրբագրել է ժամանակի ընթացքում գրչական աղավաղումների ենթարկված որոշ մասեր. դրանից բացի՝ նա բազմաթիվ դիտողություններ է նշանակել իր հրատարակության լուսանցների վրա՝ առանց փոփոխելու բնագիրը։ Մխիթարի քննական այս վերաբերմունքը բնագրական հարցում, որպես հետևողական գիծ, հանդես է եկել Աստվածաշնչի և նրա մասերի այն հրատարակություններում, որոնք հետագայում լույս են տեսել Վենետիկի Մխիթարյանների ջանքերով։ 1752 թ. լույս էր տեսել Նոր Կտակարանը՝ «ըստ ուղղագոյն հին օրինակաց ձեռագրաց», որից հետո նաև 1766 և 1789 թթ. հրատարակություններով ձեռագրերի հիման վրա հետզհետե մի շարք սրբագրությունների ենթարկվեց Նոր Կտակարանը՝ Ոսկանյան աղավաղումներից բնագիրն ազատելու նպատակով. բայց այդ գործը կատարվում էր աստիճանաբար, զգուշավորությամբ և չափավորության սահմաններում։

Կաշկանդումների վերջնական հաղթահարումը տեղի ունեցավ 1805 թ., երբ Մխիթարյան տպարանը Հովհ. Զոհրապյանի ջանքերով լույս աշխարհ հանեց Աստվածաշնչի հայկական դասական բնագրի քննական առաջին հրատարակությունը՝ երկու տարբեր տպագրություններով՝ միահատոր (մեծադիր) և քառահատոր (փոքրադիր)։ Այս հրատարակության համար հիմք էր ընդունվել Մխիթարյան Մատենադարանի գրչագիր Աստվածաշնչերից (Հին և Նոր Կտակարաններ) հնագույնը՝ այժմյան № 1 ձեռագիրը, գրված 1319 թ., և որպես օժանդակ օգտագործվել էին Աստվածաշնչի և նրա մասերի բազմաթիվ ուրիշ օրինակներ։ Ավելի ուշ, 1860 թ., նույն տպարանից Արսեն Բագրատունու ջանքերով լույս տեսած Աստվածաշնչի հիմքը թեև Զոհրապյանի հրատարակությունն էր, բայց բնագրական որոշ բարեփոխումների էր ենթարկված «ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց և յոյն բնագրաց»։ Պարզ է, որ Զոհրապյանի և Բագրատունու այս հրատարակություններից հետո ոսկանյան բնագիրը վերջնականապես դուրս եկավ շրջանառությունից։

Բայց հայկական բնագրի վերականգնման ուղու վրա, ի հարկե, վերջնական հանգրվաններ չեն նաև Զոհրապյանի և նրանից բխող՝ Բագրատունու հրատարակությունները։ Բանասիրության մեջ այլևայլ առիթներով հաճախ է նշվել, որ ձեռագրերում գոյություն ունեն բնագրական ավելի ընտիր ընթերցումներ։ Զոհրապյանի հրատարակած բնագրի որոշ թերությունները լավ արդյունք են այն իրողության, որ նա ձեռքի տակ չի ունեցել հնագույն օրինակներ. ու-

[1] Տե՛ս Ս. Կողյան, «Մակաբայեցւոց Բ գրքին հայերէն թարգմանութիւնը», էջ 2—3։

տի և հասկանալի է, որ հայ դասական բնագրի վերականգնման գործում բանասիրությանը դեռ մնում են անելիքներ և այդ գործը գերազանցապես կապված է հին և ընտիր ձեռագրերի ուսումնասիրության հետ։

Հայտնի է, որ այսօր աշխարհի գլխավոր մատենադարաններում՝ Երևանում, Երուսաղեմում, Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Բեռլինում, Հռոմում, Լոնդոնում, Օքսֆորդում և այլուր, որտեղ հայերեն ձեռագրեր են պահվում, ինչպես նաև մասնավորների մոտ, գտնվում են Հին և Նոր Կտակարանների ամբողջական և մասնակի օրինակներ, որոնց թիվը, զանազան գրչագիր ժողովածուներում պահպանված բեկորների հետ միասին, հազարների է հասնում։ Այս սուղ էջերում հնարավորություն չկա մի առ մի նշելու այդ բոլոր ձեռագրերը։ Այդպիսինների նկարագրություններ կարելի է տեսնել տպագրված և անտիպ գրեթե բոլոր ձեռագրացուցակներում, որոնց ընդհանուր ցուցակն արդեն տվել ենք[1]. բայց կան նաև հատկապես Աստվածաշնչերի նկարագրությանը նվիրված հրատարակություններ։ Ձեռագրացուցակների և այլ տվյալների վրա հենվելով աշխարհում գտնվող բոլոր և հատկապես Նոր Կտակարանի ձեռագրերը հաշվառելու մի փորձ է կատարել է. Ֆ. Ռոդզը[2]։ Էջմիածնում, Վենետիկում, Երուսաղեմում և այլ վայրերում գտնվող կարևոր ձեռագրերի մասին գրել են Գար. Զարբհանալյանը[3], Մեսրոպ Տեր-Մովսիսյանը[4] և Խ. Ս. Գուրյանը[5]։ Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռագրերը ներկայացրել են Վ. Լյուդկեն[6], Վ. Հացունին[7] և Ե. Փեչիկյանը[8]։ Երուսաղեմի ձեռագրերը նկարագրել են Ա. Բաումշտարկը[9], Մեսրոպ Նշանյանը[10] և Չ. Դոուսետը[11]։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող ձեռագրերի մասին գրել են Ա. Պ. Վիկգրենը[12] և

[1] Հ. Ս. Անասյան. «Հայկական մատենագիտութիւն», հտ. Ա, էջ LXXVII—XCV։

[2] E. F. Rodes, „An Annotated List of Armenian New Testament Manuscripts", Tokyo, 1959.

[3] Գար. Զարբհանալյան, «Մատենադարան...», էջ 121—171՝ «Հնագոյն գրչագիրք Ս. Գրոց ի հայ լեզուի»։

[4] Месроп Тер-Мовсесян, „История перевода Библии на армянский язык", Петербург, 1902, стр. 76—185.

[5] Խ. Ս. Գուրյան, «Հայերէն գրչագիրներ Աստուածաշունչ մատեանի», Հայաստ. Կոչնակ, 1938, էջ 941—942, 966—968, 1022—1024։ Նույնը տես նաև հեղինակի հետևյալ գրքում. «Մեսրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ», Կահիրե, 1944, էջ 77—90։

[6] W. Lüdtke, „Der Katalog der armenischen Bibelhandschriften von S. Lazzaro", *Zeitschrift für die Neutestamentliche Wissenschaft*, XVII Jahrg., 1916, S. 68—73.

[7] Վ. Հացունի, «Ս. Գրոց ընտրելագոյն գրչագիրք Ս. Ղազարու մէջ», Բազմավէպ, 1935, էջ 402—410։ Նույնի ֆրանս. ամփոփումը՝ անդ, էջ 467։

[8] Ե. Փեչիկյան, «Յիշատակարանք գրչագրաց Ս. Գրոց», անդ, էջ 429—444։

[9] A. Baumstark, „Eine gruppe illustrierter armenischer Evangelienbücher des XVII. und XVIII. Jahrhunderts in Jerusalem", *Monatshefte für Kunstwissenschaft*, IV Jahrg., 1911, S. 249—260.

[10] Մ. Նշանյան, «Ցուցակ Ս. Յակոբայ Գանձատան մէջ պահուած ձեռագրաց... (1907 սեպտ. 3)», Երուսաղեմ, 1966։ Այստեղ նկարագրված 130 ձեռագրերից 128-ը Աստվածաշնչեր և Ավետարաններ են։

[11] „Catalogue of Twenty-three Important Armenian Illuminated Manuscripts, which will be Sold by Auction by Messrs. Sotheby and Co", London, 1967. Նկարագրությունները կազմել է Չ. Դոուսետը։ Նկարագրված 23 ձեռագրերն ավետարաններ են։

[12] A. P. Wikgren, „Armenian Gospels Manuscripts in the Kurdian Collection", *Journal of Biblical Literature*, vol. LV, 1936, p. 155—158; „Armenian Gospels Materials in the Kurdian Collection", ibidem, vol. LIX, 1940, p. 51—53; „More Armenian

Սիր. Տեր-Ներսեսյանը[1]։ Մի շարք այլ ձեռագրեր նկարագրել է Կ. Ռ. Գրեգորին[2]։ Կան նաև ուրիշներ։

Հույժ կարևոր խնդիր է աշխարհով մեկ ցրված այդ ձեռագրերի մեջ որոնումն ու որոշումը սուրբգրական բնագրերի այն հնագույն ու լավագույն օրինակների, որոնց միջոցով հնարավոր կլինի երևան բերել հայկական Թարգմանության բուն՝ սահակ-մեսրոպյան բնագրական նկարագիրը։ Այդպիսի հին և ընտիր գրչագրերից մի քանիսն արդեն վաղուց է, որ ուշադրություն են գրավել։ Նրանց շարքում համբավավոր է Մոսկվայի Լազարյան Ճեմարանի մագաղաթյա երկաթագիր ավետարանը, որը գրված է 887 թ.[3]։ Մեծ է այս ձեռագրի գիտական նշանակությունը։ Ժամանակին Մսեր Մսերյանցը հրատարակել է համեմատական մի փոքր ցուցակը բնագրական այն տարբերությունների, որ այս գրչագիրը ներկայացնում է Ամստերդամի 1698 թ. և Վենետիկի 1805 թ. տպագրությունների նկատմամբ[4]. բայց նա կազմած ուներ նաև այդ ձեռագրի ամբողջական համեմատությունը, որը մնում է անտիպ, այսպիսի վերնագրով. «Համեմատութիւն Աւետարանաց, այն է՝ տպագրելոցն յԱմստերդամ յամին 1698 և ի Վենետիկ յամին 1805, ընդ գրչագրին գաղափարելոյ ի Թուին Հայոց ՅԼԶ»[5]։ Հետագայում Միհրան Հովհաննեսյանի հրատարակած տեղեկությունների համաձայն Երուսաղեմի մատենադարանի մագաղաթյա երկաթագիր ավետարանը պիտի ավելի հին լիներ, քան Լազարյան Ճեմարանինը, նրա գրության տարի համարելով 602 թվականը[6], բայց Մեսրոպ Տեր-Մովսիսյանը համարել է, որ այս գրչագիրը է «ամենայն հաւանականութեամբ աւելի հին քան Լազարյան Ճեմարանի ձեռագիրը, թէև դժուարանում ենք դարը որոշելու»[7]։ Անտոնյան միաբանության Օրթագյուղի (Կ. Պոլիս) Մատենադարանի մագաղաթյա հին ավետարանն ըստ ոմանց, և հավանաբար, գրված է 716 թ., ուստի և սա ևս

New Testament Manuscripts in the Kurdian Collection", ibidem, vol, LXIV, 1945, p. 531—533; „Additional Armenian New Testament Manuscripts in the Kurdian Collection", ibidem, vol. LXXII, 1953, p. 115—126; „New Armenian Manuscripts of the New Testament in the Kurdian Collection", ibidem, vol. LXXIX, 1960, p. 52—56.

[1] Sirarpie Der Nersessian, „A Catalogue of the Armenian Manuscripts" (The Chester Beatty Library), vol. I, Dublin, 1958; „Armenian Manuscripts in the Freer Gallery" (Smithsonian Institution. Freer Gallery of Art. Oriental Studies, № 6), Washington, 1963.

[2] C. R. Gregory, „Textkritik des Neuen Testamentes", Bd. II, Leipzig, 1902, S. 569—573; Bd. III, Leipzig, 1909, S. 1314–1322.

[3] *Տես նրա լուսատիպ հրատարակությունը. «Աւետարան ըստ Թարգմանութեան նախնեաց մերոց, գրեալ յամի ՅԼԶ Թ. Հայոց և յամի տեառն 887։ Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան Ճեմարանի Արևելեան Լեզուաց։ Արդեամբք պատուոյ հոգաբարձու ճեմարանին՝ իշխան Սիմէոնի Աբամէլիք-Լազարեան։ Մոսկվա, ՌՅԽԸ—1899»։*

Այս ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում, № 6200։

[4] *Մ. Մսերյանց, «Զհանգամանաց հնագոյն գրչագիր Աւետարանին. որ գտանի ի Մատենադարանի Լազարեան Ճեմարանին», Փարոս, տետր Ե, 1876, էջ 28—39։*

[5] *Հմմտ. անդ, էջ 39։ Մեզ հայտնի չէ, թե այժմ ո՞ւր է գտնվում Մ. Մսերյանցի այս թանկարժեք երկը։*

[6] *Մ. Հովհաննեսյան, «Հնագոյն Աւետարանը», Բիւրակն, 1900, № 30, էջ 459։ Նույն, «Հնագոյն գրչագիր Աւետարանը», անդ, № 38, 595—597։ Նույն, «Հնագոյն հայ գրչագիրն», Բանասէր, 1900, էջ 117—118։*

[7] *Մեսրոպ Տեր-Մովսիսյան, «Հնագոյն Աւետարան Երուսաղեմայ Հայոց Ս. Յակոբայ վանուց», Բազմավէպ, 1908, էջ 103—109։*

ավելի հին է համարվել քան Լազարյան Ճեմարանինը[1]։ Իսկ Ն. Ադոնցի քննությունները կարծես հաստատում են, որ Մլքե թագուհու հայտնի ավետարանը, որը գտնվում է Վենետիկում, 25 տարով ավելի հին է քան Լազարյան Ճեմարանի ավետարանը՝ գրված լինելով 862 թ.[2]։ Բարսեղ Սարգիսյանը Մլքեի ավետարանի գրության ժամանակը դնում էր 851—922 թվականների միջև[3], իսկ Վ. Հացունին՝ 902 թվականին[4]։

Հիշյալ ձեռագրերի գրչության ժամանակի մասին հայտնված կարծիքները ցույց են տալիս որոշ առարկությունների ենթակա լինեն, բայց Լազարյան ավետարանն ունի անառարկելի թվագրություն, ուստի և Գար. Հովսեփյանը նրա մասին գրել է. «Այս Աւետարանը թուականով մեզանում մինչև այժմ յայտնի ամենահին ձեռագիրն է»[5]։

Սակայն մի կողմ թողնելով հնության ախոյանության իրավունքը՝ նշենք, որ այսօր գոյություն ունեն հին և ընտիր գրչությամբ և բնագրական տեսակետից արժեքավոր ձեռագրեր, որոնց մասին կարելի է մի ընդհանուր գաղափար կազմել՝ Երևանի, Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի հայտնի մատենադարանների տվյալների հիման վրա։

Նախ նշենք Աստվածաշնչի՝ ԺԳ և ԺԴ դարերի մի շարք ամբողջական օրինակներ, նկատի ունենալով, որ այժմ ավելի հները հայտնի չեն։ Երևանի հնագույն օրինակը՝ № 194 ձեռագիրը 1207 թվականից է. դրանից հետո հերթականորեն գալիս են № 178 (1253—55 թթ.), № 4243 (1263—66 թթ.), № 142 (1269 թ.), № 345 (1270 թ.), № 1500 (1282-ից առաջ), № 195 (1284—88 թթ.), № 177 (1292 թ.), № 179 (1292 թ.), № 180 (1295 թ.), № 181 (1295 թ.), № 182 (1303 թ.), № 183 (1308 թ.), № 6230 (1314 թ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.), № 2627 (1338 թ.), №2705 (1368 թ.), № 352 (1367—71 թթ.), № 4113 (1384 թ.), № 346 (1390—1400 թթ.). № 184 (1400—01 թթ.), № 354 (ԺԴ դ.) և № 6569 (ԺԴ դ.)։ Վենետիկն ունի միայն երեք ձեռագիր՝ № 1 (1319 թ.,) № 12 (1332 թ.) և №8 (1341—55 թթ.)։ Միայն երկու ձեռագիր է մեզ հայտնի Երուսաղեմից՝ № 146 (1214 թ., Թերի) և № 153 (1323 թ.). և երկու ձեռագիր էլ Վիեննայից՝ № 71 (ԺԳ/ԺԴ դդ.) և № 55 (1368—75 թթ.)։

Ավետարանի ձեռագիր օրինակները թե՛ գրչությամբ ավելի հին են և թե՛ թվով շատ, քան Աստվածաշնչի ամբողջական օրինակները։ Որպես Թ—ԺԱ դարերից հասած օրինակներ՝ կնշենք հետևյալները։ Երևանի հնագույն օրինակը, գրված 887 թ., նախկին Լազարյան Ճեմարանի ավետարանն է, որն այժմ կրում է 6200 թվահամարը. այնուհետև ունենք՝ № 10110 (Թ/Ժ դդ.), № 6384 (902 թ.), № 7737 (965 թ.), № 7735 (986 թ.), № 2374 (989 թ.)[6], № 7739

[1] Սկևռակ բանասէր, «Օրթագիւղի Անտոնեան միաբանութեան հնաւուրց մագաղաթեայ Աւետարանն», Բազմավէպ, 1897, էջ 497—499։ Մ. Հ. Սեթյան, «Անցք որ անցին ընդ հնաւուրց մագաղաթեայ Աւետարանն Անտոնեան հարց», Բազմավէպ, 1901, օգոստ. 15-ի հավելված, էջ 13—15։

[2] Ն. Ադոնց, «Մլքէի Աւետարանի գրութեան տարին», Սիոն, 1936, էջ 274—275։

[3] Բարսեղ Սարգիսյան, «Մայր ցուցակ», հտ. Ա, էջ 373—392։

[4] Վ. Հացունի, «Մլքէի Աւետարանին Թուականը», Բազմավէպ, 1939, էջ 109—112։

[5] Գարեգին Հովսեփյան, «Յիշատակարանք ձեռագրաց», հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 86։

[6] Այս ձեռագիրը, որը նախկինում 229 թվահամարն էր կրում, գրականության մեջ հայտնի է «Էջմիածնի Աւետարան» անունով. ունի փղոսկրյա կազմ։ Ֆ. Մակլերը լույս է ընծայել նրա լուսատիպ հրատարակությունը. „L'Évangile Arménien. Edition phototypique du manuscrit 229 de la Bibliothèque d'Etchmiadzin, publiée sous les auspices de M. Léon Mantacheff. Paris, P. Geuthner, 1920".

(1001 թ.), № 4804 (1018 թ.), № 283 (1033 թ.), № 6201 (1038 թ.), № 3723 (1045 թ.), № 3793 (1053 թ.), № 3784 (1057 թ.), № 311 (1066 թ.), № 10434 (1069 թ.)[1], № 275 (1071—78 թթ.) և № 288 (1099 թ.)։ Վենետիկի հնագույն օրինակը Մլքե թագուհու վերոհիշյալ ավետարանն է, որը գրված է համարվում 851—922 թթ. միջև և կրում է 86 թվահամարը. դրանից հետո ժամանակագրական կարգով գալիս են՝ № 103 (Թ/Ժ դդ.), № 123 (նույնպես), № 116 (1007 թ.), № 108 (Ժ դ.), № 102 (ԺԱ դ.), № 106 (նույնպես) և № 159 (նույնպես)։ Երուսաղեմի մատենադարանից որպես հնագույն օրինակներ մեզ հայտնի են № 2562 (Թ/Ժ դդ.), №2555 (Ժ դ.) և №3624 (1041 թ.)։ Իսկ Վիեննայի մատենադարանն ունի ԺԱ/ԺԲ դարերի գրչության համարվող երկու ավետարաններ՝ №№ 608 և 1031։

Թե՛ ամբողջական Աստվածաշնչի և թե՛ Ավետարանի ձեռագրերի մեջ կան նաև հետագա դարերի մի շարք ընդօրինակություններ, որոնք նույնպես հին և ընտիր նախագաղափարներ են ունեցել։ Այդպիսիներից է եղել, օրինակ, Անկյուրիայի Կարմիր վանքի № 45 ձեռագիր Աստվածաշունչը, որի նախագաղափար օրինակը 986 թվականից էր։

Աստվածաշնչի տարբեր մասերի հին ընդօրինակությունների նմուշներից են նաև Երևանի ձեռ. № 3845՝ Պողոս առաքյալի թղթերը (1173 թ.), Երուսաղեմի ձեռ. № 326՝ Հայտնության գիրք (1190—1202 թթ.), Փարիզի Ազգային Մատենադարանի հայ. ձեռ. № 27՝ Նոր Կտակարան՝ առանց ավետարանների (ԺԲ դ.) և այլն։ Կան նաև ավելի հին գրչություն ունեցող սաղմոսարաններ։

Պարզ է, որ ձեռագրական այս հարուստ ժառանգության առկայությունը հայագիտության համար թանկագին գրավական է՝ հայկական թարգմանության բնական ու գիտական բնագրի պատրաստմանը ձեռնարկելու և այն հաջողապես իրագործելու համար։ Քննական բնագրի պատրաստման հարցի և նրա բանասիրական սկզբունքների վերաբերյալ մեր տեսակետները պարզել ենք մամուլում[2]։

---

[1] Այս ձեռագրի հիշատակագրություններում գտնում ենք Անանիա Նարեկացի և Անանիա Վարագացի անունները։ Ան. Վարագացին 1069 թվականին ձեռագիրն ընդօրինակել տվողն է, որն իր անձի մասին խոսում է համեստ որակումներով. իսկ Ան. Նարեկացին հիշատակվում է երրորդ դեմքով և գովասանական որակումներով, Ուրեմն՝ նրանք տարբեր անձնավորություններ են։

Ըստ երևույթին՝ նրանցից առաջինը սույն ձեռագրին նախագաղափար ծառայած օրինակի ստացողն է եղել և հավանաբար Ժ դարի մատենագիր Ան. Նարեկացին է, Գրիգոր Նարեկացու հարազատներից և նրա ուսուցիչը (տես ստ, հտ. Ա, էջ 726—730)։ Նրան վերաբերող հիշատակագրությունն է՝ «Անանիայի Նարեկացւոյ աստուածազան հռետորի և հզաւր վարդապետի է սուրբ Աւետարանս այս» էն (էջ 25բ)։

Երկրորդը՝ Ան. Վարագացին 1069 թ. ընդօրինակված սույն ձեռագրի ստացողն է, ինչպես պարզ երևում է նրա հիշատակարանից. «Ի ՇԺԸ թուաբերութեանս Հայոց ես՝ Անանիա Վարագացի, նուաստ ի կրօնաւորս և տրուպ և կրտսեր ի գիտնաւորս,... ետու գրել զսուրբ Աւետարանս՝ Յովհանէսի գրչի և ստացայ զսա յիմոց արդար և [իր]աւացի արդեանց, զոր ի վեր համարիմ քան զամենայն աշխարհս ... մանաւանդ վասն [ստուգու]թեան սորին և ընտրութեան բանի[ց Աւետար]անի և տնհատի և ամենայն արուեստի, որ է վկայեալ աւրինակն յամենայն գիտնականաց Հայոց, զոր ասէին յաւանդութենէ՝ գրեալ ձեռամբ սրբոյն Մաստոցվայ վարդապետի և թարգմանչի. և իմ այսմ ամենայնի հասու եղեալ և տեղեկացեալ վասն լաւութեան սորա, զոր ոչ արժէ աշխարհ գիւղքիկս զսա, որ է մեծ և պատուական ի սրտի իմում և ամենայն գիտնականաց» էն (էջ 286բ—287ա)։

Այս հիշատակարանը միաժամանակ կրում է սույն օրինակի հնության կնիքը։

[2] Տես՝ Հ. Ս. Անասյան, «Էջմիածնի տպարանի սուրբգրական հրատարակությունները», Էջմիածին (ամս.), 1972, № 12, էջ 73—88։

Հայկական բնագիրն իր գիտական նշանակությամբ վաղուց է գրավել բանասիրական աշխարհի ուշադրությունը որպես մի թարգմանություն, որն անսահման հնարավորություններ է պարունակում իր հերթին օգնելու վերականգնըմանը հունարեն այն բնագրերի, որոնցից առաջացել է և որոնց բնագրական նկարագիրը նույնպես տուժել է դարերի ընթացքում։ Դեռևս ԺԷ դարի վերջերին Սորբոնի գիտնականներից Լ. Պիկը գտնում էր, որ հայկական բնագիրը թարգմանությունների շարքում լավագույնն է՝ հունականը վերակազմելու համար[1]։ ԺԸ դ. սկզբներին Լակրոզը, որը «Թագուհի թարգմանութեանց» է անվանել հայկական բնագիրը, նույնպես գտնում էր, որ հունարեն Յոթանասնից բնագրի շատ-ու-շատ մասերը կարող են վերականգնվել հայկականի օգնությամբ[2]։ Այս կարծիքները հետզհետե տեղ են գրավել հունական բնագրերին նվիրված բանասիրական աշխատանքների հիմքում։ Հայկական թարգմանության տարբերակներն օգտագործելու փորձեր են կատարել Գ. Վիլֆրուան (1775 թ.)[3] Հ. Հ. Գրիսբախը (1775 թ.)[4], Ռ. Հոլմզը (1798 թ.)[5], Ս. Պ. Տրեջելզը (1875 թ.)[6] և ուրիշներ։ Պ. Ս. Լուրդեն 1780/90-ական թվականներին հայկական բնագիրը լատիներենի էր թարգմանում՝ նպատակ ունենալով այն հրատարակել որպես հավելված Վալտոնի հայտնի բազմալեզվյան Աստվածաշնչին. այս աշխատությունը, որը հեղինակի մահվամբ կիսատ է մնացել, այժմ պահվում է Մյունխենում[7]։ Եղել են նմանօրինակ ուրիշ ձեռնարկումներ ևս, բայց հայկական բնագրի

---

1 Հմմտ. Aug. Calmet, „Dictionnaire... de la Bible", t. I, Petit-Montrouge, 1846, p. 871։ Գ. Զարբհանալյան, «Մատենադարան...», էջ 241։

2 Տես Լակրոզի 29 սեպտ. 1718 թվակիր նամակը հետևյալ հրատարակության մեջ. „Le Nouveau Testament de notre Seigneur Jesus-Christ, traduit en françois sur l'original grec... par Mrs. de Beausobre et Lenfant", t. I, Amsterdam, 1718, p. CCXI—CCXII.

3 Գ. Ա. Շրումփ և Գ. Զարբհանալյան, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս (ԺԴ—ԺԹ դար)», Վենետիկ, 1895, էջ 93 («Ի մատենին 'The Bible of every Land' կ'ընթեռնունք թէ Վիլֆրուա իր ժամանակին բանասիրաց հետ միաբանութեամբ ձեռք զարկած ըլլայ յամին 1775 ի նոր հրատարակութիւն Աստուածաշունչ գրոց, օգտուելով հայ թարգմանութենէն ալ. և թէ իբրու նմոյշ մը՝ Ամբակումայ մարգարէութեան գիրքը տպագրելով, յետոյ այդ ձեռնարկ խափանուած ըլլայ»)։

T. H. Darlow and H. F. Moule, „Historical Catalogue of the Printed Editions of Holy Scripture...", vol. II, New York, 1963, p. 87 („1775. Habakkuk.—Published as a specimen of an intended edition of the Bible in Armenian, with a Latin translation, projected by members of the *Académie Clémentine à la Rue St. Honoré*, among whom was the Abbé Villefroy").

4 Տես՝ „Novum Testamentum graece; textum ad fidem codicum versionum et patrum emendavit et lectionis varietatem adiecit Io. Iac. Griesbach", vol. II, Halae, 1775; vol. I, Halae, 1777.

Ա հատորն ավելի ուշ է լույս տեսել քան Բ-ը.

Նույնի Բ հրատ. „Novum Testamentum graece...", vol. I, Halae Saxorum—Londini, 1796; vol. II, Jenae, 1805.

5 Տես՝ „Vetus Testamentum Graecum, cum variis lectionibus, edidit Robertus Holmes", t. I—V, Oxonii, 1798—1827.

6 Տես՝ „The Greek New Testament; edited from Ancient Authorities, with their Various Readings in full, and the Latine Version of Jerome, by Samuel Prideaux Tregelles", London, 1857—1879. Vol. I—VII.

7 Հմմտ. Գր. Գալեմքյարյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն», Վիեննա, 1892, ձեռ. № № 19 և 20։

լատիներեն մի ամբողջական թարգմանություն, որը դեռ մնում է անտիպ, կատարել է վենետիկյան Մխիթարյան Եղիա Թոմաճանյանը[1]։ Կասկած չկա, որ այդպիսի մի աշխատության հրատարակումն անհամեմատ կերպով վեր կհաներ հայկական բնագրի գիտական արժանիքները։ Շվեցարացի արևելագետ Ժ. Կյուանդեն, որը հայկական թարգմանության բնագրային հարցերի լավագույն մասնագետներից է, գտնում է, որ «հայկական ըստ ամենայնի նշանավոր թարգմանությունը հանդիսանում է մի ինքնատիպ գլուխ գործոց», և հետևյալ գնահատական տողերով է բնորոշում բանասիրական գիտությունների բնագավառում նրա ունեցած դերը. «Ս. Գրքի հայկական թարգմանությունը մի անսպառ հանք է, որի գանձերը կարծես նորոգվում են այնքան, որքան շահագործվում են, նրանով, որ մի հարցից մյուսն է առաջանում և ամեն մի լուծված խնդիր ուղի է բաց անում դեպի նոր պրպտումներ»[2]։

Հայկական թարգմանության բնագրական հարցերի հետ կապված է կանոնի խնդիրը։ Արդեն նշեցինք, որ Աստվածաշնչի Ե դարի թարգմանությունների շրջանում Հայաստանում անհրաժեշտորեն ընդունված կանոնները կախում ունեին նախ ասորականից և ապա՝ հունականից։ Սակայն դարերի ընթացքում կանոնը Հայաստանում կրել է որոշ տատանումներ, ինչպես կարելի է եզրակացնել մատենագրական այն բազմաթիվ վկայություններից (կանոնական ցուցակներ են), որոնք մեծ չափերով հակասում են իրար[3]։ Այդ տատանումներն ըստ երևույթին արդյունք էին տարակարծությունների, որոնք ի վերջո իրենց լուծումը գտել են այժմյան Հայկական Կանոնում։ Վերջինս ունի հետևյալ պատկերը[4]։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆ

Ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԸ

1. Ծնունդք.
2. Ելք.
3. Ղևտական.
4. Թիւք.
5. Երկրորդ օրէնք (Երկրորդումն օրինաց).
6. Յեսու որդի Նաւեայ.
7. Դատաւորք.
8. Հռութ.
9. Թագաւորութեանց Ա.
10. Թագաւորութեանց Բ.
11. Թագաւորութեանց Գ.
12. Թագաւորութեանց Դ.
13. Մնացորդաց Ա.

---

[1] Հմմտ. Գ. Զարբհանալյան, «Մատենադարան...», էջ 244։

[2] G. Cuendet, „Exactitude et adresse dans la versien arménienne de la Bible"- Հանդէս Ամսօրեայ, 1935, էջ 563—570.

[3] Հմմտ. Месроп Тер-Мовсесян, „История перевода Библии на армянский язык", Петербург, 1902, стр. 224—266 (Հին և Նոր Կտակարանների վերաբերյալ)։ Օգ. Սեքուլյա, «Նոյ Կտակարանի գրքերու կարգը Հայոց քով», Վիեննա, 1949։

[4] Հայկական կանոնի պատմության համար հմմտ. Մսեր Մսերյանց, «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց», Մոսկվա, 1850, էջ 113—115։ Հովհ. Տէրոյենց, «Քրիստոնէական վարդապետութիւն», Կ. Պոլիս 1858, էջ 14—15։ Հովհ. Տէրոյենց, «Բանագատ», Կ. Պոլիս, 1860. էջ 62—79։ Հովս. Գաթըրճյան, «Հիմնական տարբերութիւն կաթուղիկէ և էջմիածնական դաւանութեանց», Կ. Պոլիս, 1864, էջ 286—292։ Հովհ. Տէրոյենց, «Իրաւախոհ», հտ. Գ, Կ. Պոլիս, անթվ. (1869?), էջ 5—18։ Հովհ. Տէրոյենց, «Աստուածաշունչին երկրորդականոն գրոց վրայ», Յոյս. 1874, էջ 736—766։ Մաղ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 884—885, § 607։

14. Մնացորդաց Բ.
15. Եզրի Ա.[1]
16. Եզրի Բ.[2]
17. Նեեմի, որ և Եզրի Գ.[3]
18. Եսթեր.
19. Յուդիթ.
20. Տովբիթ.
21. Մակաբայեցւոց Ա.
22. Մակաբայեցւոց Բ.
23. Մակաբայեցւոց Գ.
24. Սաղմոսք Դաւթի.
25. Առակք Սողոմոնի.
26. Բանք Ժողովողին որդւոյ Դաւթի.
27. Երգ երգոց Սողոմոնի.
28. Իմաստութիւն Սողոմոնի.
29. Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ (Գիրք Սիրաքայ).
30. Յոբ.
31. Եսայի.
32. Երեմիա.
33. Թուղթ Բարուքայ.
34. Ողբք Երեմիայ[4].
35. Եզեկիէլ.
36. Դանիէլ.
37. Ովսէէ.
38. Ամովս.
39. Միքիէ.
40. Յովէլ.
41. Աբդիու.
42. Յովնան.
43. Նաւում.
44. Ամբակում.
45. Սոփոնիա.
46. Անգէոս.
47. Զաքարիա.
48. Մաղաքիա.

Բ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԸ

1. Աւետարան ըստ Մատթէոսի.
2. — ըստ Մարկոսի.
3. — ըստ Ղուկասու.
4. — ըստ Յովհաննու.
5. Գործք առաքելոց.
6. Թուղթ Յակոբայ.
7. — Պետրոսի Ա.
8. — Պետրոսի Բ.
9. — Յովհաննու Ա.
10. — Յովհաննու Բ.
11. — Յովհաննու Գ.
12. — Յուդայի.
13. — Պօղոսի առ Հռոմայեցիս.
14. — — առ Կորնթացիս Ա.
15. Թուղթ Պօղոսի առ Կորնթացիս Բ.
16. — — առ Գաղատացիս.
17. — — առ Եփեսացիս.
18. — — առ Փիլիպպեցիս.
19. — — առ Կողոսացիս.
20. — — առ Թեսաղոնիկ. Ա.
21. — — առ Թեսաղոնիկ. Բ.
22. — — առ Եբրայեցիս.
23. — — առ Տիմոթէոս Ա.
24. — — առ Տիմոթէոս Բ.
25. — — առ Տիտոս.
26. — — առ Փիլիմոն.
27. Յայտնութիւն Յովհաննու.

---

[1] Սկ. «Եւ արար Յովսիա Թագաւոր զզատիկն տեառն յԵրուսաղէմ»։
Լատ. կանոնն այս գիրքը չունի, բայց Վուլգատայի որոշ ձեռագրեր ունեն Եզրի Գ անունով։

[2] Սկ. «Յառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից»։
Լատ. կանոնում այս գիրքը կոչվում է Եզրի Ա:

[3] Սկ. «Եւ եղև յամսեանն քասղև յամի քսաներորդի Արտաշէսի արքայի, ես էի ի Շօշ»։
Հուն. Յոթանասնից կանոնում այս գիրքը նախորդի կցորդն է հանդիսանում, այսպիսի խորագրով՝ Եզրի Բ (Նեեմի). սակայն ձեռագրերում երբեմն պատահում է նաև առանձին՝ Գիրք Նեեմեայ կամ Բանք Նեեմեայ անունով. այսպես է նաև հուն. այժմյան կանոնում: Լատ. կանոնում անվանվում է Գիրք Նեեմեայ որ և Եզրի Բ:

[4] Ողբը հազվադեպ է հիշատակվում հայկ. հին և նոր ցուցակներում, ինչպես և օտար ցուցակներում, բայց ընկալվում է Երեմիայի մարգարեության հետ: Առկա լինելով եբրայական կանոնում, այս գիրքը անբաժանելի մասն է կազմում նաև քրիստոնեական եկեղեցիների ընդունած նախականոն գրքերի։

Հին և Նոր Կտակարանների նախականոն *և* երկրորդականոն *անվանվող գրքերի մասին ըստ էության արդեն խոսվեց նախորդ էջերում: Մնում է ասել, որ մեր օրերում Նոր Կտակարանի կանոնականության հարցում հայկական կանոնը համաձայնության մեջ է այժմյան հունական, լատինական և բողոքական կանոնների հետ. բայց Հին Կտակարանի հարցում որոշ տարաձայնություններ ունի նրանց հետ, հատկապես բողոքական կանոնի հետ: Բողոքականների համար*[1] *Հին Կտակարանում նախականոն և երկրորդականոն գրքերի հարց գոյություն չունի, որովհետև նրանց կանոնը միատարր է՝ ընդգրկելով բացառապես եբրայական կանոնի 39 գրքերը, որ նրանք պարզապես անվանում են* կանոնական *(և ոչ թե* նախականոն*), իսկ դրանից դուրս մնացածները մերժելով՝ անվանում են* անկանոն *կամ* պարականոն *(և ոչ թե* երկրորդականոն*): Սկզբունքային այս հիմնական տարբերությամբ նրանք հեռանում են հայկական կանոնի պատկերացումներից՝ պարականոն համարելով հայոց երկրորդականոն գրքերը (հայկական ցուցակի §§ 15, 19—23, 28—29 և 33 գրքերը, և §§ 18 և 36 գրքերի որոշ մասերը). այնպես որ կանոնականության հարցում միմյանց խոտոր են համեմատվում հայ բանասիրության և բողոքական բանասիրության գնահատումները, հետևաբար և՝ եզրակացությունները: Այլ բնույթի է հայկական կանոնի հարաբերությունը հունականի և լատինականի հետ, որոնք նույնպես ունեն նախականոն և երկրորդականոն գրքերի բաժանումը: Տարաձայնություն չունենալով նախականոն գրքերի խնդրում, հայկական կանոնը երկրորդականոն գրքերի խնդրում նրանցից ունի փոքր տարբերություններ: Այսպես՝ հունական այժմյան կանոնը*[2] *ունենալով հայկականի բոլոր երկրորդականոնները, նրանից ավելի ունի, որպես երկրորդականոն, մեկ գիրք ևս՝* Թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ի Բաբիլոն, *որը հայերի համար պարականոն է*[3]*: Իսկ լատինական կանոնը*[4] *պարականոն է համարում հայկական երկրորդականոններից* Եզրի Ա. *և* Մակաբայեցւոց Գ *գրքերը (ցուցակի §§ 15 և 23 գրքերը), չունենալով հայկական կանոնից դուրս որևէ ուրիշ գիրք:*

Հայկական Աստվածաշնչի պատմության հետ կապված կան նաև ուրիշ հարցեր (նախադրություններ, համաբարբառներ ևն), որոնց մենք չենք անդրադառնում այստեղ՝ էջերի սղության պատճառով, նկատի ունենալով, որ դրանք անմիջականորեն չեն էլ առնչվում բնագրական հարցերի հետ:

Հայկ. թարգմանության ամբողջական և մասնակի հրատարակությունների հանրագումարը, մեր ունեցած ոչ լրիվ տվյալներով, կազմում է մոտ. 370 միավոր: Ստորև խմբավորում ենք մեզ հայտնի տպագրությունները հետևյալ դասավորությամբ.

---

[1] *Բողոքական կանոնի համար նկատի ունենք «Աստվածաշնչի Ամերիկյան Ընկերության» և «Աստվածաշնչի Բրիտանական և Արտաքին Ընկերության» ընթացիկ հրատարակությունները: Այդպիսիներից է հայ. գրաբար Աստվածաշնչի հետևյալ հրատարակությունը, որը բողոքական կանոնի է ենթարկված.*

«Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց», Կ. Պոլիս, 1895:

[2] *Հմմտ.* „Ἡ Παλαιὰ Διαθήκη κατὰ τοὺς Ἑβδομήκοντα ἐγκρίσει τῆς Δ' Ἱερᾶς Συνόδου τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος", ἔκδ. Ε', Ἀθῆναι, Ἀδελφότης Θεολόγων ἡ „Ζωή", 1965.

[3] *Այս գիրքը ևս մեզ հասել է հայ. հին թարգմանությամբ, բայց ըստ երևույթին միշտ էլ համարվել է պարականոն:*

[4] *Հմմտ.* „Biblia Sacra Vulgatae Editionis, juxta exemplaria ex Typographia Apostolica Vaticana Romae 1592 et 1593", t. I—IV, Ratisbonae, 1862.

Ա. Ամբողջական հրատարակություններ.
Բ. Սաղմոսարաններ.
Գ. Գիրք Առակաց.
Դ. Իմաստություն Սողոմոնի.
Ե. Գիրք Առակաց, Գիրք Իմաստության և Բանք Ժողովողին (միասին).
Զ. Սիրաք.
Է. Սիրաք և Թուղթ Երեմիայի (միասին).
Ը. Աբդիու.
Թ. Ամբակում.
Ժ. Նոր Կտակարանի լրիվ օրինակներ.
ԺԱ. Նոր Կտակարանի առաջին մաս (Ավետարան).
ԺԲ. Նոր Կտակարանի երկրորդ մաս (Գործք, Թղթեր և Հայտնություն)։

Ստուգումների և նոր որոնումների հնարավորություն տալու համար նշում ենք նաև այն գրադարաններն ու վայրերը, ուր գտնվում են նշված հրատարակություններից նմուշներ[1]։

---

[1] Ամեն մի հրատարակության համար նշում ենք միայն մեկ նմուշի տեղ՝ նախընտրություն տալով Երևան քաղաքի գրադարաններին, հետևյալ հերթականությամբ. Պետ. Մատենադարան (Պետ. Մատ.), Ալ. Մյասնիկյանի անվ. Հանրային Գրադարան (ՀԳ), Գրականության և Արվեստի Թանգարան (ԳԱԹ), Պատմական Թանգարան (ՊԹ), Գիտությունների Ակադեմիայի Կենտրոնական Գրադարան (ԱԿԳ), Պետական Համալսարանի Գրադարան (ՊՀ)։

Վենետիկում (Ս. Ղազար) գտնվող նմուշների նկարագրությունները սիրահոժար կերպով կատարել է Մխիթարյան միաբան Հ. Սահակ Ճեմճեմյանը, Կ. Պոլսում գտնվողներինը՝ բանասեր Գևորգ Բամպուքճյանը, Վիեննայում գտնվողներինը՝ դոկտ. Մեսրոպ Ծ. վ. Գրիգորյանը, որոնց հայտնում ենք խորին շնորհակալություն։

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Տպ. Նոր-Ջուղա, մոտ. 1650 թ.

[Աստուածաշունչ գիրք...]:

Աստվածաշնչի տպագրության առաջին փորձը կատարվել է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքում հաստատված տպարանում՝ մոտ. 1650 թ., Հովհաննես Ջուղայեցու ձեռքով, որը Խաչատուր Կեսարացու աշակերտն էր։ Պատմագիր Խաչատուր Ջուղայեցին խոսելով այդ տպարանի մասին՝ ասում է. «Ուր և ընդ բազում գրեանց՝ որք տպեցին, սկսան ընդ որոց և տպել զԱստուածաշունչ գիրն. այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչև ցայսօր ի միջի մերում»[2]։

Սույն տպագրության թերավարտ մնալու վերաբերյալ հետևյալն է գրում ֆրանսիացի ուղևոր Տավեռնիեն՝ Նոր-Ջուղայի հայկական տպարանի մասին խոսելիս.

„On avoit deja imprimé en Armenien les Epitres de saint Paul; les sept Pseaumes Penitentiaux, et des livres de prieres, et l'on se mit en suite en devoir d'imprimer la Bible entiere; mais outre que l'impression estoit trop blanche, et qu'on ne peut jamais bien venir à bout de composer l'ancre, il fallut tout rompre pour éviter les fâcheuses suites que cette nouvelle invention alloit causer. Car d'un costé les enfens ne vouloient plus aprendre à écrire, disant qu'ils ne s'adonnoient à cét art que pour laisser en leur mémoire une Bible ou un Nouveau Testament de leur propre main, de l'autre cette imprimerie ôtoit le pain à bien des gens qui gagnoient leur vie à l'écriture"[1].

Այլ տպ. Ամստերդամ, 1666 թ.

Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց նոր պարունակող: Տարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց: Իսկ զկնի հրամանաւ վեհափառին տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի զըլխակարգեալ և տնատեալ ըստ Դաղմատացւոցն, նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս տողնբեր կարգեալ ամենեցուն նուաստի ումեմն բանի տեառն սպասաւորի՝ Ոսկանի Երևանեցւոյ: ՅԱմստէրդամ, նոր տպարանում Սրբոյն Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի, ի թուում փրկչին 1666, իսկ Հայոց՝ ՌՃԺԵ, նամսեանն մարտի մետասանի:

[Ը]+628+834 (շարվ. 22.2×17.8 սմ): Պտկրգ.: Բովանդակում է Հին և Նոր Կտակարանները՝ ըստ հայկական կանոնի: Հատորի վերջում, որպես հավելված, հրատարակված են երկու պարականոն գրքեր՝ «Աղօթք Մանասէի արքայի Յուդայի» *(էջ 719, սկ.* «Տէր ամենակալ աստուած Աբրահամու») *և* «Գիրք Եզրասայ Չորրորդ» *(էջ 719—744, սկ.* «Գիրք Եզրասայ մարգարէի երկրորդ, որդւոյ Սարէի որդւոյ Ազարէի»), *վերջինս՝ նոր թարգմանությամբ: Այնուհետև հավելվածում տրված են Հերոնիմոս Ստրիդոնացու առաջաբանն* (Prologus galeatus) *ու նախադրություններից* (Praefationes) *մի քանիսը՝ նույնպես նոր թարգմանությամբ. դրանք են՝* «Ջերոնիմոսի Առաջաբանութիւն սաղաւարտեալ» *(էջ 745—746, սկ.* «Զքսան և երկուս տառս գոլ առ Եբրայեցիս...»), «Ջերոնիմոս առ Պաւլինոս»[2] *(էջ 747—752, սկ.* «Եղբայր Ամբրոսիոս, զքոյայինս ընծայիկս ինձ

---

[1] *Այս խմբի մեջ ենք նշում նաև այն տպագրությունները, որոնք թեև թերակատար են մնացել, բայց ամբողջական հրատարակության ծրագրով են եղել։*

[2] *«Խաչատուր արքեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ, 1905, էջ 121։*

[1] „Les six voyages de Jean Baptiste Tavernier", t. I, Paris, 1692, p. 672.

[2] *Տպված է՝* Ջերոնիմոսի Պաւլինացւոյ:

ընձեռեալ»), «Ձեռն արկից ճամառօտիւ և ի Նորն Կտակարան» (էջ 752—753, սկ. «Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յոհաննէս, չորեքանուեայ կառ»)[1], «Նախադրութիւն սրբոյն Ջէրոնիմոսի քահանայի ի Հնգամատեանն Մովսէսի, առ Դեսիդերիում» (էջ 753—754, սկ. «Տարփման իմոյ զտարփալիս առի զնամակս»), «Նոյնոյ, յԱւետարանիչսն, առ Դամասոս Նախադրութիւն» (էջ 755—756, սկ. «Զնոր գործ առնել զիս հարկես»), «Նոյնոյ, ի Թուաբանութենէ գրոց եկեղեցականաց» (էջ 756—759, առաքելական թղթերի նախադրությունները): Հաջորդում են չորս ավետարանների նախադրությունները (էջ 759), որոնք Ոսկանի թարգմանությունները չեն, այլ գալիս են նրա ունեցած հայերեն ձեռագրից[2]: Հատորի լրացուցիչ նյութերն են՝ «Ցանգ վկայութեանց... ներ Նորում Կտակարանում ճամառօտեցելոց ի Հնոյն» (էջ 760—765)[3], «Եբրայեցւոց, Քաղդէացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն» (էջ 765—773), «Ցանկ մատենական» (էջ 774—829)[4] և «Ոտանաւոր բարեպաշտի թագաւորին Հայոց Հեթմոյ» (էջ 829—830):

Գրքի սկզբում դրված է Ոսկան Երևանցու «Բանահիւսութիւն առ վեհագոյն հայրապետն Հայոց տէր Յակոբ» են (էջ Գ—Դ).

«Մեծահրամանի իշխողիդ և վեհափառի հրամանաւ յանձին կալցուք զգործառնութիւնս... առ ի բաղդատել և ընդ իրեարս համեմատել զրաբբառս Հայոց ընդ Դաղմատացւոց, ստիքսելով և գլխատելով, և ըստ նոցայն համարոյ շարակարգելով սակս համարաբբառոյն, որ առ նոսա գոյ յօրինեալ, այսինքն հանրոյ աստուածայնոյ մատենին Հնոյ և Նորոյ, որպէս առ մեզ միայն Աւետարանին սրբոյ տեսանեմք յարմարեալ և ոչ ամենեցուն գրոց: Իսկ Աւետարանին այսու ևս պակասի, զի նոյն գլուխն, թէ՛ Մատթէոսին և թէ՛ այլոցն, ինքն առ ինքն ոչ ունի համաձայնութիւն, այլ առ այլս միայն. բայց Դաղմատացւոցն ուրանօր նոյն գիրքն ինքն առ ինքն ունի զհամաձայնութիւն. եդեալ է այսու գրով. վեր և վայր՝ առ որս և զհամարաթիւսն եդեալ կրկնակիւք. նաև ցանգքն ըստ այս են յարմարեալք: Վասն որոյ և մեք, ո՜վ Հայր պատուական, ըստ բարձրագունից հրամանաց քոց արարաք, գլխատելով և տնատելով, զհամարաթիւսն ևս առ ընթեր նմին դնելով բազմաւ աշխատութեամբ. քանզի պատահեցաւ ուրեք առաւելութիւն ի մերս և պակասութիւն ի նոսա. նոյնպէս անդրադարձութեամբ առաւելութիւն ի նոսա և պակասութիւն ի մերս. առ այսպիսիս լռեցաք և ոչ իշխեցաք առաւելուլ կամ պակասեցուցանել, թէպէտ ոչինչ գոյր վնաս: Քանզի ուրանօր

[1] Ոսկանի հրատարակած առանձին «Նոր Կտակարան»-ում (Ամստերդամ, 1668) վերնագրված է՝ «Նախադրութիւն Ջերոնիմոսի քահանայի ի Նոր Կտակարանս»:

[2] Այդ նույն բնագրերն են նաև Հովհ. Զոհրապյանի հրատարակությունում (մեծադիր), էջ 647, 669—670, 684 և 706:

[3] Հին և Նոր Կտակարանների համեմատությունը ցույց տվող համաբարբառ է:

[4] Առարկայական ցանկ է:

զթիւսն եմք ի բաց թողեալ՝ միով կամ երկուքումբք և կամ այլ աւելիօք թուօք, անդանօր մերս է պակասեալ: Իսկ ուրանօր բազմօք տողիւք կամ էջիւ, մանաւանդ մատենիւ իսկ, այն առ նոսա ոչ է գտեալ, նաև մատեանք որք կարի յաւէտ են եդեալք տարաձայնք և կամ խառնեալք, և կամ առաւելեալք և նուազեալք՝ այնպիսեացն զգլխահամարսն միայն եդեալ և զմանր համարսն ի բաց եմ թողեալ, որպէս Բարուքայն, Յեսուայն՝ որ է Սիրաքայն, և այլոց: Իսկ ուրանօր մատեանն ամենևին ոչ է եդեալ առ նոսա՝ զմերն միայն գրելով թողեալ եմ:

«Նաև զմերականս համար ընդ նոցայն համարոյ շարակարգել անհնարին եղև. քանզի Դաղմատացւոցն երիւք համարիւք ամրափակեալ կայ՝ զորս խախտել ամենևին անհնարին է, մանաւանդ զի համաձայնութիւն հանրոյ Աստուածաշնչոյն՝ նոցա համարաթուովն է և ոչ մերովս. զմերն և նոցայն համայն կարգել անհնարին եղև, զի ի լուսանցսն տեղի ոչ մնաց. իսկ զմերն միայն գրելով՝ համաձայնութիւն ոչ լինիւր, քանզի համաձայնութիւնն նոցա համարովն է և նոցա ցանգովն, որպէս և տեսանէ սրբանձնութիւն ձեր: Այլ և զփոքր համարն ոչ կարացաք հայկականօք տառիւք շարադրել, քանզի ընդ համարողականին եօթն գիրս ևս գոն դրոշմեալք. զի եթէ զհամարսն գրով[ք] մերովք եդեալ զգիրսն զայնոսիկ ի բաց թողուաք՝ անհնարին էր. քանզի ուրանօր զհամաձայնութիւնսն արարեալ են, ընդ համարաթուոյն և զտառսն զայնոսիկ են եդեալ, որպէս ահա յայտ է. վասն որոյ ոչ կարացաք բառնալ, զի մի՛ ի համաձայնութիւնսն այլապէս գրեսցին և ներ տեղւոջ իւրեանց այլապէս, որովք խարբալումն լինի յուզողին. սակս որոյ՝ զամենայն ըստ նոցայն շարակարգեցաք: Բայց սակս անընդելութեան ձեռյ համարողականին՝ ստա նախակարգեցաք մերով համարագրով՝ զմերսն հուպ նոցին եդեալ[1], զի նայեմ վայրում սոքօք վարժեսցին և ներ տեղւոջ իւրում անտարակոյս ընթասցին: Որոց ընթերցմամբ և տեղեկութեամբ լուսաւորեսցին... Ամէն»:

Գրքի վերջում՝ «Առ ընթերցողսն» (էջ 831—833).

«Շնորհիւ և ողորմութեամբ ամենազօրին աստուծոյ մատեանս Աստուածաշունչ բազմաւ աշխատութեամբ կարգաւորեցաւ՝ գլխագրութեամբ և տնատութեամբ ըստ Դաղմատացւոցն, նաև ցանգով և համաձայնութեամբ: Քանզի համաձայնութիւն բովանդակից մատենից ըստ սրբոյ Աւետարանին՝ առ մեզ ոչ գտանին, այլ առ Դաղմատացիսն միայն, թէպէտ առ մեզ ևս գտանին ի Դաղմատացւոց թարգմանեալ, որպիսի է Աստուածաշունչն Ղազարու վարդապետի Վալաքացւոյ, և որք ի նմանէ գաղափարեալք են ներ քաղաքում Շոշում, այնք ևս ծայրատեալք և աղարտեալք ի գրչաց: Բայց ես նուաստս յամենից և յետնեալս անձամբ և գիտութեամբ ի մէջ մանկանց եկեղեցւոյ՝ տէր Ոսկանս, բանի սպասաւոր, յերկրէն Արարադու ի գիւղաքաղաքէն Երևանայ, հրամա-

[1] Խոսքը վերաբերում է Բ էջում դրված ցուցակին՝ «Համարողական արհեստ ընդ Հայոց համեմատեալ», որ է հայկական և արաբական թվերի համեմատական աղյուսակ:

նաւ հաւայն Հայոց և կաթուղիկոսին տեառն Ցակոբու եկեալ յԱմստերդամ, ձեռն արկի մատենոյս աստուածայնոյ: Զգլխատեալն ի Նախնեաց՝ ես ևս անատեցի ըստ Դաղմատացւոցն. զթիւսն և զհամաձայնութիւնսն առադրեցի մի ըստ միոջէ՝ որպէս էր հնար. քանզի ոչ ամենեքին և ամենայն իրօք միաբանեցան, այլ ի տեղիս յոլովս տարաձայնեցան գլխով և տամբ, ոմանք՝ յետ և յառաջ, ոմանք՝ թերիք և աւելորդք, որոց յարմարումն ընդ իրեարս կարի դժուարաւ եղև և բազմաւ ջանիւ, որպէս է տեսանել ի գիրս Մովսէսի, ի Յեսուայ, Թագաւորութեանցն. մանաւանդ ի գիրս Եսթերայ, Եզրասայ, Տուբիթայ, Սաղոմոնի, Դանիէլի և այլոց:

«Ո՞րք են այսպիսիք տարաղանութիւնք: Նախարդն՝ դրութիւն գլխոց և տանցն: Երկրորդն՝ գոլն և ոչ գոլն գրոց, գլխոց և տանց, թէ՛ առ մեզ և թէ՛ առ նոսա: Երրորդն՝ գլխոց և տանց առաւելութիւնն և նուազութիւնն: Չորրորդն՝ գլխոց և տանց յետ և յառաջ լինելն: Հինգերորդն՝ բանիցն այլատարազութիւնք և շաղփաղփութիւնք: Վեցերորդն՝ վասն մերոյն ցանգոյ և նախադրութեան:

«Նախարդն, որ է դրութիւն գլխոց և տանց, ոչ է յամենայն ուրեք ըստ կարգի շարակարգեալ, այլ խառնիխուռն: Քանզի ուրանօր էին համեմատք շարակարգեալք իրերաց, մեք ևս ըստ այնմ շարի զթիւսն յարադրեցաք. իսկ ուրանօր ոչ էին համաձայնք և յարմարք, զնոյն ևս խառնիխուռն կարգեցաք: Ըստ գլխոյ՝ դուն ուրեք գտանին միայն ի գիրս Եզրասայ, Եսթերայ. նաև ի գիրս Առակացն Սաղոմոնի և Դանիէլի. բայց ըստ տանց՝ նամենեսեան գիրս գտանին, դուն ուրեք համարան ընթանան. թէպէտ ի մատեանս Նորոց Կտակարանաց սակաւք գտանին այլատարազք, որպէս բաջամիտ ընթերցողաց բացայայտ երևի: Արդ՝ այսոցիկ այսպէս գոլով, ոչ զմերոյն շարադրութիւն բնաբանի կարացաք խախտել, և ոչ զնոցայն գլխոյ թիւ և տանց. քանզի թէ զթիւ գլխոցն խախտէաք կամ տանց՝ ընդ նոսին հարկ լինիւր և՛ զթիւ համաձայնութեանցն փոխել և՛ զթիւ ցանգոյն, որ էր անտանելի գործ: Վասնորոյ այսքանս հնարեցաք հազիւ. զմերայինն շարադրութիւն անխախտ պահել, և զգլխատութիւնս և զտնատութիւնս ըստ թուոյ նոցա յօրինել, որպէս ահա տեսանես ի գիրս Եսթերայ, Եզրասայ, Սաղոմոնի, Դանիէլի և այլոց:

«Երկրորդն է գոլ գրոցն և ոչ գոլ՝ առ մեզ և առ նոսա: Քանզի առ նոսա գոն գիրք Յեսուայ որդւոյ Սիրաքայ կատարելապէս ընկալեալ ըստ այլոց Աստուածաշնչոց գրոց՝ տնահամարով, գլխով և համաձայնութեամբ փակեալ. զոր և ես ըստ իմում կարի թարգմանեալ յօրինեցի ըստ Դաղմատացւոցն, քանզի մեզ ոչ գոյր լիապէս, այլ ծաղկաքաղ արարեալ: Նաև Ստեփաննոս վարդապետն Պողոնացի թարգմանեալ և առաքեալ ըստ մերոյ խնդրոյ, բայց ոչ ժամանեաց մեզ յօգնութիւն, այլ զկնի ամի միոյ. նաև զՉորրորդ գիրս Եզրասայ՝ որ մեզ ոչ գոյր ներ մատենից Աստուածայնոց, այլ միայն ի գրչարկս Սաղմոսավանից, զա՛յն ես ծաղրաքաղ արարեալ. նոյնպէս և զայն գիր ի հայս բարբառ արտալածեալ շարադրեցի. նաև զցանկս Աստուածաշնչին: Բայց այս Չորրորդս Եզրասա առ նոսա ևս երկրայս դոլով՝ ոչ ունի զհամաձայնութիւնս և ոչ ի տեղւոջ իւրում, այլ ի վերջոյ եդեալ ընդ Եզրասայ Երրորդի. իսկ Եզրասն՝ որ է առ Դաղմատացիս Երրորդ՝ առ մեզ Առաջին էր կարգեալ՝ ես ևս ըստ մերոյն առաջին կարգեցի, փոխադրելով զթիւ համաձայնութեանցն ներ ցանգոյն և ի լուսանցսն, բայց կարի աշխատանք եղև: Սակայն Երրորդ գիրք Մակաբայեցւոցն սակս առ նոսա ոչ գոլոյն՝ ես ևս ըստ մերոյն որպէս էր եդեալ՝ թարց գլխոյ և համարոյ՝ եդի:

«Երրորդն է գլխոց և տանց առաւելութիւնն և նուազութիւնն: Զայսս ես ի գիրս Եսթերայ, Տոբիթայ, Դանիէլի և այլոց բազմաց գտցես, որք ի ձեռն համարաթուոցն բացայայտնին. քանզի որք ի մեզ պակաս գոն, զթիւս նոցին ես եմք թողեալ՝ ուրանօր տեսանես զերեք կամ զչորս համարն դրեալ, և զայլսն ըստ կարգի. և ի մէջ այնոցիկ համարոցն, թուով միով կամ երկուքումբք, կամ ես յոլովիւք ի բաց թողեալ՝ որքան թիւ ոչ գոցի այնքանով թուով զմերն պակաս լեալ իմա: Նոյնպէս և զաւելեալն ի մեզ՝ յորժամ տեսանիցես բազմաւ տողով ոչ անատեալ, գիտասցես թէ այնքան բանն աւելորդ է առ մեզ, մանաւանդ զի ըղնգնաձև նշանն Լատինացւոց եդաք ի մէջ, որքանք պարունակին ներ այնց ըղնգնաձևոց նշանացն, թէ՛ բառ, թէ՛ բան, այնքանքն են աւելորդք և առաւելեալք բան զԼատինացւոցն, որպէս գտանես ի գիրս Թագաւորաց, Եսթերայ, Առակացն և այլոց: Բայց գոն ևս յայնց նշանացն, որք ըստ Լատինացւոցն են եդեալք:

«Չորրորդ՝ գլխոց և տանց յառաջ և յետ գոլն: Քանզի գոն գլուխք ի գիրս Եսթերայ և Սաղոմոնի և այլոց, որոց կէսն աստ և կէսն յայլում վայրոջ է դրեալ. նաև տասնեմէկն յառաջ է դրեալ և մինն յետոյ. երեսունն յառաջ է դրեալ և քանեհինգն յետոյ. տասներեքն յառաջ է և մինն յետոյ: Նոյնպէս և տանցն գոն յետեյառաջութիւնք, զորս զամենեսեան ներ տեղւոջ իւրեանց գտանել մարթանայք: Բայց Երրորդ Մակաբայեցին որ ոչ գոյ Լատինացւոց, ոչ անատեցաք. քանզի զցանգն եդեալ են և ի մէջ բնաբանին գլխահամար ոչ են կարգեալ, զի ընդ ցանգոյն համեմատեալ՝ անատեալ էաք, թէ լաւ և թէ վատ. վասն այնորիկ՝ այնպէս անգլուխ և անհամար թողեցաք: Այսպէս և այլքն՝ գլխահամարք բնաբանին ընդ համարոյ ցանգոյն ոչ համաձայնին ամենայնիւ և ամենայն ուրեք, այլ՝ դուն ուրեք, որովք համարօք և ցանգօք անկարելի էր զհամաձայնութիւնն յօրինել. վասն որոյ զայսքանս հնարեցաք՝ զի որքան գլուխք տարանջատեալք էին ի միմեանց, և կամ յետ և յառաջ էին ընդ Լատինացւոցն, այնց ի կրկին տեղւոջ զգլուխս կարգեցաք և զտնաթիւսն ըստ կարգի եդաք, զի ի ձեռն գլխաթուոցն և տանց թուոցն մարթասցիք և՛ զհամաձայնութիւնսն և՛ զթիւս ցանգոյն ի տեղիս իւրեանց հաւաստեաւ գտանել. այսինքն՝ կրկին երեսունեմէկ և կրկին մետասան, բայց զմանրաթիւսն ըստ կարգին գտանես յերկոսին տեղիսն:

«Հինգերորդ՝ անուանց և բանից շաղփաղփութիւն և շաղակրատութիւն, զի զմի և զնոյն անուն ի բազում տեղիս բազմադիմիք են եդեալք: Զայնս ոչ ասեմ, որոց այլեայլ անուանակոչութիւն է հանդիպեալ, որպէս Գե-

ղէոնի և Սեդեկիայի և այլոց յոգունց. այլ զայնս, որք միննոյնք են՝ ի բազում տեղիս բազմադիմիք են գրեալք։ Նոյնպէս և շարադրութիւնք յոլովք զոն աղճատեալք, որք ամենևին զուսութիւն իւի ոչ յայտնեն. այսպիսեացս ըստ կարի հոգ տարեալ ուղղեցաք, ոչ բնաւին, զի մի՛ ի պարաւապիտաց եղերիցիմք, այլ զոմանս։ Նաև զոր ոչ իշխեցաք փոխարկել կամ բառնալ՝ ի լուսանցսն նոտրու գրով եդաք, զի ճշմարտասէրքն և վերահասուքն տեղեկասցին և մտադիւրք լինիցին։ Իսկ որք ոչ կարի տարանջատք երևեցան և կամ տարանջատք ելով այլով կերպիւ զայլ իմն զբան նշանակեցին, զայնս ոչ խափանեցաք և ոչ ի լուսանցսն գծագրեցաք։

«Վեցերորդ՝ վասն ցանկոցն և նախադրութեանցն նախնեաց, զորս շարակարգել անճանչ թուեցան։ Մի՝ զի համար սորին ոչ է այնու ցանկով, և ոչ անուանութիւնքն և ոչ համաձայնութիւնքն։ Երկրորդ՝ զի տափն կարի ստուար գայր և ծախն յոլով, որոյ աշխատանքն և ծախն դիտաւորութեանն ոչ արժէին. քանզի դիտաւորութիւն դնելոյն ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ այս միայն, զի նախնեացն վաստակ մի բարձցի. իսկ օգտութիւն և ոչ ծղի միոյն գոյր, մանաւանդ զի ներ բնաբանիցն այնչափ տեղի չեղև զի ընդ Դաղմատացւոց համարոյն զմեր ևս էաք եդեալ. թարց բնաբանի համարոյն զցանկսն դնել անհեթեթ էր։ Երրորդ՝ զի և համար ցանկոյն ընդ համարոյ գլխոց բնաբանին էր անպատկան եդեալ սղալելով գրչաց։ Չորրորդ՝ զի համար գլխոցն ի բնաբանսն՝ Լ՛ ուրեք զի եդեալ է և Է՛ ուրեք զի ոչ է եդեալ. նաև եդեալքն ի տեղիս յոլովս անհամաձայնք են եդեալք ընդ ցանկոյն։ Սակս այսքանեաց պատճառաց ոչ եդան նախադրութիւնքն և ցանկքն առաջինք. իսկ զկարգեալսն և զեդեալսն ի փառս Քրիստոսի ընկալարուք և զմեզ ի մեղադրանաց անպարտ արարէք»։

Հաջորդում է «Յիշատակարան»-ը (էջ 833—834).

«Գոհութիւն… զի նա զկարողութիւն անարժանութեան իմում ձեռնտուութեամբ և օժանդակութեամբ ընկերակցութեան մարմնականօք գոյիւք պայազատափառաց Ստեփաննոսի, Թէոդորոսի և Պետրոսի Զուպայեցւոց, քանզի … ձեռնտուք եղեն ինձ ներ գործառնութեանս այսմիկ, տալով առատապէս զծախս դրամոյն ըստ որում և յորժամ պիտոյանայր։

«Քանզի ես իշխանութեամբ և հրամանաւ վեհափառ կաթուղիկոսի և պատրիարգի Հայկազեանս սեռի, ներ պատրիարգարանում սրբոյ Էջմիածնի, լուսանկարի և քրիստոսահիմնեցելոյ, տեառն Յակոբու, ներ թուոջ փրկչին հազարորդի[1] վեց հարիւրորդի վաթսներորդի երկրորդի, իսկ ըստ Հայոց թուոյ՝ հազարերորդի հարիւրորդի մետասաներորդի, սեպտեմբերի ԻԷ, ելեալ յերկրէ և յազգէ իմմէ դիմեցի ի կողմանս Եւրոպիոյ, յաղագս տպման մատենիս այսորիկ աստուածայնոյ, և բազում վշտիւ և տառապակրութեամբ եկեալ հասի ի սահմանս յԻտալիոյ՝ յերկիրն Թուսկանու՝ ի քաղաքն Լիվոռնա։ Ներ նախնում նուազում ոչ ոք գտի ինձ օժանդակ. սակս որոյ թողեալ գնացի ի Հոռոմս, գտեալ անդ զոցի յաջողութիւն գործառնութեանս. և անդ ես ոչ եգի ինչ մխիթարութիւն օգնականութեան գործոյս՝ վասն յոգունց պատճառաց ներհակականաց, թէ՛ ի մերայնոց ազանց և թէ՛ յիւրեանց կանոնաց և սահմանաց՝ զորս մի ըստ միոջէ շարադրել ձանձրութիւն է։

«Իսկ ի դառնալն իմում անդրէն յԼիվոռնայ, յետ բազմաց հակառակութեանց սուտակապասից արանց և փառասիաց մերայնոց ազանց, որք ոչ զօգուտ ազգի և զսրբոյ աթոռոյն, այլ զանձանց զցանկութիւն և կամաց զհաճութիւն կամէին լնուլ, որոց ընդդիմակայեալ՝ զոչինչ ետու հաւանութեան բանս, այլ ընդ երից հաւատարմագունից վերադրեցելոց արանց և քրիստոսասիրաց, յետ բազմաց քննութեանց և հարցափորձութեանց, միաբանեցայ սիրով և դաշնադրականաւ գրով, զի սոքա երեքեանս ընդ իս հոգասցեն զամենայն զծախս վերադրեցելոյ մատենին մինչև ցաւարտ, առ յօգուտ ազգիս և ի շահ սրբոյ աթոռոյն։

«Բայց այսպիսի եղև պայման. քանզի ի թուին ՌՃԺԴ, փետրվարի Ի, վերադրեցեալ պարոն Ստեփաննոսն և պարոն Պետրոսն խոստացան զանկեալ շահն, որ ի վաճառմանէ Աստուածաշնչոյն, լինիցի տալ սուրբ Էջմիածնի. նոյնպէս և պարոն Թէոդորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ սուրբ Երուսաղէմի և զկէսն՝ Յուշոյ վանից սրբոյն Սարգսի Զօրավարին։ Այսու պայմանաւ ես եւ չու արարեալ հասի ի կողմանս հիւսիսայնոյ՝ յերկիրս Բելգիկոյ, որ այժմ կոչի Հոլլանտիա, ի քաղաքս Ամստելոդամի, ի տպարան Սրբոյ Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի, ուրանօր և սկիզբն արարի տպել գրովքն զորս Աւետիսն էր յօրինեալ, զի գիրք Մատթէոսին յոյժ խոշորք էին և անյարմարք. նաև զի ոչ գոյր գիր վասն համաձայնութեան և խորագրութեան՝ հարկեցայ առնել զնոտր գիրդ իմով գոյիւ, զոր վասն փորձի եդեալ եմ ներ վերջնում Տարակնոցին. Նա և այսու գրիւ որ յԱւետէն էր յօրինեալ, որովք գրովք սկիզբն արարաք ներ թուոջն որպէս գրեալ է ի սկզբան, և յաւարտ սորին ժամանեցաք ողորմութեամբն նորին տեառն և փրկչին Յս.ի, ներ թուոջն Քս.ի հազարորդի վեցհարիւրորդի վաթսներորդի ութերորդի, յամսեանն հոկտեմբերի, որոյ էին աւուրք երեքտասաներորդ. իսկ ըստ մերոյ՝ հազարորդի հարիւրորդի եօթնևտասներորդի, ներ նոյնում ամսում հոկտեմբերի երրորդի, իսկ ըստ Հայոց ամսոյ՝ հրոտից քսաներորդի հինգերորդի։

«Արդ… յիշեսջիք միով Հայր մերով զվերոգրեալ խանենց պարոն Ստեփաննոսն, և զհանգուցեալ ծնողսն նորին՝ զհայրն զպարոն Եղոմն և զմայրն զՓառանձեմն, և զայլ արեան մերձաւորս նորին։

«Այլ և զԹոնչենց պարոն Թէոդորոսն, և զհայր նորին զմահդասի Յետգարն և զմայրն Աննամելիքն, և զայլ համազգիս նորին բոլորովին։

«Նաև զպարոն Պետրոսն, և զհայր նորին զաէր Աւագն և զմայր նորին զՕղլանգարաքն, և զայլ համասեռս նորին զնոր և զհին։

«Ընդ նոսին և զհայրն իմ զպարոն Թորոսն, և զմայրն իմ զԳոհարաղիզն, և զեղբայրն իմ զՅոհաննէսն զփոխեցեալն առ Քս., որոյ ընչիւքն մտի ես ի գործս

[1] Տպված է՝ վեց հազարորդի:

յայս. այլ և զմիտ եղբայրն իմ զԱւետիսն որոյ գրովն սկսաւ գիրքս, և ինքն ևս աշխատեցաւ ժամանակս ինչ ի խաչարարութեան և ի տուրևառութիւն գործոյս, և զայլ ազգացեալս նոցին։

«Ընդ որս և զհաւատարիմ աշակերտն իմ զԿարապետ վարդապետ Ադրիանացի, որ միշտ և անձանձիր տքնեցաւ ի վերայ սրբագրութեանն և այլոց գործոց։

«Այլ և զձեռնասուն աշակերտն իմ զՅոհան սարկաւագ Երևանեցի, որ զառաջնորդ փորձն միշտ ընթերցաւ ընդ իս և ընդ վարդապետին, և աշխատեցաւ ի սփռելն զթուղթն և ի ժողովելն և ի կարելն, և զտնտեսութեան հոգսն և զամենայն զարտաքին գործս հոգաց և ծառայեաց մտերմաբար։

«Եւ զայլս զամենեսեան զաշխատաւորս և զբարեմիտ ջանացողս յիշեսջիք... Ամէն։ Հայր մեր որ յերկինս»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 900։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1705 թ.

Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց ներ պարունակող: Շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց: Ի հայրապետութեանն տեառն Նահապետի կաթուղիկոսի ամենայն Հայոց: Ի թագաւորանիստ մայրաքաղաքն Ստամպոլ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ: Եւ թուաբերութեան Հայոց ՌՃԾԴ, մայիսի ամսոյն Ա. և ի թվին փրկչին 1705:

511+647 էջ (չափ. 17.5×13.4 սմ.)։ Պտկրզ.։ Նույնությամբ արտատպված է նախորդ հրատարակությունից։ Վերջում՝ հիշատակարանը (էջ 647).

«Փառք...։ Արդ՝ եղև գրաւ Աստուածաշունչ մատեանս թվին Հայոց ՌՃԾԶ (=1707 թ.), ի շնորհազարդ հայրապետութեան և կաթուղիկոսութեան սուրբ աթոռոյն էջմիածնայ ամենայն Հայոց՝ տեառն Աղեքսանդրի Ջուղայեցւոյ, ի յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի՝ յար և նման, ո՛չ աւելի և ո՛չ նուազ, սակայն մանր գրով, ի տպարանս ազգականի նոյնոյ Ոսկանի վարդապետի՝ Լաղինացւոյ (sic) Պետրոսի, ի մայրաքաղաքն Ստամպոլ, Ղալաթիայ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 912։

Այլ տպ. Վենետիկ, 1733 թ.

Աստուածաշունչ փոքր Հնոց և Նորոց Կտակարանաց: Շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց: Զոր զկնի ամաց բազմաց՝ յամի տեառն 1666, և ի թուին Հայոց՝ ՌՃԺԵ, հրամանաւ տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի գլխակարգեալ և տնատեալ ըստ Լատինացւոց, նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից իւրեանց առընթեր կարգեալ տեառն Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ, և առաջնով տպագրութեամբ ի լոյս ածեալ: Իսկ այժմ նոյնն լաւագոյն թղթովք, ազնուագոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ և բազմօք ծախիւք՝ վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցաւ աշխատասիրութեամբ և ջանիւ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ՝ Աբբայ Հայր կոչեցելոյ: Ի փառս մեծագոյնս Աստուծոյ, և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ: Յամի տեառն 1733, և ի թուին Հայոց ՌՃՁԲ, յունիսի 15: Ի հայրապետութեան տեառն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի: Ի Վենետիկ քաղաքի, ի տպարանի Անտոնի Պորտոլի: Հրամանաւ մեծաւորաց:

[Չ] + 1280 էջ (չափ. 25.5×17 սմ.)։ Պտկրզ.։ Արտատպված է Ոսկան Երևանցու հրատարակությունից՝ որոշ բարեփոխումներով[1], բնագրական դիտողություններով, որոնք նշված են լուսանցներում[2], և բնագրում կատարված սրբագրություններով. այս բոլորի մասին խոսվում է Մխիթար Սեբաստացու ընդարձակ հիշատակարանում՝ «Բան առ ընթերցողս և Յիշատակարան մատենիս» *(էջ 1271—1279)։ Վերջում՝* «Ոտանաւոր բանք ի գովեստ Աստուածաշունչ սուրբ գրոց» *(էջ 1280), որի երկտողերի սկզբնատառերը հյուսում են՝ «Ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ ասացեալ է ի գովեստ Աստուածաշունչ սուրբ գրոց»։*

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 915։

Հովսեփ Ջուղայեցին իր «Քննիկոն» *աշխատության Բ հատորի ԻԵ գլուխը նվիրել է այս հրատարակության քննությանը* («Յաղագս նորատիպ սրբոյ Աստուածաշնչին յաբբայ Միխիթարայ, ի խնդրոյ ումեմն սիրելի եղբօր»), *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1793, էջ 141բ—145բ։ Հեղինակը Մխիթար Սեբաստացու կատարած աշխատանքը գնահատելիս ասում է.*

---

[1] *Օրինակ՝ Մակաբ. Գ գրքի գլխակարգումն ու տնատումը՝ հետևողությամբ լատիներեն այն օրինակների, որոնք անծանոթ էին մնացել Ոսկանին։*

[2] *Դիտողությունները, որոնց նպատակը եղել է պարզել հայերեն բնագրի կրած գրչական աղավաղումները, ներկայացնում են 1645 թ. Փարիզում հրատարակված յոթնալեզվյան Աստվածաշնչի բնագրերի հետ կատարված համեմատությունները, որոնք, ինչպես երևում է, երբեմն տալիս են և ոչ-արհամարհելի արդյունքներ. օրինակ՝ Չորրորդ Թագ. Զ. 23 գտնվող* խոտս տակաւ=խորտկաւ *համեմատությունն իրավամբ ուշադրության արժանի է համարվել «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի հեղինակների կողմից, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 839 (տես* տակ *բառը)։*

«Գովեմ որ զՉորրորդ Մակաբայեցւոց գիրքն գլխարկեալ և տնատեալ էր, այլ ունիմ ասել այնքան վաստակոյն. պարտ էր Յեսու Սիրաքեանն, զոր սակայն զայր նախկնարար բարւոք թարգմանեալ, և զմնացեալն զոր Ոսկան վարդապետին թարգմանեալն էր նուաստ բանիւք, վերստին ինքն թարգմանել ի հայկական պարզ և քաղցր լեզու։ Եւ գոհունակ եմք որ զցանկ սրբոյ Աստուածաշնչին ուղղեալ է և բազում աշխատանս ի վերայ նորին ունի, բայց աւաղ զի զՉորրորդ Եզրասն, զթարգմանեալն յՈսկան վարդապետէն որ է խեղաթիւր բանիւք, ոչ է վերահասու լեալ և բարւոք բառիւք նորոգ թարգմանեալ ուղիղ՝ ի հայկական բառ, որպէս վայել էր իմաստնավաստակ բանսն (sic) իւր»։

Ապա անում է բնագրաբանական մի շարք դիտողություններ, որոնք կապվում են նաև Ոսկան Երևանցու հրատարակության հետ։ Քննադատի կարծիքն այն է, որ Մխ. Սեբաստացին Աստուածաշնչի բնագրում սրբագրության կարոտ որոշ կետեր պիտի անուշադիր չթողներ, «զի ունէր առ ընթեր և զԱստուածաշունչ Եօթանասնիցն, և Յունացն, և այլոցն, որպէս ասէ ինքն», «երևի եթէ ի տեղիս տեղիս ոչ է զգուշացեալ աբբայն զատոյգն գիտել և ապա տպագրութիւնն այնպէս առնել, թէպէտ ի վերջ Աստուածաշնչոյն ասէ. Վեց արք փոխ առ փոխ նայէար տեսանել, եթէ չիցէ ինչ սխալութիւն»։

Այլ տպ. Վենետիկ, 1805 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի Հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի Հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց, հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յոհաննու Զոհրապեան վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ ռաբունապետի և առաջին աբբայի: Տպագրեալ հրամանաւ տեառն տեառն Ստեփաննոսի Ագոնց աստուածապատիւ արհիեպիսկոպոսի, և առաջնորդի ուխտին Սրբոյն Ղազարու: Ի Վենետիկ, 1805—ՌՄԾԴ, ի գործարանի Սրբոյն Ղազարու:

12+836+29 էջ (շարվ. 22.5×17 սմ.)։ Բովանդակում է Հին և Նոր Կտակարանները՝ ըստ հայկական կանոնի, բացառությամբ Սիրաքի, որ հրատարակիչը համարել է կանոնից դուրս՝ ձեռքի տակ չունենալով նրա հնագույն և ընտիր թարգմանության որևէ նմուշ։ Հատորի հավելվածում որպես արտականոն գրքեր հրատարակված են՝ «Գիրք Սիրաքայ որ կոչեցաւ Յեսու» *(էջ 2—12, սկ.* «Ամենայն իմաստութիւն ի տեառնէ է»), «Խօսք Սիրաքայ» *(էջ 12—13, սկ.* «Միտք հնազանդ և ուղղոր պարկեշտ»), «Եզր Երրորդ» *(էջ 13—25, սկ.* «Ես Սաղաթիէլ՝ որ և Եզր կոչեցայ, և ի Բաբելոն յամին երեսներորդի կայի յանկողնի իմում»)[1], «Աղօթք Մանասէի թագաւորի» *(էջ 25, սկ.* «Տէր ամենակալ»), «Թուղթ Կորնթացւոցն առ սուրբ առաքեալն Պաւղոս» *(էջ 25—26, սկ.* «Ստեփանոս և որք ընդ նմա երիցունք»), [«Պաւղոսի առաքելոյ պատասխանի թղթոյն Կորնթացւոց»] *(էջ 26—27, սկ.* «Պաւղոս կալանաւոր»), «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի» *(էջ 27—29, սկ.* «Էր ընդ եղբարսն») *և* «Աղերս Եւթաղի» *(էջ 29, սկ.* «Ամենայն ուրեք ամենայն իրիք ժամանակ է»):

Այս տպագրությունը կատարվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 1 ձեռագրից, որը 1319 թ. ընդօրինակվել է ուղղակի Գևորգ Սկևռացու կարգավորած ընտիր օրինակից։ Հայերեն Աստվածաշնչի մինչև այժմ եղած տպագրությունների շարքում սա հանդիսանում է միակը, որ ձեռագրական նշանակություն ունի և կարող է ապագայում օգտագործվել Աստվածաշնչի գիտական հրատարակության համար որպես վստահելի օրինակ[2]։ Հրատարակության առաջաբանում («Նախաբանութիւն առ վերծանողս», *էջ 3—11) Զոհրապյանը, հետ նկարագրելու ինչպես իր հիմնական օրինակը, այնպես և ուրիշ 8 գրչագրեր, որոնց տարբերությունները նշված են բնագրի ստորին լուսանցներում, հետևյալն է գրում նախորդ տպագրությունների մասին.*

«Թողեալ զմասնական տպագրութիւնս Սաղմոսարանաց, որք սկսեալ յամէ 1565 տպագրեցան ի զանազան տեղիս՝ ի Հռոմ, յԻլվով, ի Վենետիկ, և այլն, ապաքէն ըստ ամբողջութեանն՝ զառաջինն ունիմք զտպագրութիւնն Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ։ Քանզի նա ինքն ըստ իւրումն ասելոյ՝ հրամանաւ տեառն Յակոբայ կաթուղիկոսի, այնու միովն գրչագիր օրինակաւ եկեալ յարևմուտս, և յետ բազմադէմ հանդիպմանց հաստատեալ տպագրատուն հայկական ի յԱմստեղլոտամ քաղաք Հոլանտացւոց, յամի 1666 տպագրեաց զառաջին Աստուածաշունչ հայկականս բարբառոյ, ի մեծ քառածալ ասացեալ դիրս՝ վայելչագոյն տառիւք՝ քան զոր մինչև ցայն ժամ ի զանազան կողմանս էին փորագրեալ հայերէն այբուբենք ի սակս տպագրութեան։ Վասն այսորիկ ի հրատարակիլ մատենին զառաջինն անդ յարևելս, ո՜չ սակաւ գովասանութեամբ ընկալեալ եղև ի պարզամտաց ազգիս՝ հայեցեալ ի վայելչութիւն տառիցն և ի մաքրութիւն տպագրութեանն, և մանաւանդ ի դիւրագնութիւն ծախուցն՝ համեմատութեամբ գրչագիր մատենից ի ստացումն։ Որով և անուն Ոսկանայ պատուեալ ծաւալեցաւ յազգիս՝ որպէս բազմերախտ աշխատաւորի և մեծիմաստ վարդապետի. այլ արդեամբք զհակառակ նմին կարծիս ժառանգեաց յաչս իմաստնագունից, որոց զարտաքին հանգամանս տպագրութեանն

---

[1] Սա համապատասխանում է Ոսկանի հրատարակության «Գիրք Եզրասայ Չորրորդ»-ին, բայց ավելի հին թարգմանություն է և ներկայացնում է նաև խմբագրական տարբերություններ։

[2] Հմմտ. Հ. Ս. Անասյան, «Էջմիածնի տպարանի սուրբգրական հրատարակությունները», Էջմիածին (ամս.), 1972, № 12, էջ 86։

ո՛չ արհամարհեալ, ի ներքին գիտացին յանել զտեսանելիս մտացն։ Բայց թէ այսպիսեաց նուազագոյն գոլով առ նովին ժամանակաւ, և անյաջողութեամբ արգելեալք զլաւագոյն փորձոյ բուռն հարկանել, առ սակաւ սակաւ այնպէս սովորեալ վարժեցան նովաւ, մինչ զի կամեցեալ տպագրել յետ այնորիկ զսուրբ մատեանն ըստ մասին կամ ըստ բոլորին՝ հեշտաւ իմն ի նմանէ առեալ փոխագրեցին, որպէս է տեսանել զՍաղմոսարանս և զնոր Կտակարանս՝ յետ այնորիկ տպագրեալս։ Ընդ որս և Թադէոս երէց, որ յամին 1686 զառաջինն տպագրեաց ի Վենետիկ զՃաշոց գիրսն, ոչ սակաւ աշխատութեամբ կարծեմ յարմարեալ զայնչափ ընթերցուածսն՝ ըստ Ոսկանեանն զաղափարի՝ պատշաճեալ զԹագաւորականն ազնիւ օրինակ, որում առէ համդիպել յաջողութեամբ տեսանի։ Նմին իրի և երկրո՛րդ անգամ հարկ եղեւ տպագրութեան ողջոյն Աստուածաշունչ մատենին, ազգական նորին Ոսկանայ՝ Պետրոս անուն Լազինացի (sic) անուանեալ, ունելով առ ձեռն զպատրաստ զգործիս տպագրական պիտոյից, յար և նման ամենևին օրինակի իւրում նախնոյն, բայց մանրագիր և անմարուր՝ տպագրեաց յամին 1705 ի Կոստանդնուպոլիս ի թաղն Պէկօղլի։ Իսկ յետ ժամանակաց՝ մերս բազմարդիւն Մխիթար Աբբահայր տեսեալ զնուազութիւն երկուց այնոցիկ տպագրութեանց յազգի մերում, որով դժուարագիւտ և մեծագին եղեալ մատեանն, անկարանայր և ինքն ի պէտս աշակերտաց իւրումն դըպրատան չափաւոր ծախիւք առանել, խորհեցաւ միւսանգամ տպագրութեամբ այնմ զարման մատուցանել։ Եւ զի պակասէին առ նմա հայկական գրչագիր օրինակք առ ուղղագրութիւն վրիպանացն՝ զորս ծանեաւ յՈսկանեան օրինակի անդ, վասն այնորիկ առ ժամն մարթելոյ՝ հայթհայթեալ զուգագրութիւն նոցին ի լուսանցս, առեալ ի լատին թարգմանութենէ անտի եւթնալեզուեան մատենին Փարիզու (որ դեռևս ի յարգին էր ի ժամանակին), և ինչ ինչ որ անտանելի թուեցաւ նմա՝ նաև ի բնաբանին մուծեալ. այսպիսի իմն զուգնարեալ այլայլութեամբ՝ ըստ այնմ Ոսկանեան օրինակի՝ վայելչագոյն և յաւէտ պայծառ յօրինուածով զարդու, գործակցութեամբ ձեռնասուն աշակերտաց իւրոց՝ երրորդ անգամ ի լոյս ընծայեաց զԱստուածաշունչ մատեանն՝ ի Վենետիկ յամին 1733։

«Այլ բանզի և հիմն Մխիթարեանս այսորիկ տպագրութեան եղև Ոսկանեանն, ապաքէն ոչինչ աւելի քան զնորայն գերազանցութիւն մարթ էր ունել սմա ըստ հարազատութեանն, այլ տակաւին մնային նոյն թերութիւնք՝ որ ինչ ի յաղբիւրն անդ։ Զի նա ինքն Ոսկան, որպէս յարդեանց անտի գործոց իւրոց ունիմք իմանալ (ըստ որում տեսանեմք արարեալ նորա նաև ի տպագրութիւնս այլոց գործոց նախնեաց մերոց, Շարականոցին առեմ՝ և Հասարակաց աղօթից, որոց առաջին և ընտրելագոյն տպագրութիւնն ձախողակի վրիպակեցաւ ի ձեռն նորա), նախ՝ զլխովին անճաշակ գոլով հայկաբանութեան, ըստ բերման ժամանակին՝ յորում կարի իմն նուազեալ էր զգուշութիւն հայկականս քերթողութեան յազգի մերում, և երկրորդ՝ նա ևս անտեղեակ ուսմանց գիտութեան իմաստասիրականին, որով և կանանայ ուղիղ զատման, զայսպիսի զգուշալի գործառնութիւն յանձն կալեալ, ոչ միայն ըստ քերթողական արուեստին ձեռներէց եղև այլայլել զբանշնչի յօրինուած շարագրութեանն ի մասունս բանի, և ի համաձայնութիւնս անուանց, այլովքն համգերձ, այլ և ըստ առաջնորդութեան միամիտ նախադասութեանց իւրոց հնարեցաւ իմն ուղղաբանել զհայկական բնաբանն ի լատինական Վուլկաթա ասացեալ թարգմանութենէ անտի, անգիտացեալ ապաքէն՝ եթէ մերս յառաջ գայ ի Հելլենականն այրեաց Եւթանասնից, զոր օրինակ և տեսաք ի վեր անդր, և Վուլկաթայն Լատինացւոց՝ յԵբրայականն օրինակէ, յորս անբաւ տարբերութիւնք են ի մէջի, զորոց չէ՛ տեղւոյս հարցաքննել։ Բայց արդարև ըստ միում կողման և թէ ստգտանելի անէր զանձն, եթէ զէթ ճշգիւ ամենայն ուրեք յաջողէր նմա առնել զիւրն կարծեցեալ ուղղաբանութիւնս, սակայն առաւելու զամբաստանութիւն անձին յայն կոյս, զի ըստ հաճոյից իմն երեւի բերել անխտիր, ոչ պահելով զմիօրինակ կանոն յամենայնի ըստ երկուց ևս եղանակաց փոփոխութեան՝ զոր ասացաք։ Որով Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձևացաւ խառնարան այլևայլ թարգմանութեանց՝ Հելլենականին և Լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի Հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարոտի բարբառոյ։ Թողում և զոր ողջոյն գիրս Սիրաքայ՝ և Չորրորդ Եզրայ՝ համգերձ Թղթով ինչ Երեմիայ մարգարէի, իբրև ամբողջական մասունս՝ թարգմանեալ ի լատինականէն՝ իւրովն իսկ թերուսումն հմտութեամբ բարբառոյն այնորիկ, յաւել ի մերս՝ խուժադուժ հայկաբանութեամբ, օրինակ իմն իբրև կապերտ քրձոյ առ կերպասիւ ագուցեալ, մինչ զի և երեխայն համբակն Արամեանս դպրութեան մարթի որոշումն զանազանութեան առնել ի նոսա։ Վասն որոյ և իրաւամբք անընդունելի եղեալ վայրապար աշխատութիւն նորա՝ պախարակեալ լինէր ի մասուր բանասիրաց իւրոյ ժամանակին. թէպէտ՝ և ինքն զայրացեալ, որպէս ակնարկէ ուրեք, կոչէ զնոսա սուտակասպաս և բարձրայօն իմաստակս: Այն զի՝ ընդ հակառակն՝ ըստ ուղիղ բանի խոհականութեան, զմի միայն գրչագիր զաղափար Աստուածաշունչ մատենի ունելով ի ձեռին, և այն՝ ո՛չ զերծ ի բազմապատիկ սխալանաց, որպէս և ինքն վկայէ ի վերջաբանին, ի սկսել հարկի տպագրութեանն՝ պարտ էր ամենայն հաւատարմութեամբ ընդօրինակել ի նմանէ, նա և եթէ մարթ ինչ է ասել՝ ըստ յայտնի վրիպանացն իսկ ի գրչաց համդիպեալ, և զուգիղն երևեալ ինքեան՝ արտաքոյ բնաբանին ի լուսանցսն անդ նշանակել, մինչև այլ ևս ճշգրտագիր օրինակ ժամանակաւ ի յայտ եկեալ՝ մարթասցի ուղղել զնորին վրիպակս»։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 10754։

Սույն մեծագիր միահատոր հրատարակությունից է արտատպված հետևյալ փոքրագիր չորսհատորյակը՝ ձևագրական տարբերությունների հետ միասին.

Այլ տպ. Վենետիկ, 1805 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան

նախնեաց մերոց ի Հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի Հայկականս բարբառ։ Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք բնաբանին։ Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յոհաննու Զոհրապեան վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ ռաբունապետի և առաջին աբբայի։ Տպագրեալ հրամանաւ Տ. Տ. Ստեփաննոսի Ագոնց աստուածապատիւ արքեպիսկոպոսի, և առաջնորդի ուխտին Սրբոյն Ղազարու։ Բաժանեալ ի չորս հատորս։ Հատոր...։ 1805։ Վենետիկ։ ՌՄԾԴ։ Ի գործարանի Սրբոյն Ղազարու։

Հատոր Առաջին։ Յորում բովանդակին ութ գիրք, սկսեալ ի Ծննդոց մինչև ցՀռութ։ *32+527 էջ (չափ. 14.4×8.5 սմ)։*

Հատորի սկզբում՝ նախորդ տպագրության առաջաբանը՝ «Նախաբանութիւն առ վերծանողս» (էջ 3—28)։

Նմուշ՝ ՀԳ ՀՆ. 1554։

Հատոր Երկրորդ։ Յորում բովանդակին հնգետասան գիրք, սկսեալ յԱ. Թագաւորութեանց մինչև ցԳ. Մակաբայեցիս։ *687 էջ (Նույն ծավ.)։*

Նմուշ՝ ՀԳ ՀՆ. 1557։

Հատոր Երրորդ։ Յորում բովանդակին քսան և չորս գիրք, սկսեալ ի Սաղմոսաց մինչև ցնզեկիէլ։ *805 էջ (Նույն ծավ.)։*

Նմուշ՝ ՀԳ ՀՆ. 1562։

Հատոր չորրորդ։ Յորում բովանդակի Նոր Կտակարան, սկսեալ ի Մատթէոսի աւետարանէն մինչև ցՅայտնութիւն։ *587+92 էջ (Նույն ծավ.)։*

Հատորի վերջում՝ «Յաւելուած Աստուածաշունչ մատենիս» (էջ 1—8), որը բովանդակում է նույն արտականոն գրքերը, ինչ որ նախորդ հրատարակությունը։

Նմուշ՝ ՀԳ ՀՆ. 1566։

Այլ տպ. Պետերբուրգ, 1817 թ.

Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց։ Շարակարգութեամբ նախնեաց մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց։ Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝ տեառն Եփրեմայ սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Եւ յառաջնորդութեան Ռուսաց երկրի՝ ամենայն ազգիս Հայոց տեառն Յոհաննու առաքելաշաւիղ սրբազան արհի եպիսկոպոսի, որոյ վերահասութեամբն իսկ տպեցաւ աստուածային մատեանս, ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ։ Ջանիւք և արդեամբք Ռուսաց Բիբլիական ժողովոյն։ Յամի տեառն 1817, ի սեպտեմբերի 1։Իսկ ի թուին Հայոց՝ ՌՄԿԶ։ [Ի] կայսերական հրամանաւ հաստատեալ տպարանի սարկաւագ Յովսեփ Յոհաննիսեանի՝ որ ի Սանկտպետրբուրգ։

[Ե] + 1126 էջ (չափ. 24.4 × 18.9 սմ.)։ Նույնությամբ արտատպ. Վենետիկի 1733 թ. (Մխիթար Սեբաստացու) հրատարակությունից, ներառյալ հավելվածում հրատարակված երկու անվավերականները՝ «Աղօթք Մանասէի արքայի» և «Գիրք Եզրասայ Չորրորդ»։ Դուրս են թողնվել հավելվածի մնացած նյութերը։ Տպագրության հիշատակարան չունի։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 2476։

Այլ տպ. Սիրամփուր, 1817 թ.

Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց։ Շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց։ Զոր զկնի ամաց բազմաց՝ յամի տեառն 1666, և ի թուին Հայոց՝ ՌՃԺԵ, հրամանաւ տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի գլխակարգեալ և տնատեալ ըստ Լատինացւոց, նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից իւրեանց առ ընթեր կարգեալ տեառն Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ, և առաջնով տպագրութեամբ ի լոյս ածեալ։ Իսկ այժմ նորոգ տպագրեալ եղև ջանիւք և արդեամբք յՕժանդակ Միաբանութենէ ժողովոյն Աստուածաշընչի որ ի Կալկաթայ։ Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Միածնաիջի՝ տեառն Եփրեմայ արքայապսակ և տիեզերահռչակեալ սրբազնակատար կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Յամի տեառն 1817, և ի թուին Հայոց՝ ՌՄԿԶ, ի գիւղաքաղաքն Սիրամփուր։ Հրամանաւ նոյնոյ Օժանդական Միաբանութեան։ Reprinted by the order and expense of the Calcutta Auxiliary Bible Society, at the Mission Press, Serampore, 1817.

[Զ] + 6 + 1307 էջ (չափ. 22.5 × 17.3 սմ)։ Հետևում է Վենետիկի 1733 թ. (Մխիթար Սեբաստացու) հրատարակությանը՝ դուրս թողնելով լուսանցագրությունները։

Նմուշ՝ Էջմիածնի ճեմարանի Գրադարան։

Այլ տպ. Վենետիկ, 1860 թ.

Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր Կտակարանաց։ Ըստ միաբան վաղեմի գրչագրաց

մերոց և Յոյն բնագրաց: Ի Վենետիկ, ի վանս Մխիթարեանց ի Սուրբ Ղազար, 1860—ՌՅԹ:

1223 էջ (չափ. 20.9×14.3 սմ)։ Պտկրզ.։ Բնագիրը հետևում է Վենետիկի 1805 թ. հրատարակությանը։ Չունի գրչագրական տարընթերցվածներ։ Բովանդակում է Հին ու Նոր Կտակարանները՝ ըստ հայկական կանոնի, ներառյալ «Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ» *գիրքը՝ ըստ հնագույն թարգմանության։ Հավելվածում որպես պարականոն գրքեր հրատարակված են՝* «Աղօթք Մանասէի թագաւորին» *(էջ 1215),* «Թուղթ Երեմիայ — Բարուք գլ. Զ. Պատասխանի թղթոյն՝ զոր ետ տանել Երեմիա մարգարէ ի Բաբիլոն, որպէս պատմել նոցա հրաման ետ տէր» *(էջ 1216—1218),* «Թուղթ Կորնթացւոց առ սուրբ առաքեալն Պաւղոս» *և* [«Պաւղոսի առաքելոյ պատասխանի թղթոյն Կորնթացւոց»] *(էջ 1219—1220),* «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի» *(էջ 1221—1223) և* «Աղերս Եւթաղի» *(էջ 1223)։*

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 10754։

Հրատարակիչ Արսեն Բագրատունին իր կատարած աշխատանքների մասին առաջաբանում գրում է. «Առ ի խոյս տալ յՈսկանեան և ի Զօհրապեան թերութեանց, և ի ստուգել տիրապէս զհարազատ վաստակս մերոց Թարգմանչաց, նորոգ ընթեցաք նախ զտարբերութիւնս տասնեցունց գրչագիր օրինակաց մերոց, և ապա ի բարձումն ամենայն տարակուսանաց՝ բաղդատեցաք զողջոյն թարգմանութիւն մեր ընդ յոյն բնագրին։ Եւ ուրանոր գտաք միաբան ընդ միմեանս՝ կա՛մ զամենայն օրինակս մեր, և կա՛մ զբազումս ի նոցանէ, և միաբանգամայն համաձայն ընդ յունականն, զայնոսիկ եդաք յընթացս անդ առաջիկայ տպագրութեանս։ Իսկ ուր ուրեք գտաք զօրինակս մեր անմիաբան ընդ յունին, զայն ևեթ նշանակեցաք ի ներքոյ։... Ի գրչութեան անդ յատուկ անուանց՝ զհետ չոգաք Զօհրապեան տպագրութեան։ Նոյնպէս կալաք և զյարմարագրութիւն բանիցն ըստ օրինակի նախնեաց»[1]։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1892 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Ի լոյս ընծայեալ համեմատութեամբ Եբրայական և Յունական բնագրաց:... Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Սուլթան Համամ Ճատտէսի, թիւ 14), 1892:

Դ + 256 էջ (չափ. 20.4×13.3 սմ)։ Կիսատ տպագրություն։ Աստվածաշնչի Ամերիկյան Ընկերության հրատարակությունն է։ Բովանդակում է միայն Հնգամատյանը և «Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ»*՝ մինչև գլ. Ը. 14։ Հրատարակության* «Յառաջաբան»*-ում (էջ Ա—Բ) ասվում է.*

«Յընծայել մեր արդ ի լոյս զՀնգամատեանս և գլուխս ինչ ի Յեսուայ հանդերձ ծանօթութեամբք, որ ի համեմատութենէ Հայերէն թարգմանութեան մերոյ ընդ Եբրայեցերէն բնագրին, ոչ իբրև ուրոյն հատոր, այլ իբրև ճաշակ, թուեցաւ մեզ կարևոր ասել ինչ ինչ համառօտս ի գիտութիւն ընթերցանելեաց։

«Յառաջ քան զամս ինչ, բարեաց յիշատակաց արժանին Ներսէս պատրիարք ոչ սակաւ ջան յանձն առնոյր հաւանեցուցանել զԱմերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց՝ տալ ի լոյս ընծայել և տարածել դիւրագնի զաստուածեղէն Մատեանն Հին և Նոր Կտակարանաց, զթարգմանեալն ի Հայ լեզու յերանելի հարցն մերոց ի Սահակայ և ի Մեսրոպայ։

«Յետ բազում բանից որ եղեն երկուստեք, ոչ յաջողեալ գործն՝ մնայր առ ժամանակ մի։ Արդարև չէր ինչ անյօժար Ընկերութիւնն կատարել զխնդիրն, այլ արգել այն էր, զի մին ի կանոնաց Ընկերութեանն է ի լոյս ընծայել թարգմանութիւնս ի բնագիր լեզուաց գրոյն։ Եւ հայերէն թարգմանութիւն Հին Կտակարանին, թէպէտ անհամեմատ գեղեցիկ և ընտիր, չեղև, որպէս յայտ է, յԵբրայական բնագրէն, այլ ի Յոյն թարգմանութենէ։ Առ ի բառնալոյ զայս դժուարութիւն, խորհուրդ արարեալ նշանաւորաց ոմանց ի մերայոց, գտին այսպիսի ինչ հնարս. համեմատել զՀայերէն թարգմանութիւնն ընդ Եբրայականին՝ զայլակերպութիւնսն նշանակել ի լուսանցս ի ներքոյ իւրաքանչիւր էջի, պահել զՀայերէնն որպիսի էն։

«Չեղև անհաճոյ Ընկերութեանն այս պայման, որով մարթ էր ազգին և՛ ունել դիւրագնի զթարգմանութիւն իւրոց նախնեաց անեղծ և անարատ, և՛ լինել հմուտ հանգամանաց Եբրայական բնագրին ի ծանօթութեանց անտի որ ի լուսանցս։ Ի հաճել Ընկերութեանն ընդ այս, կարգեցաւ ի Հայոց Մասնաժողով, որոյ գործ լինելոց էր, որպէս ասացաւ, համեմատել զթարգմանութիւն մեր ընդ Եբրայականին՝ նշանակել զայլակերպութիւնսն ի լուսանցս ի ներքոյ իւրաքանչիւր էջի, պահել զՀայերէնն որպիսի էն ըստ թարգմանութեան նախնեաց։

«Մասնաժողովն իսկ և իսկ արկ ձեռն ի համեմատութիւն Հնոյ Կտակարանին՝ սկսեալ ի գրոց անտի Ծննդոց։ Սակայն տեսեալ կարևոր հարկ զառաջինն ընծայելոյ ի լոյս զՆոր Կտակարանն, թողոյր զՀինն իբրև յետ ամի միոյ, և պատրաստեալ զՆորն համեմատութեամբ ընտիր ընտիր օրինակաց Յոյն բնագրին և ընծայեալ ի լոյս, դառնայր միւսանգամ ի Հին անդր։ Այն ինչ հասեալ էր աշխատութիւնն մօտ ի վախճան Առակաց, և ահա հարկ լինէր ի թախանձելոյ բազմաց դադարեցուցեալ առ վայր մի զհամեմատութիւնն՝ հանել ի հրապարակ զՀնգամատեանն առ ի տալ ճաշակ զգործոյն. և ահա առաջին հնգեքին մատեանք նուիրական Գրքոյն ընծայեալք ի լոյս տպագրութեամբ զորմէ չէ ինչ անդէպ տալ համառօտ ինչ տեղեկութիւն ընթերցանելեաց ի գիտութիւն...

[1] *Այս առաջաբանը, որը հրատարակության մեջ բացակայում է, հետագայում առանձին է տպագրվել. տես՝ Արսեն Կ. Բագրատունի,* «Յառաջաբան Աստուածաշունչ գրոց», Բազմավէպ, *1966, էջ 347—353։*

«Իսկ զպատմութենէ Հայերէն Թարգմանութեան, զոր օրինակ՝ զպատճառացն յորոց եկին Հարքն մեր ի Թարգմանութիւն աստուածատուր Գրոյն, զօրինակէն յորմէ եղև Թարգմանութիւնն, զպատուականութենէ Թարգմանութեանն, զհոյակապ լեզուէն, արդար և արժանի այնպիսում գործոյ, և զորոց սոցին նմանք իցեն, խօսել թողեալ, կարևոր համարիմք յիշել, զէթ հարևանցի, ինչ մի զոր զարմանօք դիտեցաք ի հետազօտութեան աստ մերում, այն է՝ զի Թէպէտև Թարգմանութիւն մեր զհետ երթայ բազում հաւաստեաւ և ճշդիւ զԹարգմանութեանն Եօթանասնից, ուր ուրեք խոտորեալ ի նմանէ, մերձենայ Եբրայական բնագրին։ Ապաքէն կարևոր խնդիր է Թէ ուստի՞ իցէ խոտորումնս այս Հայերէնին ի Թարգմանութենէ անտի Եօթանասնից։ Ակն ունիմք եթէ նոր նոր հետազօտութիւնք տացեն լոյս այսմ կարևոր խնդրոյ»։

Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ. Ասլետ, «Նոր Աստուածաշունչը», Հայրենիք, 1892, օգոստ. 24, № 220։ — Կամծիկ աբեղա, «Եօթանասնից Թարգմանութիւնը», Հայրենիք, 1892, օգոստ. 25, № 221։ — Բյուզ. Քեչյան, «Նախնեաց Աստուածաշունչը», Արևելք, 1892, դեկտ. 19, № 2667. 1893, հնվ. 9, 12, 30, №№ 2682, 2684, 2699։ — Հովհ. Մկրյան, «Նախնեաց Աստուածաշունչը», Արևելք, 1892, դեկտ. 28, № 2674։ — Վ. Ասլանյան, «Նախնեաց Աստուածաշունչը», Արևելք, 1893, հնվ. 27, № 2696։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1895 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Համեմատութեամբ Եբրայական և Յունական բնագրաց: Հատոր...: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան, 1895:

Հատոր Ա (Ծնունդք—Երկրորդումն օրինաց)։ Ը+1—226 էջ (չափ. 20.4×13.3 սմ)։

Հատոր Բ (Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ — Գիրք Յոբայ)։ 227—586 էջ (նույն ծավ.)։

Հատոր Գ (Գիրք Սաղմոսաց—Մարգարէութիւն Մաղաքիայ)։ Գ+587—986 էջ (նույն ծավ.)։

Հատոր Դ (Նոր Կտակարան)։ [Գ]+1—280 էջ (նույն ծավ.)։

Աստվածաշնչի Ամերիկյան Ընկերության հրատարակությունն է։ Բովանդակությունը բողոքականների կանոնի համաձայն է, ըստ որում որպես անվավեր դուրս են թողնվել Հին Կտակարանի երկրորդականոն գրքերը։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 8729 և 8730. — Էջմիածնի Ճեմարանի Գրադարան։

Այս չորս հատորները նույն շարվածքով ի մի են բերված հետևյալ հրատ. մեջ.

Այլ տպ. Կ. Պոլիս, 1895 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Համեմատութեամբ Եբրայական և Յունական բնագրաց: ...Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան, 1895:

Ը + 986 + 280 էջ (չափ. 20.4×13.3 սմ)։ Աստվածաշնչի Ամերիկյան Ընկերության հրատարակությունն է։ «Յառաջաբան»-ում (էջ Գ—Դ)՝ կատարված աշխատանքների պատմությունը գրեթե բառացի շարադրված է այն ձևով, ինչպես կա 1892 թ. հրատարակված Հնգամատյանի առաջաբանում։ Ուշադրության արժանի են հետևյալ մասերը.

«Վասն Հայերէն օրինակին [Հնոյ Կտակարանի], զորոյ զհետ գնացաք, ասեմք եթէ լաւագոյն համարեցաք չերթալ զհետ միոյ միայնոյ օրինակի, այլ որ ինչ մերձաւորագոյնն էր բնագրին՝ զայն ընտրեցաք ի Հայերէն օրինակս անդ որ ցարդ ի լոյս ընծայեալ են։ Վասն ծանօթութեանց գիտել պարտ է զի ոչ եղև մեզ կամ՝ դնել զամենայն որ այլակերպ էր ի բնագրաց անտի, այլ՝ որ ինչ կարևոր թուեցաւ մեզ... զի չէր ինչ դիւրին մուծանել իբրև երկոտասան հազարս ծանօթութեանց ի համեմատութենէ հնագոյն լեզուաց...։ Իսկ ի համեմատութեան Նորոյ Կտակարանի աշխատութիւն մեր չեղև այնպէս դժուարին, զի Թարգմանութիւն նախնեաց մերոց էր ի բուն իսկ ի բնագրէ Նորոյ Կտակարանի։ Ուստի փոյթ մեր եղև միայն համեմատել զայն ընդ ընտիր ընտիրս ի Յոյն ձեռագրաց որ ցարդ ծանօթ են, և նշանակել զայլակերպութիւնսն, որ ի հարկէ չկարէին լինել այնչափ բազում որչափ եղեն ի համեմատութեան Հնոյն»։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 10196։

Նոր Կտակարանը, որն ունի ուրույն անվանաթերթ, թողարկվել է նաև որպես առանձին հրատարակություն (1—280 էջ)։

Այս հրատարակության շարվածքով է նաև Վիեննայի 1929 թ. տպագրությունը, այն տարբերությամբ, որ այստեղ Հին Կտակարանի չհամարակալված մի քանի ներքին էջեր Վիեննայի հրատարակության մեջ համարակալված են՝ էջերի թիվը հասցնելով 991-ի (տես ստորև)։

Այս՝ 1895 թ. հրատարակության մասին տես Ս. Մ. (Սեդրակ Մանդինյա՞ն), «Ս. Գրոց տպագրութեան առթիւ», Արարատ, 1902, էջ 1139—1145։ Հ. Ս. Անասյան, «Էջմիածնի տպարանի սուրբգրական հրատարակությունները», Էջմիածին (ամս.), 1972, № 12, էջ 78—80։ Վերջին հոդվածի առիթով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանից ստացել ենք պատճենը Մաղ. արք. Օրմանյանի մի նամակի, որն ուղղված է Աստվածաշնչի Ամերիկյան Ընկերության Արևելքի տնօրեն Մ. Բոենին՝ Կ. Պոլսում, 8 մարտի 1905 թ.[1]։ Նա-

[1] Նամակն արտագրված է Գ. Բամպուքճյանի ձեռքով՝ Պատրիարքարանի դիվանի Մասնավոր Նամակների պատճենների № 63/1967 թ. տոմարից (էջ 335—340)։

մակում, որն ամբողջությամբ վերաբերում է այս հրատարակությանը, ի միջի այլոց ասվում է.

«... Այդ կարգին պէտք է աւելցնեմ Նօթանաւորաց կոչուած օրինակին հետեւողութեամբ հրատարակութիւն կատարելնիդ, մինչ յառաջագոյն կանխակալ սովորութեամբ մը եբրայական կոչուած և լատինականին մէջ ալ պահուած օրինակին հրատարակութիւնը միայն իբր հիմնական ուղղութիւն ընդունած էիք, և մեր ցաւով կը նկատէինք այդչափ տարիներէ ի վեր մեր գործածած ու յարգած Ս. Գրքին մէջ ներմուծուած ձեռնձգութիւնները։

Այդ մասին մեր գոհունակութիւնը կատարեալ պիտի ըլլայ, եթէ Ամերիկեան Ընկերութիւնդ, իբր արեւելեան աստղ ողջունուած և Արեւելքէն ծագած Ս. Գրոց մէջէն չուզէ այլ եւս կրճատել քանի մը գիրքեր, որք եբրայական եզրական կանոնին անծանօթ մնացեր են։ Մեր աւանդութիւնը և սկզբունք և վարդապետութիւնը հիմնապէս քրիստոնէական լինելով, և քրիստոնէութիւնը նախնական և անվիճատակ հնութեամբ այն քանի մը գիրքերն ալ Ս. Գրոց կարգին ընդունած ըլլալով, և բոլոր հնագոյն եկեղեցիներ զարմանալի համամտութեամբ այդ գիրքերուն նպաստաւոր կիրառութիւնն ունենալով, և սոյն գիրքերուն պարունակութիւնն միւս գրքերէն, եթէ չըսեմ առաւել, գոնէ համահաւասար կերպով ներքին արժանեօք իրենց աստուածաշնչական յատկութիւնը ցոլացնելով, կը կարծեմ թէ պէտք չէ այլ եւս որ Ընկերութիւնդ սահմանափակէ իւր գործունէութիւնը զուտ եբրայական հետեւողութեան մէջ, և չուզէ տարածել զայն քրիստոնեայ հնագոյն ժողովրդոց և նախնական եկեղեցեաց աւանդութեան համեմատ։

Չեմ կարծեր, և չեմ ալ լսած որ Ս. Գրոց Ընկերութիւնդ իրեն վերագրած ըլլայ աւանդութեանց և վարդապետութեանց և դաւանութեանց վնասատու կաճառ հանդիսանալու դերը, որպէսզի կարող լինի հին եկեղեցեաց աւանդութիւնն ու վարդապետութիւնը մերժել, և նոր եկեղեցեաց ոմանց կազմած կարծիքը նախադասել։ Ս. Գրոց Ընկերութիւնը բոլոր մարդկութեան առջև պարզապէս Ս. Գիրքը դիւրընթեռնելի, և հետեւաբար դիւրիմաց և դիւրատար և դիւրագին ընելու նպատակին ծառայելով, բոլոր քրիստոնէից պէտք է ընծայէ այն Ս. Գիրքը, որ իրենց ճանչցածն ու իրենց յարգածն է. պէտք չէ աննշանակ կրճատումներով և այլայլութիւններով անոնց խիղճերը վրդովել, և ոչ ալ իւրաքանչիւր եկեղեցւոյ իշխանութեան և պաշտօնէութեան համար պարտաւորիչ եղող պահպանողական հաւատարմութեան վրայ ստիպումներ ստեղծել, իրենցները իրենց աւանդութեան անհամաձայն եղող հրատարակութիւններէ զգուշացնելու համար։

Ս. Գրոց ճշմարիտ սէրը, Ս. Գրոց իրական փառաւորութեան փափաքը և Ընկերութեանդ գնահատելի գոհողութեանց արդիւնաւորագոյն օգտին գաղափարը, ասոնք միայն ազդեցին ինձ այդ դիտողութիւնները, որոնց՝ բարեկամ և բարեմիտ զգացմանց հետեւանք լինելուն կը յուսամ թէ չէք տարակուսիր, և եթէ պատշաճ դատէք, կրնաք զայնս հաղորդել նաև մինչև անդ, ուր Ընկերութեանդ Բարձրագոյն Վարչութիւնը իւր գործունէութեան ուղղութիւնը կը սահմանէ»։

Այլ տպ. Վաղարշապատ, 1902/03 թթ. [Աստուածաշունչ մատեան...]։

Անավարտ տպագրություն։ Անվանաթերթ չունի։ Որպես փորձ՝ լույս է ընծայվել միայն 1 տպագրական մամուլ, այսինքն՝ 16 էջ+1 թերթ կամ 2 էջ տարընթերցվածներով (շարվ. 22.2×15.3 սմ)։ Բովանդակում է Ծննդոց գիրքը՝ Ա գլխից մինչև ԻԴ. 9։

Սկզբում, առանձին թերթի վրա, ունի հետևյալ ազդը.

«Աստուածաշունչի նոր հրատարակութեան առաջին թերթը և մի քանի գլուխների տարբեր ընթերցուածները, իբրև նմուշ տպուած, ուղարկուում են զանազան տեղեր՝ բանիմաց անձանց կարծիքն իմանալու նպատակով։ Խնդրում ենք կամ թերթը դիտողութիւններով վերադարձնել Մ. Աթոռի տպարան և կամ յայտնել այդ դիտողութիւնները հրապարակաւ։

Համեմատութեան համար գործածուած ձեռագիրները են. Ա. = հ. 155 (Յովհաննէս արքայեղբօր), 1272 թ.— Բ. = հ. 156 (Ստեփաննոս Գոյներիցանց՝ Գէորգ Սկեւռացու աշակերտի, նորա օրինակից, ազգակից Զօհրապեանի բուն օրինակին), 1292 թ.— Գ. = հ. 157 (Հեթում Թագաւորի, բուն օրինակ Ոսկանի), 1295 թ.— Դ. = հ. 154 (հնագոյն օրինակ, թերի, կարկատած. բունը Ծնն. ԺԵ9-ից), 1255 թ.— Ե. = հ. 944 (Մխիթար Այրիվանեցու ամբողջ աստուածաշունչը պարունակող ճառընտիր), շ. 1280 թ.— Զ = հ. 184 (Աղթամարում գրուած), 1422 թ.— Է. = հ. 187 (միայն Հնգամատեան), 1447 թ.— Ը. = հ. 181, 1318 թ.— Թ. = հ. 180, 1373 թ.— Ժ. = հ. 163 (թերի), նախ քան 1465 թ.— ԺԱ. = հ. 159 (ազգակից և շատ նման Զօհրապեան բուն օրինակին, Գէորգ Սկեւռացու օրինակից՝ նորա աշակերտ Մարտիրոսի արտագրած), 1303 թ.— ԺԲ. = հ. 357 (Գէորգ. ց. Հին կտ.ը Բոլոնիայում, Նոր կտ.ը Խրիմում գրուած), վերջը 1368 թ.— ԺԳ. = հ. 161, 1390—400 թ.— ԺԴ. = հ. 359 (Գէորգ. ց.), 1330 (?) թ.— ԺԵ. = հ. 182 (ըստ երեւոյթին Յովհաննէս Երզնկացու ինքնագիր), 1318 թ.— ԺԶ. = հ. 153 (սխալմամբ հնագոյն համարուած, բայց ո՛չ վաղ քան 1300 թ.։ Ճ — մի մագաղաթէ երկաթագիր ճաշոց, անշուշտ ո՛չ ուշ քան ԺԲ. դարում գրուած։ Ճ1 — ուրիշ ԺԴ. ԺԴ. դարերի ճաշոցներ։

Պէտք է ի նկատի ունենալ, որ ծանօթութիւնների և տարբերութիւնների համար ուրիշ նոր տառ գործ կածուի»։

Նմուշ՝ Պետ. Մատ. Գարեգին Հովսեփյանի դիվան, թղթ. 88, վավ. 4։ Սա այն օրինակն է, որ Հովհ. քհ. Միրյանը 1903 թ. փետրվարին Կ. Պոլսից էջմիածին է վերադարձրել՝ իր դիտողություններով։

Սույն հրատարակության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տես՝ «Էջմիածին և Աստուածաշունչ», Հ ա յ ր ե ն ի ք, *1894, մարտի 26, № 765։*

—Աշոտ վրդ., «Աստուածաշունչ Ս. Գրքի տպագրութեան տօնին», Արարատ, 1900, էջ 10—12։ — «Աստուածաշնչի տպագրութիւնն Էջմիածնի մէջ. Ս. Հայրապետին շրջաբերական կոնդակը», Բիւզանդիոն, 1900, ապր. 30, № 1070. մայ. 1, № 1071։— «Աստուածաշունչ Ս. Գրոց տպագրութիւն», Եկեղեցի Հայաստանեայց, 1900, հունիս, № 3, էջ 65—72։ — Հ. Թոփճյան, «Ս. Գրքի տպագրութիւնը», Նոր-Դար, 1902, ապր. 13, № 58։ — Պ., «Աստուածաշնչի տպագրութիւնը», Նոր-Դար, 1902, ապր. 26, № 63։ — Գր. Մանդակունի, «Աստուածաշնչի տպագրութեան տօնին», Նոր-Դար, 1902, մայ. 25, № 81։ — Հուսակ, «Աստուածաշունչին տպագրութիւնը», Արևելք, 1902, հնս. 27, № 4972։— Կ[արապետ] վ[արդապետ], [«Աստուածաշնչի հրատարակութեան գործը»], Արարատ, 1902, էջ 474—477։ Արտատպ. Նոր-Դար, 1902, սեպտ. 25, № 133։ — Հ. Թոփճյան, «Կրկին Ս. Գրքի հրատարակութեան տօնին», Նոր-Դար, 1902, հոկտ. 8, 9. № № 142, 143։ — Բարգեն Կյուլեսերյան, «Աստուածաշունչի նոր տպագրութիւնը Էջմիածնի մէջ», Արևելք, 1902, նոյ. 25, 26. № № 5084, 5085։ — Կ[արապետ] վ[արդապետ], «Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը», Արարատ, 1902, էջ 1069—1088։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (տպագր. առթիվ). Կար. Տեր-Սահակյան, «Նոր Աստուածաշունչը», Բազմավէպ, 1903, էջ 343—349։ — Է. Ք. Ն., «Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը», Նոր-Դար, 1903, փետր. 20, № 33։— «Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը», Տարազ, 1903, № 3, էջ 36։— Սասուրն, «Աստուածաշնչի նոր տպագրութեան առթիւ», Տարազ, 1903, № 4, էջ 50։— Հակոբ Գուրգեն, «Ս. Գրոց էջմիածնական տպագրութիւնը», Բիւզանդիոն, 1903, մարտի 18. № 1963։ —Հորո, «Օրուան խնդիրները», Բիւզանդիոն, 1903, մարտի 30, № 1973։

Տես նաև՝ Հ. Ս. Անասյան, «Էջմիածնի տպարանի սուրբգրական հրատարակությունները», Էջմիածին (ամս.), 1972, № 12, էջ 80—85։

Այլ տպ. Վիեննա, 1929 թ.

Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Համեմատութեամբ Եբրայական և Յունական բնագրաց: Վիեննա, Ամերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց, 1929:

[Printed by Christoph Reisser's Söhne Vienna].

Ը+991+280 էջ (շարվ. 20.4×13.3 սմ)։ Բովանդակությունն ըստ բաղդրականների կանոնի է։ Արտատպ. Կ. Պոլսի 1895 թ. միահատոր հրատարակությունից։ Ունի նաև նրա «Յառաջաբան»-ը։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 36409։

Նոր Կտակարանը, որն ունի ուրույն անվանաթերթ, թողարկվել է նաև որպես առանձին հրատարակություն (1—280 էջ)։

Բ. ՍԱՂՄՈՍԱՐԱՆՆԵՐ[1]

Տպ. Վենետիկ, 1512/1513 թթ.

[Սաղմոս ի Դաւիթ…]:

Կ. Գաբիկյանը խոսելով 1906 թ. Սեբաստիայում իր պատահած մի քանի հնատիպ գրքերի մասին, որոնք միևնույն տպարանի գործեր էին [Պարզատոմար, Ուրբաթագիրք, Տաղարան], նշում էր, որ նրանց հետ միասին տեսել էր նաև նույն տպարանի գործ համդիսացող՝ Սաղմոսարանի մի տպագրություն, որը «ծայրէ ճոթէ պակաս էր»[2]։ Գաբիկյանը, գաղափար չունենալով այդ հրատարակությունների ծագման մասին, դրանք համարել էր Մադրասի տպագրություն։ Սակայն հետագայում Գր. Գալեմքյարյանը, զբաղվելով Հակոբ Մեղապարտի ձեռքով 1513 թ. հրատարակված գրքերի հարցով, որոնց թվին են պատկանում վերոհիշյալ Պարզատոմարը, Ուրբաթագիրքը և Տաղարանը, գտնում էր, որ Գաբիկյանի կողմից մատնանշված թերութավոր Սաղմոսարանը հայ տպագրության երախայրիքներից էր, Հակոբ Մեղապարտի հրատարակություններից մեկը[3]։ Սաղմոսարանի այդ թերի օրինակի հետքերը և կամ նույն հրատարակությանը պատկանող մի որևէ ուրիշ օրինակ մինչև հիմա չեն հայտնաբերվել, սակայն Գաբիկյանի միջոցով ստացված տեղեկությունն այդպիսի մի տպագրության գոյության մասին՝ ինչպես Գալեմքյարյանի, նույնպես և մեր կարծիքով հավաստի է։ Սաղմոսարանի այս տպագրությունը հնագույնն է հանդիսանում Աստվածաշնչի առանձին գրքերի տպագրությունների շարքում։

Այլ տպ. Վենետիկ, 1566 թ.

[Սաղմոս ի Դաւիթ… Ի թվականիս Հայոց ՌԺԵ… ի մայրաքաղաքն ի Վանատիկ, ի Հայոց հոգետունն…]:

Սույն տպագրությունը մեզ ծանոթ է միայն մի թերի օրինակով։ Նրա լրիվ նկարագրությունն առել ենք

---

[1] Այս շարքից դուրս են մնում Սաղմոսի այն մասնակի հրատարակությունները, որոնք միայն առաջին կանոնն են բովանդակում՝ որպես հեգարան («Սաղմոս Ա կանոն, հեգերէն բաժանեալ ի պէտս մանկանց», «Սաղմոս Դաւթի որոշեալ յառաջ կանոնն առաջին և շարագասեալ հեգելով, ի յօգուտ և ի դիւրութիւն զեռայարժից մանկանց», «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի, յաղագս դիւրաւ հեգելոյ մանկանց», «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի, որոյ առաջին կանոնն և եթ ուսեալ բաժանելով զվանկսն յաղագս դիւրաւ հեգելոյ մանկանց»)։ Այդպիսիները տեսնել ՀԵԳԱՐԱՆ կամ ՀԵԳԻՐԷՆ անվան տակ։

[2] Կ. Գաբիկյան, «Հայ բժշկութեան շուրջ», Բիւզանդիոն, 1906, հնս. 18, № 2963։

[3] Գր. Գալեմքյարյան, «1513-ի հայ տպագրին գիւտին պատմականը և նոր լուսաբանութիւններ», Հանդէս Ամսօրեայ, 1913, էջ 709։

մատենագիտական աղբյուրներից[1]*։ Բաղկացած է 544 էջերից (չափ. 12.5×8.2 սմ)։ Ունի 8 պատկերներ։ Անվանաթերթի փոխարեն երկու էջերի վրա դեմ առ դեմ պատկերված են առաջին 2 պատկերները, որոնք նույն են 1565 թ. Աբգար Թոխաթեցու տպագրած օրացույցում եղածների հետ*[2]*։ Այդ երկու պատկերների տակ շարունակաբար կարդում ենք հետևյալ հիշատակարանը.*

«Ի թվականիս Հայոց Ռ. Ժ. Դ. ամին ես Թոխաթցի Աբգար դպիրս խնդրեցի զայս նոր գիրս ի Հռոմ ի Պետրոս փափուն և երետ հրաման շինելու, բարեխաւսութեամբ այս կարտինալացս և այս եպիսկոպոսիս և իմ զրայմիտ Սուլտանշայ որդոյս։ Եւ եկեալ ի գեղեցիկ նաւայհանկիս (sic) մայրաքաղաքս որ կոչի Վանատիկ, ի Թագաւորութեան Սրբլեմոն Բուճին, և շինեցաք զայս նոր գիրս և զայս փոքր մեկնիչս Սաղմոսացս»։

Վերջում՝ տպագրության հիշատակարանը (էջ 542—543), որ է՝

«Փառք...։ Կազմեցաւ սուրբ երգարանս Դաւթի լաւ և յընտիր աւրինակէ Գառնեցոյ վարդապետի։ Ի Թվականին Հայոց Ռ. Ժ. Ե., մայիս Ժ. Է., աւրն ուրբաթ, Ժ. Բ. ժամն։ Ի հայրապետութեան Հայոց Մեծաց տէր Միք[այ]էլին և իւր համայխոհ եղբարցն, և Փոքր Հայոց՝ տէր Խաչատուրին, ի չորրորդ ամի, առ ոտս Երզնկացի Մելքիսեդեկ եպիսկոպոսին, ի մայրաքաղաքն ի Վանատիկ, ի Հայոց հոգևորումն, և կամակցութեամբ այս բանհանայից՝ տէր Անանիա[յ]ին, տէր Ալեքսանին, տէր Յով[հ]ան[ն]էսին, Սարգիս աբեղին, տէր Ա[ստուա]ծայտուր, Ալեքսանոս տիրացուն, Պետրոսին, Խուպիարին, և Սարգսին, և Ճուվանին։ Յիշեցէք ի մաքրայիփայլ աղաւթս ձեր զաշխատո[ղ]քս սորայ զՍիմէոն ծերն և զԹոխաթեցի Աբգարս և զՍևբաստցի Տոներն[3]*, և Աստուած յիշէ զձեզ իւր միւսանգամ գալուստն։ Ամմէնն Բ. Ճ. Կ. Բ. Թուխտ է և ամմէնն կոխած է. և խակի գրչի գիր չկա ի գիրքս. բաւ է»։*

Նմուշներ՝ Պետ. Մատ. հն. 1317 (թերի օրինակ)։ Միլան, Ամբրոսյան մատ. (լրիվ օր.)[4]*։ Հռոմ, Վատիկանյան մատ. (լրիվ օր.)*[5]*։ Լեյդեն, Համալս. մատ.* Legatum Warnerianum *(լրիվ օր.)*[6]*։*

Այլ տպ. Վենետիկ, 1587 թ.

Սաղմոս ի Դաւիթ: [«Ի թվ. ՌԼԶ, ի մայրաքաղաքն Վէնէտիկ... ի բանատուն Ջուան Ալբերթին»]:

Էջակալում չունի. բաղկացած է 175 թերթերից=350 էջերից (չափ. 7.9×7.2 սմ)։ Պտկրզ.։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը («Յիշատակարան է այսփկ»), *որ է՝*

«Փառք...։ Աւարտեցաւ տպագիրըս ձեռամբ տէր Յովանէս Տէրզնցոյս և որդո իմո Խաչատուրին ի թվ. ՌԼԶ, ի մայրաքաղաքն Վէնէտիկ, ընդ հովանեաւ Մարկոս աւետարանչին, ի Թագաւորութեան Պասքուալ Չիքոնին, ի պատր[ի]արգութեան Ջ[ո]ւան Թրիվզանոյ[ի]ն, ի բանատուն Ջուան Ալբէրթին, ձեռնատուութեամբ խոճա Շահւօլուն և հոգևոր որդոյն իմո Ստէփանոսին և այլ Ջուղեցոյց (sic) զոր տէր Աստուած տացէ ըստ սրտից իւրեանց։ Այլ զԿարապետ Բաղէշեցին յիշեցէք ի Քրիստոս որ բազում օգնութիւն հասոյց մեզ։ Այլ և զերեսս արկանեմ ոտից ձերոց մոխրամածեալ և արտասւ[ո]ւալից հառաչմամբ հայցեմք և մախթեմք ի ձէնջ զի մի ողորմ[ի]ա[յ]իւ արժան առնէք զկենակիցն իմ զՆախփաշէն և զմայրն իմ զՄարիամն և զհայրն իմ զԽանէսն զփոխեալքն առ Աստուած, և յիշողացն և յիշեցելոցս Աստուած ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն, ամէն»։

Հիշատակարանից հետո կա Հովհ. Տերզնցու մի կենսագրական տաղը՝ «Այս է տաղ և յիշատակարան ի վերայ անւան» *խորագրով (սկ.* «Տամ ես զերեսս ձերոտաց՝ ու[ն]կրն դրնել այսուիկ բանին»)*, որի սկզբնատառերը կազմում են՝* «Տեր Յովանես Տերզնցո»:

Նմուշներ՝ Պետ. Մատ. հն. 1318 (թերի օր.)։ Վենետիկ, Ս. Ղազար (թերի օր.)։ Անթիլիաս, Կաթողիկոսարանի մատ. (թերի օր.)։ Լոնդոն, Britsh Museum *(լրիվ օր.)*[1]*։*

Այլ տպ. Լվով, 1616 թ.

Սաղմոս ի Դաւիթ: Տպագրեցաւ Սաղմոսարանս ի կազմարանն Քարմատանենց տէր Յովհանէսին, թվին մարդեղութենէն տեառն ՌՋԺԶ, և Հայոց Մեծաց՝ ՌԿԵ ին, դեկտեմբերի ամսոյ ԺԵ ին:

480 էջ (չափ. 10.2×6 սմ)։ Էջակալումը ձեռքով է կատարված։ Պտկրզ։ Հավելվածի նյութերում՝ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»*-ը։ Վերջում՝ հիշատակարանը (էջ 479—480), որ է՝*

«Ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս [յ]երկիրն Իլախաց, ի քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Նշման Սուրբ Աստուածածնին, ձեռամբ յոգնամեղ Քարմատանենց Յովանէս իրիցուս, զոր հոգս առեալ մեծաւ աշխատութեամբ և բազում ծախիւք տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցա, մինչև գիրն ի գլուխ հանի, և նոր կազմարան սահմանեցի. և վասն փորձի նախ զերգսն Դաւթի մարգարէին տպագրեցի ի օգուտ և ի շահ աստուածասէր աղօթողաց մերասեռ ազանց. զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց՝ տեառն փառք։ Արդ՝ եղև զրաւ սորին թվականութեան

---

1 Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատենագրութիւն», Վենետիկ, 1883, էջ 595—596։ Նույն, «Պատմութիւն հայկ. տպագրութեան», Վենետիկ, 1895, էջ 43—47։ Կալեմ, Բանասէր, 1903, էջ 205։ Խ. Սրապյան, «Աբգար դպիր Թոխաթեցի և որդին Սուլթանշահ», տես՝ Վ. Զարդարյան, «Յիշատակարան», հտ. Բ, Կ. Պոլիս, 1912, էջ 254—267։

2 «Խառնայ փնտուր տումարի» անունը կրող այդ օրացույցի նկարը տես՝ Հ. Ս. Անասյան, «Հայկ. մատենագիտ.», հտ. Ա, էջ 19. նրա նկարագրությունը՝ էջ 22, § 2։

3 *Տպագրում՝* զսև բաղցիտոներն:

4 *Հմմտ.* Հանդէս Ամսօրեայ, *1912, էջ 391։*

5 *Հմմտ. անդ։*

6 *Հմմտ.* Հանդէս Ամսօրեայ, *1928, էջ 453։*

1 *Հմմտ.* Հանդէս Ամսօրեայ, *1965, էջ 53—57։*

Հայոց Մեծաց ՌԿԵ ամին, յամսեանն դեկտեմբերի ԺԵ, և ի փրկչին ՌՋԾԺԶ ամի, ի հայրապետութեանն էջմիածնա սուրբ յաթոռոյն՝ կենդանի նահատակին տեառն՝ տէր Մելքիսեդեկ կաթուղիկոսին, այլ և Կիլիկեցւո գաւառին՝ տէր Յովհաննէս քաջ բաբունապետին. ի սոյն ժամանակս հանգիստեցաւ կատար սորին. այլ և ի թագաւորութեանն քրիստոնէից Լեհ ազգին բարեպաշտ արքայի Երրորդ Զիկմունտին, զոր տէր յինքն անսասան պահեսցէ երկար ամօք։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք այսմ գրիս, յիշեսջիք ի բարի և զծնօղս իմ ի Քրիստոս հանգուցեալ Բաղէշցի Քարմատանէնց զՄուրատ, և զմայրն իմ զԱննա. այլ և պապն իմ զտէր Սի-րում՝ «Հաւատով խոստովանիմ»: *Վերջում՝* «Յիշատակարան գրոցս», *որ է՝*

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Նոր-Ջուղա, 1638 թ.

[Սաղմոս ի Դաւիթ: ...Ի քաղաքն Շօշ, յանապատն Ջուղայոյ, ի թվին ՌՉ և է]:

Անվանաթերթ չի ունեցել։ Բաղկացած է 288 թերթերից = 576 էջերից (չափ. 9.8×5.2 սմ), առանց էջակալման։ Տեղ-տեղ նշված են պրակային համարները, որոնք, սակայն, սխալ են։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ»: *Վերջում՝* «Յիշատակարան գրոցս», *որ է՝*

«Փառք..., որ ետ կարողութիւն տառապեալ անձանցըս հասանել յաւարտ գրոցս։ Բայց սակայն զվերոյ և զամէնեբջանիկ առն Աստուծոյ՝ զտեառն Մովսեսի կաթուղիկոսի զվարսն եւ համառօտ բանիւ կամիմք յայտ առնել։ էր սա յերկրէն Սիւնեաց...։ Եւ յաջորդեաց զաթոռ նորա տէր Փիլիպպոս ձեռնասուն աշակերտ իւր։ Եւ յաւուրս սորա եղև տպագրութիւնս ի քաղաքն Շօշ, յանապատն Ջուղայոյ, ի թվին ՌՉ և է. ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի Կեսարացւոյս, որ տարի մի է և հինգ ամիս, որ զցայգ և զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիւս զի ոչ եմք տեսեալ ի վարպետէ և ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն զՀոգին սուրբ. և զիղձս և զկենդանի աղօթս հոգևոր հօրն մերոյ գնացելոյ առ տէր։ Եւ են ձեռնտու և օժանդակ գործոյս հոգևոր որդեակքն իմ վարպետ Յակոբճանն, և տէր Յովհաննէս քահանայն, և տէր Միքայէլն, և Յովսէփն։ Վասն որոյ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ Խաչատուր վարդապետս, և զձեռնտու եղբարսն իմ, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ որ է արհնեալ յաւիտեանս, ամէն։ Հայր մեր որ յեր։ Փառք ամէնիշաղ տեառն որ ետ կարողութիւն անիմաստ արանցըս հասանել յաւարտ երգարանիս Դաւթի ի թուին ՌՉէ, որում փառք յաւիտեանս»։

Նմուշ՝ Օքսֆորդ, Bodleian Library Vet. Or.f. Arm. I.

Այլ տպ. Վենետիկ, 1642 թ.։

Սաղմոս ի Դաւիթ: Կազմեցաւ ի մայրաքաղաքն Վանատիկ, ազնականութեամբ պատուական բժշկապետին Յովսեփոս Արոմատարիոսին և Անգեղոս Պէլիսէլոս Աբենացւոյն, թվին Հայոց Մեծաց ՌՂԱ:

373 էջ (չափ. 12.2×7.4 սմ)։ Պտկրզ.։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ»: *Վերջում՝* «Պայծառ ընթերցողաց ողջոյն և ծանուցում» *(էջ 373), որ է՝*

«Փառք...։ Արդ՝ կատարեցաւ տպագրական սուրբ երգարանս զոր Հոգին սուրբ թելադրեաց ի շրթունս մարգարէին և աստուածահօրն Դաւթի, ի վայելումն և ի պայծառութիւն մանկանց եկեղեցւոյ ամենայն քրիստոնէից. զոր և ես նուաստ յոգի Յոհաննէս Անկիւրացիս տեսանէի զպակասութիւն գրեանց ազգիս Հայոց և վարանէի ի մտի՝ եթէ զի՞նչ լինի հնար բազմանալոյ Հին և Նոր Կտակարանաց. քանզի պատճառ նուազութեան այս էր զի բազում ծախիւք և դժուարութեամբ հազիւ կարէ ոք ստանալ Ա. գիրք կամ Բ.ս կամ երիս. թող թէ պիտոյանայ բազում։ Վասն այս պատճառի եդայ ի մտի իմոյ զարուեստ տպագրութեան օգնականութեամբ Հոգւոյն սրբոյ և աղօթիւք սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին և բարեխաւսութեամբ ընտրեալ անօթոյն սրբոյն Պօղոսի առաքելոյն, դիմեցա յուսով և փափաքանօք ի Հռոմ քաղաք և անդ Դ ամ բազում աշխատութեամբ և բազում նեղութեամբ և բազում չարչարանաւք, զոր ոչ է հնար ի գործ արկանել զոր ծածկագէտ ստեղծաւղն իմ գիտէ, և հանի զպողպատն և զկաղապարքն, զծաղիկքն և զծաղկագրերն բազում աշխատութեամբ, և յետոյ եկեալ հաստ ի Վէնէտիկ, սկսա ի գործ արկանել։ Զոր և նկարեցաւ տպագրական երգարանս Դաւթի ի թվականիս հայոց ՌՂԱ, ի ժամանակիս իշխանաց իշխանի պայծառազոյն Փրանկէսկոս Էրիցո դուքին, մեծաւորաց հրամանաւ և բրիվիլէճով, ձեռամբ իմոյ նուաստ Անկիւրացի թարգմանիչ Յովաննէսին որ Ճիւաննի Մօլինօ կոչի, ի լաւ և ընտիր յաւրինակէ Գատնեցոյ, և յայլ ընտիր վարդապետաց ստուգած և վկայեած (sic) օրինակէ, քննութեամբ և վերակացու և հասու լեալ տպագրեցաւ զսուրբ (sic) գիրքս առ ի պայծառութիւն մանկանց եկեղեցւո ազգիս Հայոց։

«Դարձեալ աղաչեմ զձեզ որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ Անկիւրացի Յոհաննէսս, որ պատճառ եղէ թէ՛ գրին և թէ՛ տպագրելոյն, և զպատուական այրն Յովսեփոս Արոմաթարիօն որ ոսկով և արծաթով օգնեաց ինձ, և զծնաւղն իմ զփոխեալն ի Քրիստոս զՄուրատ սարկաւագն, և զմայրն իմ զՓաշամելիքն, և զերկուս որդիսն իմ զՄիքայէլն և զԳաբրիէլն, և զայլն ամենայն արեան մերձաւորս իմ, և դուք ընկալջիք զնոյն։

«Դարձեալ ծանիք զի ամենայն ինչ սորա՝ ընտրութեամբ ժողովեցի եթէ զձև գրերուն, եթէ զշար տողերուն, եթէ զթանաքն, եթէ զթուխթն, [ե]թէ զկանոնքն և եթէ զծաղկագրերն, եթէ զպատկերքն և եթէ զկազն, մանաւանդ զյաւրինակն (sic), որ բազում քննութեամբ և բազում աշխատութեամբ ի յայս չափս հասուցի ազաւ-

[1] *Այս հիշատակարանը հրատարակված է Ղ. Ալիշանի կողմից աննշան տարբերություններով, տես՝ «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 171—172։*

թիւք ձերովք. և զուք որպէս վայել է ձեր սրբութեանդ այնպէս ընդունիք:

«Եւ այլ յիշեցէք զտղայահասակ մանուկն զՅովսեփոսն, որ աւգնութիւն արար ինձ ի շարելն գրին և է երկոտասանամեայ մանուկ, զոր տէր Աստուած զինքն անփորձ պահէ ի վերայ երկրի, ամէն:

«Դարձեալ աղաչեմ՝ յիշեցէք ի Քրիստոս զՏարանտացի մահտեսի Աստուածատուրն, որ բազում օգնութիւն արար ինծ ի սրբագրելն և ի յատուգարանելն, զոր տէր աստուած տացէ զփոխարէնն աստ և ի հանդերձեալն, ամէն: Ի տպագրատունն Սալիգադաու Վերջ»:

Նմուշ՝ Վենետիկ, Մ. Ղազար:

Այլ տպ. Լիվոռնո, 1644 թ.

Գիրք և Սաղմոսք Դաւթի որ և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղև ի հայրապետութեանն Հայոց՝ տէր Փիլի[պ]պոսի սրբազան կաթուղիկոսի: Հրամանաւ և կամօք երջանիկ խաչատուր վարդապետին Կեսարացոյ: Ձեռամբ և հոգացողութեամբ նուաստ Յովհաննէս վարդապետի Ջուղացոյ, յիւրում տպարանի, զոր կայացոյց յԻտալիա, ի վայելուչ քաղաքն և ի նաւահանգիստն ի Լիվօռնայ, ի թվ. ՌՂԳ: Յօժարութեամբ վերակացուաց:

384 էջ (չափ. 7.2×4.6 սմ): Էջակալում չունի. նշանակված են պրակային համարները, որոնք ԻԴ (24) հատ են՝ յուրաքանչյուրն 8 թերթ (=16 էջ), որով ընդամենը 384 էջ: Փակեղ: Գրքի սկզբում կա մի նամակ՝ «Առ երջանիկ տէրն իմ՝ տէր Խաչատուր րաբունեաց պետն, ի նուաստ Յովհաննիսէ Ջուղացոյ, բանի սպասաւորէ» *(էջ 3—5), ուր ասվում է.*

«Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ հօրդ իմոյ մեծի և երջանկագունի և նախախնամութեամբ տեառն որ ի թվ. ՌՂ և Ը բաժանեալ ի սուրբ ուխտէդ դիմեցի յարևմուտս սակս լրութեան տպագրութեանս. և ի սպառուածս ամի միոյ, որ ընդ ծով և ընդ ցամաք հասի յԻտալիայ ի գեղազարդ քաղաքն ի Վէնէտիկ և վերահասու եղեալ գործառնութեանցս ընթացայ ի Հռոմ և անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տըպոց. և ստացեալ մասն ինչ ի գործոյս առի զարհեստաւորս և դիմեցի [ի] Լիվօռնայ, և անդ զտեղի կալեալ մեծաւ ջանիւ և բարի գիտաւորութեամբ, տիւ և գիշեր անդադար աշխատելով՝ լրումն տուաք տպագրութեանս, յերկարելով յաշխատութիւնս՝ բաց ի ճանապարհէն Գ ամ և Զ ամիս անմխիթար յամենայն կողմանց: Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ և աղօթիւք տեառնդ իմոյ՝ աւարտեցաք զտպագրութիւն անթերի և անպակաս կատարելութեամբ, որք են տիպք զանազանք՝ ըստ զանազան քանակութեան և որակութեան, մեծք և փոքրք՝ ութիւք որոշեալք. ընդ որոց է և նիւթ երգոց և շարականաց և այլ գործիք բազումք զարդարիչք տպագրութեանս, որով ամենայն ինչ կարելի է տպել. յորոց իբր միջին կերպ է այս զոր տեսանէ տէրդ իմ ի ներկայս, զոր իբրև զպտուղ հնազանդութեան մատուցանեմ տեառնդ իմոյ զերախայրի գործոյս, որով կարիցէ տէրդ իմ ճանաչել զկատարելութիւն գործոյս և զհաւատարմութիւն ծառայի քո, զի ոչ կորուսաք զժամանակն մեր ունայնաբար, որպէս կարծեն այլք: Իսկ վասն պակասութեան ներեա երկայնամտութեամբ, զի իբրև զփորձ տպեցաք յոյժ ըշտապմամբ վասն անմխիթար նեղութեանցս, զի յաւուրս Զ աւարտեցաք զսա Ռ և Ծ հատ թուով ի միասին, միայն և առանց ուրուք ձեռնտու[ու]թեան: Վասն որոյ ընդունելի լիցին տեառնդ իմոյ վաստակ ծառայի քոյ, իբրև զնուէր անձնանուէր. վասնզի մտեալ որպէս ի պատերազմ՝ իբրև արեամբ ստացայ զսա: Ողջ լեր: Ի Լիվօռնայ, ի թվ. ՌՂԳ, մայիսի Ժ»:

Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» *և հատվածներ* «Նարեկ»*-ից: Վերջում հիշատակարանը՝* «Առ բարեպաշտասէր անձինսդ ընթերցողաց, վասն մշտընջենաւոր յիշատակի», *որ է՝*

«Շնորհօք ամենազօրին Աստուծոյ և նախախնամութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ի թվին ՌՂ և Ը, ի դեկտեմբերի ամսոյն ի մէկն, ես նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Յովհաննէս Ջուղացի սպասաւոր բանի, հրամանաւ երջանիկ հոգևոր հօրն իմոյ Խաչատուր վարդապետին Կեսարացւոյ, ելեալ ի Սպահանու դիմեցի յարևմուտս յերկիրն Իտալացոց, սակս լրման և կատարելութեան գործոյ տպագրութեանս, զոր արդէն ես ձեռնարկեալ էաք: Զոր ի սպառուածս տարւոյ միոյ հասեալ ի պայծառ և ի գեղազարդ քաղաքն[1] և նաւահանգիստն ի Վէնէտիկ, ուր ընթացեալ ի տպարանս գրոց բազում ջանիւք հոգ տարեալ վերահասու եղէ գործառնութեանս. և վասն առաւել պակասութեան մերոյ տպագրութեան, ի մտի եդի և խորհեցայ նորագոյն գիրք և տիպք կայացու[ց]անել որպէս զի ևս գեղեցկագոյնք լիցին գործք տպագրութեանս մերոյ: Այլ զի ի Վէնէտիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ, դիմեցի ի Հռոմ ուր սկիզբն արարաք գործառնութեանս և մասն ինչ ի գործոցս, անդ ի Հռոմ աւարտեցաք: Եւ ապա անտի[2] ընթացաք ի վայելուչ նաւահանգիստն ի Լիվօռնայ, ընդ մեզ ածելով և զարհեստաւորս. ուր զետեղեալ բազում ջանիւք և հոգացողութեամբ զուն գործեալ աւարտեցաք յառաջարկեալ գործառնութիւնն մեր ի ցայգ և ի ցերեկ մահու չափ աշխատելով՝ միայն և առանց ուրուք օգնականի յերկարելով յաշխատութիւնս Գ ամ և Ե ամիս ողջոյն, բաց ի մի ամոյն, զոր անցուցաք ի ճանապարհին, զանց առնելով զվիշտս և զտառապանս՝ զոր յայսքան ժամանակս կրեցաք ի հակառակասիրացն և յոչ կամողացն զբարեգոյն գործս, որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտ էին՝ դիմաբանեալ հակառակէին մըշտաքար բանիւք, գործովք և արդեամբք, և զառաջարկեալ գործն մեր խափանել ջանային: Սակայն աստուածն ամենահայեաց...: Եւ շնորհօք ամենազօրին աստուծոյ և ձեռնտուութեամբ վաճառականաց ոմանց բարեպաշտից, աւարտեալ կատարեցաք ըզյառաջարկեալ գործ տպագրութեանս անթերի և յոյժ կատարեալ,

[1] *Տպագրում՝* քաղքան:

[2] *Տպագրում՝* անդի:

քանակութեամբ և որակութեամբ զանազանեալ, յորոց մինն և իբր միջին կերպ է այս, զոր տեսանէք յառաջիկայդ: Զոր յաղագս տեսութեան և փորձառութեան գործոցդ տպեցաք զՍաղմոսարանդ և աւարտեցաք զսա՝ յամին որ ի ծնընդենէն Քրիստոսի ՌՈԽԴ[1], ի հայրապետութեան Հայոց՝ տէր Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի, և ի թագաւորութեանն Պարսից Փոքր Շահ Ապասին՝ նորընծայ թագաւորին. և ի թվին որ ըստ Հայոց՝ ՌՂ և Գ, ի մայիսի ամսոյ ի տասն, ի Լիվօռնայ, ի յիշատակ մշտնջենաւոր, և ի փառս Քրիստոսի: Արդ՝ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում՝ շնորհք տեառնէ, զտեառնէ զոհացուցուք. և եթէ ոչ՝ ներեցէք իմում տկարութեանս և երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս, զի իբրև զփորձ տպեցաք զսա անհոգաբար և յոյժ ըշտապմամբ սակս բազում նեղութեանց և անմխիթարութեանց, զոր կրէի միշտ վասն միայնութեան և պանդխտութեան իմոյ: Վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսանելով և վայելելով զսա, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ ասացեալ զերջանիկ զխաչատուր վարդապետն և զձեռնտու բարեպաշտասէր վաճառականսն. և զիս զնուաստ զՅովհաննէս Ջուղացի սպասաւոր բանի, որ բազում աշխատանօք յայտարերեցի զտիպս և զտպագրութիւնս. և զբարեպաշտ ծնօղս իմ՝ զհայրն իմ հանգուցեալ մահդասի Եղիգարն և զմայրն իմ զԱնամէլիքն և զամենայն արեան մերձաւորս իմ զհոգևորս և զմարմնաւորս, զկենդանիս և զհանգուցեալս, որպէս զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Հայր [մեր]: Վերջն է գրոցս»:

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար:

Այլ տպ. Վենետիկ, 1660 թ.

Գիրք և Սաղմոս, որ և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղև ի գեղեցկաշէն մայրաքաղաք Վանատիկ, ի տունն Պովիսին, ի թուականութեան Հայոց Մեծաց՝ ՌՃ և Թ:

Տեղեկությունները մատենագիտ. աղբյուրներից են[2]: էջերի քանակն ու չափ. չափը անհայտ են: Գրքի վերջում՝ տպագրության հիշատակարանը.

«Փառք ... Թոխաթեցի Ղասապպաղչայենց Սահակ երէցն որ զօրինակն ետուր, և ի սրբագրելն շատ աշխատեցաւ...: Այլ և օրինակ սորա քննած և ստուգաբանած է ի բազում վարդապետաց, որոց գլուխ է ամէներջանիկ Կեսարացի Խաչատուր քաջ րաբունապետն, որ էր վերատեսուչ քաղաքին Ջուղայոյ, և պետաց պետն Սիմէոն, որք են հանգուցեալ առ Քրիստոս...: Վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեանդ որք հանդիպիք սմա տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթսդ ձեր և վայելելով զսա՝ զվերոյասացեալ Սահակ երէցն և զՍտեփանոս, որ բազում աշխատանօք յայտարերեցաք զայսքան, առ ի պայծառութիւն ազգիս մերոյ Հայոց: Տպագրեալ եղև ի տանն Պովիսին: Վերջ»:

Նմուշ՝ չունենք:

1 Տպագրում՝ ռոխգ, որ անշուշտ վրիպակ է:

2 Գ. Զարբհանալյան, «Պատմ. հայկ. տպագր.», էջ 95:

Այլ տպ. Ամստերդամ, 1662 թ.

Սաղմոս Դաւթի մարգարէի որ և Սաղմոսարան յորջորջի:

764 էջ (չափ. 11.2×6.5 սմ): Պատկեր.: Գրքի սկզբում՝ հրատարակիչ Կարապետ Անդրիանացու առաջաբանում (էջ 3—6) ասվում է.

«Ապաւինելով... յայնժամ յիշեսջիք առ կատարօղն խնդրուածոց Քրիստոս նախ զՄարեցի Մա[տ]թէոս սարկաւագն, որ հանգուցեալ է առ աստուած, որ էր նօտար Փիլիպպոսի ճգնազգեաց կա[թ]ուղիկոսի փոխնցելոյն առ Քրիստոս, որ բազում ջանիւք և երկամբք բանդակել ետ և նորակերտեաց զազնիւ և զպատուական գիրս զայս, հրամանաւ և կամօք երի[ց]ս երանեալ կաթուղիկոսին Յակոբայ: Իսկ զկերպ և զօրինակ տառին առեալ էր յերջանիկ րաբունապետէն Մօսիսէ, նաև զգաղափար Սաղմոսարանիս: Յիշեսջիք ընդ նմին զընկեր և զօժանդակ վերոգրեալ Մա[տ]թէոսին զԾրևանցի Ղլիճենց Աւետիսն, զեղբայր երջանիկ րաբունապետին Ոսկանի որ ի ժամ մահուան Մա[տ]թէոսին յորդորեաց զնա անդարձ առնել և կատարել զայս նոր տպարանս յիշատակ սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի վանացն. իսկ զկնի որոց ներեսջիք և ինձ՝ անպիտան և անարհեստ Կարապետի Անդրիանացւոյ բանի սպասաւորի և աշակերտի վերոգրեցելոյ երջանիկ րաբունապետի Ոսկանի...: Զակիզբն էառ տպագրութեան Սաղմոս Դաւթի ի թուականութեան կենարար փրկչին Յիսուսի ՌՈԿ և միակի, իսկ ի Հայոց թուին ՌՃ և մետասանին, յամսեանն սահմոյ ութերորդի և դեկտեմբերի երեք տասանին, ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբասնեալ կաթուղիկոսին, ի յերկրին Օլանդայ, ի քաղաքին Ամստէրտամայ, ներ տպագրարանում սուրբ Էջմիածնի և սուրբ Սարգսի, հոգաբարձութեամբ և ծախուք վերոգրեալ Ղլճենց Աւետսին Երևանեցւոյ»:

Հավելվածի նյութերում՝ Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսիս» տաղը, «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ, «Նարեկ»-ից: Ունի երկու հիշատակարաններ, որոնցից առաջինը (էջ 744—754) է՝

«Փառք...: Արդ կատարեցաւ շնորհօք ամենազօրին քնարական մատեանս մարգարէութեանն Դաւթի յամի որ ի ծնընդենէն Քրիստոսի Ռ և Ո և Կ և Բ, յամսեանն հռոմայեցւոց յուլիսի Ժ. և հընգինւ Եւ ի թուաբերութեան հայկական սերիս Ռ և Ճ և մետասանին, յամսոյն ահկւոյ ԺԱ, յիշխանութեան նահանգիս Յօլանդայ Վիլհէլմոս Բրինցփին, ի ծովապատ քաղաքիս որ կոչի Ամստէրտամ: Ներ տպարանում Սուրբ Էջմիածնի և արագահաս վկային իւրոյ Սրբոյն Սարգսի զօրավարին: Յեօթներորդում ամի դիտապետութեան երիցս երանելոյն՝ հովուապետին լուսաւորչադաւան հօտիս տեառն Յակոբայ ...[1] երրորդի սրբասնեալ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, լուսակառոյց և զըմբեղայար՝ երկնաքատակ և քրիստոսաբնակ գահոյին, որ վերածայնի սուրբ Էջմիածին: Այլ և աղօթիւք ներագումարեալ եղբարց կուսակրօնից և արքիական և րաբունապետական խմբից աւարտեցինք զսա առ ի վայելումն մանկանց Սիոնի զիմանալի բու-

1 Բաց է թողնված մեկ բառի տեղ:

րատանս, ի փառս Քրիստոսի և ի գովեստ ամենասուրբ անուան նորա. ամէն։ Եւ արդ աղաչեմ զձեզ սիրելի սատուծոյ յիշել ի Քրիստոս զբազմազան երկամբք և բրանաժոր աշխատութեամբ հոգաբարձուն և զմատակարարն տպարանիս զտէր Ոսկանի բարունեաց պետի զեղբայրն՝ զԹէոդորոսի որդի զԵրևանցի Պլիճենց Աւետիսին։ Որ եղև պատճառ յորդորելով զՄա[տ]թէոս սարկաւագն ընծայել զայս աղնուակերտ և բղձալի տպարանս Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգսի. Քանզի Մա[տ]թէոսն ի հիւանդութեան իւրում կոչեալ զվերոգրեալ Աւետիսն և խնդրէր ի նմանէ Ջ և ԺԵ մաշիլ փոխ, զի տացէ պարտապանացն իւրոց, որք յոյժ վշտացուցեալ էին զնա. և տպեմք առ է ԲԹ Սաղմոսարանս, և Ռ և Մ Յիսուս-որդի և վաճառեալ և զշահն նորա արասցուք Բ բաժինս՝ ինձ և քեզ։ Իսկ թէ մեռայց՝ դու ի գործ արկեալ զտպարանն մինչև վճարիցես զպարտսն իմ և զքոյն ես առցես հանդերձ շահիւքն, և տէր եղիցի ընդ քեզ։ Եւ զայս ոչ էառ յանձն Աւետիսն՝ ասելով. Եթէ տացես զտպարանդ յիշատակ Սուրբ Էջմիածնին և Սուրբ Սարգսին՝ լինիմ քեզ ընկեր և տամ զփողս, և ես աշխատիմ անձամբս ի տպարանիս որքան և կենդանի իցեմ, և զարդիւնս դրամին իմոյ բաշխեմ վերոգրեալ որոցդ. և յետ մահուան իմոյ՝ զրովանդակն։ Որոյ հաւանեալ Մա[տ]թէոսն և յօժար սրտիւ արար կտակ՝ զի յետ մահուան իւրոյ և վճարման պարտուց երկոցունցն՝ տացի տպարանն վերոգրեալ մենաստանիցն. և ինքն չև ևս աւարտեալ զՅիսուս-որդին հանգեաւ ի Քրիստոս։ Զորոյ զԹերին լցեալ Աւետիսն, և սկսեալ բաղձանօք և փափագմամբ տպել Ս և Չ գեղապաճոյճ և զովելի Սաղմոսարան առ ի ընթերցումն աստուածասիրաց, արանց և կանանց։ Վասն որոյ յիշեսջիք զծնօղ սորին զԹէոդորոսն, և զմայրն զԳոհարաղին, և զպապն զՊլիճենց Զաքարիայն, և զմամն զՄէլիքխաթունն, և զփոքր եղբայրն զՄիրզախանն և զքոյրն Ռուսինէն և զհանգուցեալ եղբայրն զՅովհաննէսն. այլ և զկենակից սորին զՄարիամ տատն և զամենայն ազգատոհմն և զերախտաւորս սորին. և ասացէք լիով սրտիւ՝ Տէր աստուած ողորմեաց նոցա և ջնջեա զգիր յանցանաց նոցա և արժանի արա արքայութեան քում։ Հուսկ յետոյ հայցեցէք և վասն իմ վերջացելոյս և անարժանիս՝ որդւոյս տէր Յոհաննիսի՝ Կարապետի կրօնաւորի Անդրիանացւոյ և կարծեցեալ զոլ բանի սպասաւորի, և յիմար և անպիտան աշակերտի վերոգրեալ տեառն Ոսկեայ ամենիմաստ հռետորապետի և փիլիսոփայի և գաղմատականացն թարգմանչի։ Եւ ներեսջիք սխալանաց իմոց, զի անծանօթ էի տպական արուեստիս և ևս բարբառոյ ազգացն Հոլանդիզաց, որպէս և նորա մերոյս գրի և լեզուի։ Վասն այսորիկ յոյժ տաժանմամբ և մեծաւ աշխատութեամբ հազիւ կարացի այսքան յայտ ածել։ Եւ զլմայս բատ այլուոյն արկի ի գանձանակս տեառն. և ամենայն կերպիւ ջանացի ըստ կարողութեան իմոյ հետևիլ ճշմարտութեան, միջնորդութեամբ և օժանդակութեամբ վերոգրեալ Աւետիսին, քանզի օգնէր միշտ ինձ խօսելով ընդ նոսա և՛ ի արտադրել փորձոյն և՛ ի բաղդատել պատկերացն. զի զոմանս ըստ վերնագրացն և զոմանս միոյ տան կամ շարադրութեան և զայլսն ըստ Յոանիկաց օրինակացն եդինք։ Այլ և յիրկուց հանդխացեալ օրինակաց սրբագրեցաւ, մինն յառաջնոյ ասացելոյն և միւսն ի Նեապօլսեցւոյ տէր Խաչատրոյ բարունապետի տպեալ յԱմենւոյն. սակ[ս] որոյ դրասս ոմանս եղինք սարնթեր ի լուսանցսն, սորբասակսն և բացասակսն նշանօք։ Նոյնպէս և զասս Հերբայեցւոցն, հանդերձ անուամբն իւրեանց ի լուսանցս Անրծացն, և որ ի նոյնց հանոյ թուեացի ձեզ՝ ընկալջիք...։ Դարձեալ յիշեսջիք ի տէր զԱմասիացի խոստացիչի որդին Մինասն, մարբն իւրով Մարիամաւ, որ ետ մեզ Ջ մաշիլ փոխ, որով զԹ և Մ Յիսուս-որդին կազմեալ յղեցինք նաւով յԻզմիռնիայ։ Այլ և յիշեսջիք զհանճարեղ արուեստաւորն զՅոանիկ Քրիստոֆելսն, որ է ազգաւ Ալաման, որ և բազմահնար ջանիւ կերպացոյց զգրոզմանեալ և զպղնձի տիպ տառիցս, որով ձուլեալ կերպանոյ կապարեայ գիրս։ Նաև զշարօղ գրոյս Եան Եանէսն Բիքլման պատանին, որ թարգմանի Յոհաննէս Յոհաննիսի, որոյ բազում աշխատութեամբ ուսուցի զգիրս Հայոց ի պէտս գործոյս։ Իսկ զկնի սորին եթէ տէր կամիցի և օգնեսցէ մեզ աղօթիւք եղբարցդ, տպագործեմք փոքրիկ ժամագիրք, վասն հասարակաց անձանց, մինչև ի հասանել առ մեզ Աստուածաշնչին և հրամանաց վեհափառին հաւու, և յայնժամ արասցուք զպատուիրեալն ի նմանէ առանց ձանձրանալոյ»։

Երկրորդ հիշատակարան (էջ 761—762).

«Երկրին անգամ խնդրեմ ի սիրելեացդ իմոց յիշել առ Քրիստոս զՋուղայեցի խօջայ Շահրիմանն և զկողակիցն իւր Շահզատէն, և զորդին իւր խօջայ Սահրատն և զկողակիցն իւր Սալվարն և զորդիսն զՋաքարիայն և զՄարգարէն և զայլն արեան մերձաւորսն սորին. նաև և զընկերն իւր Միրզենց Յովհանն և զհայրն իւր Մնացականն և զմայրն իւր Անային, զեղբայրն իւր Մկրտումն հանդերձ ազգականօքն իւրով, զի յոյժ օգնական եղև մեզ ի նեղութեան մերում, քանզի տարակուսեալ պաշարէաք վասն դրամի և բազումք ունէին կարօտութիւն, բայց ոչ կարէին օգնել թէ զգիրն աւարտէաք. իսկ սա ձեռնտու եղև և ետ մեզ Ռ և էճ մաշիլ որով աւարտեցինք զԲԹ և զէճ Սաղմոսարանն։ Վասն որոյ յերես անկեալ աղաչեմ զձեզ զի լիով սրտիւ» ևն։

Այլ հիշատակարան (էջ 763).

«Դարձեալ աղաչեմ զձեզ յիշատակել ի Քրիստոս զՊօղոսենց Մխիթարն, և զհայրն իւր զԽաչիկն և զմայրն զԳուլփարին և զնորաբողբոջ որդին զՄուրատխանն. քանզի այս աստուածասէր այրս Մխիթար եղև միջնորդ և յորդորիչ և պատճառ Յոհաննին որ օգտակար և ձեռնտու եղև մեզ, տալով զվերոգրեալ դրամն. վասն որոյ և սմա արժանի է ասել» ևն։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Ամստերդամ, 1664 թ.

(Ա էջ) Երգ Բնաւական։

(Բ էջ) Սաղմոս Դաւթի մարգարէի | Որ և Սաղմոսարան կոչի։ | Հոգւոյն շնորհաց բղխեալ ճոսի, | Ցօղիս մարդկան առծաւալի։

356 էջ (չափ. 11×6.5 սմ)։ Մեզ հայտնի է Փարիզում և Վենետիկում գտնվող նմուշների նկարագրությամբ և մանրամասն աղբյուրների տեղեկություններով[1]։ Սկզբից 3-րդ էջում՝ հիշատակարանը, որ է՝

«Արդ սկիզբն էառ տպագրութիւն աստուածային սաղմոսիս ՌՈԿ և Դ թուոյն Քրիստոսի, յապրիլի ամսոյ միոյն, իսկ ի Հայոց թուականի՝ Ռ և Ճ և երից, ի մարտի ամսոյ Ի և երկուց, ի հովուապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթուղիկոսի վերակացողի յաթոռ Գրիգորի սրբոյ Լուսաւորչի որ ի սուրբ էջմիածնի։ Ներքրում տպարանում, որ հաստատեալ եղև ի նախանձանեկեալ Մատթէոսէ սարկաւագէ, յերկրիս Հոլլանտիոյ, ի քաղաքիս յԱմստէլտամի, որ կոչի աշխարհ Ցլամէնկի, աշխատութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անիմաստ և անպիտան Կարապետի Անդրիանացւոյ և բանի սպասաւորի, աշակերտի մեծի րաբունապետի տեառն Ոսկանի Երևանեցւոյ»։

Հավելվածի նյութերում՝ Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսիս» տաղը, «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Նմուշներ՝ Փարիզ, Bibliothèque Mazarine. Վենետիկ, Ս. Ղազար (Թերի)։

Այլ տպ. Մարսել, 1673 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի։ Տպեցեալ ի տպարանի Սրբոյ Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի։ Յամի տեառն 1672, յուլիսի ամսոյ ի քսան և հինգն, ի Մարսիլիայ։

446 էջ։

Նմուշներ՝ Փարիզ, Bibliothèque Mazarine և Bibliothèque Nationale.

Այլ տպ. Մարսել, 1673 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի։ Տպագրեցեալ նոր գործարանում Սրբոյ Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի։ Ի հայրապետութեան տեառն Յակոբայ. և ի թագաւորութեան քրիստոսասէրի և բարեպաշտի արքայի Լուդովիկոսի. վերակացութեամբ և հոգաբարձութեամբ և ծախիւք Ոսկանայ վարդապետի և Եպիսկոպոսի Երևանեցւոյ։ Ի Մարսիլիայ։ Թուին Քրիստոսի 1673. և հոկտեմբերի 23։

416 էջ (չափ. 11.5×6.1 սմ)։ Խորանազարդերով։ Հավելվածում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից և «Կանոնք տօմարականք՝ տօնից և պահոց Հայկազունեաց»։ Տպագրության հիշատակարանում («Մանուցումն առ ընթերցողս», էջ 404—411) Սողոմոն Լեոնյանն ասում է.

«Օրհնութիւն... եւ գկարողութիւն ամենանուաստ պաշտօնէիս, ի վերջացեալ դարուս և ի վշտալատում ժամանակիս հաստատել յեզր և աւարտ զվայելչասիրտ և զբարեձև զերգարանս Դաւթեան... ի թուին փրկչին 1674, ի տասն նոյեմբերի, իսկ ըստ Հայոց կալումծին՝ ՌՃԻԳ, երեսունն հոկտեմբերի, ի տպարանիս Սրբոյ Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ երջանկի՝ ամենայն Հայոց կաթուղիկոսի, գլխաւորի յաստուածաէջ գահոյի նորին սրբոյ Էջմիածնի, ի ճշմարիտ և սուրբ յօրինակէ տեառն Խաչատրոյ Կեսարացւոյ մեծի հռետորի։ Արդ՝ որք հանդիպիք հոգենուագ մատենիս այս ընթեռնլով կամ օրինակելով, յիշեսջիք յաղօթս ձեր զբազմաշխատ հոգևոր մշակն Քրիստոսի և յոգներախտ մատուցակն գիտութեան ի ձեռն բազմութեանց գրեանց ցեղին Հայկազնեայց՝ զտէր Ոսկան աստուածբան վարդապետն և զերկրորդ թարգմանիչն, որ յսկզբան առաջին տետրն Սաղմոսիս հանգեաւ ի Քրիստոս ի հազար հարիւր քսան և երեք թուին, յամսեանն փետրվարի Դ ... ընդ տեառնս իմում յիշեսջիք և ի Քրիստոս հանգուցեալ զեղբարսս սորին զՅովհաննէսն և զՄիրզախանն, և զքոյր սորին մայրն իմ՝ զՀռիփսիմէն, և կենդանի զեղբայր սորին զբարեպաշտ և զքրիստոսասէր պարոն Աւետիսն՝ պատճառ հաստատութեան գործարանիս. ընդ սոյն յիշեսջիք զհայրն իմ զՊօղոս աստուածաբան վարդապետն։ Հուսկ յետին և զիս՝ զտրուպս ամենից նուաստից զՍողոմոն պաշտօնատարս, որ զկնի մահուան քեռոյն իմոյ հարազատի՝ տեառն Ոսկանայ վարժապետի, յոգումբք վշտիւք և բազմօք չարչարանօք ածի զսա աւարտ. և դեռ ես կայ կիսակատար Սաղմոսատենի. զի հասեալ էաք յութերորդ տետրն՝ բարձաւ ի կենաց սորին ծերունին իմ պատուական և շիջաւ ճրագ գործարանիս լուսաւորութեան, և բարձաւ յոյս իմ ամէն պարտուցն և ցաւոցն ազատութեան միանգամայն և անձանց մերոց կեցութեանս։ Եւ հարկ ի վերայ իմ կայ դատապատուեալ առ ի կատարել բազմօք ծախիւք զԱտենին զորոյ զպատճառն ասեն իրի և զպատմութիւն մահուան վարդապետին և զկենդանածիր կտակ նորին ընթեռնլոց էք յայլում վայրում զամենայնն յամենայնի, ի յուշարարութիւն հոգէկիր վաստակոց և գործոց նորին» և։ Շարունակության մեջ պատմում է այն տառապանքների մասին, որ կրել է «ի ձեռանէ մերայնոց և օտարաց»՝ տպագրական գործունեության ասպարեզում։

Այստեղ հիշատակվող կիսակատար «Սաղմոսատենի»-ն, որի տպագրությունն ավելի վաղ էր սկսվել, լույս է տեսել «Գիրք ժամակարգութեան որ կոչի Ատենի» անունով, Մարսելում, 25 հունիսի 1675 թվականը կրող անվանաթերթով, և գրավում է նրա 177—336 էջերը։

Գրքի վերջում՝ Սողոմոն Լեոնյանի կազմած «Կարգք և թիւք և անուանք կաթուղիկոսացն Հայոց, սկսեցեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մինչև ցայս վայր ի տէր Յակոբ կաթուղիկոսն» (էջ 411—416)։

Նմուշ՝ ՀԳ հն. 1052։

---

[1] Հմմտ. Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 601։ Նույն, «Պատմ. հայկ. տպագր.», էջ 103։ Կապետ, Բանասէր., 1906, էջ 55։

Այլ տպ. Մարսել, 1677 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի: Տպեցեալ ի տպարանի Սրբոյ էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարի: Արդեամբ և ծախիւ Ոսկանայ արքեպիսկոպոսի Երևանեցւոյ՝ հանգուցելոյ առ Քրիստոս: Յամի տեառն 1677, յունվարի ամսոյ ի տասն և ութ: Ի Մարսիլիայ:

445 էջ (չափ. 7.7×5.9 սմ)։ Պտկրզ.։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ հիշատակարանը (էջ 444—445), որ է՝

«Շնորհիւ ամենազօրին աստուծոյ և ողորմութեամբ, աւարտ եղև գրգուկիս փոքրատիփի, որ կոչի Սաղմոսարան, աշխատութեամբ տեառն Ոսկանի արքեպիսկոպոսի հանգուցելոյ ի Քրիստոս։ Արդեամբք և ծախիւք երից պարտատիրաց, նախ՝ Ջուղայեցի Նազարի որդի Մելքումն, երկրորդ՝ Շոռոթեցի Ղարիպջանի որդի Մարգարն, և երրորդ՝ Ագուլեցի Աղամի որդի Պետրոսն։ Նաև յիշել մաղթեմ զժառանգ և զեղբարդի նորին զՍաղամոնն (sic), որ է տէր և հոգաբարձու գործարանին» ենւ

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1319 (թերի)։

Այլ տպ. Վենետիկ, 1682 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի: Տպագրեցեալ ի տպարանի Միքայէլի Պառոյօնի: Արդեամբք և ծախիւք Շօռօթեցի Սիմոնի որդի Կարապետին, և մատակարարութեամբ Յոհաննիսի վարդապետի: Ի թվի փրկչի 1682, ապրիլի ամսոյ 23, ի Վէնէտիկ Քաղաքի:

512 էջ (չափ. 8×5.1 սմ)։ Պտկրզ.։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից, «Կանոնք տօմարականք տօնից» ևն։ Վերջում՝ «Յիշատակարան» (էջ 510—512), որ է՝

«Օրհնութիւն... եւ զկարողութիւն նուաստացելոյ ծառայիս՝ հասուցանելոյ ի վախճան զվայելչատիպ և զգարեձև երգարանս դաւթեան ի փառս ամենամեծի անուան իւրոյ սրբոյ և ի գովութիւն երանեցելոյ կուսին Մարիամու Աստուածածնին ի պէտս Հայոց բարեսիրաց և ի զբօսանս հանուրց ուսումնասիրաց, ի թուի փրկչին մերոյ 1682 ի 30 յունիսի և ի թուին Հայոց ՌՃԼԱ ի Ի նոյնոյ ամսոյ, ի Վէնէտիկ քաղաքի, ի յօրինակէ տեառն Ոսկանայ վարդապետի հանգուցելոյ ի Քրիստոս։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ օրինակելով, յիշեցէք յաղօթս զնուաստ ծառայ ձեր զՇօռօթեցի Սիմոնի որդի զԿարապետս հանդերձ ծնողիւք և բնաւիւք ազգականօք և բարեկամօք իւրովք, ընդ որս և դուք յիշեալ լիջիք ի տեառնէ ի միւսանգամ գալստեան նորին ի փառս անզրաւականս. ամէն»։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Վենետիկ, 1684 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի: Գաղափարեցեալ ի յօրինակէ մեծին նախատրոյ վարդապետին և տպագրեցեալ ի թուին Հայոց հազար հարիւր երեսուն և երրորդ ամին, ի պէտս Հայկազունեաց բարեսիրաց, և ի փառս ամենասուրբ Երրորդութեան. ամէն: Ի Վենետիկ Քաղաքի:

528 էջ (չափ. 9.5×6 սմ)։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը (էջ 528), որ է՝

«Տպագրեցաւ վայելչատիպ երգարանս Դաւթի ի հայրապետութեան սրբազան կաթուղիկոսին Հայոց՝ տեառն Եղիազարու, արդեամբք և գոյիւք Ոսկանայ Ագուլեցւոյ՝ որդւոյ Մարտիրոսի, ի յզբօսանս Հայկազանեաց ի փառս ամենասուրբ Երրորդութեան. ամէն»։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Վենետիկ, 1694 թ.

[Սաղմոս ի Դաւիթ: Գիրք Սաղմոս և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղև ի գեղեցկաշէն մայրաքաղաքն Վէնէտիկ, ի տունն Անտոնիոսի Պօրթօլի, ի թվականութեանն Հայոց Մեծաց ՌՃԽԳ: Դաւիթ երգէ զայս ասելով. Եթէ շրթունս հոգոյս բանաս, բերան իմ. Տէր, քեզ օրհնեսցէ]:

368 էջ։ Մեզ հայտնի է Փարիզում գտնվող միակ օրինակով, որի անվանաթերթն ընկած է, բայց հետագայում, 1713 թ., լրացված է սաւցողի ձեռքով՝ Հռոմում։

Տպագրության հիշատակարանը. «Փառք (sic)....։ Շնորհօք ամենազօրին Աստուծոյ և սիրով սուրբ Հոգւոյն կենարարին աւարտեցաւ գիրք երգարանս Սաղմոս և հետեւի (sic) իւր պարզատօմար Հռոմա[յ]եցւոց (sic) ի թուին մեր տէր Յիսուսի Քրիստոսի ՌՈՂԴ, և Հայոց՝ ՌՃԽԳ, դեկտեմբերի Լ, ի քաղաքին Վէնէտիկին, ի հովուապետութեան տեառն Նահապետի կաթուղիկոսին սուրբ էջմիածնի։ Դարձեալ ծանի՛ք, ով ընթերցող մեր սիրելիք. արդ՝ որք հանդիպիք սմայ կարդալով, յիշեցէք աղօթս զնուաստ ծառայ ձեր Անդօնիօ Պօրթօլի որ է ազգաւ Լատինացի, տպագրեցեալ ի նոյն տպարանի և սորայ սրբագրողի որ չէ արժանի անվանիլ, ընդ որս և դուք... ամէն» (էջ 368)։

Վերջում կա, նոր էջակալումով, Պարզատօմար *(էջ 1—79), որն սկսվում է* «Խրատք Պարզատօմարին Հռոմայեցւոց» *վերնագրով։*

Նմուշ՝ Փարիզ, Գրատուն Հր. Սամուել։

Այլ տպ. Մարսել, 1710 թ.

Գիրք Սաղմոսաց Դաւթի: Ի հայրապետութեանն տեառն Աղեքսանդրի Ջուղայեցւոյ՝ կաթուղիկոսի ամենից Հայոց: Ի Մարշիլեայ քաղաքի: Եւ (sic) թուաբերութեան Հայոց ՌՃԾԹ, յունուարի ամսոյն Ի, և ի թուին փրկչին՝ 1710, յունվարի Ի:

էջերի քանակը՝ անհայտ։ Շարվ. չափը՝ 11.2×7 սմ։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», մեկ հատված «Նարեկ»-ից, Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսիս» տաղը և ամսարական աղյուսակ։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար (Թերի)։

Այլ տպ. Վենետիկ, 1712 թ.

Փոքրիկ Սաղմոսարան։ Ի լոյս ածեցեալ ի յօգուտ ուսումնասիրաց, ընչիւք և գոյիւք ամենապայծառ խօջայ Սարհատի որդի լուսահոգի պարոն Մուրատին։ Ի հայրապետութեան տեառն Ջուղայեցւոյ Աղեքսանդրի ամենից Հայոց կաթուղիկոսի։ Ի Վէնէտիկ, յամի տեառն՝ 1712, թուին Հայոց՝ 1161, յունիս 28, ի տպարանի Անտոնիոսի Պորթոլի։ Հրամանաւ մեծաւորաց։

451 էջ (շարվ. 8.8×4.6 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը («Առ բարեսէր ընթերցողս», էջ 448—451), որ է՝

«Շնորհիւ... փոքրիկ մարգարէարան Սաղմոսարանս պատուականօք պատկերօք զարդարեցեալս և աստուածաշնչահանգոյն վկայութեամբք գեղեցկացեալս, աշխատասիրութեամբ վերապատուելւոյ Խաչատրոյ վարդապետի Էրզրումեցւոյ սրբագրեցեալս, ի Սաղմոսարանէ ի լոյս ածեցելոյ ջանիւք Ոսկանայ արհիեպիսկոպոսապատիւ վարդապետի Երևանեցւոյ՝ օրինակեցելս... աւարտեցաւ յամի տեառն 1712 նոյեմբերի 18, ըստ Հայոց[1], ի Վէնէտիկ քաղաքի։ Զայս ի լոյս ածին Ջուղայեցի Շէրիմանեանք՝ պարոն Նազարն, պարոն Շէրիմանն, մահտեսի պարոն Սարհատն, պարոն Յոհաննէսն, պարոն Պետրոսն և պարոն Յակոբն ի յիշատակ Շէրիմանեան խօջայ Սարհատի որդւոյ՝ վերապատուելւոյ հօր իւրեանց պարոն Մուրատին առ Աստուած հանգուցելոյն...։ Վասն որոյ հայցեմք զի ի մաքրափայլ աղօթս ձեր արժանաւորիցիք միով Հայր մերիւ և Ողջունիւ յիշել զվերոյասացեալ պարոնս Շէրիմանեանս, և զվերոյիշեցեալ ծնող նոցին, և զառաջին կողակից ծնողի նոցին զԹանկմէրն, և զդուստր նորին Մարիամտատիկն առ Աստուած հանգուցեալս, և զկենդանի պատուելի մայր իւրեանց զԹագուհին, և զմեզ աշխատողս և սպասաւորս այսր գործոյ» են։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1749։

Այլ տպ. Ամստերդամ, 1713 թ.

Գիրք Սաղմոսաց։ Ի լոյս ածեալ հայցմամբ խնդրոյ և ծախիւք Ջուղայեցի լուսահոգի խոճայ Քանանի որդւոց Թարխանին, Աւետիքին և Սարհադին՝ ընկերացն Աւետիքի որդւոյ Զաքարիայի, Եաղուբի որդւոյ Մկրտումին, և Աւետիքի որդւոյ Ղազարիոսին։ Ի հայրապետութեան էջմիածնի՝ տեառն Աղեքսանդրի ամենայն Հայոց սրբազան կաթուղիկոսին։ Յամի տեառն մերոյ՝ 1713, և ի Հայոց թուին՝ 1162, ի տպարանի Ղուկասու դպրի, յԱմստրդամ։

[Բ]+446 էջ (շարվ. 7.5×4.5 սմ)։ Պտկրզ.։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը (էջ 444—446), որ է՝

«Վերջաբանութիւն։ Ցնծացէք արդարք ի տէր, բարւոք որդիաբուղխ շնորհօք լցեալ քնարերգու մարգարէն Դաւիթ, ուղղոց վայելէ օրհնութիւն։ Ուղղոց՝ ասէ, վայելէ օրհնութիւն, ո՛չ թիւրոց և ո՛չ ամբարշտաց։ Ահա ձեզ ուղղոց. ահա ձեզ համայն բարեպաշտից անգին գանձարան, և ամենազարդ ըշտեմարան հոգենորոգ օրհնութեանցն գեղեցկագիր յօրինուածով տպեալ, կազմեալ՝ և ի լոյս ածեալ։ Ցնծացէք ուրեմն արդարք ի տէր. օրհնեցէք և վայելեցէք, զի յօրհնաբանելն ձերում այս գեղեցկատիպ Սաղմոսարանաւս և ի վայելելն ձերում իցէ անջինջ յիշատակ, աղօթական դեղ, և հոգեշահ սպեղանի Ջուղայեցի լուսահոգի խօջայ Քանանին և իւր կենդանի որդւոցն պարոն Թարխանին, պարոն Աւետիքին և պարոն Սարհադին. այլ և՝ համայն սոցին արեանառու մերձաւորացն՝ կենդանեացն և ի տէր հանգուցելոցն։ Ընդ որս և յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զվերոգրեալ խօջա Քանանի որդւոց ընկերսն՝ Աւետիքի որդին Զաքարիան, Եաղուբի որդի Մկրտումն և Աւետիքի որդի լուսահոգի Ղազարիոսն. զծնողսն, և զայլ ամենայն արեանառու մերձաւորս նոցա զկենդանիսն և ի Քրիստոս հանգուցեալսն։ Վերստին յիշեցէք ի ջերմեռանդն յաղօթս ձեր զվերոյ համեղաբարոյ, քաղցրաբան, չքնաղիմաց և նորաբողբոջ մանուկն լուսահոգի Ղազարիոս. զի նա եղև առիթ և պատճառ այս փոքրագիր սաղմոսարանիս տպագրութեան. բայց՝ ո՜հ ցաւոյս, կամեցեալ նա յերկրէն Դանիու նաւել ի Հնդիկս, նաւակոծ ամպրոպացն հանդիպեալ, նաւն ի բքալի ալեացն բեկեալ, և որք ի նաւին էին ընդ ագնուաբարոյ Ղազարիոսին ամենի ծփանօքն տատանեալ՝ լինին ի ծովն խորասուզեալք։ Վերջ»։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Ամստերդամ, 1714 թ.

Գիրք Սաղմոսաց։ Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Աղեքսանդրի ամենայն Հայոց կաթուղիկոսին էջմիածնի։ Յամի տեառն 1714. ի մերում թուին՝ 1163։ Ըն տպարանում Ղուկասու դպրի Վանանդեցւոյ։ ՅԱմստրդամ։

838 էջ (շարվ. 12,7×9.1 սմ)։ Պտկրզ.։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ «Յիշատակարան» (էջ 830—838), որ է՝

«...Յաւարտ հասուցաք զայս աստուածաշունչ նուագարանս և հոգեբուղխ շտեմարանս յամի տեառն 1715, և ի թուին Հայոց՝ 1164, ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տեառն Աղեքսանդրի ամենայն Հայոց

[1] *Հայկական թվականը բացակայում է։*

կաթուղիկոսի. ի յիշատակ Ջուղայեցի մեծահռչակ և պայծառատոհմ խալֆարենց ի տէր հանգուցեալ Մարգարի որդի խոջայ Օհանին, իւր կողմից Մէրտատինին, և իւր որդւոցն՝ Մարգարին, Մուրադին, Նատուրին և Աւագին. նաև աստուծով զօրացեալ կենդանի որդւոյ նորին՝ պարոն Յակոբջանին, որ որդւովք և ընչիւք բարգաւաճի...։ Դարձեալ յիշեցէք ի տէր Զարգարանենց հանգուցեալ Զարգարանն, զսորա կենդանի որդին, և վերոյ խալֆարենց ընկեր զպարոն Ստեփանոսն...։ Տակաւին յիշեցէք յաղօթս ձեր զՑղնեցի Թևանի որդի զնորահասակ Մարկոսն, զիւր ծնողսն և զայլ ամենայն ազգայինսն. զի սա ընդ վերոյ պարոն Ստեփանոսին համակամ ընկերացեալ ի միասին՝ ծախիւքն իւրեանց եսուն տալ 1500 Սաղմոսարանս, հազարն՝ ի սակի պարոն Ստեփանոսին, իսկ հինգ հարիւրն՝ ի սակի Մարկոսին։ Հուսկ յետոյ յիշման արժանի արասջիք, հայցեմ, զմտերիմ և զհարազատ մատակարար գործարանիս՝ զՂուկաս Նուրիջանեան, ծննդեամբ Վանանդեան, սերունդս Գողթնեան, և մնացեալս յանմխիթար վայրի. զի որբացեալ ի լուսահոգի հաւուն իմոյ՝ Թամայ եպիսկոպոսին ի տէր հանգուցելոյ, որոյ յոգնազան քրտամբքն կանգնեցաւ այս գեղեցկատիպ, և հիրոյս՝ կտակաւ նորին ի ժառանգութիւն ժամանեալ տպարանս։ Տէրն ամենից հատուսցէ նմա ըստ բազմադիմի քրտանցն և երախտեացն, ամէն։ Ընդ որս՝ յիշեսջիք եւ զձեռնասուն և զարեանառու պատանեակն իմ զՅոհաննէսն, զի սա զայս բոլոր Սաղմոսարանս մեղուաջան քրտամբք շարաբարդեաց, և զայս բազում զժուարակիր աշխատանս տպագրութեանն մտերմաբար յանձն էառ» են։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1321։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1715—1725 թվականների միջև.

[Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան]:

Այս հրատարակությունից նմուշ չունենք ձեռքի տակ։ Խորագիրը կազմել ենք ըստ Նորնախիջևանյան 1791 թ. հրատարակության, որը սրանից է արտատպվել (տես նրա հիշատակարանը)։ Զարբհանալյանի ձեռքի տակ եղած մի տպագրություն, որը դժբախտաբար անվանաթերթից զրկված է եղել, ամենայն հավանականությամբ սույն տպագրության մի նմուշն է։ Զարբհանալյանն այդ օրինակի մասին գրում է.

«Սաղմոս գրոց հին տպագրութիւն մ՚ալ հասած է մեր ձեռքը, որուն առաջին թերթը պակաս ըլլալով՝ չենք կրնար որոշել տպագրութեան տարին։ Հրատարակության քաղաքն է Կոստանդնուպոլիս, և տպագրողն՝ Յովհաննէս որդի Աստուածատրոյ, ինչպես կը ծանուցանէ յիշատակարանին։ Անշուշտ զայս կ՚ակնարկեն Նախիջևան քաղաքը հրատարակուած Սաղմոս գրոց յիշատակարանին հետևեալ խօսքերն. '...Զի ի վաղուց հետէ լուեալ էր մեր՝ թէ զոյ Սաղմոս հին տպեցեալ ի վաղ ժամանակաց, յորում կայ եղեալ յ՚սկիզբն ամենայն ալէլուից խորագիր խնդրեալ սուրբ մօր... որ էր տպեցեալ ի հայրապետութեանն հանուրցս Հայոց տեառն Աստուածատրոյ... առեալ օրինակեցաք, և եդաք ի գլուխս ամենայն փոխից սոյն Սաղմոսիս՝ որ ի մէնջ յառաջին տպեցեալ Սաղմոսին անսանի. և այժմ երկրորդապէս եդև տպեցեալ հանդերձ տաղատարիւք»[1]։

Զարբհանալյանի կատարած նույնացումը մենք համարում ենք ճիշտ, ի նկատի ունենալով, որ նա իր ձեռքի տակ եղած անծանոթ տպագրությունը համեմատել է 1791 թ. հրատարակության հետ և գտել է նման, բացի վերջինս ունի մի ակնառու առանձնահատկություն, որով տարբերվում է մյուս բոլոր հրատարակություններից, այն է՝ ներքին խորագրերին կցված հատվածներ, որոնք քաղված են «ի Մեկնութենէն Սաղմոսաց Հօրհհրայ վարդապետին մերոյ մեծին Վարդանայ»։

Հրատարակության ժամանակաշրջանը նշանակեցինք այն հիման վրա, որ գիրքը լույս է տեսել Աստվածատուր Համադանցու կաթողիկոսության օրով (1715—1725 թթ.)։

Նմուշ չունենք։

Դուցե սույն տպագրության հետ նույնն է այն «Սաղմոսարան պատկերազարդ»-ը, որ հիշատակում է Ալ. Երիցյանը՝ որպես Կ. Պոլսի 1715 թ. հրատարակություն, առանց ասելու, թե ո՛ր տպարանի գործ է և ի՛նչ աղբյուրից է իր տեղեկությունը[2], և որը հայտնի չէ մատենագիտական մյուս աղբյուրներին։

Այլ տպ., վայրը՝ անհայտ, 1728 թ. [Սաղմոսարան]:

478 էջ (չափ. 11.2×6.2 սմ)։ Հավելվածի նյութերում՝ «Հաստոյ խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից, Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը և տոմար։ Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 478), որ է՝

«Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին աստուծոյ, բարեխօսութեամբ և ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին այլ և բարեխօսութեամբ սրբոյն արգահաս զինուորին Քրիստոսի եղև աւարտ տպեցման փայլըլատիպ Սաղմոսիս [որ] օրինակեցեալ է ի ընտիր օրինակէ լուսաւորեալ հոգի տեառն Ոսկանայ հանգուցելոյ աստուածաբանութեան վարդապետի և երկրորդ թարգմանչին Հայոց զոր գովելոյ և ողորմի տալոյ է արժանի, և բարեխօս ունելով, զի բազում երախտիս ունի ի վերայ մեր, որոյ յիշատակն անջնջելի է առաջի Աստուծոյ»։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար (թերի)։ Այս օրինակի մասին մեզ հետևյալն է հաղորդում Հ. Ս. Ճեմճեմյանը. «Ս. Ղազարի գրատան Բգ 15 Սաղմոսարանի անուանաթերթը ինկած է. կը սկսի էջ 31-ով. կը վերջանայ էջ 478-ով, որ է յիշատակարանը։ Միջանկեալ էջ 472 ունի հետևեալը. 'Թուական Հայոց՝ ՌՃՀԷ. եօթներեակն՝ Բ, գիր տարին՝ Տ, վերադիրն՝ ԻԸ...'։ Ուրեմն այս թուականը կարդացած են 1728 և նշանակած են գրքին վրայ։ Գրքին հնութիւնն ալ այդ ցոյց կու տայ»։

---

1 Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 603—604։

2 Ա. Երիցյան, «Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնեններորդ դարը», Փորձ, 1881, № 4, էջ 17։

Այլ տպ. Վենետիկ, 1733 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպագրեցեալ ի Վէնէտիկ, յամի տեառն 1733. ի տպարանի Անդոնի Պոռթոլի: Հրամանաւ մեծաւորաց:

384 էջ (չափ. 10.6×6.3 սմ): Պակրզ.ւ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից:

Հատորին կցված է Մխիթար Սեբաստացու «Տոմար կարճառօտ»-ը, Վենետիկ, 1733, 40 էջ:

Նմուշներ՝ Պետ. Մատ. ձե. 1916 (սկզբից թերի): Վենետիկ, Ս. Ղազար (երկու օր.):

Այլ տպ. Կ. Պոլիս, 1738 թ.

Սաղմոս Եռանելի մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Աբրահամու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց: Ի թուականիս 1187, յունվարի Ա.:

384 էջ (չափ. 11.5×6.5 սմ): Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից, Առաջել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը և պարզատոմարական աղյուսակ: Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

«Փառք...: Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս բարեխօսութեամբ արագահաս և երջանիկ զինուորին Քրիստոսի սրբոյն Մինասայ ի վայելումն մանկանց Սիոնի, ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթուղիկոսին և ի գիտողութեան երկուց աթոռոցն սրբոյն Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Գրիգորի և Յովհաննիսի աստուածաբան վարդապետացն, ի թուականիս ՌՃՁէ: Արդ որք հանդիպիք այսմ զանազան և հոգևոր բարեօք լցեալ դաւթեան սեղանոյս՝ յիշեսջիք ի Քրիստոս զբազմամեղ Աստուածատուրս զտպօղ սորին, և զբազմաշխատ որդեակն իմ զտիրացու Յօհաննէսն՝ որ է ծառայ ծառայիցդ Աստուծոյ: Այլ և յիշեսջիք զբրտնաջան և զհաւատարիմ մշակսն գործարանիս՝ զՎանեցի տէր Աստուածատուրի որդիսն՝ զՄարուխանն և զՄանուկն. և դուք յիշ[եալ լիջիք]»:

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար:

Այլ տպ. Վենետիկ, 1742 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպեցեալ ի հայրապետութեան Ղազարու Հայոց կաթողիկոսի: Յամի տեառն 1742, ապ[րիլ], ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պոռթոլի:

448 էջ (չափ. 7.5×4 սմ): Պակրզ.ւ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից:

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար:

Այլ տպ. Կ. Պոլիս, 1745 թ.

Սաղմոս Երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց: Ի թուականիս 1194, յունվարի Ա.:

384 էջ (չափ. 11.2×7 սմ): Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից, Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը և պարզատոմարական աղյուսակ: Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

«Փառք...: Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս բարեխօսութեամբ արագահաս և երջանիկ վկային Քրիստոսի սրբոյն Մինասայ ի վայելումն մանկանց Սիօնի: Ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի Հայոց: Եւ ի պատրիարգութեան երկուց աթոռոցն սրբոյն Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Գրիգորի և տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետացն: Ի թուականիս՝ ՌՃՂԴ: Արդ որք հանդիպիք այսմ զանազան և հոգևոր բարեօք լցեալ դաւթեան սեղանոյս՝ յիշեսջիք ի Քրիստոս զբազմամեղ Աստուածատուրս զտպող սորին, և զբազմաշխատ որդեակն իմ զմաշեալն սրտիւ որ է ծառայ ծառայից Աստուծոյ: Այլ և յիշեսջիք զբրտնաջան հին աշխատաւոր մշակն գործարանիս՝ զՎանեցի տիրացու Մխիթարն: Եւ դուք յիշ[եալ լիջիք]»:

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար:

Այլ. տպ. Վենետիկ, 1748 թ.

Սաղմոս Դաւթի: Տպեցեալ աշխատութեամբ Սարգսի արք եպիսկոպոսի Կոստանդնուպոլսեցւոյ: Ի հայրապետութեան Հայոց՝ տեառն Ղազարու: Յամի 1748, ի մայիսի 2: Ի Վէնէտիկ: Ի տպա[րանի] Անտ[ոնի] Պոռ[թոլի]:

372 էջ (չափ. 10.9×6.1 սմ): Պակրզ.ւ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից: Վերջում նույն անվանաթերթով և էջակալությամբ տպակից է Մխիթար Սեբաստացու «Տօմար կարճառօտ»-ը (1—40 էջ):

Նմուշ՝ ՀԳ ձե. 967:

Այստեղ նշելի է նաև գրականության մեջ եղած այն տեղեկությունը, թե Մխիթար Սեբաստացին ևս նույն 1748 թ. կատարել էր Սաղմոսարանի մի տպագրություն, որին հար և նման էր Սարգիս արքեպ. Սարաֆյանի վերահիշյալ տպագրությունը[1]: Սակայն ըստ մեզ հավանական չէ, որ Մխիթարն այս թվականին Սաղմոսարան

---

[1] Հովհ. Թորոսյան, «Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ», Վենետիկ, 1901: էջ 399: Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 131—132 (վավ. ճԽԱ և ճԽԲ):

լույս ընծայած լինի, քանի որ եթե այդպիսի մխիթարյան հրատարակություն գոյություն ունենար, նախ Զարբհանալյանի մատենագիտության մեջ չէր կարող անտեսված լինել[1], երկրորդ՝ Մխ. Սեբաստացու «Տոմար կարճառօտ»-ը Սարգիս Սարաֆյանի հրատարակությանը կցված չէր լինի։ Այս վերջին հանգամանքը թելադրում է համոզվել, որ Մխիթարը, հաշվի առնելով մրցակցությունը, ստիպված էր ետ ձեռք քաշել Սաղմոսարանի հրատարակությունից և համաձայնվել, որ իր տոմարական երկը տպագրվի Սարաֆյանի հրատարակության վերջում։

Այլ տպ. Վենետիկ, 1755 թ.

Սաղմոս Դաւթի որ կոչի և Սաղմոսարան: Տպագրեալ ի Վենէտիկ յամի տեառն 1755, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

384 էջ (չափ. 10.6×6.3 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Հատորին կցակցից է Մխիթար Սեբաստացու «Տոմար կարճառօտ»-ը, Վենետիկ, 1755։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Վենետիկ, 1755 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպեալ ի հայրապետութեան տեառն Աղեքսանդրի Հայոց կաթողիկոսի, յամի տեառն 1755, մարտ, ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի:

456 էջ (չափ. 7.2×4.3 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1756 թ.

(Ա ճակատ) Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան: Տպեցեալ ի հայրապետութեան տեառն Աղեքսանդրի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուին Արամեան 1205:

(Բ ճակատ) Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան: Յորում յանախակի փուշակի ամենօրէնութեան խոստացեալ[2] մեսիայի փրկչին մերոյ Քրիստոսի: Ասացեալ ի Դաւթայ՝ յերջանիկ մարգարէէ՝ յորդւոյն Յեսսեայ: Ընծայեալ հանուրց փափագողաց մերազնեայց՝ տպագրութեամբ ի Կոստանդնուպոլիս քաղաքի: Ի պատրիարգութեան նորին դիտապետի՝ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետի: Ի տպարանի Աստուածատուրի:

16+416 էջ (չափ. 12.9×9.2 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։ Վերջում՝ «Յիշատակարան» (էջ 414—416), որ է՝

«Շնորհիւ...։ Յիշեսջիք առ նոյն տէրն մեր Յիսուս Քրիստոս զիս՝ զորդի Աստուածատուրի հանգուցելոյ ի տէր, զապագրող սորին անարժան զՅոհաննէս յետնեալ գրիչս անպիտան՝ զձերն ծառայ պատրաստական, հանդերձ որդեկօք իմովք աշխատաւորօք՝ պատանեկան Կարապետիւ և Յակոբաւն գեղաքանդիւ։ Յիշեսջիք և զհանճարեղ տիրացու Յակոբն Դաղաստացի, որ ծանօթացեալ ընդ մեզ ի տիոյ պատանեկութեան և գրեթէ որդիացեալ, փորագրեաց զտիպսն կանոնական և փառական, նաև զգիրսն ձագաձևական, առ ի լինել յիշատակ մերումս տպագրատան, որում տէր հատուսցէ զվարձս։ Յիշեսջիք և զաշխատաւորսն գործարանիս՝ զՎանեցի խաչատուրն, զՊօղոսն և զՆիկողոսն, յորմէ և դուք լինիջիք յիշեալք ի բարին, ամէն»։

Նմուշներ՝ Պետ. Մատ. հն. 1690 (թերի)։ ԴԱԹ Ալպատյան 8440 (թերի)։

Այլ. տպ. Կ. Պոլիս, 1758 թ.

Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Իսահակայ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուականիս 1207, յունվարի ժ:

384 էջ (չափ. 12.8×7.7 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից և Առաքել վրդ.ի «Բանք Սաղմոսին» տաղը։ Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

«Փառք...։ Տպագրեցեալ եղև Սաղմոսարանս... ի թուին 1207, ի տպարանի Աստուածատուրի։ Արդ՝ որք հանդիպիք այսմ կանաղան և հոգևոր բարեօք լցեալ գանձեան սեղանոյս՝ յիշեսջիք ի Քրիստոս զհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր. ընդ նմին և զիս զորդի նորին՝ զՅոհաննէս յետնեալ գրիչս, հանդերձ որդեկաւն իմով Կարապետիւ՝ գրիչս կապարեայս շարողիւ։ Այլ և յիշեսջիք զմշակսն գործարանիս՝ զՎանեցի Գրիգորն և զՆիկողոսն. և դուք յիշեալ [լիջիք]»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1609։

Այլ տպ. Վենետիկ, 1759 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպեալ ի հայրապետութեան տեառն Սահակայ Հայոց կաթողիկոսի: Յամի տեառն 1759: Ի Վէնէտիկ: Ի տպարանի Անտոնի Պօրթօլի:

456 էջ (չափ. 8.5×4.6 սմ)։ Պտկրզ. Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Նմուշ՝ ԶԴ հն. 1033։

---

[1] *Հմմտ. Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 602։*

[2] *Տպագրված է՝ խոստանեցելոյ։*

Այլ տպ. Կ. Պոլիս, 1765 թ.

Սաղմոս Երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուականիս 1214, յունվարի ժ:

384 էջ (չափ. 11.2×7 սմ)։ Պատկ.: Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից, Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը և տոմարական աղյուսակ։ Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

«Փառք...: Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս բարեխօսութեամբ արագահաս և երջանիկ վկային Քրիստոսի սրբոյն Մինասայ՝ ի վայելումն մանկանց Սիօնի։ Ի հայրապետութեան տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Կարապետի երջանկազարդ վարդապետի. իսկ և ի պատրիարգութեան Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Գրիգորի խոհեմազարդ վարդապետի։ Արդ որք հանդիպիք այսմ զանազան և հոգևոր բարեօք լցեալ զաւթեան սեղանոյս՝ յիշեսջիք ի Քրիստոս զհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր. ընդ նմին և զիս զորդի նորին՝ զՅօհաննէս յետնեալ դպիրս, հանդերձ որդւովն իմով տիրացու Կարապետիւ զգիրս կապարեայս շարողիս։ Յիշեսջիք և զմշակն գործարանիս՝ Պօղոսի որդի զՄշեցի Ղըլղատն և դուք յիշ[եալ լիջիք]»։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1770 թ.

Սաղմոս Երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուականիս մերոյ 1219:

384 էջ (չափ. 12.8×7.7 սմ)։ Պատկ.: Շարվածքը հետևում է 1758 թ. հրատարակությանը՝ էջ առ էջ։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից և Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը։ Վերջում՝ «Յիշատակարան» (էջ 384), որ է՝

«Փառք...: Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս... ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի։ Արդ՝ որք հանդիպիք այսմ հոգենուագ Սաղմոսարանիս՝ զվերոյգրեալ Ստեփաննոսն իւրայնօքն և զնորին գործակիցն ի գործարանիս զտիրացու Պօղոսն և զայլ աշխատաւորսն հիշել ի Քրիստոս աղաչեմք»։

Նմուշ՝ ՀԳ հն. 1016։

Այլ տպ. Վենետիկ, 1770 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպեալ ի հայրապետութեան տեառն Սիմոնի Հայոց կաթուղիկոսի յամի տեառն 1770, ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի:

456 էջ (չափ. 7.7×4 սմ)։ Պատկ.: Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Վենետիկ, 1771 թ.

Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան: Տպագրեցեալ ի Վէնէտիկ, յամի տեառն 1771, ի տպարանի Անդոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

384 էջ (չափ. 11.4×8.8 սմ)։ Պատկ.: Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ» և հատվածներ «Նարեկ»-ից։

Հատորին կազմակից է Մխիթար Սեբաստացու «Տոմար կարճառօտ»-ը, Վենետիկ, 1733, 40 էջ։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1480։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1776 թ.

Սաղմոս Երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ ի վեհափառ հայրապետութեան տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուականիս՝ 1225, յունվարի ժ: Ի տպարանի Աստուածատուրի:

384 էջ (չափ. 12.8×7.7 սմ)։ Պատկ.: Շարվածքը հետևում է 1758 թ. հրատարակությանը՝ էջ առ էջ, տող առ տող։ Հավելվածի նյութերում՝ «Հաւատով խոստովանիմ», հատվածներ «Նարեկ»-ից և Առաքել վրդ.-ի «Բանք Սաղմոսին» տաղը։ Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

Նմուշ՝ ՊՀ 28/Ն—93։

Կա նաև չորս ավետարանների առանձին թողարկում՝ նույն խորագրով.

Նոր Կտակարան…։ Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1866։

270 էջ (նույն ծավ.)։ Պտկրզ.։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց…» *(էջ 265—270)։*

Նմուշներ՝ ՀԳ 22/Ա—76։ Վիեննա, Մխիթ. Մատ. տպագիր Զ. 149։ Կ. Պոլիս, Բայազիդի Քաղ. Գրադարան (այս օրինակին կազմակից է «Գործք առաքելոց և Թուղթք», *Վենետիկ, 1864 թ., 337+[1] էջ)։*

Այլ տպ. Երուսաղեմ, 1867 թ.

Նոր Կտակարան…։ Ի հայրապետութեան տ. տ. Գէորգայ նորընտիր վեհափառ կաթուղիկոսի։ Հրամանաւ տ. տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի և պատրիարքի ս. Երուսաղեմայ։ Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ տ. տ. Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի։ Ի տպարանի առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, յԵրուսաղէմ, 1867։

359+437 էջ (չափ. 14.3×9 սմ)։ Պտկրզ.։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 2066։
Այս հրատարակությունը թողարկվել է նաև առանձին երկու մասերով, ուրույն անվանաթերթերով, այն է՝

1. «Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի…», *Երուսաղեմ, 1867, 353 էջ։ Այստեղ չկա* «Ցուցակ աւետարանաց հանգստեան…», *որը գտնվում է միացյալ հրատարակության մեջ (էջ 355—359)։ Տես նաև ստորև՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԱՌԱՋԻՆ ՄԱՍ, Երուսաղեմ, 1867 թ.։*

2. «Գործք առաքելոց, Թուղթք Պօղոսի առաքելոյ, Թուղթք կաթուղիկեայց, Յայտնութիւն Յովհաննու առաքելոյ…», *Երուսաղեմ, 1868, 437 էջ։ Միացյալ հրատարակությունն էլ ունի այս անվանաթերթը՝ նույն* «1868» *տարեթվով։ Տես նաև ստորև՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ, Երուսաղեմ, 1868 թ.։*

Այլ տպ. Վենետիկ, 1868 թ.

Նոր Կտակարան…։ Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1868։

408 էջ (չափ. 10×5.7)։ Պտկրզ.։ Բովանդակում է Նոր Կտակարանի միայն առաջին մասը (էջ 5—402), որին կցված է «Ցուցակ աւետարանաց Հանգստեան…» *(էջ 403—408)։*

Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

Ըստ երևույթին, ինչպես վենետիկյան 1820 և 1822 թթ. հրատարակությունները, սա ևս ունեցել է երկրորդ մասը ներառող օրինակներ։ Այս հրատարակությունն է, որ վենետիկյան գրացուցակում նշված է որպես «Աւետարան փոքրադիր, 1865 (sic), էջ 408»[1], *ուր «1869»-ը տպագրական վրիպակ է։*

Այլ տպ. Կ. Պոլիս, 1871 թ.

Նոր Կտակարան…։ Ըստ հարազատ նախնի թարգմանութեան, հանդերձ հաւատարիմ բացայայտութեամբ ի հասարակաց լեզուի։ Չորրորդ տիպ։ Հանդերձ վկայութեամբ։ Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ե. Յ. Մինասեան, 1871։

861 էջ (չափ. 18.6×11.5 սմ)։ Արտատպ. Կ. Պոլսի 1856 թ. հրատարակությունից («Երրորդ տիպ»)։ Բնագիրը տրված է զուգահեռ երկու սյունակներով՝ գրաբար և արևելահայ աշխարհաբար։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 2916։

Այլ տպ. Լոնդոն, 1871 թ.

Նոր Կտակարան…։ Լոնդրա, ի տպարանի Կիլպերդի և Րիւինկդոնի, 1871։ [London: Gilbert and Rivington, printers. 52, St. John's square, and 28, Whitefriars street].

IV+708 էջ (չափ. 14×8.3 սմ)։ Բողոքական հրատարակություն։ Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 3245։

Այլ տպ. Լոնդոն, 1873 թ.

Նոր Կտակարան…։ Լոնդրա, ի տպարանի Կիլպերդի և Րիւինկդոնի, 1873 [London: Gilbert and Rivington…].

IV+708 էջ (չափ. 14.1×8.4 սմ)։ Բողոքականների հրատարակություն։ Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 3248։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1875 թ.

Նոր Կտակարան…։ Հանդերձ ծանօթութեամբք ըստ Հելլենական բնագրին։ Արդեամբք և ծախիւք Ամերիկեան Ընկերութեան

[1] «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1716—1960)», էջ 102։

Աստուածաշունչ Գրոց: Հրամանաւ ժողովոյ պաշտօնէին հասարակաց կրթութեան: Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1875:

Բ+706 էջ (շարվ. 11.6×7.2 սմ)։ Լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։
Նմուշ՝ ՀԳ 225/Ա—76։

Այլ տպ. Լոնդոն, 1875 թ.

Նոր Կտակարան...: Լոնդրա, ի տպարանի Կիլպերդի և Րիւինկդոնի, 1875:

IV+708 էջ (շարվ. 14.1×8.4 սմ)։ Բողոքականների հրատարակություն։ Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 3242։

Այլ տպ. Վենետիկ, 1877 թ.

Նոր Կտակարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1877:

270+321+[1] էջ (շարվ. 16×9 սմ)։ Պտկրզ.։
Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի։

Այս հրատարակությունը թողարկվել է նաև առանձին երկու մասերով, որոնց անվանաթերթերով, այն է՝

1\. Նոր Կտակարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1877: *(Նույն անվանաթերթով)։*

270 էջ (նույն ծավ.)։ Պտկրզ.։ Բովանդակում է չորս ավետարանները։
Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի։

2\. Գործք առաքելոց և Թուղթք: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1877:

321+[1] էջ (նույն ծավ.)։ Պտկրզ.։
Նմուշ՝ ՀԳ 22/Գ—82։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1881 թ.

Նոր Կտակարան...: Հանդերձ ծանօթութեամբք ըստ Հելլենական բնագրին: Արդեամբք և ծախիւք Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց: ... Հրամանաւ ժողովոյ պաշտօնէին հասարակաց կրթութեան: ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1881:

Բ+693 էջ (շարվ. 11.5×7.2 սմ)։ Լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 5492։

Այլ տպ. Լոնդոն, 1882 թ.

Նոր Կտակարան...: Լոնդրա, ի տպարանի Կիլպերդի և Րիւինկդոնի, 1882:

IV+708 էջ (շարվ. 14.2×8.4 սմ)։ Բողոքականների հրատարակություն։ Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 9290։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1884 թ.

Նոր Կտակարան...: Հանդերձ ծանօթութեամբք ըստ Հելլենական բնագրին: Արդեամբք և ծախիւք Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց.... Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1884:

693 էջ (շարվ 11.6×7.2 սմ)։
Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի։

Այլ տպ. Երուսաղեմ, 1886 թ.

Նոր Կտակարան...: Ի հայրապետութեան ս. Էջմիածնի՝ տ. տ. Մակարայ վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի պատրիարքութեան ս. Երուսաղէմի՝ հանգուցեալ տ. Եսայի սրբազան արք եպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ՝ տ. Յարութիւն սրբազան արք եպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական աթոռոյս Սրբոց Յակովբեանց յԵրուսաղէմ, 1886:

358 էջ (շարվ. 15.3×8.7 սմ)։ Պտկրզ.։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։
Բովանդակում է Նոր Կտակարանի միայն առաջին մասը։ Հավանաբար ունեցել է նաև երկրորդ մասը նեբառող թողարկում։

Այլ տպ. Վենետիկ, 1888 թ.

Նոր Կտակարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1888:

272 էջ (շարվ. 16×9.5 սմ)։ Պտկրզ.։ Բովանդակում է միայն չորս ավետարանները։ Կազմված է հետևյալ հատորի հետ միասին. «Գործք առաքելոց և Թուղթք: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1877»:
Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1891 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւ Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց: ...[1] Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1891:

Ժ+736 էջ (շարվ. 11.2×7.2 սմ)։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

Այլ տպ. Լոնդոն, 1892 թ.

Նոր Կտակարան...: Լոնդրա, ի տպարանի Կլիպերդի և Րիւինկդոնի, 1892: [Richard Clay and Sons, Limited, London and Bungay].

IV+708 էջ (շարվ. 14×8.3 սմ)։ Բողոքականների հրատարակություն։ Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։
Նմուշ՝ ԳԱԹ Աղայան 8375։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1895 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւ Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց:...[2] Կ. Պոլիս, տպագրութիւն Ա. Յակոբ Պօյաճեան, 1895:

Է+647 էջ (շարվ. 9.6×5.7 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 18074։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1895 թ.

Նոր Կտակարան...: Համեմատութեամբ Յունական բնագրին: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան, 1895:

280 էջ (շարվ. 20.4×13.3 սմ)։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

Այլ տպ. Լոնդոն, 1895 թ.

Նոր Կտակարան...: Գրաբառ և աշխարհաբառ: Լոնդրա, ի տպարանի Կլիպերդի և Րիւինկդոնի, 1895:

IV+924 էջ (շարվ. 14.6×10.9 սմ)։ Բնագիրը տրված է զուգահեռ երկու սյունակներով՝ գրաբար և արևելահայ աշխարհաբար։ Գրաբարի տակ լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։ Աշխարհաբար թարգմանությունը հունարենից է կատարվել։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 3244։

[1] Արարատառ թուրքերեն՝ Ամերիկյան ընկերության կողմից։

[2] Նույնպես։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1896 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւ Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց:...[1] Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1896:

Է+727 էջ (շարվ. 11.7×7.2 սմ)։
Նմուշ՝ ԳԱԹ Աղայան 8385։

Այլ տպ. Երուսաղեմ, 1898 թ.

Նոր Կտակարան...: Դ. տպագրութիւն: ՌՅԽԷ: Ի տպարանի առաքելական ս. աթոռոյ Սրբոց Յակովբեանց յԵրուսաղէմ, 1898:

343 էջ (շարվ. 15.5×9 սմ)։ Բովանդակում է Նոր Կտակարանի միայն առաջին մասը։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց...»:
Նմուշ՝ ԱԿԳ A. II. 36662։

Կան նաև օրինակներ, որոնք կազմված են երկրորդ մասի երուսաղեմյան 1877 թ. տպագրության հետ միասին (ՀԳ 22/Ա—76)։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1901 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւ Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց:...[2] Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1901:

Է+727 էջ (շարվ. 11.7×7.2 սմ)։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1913 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1913:

Է+727 էջ (շարվ. 11.6×7.3 սմ)։
Նմուշ՝ Էջմիածնի Ճեմարանի Գրադարան։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1913 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ

[1] Նույնպես։

[2] Նույնպես։

Յոյն բնագրին: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ա. Յ. Պօյաճեան, 1913:

647 էջ (չափ. 9.5×5.5 սմ): Կազմի վրա՝ «Ի Յիշատակ Կրկնակ Յոբելինի 1500-ամեակին Հայոց Տառից Գիւտոյ և 400-ամեակին Հայ Տպագրութեան, 1913»:

Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի:

Այլ տպ. Կ. Պոլիս, 1914 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: A. B. S. *20,950.* Ի Կոստանդնուպոլիս, ի տպարանի Յ. Մատթէոսեան, 1914:

Է+727 էջ (չափ. 11.7×6.8 սմ):

Նմուշ՝ ՀԳ 225/Ա—76:

Այլ տպ. Կ. Պոլիս, 1914 թ.

Նոր Կտակարան...: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւք Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց: A. B. S. 10140. Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1914:

647 էջ (չափ. 9×4.5 սմ):

Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի:

Այլ տպ. Լոնդոն, 1928 թ.

Նոր Կտակարան...: Լոնդրա, ի տպարանի Կիլպերդի և Րիւինկդոնի, 1928: [Printed in Great Britain by Richard Clay and Sons, limited, Bungay, Soffolk].

IV+708 էջ (չափ. 14.2×8.3 սմ): Բովանդակության հրատարակությունը: Ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները:

Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76:

Այլ տպ. Վիեննա, 1929 թ.

Նոր Կտակարան...: Համեմատութեամբ Յունական բնագրին: Վիեննա, Ամերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց, 1929:

280 էջ (չափ. 20.4×13.3 սմ):

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 36409:

Այլ տպ. Վիեննա, 1930 թ.

Նոր Կտակարան...: Համեմատութեամբ Յունական բնագրին: Վիեննա, Ամերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց: 1930: [Printed by Christoph Reisser's Soehne, Vienna].

Է+647 էջ (չափ. 9.7×5.7 սմ):

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 15900:

ԺԱ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ (Աւետարան)

Տպ. Վենետիկ, 1680 թ.

Գիրք սրբոյ Աւետարանի տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ըստ Մատթէոսի, ըստ Մարկոսի, ըստ Ղուկասու և ըստ Յոհաննու: Տպագրեցեալ հրամանաւ Սանք Օֆիցին, ի տպարանի Միքայէլի Պառպօնի, ի Վէնէտիկ քաղաքի, յամի տեառն 1680:

532+[16] էջ (չափ. 10.7×5.5 սմ): Պատկեր.: Վերջում՝ «Ցուցադրութիւն գլխոց աւետարանչացն» (էջ 518—530) և «Յիշատակարան գրգոյս» (էջ 531—532), որ է՝

«Փառք...: Զոր աւարտեալ կատարեցաք յամի տեառն 1680, և ըստ Հայոց ՌՃԻԹ, յամսեանն օգոստոսի, ի Վէնէտիկ քաղաքի, ի վեհապետութեան եկեղեցւոյն Քրիստոսի Իննոչէնցիոսի Տասներորդի, և ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազանի կաթուղիկոսին Հայկազնեաց: Արդ՝ որք վայելէք զսա ընթեռնլով և կամ օրինակելով, յիշեցէք ի Քրիստոս միով Հայր մերիւ զՃուղայեցի Ալամի որդի պարոն Աղաճանուրն որ զոյիւք և արդեամբք իւրովք հանեցաւ բազմապատկել զսոյն ի յօգուտ և ի շահաւէտութիւն Հայոց բարեսիրաց. և զուք յիշեցեալ լիջիք ի Քրիստոսէ ի միւս անգամ գալստեան նորին, ամէն»:

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 923 (թերի): ՀԳ հն. 750 (թերի):

Այլ տպ. Վենետիկ, 1685 թ.

Գիրք սրբոյ Աւետարանին տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: Տպագրեցեալ ի թուին Հայոց ՌՃԼԴ, ի ԺԴ օգոստոսի ամսոյն: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ տեառն Եղիազարու սրբազան կաթուղիկոսին հանուրց Հայկազնեաց: Արդեամբք և զոյիւք Ագուլեցի Մարտիրոսի որդի Ոսկանին: In Venetia, appresso Michiel' Angelo Barboni. Ի Վենետիկ քաղաքի:

[ԺԶ]+430+[2] էջ (չափ. 15×12.1 սմ): Պատկեր.: Սկզբում՝ Եվսեբիոս Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ Բ—ԺԲ): Վերջում՝ տպագրության հիշատակարանը (էջ հավելյալ՝ Ա—Բ), որ է՝

«Աւարտեցաւ տպագրութիւն վայելչատիպ սրբոյ Աւետարանիս ի լաւ և յընտիր օրինակէ, յամի մարդեղութեան տեառն ՌՈՁԶ և ի թուաբերութեան Հայոց ՌՃԼԵ, ի ԺԴ մայիսի ամսոյն, ի Վէնէտիկ քաղաքի, բազում երկամբք և աշխատանօք, վասն ոչ գտանելոյ զհամաձայնութիւն համաբարբառիցն, ի պատճառս անհոգութեան գրչացն, առ որ տաժանեալք զբաղում

ատուրս տպագրեցաք, որոշելով զԹիւս մանրագիրս համաձայնութեանց, զկիրակագիրս, զցանկս և զկանոնագիրս, ի պէտս ուսումնասիրաց և ի սիրահանս ճըշմարտասիրաց։ Արդ՝ որք հանդիպիք սմա վայելելով և կամ օրինակելով, զԹողութիւն շնորհեցէք խրթնութեան գրոյս, զի հազիւ կարացաք հնարել զսոյն. և եթէ պատահմամբ գիր ինչ սխալեցեալ իցէ՝ ներեցէք, քանզի ջանք և դիտաւորութիւն մեր էր ամենևին անսխալապէս յառաջադրել զսոյն սիրելեաց եղբարցդ մերոց ի Քրիստոս. և զի մինչև ցայժմ համաբարբառիւր Աւետարան ոչ էր տպեցեալ երբեք վասն դժուարութեան զանազանից Թուոցն, մեք վասն պայծառութեան Հայոց յանձն առաք զամենայն դժուարութիւն, որպէս զի սփռեալ տարածիցի ի միջի ձերում. ի փառս... ամէն»

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 932։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1710 Թ.

Գիրք սրբոյ Աւետարանին...: Տպագրեցեալ ի թուին Հայոց ՌՃՄԹ, յամսեանն յունվարի Ա: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ տեառն Աղէքսանդրի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց: Ի տպարանի Դնդեանցի Վարդանի որդի Էտկեարին: Սպասաւորող և գործող Շուռուբեցի Բարաքիասի որդի մահտեսի դպիր Մինասին, ի Կոստանդինուպոլիս:

479 էջ (չափ. 16×14.2 սմ), Պակաս.: Վերջում՝ «Յիշատակարան» *(էջ 476—479), որ է՝*

«Փառք...: Արդ՝ եղև տպագրութիւն սրբոյ մատենիս այսորիկ վայելչատպի հոգաբարձութեամբ և ծախիւք Դնդեանցի Վարդանի որդի Էտկեարին, և հոգևոր եղբօրն Շոռութեցի (sic) *Բարաքիասի որդի մահտեսի Մինասին: Քանզի բարեպաշտօն արքս այսորիկ, ամենայն ջանիւ հոգ անձին կալեալ, անձանձիր տքնութեամբ ի տուէ և ի գիշերի գուն գործեալ ի վճար հասուցին յիշատակ անջնջելի յինքեանց և բնաւին զարմից իւրեանց: Իսկ յառաջարկութիւն գործոյ սոցին եղև ի վերայ յառաջնոյ տպեցեալ աւետարանին, որ էր տպեցեալ ՌՃԼԴ թվին Հայոցս (=1685 Թ.), յոր և նման նմին ամենայնիւ, բայց սակաւ ինչ փոյթ առեալ առողջութեանցն կերպատպեցաւ առ ի դիւրագին ընթեռնլեաց մանաւանդ խակակրթիցն սակս: Այլ և յոլով աշխատեալ ի վերայ տողիցն, որ ունէր գիրս այս մերձ առ մերձ լեալ՝ զայս ես ընդարձակեալ անչքրպետական միջնորմովն նորականօք բացագատեալ, որոյ գործածութիւն լինիւր տիր իմն աշխատութիւն և դըժուարութիւն ոչ սակաւ: Այլ և սրբագրութիւն սորին եղև ի վերայ նոյնոյ Աւետարանին կրկին և երեքկին խուզմամբ, բայց առողջութեանց ոմանց, որպէս վերոյ գրեցաւ: Եւ ծախք սորին որ եղեն յոլովք են. միայն թէ յապաւինեալ յատուած և առ բարեպաշտ եղբայրսն ձեռնամուխ եղեալ յայսմ գործոյ վճար եհաս տեառն շնորհիւ Վասն որոյ ժտեմ, հայցեմ և մաղթեմ ճըշմարտասիրաց և հաւատարմական քրիստոնէական զըԹուեանց ձերոց, յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր վերոյ գրեալ զազնուատոհմ և զբարեպաշտ զնորահասակ և ծաղկածաւալ զԴնդեանցի Վարդանի որդի Էտկեարն, և զբազմահանճար և նրբայարհեստ զհոգևոր եղբայրն զՇոռութեցի Բարաքիասի որդի զՄինաս դպիրն, որք ամենայնիւ ջանիւ, արդեամբք և գոյիւք ի լոյս հանին զգեղեցկագիր զատենի զսուրբ աւետարանս այս։ Եղև զրաւ տպագրութեանս մատենիս այս ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս, ի Թվականութեան կենարարին մերոյ ՌՉԺ երորդի, և Հայոց ՌՃՄԹ երորդի, դեկտեմբերի վերջին։ Յաւուր հայրապետութեան հանդարտախաղաց ծովու՝ տեառն Աղեքսանդրի կաթուղիկոսի սրբոյ աթոռոյն էջմիածնի, և պատրիարքութեան երկուց սրբոց աթոռոց՝ սրբոյ Երուսաղեմի և Կոստանդինուպոլսոյ՝ տեառն Իսահակայ վարդապետի։ Արդ՝ որք ընթեռնոյքդ... ամէն»*

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 943։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1729 Թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրեցեալ ի տպարանի տրուպ Աստուածատրի: [ՌՃՀԸ, մարտի ամսոյ Ի]:

460 էջ (չափ. 13.8×14.4 սմ): Սկզբում՝ Եվսեբիոս Կեսարացու առ Կարպիանոս Թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ 2—16)։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը (էջ 459—460), որ է՝

«Փառք...: Արդ՝ տպագրեցաւ և աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի համարողականի Թուաբերութեան փրկչին մերոյ ՌՉԻԹ, և ի մերումս որով վարիմք՝ ՌՃՀԸ, մարտի ամսոյ Ի, որ էր օրն զարնանամուտ, ի տպարանի Կարապետի որդւոյ Աստուածատրի, ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տեառն Կարապետի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, և ի պատրիարգութեան սրբոյ քաղաքին Երուսաղէմի՝ տեառն Գրիգորի բարերջանիկ և շնորհազարդ եպիսկոպոսի Բաղիշեցոյ, իսկ և ի յառաջնորդութեան Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Յոհաննիսի աստուածաբան և բանիբուն եպիսկոպոսի Բաղիշեցոյ, որոց կեանս երկարս պարգևեսցէ տէր, ամէն: Եւ արդ՝ ո՞վ եղբարք իմ և հաւատացեալք ի Քրիստոս, աղերսիմ ի ձէնջ ոյք ստանայք զսա մաքրութեամբ, առնլոյ յիշման արժանի միով Հայր մերիւ ի տէր, զպատճառս և զմատակարարս տպեցման այսմ հոգիակեցուցչի շաւղի, այսինքն՝ զպարոն Դանիէլի որդի զտիրացու Մովսէսն, և զհօր եղբարսն իւր, և զընկերակիցսն սոցին. նաև զբողբոջարթթեալ զերեսին որդիսն իւր՝ զտիրացու Մատթէոսն, Ոնոփրիոսն և զՅակոբն, և զայլ ամենայն ազգատոհմսն՝ զկենդանիս և զննջեցեալսն իւր. որ ետ ի յարդարաբեր արդեանց իւրոց տպագրել զայս մեծ ատենի Աւետարանս, ի պայծառութիւն փափագողաց և մանկանց Սիոնի, և ի պատիւ ամենագերագոյի յանուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հուսկ յետոյ և զիս զվերագրեցեալ Աստուածատուրս՝ անարժան ծառայս ձեր՝ զտպողս սորին, և զծնողսն իմ զԿարապետն

և զՄարիամն. նաև զերկոսին որդեակսն իմ՝ զՄինասն և զՅոհաննէսն, զոր և սա՝ եղև ոչ սակաւ ինչ աշխատաւոր ի գերավայելչութեան դրուածոցս այսոցիկ, զոր և ահա տեսանեն իսկ աչք բարեճանաչ և բանիմաց մտաց զծնողացս, թէ ո՞րքան ունի ազնուակերպութիւն ի վերայ միւսոց տպագրեցելոցն. վասն որոյ ամէն իրի՝ լցուցէ տէր զխնդրուածս և զամենայն հայցուածս՝ եղբարցդ աղօթիւք, ամէն։ Այլ և յիշեսջիք զյորդորող պատճառին տպեցման սորին զքարագործ Ղազարի որդի Մանուկն՝ իւրայնովքն հանդերձ, և զաշխատաւորն գործարանիս զՎանեցի Ասլանի որդի զտիրացու Պետրոսն և դուք յիշ[եալ լիջիք]»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 1752։

Այլ տպ. Վենետիկ, 1732 թ.

Գիրք սրբոյ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպեցեալ յամի տեառն 1732, յօգոստոսի 8: Ի հայրապետութեան տեառն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի: Ի Վէնէտիկ: Հրամանաւ մեծաւորաց: Ի տպարանի Անդոնի Պօրթոլի:

552 էջ (շարվ. 12.1×8.1 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում՝ Մխիթար Սեբաստացու «Բան առ ընթերցողս» (էջ 3—5), որ ասվում է.

«Որպէս զի զԱստուածաշունչն տպագրել տայցեմ ըստ նմանութեան տպագրութեան Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ, պատշաճ համարեցայ՝ զի որպէս զյառաջընթաց, և իբրև զառհաւատչեայ տպագրութեան Աստուածաշնչին՝ նախապէս տպագրել տայցեմ զայս Աւետարան, ըստ ամենայնի կատարելութեան՝ որ իցէ կարելի» ևն։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց ընթերցմանց» ևն (էջ 551—552)։ Տպագր. հիշատակարան չունի։

Նմուշ՝ ՊԹ հն. 426։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1740 թ.

Սուրբ Աւետարան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ըստ չորից աւետարանչացն սրբոց՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յոհաննու:

390 էջ (շարվ. 17.7×14.2 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում՝ Եվս. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համարաբարի աղյուսակները (էջ 2—12)։ Վերջում՝ ցուցակը ընթերցման ավետարանների ևն (էջ 388—389) և «Յիշատակարան նոր տպեցման սուրբ Աւետարանիս» (էջ 390), որ է՝

«Փառք...։ Եւ յայժմ ի վերջին ժամանակիս՝ տպեցաւ, ողորմութեամբն աստուծոյ և բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, ի թվին ՌՃՁԹ, ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի՝ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց, և ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Գրիգորի և տեառն Յոհաննու սրբազան և աստուածաբան վարդապետացն, ի տպարանի Սեբաստացի երկուց եղբարց Բարսեղ և Յակոբ անպիտան ծառայիցս։ Արդ՝ որք վայելէք զսուրբ Աւետարանս զայս, յիշեսջիք զվերոգրեալ ծառայքս ձեր և զորդեակսն մեր զԳաբր[ի]էլն որ է շարող գրոյս, զՄարգիսն, զԱստուածատուրն և զՄիքայէլն¹; Յիշեսջիք ևս ջերմեռանդ սիրով զԱպուչեխցի զխոճա Նիկողոսն, որ ըստ բարեսէր բարուցն քանի մի դրամ փոխ տալով օգնեաց մեզ ի գործս այս. և որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ յաւուր ահեղ յայտնութեան ամենայն մարդկան, ամէն. և զաշխատաւորս գործարանիս զՍպառկերացի խոճիմ Յովանէսն և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 947։

Այլ տպ. Վենետիկ, 1752 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...: *Տես վերևում՝* ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, *Վենետիկ, 1752 թ.։*

Այլ տպ. Վենետիկ, 1759 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրեալ յամի տեառն 1759, յապրիլի 24: Ի հայրապետութեան տեառն Սահակայ Հայոց կաթուղիկոսի: Ի Վէնէտիկ: Հրամանաւ մեծաւորաց: Ի տպարանի Անտոնի Պորթոլի:

552 էջ (շարվ. 12.1×8.1 սմ)։ Պտկրզ.։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց ընթերցմանց...» *(էջ 551—552)։ Տպագր. հիշատակարան չունի։*

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 950։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1769 թ.

Աւետարան...: Տպագրեցեալ ի տպարանի Յոհաննիսի և Յակոբու: Ի թուին Հայոց 1218, մայիսի Դ:

463 էջ (շարվ. 19.5×14.9 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում՝ Եվս. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համարաբարի աղյուսակները (էջ 2—12)։ Վերջում՝ «Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման» *(էջ 460—463), որ է՝*

«Յանուն... ահա եհաս յաւարտ տպագրումնս (sic) սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յոհաննու աւետարանչացն սրբոց։ Ուստի փառք անսահմանելի ընդ օրհնաբանական գոհութեամբ երկրպագութեան՝ ի բարձունս մարդասիրի, գթածի և ողորմածի աստուծոյն եղելոցս համայնից յանգոյից արարչի։ Ի վեհափառ հայրապետութեան սրբոյն (sic) էջմիածնի՝ տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյ քաղաքին Երուսաղէմի՝ տեառն Պօղոսի սրբա-

¹ *Տպագրված՝* միաՃակյն:

զան վարդապետի։ Ի Կոստանդնուպոլիս։ Հրամանաւ նորին սրբազան պատրիարքի՝ տեառն Գրիգորի երանաշնորհ վարդապետի։ Արդեամբք և գոյիւք ըստ բնականին Անկցի և ըստ ծննդականին յԱնկնայ գիւղիցն Ապուչեխցի մահտեսի Աստուածատուրի՝ ըստ մականուանն Արապ օղլի կոչելոյ...։

«Իսկ յետ քան զամենեսեան՝ թախանձագին բանիւք աղաչեմք զհաւատացեալսդ ի բանն ամենարարի՝ յիշել ի բարին և զտպագրողս հոգեկեցոյց սրբոյ Աւետարանիս։ Այսինքն զվերոյ գրեալ մահտեսի Աստուածատուրի որդի Յոհաննէսն և զԱնկցի հանգուցեալ Սարգսի որդի Յակոբս, հանդերձ ծնողովքս մերովք։ Ընդ որս և զդեռաբոյս որդեակն նորին Յոհաննիսի՝ զՊօղոսն մտերիմ, որ ըստ կարի իւրում յո՛յժ աշխատեցաւ թէ յօրինելն ըստ կերտողի նորաշէն գրոցս, և թէ ի շարելն և ի ցրուելն զկապարեայս։ Այլ և յիշեսջիք զհաւատարիմ մշակսն գործարանիս, այսինքն զմահտեսի Դաւիթն և զատէր Պօղոսի որդի զտիրացու Կիրակոսն, և զԳասպարն, զի յօժար կամօք աշխատին՝ մինչ կոչին ի կարիս տպագրարանիս» են։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 952։

Այլ տպ. Վենետիկ, 1789 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1789 թ.։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1796 թ.

Աւետարան...: Տպեալ հրամանաւ տեառն Զաքարիայ ազգասէր և բարեկարգ պատրիարգի: Ի Կոստանդնուպոլիս: Յամի տեառն 1796: Եւ Հայոց՝ ՌՄԽԵ: Ի տպարանի Աստուածատուրի.

364 էջ (շարվ. 21.3×15.5 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում՝ Եվս. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ 2—12)։ Վերջում՝ «Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման» (էջ 363—364), որ է՝

«Յանուն... ահա եհաս յաւարտ տպագրումս սրբոյ Աւետարանիս... ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց, և սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Պետրոսի շնորհափայլ պատրիարգի, և Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Զաքարիայ ազգասէր և բարեկարգ պատրիարգի։ Արդ՝ որք հանդիպիք, յիշեցէք...։ Այլ և զտպագրիչն սորին զՄատթէոս նուաստ դպիրս (որ տպագրաւ իմով տպեցի) ընդ բեռն իմոյ Բրաքիոն նոտարի, և ընդ ձեռնասուն աշակերտի մերոյ գրաշար Մանուէլի, և ընդ մելանահար Վանեցի Գասպարի և ընդ հանգուցելոցն իմոց, այսինքն՝ ընդ պապոյն իմոյ մահտեսի Յարութիւնի, ընդ մամոյն իմոյ Հեղինէի, ընդ հօրն իմոյ Յովնանու, ընդ մօրն իմոյ Գայիանէի, ընդ եղբօրն իմոյ Խաչերեսի, և ընդ աղջկանն իմոյ Նուայի ի Քրիստոս Յիսուս յիշել աղաչեմ»։

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 959։

Այլ տպ. Վենետիկ, 1804 թ.

Աւետարան...: Տպագրեալ ի 1804 ի յունիսի 2: Ի թուականութեանս Հայոց՝ ՌՄԾԴ: Ի հայրապետութեան տեառն Դաւթի Հայոց կաթուղիկոսի: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու:

508 էջ (շարվ. 12.2×6.5 սմ)։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 7574։

Այլ տպ. Վենետիկ, 1805 թ.

[Աւետարան...: Տպագրեալ ի Վենետիկ. ի վանս Սրբոյն Ղազարու, յամի 1805]:

Տեղեկությունը մատենագիտ. աղբյուրներից է[1]։ Էջերի քանակն ու շարվ. չափը՝ անհայտ։ Նշվում է որպես «փոքրադիր և մանրագիր» տպագրություն։

Նմուշ՝ չունենք։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1805 թ.

Աւետարան...: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ տեառն Դաւթի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ աթոռոյն Երուսաղէմի՝ տեառն Թէոդորոսի արհի եպիսկոպոսին: Տպագրեցեալ վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսի սրբազան պատրիարգի՝ տեառն Յոհաննու Աստուածարան կոչեցեալ վսեմարան րաբունապետին: Յամի մարդեղութեան փրկչին մերոյ 1805, և ի թուականիս մերում՝ ՌՄԾԴ: Ի Կոստանդնուպոլիս, ի Քիւրքճի խանին: Ի տպարանի մահտեսի Աստուածատուրեան տիրացու Յոհաննիսի որդւոյ՝ Արապեան տիրացաւ Պօղոսի:

370 էջ (շարվ. 23.7×17.3 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում՝ Եվս. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ 2—12)։ Վերջում՝ «Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման» (էջ 352), որ է՝

«Ամենարաւական ողորմութեան...։ Յիշել խնդրեմ ուրեմն ի հաճոյական աղօթս ձեր, ո՛վ համօրէն սիրելիքդ և մանաւանդ եկեղեցական հարքդ և եղբարքդ իմ, զպատրաստական ծառայ ձեր զտպագրիչ տիրացու Պօղոսս Արէպեան, և զկենակիցն իմ զԽսկուհին, և զաշխատաւոր որդեակսն իմ զծառայս ձեր զԱստուածա-

---

[1] Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 77։ Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատ.», հտ. Ա, էջ 270։

տուրն, զԳէորգն, զՍիմոնն և զԳալուստն. որք ըստ կարողութեան իւրեանց ի շարումն և ի ցրումն կապարեայց տփնեալ աշխատեցան զցայգ և զցերեկ. որոց տացէ տէր շնորհս և միտս պայծառս և կեանս երկարս՝ Շարուհի և Մարիամ դստերօք իւրովք հանդերձ։ Այլ և՝ ըստ բնականին Ակնցի և ըստ ծննդականին Ապուշեխցի զյուսահոգի մահտեսի Աստուածատուր զպապն իմ Արապ-օղլու մականուանեալ և զՇարուհի կողակիցն, և զծնողսն՝ զՄելքոնն և զմահտեսի Թուրֆանտայն, և զեղբարսն զԱնանիայն և զԴաւիթն, և զքորսն՝ զՍուրմայն, զՄրբուհին, զմահտեսի Զարայն և զՍիմոնն, և զորդիսն՝ զՅոհաննէսն և զՊօղոսն. և զդստերսն՝ զԹուրֆանտայն և զՄիոնն, և զպապսն՝ զԴաւիթն և զԱստուածատուրն, և զմեծ մարսն՝ զԳշխուհին և զՄանաշն։ Նաև զանուցիչ կոյ՝ զԳոհարն։ Այլ և զտիրացու Յօհաննէս զհայրն իմ, և զՄարիամ զմայրն իմ, և զՄարգար հօր եղբայրն իմ և զտիրացու Յարութիւն եղբայրն իմ, ընդ այլ համօրէն կենդանի և հանգուցեալ արենակիցսն իմ։ Յիշեսջիք նաև զաշխատաւորսն տպման մատենիս զԲալուեցի տիրացու Զարարի որդի Աւետիքն և զՇերվանցի տէր Հարապետի որդի Պօղոսն, և դուք յիշեալ [լիջիք]»։

Հիշատակարանից հետո կան ուրիշ նյութեր (էջ 353—370)։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 10640։

Այլ տպ. Տրիեստ, 1807 թ.

Սուրբ Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յայսմ տպագրութեան դնի ի սկզբան համառօտ միաձայնութիւն չորից աւետարանչաց, ըստ շարակարգութեան Կոռնելիոսի Ալապիդեայ: Ի Թրեստ, յամի տեառն 1807, և ի թուին Հայոց՝ ՌՄԾ: Ի տպարանի Հարց Մխիթարեանց: Արտօնութեամբ Կայսերական Հրովարտակին:

ԼԲ+352 էջ (շարվ. 12.9×8.4 սմ)։
Նմուշ՝ ԳԱԹ Ազատյան 8378։

Այլ տպ. Վենետիկ, 1816 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրեալ ըստ ընտիր . օրինակաց: Յամի տեառն 1816 և ի թուականութեանս Հայոց՝ ՌՄԿԵ: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու:

455 էջ (շարվ. 13.1×7.5 սմ)։ Պատկ.։
Նմուշ՝ ՀԳ հն. 4964։

Այլ տպ. Վենետիկ, 1818 թ.

[Աւետարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1818]:

Տեղեկությունը մատենագիտ. աղբյուրներից է։ Էջերի քանակը և շարվ. չափը հայտնի չեն։ Նշվում է որպես «միջակագիր» և «տնատեալ» հրատարակություն։

Նմուշ՝ չունենք։

Այլ տպ. Վենետիկ, 1820 թ.
Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1820 թ.։

Այլ տպ. Վենետիկ, 1822 թ.
Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1822 թ.։

Այլ տպ. Զմյուռնիա, 1837 թ.

Մասն Նոր Կտակարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բովանդակիչ չորից Աւետարանացն: *Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Զմյուռնիա, 1837/38 թթ.։*

Այլ տպ. Թիֆլիս, 1842 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ի ժամանակս հանգստեան արժանայիշատակ հայրապետին ամենայն Հայոց տեառն Յովհաննու Ը Կարբեցւոյ: Յառաջնորդութեան Հայոց Վրաստանի Իմէրէթի և գաղթելոց ի Տաջս՝ տեառն Կարապետի բարձր սրբազան արքեպիսկոպոսի և ասպետի: Յամի մարդեղութեան փրկչին մերոյ 1842, և ի թուականիս մերում՝ ՌՄՂԲ: Ի Տփխիս, ի տպարանի Հոգևոր Դպրոցի Հայոց ընծայելոյ յազնուական Գէորգայ Արծրունւոյ:

299 էջ (շարվ. 24×14.5 սմ)։ Պատկ.։ Սկզբում՝ Նկա. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ 2—12)։ Վերջում՝ «Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման» (էջ 299), որ է՝

---

1 Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 77։ Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատ.», հտ. Ա, էջ 270։ «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1716—1960)», էջ 102։

«Շնորհօք... յիշեցէք ի ջերմեռանդն աղօթս ձեր զխնկական պատճառ տպագրութեան սորին զբարձր սրբազան Կարապետ արքեպիսկոպոսն Հայոց Վրաստանի և այլոց և զասպետն, որ աշխարհահռչակ տեղ-չանօք իւրովք [վասն] պայծառութեան սրբոյ եկեղեցւոյ ետ տպել զսուրբ աւետարանս. նոյնպէս յիշելոյ արարէք արժանի զառ Քրիստոս հանգուցեալ ազնուական Գէորգ աղայն Արծրունի զընծայող տպարանիս, և զգերազնիւ զորդի նորա զԾբեմիայ Արծրունի և ասպետ զ'ի նորոյ բարեզարդող սորին. ընդ նոսին յիշեցէք զվերատեսուչ տպարանիս զՄովսէս աւագ քահանայն Սայաթնեան, և զգործագիր սորին զվարպետ Յովակիմն Սէյրանեան ընդ համայն գործակցաց և աշխատաւորաց, որով յիշեալ լինիցիք առաջի Քրիստոսի ի հանդերձեալ կեանս. ամէն»։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 6269։

Այլ տպ. Զմյուռնիա, 1842 թ.

Մասն Նոր Կտակարանի... բովանդակիչ չորից Աւետարանացն: *Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Զմյուռնիա, 1842/43 թթ.։*

Այլ տպ. Կալկաթա, 1847 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ի Կալկաթա, յԱրծիւ տպարանի Պօղոսի Վիչենեան Կոստանդնուպոլսեցւոյ, 1847:

Տեղեկությունը մատենագիտ. աղբյուրներից է[1]։ էջերի քանակը հայտնի չէ։ Նշվում է որպես «փոքր գրիք և վայելուչ տպագրութեամբ» հրատարակություն։

Նմուշ՝ չունենք։ Հմմտ. հաջորդը, որ սույնի Բ տպագրությունն է։

Այլ տպ. Կալկաթա, 1849 թ.

Աւետարան...: Երկրորդ տիպ: Ի Կալկաթա, յԱրծիւ տպարանի Պօղոսի Վիչէնեան Կոստանդնուպոլսեցւոյ, 1849:

ԼԲ+741(?) էջ[2] (չափ. 8×4.2 սմ)։ Ա տպագրությունը եղել է 1847 թ.։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 22265 (թերի)։

Այլ տպ. Վենետիկ, 1849 թ.

Աւետարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, յամի 1849—ՌՄՂԸ:

1 Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատ.», հտ. Ա, էջ 270։— Ա զ գ ա ս է ր, Կալկաթա, 1847, էջ 386 (№ 121)։

2 Մեր ձեռքի տակ եղած միակ օրինակը վերջից թերի է. ընդհատվում է 738 էջով։ էջերի քանակը նշել ենք ըստ Ա. Ղազիկյանի, «Հայկ. նոր մատ.», հտ. Ա, էջ 270։

455 էջ (չափ. 12.7×7.4 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 14843։

Այլ տպ. Կ. Պոլիս (Օրթագյուղ), 1850 թ.

Աւետարան...: Տպագրեալ ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տ. տ. Ներսէսի սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց: Ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տ. Յոհաննու սրբազան արքեպիսկոպոսի: Ի պատրիարգութեան Կոստանդնուպոլսի՝ տ. Յակոբայ ազգասէր արքեպիսկոպոսի: Ի Կոստանդնուպոլիս, յՕրթագիւղ, ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1850:

508 էջ (չափ. 13.2×7.4 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ ԳԱԹ Ազատյան 8374։

Այլ տպ. Վիեննա, 1857 թ.

Աւետարան...: Ի Վիեննա, ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1857:

[Չ]+261 էջ (չափ. 17×9.3 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

Այլ տպ. Վենետիկ, 1863 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1863 թ.

Այլ տպ. Վիեննա, 1864 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վիեննա, 1864 թ.

Այլ տպ. Երուսաղեմ, 1864 թ.

Աւետարան...: Ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տ. տ. Մատթէոսի վեհափայլ սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան ս. աթոռոյս Երուսաղէմի՝ տ. տ. Եսայեայ նորապսակ սրբազան արքեպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. տ. Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի: Յերուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակովբեանց, 1864:

[Ժ]+331 էջ (չափ. 15.7×9.7 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 21628։

Այլ տպ. Վենետիկ, 1866 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1866 թ.։

Այլ տպ. Վաղարշապատ, 1866 թ.

Աւետարան...: Տպագրեալ հրամանաւ Սինոդի սրբոյ էջմիածնի: 1866—ՌՅԺԵ: Ի Ս. էջմիածին:

396 էջ (շարվ. 25.1×16.7 սմ)։ Սկզբում՝ Եվս. Կեսարացու առ Կարպիանոս թուղթը և համաբարբառի աղյուսակները (էջ 2—12)։

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 8700։

Այլ տպ. Երուսաղեմ, 1867 թ.

Աւետարան...: Ի հայրապետութեան տ. տ. Գէորգայ նորընտիր վեհափառ կաթուղիկոսի: Հրամանաւ տ. տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի և պատրիարքի ս. Երուսաղէմայ: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ տ. տ. Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, յԵրուսաղէմ, 1867:

353 էջ (շարվ. 14.3×9 սմ)։ Պտկրզ.։ Հմմտ. վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Երուսաղեմ, 1867 թ.։

Այլ տպ. Վենետիկ, 1868 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1868 թ.։

Այլ տպ. Կ. Պոլիս (Ղալաթիա), 1870 թ.

Աւետարան...: Տպագրեալ ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տ. տ. Գէորգայ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի: Ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. Մկրտչի Խրիմեան արքեպիսկոպոսի: Ղալաթիա, ի տպարանի Ռ. Յ. Քիւրքճեան, 1870:

463 էջ (շարվ. 13×8.8 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ ԳԱԹ- Ազատյան 8379։

Այլ տպ. Շուշի, 1870 թ.

Աւետարան...: Ի հայրապետութեան տ. տ. Գէորգայ Դ.ի՝ աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց և ասպետի: Եւ յառաջնորդութեան վիճակին Ղարաբաղու՝ ամենապատիւ Սարգիս արք եպիսկոպոսին Հասան Ջալալեանց և ասպետի: Հրամանաւ նոյն վիճակաւոր արք եպիսկոպոսին: Ծախիւք Հոգևոր Դպրոցին Հայոց Ղարաբաղու: Ի Շուշի, ի տպարանի, ընծայեցելոյ յազգնուական Յոհաննէսի Ստեփանեան Յովնանեանց, նոյն դպրոցին, 1870:

[Ը]+280 էջ (շարվ. 17.8×9.9 սմ)։

Նմուշ՝ ՊՀ 28/Ա—79։

Այլ տպ. Վենետիկ, 1871 թ.

[Աւետարան...: Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1871]:

Տեղեկությունը մատենագիտ. աղբյուրներից է[1]։ Էջերի քանակը և շարվ. չափը հայտնի չեն։ Նշվում է որպես «միջակադիր» և «տնատեալ» հրատարակություն։

Նմուշ՝ չունենք։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1872 թ.

Աւետարան...: Տպագրեալ ի հայրապետութեան ս. էջմիածնի՝ տ. տ: Գէորգայ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի պատրիարքութեան ս. Երուսաղէմի՝ տ. տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի: Ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. տ. Մկրտչի Խրիմյան սրբազան արքեպիսկոպոսի: Կ. Պոլիս, տպագրութիւն Յովսէփ Գավաֆեան, 1872:

359 էջ (շարվ. 14.5×8.8 սմ)։ Պտկրզ.։

Նմուշ՝ ՊԹ 421։

Այլ տպ. Երուսաղեմ, 1873 թ.

Աւետարան ատենի: Ըստ իւրաքանչիւր աւուրց յինանց: Ընդ որս և ցուցակ մի յամենայն աւուր ի ժամ սուրբ պատարագին ընթերցեալ աւետարանաց: Ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տ. տ. Գէորգայ վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ պատրիարքի սրբոյ աթոռոյն Երուսաղէմի՝ տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. Մկրտչի սրբազան արքեպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական աթոռոյ

1 Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատ.», էջ 77։ Ա. Ղազիկյան, «Հայկ. Նոր մատ.», հտ. Ա, էջ 270։ «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1716—1960)», էջ 102։

Սրբոց Յակովբեանց, յԵրուսաղէմ, 1873—ՌՅԻԲ։

286 էջ (շարվ. 21.7×14.1 սմ)։ Պտկրդ.։
Նմուշ՝ ԱԿԳ։

Այլ տպ. Վենետիկ, 1874 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, յամի 1874—ՌՅԻԳ։

455 էջ (շարվ. 12.8×7.2 սմ)։ Պտկրդ.։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—79։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1874 թ.

Աւետարան...։ Տպագրեալ ի հայրապետութեան սուրբ էջմիածնի՝ տ. տ. Գէորգայ սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարքութեան սուրբ Երուսաղէմի՝ տ. տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի։ Եւ ի տեղապահութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. տ. Ներսէսի սրբազան արքեպիսկոպոսի։ Կ. Պոլիս, տպագրութիւն Յովսեփայ Գավաֆեան, 1874։

360 էջ (շարվ. 14.4×8 սմ)։ Պտկրդ.։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց...»։
Նմուշներ՝ ՀԳ 22/Ա—76։ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1875 թ.

Աւետարան...։ Կ. Պոլիս, տպագրութիւն Յովսեփայ Գավաֆեան, 1875։

312 էջ (շարվ. 16.7×10 սմ)։ Պտկրդ.։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 2770։

Այլ տպ. Երուսաղեմ, 1875 թ.

Աւետարան...։ ՅԵրուսաղէմ, ի տպարանի առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, 1875։

494 էջ (շարվ. 9.1×5.1 սմ)։ Պտկրդ.։
Նմուշ՝ ԱԿԳ։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1876 թ.

Աւետարան...։ Ի հայրապետութեան տեառն տեառն Գէորգայ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Եսայեայ սրբազան արհիեպիսկոպոսի։ Հրամանաւ տեառն Ներսէսի սրբազան արհիեպիսկոպոսի՝ պատրիարքի Կ. Պոլսոյ։ Կ. Պոլիս, տպագրութիւն Թ. Տիվիտճեան, 1876։

368 էջ (շարվ. 13.8×8.2 սմ)։ Պտկրդ.։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց...։
Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Վենետիկ, 1877 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1877 թ.

Այլ տպ. Կ. Պոլիս, 1881 թ.

Աւետարան...։ Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Փափազեան, 1881։

304 էջ (շարվ. 16.6×9.9 սմ)։
Նմուշ՝ ԳԱԹ Ալպաժեան 8370։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1882 թ.

Աւետարան...։ Կ. Պոլիս, տպագրութիւն Մարգարեան, 1882։

335+[5] էջ (շարվ. 16×9 սմ)։ Պտկրդ.։
Նմուշ՝ Կ. Պոլիս, Գրատուն Հակոբ Աբրահամյանի։

Այլ տպ. Վաղարշապատ, 1884 թ.

Աւետարան...։ Տպագրեալ հրամանաւ Սինոդի սրբոյ էջմիածնի։ Ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթուղիկէ էջմիածնի. 1884—ՌՅԼԳ։

Զ+332 էջ (շարվ. 18.2×10.8 սմ)։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց Հանգստեան, Տանարի, Իղաբերից, Բժշկութեան և Անդաստանի, որ պաշտին ի կարգաւորութեան հասարակաց աղօթից ըստ ձայնին» *(էջ 329—332)։*
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 8196։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1884 թ.

Աւետարան...։ Կ. Պոլիս, տպագրութիւն Ս. Ղ. Պարտիզպանեան, 1884։

270 էջ (շարվ. 16×9.8 սմ)։ Վերջում՝ «Ցուցակ աւետարանաց...»։
Նմուշ՝ Վենետիկ, Ս. Ղազար։

Այլ տպ. Երուսաղեմ, 1886 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Երուսաղեմ, 1886 թ.։

Այլ տպ. Վենետիկ, 1888 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1888 թ.։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1888 թ.

Աւետարան...: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Յ. Գավաֆեան, 1888:

324 էջ (չափ. 16.8×10.5 սմ)։ Պակրդ.։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 5516։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1888—1891 թթ. միջև.

(Ա ճակատ) Աւետարան...: Կ. Պոլիս, տպագրութիւն Պօղոս Յակոբեան:

(Բ ճակատ) Ի հայրապետութեան տեառն տեառն Մակարայ՝ ս. կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Յարութիւն ս. արքեպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ՝ տեառն Խորենայ ս. արքեպիսկոպոսի:

360 էջ (չափ. 16×9.5 սմ)։ Պակրդ.։ Տպագրության տարեթիվ չունի։
Նմուշ՝ ՀԳ 225/Ա—76։

Այլ տպ. Վաղարշապատ, 1890 թ.

Աւետարան...: Ի հայրապետութեան տեառն տեառն Մակարայ Ա.՝ վեհափառ և սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց: Վաղարշապատ, ի տպարանի ս. կաթուղիկէ էջմիածնի, 1890—ՌՅԼԹ:

263 էջ (չափ. 25.3×15.2 սմ)։ Որոշ օրինակներ ունեն և հավելվածներ՝ «Ցուցակ աւետարանաց Հանգըստեան...» *(էջ 265—269) և* «Ցուցակ սկսուածոց չորից աւետարանչաց ըստ Տօնացուցի Հայաստանեայց եկեղեցւոյ» *(էջ 270—278)։*
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 8698։

Այլ տպ. Վաղարշապատ, 1891 թ.

Աւետարան... Ի Վաղարշապատ, ի տպարանի ս. կաթուղիկէ էջմիածնի, 1891—ՌՅԽ:

Դ+599 էջ (չափ. 9.7×5.4 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 7857։

Այլ տպ. Երուսաղեմ, 1898 թ.

Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Երուսաղեմ, 1898 թ.։

Այլ տպ. Մոսկվա, 1899 թ.

Աւետարան: Ըստ թարգմանութեան նախնեաց մերոց: Գրեալ ՅԼՁ թ. Հայոց և յամի տեառն 887: Լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ճեմարանի Արևելեան Լեզուաց: Արդեամբք պատուոյ հոգաբարձուի ճեմարանիս իշխան Սիմէօնի Աբամէլիք-Լազարեան: Մոսկուա, ՌՅԽԸ—1899:

ԺԲ էջ+230 թերթ (չափ. 24.5×18.5 սմ)։ Գրիգոր Խալաթեանցի «Յառաջաբան»-ով։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 3606։

Այլ տպ. Երուսաղեմ, 1899 թ.

Աւետարան ատենի: Ըստ իւրաքանչիւր աւուրց յինանց: Ընդ որս և ցուցակ մի յամենայն աւուր ի ժամ սուրբ պատարագին ընթերցեալ աւետարանաց: Ի հայրապետութեան ս. էջմիածնի տ. տ. Մկրտչի Ա.՝ սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ պատրիարքի սրբոյ Երուսաղէմի՝ տ. Յարութիւն սրբազան արք եպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. Մաղաքիայ սրբազան արք եպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական ս. աթոռոյ Սրբոց Յակովբեանց յԵրուսաղէմ, 1899—ՌՅԽԸ:

272 էջ (չափ. 22.5×15 սմ)։ Պակրդ.։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 28712։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1902—1906 թթ.

Աւետարան կամ Նոր Կտակարան: Հանդերձ հայերէն բնագրիւ և թարգմանութեամբ յաշխարհիկ լեզու: Զարդարեալ նախագիտելեօք, մեկնութեամբք և աշխարհագրական ու պատմական ծանօթութեամբք՝ Աւեքսիանոս վ. Սիրունեանէ (Կէօզիւպէօյիւքեան):

Ա. մասն. — Սուրբ Մատթէոս: Կ. Պոլիս, տպագրութիւն Վ. Մինասեան, 1902: *164 էջ (չափ. 16.9×11.1 սմ)։*

Բ. մասն. — Սուրբ Մարկոս: Կ. Պոլիս, տպագրութիւն Սագայեան, 1905: *124 էջ (Նույն ծավալով)։*

Գ. մասն. — Սուրբ Ղուկաս: Կ. Պոլիս, տպագրութիւն Սագայեան, 1905: *262 էջ (Նույն ծավալով)։*

Դ. մասն.— — Սուրբ Յովհաննէս: Կ. Պոլիս, տպագրութիւն Սագայեան, 1906: *199 էջ (Նույն ծավալով)։*

Նմուշ՝ ԳԱԹ Աճառյան 7803։

Այլ տպ. Վաղարշապատ, 1905 թ.

Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Երկրորդ տպագրութիւն: Վաղարշապատ, տպարան մայր աթոռոյ Ս. էջմիածնի, 1905—ՌՅԾԴ:

479 էջ (10.7×6.3 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 27206։

Այլ տպ. Փարիզ, 1920 թ.

L'Évangile Arménien. Édition phototypique du manuscrit № 229 de la Bibliothèque d'Etchmiadzin, publiée sous les auspices de M. Léon Mantacheff par Frédéric Macler, professeur à l'École Nationale des Langues Orientales Vivantes. Paris, Librairie Paul Geuthner, 1920.

27 էջ (15.6×11.3 սմ) և 234 լուսատիպ թերթ։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 2920։

☐ Տես նաև Ավետարանի հետևյալ մասնակի հրատարակությունները.

— Սուրբ Աւետարան ըստ Մատթէոսի: Ըստ հարազատ նախնի թարգմանութեան: Հանդերձ հաւատարիմ բացայայտութեամբ ի հասարակաց լեզուի: Ի հայրապետութեան տեառն տեառն Եփրեմայ արժանընտիր և աստուածարեալ կաթուղիկոսի ամենայն Հայոց և ասպետի: Յառաջնորդութեան Ռուսիաբնակ Հայոց առաջելաշաւիղ տեառն Ներսեսի սրբազան արքեպիսկոպոսի և ասպետի: 1831, ի Մոսկով, ՌՄՁ: Ի տպագրատան Հայկական Ճեմարանի Տեարց Լազարեանց:

158 էջ (շարվ. 18.3×11.1 սմ)։ Բնագիրը տրված է գրաբարով և արևելահայ աշխարհաբարով (գրաբարից թարգմանված)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 9406։

— Աւետարան ըստ Մատթէոսի: Գրաբար և աշխարհաբար: Յունարէն բնագրէն թարգմանուած: Հրամանաւ ժողովոյ պաշտօնէին հասարակաց կրթութեան: Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1877:

111 էջ (շարվ. 15×8.6 սմ)։ Գրաբարի ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։ Աշխարհաբարը (արևմտահայ) հուն. բնագրից է թարգմանվել։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 20051։

— Աւետարան ըստ Մատթէոսի: Գրաբար և աշխարհաբար: Յունարէն բնագրէն թարգմանուած:...[1] Կոստանդնուպոլիս, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1886:

285 էջ (շարվ. 11.8×7.2 սմ)։ Գրաբարի ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։ Աշխարհաբարը (արևմտահայ) հունարենից է թարգմանվել։
Նմուշ՝ ԳԱԹ Աղայան 8382։

— Աւետարան ըստ Մատթէոսի: Համեմատեալ ընդ Յոյն բնագրին: Ծախիւք Ամերիկեան Ընկերութեան Աստուածաշունչ Գրոց: Կ. Պոլիս, տպագրութիւն Ա. Յակոբ Պօյաճեան, 1899:

78 էջ (շարվ. 9.5×6 սմ)։
Նմուշ՝ Վիեննա, Մխիթ. Մատենադարան։

— Աւետարան ըստ Մատթէոսի: Գրաբար և աշխարհաբար: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ա. Յ. Պօյաճեան, 1900:

183 էջ (շարվ. 11.9×7.2 սմ)։
Նմուշ՝ Վիեննա, Մխիթ. Մատենադարան։

— Աւետարան ըստ Մատթէոսի: Գրաբար և աշխարհաբար: Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ա. Յ. Պօյաճեան, 1911:

183 էջ (շարվ. 11.9×7.2 սմ)։ Գրաբարի ստորին լուսանցներում՝ հուն. բնագրի տարբերությունները։ Աշխարհաբարը (արևմտահայ) հուն. բնագրից է թարգմանվել։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

— Աւետարան ճաշու և տօնք իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարւոջն ըստ նորոյ Տօնացուցին: Նաև Տօնացոյց ամենայն շարժական և անշարժ տօնից: Տպագրեալ ի վեցերորդում ամի հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ սրբոյ աթոռոյս էջմիածնի՝ տեառն Ղուկասու սրբազնասուրբ կաթուղիկո-

[1] *Արաբատառ թուրքերեն՝ տպագրության թույլտվության վերաբերյալ։*

սի ամենայն Հայոց: Հրամանաւ իշխանազնեայ տեառն Յովսեփայ առաքելաշաւիղ արքի եպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց, և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսաց: Արդեամբք և ծախիւք Նոր Ջուղայեցի Բաշխումեանց տէր Հայրապետի որդի բարեպաշտ պարոն Աստուածատուրին: Յամի տեառն 1786, փետրվարի 5, իսկ ի թուականութեան Հայոց՝ ՌՄԼԵ: Ի Սանկտպետրբուրգ, ի տպարանի Խալդարեանց Խօջամալի որդի պարոն Գրիգորին: Հրամանաւ կառավարչացն բարեկարգութեան:

341 էջ (չափ. 21×13.4 սմ): Տպագր.: Վերջում՝ «Յիշատակարան սրբոյ մատենիս» (էջ 341), որ է՝

«Փառք... մինչ Հայր մերիւ առ տէր յիշման արժանի համարեսջիք զՋուղայեցի Բաշխումեանց տէր Աստուածատուրն, և զեղբայր նորին զԿարապետն, և զկողակից նորին զԴիշխաւնն, և զդուստր նորին զՀռիփսիմայն. որք արդեն հանգուցեալք են ի Քրիստոս. և զկենդանի որդիսն նորին զպարկեշտակենցաղ և զերյարգելի զտէր Հայրապետն, և զպարոն Յովակիմն, և զուստերս տէր Հայրապետին զպարոն Սահակն, զպարոն Գրիգորն,- և զհանգուցեալ Ոսկանն. և զդստերս նորին զբարեպաշտուհի Վառվառն և զհանգուցեալ Նունիայն: Նաև յիշեսջիք զարժանին յիշման զանդրանիկ որդին վերոյ յիշեցեալ տէր Հայրապետին՝ զբարեպաշտօն պարոն Աստուածատուրն, որ ծախիւք իւրովք ետ տպել զփրկարար մատեանս» են:

Նմուշ՝ Պետ. Մատ. հն. 954:

— Աւետարան Ճաշու և տօնք իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարւոջն ըստ նորոյ Տօնացուցին: Յամի ընտրութեան ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց՝ տեառն Գէորգայ արքի եպիսկոպոսի Բռուսացւոյ: Եւ յառաջնորդութեան Հայոց Վրաստանի և Իմէրէթի և գաւթելոց ի Տաճս՝ տեառն Մակարայ արքեպիսկոպոսի: Ի 1867 ամի: Տփխիս: Ի տպարանի Համբարձումայ Էնֆիաճեանց և Ընկ.:

278 էջ (չափ. 23.6×14.8 սմ): Տպագր.: Վերջում՝ «Յիշատակարան տպագրութեան սրբոյ Աւետարանիս» (էջ 278), որում ասվում է, որ

«...ի տպագրութեան Ճաշու Աւետարանիս թէպէտև առաջնորդ կալաք զճաշու Աւետարանն տպագրեալ ի Ս. Պետերբուրգ ի 1786 ամի, սակայն զոյգ ընդ նմին ունէաք առաջի աչաց առ ի համեմատութիւն զԱւետենի Աւետարանս տպագրեալս ի Կ. Պոլիս ի 1805 ամի, և ի Տփխիս՝ ի 1842 ամի, ևս և զնոր Կտակարանն տպեալ ի Կ. Պոլիս ի 1823 ամի» են:

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 9112:

— Աւետարան Ճաշու և տօնք իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարւոջն ըստ նորոյ Տօնացուցին: Եւ Տօնացոյց ամենայն շարժական և տեղափոխ տօնից: Ի հայրապետութեան ս. էջմիածնի՝ տ. տ. Գէորգայ վեհափառ կաթուղիկոսի: Հրամանաւ տ. տ. Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի և պատրիարքի ս. Երուսաղէմայ: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. տ. Պօղոսի սրբազան արքեպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, յԵրուսաղէմ, 1868—ՌՅԺԷ:

275 էջ (չափ. 20.7×13.7 սմ): Տպագր.:

Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 11079:

— Աւետարան իւղաբերից, ի պէտս և ի զարդ Հայաստանեայց սուրբ եկեղեցեացն Հայոց: Ի հայրապետութեան տեառն Երրորդ Ներսիսի առաքելաշաւիղ նորապսակ կաթուղիկոսի ամենայն Հայոց: Ի Կալկաթա, յԱրծիւ տպարանի Պօղոսի Վիշէնեան Կոստանդնուպոլսեցւոյ, 1847:

20 էջ (չհամարակալված, չափ. 32×17 սմ): Անվանաթերթը գտնվում է 7-րդ էջի վրա: Իսկ 1-ին և 3-րդ էջերի վրա գտնվում է ընծայականը, որ է՝

«Ընծայէ խոնարհութեամբ ի յիշատակ առ բարեպաշտ և հայրենասէր առատապարգև պայազատ աղայ Յովանջան էլիազեանց ի Կալկաթա: Ի պատիւ բարերարութեանն տպարանիս, ի նշան երախտագիտութեան ընծայէ խոնարհութեամբ Պօղոս Վիշէնեան»:

Նմուշ՝ Կ. Պոլիս, Հայոց Ազգ. Պատրիարքարան:

— Աւետարան իւղաբերից չորից սուրբ աւետարանչաց: Ըստ կարգաւորութեան Հայաստանեայց ուղղափառ ս. եկեղեցւոյ ամենայն յարութեան կիւրակէից ընթեռնու ըստ ձայնին: Ի հայրապետութեան սուրբ էջմիածնի՝ տեառն տեառն Գէորգայ Դ. վեհափառ կաթողիկոսի: Հրամանաւ տեառն Եսայեայ սրբազան արքեպիսկոպոսի և պատրիարքի սուրբ Երուսաղէմայ: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Ներսիսի սրբազան արք եպիսկոպոսի: ՅԵրուսաղէմ, ի տպարանի առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, 1875:

13+[3] էջ (շարվ. 32×19 սմ)։ Պակրգ.։
Նմուշ՝ Կ. Պոլիս, Հայոց Ազգ. Պատրիարքարան։

— Աւետարանք իւղաբերից բստ չորից աւետարանչացն: Հրամանաւ Սինոդի սրբոյ էջմիածնի: Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթուղիկէ էջմիածնի, ՌՅԼԳ—1883:

8 էջ (շարվ. 32×23.5 սմ)։ Պակրգ.։
Նմուշ՝ ՀԳ 22/Ա—76։

— Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: (Իւղաբերից, Հանգստեան, Բժըշկութեան, Տաճարի և Խաչելութեան): Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթուղիկէ էջմիածնի, 1892:

36 էջ (շարվ. 25.6×17.2 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 25483։

—Աւետարան իւղաբերից չորից սուրբ աւետարանչաց: Ըստ կարգաւորութեան Հայաստանեայց ուղղափառ ս. եկեղեցւոյ ամենայն յարութեան կիւրակէից ընթեռնու բստ ձայնին: Ի հայրապետութեան ս. էջմիածնի՝ տ. տ. Մկրտչի Ա. վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ պատրիարքի սրբոյ Երուսաղէմի՝ տ. Յարութիւն սրբազան արք եպիսկոպոսի: Եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ՝ տ. Մաղաքիայ սրբազան արք եպիսկոպոսի: Ի տպարանի առաքելական ս. աթոռոյ Սրբոց Յակովբեանց, յԵրուսաղէմ, 1900:

13 էջ (շարվ. 31.8×19.6 սմ)։ Պակրգ.։
Նմուշ՝ ԱԿԳ։

— Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Իւղաբերից, Հանգստեան, Բժըշկութեան, Տաճարի, Խաչելութեան, Անդաստանաց, Քառասնօրեայ Գալստեան, Ս. Զատկի, Խաչվերացի և այլն և այլն: Վաղարշապատ, տպարան մայր աթոռոյ սրբոյ էջմիածնի, 1906:

50 էջ (շարվ. 26.3×16.2 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 28229։

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանում գտնվող ուրիշ երեք անհայտ տպագրություններ մասին մեզ հետևյալ տեղեկությունները է հաղորդել Գ. Բամպուքճյանը.

—«Իւղաբերից Աւետարան, առանց անուանաթերթի (բազմաթիւ օրինակներ կան), Կ. Պոլիս, տպ. Արապեան, ԺԸ դարու վերջերը կամ ԺԹ դարու սկիզբները. 10 էջ (9 էջ միայն համարակալուած), 2 էջ՝ չհամարակալուած. 4 աւետարանիչներու զատ զատ պատկերները կան. շարուածք՝ 33.5×19.5 սմ. էջերը զարդափակ են. 1818-ի Սաղմոսին հետ զարդերը նոյնն են»։

— «Իւղաբերից Աւետարան, առանց անուանաթերթի (բազմաթիւ օրինակներ կան), հաւանաբար 1850 թուականներէն, Կ. Պոլիս, տպ. Արապեան. աւետարանիչներուն պատկերները աւետարաններուն սկիզբը կը գտնուին, իւրաքանչիւրին տակը՝ ի վիմագրատան Արապեանց արձանագրութիւնը կայ. 9 թերթ կամ 18 էջ. մէջը չհամարակալուած էջեր կան. շարուածք՝ 31.5×21 սմ»։

— «Իւղաբերից Աւետարան. Երուսաղէմ. անուանաթերթը ինկած է. մէկ օրինակ միայն կայ Պատրիարքարանը. 1870—1880-ական թուականներուն լոյս տեսած պիտի ըլլայ. էջերուն շուրջի զարդերը և պատկերներուն տակի լատինատառ արձանագրութիւնը նոյնն է 1875-ի տիպին հետ. համարակալուած էջեր՝ 13, չհամարակալուածներով միասին՝ 20 էջ. շարուածք՝ 31.5×19.5 սմ»։

ԺԲ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Տպ. Ամստերդամ, 1698 թ.

Գործք առաքելոց: Թուղթք եւանեւլոյն Պօղոսի առաքելոյ: Թուղթք կաթուղիկեայց: Տեսիլք Յօհաննու: *Առանց տեղի և տարեթվի, 1—537 էջ։ Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Ամստերդամ, 1698 թ.։*

Այլ տպ. Վենետիկ, 1710 թ.

Նոր Կտակարան, պարունակող զԳործս առաքելոց և զԹուղթս Պօղոսի և կաթուղիկեայց, և զՅայտնութիւն Յոհաննու: *Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1710 թ.։*

Այլ տպ. Վենետիկ, 1751 թ.

Նոր Կտակարան, պարունակօղ զԳործս առաքելոց, զԹուղթս Պօղոսի, զԹուղթս կաթուղիկեաց, և զՅայտնութիւնն Յօհաննու: Տպագրեցեալ աշխատասիրութեամբ Սարգսի արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ: Ի հայրապետութեան Հայոց ի սուրբ էջմիածին՝ տեառն Ղազարու կաթուղիկոսի: Յամի

տեառն 1751, և Հայոց՝ ՌՄ: Ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

526 էջ (չափ. 11×6.6 սմ)։ Պտկրզ.։ Սկզբում ունի՝ «Համառօտ զեկուցումն բանասիրաց վասն հետևեալ գրեանց Նորոյ Կտակարանի, առաջաբանօրէն»: *Վերջում՝* «Նախադրութիւն Հերոնիմոսի քահանայի ի Նոր Կտակարանս»։

Նմուշ՝ Վենետիկ, Մ. Ղազար։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1771 թ.

Գործք առաքելոց: Թուղթք երանելոյն Պօղոսի առաքելոյ: Թուղթք կաթուղիկեայց: Տեսիլք Յօհաննու: Տպագրեցեալ ի հայրապետութեան գերագահ աթոռոյ սրբոյ էջմիածնի՝ տեառն Սիմէոնի գերերջանիկ սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Պօղոսի վեհափառ վարդապետի: Ի Կոստանդնուպօլիս, հրամանաւ նորին սրբազան պատրիարգի՝ տեառն Գրիգորի վսեմախոհ վարդապետի, ի տպարանի Պետրոսեան Ստեփաննոսի, ի թուին Քրիստոսի 1771, և Հայոց՝ ՌՄԻ:

656 էջ (չափ. 13×8 սմ)։ Պտկրզ.։ Վերջում կարդում ենք.

«Մանիր ո՞վ աստուածասէր ընթերցող երբ (?) տեսեալ մեր ի զանազան բարբառս կտակարանիս խորագրիք ճոխացեալ, ուստի ոչ սակաւ ըղձանօք յօժարեցան ոմանք ի բարեպաշտ անձանց մերոցն ևս նոյնպիսանալ, եղեալ ուրեմն առաջի զլատինական, զգաղղիական և զիտալական կտակարանսն, յորոց ամենեին ոչ միապէս էին ընթացք խորագրաց, որոց ընտիր օրինակացն միայն հետախոյզ եղեալ՝ թարգմանեցաք ի հայս, հրամանաւ տեառն Գրիգորի մեծի սրբազան պատրիարգի Կոստանդնուպօլսոյ»։

Հիշատակարանում՝ «Անհատ գոհութիւն... շնորհեաց մեզ նուաստիցս կար՝ հասանիլ սրբոյ մատենիս տպմանն ի կատար յոյժ զգուշաբար՝ ըստ առաւել ընտիր օրինակի տպագրեցելոյ. իսկ յաւէտ քան զառաջին օրինակսն՝ սա շքեղազարդ յօրինմամբ իւրաքանչիւր գլխոցն խորագրովք բարգաւաճեալ. զորս մեզ նորոգ թարգմանութեամբ ընծեռեաց Կոստանդնուպօլսեցի բարեբարոյ Յարութիւն դպիրն Սրապիոնեան յօգուտ և ի շինութիւն մերազնեայց» ևն։

Նմուշ՝ Երևան, սեփականութիւն Լ. Ա. Հովհաննիսյանի։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1788 թ.

Գործք առաքելոց: Ընդ որս և Չորեքտասան Թուղթք երանելոյն Պօղոսի առաքելոյն, և Թուղթք կաթուղիկեայց, և Տեսիլք Յօհաննու: Տպագրեցեալ ի հայրապետութեան գերագահ աթոռոյն սրբոյ էջմիածնի՝ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Յովակիմայ երջանկափայլ վարդապետի: Վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ սրբազան արքի եպիսկոպոսի՝ տեառն Զաքարիայ ազգասէր կարդացեալ աստուածաբան պատրիարգի: Ի թուին Հայոց՝ ՌՄԼԷ, փետր. ԻԱ: Ի տպարանի Յոհաննիսի և Պօղոսի:

476 էջ (չափ. 13.5×8.4 սմ)։ Պտկրզ.։ Վերջում՝ «Յիշատակարան» *(էջ 476), որ է՝*

«Շնորհիւ...։ Արդ՝ ո՞վ բարեմիտ ընթերցողք սրբոյ մատենիս այսորիկ, ի հանդիպիլն ձեր սոյնոյ գրքկանս՝ յիշեսջիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւից, զհանգուցեալ հայրն իմ զմահտեսի Աստուածատուրն և զիս՝ զորդի նորին զՅոհաննէսս, հանդերձ բարեջան և բազմաշխատ որդւովն իմով տիրացու Պօղոսիւ, և միւս որդւովս՝ տիրացու Յարութիւնիւ, որ շարեաց զգիրս կապարեայս։ Յիշեսջիք և զմրահար մշակսն գործարանիս՝ Բալուցի Տիրատուրի որդի տիրացու Զաքարն, և զՄելքոնի որդի տիրացու Յոհաննէսն, և զհամայն աշխատողս սորին»։

Նմուշ՝ ՀԳ հն. 498։

Այլ տպ. Վենետիկ, 1789 թ.

Գործք առաքելոց: Թուղթք Պօղոսի առաքելոյ: Թուղթք կաթուղիկեայց: Յայտնութիւն Յովհաննու: *Տես վերևում՝ ՆՈՐ ԿՏԱԿ. ԼՐԻՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ, Վենետիկ, 1789 թ.։*

Այլ տպ. Վենետիկ, 1801 թ.

Գործք առաքելոց: Թուղթք Պօղոսի առաքելոյ: Թուղթք կաթուղիկեայց: Յայտնութիւն Յոհաննու առաքելոյ: Տպագրեալ յամի 1801, ի մարտի 1, և ի թուականութեանս Հայոց՝ ՌՄԾ: Ի հայրապետութեան տեառն Յովսեփայ Հայոց կաթուղիկոսի: Ի Վէնէտիկ, ի վանս Սրբոյն Ղազարու: Հրամանաւ մեծաւորաց:

432 էջ (չափ. 13.5×7.3 սմ)։
Նմուշ՝ Պետ. Մատ. տպագիր 476։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1802 թ.

Գործք առաքելոց: Ընդ որս և Չորեքտա-

— *1936, ապրիլ-մայիս, № 3, էջ 8—10.*— «Աստուածաշնչի հայ թարգմանութեան հազարհինգհարիւրամեակը»: *Ստորագր.՝ Գարեգին Հովսեփյան: Ճառ, արտասանված 1936 թ. մարտի 29-ին՝ Սորբոնի ամփիթատրոնում (Փարիզ)*:

ԱՊԱԳԱՅ (*Փարիզ*).

— *1935, մարտ 10, ԺԵ տարի, № 92.*— «Մեր այսօրուան տօնը»: *Խմբագր. հոդված՝ 1500-ամյակի տոնակատարության (մարտի 10, Փարիզ) առթիվ*:

— *1935, մարտի 13, № 94.*— «Ս. Գրքի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի հանդէսը [Փարիզում, մարտի 10-ին]»: *Ստորագր.՝ Պեմոլ*:

— *1935, մարտի 15, № 96.*— «Աստուածաշունչի թարգմանութեան 1500-ամեայ յոբելեանի տօնը Փարիզի մէջ [մարտի 10-ին]»:

— *1935, մարտի 20, № 100.*— «Ս. Գրքի 1500-ամեակը Թաւրիզի մէջ [փետր. 24-ին, «Կուլտուրական ակումբ»-ում]»: *Ստորագր.՝ Գ. Շահնյան*:

— *1935, մայիսի 12 և 14, № № 145—146.* — «Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան ԺԵ-րդ դարադարձի յոբելինական հանդէսները Թեհրանում [մարտի 1-ին, ապրիլի 4-ին և 6-ին]»: *Ստորագր.՝ Ա. Ա.*:

— *1935, հունիսի 6, № 166.*— «Թարգմանչաց կիրակին Մխիթարեան նախաձեռնութեամբ [մայիսի 26-ին Սերի Մուրատյան վարժարանում]»: *Ստորագր.՝ Կ. Մ. Ա.*:

— *1935, հունիսի 9, № 169.*— «Աստուածաշունչի թարգմանութեան ԺԵ-րդ դարադարձի յոբելինական հանդիսութիւնները Պէյրութի մէջ [մայիսի 12-ին և 19-ին]»:

— *1935, հոկտ. 25, № 283.*— «1500-ամեակը Վիեննայի մէջ [հոկտ. 13-ին և 20-ին]»: *Ստորագր.՝ Եղիշե քհ.*:

— *1935, հոկտ. 26, № 284.*— «Պրիւքսէլն ալ տօնեց 1500-ամեակը [հոկտ. 20-ին]»:

— *1935, հոկտ. 31, № 288.*— «Սուրբ Գրոց թարգմանութեան յոբելեանը Լիւքսէմպուրկի եկեղեցիին մէջ [հոկտ. 27-ին]»: *Ստորագր.՝ Ս. Պ.*:

— *1935, նոյ. 5, № 292.*— «Սուրբ Գրոց թարգմանութեան 1500-ամեակը Պուքրէշի մէջ [հոկտ. 27-ին]»:

— *1935, նոյ. 6, № 293.*— «Սուրբ Գրոց թարգմանութեան 1500-ամեակի առթիւ մեծաշուք հանդիսութիւններ Փլովտիվի մէջ [հոկտ. 27-ին]»:

— *1935, նոյ. 14, № 229.*— «Յոբելինական հանդէս Ս. Գրոց թարգմանութեան 1500-ամեակի առթիւ [Սենտ-էտիեննում, հոկտ. 11-ին]:

— *1935, դեկտ. 14, № 325.*— «Աստուածաշունչը»: *Ստորագր.՝ Ա. Ա.*:

— *1935, դեկտ. 25, ԺԶ տարի, № 34.*— «ԺԵ դարադարձ Աստուածաշունչի թարգմանութեան. պատարագ և հանդէս Վենետիկի մէջ [դեկտ. 25-ին]»: *Ստորագր.՝ Հրաչ Քաջարենց:*

ԱՐԱՔ *(Բուխարեստ).*

— *1935, հունվ. 31, № 270.*— «Մեծ դարադարձի տօնակատարութեան համար նախնական աշխատանքներ»:

— *1935, փետր. 3, № 271.*— «Կալա-Կալակրիօնի բանախօսութիւնը Աստուածաշունչի մասին»:

ԲԱԶՄԱՎԷՊ *(Վենետիկ).*

— *1935, էջ 49—54.*—«Աստուածաշունչն և Վարդանանք»:

— *1935, էջ 113—116.*— «Մխիթար՝ Ս. Գրքի 1500-ամեակի լոյսերուն մէջ»:

— *1935, էջ 177—181.*— «Սամ. Մուրատեան վարժարանը կը տօնէ Աստուածաշունչի հայկ. թարգմանութեան հազարհինգհարիւրամեակը»: *Ստորագր.՝ Վանատուր:*

— *1935, էջ 289—291.*— «Հազարհինգհարիւրամեայ յոբելեան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան»:

— *1935, էջ 453—460.*— «Աստուածաշունչի 1500-ամեայ յոբելեանը Վենետկոյ մէջ»:

ԶՈՒԱՐԹՆՈՑ *(Փարիզ).*

— *1937, էջ 194—195.*— «Աստուածաշունչի թարգմանութեան 1500-ամեակը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ *(Նյու-Յորկ).*

— *1935, հոկտ. 26, № 43, էջ 1023.*— «Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան յոբելեանը [Նյու-Յորկում, հոկտ. 13-ին]»:

— *1935, նոյ. 9, № 45, էջ 1073.*— «Աստուածաշունչի թարգմանութեան 1500-ամեակը [Դիտրոյտում՝ հոկտ. 27-ին և Ֆաուլըրում՝ հոկտ. 13-ին]»:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ *(Վիեննա).*

— *1935, էջ 449—454.*— «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան 1500-ամեակին»: *Ստորագր.՝ Ն. Ակինյան:*

— *1935, էջ 617—626.*— «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան 1500-ամյակը Վիեննայի մէջ»: *Ստորագր.՝ Ն. Ակինյան:*

ՀԱՍԿ *(Անթիլիաս).*

— *1935, էջ 43—44.*— «Հայ Աստուածաշունչի ԺԵ դարադարձը Երուսաղէմի մէջ»:

— *1935, էջ 59—60.*— «Յոբելեան Հօմսի մէջ (Քաղուած Հօմսի Յոբելինական Յանձնախումբի Տեղեկագրէն)»:

— *1935, էջ 64—67.*— «Ս. Գրոց թարգմանութեան դարադարձի հանդէսը Պէյրութի մէջ»:

— *1935, էջ 67—69.*— «Ոսկեդարու խորհուրդը»: *Ստորագր.՝ Շահէ արք. [Գասպարյան]:*

Արտատպ. (քաղված) տես՝ Պայքար, *1935, հուլիսի 3 և 4, №№ 155 (8295) և 156 (8296):*

ՄՇԱԿ *(Ֆրեզնո).*

— *1935, մարտի 1 և 5, №№ 951—952.* — «Ոսկեդարուն ոսկեղէն տօնը»: *Ստորագր.՝ Քուրմ:*

—*1935, դեկտ. 17, № 1034.*— «Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 15-րդ դարադարձը»:

ՅԱՌԱՋ *(Փարիզ).*

— *1935, մարտի 10, № 2750.*— «Յոբելեան հայերէն Աստուածաշունչի»: *Ստորագր.՝ Շ. Ն.:*

— *1935, մարտի 10 և 12, №№ 2750 և 2751.*— «Քանի մը նկատողութիւններ օրուան տօնին առթիւ»: *Ստորագր.՝ Մ.:*

— *1935, մարտի 12 և 13, №№ 2751 և 2752.*— «Աստուածաշունչի թարգմանութեան 1500-ամեակը Փարիզի մէջ [մարտ 10-ին]»:

— *1935, մարտի 30, № 2767.*— «Աստուածաշունչի հայ թարգմանութեան 1500-րդ տարեդարձը»: *Թարգմանված է ռումիներեն* «Curentul» *թերթից:*

— *1935, նոյ. 5, № 2953.*— «Ս. Գրքի թարգմանութեան 1500-ամեակը հայերէն և գերմաներէն բանախօսութիւններով [Բեռլինում, հոկտ. 20-ին]»: *Ստորագր.՝ Ե. Մ.:*

ՊԱՅՔԱՐ *(Բոստոն)*.

—1935, հունվ. 8, № 6 (8147).— «Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը»: *Ստորագր.՝ Վ. Մ. Քյուրքճյան:*

— 1935, նոյ. 13, № 265 (8405).— «Հայը և իր Աստուածաշունչը»: *Ստորագր.՝ Մ. Հ. Պուճիգանյան:*

ՍԻՈՆ *(Երուսաղեմ)*.

— 1935, էջ 97—99.— «Ս. Յակոբի ներսէն. Առաջին հանդէս ժե դարադարձի Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան»:

— 1935, էջ 259.— «Ս. Յակոբի ներսէն. Երկրորդ հանդէս ժե դարադարձի Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան»:

— 1935, էջ 360—362.— «Երրորդ և վերջին հանդէս Սրբոց Թարգմանչաց և Աստուածաշունչի թարգմանութեան ժե. դարադարձի տօնակատարութեան»:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ *(Թեհրան)*.

— 1935, ապր. 7, № 186.— «Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան ժե-րդ դարադարձի յոբելեանական հանդէսը Թեհրանում»:

ANI *(Բուխարեստ)*.

— 1935, Decemb. (anul I, vol. I).— „O comemorare istorică".

NEAMUL ROMÂNESC *(Բուխարեստ)*.

— 1935, Noemb. 6 şi 7.— „1500 ani de la traducerea Bibliei în Armeneşti". *Ստորագր.՝* N. Iorga.

ՀԱՎԵԼՎԱԾ

Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի: Տպագրեցեալ վեհափառ հրամանաւ տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի թուականիս՝ 1228, յունվարի ժ: Ի տպարանի Աստուածատուրի:

384 էջ (շարվ. 12.8×7.7 սմ): Պտկրդ.։ Շարվածքը նման է նույն տպարանի 1758 և 1776 թթ. հրատարակությունների էջ առ էջ, տող առ տող։ Հավելվածի նյութերում՝ հատվածներ «Նարեկ»-ից և Առաքել վրդ.-ի «Բանք սաղմոսիս» տաղը։ Վերջում՝ «Յիշատակարան տպողի» (էջ 384), որ է՝

«Փառք...։ Տպագրեցաւ եղև Սաղմոսարանս... ի պատրիարգութեան սուրբ աթոռոցն Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ՝ տեառն Յովակիմայ և տեառն Զաքարիայ աստուածաբան երջանիկ վարդապետաց։ Արդ՝ ի վայելել ձեր զսոյն բազմախորհիկ սեղան դաւթեան, յիշեսջիք ի Քրիստոս զհանգուցեալ հաւն մեր Աստուածատուր, զհայրն մեր Յօհաննէս և զեղբայր մեր Կարապետն. և ընդ նոսին՝ զմեզ Եփրեմ և Սահակ երկոսին եղբարս՝ ծնողիւ մերով Սողոմէիւ։ Նաև՝ զտէր Անտօնն գրաշար՝ հանդերձ Գրիգոր [և] Մարիամ հանգուցեալ ծնողօքն։ Եւ զՄանազկերտցի տիրացու Կիրակոս մելանահար, որ և յիշողքդ յիշեալ լիջիք ի տեառնէ մերմէ, ամէն»։

Նմուշ՝ ՀԳ։

ԱՍՏՈՒԱԾԵՊՈՎ

Տես՝ ԱՍԱՊՈՎ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՐԳՈՒԼԼԱՀ ՄԵՐԳՆԵՑԻ

Վերջին ստացողն է Հալեպի Քառասուն-մանկունք եկեղ. № 6 ձեռագրի, որ է «Սաղմոս-Շարական-Ժամագիրք», գրված 1319 թ.։ Ձեռագրի վերջում Աստուածատուրն ունի հիշատակարան՝ 1671 թվականով. «...Դարձեալ յիշեցէք զստացող սորա զՄերտինցի Աստուածատուրս, մականունս Ապտըլա, որ ստացայ զսա և եդի յիշատակ ի դուռն Սուրբ Քառասունք եկեղեցւոյն ի թվին Հայոց ՌՃԻ» են[1]։ Սույն ձեռագրի 538բ էջում գտնվում է հետագայում ընդօրինակված մի երգ՝ «Արքունք եղերուք. | Արքունք և պատրաստք» սկզբնավորությամբ։ Արտ. Սյուրմեյանն ամբողջությամբ հրատարակել է այս երգը՝ նրա մասին գրելով հետևյալը. «Ըստ ամենայն հավանականության երգիս հեղինակն է ձեռագրիս վերջին ստացող՝ Հալէպցի տէր Աստուածատուր քհ. Ապտուլլահ»[2]։ Սակայն այս վերագրումն ըստ երևույթին չի արդարանում, որովհետև նույն երգը գտնվում է նաև Քառասուն-մանկունք եկեղ. № 60 ձեռագրում (էջ 432), որը 1649 թ. է ընդօրինակվել Հալեպում՝ Աբրահամ երեցի ձեռքով[3]։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱԿՆԵՑԻ ԵՒ ԱՌԱՔԵԼ ԱԿՆԵՑԻ

Հեղինակներ ժամանակագրական մի փոքր երկի, որն ընդգրկում է 1722—1808 թթ. Ակն քաղաքում և շրջակայքում տեղի ունեցած դեպքերը՝ կարևոր տեղեկություններ տալով ազգային կյանքի, տնտեսական կյանքի և երկրի ներքին իրադրության (հարկապահանջություն, ավարառություն, ավերածություն) մասին են։ Ժամանակագրության առաջին մասը գրել է Աստվածատուր Ակնեցին, որն սկսելով 1722 թ. Ակնի Ս. Գեորգ եկեղեցու հիմնարկությունից, ասում է. «Յայս տէֆթէրիկս ես անարժան Աստուածատուր դպիրս սահմանեցի որ ինչ անցք անցանի՝ զամենայն կարգաւ գրիմ վասն օգտի ի դիպող ժամու», և այնուհետև դեպքերի շարադրումը հասցնում է մինչև 1769 թվականը։ Այս մասում մեկ կամ մի քանի հատվածներ ավելացված են ումն Հոհան երեցի ձեռքով։ Ժամանակագրության երկրորդ մասը կամ շարունակությունը գրել է Առաքել Ակնեցին՝ նշելով. «Սակի վար անարժան տէր Առաքելս գրելոց եմ որքան անցք ան[ց]ցեն Աստուծով»։ Առաքելը սկսելով շարունակել դեպքերի արձանագրումը 1772 թվականին Ակն քաղաքի կամրջի այրման հիշատակությամբ՝ հասցնում է մինչև Միքայել վարդապետի մահը՝ 1808 թվականին։ Սույն ժամանակագրությունը որոշ կրճատումներով հրատարակել է՝ Հ. Ճանիկյանը, տես՝ «Հնութիւնք Ակնայ», Թիֆլիս, 1895, էջ 24—28։ Այստեղից արտատպելով՝ երկրորդ անգամ հրատարակել է Վ. Ա. Հակոբյանը, տես՝ «Մանր ժամանակագրություններ ԺԳ—ԺԸ դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 473—477։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՂԱՒՆԻ ՓԱՀՐԱՊԱՏԵՑԻ

Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ՝ 1729—1745 թթ.[1]։ Տես՝ ԲԱՂԷՐ ՕՂԼԻ,

---

1 Արտ. Սյուրմեյան, «Ցուց. հայ. ձեռ. Հալեպի...», հտ. Ա, Երուսաղեմ, 1935, էջ 12։

2 Արտ. Սյուրմեյան, «Նկարագիր Օշին Թագաւորի ձեռագիր Ժամագրքին 1319, Հալեպի Ս. Քառասնից եկեղեցւոյ ձեռագիրներէն թիւ 6», Անթիլիաս, 1933, էջ 49—50։

3 Արտ. Սյուրմեյան, «Ցուց. հայ. ձեռ. Հալէպի...», հտ. Ա, էջ 126։

1 Տես Հ. Թ. Տեր-Հովհանյանց, «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան», հտ. Բ, Նոր-Ջուղա, 1881, էջ 57—58։

«Ի վերայ Աղանի Աստուածատուր վարդապետին, ասացեալ ումեմնէ անուսումն ի գրոյ՝ ռամիկ գեղջուկ յառնէ»։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՐՃԻՇԵՑԻ կամ ՄԵԾՈՓԵՑԻ

Քաջբերունյաց գավառի Արճեշ քաղաքից, Աղբերկի որդի։ Ապրել է ԺԲ դարի վերջերում և ԺԳ-ի սկզբներում։ Եղել է Մեծոփա (Ս. Աստվածածին) վանքի վանահայր։ Մեզ հասել է Աստվածատուր Արճիշեցու կենսագրությունը, որի գրույցներից երևում է, որ նա պարսիկների կողմից կատարվող հալածանքների և ճնշումների դեմ կազմակերպվող դիմադրական շարժումների մեջ հանդես էր գալիս որպես հեղինակավոր անձնավորություն։ Այս անանուն կենսագրության մեջ հիշատակվող անցքերի մի մասը համառոտաբար բերվում է և Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ, «վասն վարդապետացն երևելեաց՝ որք էին ի կողմանս Վասպուրականի» խորագրված գլխում[1], սակայն կենսագրությունը ավելի ուշ ժամանակի գործ է, քան Գանձակեցու Պատմությունը, ուստի և թվում է, թե Կիրակոս Գանձակեցին և կենսագրությունը մի ընդհանուր աղբյուր ունեն։ Ըստ կենսագրության՝ Աստվածատուր Արճիշեցու հասարակական գործունեությունն սկսվում է 1201 թվականից, երբ նա իր սեփական ծախսով շինում (կառուցո՞ւմ, թե վերանորոգում) է Ս. Աստվածածին եկեղեցին, որից հետո «տեսեալ սատանայի զյառաջադիմութիւն ՝վարուց առաքինութեան նորա, սկսաւ պատերազմել ընդ նմա հանապազօր, երբեմն կրօնաւորօք և երբեմն աշխարհականօք և երբեմն անհաւատ ազգաւն Պարսից»։ Մխիթար Այրիվանեցին 1211—1221 թվականների միջև հիշատակում է Աստվածատուր Արճիշեցուն՝ ժամանակի հայտնի մարդկանց շարքում[2]։

* * *

Յայսմ վայրի յիշատակ է աստուածաբան վարդապետին Աստուածատրոյ Մեծոփայ վանից սուրբ ուխտին. «Այս երջանիկ և երանելի այրս Աստուծոյ՝ վարդապետս Աստուածատուր էր ի գաւառէն Քաջբերունեաց, յաստուածապահ քաղաքէն Արճիշոյ, որդի փոլով մեծատան և ճաւատարիմ առն ողորմածի, Աղբերիկ կոչեցեալ. որ և եռուն զորդիս իւրեանց յուսումն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1669, էջ 35բ—42ա։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 236, § 28։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 187—188։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԱՐԻԿՅԱՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Գրական-մշակութային գործիչ, ծն. Նոր-Ջուղայում 1738 թ.։ Եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, բայց գլխավորելով միաբանության մեջ եղած անջատողական շարժումը և, 1773 թ., անցնելով Տրիեստ (Ավստրիա), այնտեղ կազմակերպել է նոր միաբանություն, որը հետագայում փոխադրվել է Վիեննա և մեր օրերում հայտնի է Վիեննայի Մխիթարյան Միաբանություն անունով։ 1803 թ. ընտրվել է նույն միաբանության ընդհանրական աբբա։ Մեռ. 1825 թ.։ Հեղինակ է մի քանի երկերի։

Աստ. Բար.-ը սրբագրել ու ոճավորել է Հովհաննես Բոնայի «Կերակուր հաճանայից» *երկի հայ. թարգմանությունը, որ 1677 թ. կատարել էր Վարդան Հունանյանը, և տպագրության է հանձնել այն՝ Վենետիկում 1760 թ. (տես՝ ԲՈՆԱ)։ Իտալերեն բնագրի հիման վրա 1788 թ. սրբագրել է նաև Պետրոս դը լա Կրուայի* «Պատմութիւն մեծին Ճէնկիզխանի» *երկի հայ. թարգմանությունը, որ կատարել էր Մարգար Շահրիմանյանը (տես՝ ՊԵՏՐՈՍ ԴԸ ԼԱ ԿՐՈՒԱ)։ Լատիներենից թարգմանել է Կ. Բիլլուարտի* «Բովանդակութիւն սրբոյն Թովմայի» *երկը և մասամբ տպագրել այն՝ Տրիեստում 1788 թ., իսկ ավելի ուշ, վերանայելով ու լրացնելով այդ թարգմանությունը, տպագրել է Տրիեստում և Վիեննայում՝ 1810 և 1813 թթ. (տես՝ ԲԻԼԼՈՒԱՐՏ)։*

1 «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 172—173։

2 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», Հրատ. Ք. Պատկանյան, Պետերբուրգ, 1867, էջ 81։

Նրա հեղինակությունն են հետևյալները.

* * *

1. Համառօտ յայտյանդիմանութիւն երկուց ճշմարտութեանց, ընդդէմ երկուց մոլար դրութեանց: Առաջինն Վ. Հ. Միքայէլի Չամչեան՝ թէ Օձնեցին իցէ իմաստասէր հայրապետն Հայոց՝ վկայեալն ի սրբոց հարց մերոց: Երկրորդն՝ Վ. Հ. Մկրտչի Աւգերեան՝ թէ տետրակն Օձնեցւոյն իցէ ուղղափառ վարդապետութիւն և գրութիւն վերոյգրեալ իմաստասիրի: Արարեալ գերապայծառ գերապատիւ տեառն տեառն Աստուածատրոյ վարդապետի Բաբիկեանց արքեպիսկոպոսի սրբոյ էջմիածնի, և ընդհանրական աբբայի Միաբանութեանն Վեննայու: Ի Վեննա, ի տպարանի Հարց Մխիթարեանց, 1817=ՌՄԿԶ:

[Բ]+108 էջ (շարվ. 16×8.4 սմ):

2. Քաղուածք իմաստասիրական և տրամաբանական կանոնաց և այլ ուսումնական ծանօթութեանց: *(Անտիպ):*

3. Ուսմպետ իմաստասիրական: *(Անտիպ):*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ներս.— *«Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանութեան հարիւրամեայ գործունէութեան վրայ, 1811—1911», հետևյալ հրատ. մեջ.* Յուշարձան *(ժող.), Վիեննա, 1911, էջ 4—9 և 20—21:*

ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԺԵ դարի հեղինակ, որի մասին ունենք կենսագրական սակավ տեղեկություններ միայն: Քեռորդին էր նշանավոր Ովսանանց Հակոբ վարդապետի, որը Ոշտունյաց երկրից էր, ուստի և հավանաբար Ոշտունի էր նաև Աստվածատուրը: Գրել է Մկրտիչ Նաղաշի ընդարձակ կենսագրությունը մի Հայսմավուրքի վերջում՝ որպես հիշատակարան:

* * *

Յիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է քաջ քարտուղարն՝ առաքելական եպիսկոպոսն և աստուածաբան վարդապետն տէր Աստուածատուր, քուերորդի մեծ րաբունապետին Յակոբայ Ովսանանց. «Փառք... Ամենեցուն ճարտարապետն Աստուած, յառաջ քան զինելն ժամանակաց, ընտրեաց ի մարդկանէ զորս ինքն կամեցաւ...» *(հրատ. Խաչիկ Դադյան), տես՝* Արարատ, *1898, էջ 44—48:*

Հրատարակվել է Խ. Դադյանի սեփական ձեռագրերից:

Այլ տպ.— Յիշատակարան ձեռագիր Յայսմաւուրք գրոց. «Ամենեցուն ճարտարապետն Աստուած...», *տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 571—574:*

Վերջից թերի օրինակ է: Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից:

Այլ տպ. Յիշատակարան *են.* «Փառք...», *հետևյալ հրատ. մեջ. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 622—631:*

Հրատարակության համար օգտագործվել են Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերը. № 2748 (էջ 354բ—357բ), № 9004 (էջ 1ա—5բ) և № 2379 (էջ 244ա—262բ):

☐ *Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 784 (էջ 101ա):*

ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԵՐԶՆԿԱՑԻ

Վենետիկի Մխիթ. Մատ. № 207 ձեռագրի տերը՝ 1343 թվականին Երզնկայում[1]: Նույն ձեռագրում ունի մի քանի տաղավորներ՝ «Բանք աղերսականք առ սուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ» *(էջ 273բ, սկ.* «Աստուածածին մայր Քրիստոսի, և բարեխօս մարդկան ազգի»), «Աղերս մաղթանաց առ սուրբն Գրիգոր, լուսաւորիչն Հայաստանեայց» *(էջ 274ա),* «Այլ բանք աղերսական տաղաւոր» *(էջ 276ա, սկ.* «Աստուածատուր մեղօք մեռեալ գերի») *և* «Աղերս ի դիմաց ստացողին Աստուածատրոյ» *(էջ 279բ, սկ.* «Աստուածատուր վատթար և թարմատար»):

ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԹՄԲՈՒԿ [ԹՄԳԻԿ]

Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱՐԲԵՐԴԵՑԻ:

1 *Ձեռագրի հիշատակարանները տես՝ Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 173—176:*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԼԵՀԱՑԻ

Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱՐԲԵՐԴԵՑԻ

Կոչված Թմբուկ կամ Թմպիկ։ Սեբաստիայի արքեպիսկոպոս և Ս. Նշանի վանքի առաջնորդ 1701—1722 թթ.[1]*։ Հայտնի է նրա կողմից տրված մի վկայական, որով մասնավոր վարդապետության աստիճան է շընորհվել Ենիշեհիրցի Աբել վարդապետին. բնագիրը տես՝ Գր. Գալեմքյարյան, «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու» ևն, Վիեննա, 1915, էջ 251։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԹԱՅԵՑԻ

Հայոց նոր վկաներից, ծագումով ղալմուխ (կալմիկ)։ Մանուկ հասակում գերի տարվելով Խթայի կամ Խաթայի երկիրը (Չինաստան), այնտեղից գնվել է մի բաղիշեցի հայ վաճառականի կողմից, բերվել Հայաստան ու մկրտվելով կոչվել Աստուածատուր։ 1519 թվին, 18 տարեկան հասակում, թուրքերը նրան նահատակեցին, որպես իր հավատն ուրացած մահմեդականի[2]*։ Նրա նահատակությանը նվիրված տաղը տես՝ ԳՐԻԳՈՐ ԱՂԹԱՄԱՐՑԻ, «Տաղ Աստուածատուր Խթայեցոյ նահատակին»։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱՖԱՅԵՑԻ

Հայոց նոր վկաներից։ Այրվել է խարույկի վրա 1488 թ. Ղրիմի Կաֆա (այժմյան Թեոդոսիա) քաղաքում[3]*։ Նրան նվիրված տաղը տես՝ ԳՐԻԳՈՐ ԿԱՖԱՅԵՑԻ, «Տաղ Աստուածատուր նահատակին»։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿՈՒՏԻՆԱՑԻ

Հեղինակներից մեկն է «Կուտինահայ ժամանակագրության», որի մեջ նրա գրչին է պատկանում 1660-ական թթ. մի քանի դեպքերի նկարագրությունը[1]*։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԱՄԱԴԱՆԵՑԻ

ԺԸ դարի հեղինակ։ Եղել է Էջմիածնի կաթողիկոս (1715—1725 թթ.)։ 1721 թ. դիմումներ կատարելով շահի մոտ, վերացնել տվեց պարսկական պետության սահմաններում գործող խտրական այն իրավունքը, որից օգտվում էին մահմեդականություն ընդունող հայերը մյուսների նկատմամբ՝ ժառանգության հարցում, ինչպես և գլխահարկի (ջիզյա) վրա կատարվող հավելվածական այն բարդումները, որոնց տրվում էր թաֆավուր–ե ջիզյա *անունը։ Այս առթիվ նա երկիր վերադառնալու կոչ է ուղղել արևելահայ այն վաճառականներին, որոնք այդ հարստահարությունների հետևանքով հաստատվել էին ուրիշ երկրներում։ Դավիթ-բեգի ապստամբության շրջանում (1722 թվականից) Աստ. Համադանեցին դրականորեն է տրամադրվել դեպի այդ շարժումը և, Ռուսաստանի հետ հարաբերություններ ունենալու ամբաստանությամբ, հալածանքի է ենթարկվել պարսիկների կողմից։ Աստ. Համադանեցին թողել է մի քանի հատոր երկեր, որոնք մատենագրական վկայությունների քաղվածներ են՝ առարկայական դասավորությամբ, և մի շարք կոնդակներ՝ իր կաթողիկոսության շրջանից։ Մեռ. 1725 թ. Էջմիածնում և թաղվել Հռիփսիմեի տաճարի գավթում։*

* * *

Ա.— ԵՐԿԵՐ

1. Քրիստոսի նուաստ ծառայից ծառայ Աստուածատուր բանի սպասաւորս գումարեցի ի մի վայր զվկայութիւնս յԱստուածաշունչ գրոց, այսինքն՝ ի Հին և ի Նոր Կտա-

1 *Աղ. Աղեքսանդրյան, «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ», Վենետիկ, 1911, էջ 254—261։ —Հովհաննես Սեբաստացի, ի* Դիւան Հայոց Պատմութեան, *գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 406—408։*

2 *Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1537։ Նույնը՝ Բ տպ., Բեյրութ, 1960, § 1537։— Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան» հտ. Ա, Երևան, 1942, էջ 247—248, § 176։*

3 *Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1530։ Նույնը՝ Բ. տպ., Բեյրութ, 1960, § 1530։— Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 246, § 161։*

1 *Ա. Ալպոյաճյան, «Յուշամատեան կուտինահայերու», Բեյրութ, 1961, էջ 195—196։*

կարանաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիոնի, տինա՝ սակս քարոզչաց աստուածաբան վարդապետաց յոյժ պիտանիք և վայելուչք, ի փառս Քրիստոսի աստուծոյ և ի պատիւ մօր իւրոյ ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին. «Ակնառութիւն անպատշաճ, և ոչ Աստուած ակն առնու: Անիրաւութիւն դատաստանի մի՛ առնիցեն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3637, էջ 25—218:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1988՝ խոր. նույն (էջ 4ա—100բ). սկզբում ունի նյութերի ցանկ: Տես դարձյալ Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. № 26 = հին № 52 (էջ 45ա—93ա):

2. [Քրիստոսի նուաստ ծառայից ծառայ Աստուածատուր բանի սպասաւորս գումարեցի ի մի վայր զվկայութիւնս յԱստուածաշունչ գրոց...] «Յեսու է. Ափարայ ազաճութիւնն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1988, էջ 101ա—211բ (Թերի):*

Նույն բնույթի աշխատանք է, ինչ որ նախորդը, գրեթե միևնույն նյութերով, բայց՝ տարբեր կառուցվածքով: Սկզբում ունի նյութերի ցանկ: Խորագիր չունի: Այս բնագրին նախորդող 100բ էջում թեև գտնվում է մի խորագիր, բայց բացահայտ է, որ դա պատկանել է մի ուրիշ բնագրի, որովհետև նախ հատորի մամուլների նշումները ցույց են տալիս, որ նրանք տարբեր տեղերից են եկել ու պատահմամբ միացել և երկրորդ՝ խորագրի բովանդակությունը («Ժողովեցի... ի Յունաց, ի Հայոց և ի Լատինաց») չի համապատասխանում այս բնագրի բովանդակությանը, որը բացառապես Աստվածաշնչից է:

3. Քրիստոսի նուաստ ծառայից ծառայ Աստուածատուր բանի սպասաւոր, գումարեցի ի մի վայր զվկայութիւնս սրբոց վարդապետացն մերոց աստուածիմաստից և բանիբուն իմաստասիրաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիոնի, տինա՝ սակս քարոզչաց աստուածաբան վարդապետաց յոյժ պիտանիք և վայելուչք, ի փառս Քրիստոսի Աստուծոյ և ի պատիւ մօր իւրոյ ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին. «Նախ Դաւթի անյաղթ փիլիսոփայի ի Սահմանացն լուծմանց: ... Զի՞նչ է դիմակայութեամբ և դիմայարակայութեամբ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3281, էջ 98ա—100ա (Թերի):*

Բնագրի ընդօրինակության թերի լինելու պատճառով չի երևում, թե Դավիթ Անհաղթից բացի ուրիշ ո՛ր հեղինակներն են օգտագործված եղել:

4. Աստուածատրոյ Համադանեցւոյ իբրու բանասիրէ արարեալ ժողովածու գիրք՝ ի պէտս քարոզողաց և ի զբօսանս մանկանց եկեղեցւոյ, սկսեալ ՌՃԾԱ *(=1702)* թուին և աւարտեալ ՌՃԾԸ (=1709) թուոջն ի Վան քաղաքի. «Վկայութիւնք երանելւոյն Դիոնեսիոսի առ Տիմոթէոս եպս. եփեսացւոց՝ Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց բնախօսութիւնն: Աստուծոյ թաքնութիւնն թէ զինչ երբէք իցէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 56, էջ 3բ—222ա:*

Հատվածներ է պարունակում հետևյալ հեղինակներից. Դիոնեսիոս Արիսպագացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Գրիգոր Նազիանզացի, Արիստոտել, Պորփյուր, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և Գրիգոր Լուսավորիչ:

Աշխատության վերնագիրը, որն ավելի խոշոր նոտրգրով է գրված քան բնագիրը, հետագայում է ավելացվել և կարող է միևնույն ձեռքից լինել կամ չլինել: Սակայն ենթադրում ենք, որ հեղինակի ձեռքից է վերնագիրը, որի տակ կա նաև նրա կնիքը՝ «Աստուածատուր վարդապետ» մակագրությամբ:

⊛ *Երևանի Պետ. Մատ. № 1988 ձեռագրում գտնվում է նաև Աստուածատուր Համադանեցու աշխատություններից մեկի հետևյալ խորագիրը.* «Դարձեալ վկայութիւնք պիտանիք, հարկաւորք և կարելիք, ժողովեցի ես՝ Աստուածատուր Քս.ի նուաստ ծառայից դատապարտեալ ծառայս, ի գրոց աստուածաբան վարդապետաց ի Յունաց, ի Հայոց և ի Լատինացւոց, տինա՝ ի մեկնչաց և ի փիլիսոփայից գրոց» *են (էջ 100բ): Այն բնագիրը, որին պիտի պատկանած լիներ այս խորագիրը, այժմ բացակայում է, որովհետև*

ձեռագրում հաջորդ թերթերը պակասում են, ինչպես արդեն նշել ենք վերևում, § 2։ Իր բովանդակությամբ՝ այս խորագիրն արդեն չի համապատասխանում վերոհիշյալ §§ 1, 2 և 4 բնագրերին, քանի որ նրանց մեջ «ի գրոց... Լատինացւոց» քաղված ոչինչ չկա, իսկ § 3 բնագիրն այնքան թերի է, որ չի երևում, թե ո՛ր հեղինակներից է քաղված։

Բ.— ԿՈՆԴԱԿՆԵՐ

Հետևյալ կոնդակներից §§ 1—6-ը, որոնք Զմմառի դիվանից են և 1717 թ. Կ. Պոլսի համար նվիրակ նշանակված Կեսարացի Վրթանես վրդ. Ստեփանյանի գործունեության հետ են կապվում, մենք նկարագրում ենք ըստ Գր. Գալեմքյարյանի, «Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆեան», Վիեննա, 1908, էջ 209—211։

1. Կոնդակ, ուղղված «Տէր Վրդանէս աստուածաբան վարդապետին, որ է աջ բազուկ մեր և նեցուկ սրտի խմոյ նաև վաղեմի բուն բարեկամ մեր», որով նրան նվիրակ է նշանակում Կ. Պոլսի համար. անթվական, բայց կնքված՝ «ՌՃԿԴ» (1715) թվականը կրող կնիքով. տես՝ Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

2. Կոնդակ, ուղղված «Ղայսարու եղեալ գուլկեար վարպետներաց որ կայք բնակեալ ի յԱստուծոյ օրհնեալ մայրաքաղաքն Կոստանդնուպոլսի», որով հայտնում է, թե «մեր սիրելի որդի Վրդանէս վարդապետն, որ է սեփական ծննդական և սնդական ձեր Աստուծոյ օրհնեալ քաղաքէն», Կ. Պոլսի նվիրակ է կարգվել. գրված 18 փետր. 1716 թ. (ՌՃԿԵ). տես Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

3. Կոնդակ, ուղղված Կ. Պոլսի «Վէզիր խան եղեալ արևելեան և արևմտեան վաճառականաց», որով կարգադրում է Վրթանես վարդապետին հանձնել էջմիածնի գանձանակի արդյունքները. անթվական. տես՝ Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

4. Կոնդակ, ուղղված Կ. Պոլսի հայ երևելիներին, որով հայտնում է, թե պետք է նվիրակ Վրթանես վարդապետին հանձնվեն նվերներն ու էջմիածնի գանձանակի գումարները. գրված՝ 30 մարտի 1717 թ. (ՌՃԿԶ). տես՝ Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

5. Կոնդակ, ուղղված Կ. Պոլսի նվիրակ Վրթանես վարդապետին, որին ցուցմունքներ է տալիս՝ նրա պաշտոնի և պարտականությունների կապակցությամբ. գրված՝ Թիֆլիսից, 5 հոկտ. 1717 թ. (ՌՃԿԶ). տես՝ Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

6. Կոնդակ, ուղղված «առ Իստամպոլու նուիրակ Վրդանէս աստուածաբանութեան վարդապետ և հարազատ ս. Աթոռոյս, և առ վէքիլ և գանձապետ մահտեսի Կարապետ», որով հայտնում է, թե նախկին նվիրակ Մարտիրոս վրդ. Մեղրեցին, որ մեռած է, իր նվիրակության արդյունքները ամենևին չի ուղարկել էջմիածին, ուստի և կարգադրում է գրավել նրա ունեցած ստացվածքները և ուղարկել իրեն. գրված՝ 6 հոկտ. 1717 թ. (ՌՃԿԶ). տես՝ Զմմառի Անտոնյան միաբանության Դիվան։

7. Կոնդակ, ուղղված՝ «աստուածախնամ և քրիստոսապսակ աւրհնեալ բոլոր յերկրին Մոսկովու և դորին եղեալ լուսաւորչադաւան ամենայն քրիստոնէից, տերամբ զօրացեալ վաճառականաց և բնակաց», հայտնելով, որ Մինաս վրդ.ը «եկն մեծաւ հաւատով փափագանօք և խոնարհութեամբ ուխտ և երկրպագութիւնն մօրս լուսոյ հայրապետական աթոռոյս և տեսութիւն մեզ», և այս առթիվ «այս գիր վկայական և իբր նշան սիրոյ և առիթ աւրհնութեան ի մօրէս լուսոյ ամենայն եկեղեցայց (sic) և ի մերոյս հայրապետական մեծի պատուոյ իւրն շնորհեցաք». գրված՝ 23 հլս. 1716 թ. (ՌՃԿԵ). տես՝ Աշ. Հովհաննիսյան, «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը», Էջմիածին, 1921, էջ XXI—XXII։

Այլ տպ. տես՝ „Армяно-русские отношения в первой трети XVIII века“ (сборник документов, под ред. Ашота Иоаннисяна), т. II, ч. I, Ереван, 1964, стр. 358—359.

8. Կոնդակ, ուղղված «Ջուղայեցի և այլ յարևելական և յարևմտական... վաճառականացդ որք գտեղեալ կայք ի յաստուածակեցոյց քաղաքդ Վենետիկ», հորդորելով «քանի մի բեռ կանթեղ, ջամ և այլ շուշեղէն իրաց հոգալ և ուղարկել ի Զմիւռն քաղաք, ի ձեռն Նորին առաջնորդ Սիմէոն վարդապետին», գրված՝ Էջմիածնում, 19 հնս. 1718 թ. (ՌՃԿԷ). տես՝ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 562։

9. Կոնդակ, ուղղված՝ «օրհնեալ տանդ Յունաց գտեղեալ յարևելեան վաճառականացդ», հայտնելով, որ պարսից շահը, ընդառաջելով եղած դիմումներին, «քէսկուն և հաստատ յռաղամ է շաֆաղաթ արեր, թէ հէրկահ թուրքացածի տավան տինկլէմիշ չի լինի. ով ոք որ թուրքանայ՝ իւրն հաստատ կու հասանի, այլ ազգականէն ապրանք տավու չի առնէ. մանաւանդ որ Յերևանու օլքի վերայ եղեալ թաֆայութի ճէզիէն՝ ԵՃՁ (580) թումանն, զայն ևս, ըստ մեր յարգին, պախշել է թէսէտոխ արեր է, որ այլ պինպաթ ուզեն ոչ. երկուսի յռաղամն այլ եկն առ մեզ». հորդորում է, թե «չու արարեալ եկէք իւրաքանչիւր բնակութիւնս և հայրենական երկիրս անահ և անկասկած յումեքէ. ահա մեր դօլվաթլու խանն ևս կրկնակի հուքմ տուաւ քուլլի Յերևանու վերայ և Նախջուանայ տանն՝ հանդերձ խաս գեղերօքն, որ այլ այս տավաս ճէտիլ խլամի լինի ոչ, մինպաթ հաստատելոց է Աստուծով յամենայն ուրեք». գրված՝ Էջմիածնում, 10 նոյ. 1721 թ. (ՌՃՀ). տես՝ Երևանի Պետ. Մատ. Կթղ. դիվան, թղթ. 244, վավ. 255։

10. Կոնդակ, տրված «ի վերայ յարևելեան երկրեացդ (sic) *և լուսաւորչադաւան քրիստոնէիցդ, մանաւանդ Ս. Կարապետի և Թոմայի առաքելոյ Թեմի և վիճակի և նոցին գլուխ կարգեալ առաջնորդաց, աստուածաշէն և առաքելահիմն յեկեղեցեաց» են, հայտնելով, թե «առաքեցաք առ աստուածպաշտութիւն ձեր զհարազատ որդի մեր զԳալուստ վարդապետն, որ է առաջնորդ սրբոյ Նախավկային, հանդերձ այսու օրհնութեամբ և սրբոյն Ստեփանոսի Նախավկայի մասամբն, առ ի ծանուցանել բարեպաշտութեան ձերում և զանըմբերելի կրեալ վիշտն իւր, և հրաւիրել զձեզ առ ի օժանդակութիւն սրբոյ Նախավկայի վանիցն և խնդրել ի ձէնջ զաւրս, իբրև զլումայս այրւոյն... թերևս ողորմութեամբ ձերով վճարեսցէ զպարտս վանից». անթվական. տես՝ Երևանի Պետ. Մատ. Կթղ. դիվան, թղթ. 244, վավ. 256։*

11. Կոնդակ, ուղղված՝ Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցին։ Բնագիրը չի պահպանվել. կա միայն նրա ռուսերեն թարգմանությունը։ Եսայի կաթողիկոսին հայտնելով, որ թուրքերը հետզհետե ծավալում են իրենց տիրապետությունն Անդրկովկասում, նրան խորհուրդ է տալիս բանագնացների միջոցով հպատակություն հայտնել թուրքական հրամանատարին, քանի նրա զորքերը չեն հասել Գանձասարի շրջանը. գրված՝ 4 սեպտ. 1724 թ., տես՝ Г. А. Эзов, „Сношения Петра Великого с армянским народом“, С.-Петербург, 1898, стр. 378, № 244.

Այլ տպ. տես՝ „Армяно-русские отношения“, т. II, ч. II, Ереван, 1967, стр. 197—198.

12. Կոնդակ-կալվածագիր, որով հայտնում է, թե «Յոշականցիք իւրեանց այգոյցէն քսան այգի և հինգ ջաղացք ծախած էին վեզրին, իսկ մեք այս վերոյ գրեալ այգիքս և ջաղացքս յիւրեանց գնովն յետս առաք վեզրէն», և այդ այգիներից մեկը, որ Մխիթարի որդի Տեր խաչատրին էր պատկանելիս եղել, իր ասած գնով որպես սեփականություն վերադարձնում է նույն Տեր խաչատրի որդիներին. գրված՝ 1 հնս. 1722 (ՌՃՀԱ) թ. տես՝ Հայ. Աբրահամյան (հրատ.), «Կալվածա-

գրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր...», Երևան, 1941, էջ 79, № 59։

Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. Կթղ. դիվանի նյութերից (թղթ. 242, վավ. 20)։

⊠ Աստ. Համադանեցու անունով հիշատակվում են ուրիշ գրություններ ևս, որոնց բնագրերն այժմ չեն երևում։ Այսպես, ըստ Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրության, նա 1717 թ. մի նամակ է ուղարկել Կղեմես ԺԱ պապին[1]։ Թեև Ռոշքան այս նամակը համարում է «Թուղթ հնազանդութեան», բայց հաշվի առնելով որ հայոց կաթողիկոսի դիմումի հիման վրա շահ Սուլթան-Հուսեյնը 1718 թվակիր մի հրովարտակով (տես ստորև) արգելքներ է հարուցում լատին միսիոնարների գործունեության դեմ, պետք է հավանական համարել, որ Համադանեցին միսիոնարներին սանձահարելու հարցն էր ներկայացնում Հռոմի պապին։

Սիմեոն Երևանցին նշում է, որ Աստ. կաթողիկոսը «հոգացեալ ունի և օգտակար գրեանս արքունական և դատաւորական»[2], իր կաթողիկոսական իշխանության, Էջմիածնի ապահարկության և այլ հարցերով բազմաթիվ գրավոր դիմումներ է ուղղել պարսիկ և թուրք տիրակալների և նրանցից ստացել հրամանագրեր ու պաշտոնական այլ գրություններ, որոնք պահվում էին կաթողիկոսարանի դիվանում[3]։

Այդպիսիներից այժմ մեզ հայտնի են պարսից շահ Սուլթան-Հուսեյն թագավորի երկու հրովարտակները՝ Հիջրի 1128 և 1130 թվականով (1716 թ. նոյեմբեր/դեկտեմբեր և 1718 թ. հոկտեմբեր/նոյեմբեր)[4] և օսմանյան սուլթան Ահմեդ Գ-ի հրովարտակը՝ Հիջրի 1136 թվականով (1724 թ. մարտի 29)[5]։

---

1 «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 198։

2 Սիմեոն Երևանցի, «Ջամբռ գիրք», Վաղարշապատ, 1873, էջ 28։

3 Հմմտ. անդ, էջ 160—161 ևն։

4 Երևանի Պետ. Մատ. Կթղ. դիվան, արաբատառ վավերագրեր, թղթ. 1գ, վավ. 269 և 272։

5 Անդ, թղթ. 1գ, վավ. 291։

Գ.—ԱՍՏ. ՀԱՄԱԴԱՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

1. «Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թ.», Երևան, 1938, էջ 12, 14 և 22—26։

2. «Ջամբռ գիրք... համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 27—28, 160—161, 175, 183, 184, 187, 193—194, 201, 202, 209, 223, 229, 230, 241, 249, 250, 256, 257, 259, 260, 270 և 294։

3. „Г. А. Эзов. Сношения Петра Великого с армянским народом. Документы...", С.-Петербург, 1898, стр. 322—325 (№ 209) и 334—335 (№ 215).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 249—250, § 187։

Գալէմքեարեան Գր.— «Կենսագրութիւն Սարգիս արքեպ.ի Սարաֆեան և ժամանակին հայ կաթողիկէայք», Վիեննա, 1908, էջ 209—211։

Զամինեան Աբր.— «Հայոց եկեղեցու պատմութիւն», մասն Բ, Նոր-Նախիջևան, 1909, էջ 42—43։

Լեո— «Հայոց պատմություն», հտ. Գ, Երևան, 1946, էջ 124, 595, 601, 624, 639, 645, 647—648 և 701։

Հովհաննիսյան Աշ.— «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը», Էջմիածին, 1921, էջ 34, 62—63։

Հովսեփյան Գար.— «Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ—ԺԸ դարերում», տես՝ Հասկ (տարեգիրք), Անթիլիաս, Բ տարի, 1949—50, էջ 326—334։

Օրմանյան Մաղ.— «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, §§ 1917—1943։ Նույնի Բ տպ., հտ. Բ, մասն Գ, Բեյրութ, 1960, §§ 1917—1943։

Иоаннисян Ашот— „Историческое введение", հետևյալ գրքում. „Армяно-русские отношения в первой трети XVIII

века“ (сборник документов, под ред. Ашота Иоаннисяна), т. II, ч. I. Ереван, 1964, стр. XXI, LXXVI, LXXXIV.

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԵՆՆԵՑԻ

Տաղասաց, որի անունով ծանոթ է մի «աւետիս»: Ըստ երևույթին Չորրորդ Հայոց Հայնի կամ Հենի ավանից էր[1]*: Ինքնությունն անհայտ է: Հ. Տաշյանը նրան նույն է համարում այն Աստվածատուր Մեծոփեցու հետ, որի խնդրանքով Գրիգորիս Աղթամարցին գրել է իր* «Ծաղկունքն ասեն ճերիք արա» *տաղը*[2]*: Եթե ճիշտ է այս ենթադրությունը, ապա մեր տաղերգուն ապրած կլինի ԺԶ դարի առաջին կեսում: Այս տաղի՝ Երևանի Պետ. Մատենադարանում գտնվող ընդօրինակություններից հնագույնը՝ № 8968 ձեռագիրը 1556 թվականից է:*

* * *

Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է ծըննդեան, աւետիս,|Տեառըն մերոյ և յայտնութեան, աւետիս...», *տես՝ «Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1701, էջ 8—11:*

Այլ տպ.— Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Գիրք դպրութեան, և Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1709, էջ 70—73:*

Այլ տպ.— Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Գիրք դպրութեան և Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1714, էջ 117—119:*

Այլ տպ.— Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Գիրք դպրութեան, և Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1723, էջ 133—136:*

Այլ տպ.— Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Գիրք դպրության, և Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1738, էջ 162—164:*

Այլ տպ.— Տաղ աստուածայայտնութեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Գրքույկ որ կոչի Տաղարան», Կ. Պոլիս, 1740, էջ 169—172:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1788, էջ 241—243:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան հարուստ, վայելուչ և գեղեցիկ», Կ. Պոլիս, 1816, էջ 190—192:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան հարուստ, վայելուչ և գեղեցիկ», Օրթագյուղ (Կ. Պոլիս), 1825, էջ 190—192:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Օրթագյուղ (Կ. Պոլիս), 1850, էջ 201—203:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Թիֆլիս, 1856, էջ 172—174:*

Այլ տպ.— Տաղ ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ Մ. Միանսարյան (հրատ.), «Քնար հայկական», Պետերբուրգ, 1868, էջ 91—93:*

Հրատարակիչը տաղի հեղինակությունը վերագրել է Մովսես Քերթողին, բայց թե ինչ հիման վրա՝ հայտնի չէ:

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1882, էջ 183—185:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Բ տպ., Երուսաղեմ, 1895, էջ 187—189:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Գ տպ., Երուսաղեմ, 1907, էջ 187—189:*

Այլ տպ.— Ծննդեան. «Այսօր տօն է...», *տես՝ «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Դ տպ., Երուսաղեմ, 1949, էջ 236—238:*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8968՝* «Ճառ ծննդեան, ասացեալ ի յԱստ. վրդ.է Հեննեցւոյ» *(էջ 93բ—98ա), № 3386՝* ««Ասացաւ ճառս ի յԱստ. վրդ.է Հեննեցւոյ,

1 *Հմմտ. Ն. Ակինյան,* Հանդէս Ամսօրեայ, *1953, էջ 314:*

2 *Հմմտ. Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», էջ 1063:*

ի խնդրոյ Մինաս սարկաւագին» (էջ 100բ—104բ), № 695՝ «Տաղ ծննդեան Քս.ի աստուծոյ մերոյ, ասացեալ յԱստ. վրդ.է» (էջ 245բ—249ա). Մյուս օրինակները, որոնք անանուն են, կրում են «Տաղ ծննդեան», «Տաղ և աւետիս ծննդեան», «Տաղ ծննդեան և յայտնութեան», «Տաղ աստուածայայտնութեան», «Տաղ աւետեաց» և նման խորագրեր և կամ՝ անխոր. են. տես՝ № 41 (էջ 151ա—153ա), № 230 (էջ 12բ—13բ), № 1989 (էջ 197ա—199ա), № 1990 (էջ 9բ—10ա), № 2002 (էջ 5ա—6բ), № 2079 (էջ 210բ—211բ), № 2339 (էջ 264բ—265բ), № 3608 (էջ 16ա—16բ), № 4256 (էջ 8բ—9բ), № 5934 (էջ 1ա—2ա), № 5954 (էջ 10ա—10գ), № 5959 (էջ 105բ—106ա), № 6987 (էջ 171բ—172ա), № 7316 (էջ 1ա—1բ), № 7694 (էջ 4բ—5բ), № 7704 (էջ 7բ—9ա), № 7707 (էջ 112ա—115ա), № 7711 (էջ 25ա—27բ), № 8084 (էջ 344բ—345ա), № 8219 (էջ 124բ—125ա), № 8223 (էջ 140ա—140բ), № 8274 (էջ 106ա—107ա), № 8294 (էջ 132բ), № 8376 (էջ 149բ—151բ), № 8540 (էջ 35ա—36ա), № 8611 (էջ 130ա—133ա), № 8682 (էջ 51ա—53ա) են։ Տես դարձյալ Հալեպի Քառ. Մանկ. եկեղ. ձեռ. № 50՝ «Տաղ և ճառ ծննդեան և յայտնութեան... ի յԱստ. վրդ.է Հեճենցոյ ասացեալ» (էջ 8). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 745՝ «Ճառս ի Աստ. վրդ.է Հեճենցոյ ասացեալ ի խնդրոյ Մինաս սարկաւագին՝ վասն ծննդեան Քս.ի» (էջ 269ա), № 344՝ «Ճառ վասն ծննդեան ասացեալ ի յԱստ. վրդ.է» (էջ 47ա). Տյուբինգենի KUB Ma XIII 62 (fol. 98^{r}—99^{r}).

Տաղի տների քանակը տարբերվում է ձեռագիր օրինակների միջև և ըստ այնմ էլ՝ որոշ հրատարակությունների միջև։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԱՂԱՐԱՑԻ

Նոր վկա, 10 հունվարի 1710 թ.։ Բաղդասար դպիրը գրել է նրա վկայաբանությունն ու ներբողը, որոնք մեզ հայտնի չեն այժմ (Տես՝ ԲԱՂԴԱՍԱՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, պատմական երկեր)։

Հմմտ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԵՐԴԻՆԵՑԻ

Հայոց պատրիարք Կ. Պոլսի (1537—1550 թթ.) և Երուսաղեմի (1532—1542 և 1550—1551 թթ.)[1]։ Նրա անունով հայտնի է 1539 թվականի ծռազատկի առթիվ Լեհաստանի հայերին ուղղված մի կոնդակ, տես՝ Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 231—238։ Կոնդակը կրում է. «ՌԻԸ, նոյեմբեր Ը» թվականը, որն անշուշտ սխալ է, ինչպես նկատել են Մկ. Աղավնունին[2] և Ն. Ակինյանը[3]։ Վերջինս առաջարկել է տարեթիվը կարդալ՝ «ՌՇԼԸ», որ է 1538, բայց դիտելի է, որ այդ շրջանում ծռազատիկը հանդիպել է ոչ թե 1538, այլ 1539 թվականին։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ [ՆԵՐՍԵՍՈՎԻՉ]

Լեհահայ հեղինակ։ Հիշատակվում է նաև Աստ. Լեհացի անվամբ. իսկ լեհական գրականության մեջ հայտնի է Դեոդատ Ներսեսովիչ (Deodat Nersesowicz) անվամբ։ Նրա մասին կենսագրական տեղեկություններ են հաղորդում ժամանակակից հեղինակներ Ստեփանոս Ռոշքան[4], Ալոյիսիոս Պիդուն[5], և այլ աղբյուրներ[6]։ Ծն. է 1647 թ. Լեհաստանի

---

1 Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1547։— Նույնի Բ տպ., հտ. Բ, մասն Բ, Բեյրութ, 1960, § 1547։

2 «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 33։

3 Հանդէս Ամսօրեայ, 1930, էջ 369։

4 «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ Տարեգիրք եկեղեցականք» (հրատ. Հ. Ոսկյան), Վիեննա, 1964։

5 «Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ և զծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ և մերձակայ աշխարհաց», հետևյալ հրատ. մեջ. «Բանի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» (հրատ. Կ. Եզյան), Պետերբուրգ, 1884, էջ 1—135։

6 «Ընդարձակ տեղեկութիւնք զմիանալոյ ժողովրդեանն Հայոց Լեհաստանի ընդ կաթոլիկ եկեղեցւոյն յամի տեառն 1676» (անանուն երկ), նույն հրատ. մեջ. «Բանի միութիւն» են, էջ 137—270։ «Եկեղեցական ժամանակագրութիւն ԺԱ ամաց» (անանուն երկ), հետևյալ հրատ. մեջ. «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ» (հրատ. Ղ. Ալիշան), Վենետիկ, 1896, էջ 129—130։

Յազլովից քաղաքում, մեռ. 1709 թ. Լվովում։ 1665—1668 թթ. ուսանել է Լվովի Հայոց Պապական դպրանոցում, որից հետո, իր ծննդավայրում ուսումնարան բանալով, նվիրվել է մանկավարժական ասպարեզի։ Հմուտ էր հայերեն, լատիներեն, լեհերեն և իտալերեն լեզուներին։ Եղել է Տրայիանուպոլսի եպս.։ Լեհահայոց առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի մահից հետո, մինչև նրա հաջորդի՝ Վարդան Հունանյանի նշանակումը, վարել թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը (1681—1686 թթ.), իսկ Հունանյանի հրաժարումից հետո եղավ նույն թեմի առաջնորդ (1698—1709 թթ.)։ Աստ. Ներսիսյանը 1668 թ. ավարտելով ուսումնառության շրջանը՝ ղեկավար էր նշանակվել հայոց եկեղեցական գրքերի սրբագրության գործին, որի նպատակն էր դրանք համաձայնեցնել հռոմեական եկեղեցու դավանական պահանջներին։ Այդ մասին Պիդուն ասում է. «Վասն ուղղագրութեան մատենիցն, զորս չէ մարթ ըստ ամենայնի ուղղել աւարտել՝ մինչդեռ ձեռագիրք են, խնդրեցաք յարքեպիսկոպոսէն կարգել հոգաբարձու այնմ զքահանայն Աստուածատուր Ներսեսովիչ յՅազլովեցէ, զաստուածաբանն քաջ և քարոզիչն, որ սուղ ինչ ժամանակաւ յառաջ ել ի դպրանոցէն մերմէ, ուրանօր յընթացս երից ամաց կելոյ նորա անդ ուսաւ զքերականութիւնս Լատինացւոց և Հայոց զարմանալի իմն հըմտութեամբ»[1]. իսկ հետագայում՝ 1689 թ. սրբագրությունների խնդրով ուղարկվել էր Հռոմ, ինչպես ասում է Ռոշքան իր ժամանակագրության մեջ. «Իբրև Վարդան արքեպիսկոպոսն արար զսինհոդոս յամի 1689 վասն բարւոք կարգելոյ զեկեղեցական իրողութիւնս և սրբագրելոյ զգրեանս սրբազանս, կոչի Աստուածատուր եպիսկոպոսն ի Հռոմ վասն յարդարելոյ և տպելոյ զՊատարագամատոյցն Հայոց 1691. ուր մնացեալ զամս եօթն. զոչինչ կարաց առնել յաղագս դժուարութեանց ոմանց»[2]։ Իսկ մի անանուն ժամանակագրության մեջ կարդում ենք 1691 թարեթվի տակ. «Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի եկաւ ի Հռոմ, մնաց ի հոն 8 տարի, դարձաւ ի Լօվն 1698-ին. չի կարցաւ իր մ՚ալ հաստատելու, զէրամ սուրբ ժողովքն չուզաց փոփոխութիւն անելու վասն արևելեան Հայերուն» են[1]։ Գաթըրճյանի կարծիքով 1689 թ. սյունհոդոսի որոշմամբ կատարված սրբագրությունների արդյունքները երևում են լեհահայոց Պատարագամատույցի այն օրինակներում, որոնք մեզ հասել են Վիեննայի Մխիթ. Մատ. №№ 435, 438 և 445 ձեռագրերով[2]։ Բայց թե անձամբ ի՛նչ դեր է կատարել Աստ. Ներսիսյանը եկեղեցական գրքերի սրբագրության գործում՝ այդ մասին ոչինչ հայտնի չէ. միայն հայտնի է, որ, ինչպես տեսանք, նրա ջանքերն իզուր են անցել Հռոմում՝ սրբագրված Պատարագամատույցը տպագրել տալու։ Մյուս կողմից տեղեկություն կա, որ նա վերանայել և լրացրել է լատինական Ծիսարանի՝ նախկինում կատարված հայ. թարգմանությունը, որի 1751 թ. արտագրված մի օրինակն է Վիեննայի № 502 ձեռագիրը[3]։ Հեղինակ է հայերեն և լեհերեն մի քանի աշխատությունների, որ նշում ենք ստորև։ Դրանցից բացի՝ նա լատիներենից լեհերենի է թարգմանել Լ. Սկուպոլիի „Certamen spirituale“ *աշխատությունը[4]. այս թարգմանությունն ունեցել է մեկից ավելի հրատարակություններ։ Տաշյանը միտում է նրան վերագրելու Վիեննայի Մխիթ. Մատ. № № 484 և 485 ձեռագրերի ընդօրինակությունը, ձեռագրեր, որոնցից առաջինը բարոյական աստվածաբանության հայատառ լեհերեն մի հատոր է, իսկ երկրորդը իտալերեն-լեհերեն խոսակցության գիրք է՝ նույնպես հայատառ[5]. սակայն նկատի ունենալով, որ այդ երկու ձեռագրերն ընդօրինակված են*

1 Տես՝ «Բանի միութիւն Հայոց», էջ 112։

2 Տես՝ «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն», էջ 195։

1 Տես՝ «Կամենից», էջ 129։

2 Հ. Գաթըրճյան, «Սրբազան պատարագամատոյցք Հայոց», Վիեննա, 1897, էջ 596։

3 Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 972—973։

4 Այս գիրքն ունի նաև հայ. թարգմանություն. «Գիրք կոչեցեալ Հոգևորական պատերազմ... թարգմանեցեալ յումեմնէ ջերմեռանդէ, ի լեզուէ իտալիականէ ի հայկական բարբառ...», Վենետիկ, 1723։ Թարգմանիչն անհայտ է։

5 Հմմտ. Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 958—959։

1673 թ. և անանուն ընդօրինակողն այդ ժամանակ, ինչպես ինքն է նշում, էր «ծերացեալ տիօք», չենք կարող նրան նույն համարել Աստ. Ներսիսյանի հետ, որովհետև վերջինս 1673 թ. կլիներ հազիվ 26 տարեկան մի երիտասարդ:

* * *

1. Dictionarium Latino-Armenum super Sacram Scripturam, et Libros Divini Officii Ecclesiae Armenae, compositum per D[eodato] N[ersesowicz] E[piscopo] T[raianopolitano]. **Բառ գիրք Լատինացւոց և Հայոց ի վերայ Աստուածաշունչ և ժամակարգութեան գրոց Հայոց եկեղեցւոյն, շարագրեալ ի Ա[ստուածատուր] Ն[երսէսովիչ] Ե[պիսկոպոսէ] Դ[րայիանուպոլսոյ].** Romae, Typis Sacrae Congr. de Propag. Fide. M. DC. XCV. Superiorum permissu.

[8]+596+[14] էջ (շարվ. 18.5×11.9 սմ): Սկզբում կա լատ. ծանուցում՝ ընթերցողներին ուղղված (Ad lectorem studiosum) *և Ուրբանյան վարժարանի աշակերտ Խաչատուր Առաքելյանի լատ. վկայագիրը՝ 1693 թ.:*

2. **Վիճաբանութիւնք աստուածաբանութեան, շարադրեցեալք ի Աստուածատուր եպիսկոպոսէ Լեհացւոյ:** *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 101, էջ 217ա—232ա:*

Բնագրի սկ. **«Յաղագս սուրբ եկեղեցւոյ առ հասարակ: Առաջին վիճաբանութիւն թէ զի՞նչ է խորհուրդ սուրբ եկեղեցւոյ և թէ ո՞յց մասանց բաղկանայ: Առաջին խնդիր: Աստ նախ գիտելի է՝ հաւատով հաւատամք գոլ...»:**

Տես նաև նույն մատ. ձեռ. № 495, (էջ 4ա—19բ). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 312 (fol. 413^r).

3. **Ծանօթութիւնք բարոյականից աստուածաբանութեանց, շարադրեցեալ[ք] ի Աստուածատուր եպիսկոպոսէ Լեհացւոյ»,** *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 101, էջ 232բ—271ա:*

Բնագրի սկ. **«Վասն կրթութեան և ճանաչողութեան զկիրառութիւնս եկեղեցականաց բան: Խորհուրդն է նմանումն...»:**

Տես նաև նույն մատ. ձեռ. № 495 (էջ 19բ—61բ). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 312 (fol. 415^v).

4. **Արդարացութիւն եկեղեցւոյն Հայոց:** *(Անտիպ):*

Այս աշխատության մասին հիշատակում է Ռոշքան[1]*: Ձեռագիրն անհայտ է:*

5. Pierwsze mieysce zwycięstwu z Bożey łaski pod Widniem Roku M. DC. LXXXIII 12 Septembra otrzymanemu, z Ambony przyznane y przypisane. Przez J. M. X. Deodata Nersesowicza pęnitentiarza Kościola Iarosławskiego Panien Zakonnic, Reguly Benedykta S. We Lwowie, w Drukarni Woyciecha Mielczewskiego, J.K.M., y J.M.X. Arcybiskupa Lwowskiego Typogr. Roku Pańskiego 1684.

Բաղկացած է 12 թերթից: Սա մի ներբողական ճառ է, նվիրված այն հաղթանակին, որ Լեհաստանի թագավոր Հովհաննես Սոբիեսկին տարել էր թուրքերի դեմ և ազատել Վիեննան (1683 թ.):

Այս միևնույն տպագրությունը հայտնի է երկու տարբերակներով, որոնք միայն անվանաթերթով են զանազանվում իրարից:

Մյուս տարբերակն ունի այսպիսի անվանաթերթ.

Pierwsze mieysce swycięstwu, z Bożej łaski Roku Pańskiego M. D. C. LXXX. III. Z wiktoryey Wiedenskiey przez Monarchę Polskiego, dnia 12 Septembra z Ambony otrzymanemu ogłoszone Przez I. M. X. Deodata Nersessowicza, paenitencyarza Kościoła Iarosławskiego Panien Zakonnych Benedykta Swiętego. We Lwowie, w Drukarni Woyciecha Mielczewskiego, J.K.M., y J.M.X. Arcybiskupa Lwowskiego Typogr. Roku Pańskiego 1684.

6. Prolog, cztery intermedia i epilog w języku polskim do łacińskiej tragedii o św.

---

1 «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն», էջ 115:

Pulcherii Alojzego Pidou. *Կրակովիայի* Muzeum Narodowe (Oddział Czartoryskich), rkps. 3571, str. 30—35.

Գրված է Ալ. Պիդուի „Sancta Pulcheria, Virgo et Imperatrix" *լատ. ողբերգության համար, բաղկացած է նախերգանքից, 4 միջախաղերից և վերջաբանից։ 3-րդ և 4-րդ միջախաղերը* („Intermedium tertium inter 3 et 4 actum" *և* „Intermedium quartum inter 4 et 5 actum") *տպագրվել են* Stanisław Pigoń-*ի կողմից՝ Pamiętnik Literacki-ում*, Lwów, rocznik XXXV, 1938, str. 98—103. *4-րդ միջախաղը արտատպվել է նաև՝* Julian Lewański-*ի հետևյալ ժողովածուի մեջ.* „Dramaty staropolskie. Antologia", t. VI, Warszawa, 1963, str. 417—426.

7. [Գիրք քարոզից լեհական բարբառով]: *(Անտիպ)։*

Հիշատակվում է Ռոշքայի կողմից[1]*։ Ձեռագիրն անհայտ է։*

⊠ *Աստ. Ներսիսյանի կողմից Լավրենտիոս Սկուպոլիի* «Հոգևորական պատերազմ»*-ի լեհերեն թարգմանությունն՝ ունեցել է հետևյալ հրատարակությունները.*

1. Woyna dvchowna W. O. Lavrentivsa Skvpvli, Zakonu Teatyńskiego. Do Polski wprowádzona y przypisána Wielmożney y Przewielebney w Chrystusie Pánu, Iey Mości Pánnie Annie, z Sztemberku, Kostczance, Xieni. Y Swiątobliwemv Panienskiemv Zgromadzeniv, Reguly Benedykta Swiętego Klasztoru Jarosłáwskiego, Przewielebnym, y Wielebnym Ich Mosciom Pánnom Zakonnym, pod Znákiem Benedyktá S. ták w Koronie Polskiey, iáko W. X. L. duchownie woiuiącym, Zalecona. Przez X. Deodata Nersesowicza, Penitentiarzá Ich M.M. P.P. Zakonnych, Reg. S. Bened. W Klasztorze Jarosłáwskim: Roku Pánskiego 1683.

[12]+312+[1] էջ (չափը՝ 4^{0})։ Վերջում նշված է տպագրության վայրը՝ „W Zamosciv".

2. Woyna duchowna albo Nauka do doskonałego zwycięstwa samego siebie Prowadząca, po całym Chrześćiańtwie w rożnych ięzykach wydana. Od X. Deodata Nersesowiczá, Spowiedniká Ich Mćiow Panien Jarosławskich Reguly S. O. Benedykta, ná Polski ięzyk przełożona, y za dozwoleniem Starszych w Roku 1683 do druku podana. Teraz zaś w Roku 1746 nowo przedrukowana. W Lublinie, w Drukarni J. K. Mći Collegium Societatis Jesu.

[6]+283+[7] էջ (չափը 8^{0})։

3. Woyna duchowna abo Nauka do doskonałego zwyćięstwa samego śiebie prowadząca. Po całym chrześćiańtwie w rożnych językach wydana, á teraz w Polskim języku za dozwoleniem Starszych nowo przedrukowana. W Wilnie, w Drukarni J. K. M. Akademickiey Societatis Jesu. R. P. 1759.

[6]+311+[7] էջ (չափը՝ 12^{0}).

4. Woyna duchowna albo Nauka do doskonałego zwycięstwa samego siebie prowadząca. Po całym Chrześćiańtwie w rożnych ięzykach wydana. Od X. Deodata Nersesowicza, Spowiednika Ich Mćiow Panien Jarosławskich Reguly S. O. Benedykta, na Polski ięzyk przełożona, y za dozwoleniem Starszych Roku 1683 do druku podana. Teraz zaś w Roku 1761 nowo przedrukowana. W Lublinie, w Drukarni J. K. Mći Collegium Societatis Jesu.

[6]+275+[7] էջ (չափը՝ 8^{0}).

5. Woyna duchowna abo Nauka do doskonałego zwyćięstwa samego śiebie prowadząca. Po całym Chrześćiańtwie w rożnych językach wydana, á teraz w Polskim języku za dozwoleniem Starszych nowo przedrukowana. W Wilnie, w Drukarni J. K. M. Akademickiey Societatis Jesu. R. P. 1761.

[6]+358+[8] էջ (չափը՝ 12^{0}).

6. Woyna duchowna albo Nauka do doskonałego zwycięstwa samego siebie Prowadząca. Po całym Chrześćiańtwie w

1 «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն», էջ 195։

rożnych Językach wydana, á teraz w Polskim Języku za dozwoleniem Starszych nowo przedrukowana. Roku Pańskiego 1767. W Berdyczowie, w Drukarni Fortecy Nayśw. P. Maryi za przywileiem J. K. Mći.

[2]+237+[8] էջ (չափը՝ 12°).

7. Wielebnego wawrzynca Skupulusa Teatyna Woyna duchowna. Powiększona przydatkiem tegoż dzieła iako też. Drogi rayskiey i sposobu wspomagania chorych· Za Pozwoleniem Zwierzchności. W Warszawie, w Drukarni XX. Missyonarzów. Roku P. 1782.

[8]+428+[16] էջ (չափը՝ 8°).

8. Woyna duchowna, abo Nauka do doskonałego zwycięstwa samego siebie prowadząca. Po całym Chrześćiańatwie w rożnych językach wydana, a teraz w Polskim języku za dozwoleniem Starszych nowo przedrukowana. W Połocku, w Uprzyw. od Jey Jmperator. Mości Drukarni Colleg. Soc. J. Roku Pańskiego 1792.

[6]+330+[10] էջ (չափը՝ 12°).

«Հոգևորական պատերազմ»-ի այս լեհերենը հավանաբար լատիներենից է թարգմանվել։ Համմ. վերջինիս հետևյալ հրատարակությունները. „Certamen spiritvale V. P. Lavrentii Scvpvli, clerici regularis, à Carolo Antonio Meazza ex Italico, Latinè redditus idiomatè" (Monachii, Typis Lucae Straub, 1663) *և* „Certamen spiritvale, seu Opusculum primum Ven. Patris Lavrentii Scvpvli, cler. reg. Theatini, ex Italico idiomate, cui ab Auctore consignatum est, à Carolo Antonio Meazza Latinè redditum" (ed. 2ª, Monachii, Apud Lucam Stravbium, 1667).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաբրիելյան Հովս. — *«Սրբազան պատարագամատոյց Հայոց», Վիեննա, 1897, էջ 596։*

Գասպարյան Գ. Կ. — *«Հայ բառարանագրության պատմություն», Երևան, 1968, էջ 58—60։*

Barącz S. — „Żywoty sławnych Ormian w Polsce", Lwów, 1856, s. 240—244 („Nersesowicz Deodat").

Barącz S. — „Rys dziejów Ormiańskich", Tarnopol, 1869, s. 113 („Nersesowicz Deodat").

Neumann C. F. — „Versuch einer Geschichte der armenischen Literatur", Leipzig, 1836, S. 253.

Petrowicz Gr. — „L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626—1686)", Roma, 1950, p. 231, 308, 311—312.

Petrowicz Gr. — „I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVII" (Estratto da „Mélanges Eugène Tisserant", vol. III=Studi e Testi, 233), Roma, Città del Vaticano, 1964, p. 154, 163, 167.

Pigoń Stan. — „Z dziejów teatru szkolnego w Polsce w. XVII (O teatrze alumnatu ormiańskiego we Lwowie)", *Pamiętnik Literacki,* rocznik XXXV, 1939, s. 72—98.

Նույն հոդվածը, տարբեր խորագրով („Dramat o bazylissie Pulcherii..."), *վերահրատարակվել է նաև հեղինակի գործերի հետևյալ ժողովածուի մեջ.*

Pigoń Stan. — „Z ogniw życia i literatury" (Rozprawy), Wrocław—Warszawa—Kraków, 1961, s. 24—59 („Dramat o bazylissie Pulcherii w teatrze alumnatu ormiańskiego we Lwowie").

Somal P. S. — „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 161.

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՉԵԼԵՊԻ [ԵԳՐՈՑԵԱՆ?]

Ունի մի նամակ, ուղղված Կ. Պոլսից առ Եղիազար Այնթապցի, թվական՝ «ՌՃԺԵ (=1666 թ.), Հոկտեմբերի ԻԵ (25), յաւուրն հինկշաբաթի», տես՝ Սիոն, *1940, էջ 315—316։ Ստորագրել է՝ Հաջի Կոստիկի և Խոջա Սահակի հետ միասին։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԱՐՍԻԿ

Տես՝ ՅԻՋՏԲՈՒՋԻՍ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԱԲԻԿԵԱՆ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ

Հայոց նոր վկաներից, որդի Անմեղուկյան Պաղտասարի և Թրվանտայի. նահատակվել է Կ. Պոլսում Հայոց ՌՃԾԹ թվականին, այն է՝ 1710 թ.։ Վկայաբանությունը գտնվում է Լոնդոնի հայերեն ձեռագիր Հայսմավուրքներից մեկում, հետևյալ սկզբնավորությամբ. «Մարդասէր և արարչագործ բընութիւն բարերարին Աստուծոյ ըստ բարերար կամաց իւրոց յառաջ շարժեալ ի ստեղծումն Ադամայ...», Brit. Mus. Ms. Or. 6988 (fol. 26v—28v)։ *Աստ. Սեբաստացու մասին տես Անդր. Աղեքսանդրյան, «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ և սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին», Վիեննա, 1911, էջ 260—261։*

Հմմտ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԱՂԱՐԱՑԻ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԱԹԵՒԱՑԻ (?)

Ունի մի նամակ, ուղղված «Տեառն Յոհաննու խոհեմագարդ քահանայի հայրապետութիւն իմոյ և բազմերախտի...», գրված հավանաբար Տաթևի վանքում «ի ՌՄԼԵ (=1786) թուոջ և ի դեկ. ամսոյ Ի՞նումն»։ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8740, էջ 17ա—18ա։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԱՂԵՐԳՈՒ

Այս անվան տակ պայմանականորեն միացնում ենք Աստուածատուր *հեղինակային անունը կրող մի քանի տաղեր, որոնցից առաջին երեքը, ըստ Տրդատ Պալյանի, միևնույն հեղինակի՝ ոմն «Աստուածատուր վարդապետ»-ի գործեր են։*

* * *

1\. *(Անխորագիր)* «Այն առաջին ժամանակին|Որ զպըտղաբերըն տընկեցին,|Յառաջ զխաղողըն գովեցին|Ու մեղաց դեղ անուանեցին...», *տես՝* Բազմավէպ, *1875, էջ 216—217։*

12 տուն։ Վերջում՝ «Է քո անուն[ըդ] Տիրատուր,|Եւ իմ անուն՝ Աստուածատուր,|Կըթղէն ի լի արա և տուր,|Դու շատ ապրիս, ո՜վ թասատուր» են[1]։

Այլ տպ.— Վասն խաղողի. «Այն առաջին...», *տես՝ Կ. Կոստանյանց (հրատ.), «Նոր ժողովածու», պրակ Բ, Թիֆլիս, 1892, էջ 41—46։*

14 տուն։ Հրատարակվել է 1695 թ. ընդօրինակված մի ձեռագիր տաղարանից (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. № 7717)։ Նշված են նաև նախորդ հրատարակության բնագրական տարբերությունները։

Այլ տպ.— Վասն խաղողի. «Այն առաջին...», *տես՝ Կ. Կոստանյանց (հրատ.), «Նոր ժողովածու», պրակ Գ, Թիֆլիս, 1896, էջ 63—66։*

17 տուն։ Արտատպ. նախորդ հրատարակությունից, համեմատվել ու լրացվել է 1617 թ. ընդօրինակված մի ձեռագիր տաղարանից (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. № 3081)։

Այլ տպ.— Տաղ և գովասանք վասն խաղողոյ և գինոյ ուրախութեան. «Յայն առաջի[ն] ժամանակին...», *տես՝ Տ. Պալյան (հրատ.), «Հայ աշուղներ», հտ. Ա, տետր Ա, Զմյուռնիա, 1911, էջ 258—261։*

15 տուն։

Այլ տպ.— Վասն խաղողի. «Այն առաջին...», *տես՝ Մկ. Մկրյան (հրատ.), «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն (Ընտիր նմուշներ)», Երևան, 1938, էջ 190—193։*

14 տուն։ Արտատպ. Կ. Կոստանյանցի 1892 թ. հրատարակությունից՝ առանց տարընթերցվածների։

Այլ տպ.— Վասն խաղողի. «Այն առաջին...», *տես՝ Կ. Սասունի, «Գրական գոհարներ միջնադարեան աշխարհաբար գրակա-*

---

[1] Սույն տաղի մասին տես Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, Երևան, 1946, էջ 427։ Լեո, «Հայոց պատմություն», հտ. Գ, Երևան, 1946, էջ 396—397։ Ա. Շ. Մկրտչյան, «Նյութեր X—XVIII դարերի հայոց գրականության պատմության», պրակ Գ, Երևան, 1946, էջ 73—74։

նությեան և ժողովրդական բանահյուսության», Բեյրութ, 1949, էջ 262—265։

14 տուն։ Արտատպ. Կ. Կոստանյանցի 1892 թ. հրատարակությունից։

Այլ տպ.— Վասն խաղողի. «Այն առաջին...», տես՝ «Մարգարիտներ հայ քնարերգության», հտ. Ա (կազմողներ՝ Հակոբյան Գ. Ա., Դեվրիկյան Գ. Խ., Միրիջանյան Լ. Վ.), Երևան, 1971, էջ 217—220։

Արտատպ. Կ. Կոստանյանցի 1892 թ. հրատարակությունից։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3595 (էջ 49ա—51ա), № 7717 (էջ 164բ—165բ), № 3081 (էջ 7բ—8բ), № 7707 (էջ 10ա—12ա), № 33 (էջ 155բ—158ա), № 8967 (էջ 9ա—9բ), № 3411 (էջ 10բ—12բ), № 3860 (էջ 194ա—194բ), № 3417 (էջ 3բ—4ա) են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 664 (էջ 55ա), № 1002 (էջ 105ա, սկ. «Զայն առաջին ժամ.»), № 1029 (էջ 12բ). Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 105 (էջ 403բ—404ա). Ջմմառի Մատ. ձեռ. № 84 (էջ 48ա) և № 86 (էջ 146ա և 178ա)։ Համմտ. նաև Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 209 (fol. 164v), որ, ըստ տրված նկարագրության, գտնվում է մի տաղ „Sur la vigne, par Astuacatur"[1].

2. Ողբ ի վրայ մանկանց, Աստուածատուր երէց մի ասեր է. «Տեսէք քոյր եղբայր և մայր|Զի այսօր սուգ եղեր ինձի...», տես՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1726, էջ 333—335։

18 տուն։ Սկզբնատառերը՝ «Տէր Աստուածատուրի է է»։

Այլ տպ.— Ողբ ի վերայ մանկանց են. «Տեսէք...», տես՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1785, էջ 333—335։

Այլ տպ.— Ողբ ի վերայ մանկանց են. «Տեսէք...», տես՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1792, էջ 333—335։

[1] Տես՝ F. Macler, „Catalogue", p. 150.

Այլ տպ.— Ողբ ի վերայ մանկանց են. «Տեսէք...», տես՝ «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 129—130։

Այլ տպ.— Ողբ ի վերայ մանկանց. Աստուածատուրէ. «Տեսէք...», տես՝ Տ. Պալյան (հրատ.), «Հայ աշուղներ», հտ. Ա, տետր Ա, էջ 256—258։

3. Տաղ սուրբ աւետարանչին Յովհաննու. «Այս է զօրութիւն պատմեմ զանազան, |Բանն Աստուծոյ շնորհ սուրբ Աւետարան...», Ջմմառի Մատ. ձեռ. № 82, էջ 119ա—120ա(?)։

Վերջում՝ «Իւծեալ Աստուածատուր մեղօք հանդիման, |Փառօք ըզգեղ գովեց սուրբ և սիրական» են։

Ձեռագիրը ԺԷ դ. ընդօրինակություն է։

4. Տաղ Աստուածատուր վարդապետի՝ սուրբ Աստուածածնայ. «Աստուածածին սուրբ կոյս լուսեղէն տաճար, |Նեղելոցըն դիւթիչ, անճարիցըն ճար,|Օժանդակ յուսողաց օգնական ես յար...», Ջմմառի Մատ. ձեռ. № 82, էջ 76ա—77բ։

Սկզբնատառերը՝ «Աստուածատրոյ է»։ Վերջում՝ «Յոգնամեղ վիրաւ անկեալ ցաւագին|Թվին ՌՃ. երեսներորդին (= 1681 թ.) |Աստուածատուր ծառայդ երգէ լալագին» են։

5. Աւետիս. «Այս թագաւորըս կուսածին, աւետիս, |Ձեզ պարգեւէ զանճառ բարին, աւետիս,|Ըզձեր սեղանըն զարդարէ, աւետիս...». տես Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», պրակ Ա, 1892, էջ 12—15։

Հրատարակվել է 1695 թ. ընդօրինակված մի ձեռագիր տաղարանից։

Հեղինակի անուն է կրում Ջմմառի Մատ. ձեռ. № 84՝ «Աւետիս ծննդեան, խիստ լաւ է, Աստուածատուր վարդապետէ ասացեալ» (էջ 51ա—54ա?), ԺԷ/ԺԸ դդ. ընդօրինակություն։ Անանուն օրինակ է Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7725՝ «Այս աւետիքս օրհնութիւնք է» (էջ 2ա—3բ), ԺԶ դարից։

6. Տաղ սուրբ Աստուածածնին. «Անարատ կոյս սուրբ Տիրածին,|Դու ես տաճար անեղ

բանին...», տես՝ Տ. Պալյան (հրատ.), «Հայ աշուղներ», հտ. Ա, տետր Ա, էջ 254—256։

11 տուն։ Սկզբնատառերը՝ «Աստուածատոր» (sic)։

7. Պատմութիւն Յովսեփայ Գեղեցկոյն, զոր շարադրեալ տաղաչափիւ նուաստ Աստուածատուր ակար յոգւոյ, ոչ թէ ականջալուր լեալ գրեցի, այլ Աստուածաշունչ գրոց առեալ և լիապէս գրեալ, զայն որ ասէ Ընթերցուածս ի Ծննդոց. «Օրհնեալ Հայրն երկնաւոր անըսկըզբնական,|Գովեալ Որդին ծընունդ իւրոյ խսկական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8735, էջ 77ա—88բ (թերի)։*

⊠ *Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. № 141 ձեռագրում՝* «Տաղ ազնիւ բարեկամի» *խորագրված այբբենական տաղը (էջ 458—460, սկ.* «Այբբն ասէ. Առաքեցար հազար բարի»*) վերջում ունի հետևյալ տողերը.* «Փառք և պատիւ իմանալի, | Քո ծառայէն Աստուածատրի»[1]. *այսպես և Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1002՝* «Տաղ ազնիւ» *(էջ 202ա, սկ. նույն), վերջում ունի.* «Քէն ասէ քո ծառային Աստուածատրի»։ *Բայց մեր կարծիքով այդ Աստուածատուրը ոչ թե հեղինակի անունն է, այլ տաղի նախկին ընդօրինակողներից մեկի[2]։ Երևանի Պետ. Մատ. № 8908 ձեռ. օրինակում՝ անխոր. (էջ 54ա, սկ. նույն) Աստվածատրի փոխարեն գտնում ենք ոմն Մարտիրոսի անունը։ Ուրիշ ձեռագրերում[3] այս տաղի վերջին տողերը շարադրված են այլ կերպ, առանց որևէ անվան.* «Փառաւորեմք զտէրն ամենի,|Քեզ գոհութիւն Աստուած բարի»։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԵՑԻ

Երուսաղեմի Հայոց պատրիարք, ընդհատումներով՝ 1645—1670 թթ.։ Նրա անունով ծանոթ են մի քանի թղթեր, և մի անանուն տաղ, որը նվիրված է նրա մահվանը։

* * *

1. Կոնդակ «Ի վերայ Հաւթանտիլին, և քո եղբաւրն Շէրմէզլէնին, և միւս եղբօրս Գրիգորին և որդւոցս Յակոբին, Պապոյին, Ասլամազին. և ձեր աւրհնեալ տանց և բնակութեանց, ընչից և ապրանաց, որդոց և դստերաց», «Գրեցաւ թվն. Ռ. ՂԹ.» (=1650 թ.), Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5074.

Ըստ տրված նկարագրության՝ կոնդակագիրն հայտարարում է, որ „Mahdavi Hauthandil has visited Jerusalem, and is to be regarded as a reliable emissary“[1].

2. Թուղթ առ Խոջա Ավագ, «Գրեցաւ թվին ՌՃԵ (1656 թ.), ապրիլ ԺԲ (12)», Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 311, էջ 129ա—129բ։

3. Վավերագիր, խորագրված՝ «Աստվածատուր վարդապետի ձեռագիրն է», որով Երուսաղեմի պատրիարքական աթոռին փոխանորդ է կարգում Եղիազար Այնթապցուն և Մարտիրոս Ղրիմեցուն. գրված՝ «ի թվին ՌՃԵ ամին (1656 թ.) և մարտի ամսոյն 4, օրն երեքշաբթի», հրատարակված տես՝ Սիոն, *1930, էջ 351։*

4. Վավերագիր, խորագրված՝ «Աստուածատուր վարդապետի հրաժարական ձեռագիրն է և գվեհս առաջնորդ հաստատելոյն», որով հայտնում է, թե Երուսաղեմի պատրիարքական իշխանությունը հանձնել է Եղիազար Այնթապցուն՝ «ի թվիս Հայոց Ռ.երորդ Ճ.երորդ և Զ.երորդ (1657 թ.), յամսեանն դեկտեմբերի ի Դ.ն (4), պատկեր աւուրն ուրբաթ». բայց վավերագիրն անթվական է. հրատարակված տես՝ Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Բ, Երուսաղեմ, 1953, էջ 150—153։

5. Թուղթ առ Եղիազար Այնթապցի, խորագրված՝ «Աստուածատուր վարդապետն Երուսաղէմայ գրեալ էր ի Հալապ առ վեհս՝

---

[1] *Տես Բարգեն կթղ. Կյուլեսերյան, «Ցուցակ ձեռագրաց» են, Անթիլիաս, 1961, էջ 897։*

[2] *Մեզ թվում է, որ այդպիսի մի օրինակ է նաև Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 290 (fol. 153r), *որի վերնագիրն է, ֆրանսերեն թարգմանությամբ,* „Sur les lettres de l'alphabet, par Astuacatur“, *տես՝* F. Macler, „Catalogue“, p. 150.

[3] ***Տես աստ, հտ. Ա, էջ 712, § 10։***

[1] *Տես՝* F. C. Conybeare, „A Catalogue“, p. 264.

երբ լուեալ էր կաթողիկոս լինելն». գրված է «ի դուռն Սուրբ Յակոբայ, նոյեմբեր ամսոյ ԻԹ (29), օրն հինգշաբաթի»: Հրատարակված տես՝ Սիոն, *1933, էջ 150—151։*

Գրված է Եղիազար Այնթապցու արևմտահայոց կաթողիկոս օծվելու առթիվ։ Տարեթիվ չունի, բայց որովհետև Եղիազարի օծումը 1664 թ. է եղել, պետք է տարեթիվը համարել 1664, թեև այդ թվականի նոյեմբերի 29-ին օրը հինգշաբթի չէր։

ԱՍՏ. ՏԱՐՈՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

Տես՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ անվան տակ 3 տաղեր, որոնք գրված են Աստվածատուրի մահվան առթիվ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազավնունի Մկ.— *«Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 33—34։*

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 249, § 184։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 628, 665, 666, 673—685 և 700—715։*

Սավալանյանց Տ. Թ. Հ.— *«Պատմութիւն Երուսաղէմի», հտ. Ա, Երուսաղեմ, 1931, էջ 593—626։*

Տեր-Հովհաննեսյան Աստ.— *«Ժամանակագրական պատմութիւն սուրբ Երուսաղէմի», հտ. Ա, Երուսաղեմ, 1890, գլ. ԽԴ—ԽԹ։*

Օրմանյան Մաղ.— *«Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, §§ 1687, 1729, 1730, 1751, 1755, 1758, 1759, 1761 և 1764—1766։ Նույնի Բ տպ., Բեյրութ, 1960, §§ 1687, 1729, 1730, 1751, 1755, 1758, 1759, 1761 և 1764—1766։*

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ կամ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

Տես՝ ԲԱՐՍԱՄ ՏՐԱՊԻԶՈՆՑԻ։
ԵՂԻԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ՄՈՒՇԵՂ.։
ԹՈՎՄԱՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։
ՂՈՒԿԱՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։
ՍԻՄՈՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։
ՍՏԵՓԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ։

ԱՍՏՐԱԽԱՆ

Տես՝ ՋԱՄԲՌ («Ջամբռ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Հայոց [որ յԱստրախան]»)։

ԱՍՏՐՈԼԱԲ կամ ՈՒՍՏՈՒՐԼԱԳ

Տես՝ ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ։

ԱՎ—

Տես՝ ԱԻ—

ԱՏԱՆԱ

Տես՝ ԱԴԱՆԱՅԻ ԺՈՂՈՎ։

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ կամ ԱՏԵՆԱԿԱՆ ԽՕՍՔ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ։
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ։

ԱՏԵՆԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տես՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ։

ԱՏՈՄ ԱՆՁԵՒԱՑԻ

Թ/Ժ դարերում որպես մատենագրական դեմքեր հիշատակվում են համանուն երկու անձնավորություններ՝ Ատոմ «Անձեւացեաց իշխան» և Ատոմ «Անձեւացեաց եպիսկոպոս», որոնք Գ. Զարբհանալյանի կարծիքով հավանաբար նույնն են։ Այդ կարծիքին է միանում նաև Գ. Հովսեփյանը։ Ատոմ իշխանը սերտ կապեր ուներ ժամանակի մտավորականների հետ։ Նրա դավանաբանական մի նամակի պատասխանն ունենք Արամ մատենագրից (տես՝ ԱՐԱՄ)։ Իսկ Արտավազդ Մազազունին նրա հրամանով գրել է Տաճատ Վարագեցու 10 հարցումների պատասխանը կամ մեկնությունը (տես՝ ԱՐՏԱՒԱԶԴ ՄԱԶԱԶՈՒՆԻ)։ Ատոմ եպս.ի անունով մեզ հասել է Հովհաննես Մկրտչին նվիրված մի ներբողյան, որ

նշում ենք սորբ։ Ոմանք սույն Ատոմ եպս.ին են վերագրում նաև Ատոմագիր անունով հիշատակվող ժողովածուի կազմումը (տես՝ ԱՏՈՄԱԳԻՐ)։ Այս անձերի հետ պետք չէ շփոթել Ատոմ Անձևացի զորականին, որը վկայացավ 853 թ. (տես՝ ԱՏՈՄՆԵԱՆՔ)։

* * *

Երանելայն տեառն Ատոմայ Անձևացեաց եպիսկոպոսի ասացեալ Ներբողեան ի սուրբ Կարապետն Յովհաննէս. «ԶԿարապետին մեծի զյիշատակս տօնելով՝ զկուսութեանն հանդէս գովեսցուք. վասն զի յիշատակել զսուրբս և զամենայն առաքինութիւնն բուել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522, էջ 518ա—521բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 993 (էջ 69ա—70բ)։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942 էջ 255 § 8 (Ատոմ եպս. Անձևացեաց), § 9 (Ատոմ իշխան Անձևացեաց)։*

Զարբհանալյան Գար.— *«Հայկական հին դպրության պատմություն», Դ տպ., Վենետիկ, 1897, էջ 568—569։— Նույնի՝ Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 568—569։*

Թորոսյան Հովհ.— *«Ատոմեանց նահատակության ժամանակն և այլ հանգամանք»,* Բազմավեպ, *1899, էջ 67։*

Հովսեփյան Գար.— *«Իններորդ դարի ձեռագրական մի հատակտոր և Ատոմ Անձևացեաց իշխան»,* Էջմիածին *(ամս.), 1946, № 8—10, էջ 40—54։*

Հովսեփյան Գար.— *«Յիշատակարանք ձեռագրաց», հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 71—74, № 27։*

Տեր-Մկրտչյան Գալ.— *«Հայկականք», մասն Ա, Վաղարշապատ, 1894, էջ 65—67։*

Քոլանջյան Սուր.— *«Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի ձեռագրից»,* Բանբեր Մատենադարանի, *№ 5, Երևան, 1960, էջ 207—212։*

Օրմանյան Մաղ.— *«Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 673։— Նույնի՝ Բ տպ., Բեյրութ, 1959, § 673։*

ԱՏՈՄ ՀԱՄԲԵՐՈՂ

Հեղինակն է Երևանի Պետ. Մատ. № 2001 ձեռագրում 1480 թ. գրի առնված թվաբանական մի խնդրի՝ «Առակս իմաստասիրական և բանալի մտաց մարդկան» *(սկ.* «Թագաւոր մի էր անեղ և զարմանալի»), *որը տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 443—444, § 565։ Բնագրի վերջում կա հեղինակի հիշատակագրությունը. «Ո՛վ եղբայր տէր Յովհաննէս, էնց գիտացիր, որ զինչ որ բեռինք են ղորերն՝ յայտնի են. ապա ջանայ, որ զդեկանքն և զպլիներն ի համար բերես, և անարժան ծառ[այ]իս ձերոյ Ատոմիս Աստուած ողորմի ասես, ամէն։ Գրեցաւ սակաւ ջիրս Ջ և ԻԹ թուին»։*

ԱՏՈՄ ՈՍՏԱՆՑԻ կամ ՎԱՐԱԳԵՑԻ

Տաղերգու։ Համարվում է ապրած ԺԵ դարում[1]*։ Ունի գանձեր ու տաղեր։*

* * *

1. Գանձ Յոհաննու Երուսաղէմի հայրապետին. «Յերուսաղէմ ի սուրբ քաղաքին, |Որ էր աթոռ եղբօրն Յիսուսին,|Զոր առաքեալքն ձեռնադրեցին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 430, էջ 125գ—126բ (թերի)։*

Սկզբնատառերը՝ «ՅԱտոմե ե»: *Ձեռագրի 125գ էջի սորբին լուսանցում նշված է.* «Յոհաննու Երուսաղէմի հայրապետին գանձ ի յԱտոմ երիցու Ոստանցո»: *Տես նաև Արմաշի Մատ. ձեռ. № 217՝ խոր. նույն (էջ 199, սկ.* «Յերուսաղէմ ի սուրբ քաղաքին, ընտրեալ յաթոռ՝ սրբոյն Յոհաննին, յաթոռըն մեծի»)։

2. Գանձ վեցերորդ կիւրակէին. [«Այս խորհուրդ քո անճառելին, | Զոր մարգարէքըն

---

[1] *Տես Հ. Ոսկյան, «Վասպուրական-Վանի վանքերը», Վիեննա, մասն Ա, 1940, էջ 307. մասն Գ, 1947, էջ 1069։*

Տաղերգու Ատոմ Վարագեցուն Հ. Ոսկյանը նույն է համարում 1457 թ. Վարագա վանքի միաբանների շարքում հիշատակվող բեմբասաց Ատոմի (տես Ղ. Փիրղալեմյան, «Նօտարք Հայոց», էջ 176) հետ և այդ հիման վրա նրան համարում է ԺԵ դ. հեղինակ։

գուշակեցին, | Նախատեսողք հինն Իսրայէլին...], *Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № 430, էջ 134բ—138ա։

Սկզբնատառերը՝ «Ատոմոյ»: *Ձեռագրի նյութերի ցանկում նշված է.* «Վեցերորդ կիրակին՝ գանձ ի յԱտոմէ Ոստանցւոյ» (էջ 1բ)։ *Մեր այս օրինակը թերի է։ 134բ էջի վերջում կա միայն խորագիրը՝* «Գանձ վեցերորդ կիւրակէին», *իսկ սկզբնատողը, որը հաջորդ էջի վրա պիտի լիներ, պակասում է, որովհետև միջանկյալ մեկ թերթ ընկած է. սկզբնատողը նշել ենք համաձայն Արմաշի Մատ. № 217 ձեռագրի (էջ 220)։*

3. Գանձ Շողակաթին, յԱտոմ երիցէ ասացեալ. «Այսօր տօնեմք ըղձաւակատիս |Աստուածաբնակ սրբոյ խորանիս|եկեղեցւոյ մօր սուրբ հաւատիս...» *(հրատ. «Գ. Մ.—3.»), տես՝* Արարատ, *1902, էջ 447—451։*

Սկզբնատառերը՝ «Ատոմոյ»: *Հրատարակվել է էջմ. Մատ. № 472 (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. № 430) ձեռագրից։ Ձեռագրում կրում է* «Գանձ Շողոկաթին (sic) տեսլեան սրբոյն Գրիգորի» *խորագիրը՝ առանց հեղինակի անվան (էջ 244ա—246բ), բայց նյութերի ընդհանուր ցանկում նշված է՝* «Շողոկաթին (sic) գանձ՝ յԱտոմ երիցէ» *(էջ 2ա)։*

4. Գանձ սուրբ խաչի ուրբաթին. «Արարչական բանըն հայրական|Ըզմարդն յօրինէ պատկեր տիրական...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1041, էջ 487ա—490ա (?)։*

Սկզբնատառերը՝ «Ատոմ»:

5. Տաղ խաչին. «Այսօր մեծ զարմանք հրաշից | Յայտնեալ ի յերկրի մարդկան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 430, էջ 273բ—274բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3870՝ «Տաղ խաչգիւտին, յԱտոմ վրդ.է» *(էջ 225ա—226ա), № 7129՝* «Տաղ սրբոյ խաչին» *(էջ 185ա—186բ), № 425՝* «Տաղ ազնիւ» *(էջ 315ա—315բ), № 424՝* «Մեղեդի ի Վարագայ սուրբ խաչ» *(էջ 271ա—271բ), № 2672՝ խոր. նման (էջ 287բ—288ա), № 423՝ անխոր. (էջ 335բ—336ա) ևն։*

Տաղի մի շարք տներ տարբերվում են ձեռագրից ձեռագիր։

6. Յորդորակ յԱտոմ իրիցու. «Պարգևատուն ամենեցուն աստուածորդին, | Եւ փառակից Հօր և Որդւոյ շնորհաց հոգին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 430, էջ 133բ—134բ։*

Նվիրված է Գրիգոր Լուսավորչին։ Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 304՝ «[Տաղ] Լուսաւորչին, ի յԱտոմ Երիցուէ» *(էջ 48ա)։*

7. Տաղ Յոհաննու Ոսկեբերանին. «Ի հանդէս Քո մեծ տօնի | Յընծամք հոգւով հրրճուալի...», *տես՝ «Գրքուկս որ կոչի Տաղարան, ասացեալ ի զանազանից բանաստեղծացն մերոց առաջնոց», Կ. Պոլիս, 1740, էջ 261—263։*

Սկզբնատառերը՝ «Ի Ատոմ իրիցուն Ք»: *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 424 (էջ 291ա—291բ), № 2672 (էջ 303բ—304ա), № 7193 (էջ 48ա—49բ), № 1887 (էջ 236բ—237ա), № 3498 (էջ 288բ—289բ), № 6985 (էջ 32բ—34ա) ևն. Թբիլիսիի Ձեռագր. Ինստ. հայ. ձեռ. № 129 (էջ 45բ—46ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 577 (էջ 77ա). Ջմմառի Մատ. ձեռ. № 81 (էջ 344ա) և № 82 (էջ 121բ)։ Որոշ օրինակներում բնագրի սկ. է՝* «Ի հանդէս Քո սուրբ տօնի»:

8. [Տաղ] հինգ աւուր փոխման Աստուածածնին, ի յԱտոմ վարդապետէ ասացեալ. «Յանըսկիզբն յէէն,|Յանհուն պատճառէն...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1041, էջ 480ա։*

⊠ *Երևանի Պետ. Մատ. № 430 ձեռագրի նյութերի ցանկում նշված է (էջ 1բ), որ Ատոմ երեցն ունի նաև մի տաղ՝ նվիրված Քառասուն-մանկանց հիշատակին, բայց ձեռագրի համապատասխան մասից (այժմյան 130 և 131 թերթերի միջև) թերթ ընկած լինելու պատճառով տաղի բնագիրը բացակայում է։*

ԱՏՈՄ ՎԱՐԴԳԵՑԻ

Տես՝ ԱՏՈՄ ՈՍՏԱՆԵՑԻ։
ԱՏՈՄԱԳԻՐ։

ԱՏՈՄԱԳԻՐ կամ ԱՏՈՄԱԳԻՐ

Այս անունով հիշատակվում է Թ/Ժ դարերում կազմված վկայաբանական ու վարքագրական մի ժողովածու, որը հայտնի էր նաև Տօնացոյց կամ Տօնացուցակ անունով. կոչվում էր նաև Հռոմագիր կամ Հռոոմագիր, որովհետև դասավորված էր հռոմեական ամիսների օրերով։ Ըստ Ասողիկի հաղորդած տեղեկության՝ Ատոմագիր անվանումը պիտի առաջացած լինի Ատոմյանց վանքից՝ որպես նույն վանքում կարգավորված. 897 տարեթվի տակ նա գրում է. «Յայսմ ժամանակի պայծառանայր առաքինութեամբ հայրն Գագիկ առաջնորդ ուխտին Սուրբ Ատոմայ, որ զյիշատակ մարտիրոսացն միայարեալ ի գիր՝ որ Ատոմայ գիր անուանեալ ասի» (կամ «որ Ատոմագիրն անուանի»)[1]: Այրիվանեցու տեղեկությամբ ԺԱ դ. սկզբներին «սուրբ հայրն Ատոմ Վարագեցի զՀռոմագիրն կարգաւորէր»[2]. իսկ ավելի ուշ կազմված մատենագիտական մի անանուն ցուցակի համաձայն «զՏօնացոյցն [արարեալ է] Վարագայ հայրն Ատոմ»[3]: Բանասերներից ոմանք հակամետ են Ատոմ Վարագեցուն նույն համարելու Ատոմ Անձևացու հետ (Գ. Զարբհանալյան) կամ Ատոմ Անձևացուն համարելու վերակարգավորող Գագիկ վանահոր կազմած ժողովածուի (Մ. Օրմանյան): Ատոմագիրը համարվում է այժմյան Հայսմավուրքների նախատիպը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև.— «Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 30—31, 443:

Ալիշան Ղև.— «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 79 (Գագիկ հայր Ատովմայ վանաց):

Աճառյան Հր.— «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 255, § 8 (Ատոմ եպս. Անձևացեաց), էջ 431, § 13 (Գագիկ, առաջնորդ ուխտին Ատոմայ):

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Դ տպ., Վենետիկ, 1897, էջ 568—569: —Նույնի՝ Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 568—569:

Թոռոսյան Հովհ.— «Ատոմեանց նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք», Բազմավէպ, 1899, էջ 67:

Հովսեփյան Գար.— «Իններորդ դարի ձեռագրական մի հատակոտոր և Ատոմ Անձևացյաց իշխան», Էջմիածին (ամս.), 1946, № 8—10, էջ 45:

Չամչյան Միք.— «Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 689:

Սարգսյան Գր.— «Գրիգոր կթղ. Անաւարզեցի մատենագիր», Բազմավէպ, 1949, էջ 58—59:

Քիպարյան Կյուր.— «Պատմութիւն հայ գրականութեան», մասն Ա, հտ. Ա, Վենետիկ, 1944, էջ 267 (Ատոմ Անձևացի), 353 (Գագիկ վանահայր):

Օրմանյան Մաղ.— «Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 673: —Նույնի՝ Բ տպ., Բեյրութ, 1959, § 673:

ԱՏՈՄԵԱՆՔ

Այս անունով հայտնի են երկու խումբ հայ վկաներ, որոնցից առաջինները գրականության մեջ անվանվում են Ատոմյան զորավարներ, իսկ երկրորդները՝ Ատոմյան զորականներ (զինվորներ): Առաջին Ատոմյաններն Ատոմ Գնունու և Մանաճիհր Ռշտունու գլխավորությամբ նահատակվել են Պարսից Հազկերտ Բ թագավորի օրով՝ 449 թ.: Նրանց վկայաբանությունը, որը հավանաբար մի ժամանակակցի ձեռքով էր շարադրված, կորած էր համարվում մինչև Ժ դ., երբ հայտնաբերվեց Տաճատ Վարագեցու կողմից, ինչպես նշված է վերջաբանում, որն ակնհայտորեն հետագայի հավելված է և որի հիման վրա Տաճատ Վարագեցու անունը վկայաբանության ձեռագիր որոշ օրինակներում թյուրիմացությամբ անցել է նրա խորագրի մեջ որպես հեղինակի անուն: Այս վկայաբանությունը, որի համառոտությունը մի քանի

1 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական» (հրատ. Ստ. Մալխասյանցի), Բ տպ., Պետերբուրգ, 1885, էջ 160:

2 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց» (հրատ. Մկ. Էմինի), Մոսկվա, 1860, էջ 57:

3 Աստ, հտ. Ա, էջ LX, տող 3:

տարբեր խմբագրություններով մտել է նաև Հայսմավուրքների մեջ (օգոստ. 19 ամսաթվի տակ), մեզ հասել է նաև վրացերեն թարգմանությամբ, որը, ըստ Ն. Մառի, պետք է կատարված լինի ոչ ուշ քան է դ. վերջերը։ Երկրորդ Ատոմյանների նահատակությունը, որի մասին գրում են Հովհաննես Դրասխանակերտցին և Թովմա Արծրունին, տեղի է ունեցել 853 թ. արաբական ոստիկան Բուղայի ձեռքով. նրանց գլխավորն էր Ատոմ Անձևացին, որի անունով էլ կոչվում են։

Ա. ԱՌԱՋԻՆ ԱՏՈՄՅԱՆՆԵՐ

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Ատոմայ և որդւոյ իւրում, և Վարոսայ, և Ներսեհի, և Վարձաւորին. «Արք եղբարք և հարք, ժողովուրդք աստուածասէրք՝ որ երկիւղիւն Աստուծոյ ժողովեալ էք ի կատարել...։ Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի Պարսից թագաւորին, ծագկէր հաւատ քրիստոնէութեան ընդ ամենայն երկիր. և տեսեալ մոգպետացն և մոգուցն, խորհուրդ ի մէջ առեալ վարդապետաւն իւրեանց սատանայիւ, ժողովեցան և ծանուցին թագաւորին և ասեն...», տես՝ Սոփերք Հայկականք, հտ. ժԹ, Վենետիկ, 1854, էջ 69—82։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. «Ճառընտիր Բ» ձեռագրից (=այժմյան № 201)։ Բնագիրն սկզբում ունի ներածական մաս (սկ. «Արք եղբարք և հարք...ի վերինն Երուսաղէմ». պատմական մասն սկսվում է «Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի» բառերով։

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոյն Ատոմայ և որդւոյ նորա Վարոսայ, և Ներսեհի և նոցին ընկերացն որ ի Քրիստոս նահատակեցան, զոր ասացեալ է հօր Տաճատայ Վարագեցւոյ. «Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի թագաւորին Պարսից ծագկէր հաւատ քրիստոնէից...», տե՛ս ი. აბულაძე, „ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX—X სს-ში“, თბილისი, 1944, გვ. 95—113.

Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերի հիման վրա. №№ 4871, 4709, 7443, 3787, 1523, 3797, 4670, 1524, 4802, 996, 993, 4869, 4822, 3791, 4929, 4676, 4716, 2782, 3772 և 991։

Բնագրի ներածական մասն անջատաբար տպագրված է ծանոթագրությունների բաժնում, անդ, էջ 194—195։ Նույն բաժնում տպագրվել է նաև, էջ 195—196, վկայաբանության կցված վերջաբանը կամ հավելվածը, որ չունի նախորդ հրատարակությունը։ Այս հավելվածը (սկ. «Արդ՝ զսոսա նահատակութիւնս լսելով») պարունակում է հետևյալ հիշատակարանային տողերը. «... Եւ գիր վկայութեան նոցա ոչ ևս պատմէր ի միջի մերում մինչև ի ժամանակս իմ. ապա գտեալ եղև յաւուրս Կենատրոյ, սպասաւորի սրբոց Ատոմեանց, ի ձեռն հոգևոր առաջնորդի տեառն Տաճատայ Վարագացւոյ» են։

Բնագրի (միայն պատմական մասի) վրաց. թարգմանությունը՝ „წამებაჲ წმიდისა ატომისი და ძისა მისისაჲ და მოყუასთა მისთაჲ“ տես հայ. բնագրին առընթեր, էջ 95—113։

Վկայաբանության ռուս. թարգմանությունը՝ „Мученичество св. Атома и сына его, а также Варса, Нерсеха и Вардзавора“ տես հետևյալ գրքում. „Памятники армянской агиографии“, вып. I (перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян), Ереван, 1973, стр. 189—193. Թարգմանչի նախաբանով (էջ 180—186) և ծանոթագրություններով (էջ 319)։

□ Երևանի Պետ. Մատ. ձեռագրերում, բացի վերոնշյալներից, տես նաև № 994՝ «Վկայաբ. սրբոց Ատոմեանցն, զոր ասացեալ է հայր Տաճատ» (էջ 156դ—160բ, սկ. «Արք եղբարք»), № 1521՝ «Վկայաբ. ... զոր արարեալ է Տաճատ հայրն Վարագայ» (էջ 108ա—109բ, սկ. նույն), № 992՝ «Վկայաբ. սրբոց Ատոմեանցն, որք կատարեցան ի Հայք ի Պարսից» (էջ 287ա—288բ, սկ. «Ի ժամանակս Յազկերտի»), № 4774՝ «Վկայաբ. և պատմութիւն սրբոց Ատոմեանցն և Մանաճիհրեանցն» (էջ 163ա—165ա, սկ. նույն) են։ Տես դարձյալ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201՝ «Վկայութ. սրբոյն Ատոմայ և

որդւոյն, և Վարոսայ, և Ներսեհի և Վարձաւորին» *(էջ 456բ), № 223՝* «Վկայաբանութ. սրբոյն Ատոմայ և որդւոյ նորա Վարոսի և Ներսեհի և նոցին ընկերացն որ ի Քս. նահատակեցան» *(էջ 105ա), № 214՝* «Ատովմանց: Վկայաբանութ. սրբոյն [Ատովմայ] և որդւոյ իւրում, և Վարսաւորի, և Ներսեհի, և ընկերաց նորա» *(էջ 22բ), № 210՝* «Վկայաբանութ. սրբոց Ատոմանց, զոր ասացեալ է հօրն Տանատայ Վարագացւոյ» *(էջ 164բ), № 232՝ խոր. նույն (էջ 165ա) են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224՝* «Վկայաբանութ. և պատմութ. սրբոց Ատոմեանցն և Մանանիրհեանցն» *(էջ 184ա). Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 1 (էջ 250ա), № 9 (էջ 450ա), № 97 (էջ 305ա), № 154 (էջ 533), № 173 (էջ 546). Հալեպի Քառ.-Մանկ. եկեղ. ձեռ. № 146. (էջ 389բ). Տյուբինգենի* KUB Ma XIII 38 (fol. 215^{v}).

Բնագրի ներածական մասը և հավելվածը մի շարք ձեռագրերում բացակայում են:

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր-Իսրայելի).

Վկայութիւն սրբոց Ատոմեանց իշխանացն Հայոց. «Սուրբն Ատոմ մեծ իշխան էր Հայոց, և էր ի Պարսիկս զօրօք. և Յազկերտ հրապաշտ արքայն Պարսից բռնադատէր զնոսա ուրանալ զՔրիստոս...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 87—88:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոց Ատոմեանց. «Սուրբն Ատոմ...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 402—403.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre des saints compagnons d'Atom" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից):*

3 (Համառոտ Բ խմբագր., Կիրակոս Արեւելցու).

Վկայութիւն սրբոյն Ատոմայ և որդւոյ նորին, և Վարսայ, և Ներսեհի, և Վարսաւորին, և ընկերացն. «Թագաւորն Պարսից Յազկերտ խորհրդակցութեամբ մոգուցն մեծ հալածումն յարոյց ի վեր[այ] Քրիստոնէից, և գրեալ յաշխարհն վասն արքունի պատերազմաց, զի Հայոց զօրք եկեսցեն առ նա...», *Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 7433, էջ 10բ—11ա:*

Այս խմբագրությունը հետագայում մտել է նաև Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքի մեջ՝ աննշան փոփոխություններով. տես՝

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոց Ատոմեանց նահատակացն. «Թագաւորն Պարսից Ազկերտ, չար խրատով մոգուցն յարոյց հալածանս ի վերայ քրիստոնէիցն. և գրեաց ի զօրս Հայոց՝ զի փութով երթիցեն առ նա վասն արքունի պատերազմաց...», *տես՝ «Ծառ սրբոց վկայիցն» են (Հայսմավուրք), Կ. Պոլիս, 1706, էջ 24:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Թագաւորն Պարսից...», *տես՝ «Յայսմաւուր որ ըստ պատշաճի աւուր իւրում կարգի» են, Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 33—34:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Թագաւորն Պարսից...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 22—23:*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Ատոմայ և որդւոյ նորին և Վլասայ (sic) և Ներսեհի և Վրձաւորին (sic) և ընկերացն. «Սոքա էին յաւուրս Յազկերտի Պարսից արքային, որ խորհէր մոլորեցուցանել...», *Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 10բ—11ա:*

ԱՌԱՋԻՆ ԱՏՈՄՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

1. Գանձ սրբոց Ատոմեանց. «Գեղապանծ լուսով, | Գեղասքանչ փառով...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ:*

2. Տաղ սրբոց Ատոմեանց. «Սուրբ նահատակ Ատոմ զովեալ, | Եւ զօրավար զօրաց կարգեալ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ:*

3. Շարական սրբոց Ատովմանց. «Աղաչեմք ըզքեզ. տէր, բարեխօսութեամբ սրբոց Ատովմանց...», *տես՝ «Շարական հոգևոր երգոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց», Կ. Պոլիս, 1853, էջ 639—640:*

Այս բնագիրը տես նաև «Շարակնոց»-ի բոլոր հրատարակություններում։ Գտնվում է նաև «Ժամագրքի» մեջ. տես օրինակ՝ «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ», Վենետիկ, 1898, էջ 1223։

Սույն շարականը Ներսես Շնորհալու հեղինակությունն է, ինչպես տեղեկանում ենք Հակոբ Սսեցու տված տեղեկություններից, հմմտ. աստ, հտ. Ա, էջ LXXIII, տող 38։

Բ. ԵՐԿՐՈՐԴ ԱՏՈՄՅԱՆՆԵՐ

Վկայութիւն մեծ խոստովանողի Քրիստոսի Սմբատայ սպարապետին Հայոց և ՃՌ մարտիրոսացն Ատովմայ և այլ սրբոցն որ կատարեցան ի Քրիստոս. «Ի ժամանակին յորում վասն ծովացեալ մեղաց մերոց յարձակեցան ի վերայ երկրի անօրէն ազգն Հագարու, բազում նեղութիւն և տառապանս հասուցանէին տանս Թորգոմեան...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 784, էջ 94ա—96ա(?)։*

Բնագրի մասին տրվում է հետևյալ ծանոթությունը. «Փոքրիկ տարբերութիւններ անտեսելով (սկիզբն ու վերջը)՝ Յովհաննէս Կաթ.ի Պատմութեան (տպ. Մոսկվա 1853) 67—73 էջերն են»[1]*։*

Հայսմավուրքները չունեն Երկրորդ Ատոմյանների վկայաբանությունը, այլ միայն հիշատակություն են անում նրանց մասին՝ մարտի 3-ին. «Յայսմ աւուր վկայութիւն երկրորդ Ատոմայ, Վասակայ, Մլեհի, Գէորգեայ, և երկու հարիւր և յիսուն վկայիցն Հայոց, և Սմբատայ սպարապետի, որ ի Բուղայէ կատարեցան վասն Քրիստոսի», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 105։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 254, § 3 (Ատոմ Գնունի) և § 5 (Ատոմ Անձևացի)։*

Ավգերյան Մկ.— *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Բ, Վենետիկ, 1811, էջ 66—89՝ «Վկայաբանութիւն սրբոց Ատոմեանց՝ առաջնոց և վերջնոց»։*

Գազրիկ— *«Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ Ա—Ե դարերուն (Ոսկեանք, Ստաքիոսեանք, Ատոմեանք)»,* Տաճար, *1911, էջ 76—79։*

Թորոսյան Հովհ.— *«Ատոմեանց նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք»,* Բազմավէպ, *1899, էջ 66—68, 396—400. 1900, էջ 202—206։*

Մովսիսյան = Տեր-Մովսիսյան Հուս. — *«Սրբոց Ատոմեանց, Ղևոնդեանց և Վարդանանց զօրավարաց տօները», Թիֆլիս, 1887։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 15, 20—21 (Առաջին Ատոմեանք), 448 (Երկրորդ Ատոմեանք)։*

Տեր-Մկրտչյան Գալ.— *«Ատոմեանք»,* Արարատ, *1902, էջ 106—108։*

Օրմանյան Մաղ.— *«Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1914, § 239։— Նույնը՝ Բ տպ., Բեյրութ, 1959, § 239։*

Марр Н. Я.— „Из поездки на Афон", *Журнал Министерства Народного Просвещения,* ч. CCCXXII, 1899, № 3, отд. 2, стр. 19.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. *Գ. Հովսեփյան,* Արարատ, *1899, էջ 208—210։— Ստ. Մալխասյանց,* Մշակ, *1899, մայիսի 21, № 91։*

Марр Н. Я.— „Агиографические материалы по грузинским рукописям Ивера. I. Описание пяти пергаментных рукописей", Петербург, 1900, стр. 596.

აბულაძე ი.— „ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX—X სს-ში", თბილისი, 1944, გვ. 01—0199.

[Աբուլաձե Ի.— *«Վրաց և Հայոց գրական կապերը Թ—Ժ դարերում», Թբիլիսի, 1944, էջ 01—0199]։*

Ռուս. ամփոփումը՝ „Грузино-армянские литературные связи в IX—X вв." *(անդ, էջ 0200—0208)։*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. *Ա. Մուրվալյան,* Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի, *1945, № 3—4, էջ 141—150։*

---

[1] *Հ. Ոսկյան, «Ցուցակ հայ. ձեռագրաց Մխիթ. Մատենադարանին ի Վիեննա», հտ. Բ, էջ 346։*

ԱՏՈՒՔՍՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Տես՝ ԱՆՏԻՈՔՈՍ ՊՏՂՈՄԱՅԵՑԻ[1]։

ԱՏՏԻԿՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ*

(Atticus Constantinopolitanus)

Կ. Պոլսի հունական պատրիարք (406—425 թթ.), որ էր «ազգաւ ի Սեբաստիոյ Հայոց իշխալ»[2]*։ Խորենացու Պատմության մեջ (Խոր. Բ, 57) գտնվում են Սահակ Պարթևի և Ատտիկոսի միջև փոխանակված նամակների պատճեններ, ըստ որոնց՝ Սահակ Պարթևի խնդրանքով Ատտիկոսը միջնորդեց Թեոդոս Բ կայսրի մոտ՝ հրամանագիր ստանալու, որպեսզի արտոնվի Հայաստանի բյուզանդական մասի վրա տարածել նրա կաթողիկոսական իրավասությունը և թույլ տալ, որ այնտեղ Մաշտոցի ղեկավարությամբ հաստատվի հայերեն գիրն ու դպրությունը։ Հիշյալ նամակագրությունից բացի (տես՝ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ), հայտնի են նաև Ատտիկոսի գրվածքներից հայ. թարգմանությամբ հատվածներ, որ նշում ենք ստորև։ Այդ հատվածներից §§ 1-ը և 2-ը տարբեր խմբագրություններով կամ թարգմանություններով գտնվում են հետևյալ երկերի մեջ. ա. Տիմոթեոս Կուզի «Հակաճառությիւն» (տպ. Էջմիածին, 1908), որը թարգմանված է համարվում Ե դարում. բ. Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք Պարապմանց» (տպ. Կ. Պոլիս, 1717), որը Ը դարի թարգմանություն է՝ Ստեփանոս Սյունեցու ձեռքով. գ. «Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի, որ է երրորդ տիեզերական ժողով» (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1905), որը ԺԸ դարի թարգմանություն է՝ Գեորգ Մխլայիմի ձեռքով։ § 3-ը գտնվում է միայն «Գիրք Պարապմանց»-ում. իսկ § 4-ը գտնվում է «Գործք Քաղկեդոնի ժողովոյն» գրքում (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1777), որը նույն Գեորգ Մխլայիմի թարգմանությունն է։*

1 *Ներկա հատորի հավելվածում։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Literatur", Bd. III, Freiburg i. B., 1912, S. 361—362.— C. J. v. Hefele, „Atticus, Bischof von Constantinopol", *տես ի* „Wetzer und Welte's Kirchenlexikon", Bd. I, Freiburg i. B., 1882, S. 1564—1565.

2 *«Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն», Վաղարշապատ, 1897, էջ 558։*

* * *

1. Երանելւոյն Ատտիկ[ե]այ եպիսկապոսի (sic) Կոստանտինոպողսացւոյ (sic). «Այսօր Քրիստոս տէրն զմարդասիրութեանն ... աստուածութեանն արժանաւորութիւն նախ ճան զաշխարհս ունէր», *տես՝ «Հակաճառութիւն», էջ 30։*

Տես կրկին՝ «Այսօր... աստուածական արժանաւորութեանն նախ ճան զհիմնարկութիւն աշխարհի նախազայր», *անդ, էջ 73։*

— Ատտիկեայ եպիսկոպոսի. «Այսօր Քրիստոս տէրն մեր զմարդասիրութեանն... ըստ աստուածութեանն պատւոյ յառաջագոյն էր», *տես՝ «Գիրք Պարապմանց», էջ 210։*

— Ատտիկոս վերատեսչին Կոստանդնուպոլսոյ. «Այսօր տէրն Քրիստոս զմարդասիրութեան... ծննդեամբ աստուածային իշխանութեանն յառաջմանէ էր», *տես ձեռ. № 1905, էջ 401ա։*

Հատվածի հուն. բնագիրը՝ „Ἀττικοῦ ἐπισκόπου Κωνσταντινουπόλεως" (*սկ.* «Σήμερον ὁ Χριστὸς ὁ καὶ δεσπότης τὴν τῆς φιλανθρωπίας γέννησιν ἀνεδέξατο...") *տես՝* J. D. Mansi, „Sacrorum conciliorum nova et amplissima collectio", t. IV, Florentiae, 1760, p. 1193—1196. *Այլ տպ. տես՝* J.-P. Migne, „Patrologiae cursus completus", ser. gr., t. LXXVI, Parisiis, 1859, p. 1213.

2. Ապա այնոցիկ ի վերայ բերէ դարձեալ. «Մարդասիրութեան բանն թափի անթափելի գոլով զբնութիւնն... թագաւորն ի մուր ստորանկանի», *տես՝ «Հակաճառութիւն», էջ 30։*

Տես կրկին՝ «Մարդասիրութեան... ի մուր դնանի», *անդ, էջ 73.*

— Եւ ապա ի վերայ այսոցիկ բերէ դարձեալ. «Մարդասիրութեամբ[1] բանն ունայնանայ, ունայն[2] գոլով բնութեամբ... ի

1 *Ձեռագրերում պատահում է նաև՝* մարդասիրութեան։

2 *Մյուս ձեռագրեր ունեն՝* անունայն։

մուր դնի», *տես՝ «Գիրք Պարապմանց», էջ 210։*

— Յետոյ դարձեալ ասէ. «Մարդասիրութեան բանն ունայնանայ՝ որ բնութեամբ ունայն է... ի մուր դնի», *տես ձեռ. № 1905, էջ 401ա։*

Հատվածի հուն. բնագիրը, „Εἶτα τούτοις ἐπιφέρει πάλιν [᾿Αττικὸς ἐπίσκοπος Κωνσταντινουπόλεως]" *(սկ.* „Ὁ τῆς φιλανθρωπίας λόγος κενοῦται...") *տես՝* J. D. Mansi, „Sacr. conc. ... collectio", t. IV, p 1196. *Այլ տպ. տես* J.-P. Migne, „Patr. curs. compl.", ser. gr., t. LXXVI, p. 1213

3. Ատտիկոսի Կոստանդի[ն]ուպոլսի եպիսկոպոսի. «Երէ զոփ որոշեցեն[1]... գեղեցիկ վարուց առաջնորդ և օրինադիր», *տես՝ «Գիրք Պարապմանց», էջ 456—457։*

Հատվածի հուն. բնագիրը՝ „Ὁμοίως τοῦ αὐτοῦ [᾿Αττικοῦ ἐπισκόπου Κωνσταντινουπόλεως]" *(սկ.* „Εἴ τινα διακρίνει ἡ τοῦ μονογενοῦς ἐνανθρώπησις...") *տես՝* J. D. Mansi, „Sacr. conc. ... collectio", t. IV, p. 1196.

4. Երանելի Ատտիկոսին ի թղթոյն առ Ե[ւ]փսիւքն. «Ինչո՞ւմն պիտէր գործել այն ամէնիմաստն... մահուամբ հաստատեաց», *տես՝ ձեռ. № 1777, էջ 249ա—249բ։*

Հատվածի հուն. բնագիրը՝ „Τοῦ μακαρίου ᾿Αττικοῦ ἐκ τῆς πρὸς Εὐψύχιον ἐπιστολῆς" *(սկ.* „Τί τοίνυν ἐχρῆν τὸν πάνσοφον πραγματεύσασθαι...") *տես՝* J. D. Mansi, „Sacr. conc. ... collectio", t. VII, Florentiae, 1762, p. 472. *Այլ տպ. տես՝* J.-P. Migne, „Patr. curs. compl.", ser. gr., t. LXXXIII, Parisiis 1859, p. 212.

⊠ *Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» ժողովածուում Ատտիկոսի անունով գտնվող հատվածը (սկ.* «Այսօր Քս. տէր զմարդասիրութեան») *ուրիշ բան չէ, բայց եթե վերոնշյալ §§ 1 և 2 հատվածներից քաղվածաբար ի մի ձուլված և վերախմբագրված մի բնագիր, տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 353ա։*

[1] *Որոշ ձեռագրեր ունեն՝* երէ ոփ որոշեցէ *կամ* երէ զոփ որոշեցէ։

ԱՏՏԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

— *«Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 72։*

— *«Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 31։*

— *«Կորիւն. Վարք Մաշթոցի», Երուսաղեմ, 1930, էջ 35—36։*

— *«Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն», Վաղարշապատ, 1897, Զ 20 և 22. Է 2, 3, 4, 13, 14, 17, 18, 21, 25, 28, 37 և 41։*

— *«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 52։*

— *«Պատմութիւն վարուց, սքանչելեաց և գիւտածոյ սրբոյն Յոհաննու Ոսկեբերան հայրապետին Կոստանդնուպոլսոյ», Վենետիկ, 1751, էջ 249։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 261։*

Զարբհանալյան Գար.— *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 317—318, 512 և 517։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 503—506։*

Սարգիսյան Բարս.— *«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1289։*

ԱՏՐՆԵՐՍԵՀ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ

Ատենաբան, գիտնական ու բանաստեղծ, ապրած՝ ԺԱ դ.։ Մատթեոս Ուռհայեցին իր ժամանակագրության մեջ նրան հիշատակում է 1065 տարեթվի տակ. «Ատրներսէհ ի Բագրեւանդ գաւառէ իշխան Հայոց, և սա էր այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր, ուսեալ ի մեծ Արգինա, հասեալ ամենայն շնորհաց աստուածեղէն կտակարանաց և կարող էր կալ ի դիմի ամենայն իմաստ-

նոցն Հռոմոց հզօր գիտութեամբ և զարմանալի ատենախօսութեամբ, նմանեալ Գագկայ [Երկրորդի Թագաւորին] և այլոց իմաստասիրացն Հայոց»[1]։ Ատրներսեհին հիշատակում է նաև Վարդան Հայկազնը իր «Տաղ գերեզմանական»-ում՝ ասելով, որ նա «իւր պերճ բանիւքն էր պանծալի, չափովք տաղի Հոմերոսի»[2]։ Նրա գրածներից ոչինչ չի հասել մեզ։

Ինչպես Հ. Աճառյանն է նկատել՝ Ուռհայեցու ժամանակագրության տպագրության համար օգտագործված 6 ձեռագրերից երեքում՝ այս հեղինակի անունն **Ատրներսեհ** է, իսկ մյուս երեքում՝ **Ներսեհ**[3]։ Ելնելով Աճառյանի այս դիտողությունից՝ մենք ենթադրում ենք, որ Ատրներսեհ-ը հավանաբար գրչական աղավաղում է և հեղինակի անունը պետք է եղած լինի **Ներսեհ**։ Այս ենթադրությանն ուղղակի հիմք են տալիս ձեռագրերից երկուսը՝ «անդ էր Ներսէհ», «և տէր Ներսեհ». նաև Ուռհայեցու երուսաղեմյան հրատարակությունը, որն ունի՝ «և տէր Ներսէս»[4]. Բառերի այս միացությունները կարող էին դյուրությամբ աղավաղվել և տալ **Ատրներսեհ**։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 263, §18։

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Դ տպ., Վենետիկ, 1897, էջ 701—702 (Ատրներսեհ Բագրևանդացի), 801 (Ներսէս Իշխան)։ Նույնի Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 700 և 796—797։

ԱՏՐՆԵՐՍԵՀ [ԱԴՐԻԱՆՈՍ] ՀՌՈՄԱՅԵՑԻ*

(Adrianus Romanus martyr)

Հռոմի Պրոբոս կայսրի (276—282 թթ.) որդին։ Դավանելով քրիստոնեությունը՝ գլխատվեց Նիկոմեդիայում Լիկինիոս կայսրի հրամանով Դ դ. սկզբներին։ Հայսմավուրքներում ունենք նրա վկայաբանությունը։

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Ատրներսեհի վկայի. «Քրիստոսի մարտիրոսն Ատրներսեհ՝ որդի էր Պրոբոսի Հռոմայ արքային. և յետ մահուան հօրն իւրոյ եղև քրիստոնեայ...», տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 101—102։

Այլ տպ.— **Վկայաբանութիւն Ատրներսեհի. «Քրիստոսի մարտիրոսն...»** (հրատ. G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 448—449.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour, martyre de saint Aternerseh“ տեսնել անդ, նույն էջում, թարգմանչի կողմից։

Այս բնագիրն աննշան փոփոխումներով մտել է նաև Գրիգոր Ծերենցի հայսմավուրքի մեջ. տես՝

Այլ տպ.— **Վկայաբանութիւն սրբոյն Ատրներսեհի, որ էր որդի Պրոբոսի Հռոմայ թագաւորին. «Եւ յետ մահուան հօրն իւրոյ՝ եղև քրիստոնեայ...»**, տես՝ «Ճառ սրբոց վկայից» են (Յայսմաւուրք), Կ. Պոլիս, 1706, էջ 60։

Այլ տպ.— **Վկայաբանութիւն են. «Եւ յետ մահուան...»**, տես՝ «Յայսմ աւուր որ ըստ պատշաճի աւուր իւրում կարգի» են, Կ. Պոլիս, 1706(—1708), էջ 51—52։

Այլ տպ.— **Վկայաբանութիւն են. «Եւ յետ մահուան...»**, տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 43։

2 (Անանուն խմբագր.).

Ատրներսեհի. «Որդի [էր] սուրբ՝ Հռոմայ արքային. գնաց առ Լիկիանոս. Ընդէ՞ր, ասէ, սպանանես զզօրս Հռոմոց...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 17բ։

---

1 «Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 183—184։

2 Տես՝ **Բազմավէպ**, 1873, էջ 265։

3 Տես ժամանակագրության վերոնշյալ հրատարակությունը, էջ 183, ծան. 6։

4 «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869, էջ 221։

* **ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.** J. Pinius, „De S. Adriano martyre Nicomediae, ut volunt“, *Acta Sanctorum*, Augusti t. V, Parisiis, 1868, p. 808—811. **Մկ. Ավգերյան**, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 67։

⊠ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 19բ—20ա, սկ. «Քս.ի վկայն Ատրներսեհ որդի էր») ևն։

Վերոնշյալ հայ. բնագրերի հետ հմմտ. վկայաբանության հուն. բնագիրը և առընթեր լատ. թարգմանությունը՝ „Martyrium [S. Adriani] auctore anonymo, e codice ms. Bibliothecae Caesareae Vindobonensis, interprete Joanne Pinio“, *Acta Sanctorum*, Augusti t. V, p. 810—811.

ԱՐԱԳՈՆԱՑԻ

Տես՝ ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ։

ԱՐԱԶԼՈՒ ՍԱՐԳԻՍ

ԺԸ դ. հայ աշուղ, որի մասին կենսագրական տեղեկություններ չունենք։

* * *

1. (Անխորագիր) «Նազանի՛, թէ կուզես Քու բաղբաթը, |Հագնիս էդ դումաշը, ալը՝ լաւ կըլի...», տես՝ Գ. Ախվերդյան, «Հայ աշուղներ», Թիֆլիս, 1903, էջ 43։

4 տուն։ Վերջում՝ «Արազլուն եմ, քու հասրաթըդ կու քաշեմ, | Պաշեմ էդ երեսիդ խալը՝ լաւ կըլի»։

Այլ տպ.— (Անխորագիր) «Նազանի՛...», Տես՝ Տ. Պալյան (հրատ.), «Հայ աշուղներ», հտ. Ա, Զմյուռնիա, 1911, էջ 262։
4 տուն։

Այլ տպ.— Նազանի՛, թէ կ'ուզես Քու բաղբաթը. «Նազանի՛...», տես՝ Հասմիկ Սահակյան, «Հայ աշուղներ XVII—XVIII դդ.», Երևան, 1961, էջ 366։ Ծանոթագր.՝ էջ 426։

4 տուն։ Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 3751 ձեռագրից։

2. Փարի. «Գիւլաբաթին բաֆտա, կապաղ սէթնդուր, | Հագի՛ր, քեզ վայել է, նա՛զանի փարի...», տես՝ Գ. Թարվերդյան (հրատ.), «Հայ աշուղներ», Երևան, 1937, էջ 29։
3 տուն։

Այլ տպ.— Փարի. «Գիւլաբաթին բաֆտա...», տես՝ Հասմիկ Սահակյան, «Հայ աշուղներ XVII—XVIII դդ.», էջ 367։ Ծանոթագր.՝ էջ 426։

Արտատպ. նախորդ հրատարակությունից։

ԱՐԱԿԼԱՑԻ

Տես՝ ԹԵՈԴԻՏՈՍ ՀԵՐԱԿԼԱՑԻ։
ԹԵՈԴՈՐԵՏՈՍ ՀԵՐԱԿԼԱՑԻ։
ԹԵՈԴՈՐՈՍ ՀԵՐԱԿԼԱՑԻ ՍՏՐԱՏ.։

ԱՐԱՀԵԶԱՑԻ

Տես՝ ԳԻՒՏ ԱՐԱՀԵԶԱՑԻ։

ԱՐԱՄ

Թ/Ժ դդ. հայ մատենագիր, որի մասին կենսագրական տեղեկություններ բացակայում են։ Խոսրով Անձևացու ուսուցիչն է եղել։ Ժամանակակից Անանիա Մոկացի կաթողիկոսը խոսում է նրա մասին՝ Խոսրով Անձևացուն ուղղած իր վիճաբանական թղթում, հետևյալ բառերով. «Այլ դու Արամին աշակերտեալ, անդուստ ... զնովաւ, զի նա թերևս զպտուղ երախայրեացն միայն արգելով բաշաղէր, այլ դու բնաւին զհայրապետականս բառնալ զաթոռ ձեռնարկեցեր»։ Ծանոթ է Արամի մի անտիպ թուղթը կրոնական հարցերի շուրջ՝ Անձևացեաց Ատոմ իշխանին ուղղված։ Այս թղթի գրության ժամանակը պետք է համարել, ըստ Գար. Հովսեփյանի, 892—893 թ.։

* * *

Թուղթ Արամայ, զոր գրեաց պատասխանի Ատոմոյ Անձաւացեաց իշխանի ի սակս պէսպէս հարցմանց նորա. «Աստուածապահ և աստուածասէր իշխանիդ իմոյ մեծազգանի աստուածատուեալ իմաստիցդ գիր և հրաման եհաս առ իս, զոր ընթերցեալ յոյժ ուրախ եղէ զԱստուծոյ, որ բազմաշառաւիղ հաւատոց բոց և հոգեհանճար խոհականութեանդ զպտուղ խոնարհութեան շնորհաց առընդունելոյ զաղքատիմաց իմոյ զհասս ողբերգութեան առ աղէտս մանկանց եկեղեցւոյ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3710, էջ 317ա—325ա։

Սույն ձեռագիրը ԺԳ դարից է։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 497 (էջ 407ա—415բ) և № 625 (էջ 84բ—86ա)։ Վերջինս համառոտված և կրճատված է։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրության պատմություն», Գ տպ., Վենետիկ, 1895, էջ 569։— Նույնի Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 569։

Հովսեփյան Գար.— «Իններորդ դարի ձեռագրական մի հատակոտոր և Աստմ Անձևացեաց իշխան», Էջմիածին (ամս.), 1946, № 8—10, էջ 43—45։

Տեր-Մկրտչյան Գալ.— «Հայկականք (Ա—ԺԲ)», 1894, էջ 42—43, 59—69։

Արտատպ. է Արարատ ամսագրի 1894 թ. համարից։

ԱՐԱՄԵԱՆ ԼԵԶՈՒԻՆ ԳԱՆՁ

Տես՝ ՍՔՐՈԴԵՐ (Յովակիմ)։

ԱՐԱՊԵԱՆ

Տես՝ ՅԱԿՈԲ ԱՐԱՊԵԱՆ։

ԱՐԱՏՈՍ ՍՈԼԱՑԻ*

(Aratus Solensis)

Հույն բանաստեղծ և աստղագետ (315—239 թթ. նախքան մեր թվ.)։ Հունական մատենագրության մեջ Արատոսից հայտնի է «Յաղագս երևութից և նշանաց» (Φαινόμενα καὶ Διοσημεῖα) անունով աստղագիտական և օդերևութաբանական բանաստեղծությունը, որն ուրիշ բան չէ, բայց եթե ականավոր աստղագետ Եվդոքսոս Կնիդացու (390—337 թթ. նախքան մեր թվ.) «Յաղագս երևութից» (Φαινόμενα) արձակ երկը չափածոյի վերածված՝ Արատոսի կողմից։ Զարբհանալյանը հայ մատենագրության թարգմանական երկերի շարքում Արատոսի անվամբ հիշատակում է մի «Յաղագս միաւորութեան գնդին (Աստղաբաշխական բանք առ Շիրակացին)»[1]. բայց այս վերջինը՝ «Յաղագս միաւորութեան երկնային գնդին» (Περὶ τῆς ἁρμονίας τῆς οὐρανίου σφαίρας) Արատոսի մի այլ աշխատությունն էր։ Զարբհանալյանին հայտնի եղած հայ. այդ բնագրի մի ուրիշ օրինակ՝ Լ. Ս. Խաչիկյանը հայտնաբերել է Բաքվի հայ. ձեռագրերում։ Հ. Մ. Բարթիկյանն այժմ հրատարակության է պատրաստում այդ գործը։

Իսկ Արատոսի վերոհիշյալ «Յաղագս երևութից և նշանաց» աշխատության կապակցությամբ տարբեր կարծիքներ կան հայ բանասիրության մեջ։

Հ. Մ. Բարթիկյանի հետազոտությունների համաձայն՝ Անանիա Շիրակացու անունով հայտնի «Յաղագս ամպոց և նշանաց» երկը, որն սկզբից թերի է և իր առաջին հրատարակիչ Գ. Տեր-Մկրտչյանի կողմից է ստացել այդ վերնագիրը[2], Արատոսի «Յաղագս երևութից և նշանաց» աշխատության երկրորդ մասի (Διοσημεῖα կամ Προγνωστικά) թարգմանությունն է։ Նա տվել է Արատոսի հուն. բնագրի և հայ. «Յաղագս ամպոց և նշանաց»-ի համեմատական հրատարակությունը։ Նշելով, որ հայ. թարգմանությունը, հունարենի հետ համեմատած, մի քանի տեղ տողերի տեղափոխումներ ունի և առավել ևս՝ բացթողումներ, ինչպես և բազմաթիվ նախադասություններ ու հատվածներ, որոնք հուն. բնագրում չկան, Բարթիկյանն ավելացնում է. «Արատոսի գործի հմուտ մասնագետները պետք է ասեն իրենց խոսքը այդ հատվածների մասին։ Բայց և այնպես մենք մեզ պարտավոր ենք համարում ընդգծել հետևյալ հանգամանքը։ Արատոսի սկզբնաղբյուրը՝ Եվդոքսոս Կնիդացու գործը, մեզ չի հասել։ Մենք ի վիճակի չենք գտնելու, թե Արատոսը ինչքանո՞վ է ընդգրկել Կնիդացու գործը, նա բացթողումներ կատարե՞լ է, թե ոչ, նյութը նույն հաջորդականությամբ բերե՞լ է, թե ոչ։ Հարց է ծագում. մեր թարգմա-

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. E. Maass, „Aratea". *Philologische Untersuchungen*, Bd. XII, 1892. G. Kaibel, „Aratea‘, *Hermes*, Bd. XXIX, 1894. J. Martin, „Histoire du texte des Phénomènes d'Aratos", Paris, 1956.

1 Գ. Զարբհանալյան, «Մատենադարան...», Վենետիկ, 1889, էջ 318։

2 Հմմտ. աստ, հտ. Ա, էջ 751, § 3։

նությունն ուղղակի Եվդոքսոս Կնիդացու երկի թարգմանությունը չէ՞ արդյոք, այդ ավելի հատվածները ուղղակի Եվդոքսոսի երկից չե՞ն գալիս արդյոք, հատվածներ, որ, հնարավոր է, Արատոսը բաց է թողել: Եթե դա իսկապես այդպես է, հասկանալի է, որ հայերեն թարգմանության արժեքը անգնահատելի է դառնում։ Եվդոքսոս Կնիդացու բազմաթիվ աշխատություններից և ոչ մեկը մեզ չի հասել։ Սա կլիներ մեզ հասած նրա միակ գործը, այն էլ հայերեն թարգմանությամբ»:

Բարթիկյանը հետագա ուսումնասիրությունների համար ուղի բաց արեց Արատոսի և կամ Եվդոքսոսի հետ հայ. «Յաղագս ամպոց և նշանաց»-ի, ուրեմն նաև՝ Շիրակացու, կապը քննելու ուղղությամբ:

Գ. Վ. Աբգարյանը հայ. «Յաղագս ամպոց և նշանաց»-ը քննում է զուգակցությամբ հայ և օտար աղբյուրների (Արատոս Սոլացի, Բարսեղ Կեսարացի, Անանիա Շիրակացի, Գիրք Վաստակոց են, ինչպես և Երևանի Պետ. Մատ. № 1973 ձեռագրում ընդօրինակված հատվածներ) և գալիս է այն եզրակացության, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը Արատոս Սոլացու երկի թարգմանությունը չէ և որ Արատոսի այդ երկի և հայ. բնագրի նմանությունները բխում են Եվդոքսոս Կնիդացու «Յաղագս երևութից» (Φαινόμενα) աշխատությունից, որն ընդհանուր աղբյուր է հանդիսացել երկուսի համար, այլ խոսքով՝ հայ. բնագիրը Եվդոքսոսի երկի թարգմանությունն է: Աբգարյանը գտնում է, որ Եվդոքսոսի կորած աշխատության հայ. ամբողջական թարգմանության գոյությունը հաստատող փաստեր են պահպանվել № 1973 ձեռագրում և նրանից հրատարակում է օդերևութաբանական 14 նշաններ, ընդ որում այդ նյութերի թարգմանությունը վերագրում է Ան. Շիրակացուն:

Ա. Գ. Աբրահամյանի կարծիքով՝ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի հեղինակը, որն անպայման Շիրակացին է, պիտի օգտված լինի ոչ թե Արատոս Սոլացու չափածո բնագրից և կամ Եվդոքսոս Կնիդացու մեզ չհասած աշխատությունից, այլ «Գիրք Վաստակոց»-ում Արատոսից բերված բնագրի մի ընդարձակ ընդօրինակությունից. և ապա, կանգ առնելով № 1973 ձեռագրում գտնվող օդերևութաբանական այն նյութերի վրա, որոնցից 14 նշան հրատարակել էր Աբգարյանը, գտնում է, որ դրանք «Յաղագս ամպոց և նշանաց»-ի տարբերակներից մեկն են ներկայացնում և հրատարակում է այդ նյութերն ամբողջությամբ:

Ա. Ա. Ասլանյանը գտնում է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը կարելի չէ թարգմանություն համարել, որովհետև այդ գրվածքում «Շիրակացին ելնում էր եղանակի վերաբերյալ իր սեփական դիտողություններից և ձգտում էր իր աշխատությունը դարձնել Հայաստանի բնական պայմաններին առավել համապատասխան»: Այս կարծիքը նա հայտնում է առանց ժխտելու՝ Արատոսի „Διοσημεῖα“-ի հետ աղերսի հարցը և նշելով միաժամանակ վերջինիս կապը Թեոփրաստոսի «Յաղագս պատմութեան բուսոց» (Περὶ φυτῶν ἱστορίαι) երկի Է հատորի հետ:

Ինչպես նկատելի է՝ Արատոս Սոլացու և «Յաղագս ամպոց և նշանաց»-ի աղերսի հարցը հայ բանասիրության համար տակավին մնում է լուծելի խնդիր:

Արատոսի «Յաղագս երևույթից և նշանաց»-ի հուն. բնագիրը և նրա լատ. թարգմանությունը առաջին անգամ տպագրվել են հետևյալ ժողովածուի մեջ. „Astronomici veteres“ (Venetiis, cure et dilig. Aldi Romani, 1499) և այնուհետև ունեցել է բազմաթիվ առանձին հրատարակություններ՝ „Arati Phaenomena et Diosemeia“ կամ „Phaenomena et Prognostica“ խորագրով: Հիշյալ հրատարակությունների և զանազան լեզուներով թարգմանությունների մասին տես՝ J.-Th. Graesse, „Trésor de livres rares et précieux“, t. I, Dresde, 1859, p. 176—177. J.-Ch. Brunot, „Manuel du libraire et de l'amateur de livres“, t. I, Paris, 1860, p. 375—376. Նորագույն հրատարակություններից է՝ „Aratus, with an English translation by G. R. Mair“, London, 1955. „Arati Phaenomena. Introduction, texte critique, commentaire et traduction par J. Martin“, Florence, 1956.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Գ. Վ.— *«Շիրակացուն վերագրված 'Յաղագս ամպոց և նշանաց' աշխատության մասին»,* Պատմա-բանասիրական հանդես, *1971, № 1 (52) էջ 77—98:*

Ռուս. ամփոփումը՝ Г. В. Абгарян, „О метеорологическом труде, приписываемом Анании Ширакаци" *(էջ 93—94):*

Աբգարյան Գ. Վ.— *«Արատոս Սոլացու* Διοσημεῖα *աշխատության կարծեցյալ թարգմանության մասին», անդ, 1972, № 4 (59), էջ 185—208:*

Ռուս. ամփոփումը՝ Г. В. Абгарян, „О мнимом переводе труда Арата из Сол Διοσημεῖα" *(էջ 199):*

Աբգարյան Գ. Վ.— *«Կրկին Արատոս Սոլացու մասին», անդ, 1974, № 3 (66), էջ 206—217:*

Ռուս. ամփոփումը՝ Г. В. Абгарян, „Еще раз о поэме Арата из Сол" *(էջ 218):*

Աբրահամյան Ա. Գ. — *«Օդերևութաբանական մի քանի բնագրեր հայկական ձեռագրերում», տես՝ «Հայագիտական հետազոտություններ» (Ժողովածու, Երևանի Պետ. Համալսարան), պրակ Ա, Երևան, 1974, էջ 177—189:*

Բարթիկյան Հ. Մ.— *«Արատոս Սոլացու* Διοσημεῖα *կամ* Προγνωστικά *աշխատության հայերեն թարգմանությունը»,* Բանբեր Մատենադարանի, *№ 7, 1964, էջ 331—363:*

Բարթիկյան Հ. Մ.— *«Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված 'Յաղագս ամպոց և նշանաց' աշխատության մասին»,* Պատմա-բանասիրական հանդես, *1971. № 4, էջ 133—149:*

Ռուս. ամփոփումը՝ Р. М. Бартикян, „Еще раз о трактате 'Об облаках и знамениях', приписываемом Анании Ширакаци" *(էջ 149—150):*

Բարթիկյան Հ. Մ.— *«Վերջին անգամ Արատոսի երկի հայերեն թարգմանության վերաբերյալ», անդ, 1974, № 3 (66), էջ 193—204:*

Ռուս. ամփոփումը՝ Р. М. Бартикян, „Последний раз об армянском переводе труда Арата" *(էջ 204—205):*

Асланян А. А.— „Древнейший источник по метеорологии на армянском языке", *հետևյալ գրքում.* „Тезисы секционных докладов IV Закавказской конференции по истории науки, посвященной 50-летию образования СССР, Ереван, 3—7 октября, 1972" (Академия наук Арм. ССР— Совет по истории естествознания и техники), Ереван, 1972, стр. 85.

ԱՐԱՐԱԾՈՑ ԳԻՐՔ

Տես՝ ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ, «Արարածք»:

ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

«Արարածոց մեկնութիւն», «Յաղագս վեցօրեայ արարչութեան», «Յաղագս արարչութեան աւուրց» և նման խորագրերով երկեր տեսնել ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ՎԵՑՕՐԷԻՑ ԳԻՐՔ անունների տակ:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՐԿԻՐ

Պատմութիւն գետնաշարժութեան երկրին Արարատեան եղելոյ ի ՌՃԻԸ (=1679) ամի, յամսեան յունիսի, հանեալ ի յիշատակարանէ Յայսմաւուրաց գրատանն էջմիածնի. «Եւ արդ յիշատակաւ ճառեցից զանցուած ժամանակիս զաստուածասաստ բարկութիւնն, որ եկն ի վերայ երկրիս Արարատեան վասն ծովացեալ մեղաց մարդկան...», Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 32, էջ 27ա—27բ:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՎԿԱՅՔ
(Martyres in monte Ararath)

Ըստ լատինական վկայաբանությունների՝ 10.000 վկաներ, որոնք, Ակատիոս զորավարի հետ միասին, նահատակվել են Հռոմի Ադրիանոս կայսեր օրով, 118 թ., Հայաստանի Արարատ լեռան վրա: Հրատարակված են

լատինական վկայաբանության երկու տարբեր խմբագրություններ, Դ. Պապեբրոքի ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով[1]։ Այդ հրատարակության հիման վրա Արարատյան վկաների մասին գրել են Մկ. Ավգերյանը[2], Ղ. Ալիշանը[3], Մ. Օրմանյանը[4], Հ. Աճառյանը[5] և Ս. Կոգյանը[6]։

ԱՐԱՐՈՂԱՐԱՆ

Տե՛ս ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ։

ԱՐԳԵԼԱՆԵՑԻ

Տե՛ս ԱՆԴՐԷԱՍ ԱՐԳԵԼԱՆԵՑԻ։
ԵՂԻԱ ԲԵՐԿՐԵՑԻ։

ԱՐԳԵՆՏԷՍ (Եւստրատիոս)*

(Eustratius Argentes)

ԺԸ դ. հույն հեղինակ, ծն. Քիոսում 1691 թ. և մեռ. 1757 թ.։ Մասնագիտությամբ եղել է բժիշկ, բայց զբաղվել է նաև աստվածաբանական և կրոնա-ծիսական ուսումնասիրություններով, այդ պատճառով գիտական գրականությանը հայտնի է որպես բժիշկ-իմաստասեր (ἰατροφιλόσοφος)*։ Արգենտեսը ԺԸ դ. հայ մշակութային գործիչ Գեորգ Մխլայիմի հետ բարեկամական սերտ կապեր է ունեցել և իր ժամանակի հայ-հունական հարաբերությունների մեջ դրական դեր է կատարել՝ իր գրիչն անվերապահորեն շարժելով հօգուտ երկու ժողովուրդների համերաշխության։ Հայ. թարգմանությամբ ունենք նրա երկերից երեքը, որոնք լատինների դեմ ուղղված հակաճառություններ են։* «Ձեռնարկիկս յաղագս մկրտութեան»*-ը Մելքիսեդեկ Բանասերի ձեռքով է թարգմանվել 1763 թ. Կ. Պոլսում, բայց նախքան այդ՝ նույն գրքի 37-րդ գլուխը, որը հայերին է վերաբերում և որը գրքի հուն. բնագրի հրատարակությունից դուրս էր մնացել հայատյացների սադրանքով, Գեորգ Մխլայիմի ջանքերով տպագրվել էր առանձին (հուն. բնագիր), որից հետո հրատարակվել էր նաև նրա հայ. թարգմանությունը։* «Յաղագս սըրբացուցման խորհրդոյ գոհութեան» *երկը թարգմանվել է 1762 թ., թարգմանիչն անհայտ է. իսկ* «Վիճաբանութիւն ընդդէմ փափիստայից»*-ի և՛ թարգմանիչը, և՛ թարգմանության ժամանակն անհայտ են։*

* * *

1. Ձեռնարկիկս յաղագս մկրտութեան՝ կոչեցեալ Ձեռնածութիւն մոլորելոց: Շարադրեալ ի բժիշկ իմաստասիրէ՝ քիր Եւստրադիոս Արճէնտի մականուանեալ Քիոս կղզացւոյ, աստուածային նախանձու շարժեցելոյն, հաստատապէս ի սմին ապացուցեալ, թէ անհնար է այլապէս, զիարդ և իցէ կերպիւ, կատարիլ յԱստուծուստ առաքելոց տուեալն մկրտութիւն, եթէ ոչ երիւք ընկղմամբք, ճշմարտապէս ի նոցանէ որպէս հաւատալիք կաթուղիկէ, առաքելական, արևելեան սրբուհի ուղղափառ եկեղեցին Քրիստոսի ընկալաւ, և մինչև ցայժմ առնէ: Իսկ յարդիս տպիւք արտադրեցեալ հրամանաւ ամենասրբոյ տիեզերական պատրիարգի տեառն տեառն Կիւրղի, ի Կոստանդնուպոլիս, յամի փրկչին 1756, մարտի 1: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 883, էջ 3ա—73ա։*

Բնագրի բուն խորագիրն է՝ «Յաղագս խորհրդոյ, որ ըստ Քրիստոսի, սրբոյ մկրտութեան» *(սկ.* «Արդարութեամբ և իրաւամբ վայելէ առ ի տարակուսիլ և զարմանալ ումեք»)։

---

1 D. Papebrochius, „De SS. decem millibus crucifixorum in monte Ararath, item de MCCCCLXXX martyribus sub rege Persarum Chosroe in Palaestina", *Acta Sanctorum*, Junii t. V, Parisiis et Romae, 1867, p. 151—166.

2 *Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 67—68։*

3 *Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 474—477։ Նույն, «Արշալոյս քրիստոնէութեան հայոց», Վենետիկ, 1901, էջ 70—72. իսկ Բ տպ. Վենետիկ, 1920, էջ 71—73։*

4 *Մ. Օրմանյան (=Քննասեր), «Առաքեալներէն մինչև Լուսաւորիչ»,* Լումայ, *1904, № 5 (սեպտ.—հոկտ.), էջ 92—93։*

5 *Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 87—88, § 1։*

6 *Ս. Կոգյան, «Հայոց եկեղեցին», Բեյրութ, 1961, էջ 51—52։*

* **ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.** „Παύλου Δρανδάκη Μεγάλη Ἑλληνικὴ Ἐγκυκλοπαίδεια", τ. Ε', σ. 357—358.

Բնագրին կցված են թարգմանիչ Մելքիսեդեկ Բանասերի երեք ընդարձակ հիշատակարանները և վերջաբանը, որոնք պատմական կարևոր տեղեկություններ են պարունակում թե՛ սույն աշխատության և թե՛ հայհունական հարաբերությունների մասին: Դրանք են՝

ա. Խօսք թարգմանողի *(էջ 73ա—81ա).*

«Կատարեցաւ թարգմանութիւնս ի յառաջին տպագրութենէ յերեսուն և երկու գլուխ բաժանեալ գրգկանս հանդերձ դրամբն՝ թողլով զերկու բաժին գործոյն և տեառն զովասանութեամբ զառաջաբանութիւնն: Բայց գերազանց իմաստասէրս մերձ ի կարիսն ի միջոյ վերջին մահճացն թուղթ իմն գրեալ ունի առ եղբօրորդին իւր (որոյ անունն Լեւոնի ասեն)[1], և ի պատահիլն նորին Մխլայիմօղլու Գէորգ վարդապետին, առ նա թողեալ էր զգիրն զայն որ է այսպէս և ըստ այսմ կերպի»:

Եվ տրվում է Արգենտեսի առ Լևոնի թղթի պատճենը, որ է՝

«Յորժամ հանդերձ Աստուծով բարեճանապարհիս ի Պոլիսն, և զի պատահեցիս ընդ Արմէնին այնմիկ, որ է աստուածաբանութեան վարդապետ տէր Գէորգիոս Մխլայիմօղլու Պոլսեցի, որ գտանի ի Գուռուչէշմէն, ի տան Գուլէլի-օղլուին, և զի ինձ զնա ողջունեսցես ջերմապէս, և զի ասասցես իւրն, զի ընկալայ զպատուական թուղթն իւր, ի միասին հանդերձ պատասխանականաւն որ տպեաց յաղագս որ ըստ իւրեանց մկրտութեանն, և ինձ հաճոյացաւ ըստ բազում եղանակի, ուստի զինքն աղաչեմ զի մի՛ ինձ քինասցի, ոչ նաև, զի ինձ չափեսցէ չըհամաբողութիւն կամ անհոգութիւն զայն, որ այսքան ժամանակէ հետէ ո՛չ իւրն պատասխանեցի, որովհետև ունէի իրաւացի բանաւոր պատճառ՝ զտկարութիւնն մարմնոյ իմոյ, և յայժմ Աստուած գիտէ, թէ որքան անկարութեամբ գրեմ: Նա և, զի ասասցես իւրն, զի տպագրողն զշարադրութիւնն իմ, փոխեաց զոմանս, յաւել և սակաւս, բայց մանաւանդ

1 Փակագծում եղած բառերն այս ձեռագրում չկան. դրանք կան միայն № 863 ձեռագրի լուսանցքում:

եբարձ կատարելապէս ըղ Լէ լուսանցաթուագիրն որ վասն Արմէնացն, և նմանի նա նոցա որ ասէ առաքեալն զի ոչ գիտեն, ոչ թէ զինչ ասեն, և թէ յաղագս որո՞ց պնդեալն են, և այլուր նոյնն. և առ յորս, զորս ոչ տեսեալն են, մտանեն, մոլորեալք և մոլորեցուցիչք: Զունիմ զօրութիւն զի գրեցից որչափ որ վայելէ վասն այսորիկ, այլ միայն համառօտութեամբ աստանօր զվայելեալսն առ այս նիւթ» ևն: Այստեղ նամակի հեղինակը, «նախանձոտ տպագրողի» կատարած զեղծումներից մի շարք օրինակներ բերելուց հետո, ամբողջությամբ տալիս է տպագրից կրճատված 37-րդ գլխի բնագիրը (սկ. «Ուստի և Արմէնքն. երիւք ընկղմամբք յանուն Հօր և յՈրդւոյ և Սրբոյ Հոգւոյն մկրտեալք, այլոյ մկրտութեան պէտս ոչ ունին, և ինձ թուի զի և ոչ ևս օծման» *ևն), ուր խոսվում է հայոց ծիսական և դավանական հարցերի մասին:*

բ. Երկրորդ անգամ խօսք թարգմանողի (էջ 81ա—84ա).

«Զայս գիրս ի պատահիլն եղբօրորդւոյն ծայրագոյն իմաստասիրին Եւստրատ[ի]ոսի առ աշխատաւոր Գէորգ վարդապետն, ի նա թողեալ էր, և Գէորգ վարդապետն զյունարէնն ամբողջապէս տպեալ ի յՕրթագիւղն ի տպարանի խամ Ռուպէնին, որ Յունաց տպարան ունէր, և ցրուեաց ի մէջ Յունաց, և զձեռագիրն իմաստասիրին ետ ի պահեստ Յոնանեան տիրացու Պետրոսին, բայց հայեվար՝ այսքանս թարգմանեալ և ի Վէզիրխանն տպեալ ի տպարանի Աստուածատրին[1], որոյ զօրինակն աստ ևս եդաք, որ է ըստ մտացն, և ոչ ըստ բառին, ի լրութենէ ուժոյ

1 Ակնարկվող հրատարակությունը հայտնի է եղել Գ. Զարբհանալյանին («Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883, էջ 186—187), որի մոտ, սակայն, հեղինակի Եւստրատիոս *անձնանունը վրիպմամբ դարձել է* Եւստաթէոս: *Ահա այդ հրատարակությունը.*

«Գրքոյկ ծայրագոյն իմաստասիրին Հոռոմց ժամանակիս մերոյ՝ Սախըզցի քիրիցի Եւստրատիոս Արկենթի մականուանեալ բժշկին, ընդդէմ մկրտութեան Յունաց: Գլուխ 37, գրեալ ի նմանէ վասն Հայոց, իսկ ի բաց թողեալ ի նախանձոտ տպագրել տուողէն»:

Գրքույկի հրատարակողը գրում է. «Ահաւասիկ ծայրագոյն փիլիսոփայն ժամանակիս մերոյ՝ գիրք շա-

թարգմանութեանն, որ և ըստ հասարակ իմացման ժամանակիս հեռենցուցանելով զոհն թարգմանութեան, բայց ի վրիպակութենէ իմեքէ փոխանակ քան նախդրի, կամ շաղկապն մուծեալ կայ ի վերջն, որ է այսպէս.

Թարգմանութիւն ի Միլայիմ-օղլու Գէորգ վարդապետէ, որ է այսպէս (սկ. «Վասն որոյ և Հայք երիւք ընկղմամբք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ մկրտեալք, այլ որիշ մկրտութեան հարկաւորութիւն ոչ ունին, և ինձ երևի որ և ոչ օծման հարկաւորութիւն ունին» են։ Այստեղ տրվում է հիշյալ տպագրում լույս տեսած բնագիրը՝ Գեորգ Միլայիմի թարգմանությունը։

գ. Երրորդ անգամ խօսք թարգմանողի գրգոյս (էջ 84ա—89ա).

«Քաջահաւատ Եւստրատիոս բժիշկ իմաստասէրս, ծնեալ յամի շնորհաց հազար վեց հարիւր իննսուն և մէկ, և վախճանեալ հազար եօթն հարիւր յիսուն և եօթն» են, հեղինակի կյանքի և գործունեության վերաբերյալ տեղեկություններ են տրվում։

Այստեղ ասվում է, որ հեղինակի այս՝ «Յաղագս մկրտութեան» գրքի տպագրության այլայլողները երկու հայատյաց հույն աբեղաներ էին, Քրիստոֆոր Ցոկա և Միսայել Մարմարացի, որոնք այդ արել էին Կ. Պոլսի հունաց պատրիարք Կյուրեղի (1748—1758 թթ.) թույլտվությամբ. «Այս փոքրիկ գիրքս ի Ցանաւ ի տպարանի գրգավաճառ Բանաեօթին տպեալ լինէր. և ինքն Բանաեօթն ոչ սրբագրութեանն կարող մարդ է, և ոչ գիտուն։ Եւ իմաստասէրս որ ասէ՝ ՝Նախանձոտ տպագրիչն՝, վասն քաղաքավարութեան ասէ, ապա թէ ոչ լաւ գիտացեալ է թէ ո՞վ է սրբագրողն իւրոյ գրգոյն՝ որպէս ազգականքն իւր ասացին մեզ, քանզի յոյժ անէծս թուեալ է ի մէջ անկողնոյն՝ չարագործացն այնոցիկ, այլ ի գրելն անորիշ թողու, որովհետև տպագրող ասելով իմացեալ լինի զծախսն հոգացողն, կամ հրամանտուողն, կամ զսրբագրողն և վերակացուն, որ երկու բաժին գովասանական առաջաբանութիւն ևս արարեալ էր յառաջքն, զոր ոչ թարգմանեցի, այլ միայն գրգոյն դուռն հաւանելով ի միասին թարգմանեցի։ Նաև տպարանի տէրն ևս կարելի է որ իմանիցի, որ է Բանաեօթն՝ եղբայրագիրն մեր, որ բնաւ մեղադրութեան տեղի չունի, քանզի նա միա՛յն գործարանին տէրն է, ապա թէ ոչ՝ սրբագրիչքն այն երկու հաբեղայքն էին, տպագրողն մանաւանդ ի մեր ազգէն Սեբաստացի Բարսեղի որդի Գաբրիէլն էր»։

Նմանապես ասվում է, որ հիշյալ հույն աբեղաները նույն Կյուրեղ պատրիարքի հրամանով «ՁԱ (81) գլխով ընդդէմ լաթինացւոցն մկրտութեան գիրք մի շարադրեցին և զանունն եդին Սրսկման խայտառակութիւն, վասն թքոյն, աղին, և սրսկման և արհամարհութեան սրբոյ աւազանին, և զայս տպագրեցին ի տպարանի Խամ Ռուպէն Հրէին որ ի յՕրթագիւղն, զանուանսն իւրեանց ոչ դնելով ի նմին, և ի մէջ այն գրքոյն զրպարտութիւնս ոմանս եդեալք էին վասն Հայոց». Իսկ Գեորգ Միլայիմը, կարդալով այդ գիրքը, «ի ԼԲ թղթահամարն գտեալ էր երեք նորագիւտ զրպարտութիւն» և «շարադրեալ կտոր մի բան ընդդէմ այն երից զրպարտութեանցն, և տպեաց և ցրուեաց ի Ճերմակ ծովու կղզիսն, և ի յայլ երկիրս Յունաց, որոյ թարգմանութիւնն է այսպէս. Զրպարտութիւն ուրումն անանուն հաբեղայի ընդդէմ Արմէնաց» են։

բաղդրեալ է, վասն ցուցանելոյ որ Հայք ոչ են հերետիկոսք, այլ ճշմարիտ ուղղադաւանք, բարեպէս մեկնելով զմանս, որք առ բառս միայն ունին զտարբերութիւն և ոչ ի միտս։ Եւ աննախանձաբար՝ (որպէս և է իսկ ճշմարիտ) ցուցեալ է զճշմարիտ գոլն սրբազնութեան մերս մկրտութեան անուամբ սրբոյ Երրորդութեան։ Բայց դատապարտեցեալն հոգւով և մարմնով դերապատրիարքն, նախորդն այժմու յաջորդի նորա բարեմտի, ի ատրելոյ... սուտ կրօնաւոր՝ գինետան երբեմն մուջային, և երկրորդ Նիկողայոսի դատապարտեալ սարկաւագի՝ ի բաց բարձեալ է ի տպեցելոյն, տեսանելով թէ երկրորդ տպեցեալ վայրահաչութեանցն աշակերտի ասբիթւոյն, և իւր մոլար մտացն ընդդիմանայ։ Բայց և շարադրողի գրքոյն առաջնոյ ձեռագիրն առ մեզ է, և մեղադրեալ զիւրայինսն վասն ի բաց բառնալոյ զճշմարիտ իւրն վկայութիւն, թէպէտ և կերպիւ ինչ և նա մեղադրելի է, վասն բաժանեալ կոչելոյ զազգս մեր»։

Արգևնտեսի այս 37-րդ գլխի թարգմանիչը Գեորգ Միխլայիմն էր։

դ. Վերջաբանութիւն թարգմանողի գրգոյս (էջ 89ա—90ա).

«Ահա զայս կտոր գիրս հելլենական լեզուաւ շարադրեալ և տպեալ վեց հարիւր հատ չափ, և ցրուեաց ի մէջ Յունացն. նաև շնորհակալութեան գիր իմն գրեալ ի Սախըզ կղզին առ իմաստասէրս այս և ծանօթացեալ էր ընդ նմա գովելով զգիրքն նորին, բայց հարցանելով ի նմին, թէ վասն էր զազգս մերմէ Հայոց ի մէջ գեղեցիկ գրգոյդ չար և բարի իմն բնաւ չես խօսեցեալ և կամ յիշումն ոչ բերեալ զմկրտութիւնն մեր որպէս գիտեսդ, բայց ի մէջ գրոյն զայս տպեալ գրոյս եղեալ էր քանի մի հատ, և վասն այն պատճառի և նա յղեաց զայս հատուածեալ բանս ատ առ Մխլայիմ Գէորգ վարդապետն ի ձեռն եղբօրորդւոյ իւրոյ և մինչ անկաւ ի ձեռն Գէորգ վարդապետին, նոյնժամայն ոչ յումեք զխորհուրդն ի վեր հանելով, գնացեալ յՕրթագիւղն, թանկագին վարձուք և գնովք ի տան Հրէին, որ Յունաց տպարան ունէր ասացաք, անդ տպեաց ամբողջ և ցրուեաց, և հայեվար ևս այսքան թարգմանեաց, և տպել ետ զայն ումն ի բարեկամացն ի Վեզիր-խանին, ի տպարանի Աստուածատրին։ Եւ աղաչեցաք մեք, թէ զբոլորն զայն ուղարկած գրոյն թարգմանեա, բայց ոչ լուաւ մեզ, այլ այսքանս թարգմանեաց, և ոչ ամբողջապէս. և ձեռագիրն իմաստասիրին պահի ի մօտն Յօնանեան տիրացու Պետրոսին. իսկ եթէ ոմանց սուտ երևի այս վերջին թուղթս, չէ՛ մեղադրելի։ Բայց ի միջոյ միւս մեծ գրգոյն, որ տպեալ է ի Սաքսօնիայու երկիրն, ի գաւառն Լիբսիայ, ի տպարանի Ղօթլօպին յամի տեառն 1760, կարէ ոք ի տեղեաց-տեղեաց ժողովել նոյն գրգոյն զայս թղթոյ զոմանս, նաև զայլս որք ոչ գոն ի սմին անկարծելի և անակնունելի ջատագովութիւնս զոր արարեալ է զազգս մերմէ Հայոց, և զեկեղեցական բացակատարմանց մերոց, որ ես յայժմոյս լռեմ համբերութեամբ, և ոչ յիշատակեմ աստանօր, այլ միայն զայս գրեմ, որ ի թվին Քրիստոսի 1763 և ի մէջ բոլոր փետրվար ամսոյն թարգմանեցաւ գիրքս ի Մելքիսեդէ բանասիրէ ընդ հովանեաւ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն, որ ի մեծն Պոլիս, և Քրիստոսի յուսոյն մերոյ փառք յաւիտեանս, ամէն»։

Երևանի Պետ. Մատենադարանը սույն երկից ունի մի երկրորդ օրինակ ևս՝ ձեռ. № 863 (էջ 2ա—73ա)։

2. Գիրք որ կոչի Յաղագս սրբացուցման խորհրդոյ գոհութեան։ Շարադրեալ ի Քիոսացի Եւստրատիոս ճարտար բժիշկ իմաստասիրէ։ Յունաց քաղաքական ոճիւ։ Եւ թարգմանեցեալ ի թուին Հայոց ՌՄԺԱ, ի մուտն փետրուարի և ի յելն ապրիլի՝ սկսեալ և աւարտեալ։ Ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյն, և ի տան հանգուցեալ Սարգիս ամիրային, որ ի Խաս գիւղն։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 637, էջ 3բ—164ա։*

Բնագրի բուն վերնագիրն է՝ «Եւստրատիոս Քիոսացի (այսինքն Սախզցի) բժիշկ իմաստասիրին Խնդիր յաղագս սրբացուցման խորհրդոյ տէրունական ընթրեացն, պարզաբանեալ երկակի նախադասութեամբ» (*սկ.* «Որովհետև սրբացուցումն տէրունական ընթրեացն, որ ունի լինել ի յուղղափառ քահանայիցն, պարտական է գոլ հիմնաւորեալ...»)։

Ձեռագրի վերջին մասը թափված լինելով՝ 156ա—164ա էջերը հետագայում (1767 թ.) են լրացվել ուրիշի ձեռքով։ Այդ մասին վերջում հիշատակագրված է. «Գրեցաւ վերջի թերի տետրակս առ դրան սրբոյ գահոյիս և լուսանկար աթոռոյս էջմիածնի, ի ՌՄԺԶ թուականիս մերոյ և յամսեանն օգոստոսի»։

Նույն մատ. № 5007 ձեռագրում արտագրված կա այս գրքի միայն վերնագիրը. բնագիրը բացակայում է։

3. Վիճաբանութիւն ընդդէմ փափիստայից, արարեալ երանելոյն Եւստրատիաս (sic) Արկէնդի կոչեցելոյ աստուածաբան և փիլիսոփա և հմուտ աստուածային օրինացն, ապացուցիւ և վկայութեամբ յօրինեալ ի վերայ այնմ բանի թէ՝ Պարտի առ հասարակ իրաւանչիւր ոք հաղորդել ի յերկուց տեսակացն, թարգմանեալ ի յունարէնէ ի հայս։ *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 606, էջ 3ա—16բ (?)։*

Աշխատությունն սկզբից թերի է։ Կան հետևյալ մասերը. «Յօղուած վեցերորդ» *(սկ.* «Յղ. այնմ բէ ե՞րբ և ո՞րպէս անկան փափապաշտքն առ այս սեղանակապուտ աղանդս, որք անարգեն զսրբազան բաժակն»), «Յօղուած եօթներորդ» *(սկ.* «Արդ անա այսպիսի՛ փափս և այսպիսի՛ ժողովս»), «Յօղուած ութերորդ» *(սկ.* «Վայելուչ է, զի քննիցին բանքս այսոքիկ սուտ ժողովոյն»), «Յօղուած իններորդ» *(սկ.* «Վայել է այժմ առ ի քննել և զպատճառս փափապաշտիցն»), «Յօղուած տասներորդ» *(սկ.* «Յետ կործանեալ լինելոյ և ընդունայն ելանելոյ փափապաշտութեան») և «Յօղուած մետասաներորդ» (սկ. «Համաձայնութիւն ճարցն արևելականաց»)։

ԱՐԴԱԼԻՈՆ ԿԱՏԱԿՈՂ*
(Ardalio mimus)

Վկա՝ Մաքսիմիանոս կայսրի (286—305 թթ.) ժամանակ։ Հայսմավուրքներում ունենք նրա համառոտ վկայաբանությունը։ Ձեռագրերում անունը պատահում է Արդալիոն *և* Արդաղիոն, Արդալոն *և* Արդաղոն *ձևերով, երբեմն նաև աղճատված՝* Արքալիոն, Արզալիոն, Ասզալիոն * են։*

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Արդալիոնի կատակողին. «Քրիստոսի մարտիրոսն Արդալիոն՝ կատակող էր և յիմարանայր առաջի Մաքսիմիանոսի կռապաշտ արքային...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 169—170։*

Այլ տպ.— Վկայութիւն են. «Քրիստոսի մարտիրոսն...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1928, p. 309—311.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour martyre de saint Ardalon le comédien" ***տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։***

Այս բնագիրն աննշան փոփոխումներով մտել է նաև Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքի մեջ. տես հաջորդները.

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Մարտիրոսն Քրիստոսի Արդալոն՝ կատակողն յիմար՝ առաջի Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն» են («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 743—744։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Մարտիրոսն Քրիստոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 672—673։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Մարտիրոսն Քրիստոսի...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 513—514։*

2 (Անանուն խմբագր.).

Արդալիոնի[1] կատակողի. «էր յամս Մաքսիմիանոսի արքային՝ յոյժ սիրեցեալ յարքայէն, զի մեծաձայր խրախանօք պանէր զնոսա...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 177ա—177բ։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 292ա—292բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 203 (էջ 225բ—226բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 460բ), № 10 (էջ 420բ), № 219 (էջ 326բ), № 228 (էջ 238ա), № 695 (էջ 270ա), № 696 (էջ 169ա), № 701 (էջ 488ա), № 1035 (էջ 411բ), № 1036 (էջ 483բ), № 1037 (էջ 447բ) և № 1048 (էջ 296). Հալեպի Քառ.-մանկ. եկ. ձեռ. № 151 (էջ 698բ). Մարբուրգի* WdtB. Ms. Or. Fol. 4254 (fol. 476r).

ԱՐԴԱՐԱՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՀԱՅՈՑ
Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ։

ԱՐԵԳԱԿ ՑԵՐԵՒԵԼԱՑՆ (sic)
Տես՝ ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ։

ԱՐԵԹԱՍ ԿԵՍԱՐԱՑԻ
Տես՝ ԱՆԴՐԷԱՍ ԿԵՍԱՐԱՑԻ։

ԱՐԵԹԵԱՆՔ
Տես՝ ԽԱՐԵԹԵԱՆՔ։

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 68։* G. Henschenius, „De sancto Ardalione mimo et martyre", *Acta Sanctorum*, Aprilis t. II, Parisiis, 1865, p. 213.

[1] *Ձեռագրում՝* արզալիոնի։

ԱՐԵՒԵԼԵԱՑ ԳԻՐՔ

Թովմա Արծրունին այս անունով հիշատակում է Մարութա Նփրկերտցու «Վկայք Արևելից» վկայաբանական երկը՝ նրա հեղինակությունը թյուրիմացաբար վերագրելով Աբրահամ Խոստովանողին[1], *որն այդ երկի թարգմանիչն է*[2]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կյուլեսերյան Բաբգ.— *«Եղիշէ», Վիեննա, 1909, էջ 141—149:*

Հացունի Վարդ.— *«Խորհրդածութիւնք Եղիշէի Պատմութեան վերայ», Վենետիկ, 1896, էջ 168—170:*

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԿԱՅՔ [ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ]

Այս անունով հայտնի են 340—379 թթ. Պարսկաստանում Շապուհ Բ թագավորի հալածանքներին զոհ գնացող վկաները, որոնց գլխավոր ներկայացուցիչն է Շմավոն Բար-Սաբոյեն. նրանց վկայաբանությունները տես ՄԱՐՈՒԹԱ ՆՓՐԿԵՐՏՑԻ անվան տակ: Վկայաբանական գրականության մեջ հաճախ Արևելեան վկաներ *անունով են հիշատակվում նաև 168 թ. Մարկոս Ավրելիոս և Լուկիոս Վերոս կայսրերի հարուցած հալածանքների ժամանակ Փոքր Ասիայում նահատակվածները, որոնց գլխավորն էր Զմյուռնիայի եպս. Պողիկարպոս. տես՝ ՊՈՂԻԿԱՐՊՈՍ ԶՄԻՒՌՆԱՑԻ:*

ԱՐԵՒԵԼԻՑ ԳԻՐՔ

Այժմ անծանոթ պատմական երկ, որ Ժ դարում Մեսրոպ Վայոց-ձորեցին իբր աղբյուր օգտագործել է իր «Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի» *աշխատությունը գրելիս, ինչպես կարդում ենք նրա հիշատակարանում. «Ի ՆԺԶ թուականին Հայոց (=967 թ.) ... ծաղկաքաղ արարի զգիրքս զայս* Ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց, *զյաղթութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետացտոհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսեսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից: ...Եւ արդ՝ զայս հանեալ* յԱրևելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց, *և նոււ որդիացելոյ իմոյ սուրբ աւազանին ծննդեամբն՝ Վահանայ Մամիկոնենոյ. ի գեւղն որ կոչի Վարժի»*[1]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կյուլեսերյան Բաբգ.— *«Եղիշէ», Վիեննա, 1909, էջ 144—145:*

Հացունի Վարդ.— *«Խորհրդածութիւնք Եղիշէի Պատմութեան վերայ», Վենետիկ, 1896, էջ 168—170:*

ԱՐԵՒԵԼՑԻ

Տե՛ս ԵՐԵՄԻԱ ԱՐԵՒԵԼՑԻ:
ԽԱՉԱՏՈՒՐ ՇՈՒՌԹԵՑԻ:
ԿԱՐԱՊԵՏ ԱՐԵՒԵԼՑԻ:
ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՒԵԼՑԻ:
ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ:
ՀԱՄԱՄ ԱՐԵՒԵԼՑԻ:
ՄԽԻԹԱՐ ԳՈՇ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒԹՈՒՆՋԻ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ:
ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ:

ԱՐՃՈՒՆԻ

Տե՛ս ՂՈՒԼ ԱՐՃՈՒՆԻ:

ԱՐՋՐՈՒՄԵՑԻ

Տե՛ս ԽԱՉԱՏՈՒՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՐՋՐ.:
ՄՈՎՍԷՍ ԱՐՋՐՈՒՄԵՑԻ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՋՐՈՒՄԵՑԻ:
ՏԱՏՈՒՐ ԱՐՋՐՈՒՄԵՑԻ:

ԱՐԻՍ [ԱՐԵԱՍ] ԵԳԻՊՏԱՑԻ

Տե՛ս ՊՐՈՄՈՍ ԵԳԻՊՏԱՑԻ:

ԱՐԹԵՓԻՈՍ

Տե՛ս ԱՐՏԵՓԻՈՍ:

---

1 *«Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 65:*

2 *Համմտ. սաա, հտ. Ա, էջ 109—110:*

1 *Տե՛ս* Սոփերք Հայկականք, *հտ. Զ, Վենետիկ, 1853, էջ 138—139:*

ԱՐԹԻՆ ԱԿՆԵՑԻ

ԺԸ դ. հայ աշուղ, որի մասին կենսագրական տեղեկություններ չունենք։ Կարծվում է, որ Ակնեցի էր։

***

1. (Անխորագիր) «Ամէն առտու կ'ելլաս սէհրան,|Ես կու լինիմ քեզի հէյրան...», *տես՝ Տ. Պալյան (հրատ.), «Հայ աշուղներ», հտ. Ա, Զմյուռնիա, 1911, էջ 267։*

3 տուն։ Վերջում՝ «Աշուղ Արթին սէտիտներ տողան, | Մալիկս տամ քեզի արմաղան» են։

2. Նազլու դիլբար. «Նազլու դիլբար, եկուր էնենք իխտիլաթ,|Արի դու բէբաֆա մի՛ տուր ինձ ջաֆա...», *տես՝ Գ. Թարվերդյան (հրատ.), «Հայ աշուղներ», Երևան, 1937, էջ 30։*

Այլ տպ.— Նազլու դիլբար. «Նազլու դիլբար...», *տես՝ Հ. Սահակյան, «Հայ աշուղներ XVII—XVIII դդ.», Երևան, 1961, էջ 370։ Ծանոթագր.՝ էջ 427։*

3 տուն։

ԱՐԹԻՆ (Տէր) ԿՈՒՏԻՆԱՑԻ

Հայ տաղասաց։ Բուն անունով՝ Տէր Յարութիւն*։ Ապրել է ԺԸ դ. առաջին կեսում։ Եղել է Կուտինայի Ս. Աստվածածին եկեղեցու պաշտոնյաներից։ Հեղինակ է երեք տաղերի, որոնցով նկարագրել է 1720 թ. հուլիսի 26-ին Կուտինայում տեղի ունեցած մեծ հրդեհը, որից, ինչպես ասում է ինքը, «յաւելի քան զհարիւր շինուածք քանդեցան»։ Հատկապես նկարագրում է Ս. Աստվածածին եկեղեցու հիմնահատակ քանդման և նույն թվականին նաև վերաշինման պարագաները։ Տես՝ Առնակ, «Կուտինահայ տաղասացներ»,* Բազմավէպ, *1923, էջ 171—172 և 230—231։*

ԱՐԹՈՒՆ

Ձեռագրերում պատահում են տաղեր, որոնց տների սկզբնատառերը կազմում են՝ Արթուն, *որը պարզապես թարգմանությունն է* Գրիգոր *անվան։ Հունական* Γρηγόριος *(Գրիգոր) անունը նշանակում է «արթուն». ծագում է* γρηγορέω *(«արթուն մնալ», «հսկել») բայից*[1]*։* Արթուն *սկզբնատառերը կրող մի շարք տաղեր տեսնել ԳՐԻԳՈՐ ՇԻՐՈՒԱՆՑԻ և ԳՐԻԳՈՐ ՕՇԱԿԱՆՑԻ անունների տակ։ Բացառված չէ, որ եղած լինեն նաև նույն սկզբնատառերն օգտագործող ուրիշ Գրիգորներ, ինչպես և ուղղակի* Արթուն *անունով հեղինակներ։*

ԱՐԹՈՒՐ

Տես՝ ՅՈՒՐՈՆՈՒՈՒԱԼ (Ռիքարդ)։

ԱՐԻԱԴՆԱ կամ ԱՐԵԱԴՆԱ*
(Ariadne, Areadne)

Վկայուհի՝ Ադրիանոս կայսրի օրով, մոտ 130 թ., Փռյուգիայի Պրյումնեսոս քաղաքում։ Հայսմավուրքներում ունենք նրա վկայաբանության հայ. թարգմանությունը։ Բնագրի ձեռագիր օրինակներում անունը պատահում է նաև Արիադոն, Արիադոնա, Արիոդոնա, Արեդոնիա, Արիադոյա *և այլ ձևերով։*

***

1 (Տեր-Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբուհւոյն Արէադոնայ, զոր Մարիամ կոչեն. «Ի ժամանակս Ադրիանոսի և Անտոնինեայ ամբարիշտ թագաւորացն՝ էր Արիադոնա աղախին առն կռապաշտի որոյ անուն էր Տերտեղոս...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 153։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբուհւոյն Արիադոնեայ, որ Մարիամ անուանի. «Ի ժամանակս...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. VI, 1911, p. 249—251.

---

[1] *Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 519։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* J. Stiltingus „De S. Ariadne martyre Prymnesiae in Phrygia Salutari; ex Martyrologio Romano et Fastis Graecis", *Acta Sanctorum,* Septembris t. V, Parisiis, 1868, p. 469.— P. Franchi de' Cavalieri, „I martirii di S. Teodoto e di S. Ariadne" (Studi e Testi, 6), Roma, 1901, p. 89—119: „La leggenda di S. Ariadne".— Idem, „Note agiografiche" (Studi e Testi, 8), Roma, 1902 p. 3—21: „Ancora del martirio di S. Ariadne". ***Մ Կ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 68—69,***

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour martyre de sainte Ariadne, qui s'appelle Marie“ *տեսնել անդ. նույն էջե-րում, հրատարակչի կողմից։*

Սույն բնագիրը չնչին փոփոխություններով մտել է նաև Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքի մեջ. տես՝

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբուհւոյն Արիադնեայ. «Ի ժամանակս...», *տես՝ «Ճառ սրբոց վկայից» ևն (Յայսմաւուրք), Կ. Պոլիս, 1706, էջ 108—109։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն ևն. «Ի ժամանակս...», *տես՝ «Յայսմաւուր որ ըստ պատշաճի աւուր իւրում կարգի» ևն, Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 99—100։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն ևն. «Ի ժամանակս...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 78—79։*

2 (Անանուն խմբագր.).

Արիադնեայ աղախնոյն. «Էր սուրբս աղախին առն կռապաշտի, որոյ անուն էր Տերտուլի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 33ա—33բ։*

⊠ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 43բ—44ա) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 83ա), № 10 (էջ 51ա), № 219 (էջ 21ա), № 437 (էջ 78ա), № 695 (էջ 54բ), № 701 (էջ 76բ), № 1035 (էջ 64ա), № 1048 (էջ 27ա) ևն. Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 4787 (fol. 67ᵛ).

Հմմտ. հուն. ընդարձակ վկայաբանությունը՝ „Μαρτύριον τῆς ἁγίας 'Αριάδνης“ *հետևյալ հրատ. մեջ.* P. Franchi de' Cavalieri, „I martirii di S. Teodoto e di S. Ariadne“, Roma, 1901, p. 123—133. *Հմմտ. նաև հուն. այդ խմբագրության պատկանող երկու հատակտորներ՝* Idem, „Note agiografiche“, Roma, 1902, p. 9—21.

ԱՐԻԱԴՆՈՍ ԴԱՏԱՒՈՐ

Տես՝ ՓԻԼԻՄՈՆ ՓՈՂԱՀԱՐ։

ԱՐԻԹՄԵՏԻԿԱՅ
(Arithmetica)

Թվաբանական անտիպ դասագիրք։ Հեղինակն՝ անհայտ։ Ձեռագրում, որը ԺԸ դ. գրչություն է, գրքի խորագիրն է «Արիֆմարիկայ», *որն աղավաղմամբ գալիս է հունա-լատինական* արիթմետիկայ *(«թվաբանություն») բառից, սակայն ներքին տվյալներից երևում է, որ թարգմանական գործ չէ, այլ ուղղակի հայ. շարադրված։ Լեզուն գրաբար է, բայց զգալի տարրեր է պարունակում Նոր-Ջուղայի բարբառից։ Ձեռագիրը նախկինում սեփականություն է եղել Աբգար Հովհաննիսյանի*[1]*։*

* * *

Արիֆմարիկայ այսինքն Համարողական արհեստ. «Հրց. Զի՞նչ է համարողութիւնն։ Պտ. համարողութիւնն է արհեստ պատուական աննախանձ և յամենից դիւր ուսանելի, բազմաց շահաւէտ և յոյժ գովելի ի հնոց և ի նորոց իմաստասիրաց համարողական արհեստաւորաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2950, էջ 3ա—82բ։*

Ձեռագրում բնագիրը թերի է. թերթեր են թափվել ձեռագրի վերջից։ Այժմ կա միայն «Գիրք առաջին համարողական, որ ասի քաղաքական»-ը՝ իր Ա-Դ մասերով։

Դասագրքի «Յաղագս թուելոյ» գլխում հեղինակը, «Դասեալ» թվերի մասին խոսելիս, թվեր կարդալու որպես օրինակ՝ բերում է «Թիւ փրկչին 1738» (էջ 4ա), ժամանակական մի տվյալ, որը եթե գրքի շարադրմանը չի վերաբերում, ապա գոնե ցույց է տալիս նրա ընդօրինակման ժամանակը։

Գրքի հեղինակության հայկ. լինելու մասին կան բազմաթիվ տվյալներ, որոնցից նշենք մի քանիսը.

1. Վերոհիշյալ «Յաղագս թուելոյ» գլխում «դասեալ» թվերի աճման աղյուսակներից մեկը կազմված է հայկ. այբբենական թվանշաններով (էջ 5ա)։

2. Նույն գլխի վերջում բանվում է հայ աշակերտի համար շարադրված հետևյալ հորդորական չափածոն (էջ 5բ).

Մատուճf անուանիմ ըստ չափոյս, զի եմ
համարիւ տասըն տառ,
Շարեալ զուգիմ, հարբատանամ, հազարիցս
հազար ի միտ առ.

[1] *Ֆ. Ն. Ֆինկ, «Ցուցակ թիֆլիսեցի Աբգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի», Լայպցիգ, 1903, էջ 204։*

Երէ ուսցիս զիս կանոնի՝ արտափայլի
միտքըդ պայծառ.
Յաճախուես մի՛ խրճղրեր ելանել, զի մի՛
լըֆցիս մանուկ կայտառ:

3. «Յաղագս համարման, այսինքն է բարդելոյ» գլխում, գումարման աղյուսակի տակ, գտնում ենք հայ աշակերտի համար շարադրված հետևյալ չափածոն (էջ 6ա).

Միճճ ընդ երկուս՝ լինի յերեք, չորս ընդ
հընկի՝ ինն անուանի,
Վեց ընդ եօթնի՝ երեքտասան, որպէս
ըզվերըդ տեսանի.
Ջմիտըդ սրբեա՛ դու ի վերայ աղիւսակաձև
յեսանի,
Կըրթեա՛ց, կըրթեա՛ց, մանուկ ուշիմ, զի
մի՛ արժանացի[ս] գանի:

4. Աղյուսակների տակ գրված բացատրականներն սկսվում են «Ջմուտ աղիւսակիս այսպէս արա» բառերով (էջ 5բ, 12ա): Այս ձևը գալիս է հայ. տոմարական գրականությունից, ուր աղյուսակների բացատրությունները միշտ սկսվում են այդ բառերով: Դասագրքի հեղինակն, ըստ երևույթին, միաժամանակ եղել է տոմարագետ:

5. Թվաբանական խնդիրները հիմնականում կապված են արևելահայ առևտրական միջավայրի հետ: Օգտագործված դրամական, կշռական, չափական և ապրանքային տերմինները մեծ մասամբ պարսկական են, երբեմն նաև թուրքական. թուման, դիան, դուռուշ. բատիլ, շաղա, շահի դիզր, Թավրիզի դիզր. գազ, ջավզ, ճոթ (կտոր, կտորեղեն) են:

6. Կան թվաբանական շատ խնդիրներ, որոնք կապված են արևելյան և հայկական միջավայրի հետ, ինչպես է, օրինակ, հետևյալը (էջ 79ա).

«Ժամանակաւ ի Ստամբոլ երեք ազգ այրք լեղանային ի բաղանիսն, այսինքն է՝ քրիստոնեայք, հրէայք և մահմետականք. և էին համարիւ 20 այրք. և ետուն զվարձս բաղանեաց կէս կէս փող, քրիստոնեայքն՝ մի մի փող, և հրէայքն՝ երեք երեք փող» են:

Հայկ. թվաբանական դասագրքերի համար շատ սովորական այս խնդրի մի տարբերակը կարելի է տեսնել Կոստանդ Ջուղայեցու «Դուռն ճամարողական արհեստին» երկում (խնդիր 110):

Այս հանգամանքները ցույց են տալիս, որ «Արիֆմաթիֆայ»-ի հեղինակը հայ է:

Ձեռագրում սույն դասագրքին հաջորդում է տարբեր ձեռքով գրված և տարբեր հեղինակի պատկանող անխորագիր մի ուրիշ երկ (էջ 83ա—96բ), որը երկրաչափության, եռանկյունաչափության և ծավալաչափության (ստերեոմետրիա) դասեր է պարունակում:

ԱՐԻՄԱՆԵԱՆ

Տե՛ս՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԻՄԱՆԵԱՆ:

ԱՐԻՆԱՐՔՈՍ

Տե՛ս՝ ԻՐԵՆԱՐՔՈՍ:

ԱՐԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ ԵՒ ԱՐԻՈՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ մատենագրության մեջ Արիոսի և Արիոսականության վերաբերյալ նյութեր կան թե՛ վիճաբանական բնույթի, ինչպես է, օրինակ, Աթանաս Աղեքսանդրացու և Արիոսի անունով հայտնի «Ընդդիմասացութիւն»-ը, և թե՛, մանավանդ, պատմական և բնագավառական բնույթի, ինչպես են Եփեսոսի տիեզերական ժողովի պատմության աղբյուրները, Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ը են: Ավելորդ ենք համարում մի առ մի նշել նման նյութերը. այդպիսիներ կարելի է տեսնել ԱՂԱՆԴՆԵՐ[1] և ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ[2] հոդվածներում:

ԱՐԻՈՍ ԵԳԻՊՏԱՑԻ ՎԿԱՅ

Տե՛ս՝ ՆԻԿԱՆԴՐՈՍ ԵԳԻՊՏԱՑԻ:

ԱՐԻՍՊԱԳԱՑԻ

Տե՛ս՝ ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԹՈՌԱԿԱԼ

Էջմիածնի կթղ. (1464—1474 թթ.)[3]: Նրանից հայտնի է մի կոնդակ, առաքված «ի

---

1 Տե՛ս՝ սույն, հտ. Ա, էջ 530—540:

2 Տե՛ս՝ սույն, հտ. Բ, էջ 216—308:

3 Որպես կթղ.՝ առաջին անգամ հիշատակվում է 1464 թ., իսկ վերջին անգամ՝ 1474 թ. ըստ երևույթին

յաստուածապահ մայրաքաղաքդ Լով կոչեցեալ, ի Սեչովն, ի Կամենէցն, ի Սերաթն, ի Պօթիշան, Մանքէրմանն, ի Պէլզան», որով հայտնում է, թե «նստաք յաթոռս սուրբ էջմիածնիս, ի յուղղել և ի կարգաւորել զկարգ և զկրաւնս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» և թե «եկն և Խաչատուր վարդապետն ի Հնազանդութիւն սուրբ աթոռոյս, և մեք մեծ սիրով և պատուով ընկալաք զդա ըստ տէրունական հրամանին և եբեր առ մեզ զթուղթն ինքնակալ թագաւորին Գազեմիրին, և Լովի տանուտերացդ և զԿամենէցիդ. և մեք միաբանութեամբ վարդապետացս և եպիսկոպոսացս՝ ձեռնադրեցաք և օրհնեցաք զդա եպիսկոպոս մայրաքաղաքիդ Իլովի աթոռոյն և իւր ամենայն բոլոր վիճակին»։ Տես՝ Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 225—227։ Կոնդակը, վերջից թերի լինելու հետևանքով, թվական չունի, բայց անտարակույս 1464 թվականից է։ Խաչատուր եպս.ը Լեհահայ թեմի առաջնորդն էր, որ ընտրվել էր 1461 թ.[1] և, ըստ սույն կոնդակի, գնացել էր Հնազանդություն հայտնելու էջմիածնի կթղ.ին։ Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից (Բայրընի սենյակ)։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 282, § 34։*

Խաչիկյան Լ. Ս.— *«ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Բ, Երևան, 1958, էջ 467։ Նույնի՝ մաս Գ, Երևան, 1967, էջ 567։*

Ոսկյան Համ.— *«Վասպուրական—Վանի վանքերը», մաս Բ, Վիեննա, 1942, էջ 589։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 503–506։*

Օրմանյան Մաղ.— *«Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, §§ 1500—1503։ Նույնը՝ Բ տպ., հտ. Բ, Բեյրութ, 1960, §§ 1500—1503։*

նույն 1474 թ. էլ մահացել է, որովհետև այդ թվականին նրա հաջորդ Սարգիս Աջատարը Վարդան Վանեցի գրչի կողմից հիշատակվում է որպես «նորընծայ կաթողիկոս». հմմտ. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Բ, էջ 217, 365 և 366։

1 «Ստեփանոսի Ռօշքայ Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 158։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԺԷ դարի արևմտահայ նամակագիր, ինքնությունն անհայտ։ Ունի մի նամակ՝ ուղղված Հռոմի «Սրբազան ժողովին» (Պրոպագանդային), գրված 1685 թ. սեպտեմբերի 5-ին կամ 6-ին։ Այս նամակը, որ Պրոպագանդայի դիվանում է գտնվում, հրատարակվել է Հար. Քյուրտյանի կողմից, «Հետաքրքրական վավերաթուղթ մը», Բազմավէպ, 1963, էջ 122—125։ Նամակագիրը Պրոպագանդային առաջարկում է «չորս ազգ լեզուով գրքեր շինել և հաւատոյ բանն ծանուցանել, որ ամէնքն կարենան ուսանիլ զնոյնն հեշտութեամբ և դիւրութեամբ, այսինքն հայերէն, թուրքերէն, պարսկերէն և արաբերէն»։ Ապա ներկայացնում է Օսմանյան Կայսրության մեջ ապրող հայերի, թուրքմենների և եզիդիների ապստամբության մի ծրագիր՝ կապված արտաքին օժանդակության հետ, իր ղեկավարությամբ։ Հայտնում է, որ թուրքմեններն ու եզիդիները համակրանքով են տրամադրված հայերի հանդեպ և «ինձ խօսք են տուել, որ ես ձեզ ծանուցանեմ, և թէ դուք խօսքն լսէք՝ մին մեծ ուժ կանեմք ի վերայ Թուրքին, նոքա ամէնքն մեր կողմն կանկանին և մեզ կօգնեն և զԹուրքն շուտով կու ջարդեն Աստուծով». գտնում է, որ պետք է անհապաղ կազմակերպվի հայկ. շարժումը թուրքերի դեմ՝ «քանի որ այն Թուրքմաններն և էզիտի ազգերն չեն ուսահատել մեզնից»։ Նամակագիրը մինչև այդ գտնվել էր Չինումաչինում (Հեռավոր Արևելք)։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ [ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ]

ԺԱ դարի հայ պատմագիր, որի մասին կենսագրական տեղեկություններ չունենք։ Ծնված է համարվել Լաստիվերտ անուն ավանում, որի տեղն անծանոթ է։ Արիստակեսի մականունը մինչև այժմ ընդունված է եղել որպես Լաստիվերացի՝ թե՛ նրա Պատ-

մության հրատարակություններում, թե՛ պատմական գրականության մեջ, բայց վերջին հետազոտությունների համաձայն պիտի լինի Լաստիվերցի, *ինչպես ցույց են տալիս Պատմության հնագույն ձեռագրերը և մատենագրական տվյալները։ Հետաքրքիր է այս անվան մասին Մատթեոս Ուռհայեցու բերած զուգորդությունը՝ «Սայլահանն և կամ Լաստիվերցին», ըստ որի՝ համեմատվող երկու անունները լրիվ կշռում են իրար՝ «Սայլ [ի վեր]հան» և «Լաստ ի վեր [հան]»։ Հավանաբար, մատենագրի անունն սկզբնապես եղել է* Լաստիվերացի, *որը,* ա *և* տ *տառերի շփոթմամբ, դարձել է* Լաստիվերտցի. *այս հավանականության հիմք պետք է համարել գրաբարի այն օրենքը, որի համաձայն* -ցի *վերջածանցը, առանց* ա *և կամ* ե *հոդակապի, չէր կարող ուղղակի կցվել ածանցվող բառին։*

Ար. Լաստիվերցին գրի է առել իր ժամանակի՝ 988—1071 թվականների դեպքերը՝ 25 գլուխների մեջ։ Նա տալիս է Բագրատունյաց թագավորության անկման և սելջուկյան արշավանքների սկզբնավորության պատմությունը, նկարագրում է Հայաստանի Անի մայրաքաղաքի, Արծն, Կարս և այլ քաղաքների ու վայրերի ավերումը և առհասարակ Հայաստանի թշվառ դրությունն այդ շրջանում՝ հայրենասիրական ջերմ շնչով ու հռետորական կենդանի ոճով, բայց ողբերգական մռայլ շեշտով։ Ար. Լաստիվերցու պատմական սույն աշխատությունը, գրական արվեստով շարադրված, բողոքի մի հուշարձան է Հայաստանի օտար նվաճողների դեմ։ «Ազգք օտարածնաց օտարացուցին զմեզ ի բնակութենէ մերմէ» գրում է նա պատմության նախերգանքում և ամբողջ աշխատության մեջ ցույց է տալիս օտարի տիրապետության զարհուրելի հետևանքները։ Իսկ հիշատակարանում նա դարձյալ ասում է. «Եւ ոչ ոք ի նոցանէ բարեմիտ եղև առ մեզ, թէպէտ և բազում ամօք բնակեցան առ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւն նոցա որպէս իժի, և ոչ եղև յագումն ագահութեան նոցա իբրև հրոյ. զի ամենայն խորհուրդք նոցա որ վասն մեր, ի չարութեան են, և բանք նոցա լի նենգութեամբ։ Վասն զի ամենայն առաւօտու նորագոյն սկիզբն չարեաց առնէին. զի այն էր խորհուրդ նոցա ամենեցուն՝ մաշել և սպառել զմեզ իբրև զհնացեալ ձորձս, և բառնալ զյիշատակս մեր ի միջոյ իւրեանց, զի բնաւ մի՛ հայեսցին և տեսցեն զմեզ կենդանիս, այլ եղիցին գերեզմանք մեր անհետ ի ներքոյ ոտից նոցա»։ Քաղաքական դեպքերի կապակցությամբ Ար. Լաստիվերցին պատմական տեղեկություններ է տալիս նաև հարևան երկրների (Վրաստան, Միջագետք են) և մանավանդ Բյուզանդական Կայսրության մասին։ Հայաստանի ներքին դեպքերի մասին ևս արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նա, իսկ հատկապես Թոնդրակյան աղանդավորների շարժմանը նվիրում է երկու ընդարձակ գլուխներ (ԻԲ և ԻԳ)։ Ար. Լաստիվերցու Պատմության ձեռագրերի ամենահին օրինակը գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում։ Ար. Լաստիվերցու անունով ստորև նշում ենք նաև երկու ճառեր։ Հեղինակի անունն ու մականունը Պատմության ձեռագրերում և մատենագրական աղբյուրներում պատահում են այսպիսի տարբերակներով ու աղավաղումներով. Արիստակէս, Ռստակէս, Ըռստակէս, Ըռաստակէս, Յրոստակէս, Ըռտոկէս. Լաստիվերցի, Լաստիվերացի, Լաստիվերտցի, Լաստիվերտացի, Լաստիվարղացի, Լաստիվարղեցի, Լատրավարղացի *և* Լաստիվերոյ *կամ* «Լաստ ի վերոյ»:

* * *

Ա.—ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա տպ. Վենետիկ, 1844 թ.

Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ։ Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1844—ՌՄՂԳ։

[Ը]+124 էջ (շարվ. 17.6×9.1 սմ)։ Սկզբում ունի հրատարակչի «Ձեկուցումն»*-ը, էջ Ա—Բ, և* «Ցանկ գլխոց», *էջ Գ։ Լաստիվերցու Պատմությունն սկսվում է* «Նախերգանք»*-ով, էջ 1—2, որին հաջորդում է բուն Պատմության բնագիրը, էջ 3—120, հետևյալ խորագրով.* «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ վասն անցիցն

անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեօք են»: Վերջում՝ «Ցանկ անուանց», էջ 121—124:

Հրատարակչի «Ձեկուցումն»-ը խոսում է տպագրության համար օգտագործված ձեռագիր օրինակների մասին. «Ի բաղդութեան օրինակացն էին ի ձեռս մեր օրինակք չորք անթուականք նոտրագիրք, գործք՝ որպէս յայտնի ցուցանի յեղանակէ դարձուածոյ գրչացն, ի վերջ ութևտասներորդ դարուն գրեալք, և կամ ի սկիզբն առաջիկայ իննևտասներորդիս: Եւ յաւուրս տպագրութեան եհաս ի ձեռս մեր միւս այլ ձեռագիր գրեալ ի թուին 1825, յոյժ նուազ զանազանեալ յայլոցն՝ մասնկամբք և տառիւք ևեթ»:

Այլ տպ. Վենետիկ, 1901 թ.

Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ: Երկրորդ տպագրութիւն: Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1901 — ՌՅԾ:

144 էջ (շարվ. 17.4×9.1 սմ): Արտատպ. նախորդ հրատարակությունից: Բացակայում է միայն «Ցանկ գլխոց»-ը:

Այլ տպ. Թիֆլիս, 1912 թ.

Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ: Թիֆլիս, էլէկտրատպ. օր. Ն. Աղանեանի, 1912: *(Ղուկասյան մատենադարան, Ձ):*

[Ձ]+Բ+191 էջ: Արտատպ. նմանապես Ա հրատարակությունից:

Այլ տպ. Երևան, 1963 թ.

Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ: Աշխատասիրությամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի: Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, 1963: *(Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի Ինստիտուտ—«Մատենադարան»):*

160 էջ (շարվ. 21.6×12.6 սմ): Սկզբում ունի հրատարակողի «Առաջաբան»*-ը, էջ 5—17:* Լաստիվերցու Պատմության բնագիրը *զբաղում է 21—145 էջերը՝ հետևյալ խորագրով.* «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեւք են»: *Բնագրի սկզբի մասը, որը նախորդ հրատարակություններում անջատված էր* «Նախերգանք» *վերնագրով, այստեղ մուծված է Ա գլխի մեջ և միաձուլվել է նրա հետ: Վերջում՝* «Արիստակես Լաստիվերտցի. Մատենագիտութիւն (կազմեց՝ Հ. Ս. Անասյան)», *էջ 149—153, և* «Անձնանունների ցանկ» *ու* «Տեղանունների և էթնիկական անունների ցանկ», *էջ 154—158:*

Հրատարակությունը կատարվել է Երևանի Պետ. Մատ. ինը ձեռ. օրինակների հիման վրա և Լենինգրադի Ասիայի ժողովուրդների Ինստիտուտի B—66 (Բրոսեի ժողովածուի) օրինակի օգտագործմամբ: Հաշվի են առնվել նաև վենետիկյան Ա տպագրությունը և նրա տարընթերցվածները:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. *Հ. Քյուրտյան, Բազմավէպ, 1963, էջ 59—60:* — Р. Б., *Византийский Временник*, т. XXV, 1964, стр. 274.

Բովանդակություն (ըստ վերջին հրատարակության).

Ա. Անցք ընդ աշխարհս Հայոց:

Բ. Յաղագս թագաւորութեան Հայոց:

Գ. Թէ ո՛րպէս թագաւորն երկրորդ անգամ դարձ առնէ ի վերայ աշխարհին Տայոց, յորում պարտեցան զօրքն Վրացւոց:

Դ. Վասն վերջին պատերազմին որ ի Շղփայ:

Ե. Թագաւորութիւն Կոստանդեայ:

Զ. Թէ ո՛րպէս թագաւորեաց Ռոմանոսն:

Է. Առումն Ուռհայ քաղաքին:

Ը. Մահ Ռոմանոսի:

Թ. Թագաւորութիւն Միխայլին:

Ժ. Թագաւորութիւն Կոստանդեայ, որդւոյ Թէոդոսի, որ կոչի Մոնոմախ:

ԺԱ. Յաղագս կոտորածին որ եղև ի գաւառն Բասենոյ և ի լեառն որ կոչի Սմբատայ:

ԺԲ. Վասն Արծինն անողորմ կոտորածին:

ԺԳ. Յաղագս մեծ պատերազմին որ եղև ի դաշտին Բասենոյ, յորում պարտեցան Հոռոմք:

ԺԴ. Թէ ո՛րչափ եղև հայրապետին Պետրոսի մնալ ի Կոստանդնուպոլիս, կամ ո՛րպէս դարձն:

ԺԵ. Թէ ո՛րպէս անհնարին հարու քաղաքն յըղփացեալ, որ կոչի Կարս:

ԺԶ. Վասն գալոյն սուլտանայ:

ԺԷ. Կատարած թագաւորութեանն Մոնոմախին:

ԺԸ. Թագաւորութիւն Թէոդորին որ թարգմանի Աստուածատուր:

ԺԹ. Վասն աւերանաց երկրին Միջագետաց և որ ինչ ի նմա քաղաքք, և անչափ կոտորածին:

Ի. Թագաւորութիւն Կոմիանոսի։

ԻԱ. Կործանումն Մելիտինոյ շահաստան քաղաքի։

ԻԲ. Վասն չար աղանդին Թոնդրակեցւոց որ երեւեցաւ ի գաւառն Հարքայ և զբազումս խոտորեաց։

ԻԳ. Թէ ո՛րպէս և ի Մանանաղւոյ սահմանսն բորբոքեցաւ հրդեհ մոլորութեանն, ասելի է։

ԻԴ. Վասն տիեզերահռչակ քաղաքին Անւոյ խողխողմանն սրով։

ԻԵ. Յաղագս թագաւորին Յունաց, որ ի թագաւորէն Պարսից ձերբակալ եղև։

Բան յիշատակարանի նոյն գրոցս։

Երևանի Պետ. Մատենադարանում Ար. Լաստիվերցու Պատմությունից կան ինը ձեռագիր օրինակներ, որոնց հնագույնն է № 2865-ը՝ «Պատմութիւն Ըռաստակիսի (sic) Լաստիվերցոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռ ազգաց որ շուրջ զմեւ են անց ընդ աշխարհս Հայոց» (էջ 242բ—311բ), ԺԳ/ԺԴ դարից։ Մյուսները ԺԷ դարի և ավելի ուշ ժամանակների ընդօրինակություններ են. № 1482՝ խոր. նույն (էջ 90ա—111ա), № 4584՝ խոր. նույն (էջ 59բ—74ա), № 3070՝ «Պատմ. Ըռստ.ի Լաստիվերցոյ վրդ.ի» են (էջ 159ա—225բ), № 3502՝ «Պատմ. Ըռըստ.ի յաստ ի վերոյ վրդ.ի» են (էջ 355ա—442բ), № 6457՝ «Պատմ. Հայոց Մեծաց, արարեալ Ըռստ.ի Լաստիվերցւոյ» են (էջ 1ա—148բ) № 2796՝ «Պատմ. Արիստ.ի վրդ.ի Լաստիվերտացւոյ» են (էջ 1ա—70բ), № 1895՝ «Պատմագիր՝ Արիստ.ի Լաստիվերտացւոյ» են (էջ 1ա—71ա) և № 3160՝ «Պատմ. Ըռտկիսի (sic) Լաստիվեւոյ վրդ.ի» են (էջ 222ա—276ա)։ Սրանցից՝ № 6457-ը թեև ԺԹ դարի ընդօրինակություն է, բայց գալիս է մի շատ ավելի հին օրինակից. նրա անվանաթերթում՝ պատմության վերնագրին հաջորդում են հետևյալ տողերը. «Գաղափարեաց ի հին ձեռագրէ գրեցելոյ ի թվին Հայոց ՈԿԳ (=1214 թ.) զայս պատմութիւն ի վայելս անձին իւրոյ Յովհաննէս Յարութիւնեան Երզնկեանց։ Հին ձեռագիրն գտաւ յայրին Ջառնէրի, պահարանի կայից վանացն ի 1827 ամի։ Ի Հաղբատ, 1840, ի վանս Սրբոյ Նշանի»։ Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 114 «... Արիստ.ի վրդ.ի Լաստիվերտացւոյ» են (էջ 1—177), № 827՝ խոր. նույն (էջ 3ա—72բ), № 1076՝ խոր. նույն (էջ 3ա—85բ), № 288՝ «... Արիստ. վրդ.ի Լաստիվերտացւոյ» են (էջ 3ա—66ա), № 306՝ խոր. նույն (էջ 1ա—70բ), № 623՝ «...Արիստ. վրդ.ի Լաստիվերցւոյ» (էջ 110ա—155բ), № 551՝ անխոր (էջ 4ա—128բ). Երուսաղեմի Հայոց. Մատ. ձեռ. № 341՝ «...Յրոստ.ի Լաստիվերցոյ» են (էջ 591ա—723ա). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 224: «... Արիստ. վրդ.ի Լաստիվերցւոյ» են։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայերեն աշխարհաբար թարգմ. Մ. Տեր-Պետրոսյանցի.

Արիստակէս Լաստիվերտցի վարդապետի Հայոց պատմութիւնը: Թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսյանց: Աղեքսանդրապօլ, տպարան Աբրահամ Մ. Մալխասեանցի, 1893:

Ջ+236 էջ (չափ. 14.5×8.6 սմ)։ Սկզբում ունի թարգմանչի կողմից առաջաբան, իսկ վերջում՝ ծանոթագրություններ, անունների ցանկ և գլուխների ցանկ։ Թարգմանվել է վենետիկյան 1844 թ. հրատարակությունից։

ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ. Գոչ, Նոր-Դար, 25 և 27 օգոստ. 1894 թ. (№ 141 և № 142). այստեղից արտատպ. Արարատ, 1894, էջ 342—347։—Գ. Վանցյան, Մուրճ, 1894, էջ 438—439 (№ 3)։

2. Հայերեն աշխարհաբար թարգմ. Վազգեն Գևորգյանի.

Արիստակես վարդապետ Լաստիվերցու Պատմությունը՝ մեր շրջապատի այլացեղ ազգերի կողմից կատարված անցուդարձերի մասին: Թարգմ. Վ. Գևորգյան: Երևան, «Հայաստան», 1968:

ԺՋ+136 էջ (չափ. 18.5×12 սմ)։ Սկզբում՝ առաջաբան (Գ. Մ. Մանուկյանի). վերջում՝ ծանոթագրություններ (Գ. Մ. Մանուկյանի), անվանացանկ և գլուխների ցանկ։ Թարգմանության համար նկատի են առնվել Պատմության բնագրի նախորդ հրատարակությունները և ձեռագրական տվյալները։

Այլ տպ.— Արիստակես Լաստիվերցի: Պատմություն: Թարգմանությունը՝ Վ. Ս. Գևորգյանի: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1971: (Հայ մատենագիրներ)։

XIV+156 էջ (չափ. 16×9.5 սմ)։ Սկզբում՝ առաջաբան (Գ. Մ. Մանուկյանի), որ

ասվում է, որ «Պատմության աշխարհաբար ներկա թարգմանությունը կատարված է վենետիկյան 1844 թ. և երևանյան 1968 թ. հրատարակությունների հիման վրա. առանձին հատվածներ ճշգրտվել են ձեռագրերի համեմատությամբ, տեղ-տեղ բնագրին տրրվել է նոր մեկնաբանում՝ հաշվի առնելով նորակա ուսումնասիրությունները»։ Վերջում՝ ծանոթագրություններ (Գ. Մ. Մանուկյանի), անվանացանկ և գլուխների ցանկ։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Անահիտ Պարսամյան, *Հայրենիքի Ձայն, 1972, 5 հուլիսի, № 27 (363), էջ 7։*

3. Ֆրանսերեն թարգմ. Է. Պրյուդոմի.

„Histoire d'Arménie, comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des Seldjoukides, par Arisdaguès de Lasdiverd; traduite pour la première fois de l'arménien sur l'édition des RR PP. Mĕkhitaristes de Saint-Lazare et accompagnée de notes, par M. Evariste Prud'homme. Paris, Benjamin Duprat, 1864.

148 էջ (շարվ. 18.2×9.7 սմ)։ Սկզբում ունի թարգմանչի կողմից առաջաբան (Préface)*։ Թարգմանությունը կատարվել է հայ. բնագրի վենետիկյան 1844 թ. հրատարակությունից, որոշ կրճատումներով։ Արտատպ. է հետևյալ պարբերականից.* *Revue de l'Orient, de l'Algérie et des Colonies*, Paris, 1863, t. XV, p. 341—370; t. XVI, p. 41—59, 158—184, 268—286, 289—318; 1864, t. XVII. p. 3—33.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Երևակ, *1865, №№ 73—76։*

4. Ֆրանսերեն թարգմ. Մ. Կանարի և Հայկ Պերպերյանի.

Aristakès de Lastivert. Récit des malheurs de la nation arménienne. Traduction française avec introduction et commentaire par Marius Canard et Haïg Berbérian, d'après l'édition et la traduction russe de Karen Yuzbachian, Bruxelles, Éditions de *Byzantion*, 1973. (Bibliothèque de *Byzantion*, 5).

XLV+148 էջ (շարվ. 18.7×10.3 սմ)։ Սկզբում ունի նախաբան (Avant-propos), *տառադարձության ցուցակ* (Translitération), *մատենագիտություն* (Bibliographie essentielle) *և ներածություն* (Introduction: Aristakès de Lastivert et son oeuvre historique). *Վերջում՝ անվանացանկ* (Index) *և նյութերի ցանկ* (Table des matières).

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Գ. Վ. Աբգարյան, Պատմաբանասիրական Հանդես, *1974, № 4, էջ 225—230։*

5. Ռուսերեն թարգմ. Կ. Ն. Յուզբաշյանի.

Повествование вардапета Аристакэса Ластивертци. Перевод с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения К. Н. Юзбашяна, Москва, 1968. (Памятники письменности Востока, XV. Издательство „Наука". Главная редакция Восточной Литературы).

194 էջ (շարվ. 18.5×11 սմ)։ Սկզբում՝ թարգմանչի ներածությունը (Аристакэс Ластивертци и его исторический труд). *իսկ վերջում՝ ծանոթագրություններ, ցուցակ թարգմանության ընթացքում օգտագործված գրականության, ցանկեր և ամփոփում անգլերենով։ Թարգմանությունը կատարվել է բնագրի 1963 թ. հրատարակությունից՝ ողբական հատվածների և Աստվածաշնչի վկայությունների որոշ կրճատումներով։*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Գ. Մ. Մանուկյան, Բանբեր Երևանի Համալսարանի, *1970, № 3, էջ 236—241։*

6. Վրացերեն թարգմ. Ե. Վ. Ցագարեիշվիլու.

არისტაკეს ლასტივერტელი. ისტორია. ქართული თარგმანი გამოკვლევით, კომენტარებითა და საძიებლებით გამოსცა ე. ცაგარეიშვილმა, თბილისი, გამომცემლობა „მეცნიერება", 1974, (საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია — საქართველოს შესახებ არსებული უცხოური წყაროების კომისია)[1].

216 էջ (շարվ. 18×10.3 սմ)։

---

[1] *Անվանաթերթի հայ. թարգմանությունը.* [Արիստակես Լաստիվերտեցի (sic)։ Պատմություն։ Վրացերեն թարգմանությունն ուսումնասիրությամբ, ծանոթագրություններով և ցանկերով հրատարակեց՝ Ե. Ցագարեիշվիլին։ Թբիլիսի, Հրատարակչություն «Մեցնիերեբա», 1974։ (Վրաց. ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա—Վրաստանի մասին գոյություն ունեցող օտար աղբյուրների հանձնաժողով)]։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. П. М. Мурадян, „Грузинский перевод 'Повествования' Аристакэса Ластиверци", Լրաբեր Հասարակական Գիտությունների *(ՀՍՍՀ Գիտութ. Ակադ.), 1975, № 2, էջ 108—112։*

□ *Պատմության Ե, Թ, ԺԸ և ԻԱ գլուխների ֆրնս. մասնակի կամ լրիվ թարգմ. տես՝* É. Dulaurier, „Recherches sur la chronologie arménienne technique et historique", Paris, 1859, p. 286—288, 290—295.— *ԻԲ և ԻԳ գլուխների անգլ. լրիվ թարգմ. տես՝* F. C. Conybeare, „The Key of Truth; a manual of the Paulician church of Armenia", Oxford, 1898, p. 131—140.

Բ.—ԱՅԼ ԵՐԿԵՐ

1. Լաստիվերցոյն՝ Մեկնութիւն ընթերցուած[ոց]. «Տէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ ի սուրբ կուսէն, զի զհնացեալ արարած[ք]ս վերստին նորոգեսցէ...», *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 303 (=*Նախկին* Suppl Arm. 106), fol. 6^v—9^v.

Ձեռագիրը ԺԳ դ. ընդօրինակություն է[1]*։ ԺԹ դ. օրինակներ են Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 294՝ խոր. նույն (էջ 21ա—26բ) և № 310՝* «Լաստիվերտցոյն...» *(էջ 14ա—21ա)։ Հմմտ. նաև Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 65 (էջ 170ա)։*

2. Արիստակէս վարդապետի ասացեալ՝ ի նոր կիւրակէն. «Նոր է տօնս և չքնաղ՝ որք ի սմա են խորհուրդք: Նոր՝ վասն զի նորոյ արարածոց է սկիզբ և զանցեալն հնացուցանէ...» *(Հրատ. Գ. Մ. Մանուկյան),* Էջմիածին *(ամս.), 1969, № 7—8, էջ 68—75։*

Հրատարակության համար օգտագործվել են Երուսաղեմի Հայոց Մատ. № 413 ձեռագիրը (էջ 582ա—588բ)[2]*, որը ԺԴ դ. գրչություն է համարվում, և Երևանի Պետ. Մատ. № 2715 (էջ 6ա—8բ), № 8032 (էջ 67ա—71բ), № 2551 (էջ 135ա—147ա), № 6681 (էջ 58ա—61ա), № 8914 (էջ 17ա—20բ) ձեռագրերը, որոնք ԺԹ դ. ընդօրինակություններ են։*

---

1 Երևանի Պետ. Մատենադարանն ունի այս ձեռագրի ժապավենը (Ձեռագրատան ժապավենների բաժին, № 67)։

2 Պետ. Մատենադարանն ունի այս ձեռագրի ժապավենը (Ձեռագրատան ժապավենների բաժին, № 413)։

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 236 (էջ 97բ—109ա), որը ԺԳ/ԺԴ դդ. գրչություն է, և Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 136 (էջ 96բ—102ա), որը ԺԸ դ. ընդօրինակություն է։

Գ.—ԱՐ. ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

1. «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», Պետերբուրգ, 1867, էջ 37 և 72։

2. «Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 179։

3. «Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 7—8։

4. «Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն», Պետերբուրգ, 1879, էջ 15։

5. «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 621։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Ա.— *«Ազգագրութիւնը Հայոց մէջ Է—ԺԸ դարերուն»,* Հայրենիք *(ամս.), Թ տարի № 10 (130), 1933 թ. օգոստոս, էջ 132—133։*

Աբեղյան Մ.— *«Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, Երևան, 1946, էջ 32—43։*

Ալիշան Ղ.— *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 91։*

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 279—280։*

Անասյան Հ. Ս.— *«Հայկական մատենագիտություն», հտ. Ա, Երևան, 1959, էջ XLIX, L—LIV.*

Անասյան Հ. Ս.— *«Արիստակես Լաստիվերտցի. Մատենագիտություն», հետևյալ հրատ. մեջ. «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 149—153։*

Առաքելյան Բա.— *«Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ. թ. ա.— XIV դ.)», հտ. Ա, Երևան, 1959, էջ 464—465։*

Գապպենճյան Գ.— «Հայ ողբերգաներ. Արիստակէս Լաստիվերտցի», Տաճար, Կ. Պոլիս, 1912, էջ 105—108 և 133—135 (Գ տարի № 7 և № 9):

Դուրյան Եղ.— «Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն», Կ. Պոլիս, 1885, էջ 47—48:

Դուրյան Եղ.— «Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղէմ, 1933, էջ 186—187:

Զամինյան Արր.— «Հայ գրականութեան պատմութիւն», մասն Ա., Նոր-Նախիջևան, 1914, էջ 164—165:

Զամինյան Արր.— «Պատմութիւն Հայոց հին գրականութեան», Բ տպ., Բէյրութ, տպարան «Յոյս», 1941, էջ 149—151:

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 592—595:— Նոյնի՝ Դ. տպ., Վենետիկ, 1932, էջ 592—595:

Էփրիկյան Ս.— «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», հտ. Բ, Վենետիկ, 1907, էջ 90 («Լաստիվերտ»):

Հարությունյան Հ. Ս.— «Հայաստանը IX—XI դարերում», Երևան, 1959, էջ 324—326:

Ղազիկյան Արս.— «Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 237—239:

Մանանդյան Հ. Հ.— «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» (ապակետիպ), Երևան, 1922, էջ 103:

Մանուկյան Գ. Մ.— «Բանասիրական ճշգրտումներ», Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 1 (36), էջ 134—137:

Մանուկյան Գ. Մ.— «Արիստակես Լաստիվերցու Պատմության հայրենասիրական ոգին», Ասպիրանտական գիտական աշխատությունների ժողովածու (հրատ. Խ. Աբովյանի անվ. Հայկ. Մանկավարժ. ինստ-ի), № 2, 1967, էջ 3—19:

Մանուկյան Գ. Մ.— «՝Արիստակէս վարդապետի ասացեալ՝ ի Նոր Կիւրակէն՝ ճառը», Գիտական աշխատություններ (հրատ. Խ. Աբովյանի անվ. Հայկ. Մանկ. ինստ-ի), հայ գրակ. բաժին, № 1, 1968, էջ 377—387:

Մանուկյան Գ. Մ.— «Ձեռագիր մի հիշատակարանի նոր մեկնաբանում», անդ, էջ 389—392:

Մանուկյան Գ. Մ.— «Բանասիրական պրպտումներ», Երիտասարդ գիտաշխատող (հրատ. Երևանի Պետ. Համալս-ի), 1968, № 7, էջ 195—202:

Ռուս. ամփոփումը՝ Г. М. Манукян, „Филологические разыскания“ (էջ 202—203):

Մանուկյան Գ. Մ.— «Լաստիվերցու՝ Մեկնություն ընթերցվածոց», Էջմիածին (ամս.), 1969, № 5, էջ 36—43:

Մանուկյան Գ. Մ.— «Արիստակէս Լաստիվերցին ճառագիր. ՝Արիստակէս վարդապետի ասացեալ՝ ի Նոր Կիւրակէն՝», անդ, 1969, № 7—8, էջ 67—75:

Մանուկյան Գ. Մ.— «Արիստակես Լաստիվերցի (Բանասիրական քննություն)»: (Անտիպ, թեկնածուական աշխատություն, Երևան, 1970 թ.):

Մկրյան Մկ.— «Հայ գրականություն» (դասագիրք միջն. դպր. VIII դասարանի համար), Երևան, 1959, էջ 48—49,

Մուրադյանց Մելք.— «Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ», Երուսաղէմ, 1872, էջ 424—426:

Յուզբաշյան Կ. Ն.— «Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեկ տարընթերցվածքի մասին. ՝Վաանդք՝ և ոչ ՝Փանիկք՝», տես՝ Բանբեր Մատենադարանի, Երևան, № 4. 1958, էջ 77—82:

Յուզբաշյան Կ. Ն.— «Դիվանները Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեջ», Բանբեր Մատենադարանի, Երևան, № 5, 1960, էջ 307—311:

Նորայր Ն. Բյուզանդացի— «Հայկական բառաքննութիւն», Կ. Պոլիս, 1880, էջ 88:

Նորայր Ն. Բյուզանդացի— [Արիստակես Լաստիվերտցու մասին], Հանդես Ամսօրեայ, 1909, էջ 220—221:

Տրումպֆ Գ. և Զարբհանալյան Գար.— «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», Վենետիկ, 1895, էջ 233 և 269:

[**Մելիքսեթ-Բեկ Լ.**— *«Հայ հին գրականության պատմություն», Թբիլիսի, 1941, էջ 111—112*]:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԽԱՐԲԵՐԴՑԻ

ԺԷ դարի տաղերգու-մատենագիր, Խարբերդի Եղեգ գյուղից, որդի՝ Կիրակոս քհ.ի և թոռ՝ Խըտըրշայի: Աշակերտել է Մարտիրոս Ճնքշեցուն, որից վարդապետական գավազան է ստացել 1618 թ.: Հեղինակ է մի քանի պատմական ոտանավորների, որոնք, որքան հայտնի է մեզ, գրված են 1624—1634 թվականների միջև: Դրանք պատմության համար շատ արժեքավոր աղբյուրներ են: Ար. Խարբերդեցին հիշատակվում է որպես «ուսեալ և հմուտ Հին և Նոր Կտակարանաց», որով և իր ժամանակի հայտնի մարդկանցից էր ոչ միայն կրոնական հռետորության ասպարեզում, այլև եկեղեցական գրականության: Նա 1625 թվականին աշխարհի կատարածի մասին շարադրել է մեկնաբանական արձակ մի աշխատություն, որը կրում է «Վասն անգիտելի աւուրն և ժամուն» *խորագիրը: Ար. Խարբերդեցին գրիչն է Երևանի Պետ. Մատ. № 2039 ձեռագիր Տոնապատճառի, որի վերջում ունի հիշատակարան, գրված՝ 1624 թ. (էջ 321ա). իսկ 1628 թ. նրա պատվերով ընդօրինակված մի Հայր-Մաշտոց այժմ գտնվում է Լոնդոնում*[1], Brit. Mus. Ms. Add. 23, 900.

* * *

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՂԵՐ

1. Ոտանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետի. «Եկայք եղբայրք ամենեքեան, | Պատմեմ ձեզ բան յոյժ ողբական, | Աշխարհ ամէն վրդովեցան, | Յորժամ սպանեաւ սուլթան Օսման...», *տես՝ Մ. Կ. Զուլալյան, «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դարեր)», Երևան, 1966, էջ 236—238:*

Հմմտ. F. C. Conybeare, „A Catalogue", p. 72—76.

Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 2039 ձեռագրից (էջ 321բ—322ա): Մենք բնագրի վերոհիշյալ սկզբնատողը ձեռագրից ենք բերել և ոչ թե տպագրից, որովհետև վերջինում վրիպումներ կան:

Պատմում է Աբազա փաշայի ապստամբության մասին: Վերոհիշյալ սկզբնավորությունից հետո՝ «Ի վերջին ժամանակիս,|Եւ հայկազեան մեծ տումարիս,|Հազարերորդ եւթանասնիս,|Եւ երրորդի յաւելորդիս (= 1624 թ.):|Մէկ մեծ իշխան մի յայտնեցաւ| Ապազա անուն կոչեցաւ» են: Վերջում՝ «Արիստակէսըս Խարբերդցի|Զայս սակաւ բաներս ասացի, | Զիրք ժամանակիս պատմեցի,|Նեղութիւն մեր ձեզ ծանուցի» են:

2. Ոտանաւոր և ներբողեան ասացեալ Արիստակէս վարդապետի Խարբերդցու վասն օրհնեալ քաղաքին Յեդեսիոյ որ է ի Միջագետս Ասորոց. «Մառայ Քրիստոսի Յիսուսի |Արիստակէս խրնդրող բանի.|Օրհնութեան գիրըս գրեցի, | Մայրաքաղաքին Ուռհայի: | Հոմերական տաղիւ չափի | Մեծն Եդեսիա օրհնեցի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1771, էջ 327բ—330բ:*

Հիշվում են Ուռհայի խոջաները են:

3. Ոտանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետի վասն ծառզատկին Հոռոմոց որ Յոյնք կոչին. «Արիստակէս խրնդրող բանի. |Ես որ տեղեաւ եմ Խարբերդցի,|Եւ ի գեղջէն եմ Եղեգցի...», *անդ, էջ 330բ—335ա:*

Ծառզատկի պատմականն է, գրված 1634 թ.:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3488 (էջ 155բ—170ա). Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 205 (էջ 895):

Բ. ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Թոխաթցի[1] Պաղտասարի հարցմունք ումեմն վասն անգիտելի աւուրն և ժամուն, [զոր] ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի, բայց Հայր միայն, ըստ տէրունական հրամանին: Պատասխանի Արիստակէս վարդապետի. «Զոր ինչ գիտէ Հայր, զնոյն գիտէ և Որդի և Հոգի, վասն նոյնութեան

[1] *Ձեռագրում՝* թախաթցի:

բնութեանն և ատուծութեան: Բայց ծածկեաց յառաքելոցն ասելով...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3680, էջ 146ա—160ա։*

Վերջում ունի ոտանավոր հիշատակարան. «Արիստակէսըս խարբերդցի|Զբաներս յանձնէ ոչ գըրեցի,|Այլ ի գըրոց ժողովեցի,|Զայս տետրակս օրինակեցի։|Մատթէոսեան քաղուածէն,|Հարցմանց գըրոց տասն հատորէն,|Կաթողիկեաց սուրբ մեկնիչէն,|Յոհաննու աւետարանչէն։|Եւթանասնից թըւականէն,|Որ Ծընընդոց գրոցն առեալ են,|Դարագըլուխքըն վըկայեն,|Որ նահապետքն և նախնիքն են» են (էջ 160ա—161ա)։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 284, §§ 48—49։*

Թորգոմյան Վահր. *(հրատ.)* — *«Երեմիա Չելէպիի Քէօմիւրճեան Ստամպօլոյ պատմութիւն», Վիեննա, 1913—1932, էջ 325, 343—344, 452—453 և 502։*

Սրվանձտյանց Գար.— *«Թորոս Աղբար», մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 484։*

Տաշյան Հակ.— *«Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 1032 (№ 565 ձեռագրի բովանդակությունը)։*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀԱՄԱԴԱՆՑԻ

ԺԷ դ. քերական։ Կազմել է մի բառարան՝ բաժանված վեց մասերի, որոնց մեջ բառերը խմբավորված են միայն ըստ վանկերի քանակի՝ այբբենական կարգով։ Աշխատությունը խորագիր չունի, բայց, ելնելով նրա բընույթից, կարելի է այն անվանել «Վանկային բառարան»: *Սահմանված լինելով գրագիտություն սովորողների համար վանկատման վարժությունններին օժանդակելու՝ այս բառարանը գերազանցապես ունի մանկավարժական մեթոդական նշանակություն՝ ուսուցողական գործնական եղանակով։*

* * *

[Վանկային բառարան] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2301, էջ 167բ—172բ։*

Բովանդակություն.

Առաջներորդ աստիճան բառից, որք լինին ի միոյ վանգէ. Այր, ազգ, ախտ, ակն են.

Երկրորդ աստիճան բառից, որք լինին ի յերկուց վանգից. Աբբա, Աբկար, Աբդան, Աբէլ են.

Երրորդ աստիճան բառից, որք լինին ի յերից վանգից. Աբգիու, Աբենէր, Աբիուդ, Աբրահամ են.

Չորրորդ աստիճան բառից, որք լինին ի չորից վանգից. Աբենեզէր, Աբիմելիք, Աբիսողոմ, Աբիաթար են.

Հինգերորդ աստիճան բառից, որք լինին ի հնգից վանգից. Արտասուեղաբար, բիւրապատկօրէն, գերազուարճական, դատաւորական, երկրաչափական են.

Վեցերորդ աստիճան բառից, որք լինին ի վեցից վանգից. Աստեղաբաշխական, գերագրականաբար, դատողականաբար, երեակայութիւն, զօրաւորագունեղ են.

Վերջում կա հետևյալ հիշատակագրությունը. «Այս նորեկ մանկանց ուսո՛ և զեղկելի Արիստակէս էրէցս յիշեա» (էջ 172բ)։

Բնագիրը, որ 1699 թ. ընդօրինակություն է, հեղինակի ինքնագիրն է։ Այս նույն ձեռագրում նա ընդօրինակել է նաև Սիմեոն Ջուղայեցու «Յաղագս տրամաբանութեան» *երկը (էջ 77ա—167ա), որի վերջում ունի հետևյալ հիշատակարանը. «Փառք...։ Վերջ եղև Տրամաբանութիւնս արարեալ ի Սիմէոն վարդապետէ Ջուղայեցւոյ քաջ բաբունապետէ. գրեցաւ ձեռամբ Արիստակէս իրիցէ Համատանցւոյ, որ անուամբս եմ և ոչ գործով, ի թուահաշուութեան փրկչին՝ ՌՈՂԹ 1699, ի թուականութեանս Հայոց՝ ՌՃԽԸ 1148. ի հայրապետութեան տեառն Նահապետի որ ի սուրբ Էջմիածին, և [յ]առաջնորդութեան նահանգացս՝ Յովհաննէս սրբազան վարդապետիս Ղազվինեցւոյ, և [յ]իշխանութեան Ռուստամ խանիս» (էջ 167ա)։*

Իսկ ձեռագրի վերջում, բառարանի վերոհիշյալ հիշատակագրությունից հետո, նույնպես գրում է. «Վերջ եղև Տրամաբանութիւնս թվն. փրկչին ՌՈՂԹ, իսկ հայոց թվն. ՌՃԽԸ, սեպտեմբերի առաջի օրն. ձեռամբ Արիստակէս իրիցիս գրեցաւ» (էջ 172բ)։

Չամչյան Միք. — «Պատմութիւն Հայոց» հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 15։ Նոյնը՝ հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 948—949 և 984—988։

Պեշիկյան Ս. Ս. — «Ողբք հոգւոյն ազգիս հայոց։ Արիստակէս Լաստիվերտցի — տառապանք», Հայաստ. Կոչնակ, 1938, էջ 488—491 (ԼԸ տարի № 21)։

Պետրոսյան Հով. — «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (V—XIX դար)», Երևան, 1941, էջ 98—99։

Պողոսյան Ս. Պ. — «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում», Երևան, 1956, էջ 38—40։

Պողոսյան Ս. Պ. — «Հայաստանը XIII—XVIII դարերում», Երևան, 1960, էջ 184։

Տաշյան Հակ. — «Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ», մասն Բ, Վիեննա, 1961, էջ 129—130։

Տիրայր վարդապետ — «Հայոց գրականութիւն» (անտիպ), Երևանի Պետ. Մատենադարան, Տիրայր վարդապետի դիվան, թղթ. 123, վավ. 2դ, էջ 74բ—75բ («Արիստակէս Լաստիվերտցի»)։

Փափազյան Վրթ. — «Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն), սկզբից մինչև մեր օրերը», Երևան, 1907, էջ 190—193։— Այլ տպ. Թիֆլիս, 1910, էջ 156—160։

Քիպարյան Կյուրեղ — «Պատմութիւն հայ գրականութեան», մասն Ա, հտ. Ա, Վենետիկ, 1944, էջ 254—256։

Օգանյան Գագիկ — «Պատմութիւն հայ լեզուի և բանահիւսութեան», Մարզվան, 1913, էջ 210—211։

Օրմանյան Մաղ. — «Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 875։— Նոյնի Բ տպ., հտ. Ա, մասն Ա, Բեյրութ, 1959, § 875։

(Խմբական հեղինակություն) — «Հայ ժողովրդի պատմություն» (Ձեռնարկ միջն. դպր. համար), մասն Ա, Երևան, 1956, էջ 257։

Марр Н. Я. — „Сборники притч Вардана", ч. I, С.-Петербург, 1899, стр. 406—407.

Назарянц Ст. — „Беглый взгляд на историю гайканской литературы до конца XVIII столетия". Казань. 1844, стр. 35—36.

Худабашев Алекс. — „Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях", Петербург, 1859, стр. 452.

Чобанян Арш. — „Древне-армянская литература", հեռակալ գրքում. „Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1897, стр. 573.—2е изд. Москва, 1898, стр. 489.

Юзбашян К. Н. — „'Варяги' и 'прония' в сочинении Аристакэса Ластивертци", *Византийский Временник*, Москва, том XVI, 1959, стр. 14—28.

Юзбашян К. Н. — „Дейлемиты в 'Повествовании' Аристакэса Ластивертци", *Палестинский Сборник*, Москва—Ленинград, вып. 7 (70), 1962, стр. 146—151.

Canard M. — „Les Deïlémites dans l'Histoirs d'Aristakès de Lastivert", *Revue des Études Arméniennes*, nouv. série, t. III, 1966, p. 466—469.

Mohl Jules — „Vingt-sept ans d'histoire des études orientales", t. II, Paris, 1880, p. 649.

Neumann C. F. — „Versuch einer Geschichte der armenischen Literatur", Leipzig, 1836, S. 142—144.

Neumann C F. — „Beiträge zur armenichen Literatur", I Lief., München, 1849, S. 16—29.

Raffi Aram — „An Eleventh-Century Analogy", *Ararat*, London, vol. V, № 57, April 1918, p. 394—399.

Somal P. S. — „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 74.

Tchobanian A. — „L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient", Paris, Société du Mercure de France, 1897, p. 61.

Thorossian H. — „Histoire de la littérature arménienne, des origines jusqu'a nos jours", Paris, 1951, p. 127—129.

მელიქსეთ-ბეგი ლ. — „ძველი სომხური ლიტერატურის ისტორია (სახელმძღვანელო უმაღლესი სკოლისათვის)", თბილისი, 1941, გვ. ***111—112.***

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՀՌԵՏՈՐ

Հայտնի է նաև Ար. Գրիչ, Ար. Քերական, Ար. Քերթող անունով։ ԺԲ դ. քերականագետ, ծնունդով Մեծ Հայքից էր, բայց գործել է Կիլիկիայում։ Սկևռա վանքում աշակերտել է Գրիգոր Սկևռացուն (Լամբրոնացի) և նրա թելադրությամբ գրել է հայերենի ուղղագրության կանոնների տեսությանը նվիրված իր կարևոր երկը՝ «Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից», որը հայտնի է նաև «Առուեստ գրչութեան» կամ «Խրատ գրչութեան» անունով։ Այս երկից, որը ուղղագրության կայունացման գործում խոշոր դեր կատարեց, ԺԳ դ. օգտվել է Գևորգ Սկևռացին (Լամբրոնացի)՝ իր «Խրատ վասն ճանճամանաց ճեգից», «Խրատ վասն առոգանութեանց» և «Խրատ գրչութեան» աշխատությունները գրելիս, իսկ ԺԵ դ. նրա մեկնությունն է գրել Գրիգոր Տաթևացին (տես՝ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, «Լուծումն համառօտ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեանն յԱրիստակիսէ Հռետորէ»)։ «Վերլուծութիւնք»-ը բաղկացած է 10 կանոններից կամ գլուխներից։ Նրա վերջին կամ տասներորդ գլուխը, որն ամենից ընդարձակն է և հանդիսանում է հայերենի ուղղագրական առաջին բառարանը, ըստ էության մի ինքնուրույն գործ է, որից և ԺԳ դարում Հովհաննես Պլուզ Երզնկացին քաղվածք է կատարել իր «Հաւաքումն մեկնութեան քերականի» աշխատության մեջ։ Գ. Բ. Ջահուկյանը Արիստակեսին է վերագրում «Բառք Քերականին» խորագիրը կրող այն անանուն բառացանկը[1], որը Դիոնեսիոս Թրակացու «Քերականութեան» հայ. թարգմանության մեջ գտնվող տերմինների բացատրությանն է նվիրված, սակայն ձեռագրական և մատենագրական որևէ հիմք չկա այդ վերագրումը հաստատելու համար։

* * *

Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից, յոգնախումբ շարագրութեամբ արարեալ զսա Առիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարճեստ գրչութեան. «Աստուածազանից արանց առաջի և վարուք առաքինեաց վարդապետաց սրբոց և կատարելագունից պարտ է իմումս անճմտութեան...», տես հետևյալ գրքում. Լ. Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում», Երևան, 1962, էջ 227—286։

Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերի հիման վրա. № 2371 (էջ 78ա—131ա), № 2382 (էջ 130ա—219ա), № 3917 (էջ 128ա—162բ), № 2526 (էջ 82ա—116ա), № 3193 (էջ 25ա—71բ), № 2373 (էջ 159ա—210ա), № 7995 (էջ 51բ—73ա), № 2370 (էջ 66ա—102ա) և № 267 (էջ 348ա—397ա)։

Առաջաբանից հետո ունի հետևյալ առանձին գլուխները.

Կանոն խրատական առաջին, զկնի նախակաման[1] խրատուդ, որ ցուցանէ առանց յի-ոյ դրոշմունքս են։

Կանոն երկրորդ վասն համօրէն անուանց մարդկան, զոր սակաւուք թուով զբազումս արտայայտեցից քեզ են։

Կանոն երրորդ վասն անուանց քաղաքաց և գիւղից որ բազմապատիկ եա սոքօք իմանաս զխորհուրդ և զիմաստութիւն յի-ոյ։

Կանոն չորրորդ վասն ին-ոյ, յորժամ հոլովի նա՝ ին-ն ճիւն դառնայ։

Կանոն հինգերորդ վասն ռ-երոյ, որ անպատճառ յի ունին զկնի, վասն զի չեն սոքա այն ռ-եարն, որ յառաջին կանոնին կեցցռ՛, կենդանացռ՛ եմ շաղաշարեալ են։

Կանոն վեցերորդ վասն նոյն կատարեալ յի-երոյ որ անփոփոխք են և անշարժք են։

Կանոն եւթներորդ վասն նոյն կատարեալ յի-երոյ անշարժք և անփոփոխք են։

Կանոն ութերորդ վասն նոյն կենդանական յի-երոյ, և են այլազգ զանազանեալք են։

Կանոն իններորդ վասն նոյն կատարեալ բառերոյ, որ յամենայն տեղիս անախալ և անպատճառ առնուցուն զկենդանական յի-եարն զկնի դրոշմամբ են։

Կանոն տասներորդ համօրէն այբբենօք բազմամասնաբար շարագրութեամբ ճշգրտեալ յորջորջմամբ և յեռեալ ընդ իրեարս, վասն որոյ դիւրեաւ գտցես զոր ինչ իր ի կարիք լինիս յիւրում տանն։

Բացի այն ձեռագրերից, որոնք օգտագործված են վերոհիշյալ հրատարակության համար, Երևանի Պետ. Մատենադարանն ունի նաև № 2291 (էջ 204բ—248ա), № 2335 (էջ

[1] Այս բառացանկը տես՝ Н. Адонц, „Дион. Фрак.", стр. 57—65.

[1] Տպագրում՝ նախ սկսման։

*94ա, հատված, կրում է «*Արիստակիսի է բանքս*» խորագիրը), № 2354 (էջ 226ա—249բ, սկզբից ու վերջից թերի), № 2372 (էջ 83ա—134բ), № 2381 (էջ 68ա—108բ), № 3006 (էջ 290ա—315ա), № 3488 (էջ 55բ—103ա), № 3967 (էջ 1ա—10ա, սկզբից թերի), № 6907 (էջ 2ա—36բ), № 7995 (էջ 51բ—73ա), № 8354 (էջ 1ա—39ա), № 8537 (էջ 65բ—110ա) ևն: Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 335 (էջ 2ա—22բ), № 337 (էջ 67ա—111Aբ), № 389 (էջ 57ա—95ա) և № 956 (էջ 4ա—45ա). Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 68 (էջ 595ա—617ա?) և № 84 (էջ 3բ—26ա?). Զմմառի Մատ. ձեռ. № 226 (էջ 1ա—47բ), № 227 (էջ 84ա—141բ) և № 229 (էջ 69ա—116ա). Անկյուրիայի Կարմիր-վանքի ձեռ. № 146 (էջ 291—372, վերջից թերի). Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 5273 fol. 108r). *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Arm. E. 34 (fol. 37r—74r?).

*Ձեռագրերից մի քանիսում բնագրի խորագիրը «*Վերծանութիւնք*» է, փխ. «*Վերլուծութիւնք*»-ի:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղևոնդ.— *«Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 101, 102—103 և 516:*

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 280, § 7:*

Ամալյան Հ. Մ.— *«Հայերենի առաջին ուղղագրական բառարանը»,* Բանբեր Մատենադարանի, *№ 6, 1962, էջ 121—132:*

Ռուս. ամփոփումը՝ Г. М. Амалян, „Первый орфографический словарь армянского языка" *(էջ 132—133):*

Ֆրնս. ամփոփումը՝ H. M. Amalian, „Le premier dictionnaire orthographique arménien" *(էջ 133):*

Ամալյան Հ. Մ.— *«Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները* (V—XV*դդ.) Երևան, 1966, էջ 110—123 («Արիստակեսի ուղղագրական բառարանը»):*

Գասպարյան Գ.— *«Հայ բառարանագրության պատմություն», Երևան, 1968, էջ 29—32:*

Զարբհանալյան Գար.— *«Հայկական հին դպրության պատմություն», Դ տպ., Վենետիկ, 1897, էջ 387 և 719: Նույնը՝ Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 387 և 718:*

Խաչերյան Լ. Գ.— *«Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում», Երևան, 1962, էջ 56—97:*

Չամչյան Միք.— *«Պատմություն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 168—169:*

Պողարյան Նոր.— *«Հայ գրողներ Ե—ԺԷ դար», Երուսաղեմ, 1971, էջ 282—284:*

Ջահուկյան Գ. Բ.— *«Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում* (V—XV *դդ.)», Երևան, 1954, էջ 114, 227, 228, 229, 230—239 ևն:*

Адонц Н.— „Дионисий Фракийский и армянские толкователи", Петроград, 1915, стр. I—XIV и XVII—LXX.

Neumann C. F.— „Versuch einer Geschichte der armenischen Literatur", Leipzig, 1836, S. 182—183.

Somal P. S.— „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 106.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՄԵԿՆԻՉ

Ապրել է ԺԲ դ.: Ներսես Շնորհալու աշակերտներից էր: Մեկնողական երկերի հայ հեղինակներին որոշող մատենագիտական աղբյուրներից մեկը հիշատակում է, որ «զՄատթէոսի Աւետարանն [մեկնեալ է] Ներսէս Կլայեցին և իր աշակերտն Արիստակէս, և նորա՝ Եփրեմ»[1]*: Մի ուրիշ աղբյուրի համաձայն՝ «Մատթէոսեան Աւետարանին [մեկնութիւնն] մեծին Ներսիսի Կլայեցոյ արարեալ, և Արիստակէս վարդապետն և ընտրեալ աշակերտն Եփրեմ հաւաքեցին»*[2]*: Ձեռագրերից հայտնի է նրանց կողմից պատրաստված «*Ժողովումն մեկնութեան*»-ը, որը*

[1] *Տես՝ առա, հտ. Ա, էջ* LX:

[2] *Առա, հտ. Ա, էջ* LXIII.

*բաղկացած է Մատթեոսի Ավետարանի մեկնության նվիրված չորս գրքերից։ Ժողովածուի հիմքում ընկած են Հովհան Ոսկեբերանի մեկնությունները, որոնց հետ միասին օգտագործված են նաև Եփրեմ Խուրի Ասորու և այլ մեկնիչների գործերը՝ ինչպես կարելի է տեսնել որոշ ձեռագրերի լուսանցային նշումներից (*Եփ, Եփր, Փ, Փր, Եպ, Կ, Կr, Կի, Կիւ, Կւ, Կւղ, Կղ *ձևերով)*[1]*։ Այս ժողովածուի առաջին գրքի սկզբի մասը (Մատթեոսի մինչև Ե գլխի 16-րդ տան մեկնությունը) Ներսես Շնորհալու գործն է*[2]*. դրանից հետո՝ առաջին գրքի շարունակությունն ու չորս գրքերի ավարտումը պատկանում է Արիստակեսին ու նրա աշակերտին։*

* * *

Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ և յօրինեալ, դիւրահաս ընթերցողաց։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1253, էջ 15ա—353ա։*

Բաղկացած է հետևյալ մասերից.

Ա. Առաջինն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, ի խնդրոյ նորին եղբօրն Գրիգորիսի վերադիտողի Հայոց (էջ 15ա—134ա, սկ. «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զընութիւն»)։

Բ. Նորին Յոհաննու [Ոսկեբերանի] ի Կապեռնաւում։ Գիրք երկրորդ (էջ 134ա—224ա, սկ. «Իբրև եմուտ Յս. ի Կափառնաւում»)։

Գ. Նորին Յոհաննու Ոսկեբե[րանի]։ Գիրք երրորդ։ Կեսարացւոց (էջ 224ա—294բ, սկ. «Եւ ելեալ Յս. ի կողմանս Փիլիպպեան Կեսարեայ»)։

Դ. Տեառն Յոհաննու Ոսկեբերանի։ Գիրք չորրորդ։ Փարիսացւոցն (sic) *(էջ 294բ—353ա, սկ. «Իսկ Փարիսացիքն* (sic) *իբրև լուան թէ պապանձեցոյց զՍադուկեցիսն»)։*

Վերջում՝ հետևյալ հիշատակարանը. «ԶԱրիստակէս վարդապետ և զգովեալ աշակերտ նորա զԵփրեմ յիշեսջիք ի Քս., զի նա

1 Աղբյուրների նշումներով հարուստ է հատկապես Երևանի Պետ. Մատ. № 5155 ձեռագիրը։

2 Երևանի Պետ. Մատ. № 1247 ձեռագրում Շնորհալու մասն առանձին կա ընդօրինակված հետևյալ խորագրով. «Ներսէսի եպս.ի՝ եղբօր Գրիգորի կաթողիկոսի, վասն Աւետարանին Մատթէոսի» *(էջ 9ա—98ա, սկ.* «Աստուածային բարերարութիւն գերազանց է քան զընութիւն»)։

աշխատեալ ժողովեաց զբանս մեկնողացն ի մի՝ յետ տեառն Ներսէսի» (էջ 353ա)։ Հետո՝ ավելացվում է. «Յօրինակն այսչափ էր յիշատակարանն Արիստակիսի. զայն որ կատարեալն էր՝ զայն չգտաք, անմեղադիր լերուք» (անդ)։ Այս հավելումն, ի հարկե, տվյալ ձեռագրի գրչից չէ, այլ՝ նախկին օրինակներից, որովհետև նույնությամբ գտնրվում է ուրիշ շատ ձեռագրերում[1]*։*

Սույն ձեռագիրը 1590/91 թթ. ընդօրինակություն է։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 1245 (էջ 12բ—269ա), № 1246 (էջ 9բ—160բ), № 1249 (էջ 10ա—259ա), № 1250 (էջ 14ա—263ա), № 1251 (էջ 9բ—217ա), № 1252 (էջ 8ա—326բ), № 1255 (էջ 13բ—271ա), № 1256 (էջ 21ա—200ա), № 1257 (էջ 39ա—427ա), № 1278 (էջ 7բ—155բ), № 1280 (էջ 7ա—270բ), № 1281 (էջ 11ա—118ա), № 1282 (էջ 11ա—261ա), № 1312 (էջ 12ա—314ա), № 4032 (էջ 9ա—182բ), № 5155 (էջ 10բ—288բ), № 6492 (էջ 7բ—277բ) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № № 258, 283, 332, 458, 707, 889, 932, 1031, 2017. Անկյուրիայի Կարմիրվանքի ձեռ. № 81 (էջ 21—232). Պետերբուրգի Инст. Вост. Яз. (Мин. иностр. дел) Cod. Arm. III. 5. 5 (fol. 186v—366v).

Մի շարք օրինակներ թեև լրիվ են ու նույն կազմն ունեն, բայց «Ժողովումն մեկնութեան...» *խորագրի փոխարեն ունեն առաջին մասը հատկանշող այսպիսի խորագիր.* «Ներսէս *(կամ* Ներսէսի) եպս.ի՝ եղբօր Գրիգորի կթղ.ի սակս Աւետարանին Մա[տ]թէոսի»[2]: *Այս վերջիններում սկ. երբեմն պա-*

1 Մեզ հայտնի ձեռագրերից միայն մեկում այս հիշատակարանը մի քանի բառով ավելի է. «ԶԱրիստակէս վրդ. և զգովեալ աշակերտ նորա զԵփրեմ յիշեսջիք ի Քս., զի նա աշխատեալ ժողովեաց զբանսն մեկնչացն ի մի՝ յետ տեառն Ներսէսի. այլ և զյիշատակս աղնթեր գրեսջիք, զի և դուք գրեալ լիջիք ի գիր վերին դպրութեանն։ Յօրինակն այսչափ էր յիշատակարան Արիստակիսի. զայն, որ կատարեալն էր, չգտաք, անմեղադիր լերուք» (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1281, էջ 118ա)։

2 Երևանի Պետ. Մատ. № 1279 ձեռագիրը (էջ 12ա—339բ) թեև կրում է «Ժողովումն մեկնութեան...: Առաջին Ներսէսի Հայոց կթղ.ի ի խնդրոյ...» *խորա-*

տահում է նաև «Աստուածային բարերարութիւն զերազանց է բան զբնութիւն» բառերով: Շատ ձեռագրերում Արիստակեսի հիշատակարանը բացակայում է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղեվ.—«Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 118—119:

Աճառյան Հր.— «Անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 281, § 19:

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 703:— Նույնի Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 701—702:

Նորայր Ն. Բյուզանդացի — «Հայկական բառաքննութիւն», Կ. Պոլիս, 1880, էջ 22:

Պողարյան Նոր.— «Ս. Ներսես Շնորհալու ձեռագիր աշխատությունները Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ», Էջմիածին (ամս.), 1973, № 12, էջ 40—43:

[Անեղինակ]— «Ընդհանուր տեսութիւն մը նախնեաց թարգմանութեանց վրայ դատաստան ընելու», Բազմավէպ, 1875, էջ 354.

Sargisean Bas.— „Dei tesori patristici e biblici conservati nella letteratura armena", Venezia, 1897, p. 52.

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՊԱՐԹԵՎ

Տես՝ ՈՐԴԻՔ ԵՎ ԹՈՌՈՒՆՔ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Այս անվան տակ ամփոփում ենք մի քանի ճառեր, որոնց համանուն հեղինակները կարող են տարբեր անձեր լինել: Հետագա ուսումնասիրությունները դյուրացնելու համար՝ նշում ենք նաև այդ ճառերը պարունակող ձեռագրերի գրչության ժամանակը:

* * *

1. Արիստակէս[1] վարդապետի ասացեալ Մեծի հինգշաբաթին ոտնլուային խորհուրդ. «Աստուածապարգև շնորհիւ լցեալ որդիք հաւատոյ և մանկունք ուխտի սրբութեան, ծնեալք յանարատ արգանդէ մօրս մերոյ հոգևորի և սնեալ սրբութեամբ ի վերայ կենարար բազկաց բարձրելոյն...», Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 413, էջ 464—471ա:

Ձեռագիրը համարվում է ԺԴ դ. ընդօրինակություն[2]:

2. Սրբոյն Առիստակիսի Հայոց վարդապետի Վասն ութօրեայ նաւակատեացն, որ զկնի Աստուածայայտնութեանն կատարի. «Որք ստուեր հանդերձելոցն ունէին օրէնքն յորժամ յանմտանելիսն մերձեցուցանէին զարժանին քահանայութեանն...», Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202, էջ 119բ—122ա:

Ձեռագիրը 1637 թ. ընդօրինակություն է: Տես նաև Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 154 (էջ 224—228)[3], որը 1737 թվականից է. և Մյունխենի HStB Cod. Arm. XIII (fol. 44^{r}—48^{v}), որը 1775 թվականից է:

3. Արիստակէս վարդապետի ասացեալ ի Նոր Կիւրակէն. «Նոր է տօնս և չքնաղ...»: Տես՝ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԱՂԵՐԳՈՒ

Այստեղ ամփոփում ենք մեզ հայտնի այն տաղերը, որոնք Արիստակէս հեղինակային անունն են կրում և հավանորեն տարբեր հեղինակների և ժամանակաշրջանների արտադրություններ են:

* * *

1. Ողբ ազնիւ և պիտանի. «Եկայք այսօր եղբայրք ամէն|ՅԱբրահամեան շառաւիղէն,

---

գիրը, բայց հիմնովին տարբեր գործ է, որը պատկանում է Հովհաննես Թործորեցուն. հմմտ. «Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն, և անտի աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ որ կոչի Թործորեցի», Կ. Պոլիս, 1825:

1 Ձեռագրում՝ արըստակէս:

2 Երևանի Պետ. Մատենադարանն ունի այս ձեռագրի ժապավենը (Ձեռագրատան ժապավենների բաժին, № 413):

3 Երևանի Պետ. Մատենադարանն ունի սույն ձեռագրի ժապավենը (Ձեռագրատան ժապավենների բաժին, № 398):

|Եհաս հրաման ինձ արարչէն...», *տես՝ Տ. Պալյան, «Հայ աշուղներ», հտ. Ա, Զմյուռնիա», 1911, էջ 277—279։*

Տների սկզբնատառերը՝ «Երգ Արիստակեսի ի»: *Հրատարակիչն Արիստակես խարբերդցու անվան տակ է տեղադրել այս տաղը, բայց դա սխալ է, որովհետև խարբերդցին ապրել է ԺԷ դարում, մինչդեռ այս տաղը գտնվում է մինչև իսկ ԺԵ դ. ձեռագիր տաղարաններում։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 425 (էջ 333ա—334ա), որը 1466 թվականից է. նույն մատ. մյուս օրինակներն են՝ № 423 (էջ 255բ—256ա), № 427 (էջ 21բ—22բ), № 825 (էջ 127ա—127բ), № 2482 (էջ 109բ—111բ), № 3162 (էջ 93ա—94ա), № 3873 (էջ 193բ—194բ), № 4117 (էջ 242ա—243ա), № 5672 (էջ 84ա—85բ), № 5887 (էջ 58ա—59բ), № 9023 (էջ 50բ—52ա), № 9075 (էջ 61բ—63ա) են։ Տես դարձյալ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 380 (էջ 126բ), № 388 (էջ 51ա), № 394 (էջ 218ա), № 399 (էջ 128ա), № 405 (էջ 174բ), № 418 (էջ 254բ), № 431 (էջ 87բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 123 (էջ 219բ), № 138 (էջ 101բ), № 200 (էջ 94բ), № 360 (էջ 84ա), № 373 (էջ 122ա), № 402 (էջ 99ա), № 415 (էջ 119բ), № 531 (էջ 108բ) և № 1041 (էջ 546ա). Թբիլիսիի Ձեռագր. Ինստ. հայ. ձեռ. № 124 (էջ 203բ). Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 233 (էջ 130). Զմմառի Մատ. ձեռ. № 116 (էջ 141ա). Կիպրոսի ձեռ. № 42 (էջ 90ա). Արմաշի Մատ. ձեռ. № 200 (էջ 131բ). Տյուբինգենի KUB Ma XIII 30 (fol. 189^{r}), Ma XIII 31 (fol. 110^{v}).

Ձեռագրերում տաղը կրում է այլևայլ խորագրեր՝ «Ողբ ննջեցելոց», «Ողբ արտասուաց ի վերայ ննջեցելոց», «Ողբ գերեզմանի», «Ողբ մեռելի», «Տաղ ողբ ի վերայ մեռելի», «Տաղ մեռելի և պաշտաման ողբ», «Տաղ վասն ննջեցելոց», «Յորդորակ» *և նմաններ։*

Տաղի սկզբնավորությունը ձեռագրերում նույնն է տպագրի հետ, և կամ՝ է «Եկա՛յք այսօր եղբարք ամէն»: *Վերոնշյալներից միայն մեկն ունի՝* «Եկայք եղբարք ամենեքեան» *(Վիեննայի ձեռ. № 531)։*

Տպագրում տաղի տների թիվը 14 է, բայց ձեռագրերում պատահում է մինչև 16 տուն։

2. Գանձ ապաշխարութեան, յԱրիստակիսէ. «Մեղայ, տէր, մեղայ,|Անօրինեցայ, | Յանցաւոր գրտայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3540, էջ 93ա—95բ։*

Սկզբնատառերը կազմում են «Մերգան»: *Մեզ հայտնի են ուրիշ երկու ձեռագրեր ևս, որոնք կրում են հեղինակային նույն անունը. դրանք են՝ Արմաշի մատ. ձեռ. № 217՝* «Ապաշխարութիւն յԱրիստակէս երիցու» *(էջ 534) և Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 2608: «... յՌըստակէս երից[ու]» (fol. 267^{v}, 268^{r}, 269^{r})[1]: *Ուրիշ ձեռագրերում անանուն է, տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 423՝* «Գանձ ապաշխարութեան» *(էջ 256ա—257բ), № 425՝ խոր. նույն (էջ 127բ—129բ), № 3476՝ խոր. նույն (էջ 135բ—137ա) և № 424՝* «Գանձ երեկոյին և պաշտաման պահոց» *(էջ 78ա—79բ)։ Վերջին ձեռագրում տաղն առաջին էջի ստորին լուսանցում ունի այսպիսի մակագրություն.* «Գանձս ասացեալ Մըխիթարի | Այրի վանից առաջնորդի, | Աստուածաբան վարդապետի, | Որ մականուամբըն Կոշ կոչի» *(էջ 78ա)։*

3. Տաղ. «Ըզքեզ աղաչեմք (sic) Աստուածածին, | Զ[երեսըս] դընեմ ի հող գետին...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 79, fol. 214^{r}.

Սկզբնատառերը՝ «Ըռստակէսի»: *Նվիրված է Փոխման տոնին։*

4. Տաղ Արիստակիսի. «Հաւիկ մի պայծառ տեսայ աններման|Ի յայն քառաթևին վերայ աններման.|Աններմա՛ն, աններմա՛ն, աններմանիդ ո՞վ նըման.|Դու նըման...», *տես՝ Ա. Չոպանյան, «Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ 51։*

[1] *Տես՝* F. C. Conybeare, „A Catalogue", p. 119.

4 տուն: Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 556 գրչագրից:

Այլ տպ. Տաղ Արիստակիսի. «Հաւիկ մի...», տես՝ Կ. Սասունի, «Գրական գոհարներ միջնադարեան աշխարհաբար գրականութեան և ժողովրդական բանահիւսութեան», Բեյրութ, 1949, էջ 261:

4 տուն: Արտատպ. նախորդ հրատարակությունից:

Այլ տպ. (Անխորագիր) «Հաւիկ մի պայծառ տեսի...», տես՝ Վահան Տեր-Մինասյան, «Անգիր գպրութիւն և առակք», Կ. Պոլիս, 1893, էջ Ժ—ԺԱ:

Այլ տպ. Տաղ ուրախութեան. «Հաւիկ մի պայծառ տեսի աննըման...», տես՝ Աս. Մնացականյան, «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956, էջ 529—530:

12 տուն: Համեմատական բնագիր է, կազմված՝ Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերի հիման վրա. № 2389 (էջ 147ա—147բ), № 3655 (էջ 353բ), № 5292 (էջ 47բ), № 6517 (էջ 25ա), № 6998 (էջ 46ա), № 7051 (էջ 24բ—26ա) և № 7129 (էջ 134ա—135ա)[1]:

□ Պետ. Մատենադարանի ձեռագրերում, վերոնշյալներից բացի, մեզ հայտնի են նաև հետևյալ օրինակները. № 2672 (էջ 118բ—120բ), № 3476 (էջ 135բ), № 7709 (էջ 55բ) և № 8655 (էջ 29ա—29բ):

Տաղը Պետ. Մատենադարանի ձեռագրերից ոչ մեկում Արիստակէս անունը չի կրում. մի օրինակ՝ № 6998-ը կրում է «Տաղ յարութեան Նարեկացոյ» խորագիրը, իսկ մնացյալներն անանուն են և ունեն այլևայլ խորագրեր՝ «Տաղ յարութեան», «Տաղ սուրբ խաչին», «Գանձ ապաշխարութեան», «Գանձ վեցերորդ կիրակէին» են, և կամ՝ անխոր. են: Որոշ օրինակների միջև կան նաև խմբագրական տարբերություններ:

⊠ Ֆ. Ն. Ֆինկը, Աբգար Հովհաննիսյանի № 5 ձեռագիրը նկարագրելիս, երկու տաղ վերագրել է Արիստակէս տաղասաց-ին[1]. դրանք են՝ «Ողբ աղայոց» (սկ. «Աստուած Բարոզեաց և խըրատ ետուր») և «Ողբ ի վերայ ննջեցելոց մանկանցն ասա» (սկ. «Ես գիտէի զաշխարհս ինձ մուլք էր տուած»): Այդ ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում և կրում է 2482 թվահամարը. մեր ստուգումներից պարզվեց, որ հիշյալ տաղերն իրոք գտնվում են նրա 100ա—101ա և 101ա—103բ էջերում, բայց անանուն են և այդպիսի վերագրման որևէ հիմք չեն տալիս: Երևանի ձեռագրերում այս երկու տաղերն առհասարակ անանուն են. միայն մեկ ձեռագրում, № 3162, երկրորդ տաղը կրում է «Ողբ Նաղաշի վասն ննջեցելոց» խորագիրը (էջ 98ա), տես ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ:

Հ. Տաշյանը Վիեննայի Մխիթ. Մատ. № 405 ձեռագրում գտնվող թրք. անանուն տաղը, որը խորագրված է՝ «Բանք վասն մահու» (էջ 23բ, սկ. «Կէլին պօկուն դարտաշլարում») համարում է Արիստակէս վրդ. տաղասաց-ի գործը, բայց հայտնի չէ, թե ի՛նչ հիման վրա է կատարվում այս վերագրումը: Նույն տաղը կա նաև Երևանի Պետ. Մատ. № 3081 ձեռագրում՝ «Ողբ տաճիկ բառով ասա» խորագրով (էջ 132բ—133բ, սկ. «Կէլըն պաւկուն դարտ.») և նույնպես անանուն է:

ԱՐԻՍՏԻԴԷՍ ԱԹԵՆԱՑԻ

(Aristides Atheniensis)

Բ դարի հույն իմաստասեր, հեղինակ մի ջատագովական երկի, որ նա մոտ. 123 թ. ներկայացրել էր Հռոմի Ադրիանոս կայսրին (117—138 թթ.)՝ ի պաշտպանություն քրիստոնեական կրոնի: Այս գրությունը երկար ժամանակ հայտնի էր միայն Եվսեբիս Կեսարացու թողած հիշատակությամբ, թե «Արիստիդէս իսկ այր հաւատարիմ յուսմանէ աստի մերմէ՝ ըստ նմանութեան Կոդրատեայ մատոյց Ադրիանու գիր ապաբանութեան

[1] Այս տաղի մասին ընդհանրապես տես Աս. Մնացականյանի գրքի 525—530 էջերը:

[1] Ֆ. Ն. Ֆինկ, «Ցուցակ տփխիսեցի Աբգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի», Թիֆլիս, 1903, էջ 133, §§ 19 և 20:

ի վերայ կրօնից մերոյ. և սոյն իսկ այս նորա գիրք գտանի մինչև ցայսօր ժամանակի առ բազումս» (Դպր. Դ., գլ. Գ)[1]։ Արիստիդեսի այս Ջատագովությունը կորած էր համարվում մինչև ԺԹ դ.։ Առաջին անգամ նրա մի հատված, հայ. ոսկեդարյան թարգմանությամբ, հայտնաբերվելով Մխիթարյան Մատենադարանի գրչագրերում, տպագրությամբ լույս ընծայվեց 1878 թ.։ Այնուհետև J. Rendel Harris-ը Սինայի Ս. Կատարինեի վանքում հայտնաբերելով Ջատագովության ասոր. ամբողջական թարգմանությունը՝ հրատարակեց 1891 թ., իսկ J. A. Robinson-ը դրա հետ միասին ցույց տվեց, որ Հովհան Դամասկացու անունով հայտնի «Վարք Բարաղամու և Յովասափու» վեպի հուն. բնագրում Նաքովրի բերանով արտասանված ճառի հետ միաձուլված է Արիստիդեսի Ջատագովության մեծագույն մասը՝ վերախմբագրված վիճակում։ Հետագայում՝ 1920-ական թթ. հայտնաբերվեցին նաև Ջատագովության հուն. իսկական բնագրի երկու հատվածներ։ Արիստիդեսի այս երկի հայկ. թարգմանությունը, որը հունարենից է կատարված, կենդանի հետաքրքրության առարկա է դարձել բանասիրության մեջ, թարգմանվել է մի շարք լեզուների և օգտագործվել է համեմատական ուսումնասիրություններում։ Արիստիդեսի անունով հայ. թարգմանությամբ մեզ հասել են նաև երկու այլ գրվածքներ, որ նշում ենք ստորև։ Վերջիններիս հուն. բնագրերն անհայտ են։ Նրանց թարգմանությունն ավելի հետագա ժամանակի գործ է, քան Ջատագովությանը։

* * *

1. Ինքնակալի Ադրիանոսի կայսեր յԱրիստիդեայ փիլիսոփայէ Աթենացւոյ. «Ես, ո՛վ թագաւոր, խնամակալութեամբն Աստուծոյ ատեղծեալ՝ մտի յաշխարհս...», տես հետևյալ հրատ. մեջ. «Սրբոյն Արիստիդեայ իմաստասերի Աթենացւոյ, լատին թարգմանութեամբ» („Sancti Aristidis philosophi Atheniensis sermones duo, quorum originalis textus desideratur, ex antiqua armeniaca versione nunc primum in latinam linguam translatos...“), Վենետիկ, 1878, էջ 4—13։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 739 (այժմյան № 218) ձեռագրից։ Բնագրի վերջին պարբերությունը («Իսկ աստուածայնումն՝ եհաս հոգեղէնն...»), ուրույն հատված համարվելով Արիստիդեսի մի ուրիշ աշխատությունից, հրատարակության մեջ բաժանարար նշանով անջատված է, բայց Ջատագովության ասոր. թարգմանության համեմատությունը ցույց է տալիս, որ նրա մասն է կազմում։

Այլ տպ.— Ինքնակալի Ադրիանոսի կայսեր ևն. «Ես, ո՛վ թագաւոր...» (հրատ. P. Martinus), տես՝ J. B. Pitra, „Analecta sacra spicilegio Solesmensi parata“, t. IV Parisiis, 1883, p. 6—8.

Արտատպ. նախորդ հրատարակությունից։ Վերջին պարբերությունը, որպես տարբեր երկի մաս, տպագրվել է առանձին, անդ, էջ 11։

Այլ տպ.— Ինքնակալի Ադրիանոսի կայսեր ևն. «Ես, ո՛վ թագաւոր...» (հրատ. Ad. Merx), հետևյալ հրատ. մեջ „Marksteine aus der Weltlitteratur in Originalschriften, herausgegeben von Johannes Baensch-Drugulin“, Leipzig, 1902, S. 8—9.

Արտատպ. է 1878 թ. հրատարակությունից։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2679=Նախկին Գեորգ. № 102 (էջ 154բ—155բ, հին էջակալությամբ՝ 152բ—153բ), որը գրված է 981 թ.։ Սրանից է արտագրված Վենետիկի Մխիթ. Մատ. վերոնշյալ № 218 ձեռագիրը (էջ 269բ—270բ), որն իր հերթին ծնունդ է տվել Երևանի Պետ. Մատ. № 6228 ձեռագրին (էջ 140ա—141ա)։

Հայ. բնագրի լատ. թարգմանությունն առաջին անգամ կատարել են Մխիթարյանները („Imperatori Caesari Hadriano, Aristides, philosophus Atheniensis“) և հրատարակել 1878 թ.՝ հայերենին առընթեր, նույն էջերում։ Նույնի արտատպ. 1891 թ. տես՝ J. Rendel Harris-ի մոտ, *Texts and Studies*

[1] «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 241։

(ed. by J. Armitage Robinson), vol. № 1, p. 27—29. Նույնի այլ տպ. տես՝ Ю. Кулаковский-ի մոտ, *Университетские Известия*, 1892, стр. 14—17. Լատ. մի այլ թարգմանություն („Autocratori Adriano Caesari, Aristides philosophus Atheniensis"), որ կատարել է P. Martinus-ը, տես J. B. Pitra-ի մոտ, „Analecta sacra", t. IV, p. 282—284 (վերջին պարբերությունն առանձին՝ էջ 286): Լատ. երրորդ թարգմանությունը („Autocratori Adriano Caesari ab Aristide philosopho Atheniensi"), որ կատարել է Հ. Կարապետ Ամատունին, տես հետևյալ հրատարակության մեջ. C. Vona, „L'Apologia di Aristide", Roma, 1950, p. 127—128.

Գերմ. թարգմանությունը („Aristides, Philosoph von Athen, an den Kaiser Hadrian"), որ կատարել է F. Sasse-ն, տես՝ *Zeitschrift für Katholische Theologie*, III Jahrg., 1879, S. 615—617. Գերմ. այլ թարգմանություն („An den Imperator Adrianus Cäsar, von dem Philosophen Aristides aus Athen"), որ կատարել է F. v. Himpel-ը, տես՝ *Theologische Quartalschrift*, LXII Jahrg., 1880, S. 110—116, Նույնի արտատպ. 1882 թ. տես՝ A. Harnack-ի մոտ՝ *Texte und Untersuchungen* (hrsg. von O. von Gebhardt u. A. Harnack), Bd. I 1—2, S. 110—112. Himpel-ի գերմ. այս թարգմանությունը, վերանայված Կարապետ Տեր-Մկրտչյանի կողմից և համեմատված Conybeare-ի անգլ. թարգմանության հետ՝ 1893 թ., տես՝ E. Hennecke-ի մոտ, *Texte und Untersuchungen*, Bd. IV 3, S. 1—11. Նույնի այլ տպ. տես՝ R. Seeberg-ի մոտ, „Der Apologet Aristides", Erlangen—Leipzig, 1894, S. 26—32. Գերմ. այլ թարգմանություն („Dem Imperator Hadrianus Cäsar von Aristides dem athenischen Philosophen"), որ կատարել է Ad. Merx-ը, տես հետևյալ հրատ. մեջ. „Marksteine aus der Weltlitteratur in Originalschriften, herausgegeben von Johannes Baensch-Drugulin", Leipzig, 1902, S. 10—12.

Ֆրանս. թարգմանությունը („Aristide, Philosophe Athénien, à l'Empereur César Hadrien"), որ կատարել է L. Gautier-ն, տես՝ *Revue de Théologie et de Philosophie*, Lauzanne, 12e année, Janvier 1879, p. 79—82. Թարգմանիչը հայտնում է, որ սույն թարգմանությունը կատարվել է լատիներենից, բայց համեմատվել է հայերեն բնագրի հետ՝ ուսանող Կարապետ Թումայանի կողմից:

Ռուս. առաջին թարգմանությունը („Самодержцу императору Адриану от Аристида афинского философа"), որ հայ. բնագրից կատարել է Մկ. Էմինը (Н. О. Эмин), տես՝ *Православное Обозрение*, 1879, стр. 350—352. Նույնի արտատպ. տես՝ „Отрывок из Апологии Аристида, христианского апологета; с армянского языка перевел Н. Эмин", Москва, 1879, стр. 7—11. Նույնի այլ տպ. տես՝ „Переводы и статьи Н. О. Эмина...", Москва, 1897, стр. 252—255. Himpel-ի գերմ. թարգմանությունից կատարված ռուս. մի այլ թարգմանություն („Императору кесарю Адриану от Аристида, философа афинского") տես՝ С. Остроумов, „Разбор сведений Евсевия Кесарийского и бл. Иеронима Стридонского...", Москва, 1886, стр. 22—26. Himpel-ի գերմ. թարգմանության՝ Կար. Տեր-Մկրտչյանի կողմից վերանայված հրատարակության և Մկ. Էմինի ռուս. թարգմանության համեմատությամբ կատարված ռուս. մի նոր թարգմանություն ("Императору цесарю Адриану Аристид, философ афинский"), տես՝ И. Крестников-ի մոտ, („Христианский апологет II-го века, афинский философ Аристид..."), Казань, 1904, прилож. стр. 1—28. Սույն թարգմանությունը համեմատված է ասոր. և հուն. բնագրերի հետ:

Անգլ. թարգմանությունը („To the Autocratic Caesar Adrianos from Aristides, Athenian Philosopher"), որ կատարել է F. C. Conybeare-ը, հրատարակվել է 1891 թ. J. Rendel Harris-ի կողմից, տես՝ *Texts and Studies*, vol. I, № 1, p. 30—33. Նույնի այլ տպ. տես՝ C. Vona-ի մոտ, „L'Apologia di Aristide", Roma, 1950, p. 129—131.

Արիստիդեսի Ջատագովության հուն. սկզբնագրի մեջ հասած հատվածների և ասոր. լրիվ թարգմանության մասին խոսում են ստորև գրականության բաժնում նշված ուսումնասիրություններից շատերը (J. Rendel Harris—J. Armitage Robinson, J. Schönfelder, R. Raabe, R. Seeberg, J. Geffcken, C. Vona *են)։*

2. Արիստիդեայ փիլիսոփայի Աթենացւոյ՝ ի գոչումն աւազակին և ի խաչելոյն ապաբանութիւն. «Քանի՛ հռաշացուցանէ զիս գոչումն աւազակին. ընդ նմին և ձայն խաչելոյն...», *տես հետևյալ հրատ. մեջ. «Խօսք սրբոյն Արիստիդեայ իմաստասիրի Աթենացւոյ»* („Sancti Aristidis philosophi Atheniensis sermones duo"), *էջ 14—23։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. մի ձեռագրից, որը ԺԲ/ԺԳ դդ. ընդօրինակություն է։

Այլ տպ.— Արիստ[իդ]եայ փիլիսոփայի Աթենացւոյ *են.* «Քանի՛ հռաշացուցանէ զիս...» (*հրատ.* P. Martinus), *տես՝* J. B. Pitra-*ի մոտ*, „Analecta sacra", t. IV, p. 8—10.

Արտատպ. է նախորդ հրատարակությունից։

□ *Այս բնագիրը նույնպես ունեցել է լատ. երկու թարգմանություն։ Առաջինը, որ Մխիթարյանների թարգմանությունն է* („Aristidis philosophi Atheniensis de latronis clamore et crucifixi responsione"), *լույս է տեսել հայ. բնագրի 1878 թ. հրատարակության տողընթեր, նույն էջերում։ Երկրորդ թարգմանությունը* („Aristidae, philosophi Atheniensis, de latronis clamore et crucifixi responsione sermo"), *որը* P. Martinus-*ի կողմից է կատարվել, տպագրվել է հայ. բնագրի երկրորդ հրատարակության հատորում, էջ 284—286։*

Բնագրի գերմ. թարգմանությունը („Von Aristides, dem Philosophen von Athen, zu dem Rufe des Räubers und der Antwort des Gekreuzigten") *տվել է* F. Sasse-*ն, տես՝* *Zeitschrift für Katholische Theologie*, III Jahrg., 1879, S. 617—618. *Գերմ. այլ թարգմանություն* F. v. Himpel-*ի* („Von Aristides, dem athenischen Philosophen, zum Rufe des Räubers und zur Antwort des Gekreuzigten"), *տես՝ Theologische Quartalschrift*, LXII Jahrg., 1880, S. 117—121. Himpel-*ի այս թարգմանությունը, համեմատված լատ. վերոնշյալ երկու թարգմանությունների հետ, տես* R. Seeberg-*ի մոտ*, „Der Apologet Aristides", S. 62—67.

Ռուս. թարգմանությունը („Аристида, афинского философа, о воззвании разбойника и об ответе распятого") *տես՝* И. Крестников-*ի մոտ*, „Христианский апологет II-го века, афинский философ Аристид", прилож. стр. 84—88. *Թարգմանությունը կատարվել է* Himpel-*ի գերմ. թարգմանությունից՝ Մխիթարյանների և* P. Martinus-*ի լատ. թարգմանությունների հետ համեմատվելով։*

3. Ի թղթէն Արիստիդայ փիլիսոփայի որ առ ամենայն փիլիսոփայս. «Զամենայն կիրս կրեաց ճշմարիտն...» (*հրատ.* P. Martinus), *տես* J. B. Pitra-*ի մոտ*, „Analecta sacra", t. IV, p. 11.

Հրատարակվել է Փարիզի Bibl. Nat. Ancien Fonds Arm. 85 (*այժմյան* Ms. Arm. 153) *ձեռագրից։*

Արիստիդեսի այս հատվածը գտնվում է Վարդան Այգեկցու հորինած «Արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի[1] *մեջ, որի համառոտ խմբագրությունը ներկայացնող օրինակ է փարիզյան վերոնշյալ ձեռագիրը, ինչպես և Երևանի Պետ. Մատ. № 2080 ձեռագիրը, որի 36ա էջում է այդ հատվածը՝ նույն խորագրով։ Բայց «Արմատ հաւատոյ»-ի ընդարձակ խմբագրությունում նույն հատվածի խորագիրն այլ է, որ ավելի ուղիղ է, այսինքն՝* «Ի թղթէն Արիստիդայ փիլիսոփայի որ առ Մենանդրոս փիլիսոփայ», *տես, օրինակ, նույն մատ. ձեռ. № 3295 (էջ 354բ)։*

Հատվածի լատիներեն թարգմանությունը („Fragmentum epistolae Aristidae philosophi ad omnes philosophos") *տվել է* P. Mar-

---

[1] *Վարդան Այգեկցու այս երկի մասին տես՝ ստ., ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ, § 3։*

tinus-ը, ըստ հայ. վերոհիշյալ հրատարակության, նույն հատորում, էջ 286: Նույն լատիներենի այլ ապ. 1894 թ.՝ տես R. Seeberg-ի մոտ, „Der Apologet Aristides“, S. 68. որ ծանոթագրություններում մեջ օգտագործված է նաև հայ. բնագրի հուն. թարգմանությունը: Վերջինս՝ հուն. թարգմանությունը անգլ. խորագրով „From an Epistle of Aristides to all philosophers“, որ կատարել է F. C. Conybeare-ը, 1891 թ. հրատարակվել էր J. Rendel-Harris-ի կողմից, տես՝ *Texts and Studies*, vol. I, № 1, p. 34.

Ռուս թարգմանությունը („Отрывок из Послания Аристида философа ко всем философам“) *տես* И. Крестников-*ի մոտ*, „Христианский апологет II-го века...“, прилож. стр. 88.

Գերմ. թարգմանությունը („Aus dem Briefe an jeden Philosophen von dem Philosophen Aristides“), *որ կատարել է* E. Hennecke-*ն*, *տես՝* *Theologische Literaturzeitung*, 1894, S. 444.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալան Հովհ.— *«Ս. Արիստիդէս Աթենացի»,* Պատկեր, *Բ տարի, 1891/92, էջ 494—499:*

Անասյան Հ. Ս.— „A. Salmaslian. Bibliographie de l'Arménie... Érévan, Éd. de l'Académie des Sciences de la R. S. S. de l'Arménie, 1969“ *(Գրախոսություն),* Պատմա-բանասիրական Հանդես, *1971, № 1 (52), էջ 239—254:*

Բոնար Լ.— *«Սրբոյն Արիստիդեայ Աթենացւոյ Ջատագովութենէն գտնուած հատուած մը»: Տես սաորև՝* Baunard L., „Découverte d'un fragment de l'Apologie de saint Aristide d'Athènes“.

Դալեմքյարյան Գր.— *«Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ ընդդէմ Աղանդոց մատենին», Վիեննա, 1919, էջ 7—17:*

Նոյն հատվածը տես նաև Հանդես Ամսօրեայ*-ում, 1893, էջ 291—294:*

Զարբհանալյան Գար.— *«Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 66—67:*

Զարբհանալյան Գար.— *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դար Դ—ԺԳ)», Վենետիկ, 1889, էջ 318—320:*

Էմին Մկ.— *«Բանի մի խօսք...»: Տես սաորև՝* Эмин Н. О., „Несколько слов...“.

Կոնիբիր Ֆ. Կ.— *«Ս. Արիստիդէս Աթենացւոյ Ջատագովութեան ժամանակի մասին (Թղթակցութիւն հայագէտ Փ. Կոնիբերի)»,* Հանդես Ամսօրեայ, *1903, էջ 30—32:*

Ղազիկյան Արս.— *«Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա., Վենետիկ, 1909, էջ 239—242:*

Տէր-Մովսիսյան Մեսրոպ— *«Պատմութիւն Բարղամու և Յովասափու», էջ ԾԲ—ԾԷ և ԿԵ—ԿԷ. հետևյալ հրատ. մեջ՝ «Նկարագրութիւն հոգևոր վարուց Յովասափու, որդւոյ թագաւորին Հնդկաց, գրեալ Յոհաննու Կրօնաւորի», Վաղարշապատ, 1897:*

Ֆեթթեր Պ.— *«Արիստիդէս հայ մատենագրութեան մէջ»: Տես սաորև՝* Vetter P., „Aristides-Citate in der armenischen Litteratur“.

(Անանուն)— *«Խօսք սրբոյն Արիստիդեայ իմաստասիրի Աթենացւոյ (Նորատիպ հրատարակութիւն)»,* Բազմավեպ, *1878, էջ 320—322:*

Կարծիքներ՝ Արիստիդեսի Ջատագովության հայերեն թարգմանության առթիվ:

Крестников И.—«Христианский апологет II-го века, афинский философ Аристид и его новооткрытые сочинения; опыт историко-критического исследования», Казань, типо-лит. Имп. Университета, 1904, стр. 38—48 («Армянский перевод Апологии Аристида, независимость его от греческого текста Апологии, включенной в повесть о Варлааме и Иоасафе, и от сирийского перевода; значение армянского перевода при определении подлинности изложения первых двух глав Апологии и для суждения об относительной ценности редакций сирийской и греческой в передаче подлинного текста Аристида»); стр. 103—106 («Адресат

Апологии и время подачи ее»); стр. 119—120 («Адресат по армянскому тексту»); стр. 201—213 («Гомилия Аристида»); стр. 214—215 («Отрывок из Послания Аристида философа ко всем философам»).

Приложение 1.— Стр. 1—83: I. Апология Аристида *(ասորական և հայկական բնագրերի ռուս. թարգմանությունը և համ. բնագրերը)։*

Стр. 84—88: II. Гомилия Аристида *(ռուս. թարգմանությամբ)։*

Стр. 88: Отрывок из Послания Аристида философа ко всем философам *(ռուս. թարգմանությամբ)։*

Кулаковский Ю.— «Вновь открытая Апология христианства II века» (Оттиск из *Университетских Известий* за 1892 г.). 17 стр.

Остроумов С. И.— «Разбор сведений Евсевия Кесарийского и бл. Иеронима Стридонского о греческих апологетах христианства второго века», Москва, 1886, стр. 1—30 («Глава первая. Кодрат и Аристид»).

Эмин Н. О.— «Отрывок из Апологии Аристида, христианского апологета, *Православное Обозрение,* 1879, стр. 347—352.

Արտատպ. տես՝ «Отрывок из Апологии Аристида, христианского апологета; с армянского языка перевел Н. Эмин», Москва, в Университетской типографии (М. Катов), 1879. 11 стр.

Այլ արտատպ. տես՝ «Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе», Москва, 1897, стр. 249—255.

Эмин Н. О.— «Несколько слов в защиту непризнаваемой Эрнестом Ренаном подлинности новооткрытой Апологии Аристида», *Критическое Обозрение,* II-й год, 1880, стр. 361—363.

Արտատպ, տես՝ „Переводы и статьи Н. О. Эмина“, стр. 332—335.

Հայ. թարգմանությունը՝ «Քանի մի խօսք ի պաշտպանութիւն չէրնէստ Րէնանէ չընդունուած ստուգութեան Արիստիդէսի նորագիւտ 'Պաշտպանողական ճառի'», Փարոս Հայաստանեայց, *Բ տարի, 1880, էջ 86—87։*

Altaner Berthold — „Der Stand der patrologischen Wissenschaft und das Problem einer neuen altchristlichen Literaturgeschichte“, *Տեսակյալ հրատ. մեջ.* „Miscellanea Giov. Mercati“ (Studi e Testi, t. 121), Roma, 1946.

Altaner Berthold — „Précis de patrologie, adapté par H. Chirat“, Casterman—Paris—Tournai, Editions Salvator Mulhouse, 1961, p. 165—167.

Bardenhewer Otto — „Patrologie“, Freiburg i. B., 1894, S. 85—87.— 2. Aufl., Freiburg i. B., 1901, S. 41—43.

Bardenhewer Otto — „Geschichte der altkirchlichen Litteratur“, Bd. I, Freiburg i. B., 1902, S. 171—186.

Batiffol Pierre — „La littérature grecque“ (Anciennes littératures chrétiennes, I), 4e éd., Paris, 1901, p. 86—87.

Baunard Louis — „Découverte d'un fragment de l'Apologie de saint Aristide d'Athènes, traduit de l'Arménien par les Pères Méchitaristés de Venise“, *Revue des Sciences Ecclésiastiques*, Amiens-Paris, № 232, Mai 1879, p. 432—444.

Հայ. թարգմանությունը՝ «Սրբոյն Արիստիդեայ Աթենացւոյ Ջատագովութենէն գըտնուած հատուած մը», Բազմավէպ, *1879, էջ 231—237։*

Bellesheim Alphons — „Die wiederaufgefundene Apologie des Aristides von Athen an den Kaiser Hadrian“, *Der Katholik,* III Folge, Bd. IV, 1891, S. 258—279.

Bücheler F.— „Aristides und Justin, die Apologeten“, *Rheinische Museum für Philologie*, Frankfurt am Main, N. F., Bd. XXXV, 1880, S. 279—286.

Doulcet Henry — „L'Apologie d'Aristide et l'Épître de Diognète“, *Revue des Questions Historiques*, 14e année, 56e livraison, 1er Octobre 1880, p. 601—613.

Ehrhard Albert — „Die altchristliche Litteratur und ihre Erforschung von 1884—1900“, Abt. I, Freiburg i. B., 1900, S. 202—212.

Gautier Luc — „Un fragment de l'Apologie d'Aristide retrouvé dans une traduction arménienne“, *Revue de Théologie et de Philosophie*, Lauzanne, 12e année, Janvier 1879, p. 78—82.

Geffcken J. — „Zwei griechische Apologeten“, Leipzig und Berlin, 1907.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. A. Müller-Ravensburg, *Römische Quartalschrift*, XXI, 1907, S. 202—204.

Harnack Adolf — „S. Aristidis, philosophi Atheniensis, Sermones duo. Venetiis, 1878, Libraria PP. Mechitarisrarum in monasterio S. Lazari“, *Theologische Literaturzeitung*, 1879, № 16, S. 375—379.

Harnack Adolf — „Die Überlieferung der griechischen Apologeten des zweiten Jahrhunderts in der alten Kirche und im Mittelalter“ (Texte und Untersuchungen zur Geschichte der altchristliche Litteratur, I 1—2). Leipzig, 1882, S. 100—114.

Harnack Adolf — „Aristides“, *Հանեյալ հրատ. մէջ.* „Real-Encyklopädie für protestantische Theologie und Kirche“, Bd. XVII, Leipzig, 1886, S. 675—681.

Harnack Adolf — „Geschichte der altchristlichen Litteratur bis Eusebius. Theil I: Die Überlieferung und der Bestand bearbeited unter mitwirkung von Lic. Erwin Preuschen“. Leipzig, 1893, S. 96—99.

Harnack Adolf — „Aristides (Marcianus)“, *Հանեյալ հրատ. մէջ.* „Realencyklopädie für protestantische Theologie und Kirche“ (hrsg. von A. Hauck), Bd. II, Leipzig, 1897, S. 46—47.

Hennecke Edgar — „Zur Frage nach der ursprünglichen Textgestald der Aristides-Apologie“, *Zeitschrift für Wissenschaftliche Theologie*, XXVI Jahrg., 1893, S. 42—126.

Hennecke Edgar — „Die Apologie des Aristides; Recension und Rekonstruktion des Textes“ (Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, IV 3), Leipzig, J. C. Hinrichs, 1893.

Hilgenfeld Adolf — „Die Überlieferung über die griechischen Apologeten des Christenthums im zweiten Jahrhundert und ihr neuester Censor“, *Zeitschrift für Wissencshaftliche Theologie*, XXVI Jahrg., 1883, S. 2—45.

Himpel (Von) F. — „Sancti Aristidis, philosophi Atheniensis, sermones duo (chosk). Venedig 1878 (Armen. Aera 1328) auf S. Lazzaro...“, *Theologische Quartalschrift*, LXI Jahrg., 1879, S. 289—294.

Himpel (Von) F. — „Das Fragment der Apologie des Aristides und eine Abhandlung über Luk. 23. 42. 43. Aus dem Armenischen übersetzt und erläutert“, *Theologische Quartalschrift*, LXII Jahrg., 1880, S. 109—127.

Himpel (Von) F. — „Aristides, Apologet des zweiten Jahrhunderts“, *Հանեյալ հրատ. մէջ.* „Wetzer und Welte's Kirchenlexikon“, 2 Aufl., Bd. I, Freiburg i. B., 1882, S. 1297—1300.

Hora E. — „Untersuchungen über die Apologie des Aristides“, Karlsbad, 1895.

Jacquier E. — „L'Apologie d'Aristide“, *Université Catholique*, VIII, 1891, p. 183—203.

Jordan Hermann — „Geschichte der altchristlichen Litteratur“, Leipzig, Quelle u. Meyer, 1911, S. 196, 217, 221.

Krüger Gustav — „Nachträge zu Geschichte der altchristlichen Litteratur in den ersten drei Jahrhunderten“, Freiburg i. B., 1897, S. 17.

Krüger Gustav — „Geschichte der altchristlichen Litteratur in den ersten drei Jahrhunderten“, Freiburg i. B., 1898, S. 62—64.

Krumbacher Karl — „Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis

zum Ende des Oströmischen Reiches", 2. Aufl., München, C. H. Beck, 1897, S. 890.

Martinus Paulinus — „Analecta sacra patrum antenicaenorum", *Հետևյալ հրատ. մեջ.* J. B. Pitra, „Analecta sacra spicilegio Solesmensi parata", t. IV, Parisiis, 1883, p. X—XI, 282—286.

Massebieau L.— „De L'authenticité du fragment d'Aristide", *Revue de Théologie et de Philosophie*, Lauzanne, 12ᵉ année, Mai 1879, p. 217—233.

Merx Adalbert — „Die Apologie des Aristides", *Հետևյալ հրատ. մեջ.* „Marksteine aus der Weltlitteratur in Originalschriften, herausgegeben von Johannes Baensch-Drugulin, Buchschmuck von L. Sütterlin; zum Erinnerung an das fünfhundertjährige Geburtsfest des Altmeisters Johannes Gutenberg", Leipzig, W. Drugulin, 1902, S. 12—15.

Muyldermans J.— „L'apport des éditions arméniennes de Venise à la patristique", Բազմավէպ, *1949, № 7—12, էջ 389։*

Néandre de Byzance Norayr — „De L'urgence d'une édition critique des textes armeniens", *Reale Accademia dei Lincei, estratto dai Rendiconti*, 1892, p. 814—815.

Pape Paul — „Die Predigt und das Brieffragment des Aristides; auf ihre Echtheit untersucht (Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, XII 2), Leipzig, J. C. Hinrichs, 1894.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. R. Seeberg, *Theologische Literaturblatt*, 1896, S. 29—34.

Picard M.— „L'Apologie d'Aristide", Paris, 1892.

Raabe Richard — „Die Apologie des Aristides, aus dem syrischen übersetzt und mit Beiträgen zur Textvergleichung und Anmerkungen herausgegeben" (Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, IX 1). Leipzig, 1893.

Renan Ernest — „L'église chrétienne", 5ᵉ éd., Paris, 1899, p. VI, note 2.

Rendel Harris J., Robinson J. A.— „The Apology of Aristides on behalf of the Christians; from a syriac manuscript preserved on Mount Sinai, edited with an introduction and translation by J. Rendel Harris ... With an appendix containing the main portion of the original greek text by J. Armitage Robinson..." (Texts and Studies. Contributions to Biblical and Patristic Literature, edited by J. Armitage Robinson, vol. I, № 1), Cambridge University Press, 1891.

Այս հատորը Բ հրատարակությամբ լույս է տեսել նաև 1893 թ.,

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Բազմավէպ, *1891, էջ 200—202*։— G. T. Stokes, *The Contemporary Review*, vol. LX, July 1891, p. 104—114.— A. Plummer, *Classical Review*, vol. V, Dec. 1891, p. 468—470 A. von Harnack, *Theologische Literaturzeitung*, XVI Jahrg., 1891, № 12, S. 301—307; № 13, S. 325—329.—J. Réville, *Revue de l'Histoire des Religions*, t. XXIV, 1891, p. 244—251.— J. Guidi, *La Cultura*, I, 1891, p. 20f, 664f.— *Athenaeum*, 1891, Oct. 17, p. 513f.— I. H. Hall, *Hebraica*, vol. VII, 1890/91, p. 302—303.— P. L., *Revue Critique d'Histoire et de Littérature*, 1891, 27 Juillet, № 30, p. 53—54.— G. Krüger, *Literarische Centralblatt*, 31 Oct. 1891, № 45, S. 1546—1547.— J. Owen, *The Academy*, vol. XL. 19 Sept. 1891, № 1011 (New Issue), p. 229—230.— A. Bellesheim, *Der Katholik*, III Folge, Bd. IV, 1891, S. 258—279.— L. Duchesne, *Bulletin Critique*, 1891, p. 221.— *The Guardian*, Sept. 1891, p. 1527.— Th. Zahn, *Theologische Literaturblatt*, XIII Jahrg., 1892, S. 1—6.— A. Chiappelli, *Nuova Antologia*, seria 3ª, vol. XXXVII, 1892, p. 483—508.

Rummler L.— „De Aristidis philosophi Atheniensis sermonibus duobus apologeticis", Posnaniae (Posen), 1881.

Sasse Fr.—„Ein in armenischer Übersetzung aufgefundenes Fragment der Apologie des Aristides", *Zeitschrift für Katholische Theologie*, III Jahrg., 1879, S. 612—618.

Schönfelder J. — „Die Apologie des Aristides", *Theologische Quartalschrift*, LXXIV Jahrg., 1892, S. 531—557.

Seeberg Reinhold — „Die Apologie des Aristides", *Neue Kirchliche Zeitschrift*, 1891, S. 935--966.

Seeberg Reinhold — „Die Apologie des Aristides", *հետևյալ հրատ. մեջ.* Th. Zahn, „Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons und der altkirchlichen Literatur", Theil V, Erlangen—Leipzig, 1893, S. 159—414.

Seeberg Reinhold — „Der Apologet Aristides; der Text seiner uns erhaltenen Schriften nebst einleitenden Untersuchungen über dieselben", Erlangen—Leipzig, 1894.

Überweg Fr.— „Grundriss der Geschichte der Philosophie der patristischen und scholastischen zeit" (hrsg. von Max Heinze), Teil II, Berlin, 1905, S. 48—57.

Stokes G. T.— „The Apology of Aristides", *The Contemporary Review*, vol. LX, July 1891, p. 104—114.

Vetter P.— „Aristides-Citate in der armenischen Litteratur", *Theologische Quartalschrift*, LXXVI Jahrg., 1894, S. 529—539.

Հայ. թարգմանությունը՝ «Արիստիդէս հայ մատենագրութեան մէջ», հետևյալ հրատ. մեջ. «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի, ի մի ամփոփուած և թարգմանուած ի Հ. Յակովբայ վ. Տաշեան», Վիեննա, 1895, էջ 194—202:

Vona C.— „L'Apologia di Aristide" (Lateranum, nova series, an. XVI, № 1—4), Roma, 1905.

Zahn Th.— „Die Apologie des Aristides", *Theologische Literaturblatt*, XIII Jahrg., № 1, 8 Januar 1892, S. 1—6.

Zahn Th.— „Eine Predigt und ein apologetisches Sendschreiben des athenischen Philosophen Aristides", *հետևյալ հրատ. մեջ.* „Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons und der altkirchlichen Literatur, herausgegeben von Th. Zahn", Theil V, Erlangen und Leipzig, 1893, S. 415—437.

ԱՐԻՍՏՈԲՈՒԼՈՍ*

(Aristobulus)

Նորկտակարանային անվավերների շարքին է պատկանում Արիստոբուլոսի վարքը: Այս բնագիրը, որ հին է, ըստ երևույթին այն հավելումներից է, որ Գր. Փեշտըմալճյանը կատարել է Հայսմավուրքի մեջ՝ 1834 թ. տպագրության ժամանակ:

* * *

Յիշատակ է սուրբ առաքելոյն և ընտրեալ աշակերտին Քրիստոսի Արիստաբուլայ (sic). «Սուրբ և երանելի առաքեալն Քրիստոսի Արիստաբուլոս էր յաշակերտացն Պօղոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 120:*

Այլ տպ.— Յիշատակ են. «Սուրբ և երանելի...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1927/30, p. 168.

Արտատպ. է նախորդ հրատարակությունից:

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Commémoration du saint apôtre et disciple élu du Christ Aristobule" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից:*

□ *Հմմտ. հուն. համառոտ վկայաբանությունը՝ ի* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 539—540.

ԱՐԻՍՏՈԿԼԵՍ ԿԻՊՐԱՑԻ ԵՎ ԸՆԿ.**

(Aristocles Cyprius et socii)

Հռոմի Գալերիոս կայսրի (306—311 թթ.) օրով նահատակված վկաներ են Արիստոկլես, Դեմետրիանոս և Աթանաս Կիպրացիները: Հայոց Հայսմավուրքներում պահված է նրանց

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Հունա-լատինական մատենագրական տեղեկություններ տես՝* *Acta Sanctorum*, Martii t. II, Parisiis, 1865, p. 368—370.

** *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 69:* G. Henschenius, „De SS. Aristocle presbytero, Demetriano diacono et Athanasio lectore martyribus Constantiae in Cypro", *Acta Sanctorum*, Junii t. V, Parisiis, 1867, p. 403—404.

համառոտ վկայաբանությունը, որի հուն. սկզբնագիրը հայտնի չէ մեզ: Ձեռագրերում նրանցից առաջինի անունը պատահում է Արիստոկլէս, Արիստոկլէոս, (Արիստոկղէոս), Արիստոկլոս, Արիստոտէլ (Արիստոտէլէս) *ձևերով. իսկ երկրորդինը՝* Դեմետրիանոս, Դեմետրիոս, Դեմետրոս, Դիմիտրիանոս, Դոմետրիոս *ձևերով:*

* * *

1. (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոց վկայիցն Արիստոկլէոսի քահանայի, և Դիմիտրիանոսի սարկաւագի, և Աթանասի կիսասարկաւագի. «Ճշմարիտ քահանայն և վկայն Քրիստոսի Արիստոկլէս՝ կիպրացի էր ի քաղաքէն Տամասու...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 273:*

Այլ. տպ.— Վկայութիւն սրբոցն Արիստոկլէոսի քահանայի և Դիմիտրիանոսի և Աթանասի. «Ճշմարիտ քահանայն...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1927/30, p. 623—625.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre des saints Aristoclès le prêtre, Démétrien et Athanase“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից:*

Այս բնագիրը դույզն փոփոխություններով մտել է նաև Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքի մեջ. տես՝

Վկայաբանութիւն Արիստոտէլի քահանային և Դոմեմետրեայ (sic) սարկաւագին և Աթանասի դպրին. «Ճշմարիտ քահանայն և վկայն Քրիստոսի Արիստոտէլ էր ի Կիպրոս կղզոյն...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն» ևն («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 923:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Ճշմարիտ քահանայն...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 829—830:*

*Այլ տպ.—*Վկայաբանութիւն *ևն.* «Ճշմարիտ քահանայն...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 630—631:*

2. (Անանուն խմբագր.).

Արիստոտէլի քահանայի և Դեմետրիանոսի սարկաւագի և Աթանասի կիսասարկաւագի. «Սա կիպրացի էր՝ եկեղեցոյն Աստուծոյ քահանայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 220բ—221ա:*

⊠ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 365բ) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 540բ), № 10 (էջ 500ա), № 219 (էջ 410բ), № 695 (էջ 346ա), № 1048 (էջ 368ա), № 1035 (էջ 499բ), № 1036 (էջ 594ա) ևն. Մարբուրգի* WdtB Ms. Or. fol. 4254 (fol. 579^{v}). *Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 4787 (fol. 652^{r}).

Հմմտ. հուն. համառոտ վկայաբանությունը՝ ի „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae“ (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 765—766.

ԱՐԻՍՏՈՆ [ԱՐԻՍՏԻՈՆ] ԵՐԷՑ
(Aristion Presbyter)

Հեղինակ՝ Մարկոսյան Ավետարանի վերջին 9—20 համարների, ինչպես նշված գտավ Փ. Կոնիբիրը Էջմիածնի Մատենադարանի № 229 ձեռագիր Ավետարանում (որ է այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2374)[1], *էջ 110բ: Կոնիբիրի կարծիքով այս հեղինակը նույն է առաքյալների ընկերակից համարվող այն Արիստիոնի հետ, որի վկայություններից օգտվել է, ըստ Եվսեբիոս Կեսարացու*[2], *Պապիաս Հերապոլսեցին, Բ. դարի սկզբում. իսկ ուրիշների կարծիքով նա նույն է Արիստոն Պելլացու հետ (տես հաջորդ հոդվածը):*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գալեմքյարյան Գր.— *«Արիստոն Երէց»,* Հանդէս Ամսօրեայ, *1896, էջ 282:*

[1] *Տես այս Ավետարանի լուսատիպ հրատարակությունը.* „L'Évangile Arménien. Édition phototypique du manuscrit 229 de la Bibliothèque d'Etchmiadzin publiée sous les auspices de M. Léon Mantacheff par Frédéric Macler“, Paris, 1920.

[2] *«Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 228—229:*

Թոփճյան Հակ.— *«Ցուցակ ձեռագրաց Դադեան Թաշիկ վարդապետի», մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 3—4, 5—6, 10, 11։*

Մատնացույց է անում Արիստոն Երեցի հավելվածն ունեցող մի քանի ձեռագիր Ավետարաններ։

Հառնաք Ա.— *Տես ստորև* **Անանուն**, *«Վերջին նորանոր գիւտեր...»։*

Հովսեփյան Գար.— [*Արիստոն Երէց*] Արարատ, *1898, էջ 519—520։*

Հայտնում է, թե «այժմ մեզ յաջողուել է գտնել նոյն հատուածի հայերէն մի ուրիշ թարգմանութիւն երկու հնագոյն Ավետարանների մէջ»։

Մարտին Պ.— *Տես ստորև՝* Martin J. P.P.

Տաշյան Հակ.— *«Արիստոն Երէց ըստ վկայութեան էջմիածնի թ. 229, ձեռագրին»,* Հանդէս Ամսօրեայ, *1895, էջ 82—87։*

Քիապպելլի Ա.— *Տես ստորև՝* Chiappelli A.

Ֆերհատյան Պ.— *«Մարկոսեան Աւետարանին ԺԶ, 9—20 համարները Հայոց քով», տես՝ «Յուշարձան» (ժողովածու), Վիեննա, 1911, էջ 372—373։*

(Անանուն)— *«Վերջին նորանոր գիւտեր, վերաբերեալ եկեղեցական հին պատմութեան»,* Բազմավէպ, *1898, էջ 381—386։*

Ծան. հոդվածի սկզբում՝ «Բեռլինի համալսարանին մէջ Ուսուցչապետ Ա. Հառնաքի մէկ յօդուածէն (Preussische Jahrbücher, *մայիս) կը քաղենք համառօտիւ հետևեալ տողերը...»։*

Тер-Мовсесян Меср.— «История перевода Библии на армянский язык», С.-Петербург, 1902, стр. 64—65, 161, 200—203.

Bardenhewer O.— „Geschichte der altkirchlichen Litteratur", Bd. I, Freiburg i. B., 1902, S. 187—188, 539, 541.

Batiffol P.— „La littérature grecque" (Anciennes littératures chrétiennes, I), 4e éd., Paris, 1901, p. 82—83.

Belser J. E.— „Einleitung in das Neue Testament", 2. Aufl., Freiburg i. B., 1905.

Chiappelli Aless.— „Una recente scoperta biblica", *Nuova Antologia*, 3a serie, vol. XLIX, 1894, p. 157—166.

Հայ. թարգմ. «Նկատողութիւն մի Ս. Մարկոսի Աւետարանին ԺԶ գլխոյն», Բազմավէպ. *1894, էջ 218—221»։*

Conybeare F. C.— „Aristion, the author of the last twelve verses of Mark", *The Expositor*, 4th series, vol. VIII, 1893, p. 241—254.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. A. Harnack, *Theologische Literaturzeitung*, XVII, Jahrg., 1893, S, 561—564.— Th. Zahn, *Theologische Literaturblatt*, 1893, 22 Des., № 51.— A, Chiappelli, *Nuova Antologia*, 3a serie, vol. XLIX. 1894, p. 157—166.— *Zeitschrift für Katholische Theologie*, XIX Jahrg., 1895, S. 187—189.— *Հ. Տաշյան,* Հանդէս Ամսօրեայ, *1895, էջ 82—87։— Կարապետ վ. Տեր-Մկրտչյան,* Արարատ, *1895, էջ 114—115։*

Conybeare F. C.— „The authorschip of the last verses of Mark", *The Expositor*, 4th series, vol. X, 1894, p. 219—232.

Conybeare F. C.— „On the last twelve verses of St. Mark's Gospel", *The Expositor*, 5th series, vol. II, 1895, p. 401—421.

Conybeare F. C.— „Armenian Version of the Old and New Testaments", *հանրագիտ. մեջ.* „A. Dictionary of the Bible" (ed. by J. Hastings), vol. I, Edinburgh, 1898, p. 151—154,

Dupin de Saint-André L.— „L'auteur des douze derniers versets de l'Évangile de Marc" (Thèse), Montauban, Impr. Granié, 1897.

Harnack A.— „Conybeare F. C. Aristion, the author of the last twelve verses of Mark", *The Expositor*, octob. 1893, S. 241—254,", *Theologische Literaturzeitung*, Leipzig, XVIII Jahrg., 1893, S. 561—564.

Lagrange M.-J.— „Évangile selon saint Marc", Paris, 1911, p, 426—439: „La finale de Marc (XVI, 9—20)".

Maries Louis— „Frederick Cornwallis Conybeare (1856—1924), Notice biographique et bibliographie critique", *Revue des Études Arméniennes*, t. VI, 1926, p. 221—223: „Évangiles. Finale de Marc. Ariston".

Martin J. P. P.— „Introduction à la critique textuelle du Nouveau Testament", t. II, Paris, 1883/84, p. 280—288, 325—340

Այս հատորի 280—288 էջերում գտնվող գլուխը („Écrivains appartenant à l'Église Arménienne, qui ont admis l'authenticiié de S. Marc XVI, 9—20") *թարգմանված է հայերենի՝ հետևյալ խորագրով. «Մարկոսի հայագիտին կարծիքն Մարկոսեան Աւետարանին ԺԶ գլխոյն վերջին տասներուն նկատմամբ»*, Բազմավէպ, *1895, էջ 57—61։*

Resch Alf.— „Ausser-Canonische Paralleltexte zu den Evangelien" (Texte und Untersuchungen, hrsg. von O. **v**. Gebhardt und A. Harnack, Bd. X 3), Leipzig, 1894, S. 450—456.

Սույն գրվածքի անգլ. թարգմանությունը, Փ. Կ. Կոնիբիրի կողմից, տես՝ The Expositor, 4th series, vol. X, 1894, p. 226—232.

Swete Henry Barclay — „The Gospel commentary according to St. Mark", London, 1898, p. CXI—CXII.

Zahn Th.— "Geschichte des neutestamentlichen Kanons", Bd. II 2, Erlangen u. Leipzig, 1892, S. 910—938 („Über den Schluss und die Anhänge des Marcusevangeliums").

Zahn Th.— „Aristion, der Verfasser der letzten 12 Verse des Markus", *Theologische Literaturblatt*, XV Jahrg., № 51, 22 Dec. 1893, S. 591--594.

Սույն գրվածքի անգլ. թարգմանությունը, Փ. Կ. Կոնիբիրի կողմից, տես՝

Zahn Th.— „Aristion, the author of the last twelwe verses of Mark" (transl. from the *Theologische Literaturblatt*, of Leipzig, for 22 Dec. 1893), *The Expositor*, 4th series, vol. X, 1894, p. 220—226.

Zahn Th.— „Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons und der altkirchlichen Literatur", Bd. VI, Leipzig, 1900, S. 128—130.

Zahn Th.— „Einleitung in das Neue Testament", Bd. II, Leipzig, 1907, S. 242—245.

ԱՐԻՍՏՈՆ ՊԵԼԼԱՑԻ
(Aristo Pellaeus)

Հելլենացած հրեայեցի քրիստոնյա մատենագիր, Բ դարի առաջին կեսում։ Հայտնի է, որ նրա՝ այժմ կորած պատմական երկերից օգտվել է Եվսեբիոս Կեսարացին՝ Ադրիանոս կայսրի (117—138 թթ.) օրով Պաղեստինում տեղի ունեցած դեպքերը նկարագրելիս (Պատմ. եկեղ. դպր. Դ, գլ. Զ)[1]*։ Մովսես Խորենացին իր Պատմության «Յաղագս մահուանն Արտաշիսի» գլուխը շարադրելիս նույնպես օգտվել է Արիստոնից (գիրք Բ, գլ. Կ)*[2]*, ինչպես ինքն է ասում. «Գեղեցիկ իմն պատմէ և Արիստոն Փեղղացի յաղագս մահուանն Արտաշիսի», որի քարտուղարն էր նա, «և գրէ, եթէ ո՛րչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք. և ո՛րպիսի շուք բազմագիմիս արարին առ ի պատիւ դիոյն» են։ Այս նույն գլխում Խորենացին, Արիստոն Պելլացու հեղինակությամբ Պաղեստինի դեպքերը հիշատակելիս, ցույց միաժամանակ աչքի առաջ է ունեցել նաև Եվսեբիոս Կեսարացուն, որովհետև այդ մասում բնագրական զգալի նմանություններ ունի նրա հետ։ Արիստոն Պելլացին հիշատակվում է նաև Թովմա Արծրունու մոտ՝* Արիստոն Քաղղէացի *անունով, որպես մեկը այն հեղինակներից, որոնք խոսում են Քամի սերընդաբանության մասին (դպր. Ա, գլ. Ա)*[3]*։*

* * *

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղևոնդ.— *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 27։*

Халатьянц Гр.—«Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского»,

[1] *«Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 244—245։*

[2] *Տես՝ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Թիֆլիս, 1913, էջ 189—191։*

[3] *Տես՝ «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց» (հրատ. Ք. Պատկանյանի), Պետերբուրգ, 1887, էջ 7։*

ч. I, Москва, 1896, гл. XII, стр. 302—313; ч. II, Москва, 1896, гл. XII, стр. 71—72.

Ehrhardt Alb.— „Die altchristliche Litteratur und ihre Erforschung von 1884—1900“, Freiburg i. B., 1900, S. 212—217.

Grube J. E.— „Ariston von Pella“, *հետևյալ հրատ. մեջ.* „Wetzer und Welte's Kirchenlexikon“, 2. Aufl, Ed. I, Freiburg i. B., 1882, S. 1300.

Gutschmid (Von) A.— „Über die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren“, Leipzig, 1876, S. 20—21.

Նույնն է և հետևյալը.

Gutschmid (Von) A.— „Kleine Schriften“ (hrsg. von Franz Rühl), Bd. III, Leipzig, B. G. Teubner, 1892, S. 305—306.

Harnack Ad.— „Ceschichte der altchristlichen Litteratur bis Eusebius“, Th. I, Leipzig, 1893, S. 92—95.

Hilgenfeld Ad.— „Die Überlieferung über die griechischen Apologeten des Christenthums im zweiten Jahrhundert und ihr neuester Censor“, *Zeitschrift für Wissenschaftliche Theologie*, XXVI Jahrg., 1883, S. 7—13.

Langlois V.— „Étude sur les sources de l'Histoirc d'Arménie de Moïse de Khorĕn“, *Mélanges Asiatiques*, St.-Pétersbourg, t. IV, 1863, p. 327.

Langlois V.— „Fragments d'historiens grecs perdus, conservés dans les oeuvres des écrivains arméniens“, *հետևյալ հրատ. մեջ.* „Collection des historiens anciens et modernes de l'Arménie“ (publ. par Victor Langlois), t. I, Paris, Firmin Didot frères et Cie, 1867, p. 391—394.

Նույնի այլ տպ. տես՝

Langlois V.— „Fragments d'historiens grecs perdus, conservés dans les oeuvres des écrivains arméniens“, *հետևյալ հրատ. մեջ.* C. Müller (*հրատ.*), „Historicorum Graecorum et Syriorum reliquiae in Armeniorum scriptis servatae. Collegit, versione gallica, prolegomenis, annotatione, indicibus instruxit Victor Langlois“, Parisiis, editoribus Firmin Didot et Sociis, 1884, p. 391—394.

Resch Alf.— „Ausser-Canonische Paralleltexte zu den Evangelien“, *Texte und Untersuchungen* (hrsg. von O. v. Gebhardt und A. Harnack), Bd. X 3, Leipzig, 1894, S. 450—456.

Սույն գրվածքի անգլ. թարգմանությունը, Փ. Կ. Կոնիբիրի կողմից, տես՝ The Expositor, 4th series, vol. X, 1894, p. 226—232.

ԱՐԻՍՏՈՍ ԲՆԱԳԵՏ

(Aristus physicus)

Երուսաղեմի հայ. ձեռագրերի ցուցակներից[1] մեզ հայտնի է բնագիտական մի աշխատություն, որը թարգմանված է ԺԸ դ. Հակոբ Նալյանի խնդրանքով, հավանաբար լատիներենից կամ ֆրանսերենից։ Տրամախոսության ձևով շարադրված այս երկի մեջ հանդես են գալիս Եվստաքիոս (կամ Եվդոքսոս) և Արիստոս անունով երկու բնագետներ, որոնց ինքնությունը, ցուցակներում տրված նկարագրությունների անբավարարության պատճառով, մնում է անծանոթ, ինչպես և այն, թե նրանցից ո՛րն է գրքի հեղինակը, բայց ենթադրելով, որ առաջինը հավանաբար միայն հարցադիր է, հեղինակությունը պայմանականորեն վերագրում ենք երկրորդին, թեև հնարավոր է նաև, որ, ընդհակառակն, նույնինքն հարցադիրը եղած լինի հեղինակը։ Գրքի շարադրման ժամանակը ԺԷ դ. վերջերը կամ ԺԸ դ. առաջին կեսն է, որովհետև հեղինակն օգտագործել է նշանավոր գիտնական Իսահակ Նյուտոնի (1642—1727 թթ.) աշխատությունները։

---

[1] *Արտ. Սյուրմեյան, «Մայր ցուցակ հայ. ձեռ. Երուսաղեմի...», հտ. Ա, էջ 111։ Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Ա, էջ 182—183։ Մեսրոպ Մագիստրոս (Տեր-Մովսիսյան), «Հայերէն ձեռագրերի ընդհանուր ցուցակ» (անտիպ)։ Հմմտ. նաև Ն. Ակինյան,* Հանդէս Ամսօրեայ, *1950, էջ 201։*

* * *

Տրամախօսութիւն ի վերայ բնական գիտութեանց ի մէջ Եւստաթէոսի և Արիստոսի ի չորս ճառս. Ա. Ի վերայ ընդհանուր սկզբանց. Բ. Յաղագս ենշման օդոց. Գ. Ի վերայ հինգ զգայարանաց. Դ. Յաղագս կենդանեաց: *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 55, էջ 1—817:*

Սկզբում ունի ներածություն, որ է՝

«Բնական խօսակցութիւնք կամ Նոր բնաբանութիւն.— *Ի ժամանակէն ի վեր՝ յորում լսարանք Փարէզու, Լոնտրայ, Իտալիայ և Նէմսէյու երկիրն, և բազում սրամիտ մարդիկ Եւրոպայ, զարթուցեալք ի սիրոյ ճշմարտութեան, ի գովասանութեանց և ի բարերարութեանց թագաւորաց և անձնիշխան տիրապետաց, միաւորեցին զլոյսս իւրեանց առ ի բացայայտելոյ զգաղտնիս բնութեան, ի յայնմ ժամանակէն ի վեր գեղեցկացաւ Բնաբանութիւնն, զի հաճոյ է սա այժմ մեծամեծաց և փառաւորի յամենցունց: Վասն որոյ հաճոյ թուեցաւ մեզ յառաջ բերել աստ զսոս երկուս՝ որոցն խօսակցութեամբք ի կատար հասցէ գործն մեր՝ որ ի վերայ Բնաբանութեան» (էջ 1):*

Ունի թարգմանության երկու հիշատակարաններ:

Ա. հատորի վերջում՝ «Թարգմանեցեալ ի Ճամճիօղլու Եղիայի որդի և Շուէտու թէրճիման՝ նուաստ և անարժան Յակոբայ: Ի Կոստանդնուպօլսոյ քաղաքի, յամի տեառն 1745: Ի խնդրոյ պատրիարքի Յակոբ արքեպս.ի Կոստանդնուպօլսոյ» (էջ 209):

Դ. Հատորի վերջում՝ «Թարգմանեցեալ ի խնդրոյ Յակոբայ՝ Կոստանդնուպօլսոյ, ի Ճամճոնց Յակոբայ, Շուէտու թարգման» (էջ 817):

ԱՐԻՍՏՈՏԵԼ ԿԻՊՐԱՑԻ

Տես՝ ԱՐԻՍՏՈԿԼԷՍ ԿԻՊՐԱՑԻ:

ԱՐԻՍՏՈՏԵԼ ՍՏԱԳԻՐԱՑԻ*

(Aristoteles Stagirita)

Հույն նշանավոր իմաստասեր, հին ստրկատիրական հասարակության գաղափարախոսներից: Ծն. 384 թ. նախքան մեր թվ. Ստագիրայում (Մակեդոնիա) և մեռ. 322 թ. նախքան մեր թվ. Քալկիսում (Եվբեա): Աշակերտել է Պլատոնին, եղել է Աղեքսանդր Մակեդոնացու դաստիարակը և մոտ. 331 թ. նախքան մեր թվ. Աթենքում հիմնել է իր իմաստասիրական դպրոցը, որը կոչվում էր «Պերիպատիկյան դպրոց» (հուն. περιπατῶ, *«ճեմել») կամ «ճեմարան», որովհետև Արիստոտելն այնտեղ իր աշակերտներին ճեմելով էր ուսուցում: Այստեղից՝ արիստոտելյան իմաստասիրությունը կոչվել է և պերիպատետիզմ, այսինքն՝ ճեմական իմաստասիրու-*

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* В. Карпов, «Натурфилософия Аристотеля», Москва, 1911.—А. Ф. Лосев, «Критика платонизма у Аристотеля», Москва, 1929.—История философии» (Ин-т философии Академии наук СССР), оп. I (философия античного и феодального общества), Москва, 1940, стр. 178—247.—Г. Ф. Александров, «Аристотель», Москва, 1940.—С. Ф. Кечекьян, «Учение Аристотеля о государстве и праве», Москва—Ленинград, 1949.—Я. Лукасевич, «Аристотелевская силлогистика с точки зрения современной формальной логики» (пер. с англ.), Москва, 1959.—А. С. Ахманов, «Логическое учение Аристотеля», Москва—Ленинград, 1960.— В. П. Зубов, «Аристотель», Москва, 1963.— H. Bonitz, „Aristotelische Studien", Tl. I—V, Wien, 1862—1867.— Ch. Werner, „Aristote et l'idéalisme platonien", Genève, 1909.— W. Kinkel, „Geschichte der Philosophie von Socrates bis Aristoteles", Berlin u. Leipzig, 1922.— W. D. Ross, „Aristotle", London, 1923 (and 1956).— J. A. K. Thomson, „Plato and Aristotle", London, 1930.— H. Cherniss, „Aristotle's criticism of presocratic philosophy", Baltimore, 1935.— Idem, „Aristotle's criticism of Plato and the Academy", Baltimore, 1944.— R. Caballero, „Aristoteles naturalista, biologo y filosofo", Rosario, 1943.— D. D. Allan, „The philosophy of Aristotle", Oxford, 1952.— A. E. Taylor, „Aristotle", New York, 1955.— P. van Schilfgaarde, „De logika van Aristoteles", Den Haag, 1956.

Արիստոտելի երկերի հուն. բնագրերի համաբարբառն է՝ H. Bonitz, „Index Aristotelicus", Berlin, Akademie-Verlag, 1955.

թյուն։ Արիստոտելը ժխտեց Պլատոնի գաղափարների իդեալիստական տեսությունը, որի համաձայն գաղափարները գոյություն ունեն իրերից առաջ և նրանցից անկախ։ Այդ տեսության խիստ քննադատությամբ Արիստոտելը թեև իդեալիզմի քննադատությունն է արել ընդհանրապես, բայց և, այնուամենայնիվ, ինքն իսկ տարուբերվել է իդեալիզմի և մատերիալիզմի միջև, իսկ վերջին հաշվով հակվել է դեպի իդեալիզմը։

Արիստոտելը հին աշխարհի իմաստասիրական մտքի տիտանն է հանդիսանում և միաժամանակ գիտական մտքի ամենակարկառուն ներկայացուցիչն է իր դարաշրջանում։ Նրա աշխատություններն ընդգրկել են իր ժամանակի բոլոր գիտությունները։ Այդ պատճառով հզոր ու բազմակողմանի է եղել նրա ազդեցությունը իմաստասիրության և գիտության հետագա զարգացման վրա, ինչպես ամբողջ միջնադարյան աշխարհում, այնպես և Հայաստանում։

Արիստոտելի երկերը թարգմանվել են շատ լեզուներով։ Հայ մատենագրության մեջ ևս գտնվում են արիստոտելյան երկերի թարգմանություններ, որոնց մեծ մասը պատկանելի հնության է հասնում։ «Արտաքին» գրքերի հայ. թարգմանությունների ըստ այն դասակարգման, որ Հ. Մանանդյանը կատարել է նրանց լեզվական ուսումնասիրության հիման վրա, Արիստոտելի երկերից «Ստորոգութիւնք»-ը (Κατηγορίαι, Categoriae) և «Պերիարմենիաս»-ը (Περὶ ἑρμηνείας, De interpretatione) պատկանում են հունաբան թարգմանությունների երկրորդ շերտին, այսինքն, ըստ իրեն, Զ դարի երրորդ քառորդին. իսկ Գալ. Տեր-Մկրտչյանի և Մ. Աբեղյանի հաշվով՝ նրանք Ե դարի 80-ական թվականներին են թարգմանվել։ Հնության կարգով նրանցից հետո գալիս են «Յաղագս աշխարհի» (Περὶ κόσμου, De mundo) և «Յաղագս առաքինութեանց» (Περὶ ἀρετῶν καὶ κακιῶν, De virtutibus et vitiis) աշխատությունները, որոնք Զ/Է դարերի թարգմանություններ են համարվում[1]։ Անտարակույս այս վերջիններիս մասին է Գրիգոր Մագիստրոսի արած հիշատակությունն իր նամակներից մեկում, որ խոսք է լինում Արիստոտելի «Յաղագս երկնային մարմնոցն և գնդատեսութեան երկրի» և «Յաղագս օրինադրութեան կենցաղոյս» աշխատությունների մասին[2]։

Արիստոտելի բնագիտական երկերից ունենք «Բնազանցութիւն»-ը («Գիրք բնազանցականաց»)[3] (Μετὰ τὰ φυσικά — Μεταφυσικά, Metaphysica), որն ուշ ժամանակի՝ ԺԷ դ. թարգմանություն է և այն՝ ոչ հունարենից, այլ լատիներենից, ձեռամբ Ստեփանոս Լեհացու։

Արիստոտելի բնագիտական ուրիշ գործերի լատիներենից հայերեն թարգմանություններ է կատարել, ԺԸ դ., Ղուկաս Խարբերդեցին։ Նրա թարգմանություններից մեզ հայտնի են, մի հատորի մեջ ամփոփված, երեք ամբողջական երկեր՝ «Զպատմութենէ կենդանեաց» (Περὶ ζῴων ἱστορία, De historia animalium), «Զմասանց կենդանեաց» (Περὶ ζῴων μορίων, De partibus animalium), «Զկենդանեաց քայլմանէ» (Περὶ ζῴων πορείας, De animalium incessu)[4].

---

1 Այս երկու աշխատություններն ընդհանրապես Արիստոտելին անհարազատ են համարվում։

2 Տես՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 106։

3 Դավիթ Անհաղթի գործերում այս գրքի անունը հիշատակվում է «Յետ բնականաց» և «Յետ բնաբանութեան» ձևերով, տես՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի, ընծայեալ էլիասի իմաստասիրի» (հրատ. Հ. Մանանդյանի), Պետերբուրգ, 1911, էջ 16, 23, 24։ Այս ձևերը բառացի թարգմանությունն են հուն. Μετὰ τὰ φυσικά ձևի։

4 Էջմիածնի Կաթողիկոսարանի ձեռ. № 401։ Նրա խորագիրն է. «Վեցերորդ մատեան ամենից գրեանցն Արիստոտէլի, պատկանեալք առ ճանաչումն կենդանեաց, ընդ զանազան մեկնութեանց ի նոյնն՝ Ալբերտոսի Քոռռուպէնսիոյ։ Լուծմանցն ընդդիմութեանց՝ Միքայէլի Անկէլոսի Զիմառացւոյ, յատուկ տեղիս առակցեալք։ Որոց զմակագիրսն, զբիսն, և զկարգն պատմէ ստորև։ Ի Վնէժում, առընթեր Ինկրոսի, ՌԵՃԳ»։

Այս ձեռագիրը մի ժամանակ պատկանել է Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանին. հմմտ.

Այս երկերի հետ միասին նույն հատորում կան հետքեր, որոնք ցույց են տալիս, թե Ղուկաս Խարբերդեցին թարգմանած պետք է լիներ նաև Արիստոտելի «Զհոգւոյ» («Յաղագս հոգւոյ») գիրքը և հավանաբար նաև այն մյուս գործերը, որոնք կան թարգմանչի ձեռքում եղած լատիներեն հրատարակության մեջ[1] և որոնք թվարկված են նույն հատորի սկզբում. «Զզգայութենէ և զզգալեաց» (Περὶ αἰσθήσεως καὶ αἰσθητῶν, De sensu et sensilibus), «Զյիշողութենէ և զվերյիշմանէ» (Περὶ μνήμης καὶ ἀναμνήσεως, De memoria et reminiscentia), «Զքնոյ և զհսկմանէ» (Περὶ ὕπνου καὶ ἐγρηγορήσεως, De somno et vigilia), «Զերազոց» (Περὶ ἐνυπνίων, De somniis), «Զհմայութենէ երազովք» (Περὶ τῆς καθ᾽ ὕπνον μαντικῆς, De divinatione per somnum), «Զշարժմանէ կենդանեաց» (Περὶ τῆς τῶν ζῴων κινήσεως, De animalium motu), «Զծնելութենէ կենդանեաց» (Περὶ ζῴων γενέσεως, De generatione animalium), «Զերկարութենէ և զկարճութենէ կենաց» (Περὶ μακροβιότητος καὶ βραχυβιότητος, De longitudine et brevitate vitae), «Զմանկութենէ և զծերութենէ» (Περὶ νεότητος καὶ γήρως, De iuventute et senectute), «Զկենաց և զմահուանէ» (Περὶ ζωῆς καὶ θανάτου, De vita et morte), «Զյարութենէ» (Περὶ ἀναπνοῆς, De respiratione), «Զառողջութենէ և զհիւանդութենէ» (Περὶ ὑγείας καὶ ἀσθενείας, De sanitate et morbo).

Ստեփանոս Լեհացին լատիներենից թարգմանել էր նաև Արիստոտելի «Յաղագս հոգւոյ» (Περὶ ψυχῆς, De anima) երկը: Դիարբեքիրի հայ. ձեռագրերից մեկը, որն իմաստասիրական նյութերի ժողովածու էր, բովանդակում էր՝ «Գիրք յաղագս մարդկային հոգւոյն, թարգմանեալ ի Ստեփանոս վարդապետէ Իլովացւոյ ի լատին բարբառոյ ՌՃԺԷ (1668 թ.), ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ընդ հովանեաւ Ս. Էջմիածնի»[1]: Դժբախտաբար այս թանկագին ձեռագիրը, ուրիշ հազարավորների հետ միասին, ոչնչացվեց թուրք ջարդարարների կողմից՝ Մեծ Եղեռնի ժամանակ (1915—1918 թթ.): ԺԸ դարում Մեսրոպ Գանձակեցին հիշատակում է այս թարգմանությունը՝ «Հոգեաց» անունով[2]:

ԺԷ/ԺԸ դարերի թարգմանությամբ ունենք նաև Արիստոտելի բնագիտական երկերից կատարված մի ազատ քաղվածք՝ «Հաւաքումն նշանաւոր բանից ոմանց ի բնաբանական գրեանց Արիստոտէլի», որը մասեր է բովանդակում նրա հետևյալ գործերից. «Դրութիւնք», այն է՝ «Սկզբունք» կամ «Յաղագս սկզբանց» (Περὶ ἀρχῶν, De principiis)[3], «Յաղագս երկնից» (Περὶ οὐρανοῦ, De caelo), «Վասն լինելութեան»[4] (Περὶ γενέσεως καὶ ψθορᾶς, De generatione et corrup-

Բաբգեն կաթող. [Կյուլեսերյան], «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի հայոց», Անթիլիաս, 1961, էջ 103—106:

Ձեռագիրը մենք կներկայացնենք հատուկ հոդվածով 1976 թվականին, «Հանդէս Ամսօրեայ»-ի այն բացառիկ համարում կամ այն հայագիտական ժողովածուում, որը նվիրված կլինի Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակին:

1 Թարգմանությունը կատարվել է հետևյալ հրատարակությունից „Sextum volumen Aristotelis libri omnes ad animalium cognitionem attinentes, cum Averrois Cordubensis variis in eosdem commentariis. M. A. Zimarae contradictionum solutiones, proprijs annexis locis. Quorum titulos, numerum, ac ordinem versa pagina narrat. Venetiis, apud Iuntas, M. D. LXXIIII.

1 Հմմտ. Գ. Սրվանձտյան, «Թորոս աղբար», մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 449:

2 Հմմտ. Ն. Ակինյան, «Սիմէոն Պղնձահանեցի...», Վիեննա, 1951, էջ 54:

ԺԷ դ. վերջերին կազմված մատենագիտական մի շարքում հիշատակում է «զՀոգեացն և զՀրեշտաշարքում հիշատակում է «զՀոգեաց և զՀրեշտակացն Թովմայի Աքինացւոյն», տես՝ սատ, հտ. Ա, էջ LXV: Արդյոք ցուցակի հեղինակը թյուրիմացության մե՞ջ է, թե Լեհացին «Հոգեաց» անունով մի գիրք է թարգմանել նաև Ակուինացուց:

3 Այս երկը ավելի է հայտնի «Յաղագս բնական ունկնդրութեան» (Περὶ φυσικῆς ἀκροάσεως, De physica auscultatione) անունով:

4 Դավիթ Անհաղթի մոտ այս երկի անունը հիշատակվում է լրիվ՝ «Յաղագս լինելութեան և ապականութեան» ձևով. տես՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի, ընծայեալ Էլիասի իմաստասիրէ», էջ 11, 15, 36, 106:

tione), «Գիրք ծնելոցն յօդն»[1] (Μετεωρολογικά, Meteorologica) և «Վասն ոգւոյ»[2] (Περὶ ψυχῆς, De anima). Հայտնի չէ, թե այս փոքրիկ ժողովածուն ո՞ւմ կողմից և ո՞ր լեզվից է թարգմանվել. հունարենի՞ց, թե լատիներենից։ Այդ բնագիրն առաջին անգամ 1752 թվականին է հրատարակվել Վենետիկում՝ ձեռամբ Սարգիս Սարաֆյանի, բայց թարգմանիչը չի կարող նա եղած լինել, որովհետև չգիտեր եվրոպական լեզուներ[3], անշուշտ նաև՝ հունարեն։ Սարգիս Սարաֆյանը հրատարակել է նաև «Համառօտ բնազննութիւն մարդկային մասանց, ճառաքեալ ի գրեանց Արիստոտէլի և յայլոց հեղինակաց» խորագրով բնագիրը, որը մասամբ քաղված է Արիստոտելի անունով հայտնի «Բնազննութիւն» (Φυσιογνωμονικά, Physiognomonica) երկից, բայց հնարավոր չէ ասել, թե ուղղակի նրա թարգմանությունն է։ Ի հարկե՝ այս անանուն թարգմանությունը ևս ժամանակակից է նախորդին։

Հայ. թարգմանությամբ գոյություն ունեն նաև մի քանի ուրիշ գրվածքներ, որոնք, որպես հեղինակություն, երկբայելի և կամ անհարազատ են Արիստոտելի համար։ Այդպիսիների մեջ առաջին հերթին հիշատակելի է «Ի գրոց Պատճառաց Արիստոտէլի, կամ որպէս ոմանց թուի՝ Պռոկղի» գործը, որը նույնպես Ստեփանոս Լեհացու թարգմանությունն է՝ լատիներենից. նրա լատ. բնագրի հրատարակիչները, դեռևս ԺԶ դ. վերջերից, Արիստոտելի և Պրոկլի (Պրոկլ Դիադոքոս) անունների հետ միասին հիշատակում էին նաև ուրիշ անուններ՝ Իբն-Բաջա և Ալ-Ֆարաբի (Ֆարաբի), որոնց նույնպես վերագրվում էր նրա հեղինակությունը, ինչպես կարելի է գտնել հետևյալ խորագրից՝ „De Causis libellus, Aristoteli, seu Avempace vel Alpharabio, aut Proculo ascriptus“[1]. Արիստոտելին անհարազատ գործեր են նաև «Համառօտ ստորոգութիւնք ի բնութիւն մարդոյն» (կամ «Հարցումն յԱրիստոտէլէ»), «Վեց են սահմանք իմաստութեան» և «Քառասուն խրատք», որոնց պատահում ենք մեր ձեռագրերում։

Արիստոտելի անունով բազմաթիվ մեջբերումների ենք հանդիպում նաև ոչ միայն բնագիտական, ալքիմիական, բժշկական և այլ գիտական խմբագիր աշխատությունների մեջ, այլև աստղաբաշխական-ախտարական գրվածքների մեջ, ինչպես, օրինակ, «Աղափտ» անունը կրող ժողովածուի մեջ (տես՝ ԱՂԱՓՏ). նույնիսկ աստղաբաշխական մի քանի բնագրեր պատահում են՝ նշված Արիստոտելի անունով (տես և համմ. ԱՆԴՐԵԱՍ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ անվան տակ տրված «Խրատ Անդրիասի իմաստասիրի փիտնականի ասացեալ, որ ի յերկինս լինի չար և բարի» բնագրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ բաժինների ծանոթագրությունները)։ Այսպիսի գրվածքներ կան նաև բյուզանդական, արաբական և այլ մատենագրությունների մեջ, և այսպես, օրինակ, ռուսական գրականությունն ունի «Արիստոտելյան դռներ» (Аристотеловы врата) են. բայց այս բոլորը համարելի են անվավեր և, ըստ երևույթին, մեզ մոտ եղածներն արաբերենից են անցել մեզ։

Վերադառնալով Արիստոտելի իմաստասիրական երկերին՝ պետք է ասել, որ հին Հայաստանում պատմական և եկեղեցական գրականության մեջ իշխող գաղափարախոսության համար, որպես տեսաբանական խարիսխներ, օգտագործվել են արիստոտելյան ուսմունքի իդեալիստական դրույթները[2]։

---

1 Դավիթ Անհաղթի մոտ հիշատակվում է «Յաղագս բարձրականացն» անուամբ. տես՝ անդ, էջ 11։

2 Դավիթ Անհաղթի մոտ այս գիրքը 4 անգամ հիշատակվում է «Յաղագս անձի» ձևով, իսկ 1 անգամ՝ «Յաղագս ոգւոյ» ձևով. տես՝ անդ, էջ 13, 15, 36 և 98. տես նաև՝ «Դաւիթ Անյաղթ. Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի» (հրատ. Ս. Արևշատյանի), Երևան, 1967, էջ 52։

3 Սարգիս Սարաֆյանի կենսագիր Հովհաննես Նուրիխանյանի վկայությամբ նա Հռոմում թարգմանի միջոցով էր խոսում պապի հետ, իսկ իտալերենը և լատիներենը յուրացնել չէր կարողացել, տես՝ Գր. Գալեմքյարյան, «Կենսագրութիւն Սարգիս արքեպ.ի Սարաֆեան», Վիեննա, 1908, էջ 49 և 51։

1 Տես՝ „Aristotelis VI. tomus physicus“, Francofurti, Apud Andreae Wecheli heredes, 1593, p. 249–270.

2 Հետաքրքիր է, սակայն, որ սովետահայ գիտնականներից Վ. Չալոյանի ուսումնասիրությունների հետևություններից մեկն այն է, թե Հայաստանում արիստոտելյան իմացաբանության ուսմունքի հիման վրա գոյություն է ունեցել նաև մտածողության մատերիալիստական ըմբռնում։

Միջնադարյան Հայաստանի ուսումնական կենտրոններում իմաստասիրական առարկաների ավանդման համար որպես դասագրքեր գործածվում էին Արիստոտելի մի շարք աշխատությունները. իսկ դրանից առաջացել էր արիստոտելյան երկերի մեկնաբանական գրականություն մշակելու անհրաժեշտությունը։ Հայ մատենագրությունը պահել է բազմաթիվ մեկնություններ, որոնց մի մասը եթե թարգմանություն է հունարեն և կամ այլ լեզուներից, մեծ մասը հայ իմաստասերների և աստվածաբանների աշխատություններ են, որոնք ցույց են տալիս այն ուժեղ հետաքրքրությունը, որին արժանացել էին Հայաստանում Արիստոտելի երկերն ամբողջ միջին դարերում։ Այդ հետաքրքրության մասին են խոսում նաև ԺԷ և ԺԸ դարերում կատարված փորձերը՝ Արիստոտելի բնագրերի հայ. հին թարգմանությունները համեմատելու հուն. բնագրերի հետ։ Արիստոտելի երկերի հայկ. թարգմանությունները և նրանց մեկնությունները ուսումնասիրության առարկա են եղել գիտնականների կողմից թե՛ մեր մատենագրության բանասիրական որոշ հարցերի լուծման տեսակետից և թե՛ հին Հայաստանում գոյություն ունեցող աշխարհայացքների պատմության տեսակետից։ Հայկ. թարգմանությունների ուսումնասիրությունը բանասիրության համար խոշոր նշանակություն ունի նաև Արիստոտելի հուն. բնագրերի վերստուգման տեսակետից։

***

Ա.—ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԵՐԿԵՐԸ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Մատենագր. Ա=*Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի և Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք։ Վենետիկ, 1833։*

Մատենագր. Բ=*Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք և Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ։ Երկրորդ տպագրութիւն։ Վենետիկ 1932։*

Էֆիմ. 1752=*Գրգուկ, որ կոչի էֆիմէրտէ...։ Յամի կենարարին մերոյ 1752, ի մարտի 3, ի Վենետիկ, ի տպարանի Անտոնի Պոռթոլի։*

Էֆիմ. 1772=*Գրգուկ, որ կոչի էֆիմէրտէ...։ Յամի կենարարին մերոյ 1772, ի Վենետիկ, ի տպարանի Անտոնի Պորթոլի։*

Էֆիմ. 1796=*Գրգուկ, որ կոչի էֆիմէրտէ...։ Յամի կենարարին մերոյ 1796, ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պորթոլի։*

Էֆիմ. 1797=*Գրքոյկ կոչեցեալ էֆիմէրտէ...։ Յամի տեառն 1797, ի սեպտեմբերի 28։ Իսկ ի Թուին Հայոց ՌՄԽԶ։ Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեանն Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ ի յԱժդարխան։*

Էֆիմ. 1798=*Գրգուկ, որ կոչի էֆիմէրտէ...։ Յամի կենարարին մերոյ 1798, ի Կալկաթա, ի տպարանի Տէր Յովսեփայ Ստեփաննոսեան։*

Collation = F. C. Conybeare. A Collation with the ancient armenian versions of the greek text of Aristotle's Categories, De Interpretatione, De Mundo, De Virtutibus et Vitiis, and of Porphyry's Introduction. Oxford, 1892.

1. Ստորոգութիւնք Արիստոտէլի. «Հոմանուանք ասին՝ որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեան այլ. որզան՝ կենդանի՝ մարդն, և գրեալն։ Քանզի սոցայց անուն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեան այլ...», *տես՝ «Մատենագր. Ա», էջ 359—408։*

Վերջում՝ «Կատարեցաւ տասն ստորոգութիւնսն ասացեալ յեռամեծէն յԱրիստոտէլէ որ ասի ըստ յունարէն ձայնի Կատիղորիաս»։ Բնագիրը բաղկացած է ներածությունից և հետևյալ գլուխներից.

Յաղագս գոյացութեան։
Յաղագս քանակի։
Յաղագս առնչի։
Յաղագս որակի և որակութեան։
Յաղագս առնելոյ և կրելոյ։
Յաղագս հակակայցն։
Յաղագս նախկնի։
Յաղագս համանգամայնցն։
Յաղագս շարժութեան։
Յաղագս ունելոյ։

Հրատարակվել է համեմատությամբ Վենետիկի Մխիթ. Մատ. 3 ձեռ. օրինակների, «յորոց մին բոլորգիր հնագոյն և ընտիր, և ըստ յիշատակարանին ի ՊԾԹ թուականին գրեալ, և երկուքն նոտրագիրք, մին ի ՌՃԼՋ թուականին, և միւսն անթուական»։

Այլ տպ.— Ստորոգութիւնք Արիստոտելի. «Հոմանո՛ւնք ասին...», *տես՝* „Collation“, p. 107—154.

Հրատարակությունը կատարվել է Պավիայի Համալս. Մատ. ձեռագիր օրինակի (Codex Ticinus) հիման վրա, համեմատելով Երուսաղեմի Հայոց Մատ. (№ 1291 և № 401) և Փարիզի Bibl. Nat. Fonds Arm. 105 և 106 ձեռագրերի հետ, ինչպես և վենետիկյան 1833 թ. տպագրության հետ:

Այլ տպ.— Ստորոգութիւնք Արիստոտէլի. «Համանուանք ասին...», տես՝ «Մատենագր. Բ», էջ 267—316:

Արտատպ. առաջին հրատարակությունից:

□ Երևանի Պետ. Մատենադարանն ունի «Ստորոգությունք» բնագրի ավելի քան 40 ձեռ. օրինակներ, որոնցից հնագույնները՝ № 1646 (էջ 24բ—42բ), № 3902 (էջ 32ա—47բ) և № 8522 (էջ 1ա—27ա, սկզբից թերի) ԺԴ դարից են[1]. տես նաև ձեռ. № 926 (էջ 191ա), № 1685 (էջ 21բ), № 1686 (էջ 32բ), № 1689 (էջ 162ա), № 1713 (էջ 120ա), № 1714 (էջ 99ա), № 1723 (էջ 49ա), № 1738 (էջ 68բ), № 1742 (էջ 87ա), № 1743 (էջ 115ա), № 1749 (էջ 102ա), № 1752 (էջ 157ա), № 1754 (էջ 179ա), № 1764 (էջ 12բ), № 1805 (էջ 19ա), № 1806 (էջ 46ա), № 1807 (էջ 22ա), № 1933 (էջ 61ա), № 1993 (էջ 143ա), № 2261 (էջ 144ա), № 2274 (էջ 90ա), № 2287 (էջ 67ա), № 2297 (էջ 138ա), № 2307 (էջ 218բ), № 2327 (էջ 116ա), № 2328 (էջ 124բ), № 2342 (էջ 210ա), № 2346 (էջ 256բ), № 2352 (էջ 277բ), № 2353 (էջ 108բ), № 2358 (էջ 152ա), № 2359 (էջ 223ա), № 2361 (էջ 116ա), № 2548 (էջ 98ա), № 3029 (էջ 35ա), № 3127 (էջ 28բ), № 3130 (էջ 70բ), № 3451 (էջ 224ա), № 3501 (էջ 16ա), № 4387 (էջ 109ա), № 5911 (էջ 166ա): Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 112 (էջ 3ա), № 263 (էջ 220ա), № 293 (էջ 62բ) և № 653 (էջ 266բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 301 (էջ 46ա) ևն. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 401, № 1291, № 1501 ևն. Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 101 (էջ 421), № 106 (էջ 441), № 140 (էջ 53) և № 161 (էջ 47). Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 224 (էջ 549). Գանձասարի վանքի[1] ձեռ. № 2. Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 240=նախկին 106 (fol. 252^r) և Ms. Arm. 241=նախկին 105 (fol. 89^r). Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. E. 24 (fol. 474^r) և Ms. Arm. E. 34 (fol. 224^v). Պավիայի Bibl. Univ. Cod. Ticinus 130 D 42—43. Սինայի Ս. Կատարինեի վանքի հայ. ձեռ.[2]:

2. Սկիզբն և նախադրութիւն գրոցն որ ասի ըստ Յունաց՝ Պէրիարմէնիաս և հայերէն՝ Յաղագս մեկնութեան, արտադրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտէլէ. «Նախ արժան է դնել՝ զի՞նչ է անուն, և զի՞նչ է բայ. ապա զի՞նչ է բացասութիւն և ստորասութիւն...», տես՝ «Մատենագր. Ա», էջ 461—486:

Բնագիրը բաղկացած է ներածությունից և հետևյալ գլուխներից.

Յաղագս անուան:
Յաղագս բայի:
Յաղագս բանի:

Հրատարակությունը կատարվել է ըստ Վենետիկի Մխիթ. Մատ. 3 ձեռագիր օրինակների, «յորոց մին ընտիր բոլորգիր, և ի ՊԾԹ թուականին գրեալ որպէս կարծեմք, և երկուքն նոտրագիրք, մին ի ՌՃԼԶ թուականին, և միւսն ի ՌՃԾԸ»:

Այլ տպ.— Յաղագս մեկնութեան՝ Պէրի առմէնիաս. «Պրակք Ա. Նախ արժան է դնել՝ զի՞նչ է անուն...», տես՝ „Collation", p. 155—183.

Հրատարակիչն օգտագործել է նույն ձեռ. օրինակները, ինչ որ Արիստոտելի Ստորոգությանց համար:

Այլ տպ.— Սկիզբն և նախադրութիւն... Արիստոտէլէ. «Նախ արժան է դնել՝ զի՞նչ է անուն...», տես՝ «Մատենագր. Բ.», էջ 371—397:

---

1 ԺԴ դարի ձեռագրերում ևս կան օրինակներ, բայց ոչ առանձին, այլ Դավթին վերագրված մեկնության մեջ ագուցված (տես՝ ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ, «Ստորոգութիւնք Արիստոտէլի թարգմանեալ և մեկնեալ»):

1 Հմմտ. Մ. Սմբատյանց, «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա», Տփղիս, 1904, էջ 125:

2 Հայ. այս ձեռագիրը գրանցված է որպես վրացերեն ձեռ. № 87, հմմտ. M. Kamil, „Catalogue of all manuscripts in the Monastery of St. Catharine on Mount Sinai", Wiesbaden, 1970, p. 53.

Արտատպ. է առաջին հրատարակությունից:

☐ *Երևանի Պետ. Մատենադարանում «Պերի արմենիաս» բնագրից հայտնի են ավելի քան 40 ձեռ. օրինակներ, որոնց հնագույնները՝ № 1646 (էջ 121բ—131ա), № 3902 (էջ 124ա—134ա) և № 8522 (էջ 27բ—46բ) ԺԴ դարից են*[1]. *տես նաև ձեռ. № 926 (էջ 201բ), № 1685 (էջ 69ա), № 1686 (էջ 90ա), № 1689 (էջ 204բ), № 1713 (էջ 158բ), № 1714 (էջ 131ա), № 1723 (էջ 82ա), № 1738 (էջ 97բ), № 1742 (էջ 131ա), № 1743 (էջ 154բ), № 1749 (էջ 134բ), № 1752 (էջ 192ա), № 1754 (էջ 222ա), № 1764 (էջ 30բ), № 1805 (էջ 47ա), № 1806 (էջ 134բ), № 1807 (էջ 44ա), № 1826 (էջ 324ա), № 1993 (էջ 198ա), № 2274 (էջ 114ա), № 2287 (էջ 124ա), № 2297 (էջ 159բ), № 2327 (էջ 140ա), № 2328 (էջ 159բ), № 2342 (էջ 255ա), № 2346 (էջ 301ա), № 2353 (էջ 150ա), № 2358 (էջ 206ա), № 2359 (էջ 259ա), № 2361 (էջ 171ա), № 2548 (էջ 126ա), № 2852 (էջ 299բ), № 3029 (էջ 67ա), № 3127 (էջ 59ա), № 3130 (էջ 98բ), № 3451 (էջ 266ա), № 3501 (էջ 52բ), № 4387 (էջ 137ա), № 5911 (էջ 191ա): Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 112 (էջ 112ա), № 263 (էջ 235ա) և № 293 (էջ 160ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 301 (էջ 63ա) են. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 401, № 1291, № 1443, № 1501 են. Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 240=*Նախկին* 106 (fol. 97^{r}) *և* Ms. Arm. 241=*Նախկին* 105 (fol. 118^{v}). *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Arm. E. 24 (fol. 499^{v}) *և* Ms. Arm. E. 34 (fol. 261^{r}). *Պավիայի* Bibl. Univ. Cod. Ticinus 130 D 42—43. *Էջմիածնի Կաթողիկոսարանի № 244 ձեռ.*[2]:

3. Արիստոտէլի իմաստասիրի թուղթ առ Աղեքսանդրոս (sic) թագաւոր: Պատմութիւն յաղագս աշխարհի. «Իսկ բազում անգամ ինձ աստուածային ինչ և բարեբախտեալ ճշմարտապէս իր, ո՜վ Աղեքսանդրէ, գոլ թուեցաւ իմաստասիրութիւն. և մանաւանդ այնոքիւք՝ ուովք միայն բարձրացեալ առ ի տեսութիւն բոլորիցն փութացաւ գիտել զիրին ճշմարտութիւն...», *տես՝ «Մատենագր. Ա.», էջ 603—628:*

Հրատարակվել է ըստ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. օրինակների՝ «երեքն բոլորգիր ընտիր, յորոց մին ի ՉԿԷ թուականին, միւսն ի ՌԽԷ, և երրորդն որպէս թուի ի յիշատակարանէն ի ՊՆԹ. և այլ երեքն նոտրագիր և անթուականք»:

Այլ տպ.— Արիստոտէլի... Պատմութիւն յաղագս աշխարհի. «Իսկ բազում անգամ...», *տես՝ «Մատենագր. Բ.», էջ 517—542:*

Արտատպ. է նախորդ հրատարակությունից:

Փ. Կոնիբիրը 1891 թ. Էջմ. Մատ. № 2050 =2093 ձեռագրում (այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2101) գտավ սույն բնագրի մի ավելի հին և ընտիր, հունարեն սկզբնագրին ավելի հարազատ օրինակը, որը պարունակում է «Յաղագս աշխարհի»*-ի վերջին մասը միայն և կրում է* «Արիստոտէլի Յաղագս աստուծոյ» *խորագիրը (էջ 190ա—198ա, սկ.* «Արդ նախնի ինչ բան է» *են):* «Յաղագս աշխարհի»*-ի այս թերի օրինակը հրատարակվեց նախ* Հանդէս Ամսօրեայ*-ում, 1893, էջ 227—232, և ապա՝ նույն հայագետի «Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ թարգմանութեանց Արիստոտէլի» (Վիեննա, 1893) աշխատության վերջում որպես հավելված, էջ 72—92: Հետագայում Վազգ. Հակոբյանը Երևանի Պետ. Մատ. ձեռագրերից ընտրելով № 1676 և № 5138 օրինակները՝ որպես այս առավել հին նմուշը ներկայացնող լրիվ օրինակներ, նրանց ուսումնասիրությանը նվիրեց իր թեկնածուական աշխատությունը, որը մնում է անտիպ*[1]: *Սույն երկու օրինակներն ունեն հետևյալ խորագրերը. № 1676՝* «Արիստոտէլի Յաղագս աշխարհի» *(էջ 61ա—83բ) և № 5138՝* «Արիստոտէլի իմաստասիրի Յաղագս ամենայն աշխարհի

---

1 *ԺԴ դարից ևս կան օրինակներ, բայց ոչ առանձին, այլ Դավթին վերագրված մեկնության մեջ ագուցված (տես՝ ԴԱՎԻԹ ԱՆՅԱՂԹ, «Պերիարմէնիաս Արիստոտէլի թարգմանեալ և մեկնեալ»):*

2 *Հմմտ. Էջմիածին (ամս.), 1968, № 7, էջ 62:*

1 *Տես ստորև՝ էջ 865, տող 9—14:*

առ Աղէքսանդրոս թագաւոր» *(էջ 123բ—160ա), որին պատկանում է նաև № 2101 ձեռագրի հատվածը (Կոնիբիրյան օրինակ)։ Այս երկու լրիվ նմուշները, ըստ Վազգ. Հակոբյանի, հանդիսանում են* «Յաղագս աշխարհի»*-ի «ընդարձակ» բնագրերը և բնագրաբանական տեսակետից պատկանում են տարբեր խմբերի։ Մենք գտնում ենք, որ դրանք ընդարձակ չեն վերոնշյալ հրատարակությունների հետ համեմատած, այլ միայն առավել հին տիպի, և չեն պատկանում տարբեր խմբերի, այլ նույն խմբի նմուշներ են, այն տարբերությամբ, որ № 1676 օրինակը ԺԸ դարի վերջում հուն. սկզբնագրի հիման վրա սրբագրության է ենթարկվել Գեորգ Պալատեցու կողմից*[1]*, մինչ № 5138 օրինակն անաղարտ է այդ տեսակետից։ Վերջինս, մեր կարծիքով, ըստ ամենայնի հանձնարարելի օրինակ պիտի համարվի՝* «Յաղագս աշխարհի»*-ի քննական բնագիր կազմելու դեպքում, որովհետև նրա տեղ-տեղ ունեցած այն ընտիր ընթերցվածները, որոնցով տարբերվում է հրատարակությամբ հայտնի բնագրից, իրենց հաստատումն են գտնում հուն. բնագրի հետ համեմատված № 1676 օրինակում։*

Մասնավորելով խոսքը Գեորգ Պալատեցու կատարած սրբագրության վրա՝ նրա բնույթը ցույց տալու համար առաջ ենք բերում բնագրի սկզբի հատվածը՝ ըստ հին թարգմանության և ըստ № 1676 ձեռագրի։

ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
(Առաջին տպ. էջ 603—4)

Իսկ բազում անգամ ինձ աստուածային ինչ և բարեբախտեալ ճշմարտապէս իր, ո՛վ Աղեքսանդրէ, գոլ թուեցաւ իմաստասիրութիւն. և մանաւանդ այնոքիւք՝ որովք միայն բարձրացեալ առ ի տեսութիւն բոլորիցն փութացաւ գիտել զիրին ճշմարտութիւն. և այլոցն ի նմանէ հեռանալով վասն՝ բարձրութեան և մեծութեան նորին, նա յիրէն ոչ վեհերեաց, և ոչ զանձն գեղեցկագունին անարժան արար, այլ և բաղդաղանագոյն իւր և վայելչական մանաւանդ կարծեաց զուսումն նոցունց։ Եւ քանզի ոչ էր հնար մարմնով յերկնայինն հասանել տեղի, և զերկիր թողլով զսրբազանն զայն վայր տեսանել, որպէս Աւալադացիք անիմաստքն երբեմն մըտածեցին, իմաստասիրութիւն առեալ զմիտսն առաջնորդ՝ անցեալ եղև և հասեալ առանց աշխատութեան գտեալ ճանապարհ. և զյոլովագոյնն ի միմեանց հեռացեալսն տեղեօք, տրամախոհութեամբն եբեր ի միասին դիւրաբար։ Կարծեմ եթէ զազգակիցսն ճանաչելով, և աստուածային ակամբ հոգւոյ յաստուածային իրսն հասանելով, և յառաջախօս լինելով մարդկան զայս ինչ իրաց. և որչափ հնար ինչ էր՝ առ յինքենէ ամենեցուն առատապէս եւ զպատուականագունիցն ցոյցս։

ԳԵՈՐԳ ՊԱԼԱՏԵՑՈՒ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(Ձեռ. № 1676, էջ 61ա—61բ)

Բազում անգամ ինձ աստուածային իմն և բարեբախտեալ ճշմարտապէս իր, ո՛վ Աղեքսանդրէ, իմաստասիրութիւնն թուեցաւ լինել. մանաւանդ իսկ այնոքիւք որովք միայն ամբարձեալ առ ի տեսութիւն **էիցն,** *փութացաւ գիտել զճշմարտութիւնն որ ի նոսա. և յայլոցն բացակայելոց յինքենէ վասն բարձրութեանն և մեծութեանն՝ իւրս այս ոչ վեհերեաց. և ոչ զինքն գեղեցկագունիցն անարժան վարկաւ, այլ յոյժ ազգակից իւրում ինքեան, և մանաւանդ վայելչական կարծեաց լինել զուսումն նոցին։ Եւ քանզի որովհետև ո՛չ էր կար մարմնով յերկնայինն հասանել տեղի, և զերկիր թողլով զերկնայինն զայն վայր տեսանել, որպէս Ալովատացիքն անիմայք երբեմն մտածեցին, հոգին ուրեմն ի ձեռն իմաստասիրութեան առեալ առաջնորդ զմիտսն, վերացաւ և ել, անաշխատ իմն ճանապարհ գտեալ. և զյոլովագոյն բացակայեալսն յիրերաց տեղեօք, տրամախոհութեամբն եբեր ի միասին, դիւրաբար կարծեմ զազգակիցսն ճանաչելով, և աստուածային ակամբ հոգւոյ յաստուածայինսն հասանելով, և մարդկան յառաջախօս լինելով. և զայս կրեաց՝ որչափ ինչ հնար էր ամենեցուն առատապէս փոխատրել կամելով ի պատուականացն որք առ յինքենէ։*

Երևանի Պետ. Մատենադարանում կան «Յաղագս աշխարհի» *բնագրի ավելի քան 40 ձեռ. օրինակներ, որոնք, բացառելով վերոնշյալ № 1676-ը, որը Գեորգ Պալատեցու սրբագրությանն է ենթարկվել, բոլորն էլ պատկանում են հին թարգմանության խմբին։ Նրանց մեջ ժամանակով հնագույնը № 2101 հատվածն է (Կոնիբիրյան օրինակ), 1223 թվականից, որին հետևում են № 1500-ը (էջ 1185բ—1188բ, վերջից թերի) և № 1716-ը (էջ 159բ—176բ)՝ երկուսն էլ ԺԳ դ. վերջին քառորդից. տես նաև նույն մատ. ձեռ. № 1685 (էջ 182ա), № 1686 (էջ 130բ), № 1690 (էջ 305ա), № 1714 (էջ 218ա), № 1715 (էջ 276ա), № 1738 (էջ 240բ), № 1739 (էջ 284բ),*

[1] *Այսպիսի մի օրինակ է նաև Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 187 (էջ 287—303)։*

№ 1740 (էջ 353ա), № 1742 (էջ 147բ), № 1744 (էջ 311ա), № 1748 (էջ 255ա), № 1749 (էջ 179ա), № 1751 (էջ 280ա), № 1752 (էջ 209ա), № 1754 (էջ 247բ), № 1766 (էջ 274բ), № 1809 (էջ 148բ), № 1813 (էջ 267ա), № 1916 (էջ 296ա), № 1974 (էջ 182ա), № 2050 (էջ 277ա), № 2326 (էջ 401բ), № 2327 (էջ 158բ), № 2368 (էջ 427ա), № 3078 (էջ 54ա), № 3130 (էջ 344ա), № 3501 (էջ 267բ), № 3914 (էջ 350ա), № 4006 (էջ 265բ), № 4008 (էջ 281ա), № 4387 (էջ 333ա), № 4623 (էջ 1ա), № 5138 (էջ 123բ), № 5205 (էջ 220ա), № 6897 (էջ 344ա), № 8522 (էջ 47ա), № 9245 (էջ 3ա)։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 263 (էջ 206ա), № 320 (էջ 146ա), № 947 (էջ 120ա) և № 1060 (էջ 121ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 401, № 1501 են. Կեսարիայի Ս. Կարապետի վանքի նոր գրադ. ձեռ. № 44 (էջ 279ա). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 240=Նախկին 106 (fol. 165^{r}) և Ms. Arm. 241=Նախկին 105 (fol. 135^{v}). Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. E. 34 (fol. 281^{v}), Ms. Arm. F. 6 (fol. 98^{r} և 194^{r}), Ms. Arm. F. 13 (fol. 200^{r}). Տյուբինգենի KUB Ma XIII 74 (fol. 149^{r}). Պավիայի Bibl. Univ. Cod. Ticinus 130 D 42—43.

Ձեռագրերում «Պատմութիւն յաղագս աշխարհի» բնագիրը երբեմն խորագրված է «Պատմութիւն յաղագս աշխարհաց», «Գիրքոյկս վասն աշխարհաց»:

4. Արիստոտէլի Յաղագս առաքինութեանց, առ Աղեքսանդրոս թագաւոր. «Գովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն. քանզի բարեացն յառաջեալ լինին առաքինութիւնքն, և գարշելեացն չարութիւնքն: Այլ գովելի են և պատճառք առաքինութեանցըն...», տես՝ «Մատենագր. Ա», էջ 629—635։

Հրատարակվել է ըստ Վենետիկի Մխիթ. Մատ. 6 ձեռ. օրինակների՝ «երեքն բոլորգիր, յորոց մին ի ՉԿԷ թուականին, միւսն ի ՌԽԷ, և երրորդն թուի լինել ի ՊՄԹ, և այլ երեքն նոտրագիրք, մին ի ՌԺ թուականին, և երկուքն անթուականք»։

Այլ տպ.— Արիստոտէլի Յաղագս առաքինութեանց առ Աղեքսանդրոս թագաւոր. «Գովելի են գեղեցիկքն...», տես՝ «Մատենագր. Բ», էջ 543—549։

Արտատպ. է նախորդ հրատարակությունից։

Երևանի Պետ. Մատենադարանն այս բնագրից ունի ավելի քան 70 ձեռ. օրինակներ, որոնցից հնագույններն են № 1716 (էջ 177ա—181բ) և № 1500 (էջ 1184բ—1185բ)՝ ԺԳ դարից. № 6897 (էջ 358բ—362ա), № 7151 (էջ 37բ—40բ), № 2490 (էջ 228ա—235բ), № 1748 (էջ 271բ), № 1751 (էջ 296բ—301բ), № 2326 (էջ 418բ—422բ), № 8522 (էջ 58ա—62բ, սկզբից թերի) և № 5205 (էջ 236ա—240ա)՝ ԺԴ դարից. տես նաև ձեռ. № 47 (էջ 101ա), № 58 (էջ 292բ), № 80 (էջ 150ա), № 126 (էջ 166ա), № 270 (էջ 302ա), № 723 (էջ 271ա, հատված), № 739 (էջ 9ա), № 772 (էջ 225ա), № 1685 (էջ 205ա), № 1686 (էջ 120բ), № 1689 (էջ 227ա), № 1690 (էջ 345բ), № 1693 (էջ 20բ), № 1713 (էջ 179ա), № 1714 (էջ 241բ), № 1715 (էջ 290բ), № 1738 (էջ 352բ), № 1739 (էջ 299բ), № 1740 (էջ 373բ), № 1742 (էջ 167ա), № 1743 (էջ 218բ), № 1744 (էջ 328ա), № 1749 (էջ 172բ), № 1750 (էջ 124բ), № 1752 (էջ 233ա), № 1754 (էջ 275ա), № 1764 (էջ 126բ), № 1766 (էջ 289բ), № 1805 (էջ 62ա), № 1809 (էջ 166ա), № 1813 (էջ 282ա), № 1836 (էջ 165ա), № 1916 (էջ 313ա), № 1974 (էջ 189ա), № 1993 (էջ 181բ), № 2018 (էջ 356ա), № 2103 (էջ 5բ), № 2281 (էջ 136բ), № 2291 (էջ 347բ), № 2297 (էջ 172ա), № 2327 (էջ 153բ), № 2342 (էջ 273ա), № 2368 (էջ 15ա), № 3029 (էջ 170ա), № 3078 (էջ 67բ), № 3130 (էջ 357ա), № 3318 (էջ 123ա), № 3355 (էջ 258ա), № 3501 (էջ 58ա), № 3914 (էջ 369ա), № 3941 (էջ 213բ), № 3979 (էջ 390), № 4006 (էջ 275ա), № 4007 (էջ 301ա), № 4008 (էջ 299բ), № 4424 (էջ 22բ), № 5138 (էջ 160ա), № 5911 (էջ 207ա), № 6811 (էջ 78ա), № 8555 (էջ 74բ)։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 263 (էջ 213ա), № 320 (էջ 165բ) և № 835 (էջ 15բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 401, № 1501 են. Կեսարիայի Ս. Կարապետի

վանքի Նոր գրաց. ձեռ. № 44 (էջ 285ա). Զմմառի Մատ. ձեռ. № 205 (էջ 178ա). Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 80 (էջ 33), № 140 (էջ 295), № 147 (էջ 137) և № 203 (էջ 233). Արմաշի Մատ. ձեռ. № 184 (էջ 265) և № 210 (թղ. Ե). Անկյուրեայի Կարմիր վանքի ձեռ. № 97 (էջ 829). *Փարիզի*՝ Bibl. Nat. Ms. Arm. 128=Նախկին 56 (fol. 187^{v}), Ms. Arm. 240=Նախկին 106 (fol. 182^{r}) և Ms. Arm. 241=Նախկին 105 (fol. 160^{r}). *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Arm. E. 34 (fol. 313^{v}), Ms. Arm. F. 6 (fol. 204^{v}) և Ms. Arm. F. 13 (fol. 404^{r}). *Բեռլինի* Kön. Bibl. Ms. Or. Oct. 95. *Հռոմի* Bibl. Vat. Cod. Vat. Arm. 3 (fol. 456^{r}). *Տյուբինգենի* KUB Ma XIII 74 (fol. 208^{r}). *Պավիայի*՝ Bibl. Univ. Cod. Ticinus 130 D 42—43. *Նյու-Յորքի* Bibl. Fifth Av. 42 str. Ms. Arm. 1 (fol. 41)[1].

ԺԷ դարի վերջերում Ղուկաս Վանանդեցին հուն. սկզբնագրի հիման վրա սրբագրության է ենթարկել «Յաղագս առաքինութեանց»*-ի հայ. այս հին թարգմանությունը և տպագրել է հետևյալ հրատարակության մեջ. «Յոգնադիմի աստուածաբանական, բարոյական և քաղաքական իրողութեանց սահմանք», Ամստերդամ, 1704, էջ 45—58. այս բնագրի խորագիրն է՝* «Արիստոտէլի Յաղագս առաքինութեանց և չարութեանց, ըստ կարի ի բուն յոյն օրինակէ գաղափարեալ և կարգադրեցեալ յումեմնէ ապիկար դպրէ Վանանդեցւոյ» *(սկ.* «Արդարև գովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն»):

5. Արիստոտէլի Ստագիրացւոյ գիրք Բնազանցականաց, որ կոչի յունարէն Մեթաֆիզիկոց. «Գիրք առաջին: Պրակ առաջին: Յաղագս փորձի, արհեստի և մակացութեան. և թէ իմաստութիւնն է մակացութիւն, որ պատճառաց ոմանց և սկզբանց խուզման պարապի: Ամենայն մարդիկք բնութեամբ ցանկան գիտել. և նշան այսր է զգայութեանցն սիրելութիւն, զի և առանց գործառութեան սոցին վասն ինքեանց սիրեցեալ լինին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3844, էջ 2ա—297ա:*

[1] *Տես՝* Հանդէս Ամսօրեայ, *1928, էջ 407—408:*

Բովանդակություն.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ.—Պրակ Ա. Յաղագս փորձի, արհեստի և մակացութեան, և թէ իմաստութիւնն է մակացութիւն, որ պատճառաց ոմանց և սկզբանց խուզման պարապի: Պրակ Բ. Թէ որո՞ց պատճառաց և սկզբանց մակացութիւն իցէ իմաստութիւնն: Պրակ Գ. Թէ զի՞նչ ուսուցին հինքն յաղագս առաջնոցն պատճառաց: Պրակ Դ. Թէ զի՞նչ ասացին յաղագս սկզբանց Հեսիոդոս, Եմպեդոկլէս և Անաքսագորաս, այլ և Ղևկիպպոս և Դեմոկրիտոս: Պրակ Ե. Պիթագորականաց, Պարմենիդեայ, Քսենոփոնեայ և Մելիսեայ կարծիք յաղագս սկզբանց: Պրակ Զ. Կարծիք Պղատոնի յաղագս սկզբանց, և վերջաբանութիւն մինչև ցայս վայր ասացելոցս: Պրակ Է. Զկարծիս իմաստասիրացն հնոց յաղագս սկզբանց՝ եղծանէ:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.— Պրակ Ա. Թէ տեսութիւն ճշմարտութեան՝ մասամբ է՛ դժուարահաս և մասամբ դիւրահաս: Պրակ Բ. Թէ գոյ սկիզբն իմն: Պրակ Գ. Թէ ո՞ր յեղանակ պահելի է ի խուզելն ըզճշմարտութիւն:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ.— Պրակ Ա. Ուսուցանէ թէ առ ի գտանել զճշմարտութիւնն՝ սկսանելի է՛ ի տարակուսութեանց, ապա զտարակուսութիւնսն արտադրէ: Պրակ Բ. Բուռն հարկանէ զձեռնարկութենէ յանցեալ պրակում յիշեցեալ հարցմանցն, և նախ զառաջնոյն նախադասեցելոցն: Պրակ Գ. Զայլ հարցափորձութիւն լուծանէ թէ սեռք իցե՞ն տարերք և սկզբունք, թե ո՛չ: Պրակ Դ. Զվերոյ ասացեալ բազում տարակուսութիւնս լուծանէ: Պրակ Ե. Զհարցումն զայս արտադրէ, թէ էակքն ըստ ուսումնականին մասին իմաստասիրութեան գոյացութիւնք իրաց իցեն արդեօ՞ք, թէ ոչ: Պրակ Զ. Զայլ հարցմունս ձեռնարկէ և զյառաջարկեալսն ընառաջնում պրակում ի մէջ ածէ:

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ.— Պրակ Ա. Յաղագս ենթակայի առաջիկայ մակացութեանս: Պրակ Բ. Թէ ո՞յք իցեն մասունք ենթակայի մակացութեանս, և ո՞յք նորին յատուկք կիրք: Պրակ Գ. Թէ արդեօ՞ք մակացութեան իցէ, թէ բազմաց՝ ձեռնարկել զշարամանեալ սկզբանցն և զգոյացութենէ: Պրակ Դ. Թէ ո՛չ կարող գոյ նոյն լինել և ո՛չ լինել: Պրակ Ե. Թէ ո՛չ ամենայն երևեալն գոյ ճշմարիտ: Պրակ Զ. Արտադրէ ընդդէմ այնոցիկ որք զամենայն ինչ երևեալ ճշմարիտ՝ ասացին ճշմարիտ գոլ: Պրակ. Է. Թէ ի հարկէ ամենայն ինչ զինչ և իցէ զում ումեքէ ճշմարտապէս ստորասի, կամ բացասի, զի ոչ ինչ է ընդ մէջ: Պրակ Ը. Թէ միապէս և զամենայնց զստորոգեալսն անկար է գոլ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Թէ սկիզբն ըստ քանի՞ս յեղանակս ունի: Պրակ Բ. Թէ պատճառ քանի՞ կերպիւ ասի: Պրակ Գ. Թէ տարր քանիւրա՞ր ասի: Պրակ Դ. Թէ բնութեան քանի՞ք են նշանակութիւնք: Պրակ Ե. Թէ հարկաւորն ըստ քանի՞ս յեղանակս ասի: Պրակ Զ. Թէ մին քանի՞ կերպիւ ասի: Պրակ Է. Թէ էակ քանի՞ կերպիւ ասի: Պրակ Ը. Թէ գոյացութեան քանի՞ են յեղանակք: Պրակ Թ. Թէ նոյնք, զանազանք, տարբերեալք և նմանք ըստ քանի՞ս յեղանակս ասին: Պրակ Ժ. Թէ հակակայք և ներհակք քանի՞ կերպիւ

ասին։ Պրակ ԺԱ. Թէ նախկինք և յետինք ըստ քանի՞ս յեղանակս ասին։ Պրակ ԺԲ. Թէ կարողութիւն քանի՞ յեղանակօր ասի։ Պրակ ԺԳ. Թէ քանակ քանիարա՞ր ասի։ Պրակ ԺԴ. Թէ որակ քանիարա՞ր ասի։ Պրակ ԺԵ. Թէ առինչ ըստ քանի՞ս յեղանակս ասի։ Պրակ ԺԶ. Թէ կատարեալն քանի՞ յեղանակօք ասի։ Պրակ ԺԷ. Թէ սահման որ է եզր՝ քանի՞ կերպիւ ասի։ Պրակ ԺԸ. Ըստ որում քանի՞ կերպիւ ասի։ Պրակ ԺԹ. Թէ տրամադրութիւն քանիարա՞ր ասի։ Պրակ Ի. Թէ ունակութիւն ըստ քանի՞ս յեղանակս ասի։ Պրակ ԻԱ. Թէ կիրք քանի՞ յեղանակօր ասին։ Պրակ ԻԲ. Թէ պակասութեան քանի՞ են յեղանակք։ Պրակ ԻԳ. Թէ ունելն քանի՞ կերպիւ ասի։ Պրակ ԻԴ. Թէ յիմեքէ լինելն ըստ քանի՞ս յեղանակս ասի։ Պրակ ԻԵ. Թէ մասն քանի՞ կերպիւ ասի։ Պրակ ԻԶ. Թէ բոլո՛ր քանիարա՞ր ասի, և ի՞ւ տարբերին բոլոր և ամենայն։ Պրակ ԻԷ. Թէ մասնահատ ըստ քանի՞ս յեղանակս ասի։ Պրակ ԻԸ. Թէ սեռ քանի՞ են յեղանակք։ Պրակ ԻԹ. Թէ սուտն քանի՞ կերպիւ ասի։ Պրակ Լ. Թէ պատահումն ըստ քանի՞ս յեղանակս ասի։

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ Ի ՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՐՍ ՄԷԹԱՖԻԶԻԳԱՅԻՆ։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Ուսուցանէ թէ հարցափորձութիւն զէակէ ըստ որում գոյ էակ, վերաբերի առ տեսական իմաստասիրութիւն, զոր յերիս տեսակս տրամատէ՝ ի բնաբանական, յուսումնական և յաստուածաբանական։ Պրակ Բ. Թէ զի՞նչ պատահումն, և վասն է՞ր իցէ, և թէ նորին մակացութիւն ոչ գոյ։ Պրակ Գ. Ուսուցանէ զսկզբունս և զպատճառս այսպիսի գոլ, որպէս զի յառաջ գայցեն և մտանիցեն առանց լինելութեան և ապականութեան։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Յաղագս նախկին էակի։ Պրակ Բ. Տարակուսանք զգոյացութենէ։ Պրակ Գ. Թէ զի՞նչ է գոյացութիւն։ Պրակ Դ. Յաղագս սահմանի, և զինչ էութիւն. թէ զինչ իցէ։ Պրակ Ե. Թէ գոյացութեանց միայն պատկանի սահման, և զինչ էութիւն մանաւանդ, և նախկնաբար, և պարզաբար։ Պրակ Զ. Թէ զինչ էութիւն և իւրաքանչիւրն մի՞ իցեն, թէ ոչ։ Պրակ Է. Յաղագս լինելութեան։ Պրակ Ը. Թէ տեսակ և էութիւն իւրի ո՛չ ծնանի։ Պրակ Թ. Վասն է՞ր ոմանք յարհեստէ և ի դիպուածոյ լինին, և ոմանք ոչ։ Պրակ Ժ. Թէ ընբոլորի սահմանում՝ զմասանց սահման ներ գոլ պիտոյ է, թէ ոչ. և թէ նախկին մասունք են, թէ բոլոր։ Պրակ ԺԱ. Թէ ո՞յք մասունք տեսակի իցեն, և ո՞յք ոչ։ Պրակ ԺԲ. Վասն է՞ր և զիա՞րդ մին իցէ սահմանեալ, կորոյ բան ասեմք գոլ սահման։ Պրակ ԺԳ. Թէ և ոչ մի հանրականն՝ է գոյացութիւն և ոչինչ յընդհանրականապէս ստորոգիցելոցն զայս ինչ նշանակէ, այլ զորակ։ Պրակ ԺԴ. Ընդդէմ ասողացն զյարացոյցս և գոյացութիւնս գոլ և անջատելիս։ Պրակ ԺԵ. Թէ զգալեաց գոյացութեանց մասնականաց ոչ սահման գոլ կարող է և ոչ ապացուցութիւն։ Պրակ ԺԶ. Թէ և ոչ մի գոյացութիւն է ի գոյացութեանց։ Պրակ ԺԷ. Վասն զի զգոյացութենէ և զզինչէութենէ իրաց տրամաբանաբար մինչև ցայս վայր ձեռնարկեաց, աստանօր նրբագոյն զոմանս արտադրէ։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Գումարումն զգոյացութենէ ցայս վայր ասացելոցն, ապա յաղագս գոյացութեանց զգալեաց ձեռնարկել սկսանի։ Պրակ Բ. Յաղագս զգալեացս գոյացութեան, որ է իբրև ներգործութիւն։ Պրակ Գ. Հարցաքննութիւնս ոմանս առ գոյացութիւն վերաբերեալս մասամբ արտադրէ և լուծանէ, մասամբ յայլոց յառաջարկելոցն պատասխանէ. ևս յաղագս թուաբերութեան ձեռնարկէ։ Պրակ Դ. Յաղագս նիւթականին գոյացութեան և պատճառաց։ Պրակ Ե. Թէ ոչ ամենայն ներհակք առ ի միմեանց լինին. ապա զերկուս հարցաքննութիւնս առարկէ։ Պրակ Զ. Զյառաջարկեալ տարակուսութիւնն յառաջագոյն զսահմանաց և զթուոց զի՞նչ պատճառ իցէ, զի մի՛ լինին, լուծանէ։

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Յաղագս զօրութեան և պակասութեան։ Պրակ Բ. Թէ զօրութեանց ոմանք են անբանք, և ոմանք բանականին շարակցեալք։ Պրակ Գ. Ընդդէմ մեգարացւոց, որք զզանազանութիւն ի մէջ ներգործութեան և զօրութեան բառնային։ Պրակ Դ. Եթէ կարող գոյ լինել, զի իր կարելին ո՛չ իցէ, և ոչ լինիցի երբեք։ Պրակ Ե. Ուսուցանէ հարկաւոր գոլ, զի ամենայն կարողն բանիւ՝ զայն գործիցէ յորժամ յօժարիցի, զորոյ զօրութիւն ունի, և ըստ որում ունի։ Պրակ Զ. Թէ զի՞նչ իցէ և որպիսի՞ ներգործութեամբ գոլն։ Պրակ Է. Թէ ե՞րբ ի՛ր ինչ զօրութեամբ գոլ կարող է ասիլ կամ ոչ։ Պրակ Ը. Թէ ներգործութիւն նախկին է քան զզօրութիւն, և քան զամենայն սկիզբն փոփոխական։ Պրակ Թ. Թէ ներգործութիւն ի բարիս՝ լաւագոյն է քան զզօրութիւն, ի չարս՝ վատթարագոյն, և թէ զօրութեամբ էակին գտանին վերաբերեալք առ ի ներգործութիւն։ Պրակ Ժ. Յաղագս ճշմարտի և ստոյ։

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Յաղագս միոյ և գոլոյն միոյ։ Պրակ Բ. Հաստատէ զմին յամենայն սեռում գոլ իմն բնութիւն, և ո՛չ միոյ իրի զսոյնս այս գոլ բնութիւն։ Պրակ Գ. Թէ ըստ քանի՞ս յեղանակս հակայքին մու և շատն, ես՝ զանազանն և աննմանն։ Պրակ Դ. Յաղագս ներհակութեան։ Պրակ Ե. Թէ զիա՞րդ հանդէտն հակակայր մեծին և փոքուն։ Պրակ Զ. Տարակուսութիւն յաղագս միոյն և բազմաց հակակայութեան։ Պրակ Է. Հաւաստաբանէ զմիջինսն ներհակաց ի հարկէ լինիլ ի ներհակացն։ Պրակ Ը. Թէ հարկէ տեսակաւ զանազանիցելոցն ի նոյնում սեռի գոլ։ Պրակ Թ. Թէ զի՞նչ է տեսակաւ զանազան գոլ, և վասն է՞ր ոմանք տեսակաւ տարբերին, և ոմանք՝ ոչ։ Պրակ Ժ. Թէ տեսակաւ զանազանք են ապականացուն և անապականն։

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Տարակուսութիւնք յաղագս իմաստութեան։ Պրակ Բ. Յաղագս այլոց տարակուսանաց։ Պրակ Գ. Թէ զիա՞րդ բազմաց և տեսակաւ տարբերեցելոցն մի իցէ մակացութիւն։ Պրակ Դ. Ուսուցանէ առաջնոյն իմաստասիրութեան գոլ՝ զսկզբունս անշարժ ներշրջական իրացն տեսանել։ Պրակ Ե. Թէ ոչ է կարող լինել, զի նոյն իր ի նմին ժամանակի իցէ, և ո՛չ իցէ։ Պրակ Զ. Ընդդէմ Պրոտագորեայ, որ զմարդ ամենայն իրաց չափ գոլ ասէր։

Պրակ Է. Հաստատէ զբնաբանական մակացութիւն ոչ գործական և ոչ առողական, այլ տեսական։ Պրակ Ը. Յաղագս էակի ըստ պատահման։ Պրակ Թ. Հաւաստաբանէ զներգործութիւն զօրութեամբ էակին, ըստ որում է՛ այսպիսի, շարժութիւն գոլ։ Պրակ Ժ. Հաստատէ ոչ կարող գոլ մարմին անհուն։ Պրակ ԺԱ. Յաղագս փոփոխելւոյն։ Պրակ ԺԲ. Հակաճառութիւն ղշարժութենէ, թէ որո՞ց շարժութիւն իցէ կամ ո՛չ։

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Յաղագս գոյացութեան։ Պրակ Բ. Յաղագս փոփոխելի գոյացութեան և փոփոխութեան։ Պրակ Գ. Թէ ո՛չ նիւթ՝ և ո՛չ տեսակ եղանի։ Պրակ Դ. Յաղագս սկզբանց պատճառաց և տարերց։ Պրակ Ե. Յաղագս սկզբանց զգալեաց։ Պրակ Զ. Ձեռնարկէ զհարցաքննութիւն զառաջին պատճառէ և զնախկին գոյացութենէ, զոր և աստուած երբեմն անուանակոչէ։ Պրակ Է. Յաղագս նախկին շարժողին և յաղագս աստուածոյ։ Պրակ Ը. Յաղագս աստեղաց և երկնայնոց կամարաց, թէ քանի՞ք են թուով համարելիք. ևս յաղագս հնոցն առասպելաբանութեանց զաստուածոցն։ Պրակ Թ. Յաղագս աստուածային մտաց։ Պրակ Ժ. Թէ զիա՞րդ բնութիւն աշխարհի ունի զբարին և զկաւագոյնն։

ԳԻՐՔ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Թէ ուսումնական էակք գոն, թէ ո՛չ։ Պրակ Բ. Թէ ուսումնական էակք անջատեալք իցեն ի զգալեացս, թէ ո՛չ։ Պրակ Գ. Թէ ուսումնական էակք զիա՞րդ իցեն։ Պրակ Դ. Ընդդէմ յարացուցից Պղատոնի։ Պրակ Ե. Թէ յարացոյցք ոչ ինչ օգնեն։ Պրակ Զ. Յաղագս թուոց հակաճառութեան արտադրէ։ Պրակ Է. Թէ միութիւնք շարադրելիք են, թէ ոչ։ Պրակ Ը. Թէ զի՞նչ է տարբերութիւն թուոյ, և միութեան, կամ միակի, եթէ իցէ ինչ. ևս այլ ինչ արտադրէ ընդդէմ այլոց և ընդդէմ Պիթագորեանց։ Պրակ Թ. Թէ ո՛չ է կարելի, զի թիւք և մեծութիւնք իցեն անջատելիք. ևս զայլ ոմանս հարցմունս ի մէջ ածէ։ Պրակ Ժ. Հարցաքննութիւնս ոմանս առաջնոյն հակաճառութեան համաձայնս ի մէջ ածէ։

ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ.— Պրակ Ա. Թէ ներհակաց յատկապէս ոչ ինչ սկիզբն է ամենայն իրաց։ Պրակ Բ. Թէ յաւիտենականքն ոչ կարեն գոլ բաղադրեալք ի տարերց։ Պրակ Գ. Ընդդէմ Պիթագորականաց, որք զամենայն ինչ ի թուոց ստեղծանէին։ Պրակ Դ. Յաղագս լինելութեան թուոց. ևս այլք տարակուսութիւնք ի բանիցս Պիթագորականացն յառաջ եկեալք։ Պրակ Ե. Թէ թիւ ոչ է պատճառ էից։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 926 (էջ 208ա), № 2049 (էջ 6ա), № 2050 (էջ 6ա), № 3005 (էջ 2ա), № 3355 (էջ 2ա), № 3844 (էջ 2ա), № 3897 (էջ 1ա), № 4027 (էջ 5ա) և № 5249 (էջ 4ա): Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. մատ. ձեռ. № 48 (մաս Բ, էջ 1ա) և № 780 (էջ 1—299). Տյուբինգենի KUB Ma XIII 76 (95r).

Որոշ օրինակներ վերջում ունեն հետևյալ հիշատակագրությունը. «Զթարգմանիչ սորին և զլուծմանց յօրինող Լեհացի Ստեփաննոս բանասէրն յիշել ի Քս. յոյսն բնաւից սրտի մտօք աղաչեմ» (Երևանի ձեռ. № 2050 և Երուսաղեմի ձեռ. № № 48 և 780)։

6. Արիստոտէլի Ստագիրացւոյ Զպատմութենէ կենդանեաց: *Էջմիածնի Կաթողիկոսարանի ձեռ. № 401, էջ 5ա—117բ*:

Բովանդակություն.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։ Ի Թէոդորոս Գաղայ թարգմանչէ[1]:

Գլ. Ա. Որո՞վք կենդանիքն ի մէջ ինքեան[ց] տարբերին և որո՞վք համաձայնին, և նոցին զանազանութիւն բնութեան։

Գլ. Բ. Ո՞րք մասունք կենդանեաց մարմնոյ հասարակ, և ո՞րք դարձեալ յատուկք են։

Գլ. Գ. Ո՞րպէս կենդանիքն ի մէջ ինքեանց տարբերին հեղմամբ զաւակարար սերման։

Գլ. Դ. Կենդանին ունի ևս զխոնաւութիւն, սակայն այլապէս, կա՛մ յայսմիկ կա՛մ յայնմիկ նիր գոյ։

Գլ. Ե. Ո՞ր կենդանիք զկատարեալ կենդանի, ո՞ր զձուս, ո՞ր զորդունս ծնանին, և որո՞վ արարողութեամբ ընթանան։

Գլ. Զ. Ո՞ր կենդանիքն ունին զարիւն և ո՞ր զուրկք են ի նոյնոյ։

Գլ. Է. Զհամառօտութենէ մասանց մարմնոյ ի մարդն, և զի՞նչ գլուխն և դարձեալ զի՞նչ գրահն իցէ։

Գլ. Ը. Զի՞նչ երեսն և ճակատն ի մարդն։

Գլ. Թ. Զարտևանաց, աչաց, թարթչաց, բարակ մորթոյն աչաց, բբաց, սևուցաց, սպիտակաց, անկեան. և զայնց կենդանեաց որք զուրկք են յաչաց։

Գլ. Ժ. Զզանազանութենէ աչաց յիւրաքանչիւր կենդանիս։

Գլ. ԺԱ. Զունկանէ, զռնգանէ, զշնչարանաց, զծնօտից, զշրթանց, լնտերաց, ատամանց, լեզուաց, քմաց, զմակալեղուաց, և զնոցին յիւրաքանչիւր կենդանիս տարբերութեանց։

Գլ. ԺԲ. Զպարանոցէ, զկրծոյ, և զնոցին մասանց։

Գլ. ԺԳ. Զորովայնէ և զստորնագունից մինչև առ սերմնական անդամն։

Գլ. ԺԴ. Զզանազանութենէ սերմնական անդամոց առն և կնոջ, և զոմանց այլոց զրահական մասանց։

Գլ. ԺԵ. Զթիկնամիջէ և զնորին մասանց, կողից և արտաքին անդամոց, և զկարգէ մասանց մարդոյն առ ինքն ընդհանուրն։

---

1 **Թեոդ.** Գաղան (Th. Gaza) «**Զպատմութենէ կենդանեաց**»-ի Ա—Թ գրքերը հունարենից լատիներեն թարգմանողն է։ Իսկ Ժ գրքի թարգմանիչը Հովհ. Բեռն. Փելիկիանոսն (J. B. Felicianus) է, ինչպես նշված է իր տեղում։

Գլ. ԺԶ. Ընդ որո՞ց կենդանեաց մարդոյն յուղեղն, ոսկորն, պուկն և որովայնն համաձայնին։

Գլ. ԺԷ. Զարտէ մարդոյ և այլոց կենդանեաց, և զաթոռոյ նորին. եւ զթոքէ և զխոտորնակ ցանկէ։

Գլ. ԺԸ. Զլերդէ, զփայծեղէ, զլեղւոյ, զերիկամաց և զբաղարջտէ։

Գլ. ԺԹ. Զծննդական անդամոյ և զքսակաց, և որո՞վ մասամբ մարմնոյ արուն յիգէ տարաձայնի։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։

Գլ. Ա. Ո՞յք կենդանիք ոմամբք համաձայնին և ոմամբք տարաձայնին։

Գլ. Բ. Արդեօ՞ք շունքն փոխեն զատամունս, և որո՞վ կերպիւ հնագոյնքն զանազանել ճանաչին ի նորագունից։

Գլ. Գ. Ատամունքն ձիանց ի ծերութեան սպիտակագոյն եղանին, և առաւել արուքն, քան էգքն ունին զատամունս։

Գլ. Դ. Մարդկանց շուրջ զքսան ամօք ջաղացակեռիքն կամ ծամական ատամունքն ծնանին։

Գլ. Ե. Արու փիղքն տարբերին յիգաց կարգաւ ատամանց։

Գլ. Զ. Փոքրիկ գոլ լեզուն փղին։

Գլ. Է. Ո՞յք կենդանիք մեծութեամբ բերանոյ տարաձայնին. և անդ զգետական ձիոյ Եգիպտոսի։

Գլ Ը. Զսեռէ ապուշէից, որ մասն ինչ մարդոյ, և մասն ինչ հետևի չորքոտանեաց։

Գլ. Թ. Զկեպաց։

Գլ. Ժ. Զուածու չորքոտանիքն որո՞վք ընդ այլոց չորքոտանեաց համաձայնին, և տարաձայնին։

Գլ. ԺԱ. Զգետնառիւծու կամ զդօդօշէ, և նորին ընդ այլոց զնմանութենէ։

Գլ. ԺԲ. Զբնութենէ թռչնոց, և որո՞վք ընդ այլոց երկրային կենդանեաց համաձայնին։

Գլ. ԺԳ. Զսեռէ ձկանց, և զտարբերութենէ նորին։

Գլ. ԺԴ. Զսեռէ օձից։

Գլ. ԺԵ. Որո՞ց ներքին անդամոց, և ո՞ր սեռն կենդանեաց վիճակի։

Գլ. ԺԶ. Ո՞յք կենդանիք յերիկամաց և ի խաղաւարտէ զուրկք են։

Գլ. ԺԷ. Զո՞ր մասն մարմնոյ յիւրաքանչիւր կենդանիս սիրտն, ոսկորն, կենակիրքն, լեարդն, թոքն, փայծեղն, լեղին, որովայնն և փորոտիքն ունին։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։

Գլ. Ա. Զզետեղմանէ և զձևոյ ծննդական անդամոց ամենից կենդանեաց և զտարբերութենէ նոցին։

Գլ. Բ. Զնմանական մասանցն կենդանեաց, և անդ Սինէնէնոսի Կիպրոսեան, և Դիոգինոսի Ափոլոնիացւոյ կարծեացն զարենէ և զերակաց։

Գլ. Գ. Փոլիպիոսի վճիռն զկարգէ երակաց, և անդ զհերքմանէ սուտ կարծեաց։

Գլ. Դ. Զփոքրագոյն երակէ սրտին և զնորին աթոռոյ։

Գլ. Ե. Զջլաց և զսկզբէ (sic) նոցին։

Գլ. Զ. Զգծաց կամ մղեղաց։

Գլ. Է. Զոսկերաց և զնոցին տարբերութեանց։

Գլ. Ը. Զխռնչականէ (sic) և զնորին ընդ ոսկերաց տարբերութենէ։

Գլ. Թ. Զեղնդանէ, զպճեղէ, զեղջերէ և զատամանց, և զնոցին ընդ ոսկերաց պատկանաւորութենէ։

Գլ. Ժ. Զհերաց, և զայնց, որք լցուցանեն զփոխանակն հերաց։

Գլ. ԺԱ. Զհերաց և զմորթոյ, և զնոցունց, որոց հերք և մորթիկ (sic)։

Գլ. ԺԲ. Զթեպրոց թռչնոց և զփոխմանէ նոցին, և այլոց կենդանեաց, յըմպելոյ ոմանց գետոց։

Գլ. ԺԳ. Զմորթկանց արիւնային կենդանեաց։

Գլ. ԺԴ. Զփարթէ։

Գլ. ԺԵ. Զբաղարջտէ, և որպէս ծնանին խիճքն։

Գլ. ԺԶ. Զմսոյ։

Գլ. ԺԷ. Զճարպէ և զճրագուէ. և ո՞յք կենդանիք ճարպով և ո՞յք ճրագու պարարտանան։

Գլ. ԺԸ. Բիրն ամենից կենդանեաց նոյն է։

Գլ. ԺԹ. Արիւնն ամենից և՛ հասարակ և՛ հարկաւոր գոլ արիւնային կենդանեաց. և զզանազանութենէ արեանց։

Գլ. Ի. Զծծոյ, զկաթանէ, զսերէ և զպանրէ։

Գլ. ԻԱ. Զխերէ, և զսեռէ ճարակէ (sic), որ շիջուցանէ կաթն, որ և զնոյնն աճեցուցանէ։

Գլ. ԻԲ. Զծննդական սերմանէ և զբնութենէ նորին։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ։

Գլ. Ա. Զկենդանեաց, որք զուրկք են յարենէ, և զլորս սեռէ նոցին, և մանաւանդ զկակղաց։

Գլ. Բ. Զկենդանեաց, որք ծածկին խեցեմորթաւ։

Գլ. Գ. Զմասանցն կենդանեաց խեցիւ ծածկեցելոց, և որո՞վք ընդ նոսա որք ունին զարիւն, համաձայնին։

Գլ. Դ. Զկենդանեաց որք խեցիւ ծածկին, և նոցին ի մէջ ինքեանց տարբերութեանց։

Գլ. Ե. Զսեռէ ոզնեաց։

Գլ. Զ. Զվէրթիպուլաց և զմնկաց, և զբնութենէ նոյն կենդանեաց։

Գլ. Է. Զժժմա[ն]ց և զզանազանութենէ նոցին և զբնութենէ։

Գլ. Ը. Որո՞ց ի կենդանիս իցէ զօրութիւնն զգայոյ։

Գլ. Թ. Ո՞յք կենդանիք զձայն, ո՞յք զհնչումն, ո՞յք առնեն զշնչումն, և դարձեալ ո՞յք խօսին։

Գլ. Ժ. Զքնոյ և զհսկմանէ կենդանեաց, և բազումք անդր քան զմարդիս (sic) ի կենդանեաց ննջեն։

Գլ. ԺԱ. Զցեղէ արականի և իգականի, և նոցին ի կենդանիս տարբերութենէ։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

Գլ. Ա. Զբաժանմանէ ամենայն սեռ կենդանեաց։

Գլ. Բ. Ո՞րպէս իւրաքանչիւր կենդանիք եղականապէս շարազուգին։

Գլ. Գ. Ո՞րպէս ձուածին չորքոտանիքն զուգաւորին։

Գլ. Դ. Զշաղաշարութենէ նոցին, որք զուրկք են յոտից, և են երկարագոյն մարմնով, այսինքն օձքն։

Գլ. Ե. Զշարազուգութենէ ձկանց։

Գլ. Զ. Զշարազուգութենէ սեռի կակուղ ձկանց։

Գլ. Է. Զզուգաւորութենէ ձկանց խեցիւ ծածկելոց։

Գլ. Ը. Զզուգաւորութենէ ժժմա[ն]ց, և յորո՞ւմ ժամանակի ցանկական խայթն առաւել զարթուցանէ զկենդանիս։

Գլ. Թ. Ո՞ր կենդանիք մի անգամ, և ո՞րք բազմիցս ի տարւոջն ծնանին։

Գլ. Ժ. Որքանի՞ցս և յորո՞ւմ ժամանակի տարւոյն խոզնչականքն ծնանին։

Գլ. ԺԱ. Յո՞րս ամիսս ձկունքն ծնանին ըստ մեծագունի մասին։

Գլ. ԺԲ. Կակուղ սեռն ձկանց ի ձմերային ժամանակի ծնանի, բայց մելանաձուկն՝ յամենայն ժամանակս տարւոյն։

Գլ. ԺԳ. Զծնելութենէ թռչնոց, և որքանի՞ցս և յո՞ր ժամանակս ծիծեռն, ղօղազն (sic), աղաւնիքն և հաւքն ծնանին։

Գլ. ԺԴ. Զծնելութենէ կենդանածնաց կենդանեաց, և յորո՞ւմ հասակի ժամանակի սկսին, և յորո՞ւմ դադարին։

Գլ. ԺԵ. Զայնց, որք վիմական խեցիւք ծածկին, որք ամենեւին անմասն ի զուգաւորութենէ են։

Գլ. ԺԶ. Զզմնկաց և զսեռէ սունկաց կամ զթուխպաց, և որո՞վ կերպիւ ծնանին։

Գլ. ԺԷ. Զմարախաց և զժամանակէ նոցին ծննդեան, և զայլոց խեցիւ ծածկեցելոց։

Գլ. ԺԸ. Զփոլիփոսէ, զմելանաձկանէ և զայլոց ձուածու կակղաց, և զնոցին ձագուց, և զծնելութենէ։

Գլ. ԺԹ. Զայնց սեռ ժժմա[ն]ցն, որք կամ [ի] թրթրոյ, կամ ի յորդանց, կամ ի յապաւառէ ծնանին։

Գլ. Ի. Զծնելութենէ պիծակաց և զնորին ժամանակէ, յորժամ եւ սեռքն ժժմա[ն]ց բազումք կորնչին։

Գլ. ԻԱ. Զշարագուգութենէ և զծնելութենէ մեղուաց զանազան կարծիք։

Գլ. ԻԲ. Զսեռէ մեղուաց և զդրսէ նոցին, և զշինմանէ խորսխաց, և զքատոնաց, այսինքն զձագուց մեղուաց։

Գլ. ԻԳ. Զձագուց պիծակաց, և զձիապիծակաց։

Գլ. ԻԴ. Զծննդնէ ոմանց ի սեռէ բոռոմաց կամ պղոռձկաց։

Գլ. ԻԵ. Զշարապուգութենէ և զծննդենէ մրջեանց։

Գլ. ԻԶ. Զծննդենէ երկրաւոր կարճեաց (sic)։

Գլ. ԻԷ. Զսեռէ սարդից և զծննդենէ նոցին։

Գլ. ԻԸ. Զշարագուգութենէ և զծննդենէ մարախաց, և զհասակէ նոցին։

Գլ. ԻԹ. Զթրթրուց և զծննդենէ նոցին։

Գլ. Լ. Զսեռէ ճռեղկաց (sic) և զզուգաւորութենէ նոցին։

Գլ. ԼԱ. Զշաղաշարութենէ և զսեռից ոջլաց, մժեղաց, ոջլաց տախտակաց, և զիւրաքանչիւր սեռէ այսոցիկ ժժմա[ն]ց։

Գլ. ԼԲ. Զսեռէ ցեցաց (sic), որ ի յասրս գոյանայ. և զէքսիլոֆթոռաց, որ ի փայտս. նաև զմժղուկաց թզոց, զորս մոլաթզենին ծնանի։

Գլ. ԼԳ. Զծննդենէ կամ զձագուց չորքոտանեաց ձուածնաց։

Գլ. ԼԴ. Զիժէ և զծննդենէ այլոց օձից։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ։

Գլ. Ա. Ամենայն թռչունքն զձուս ածել, սակայն և զանազան ժամանակս տարւոյն, ոչ թուով հաւկթաց ամենեքին համաձայնին։

Գլ. Բ. Զընութենէ և զզանազանութենէ ձուոց ամենից հաւուց, և զծննդական սերմանէ, և զպաշտօնէ նըստելոյ ի թուխս։

Գլ. Գ. Ո՞րքան միջոցաւ աւուրց ձագն ի հաւկթոյ ծնանի. և զնորին կարգէ առեղծելութեան։

Գլ. Դ. Սեռն ագռաւեաց զերկ կամ զերրեակ հաւկիթս ածէ. և զկարգէ նորին ձաղահանութեան։

Գլ. Ե. Զբունաւորութենէ և զծննդենէ անգեղ և ծիծռանց։

Գլ. Զ. Զսեռէ արծուեաց, և զձագուց կամ զծննդենէ. և սագաց, բազէից, միլուաց գետարծուց, և զծննդենէ ագռաւուց։

Գլ. Է. Զընութենէ զուգուկան և զծննդենէ նորին։

Գլ. Ը. Զնստմանէ ի թուխս թռչնոց. յորո՞ւմ ժամանակի արուքն, դարձեալ յորո՞ւմ էգքն ի թուխս նստին։

Գլ. Թ. Զսիրամարգէ և զնորին ծննդենէ, և որքանի՞ցս ծնանին ի տարւոջն, և զքսակաց ձուանց թռչնոց, որք ի ժամանակի զուգաւորութեան մեծագոյնք եղանին։

Գլ. Ժ. Զծննդենէ ձկանց և զնորին ի մէջ նոցա զանազանութենէ և զկերպէ կամ զձեւոյ արգանդի։

Գլ. ԺԱ. Զհոսմանէ ծննդական սերման ի ձկունս յարուաց ի ժամանակի զուգաւորութեան. և ո՞րպէս տարբերին ծննդական ճանապարհքն արուաց և իգաց. և զծննդենէ խռնչականաց։

Գլ. ԺԲ. Զծննդենէ և զթուոյ ձագուց ձկանց կենդանածնաց, զդելփինոսէ, զփալենոսէ, զծովային հորթոյ և զմնացելոց, որք կետք յորջորջին։

Գլ. ԺԳ. Զծննդենէ ձուածու ձկանց, և զտարբերութենէ իգական և արական ցեղին։

Գլ. ԺԴ. Զյղացմանէ և զծնելութենէ լճական և գետային ձկանց։

Գլ. ԺԵ. Զսեռէ ձկանց, որք կա՛մ ի տղմոյ, կա՛մ յաւազոյ, կա՛մ ի փրփրոյ ծովու յանձրեւաց զարթուցեալք կամ շարժեալք գոյանան։

Գլ. ԺԶ. Զգոյացմանէ օձաձկանց։

Գլ. ԺԷ. Զարգանդէ և զժամանակէ ծննդեան ջրայնոց, և ո՞րպէս ի միմեանց ծննդեամբ զաւակաց տարբերին։

Գլ. ԺԸ. Զշարագու[գու]թենէ և զժամանակէ նորին, և զվաւաշոտութենէ չորքոտանեաց, որք ծնանին զկենդանի։

Գլ. ԺԹ. Զշաղաշարութենէ և զձագու ոչխարաց և այծեաց։

Գլ. Ի. Զշաղաշարութենէ և զձագուց շանց, և զերկարութենէ նոցին կենաց։

Գլ. ԻԱ. Զշաղաշարութենէ և զծննդենէ եզանց, և զհասակէ արուաց և իգաց։

Գլ. ԻԲ. Զշարագուգութենէ և զծննդենէ ձիանց. զկորստենէ ատամանց, և զհասակէ արուաց և իգաց։

Գլ. ԻԳ. Զշաղաշարութենէ խշոյ և զծննդենէ խշոյ, և զհասակէ արուաց և իգաց։

Գլ. ԻԴ. Զջորւոյ և զնորին շաղաշարութենէ և հասակէ։

Գլ. ԻԵ. Նշան հասակի չորքոտանեաց։

Գլ. ԻԶ. Զծննդենէ և զհասակէ ուղտու։

Գլ. ԻԷ. Զշաղաշարութենէ փղաց, և զժամանակէ, յորում կրի ի յարգանդի, և զնոցին ձագուց։

Գլ. ԻԸ. Զշաղաշարութենէ վայրենի խոզաց և զնորին ժամանակէ։

Գլ. ԻԹ. Զշաղաշարութենէ եղջերուաց, զծննդենէ և զընութենէ։

Գլ. Լ. Զարջոյ շաղաշարութենէ, զծննդենէ և զձագուց. և զընութենէ ոզնւոյ։

Գլ. ԼԱ. Զծննդենէ առիւծուց, և զթուոյ ձագուց, և զփոխմանէ ատամանց։

Գլ. ԼԲ. Զընութենէ հիենայի, և զճանապարհէ ծընընդականաց արուաց և իգաց։

Գլ. ԼԳ. Զշաղաշարութենէ և զձագուց նապաստակաց։

Գլ. ԼԴ. Զշաղաշարութենէ և զծննդենէ աղուեսու։

Գլ. ԼԵ. Զծննդենէ գայլոց, կատուաց, իքնէումոնաց, գայլոց գանարաց և գայլոց չեռվարաց։

Գլ. ԼԶ. Զջորեաց, զորս յառաջ բերէ երկիրն Ասորւոց։

Գլ. ԼԷ. Զընութենէ և զանազան սեռէ մկանց, և զթուոյ ձագուց։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ[1]։

Գլ. Ա. Զնշանաց, որք զհոմանէ սերման մանկանց, և աղջկանց արական կարողութեամբ նախականխեն։

Գլ. Բ. Զամսագլխոց կանանց։

Գլ. Գ. Զնշանացն յղացման. և ո՞րքան աւուրց միջոցաւ արուն, և դարձեալ ո՞րքան էգն ի յարգանդի շարժի. և զվիժմանց։

Գլ. Դ. Զնոցունց, որք ի յղացմանէ մինչև առ ծընունդն պատահին, և յորո՞ւմ ժամանակի ծնանին, և զո՞րքան միով ծննդեամբ կարեն ծնանիլ։

Գլ. Ե. Զլաւութենէ և զչորութենէ կաթան, և զվաղճանէ կանանցային ամսագլխոց։

Գլ. Զ. Մինչև ցո՞րքան արուաց իցէ կարողութիւն ծնանելոյ, և զնմանութենէ զաւակաց ընդ ծնողաց, կամ ընդ այլոց։

Գլ. Է. Ո՞րպէս ծննդական սերմն կազմի։

Գլ. Ը. Զանուցմանէ կենդանեաց ի յարգանդի արտակայացելոյ, և զկացութենէ մարդոյ ի նոյնում։

Գլ. Թ. Զցաւոց կանանց ի ծննդեան, և ո՞րք դիւրաւ և ո՞րք դժուարաւ ծնանին։

Գլ. Ժ. Զհոգաբարձութենէ ծնուցչաց, և զելմանէ երեխայից, զյամեցմանէ մնացութեան ոսկերաց, և զկորուսմանէ ատամանց։

Գլ. ԺԱ. Զգալստենէ կաթան ի կինն, և զվատ մազէ, և զմնացմանէ կաթան։

Գլ. ԺԲ. Երեխայքն, զի բազմիցս յառաջ քան զեօթն օր խլմամբ մեռանին։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ։

Գլ. Ա. Զզանազանութենէ գործոց, և զապրուստէ ամենից կենդանեաց։

Գլ. Բ. Զապրուստէ ջրային կենդանեաց։

Գլ. Գ. Զապրուստէ թռչնոց, և ո՞յք մսակերք, ո՞յք պտղակերք, և ո՞յք ամենակերք են. ո՞յք դարձեալ զկերակուր ի յերկրէ և ո՞յք ի ջրոց խնդրեն։

Գլ. Դ. Զապրուստէ օձից, և զայլոց կենդանեաց կեղևով ծածկեցելոց։

Գլ. Ե. Զապրուստէ գայլոյ, արջու, առիւծու, և այնց չորքոտանեաց, որք ի լճից և ի գետոց խնդրեն զկերլիս։

Գլ. Զ. Ո՞յք կենդանիք լիզելով, ո՞յք կլանելով, և ո՞յք խածնելով (sic) ըմպեն. և որո՞վք իրօք ամենայն եղջերաւորքն արածին. նաև զապրուստ խոզաց։

Գլ. Է. Որո՞վ (sic) իրօք արածին եզինքն, և զաճմանէ նոցին։

Գլ. Ը. Զկերակրոյ և զըմպելոյ ձիանց, ջորեաց և իշոց։

Գլ. Թ. Զկերակրոյ և զըմպելոյ փղին, և զհասակէ նոյնոյ և ուղտու։

Գլ. Է. Որո՞վ (cis) իրօք արածին եզինքն, և զաճկերակրին, և զպատճառէ գիրացման նոցին։

Գլ. ԺԱ. Զկերակրոյ և զըմպելոյ ժժմա[ն]ց։

Գլ. ԺԲ. Զգործոցն կենդանեաց, և զիրաց, յորս նոյնքն շրջին։

Գլ. ԺԳ. Զգործոցն ձկանց, և ոմանց երկրայնոց, որք փախչին ի ձախորդութեանց։

Գլ. ԺԴ. Յորո՞ւմ ժամանակի սեռքն ժժմա[ն]ց զինքեանս թագուցանեն կա՛մ ի տապոյ կա՛մ յուժգնութենէ ձմերայնոյ։

Գլ. ԺԵ. Զանէ օձի, որ ի ձմեռն թագչի. և զոմանց ձկանց, որք ի ձմեռն պատճառաւ ցրտութեան թագչին, որք և յամառն՝ սակս ջերմութեան։

Գլ. ԺԶ. Զթռչնոց, որք ի ձմեռն թագուցանին։

Գլ. ԺԷ. Զչորքոտանեաց, որք ի ձմեռն թագչին, և զնոցունց, որք զծերութիւնն մերկանան։

Գլ. ԺԸ. Ոչ ամենայն կենդանիք յամենայն ժամանակս աջողութեամբ զարգանան, և ո՞ր ժամանակն թռչնոց աջողակ է։

Գլ. ԺԹ. Ո՞յք կենդանիք խնդան անձրևօք, և որո՞ց վնասէ։

Գլ. Ի. Ո՞յք գետականաց և լճական ձկանց վնասեն, և որո՞վ հնարիւ այնք ըմբռնին։

Գլ. ԻԱ. Զխօթութենէ խոզաց, և զդեղոց նոցին խնդիր։

Գլ. ԻԲ. Որո՞վ (sic) խօթութեամբք ձանձրանան շունքն։

Գլ. ԻԳ. Խօթութիւն երամական եզանց։

Գլ. ԻԴ. Որո՞վ խօթութեամբ վաստակին երամական երիվարքն և ընտանեկանքն, և զնշանաց խօթութեանց և զդեղոց. նաև զմաէ ի ճակատն մտրակին, և զըմպելոյ երիվարաց և եզանց։

[1] Ձեռագրում գրված է՝ գիրք առաջին։

Գլ. ԻԵ. Էշըն միով խօթութեամբ վատակին, և ցրտութեան անհամբերք են։

Գլ. ԻԶ. Զխօթութենէ փղաց և զպատքինմանէ նոցին։

Գլ. ԻԷ. Զխօթութենէ ժժմա[ն]ց, և մանաւանդ մեղուաց։

Գլ. ԻԸ. Զտարբերութենէ կենդանեաց սակս զանազանութեան տեղեաց։

Գլ. ԻԹ. Բարքն են կենդանեաց ըստ որակութեան և որպիսութեան տեղեաց տարբերին, և թունքն (sic) օձից կա՛մ թուլագոյն կա՛մ խստագոյն եղանին։

Գլ. Լ. Յորո՞ւմ ժամանակի սեռքն ձկանց եղանին գերազանց կերակուրք։

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ։

Գլ. Ա. Զըղձից ոգւոց ամենից կենդանեաց. և զնոցունց, որք ի մէջ ինքեանց զմշտնջենաւոր թշնամութիւնս կրեն, և զպատճառէ նոցին։

Գլ. Բ. Զայնց ձկանց, որք երամարար և բարեկամարար կենցաղավարին, և որք ոչ երամարար, և թշնամիք են։

Գլ. Գ. Զսեռէ լիմար և խելաթափ ոչխարաց։

Գլ. Դ. Զընկերութենէ արջառոց, և զձիանց փոխաբերապէս ի մէջ ինքեանց սիրոյ։

Գլ. Ե. Զխոհեմութենէ եղջ[ե]րուաց ի սնուցանել զզաւակս. և զկորուսմանէ եղջերաց արուաց, և վերանորոգմանէ։

Գլ. Զ. Զոմանց կենդանեաց, զորս խոհեմութեամբ իւր բնութիւնն կացոյց։

Գլ. Է. Զայն մասանցն իմացողութեան, որով ոմանք կենդանիք զբանականութիւնն մարդկանց ներկայացուցանեն, որպէս ծիծառնք և ամենայն վայրի աղաւնեաց սեռն. և զհաւակէ աղաւնեաց, կաքաւուց և ճնճղկանց։

Գլ. Ը. Զայնց թռչնոց, որք զբոյն ոչ շինեն, և զխորամանկութենէ կաքաւուց։

Գլ. Թ. Զքաջագոյն կաչաղակէ, և զերից նոյնոյ սեռի։

Գլ. Ժ. Զխոհեմութենէ կռնկաց։

Գլ. ԺԱ. Զտանց վայրենի թռչնոց։

Գլ. ԺԲ. Զսեռից թռչնոց, որք ի ջուրս բնակին. և զբալչիտոս հաւու և զբնութենէ նորին, նաև զպատերազմէ նոյնոյ ընդ արծուոյ. և զմարտէ ընդ կռնկաց։

Գլ. ԺԳ. Զծննդենէ և զբունաւորութենէ կաչաղակաց, մէռօփաց, լուրթաց, առկաթիլոսաց և արաբիական կինամոմոնաց, և զխոհեմութենէ արագլաց և մէռօփաց ի տածել զծնողս։

Գլ. ԺԴ. Զտեսակէ, զբունաւորութենէ և զծննդենէ այլէտոնի։

Գլ. ԺԵ. Զծննդենէ և զբունաւորութենէ ոպոպին (sic), փառոսի, աթրիքափիլլոսի, սալոսի և վիրէոնոսի։

Գլ. ԺԶ. Զվէլիա թռչնոյ և զնորին գունոյ և համակէ։

Գլ. ԺԷ. Զբարուց և զբնութենէ գաճճաց, սիթթոսաց, ուլուլաց, չէոթիաց և լիկուռինաց։

Գլ. ԺԸ. Զերից առաջօլառաց սեռից, և նոցին կենացն. և զբնութենէ ֆօքաց։

Գլ. ԺԹ. Զերկու սեռից ղողաղաց (sic)։

Գլ. Ի. Զերից սեռից թռուտաց։

Գլ. ԻԱ. Զթռչնոյ անուամբ կապուտակէ և զձևոյ նորին։

Գլ. ԻԲ. Զվիրէոնոսէ և զմոլիչփիթէոս թռչնոց։

Գլ. ԻԳ. Զփառտալոսէ և զբոլլուրիանէ, և զայլոց թռչնոց, որք միշտ յայտնիք են։

Գլ. ԻԴ. Զերից սեռիցն բուոց։

Գլ. ԻԵ. Զերկուց սեռիցն արտուտկաց։

Գլ. ԻԶ. Զկալլինակոսէ և սարեկէ, և զձևոյ նոցին։

Գլ. ԻԷ. Զցինոյ և զերկուց նոցին սեռից։

Գլ. ԻԸ. Զերկուց սեռից ասիոնաց, այսինքն գիշերահաւուց։

Գլ. ԻԹ. Զձագուց գուկուկան (sic) և զխոհեմութենէ նորին։

Գլ. Լ. Զբունաւորութենէ ափոտոսի և զձևոյ քափրիմուլճոսի։

Գլ. ԼԱ. Զբունաւորութենէ ագռաւուց և զձագուց։

Գլ. ԼԲ. Զվեց սեռից արծուեաց, և զբունաւորութենէ և զորսորդութենէ նոցին։

Գլ. ԼԳ. Զչիթիրական (sic) իմերէ հաւու և զբունաւորութենէ նորին։

Գլ. ԼԴ. Զգիշերահաւուց, չիքունեաց և զոսկրաբեկաց։

Գլ. ԼԵ. Որսացումն ջրիհաւուց (sic)։

Գլ. ԼԶ. Զտասն թռոյ սեռի բաղէից։

Գլ. ԼԷ. Զհանճարեղութենէ ծովայնոց և գետայնոց ձկանց՝ բանավարութեամբ յանդորրապէս կեյոյ։

Գլ. ԼԸ. Զուշիմութենէ ժժմանց և զջանէ մրջմանց։

Գլ. ԼԹ. Զսեռէ սարդից և զնոցին հանճարեղութենէ յորսացման և առնելոյ հնարի։

Գլ. Խ. Զսեռից մեղուաց և զնոցին ջանից ի շինել զխորիսխս, և զայնց խոտոց, որովք կերակրին մեղուքն։

Գլ. ԽԱ. Զերկու սեռիցն պիծակաց և զջանէ նոցին ի շինել զխորիսխս։

Գլ. ԽԲ. Զպիծակաց ձիաստաց (sic) և զապրուստէ նոցին, և զփեթակաց։

Գլ. ԽԳ. Զսեռէ քըրմիփիլա այսինքն ապրշմագործ որդանց և ուտիճաց (sic), և զձագաւորութենէ նոցին։

Գլ. ԽԴ. Բարքն կենդանեաց տարբերին և՛ հեզութեամբ և՛ գազանաբարոյութեամբ. և զսեռէ առիւծուց և զբնութենէ, և խառնածին գայլոյ։

Գլ. ԽԵ. Զբնութենէ, զտեսակէ և զծննդենէ պօնասոսի։

Գլ. ԽԶ. Զուշիմութենէ և զխորագիտութենէ փղին։

Գլ. ԽԷ. Ուղտն ի մայրն ոչ երբեք ելանէ. և զխոհեմութենէ ձիոյ թագաւորին Սկիւթացւոց այսինքն Թաթարաց։

Գլ. ԽԸ. Զհեզութենէ, զսիրոյ և զարագութենէ տըլփինաց։

Գլ. ԽԹ. Զայնց կենդանեաց, որք զգործով առզգածին և բարուք փոխին։

Գլ. Ծ. Զայնց կենդանեաց, որք կրտմամբ կամ ներքինացուցմամբ փոխին, և որք որոճան։

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ։ Յոհաննու Բեռնարդոս Ֆելիչիանոս Թարգմանչէ։

Գլ. Ա. Զգետեղմանէ արգանդի ի կնոջ, յարմար առ յղացումն։

Գլ. Բ. Զպատճառէ դաշտանաց, զի ուղղապէս կարիցեն յղանալ։

Գլ. Գ. Ո՞րք շուրջ զբերանով արգանդին, առ ի ճանաչել զյարմարութիւնն յղացման, իցեն նկատելիք։

Գլ. Դ. Որո՞վ խոնաւութեամբ արգանդոյ կնոջ զարգարել զօլ պարտի, զի ուղղապէս յղանալ կարիցէ։

Գլ Ե. Զուլէ արգանդին. և որո՞վ կերպիւ կենդանիքն յօժար շարաշաղութեան ճանաչին։

Գլ. Զ. Զվաթմանէ, զգալարմանէ, բերանոյ արգանդին զուռուցմանէ և զնորին խցմանէ, զախտիցն արգանդին՝ արգելչաց ի նմա յղացման։

Գլ. Է. Զաննմանութենէ ի մէջ առն և կնոջ, պատճառաւ ոչ ծնանելոյ, դարձեալ զզօրութենէ և զտկարութենէ ի հոսման սերման։

Գլ. Ը. Ամենայն էգ առ առատութիւնն սերման շարաբերի։

Գլ. Թ. Զկակղէ (sic) որ ի յարգանդի ծնանի, զնորին պատճառաց և զճանաչմանէ։

7. Արիստոտէլի Զմասանցն կենդանեաց։
Էջմիածնի Կաթողիկոսարանի ձեռ. № 401, էջ 118ա—202ա։

Ձեռագրում հաջորդում է նախորդ (§ 6) բնագրին։

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն[1].

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։ Ի Թէոդորոս Գազայ Թարգմանչէ, ընդ ոճին Ավէռոսի Գոստուպէնսիոյ՝ Յակոբ Մանթինոս Սպանիացի Եբրայեցւոյ բժշկէ Թարգմանչէ[2]*։*

Գլ. Ա. Երկու գոլ խոկալոյ և ուսուցանելոյ մանաւանդական ունակութիւնն։ Զպատճառէ բնական իրաց։

Եւ որ հարկաւորութիւն ի նոսա գտանի, զորոց բազումք ընդդէմ հնագունից։

Ավէրիոս—(«Դիտաւորութիւն այսորիկ գրոց է տալ զճանապարհ և զբանաւոր կանոն...»)։

Գլ. Բ. Ընդդէմ այնոցիկ, որք զեզական սեռն բաժանեն յերկու տարբերութիւնս։

Գլ. Գ. Ընդդէմ այնոցիկ, որք զտարբերութիւնս պակասութեամբ բաժանեն։ Եւ ո՞րպէս բաժանումն եղանիլ պարտի։

Գլ. Դ. Զսեռէ և զտեսակէ։

Աւէրիոս—(«Երրորդ խնդիրն կարօտի մեծի խոկման, զի ճանապարհ, յորում պարտի մտանել դատողն այսորիկ գիտութեան...»)։

Գլ. Ե. Զբնական գոյացութեանցն մասն ինչ մահկանացուածոց (sic), մասն ինչ անմահականաց. և զորոց ընձեռելի է։

Աւէրոս—(«Այլ զկնի այսորիկ խոստանայ զեկուցանել զայսոսիկ իրս...»)։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։ Ընդ մեկնութեանն Աւէրիոսի։

Գլ. Ա. Զերրեակ գոլոյ բաղադրութենէ ամենից իրաց. և զգործւոյ զգայութեան և շօշափման. նաև զսկզբէ կենդանեաց։

Դիտաւորութիւն Աւէրիոսի՝ ճետևյալ գրեանց — 1. («Մինչ արդէն ի նախկին գրեանս այսորիկ գործոյ փիլիսոփային ընձեռեաց զնմանական և զգործիքական անդամոց, յորոց մարմինքն կենդանեաց կայանան...»)։ 2. Զմսոյ («Զի ի տրամադրութենէ մսոյ իմանիլ կարէ...»)։

Գլ. Բ. Նմանական մասանց ոմանք կակուղք և խոնաւք, ոմանք չոր և հաստատք են. և զտարաձայնութենէ նմանական կարգացն. և զընդունմանցն ջերման և ցրտոյ, և զնոցին առաւելութեանցն։

Աւէրիոս—(«Եթէ այնք ուրեմն, զորս զմսոյ մեկնեցաք, այսպէս զինքեանս ունին, ճարկաւորապէս ճետևի թէ մնացեալ նմանական մարմինքն կենդանեաց սակս միոյ երկուց նոցին ներգոյ...»)։

Գլ. Գ. Վիճաբանութիւն զչորոյ և զխոնաւէ. և որքան բազում զարենէ։

Գլ. Դ. Զմդեաց (sic), և ո՞րք կենդանիք ի նոցանց զուրկք են. և զպատճառէ երկիւղի, և զբնութենէ շարաւոյ։

[Աւերիոս]—Զարենէ։

Գլ. Ե. Զիւղոյ կամ զճարպէ և զճրագուէ, և զտարբերութենէ նոցին. և ո՞յք կենդանիք զիւղ, և ո՞յք դարձեալ զճրագու ունին։

Աւէրոս—Զիւղոյ և զճրագուէ («Խօսիմք զիւղոյ և զճրութենէ, որոց բնութիւնքն տեսանին նոյնով սեռիւ...»)։

Գլ. Զ. Զի՞նչ է ծուծն, և որո՞ց կենդանեաց տրեալ իցէ, և որո՞ց՝ ոչ։

Աւէրիոս—Զծծոյ ոսկերաց («Ասեմք, թէ ծուծն ոսկերաց է ի սեռէ արիւնականի աղբոյ եփեցելոյ...»)։

Գլ. Է. Զյուղեղէ և զբնութենէ նորին, և զհոսմանցն գլխոյ, և զպատճառէ քնոյ։

Աւէրիոս—1. Զյուղեղէ («Ասեմք, թէ բնութիւնն յուղեղին, ոչ է ի բնութենէ ծծոյ ոսկերաց...»)։ 2. Զկար-

1 *Արիստոտելի գլուխներից զանազանելու նպատակով՝ Ավերրոյեսի մեկնությունները նշում ենք արամյան տառերով։ Վերջինիս անունը ձեռագրի լուսանցներում է գրված միշտ* (Աւերիոս, Աւէրիոս, Ավերիոս, Աւէրոս, Աւէռոս), *բայց երբեմն նաև չի նշանակված. այդպիսի դեպքերում մենք նրա հեղինակությունը ճշտել ենք լատիներեն հրատարակությունների հիման վրա։ Ավերրոյեսի գլուխները միշտ չէ, որ խորագիր ունեն. այդ պատճառով մեծ մասամբ բերում ենք նաև նրանց սկզբնատողերը՝ փակագծերում։ Երբեմն Ավերրոյեսի մի քանի գլուխներ իրար են հաջորդում. այդ դեպքերում մենք այդ միավորները համարակալել ենք արաբական թվանշաններով, որպեսզի պատկերը լինի պարզ։*

2 *Թարգմանիչներին վերաբերող այս նշումը սխալ է տեղադրված։ Դա պատկանում է «Զմասանց կենդանեաց»-ի բոլոր՝ Ա—Դ գրքերին։ Թեոդ. Գազան* (Th. Gaza) *Արիստոտելի հունարեն բնագիրն է թարգմանել լատիներենի. իսկ Հակ. Մանտինոսը* (Iacbus Manfinus) *Ավերրոյեսի մեկնությունների է արաբերենից թարգմանել լատիներենի։*

կատմանց («Արդ կարկատմունքն գլխոյ եղեն ի պատճառս և ի շնորհ գլխոյ...»)։

Գլ. Ը. Զմսոյ կամ զայնց, որք փոխանակ մսոյ ունեալք լինին։

Գլ. Թ. Զերակաց, զոսկերաց և զխռնչաց։

Աւէրիոս—1. Զօգնութենէ ոսկերաց («Ասեմք, մինչ արդէն մեկնեցաւ, թէ միսն է նախկին մարմին ինքեան կենդանւոյն...»)։ 2. Զխռնչականէ («Բնութիւնն խռնչին է մէջ ի մէջ ոսկերաց և մսոյ բնութեան...»)։

Գլ. Ժ. Զերկուց մասանց, յորս կենդանեաց հարկաւորքն, որովք կենդանիք են, որք զկերակուր ունեն, և որք զապաւառս արտաքսեն. և զզօրութենէ զգայութեանց և զտեղեաց նոցին ի մարմնոջ։

Գլ. ԺԱ. Զգետեղմանէ ունկանց ի չորքոտանիս։

Գլ. ԺԲ. Զճանապարհաց լսելեաց թռչնոց։

Աւերիոս—1. («Իսկոյն պատկանի ընձեռել զպաշտօնական անդամոց...»)։ 2. Զօգտակարութենէ զգայութեանց. [և զտեսանելւոյ] («Երեք զգայութիւնք, այսինքն տեսանելին, լսելին և հոտոտելին ունին զտեղի ի գլխոջ...»)։ 3. Զլսելւոյ («Իսկ գործիք լսելին եղեալ է ի յետկոյս մասին...»)։ 4. Զհոտոտելւոյ («Արդ գործիքն հոտոտելւոյ եղան ի մէջ երկուց աչաց...»)։

Գլ. ԺԳ. Սեռն մարդկանց, թռչնոց և չորքոտանեաց զաչս թարթիչօք (sic) ծածկեալ ունի, որով և իւրաքանչիւր կերպիւն նոցին թարթէ։

Գլ. ԺԴ. Ո՞յք կենդանիք զարտեւանունս ունին, և ո՞յք ի նոյնոյ զուրկք են. և զատանէ և զբաշից ոմանց կենդանեաց, և զհերաց մարդկան։

Գլ. ԺԵ. Սակս ի՞նչ պատճառաց զարտեւանունս և զթարթիչս ի կենդանիս կացոյց բնութիւնն։

Աւերիոս—Զանդամոց տեսանելեաց («Եւ գործիքն տեսութեան կենդանեաց զանազանապէս զինքեանս ունին...»)։

Գլ. ԺԶ. Ո՞րպէս ի մարդիս և ի յայլ կենդանիս բռնգունքն և շրթունքն զետեղեալք իցեն. և զպաշտօնէ շրթանց և բռնգաց։

Աւէրիոս—1. Զգործեացն հոտոտելեաց («Այս գործիս զանազան կերպիւ գտանի...»)։ 2. Զշրթանց («Արդ շրթունքն զետեղեալք են ի ներքոյ բռնգաց...»)։

Գլ. ԺԷ. Զլեզուէ և զնորին զետեղմանէ, և զզանազանութենէ յիւրաքանչիւր կենդանիս։

[Աւերիոս]—Զլեզուէ։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։ Ընդ մեկնութեան Աւերիոսի։

Գլ. Ա. Զկարգէ և զկացուցմանէ ատամանց, բերանոյ և երեսաց. և զնոցունց յամենայն կենդանիս զանազանութենէ։

Աւէրիոս— 1. («Սկսի Արիստոտէլ յայսմիկ գրքոջ պատմել զբնութենէ ատամանց և բերանոյ...»)։ 2. Զբերանոյ («Բերանն ստեղծաւ վասն չորից օգտութեանց...»)։

Գլ. Բ. Զկացուցմանէ եղջերաց, և ո՞րք կենդանիքն ունին զեղջիւրս, դարձեալ ո՞րք ի նոցունց զուրկք են։

Աւերիոս—Զեղջերաց և զօգնութենէ նոցին («Կենդանիքն վասն այնորիկ ունին զեղջիւրս...»)։

Գլ. Գ. Զպարանոցէ, զորկորոյ և զպկէ կամ զկենակրէ, և զնոցին պաշտօնէ ի մարմինս կենդանեաց։

Աւէրիոս—Զպարանոցէ («Տրեցեալ է պարանոց կենդանեաց զբոք ունողաց...»)։

Գլ. Դ. Զէութենէ սրտին և զնախագահութենէ, և վասն ո՞յր պատճառի ի կենդանիս եղեալ է։

Աւերիոս—1. Զանդամոցն մարմնոյ («Ասեմք, թէ այսորիկ անդամքս ներ զոն յարիւնային կենդանիս...»)։ 2. Զսրտէ («Ասեմք, թէ մինչ արիւնն է ի հարկաւորութենէ սնուցման կենդանեաց...»)։

Գլ. Ե. Զերակաց և զտեղեաց նոցին ի մարմինս այնոցիկ կենդանեաց, որք կազմեալք են արեամբ։

Աւէրիոս—(«Այլ զի եցոյց նա, թէ երակունքն ստեղծեալք իցեն ի մարմնոջ...»)։

Գլ. Զ. Զթոքէ և զտեսակէ նորին. դարձեալ յո՞րս ներագնի, և յո՞րս ոչ։

[Աւերիոս]—Զթոքէ։

Գլ. Է. Զտեսակէ փորոտեաց և զտեղւոյ նոցին ի մարմնոջ կենդանեաց, և զպաշտօնէ. իսկ մանաւանդ զլերդականէ և զփայծեղէ։

Աւէրիոս—1. Զլերդէ («Ամենայն արիւնային կենդանիքն ունին զարիւն...»)։ 2. Զփայծեղէ («Փայծեղն ի հաղորդօղ կենդանիս նա տեսանի զետեղիլ...»)։

Գլ. Ը. Որո՞ց կենդանեաց տրեալ իցէ բաղաբուշտն. և զպաշտօնէ նորին և զետեղմանէ ի մարմինս կենդանեաց։

Գլ. Թ. Զերիկամաց և զպաշտօնէ նոցին, և որո՞ց կենդանեաց տրեցեալք են։

Աւէրիոս—Զերիկամաց և զբաղաբշտէ («Զերիկամունս ունին ամենայն կենդանիք...»)։

Գլ. Ժ. Զթիւրահակ կամ զխոտորնակ ցանկապատ[է] կամ զփորոտական (sic) զօտեաց, և զպաշտօնէ նոցին։

[Աւերիոս]—Զխոտորնակ ցանկապատէ։

Գլ. ԺԱ. Զմորթնկանց և զպաշտօնէ նոցին։

Գլ. ԺԲ. Ոչ ամենայն փորոտիք յամենայն կենդանիս ներգոյ։

Գլ. ԺԳ. Տարբերութիւն փորոտեաց ի մսոյ։

Աւէրիոս—Զմորթնկանց («Ընդհանրապէս մորթիկքն...»)։

Գլ. ԺԴ. Զփորոտւոյ և զորովայնէ, և զպաշտօնէ նոցին և զտեղւոյ եփման։

Աւերիոս—1. Զորովայնէ («Որովայն եղեալ եղև ի կենդանիս...»)։ 2. Զփորոտեաց («Գտանի մեծ տարբերութիւն ի փորոտիսն կենդանեաց...»)։

Գլ. ԺԵ. Ո՞յք զմակարդ ունին, ո՞յք ոչ, և զտեղւոյ նորին։

Աւերիոս—Զմակարդէ («Արդ ունին զմակարդ...»)։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ։ Ընդ Աւերիոսի մեկնութեան։

Գլ. Ա. Աղիքն և որովայնն, և այլք ի վերոյ մեկնեալք ի ձուածու չորքոտանիս և ի նոսա, որք զուրկք են յոտից, նոյնով կերպիւ ունեալք լինին, և յայլ ոմանս տարբերին։

Աւերիոս—(«Մինչ Արիստոտէլ պատմեաց զանդամոցն կենդանեաց կենդանածին արիւնայնոց...»)։

Գլ. Բ. Սակս ո՞յր պատճառի ոմանք ի կենդանեաց զլեղի ունին, և ոմանք ոչ։

Աւերիոս—Զլեղւոյ կամ զմաղձէ («Տրեցեալ է լեղին արիւնային կենդանեաց...»):

Գլ. Գ. Զփարթէ, և զսկզբէ նորին և զպաշտօնէ։

Ավերիոս—Զփարթէ («Փարթն է մորթիկ ճարպական...»):

Գլ. Դ. Զկաթանց և զծագմանէ նոցին, և սակս որո՞յ պատճառի կազմեալ արեամբ կենդանեաց արեցեալք իցեն։

Աւէրիոս—Զկաթանց («Միջոց փորոտեաց կամ կաթանց յայտնի օգտութիւնն է ...»):

Գլ. Ե. Կակուղքն, մաշկեղէնքն, խեցեղէնքն և ժժմա[ն]ց սեռն՝ ամենեւին ի վերոյասացեալ անդամոց զուրկք են. և զնոցունց, որք փոխանակաւ նոցին սպառազինին։

Աւէրիոս—1. Զկակղաց, մաշկեղինաց, խեցեղինաց և զսեռէ ժժմանց («Ասեմք, թէ ով ոք սեռ կենդանեաց...»): 2. Զխեցեղինաց կակղաց կամ կենպատրաց («Խօսեսցուք այժմ զօգտութենէ ներքին անդամոց...»): 3. Զկարծր խեցեղինաց («Երրորդ կամ չորրորդն այսոցիկ սեռից...»): 4. Զժժմանց («Արդ չորրորդ սեռն այսոցիկ, որ է ժժմանց...»):

Գլ. Զ. Զարտաքին մասանցն սեռի ժժմանց. և ի մէջ ինքեանց զնոցին տարաձայնութենէ։

Աւերիոսի—Զարտաքին մասանցն ժժմունք կենդանեաց («Եւ ասեմք, թէ մինչ այսպիսի սեռս ունի...»):

Գլ. Է. Զարտաքին մասանցն խեցեղինաց։

Աւերիոս—Զխեցեմորթաց («Ասեմք, թէ մարմինքն այսոցիկ կենդանեաց ոչ ունին զբազում մասունս...»):

Գլ. Ը. Զարտաքին մասանցն մաշկածածկեցելոց։

Աւերիոս—Զմաշկականաց կամ մաշկօք ծածկեցելոց և կամ զկլեփականաց (sic) («Խօսեսցուք այժմ զարտաքին անդամոց կակուղ մաշկականաց...»):

Գլ. Թ. Զարտաքին մասանցն կակուղ կենդանեաց և զուրկ յարենէ։

Աւերիոս—Զկակղաց («Խօսեսցուք զարտաքին անդամոցն չորրորդ սեռի...»):

Գլ. Ժ. Զարտաքին կենդանածին կենդանեաց և արեամբ կազմեցելոց մասանց, և զտարբերութենէ նոցին մարդոյ այնց։

Աւէրիոս—1. Զարտաքին անդամոցն արիւնային կենդանեաց («Ասեմք ուրեմն, թէ ամենայն արիւնային կենդանի...»): 2. Զկրծոյ («Կուրծք մարդոյն է անդամ միջելով...»): 3. Զոտից («Արդ ոտքն կենդանեաց ի մէջ ինքեանց տարբերին...»):

Գլ. ԺԱ. Զմասանցն ձուածու կենդանեաց՝ թէ՛ չորքոտանեաց, թէ՛ անոտից. և վասն ո՞յր պատճառի այսպէս ի բնութենէ արարեալք են։

Գլ. ԺԲ. Զարտաքին մասանցն թռչնոց և զնոցին տարբերութեանց, և սակս որո՞ց պատճառաց ի բնութենէ եղեալք են։

[Աւերիոս]—Զթռչնոց:

Գլ. ԺԳ. Զարտաքին մասանցն ձկանց, և զպատճառաց, թէ ընդէ՞ր այսպէս ի բնութենէ կացուցեալք իցեն։

Գլ. ԺԴ. Զջայլամանէ Աբրիկեայ (sic) և զնորին բնութենէ և ձևոյ։

[Աւերիոս]—Զձկանց[1]:

8. Արիստոտէլի Զկենդանեաց քայլմանէ[2]: Ի Նիկողայոս Թոմէոս թարգմանչէ[3]: ***Էջմիածնի Կաթողիկոսարանի ձեռ. № 401, էջ 202ա—210բ։***

Ձեռագրում հաջորդում է նախորդ (§ 7) բնագրին։

Բովանդակութիւն.

Գլ. Ա. Յառաջադրին խնդիրք զքայլմանէ կենդանեաց։

Գլ. Բ. Ոմանք ենթադրութիւնք նախադրին։

Գլ. Գ. Զանազան կենդանեաց շարժմունքն ո՞րպէս եղանին՝ բացայայտին։

Գլ. Դ. Զափակցութիւնքն, որովք կենդանիքն բացորոշիլ կարեն, են վեց, որով պայմանաւ և ինքեանս (sic) *գտանին։ Եւ զի շարժումն ես ի միում յաջոյ սկսի։*

Գլ. Ե. Որո՞վ պայմանաւ արեամբ կազմեալ կենդանիքն չորս և ոչ բազում նշանօք կամ խաղօք շարժին. և ընդէ՞ր օձքն զուրկ են [յոտից]։

Գլ. Զ. Ոտանաւոր կենդանին հարկաւորապէս զոյգ ոտս ունի։

Գլ. Է. Ամենայն տեղական շարժումն ի հանգչող կենդանիս եղանի յոմանս մասունս։

Գլ. Ը. Որո՞վ կերպիւ ճշմարիտ իցէ, թէ թռչունքն շարժին չորս խաղօք. և բազում այլ տարբերութիւնն (sic) *նոցին թռչման։*

Գլ. Թ. Ուղղագնաց կենդանեաց հարկաւորապէս գոլ երկոտանի. և զվերնագոյն մասունս մարմնոյ թեթև, և զստորնագոյնս ծանրագոյն ունիլ ըմբռնէ։

Գլ. Ժ. Զեզրափակութենէ կերպի պատմեալ քայլողաց. և այլոց պատճառաց, թէ ընդէ՞ր այսպէս եղեալ իցէ, և՛ ի մարդն և՛ ի չորքոտանիս, առնշանագրումն։

Գլ. ԺԱ. Մինչ չորս կերպք են խաղից, ոմամբք չորքոտանիքն, և որով[ք] մարդիկքն շարժին. և փոխեալ խաղից օղուածոց (sic) *ի մարդիս բացայայտութիւնն։*

Գլ. ԺԲ. Չորքոտանիքն և բազմոտանիքն զյետադէմսն առ յառաջադէմս տրամագծիւ շարժելով ընթանալ, և ոչ այլ պայմանաւ յարմարապէս ընթացումն ի նոցունց եղանիլ կարէ։

Գլ. ԺԳ. Թռչունքն, որպէս չորքոտանիքն, զարունկս շարժեն։

Գլ. ԺԴ. Զթևոց, զլողարանաց, և զմաշկաթևոց զնոսա ունողաց ի ծննդենէ։

---

1 *Ավերրոյեսի այս գլուխը վերաբերում է Արիստոտելի ԺԳ և ԺԴ գլուխներին՝ միաժամանակ, և խոսում է թե՛ ձկների մասին, թե՛ ջայլամի։*

2 *Ձեռագրում՝* գայլման:

3 *Նիկողայոս Լեոնիկոս Թոմեոսը* (Nic. Leon. Thomaeus) *«Զկենդանեաց քայլմանէ»-ն հունարեն բնագրից լատիներենի է թարգմանել։*

Գլ. ԺԵ. Զթիւր զետեղմանէ և դարձմանէ սրնկաց ոմանց չորքոտանեաց:

Գլ. ԺԶ. Զզանազան ընթացմանէ չորքոտանեաց[1]*:*

Գլ. ԺԷ. Զձևոյ ճնճղկական ձկանց, և հարթահաւասարաոտ (sic) շարժմանց թռչնոց:

Գլ. ԺԸ. Զերկրայութենէ և գլուծմանէ շարժական ոստոէւց:

9. Արիստոտէլի Զհոգւոյ գիրք երեք: Ընդ մեկնութեանցն Աւերիոսի, և հնագոյն թարգմանութեանն ածեալ յամբողջութիւն իւր: Առակցի այսոցիկ նոյն գրեանցն Արիստոտէլի նոր թարգմանութիւնն, ըստ ճշմարտութեան յունականին, և ի պէտս ուսումնասիրաց յարմարեալ և տրամադրեալ ի Միքայէլ Սոփիանոս թարգմանչէ: Առակցեցուք ևս Մարկոսի Անտոնի Փասսերինի վիճաբանութիւնն յընթերցուածոց նորին ծաղկաքաղեալ, յորում զկարգէ այսոցիկ գրեանցն Հոգւոյ, թէ զկարգէ մնացեալ բնականացն քննէի: Ի Վնէժում, առընթեր Իւնթոսաց, 1574: *Էջմիածնի Կաթողիկոսարանի ձեռ. № 401, էջ 210բ—217բ:*

Ձեռագրում հաջորդում է նախորդ (§ 8) բնագրին:

Թարգմանությունը մնացել է թերի և կամ ընդօրինակությունն անավարտ է մնացել այս ձեռագրում: Վերոնշյալ անվանաթերթը բառացի թարգմանությունն է լատ. հրատարակության անվանաթերթի[2]*: Նրան հաջորդում են հունարեն բնագրի լատիներեն թարգմանող Միքայել Սոփիանոսի ձոն-նամակը, 7 հուլ. 1552 թ., ուղղված առ կարդ. Փրանկ Գոնզագացի (էջ 211ա—213ա) և Մարկոս Անտոնիոս Պասսերոսի ուսումնասիրությունը՝* «Զկարգէ բնական գրեանցն վիճաբանութիւն Արիստոտէլի»[1] *(էջ 213բ—216ա): Ապա լրիվ տրված է* «Ցանկ գլխոց երից գրեանցն Հոգւոյ» *(էջ 216բ—217բ). բայց* «Զհոգւոյ» *երկի բնագիրը բացակայում է:*

[1] *Ուղղելի՝* բազմոտանեաց *(multipedum):*

[2] Aristotelis De Anima libri tres. Cum Averrois commentariis et antiqua translatione suae integritati restituta. His accessit eorundem librorum Aristotelis noua translatio, ad Graeci exemplaris veritatem, et scholarum usum accomodata, Michaele Sophiano interprete. Adiecimus etiam Marci Antonii Passeri Ianuae disputationem ex eius lectionibus excerptam, in qua cum de horum de Anima librorum ordine, tum reliquorum naturalium serie pertractatur, Venetiis, apud Iuntas, M. D. LXXIIII.

10. Հաւաքումն նշանաւոր բանից ոմանց ի բնաբանական գրեանց Արիստոտէլի. «Դրութիւնք՝ ի գիրք 1, գլուխ 1: Ի բնաբանականս սկսանելի է ի սկզբանց...», *տես՝ «Էֆիմ. 1752», էջ 310—331:*

Բովանդակություն.

ԴՐՈՒԹԻՒՆՔ, ի գիրք 1, գլուխ 1.

—Սահման և համար սկզբանց:

—Սահման առաջին նիւթոյն:

—Յայտնութիւնք նախկին նիւթոյ:

—Սահման գոյական տեսակի:

—Բաժանումն մարմնոց:

—Տարբերութիւն բնականաց [և] արուեստականաց:

—Սահման և բաժանումն բնութեան:

—Որոշումն բնաւորացն:

—Որոշումն այնոցիկ որք ի բնութենէ:

—Սահման պատճառից:

—Սեռք պատճառից:

—Յատկութիւնք պատճառից:

—Բաժանմունք պատճառից:

—Բաժանմունք՝ ի գիրք 2, գլուխ 5:

—Սահման բախտի:

—Որոշումն այն որ վայրապար է:

—Սահման ցուցոյ:

—Դրութիւնք, ի գիրք 4, գլուխ 1:

—Սահման շարժման:

—Սահմանք անբաւի:

—Սահման անբաւի զօրութեամբ:

—Սահման անբաւի (sic):

—Բաժանումն տեղւոյ:

—Յատկութիւնք տեղւոյ:

—Սահման տեղւոյ:

—Սահման դատարկի:

—Սահման ժամանակի:

—Յատկութիւնք ժամանակի:

—Բաժանմունք՝ ի գիրք 5, գլուխ 1:

—Բաժանումն փոփոխելոցն:

—Որոշումն բնական շարժման, և բաժանումն:

—Զի՞նչ է ի միասին՝ որոշաբար՝ և այլք:

—Բաժանումն միութեան շարժման:

—Սահման ներհական շարժմանց:

—Սահման շարունակի:

Ի ԳՐՈՑ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻՑ.

—Սահման և բաժանումն շարունակի:

[1] *Ուղղելի՝* «Զկարգէ բնական գրեանցն Արիստոտէլի վիճաբանութիւն» (De ordine librorum naturalium Aristotelis disputatio):

—Ստորադրութիւնք՝ ի գիրք 1, գլուխ 2։
—Բաժանումն պարզ շարժման։
—Բաժանումն ուղղական շարժման։
—Սահման պարզ մարմնոյ։
—Սահմանք ծանրի և թեթևոյ, ծանրեղի և թեթևեղի։
—Ստորադրութիւնք՝ ի գիրք 1, գլուխ 8։
—Սահման լքման կամ դանդաղման։
—Զանազանութիւնք դրութեանց և սահման նոցա։
—Որպէս այսօրէկ զանազանութիւնք յարմարին երկնից։
—Ստորագրութիւն աստեղն։
—Սահման տարեր։

Ի ԳՐՈՑՆ ՎԱՍՆ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ.

—Սահման այլայլման։
—Սահման լինելութեան։
—Սահման սնդեան։
—Սահման աճման։
—Յատկութիւնք աճման։
—Յատկութիւնք կերակրոյ։
—Յատկութիւնք առնողին, և կրողին։
—Սահման խառնակման։
—Սահման նախնական որակութեանց։
—Յատկութիւնք տարերաց։

Ի ԳՐՈՑՆ ՄՆԵԼՈՑՆ ՅՕԴՆ.

—Սահման շոգեաց և գոլորշեաց։
—Սահման հրեղէն ծիածանդից։
—Սահման ջրեղէն ծիածանդից։
—Սահմանք հողեղէն ծիածանդից։
—Բաժանումն հողմանց։
—Սահմանք յօդային ծիածանդից, կամ երևեալ յօդն երևակայմանց։

Ի ԳՐՈՑ ՎԱՍՆ ՀՈԳՒՈՅ.

—Սահման ոգւոյ։
—Սահման կենդանածնութեան։
—Սահման պայծառի։
—Սահման լուսոյն։
—Սահման գունոյ։
—Սահման հնչման։
—Սահման ձայնի դարձելոյ։
—Սահման ձայնի։
—Սահման հոտոյ։
— Սահման համոյ։
—Սահման զգալեաց։

Այլ տպ.— Հաւաքումն են. «Դրութիւնք...», տես՝ «էֆիմ. 1772», էջ 315—336։

Այլ տպ.— Հաւաքումն են. «Դրութիւնք...», տես՝ «էֆիմ. 1796», էջ 315—336։

Այլ տպ.— Հաւաքումն են. «Դրութիւնք ...», տես՝ «էֆիմ. 1798», էջ 333—357։

11. Համառօտ բնազննութիւն մարդկային մասանց, հաւաքեալ ի գրեանց Արիստոտէլի, և յայլոց հեղինակաց, առ ի ճանաչել զբնական բարս, և զյօժարութիւնս նոցին. «Յաղագս գլխոյ: Գլուխ՝ որ է սլուր դէպ ի գագաթն. նշանակէ զկայունութիւն, զհաստատութիւն, զանուսումնականութիւն, զնախանձոտութիւն, և զանպատկանութիւն առ իմաստս: Գլուխ՝ որ է մեծագոյն քան զպատկանն. նշանակէ զտգիտութիւն և զյիմարութիւն...», տես՝ «էֆիմ. 1752», էջ 166—183։

Բովանդակութիւն.

Յաղագս գլխոյ։
Յաղագս ճակատու։
Յաղագս յօնից։
Յաղագս երեսաց։
Յաղագս աչաց։
Յաղագս ռունկան։
Յաղագս ականջաց։
Յաղագս բերանոյ և շրթանց։
Յաղագս լեզուի և ատամանց։
Յաղագս ծնօտից։
Յաղագս հերաց, թէ գլխոյն և թէ ծնօտից։
Յաղագս ձայնի։
Յաղագս պարանոցի։
Յաղագս թիկանց, լանջաց, ստեանց և որովայնի։
Յաղագս բազկաց։
Յաղագս ձեռաց, մատանց և եղնգաց։
Յաղագս սրունից և ոտից։
Յաղագս գունոց մարմնոյ։
Յաղագս կանոնաց բնազննելոյ։

Այլ տպ.— Համառօտ բնազննութիւն են. «Յաղագս գլխոյ...», տես՝ «էֆիմ. 1772», էջ 179—196։

Այլ տպ.— Համառօտ բնազննութիւն են. «Յաղագս գլխոյ...», տես՝ «էֆիմ. 1796», էջ 179—195։

Այլ տպ.— Համառօտ բնազննութիւն են. «Յաղագս գլխոյ...», տես՝ «էֆիմ. 1797», էջ 145—159։

12. Ի Գրոց Պատճառաց Արիստոտէլի. կամ որպէս ոմանց թուի՝ Պրոկղի. «Ամենայն պատճառ նախկին՝ է՛ յաւէտաճեղ յիւր պատճառելին. քան թէ՝ պատճառ երկրորդ ընդհանուր...», հետևյալ հրատ. մեջ. «Գրգուկ որ կոչի Պատճառաց, որ է մասն ինչ ի գրոց պատճառացն Արիստոտէլի, կամ որպէս ոմանք կարծեն՝ Պրոկղի իմաստասիրի», Կ. Պոլիս, տպարան Բարսեղյան Գաբրիելի, 1750։

Տես՝ ՊԱՏՃԱՌԱՑ ԳԻՐՔ։

13. Արիստոտելի Համառօտ ստորոգութիւնք ի բնութիւն մարդոյն. «Հրց. Դու ճանաչականագո՞յն ես, եթէ կենդանի: Պտ. կեն-

դանի, վասն զի որ ինչ ես՝ և կենդանին, այլ ոչ որ ինչ կենդանին՝ և ես...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1746, էջ 158ա—159բ։

Սույն օրինակը ԺԳ դարի ձեռագիր է. տես նաև նույն մատ. ձեռ. № 1686 (էջ 271բ), № 1739 (էջ 330ա), № 1740 (էջ 407ա) և № 1744 (էջ 365ա), որոնք բոլորն էլ ԺԷ դարից են և կրում են «Հարցումն յԱրիստոտէլէ» խորագիրը։

14. Արիստոտէլի ասացեալ առ թագաւորն, թէ վեց են սահմանք իմաստութեան. «[Առաջին] Գիտութիւն էակաց, ըստ որում էակք են: Երկրորդ գիտութիւն և մարդկայնոց իրողութեանց...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2526, էջ 164բ։

Սույն օրինակը ԺԵ դարի ձեռագիր է. տես նաև նույն մատ. ձեռ. № 267 (էջ 469ա), որը ԺԷ դարից է։ Տես գարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 956 (էջ 361ա)։

Այս բնագիրը գալիս է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկից։ Խորագրում Արիստոտելի անունը, որպես հեղինակի, չի արդարանում, որովհետև տրված վեց սահմանումներից միայն երկուսն են Արիստոտելից՝ քաղված նրա տարբեր գործերից. մյուս չորս սահմանումներից երկուսը Պլատոնինն են, իսկ երկուսը՝ Պյութագորասինն։

15. Այս են բառասուն խրատք օգուտք և շահք հոգոյ և մարմնոյ, ասացեալ մեծի իմաստնոյն Արիստոտելի. «Առն անմտին և անզգամին հետ գինի խմելոյն՝ իմաստուն և բարեկամին հետ քարինս կրելն լաւ է: Անմտին և անզգամին, լրբին և թշնամոյն խրատ տալ[ոյ]ն՝ զբարեկամն անարգելն լաւ է: Տեղ մի գիտես, որ խօսքդ չի անցնիր...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2291, էջ 67ա—69ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2939՝ «Մարդոյ շահաւոր խրատ որ ասացեալ է Արի[ս]տոտէլ իմաստնոյ» (էջ 274ա—274բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 286 (էջ 70բ). Լոնդոնի, Brit. Mus. Ms. Or. 6987 (fol. 253ᵛ).

⊠ Արիստոտելի անունով փոքր հատվածներ շատ են գտնվում ձեռագրերում, բայց մենք հնարավորություն չունենք ստուգելու, թե այդ հատվածները հեղինակի ո՛ր աշխատություններին են պատկանում, կամ թե՝ նրանք իսկապես Արիստոտելին պատկանո՞ւմ են արդյոք։ Մասնագետների համար կարելի է նշել, օրինակ, Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7151՝ «Արիստոտէլի յայլ գրոց» (էջ 42ա—43ա, սկ. «Բնութիւն սկիզբն»)։ № 4669՝ «Արիստոտէլի ասացուած» (էջ 79ա, սկ. «Ցանկութիւն ի լեզուջն է»)[1], № 2041՝ «Արիստոտելէս, ընդդէմ որոց ասեն՝ Աստուած զաշխարհս այսպէս առնէ» (էջ 357ա, սկ. «Թէ զոյով Աստուծոյ շարժութիւն»)[2] են։ Նույն մատ. № 3295 ձեռագրում գտնվող հատվածը՝ «ՅԱրիստոտէլէն վկայ բանիս» (էջ 378ա, սկ. «Արդ՝ պարտ է գիտել թէ խառարն չէ էութիւն»), որը պատկանում է Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ» ժողովածուին, խմբագրված է Արիստոտելի «Յաղագս գունոց» (Περὶ χρωμάτων) աշխատության հիման վրա կամ, գուցե և, վերցված է իմաստասիրական կամ աստվածաբանական մի որևէ երկից և կամ, գուցե, Արիստոտելի երկերին նվիրված մի որևէ մեկնողական աշխատությունից, որը մեզ անծանոթ է առայժմ։

Անդրեաս Բյուզանդացու անունով հայտնի աստղաբաշխական գրվածքի («Խրատ Անդրիասի իմաստասիրի գիտնականի ասացեալ, որ ի յերկինս լինի չար և բարի») որոշ գլուխներ, ըստ Երևանի Պետ. Մատ. № 35 և Թբիլիսիի Պետ. Թանգարանի հայ. № 15 ձեռագիր օրինակների, կրում են Արիստոտելի անունը. այսպես՝ «Յաղագս խառարման արեգականն և լուսնին, ասացեալ մեծ իմաստնոյն Արիստոտելի» (կամ «Յաղագս խաւարման արեգական և լուսնի երկոտասան կենդանակերպիցն. սոքա են ասացեալ մեծի իմաստնոյն Ճերպերոսի և Արիստոտելի և

1 Նույնը տես նաև Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 240 (էջ 200)։

2 Սույն հատվածը գտնվում է և Անանիա Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից թէ ո՛րպէս իմաստասիրացն բնեցաւ» աշխատությանը կցված, տես նույնի հրատարակությունը՝ «Անանիայի Շիրակունւոյ համարողի մատենագրութիւնք», Երևան, 1943, էջ 322։

Պտղեմիոսի իմաստնոյն»), «Յաղագս խառնման լուսնին, ասացեալ մեծ իմաստնոյն [Արիստոտելի?]», «Յաղագս արեգականն պարունակին, ասացեալ մեծ իմաստնոյն Արիստոտելի Ճեպիմոսի» (*կամ* «... մեծ իմաստնոյն Արիստոտելի և Ճեպիմիոսի»), «Յաղագս լուսնոյ պարունակին, ասացեալ մեծ իմաստնոյն Արիստոտելի նոյն Ճեպիմոսի»[1]: *Այս նյութերը, որոնք կարող են կապ ունենալ Արիստոտելի* «Բնազննութիւն» *երկի հետ, ըստ երևույթին արաբերենից են դալիս մեջ:*

Արիստոտելից բազմաթիվ մեջբերումներ կամ մանր հատվածներ են պարունակում նաև «Բանք իմաստասիրաց»[2], «Ասացուածք խոհեմականք հնոց իմաստասիրաց բարոյականաբար»[3] *և նման անուններ կրող ժողկաքաղ երկերը, ինչպես նաև բժշկական, աստղագիտական և այլ խմբագիր երկեր:*

Արիստոտելի երկերի հուն. բնագրերի առաջին ժողովածուն հրատարակվել է 1495—1498 թթ. Վենետիկում, 5 հատորով. իսկ այնուհետև կատարվել են բազմաթիվ հրատարակություններ թե՛ լիակատար և թե՛ առանձին աշխատությունների, շատ հաճախ լատ. թարգմանությունների հետ միասին: Եթե չհաշվենք Ղուկաս Վանանդեցու և Գեորգ Պալատեցու կատարած աշխատանքները, որոնք հուն. բնագրերի վրա հիմնված սրբագրություններ էին, Արիստոտելի երկերի հայ. հին թարգմանությունները («Ստորոգութիւնք», «Պերիարմենիաս», «Յաղագս աշխարհի» *և* «Յաղագս առաքինութեանց») *նրանց հուն. սկզբնագրերի հետ համեմատելու առաջին փորձը կատարել է հայագետ Կ. Փ. Նոյմանը՝ նշելով բոլոր ուշագրավ տարբերակները,* *Nouveau Journal Asiatique*, t. III, 1829, p. 125—152, *որտեղից հրատարակվել է նաև առանձին՝* „Mémoire sur la vie et les ouvrages de David, philosophe arménien du Vᵉ siècle de notre ère“, Paris, 1829, p. 67—95. *Փ. Կ. Կոնիբիրը, սակայն, կատարել է նույն բնագրերի մանրամասն համեմատությունը, որը հրատարակվել է* „Anecdota Oxoniensia“ *մատենաշարի մեջ* (Classical Series, vol. I, part. VI), *հետևյալ խորագրով.* „A collation with the ancient armenian versions of the greek text of Aristotle's Categories“ etc., Oxford, 1892. *Այստեղ Կոնիբիրը* «Ստորոգութիւնք» *և* «Պերիարմենիաս» *բնագրերի համար (առաջինը՝ էջ 1—27 և 89—97. երկրորդը՝ էջ 28—50 և 97—106) օգտագործել է* Th. Waitz-*ի հրատարակությունը՝* „Aristotelis Organon graece“, pars I, Lipsiae, Hahn, 1844, *էջ 314—325. իսկ* «Յաղագս աշխարհի» *և* «Յաղագս առաքինութեանց» *բնագրերի համար (առաջինը՝ նախաբան էջ XXXIII—XXXIV և 51—71. երկրորդը՝ էջ 72—75) օգտագործել է* Imm. Bekker-*ի հրատարակությունը՝* „Aristotelis opera; edidit Academia Regia Borussica“ *հատորների շարքում,* „Aristoteles graece“, Berolini, G Reimer, 1831, vol. I, p. 391—401; vol. II, p. 1249—1251. *Արիստոտելի հայ.* «Գիրք բնազանցականաց»-*ի համեմատության համար տեսնել հետևյալ լատ. հրատարակությունը.* „Aristotelis VI tomus physicus“, Francofurti, apud Andreae Wecheli heredes, Cl. Marnium et Io. Aubrium, 1593, p. 3—230. *Հայ մատենագրության մեջ Արիստոտելի անունով կոչվող այլ բնագրերի համեմատության համար տեսնել արիստոտելյան հուն. սկզբնագրերի հետևյալ, ըստ ամենայնի լիակատար, հրատարակությունը.* „Aristotelis opera omnia, graece et latine“, t. I—V, Parisiis, A. Firmin Didot, 1862—1874. *Արիստոտելի երկերի հուն. սկզբնագրերի բազմաթիվ հրատարակությունների մասին տեսնել* J.-Ch. Brunet, „Manuel du libraire et de l'amateur de livres“, t. I, Paris, 1860, p. 457—479; P. Deschamps et G. Brunet, „Manuel du libraire et de l'amateur de livres“, t. I, part

---

1 *Տես և հմմտ. սաս, հտ. Ա, էջ 856, տող 30—32, 45—46. էջ 857, տող 7—10, 18—21. էջ 861, տող 11—16, 19—22:*

2 *Տես՝ «Բանք խրատուց նախնի իմաստասիրաց», Վենետիկ, 1853: (Սոփերք հայկականք, Ա):*

3 *Լույս է տեսել «էֆիմէրտէ» կոչված ժողովածուներում. տես, օրինակ, «Գրքուկ, որ կոչի էֆիմէրտէ», Աժդարխան (Աստրախան), 1796, էջ 337:*

I, Paris, 1878, p. 59—61; J. Th. Graesse, „Trésor de livres rares et précieux“, t. I, Dresde, 1859, p. 210—221.

Բ.—ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԵՐԿԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստորոգութիւն Արիստոտէլի: Նախերգան. «Արիստոտէլ Ստագիրացի էր, ի Քամշիբ գաւառէ. հօր անուն Նիկոմաքոս[1], և մօրն Պելոմպասայ: Սա Ի. ամ աշակերտեալ Պղատոնի, ոչ Պղատոնի Լիկապոլսացոյ, որոյ աշակերտ էր Պորփիւրիոս, այլ Պղատոնի Աթենացոյ[2]...: Իսկ ասելն ստորոգութիւնք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4132, էջ 69ա—80բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1931 (էջ 100բ), № 3449 (էջ 46ա) ևն:

— Նախերգան Յաղագս Պերի արմէնիաս հոռոմ լեզու, և հայերէն՝ Յաղագս Մեկնութեան. «Թէ ուսուի՞ էր Արիստոտէլ կամ յորմէ՞ նահանգէ կամ յո՞ր գաւառէ, կամ ո՞ւմ ծնողաց զաւակ կամ ո՞ւմ էր աշակերտ... այս ամենայն ի սկիզբն Ստորոգութեան գրոցն ասացեալ եղև: Այժմ այնպէս կայ առաջի այս գիրքս՝ թէ ամենայն մանկունք քերական արուեստին, որ ի վերայ բանականութեանս, որ զրուցաց քննութիւն են արարեալ, զամենայն բանին մասունք ՅԸ. են բաժանեալ ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4132, էջ 81ա—88ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1931 (էջ 112բ), № 3449 (էջ 108ա):

— Նախերգան Յաղագս աշխարհաց գրոցն Արիստոտէլի. «Աղեքսանդր թագաւոր որդի էր բնութեամբ Սոփրոնիսկոսի զօրագլխին, բայց անուամբ իւր դորդ հօրն՝ Փիլիպոսի թագաւորին: Զի ասեն թէ Սոփրոնիսկոս կախարդ էր, խաբեաց զկինն Փիլիպոսի թագաւորին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4132, էջ 88ա—91բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1931 (էջ 120ա), № 3449 (էջ 134ա) և № 8217 (էջ 4բ):

— Արիստոտէլի Յաղագս առաքինութեան գրոց նախերգան. «Ի խնդրոյ Աղեքսանդր թագաւորի պատմութիւն արարեալ վասն աշխարհի և բոլոր երկնի և երկրի, ծովու և ցամաքի, կղզեաց և այլ ամենայն տարերց, և եբեր կապեաց թէ այս ամենայն աշխարհ ի մի իրաց կու շարժին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4132, էջ 91բ—92բ:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1931 (էջ 124ա), № 3449 (էջ 144ա) և № 2361 (էջ 204ա):

— Ներածութիւն Պորփիւրի գրոցն: Նախերգան. «Պորփիւրիոս և Յամղիքոս և Քրիսաւորիէ ընկերք և աշակերտակիցք էին յԱթէնս. աշակերտք Պղատոնի, ոչ Պղատոնի Աթենացոյ որոյ աշակերտ էր Արիստոտէլ, այլ Պղատոնի Լիկապոլսացոյ...: Ըստ բազատրութեանց այլոց: Որ է Հերակլեայ ազգն. ի յայլ ազգաց որիշ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4132, էջ 66ա—69ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1931 (էջ 97բ), № 2361 (էջ 202ա) և № 3449 (էջ 36ա):

□ *Վերոնշյալ հինգ մեկնությունները պատկանում են միևնույն անանուն հեղինակին, որն արիստոտելյան երկերի մեկնություններից բացի, № № 4132, 1931, 3449 և այլ ձեռագրերում ունի նաև՝* «Սահմանք ասացեալ ի Դաւթէ: Նախերգան Սահման գրոց»:

2. Համառօտ վերծանութիւն Արիստոտէլի Ժ. ստորոգութեանց. «Ամենայն էիցս բնութիւն բարի ստեղծաւ յատեղծողէն որպէս պատմէ նախնի մարգարէն Մովսէս. և բարւոյն բարձող բնութեամբ է մարդս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3697, էջ 142բ—155ա:*

Ձեռագրում սույն բնագրին հաջորդում է Գրիգոր Տաթևացու մի աշխատությունը հետևյալ խորագրով. «Նորին Գրիգոր եռամեծի և քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի վասն զնորընծայ ի վարդապետութիւն կոչելոյ և հրաման տալոյ» *ևն (էջ 155բ—159բ, սկ.* «Հրամանն աստուածառաք որ եա առաքելոցն տէր մեր Յս. Քս., երեք իրս տեսանելի է»). *բայց մենք դժվարանում ենք այս* «Նորին»-*ի հիման վրա Գր. Տաթևացուն վերագրել վերոնշյալ մեկնությունը:*

3. Արիստոտելի տասն ստորոգութիւնք. «Գոյացութիւն, որակ, քանակ»...: Գոյացութիւն՝ արարած, իսկ որակն՝ գոյն, իսկ քա–

1 *Ձեռագրում՝* նիկոմաքա:

2 *Ձեռագրում՝* աթենացո:

նակն՝ թիւ որչափութեան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5596, էջ 229բ—231ա։*

Երևանի Պետ. Մատենադարանն այս բնագրից ունի ավելի քան 20 ձեռագիր օրինակներ, որոնցից վերոնշյալ № 5596-ը և № 5254-ը (էջ 222բ, թերի) ԺԳ դարից են. տես նաև՝ № 77 (էջ 151բ), № 101 (էջ 461բ), № 266 (էջ 86բ), № 538 (էջ 100ա), № 739 (էջ 228բ), № 1495 (էջ 150բ), № 1809 (էջ 214ա), № 1831 (էջ 109բ), № 2281 (էջ 131ա), № 2295 (էջ 127ա), № 2335 (էջ 8ա), № 3197 (էջ 167ա), № 3310 (էջ 4բ), № 3982 (էջ 349ա), № 4284 (էջ 43ա), № 4424 (էջ 29ա), № 6146 (էջ 51բ), № 7217 (էջ 64ա), № 7250 (էջ 86ա), № 8198 (էջ 115ա), № 8706 (էջ 100ա)։ Տես դարձյալ Նիկոսիայի ձեռ. № 18 (էջ 110ա). Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 248 (էջ 496). Հռոմի Bibl. Vat. Cod. Borg. Arm. 37 (fol. 3^r), Cod. Vat. Arm. 3 (fol. 462^v). *Տյուբինգենի* KUB Ma XIII 74 (fol. 41^v).

Որոշ ձեռագրերում բնագրի սկզբնատողն է՝ «Գոյացութիւն, որակ... կրել։ Գոյացութիւն՝ անձն, այսինքն էութիւն ամենայն իրաց։ Որակ՝ գոյն սպիտակ կամ սեաւ և այլն...» *կամ՝* «Գոյացութիւն, որակ... կրել։ Ունիմ ես անձն որ է գոյացութիւն։ Ունիմ գոյն սպիտակ կամ սեաւ կամ կարմիր, այս է որակ...»։

Հմմտ. նաև Հռոմի Bibl. Vat. Cod. Borg. Arm. 76: «Արիստոտելի Ժ. ստորոգութիւն» (fol. 88^v, *սկ.* «Առաջին՝ ունիմ ես անձն, որ է գոյացութիւն»);

4. Յաղագս տասն ստորոգութեանցն. «Առաջաղրեալ իրողութիւնս բաժանի եռակի. ի ստորոգութիւնս ներածագոյնք են...», *Նիկոսիայի ձեռ. № 24, էջ 124բ։*

Հմմտ. Զմմառի Մատ. ձեռ. № 194 (էջ 243ա)։

5. Մեկնութեան լուծմունք կարն. «Պերի արմէնիաս՝ Յաղագս մեկնութեան. Անալոտիկէ՝ Վերլուծական. Ապադիկտիկէ՝ Ապացուցական. Դիալիկտիկէ՝ Շարաբանական...։ Ճառեցաւ մեզ երբեմն։ Ի Պորփիւրոնի ԺԹ ճառն տես, կամ առարկութեանց. և սա նախադասութիւն ունէր...», *տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3883, էջ 345բ—350բ։*

Սույն № 3883 ձեռագիրը Երևանի Պետ. Մատ. հնագույն օրինակն է, ԺԵ դարից. տես նաև ձեռ. № 621 (էջ 407բ), № 2332 (էջ 51բ), № 2333 (էջ 52բ) և № 2334 (էջ 89ա)։

6. Ի Պէրիարմէնիաս գրոցն յարմար յաղագս աստուածաբանութեան. «Զի ի բաղադրեալ միաւորութիւնն, որ ի նիւթոյ և ի տեսակէ...», *Կեսարիայի Ս. Կարապետի վանքի նոր գրաց. ձեռ. № 44, էջ 246ա—248բ։*

7. Եւ ևս յաղագս Մեկնութեան Արիստոտէլի. «Բնութիւն է սկիզբն շարժման և դադարման։ Լինելութիւն ըստ հինգ յեղանակս շարժի՝ ըստ ձևոյ, ըստ աճման, ըստ իբացբարձման, ըստ շարադրութեան, ըստ այլայլութեան...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 112, էջ 190բ—192ա։*

8. *(Անխորագիր, սկզբից թերի)* «...ողջ ամէն ոչ մարդ. ոչ է ինքն որ ասի այն որ ոչ է ամէն մարդ, քան զայն չէ, ապոֆասիս մարդոյն մեծ կայ, այն որ ամէն ոչ ընդհանրականն նշանակէ...», *անդ, էջ 193ա—197ա։*

Վերջում՝ «Սակաւիկ ինչ ծաղկաքաղ արարաք ի ճարտասանութեան Ե. գրոցն Արիստոտելիոսի իմաստասիրի, որ կոչի Պերիարմենիաս»։

9. Լուծմունք՝ Արիստոտէլի Վասն աշխարհաց գրոց. «Իմաստուն ստորոգիչ զաշխարհն բնախօսելով՝ սկիզբն ի ճշմարտութենէ առնէ։ Քանզի ասելն թէ՝ Իսկ բազում անգամ. իսկ զստուգութիւնն յայտնէ, թէ արդար և աստուածային է իր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4268, էջ 385բ—397ա։*

Տես նաև ձեռ. № 627 (էջ 205ա), № 8503 (էջ 262ա), № 59 (էջ 242ա), № 5032 (էջ 116ա), № 1480 (էջ 43ա), № 1683 (էջ 143բ), № 1931 (էջ 58ա), № 621 (էջ 395ա) և № 1701 (էջ 126բ)։ Տես դարձյալ Նիկոսիայի ձեռ. № 24 (էջ 139բ). Զմմառի Մատ. ձեռ. № 194 (էջ 271ա). Տյուբինգենի KUB Ma XIII 74 (fol. 179^v).

Սույն ձեռագրերում բնագիրը խորագրված է ինչպես վերևում, կամ՝ «Լուծմունք՝ Արիստոտէլի Յաղագս աշխարհացն», «Լուծմունք Արիստոտէլի Յաղագս աշխարհաց», «Լուծմունք Աշխարհաց գրոցն Արիստոտելի» *և նման ձևերով։ Երևանի № 8503 և 1701 ձե-*

ռագրերում կրում է «Լուծմունք Աշխարհաց գրոց, արարեալ Դաւթի փիլիսոփայի» *խորագիրը (սկ.* «Իմաստուն ստորոգիչս զաշխարհիս բնախօսութիւն առնէ, զբանից սկիզբն ի ճշմ.»), *որ, թվում է, հիմք չունի։ Մյուս ձեռագրերում այս բնագիրը գտնվում է Վահրամ Րաբունու երկերի շարքում, բայց չի կրում նրա անունը։*

10. Յաշխարհացն լուծմունք. «Ճանաչք ասացեալ: Այսոքիկ ի պարզոյ լինին յարփոյն, զոր անտեղեակքն բոիչս ասեն աստեղաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4268, էջ 236բ-240ա։*

Սույն № 4268 օրինակը, ինչպես և Մատենադարանի № 3883 (էջ 350բ-354բ) և № 3653 (էջ 174բ—178ա) ձեռագրերը ժԸ դարից են. տես նաև նույն Մատ. ձեռ. № 621 (էջ 408բ), № 1696 (էջ 186ա), № 1697 (էջ 307ա), № 1713 (էջ 381բ), № 2332 (էջ 53բ), № 233 (էջ 92ա) և 2381 (էջ 322բ)։

Այս բնագիրը որոշ ձեռագրերում իր դիրքով մերձավոր հարաբերության մեջ է գտնվում Գրիգոր Տաթևացու և Հովհաննես Որոտնեցու երկերի հետ, բայց դժվար է նրա հեղինակությունը վերագրել մեկին կամ մյուսին։

11. Յաշխարհաց գրոցն Արիստոտէլի. «Ասէ Արիստոտել, թէ լուսաւորքն անապականք են...», *Կեսարիայի Ս. Կարապետի վանքի նոր գրաց. ձեռ. № 44, էջ 248բ—250բ։*

12. (Անխորագիր) «Որպէս ոչ հնար այլ հնար ազգ լինել: Լծ. Այնքան գեղեցիկ արար Աստուած զմարդոյս կազմութիւն, որպէս զի քան զայս այլ գեղեցիկ ոչ ոք իմանալ կարէ...», *Բեռլինի* Kön. Bibl. Ms. Or. Oct. 95, fol. 199r—238r.

Բովանդակության մասին հետևյալ տեղեկություններն է տալիս ձեռագրի նկարագրողը·

„Erklärungen von Sätzen aus den pseudo-aristotelischen Schriften, deren Gedanken zusammenhangslos gegeben und erläutert werden.— Kap. 1 ohne Überschrift, handelt vom menschlichen Körper und seinem Unterschiede von dem thierischen. Am Schlusse des Kapitels heisst es: 'Das Übrige über den Anfang und über den Ruhm Gottes und über die Prüfung der Schöpfung lassen wir weg.'— Kap. 2. Über die Seele. Eine Satzerklärung aus den Abhandlungen des Aristoteles: Περὶ ψυχῆς und Περὶ αἰσθήσεως καὶ αἰσθητῶν. Weitere Erläuterungen **1.** über die Rede, **2.** über die Begierde, **3.** über die Lust, **4.** über den Zorn, **5.** über die Angst, **6.** über die Speiselust, **7.** über die Samenlust, **8.** über die Thierkräfte, 9. über das Unbewusste und Unfreiwillige, 10. über das Freiwillige, 11. über unsere Gedanken, 12. über das Schicksal, 13. über das Schicksal der Sterne, 14. über das platonische Schicksal, 15. über die Selbstbestimmung, 16. über die Vorsehung, 17. von wem die Vorsehung ist“[1].

13. Վերլուծական Զ. գլխումն առ անսահմանելին որ յիշէ, նորա լուծումն այս է. «[Բն.] Արդ նախադասութիւն է բան յայտնօղ ինչ ըստ ումեքում: [Լծ.] Այս նախադասութեան սահմանն է, ո՛վ եղբայր. ստորասութիւնն և բացասութիւնն զօրութեամբ երող, բայց քանակն յայտնեաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2368, էջ 497ա—497բ։*

Վերաբերում է Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի» *երկին։*

14. Ի Վերլուծականացն Արիստոտելի վասն հաւաքման. «Պարտ է գիտել զի հինգ են տեսակք հաւաքմանց՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, մասնական, ք[ե]րթողական որ և առասպելական: Եւ հինգ են վասն այսր պատճառի, զի յոր անուն և դիմեն կամ ամենեին ճշմարտեն, և լինի ապացուցական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4166, էջ 249ա—250ա։*

Քաղված է Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի» *երկից։*

15. Վերլուծականէն, ի գրոցն Արիստոտէլի. «Ասէ իմաստասէրս, թէ չորք գոն տրամաբանական հնարք և են այսոքիկ. բաժանական, սահմանական, ապացուցական,

---

[1] N. Karamianz, „Verzeichniss der armenischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin“, Berl[illegible] S. 56.

վերլուծական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3982, էջ 349բ—350ա։*

Քաղված է Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» *և* «Գիրք Սահմանաց» *երկերից։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 1809 (էջ 214բ—215բ)։*

16. Գործի Արիստոտէլի կամ Ներածութիւն ի ճեմարանն փիլիսոփայութեան։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2034, էջ 1ա—57բ։*

Վերնագրին հաջորդում է ներածությունը, սկ. «Զհամառօտութիւն տրամաբանութեան զոր մեկնելոց եմք, յառաջարկեմք, որ է իբրև համբակաբանութիւն...»։

Բուն բնագրի սկ. է՝ «Վիճաբանութիւն առաջին։ Յղ. այնոցիկ որք պատկանին առ պարզ ըմբռնումն։ Գլուխ առաջին։ Թէ զինչ է քանապատիկ (sic) է եզրն»։

Գրիչն է՝ Բոնավենտուրա Ջուղայեցին։ Բնագիրը լեհերենից է թարգմանված։ Թարգմանիչը կարող է լինել Բոնավենտուրայի ուսուցիչ Հովհաննես Հոլովը։

17. Սակաւիկ մի ծաղկաքաղ արարեա՛լ ի ճառտասանութենէն ի սկիզբն չորրորդ գրոցն Անալատիկին, աւրհնեալ հոգւոյն Արիստոտէլիոսին. «Ասէ այսպէս. Առաջին պարտ է որ ասին, թե յո՛ւմ վերայ թէ ի՛նչ է մտածութիւն, որ ի վերայ ապաւտիկսիս և գիտութիւն ապաւտիկտիկաւ, և զկնի այնոր որ սահմանէ և ո՛րպէս է պրաւտասիս, և ո՛րպէս սահման։ Գիրք որ է Սինլէիզմաւ, այսինքն է մտածութիւն ժողովման։ Երեք են տեսակքն սինլէիզմաւսին՝ ապաւտիքտիկոս, վիալէքտիկոս, սաւփիստիկոս...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 112, էջ 197ա (վերջից թերի)։*

18. Սուղ ինչ մեկնութիւն արարեալ ի ներգոյութենէն Պորփիւրի. «Վարդապետական եղանակ ի չորս բաժանի՝ ի բաժա[նա]կան, ի սահմանական, ի ապացուցական, ի վերլուծական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1993, էջ 104ա—109բ (?)։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 450՝ խոր. նույն (էջ 126ա), № 2331՝ «Սուղ ինչ... ի ներգութենէն Պորփիւրի» *(էջ 136բ), № 4424՝ խոր. նույն (էջ 26ա) և № 2370՝* «Սուղ ինչ... ի ներգործութենէն Պորփիւրի» *(էջ 304բ)։*

19. Ի Սահմանացն Պորփիւրի. «Բնութիւն ասի որ ըստ բազմացն և տարբերութեանց թուով ոչ է ստորոգել, այսինքն փոխանակ տեսակին կամ սեռին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7151, էջ 29ա—32բ։*

Բովանդակություն.

Յաղագս բնութեան որ ի գոյութեան։
Յաղագս յատկի։
Յաղագս անձին և դիմի։
Յաղագս պատահման։
Յաղագս միաւորութեան։
Բայց արդ տեսցուք և յաղագս բնութեան։
Արդ տեսցուք և սակս դիմի և կերպարանի առանձնաւորութեան թէ զինչ իւրաքանչիւր։

20. Ներածութիւնք Պորփիւրի իմաստասիրի. «Ա. Զի՞նչ է հարազատն և խորթն։ Հարազատ է որ իսկապէս ինքեան է ասացեալ. իսկ խորթ է որ զայլոյ ուրուք անուն ի վերայ դնէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6031, էջ 254ա—261ա։*

Կարող է սույն մեկնության մասը լինել էջ 268ա և շար. գտնվող բնագիրը։

21. Ներածութիւն Պորփիւրի. «Վարդապետութիւն Պորփիւրի իմաստասիրի, գիտել զի՞նչ սեռ և զի՞նչ տարբերութիւն և զի՞նչ տեսակ, զի՞նչ յատուկ և զի՞նչ պատահումն։ Ու է սեռ կենդանին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2332, էջ 66ա—68բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2334 (էջ 113բ—117բ)։

22. Ներածութիւնք Պորփիւրի. «Տեսութիւն. Զի՞նչ է Ներածութիւնք Պորփիւրի։ Պտ. Ե. ձայնք են...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 37, fol. 2^{v}.

23. Լուծմունք Պորփիւրի. «Բայց երևեցաւ...: Լծ. Սեռ և տեսակ պարզաբար ոչ ասին...», *Տյուբինգենի* KUB Ma XIII 74, fol. 97^{v}—114^{r}.

24. Արիստոտելի սակաւ լուծմունք և Պորփիրի. «Հրց. Զի՞նչ է [ի] մարդումն մասն։ Պտ. Ոմն մարդ։ Հրց. Զի՞նչ է գոյացութիւն։ Պտ. Սեռն զանազանիչ, շնչաւոր և սեռակոտոր, արծուենգն և պնչատ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2273, էջ 264ա—265ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4166 (էջ 246ա)։

※ Արիստոտելի երկերի ուրիշ անանուն մեկնություններ ևս, հատկապես հատվածներ, շատ են պատահում գրչագրերում։ Վիեննայի Մխիթ. Մատ. № 112 ձեռագրում Ստորոգությանց և Պերիարմենիասի բնագրերին կից՝ Ամելախոսի և Անտոն Էրմիսի անունը կրող մեկնություններին զուգահեռ գտնվում են Արիստոտելի հիշյալ երկու աշխատությունների ուրիշ մեկնություններ, որոնք լուսանցագրությունների ձևով են գրված երրորդ սյունակի վրա (էջ 3ա—111բ և 112ա—190բ)։ Ցուցե Արիստոտելի «Յաղագս աշխարհի»-ի մի մեկնությունից է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 310, էջ 4բ—5ա հատվածը, որի սկզբնատողն է՝ «Ըղձացեալ լինի զայս ինչ»[1]։ Կարելի է մեկնողական տիպի բնագրերի շարքին դասել նաև Գրիգոր Տաթևացու մի քարոզը, որի բնաբանը Արիստոտելի «Յաղագս առաքինութեանց» երկից է վերցված՝ «Քարոզ վասն առաքինութեան, ի բանն՝ Գովելի են գեղեցիկքն և պարսաւելի են գարշելիքն, ասէ իմաստուն ստորոգիչն Ամենայն աշխարհի» (սկ. «Եւ զի ըստ Պղատոնի՝ հոգին եռամասնեալ գոլով»)[2]. այս բնագիրը ձեռագրերում հաճախ պատահում է անանուն, տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2245 (էջ 258բ) և № 641 (էջ 204բ). նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 102 (էջ 182բ)։

Արիստոտելի երկերի մեկնություններ տես նաև հետևյալ անունների տակ.

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԻԱՑԻ, «Համառօտ հաւաքումն և յօյժ օգտակար ի Դիալեկթիկայն»։

---

1 «Համառօտ թէպէտ և տեղ տեղ աղերս ունի Արիստոտէլի 'Յաղագս աշխարհի' թղթին հետ՝ որ առ Աղեքսանդր..., բայց օրինակիս շարաբանութիւնն՝ ընդհանրապէս առած՝ տպագրէն անհունս կը տարբերի և աւելի յստակ է։ Հետևաբար հատակտորս կա՛մ Ստագիրացի փիլիսոփայի յիշեալ թղթի մի աւելի հին թարգմանութիւն է, և կա՛մ,— որ ինձ աւելի հաւանական կը թուի,— անոր կամ մի ուրիշ ճառի, այն է՝ «Յաղագս նախախնամութեան» հին մեկնութեան մը մնացորդն է» են (Բարս. Սարգիսյան)։

2 Տես՝ «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն եօթնալոյս վարդապետի», Կ. Պոլիս, 1741, էջ 94—98։

ԳԱԼԱՆՈՍ (Կղեմէս), «Դրունք փիլիսոփայութեան ասացեալ ըստ Յունաց և Լատինաց լօճիգա և ըստ Հայոց թարգմանի տրամաբանութիւն որ է ներածութիւն յամենայն իմաստասիրութիւն Արիստոտէլի» և «Ի գիրս Ֆիսիկային, այսինքն Բնաբանութեան Արիստոտէլի, յաղագս սկզբանց բնական մարմնոյ»։

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, «Համառօտ լուծումն Առաքինութեանցն Արիստոտէլի», «Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի»։

Սույն հեղինակից այլ մեկնություններ տեսնել տակը՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ անվան տակ։

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ, «Ստորոգութիւնք Արիստոտէլի որ կոչի յունարէն Կատիգորիաս» (կամ «Ստորոգութիւնք Արիստոտէլի թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ»)[1], «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» (վայրապար վերագրված էլիաս իմաստասերին), «Պէրիարմենիաս Արիստոտէլի թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ»[2], «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի» (կամ «Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծականն»), «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի»։

ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ, «Նկատումն Արիստոտէլի»։

ՄԵՍՐՈՊ ԳԱՆՁԱԿԵՑԻ, «Հարցմունք պէսպէս և պատասխանիք»։

ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՈՂ, «Յաղագս Ստորոգութեան Արիստոտելի տասն բանին վերլուծութիւն»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ, «Հաւաքումն համառօտ վերլուծութեան Ստորոգութեանցն Արիստոտէլի, աշխատասիրեալ ի Գրիգորէ աշակերտէ», «Համառօտ լուծմունք Պերիարմենիաս գրոցն, հաւաքեալ ի Գրիգորէ աշակերտէ», «Համառօտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն»։

ՈԼԻՄՊԻՈԴՈՐՈՍ ԿՐՏՍԵՐ, «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի»։

ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ, «Համառօտ վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի»,

---

1 և 2 Տես նաև մեր ԱՄԵԼԱԽՈՍ և ԱՆՏՈՆ ԷՐՄԻՍ հոդվածները, աստ, հտ. Ա, էջ 644—648 և 967—968։

«Վերլուծութիւն ի վերայ գրոցն, որ կոչի Պերիարմէնիաս», «Համառօտ հաւաքումն ի վերայ Ներածութեանցն Պորփիւրոսի»։

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ, «Մեկնութիւն վերլուծութեանցն Արիստոտէլի» և «Ի Նկատմանէն Արիստոտէլի արտահանմունք ինչ բաժանեալ յերկուս գլուխս»։

ՊՈՐՓԻՒՐ ՓԻՒՆԻԿԵՑԻ, «Ներածութիւն ի Ստորոգութիւնսն Արիստոտէլի»։

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, «Համառօտ լուծմունք գրոցն Արիստոտէլի տասանց ստորոգութեանցն», «Համառօտ լուծմունք Պերիարմէնիաս գրոցն Արիստոտէլի», «Համառօտ լուծմունք գրոցն Պորփիւրի ծաղկաքաղ արարեալ ի բանից գերիմաստիցն սրբոց՝ Դաւթի անյաղթ փիլիսոփային և երիցս երանեալ Գրիգորի Տաթևացւոյն»։

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, «Լուծմունք գրոցն Մեթաֆիզիքոց Արիստոտէլի Ստագիրացւոյ»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԵԱՆ, «Ներածութիւն ի բովանդակ փիլիսոփայութիւն Արիստոտէլի»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ, «Պիտանի լուծմունք Սահմանացն և Պորփիւրին»։

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ ՍԵՒԼԵՌՆՑԻ, «Ստորոգութեանցն Արիստոտէլի լուծմունք արարեալ Վահրամայ», «Կրկին Վահրամայ է լուծմունք Ստորոգութեանցն Արիստոտէլի», «Լուծմունք Պերիարմենի», «Սկիզբն մեկնութեան գրոցն, որ ասի Պերի արմենիաս», «Լուծմունք Արիստոտէլի Վասն աշխարհաց գրոց» և «Լուծմունք Պորփիւրի» (Մի քանի տարբեր խմբագրություններով)։

Գ.—ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՄԱՍԻՆ
(Մատենագրական նյութեր)

1. Համառօտ ազդումն վասն Արիստոտէլի երկդիմի գրեանցն. «Վեհարանն Արիստոտէլ, որ էր Պղատոնի և Սոկրատի աշակերտ, մեծի Աղեքսանդրի դաստիարակ և վարժապետ, յամի ստեղծագործութեան աշխարհի 3645, յառաջուն մտօքն յաղթեալ հնոցն ամենեցուն, գրեաց նրբապէս զարտաքին և զբնալսողական գրեանս...», *տես՝ «Էֆիմ. 1752», էջ 300—301։*

Այլ տպ.— Համառօտ ազդումն են. «Վեհարանն Արիստոտէլ...», *տես՝ «Էֆիմ. 1772», էջ 306—307։*

Այլ տպ.— Համառօտ ազդումն են. «Վեհարանն Արիստոտէլ...», *տես՝ «Էֆիմ. 1796», էջ 306—307։*

Այլ տպ.— Համառօտ ազդումն են. «Վեհարանն Արիստոտէլ...», *տես՝ «Էֆիմ. 1798», էջ 322—324։*

2. (Անխորագիր) «Ստագիրացի էր Արիստոտել. ի Թիւրակայ՝ ի Քաղկիբ գաւառէ մեծ ի յՕշինըոս. որդի հօր Նիկոմաքոսի և մօրն Փեոիսդիադայ. և ամբառնայ ազգ նորա ի հօրէ և ի մօրէ յԱսկղեպիայ։ Քսան ամ աշակերտեալ Պղատոնի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2326, էջ 418։*

Արիստոտելի համառօտ կենսագրությունն է։ Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. Ձեռ. № 262 (էջ 92ա). Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. F. 7 (fol. 1r), Ms. Arm. F. 13 (fol. 221v). *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1263 (էջ 118բ). Երուսաղեմի № 401 (էջ 500), № 533 (էջ 415)։*

Տես նաև հետևյալ անունները.

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Թուղթ ԽԶ՝ «Առ աշակերտս իւր Բարսեղ և Եղիսէ յաղագս խնդրոյ գրոցն Արիստոտէլի» և Թուղթ Հ՝ «Առ Իբրահիմ ամիրայն վասն հաւատոց Գրիգորոյ որդւոյ Վասակայ ասացեալ» (տես՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 105 և 170)։

ԴԻՈԳԻՆԷՍ ԼԱՅԵՐՏԱՑԻ, «Յաղագս կենաց և ուսուցմանց և ասացուածոց գերահռչակ փիլիսոփայից»։

ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱՊԼ, Հիշատակարան Արիստոտելի Ստորոգութեանց վերջում՝ սկ. «Ո՞վ հանճարեղք յիմաստ բանիս»։ *(Տպագրված՝ Գ. Զարբհանալյան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 323—324)։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Ման.— *«Հայոց հին գրականության պատմություն», գիրք Ա, Երևան, 1944, էջ 99—202։*

Հեղինակը Արիստոտելի «Ստորոգութիւնք» *և* «Յաղագս մեկնութեան» *երկերի հայ. թարգմանության ժամանակը համարում է Ե դարի վերջերը, հիմնվելով հունաբան թարգմանությունների խմբավորումների այն սկզբունքի վրա, որ մշակել է Հ. Մանանդյանը և ընդ-*

հանրացնելով Գ. Տեր-Մկրտչյանի կողմից փաստարկված այն տեսակետը, թե արիստոտելյան երկերի թարգմանությունների ժամանակակից՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» թարգմանությունը 480—484 թթ. շրջանից է։ Աբեղյանի այս եզրակացությունն այժմ իշխում է հայ բանասիրության մեջ՝ հունաբան թարգմանությունների ժամանակագրության հարցում։

Աբրահամյան Աշ.— *«Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 167—168։*

Ակինյան Ներս.— *«Ստեփաննոս վրդ. Լեհացի»,* Հանդէս Ամսօրեայ, *1912, էջ 150 և 153։*

Ակինյան Ներս.— *«Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», անդ, 1913, էջ 246։*

Ակինյան Ներս.— *«Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերէնէ», Վիեննա, 1951, էջ 46—55։*

Արիստոտելին վերագրված «Պատճառաց» գրքի մասին է։

Նույն հատվածը տես նաև՝ Հանդէս Ամսօրեայ*-ում, 1947, էջ 154—159։*

Ակինյան Ներս.— *«Դաւիթ Հարքացւոյ թարգմանութիւնները»,* Հանդէս Ամսօրեայ, *1957, էջ 270—271։*

Նույնն է և հետևյալ գրքում.

Ակինյան Ներս.— *«Դաւիթ Հարքացի անյաղթ փիլիսոփայ. Կեանքն և գործերը», Վիեննա, 1959, էջ 160—163։*

Աղբալյան Նիկ.— *«Գրական քննադատական երկեր», Բեյրութ, 1959, էջ 362—366։*

Անասյան Հ. Ս.—*«Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը», Էջմիածին, Մայր Աթոռի տպարան, 1972, էջ 60, 80, 83։*

Գիրքը արտատպություն է Էջմիածին *ամսագրից։*

Արևշատյան Ս. Ս.— *«Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը»,* Բանբեր Մատենադարանի, *№ 4, 1958, էջ 121—137։*

Արևշատյան Ս. Ս.— *«Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում», անդ, № 6, 1962, էջ 75—96։*

Արևշատյան Ս. Ս.— *«Հայոց գրերի ստեղծման պատմական պատճառները և հին հայկական թարգմանությունները», անդ, № 7, 1964, էջ 61—73։*

Ռուս. ամփոփումը՝ С. С. Аревшатян, „Исторические причины изобретения армянского алфавита и древние армянские переводы“ *(էջ 74—75)։*

Ֆրանս. ամփոփումը՝ S. S. Arevchatian, „Des causes historiques de l'invention de l'alphabet arménien et les traductions arméniennes anciennes“ *(էջ 75—76)։*

Արևշատյան Ս. Ս.— *«Դավիթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ», անդ, № 9, 1969, էջ 7—20։*

Ռուս. ամփոփումը՝ С. С. Аревшатян, „Наследие Давида Непобедимого в новом освещении“ *(էջ 20—21)։*

Ֆրանս. ամփոփումը՝ S. S. Arevchatian, „L'héritage de David l'Invincible sous une lumière nouvelle“ *(էջ 21—22)։*

Ապացուցում է, որ Արիստոտելի «Ստորոգութեանց» *հայ. այն անանուն մեկնությունը, որը, Ա. Բոսսեի հեղինակությամբ, Էլիաս իմաստասերին էր վերագրվել Հ. Մանանդյանի կողմից, Դավիթ Անհաղթի հեղինակությունն է։*

Գաբրիելյան Հենրի— *«Հայ փիլիսոփայական մտքի պատմություն», հտ. Ա—Բ, Երևան, 1956—1958։*

Գրիգորյան Գ. Հ.— *«Վահրամ Րաբունու փիլիսոփայությունը», Երևան, 1969։*

Գրքի վերջում՝ ռուս. ամփոփումը (էջ 203—228)։

Դանիելյան Է. Լ.— *«Արիստոտելի տարրերի տեսությունը և Անանիա Շիրակացու 'Տիեզերագիտություն'-ը»,* Պատմա-բանասիրական Հանդես, *1971, № 2 (53), էջ 217—222։*

Զարբհանալյան Գար.— *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 321—324 և 707—708։*

Զարբհանալյան Գար. — *«Ուսումնասիրութիւնք» ևն։ Տես՝* **Շրումփ Գ. Ա.**։

Ծովական Ն. — *«Իմաստասիրական գրականութիւնը Հայոց մէջ Ե—ԺԸ դարերուն», տես՝* Հասկ *(տարեգիրք), Բ տարի, 1949—50, էջ 193—198։*

Կոնիբիր Փ. Կ.— *«Բննութիւնք վրաց Դաւթի Անյաղթի կամ թարգմանութեանց Արիստոտէլի» (1893 թ.)։ Տես ստորև՝* Conybeare F. C., „A collation...".

Կոնիբիր Փ. Կ.— *«Համեմատութիւն Դաւթի Անյաղթի գրեանց՝ յունարէն բնագրի հետ» (1893 թ.)։ Տես ստորև՝* Conybeare F. C., „A collation...".

Հակոբյան Վազգ.— *«Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության հայկական թարգմանության ընդարձակ բնագրերը և այդ աշխատության հայկական մեկնաբանությունները» (թեկնածուական աշխատություն, անտիպ), Երևան, 1947։*

Հարությունյան Էդ. Շ.— *«Արիստոտելի սիլլոգիստիկան Դավիթ Անհաղթի մեկնությամբ» (1973 թ.)։ Տես ստորև՝* Арутюнян Эд. Ш , „Силлогистика Аристотеля в истолковании Давида Анахта".

Ղազիկյան Արս.— *«Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 525—526 և 1330—1333։*

Մանանդյան Հակ.— *«Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ», Վաղարշապատ, 1904։*

Նախապես տպված է «Ուսումնասիրութիւն Դաւիթ Հարքացի փիլիսոփայի վերագրուած իմաստասիրական երկերի» խորագրով՝ Արարատ, *1904, էջ 158—171, 564—577 և 649—657։*

Մանանդյան Հակ.— *«Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928։*

Արտատպ. Հանդէս Ամսօրեայ-*ի 1925—1928 թթ. համարներից։*

Հայ. հունաբան թարգմանությունները խմբավորելով ըստ լեզվական ու բանասիրական հատկանիշների, հեղինակը գտնում է, որ Արիստոտելի «Ստորոգութիւնք» *և* «Յաղագս մեկնութեան» *երկերը պատկանում են այդ թարգմանությունների երկրորդ շերտին, որի ժամանակը դնում է Զ դարի կեսերից։ Արիստոտելի նույն երկերի մեկնությունների հարցում գտնելով, որ նրանք տարբեր թարգմանների և տարբեր ժամանակների գործեր են, հանգամանորեն ծանրանում է Դավիթ Անհաղթի, Էլիասի, Ոլիմպիոդորոս Կրտսերի և Համբլիքոսի հեղինակության խնդիրների վրա, ընդ որում, հետևելով Ա. Բուսսեի կարծիքին, Էլիասին է վերագրում Ստորոգությանց հայ. այն անանուն մեկնությունը (տես՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, ընծայեալ Էլիասի իմաստասիրի. ի լոյս էած Յ. Մանանդեան», Պետերբուրգ, 1911), որը հուն. մատենագրության մեջ հայտնապես Դավթի անունն է կրում։ Մանանդյանը* «Յաղագս աշխարհի» *և* «Յաղագս առաքինութեանց» *երկերի հայ. թարգմանությունները համարում է ավելի ուշ ժամանակի գործեր, առաջինի համար որոշակիորեն նշանակելով Զ դ. երկրորդ կեսը կամ Է-ի սկզբները։*

Մոմջյան Խաչիկ — *«Դավիթ Անհաղթի փիլիսոփայության գնահատման հարցի շուրջը»,* Տեղեկագիր *(ՀՍՍՌ Գիտ. Ակադ.), հաս. գիտ., 1948, № 1, էջ 79—93։*

Շրումպֆ Գ. Ա., Զարբհանալյան Գար.— *«Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յարեմտս», Վենետիկ, 1895, էջ 265—266, 278 և 357—358։*

Չալոյան Վ. Կ.— *«Վերածնության շրջանի հայ փիլիսոփայության պատմության մասին»,* Սովետական Գրականություն և Արվեստ, *1944, № 6—7, էջ 78—89. № 8, էջ 97—105։*

Չալոյան Վ. Կ. — *«Արիստոտելի Տրամաբանության հին հայկական մեկնությունը» (1946 թ.)։ Տես ստորև՝* Чалоян В. К., „Древнеармянская интерпретация Логики Аристотеля".

Չալոյան Վ. Կ.— *«Հայկական ռենեսանս», Երևան, 1964, գլ. Գ, § 2։*

Չալոյան Վ. Կ.— *«Հայոց փիլիսոփայության պատմություն», Երևան, 1975։*

Չահուկյան Գ.— *«Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)», Երևան, 1954։*

Վարդանյան Ար.— *«Հայ տարրեր Արիստոտէլի Ստորոգութեանց թարգմանութեան մէջ»,* Հանդէս Ամսօրեայ, *1920, էջ 292—295։*

Վարդանյան Ար.— *«Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի գիրս Ծննդոց», անդ, 1929, էջ 1—10։*

Խոսում է Արիստոտելի «Յաղագս աշխարհի» *երկի հայ. թարգմանության ժամանակի մասին։*

Տաշյան Հակ.— *«Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի» (Ազգ. Մատենադարան, Ե), Վիեննա, 1892, էջ 112։*

Տեր-Մկրտչյան Գալ.— *«Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896, էջ 34—35։*

Քասունի Եղիա— *«Պատմութիւն հին հայ փիլիսոփայութեան», Բէյրութ, 1959, էջ 116—118 (§ 82), 126—127 (§ 89), 128 (§ 93)։*

Аревшатян С. С.— «О древнеармянском переводе трактата Зенона Стоика 'О природе'», *Вопросы Философии*, Москва, 1955, № 1, стр. 153—156.

Аревшатян С. С.— «Трактат Зенона Стоика 'О природе' и его древнеармянский перевод», Բանբեր Մատենադարանի, *№ 3, 1956, էջ 315—322.*

Аревшатян С. С.— „Учение Григора Татеваци о душе", Տեղեկագիր *(ՀՍՍՀ Գիտ. Ակադ.), հաս. գիտ., 1956, № 7, էջ 65—79։*

Аревшатян С. С.— «Григор Татеваци — армянский философ-номиналист», *Вопросы Философии*, 1957, № 4, стр. 132—137.

Аревшатян С. С. — «Философские взгляды Григора Татеваци», Ереван, 1957.

Аревшатян С. С.— «Номинализм в средневековой армянской философии» (XXV Международный конгресс Востоковедов. Доклады делегации СССР), Москва, Изд. Восточной литературы, 1960.

Аревшатян С. С.— «Определения философии Давида Непобедимого», *հետևյալ հրատ. մեջ.* Давид Непобедимый (Анахт), «Определения философии; сводный критический текст; перевод с древнеармянского, предисловие и комментарии С. С. Аревшатяна», Ереван, 1960, стр. V—XXVII.

Аревшатян С. С.— «Иоанн Воротнеци», *հետևյալ հրատ. մեջ.* «Философская энциклопедия», т. II, Москва, 1962, стр. 304.

Аревшатян С. С. — «Исторические причины изобретения армянского алфавита и древние армянские переводы» (1964 г). *Տես վերևում՝* **Առևշատյան Ս. Ս.**, *«Հայոց գրերի ստեղծման պատմական պատճառները...»։*

Аревшатян С. С.— «Давид Непобедимый и его 'Толкование Аналитики Аристотеля'», *հետևյալ հրատ. մեջ.* Давид Непобедимый, «Толкование Аналитики Аристотеля. Сводный критический текст, перевод с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатяна», Ереван, 1967, стр. 5—35.

Аревшатян С. С.— «Армянская философия (V—XIV вв.)», *հետևյալ գրքում.* «Антология мировой философии», т. I, ч. II, Москва, 1969, стр. 630—660.

Аревшатян С. С.— «Наследие Давида Непобедимого в новом освещении» (1969 г.). *Տես վերևում՝* **Առևշատյան Ս. Ս.**, *«Դավիթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ»։*

Аревшатян С. С., Лалафарян С.— «Сочинение Иоанна Воротнеци 'Об элементах'», Բանբեր Մատենադարանի, № 3, 1956, стр. 343—352.

Аревшатян С. С., Тагмизян Н.— «Музыкальная эстетика древней и средневековой Армении», *հետևյալ գրքում.* «Музыкальная эстетика народов Востока», Москва, Музгиз, 1967, стр. 330—384.

Аревшатян С. С., Тер-Давтян К. С.— *Տես՝* **Тер-Давтян К. С.**

Арутюнян Эд. Ш.— „Силлогистика Аристотеля в истолковании Давида Анахта", Բանբեր Երևանի համալսարանի, *հաս. գիտ., 1973, № 3 (21), էջ 108—127։*

Հայ. ամփոփումը՝ էդ. Շ. Հարությունյան, «Արիստոտելի սիլլոգիստիկան Դավիթ Անհաղթի մեկնությամբ» (էջ 127)։

Григорян Г. О.— «Комментарии Ваграма Рабуни к 'Категориям' Аристотеля», *հետևյալ հրատ. մեջ.* Ваграм Рабуни, «Анализ 'Категорий' Аристотеля. Критический текст, перевод с древнеармянского, предисловие и примечания Г. О. Григоряна», Ереван, 1967, стр. V—XXIII.

Казанджян Т. Т.— «Очерки по истории химии в Армении», Ереван, 1955, стр. 23—52: «Химические понятия в армянской натурфилософии».

Манандян Я. — «Предисловие [к «Толкованию к Категориям Аристотеля“]“, *հետևյալ հրատ. մեջ. «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի. ընծայեալ Էլիասի իմաստասիրի. ի լոյս էած Յ. Մանանդեան», Պետերբուրգ, 1911, էջ I—VI։*

Мурадян П. М. — «Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке», Ереван, 1966, стр. 175—183.

Խոսում է ԺԸ դարում Արիստոտելի երկերի՝ հայերենից վրացերեն կատարված թարգմանությունների մասին։

Тер-Давтян К. С., Аревшатян С. С. — «Анания Ширакаци и его космографические труды», *հետևյալ հրատ. մեջ.* Анания Ширакаци, «Космография; перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтяна и С. С. Аревшатяна», Ереван, 1962, стр. 5—32.

Чалоян В. К. — «К вопросу об учении Езника Кохпеци, армянского философа пятого века», Ереван, 1940.

Чалоян В. К. — «Философия Давида Непобедимого», Ереван, 1946.

ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ. Խ. Մոմջյան, Տեղեկագիր *(ՀՍՍՀ Գիտ. Ակադ.), հաս. գիտ., 1948, № 1, էջ 79—83։*

Чалоян В. К. — „Древнеармянская интерпретация Логики Аристотеля“, Տեղեկագիր *(ՀՍՍՀ Գիտ. Ակադ.), հաս. գիտ., 1946, № 4, էջ 43—60։*

Հայ. ամփոփումը՝ Վ. Կ. Չալոյան, «Արիստոտելի Տրամաբանության հին հայկական մեկնությունը» (էջ 61)։

Чалоян В. К. — „Основные вехи развития философской мысли в Армении (V—XVIII вв.)“, Աշխատություններ *(ՀՍՍՀ Գիտ. Ակադ. Փիլիսոփայության Սեկտոր), № 1, Երևան, 1950, էջ 113—142*

Чалсяя В. К. — „Роль восточных народов в истории развития философской мысли“, Տեղեկագիր *(ՀՍՍՀ Գիտ. Ակադ.), հաս. գիտ., 1950, № 10, էջ 37—91։*

Հայ. ամփոփումը՝ Վ.Կ. Չալոյան, «Արևելքի ժողովուրդների դերը փիլիսոփայական մտքի զարգացման պատմության մեջ» (էջ 91—93)։

Чалоян В. К. — «Комментарии Иоанна Воротнеци к 'Категориям' Аристотеля», *հետևյալ գրքում.* Иоанн Воротнеци, «Анализ 'Категорий' Аристотеля; сводный текст, предисловие и примечания В. К. Чалояна; перевод А. А. Адамяна и В. К. Чалояна», Ереван, 1956. стр. V—XXVII.

Чалоян В. К. — «История армянской философии (Древний и средневековый период)», Ереван, 1959.

Чалоян В. К. — «Анонимное толкование 'Категорий' Аристотеля на древнеармянском языке», *հետևյալ հրատ. մեջ.* «Анонимное толкование 'Категорий' Аристотеля. Сводный текст С. П. Лалафаряна и В. К. Чалояна. Предисловие и редакция В. К. Чалояна. Перевод с древнеармянского С. С. Аревшатяна», Ереван, 1961, стр. V—XVI.

Чалоян В. К. — «Армянский ренесанс», Москва, Изд. Академии наук СССР, 1963, гл. III, § 2.

Чалоян В. К. — «Восток—Запад (преемственность в философии античного и средневекового общества)», Москва, 1968.

Arevchatian S. S. — „Des causes historiques de l'invention de l'alphabet arménien et les traductions arméniennes anciennes“ (1964). *Տես վերևում՝* **Արեվշատյան Ս. Ս.**, *«Հայոց գրերի ստեղծման պատմական պատճառները...»։*

Arevchatian S. S — „L'héritage de David l'Invincible sous une lumière nouvelle“ (1969). *Տես վերևում՝* **Արեվշատյան Ս. Ս.**, *«Դավիթ Անհաղթի ժառանգությունը...»։*

Conybeare F. C. — „A collation with the ancient armenian versions of the greek text of Aristotle's Categories, De Interpretatione, De Mundo, De Virtutibus et Vitiis, and of Porphyry's Introduction“, Oxford, Clarendon Press, 1892. (Anecdota Oxoniensia, Classical series, vol. I, part VI).

Նախաբանում (Prolegomena) *քննում է Արիստոտելի երկերի հայ. հին թարգմանությունների և նրանց հայ. մեկնությունների հետ կապված հարցերը, և ապա հայկ. թարգմանությունները համեմատում է հուն. սկզբնագրերի հետ։ Հեղինակը հակված է «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» երկերի թարգմանությունը վերագրելու հայազգի Պրոյերեսիոսին, որն ապ-*

րում էր Դ դարում։ Բնագրերի թարգմանությանը ժամանակակից է համարում նաև նրանց մեկնությունների հայ. թարգմանությունները և, ըստ այսմ, գտնում է, որ հայ. այդ թարգմանությունները, որոնք տպագրությամբ հայտնի են (Վենետիկ, 1833 թ.), Դավիթ Անհաղթին չեն պատկանում։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Յ[իմի], Արարատ, 1892, էջ 1004—1007, 1100—1108. 1893, էջ 57—64, 146—161, 254—275։—G. A. Schrumpf, Մուրճ, 1892, № 12, էջ 1833—1840։—Ստ. Մալխասյանց, Մշակ, 1892, դեկտ. 3, № 139։— A. Meillet, *Revue des Études Grecques*, Paris, t. VII, 1894, p. 248—249.— P. Vetter, *Literarische Rundschau*, XX, S. 389,

Փ. Կոնիբիրի սույն հրատարակության նախաբանի թարգմանություններն են հետևյալ երկու հրատարակությունները.

—«Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ թարգմանութեանց Արիստոտէլի» (թարգմ. Հակ. Տաշյանի), Վիեննա, 1893։ (Ազգ. Մատենադարան, Ժ)։

Նախապես տպված է, «Դաւիթ Անյաղթ» խորագրով, Հանդէս Ամսօրեայ-ում, 1893, էջ 19—22, 50—56, 78—81, 146—148 և 171—178։

— «Համեմատութիւն Դաւիթ Անյաղթի գրեանց՝ յունարէն բնագրի հետ» (թարգմ. Փարս. Տեր-Մովսիսյանցի), Վաղարշապատ, 1893։ 51 էջ։

Արտատպ. Արարատ ամսագրից, 1892, էջ 1004—1007 և 1100—1108. 1893, էջ 57—64, 146—161 և 254—275։

Khostikian Mis.— „David der Philosoph", Bern, Buchdruckerei Scheitlin, Spring u. Cie, 1907, Kap. III.

Neumann C. F.— „Mémoire sur la vie et les ouvrages de David, philosoph arménien du Ve siècle de notre ère, et principalement sur les traductions de quelques écrits d'Aristote", Paris, Impr. Royale, 1829, p. 36—96.

Արտատպ. հետևյալ հանդեսից. *Nouveau Journal Asiatique*, t. III, 1829, p. 49—86 et 97—153.

Խոսում է Արիստոտելի երկերի հայ. հին թարգմանությունների մասին՝ ըստ Փարիզի Արքայական Մատենադարանի (Bibl. du Roi) № 106 հայ. ձեռագրի (այժմյան՝ № 241)։ Մի առ մի քննության է առնում «Ստորոգութեանց», «Պերիարմենեիաս»-ի, Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծականն» աշխատության, «Յաղագս աշխարհի»-ի և «Յաղագս առաքինութեանց»-ի բնագրերը։

Somal P. S.— „Quadro delle opere di vari autori anticamente tradotte in armeno", Venezia, Tip. Armena di S. Lazzaro, 1825, p. 8—9.

ԱՐԻՔՄԱՏԻԿԱՑ

Տես՝ ԱՐԻԹՄԵՏԻԿԱՅ։

ԱՐԾԻՒԵԱՆ

Տես՝ ԱԲՐԱՀԱՄ ԱՐԾԻՒԵԱՆ։

ԱՐԾԿԵՑԻ կամ ԱՐԾԿԷՑԻ

Տես՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾԿԵՑԻ ՊԱՐՈՆՏԷՐ։
ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐԾԿԷԱՑԻ։
ԳՐԻԳՈՐ ԱՐԾԿԵՑԻ։
ՅԱԿՈԲ ԱՐԾԿԷԱՑԻ ՆԵՍՐԱՐԵՆՑ։

ԱՐԾԿՈՅ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Տես՝ ՅԱԿՈԲ ԱՐԾԿԷԱՑԻ ՆԵՍՐԱՐԵՆՑ, «Գանձ սքանչելագործ Սուրբ Նշանին Արծկոյ»։

ԱՐԾՐՈՒՆԵԱՑ (Պատմութիւն տանն)

Տես՝ ԹՈՎՄԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ։

ԱՐԾՐՈՒՆԻ

Տես՝ ԱՐՋԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ։
ԲԱՐՍԵՂ ԱՐԾՐՈՒՆԻ։
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ։
ԹՈՎՄԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ։
ՀԱՄԱԶԱՍՊ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՍԱՀԱԿ ԱՐԾՐՈՒՆԻ, Վկայաբանութիւն։
ՍԱՀԱԿ ԱՐԾՐՈՒՆԻ, «Թուղթ առ Մովսէս Խորենացի»։

ԱՐԿԱԴԻՈՍ ԵՒ ՀՈՆՈՐԻՈՍ ԿԱՅՍՐԵՐ

(Arcadius et Honorius imperatores)

Հովհան Ոսկեբերանի անանուն վարքում («Պատմութիւն վարուց, սքանչելեաց և դիպուածոց սրբոյն Յոհաննու Ոսկեբերան հայրապետին Կոստանդնուպոլսոյ, թարգմանեցեալ ի յունականէ ի հայս՝ ի Գրիգորէ կաթուղիկոսէ Վկայասէր կոչեցելոյ, շուրջ զթուականութեամբ Հայոց ՇԾ», Վենետիկ, 1751)

գտնում ենք բյուզանդական կայսր Արկադիոսի (395—408 թթ.) և հռոմեական կայսր Հոնորիոսի (395—423 թթ.) միջև և ժամանակակից հայտնի դեմքերի հետ տեղի ունեցած թղթակցության պատճենները.

1. Արկադիոսի և Հոնորիոսի հրովարտակն առ Փլաբիանոս Անտիոքացի (էջ 89—90):

2. Հոնորիոսի թուղթ առ Արկադիոս (էջ 254—256):

3. Հոնորիոսի այլ թուղթ առ Արկադիոս (էջ 263—265):

4. Իննովկենտիոս Ա պապի թուղթ առ Արկադիոս (էջ 280—282):

5. Հոնորիոսի այլ թուղթ առ Արկադիոս (էջ 282—284):

6. Արկադիոսի պատասխանն առ Իննովկենտիոս Ա (էջ 285—287):

7. Իննովկենտիոս Ա-ի այլ թուղթ առ Արկադիոս (էջ 290—291):

8. Արկադիոսի թուղթ առ Թեոփիլոս Աղեքսանդրացի (էջ 292—293):

ԱՐԿԱԴԻՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Տես՝ ՔՍԵՆՈՓՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ:

ԱՐԿԱԾՔ ԵՐՈՒԱՆԴԵԱՆՆ ՏԻԳՐԱՆԱՅ

Թատրերգություն՝ երեք գործողությամբ, հեղինակություն Եղիա Տնտեսյանի և Ղուկաս Ինճիճյանի. բեմադրվել է 1776 թվականին Վենետիկի Ս. Ղազարի վանքում՝ աշակերտության ուժերով. տես՝ Բ. Սարգիսյան, «Երկհարիւրամեայ գրական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան», Վենետիկ, 1905, էջ 192:

ԱՐՀԵՍՏ կամ ԱՐՈՒԵՍՏ

Բացի այն հոդվածներից, որ նշում ենք ստորև. տես նաև ԱՐՈՒԵՍՏ:

ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆ

Տես՝ ԱՐԻԹՄԵՏԻԿԱՅ:
ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑԻ:
ՄԻՆԱՍ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ ԱՐԴՈՒԻՆՑԻ:

ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Հայ. լեզվով տպագրված թվաբանական առաջին դասագիրքն է, որը լույս է տեսել Մարսելում 1675 թ.: Հրատարակվել է հայ վաճառականների գործածության համար: Դասագրքի բնագիրն աշխարհաբար լեզվով է՝ հիմքում ունենալով Նոր-Ջուղայի բարբառը, իսկ նրա տպագրության առաջաբանն ու հիշատակարանը գրված են գրաբարով: Լեզվական այս տարբերությունը պիտի համարել փաստական արտահայտությունն այն հանգամանքի, որ գիրքն իր ներկա վիճակով ներկայացնում է զարգացման երկու ուրույն հանգրվաններ, ըստ որում՝ իր հեղինակի կողմից սկզբնապես շարադրված է եղել Նոր-Ջուղայի բարբառով, իսկ հետո՝ «թարգմանվել է», այսինքն որոշ սրբագրության է ենթարկվել, որպեսզի հասկանալի կամ մատչելի դառնա նաև ոչ-ջուղայեցի վաճառականներին, և հրատարակվել է գրաբար առաջաբանի և հիշատակարանի հավելմամբ:

***

Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ: Թարգմանեցեալ ի պէտս Հայկազունեաց և մանաւանդ վաճառականաց: Եւ տպագրեցեալ ի տպարանի Սրբոյ Էջմիածնի և Սրբոյն Սարգսի Զօրավարին: Ի հայրապետութեան տեառն Յակոբայ՝ ամենից Հայոց կաթողիկոսի և ի միապետութեան Լուտովիկոսի չորեքտասաներորդի արքային Կալլիացւոց: Ի Մարսիլեայ: Յամի ներ մարդեղութեան Տեառն 1675, օգոստոսի ամսոյ 25: Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ.:

Դ+147 էջ (շարվ. 8.7×4.5 սմ):

Գրքի սկզբում՝

«Առաջաբանութիւն գրգոյս: Տեսանելով զհարկաւորութիւն մերազնեայց վաճառականաց վասն կատարելապէս ո՛չ գիտելոյ զարհեստն համարողութեան, վայելուչ վարկաք զգիրգս զայս թարգմանել ի մերս բարբառ, որպէսզի սովաւ վարժեցեալք կարիցեն դիւրապէս պարապիլ ի գործս իւրեանց թարց դեգերման մտաց: Քանզի ուսուցանէ սա զկիրառութիւնս ամբողջից թուոց և կոտորելոց, հանդերձ պարզագունիւք օրինակօք, զկա-

նոնս երից և զկանոնս ընկերութեանց և զընձեռմունս զանազանից փողից, և զառս և զծախս զանազանից ապրանաց, և զայլս իրս մանրամասնեայս։ Եւ մանաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարագրեցեալ առ ի բառնալ զպատճառն ծուլից և պարսաւաբանից, որք եթէ մի անգամ սիրով և ուշադրութեամբ ընթեռնուցուն զսա, զընաւս գծուարութիւնս համարողութեան գերազանցեսցեն։ Ուստի աղաչեմք զվայելողս սորին զի յիշե[ս]ցեն ի յաղօթս զաշխատաւորս և զմատակարարս սորին, և մանաւանդ զՈսկան վրդն. զհանգուցեալն ի Քս.։ Ընդ որս և ինքեանք յիշեցեալք լիցին Քս.է յուսոյն մերոյ աստ և ի հանդերձելումն. Ամէն» (էջ Գ—Դ)։

Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Աւարտեցաւ պիտանացու և շահաւէտ գրգուկս համարողութեան ի փառս մեծագոյնս աստուծոյ և ի վայելումն հանուրց Հայկազունեաց վաճառականաց յամի Ներ մարմնութեան տեառն 1675, նոյեմբերի ամսոյ 21, ի Մարշիլեայ քաղաքի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի և ի թագաւորութեան Լուտովիկոսի չորեքտասաներորդի արքային Ֆրանցիզաց։ Արդ՝ որք օգտիք սովաւ՝ յիշեցէք զմատակարարս սորին և զաշխատողս և մանաւանդ զհանգուցեալն ի Քս. զՈսկան վրդ.ն, և զազգատոհմս նորին զընաւս. ընդ որս և դուք յիշեցեալք լիցիք ի Քս.է աստ և ի հանդերձելումն. Ամէն» (էջ 145—146)։

Անհայտ են դասագրքի թե՛ հեղինակը և թե՛ խմբագիր-հրատարակիչը։

Նրա հեղինակին որոշելու հարցում՝ բնագրի աշխարհաբար լեզուն իր հիմնական հատկանշով մեզ առաջնորդում է դեպի Նոր-Ջուղա, ուր, տվյալ ժամանակաշրջանում, խոջայական առևտրի միջավայրում ու հրամայական պայմաններում փորձ էր արվում տեղական բարբառը վերածելու գրական լեզուի։ Դասագրքում իշխող այդ բարբառի նմուշներից որպես օրինակ նշենք հետևյալները. իfմին, լուղ, փող, ջոկ, ջոկ ջոկ, կտրատած թվեր, էս թվովս, էս մաոչլի օրինակումս, էտոնf, էնտով, կասեմf, ասեն, կանեն, պիտինf կտրել, պիտինf ճանել, չի պիտինf երկարել, պիտի բաղած, պիտի բազմացուցած, անցած ամսներովն, անցած ամսների շահն, Հոռմացտուն, Հոռմաստան, զէրայ, էլվի, զէրօի կշտին, կու բաղեմf fշտի երեfին հետ, fշտի ընէէն փոխ կառնումf, կուբաժանեմf ընով, նուն (90), վացուն (60), մին ամսէն շահն է, ամէն մային մին ամսէն շահն, այսչափ սարմայէն, կամպի տալ, զառապխանի fաշումն են։ Խմբագրողը հեղինակի օգտագործած բառերի գրության ձևերը որոշ դեպքերում փոփոխության է ենթարկել՝ ըստ արևմտահայ ուղղագրության. այսպես՝ դրամ (դրհամ), ղոմզ, մոչամ, Աջամստան, փսունղաչ, և այլ բառեր ուղղագրված են տրամ, ղրմզ, մոճամ, Անամստան, փսոնտաչ ձևերով, որպեսզի նրանք խորթ ձայներով չարտասանվեն արևմտահայերի մոտ։ Խմբագրողը թեև փորձեր է արել նաև բայերի խոնարհման ու խնդրառության գրաբարյան որոշ ձևեր մուծելու նախադասություններին մեջ և նույնիսկ որոշ բառեր փոխարինելու ավելի ծանոթ բառերով,— ինչպես նօլ բառը զէրօ բառով,— բայց վերջին հաշվով Նոր-Ջուղայի բարբառն իր տիրական դիրքը պահել է։ Մեր կարծիքով՝ այս դասագիրքը պիտի կազմված լինի Նոր-Ջուղայում և ամենայն հավանականությամբ հեղինակությունն է հայտնի մանկավարժ Կոստանդ Ջուղայեցու, որը 1680-ական թթ. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ուսումնարանում առևտրական մասնագիտական դասընթաց էր վարում՝ իր սեփական դասագրքերով։ Կոստ. Ջուղայեցու այդ դասագրքերից մեզ ամբողջությամբ հասել են «Աշխարհաժողով»-ը և «Դուռն համարողական արհեստին»-ը, որոնք համաշխարհային առևտրական շուկաների հետ կապված հաշվեգիտական երկեր են, առաջինը՝ պատմական (տարբեր երկրների դրամների, չափերի, կշիռների, մաքսերի մասին են), իսկ երկրորդը՝ գործնական (թվաբանական խնդիրներ). բայց նրա այդ դասագրքերի հետ կապված տեսական մասը, որը պիտի ավանդեր համարողության հիմունքները, մեզ չի հասել։ Հավանաբար Ջուղայեցի նշանավոր համարողի այդ տեսական հատորն է, որ ըն-

կած է 1675 թ. տպագրված վերոնշյալ «Արհեստ համարողութեան» գրքի հիմքում, ենթարկված՝ լեզվական փոփոխությունների և գուցե որոշ չափով վերախմբագրված նաև ըստ նյութի։ Իր ներկա վերամշակված վիճակում էլ «Արհեստ համարողութեան»-ը շատ բան ունի Կոստ. Ջուղայեցու ոչ միայն բառապաշարից ու տերմինաբանությունից, այլև ոճական առանձնահատկություններից։ Այս գրքում շարադրված թվաբանական խնդիրներում հարցումների առարկաները, հարցադրումների եղանակները և այլ երանգներ ուղղակի հիշեցնում են Կոստանդի թվաբանական խնդիրները՝ «Դուռն համարողական արհեստին»-ը. այնտեղ կան շարադրական արտահայտություններ, որոնք կարծես ուղղակի «Աշխարհաժողով»-ից են գալիս։

Ա. Ղազիկյանի կարծիքով՝ այս գրքի հրատարակիչը կարող է եղած լինել Հովհաննես Հոլովը։ Եթե ընդունելի համարենք այս կարծիքը, այդ դեպքում Հոլովն է նաև նրա վերախմբագրողը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղազիկյան Արս.— «Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 248—249։

Պետրոսյան Գ. Բ.— «Մաթեմատիկան Հայաստանում՝ հին և միջին դարերում», Երևան, 1959, էջ 231—238։

Պետրոսյան Գ. Բ.— «Հայկական մաթեմատիկական գրականությունը XVII—XVIII դարերում», Պատմա-բանասիրական հանդես, 1959, № 1 (4), էջ 188—192։

ԱՐՀԵՍՏ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ

Հռետորության դասագիրք։ Անանուն հեղինակություն։ Պետք է հորինված լինի ոչ ուշ, քան ԺԷ դ. կեսերին, որովհետև 1670-ական թվականներին ուղղակի սրանից է համառոտվել ու վերամշակվել, հարցուպատասխանի ձևով ու լեզվական փոփոխություններով վերաշարադրվել Հովհաննես Հոլովի «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի» երկը[1]։ ԺԸ դ. սկզբներին Խաչատուր Էրզրումեցին իր «Ճարտասանութիւն» երկը հորինելիս՝ լայնորեն օգտագործել է այս նույն դասագիրքը, շատ տեղ բառացի, գրեթե ամբողջությամբ որդեգրելով նրա տերմինաբանությունը[1]։

* * *

Յաղագս արհեստի ճարտասանութեան. «Ճարտասանութիւն, որ և ասի հռետորութիւն, է արհեստ բարւոք ասելոյ։ Ասի արհեստ, որով հաւաստիցի ամենից յայլոց (sic) արհեստից։ Ասի բարւոք ասելոյ, որով զանազանիցի յայլոց արհեստից...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8333, էջ 1ա—157բ։

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.

ԳԻՐՔ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ՀԱՆՈՒՐՑ ԻՐԱՑ ՊԻՏԱՆԱՒՈՐԱՑ ՊԱՏԿԱՆԵԼՈՑ ԱՌ ԱՐՀԵՍՏՆ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ[2].— Գլ. Ա, Յաղագս սահմանի ճարտասանութեան և բաժանման մասանց նորին։ Գլ. Բ. Յաղագս ճարտասանականաց խնդրոց։ Գլ. Գ. Յաղագս սեռից և փաստից, յորս պարապի ճարտասանն։ Գլ. Դ. Յաղագս մանաւանդականաց մասանց ճարտասանութեան ի հասարակի, և յաղագս հարկաւորաց առ համայօրինումն նոցին։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ ԳՏՄԱՆ.— Գլ. Ա. Յաղագս կրկնակի պաշտօնի ճարտասանին ի գտման և յաղագս ոմանց պահանջեցելոց առ գտումն։ Գլ. Բ. Յաղագս ձեռնարկութեանց։ Գլ. Գ. Յաղագս տեղեաց ճարտասանականաց յորոց արտահանին ձեռնարկութիւնք։ Գլ. Դ. Յաղագս երից առաջնոց տեղեաց ներքնոց։ Գլ. Ե. Յաղագս հետևելոց հնգից տեղեաց ներքնոց։ Գլ. Զ. Յաղագս հետևեցելոց հնգից տեղեաց ներքնոց։ Գլ. Է. Յաղագս մնացելոց երից վերջնոց տեղեաց ներքնոց։ Գլ. Ը. Յաղագս վեցից տեղեաց արտաքնոց։ Գլ. Թ. Յաղագս երկրորդի պաշտօնի ճարտասանին ի գտման, այսինքն յաղագս ընդլայնման, որով շարժմունք կամաց զարթուցանին ի յունկնդիրսն։ Գլ. Ժ. Յաղագս վերանկատմանց ոմանց, որք պարտին լինել ի յընդլայնման և ի գտման։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ.— Գլ.

---

1 «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի, շարադրեցեալ ի Յօհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ, ի փառս մեծագոյն Աստուծոյ, և ի զբօսանս Հայկազունեաց ճշմարտասիրաց», Մարսիլիա, 1674։

1 «Ճարտասանութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Խաչատրոյ Էրզրումեցւոյ աստուածաբան վարդապետէ, ի փառս մեծագոյն Աստուծոյ, և ի պատիւ սրբոց նորին, և յօգուտ մերազնեայց», Վենետիկ, 1713։

2 Ա. գրքի այս մակագրությունը բացակայում է ինչպես վերոնշյալ, այնպես և ուրիշ ձեռագրերում, այդ պատճառով սույն լրացումը կատարել ենք Հովհաննես Հոլովի «Համառօտութեան» հիման վրա։

Ա. Յաղագս նախապետականաց մասանց ասացուածոց, և թէ զի՞նչ իցէ սկսուածն։ Գլ. Բ. Յաղագս վիպման։ Գլ. Գ. Յաղագս համահաւասարութեան։ Գլ. Դ. Յաղագս ձեռնարկման, որ ծառայէ համահաւասարութեան։ Գլ. Ե. Յաղագս կրճատից տեսակաց ձեռնարկման, որք փոխանակ չորից վերոգրեցելոց տեսակաց ի գործ ածին։ Գլ. Զ. Յաղագս երկրորդի մասին համահաւասարութեան, որ և ասի համահերքումն։ Գլ. Է. Յաղագս չորրորդի մասին ասացուածոց, այսինքն յաղագս համավճարման։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ԵՐՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ ՅԱՂԱԳՍ ՃՈԽԱԲԱՆՈՒԹԵԱՆ. — Գլ. Ա. Յաղագս թէ զի՞նչ իցէ ճոխաբանութիւն, և ո՞րք իցեն յատկական պայմանք նորա։ Գլ. Բ. Յաղագս սեռից[ն] բառից, և այլափոխութեանց նոցին։ Գլ. Գ. Յաղագս այլափոխութեան, որ հնարի ի միում բառի։ Գլ. Դ. Յաղագս այլափոխութեան որ լինի ի բազում բառս, այսինքն ի բանս։ Գլ. Ե. Յաղագս ձևոց ճարտասանականաց, և նախ յաղագս ձևոց բառից։ Գլ. Զ. Յաղագս ձևոց բառից, որք կազմին առակցութեամբ։ Գլ. Է. Յաղագս ձևոց բառից, որք կազմին ի ձեռն բացբարձման։ Գլ. Ը. Յաղագս ձևոց բառից, որք կազմին ի ձեռն նմանութեան։ Գլ. Թ. Յաղագս ձևոց դիտաւորութեանց։ Գլ. Ժ. Յաղագս պարբերութեան, անդամոյ և հատուածոյ բառից ասացուածոց։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ՉՈՐՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ ՅԱՂԱԳՍ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ.— Գլ. Ա. Յաղագս թէ զի՞նչ իցէ յիշողութիւն, և ի քանի՞ս բաժանի։ Գլ. Բ. Յաղագս օգտի յիշողութեան և կանոնաց կամ պատուիրանաց վերաբերեցելոց առ այն։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ. ՅԱՂԱԳՍ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ ՅԱՂԱԳՍ ԱՐՏԱԲԵՐՈՒԹԵԱՆ.— Գլ. Ա. Յաղագս թէ զի՞նչ իցէ արտաբերութիւն, և ո՞րքան իցէ օգտակար։ Գլ. Բ. Յաղագս մասանց արտաբերութեան։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3110՝ խոր. նույն (էջ 2ա—73բ, սկ. նույն), № 2282՝ «Յաղագս արհեստի ճարտասանութեան և սահմանի նորին» (էջ 32ա—86ա, սկ. «Ճարտասանութիւն է արհեստ բարւոք ասելոյ») և № 7246՝ խոր. նույն (էջ 5ա—79ա, սկ. նույն)։

Վերջին երկու օրինակները որոշ չափով վերախմբագրված են և իրար նման են։

ԱՐՀԵՍՏ ՓՐԿՈՒԹԵԱՆ

Բարոյախոսական անանուն երկ, թարգմանված՝ իտալերենից և տպագրված՝ Վենետիկում 1760 թ.։ Տպակից է «Կերակուր քահանայից» հատորին, որի հրատարակության նախաբանում Աստվածատուր Ջուղայեցին ասում է. «Ընդ այսմ գրքկան տուաք տպագրել և զհամառօտ գրքոյկն որ կոչի Արհեստ փրկութեան կամ Հրահանգ քրիստոնէական վարուց, զթարգմանեալն ի հարց վանից Սրբոյն Ղազարու»[1]։ Ավելի որոշակի տեղեկությունների համաձայն՝ այս գրքի թարգմանիչը Մխիթար Սեբաստացին է[2]։

* * *

Արհեստ փրկութեան, կամ Հրահանգ քրիստոնէական վարուց: Յերիս պատուիրանս բաժանեալ: Ի մեծագոյն փառս Աստուծոյ: Թարգմանեցեալ յիտալական լեզուէ ի հայ բարբառ: Եւ տպագրեալ յամի տեառն 1760: Ի Վենէտիկ: Ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

101 էջ (չափ. 8.6×5.4 սմ)։

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն.

Կարգ և տրամադրութիւն արհեստին փրկութեան։

Առաջին պատուիրան։ Գործածութիւն մաքրութեան խղճի մտաց։

Երկրորդ պատուիրան։ Գործածութիւն մաքուր դիտաւորութեան։

Երրորդ պատուիրան։ Գործածութիւն համակերպութեան կամաց մարդոյ՝ ընդ կամացն Աստուծոյ։

Գործ հաւատոյ։

Այլ գործք (գործ յուսոյ, գործ սիրոյ, գործ զղջման)։

ԱՐՁԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից և երեց թարգմանիչներից, Ե դ.։ Ըստ Խորենացու հաղորդած տեղեկության՝ Հովհան Եկեղեցացու հետ միասին թարգմանության գործով գնացել է Կեսարիա և Բյուզանդիոն (Գ, Կ)[3]։ Ըստ «Կարգաւորութիւն ցուցմանց Օրհնութիւնաբեր ցուցակի»-ի՝ Կորյունի հետ միասին Արձանն է թարգմանել Կյուրեղ Երուսաղեմացու «Ապաշխարողաց կարգ»-ը[4]։ Ձեռագրերում ունենք «Հարցումն Արձանայ և պատասխանի Եզնկայ Կողբացւոյ Հայոց վարդապետի» խորագրով մի բնագիր, սկ.

---

1 Տես՝ «Կերակուր քահանայից... հաւաքեալ ի գործոց Կարդինար Պօնայի», Վենետիկ, 1760, էջ IX։

2 Հմմտ. «Լիակատար ցուցակ գրոց Մխիթարեան տպարանին (1716—1934)», Վենետիկ, 1934, էջ 17։

3 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 341։

4 Տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», մասն Բ, էջ 188։

Ձեռագրական տարբերակներով՝ Արձան անունը կրում է Արզեւան, Արշեւան և նույնիսկ Ընձակ ձևերը։

«Զի՞նչ է կրօնաւորութեան կարգն» կամ «Զի՞նչ է քահանայութեան կարգն» (տես ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ անվան տակ)։ Այս վերջին բնագրի որոշ օրինակներ խորագրում ունեն Արձան թագաւոր անունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղեւ.— *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 50, մասն Բ, էջ 188։*

Աճառյան Հր.— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 285 (Արձան Արծրունի) և 301 (Արչևան)։*

Զարբհանալյան Գար.— *«Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 294 և 305—306։ Նույնի Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 294 և 305—306։*

Կոնիբիր Փ. Կ.— *«Մ. Խորենացւոյ Պատմութեան ժամանակին մասին»,* Հանդես Ամսօրեայ, *1903, էջ 330։*

Միսքճյան Հովհ.— *«Սրբոյն Սահակայ կաթուղիկոսի և Մեսրոպայ վարդապետի ձեռնասուն ու երիցագոյն աշակերտք և առաջին թարգմանիչք Ե. դարուն», անդ, 1902, էջ 146։*

Նորայր Ն. Բյուզանդացի.— *«Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Թիֆլիս, 1900, էջ 6—7։*

Շրումպֆ Գ. Ա., Զարբհանալյան Գար.— *«Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեմուտս (ԺԴ—ԺԹ դար)», Վենետիկ, 1895, էջ 124—125։*

Չամչյան Միք.— *«Պատմութիւն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 509—510, 521 և 536։*

Սարգիսյան Բարս. *(հրատ.)* — *«Սրբոյ հօրն մերոյ Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք... ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան», Վենետիկ, 1907, էջ ԿԶ—ԿԷ։*

ԱՐՂՆԵՑԻ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՂՆԵՑԻ։

ԱՐՂՈՒԹԵԱՆ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ։
ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ։

ԱՐՃԻՇԵՑԻ

Տես՝ ԲԱՐՍԵՂ ԱՐՃԻՇԵՑԻ։
ԳՐԻԳՈՐ ԱՐՃԻՇԵՑԻ ՋՈՐԹԱՆ։
ԴԱՆԻԷԼ ԱՐՃԻՇԵՑԻ կամ ԴԱԻՐԻԺ.։
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՑԻ ՈՍՊՆԱԿԵՐ։

ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ կամ ՀԱՒԱՏԱՐՄԱՏ

Հայ մատենագրության մեջ այս անունով հայտնի են դավանաբանական չորս տարբեր ժողովածուներ, որոնցից առաջինների նպատակը եղել է պաշտպանել հայ եկեղեցու միաբնյա դավանանքը՝ Քաղկեդոնի 451 թ. ժողովում ընդունված երկաբնյա վարդապետության դեմ, իսկ վերջինն, ընդհակառակն, նվիրված էր երկաբնյա տեսութեան պաշտպանությանը։ Վիճաբանությունների համար նյութեր հայթայթելու սահմանված այս ժողովածուներում, որոնք կառուցված էին Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» երկի օրինակով (տես ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶ), ամփոփված էին որդեգրված տեսակետների հիմնավորման համար կարևոր համարված վկայությունները՝ եկեղեցական և կրոնապատմական մատենագրությունից։ Ստորև բերում ենք «Արմատ հաւատոյ»-*ների մասին մեր ունեցած տեղեկությունները։ Նմանօրինակ ուրիշ ժողովածուներ տեսնել հետևյալ անունների տակ. ՀԱՒԱՏՈՅ ՆԱՄԱԿ, ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ, ԹՂԹՈՑ ԳԻՐՔ։*

* * *

1. Ստեփանոս Ասողկի և Վարդան Արևելցու մոտ պահպանված տեղեկություններից հայտնի է, որ Հովհաննես Մայրագոմեցու (է դ.) գրքերից մեկը կոչվում էր «Հաւատարմատ», *որի վրա հեղինակն իր անունը չէր դրել*[1]*։ Կար. Տեր-Մկրտչյանի կարծիքով՝ Մայրագոմեցու այս* «Հաւատարմատ»*-ն ու-*

---

1 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 87։ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 62։

րիշ բան չէր, եթե ոչ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (615—628 թթ.) օրով և նրա նախաձեռնությամբ կազմված «Կնիք հաւատոյ» հակաքաղկեդոնական ժողովածուն՝ իր նախնական խմբագրության վիճակում[1], այլ խոսքով՝ միևնույն ժողովածուի տարբեր անուններն են՝ «Հաւատարմատ» և «Կնիք հաւատոյ»: Եթե այդպես է՝ ապա բյուզանդական „Narratio de rebus Armeniae" անանուն գրվածքում[2] որպես Կոմիտաս կաթողիկոսի հեղինակություն հիշատակված այն գիրքը, որն աղավաղված ձևով կոչվում է «Աւարտակամ» ('Αβαρτακάμ) կամ, ըստ գրչական տարբերակի, «Ամարտանակ» ('Αμαρτανάκ)[3], հանդիսանում է Հովհաննես Մայրագոմեցու «Հաւատարմատ»-ը[4] և անտարակուսելի է, որ հիշատակությունը վերաբերում է «Կնիք հաւատոյ» ժողովածուին:

2. Ժ դ. Անանիա Նարեկացին կազմել էր «Հաւատարմատ» անվամբ հակաքաղկեդոնական մի գիրք: Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց» երկի ներածականից, որն Անանիա Նարեկացուն ուղղված ընծայական է, երևում է, որ «Հաւատարմատ»-ի հեղինակն իր գիրքը նվեր էր տարել Խաչիկ Արշարունի կաթողիկոսին (973—992 թթ.). «Արդ քանզի ի ժամանակին յայնմիկ, յորժամ եկիր առ աստուածապատիւ և սուրբ հայրապետն մեր Խաչիկ՝ բերելով նմա ընծայ և պատարագ հոգևոր զգիրս Հաւատարմատ՝ որ ընդդէմ երկաբնակացն, զոր քո ինքնին խօսեալ ի խորհուրդ հաւատոյ ի ձեռն հոգւոյն սրբոյ ի քեզ բնակելոյ»[5]: Այսպիսի անունով մատենագրական բնագիր մեր ձեռքը չի հասել: Դժվարանում ենք ընդունելի համարել Կար. Տեր-Մկրտչյանի այն կարծիքը, թե «Անանիայի վարդապետի Հայոց բան հականառութեան ընդդէմ երկաբնակաց» գրությունը, որը բազմաթիվ վկայություններ է պարունակում եկեղեցական հայրերից, պիտի նույն համարել Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի հետ և սոսկ թյուրիմացություն համարել նրա վերագրումը Անանիա Սանահնեցուն[1]:

3. ԺԳ դ. սկզբներին (1205 թ.) Վարդան Այգեկցին կազմում է մի նոր ժողովածու «Ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց», որը ժամանակակիցների մոտ հայտնի էր «Արմատ հաւատոյ» անունով, իսկ լրիվ խորագրով կոչվում էր «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»[2]:

Այս ժողովածուն մեզ հասել է ընդարձակ և համառոտ խմբագրություններով:

Ընդարձակ խմբագրությունը, որը 16 գլուխներից է բաղկանում և լիակատար հորինվածք ունի, զուրկ է ընդհանուր խորագրից, որովհետև, ինչպես երևում է ձեռագիր օրինակներից, բնագրի արտագրման ժամանակ գործնական նպատակներով դուրս են թողնվել Ա և Բ գլուխները, որոնք առաջաբաններ են, և դրա հետևանքով դուրս է ընկել նաև գրքի ընդհանուր խորագիրը, իսկ մնացած դավանական և վիճաբանական գլուխների համար կազմվել է մի նոր խորագիր, որ է՝

---

1 Կար. Տեր-Մկրտչյան, «Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի», տես՝ «Շողակաթ» (ժողովածու), գիրք Ա, Վաղարշապատ, 1913, էջ 103—104։ «Կնիք հաւատոյ» (հրատ. Կ. Տեր-Մկրտչյանի), Էջմիածին, 1914, ներածութիւն, էջ XXVI—XXXI:

2 Հմմտ. աստ. հտ. Ա, էջ 808—811:

3 Տես՝ G. Garitte, „La Narratio de rebus Armeniae", Louvain, 1952, p. 42, § 117.

4 Ibidem, p. 276.

5 Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 11:

---

1 Տես՝ «Կնիք հաւատոյ», ներածութիւն, էջ CVIII—CIX:

Անանիա Սանահնեցու անունը կրող այս գրության մասին մանրամասնորեն տես՝ աստ, հտ. Ա, էջ 777—782:

2 Տես՝ Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լույսի տակ» (արտատպ. Բազմավէպ-ից), Վենետիկ, 1969: Նույն, «Ջել և ուրբաթագել», Լրաբեր Հասարակական Գիտությունների (ՀՍՍՀ ԳԱ), 1969, № 3 (310), էջ 78—81: Նույն, «Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս», Էջմիածին (ամս.), 1969, № 7—8, էջ 52—58: Նույն, «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» (արտատպ. Էջմիածին ամսագրի 1971 և 1972 թթ. համարներից), Էջմիածին, Մայր-Աթոռի տպարան, 1972, էջ 59—60: Նույն, «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը», Էջմիածին (ամս.), 1972, № 8, էջ 27—36. № 9, էջ 45—56:

Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն ընդդէմ հերձուածողաց հակաճառութիւնք:

Այսպիսի տեսք ունեն ծանոթ բոլոր ձեռագրերն էլ, միայն թե Երևանի Պետ. Մատ. № 3295 ձեռագրում (էջ 339ա—383բ), ուր բնագիրը թեև նույն վիճակն է ներկայացնում՝ նույն խորագրով, ի տարբերություն մյուսների՝ ընդօրինակողը միաժամանակ, մի այլ աղբյուրից արտագրելով, նրա սկզբին տեղադրել է նաև Ա և Բ գլուխները՝ դարձյալ առանց ընդհանուր խորագրի (էջ 338ա—339ա)։

Հեղինակն Ա գլխում հայտնում է, թե «հաւաքեցի զայս աստուածաբանիկ տառս ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց, ուր և գտանէի վկայութիւն ի նուրբ գիրս և մեկնիչս կամ ի թուխտ գիրս և կամ ի հաւաքման սրբոց հայրապետաց և բարեփառ հարցն մերոց զոր արարեալ են ընդդէմ ամենայն հերձուածողացն. նաև դարձեալ յաստուածապահ հայրապետական աթոռս մեր Հայոց, որ կոչի Հռոմկլայ, ուր գտաք ժողովեալ զհաւաքման գիրս և թուխտս սրբոց հայրապետաց և մաքրափայլ վարդապետացն Հայոց զոր արարեալ են ընդդէմ հերձուածողացն [յ]իւրաքանչիւր ժամանակս ուղիղ դաւանութիւն հաւատոյս՝ հետևելով առաջին սրբոց հարցն... և կատարեցի զսա ի թուականիս Հայոց ՈԾ և Դ.ին (=1205 թ.), ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի, և ի թագաւորութեանն Հայոց Լևոնի Յբուբինեանց և Զաքարիայի յաղթօղ հզօրապետութեան ի կողմն հիւսիսոյ, և արարի քեզ առ ձեռն պատրաստ զէն, ո՜վ սիրելի, ընդդէմ թերավարժ՝ երկմիտ քննողաց, քանզի խոցիւր հոգիս յորժամ սիրողք բաժանման տգիտաբար խօսէին վասն երկու բնութեան և կամ վասն այլոց խորհրդոց. և այս ետ ձեռնարկել մեզ յայս բան, որ ի վեր է քան զկար մեր» ևն (էջ 338ա)։

Բովանդակություն.

Գլ. Ա. Սակաւ բան մեր յիշատակին։

Գլ. Բ. Խօսք և պատուէր գրոցս առ աչնուսին, որք հանդերձեալ են յապագայն ժառանգել զսա։

Գլ. Գ. Ուղիղ դաւանութիւն սուրբ Երրորդութեան։

Գլ. Դ—Է. Վկայութիւնք յաղագս տեառն մերոյ Յս.ի Քս.ի և եռանձնեայ աստուածութեանն և մի բնութեանն։

Գլ. Ը. Վկայութիւնք ընդդէմ նոցա, որք ապականացու ասացին զանապական մարմին տեառն մերոյ Յս.ի Քս.ի, և անգոսնելի կիրք եդուն նմա, որ է կերակրոց և ըմպելեաց ախտաբար հօսումն։

Գլ. Թ. Այլ լուծմունք ի մեկնչացն։

Գլ. Ժ. Վասն ճրագալուցին զի երեկունն պարտ է ուտել։

Գլ. ԺԱ. Վկայութիւնք վասն ծննդեանն տեառն և մկրտութեանն, զի պարտ է ի միում աւուր տօնել ի վեցն յունուարի ամսոյն։

Գլ. ԺԲ. Վկայութիւնք ընդդէմ նոցա, որք ասեն թէ տէրն մեր զգառն ոչ եկեր յերեկոյին հինգշաբաթին։

Գլ. ԺԳ. Վկայութիւնք զի պարտ է զսուրբ պատարագն անխմոր և անջուր մատուցանել, անաղ և անձէթ։

Գլ. ԺԴ. Վկայութիւնք զի պարտ է զխաչեցարն ասել յամենայն աւուր ի դէմս որդւոյ։

Գլ. ԺԵ. Զի սուտ է որ ուրբաթ զել ասէ։

Գլ. ԺԶ. Զի բարի է զատկի մատաղ, և այլ մատաղ զոր առնեն, և աղն զոր օրհնեն և տան անասնոց։

Վերջում՝ հիշատակարանը. «Եւ է սա երկոտասան գիրք գրեալ և փոխեալ [յ]առաջին օրինակէն ձեռամբ մեղապարտիս Վարդանայ և առաքե[ա]լ զպսակ (sic) ուղղահաւատ եկեղեցւոյ Հայաստանեայց որպէս և այլքն որ յառաջ քան զսա, թողեալ յիշատակ բարի մեզ և ծնօղաց և եղբարց մերոց, և ազգի մերոյ։ Եւ արդ՝ առ ոսս ամենեցուն անկեալ պաղատիմ աղերսանօք և աղաչեմ՝ արարէք յիշելոյ արժանի զմեզ զամենեսեան և խնդրեցէք թողութիւն մեղաց մերոց [յ]ողորմածէն Յս.է Քս.է աստուծոյ մերմէ, զի թերևս ապրեսցուք [յ]անսպառ տանջանացն, որ և զձեզ փրկեսցէ Աստուած ի նմանէ և նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

Եւ գրեցաւ սա ի Պարվաւան, [ի] ՈԾԸ մերոյ թուիս (=1209 թ.), ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սրբոյ Նշանիս, յառաջնորդութեան տեառն Մանուէլի սրբասնեալ եպիսկոպոսի» (էջ 383ա)։

Այս հիշատակարանը պատկանում է այն օրինակին, որը հեղինակի իսկ ձեռքով կատարված 12-րդ արտագրությունն էր հիմնական օրինակից։ Այդ 12-րդ արտագրության սերունդներն են հանդիսանում մեզ հայտնի բոլոր օրինակները, որոնց մեջ, ինչպես նշեցինք, առայժմ միակ ամենալրիվը Երևանի

Պետ. Մատ. վերոնշյալ № 3295 ձեռագիրն է (ժէ դ. ընդօրինակություն)։ Մյուս օրինակներն են՝ նույն մատ. ձեռ. № 512 (էջ 164ա—210բ), № 1982 (էջ 3ա—152ա), № 4425 (էջ 161ա—199ա), № 6567 (էջ 86բ—112բ) և № 7255 (էջ 2ա—101ա)։ Ա և Բ գլուխների թերույթը և ուրիշ թերություններ ունեցող մի օրինակ է նաև մարսեյլաբնակ Միրզայան ընտանիքին պատկանող ձեռագիրը[1]։

Համառոտ խմբագրությունը նույնպես բեռնաթափված է առաջաբաններից, որոշ կրճատումների է ենթարկված և չունի ընդարձակի որոշակի գլխաբաժանումները, ինչպես և՝ հիշատակարան։ Այստեղ պահպանվել է գրքի ընդհանուր խորագիրը («Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»), բայց դա «և» շաղկապով միաձուլվել է բնագրի սկիզբը կազմող դավանաբանական մասին տրված նոր վերնագրի հետ և ստացել այսպիսի տեսք.

Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, և պատասխանութիւն ընդդէմ արիանոսացն (*կամ* նեստորականացն)[2], զի ասեն հերետիկոսքն եթէ ոչ միացաւ աստուածութիւնն ընդ մարմնոյն, այլ որիշ որիշ խոստովանին զաստուածութիւնն ի մարմնոյն, զոր քաւ լիցի ուղղափառաց զմտաւ ածել այսպիսի ինչ, այլ արիաբար վկայութիւն բերել պարտ է զմարգարէականսն, զաւետարանականսն և զառաքելականսն, և համարձակութեամբ տալ պատասխանի ընդդէմ երկաբնիցն:

Այս խմբագրությունը ներկայացնող լիակատար օրինակներ են՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2080 (էջ 23ա—50բ), Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 266 (էջ 1ա—83ա)[1], Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 153 (fol. 20^{r}—101^{v}?)[2] և Արմաշի վանքի ձեռ. № 180 (էջ 127բ—159ա)[3]։ Թերի ընդօրինակություններ են՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1337 (էջ 153բ—184բ) և № 4063 (էջ 167ա—197բ), ինչպես և Հռոմի Bibl. Vat. Cod. Borg. Arm. 31 (fol. 106^{v}—147^{v}).[4]

Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ»-ն, որի բնագիրը կարող է լիովին վերականգնվել նրա ընդարձակ և համառոտ խմբագրությունների ուսումնասիրմամբ, ծնունդ էր առել այն շրջանում, երբ քաղկեդոնյան գաղափարախոսությունը, առիթ քաղելով հայոց թագավորական իշխանության վերահաստատման քաղաքական հանգամանքներից (Լևոն Բ-ի թագադրությունը 1198 թ.), նոր արշավ էր սկսել Կիլիկյան Հայաստանում՝ լատինականության կերպարանքի տակ։ Այդ տեսակետից սույն «Արմատ հաւատոյ»-ն թանկարժեք փաստաթուղթ և աղբյուր է ԺԳ և ԺԴ դդ. ընթացքում Կիլիկիայում ծավալված հակաքաղկեդոնական (հակալատինական) պայքարի պատմության համար։

4. ԺԳ դ. երկրորդ կեսում Կիլիկիայում հրապարակ էր հանված մի նոր «Արմատ հաւատոյ», որ կազմել էին քաղկեդոնական տրամադրություններով տարված հայեր՝ նպատակ ունենալով հակազդել Վարդան Այգեկցու կազմած վերոհիշյալ միաբնյա «Արմատ հաւատոյ»-ին[5], որն Ավինիոնի պապական ար-

---

[1] Այս ձեռագրի մասին տես F. Macler, „Notices de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens", *Revue des Études Arméniennes*, t. II, 1922, p. 242—250. Արտ. Սյուրմեյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու», Փարիզ, 1950, էջ 72—75։

[2] Այստեղ արիանոս և նեստորական անունների տակ պետք է հասկանալ քաղկեդոնական, որովհետև ժողովածուն հակաքաղկեդոնական է։ Պետք է ասել, որ, դեռ վաղ ժամանակներից սկսած, հայ տեսաբանները, քաղկեդոնական Բյուզանդիոնի քաղաքական ազդեցության դեմ որպես դիմագրավելու միջոց, ընդհանրապես չէին ուզում տարբերություն տեսնել հիշյալ երկու հակացությունների և քաղկեդոնականության միջև՝ վերջինս համարելով նրանց հարուցած երկվության գաղափարների հաստատումը։

[1] Հ. Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Բ, էջ 861—864։

[2] F. Macler, „Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale", p. 85—86.

[3] Հ. Թոփճյան, «Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին», էջ 318—321։

[4] E. Tisserant, „Codices armeni Bybliothecae Vaticanae...", p. 51—53,

[5] Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լույսի տակ», էջ 37 (կամ տես՝ Բազմավէպ, 1968, էջ 266)։

քունիքում ճանաչվում էր որպես հայոց «մոլորական» գրքերից մեկը[1]: Այս նոր «Արմատ Հաւատոյ»-ի մասին խոսվում է 1306 թ. Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի առ Հեթում Բ կրոնավոր թագավոր գրած հայտնի թղթում[2]:

Գրիգոր Անավարզեցին, այդ թղթում երկարորեն խոսելով պատարագի բաժակի մեջ ջուր խառնելու անհրաժեշտության մասին, երկիցս վկայակոչում է նոր «Արմատ հաւատոյ»-ն՝ ի նպաստ իր կարծիքին: Առաջին անգամ նա Իրենեոսի՝ «առաքելոց հետևողի» մի հատվածի կապակցությամբ գրում է, թե «կայր ի մօտս՝ իմ քեռոյն գիրքն, որ է Հաւատոյ արմատն, յորում հետևող առաքելոցն Երինոս յիշէ զջուրն. և իմ քեռին գրեալ է իւր ձեռօքն ի լուսանցն վասն ջրին, թէ՝ Տե՛ս, որ ջո՛ւր է պիտոյ ի պատարագն»[3]: Իսկ երկրորդ անգամ՝ հիշատակելով, որ ժամանակին Անտիոքի լատին պատրիարքը Սսի Ս. Սոփիա տաճարում պատարագել էր Կոստնդին Բարձրբերդեցի կաթողիկոսի հետ միասին, գրում է, թե «և ոչ նա միայն վստահի ջրով արար ի սուրբ Սոֆի, այլ և տէր Կոստանդին կաթուղիկոսն զնոյն ջրովն պատարագեաց հետ իւր, և հաղորդեցաւ ի նմանէ. և զայս ա՛ռ և տե՛ս յիմ քեռոյն գիրքն, զոր ունի Ստեփաննոս սարկաւագն»[4]:

Ուրեմն՝ այս երկարբնյա «Արմատ հաւատոյ»-ի հեղինակը Գրիգոր Անավարզեցու քեռին էր, որի անունը մեզ հայտնի չէ: Գրիգոր Անավարզեցին մահացել է նույն 1306 թ. կամ հաջորդ տարին, ուստի՝ նրա քեռու գիրքը պիտի շարադրված լիներ ԺԳ դ. երկրորդ կեսին, հավանաբար՝ Կոստանդին Բարձրբերդեցու կաթողիկոսության (1221—1267 թթ.) վերջին շրջանում:

Այս բնագիրը մեր ձեռքը չի հասել:

1 Այդ գրքերի մասին տես Հ. Ս. Անասյան, «Հայոց մոլորական համարված գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի», Էջմիածին (ամս.), 1975, № 10, էջ 27—39:

2 «Թուղթ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հայոց Հեթում, հայր արքային Հայոց Լեւոնի», տես՝ Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն...», հտ. Ա, Հռոմ, 1650, էջ 435—450:

3 Անդ, էջ 436:

4 Անդ, էջ 442:

ԱՐՄԵՆԻՈՍ ՎԿԱՅԱՐԱՆ

Տես՝ ՈՎՐԻՆՈՍ ԵՒ ԱՐՄԵՆԻՈՍ:

ԱՐՄԵՆՈՅ (Քրիստափոր)

Տես՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՒՐԻԺԵՑԻ:

ԱՐՄԵՆՈՊՈՒԼՈՍ (Կոստանդին)*
(Constantinus Armenopulus)

Բյուզանդական օրենսգետ: Ապրել է 1320—1383 թթ.: Ծագումով հայ է[1]: Հեղինակ է իրավագիտական և պատմա-դավանաբանական ուսումնասիրությունների: Նշանավոր է նրա («Առձեռն [մատեան] օրինաց») կամ ‹Ἑξάβιβλος“ («Վեցամատեան») կոչված իրավաբանական ժողովածուն, որը շարադրված է 1345 թ. և բաժանվում է վեց գրքերի: Այս երկի հիմքում ընկած է Բյուզանդիոնի Իսավրյան և Մակեդոնական հարստությունների կայսրերի օրենսդրությունը, բայց նրանում ներառված են նաև մի շարք հոդվածներ՝ հեղինակի ժամանակաշրջանի իրավական հարաբերությունների վերաբերյալ: Բյուզանդական կայսրության անկումից (1453 թ.) հետո՝ Արմ.ի Վեցամատյան-ը ժամանակավորապես հանդիսացել է Հունաստանում ու Բեսարաբիայում գործող իրավունքը. կիրառվել է նաև Վալախիայում

* ԺՈՂՆԴԱԿ ԳՐԱԿ. „Παύλου Δρανδάκη Μεγάλη Ἑλληνικὴ Ἐγκυκλοπαιδεία", τ. Ε', Ἀθῆναι, „Ὁ Φοῖνιξ". σ. 608—609.— K. Krumbacher, „Geschichte der byzantinischen Litteratur", München, 1897, S. 103, 607-610, 786.— А. А. Васильев, „Падение Византии", Ленинград, 1925, стр. 123.

1 Նրա ազգանունը՝ Armenopulus (Արմենոպուլոս) բառացի նշանակում է հայորդի: Ոմանք այդ անունը գրում են Harmenopulus (Հարմենոպուլոս), այնպես, ինչպես միջին դարերում Armenia (Հայաստան) անունը հաճախ գրվում էր նաև Harmenia ձևով:

Արմենոպուլոսների հայկ. ծագման մասին տես նաև А. П. Каждан, „Армяне в составе господствующего класса Византийской империи в XI - XII вв.", Ереван, 1975, стр. 99—100:

ԺԱ դարում հիշատակվում է նաև Արմենոպուլոս անունով բյուզանդական մի հայազգի զորավար. հմմտ. N. Adontz, „Études arméno-byzantines", Lisbonne, 1965, p. 402, 405.

ու Մոլդավիայում։ Վեցամատյան-ի հուն. բնագրի լավագույն հրատարակություններն են՝ C. E Heimbach, „Constantini Harmenopuli Manuale Legum" (Lipsiae, 1851) *և* Κ. Γ. Πιτσάκης, „Κωνσταντίνου 'Αρμενοπούλου Πρόχειρον Νόμων ἢ 'Εξάβιβλος" (Βυζαντινὰ καὶ Νεοελληνικὰ κείμενα, 1), Ἀθῆναι, 1971. *Գոյություն ունեն այս օրինագրքի մի քանի նոր հունարեն, ինչպես նաև լատիներեն և գերմաներեն, թարգմանություններ։*

Կոստ. Արմ.-ի գրչին պատկանող մյուս երկերն են՝

ա. 'Επιτομὴ θείων καὶ ἱερῶν κανόνων *(Համառոտութիւն աստուածային և սրբազան կանոնաց)։*

բ. Περὶ ὧν οἱ κατὰ καιροὺς αἱρετικοὶ ἔδοξαν *(Յաղագս թէ զի՞նչ դաւանեցին հերետիկոսքն ընդ ժամանակս ժամանակս)։*

գ. Περὶ τῆς ὀρθοδόξου πίστεως *(Յաղագս ուղղափառ հաւատոյ)։*

դ. Θέσπισμα τοῦ πάπα τῆς Ῥώμης *(Հրաման պապին Հռոմայ)։*

ե. Περὶ τῶν τριῶν συνοδικῶν τόμων *(Յաղագս երից ժողովական տոմից)։*

ԱՐՄԻՆԻՍ ՄԵԼԻՏԻՆԱՑԻ

Տես՝ ԳԱԳՈՍ [ԳԱԳԻԿ] ՄԵԼԻՏԻՆԱՑԻ։

ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տես՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ։

ԱՐՈՒԵՍՏ

Տես՝ ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆ։
ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ։
ԱՐՀԵՍՏ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ։
ԱՐՀԵՍՏ ՓՐԿՈՒԹԵԱՆ։

ԱՐՈՒԵՍՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Անանուն և անտիպ դասագիրք։ Հորինված է հավանաբար ԺԸ դ. երկրորդ կեսում, բայց ձեռագիրը կարող է լինել և ԺԹ դ. սկզբների ընդօրինակություն։ Օգտագործում է դասական տառադարձության ձևեր, սակայն դրանք մեծ մասամբ աղավաղված են։ Տառադարձության օրինակներում նկատվում են իտալերենի հետքեր. օրինակ՝ x-ը տառադարձվում է ս-ով։ Կարող է լինել Մխիթարյան դպրոցի արտադրություն՝ պոլսահայ միջավայրը հատկանշող աղավաղումների ենթարկված։ Անվանաթերթ և կամ ընդհանուր խորագիր չունի։

* * *

[Արուեստ բանաստեղծութեան] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 526, էջ 1ա—35ա։*

Բովանդակութիւն.

Յղ. զանազան տեսակաց բանաստեղծութեանս։

Գլուխ առաջին. Յղ. գիւցազներգակ բանաստեղծութեանս։

Գլուխ երկրորդ. Յղ. թատերական բանաստեղծութեան և եղերերգութեան ի մասնաւորի։

Գլուխ երրորդ. Յղ. կատակերգութեան և ծագման նորա։

Գլուխ չորրորդ. Յղ. հովուական կամ տաւարածական բանաստեղծութեանս։

Գլուխ հինգերորդ. Յղ. քնարերգական բանաստեղծութեանս։

Գլուխ վեցերորդ. Յղ. դաստիարա[կա]կան բանաստեղծութեանս։ Ծանօթութիւնք ի վերայ յիշատակեալ բանաստեղծից։

Գլուխ եօթներորդ. Կատակերգութիւն։

Գլուխ ութերորդ. Ողբերգութիւն։

Գլուխ իններորդ. Յղ. արձանական կամ դամբանական բանաստեղծութեան։

ԱՐՈՒԵՍՏ ՔԻՄԻԱԿԱՆ

Փարիզի հայ. ձեռագրերում գտնվում է՝ «Գիրք արուեստի քիմիական, արարեալ առաջին փիլիսոփայիցն», Bibl. Nat. Ms. Arm. 248=Ancien Fonds Arm. 109.

Ձեռագիրը ԺԷ դարից է։

Վ. Հ. Թորգոմյանն ասում է, որ ձեռագրում այս խորագրի տակ կան տարրաբանական երկու տարբեր երկեր. «Երկուքն ալ թարգմանութիւն են յարաբերէնէ. թարգմանչին կամ թարգմանչաց վրայ ծանօթութիւն չկա. թուական չունին և զուրկ են բնաւին ո՛ և է յիշատակարանէ. գիրը նօտր է, բայց ոչ այնչափ մաքուր և դիւրաւ վերծանելի»[1]*։*

Փ. Մակլերը տվել է այս ձեռագրի ամբողջական նկարագրությունը, որի համաձայն ձեռագրում եղած տարրաբանական գործերի թիվը երկուսից ավելի է և հնարավոր չէ ճշտել, թէ նրանցից որո՞նք են այն երկուսը,

---

1 *Վ. Հ. Թորգոմյան, «Հայ բժշկական ձեռագիրք Փարիզու», Արևելք, 1889, հոկտ. 29, № 1734։*

որոնք, ըստ Թորգոմյանի, կրում են «Գիրք արուեստի քիմիական» ընդհանուր խորագիրը։

Մակլերի տված նկարագրությունը հետևյալն է[1].

Traité d'alchimie (fol. 1^r).

Traité d'alchimie d'Ibn Baïtar (fol. 34^v).

Autre traité d'alchimie, traduit du persan en arménien, à la demande de Héthoum (1224—1269), par le diacre Étienne (fol. 59^v).

Autre traité d'alchimie (fol. 98^r).

Traités sur les douze pierres précieuses (fol. 119^v).

Traité de saint Épiphane sur le même sujet (fol. 125^v).

Traité d'hermétique, d'après les philosophes platoniciens, Étienne, Avicenne, etc. (fol. 129^v).

Note détaillée de l'auteur sur les dépenses et la peine que lui a occasionnées la composition de son livre: „Moi, Zeper, j'ai tiré ce livre d'après les livres des philosophes et j'ai rendu, jour et nuit, graces à Dieu, qui m'a accordé ses faveurs, et m'a ouvert avec certitude la porte de cet art. Et je bénis Dieu, de tout mon esprit, lui qui m'a délivré de la servitude et m'a fait asseoir sur le siège de la liberté" (fol. 149^v).

Texte incomplet à la fin.

ԱՐՈՒԹԻՆ

Տես՝ ԹԱՄԲՈՒՐԻ ԱՐՈՒԹԻՆ։ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ։

ԱՐՈՒԹԻՒՆ

Տես՝ ՂՈՒԼ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ։ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲՒԶԱՆԴԱՑԻ ԷՔՍԵՐՃԵԱՆ։

ԱՐՈՒԿ ՎԿԱՅ

Տես՝ ԴԻԱՆԴՐՈՍ ՎԿԱՅ։

[1] F. Macler, „Catalogue..", p. 130—131.

ԱՐՍԷՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՀՌՈՄԱՅԵՑԻ*

(Arsenius Romanus anachoreta)

Եգիպտոսի հայտնի անապատականներից, ծն. 354 թ. Հռոմում, ծերակուտականի ընտանիքում։ Թեոդոս Մեծ կայսրի կողմից Կ. Պոլիս կանչվեց և դաստիարակ կարգվեց նրա Արկադիոս և Հոնորիոս որդիների համար։ Հետագայում անցնելով Եգիպտոս՝ նվիրվեց անապատական կյանքի, այնտեղ ստացավ մեծ հռչակ և մեռ. 445 թ.։ «Հարանց վարք»-ում կան բազմաթիվ զրույցներ Արսեն անապատականի մասին[1]։ Իսկ Հայսմավուրքներում ունենք նրա համառոտ կենսագրությունը։

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Տօն և հանգիստ սուրբ և մեծ հօրն և երգնաւոր հօրն հարանց Արսենիոսի երանելոյ սինկլիտոսին. «Երանելին Արսենիոս՝ էր մեծ իշխան Թէոդոսի մեծ արքային, յոյժ հանճարեղ և իմաստուն. Եթող զամենայն և կրօնաւորեցաւ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 206։*

Այլ տպ.—Յիշատակ է Արսենի մեծի անապատականի, «Երանելին...» (*հրատ.* G. Bayan), *տես՝ Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1927/1930, p. 422—424.

Բնագրի ֆրանս. թարգմանությունը՝ „En ce jour commémoration du grand anachorète Arsène (Arseni) *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

2 (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վարք և յիշատակ սուրբ հօրն Արսէնի. «Սուրբ հայրն Արսենիոս էր ազգաւ լատինացի, մեծ իշխան և նախարար՝ մեծի կայսերն Թէոդոսի. և էր իմաստուն յոյժ և հանճա-

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* J. Pinius, „De S. Arsenio anachoreta in monte Scheti Libiae", *Acta Sanctorum*, Julii t. IV, Parisiis, 1868, p. 605—631. J. Nirschl, „Lehrbuch der Patrolegie und Patristik", Bd. III, Mainz, 1885, S. 180—181. *Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Թ, Վենետիկ, 1813, էջ 278—286։*

[1] *«Վարք սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին», Վենետիկ, 1855, հտ. Ա—Բ։*

րեղ...», *տես՝ «Ճառ սրբոյ վկայիցն» ևն («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 735։*

Այլ տպ.— Վարք և յիշատակ *ևն.* «Սուրբ հայրն Արսենիոս...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 815—816։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Սուրբ հայրն Արսենիոս...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 558—559։*

3 (Անանուն խմբագր.).

Արսենի. «Էր իշխան մեծ Թէոդոսի արքային. Երող զամենայն և եղև կրօնաւոր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ № 3658, էջ 189բ։*

⊠ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 313ա—313բ) ևն. Հալեպի Քառ.-Մանկ. եկեղ. ձեռ. № 151 (էջ 761բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 488բ), № 10 (էջ 454ա) ևն. Կիպրոսի-Անթիլիասի ձեռ. № 12 (էջ 196բ). Մարբուրգի* WdtB Ms. Or. Fol. 4254 (517r).

Հմմտ. հուն. բնդարձակ վարքը, որ Ը դարի վերջերից և Թ-ի սկզբներից է. „Vita [S. Arsenii anachoretae] auctore S. Theodoro Studita ex pervetusto codice Petri Seguierii, Franciae Cancellarii, varie collata", *Acta Sanctorum*, Julii t. IV, p. 617—630. *Հմմտ. նաև հուն. այլ վարք, որը տեղ է գտել Սիմեոն Մետափրաստեսի Հայսմավուրքում, Ժ դարից.* Г. Ф. Церетели, „Житие иже во святых отца нашего Арсения Великого", С.-Петербург, 1899, стр. 1—33.

ԱՐՍԷՆ ԱՍԼԻԿԵԱՆ

Տես՝ ՍՏԵՓԱՆ ԱՍԼԻԿԵԱՆ։

ԱՐՍԷՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ

(Arsenius patriarcha Hierosolymitanus)

Երուսաղեմի պատրիարք, ազգությամբ հայ, ԺԱ դ. սկզբին։ Հիշատակվում է որպես Ս. Սիմեոն Հայկազնի կենսագիրներից մեկը։ Այդ մասին կան բազմաթիվ աղբյուրներ և ուսումնասիրություններ, որոնցից ձեռքի տակ ունենք հետևյալ հրատարակությունները.

1) D. Papebrochius, „Ad tomum tertium Maji tractatus praeliminaris de episcopis et patriarchis sanctae Hierosolymitanae Ecclesiae", *տես՝ Acta Sanctorum*, Maii t. III, Parisiis, 1866, p. XLIV.

2) P. Boschius, „De S. Simeone monacho et eremita in monasterio S. Benedicti de Pado-Lirona prope Mantuam in Italia", *տես՝ Acta Sanctorum*, Julii t. VI, Parisiis, 1868, p. 319—324. *Հեղինակը հրատարակել է նաև Սիմեոնի անանուն հին վարքը՝* „Vita auctore monacho Padolironensi anonymo et coaevo ex codice Ms. Ingolstadiensi, collato cum alio Ms. et editis exemplaribus", ibidem, p. 324—337.

3) Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 860—865։

4) Ղ. Ալիշան, «Ս. Սիմէոն ճգնաւոր և սարկաւագ Հայկազն», Բազմավէպ, *1884, էջ 5—12։*

Ըստ պատմական տվյալների՝ Սիմեոն Հայկազնը Հայաստանից անցնում է Երուսաղեմ, ուր մոտիկ հարաբերության մեջ է գտնըվում Արսեն պատրիարքի հետ. հետո՝ նրա հանձնարարական նամակով, որն ուղղված էր Արևմուտքի աշխարհիկ և հոգևոր իշխանավորներին, շրջում է եվրոպական երկրներում և վերջում հաստատվում է Իտալիայի Մանտուա քաղաքի մոտ գտնվող Պադոլիրոն գյուղի Բենեդիկտյան վանքում (1013 թ.), ուր և մահանում է (1016 թ.)։ Սիմեոն Հայկազնի լատին կենսագիրներն ավանդում են, որ հիշյալ վանքում, նրա նշխարների հետ միասին, պահվում էին Հայաստանից նրա բերած հայերեն Սաղմոսարանն ու Նոր Կտակարանը, ինչպես և Արսեն պատրիարքի հանձնարարական նամակը։ Հիպպ. Դոնեսմոնդին իր «Մանտուայի եկեղեցական պատմություն»-ում, որը հրատարակվել է ԺԷ դ. սկզբներին, ասում էր, որ Արսեն պատրիարքը ոչ միայն մի հանձնարարական նամակ գրեց «լատիներեն լեզվով, բայց հայկ. տառերով», որը «որպես նշխար պահվում է Ս. Բենեդիկտոսի վանքում», այլև «շարադրեց նրա վարքը, որը Հռոմի Վատիկանյան Մատենադարանում է գտնվում»[1]։

---

1 „Arsenio Patriarca di Gerusalemme, il quale descrisse la vita sua, che si ritrova nella Libreria

Այս հայատառ լատիներեն նամակի մասին պատմաբանները դժվարանում են այժմ հաստատ բան ասել, որովհետև ֆրանսիական մեծ արշավանքի ժամանակ Պադոլիրոնի վանքի դիվանը ցիրուցան եղավ. բայց նամակի լատիներեն լատինատառ բնագիրը պահպանվել է պատմական աղբյուրներում և հրատարակվել մեկից ավելի անգամներ (Wion-ի, Donesmondi-ի, Papebrochius-ի, Boschius-ի մոտ), իսկ վերջին անգամ Ղ. Ալիշանի կողմից, առընթեր հայ. թարգմանությամբ՝ «Արսենիու պատրիարքի Երուսաղեմացւոյ՝ թուղթ յանձնարարութեան վասն Սիմէովնի միանձին և անապատականի»[1]:

Արսեն պատրիարքի այս նամակի մասին տարբեր կարծիքներ կան բանասիրության մեջ: Ըստ ոմանց՝ նամակը գրված է եղել, ինչպես տեսանք, հայատառ լատիներենով, բայց հետագայում վերածվել է լատինատառի. ըստ ուրիշ կարծիքի՝ այդ նամակը կարող է շարադրված լինել հունարեն լեզվով և հետագայում թարգմանված լատիներենի: Նշելի է նաև, որ լատ. առկա բնագիրն ընդմիջանկյալ մասեր ունի և Ալիշանն իրավամբ մտածում էր, որ դա, ըստ երևույթին, իսկականը չէ, «այլ համառօտեալ և յերիւրեալ ի յետնագունէ, թերևս յետ կորստեան բնագրին, ըստ յուղոյ ևեթ»[2]: Մյուս կողմից՝ հաստատ է, որ Վատիկանյան Մատենադարանում այժմ չկա Արսենի գրած այն «Վարք»-ը, որի մասին հիշատակում է Դոնեսմոնդին. բայց կարծվում է, որ այս «Վարք»-ը ուրիշ բան չէր, եթե ոչ հայերեն լեզվով գրված մի ուրիշ և ավելի երկար նամակ, որ Արսեն պատրիարքն ուղղել է Սիմեոնին և որից հետագայում, ամենայն հավանականությամբ, Սիմեոնի լատին կենսագիրները պիտի քաղած լինեն նրա կյանքի մասին այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Հայաստանում ապրած շրջանին:

Գ. Բոսքիուսը, որ բոլոր աղբյուրների օգտագործմամբ կազմել է Սիմեոն Հայկազնի կենսագրությունը, այս հարցերի մասին գրում է.

„Porro non solum Sancti corpus ex eo tempore apud Padolironenses summo in pretio est; sed et alia, quae ad ipsum aliquando pertinuere; ut cilicium; Psalterium, ac Novum Testamentum, litteris Armenicis exarata; et alia non nulla, quae ipsius Sancti fuisse cognoscuntur, ut auctor est Wion loco jam saepe assignato; ubi ait, ea istic pro reliquiis asservari, atque in capsula quadam cerni reposita, una cum epistola Arsenii patriarchae Hierosolymitani, Armenicis item scripta characteribus; quam ipse ibidem Latine versam producit: dedit eamdem et Hippolytus Donesmondus Hist. eccles. Mantuan. lib. 3, pag. 187, et Mabillonius ad calcem miraculorum; imo et Papebrochius noster tom. III Maii in Hist. Patriarch. Hierosol. pag. XLIV et seq. ex scheda, neschio unde accepta, peregrini tamen atque exotici characteris, quae sic habet“[1].

Նամակի հայտնի բնագիրը բերելուց հետո շարունակում է.

„Hanc epistolam, quam perperam credidit Graecam fuisse, interpolatam ab interprete Latino censuit Papebrochius, quatenus ea continet tamquam praeteria, quae discedente Hierosolymis in Europam Simeone, adhuc erant futura et Arsenio proinde ignota. Hinc illa ejus exempto uncis inclusimus. Mabillonius dubitat, rectene ex Armenico in Latinum versa sit; quod si ita est, diversam putat censendam esse ab ea, de qua in Actis fit mentio, quod infra examinabitur. Antonius de Yepes in Chronico generali S. Benedicti Hispanice scripto, ad annum Christi 1016, Haesi, inquit, „ad hanc epistolam. Et primo, quidem, qua ratione patriarcha Hierosolymi-

di Vaticano di Roma, scrisse ancora una lettera latina, ma in caratteri armeni, in commendatione di questo Santo, la quale in S. Benedetto si conserva quasi reliquia“. Տե՛ս Ippol. Donesmondi, „Historia ecclesiastica di Mantova“, t. I, Mantova, 1612, p. 159. Հմմտ. Ալիշան, էջ 7, ծան. 1:

[1] Ալիշան, էջ 7:

[2] Ալիշան, էջ 8, ծան. 1:

[1] Boschius, p. 321.

tanus inde fidem facit, Simeonem eremitam adiisse Gallaeciam? Secundo autem, pudore suffundendus fuisse videtur mihi Sanctus, si litteras commendatitias circumferret, quibus eum patriarcha viventem canonizaret, tamquam optimum et sanctissimum, narrando poenitentiam et austeram, quam tenebat, vitae rationem". Tum ea subdit, unde quivis intelligat, dubiae prorsus fidei visum illi esse hoc monumentum. Nos id etiam demiramur, cur hujus epistolae autographum (pro autographa enim asservari illam Padolirone credimus) sit scriptum Armenice ab Arsenio, Sanctum Italis et Hispanis, ad quos ibat, commendante; cum sciret illam in hisce partibus ignotam esse: nam si Simeon, qui Armenus erat, intelligi in Occidente non poterat, ideoque etiam commendandus erat, quia non sciebat linguam, ibi utique notam; quid eum juvare illic poterat scriptum Armenicum, multo, quam loquela perceptu difficilius? Tum cur de hac epistola nusquam meminit auctor Vitae? Cur tum saltem producta non fuit, cum Romae tam male habitus Simeon episcopum nactus esset Armenum? Haec eo tantum dicta sunto, ut lucem huc aliquam afferant, quorum interest; quam ipsi jam pridem Benedictini Hispani Gallique, exoptarunt"[1].

Սիմեոն Հայկազնի կենսագրության աղբյուրներում Արսենը պարզապես անվանվում է «Երուսաղեմի պատրիարք»։ Դ. Պապեբրոքը նրան զետեղել է Երուսաղեմի հունաց պատրիարքների այն ցուցակում, որ ինքն է կազմել, և որպես ժամանակ նշանակել է՝ «1016-ից առաջ», ելնելով Սիմեոնի մահվան հայտնի թվականից։ Բայց պետք է նկատի ունենալ, որ հունական պատրիարքների գիտական-քննական ցուցակներում այդ անունը տեղ չունի։ Ընդհակառակն՝ հայերեն լեզվով կամ հայկ. տառերով գրող պատրիարքը, որը և հայազգի Սիմեոնի կյանքին մոտիկից տեղյակ է, կարող էր հայ և հայոց պատրիարք լինել։ Այդպես էլ՝ Բառնաբաս վրդ. Գանձակեցին, որը Երուսաղեմի հունաց և հայոց պատրիարքների գավազանագիրքն է կազմել պատմական աղբյուրների հիման վրա, նշում է, որ Արսենը հայոց պատրիարք է եղել 32 տարի (1006—1038 թթ.)[1] *և այս տեղեկության համար որպես աղբյուր ցույց է տալիս Երուսաղեմի Հայոց Մատենադարանի մի ձեռագիր՝ «յորում պարունակին պատմութիւնք և յիշատակարանք Սրբոց, ժողովեալ ի ձեռն Երուսաղէմացւոյ մեծաւ գնեայ ուրումն բարեպաշտի. և յիշատակարանք որ գտանին ի վերջաւորս գրեանց գրեանց, որ ի թանգարանի Սրբոյ Աթոռոյս, և արձանագրութիւնք և տապանագիրք պատրիարքաց»։*

¹ Ibidem, p. 321—322.

ԱՐՍԷՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Հայտնի է Արսէն դպիր *անվամբ*[2]*, ԺԸ դարի հեղինակ, ծննդով Կ. Պոլսեցի, բայց ծագումով Կեսարացի, ինչպես ստորագրում է ինքը՝ «Արսէն դպիր զարմիւ Կեսարեան»։ Աշակերտել է Յակոբ Նալյանին՝ նրա դպրոցում։ Հեղինակել և իր միջոցներով 1749 թ. հրատարակել է* «Գիրք սահմանաց» *անունով մի հանրագիտարան, որի մեջ ամփոփված են ժամանակի գիտությունները, բազմապիսի «սահման»-ների (տերմինների) տակ։ Հեղինակն իր ընդարձակ առաջաբանում («Նախադեկութիւն») ի միջի այլոց ընդգծում է իր աշխատության կարևորությունն ու նշանակությունը հետևյալ կերպով. «Գիտութիւն գրոցն՝ ստացեալ լինի ի ձեռն ճանաչման սահմանականի ճշմարտութեանն. զի ոչինչ ի՛ր ճանաչի՝ թարց յատկութեանցն և բնութեանց. և ո՛չ այլ ինչ՝ բացատրող զբնութիւնս՝ և զյատկութիւնս իրաց՝ հետևօղս ըն*

1 *Բառնաբաս վրդ. Գանձակեցի, «Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի ի Յակովբայ առաքելոյ Տեառնեղբօրէ մինչև ցմերս ժամանակ», Կ. Պոլիս, 1872, էջ 36։*

2 *Տարբեր է Պողոս Տիվրիկեցի Թոռոսյանի ուսուցիչ՝ Կ. Պոլսեցի մանկավարժ Արսեն դպիրը (մեռ. 1771 թ.), որը հայտնի գիտնական ու տաղերգու Բաղդասար դպրի որդին էր։ Նրանից որևէ գրավոր երկ հայտնի չէ մեզ։*

նոյնում բնութեան, եթէ ո՛չ սահմանն, որ է բան կարճառօտ՝ յայտնիչ բնութեան, ենթակայ իրողութեան». որով՝ «հմտութիւն սահմանացն գիտութեան՝ է՛ գերազանցագոյն քան զամենայն գիտութիւնս, և ներփակեցեալ է և շարակայլեալ ունի յինքեան՝ զամենայն իմաստասիրական տեսութիւնս»։ Բառարանում գլխավոր տեղը տրված է տեսական և բարոյագիտական առարկաներին, բայց բավականին լայն ծավալ է տրված նաև «արտաքին» գիտություններին. այսպես՝ իմաստասիրական և աստվածաբանական տերմինների հետ կողք կողքի, այնտեղ այբբենական կարգով գտնվում են նաև այլազան նյութեր, որոնք վերաբերում են, օրինակ, քերականության, տիեզերագիտության, տոմարագիտության, չափերի, կշիռների, հանքերի ևն ևն։

* * *

Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց, ըստ կարգի այբուբենիցն ի մի վայր հաւաքեցեալ: Ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի տեառն Ղազարու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Գրիգորի երիցս երանեալ րաբունապետի: Եւ հրամանաւ Կոստանդնուպօլսոյ պատրիարգ, տեառն Յակոբայ յոգնիմաստ և աստուածաբան վարդապետի: Երկասիրութեամբ նուաստագունեղ և չնչին բանասիրէ՝ Արսէն դպրոյ Կոստանդնուպօլսեցւոյ: Իսկ և արդեամբք և գոյիւք ի նոյնոյ լոյս ածեցեալ: Ի թուին Հայոց (ՌՃՂԸ) Փետրվար ամսոյ 17: (Ի տպարանի չնչին Յովհաննիսի):

528 էջ (շարվ. 16×11.6 սմ)։ Սկզբում կա՝ «Նախադեկութիւն առ բարեսէր ընթերցօղսդ», էջ 2—9, և երկու աղօթք, որ են՝ «Աղերսանք երգախառն առ մայրն ողորմութեան» և «Դարձեալ առ ամենասուրբ կոյսն Մարիամ, ոգեալ ըստ կերպի տաղաչափութեան, որոյ սկզբնատառքն՝ ասեն զայս. Թագդ ոսկեղէն՝ ծիածան նշանին», էջ 10—11։ «Գիրք սահմանաց»-ի բնագիրը կրում է «Յոգնադիմի աստուածաբանական, բնական, բարոյական և քաղաքական իրողութեանց գիտութիւնք» խորագիրը (սկ. «Աբսինդոսն՝ է խոտ իմն դառնագոյն, և ծանրագոյն հոտով»), էջ 13—519։ Հետևում է բնագննական մի համառոտ բառարան՝ «Բարք ոմանց կենդանեաց» խորագրով (սկ. «Ագռաւն և գայլագռաւն բարուքն են երկչոտք»), էջ 520—523։

Վերջում՝ «Յիշատակարան տպեցման գըրքոյս», որ է՝

«Շնորհիւ...։ Արդ՝ թէպէտ զանազան սահմանք գտանին, և կարէին գտանել յայսմիկ, թէ՛ ի յաստուածաբան վարդապետաց, և թէ՛ իմաստնոցն յարտաքնոց, բայց վասն համառօտելոյ զերկարութիւն բանից՝ աստէն զանց արարաք։ Եւ զի՝ իւրաքանչիւր սահմանք որք եղեալ կան աստ, և սահմանեն զիր ինչ, ո՛չ միապէս և ըստ նոյն կերպի, այլ զանազանաբար, զի ոմանք զէութիւն սահմանեն, ոմանք ըստ ներգործութեանցն, ոմանք ընդհանրապէս, ոմանք ըստ մասնաւորութեանցն, ոմանք բաժանմամբ, և ոմանք ըստ յատկութեանցն պէսպէս՝ և պարագայիցն որոշման ցուցանեն, և զանազանապէս ծանուցեալ յայտ ածեն։ Զի ըստ Դաւթի փիլիսոփայի՝ վեց են տեսակք սահմանելոյ զիրսն, որ զհամայն էակս յայտ ածօղ՝ և զգիտօղն սահմանեաց. (ա՛յս է զիմաստասիրութիւնն) տալովն զերկուսն ի հուպ ենթակայէ և ի կատարմանէ, և զերկուսն ի հեռի ենթակայէ և ի կատարմանէ. զմինն յարտօնութենէ, այսինքն՝ յառաւելութենէ և ի գերազանցութենէ. և զմիւսն ի ստուգաբանութենէն, որ ասէ թէ՝ իմաստասիրութիւնն՝ է սիրելութիւն իմաստութեան։ Որ և իմ հարեալ ի սէր սիրելւոյն խանդակաթօրէն, շարայարեցի ի սմին պլոգունս, զորս կա՛մ իմովս ուսայ փորձիւ, և կա՛մ զապագայս հարցաքննմամբ ինձ նախածանեայ, մինչ ընթեռնուի զմատեանս սրբազանից հարց և իմաստասիրաց վաղեմագունից. զի ստոր ասեմ, յիմոցն դոյզն ինչ զոլ ներ աստէն, և բազմապատկագոյնք յայլոց, որ իբր ի պարտէզս իմաստնոց զգնալով և զբօսնելով, զզանազան բուրմանց նոցին գիտութեան զքիմս իմ առ եղեալ հոտոտեցայ։... Այլ ևս յիշման արժան առնել զթրծեալս ի թոնիր ապականութեան՝ զԱրսէն աւանդակորոյսս. և զհայրն

իմ՝ զՅարութեան որդի Կեսարեան Կարապետն. և զմայրն իմ հանգուցեալ ի Քրիստոս՝ զՄիլքին. և զեղբարսն իմ զՍտեփան և զՄկրտիչն. և զայլ մերձաւորսն մեր յիշեսջիք ի տէր։ Այլ և յետ այսց՝ յիշեսջիք և զտպագրող սորին զՆիշին Մահտեսի Յօհաննէս, անուամբ և թէ սարկաւագս. և զծնօղսն իմ զՄահտեսի Ղազարն, և զմայրն իմ զՀռիփսիմէն, և զորդեակն իմ զտիրացու Ստեփանն. և զայլ ամենայն արեանառու մերձաւորսն մեր հանդերձ ննջեցելովքս։ Իսկ և յիշեսջիք զաշխատաւոր գործարանիս մերոյ զշարաբարդօղ սորին զտիրացու Անտոնն. և զծնօղսն իւր հանգուցեալ զԿեսարացի Գրիգորն, և զմայրն իւր զՄարիամն։ Նաև զմիւս աշխատաւոր գործարանիս զքրտնաջան՝ զխոյեայ Սեւանցի զԻգնատիոսն, և զծնօղսն իւր հանգուցեալ զԿարապետն, և զմայրն իւր։ Եւ զայլ աշխատաւորսն մեր յիշեսջիք ի տէր, և դուք յիշօղքդ յիշեալ լիջիք յերկնից արքայութիւնն, որ է օրհնեալ ի յաւիտեանս. Ամէն»։

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Տես՝ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ, «Արտադրութիւն յորդորական գըլխոց»։

ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, «Արտադրութիւն յաղագս աստուածային մարմնաւորութեան բանին» (կամ «Արտադրութիւն առաքելական...»)[1]։

ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ, «Արտադրութիւն վասն անձին մարդոյ»։

ԱՐՏԱՉԻ ԱԹՈՌ

Արտազի եպիսկոպոսական աթոռի,— Ս. Թադեոս առաքյալի վանքում,— մասին ունենք ԺԴ դարում Զաքարիա Ծործորեցու ձեռքով խմբագրված մի պատմական հիշատակարան, որը հիմնված է Ստեփանոս Տարոնացու (Ե դար) և Հովհաննես Մաղարթեցու (Է դար) այժմ անհայտ գրվածքների վրա։ Հրատարակված է «Յիշատակագրութիւն եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» *խորագրով,* **Արարատ**, *1868, էջ 102—105. ամբողջությամբ արտատպված՝ Սամուել Անեցու ծանոթությունների մեջ, տես՝ «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 279—283։ Ըստ այս հիշատակարանի՝ Արտազի եպիսկոպոսական աթոռը հաստատված է Թադեոս առաքյալի աշակերտ Թադդեի կամ Ադդեի կողմից, և նկատելի է, որ հիշատակարանի հորինման նպատակը եղել է հաստատել նույն աթոռի առաքելականությունը։ Սույն կարևոր աղբյուրն օգտագործել են նաև մեր ժամանակի մի քանի պատմաբաններ՝ հայոց հայրապետության առաքելական հաջորդության հարցը քննելիս։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. — *«Սրբշալոյս քրիստոնէութեան Հայոց», Վենետիկ, 1901, էջ 20 ծան. 1։*

Հացունի Վարդ. — *«Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն», Վենետիկ, 1927, էջ 97—109։*

Օրմանյան Մաղ. — *«Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 20, 24, 25, 28, 30, 31, 32, 33, 34 և 35։*

ԱՐՏԱՄԵՏԱՑԻ

Տաղերգու, որի ինքնությունն անհայտ է։ Նրա անունով հայտնի են երկու տաղեր, որոնցից առաջինը (սկ. «Ինձ ումէտ կայր») *կարող է իրոք նրա հեղինակությունը լինել, թեև տաղի տպագիր և ձեռագիր բազմաթիվ օրինակներից միայն մեկն է, որ վերջում կրում է նրա անվան հիշատակությունը պարունակող տողեր. իսկ երկրորդ տաղի (սկ.* «Վայրի հաւուկ մի») *մասին՝ բացահայտ է, որ Արտամետացին նրա հեղինակը չէ, այլ պարզապես եղել է նրա երգող-կատարողներից մեկը։ Նշում ենք երկուսն էլ։*

* * *

1. Գանձ վասն կարօտով ննջեցելոց. «Ինձ ումէտ կայր և կումէն վանց ֆո գալուտ,| Ակն ունէր սիրտս ու մընայր ֆո սուրբ տեսուտ...», *տես՝ «Գիրք սրբոյն Մաշտոցայ*

---

[1] *Համա. աստ, հտ. Ա, էջ 355 տ. 3—էջ 356 տ. 18։*

վարդապետի», Կ. Պոլիս, 1704, էջ 341—342։
8 տուն։

Այլ տպ.— Ողբ վասն կարօտով ննջեցելոց. «Ինձ ումէտ կայր և կումէն...», տես՝ «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի», Կ. Պոլիս, 1714, էջ 334—336։
8 տուն։

Այլ տպ.— Ողբ ի բերանոյ դարիպ և կարօտ մեռնողի. «Ինձ ումէտ կայր ու կուման վանց քո գալու,|Ակն ունէր սիրտս ու մընայր քո խրնդալու...», տես՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1726, էջ 340—341։
8 տուն։

Այլ տպ.— Ողբ են. «Ինձ ումէտ կայր...», տես՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1792, էջ 340—341։
8 տուն։

Այլ տպ.— Ողբ ի բերանոյ դարիպ և կարօտ մեռելի. «Ինձ ումէտ կայր ու կիւման...», տես՝ «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 131։
7 տուն։

Այլ տպ.— Ողբ են. «Ինձ ումէտ կայր և կուման...», տես՝ «Ծիսարան որ կոչի Մաշտոց», Շուշի, 1840, էջ 402—404։
7 տուն։

Այլ տպ.— Ողբ ի բերանոյ դարիպ և կարօտ մեռելի. «Ինձ ումէտ կայր ու կուման...», տես՝ «Ծիսարան որ կոչի Մաշտոց», Շուշի, 1858, էջ 402—404։
7 տուն։

Այլ տպ.— Տաղ ողորմ՝ ի բաժանել եղբարց մեռելի. «Ինձ ումէտ կայր և կուման...», տես՝ Տ. Պալյան, «Հայ աշուղներ», հտ. Ա, Զմյուռնիա, 1911, էջ 280—281։
9 տուն։ Վերջինը՝ «Արտամետցին ասաց զայս բան վասն ողբալոյ,|Թէ զոր դարիպ տեմնուս յօտար՝ դու զինքն ուսոյ,|Մի թէ անկնի խեղճ ի մտին յետ դառնալոյ,|Եւ ոչ երթայ յօտարութիւն յերկիր հեռու»։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 424 (էջ 341ա—341բ), № 616 (էջ 4ա—5ա), № 2736 (էջ 433բ—434ա), № 3081 (էջ 121ա—122ա), № 3112 (էջ 189ա—190ա), № 3352 (էջ 213բ—214բ), № 3594 (էջ 88բ—89բ), № 3595 (էջ 119ա—119բ, վերջից թերի), № 3884 (էջ 140բ—141ա), № 5284 (էջ 174ա—175ա), № 5672 (էջ 87բ—88բ), № 7707 (էջ 236ա—237ա), № 7709 (էջ 162բ, վերջից թերի), № 8710 (էջ 104ա—104բ, վերջից թերի), № 8982 (էջ 237ա—238ա)։

2. Տաղ վասն դարիպութեան. «Վայրի հաւուկ մի...» կամ «Ի վայրի հաւուկ մի...»։

Տարակուսից վեր է, որ այս տաղի հեղինակն Արտամետացին չէ։ Տաղը հայտնի է բազմաթիւ տարբերակներով, որոնցից երկուսը ժամանակին տպագրվել են մի քանի անգամ, տես՝ Ղ. Ալիշան (?), Բազմավէպ, 1862, էջ 205—206.— Գար. Սրվանձտյանց, «Մանանայ», Կ. Պոլիս, 1876, էջ 262—263.— Հովհ. Մկրյան, Երկրագունդ, 1888, էջ 13—14.— Կար. Կոստանյանց, «Մկրտիչ Նաղաշ և իր տաղերը», Վաղարշապատ, 1898, էջ 47—48.— Ղև. Հովնանյան, «Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռամկախառն», Վիեննա, 1911, էջ 44—45։ Մի երրորդ տարբերակ հրատարակել է Աս. Մնացականյանը՝ հանելով Երևանի Պետ. Մատ. № 5668 ձեռագրից, տես՝ Գիտական նյութերի ժողովածու (հրատ. Երևանի Պետ. Մատենադարանի), № 1, 1941, էջ 182։ Հետագայում նույն մատ. №№ 2676, 1748, 519 և 697 ձեռագրերից հանելով չորս նոր տարբերակներ՝ Աս. Մնացականյանը նախկինների հետ միասին հրատարակել է միաժամանակ յոթը տարբերակներ իր հետևյալ աշխատության մեջ. «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956, էջ 233—248, §§ 72—78։ Այս բոլոր օրինակներից միայն № 5668 ձեռագիրն է, որ բնագրի վերջում ունի Արտամետացի երգողի հավելվածը՝ «Եկայք եղբարք և լացէք զերգողըս բանիս, զԱրտամետացիս,|Հազար եղուկ և աւաղ ասացէք զեղկելիս» են։ Այս հավելվածը թե՛ իր տաղաչափությամբ և թե՛ բովանդակությամբ անհարիր է երգի բնագրին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Ղև.—*«Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռամկախառն», Վիեննա, 1911, էջ 41—45՝ «Անանուն տաղ»:*

Մնացականյան Աս. — *«Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր», Երևան, 1956, էջ 545—553:*

ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

Տես՝ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ:

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐԾԿԷԱՑԻ

Կոչվում էր նաև Աբրահամ: Վանահայր՝ Արծկեի Երաշխավոր վանքի: Ժամանակակից՝ Վահան Գողթնացու և հեղինակ՝ նրա վկայաբանության, որում նկարագրված են Հայաստանում արաբների կատարած ավերածությունները՝ 703/704 թվականներից մինչև 737 թվականը, երբ տեղի ունեցավ Վահան Գողթնացու նահատակությունը Ասորիքի Ռուծափ (այժմ Ռուզաֆա) քաղաքում, Դամասկոսի մոտ: Արտավազդը 744 թվականին գնալով մինչև Ռուծափ՝ Վահանի նահատակության մասին տեղում հավաքեց ստույգ տեղեկություններ, որոնք հիմք կազմեցին վկայաբանության համար, և Արծկե վերադարձավ 745 թ. հունվարի սկզբին: Արտավազդի գրած վկայաբանությունը ձեռնագրերից մեզ հայտնի է ընդարձակ երկու խմբագրություններով, որոնցից առաջինը, ըստ բոլոր երևույթների, նախնականն է: Այս վկայաբանությունը հետագայում մտել է նաև Հայսմավուրքների մեջ՝ կրճատումներով ու երեք տարբեր խմբագրություններով: Տես նաև՝ ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ:

* * *

1 (Ընդարձակ Ա խմբագր.).

Ողբք վասն չարեացն որ անցին ի վերայ աշխարհիս Հայոց ի ՃԾԲ թուականութեանն հրկիզութեամբ և գերութեամբ ի հարաւային ազգէն Իսմայելի. ընդ որում և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որ էր որդի սրբոյն Խոսրովու Գողթեան տեառն. և յետ ԼԳ ամի գերութեանն Հայոց կատարեցաւ սուրբն Վահան ի թուականին ՃՁԵ. «Ահա մերկացաւ սուրն վաղակատր ի պատենիցն, զոր տեսանող ակամբն յառաջագոյն սպառնացեալ ողբայր մարգարէն: Սուր ծարաւի արեամբ՝ զարթեալ ի մեզ ազգն Իսմայէլի, ընդ չորեսեան կողմանս երկրի գոչեալ առնձաբար...: Ի ժամանակս բռնակալութեան Տանկաց, զոր յետ մահուանն առաջնոյ Մահմետի, յութսուն և հինգ ամի իւրեանց, գրեն ի մի ժամանակս ի վերակացութեան Աբդլմելքեայ որդւոյ Մրուանայ, հուր ի մեզ վառեցին, սատանայի ի նոսա փչելով զբարկութիւնն...», Սոփերք Հայկականք, *հտ. ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 10—59: Ծանոթագրությունները՝ էջ 97—100:*

Վերջում՝ հիշատակարանը.

«Գործեցաւ այս յաւուրս Շամայ յամիրումն, յայնկոյս Եփրատայ գետոյն, ի Ռուծափ քաղաքի:

Իսկ յետ ութն ամի՝ կրոնահայրն Աբրահամ, որ և Արտաւազդ, առնոյր ընդ իւր ոմանս յեղբարցն, և իջեալ յԱսորեստանս, հասանէր ի քաղաքն Կաղինիկոս. անդ ի քաղաքին էջ և օթեվանս արարեալ ի կրօնաւորանոցին՝ որ կոչէր Դերման Զակքէ, որ բազում սիրով ընկալաւ զմեզ, և խրատ տայր որպէս զի մեծ զգուշութեամբ երթիցուք ի տեղին, զի մի՛ բուռն անկեալ ի թշնամեացն պատիժս կրեսցուք և մահ: Ապա զեղբարսն և զգրաստսն անդ թողեալ, առեալ ընդ իւր զմի ումն, և զտիւն և զգիշերն անցեալ մեծաւ աշխատութեամբ, ապա ընդ արշալուշսն առաւօտուն հասանէր ի տեղի կատարմանն: Եւ մտեալ ի վկայարանս սրբոյ նահատակին, երկրպագութիւն և գոհութիւն մատուցանէր Քս.ի: Եւ Թէոփիլէն այն որ և Աբու Ստեփանէ, բազում սիրով և գթով ընդ առաջ ելեալ մեզ և հանգոյց զմեզ. ի ձեռն նորա արար մեզ Աստուած մտանել ի սուրբսն: Եւ երկրպագեալ տեառն ի վկայարանս սրբոյն Սարգսի, և տեսեալ զեպիսկոպոսն այր ճըշմարիտ և երկիւղած յԱստուծոյ. և բազում սիրով և հիացմամբ ընկալաւ զմեզ: Եւ ապա կոչեցեալ զամենայն գիտուն մարդիկն՝ որք

երեւելիք էին ի դրան արքունի, որք քաջ տեղեակք էին վկայութեան սրբոյն. յորոց ուսեալ հաւաստապէս հոռոմ գրով ետուն մեզ զվկայութիւն քաջ նահատակին:

Եւ սիրով հրաժարեալք յեպիսկոպոսէն և յայլոցն, և աղօթեալք ի վկայարանի սրբոյն Վահանայ, գոհացաք զողորմութենէն Քս.ի. և անտի դարձեալ անցաք ընդ գետն Եփրատ, և առեալ զեղբարսն եկաք ի քաղաքն Ուռհայ. և աղաչեալ զեպիսկոպոսն՝ թարգմանեցաք զգիրսն ի հայ լեզու: Եւ անտի գնացեալք եկաք ի Հայս մերձ ի տօն Յայտնութեանն: Եւ գտեալ զեղբարս մեր ողջ, և խաղաղութեամբ գոհացաք զԱստուծոյ, որ զանարժանութիւնս մեր արժանիս արար հանդիպիլ այսմ շնորհի: Եւ ապա սկսայ պատմագրել, սկիզբն առնելով ուստի արժան իսկ էր. ի նոյն յարեալ զվկայութիւն սրբոյն Վահանայ վկային, ի յորդորումն ամենայն հաւատացելոց, ի փառս և ի գովեստ Աստուծոյ, որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արդ յետ ըմպելոյ զբաժակ պատուհասի աշխարհիս Հայոց ի հարիւր յիսուն և երկուք թուականին Հայոց՝ այս գործեցաւ, և զերեսուն և չորք ամս կացին ի գերութեան, մինչև ի հարեւր և ութսուն և վեց ամ թուականին. յորում հանդիպեալ վկայութիւն սրբոյն Վահանայ, խոստովանելով զտէր Յս. Քս. զորդին Աստուծոյ:

Արդ ի ձեռն այսց վկայութեանց, ձեզ հարց և եղբարց, ես տառապեալ անձնս և հանապազահիւանդ, և խորհրդապահ սրբոյ վկային, և վերստին պատճառք յորդորմամբ գրոցս վկայութեան, աղօթս առնել ի վերայ իմ աղաչեմ, որ զիմ անարժանութիւնս արժանի արար գրել և տալ զայս պատմութիւնս վերջնոց. զի թերևս ձեր աղօթիւք գտայց զերծեալ ի վատթարաց դասու. և որոց ասեն եթէ եկայք օրհնեալք հօր իմոյ, նոցա արժանի եղելոցն հանդիպել արասցէ Քս., և զմեզ զամենայն հաւատացեալքս անուան իւրոյ: Որում փառք» ևն (էջ 55—59):

Այս բնագրից քաղվածաբար տրված հատվածներ տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 250—253: Ավելի ընդարձակ հատվածներ տես՝ «Ընտիր էջեր հայ գրականության, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 1946, էջ 199—206:

Բնագրի ֆրնս. թարգմանությունը („Élégie sur les malheurs de l’Arménie, et le martyre de saint Vahan de Kogthen; épisode de l’occupation arabe en Arménie, traduit pour la première fois de l’arménien littéral, sur l’édition des RR. PP. Méchitaristes, par M. J. A. Gatteyrias“), տես՝ *Journal Asiatique*, VIIe série, t. XVI, № 2, août—septembre 1880, p. 177—214. Թարգմանչի նախաբանով:

2 (Ընդարձակ Բ խմբագր.).

Պատմութիւն անցից ի հարաւային ազգէ ի վերայ Հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որդւոյ Խոսրովի Գողթան տեառն. «Ահա մերկացաւ վաղակատրն ի պատենից, զոր տեսանողն յառաջագոյն գուշակեալ ողբայր զբարկութիւն տեառն ի վերայ Իսրայելին այն: Զարթեաւ ազգն Իսմայելի յանձնայ վանել զազգն Հայոց՝ ի սով, ի սուր և ի գերութիւն...: Եւ եղև ի ժամանակս Տաճկաց բռնակալութեան, յութսուն և եւթն ամի ունելութեան իւրեանց, Աբդլմելէք որդի Մրուանայ՝ դաւաճանութեամբ առաջէ և երդմնական խաղաղութեամբ, զի դիւրաւ ըմբռնեսցէ...», տես՝ Սոփերք Հայկականք, հտ. ԺԳ, էջ 61—91: Ծանոթագրությունները՝ էջ 100:

Վերջում՝ «Եւ վկայեաց սուրբն Վահան յՌուծափ քաղաքի ի ՃՁԶ թուականութեանն Հայոց, բարի խոստովանութեամբ, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն» (էջ 91):

3 (Համառոտ Ա խմբագր., Տեր-Իսրայելի).

Վկայութիւն սրբոյն Վահանայ Գողթնացւոյ. «Սուրբ վկայն Քրիստոսի Վահան՝ որդի էր Խոսրովու իշխանի Գողթն գաւառի. և յորժամ այլազգին հրամանաւ Աբդլմելիքի այրեցին զիշխանսն Հայոց ի Նախճաւան յեկեղեցին...», տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 138—139:

Այլ տպ.—Վկայութիւն... Վահանայ Գողթնացւոյն. «Վկայն Քրիստոսի Վահան՝ որդի էր Խոսրովու...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, 1927/1930, p. 214—216:

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Mar- „Martyre... de Vahan de Golthn“ *անունով, նույն էջերում, հրատարակչի կողմից:*

4. (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացւոյն. «Սուրբն Վահան էր ի Գողթան գաւառէն, որդի Խոսրովու Գողթնայ իշխանին: Ի ՃԾԲ թվականիս Հայոց, ի բռնակալութեան Տանկաց սուլթանին Աբտուլմելեքեայ, որ առաքեաց ի Հայս զայր ոմն ժանտաբարոյ, խիստ և անողորմ Կամս (*իմա՝ Կասմ*) անուն...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն» ևն («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 621—624:*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Սուրբն Վահան էր...», *տես՝ «Յայսմաւուր» ևն («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 683—686.*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Սուրբն Վահան էր...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 474—476:*

□ *Այս խմբագրությունն ուղղակի §§ 1 և 2 խմբագրությունների հիման վրա է կազմըված՝ նաև այլ աղբյուրների օգտագործմամբ, և է ավելի ընդարձակ, քան § 3-ը:*

5 (Համառոտ Գ խմբագր. անանուն).

Վահանայ Գողթնացոյն. «Սուրբն Վահան էր ի Գողղան (sic) քաղաքէ, ի վերին Վանանդայ, մերձ ի Նախջևան քաղաք. անուն հօրն Խոստրով (sic) տն. Գողդան գաւառի. և յորժամ զնախարարսն Հայոց այրեցին հրով ի Նախջևան և զմանկունսն գերեցին, տարան և զՎահան ի Դամասկոս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 257ա—257բ:*

Այս խմբագրությունը կազմված է § 3 խմբագրության կրճատմամբ:

⊠ *Ընդարձակ խմբագրություններին պատկանող կամ նրանց հետ առընչվող օրինակներ են Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 993՝* «Ողբ վասն չարեացն որ անցին ընդ աշխարհս Հայոց նրկիզութեամբ ի հարաւային ազգէն, ընդ որում և վկայութիւն Վահանայ որ էր որդի Խոսրովու Գողթան տեառն, որ կատարեցաւ ի հարիւր և յիսուն թուականին Հայոց» *(էջ 111բ—118ա), № 996՝* «Պատմութիւն վասն անցից ի հարաւային ազգէն ի վերայ Հայոց, և վկայութիւն Վահանայ որդւոյ Խոսրովու Գողթան տեառն» *(էջ 167բ—179ա), № 1522՝ խոր. նույն (էջ 182բ—191ա), № 1521՝* «Պատմութիւն և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնեցոյն» *(էջ 34ա—39բ), № 4774՝* «Պատմ. և վկայաբ. սրբոյն Վահանայ Գողթան իշխանին» *(էջ 124բ—129բ) և № 4822՝* «Վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որդւոյ Խոսրովու տեառն Գողթնեաց» *(էջ 132բ—138բ): Նմանապես՝ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 200 (էջ 439ա), № 213 (էջ 140ա) և № 231 (էջ 25ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2 (էջ 276ա) և № 224 (էջ 149ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1Ա (էջ 102) և № 97 (էջ 410բ). Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 146 (էջ 182ա). Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 1 (էջ 137):*

Որոշ օրինակներ ունեն սկ. «Անհա մերկացաւ սուրն վաղակատր ի կոտորել զգաւինս բանաւոր, ի ժամանակս բռնակալութեանն Տանկաց. զոր յետ [մահուանն] առաջին մոլեկանին Մահմետի...» *կամ ուղղակի* «Ի ժամանակս բռնակալութեան Տանկաց. զոր յետ մահուան առաջնոյ մոլեկանին Մահմետի»:

Համառոտ խմբագրությունների օրինակներ են՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 273ա—273բ) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 436բ), № 10 (էջ 390ա), № 213 (էջ 258բ), № 219 (էջ 307բ), № 228 (էջ 218ա), № 437 (էջ 545բ), № 695 (էջ 245բ), № 696 (էջ 141ա), № 701 (էջ 449բ), № 1035 (էջ 380ա), № 1036 (էջ 446ա) և № 1037 (էջ 417ա). Վիեննայի KKHB Cod. Arm. 17 (fol. 352[r]). *Մարբուրգի* WdtB Ms. Or. Fol. 4254 (fol. 438[v]). *Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 4787 (fol. 487[v]),

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ա, Վենետիկ, 1810, էջ 188—217։

Վերաշարադրում է Վահան Գողթնացու վկայաբանությունն ըստ նախնական խմբագրության, օգտագործելով նաև Գրիգոր Ծերենցի խմբագրության տվյալները։ Փորձում է հաշտեցնել երկու խմբագրություններում գոյություն ունեցող տարբերությունները։

Քիպարյան Կ. — «Պատմութիւն հայ գրականութեան», մասն Ա, հտ. Ա, Վենետիկ, 1944, էջ 202—203։

ԱՐՏԱՒԱԶԴ ԵՐԿՐՈՐԴ
(Artawazd [Artabazd] II, rex Armeniae)

Թագավոր Հայոց (55—34 թթ. նախքան մ. թ.), որդի և հաջորդ Տիգրան Բ Մեծի։ Հանդիսանում է Հայաստանում հելլենական մշակույթի ականավոր ներկայացուցիչ և հընագույն դեմքը, որին պատահում ենք հայ մատենագրության պատմության մեջ՝ որպես հեղինակ, ինչպես Պլուտարքոսն է վկայում, հունարեն լեզվով գրված թատերական, հռետորական և պատմական երկերի։ Նույն Պլուտարքոսի վկայություններից հայտնի է, որ դեռևս Տիգրան Բ-ն ինքը 69 թ. Տիգրանակերտում կառուցել էր մի թատրոն, որի բացման համար այնտեղ էին տարվել բազմաթիվ հելլեն դերասաններ[1]։ Նույնիսկ Արտավազդը մի ուրիշ թատրոն էր հիմնել Արտաշատում, ուր 53 թ. հայոց արքայաքրոջ և պարթևների արքայորդի Բակորոսի հարսանիքի առթիվ բեմադրվել էր Եվրիպիդեսի «Բակքոսուհիներ» ողբերգությունը[2]։ Դրանից հետո՝ Պլուտարքոսն ավելացնում է, որ ոչ միայն հելլենական լեզուն էր հնչում մայրաքաղաքի թատերական ներկայացումների և արքայական հանդիսությունների ժամանակ, այլ նաև հայոց թագավորը գրչով էր իր տուրքը տալիս հելլենական մշակույթին. «Իսկ Արտաւազդ ինքնին և Ողբերգութիւնս ևս քերթեալ ունի, և ճառս և արձանագրեալ Պատմութիւնս, յորոց կէսք կան և մինչև ցայսօր»[1]։ Դժբախտաբար մեզ ոչինչ չի հասել Արտավազդի երկերի այդ մնացորդներից։

Արտավազդ Բ-ի մասին եղած վերոհիշյալ սուղ տեղեկություններից ելնելով գերմանացի գիտնական A. H. L. Heeren-ը հայտնեց այն կարծիքը, թե Պլուտարքոսը, Կրասոսի կենսագրությունը գրելիս, օգտված լինի Արտավազդ Բ-ի պատմական երկերից[2]։ Իսկ ռուս գիտնականներ Յա. Ի. Սմիռնովի և Ա. Ի. Բոլտունովայի կարծիքով 1911 թ. Արմավիրում գտնված հուն. արձանագրությունը, որը չափածո է և պատկանում է Ա դարին (նախքան մ. թ.), մի հատված է անծանոթ մի ողբերգությունից, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Արտավազդ Բ-ն է[3]։

Մխիթարյան միաբան Կար. Տեր-Սահակյանը, ոգեշնչվելով Արտավազդի ողբերգությունների թողած պատմական արձագանքներից, ստորագրել է գեղարվեստական մի շարք էջեր՝ «Արտաւազդ Գ.ի երգերը» խորագրով[4]։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 15։

Աճառյան Հր. — «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 311, § 4։

Արմեն Հրանդ Ք. — «Առաջին հայ մատենագիրը», Ջանկ (հայագիտ. տարեգիրք), Ա տարի, 1948, էջ 37—50։

---

1 «Պլուտարքեայ Քերովնացւոյ Զուգակշիռք» (Թարգմ. Ե. Թոմաճանի), հտ. Գ, Վենետիկ, 1833, էջ 575։

2 Անդ, հտ. Դ, Վենետիկ, 1834, էջ 138։

1 Անդ, էջ 138։

2 Heeren-ի մասին տես Կ. Վ. Տրևերի մոտ (գրականության բաժնում)։

3 Սմիռնովի և Բոլտունովայի մասին, բացի վերջինիս ունեցած հոդվածից, տես նաև Գ. Գոյանի և Կ. Վ. Տրևերի աշխատությունները (գրակ. բաժնում)։

4 Կ. Տեր-Սահակյան, «Արտաւազդ Գ.-ի երգերը», Բազմավէպ, 1913, էջ 167—173, 224—228, 253—258, 305—310, 355—360 և 439—453։

Զարբհանալյան Գար. — *«Հայկական հին դպրության պատմություն», Դ տպ., Վենետիկ, 1897, էջ 171—172: Նույնը՝ Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 171—172:*

Լևոնյան Գար. — *«Թատրոնը հին Հայաստանում», Երևան, 1941, էջ 16—20:*

Հացունի Վարդ. — *«Հայոց հին պատմության տաղեր», Վենետիկ, 1936, էջ 255:*

Болтунова И. А. — „Греческие надписи Армавира", Տեղեկագիր *(ՍՍՀՄ Գիտ. Ակադ. Հայկ. ֆիլիալ), 1942, № 1—2 (15—16), էջ 35—36:*

Հայ. ամփոփումը՝ «Արմավիրի հունարեն արձանագրությունները» (էջ 56—59):

Անգլ. ամփոփումը՝ „Greek inscriptions of Armavir" *(էջ 59—61):*

Տես նաև հեղինակի մի նամակը (6 օգոստոս 1948 թ.) հրատարակված հետևյալ աշխատության մեջ (էջ 466—468).

Гоян Г. — «2.000 лет армянского театра», т. I: «Театр древней Армении по памятникам материальной культуры и древним текстам», Москва 1952.

Համախակի է խոսում Արտավազդի մասին, իսկ հատկապես Արտաշատի թատրոնի և Արտավազդի թատերական ու թատերագրական գործունեության մասին 101—175 և 466—468 էջերում:

Այս հրատարակության առթիվ տես՝

„Two Thousand years of the Armenian Theater; a Digest in English of Professor Georg Goyan's Recent Monumental Work in Russian, with additional essays in English and Armenian by other contributors", New York, The Armenian National Council of America, [1955?].

Тревер К. В. — «Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. —IV в. н. э.)», Москва—Ленинград, 1953, стр. 12—13, 117, 124, 126—132, 147.

ԱՐՏԱՒԱԶԴ ՄԱԶԱԶՈՒՆԻ

Թ/Ժ դդ. մատենագիր, որն Անձևացյաց Ատոմ իշխանի հրամանով գրել է Տանատ վարդապետի 10 հարցումների պատասխանը:

* * *

Լուծումն Արտաւազդայ Մազազունեաց տեառն, զոր բացայայտեաց սուրբ պատուիրանօք ի հրամանէ տեառն Ատոմայ Անձևացեաց իշխանի. «Հրաման քո[յ]ոյ աստուածսիրութեանդ, ո՛վ բարեփառ տէր, եկն եհաս վասն զհարցմունսն զոր Տանատայ մակագրեալ էին յիւրեանց նամակսն, և են այսոքիկ: Ա. Ուր յաւիտեանքն. Մանիքեցիքն ուր աստուածք ասեն, խրախճիր առանձինն երկինք և յաւիտեանս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2679, էջ 311բ—312բ:*

Վերջանում է հետևյալ բառերով. «Այս են նորա հարցմունքն և մեր պատասխանիքն լուծման»: Իսկ Տանատի հարցումները գտնըվում են նույն ձեռագրում՝ այս բնագրից անմիջապես առաջ և են.

— Հարցմունք Տանատայ կրօնաւոր քահանա[յ]ի և վարդապետի. Ա. Զի՞նչ ուր յաւիտեանքն: Բ. Զի՞նչ բողբոջեալ երեսներեակ: Գ. Զի՞նչ քառեակն Պիւթագորեայ: Դ. Զի՞նչ աստուածացեալ ցանկութիւնն: Ե. Զի՞նչ Փռիւգացւոյն յայտնի և գաղտնի այլանդակութիւնն: Զ. Զի՞նչ հարումն եւթնաձորոյն: Է. Զի՞նչ պղծումն Բեղփեգովրայ: Ը. Զի՞նչ շարժումն ձեռագործացն: Թ. Զի՞նչ ժառանգութիւն Մարթայի և Մարիամայ և արտաքսումն Ղազարու: Ժ. Զի՞նչ ձեռագիր յանցանացն» *(անդ, էջ 311բ):*

Արտ. Մազազանու թղթից հայտնի են երկու օրինակներ ևս, որոնք մեր վերոնշյալ № 2679 ձեռագրից են ընդօրինակվել. դրանք են՝ նույն Մատ. ձեռ. № 6228 (էջ 159ա—159բ) և № 4381 (էջ 229բ—230բ). Նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 218 (էջ 295բ—296ա):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարբհանալյան Գար. — *«Հայկական հին դպրության պատմություն», Գ տպ., Վենետիկ, 1895, էջ 568—569: — Նույնի Դ տպ., Վենետիկ, 1932, էջ 568:*

Թոռոսյան Հովի. — «Աստմեանց Նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք», Բազմավեպ, 1899, էջ 67:

Քոլանջյան Սուր. — «Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից», Բանբեր Մատենադարանի, № 5, 1960, էջ 210:

ԱՐՏԱՎԱԶԴ ՌԱԲԴԱՍ ՀԱՄԱՐՈՂ
(Nicolaus Artabasdus Rhabdas)

Ընդհանրապես անվանվում է Նիկողայոս Արտավազդ Զմյուռնացի, մականվանյալ Ռաբդաս: Բյուզանդահայ գիտնական՝ թվաբան և երկրաչափ: Ապրել է ԺԴ դ. առաջին կեսում: Ունի հուն. լեզվով շարադրված երկեր, որոնց թվում ուշագրավ են հատկապես թվաբանական երկու նամակները (տես ստորև՝ §§ 1 և 2): Դրանցից առաջինը, որը գրված է արքունի պաշտոնյա՝ «աղերսագրերի դիվանի պետ» (ὁ ἐπὶ τῶν δεήσεων) Գեորգ Խաչիկի (Γεώργιος Χατζύκης) խնդրանքով, վերաբերում է թվաբանական չորս գործողությունների բացատրությանը. իսկ երկրորդը, որն ուղղված է նույնպես արքունի պաշտոնատար Թեոդոր Զավուշին (Θεόδωρος Τζαβούχης), նվիրված է կոտորակների բաժանման ու բազմապատկման և քառակուսի արմատ հանելու կանոններին: Երկու նամակներն էլ գրված են Կ. Պոլսում. նրանցից երկրորդն ունի տարեթիվ՝ բյուզանդական 6849 թ., որ է՝ փրկչական 1341 թ.: Հեղինակության իրավունքով Արտավազդին է պատկանում նաև Մաքս. Պլանուդեսի „Ψηφοφορία κατ' Ἰνδούς" («Հաշուարկումն ըստ Հնդկաց») երկի վերախմբագրված մի օրինակը, որը նրա (Արտավազդի) կողմից կատարված բազմաթիվ փոփոխություններ ու հավելումներ է կրում (տես՝ § 3): Արտավազդը գրել է նաև քերականական մի փոքրիկ երկ իր որդու՝ Պողոս Արտավազդի համար (տես՝ § 4): Արտ. Ռաբդասի գործերն ուսումնասիրելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Պ. Տանրին, որը 1886 թ. առաջին անգամ հրատարակել է նրա երկու նամակները՝ հիմք ունենալով Փարիզի Bibl. Nat. Fonds Grec № 2428 (fol. 194—202, 225—245) և Suppl. Grec № 652 (fol. 154—160, 165—166) ձեռագրերը, ինչպես նաև օգտագործելով նույն մատ. Fonds Grec № 2535 (fol. 47), Fonds Grec № 2107 (fol. 115--122), Suppl. Grec № 682 (fol. 34) և Հռոմի Bibl. Vat. Cod. Vat. Graecus № 1411 ձեռագրերը: Տանրիի հրատարակությունն օժտված է կարևոր ցանկերով (անծանոթ բառերի, պատմական ու չափագիտական տերմինների, թվաբանական տերմինների): Կ. Հ. Գերհարդտը 1865 թ. հրատարակել է Պլանուդեսի «Հաշուարկումն ըստ Հնդկաց»-ի արտավազդյան խմբագրությունը՝ Փարիզի վերոնշյալ հուն. № 2428 (fol. 186—193) և № 652 (fol. 149—154) ձեռագրերի հիման վրա: Արտ.ի հուն. քերականությունը մնում է անտիպ: Արտ. Ռաբդասի հայ լինելու մասին առաջին կարծիքը հայտնել էր Պ. Տանրին, թեև որոշ վարանումով[1]. այդ կարծիքն այսօր անառարկելիորեն հաստատվել է Կ. Տեր-Սահակյանի և Ն. Ադոնցի ուսումնասիրություններով և ճանաչում է գտել գրականության մեջ (Գ. Բ. Պետրոսյան, Ա. Պ. Յուշկևիչ ևն): Ադոնցը կարծում է, որ Արտ. համարողի կրած մականունը՝ Ῥαβδᾶς (Ռաբդաս) ուրիշ բան չէ, եթե ոչ կրճատումը հուն. ῥαβδοφόρος բառի, որը նշանակում է մանկլավիկ (բառացի՝ գավազանակիր) և դրա հիման վրա համարում է, որ նա արքունի պաշտոնատարներից է, ինչպես են նրա վերոհիշյալ երկու թղթակիցները՝ Գեորգ Խաչիկն ու Թեոդոր Զավուշը, որոնք նույնպես հայտնի էին: Բյուզանդացի թվաբան Մանուել Մոսքոպուլոսը Արտ. Ռաբդասի խնդրանքով է գրել իր հայտնի երկը մոգական քառակուսիների մասին[2]:

[1] Արտավազդի նամակներին կցված անծանոթ բառերի ցանկում „Ὁ Ἀρτάβασδος" անվան համար Պ. Տանրին տալիս է այս ծանոթությունը. „Nom de famille de l'auteur, d'origine arménienne (?)", տես՝ „Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale...", t. XXXII, 1re partie, Paris, 1886, p. 244.

[2] Այս երկի լավագույն հրատարակությունը տվել է Պ. Տանրին՝ բնագրին առընթեր տալով նաև ֆրնս. թարգմանությունը, որ է „Τοῦ λογιωτάτου καὶ μακαριωτάτου κυροῦ Μανουὴλ τοῦ Μοσχοπούλου παρά-

* * *

1. Παράδοσις σύντομος καὶ σαφεστάτη τῆς ψηφοφορικῆς ἐπιστήμης, σχεδιασθεῖσα ἐν Βυζαντίδι τῇ Κωνσταντίνου, παρὰ Νικολάου Σμυρναίου Ἀρταβάσδου ἀριθμητικοῦ καὶ γεωμέτρου τοῦ Ῥαβδᾶ, αἰτήσει τοῦ πανσεβάστου ἐπὶ τῶν δεήσεων κυροῦ Γεωργίου τοῦ Χατζύκη, ῥάστη τοῖς ἐθέλουσι τούτην μετελθεῖν, ἤτει καὶ ἔχει οὕτως: „Τὴν δήλωσιν τῶν ἐν τοῖς ἀριθμοῖς ζητημάτων, πανσεβέστατε ἐπὶ τῶν δεήσεων..." (Exposition abrégée et très claire de la science du calcule, improvisée à Byzance de Constantin, par Nicolas Artavasde de Smyrne, arithméticien et géomètre, le Rhabdas, sur la demande du très honoré maître des requêtes, Me George le Khatzyce, très facile pour ceux qui veulent l'étudier, et que voici). *Տես՝* „Notices et extraits des manuscrits de la Bibliothèqne Nationale et autres bibliothèques, publiés par l'Institut National de France", t. XXXII, 1re partie, Paris, Impr. Nationale, 1886, p. 142—173.

Հուն.. բնագրի և նրա ֆրնս. թարգմանության լրիվ հրատարակությունն է։

Այլ տպ. տես՝ P. Tannery, „Notice sur les deux lettres arithmétiques de Nicolas Rhabdas (Texte grec et traduction)", Paris, 1886, p. 26—57.

Այլ տպ. տես՝ P. Tannery, „Mémoires scientifiques", t. IV, Toulouse—Paris, 1920, p. 86—117.

Բնագրի հայ. թարգմանությունը՝ «Համառոտական գիտության հակիրճ և շատ պարզ շարադրանք, հորինված Կոստանդիանոսի Բյուզանդիայում թվաբան ու երկրաչափ Նիկողայոս Արտավազդ Զմյուռնացու-Ռաբդայի կողմից, խնդրագրերի պալատի գերարգո պետ Գեորգ Խաչիկի խնդրանոք, չափազանց դյուրին՝ այն սովորել ցանկացողների համար. ահա, թե ի՛նչ է պարունակում նա», *տես՝ Գ. Բ. Պետրոսյան, «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում», Երևան, 1959, էջ 275—289։*

Այս երկի Գ. գլուխը, որը կրում է „Ἔκφρασις τοῦ δακτυλικοῦ μέτρου" («Յաղագս եղանակի հաշուելոյ ի վերայ մատանց») *խորագիրը, ունեցել է առանձին հրատարակություններ, որոնցից առաջինն է հետևյալը.*

Nicolai Smyrnaei Artabasdae, graeci mathematici, Ἔκφρασις numerorum notationis per gestum digitorum. Graeca nunc primum prodeunt e Bibliotheca Reg. Vaticana, et illustriss. Lelii Ruini, legati apostolici ad. Reg. Poloniae. Item Venerab. Bedae de indigitatione et manuali loquela lib. Fred. Morellus, interpres Reg. recensuit, attica latine vertit et elogio manus notulisque illustravit. Lutetiae, apud Fred. Morellum, architypographum Reg., MDCXIV. Non sine reg. privilegio.

2. Τῷ ὑπερλίαν ἐκθύμως φιλουμένῳ τῷ Κλαζομενεῖ Τζαβούχῃ Θεοδώρῳ, ὁ Νικόλαος Ἀρτάβασδος Σμυρνόθεν ἐκ Βυζαντίδος ὁ Ῥαβδᾶς γράφει τόδε: „Τὴν δήλωσιν τῶν ἐν τοῖς ἀριθμοῖς ζητημάτων, λαμπρότατέ μοι Τζαβούχη..." (À mon très cher ami de coeur, Théodore Tsavoukhe de Clazomène, Nicolas Artavasde de Smyrne, le Rhabdas, écrit ceci de Byzance). *Տես՝* „Notices et extraits...", t. XXXII, 1re partie, p. 174—243.

Հուն. բնագրի և նրա ֆրնս. թարգմանության լրիվ հրատարակություն է։

Այլ տպ. տես՝ P. Tannery, „Notice sur les deux lettres arithmétiques de Nicolas Rhabdas", p. 58—127.

Այլ տպ. տես՝ P. Tannery, „Mém. scient.", t. IV, p. 118—187.

Բնագրի հայ. թարգմանությունը՝ «Իմ շատ թանկագին, սրտակից բարեկամ Թեոդոր

δοσις εἰς τὴν εὕρεσιν τῶν τετραγώνων ἀριθμῶν, ἣν ἐποιήσατο βιασθεὶς παρὰ Νικολάου Σμυρναίου Ἀρταβάσδου ἀριθμητικοῦ καὶ γεωμέτρου τοῦ Ῥαβδᾶ. (Du très-savant et très-bienheureux maître Manuel Moschopulos, instruction pour l'invention des nombres carrés, qu'il fit forcé par Nicolaos de Smyrne Artabasdos, arithméticien et géomètre, le Rhabdas)", *տես՝ Annuaire de l'Association pour l'Encouragement des Etudes Grecques en France*, t. XX, 1886, p. 88—119. *Նույնի այլ տպ. տես՝* P. Tannery, „Mémoires scientifiques", t. IV, Toulouse—Paris, 192 0, p. 32—60.

Մաղուխի Կլազոմենացուն Նիկողայոս Արտավազդ Զմյուռնացի Ռաբդան գրում է սույնը Բյուզանդիայից», *տես՝ Գ. Բ. Պետրոսյան, «Մաթեմատիկան Հայաստանում...», էջ 289—323։*

3. Ψηφοφορία κατ' Ἰνδοὺς ἡ λεγομένη Μεγάλη—ταύτης ἡ φράσις τοῦ φιλοσοφωτάτου ἐν φιλοσόφοις καὶ τιμιωτάτου ἐν μοναχοῖς κυροῦ Μαξίμου τοῦ Πλανούδη καὶ τοῦ Ῥαβδᾶ Νικολάου. ***Տես՝ Փարիզի*** Bibl. Nat. Suppl. Grec № 652, fol. 149r—154r.

Այս բնագիրը մի քանի ձեռագրերի հիման վրա, „Μαξίμου μοναχοῦ τοῦ Πλανούδη Ψηφοφορία κατ' Ἰνδοὺς ἡ λεγομένη Μεγάλη" *խորագրով, տպագրվել է հետևյալ հրատ. մեջ.* C. J. Gerhardt, „Das Rechenbuch des Maximus Planudes", Halle, H. W. Schmidt, 1865, S. 1—47.

4. [Քերականութիւն լեզուի Յունաց] տես՝ ***Փարիզի*** Bibl. Nat. Fonds Grec № 2650, fol. 147r—150r.

5 [Թուղթ առ Անդրոնիկոս Զարիդաս] տես՝ ***Փլորենտիայի*** Bibl. Laurent. Cod. Graecus № 59,35, fol. 204r—204v.

Այս մասին Կ. Կրումբախերը գրում է. „Ein ganz inhaltsleerer Brief eines Rhabdas (wohl des Mathematikers Nikolaos Rhabdas) an den 'Philosophen Andreas Zarides' steht im Cod. Laur. 59,35 fol. 204r—204v"[1].

Անդրոնիկոս Զարիդասը (Andronikos Zaridas) *Մաքսիմոս Պլանուդեսի աշակերտն էր։*

[1] K. Krumbacher, „Geschichte der byzantinischen Litteratur", 2. Aufl., München, 1897, S. 560.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ. — *«Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 67—68։*

Ադոնց Նիկ. — *«Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 535—537։*

Աճառյան Հր. — *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա., Երևան, 1942, էջ 316, § 34։*

Պետրոսյան Գ. Բ. — *«Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում», Երևան, 1959, էջ 7, 66, 157—182 և 275—323։*

Ռուս. ամփոփումը՝ Г. Б. Петросян, „Математика в Армении в древнейших и средних веках" *(էջ 359—390)։*

Անգլ. ամփոփումը՝ G. B. Petrossian, „Mathematics in ancient and medieval Armenia" *(էջ 391—421)։*

Տեր-Սահակյան Կար. — *«Հայազգի անծանօթ մոռացած հեղինակներ»,* Բազմավէպ, *1906, էջ 53—56։ Սրա շարունակությունն է հաջորդը։*

Տեր-Սահակյան Կար. — *«Հայերը բիւզանդական գրականութեան մէջ», անդ, էջ 107—109։*

Քիպարյան Կ. — *«Պատմութիւն հայ գրականութեան», մասն Ա., հտ. Ա., Վենետիկ, 1944, էջ 28։*

Выгодский М. Я.— «Арифметика и алгебра в древнем мире», Москва—Ленинград, 1941, стр. 194—195.

Юшкевич А. П.— «История математики в средние века», Москва, 1961, стр. 202, 323—324, 434.

Cantor M. — „Vorlesungen über Geschichte der Mathematik", 4. Aufl., Bd. I, Leipzig—Berlin, 1922, S. 513—515.

Cauer D. — „Ῥαβδᾶς", *հետևյալ հրատ. մեջ.* „Paulys Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft", zweite Reihe [R-Z], Erster Halband, Stuttgart, 1914, S. 11—12.

Günther S. — „Geschichte der Matematik", I Teil, Leipzig, 1908, S. 171, 173—174, 199, 239.

Tannery Paul — „Manuel Moschopoulos et Nicolas Rhabdas", *Bulletin des*

Sciences Mathématiques et Astronomiques, Paris, 2e série, t. VIII (XIX), 1884, p. 263—277.

Tannery Paul — „Notice sur les deux lettres arithmétiques de Nicolas Rhabdas (Texte grec et traduction)", *տես՝* „Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale et autres bibliothèques, publiés par l'Institut National de France", t. XXXII, 1re partie, Paris, Impr. Nationale, 1886, p. 121—252

Նույնի արտատպությունն է հետևյալը.

Tannery Paul — „Notice sur les deux lettres arithmétiques de Nicolas Rhabdas (Texte grec et traduction)„ (Extrait des 'Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale' etc., t. XXXII, 1re partie), Paris, Impr. Nationale, 1886. 136 *էջ*։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. M. Cantor, *Zeitschrift für Mathematik und Physik*, Historisch-literarische Abteilung, XXXII Jahrg., 1887, S. 59—62.

Tannery Paul — „Mémoires scientifiques", t. IV, Toulouse—Paris, 1920.

Բովանդակում է արտատպությունը հեղինակի վերոնշյալ գործերի. „Manuel Moschopoulos et Nicolas Rhabdas" *(էջ 1—19) և* „Notice sur les deux lettres arithmétiques de Nicolas Rhabdas (Texte grec et traduction)" *(էջ 61—198)*։

ԱՐՏԵՄ

ԺԸ դ. հայ աշուղ։ Իսկական անվամբ՝ Հարություն։ Ապրել է Գանձակում։ Հորինել է հայ. և թրք. երգեր։

* * *

1. Ո՞վ չի գիդա. «Ո՞վ չի գիդա, որ խըմելը վընաս ա,|Խըմել ու արքելը բա՛րգ անել պէտք ա...», *տես՝ Գ. Թարվերդյան (կազմող), «Հայ աշուղներ», Երևան, 1937, էջ 68։*

Այլ տպ.— Ո՞վ չի գիդա. «Ո՞վ չի գիդա...», *տես՝ Համիկ Սահակյան (կազմող), «Հայ աշուղներ XVII—XVIII դդ.», Երևան, 1961, էջ 369։*

2. Թէ Աստուած կը սիրես. «Թէ Աստուած կը սիրես, եա՛ր, արի՛ մէկ ճալըս տես,|Էշխովդ էրված է ջիգարս, աննճար մըդկըրտալըս տես...», *տես՝ Գ. Թարվերդյան (կազմող), «Հայ գուսաններ», Երևան, 1957, էջ 54։*

Այլ տպ.— Թէ Աստուած կու սիրես. «Թէ Աստուած կու սիրես...», *տես՝ Համիկ Սահակյան, «Հայ աշուղներ...», էջ 368։*

3. Ես կուզեմ. «Ես կուզեմ՝ աշխարհի մարդիկ|Մէկ-մէկու ճաւասար լինեն...», *տես՝ Գ. Թարվերդյան, «Հայ աշուղներ», էջ 70։*

ԱՐՏԵՄԻՈՍ ՊԱՏՐԻԿ*

(Artemius, dux Aegypti)

Հռոմայեցի պատրիկ, դուքս Եգիպտոսի, վկայացած՝ Անտիոքում (Ասորիք) Հուլիանոս Ուրացող կայսրի օրով, 363 թ.։ Ունենք նրա ընդարձակ վկայաբանությունը երկու խմբագրություններով, հունարենից թարգմանված։ Հայերեն բնագրերը հեղինակի անունը չեն կրում։ Հուն. մատենագրության մեջ վկայաբանության հեղինակ է ոմն Յովհաննես կրոնաւոր, *որը երկար ժամանակ համարվում էր* Յովհաննես Դամասկացին, *իսկ վերջին հետազոտությունների համաձայն* Յովհաննես Ռոդացին *է։ Հայկ. Հայսմավուրքներում ունենք նաև Արտ.ի վկայաբանության համառոտ խմբագրությունները։ Ձեռագրերում* Արտեմիոս *անունը պատահում է նաև* Արտեմ, Արտեմէոս, Արտեմէս, Արտեմիս, Արտեմաս *ձևերով։*

* * *

1 (Ընդարձակ Ա խմբագր.).

Վկայաբանութիւն Ս. Արտեմիոսի. «Ի ժամանակս ամբարշտին Յուլիանոսի էր սուրբն Արտեմիոս մեծաւ փառօք պատուեալ ի մեծ թագաւորէն Կոստանդիանոսէ՝ ալեօք ծերացեալ...», *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 115, fol. 131v—144r (?).

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. — Պատմական և մատենագրական լայն տեղեկություններ՝* J. van Hecke, „De S. Artemio, martyre, Antiochiae, in Syria", *Acta Sanctorum*, Octobris t. VIII, Parisiis, 1866, p. 847—885.

2 (Ընդարձակ Բ խմբագր.).

Վկայութիւն մեծի մարտիրոսին սրբոյն Արտեմիոսի. «Յետ համբարձման տեառն մերոյ և փրկչին յերկինս, նորին աշակերտացն իսկ և առաքելոցն ընդ տիեզերս ամենայն զաւետարանն արկանելով...», *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 118, fol. 78^r—87^v.

3 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայութիւն մեծի մարտիրոսին սրբոյն Արտեմիոսի. «Յաւուրս Յուլիանոսի ուրացող արքայի՝ սուրբն Արտեմիոս էր պատուեալ պատրկութեամբ ի Կոստանդիանոսէ մեծ արքայէն, և բարի ալեօք ծերացեալ և դուքս և աւգուստալիոս բազում ժամանակս կացեալ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 197—198։*

Այլ տպ.—Վկայաբանութիւն սրբոյն Արտեմէոսի. «Յաւուրս Յուլիանոսի...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XV, Paris, 1920, p. 340—342.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre de saint Artémius“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

4 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբոյն Արտեմեայ. «Յամս ուրացողին Յուլիանոսի որ տանջէր զքրիստոնեայսն ի մեծ քաղաքն Անտիոք, գնաց սուրբն Արտեմէս առ թագաւորն...», *տես՝ «Ճառ սրբոց վկայից» են («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 167—168։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Յամս ուրացողին Յուլիանոսի...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 180—181։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Յամս ուրացողին Յուլիանոսի...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 129։*

5 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Արտեմայ. «էր ի քաղաքէն Կոստանդինուպոլսի, պատուեալ յարքայէն Կոստանդիանոսէ Մեծէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 60բ—61ա։*

⊠ *Համառոտ խմբագրությունների օրինակներ տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433՝ «... Արտեմէոսի» (էջ 80բ—81բ) են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 129ա), № 10 (էջ 99ա), № 219 (էջ 61ա), № 695 (էջ 88ա), № 1035 (էջ 105ա) № 1036 (էջ 119ա), № 1037 (էջ 126ա) և 1048 (էջ 56բ). Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 149 (էջ 377ա), № 151 (էջ 153բ). Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 4787 (fol. 82^v). *Մարբուրգի* WdtB Ms. Or. Fol. 4254 (fol. 112^r).

Հայտնի են Արտ.ի վկայաբանության հուն. երկու բնագրեր։ Նրանցից առաջինը՝ „Ὑπόμνημα ἤγουν ἐξήγησις τοῦ ἁγίου καὶ ἐνδόξου μεγαλομάρτυρος καὶ θαυματουργοῦ Ἀρτεμίου, συλλεγὲν ἀπὸ τῆς ἐκκλησιαστικῆς ἱστορίας Φιλοστοργίου καὶ ἄλλων τινῶν παρὰ Ἰωάννου Μοναχοῦ“ *հրատարակվել է մի քանի անգամ. տես՝* A. Maius, „Spicilegium romanum“, t. IV, Romae, 1840, p. 340—397. *Նույն բնագիրը, տողընթեր լատ. թարգմանությամբ, տես Acta Sanctorum*, Octobris t. VIII, p. 856—885. *Նաև* J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. XCVI, Parisiis, 1860, p. 1251—1320. *Երկրորդը Սիմեոն Մետափրաստեսի բնագիրն է՝* „Μαρτύριον τοῦ ἁγίου μεγαλομάρτυρος Ἀρτεμίου“, *տողընթեր լատ. թարգմանությամբ, տես՝* J.-P. Migne, „Patr. curs. compl.“, ser. gr., t. CXV, Parisiis, 1864, p. 1159—1212.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ներս. — *«Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերէնէ», Վիեննա, 1951, էջ 99—100։*

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Է, Վենետիկ, 1813, էջ 511—520։*

ԱՐՏԵՄՈՆ ԼԱՒՈԴԻԿԵՑԻ*
(Artemon Laodicenus)

Վկա՝ Դիոկղետիանոս կայսրի օրով, 303 թ., Կեսարիայում։ Հայսմավուրքներում ունենք նրա վկայաբանությունը։ Ձեռագրերում անունը պատահում է նաև Արտեմոնիոս, Արտեմ, Արտեման, Արդեման և Արտեմիոս *ձևերով։*

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Արտեմոնայ քահանայի և մարտիրոսի. «Ի ժամանակս կռապաշտ արքային Դիոկղիտիանոսի էր քահանայ Լաոդիկեայ քաղաքին ծերունին Արտեմոն...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 161—162։*

Այլ տպ. — Վկայութիւն *են.* «Ի ժամանակս...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1928, p. 287—290.

Բնագրի ֆրանս. թարգմանությունը՝ „Martyre de saint Artémon prêtre et martyr“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 288ա—289ա)։*

2 (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Արտեմեայ քահանային. «Սուրբ քահանայն Արդեման էր ի Լաոդիկեայ գաւառէն՝ յամս Դիոկղետիանոսի անօրէն արքային...», *տես՝ «Ծառ սրբոց վկայիցն» են («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 662—663։*

Այլ տպ. — Վկայաբանութիւն *են.* «Սուրբ քահանայն Արդեման...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 730—732։*

Այլ տպ. — Վկայաբանութիւն *են.* «Սուրբ քահանայն Արդեման...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 505—506։*

3 (Անանուն խմբագր.).

Արտեմայ եպիսկոպոսին. «Յամս Դէոկղիտիանոսի արքային՝ էր ի Լաոդկեայ քաղաքէն ծերունին Արտեմ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 173բ—174բ։*

⊠ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 288ա—289ա) են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 7 (էջ 455ա), № 10 (էջ 415ա), № 213 (էջ 279բ), № 219 (էջ 321բ), № 228 (էջ 233ա), № 695 (էջ 265ա), № 696 (էջ 163բ), № 701 (էջ 480ա), № 1035 (էջ 404բ), № 1036 (էջ 477ա), № 1037 (էջ 441բ) և № 1048 (էջ 292ա). Հալեպի Քառ. մանկ. եկեղ. ձեռ. № 149 (էջ 153ա) և № 151 (էջ 687բ). Մարբուրգի* WdtB. Ms. Or. Fol. 4254 (fol. 468v). *Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 4787 (fol. 319r).

Հմմտ. վկայաբանության հուն. ընդարձակ բնագիրը՝ „Βίος καὶ πολιτεία τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν ’Αρτέμωνος τοῦ θαυματουργοῦ“, *Archiv für Slavische Philologie*, Berlin, Bd. XX, 1898, S. 185—197. *Հմմտ. նաև հուն. համառոտ երկու բնագրերի՝* „Elogium S. Artemonis mart. fabulosum, ex Menaeis ad diem XXIV Martii“ *և* „Elogium alterum pariter fabulosum ex Menaeis ad diem VIII, Octobris“, *արընթեր լատ. թարգմանությամբ, տես՝ Acta Sanctorum*, Octobris t. IV, p. 44—46, 46—47.

ԱՐՏԵՄՈՆ [ԱՐՏԵՄԱՍ] ՀԵՐԵՏԻԿՈՍ*
(Artemon haereticus)

Բ դարի աղանդավոր, որը ժխտում էր Հիսուսի աստվածությունը և նրան համարում՝ սոսկ մարդ։ Անտիոքի 254 թ. ժողովի և Եվսեբիոս Կեսարացու կողմից համարվում է,

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Պատմական-մատենագրական լայն տեղեկություններ՝* J. Bueus, „De S. Artemone presb. mart. forte Laodiceae in Phrygia“, *Acta Sanctorum*, Octobris t. IV, Parisiis, 1866, p. 41—47. *Մ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 69—70։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* P. Batiffol, „La littérature grecque“, 4me éd., Paris, 1901, p. 142—143. Δ. Σ. Μπαλᾶνος-*ի հոդվածը՝ ի* „Μεγάλη ’Ελληνικὴ ’Εγκυκλοπαιδεία“ (*հրատ.* Παῦλος Δρανδάκης, *տպ.* ’Ο Φοῖνιξ“), τ. Ε’, σ. 695—696.

Պողոս Սամոսատցու նախակարապետը: Նրա հետևողներն անվանվում էին Արտեմոնականներ: Հայ մատենագրությունից մեզ ծանոթ են նրան վերաբերող հետևյալ բնագրերը:

* * *

1. Եւսեբեայ Կեսարու յեկեղեցւոյ պատմութենէ, ի հինգերորդ դպրութենէ: Վասն այնոցիկ որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի և որո՞վ օրինակաւ էին նոքա, և թէ ո՞րպէս համարձակեցան նոքա եղծանել զգիրս սուրբս. «Եւ յիմաստնոց անտի յայսցանէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6453, էջ 181բ—183բ:*

Այս բնագիրը, որը հաճախ է պատահում գրչագրերում, նույն է Եվսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմության Ե դպրության ԻԸ գլխի հետ՝ ըստ հին թարգմանության[1]*:*

2. Վասն Արտեմոնի. «Արտեմոն յետ խաչելութեանն տեառն ԼԴ ամի անցելոյ[2] աշակերտեցաւ Յոհաննու աւետարանչի է ամիս և ոչ եկեաց հաստատուն [յ]ուղիղ հաւատս, զորմէ ասէ Յոհաննէս՝ Ոմանք առ ի մէնջ ելին. և յետ մահուան առաքելոյն ասէ Արտեմոն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 368բ—369ա:*

Արտեմոնի մասին ասվում է, թե «գրէ ընթերցուածս և բաժանէ յերկուս բնութիւնս զմի Քրիստոսն և [յ]երկուս որդիս, և կարգէ երկուս տօնս բաժանելոյ ըստ երկուց որդւոցն, [ի] ԻԵ դեկտեմբերի կարգէ զծնունդն ի սրբոյ կուսէն և զծնեալ[ն] սուտ մարդ ասէ, և ի Զն յունուարի սահմանէ զմկրտութիւնն, և զայն բանին հօր ասէ և բաժանէ զԱստուած Բանն յիւր միացեալ և աստուածացեալ մարմնոյն»:

Այս հատվածը գտնվում է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի ԺԱ գլխում, որ է «Վկայութիւնք վասն ծննդեանն տեառն և մկրտութեանն, զի պարտ է ի միում աւուր տօնել ի վեցն յունուարի ամսոյն»:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 512 (էջ 196ա), 4425 (էջ 187բ—188ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 266 (էջ 70ա—70բ) են:

☐ *«Կանոնագիրք Հայոց»-ում «Կանոնք Անտիոքայ» անունով հայտնի կանոնախումբը կրում է հետևյալ նախաբանը.*

«Յետ բազում ժամանակաց անցանելոյ դարձեալ բորբոքեցաւ աղանդն Արտեմոնայ, վասն ամենասուրբ տաւնից այլափոխումն առնել և յաւելուածս արտաքոյ կանոնեալ սուրբ ընթերցուածոց որ ի սուրբ առաքելոցն աւանդեցաւ եկեղեցւոյ սրբոյ. վասն որոյ ժողովեալ յԱնտիոք եպիսկոպոսք ԼԱ՝ սահմանեցին զկանոնս զայս, բանս ԻԵ»[1]*:*

Որոշ ձեռագրերում այս նախաբանը խորագրված է՝ «Եւսեբիոսի բան»[2]*:*

ԱՐՏԵՓԻՈՍ
(Artephius)

ԺԲ դարի ալքիմիկոս և հերմական փիլիսոփա, հրեա կամ արաբ: Ունի բազմաթիվ երկեր, որոնցից հատկապես հիշատակելի են՝ „Liber secretus“ *և* „De characteribus planetarum, cantu et motibus avium, rerum praeteritarum et futurarum, lapideque philosophico“. *Նրա գործերից հայ. թարգմանությամբ մեզ հայտնի է հետևյալը:*

* * *

Բանք Արթէֆիոսի: Գիրք յայտնութեան գաղտնի սքանչելեաց բնութեան, արարեալ ի գերազանց իմաստնոյն Արթէֆ[ի]ոսի ի լատին բարբառ, և թարգմանեալ յումեմնէ բանասիրէ Յովհաննու Սեհոնեան (sic) փիլիսոփայէ ի հայկական[3] լեզուի՝ ի յօգուտ և ի ցնծութիւն և ի լուսաւորութիւն ազգիս մերոյ ի փառս ամենաբարձրոյն Աստուծոյ: *Կիպրոսի ձեռ. № 67, էջ 6ա—22ա:*

---

1 *«Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յասորւոյն ի հինգերորդ դարու», Վենետիկ, 1877, էջ 405—411:*

2 *Ուրիշ օրինակներում՝* զկնի խաչելութեան տեառն յոլով ամաց անցելոյ:

1 *«Կանոնագիրք Հայոց» (հրատ. Վազգեն Հակոբյան), հտ. Ա, Երևան, 1964, էջ 204:*

2 *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 171, էջ 127:*

3 *Ձեռագրում՝* ի հայկս հայկական:

Սկզբում ունի՝ «Նախերգանք ի թարգմանչէ առ ընթերցողս»: *Բուն բնագրի վերնագիրն է՝* «Խորհուրդ գիրգ հնագունի և գերազանց փիլիսոփային Արթէֆիոսի ասացեալ՝ Բանք ի վերայ գաղտնի արհեստին և փիլիսոփայականի քարին»: *Սկզբնատողը՝* «Անուն գոյացական անթիմոնն է ի մասանց Երևակին»: *Վերջում՝ թարգմանության հիշատակարանը. «Եղև թարգմանեալ ի գալլիականէ ի հայս ի Յովհաննէս Սերհոսեան (sic) փիլիսոփայէ Զմյուռնիացւոյ յամի տեառն 1780 փետրուար»:*

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 776՝ «Բանք Արղեֆիոսի[1]. Գիրք և յայտնութիւն գաղտնի սքանչելեաց բնութեան, արարեալ ի գերազանց իմաստնոյն Արղեֆ[ի]ոսի ի լատին բարբառ, թարգմանեալ Յովհաննու Սերնոսեան (sic) փիլիսոփայէ ի հայկական լեզու...» *(էջ 158բ—171ա): Վերջի հիշատակարանից պարզվում է թարգմանության վայրը. «Զայս եղև թարգմանեալ [ի] գաղղիականէ ի հայ բարբառ ի Յովհաննու Սերնոսեան (sic) փիլիսոփայէ Զմիւռնացւոց (sic) Թուականի (sic)..., ի Կոստանդնուպոլիս ի Բերայ»:*

Հմմտ. այս բնագրի լատիներեն-ֆրանսերեն միացյալ հրատարակությունը („Artephii antiquissimi philosophi de arte occulta, atque lapide philosophorum liber secretus.—Le livre secret du tres-ancien philosophe Artephius traitant de l'art occulte et de la pierre philosophique“), *հետևյալ գրքում.* „Trois traitez de la philosophie naturelle non encore imprimez. Scavoir Le secret livre du tres-ancien philosophe Artephius, traitant de l'art occulte et transmutation metallique, latin françois. Plus Les figures hierogliphiques de Nicolas Flamel ainsi qu'il les a mises en la quatriesme arche qu'il a bastie au Cimetiere des Innocens à Paris, entrant par la grande porte de la ruë S. Denys, et prenant la main droite, avec l'explication d'icelles par iceluy Flamel. Ensemble, Le vray livre du docte Synesius abbé Grec, tiré de la bibliotheque de l'empereur sur le mesme subject, le tout traduit par P. Arnauld...“, Paris, chez Guillaume Marette, 1612, p. 6—45.

[1] *Ձեռագրում՝* արղեֆգոսի:

ԱՐՏԻԹԷՈՍ կամ ԱՐՏԻԹԷՍ

Արտիթեոսը Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրներից մեկն է, որն այժմ անհայտ է: Նրանից է վերցված Գրիգոր Լուսավորչին և որդիներին վերաբերող մի հատված, որը կազմում է Խորենացու Պատմության Բ գրքի Զ գլուխը: Ոմանք այս հեղինակին նույն են համարում հայ քրմորդի Արտիթեոսի հետ, որին, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոս է ձեռնադրել[1]:

* * *

Յայտարարութիւն սակաւուք սննդեան և վարուց Գրիգորի և որդւոցն, ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնակեցի ի Յագոռեանի. «Այր ոմն ի Պարսից, ոչ ի փոքունց և յաննշանից, որում անուն էր Բուրդար, գնացեալ անտի և եկեալ ի կողմանս Գամրաց՝ պանդխտեցաւ ի Կեսարիայ...», *տես՝ «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 219—221:*

Նույնը տես Խորենացու Պատմության հայ. բնագրի և նրա թարգմանությունների բոլոր հրատարակություններում:

Այս հատվածը ձեռագրերում երբեմն պատահում է և արտագրված առանձին. տես Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 207՝ «Մովսէսի Խորենացւոյ՝ Վասն սննդեան և վարուց» *են (էջ 208ա—209ա):*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 41:*

Աճառյան Հր. — *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 319:*

[1] *Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1835, էջ 626—627:*

Գարագաշյան Ա. — *«Քննական պատմություն Հայոց», մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 322—323։*

Զարբհանալյան Գար. — *«Պատմություն հայ հին դպրության (Դ—ԺԳ դար)», Դ տպագր., Վենետիկ, 1932, էջ 181։*

Մսերյան Զարմ. — *[«Պատմություն հայ գրականության»] Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8803, էջ 15ր—16ր։*

Մրմրյան Հ. Գ. — *«Պատմություն հայ գրականության», մասն Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 67։*

Չամչյան Միք. — *«Պատմություն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 366—396։*

Օգանյան Գագ. — *«Պատմություն հայ լեզուի և բանահյուսության», Մարզվան, 1913, էջ 184։*

Халатянц Гр. — «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского», Москва, 1903, ч. I, стр. 136—138; ч. II, стр. 50—51.

ԱՐՏՈՐԷԻՑ ԳԻՐՔ

Գյուղատնտեսական բովանդակությամբ հայերեն գիրք, որի բնագիրն առայժմ անհայտ է։ Կ. Պոլսի Հայոց Ազգ. Մատ. № 188 ձեռագիրը պարունակում էր այս գրքի թուրքերեն թարգմանությունը՝ «Թաղլա քիթապը»: *Տրված նկարագրության համաձայն՝*[1] *երկն ունի այսպիսի անվանաթերթ.*

Հալէ Քիթապ Խիլասէի Արտօրէից, պաշլանտը եազըլմաղա սէնէ ի էրմէնիէն 1268. վէ սէնէ ի Մէսիհիյյան էֆէնտիմիզ՝ 1819, նոյեմբեր 24: ...Պու քիթապ ճայնատան թիւրքճէյէ թէրճիմա՛ էյլէնմիշ, պիզ տէ միւրատ էյլէտիք քարշըլըղը եազմաղէ, ի ՌՄՀԶ *(=1827)* թուականիս և մարտի 20. ձեռամբ Թալասցի Գրիգոր դպրի:

Ըստ այսմ՝ գիրքը հայերենից թարգմանվել է 1819 թվականին, իսկ 1827 թ. այս թարգմանությունն ընդօրինակվել է Թալասցի Գրիգոր դպրի ձեռքով։ Բնագիրը, որ բաղկացած է 295 գլուխներից, գրավում է ձեռագրի 5—187 էջերը՝ նյութերի այբբենական ցանկի հետ միասին։ Վերջում՝ փոքրիկ բառարան. «Թաղլա քիթապընըն հայնասընտան ալընան լուղէթլէր պէյան» *(էջ 189—195), այսինքն՝ թարգմանության մեջ հայերեն բնագրից մնացած բառերի բացատրություն։*

Այս ձեռագիրն այժմ անհայտ է։ 1925 թ. գտնվում էր Կ. Պոլսի Զարդարյան գրատանը, որի ցուցակում նշված էր. «Արտօրէից— թրգմ. տճկ. Թալասցի Իգնատիոս գրիչ»[1]*։ Այս ծլատ նշումը մեզ գոնէ տալիս է թարգմանչի անունը. բայց նորից անհայտ է մնում գրքի հեղինակը և բնագրի շարադրման ժամանակը։ Չենք կարող ասել՝ երկի հայ. բնագիրը ԺԹ դ. սկզբների՞ն է շարադրված եղել, թե ԺԸ դարից է գալիս։*

ԱՐՏՈՒՐ

Տես՝ ՖՈՒՌՆԻՒԱԼ (Ռիքարդ)։

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Տես՝ ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

ԱՐՔԱՅԵՂԲԱՅՐ (Յովհ.)

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԱՅԵՂԲԱՅՐ։

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Տես՝ ԴԱՒԻԹ ԳԱՆՁԱԿԵՑԻ, «Հարցումն պէսպէս խոստովանութեամբ բանից և պատահմանց եկեղոց ի զգուշութիւն, զոր հարցեալ հանրակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի, զԴաւիթ ումն քահանայ գիտնական յոյժ»։

ԱՐՔԵՂԱՅՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(Archelaus ep.)

Համարվում է հեղինակ հայտնի հերետիկոսապետ Մանիի հետ եղած վիճաբանա-

---

1 *Բարգեն կթղ. [Կյուլեսերյան], «Ցուցակ ձեռագրաց...», Անթիլիաս, 1961, էջ 1072—1073։*

1 *Տես՝ «Ընդարձակ գրացուցակ Պիմէն Զարդարեան գրատան 1925», Կ. Պոլիս, 1925, էջ 133։*

կան մի գրություն („Acta disputationis Archelai...“)։ Ոմանց կարծիքով ազգությամբ հայ է։ Այդ մասին Լեոյի մոտ կարդում ենք. «Քրիստոնէական գրականութեան մէջ մնացել են Արքեղայոս եպիսկոպոսի հակաճառութիւնները Մանիի դէմ (275—277)։ Նորագոյն գիտական հետազօտութիւնները հաւանական են համարում, որ այդ Արքեղայոսը հայ եղած լինի և առաջնորդ մի թեմի, որ գտնւում էր Տաւրոսեան լեռների շրջանում, գուցէ այժմեան Սղերդի մօտերքում»[1]։

Բանասիրական գրականության մեջ վիճաբանական հիշյալ գրվածքի հեղինակ է համարվում ասորի Հեգեմոնիոսը. „Hégémonios est, d'après Héraklianos cité par Photius (cod. 85), l'auteur des *Acta disputationis Archelai episcopi Mesopotamiae et Manetis haeresiarchae*. Le texte original de ces *Acta*, dont on a quelques fragments, était grec plus vraisemblablement que syriaque, et la rédaction a pu en être faite dans la première moitié du IVe siècle. Nous avons les *Acta* en une version latine ancienne. La dispute de l'évêque et de l'hérésiarque est une fiction littéraire adoptée par l'auteur pour réfuter le manichéisme; mais les sources manichéennes auxquelles il a puisé font de son oeuvre une précieuse mine d'informations“[2].

ԱՐՔԻՊՊՈՍ [ԱՐՔԻՊՊԷՍ] ԵՒ ՓԻԼԻՄՈՆ
(Archippus et Philemon)

Կողոսացի վկաներ, որոնք նահատակվել են Ներոն կայսրի (54—68 թթ.) օրով։ Նրանց վկայաբանությունը, որը նորկտակարանային անվավերականների շարքին է պատկանում, հայտնի է հայ. մի քանի խմբագրություններով. դրանցից հնագույնը (ընդարձակը) հունարենից է թարգմանվել։

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Արքիպպայ եւ Փիլիմոնի. «Սուրբ վկայքն Քրիստոսի էին ի քաղաքէն Կողոսացւոց, աշակերտ լեալ սրբոյն Պօղոսի առաքելոյն յաւուրս ամբարիշտ արքային Ներոնայ...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 144—145։*

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201 (էջ 138ա) և № 205 (էջ 77ա). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 116 (fol. 31v).

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայութիւն աշակերտացն Պօղոսի՝ Փիլիմոնի և Արքիպպեայ սարկաւագի, որք էին տեարք Ոնեսիմեայ ծառայի. «Սուրբքս այսոքիկ էին ի քաղաքէն Կողոսացւոց, աշակերտք լեալ սուրբ առաքելոյն Պօղոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մաս Բ, էջ 249։*

Այլ տպ.—Վկայաբանութիւն Արքիպպայ և Փիլիմոնի աշակերտացն սուրբ առաքելոյն Պօղոսի, որք էին տեարք Ոնեսիմայ ծառային. «Սուրբքս այսոքիկ էին ի քաղաքէն Կողոսացւոց...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XVI, 1927, p. 80—81.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre d'Archippas et de Philémon, les disciples du saint apôtre Paul, qui étaient les maîtres de l'esclave Onésime“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 125բ—126ա)։

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն Արքիպասայ և Փիլիմոնի. «Սոքա էին ի քաղաքէն Կողոսացւոց, աշակերտեալք առաքելոյն Պօղոսի...», *տես՝ «Ծառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 258։*

---

[1] *Լեո, «Հայոց պատմութիւն», հտ. Ա, Թիֆլիս, 1917, էջ 561։ Աղբյուր է ցույց տալիս՝ Հ. Ձ. Պ. Լինչ, «Հայաստան», հտ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 218—219։*

[2] P. Batiffol, „La littérature grecque“, 4me éd., Paris, 1901, 278. *Տես նաև* B. Altaner u. A. Stuiber, „Patrologie“, Freiburg i. Br., 1966, S. 310—311.

Այլ տպ.— Վկայաբանութիւն Սն. «Սոքա էին ի քաղաքէն...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 277։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն Սն. «Սոքա էին ի քաղաքէն...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 197։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Արքիպասայ և Փիլիմոնի՝ աշակերտացն Պօղոսի. «Սոքա էին ի քաղաքէն Կողոսացոց, աշակերտեալ Պօղոսի...», *տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 87ա։*

⊠ *Տես նաև ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ, «Առ Փիլիմոն և առ Արքիպպոս սարկաւագ և առ Ապփիա Թուղթ»։*

Հմմտ. *Արքիպպոսի և Փիլիմոնի* ***հուն.*** *վկայաբանությունը՝* „Μαρτύριον τοῦ ἁγίου ἀποστόλου Ἀρχίππου, Φιλήμονος καὶ Ἀπφίας", ***հետևյալ գրքում.*** Bas. Latyšev, „Menologii anonymi byzantini saeculi X quae supersunt", fasc. I, Petropoli, 1911, p. 118—119. ***Հուն.*** ***մի այլ վարքի մասին*** *տես՝* A. Ehrhard, „Überlieferung und Bestand der hagiographischen und homelitischen Literatur der griechischen Kirche" (Texte und Untersuchungen, 51), Bd. II, S. 645.

ԱՒԱԳ ԲԱՂԻՇԵՑԻ կամ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

Հայոց նոր վկաներից, ծն. է Բաղեշում և 1390 թ. վկայացել է մահմեդական մոլեռանդ ամբոխի ձեռքով։ Ունենք նրա անանուն վկայաբանությունը՝ ընդարձակ խմբագրությամբ, որն առաջին անգամ հրատարակվել է Գր. Ծերենցի Հայսմավուրքում 1706 թ., որոշ կրճատումով. իսկ դրա հիման վրա Գրիգոր Փեշտիմալճյանը 1834 թ. կազմելով մի համառոտ խմբագրություն՝ այն մուծել է Տեր-Իսրայելի Հայսմավուրքի հրատարակության մեջ։

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն Աւագու նոր վկային Քրիստոսի. «Անքննելի են խորք իմաստիցն Աստուծոյ...։ Այր մի քրիստոնեայ հաւատով, որոյ անունն էր Աւագ, արուեստիւ քսակակար, լեալ երբեմն ի Սալամաստ քաղաք, ի տիս տղայութեանն ընդ արուեստապետին իւրոյ՝ ումեմն պարսկի...», *տես՝ «Ճառք ընտիր վկայից» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 509—510։*

Բնագիրը հրատարակվել է որոշ կրճատումով։

Այլ տպ.— Վկայաբանութիւն Սն. «Անքննելի են...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 549—551։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն Սն. «Անքննելի են...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 386—388։*

Այլ տպ.— Աւագ Սալմաստեցի. «Անքննելի են...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան (հրատ.), «Հայոց նոր վկաները» (ժողովրդ. հրատարակութիւն), հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 108—113։*

Լրիվ հրատարակություն, կատարված՝ էջմիածնի Մատ. ձեռագրերից, որոնց մասին տեղեկությունները տրված են հաջորդ հրատարակության մեջ։

Այլ տպ.— Աւագ Սալմաստեցի. «Անքննելի են...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան (հրատ.), «Հայոց նոր վկաները (1155—1843)» (գիտ. հրատարակություն), Վաղարշապատ, 1903, էջ 152—154։*

Հրատարակված է էջմիածնի Մատենադարանի 25 գրչագիր օրինակների համեմատությամբ։ Վերջում՝ ծանոթություններ օգտագործված ձեռագրերի մասին (էջ 164—165)։

2 (Համառոտ խմբագր.)։

Վկայութիւն Աւագայ նոր վկայի. «Սա էր ծննդեամբ Բաղիշեցի, և ի տիս տղայութեան գնացեալ ի Սալամաստ քաղաք՝ աշակերտեալ էր պարսկի ուրումն որ արուեստիւ էր քսակակար...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 93—94։*

Այլ տպ. Վկայութիւն Սն. «Սա էր...» (***հրատ.*** G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XX, 1927, p. 86—87.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour, martyre d'Avag, le nouveau martyr“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից:*

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անասյան Հր. — *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 323—324, § 25:*

Չամչյան Միք. — *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 433:*

Օրմանյան Մաղ. — *«Ազգապատում», մասըն Բ, Կ. Պոլիս, 1914, § 1370:*

ԱՒԱԳ ՀԱՅՐ

Տաղերգու։ Ժամանակն ու ինքնությունը՝ անհայտ:

* * *

Տաղ գեղեցիկ ի վերայ գաւազանի ասացեալ, խիստ գեղեցիկ. «Սուրբ հայրք և երգնաւորք եկեալ անցան,|Եւ Աւագ հայրն երգեաց նոցա զայս բան,|Տուք յիս ամ, տուք յիս զիմ գաւազան...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 344, էջ 85ա—88ա (?):*

ԱՒԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ

Մոսկվայում ապրող հայ քահանա, որդի Հակոբջանի (որից՝ Հակոբեան մականունը): Նրա անունով հայտնի են թվով 9 վավերագրեր՝ պայմանագրեր և պարտամուրհակներ, որոնք կնքված են Մոսկվայում, 1716—1720 թթ. ընթացքում: Տես՝ «Եղիա Կարնեցու դիվանը» (կազմողներ՝ Ա. Գ. Աբրահամյան և Ռ. Ա. Աբրահամյան), Երևան, 1968, վավ. №№ 170, 171, 172, 173, 174, 175, 177, 178, 179:

ԱՒԱՂԻՏ ԻՒ ՄԱՒԱՂԻՏ

Տես՝ ԱՂԱՒԻՏ:

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՀՐԷԻՑ

Աւանդութիւն ի Հրէիցն. Առնել ողորմութիւն և գտանել զողորմութիւն յԱստուծոյ. «Այր ոմն մեծատուն, յազգէն Իսրայէլի՝ ի բազում յղփութենէն մոռացեալ էր զյոյսն որ առ Աստուած...», Արարատ, *1902, էջ 1023—1024:*

Հրատարակվել է էջմ. Մատ. ձեռագրերից: Վերնագրին տրված է հետևյալ ծանոթությունը. «Քաղուած է հ. 935 ձեռագրից, էջ 62, թողնելով շարունակութեան բացատրութիւնները քահանայապետական ակի մասին»:

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 538՝ «Աւանդութիւն Հրէիցն. Վասն ողորմութեան» *(էջ 141ա, սկ.* «էր ոմն մեծատուն յԻսրայէլի, որ մոռացեալ էր զյոյսն առ Աստուած»). *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 257՝* «Աւանդութիւն Հրէիցն. Վասն ողորմութեան՝ առ ի գտանել զողորմութիւն ի տեառնէ Աստուծոյ» *(էջ 412ա, սկ.* «էր ոմն մեծատուն յԻսրայէլի. և մոռացեալ զուխտն որ առ Աստուած»):

ԱՒԱՆԵՑԻ (ԲԱՐՍ.)

Տես՝ ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ.

ԱՒԳԵՐԵԱՆ

Տես՝ ՄԿՐՏԻՉ ԱՒԳԵՐԵԱՆ:
ՍՏԵՓԱՆՈՍ ԱՒԳԵՐԵԱՆ:

ԱՒԳԼՍ [ԱՒԳՈՍՏԻՆՈՍ?] ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

Ունի մի նամակ, ուղղված առ Մխիթար Սեբաստացի (Հռոմ, 14 մայ. 1729 թ.), որով տեղեկություններ է հաղորդում ի միջի այլոց այն մասին, թե Հռոմում ձեռնարկումներ են կատարվում հայոց եկեղեցական գրքերը թարգմանելու լատիներենի, հատկապես հայկ. Ժամագիրքը. «մէկ երեսն լաթիներէն, մէկ երեսն հայերէն... հայերէնը ես պիտի գրեմ, այլ գիր գրող չկայ, այսչափ բան գրելու ժամանակ չունիմ. շատ խորհեցայ որ այս եթէ հրամանուցդ ձեռօքն լինա նէ կարելի է յառաջանալ... հռոմերէն թարգմանօղ գտանք.

թապաղան ժճ ճուլի. խօսք արանք որ լաթինէվար հունարէն գրէ» ևն[1]*։*

ԱԻԳՈՍՏԻՆՈՍ
(զանազան անձեր)

Տե՛ս՝ ՕԳՈՍՏԻՆՈՍ։

ԱԻԳՈՒՍՏԻՆՈՎԻՉ [ԱԻԳՈՒՇՏԻՆԵՆՑ]
(Յակոբ Ստեփան)

(Jakób Stefan Augustynowicz)

Լեհահայ հասարակական գործիչ ու մանկավարժ, ԺԸ դ.։ Ծն. Լվովում։ Ուսումը կատարելագործելու համար 1719 թվականին ուղարկվել է Հռոմ։ Ըստ Ստեփանոս Ռոշքայի հաղորդած տեղեկությունների՝ «նախ ի Լէոպոլսի հայրապետական դպրատանն ուսեալ, ապա առաքեցաւ ի Հռոմ ի մեծ Դպրատունն Ուրբանեան, ուր աւարտեալ զբոլոր փիլիսոփայութիւնն և զաստուածաբանութիւնն, արժանացաւ առնուլ զԱստուածաբանական վարդապետութիւնն. անտի դարձեալ ի հայրենին, զկնի ոմանց ամաց ի դպրատանն Լէոպոլսի եղև ուսուցիչ անդէն փիլիսոփայութեան»[2]*։ 1736 թ. ընտրվել է օգնական ու փոխանորդ՝ Լվովի հայոց արքեպս. Հովհաննես Տոբիա Ավգուստինովիչի, իսկ նրա մահից հետո՝ հաջորդ (1751 թ.)։ Մեռ. 1783 թ.*[3]*։ Նրանից մեզ հասել են հետևյալ անտիպ գրվածքները։*

* * *

1. Philosophia a me Jacobo Augustynowicz, alumno Collegii venerabilis Urbani de Propaganda Fide, audita et conscripta Romae anno 1719. *264 թերթ։*

2. Logica major. T. I—II. *230+312 թերթ։*

3. Manuscriptum philosophiae. *305 թերթ։*

4. Manuscripta theologica Jacobi Augustynowicz ab anno 1723 ad 1726.

T. I: Tractatus de voluntario libero, moralitate, bonitate, ac malitia. *175 թերթ։ Գրված է՝ ըստ Թովմաս Ակվինացու դրույթների։*

T. II: De ecclesia in conciliis congregata. *144 թերթ։*

T. III: De augustissimo eucharistiae sacramento. *132 թերթ։*

T. IV: De regula interna actuum humanorum; de peccatis: de sacramento extremae unctionis; de sacramento ordinis; de baptismo; de poenitentia *(որի վերջում ավում է՝* „Tractatus iste est doctoris Parisiensis anno 1718 in publica dictae civitatis Academia dictatus, a Romanis tamen doctoribus multum cribratus fuit"); de matrimonio. *360 թերթ։*

T. V: De purgatorio; de ecclesia triumphante. *191 թերթ։*

T. VI: De gratia justificatione et merito. *194 թերթ։ Հատորի վերջում գրված է՝* „Finis praesentis tractatus auditus et rescriptus a Jacobo Augustynowicz Romae in Collegio Urbano anno Dni 1726 authore R. P. Studendoli".

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Barącz S. — Żywoty sławnych Ormian w Polsce", Lwów, 1856, str. 42—46.

Estreicher K. — „Bibliografia polska", t. XII, Kraków, 1891, str. 300.

ԱԻԳՈՒՍՏԻՆՈՎԻՉ [ԱԻԳՈՒՇՏԻՆԵՆՑ]
(Յովհաննէս Տոբիա)

(Jan Tobiasz Augustynowicz)

Լեհահայ հասարակական գործիչ, ծն. Լվովում 1664 թ.։ Վարդան Հունանյանի մահից հետո եղել է Լվովի հայոց թեմի արքեպս. (1715—1751 թթ.)։ Նրա պաշտոնավարու-

---

[1] *Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 389 (№ իե)։*

[2] *«Ստեփանոսի Ռօշքայ ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 202։*

[3] *Հմմտ. Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ Ը։*

թյան շրջանի մասին խոսում է Ստեփանոս Ռոշքան[1], որը և հիշատակում է, թե նա 1718 թ. «ժողով արար քահանայից թեմի իւրոյ, վասն տրամադրելոյ զՏօնացոյցն մեր ըստ Յայսմաւուրացն (զոր ես ընդ այլովք շարադրեցի և զծանուցումն սրբոց Հայոց, որք ի նմին գտանին, լատիներէն արարի), յայսմ ամի երթայ ի Հռոմ, ի հաստատել զայսոսիկ» են[2]։ Մեռ. 1751 թ. դեկտեմբերին։ Նրանից մնացել են միայն երկու անտիպ աշխատություններ՝ Լվովի հայոց արքեպիսկոպոսարանի դիվանում։

* * *

1. Promtuarium alphabeticum ex historiis, eruditionibus, sententiis sacris atque prophanis compilatum et ad usum grato lectori. *397 թերթ։*

2. Brevis relatio de primordiis Collegii Pontificii Leopoliensis. *3 թերթ։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Barącz S. — „Żywoty sławnych Ormian w Polsce", Lwów, 1856, str. 35—40.

Estreicher K. — „Bibliografia polska", t. XII, Kraków, 1891, str. 300.

ԱՒԴԱ (Դոմինիկոս)*
(Domenico Auda)

Իտալացի բժիշկ-բնագետ, ծն. Լանտոսկայում (Նիցցայի նահանգ)։ Ապրել է ժէ դ. առաջին կեսում։ Հռոմի կարևորագույն հիվանդանոցներից մեկում պաշտոնավարել է որպես «վերակացու դեղորէից»։ Հեղինակ է մի քանի երկերի, որոնք 1655 թ. սկսյալ տպագրվել են Հռոմում և Վենետիկում՝

1 *Տես՝ «Ստեփանոսի Ռօշքայ ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 197—202։*

2 *Անդ, էջ 199։*

* ***ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.*** „Nouvelle biographie générale depuis les temps les plus reculés jusqu'à nos jours" (sous la direction du Dr. Hoefer), t. III, Paris, 1861, p. 597—598.

„Breve compendio di maravigliosi secreti", „Praxis Pharmaciae utriusque dogmaticae et chimicae" (*կամ* „Pratica de speziali") *են։ Հայ. մասնակի թարգմանությամբ մեզ հայտնի է նրա հիշյալ երկերից առաջինը՝* «Համառօտ քաղուածու զարմանալի խորհրդոց»*-ը[1]։ Նրա թարգմանիչն է՝ Կ. Պոլսեցի Պողոս դպիր Եսայանը[2]։*

* * *

Համառօտ քաղուածու զարմանալի խորհրդոց։ Փորձիւ հաստատեալք յաջողակ իմն դիպուածովք ի տրամադրութիւնս մարմնոյ։ Բաժանեալ ի չորս գիրս։ Յառաջումն ընձեռի զբժշկական խորհրդոց։ Յերկրորդումն զխորհրդոց զանազան իրացն պատկանեցելոց։ Յերրորդումն զպէսպէս տեսակաց քիմիական խորհրդոց։ Եւ ի չորրորդումն զաստեղաբաշխական բժշկականութենէ։ Հանդերձ կիրառութեամբ իւիք առ ի պահպանիլ յառողջութեան։ Ի լոյս ածեալ ի պարոն Ֆռանչիսկոսեան Դոմենիկոսէ Աւտայ, որ է վերակացու դեղորէից ի յաւագ հիւանդանոցն Սրբոյ Հոգւոյն եկեղեցւոյ ի Հռոմ։ Յաւելմամբ ի նորոյ՝ նոյնոյ հեղինակի։ Ի Վէնէտիկ, ի տպարանի

1 *Հմմտ. իտալ. հետևյալ հրատարակությունը.*

Breve compendio di maravigliosi secreti approvati con felice sucesso nelle indispositioni corporali. Diviso in quattro libri. Nel I. si tratta di secreti medicali. Nel II. di secreti appartenenti a diverse cose. Nel III. di secreti chimici di varie sorti. Nel IV. d'astrologia medicinale. Con un trattato per conservarsi in sanità. Dato in luce dal signor Fr. Domenico Auda, capo speciale nell'Archiospedale di S. Spirito in Roma. Con nuova aggiunta dell'istesso auttore. Dedicato all'Illustris. et Eccell. Sig. Carlo Angeli, dottor, medico, fisico, cirurgico, Co: Palatino, e Can. Aureato di S. M. C. In Venetia, appresso G. Zattoni, con licenza de' superiori, 1668.

Այս հրատարակությունը մենք չենք տեսել։

2 *Այս անձը 1750 թ. Վենետիկում էր։ Հիշատակվում է նույն թվականին Անտոն Բորտոլիի տպարանից լույս տեսած «Ճշմարտութիւն յաւիտենական» գրքի հրատարակիչ Սարգիս Սարաֆյանի կողմից. հմմտ. Գր. Գալեմքյարյան, «Կենսագրութիւն Սարգիս արքեպ.ի Սարաֆեանն», Վիեննա, 1908, էջ 238։*

Բասսանի, ձեռամբ Հռեմոնտինոյ: Հրամանաւ մեծաւորաց: Արդ տետրակս այսոքիկ ի սոյն հեղինակի յիտալիական գրոցն յաւելան ի Հայս ի մետասան պրակս պսակեալ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9827, էջ 62ա—75բ։*

Գրքի սկզբում կա՝ «Յորդորակ ի թարգմանչէ առ անձն վայելող՝ յերկուց կենացս փրկութիւն, ոտանաւոր բանիւ ընթացեալ» *(սկ.* «Ամենայնի յոյս վախճանի,|Անխախտ ելովըն վախճանի»), *որի տողերի սկզբնատառերը կազմում են՝* «Յարութեան է այս յիշատակ»: *Այս անծանոթ Հարությունը հավանաբար այն անձն է, որի պատվերով կատարվել է թարգմանությունը, և կամ՝ եղել է գրքի ընդօրինակություններից մեկի տերը։ Թարգմանչի անունն այստեղ բացակայում է, բայց առկա է ձեռագրի ընդհանուր հիշատակարանում։ Ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, որի վերջում գրիչն ասում է. «Արդ՝ գիտելի է, զի մինչ գաղափարել կամեցաք զնորոգ թարգմանեալ բանս՝ որ ի Սիմէոն Մագիստրոսէ, որ Յաղագս զօրութեանց կերլեաց, վայելուչ թուեցաւ մեզ և զայլ քանի մի հատուկտիր բանս թարգմանեալս, որ պատկանէր սմա, ընդ սա դասել, այս է՝ բանն որ վասն առողջ պահելոյ զկեանս, թարգմանեալ ի Պօղոս դպրէ տիրացու[է] Եսայեան, ի մետասան պրակս պսակեալ» (էջ 113բ)։*

Բուն բնագրի խորագիրն է՝ «Գեղեցկայարմար կիրառութիւն առ ի պահ[պ]անիլ յառողջ կեանս, որ է շահաւոր և հարկաւոր առ ամենայն ատիհան անձանց»:

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն.

Պրակ 1. Յաղագս պաշտպանելոյ զկեանս յառողջութեան։

Պրակ 2. Յաղագս կազդուրելոյ զխելապատակն։

Պրակ 3. Յաղագս տունջենական կամ միջօրական (sic) քնոյ։

Պրակ 4. Յաղագս արգիլման քնոյ։

Պրակ 5. Յաղագս կարգի կերակրիլոյ (sic)։

Պրակ 6. Յաղագս նախապատրաստութեան յառաջ քան զճաշ առնելոյ։

Պրակ 7. Յաղագս մելամաղձային խորշելի կերակրոց։

Պրակ 8. Յաղագս կերակրոց բարւոք սնուցչաց և պարարողաց։

Պրակ 9. Յաղագս յատկութեանց գինեաց բարեաց։

Պրակ 10. Յաղագս դեղորէից մահարեր թունոց։

Պրակ 11. Յաղագս կերպի ուտելոյ և ըմպելոյ։

Հեղինակը հենվում է մարդու բնախոսության վերաբերող երևույթների մասին փորձառական դիտողությունների վրա և ցույց է տալիս հիվանդություններից խուսափելու միջոցները։ Որոշ վկայակոչումներ ունի հին բժիշկներից և բնագետներից (Հիպպոկրատես, Արիստոտել, Դիոսկորիդես, Գալիանոս, Իբն-Սինա)։

Սակայն 11 պրակներից բաղկացած վերոհիշյալ բովանդակությունը լրիվ չի համապատասխանում անվանաթերթի ցուցումներին, որոնց համաձայն հեղինակի աշխատությունը պետք է բաղկացած լիներ հատուկ բնագավառներ ընդգրկող 4 գրքերից՝ առանց հաշվելու առողջապահական խորհուրդներ պարունակող մասը (ասվում է՝ «Հանդերձ կիրառութեամբ իւիք առ ի պահպանիլ յառողջութեան»)*։ Ըստ երևույթին՝ հենց միայն այս մասն է թարգմանությամբ մեզ հասածը, բաղկացած 11 պրակներից և ճշգրտորեն համապատասխան բուն բնագրի վերնագրին* («Գեղեցկայարմար կիրառութիւն առ ի պահպանիլ յառողջ կեանս»)*։ Հենվելով անվանաթերթի վերջին տեղեկության վրա, թե «տետրակքս այսոքիկ ի սոյն հեղինակի յիտալիական գրոցն յաւելան ի Հայս ի մետասան պրակս պսակեալ», կարծում ենք, որ հեղինակի երկի մնացած 4 գլուխները կամ մասերը գուցե բոլորովին չեն էլ թարգմանվել։*

Այս երկի ուրիշ օրինակներ տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3173 (էջ 128բ—162բ) և № 8102 (էջ 10բ—23ա)։ Իսկ Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 85 ձեռագիրը, տրված թերի նկարագրության համաձայն[1], *երևում է ավելի ընդարձակ, քան Երևանի օրինակները. բայց հնարավոր չէ վստահորեն ասել, թե այդ ձեռագրի բոլոր նյութերը Ավդայի աշխատության մասն են կազմում։*

⊠ *Ալքիմիական ժողովածուներից մեզ ծանոթ են երկու հատվածներ, որոնք կրում*

---

1 Տես՝ Ս. Տեր-Ավետիսյան, «Ցուցակ հայ. ձեռ. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հտ. Ա, Վիեննա, 1970, էջ 850։

են ոմն Դոմինիկոսի անունը։ Չենք կարող պնդել, թե դրանք Դոմինիկոս Ավդայի հեղինակություններն են, բայց և անհավանական չէ, որ Ավդայի մյուս երկերի նյութերից լինեն։ Այդ հատվածները բերում ենք այստեղ՝ ըստ Երևանի Պետ. Մատ. № 6924 ձեռագրի.

1. Աղ կալաքարի. «Այսպէս արարեալ է իմաստասէրն Տոմինիկոս որպէս գրեալ է լիակատար ի գիր իւր, թէ՝ Առի լիտր մի ղալեքար, և լից (sic) ի ջուր... *(անընթեռնելի)* երկու, մինչև կատարեալ թրջաւ, և քամեցի քաղեաւ, որ ոչ մի դուրտին (sic) գնաց զհետն. յետոյ բերեալ դրի ի վերայ ծաղիկ, այնչափ եփեցի մինչև ամենայն զօրութիւն աղին ելեալ ի յերեսն, և եղև աղ կատարեալ ճշմարիտ, և օգուտ ամենայն գործոց աքսիրի»: *(էջ 56ա)։*

2. Յաղագս ոսկոյ գունի այս է. «Ասէ մեծ Տոմինիկոս թէ արեգակնն միապէս խառնեալ և լուսինն, ձևացուցեալ որպէս սքացեալ և օծնով եփեալ, երկրորդ ի գազանն և կամ ի գոզ մանկանց, և ցամաքեցուցեալ ընդ դրուցէ և ընդ ներքսէ, գոյն տայ դրամանցն այնմիկ: Եւ կարծի թէ գործս այս ի Հռոմայ, ի լեն քաղաքէն, մէջ արար վարդապետ մի Սպանիացի Սեփեռոս անուն, զի դրամբք (sic) գունով իբր զոսկի. և սա ուսուցանէ կարգաւ, թէ ո՛րպէս պարտ է պատրաստել զամենայն պիտոյ իցէ արհեստիս որպէս խոստացաւ» *են (էջ 57ա)։*

Նույն մատ. № 8446 ձեռագիրն ունի միայն երկրորդ հատվածը, որ է՝

Յաղագս ոսկոյ գոյնի. «Ասէ Տոմինիկոս եթէ ոսկին միապէս խառնեալ և արծաթն, և ձևացուցեալ որպէս դրամ և սիքայեալ և օծնով եփեալ, յերկարի [ի] քացխ և կամ ի գոզ մանկանց, և ցամաքեալ ընդ դրուցէ և ընդ ներքսէ, գոյն տա դրամացն այնմիկ: Եւ կարծի եթէ գործս այս յե[ա]լ է ի Հռոմ, ի վարդապետէ մի Սպահանցի, զի արար դրամք գունովք իբրև ոսկի» *(էջ 93բ)։*

ԱՒԵԼՀՈԴՀԱՄ

Արաբ ալքիմիկոս, որից հայ. թարգմանությամբ մի ընդարձակ հատված է պահպանվել Երևանի Պետ. Մատ. № 8314 ձեռագրում՝ «Գիր որ պատուիրեց ուղիղն որդւոյ [իւրում] Աւելհոդհամ» *խորագրով (էջ 36ա—38բ, սկ.* «Եւ յիշեմ զանունն որ յառաջ է քան զյափտեանս»)*։ Հատվածն ամբողջությամբ արտատպ. է հետևյալ հրատ. մեջ. Կ. Ղաֆադարյան, «Ալքիմիան պատմական Հայաստանում», Երևան, 1940, էջ 98—101։*

ԱՒԵՏ (խոջա)

Տես՝ ԱՒԵՏԻՔ (խոջա)։

ԱՒԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ

Տես՝ ԱՒԵՏԻՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԱՂԵՐԳՈՒ։

ԱՒԵՏԱՐԱՆ
(Evangelium)

Աւետարան *անունն է տրվում Նոր Կտակարանի առաջին մասը կազմող չորս գրքերին, որոնք Հիսուսի կյանքն ու վարդապետությունն են ներկայացնում։ Դրանք են՝*

ա. Աւետարան ըստ Մատթէոսի:
բ. Աւետարան ըստ Մարկոսի:
գ. Աւետարան ըստ Ղուկասու:
դ. Աւետարան ըստ Յովհաննու:

Չորս ավետարանների ամբողջությունը, որպես միավոր, հավաքական անվանումով նույնպես կոչվում է Աւետարան: *Ավետարանի հայ. թարգմանության հետ կապված բանասիրական հարցերի, նրա բնագրի հրատարակությունների և նրան վերաբերող ուսումնասիրությունների մասին տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ։*

ԱՒԵՏԱՐԱՆ ԹՈՎՄԱՅԻ*
(Evangelium Thomae)

Նորկտակարանային անվավեր գրքերից։ Դրվագներ է պարունակում Հիսուսի մանկության մասին։ Նրա հեղինակությունը վերա-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Litteratur", Bd. I, Freiburg i. Br., 1902, S. 401—403.— B. Altaner u. A. Stuiber, „Patrologie", Freiburg i. Br., 1966, S. 128—130.— *Գեր. Փոլատյան, «Աւետարան ըստ Թովմասու, երևան հանուած եգիպտական նորագիւտ պապիրոսներէ», Բեյրութ, 1960։*

գրվում է Թովմաս առաքյալին կամ Թովմաս Իսրայելացի իմաստասերին։ Հայտնի է ղըպտերեն մի բնագրով և հուն. հատակոտորներով։ Ղպտերեն բնագիրն, ըստ Ժ. Գարիտի, սկզբնագիր է, իսկ ըստ այլոց՝ հունարենից է թարգմանվել, ուստի և՝ սկզբնագիրը պետք է հունարեն եղած լինի։ ԺԳ դարում Մխիթար Այրիվանեցու կողմից ավանդված պարականոն գրքերի ցուցակում հիշատակվող «Թովմայի աւետարանն»[1] ամենայն հավանականությամբ այս գրվածքն էր։

ԱՒԵՏԱՐԱՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ*
(Evangelium Infantiae)

Բանասիրական գրականության մեջ հայտնի են հուն., ասոր. և այլ լեզուներով Նախաւետարան Յակոբայ (Protevangelium Iacobi) և Պատմութիւն Թովմայի (Narratio Thomae) անունը կրող նորկտակարանային անվավերներ, որոնք բովանդակությամբ առնչվում են իրար հետ և տարբեր մանրամասնություններով իրար են լրացնում՝ պատմելով Մարիամի ծննդյանը և Հիսուսի մանկությանը վերաբերող այլևայլ դրվագներ։ Այս և այսպիսի աղբյուրներից ծագած որոշ նյութեր այսօր մեզ հայտնի են նաև հայ հին գրականության մեջ՝ Աւետարան Մանկութեան, Աւետարան Տղայութեան կամ Տղայաւետարան անուններով[2]։ Դրանց մասին հիշատակություններ կան դեռևս Զ դարի վերջերից։ 591 թ. ասորի նեստորական քարոզիչների ձեռքով Հայաստան բերված ու հայերենի թարգմանված «սուտ» գրքերի շարքում հիշատակվող «Աստուածածնին պատմութիւն» և «Մանկութիւն Տեառն» կոչված գրքերն[1] անտարակույս այս կարգի գրություններ էին։ Մխիթար Այրիվանեցու ավանդած ցուցակում ևս, ԺԳ դ., հիշատակվում են երկու գրքեր՝ «Գիրք Մանկութեան Տեառն» և «Թովմայի աւետարանն»[2]. վերջինս, սակայն, կարող է նույն չլինել վերոհիշյալ Պատմութիւն Թովմայի (Narratio Thomae) գրքի հետ (տես նախորդ հոդվածը)։ Մանկութեան ավետարանից այժմ հայտնի են հետևյալ բնագրերը։

1 Հմմտ. աստ, հտ. Ա, էջ XL։

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Հմմտ. B. Altaner u. A. Stuiber, „Patrologie", Freiburg i. Br., 1966, S. 125—126.

2 Գ. Զարբհանալյան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 194—198։ Н. Я. Марр, «Из летней поездки в Армению; заметки и извлечения из армянских рукописей, X», *Записки Восточн. Отдел. Имп. Русск. Археолог. Общ-ва*, т. VI, 1892, стр. 135—147 (համապատասխանում է առանձին հրատարակության 1—13 էջերին). «Մանկութեան» ավետարանին վերաբերող այս մասի հայ. թարգմանությունը տես Հանդէս Ամսօրեայ, 1892, էջ 231—235. նաև՝ Բազմավէպ, 1892, էջ 247—253, 290—295։

* * *

Գիրք տղայութեան Քրիստոսի։ Հետևյալ հրատ. մեջ. «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց» (Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ), Վենետիկ, 1898, էջ 1—126։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. մի ձեռագրից։ Հրատարակիչ՝ Ես. Տայեցի։

Բնագիրը բաղկացած է հետևյալ գլուխներից.

Ա.— Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ որ եղև ի տան հօր իւրում. զոր աւացեալ է սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն (սկ. «Իսկ այրն Յովակիմ յորժամ եւ ի տանէ իւրմէ, առեալ զհօտս և զհովիւս գնաց յանապատն»)։

Բ.— Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան, որ եղև ի տան հօր իւրում.

Գ.— Վասն սրբոյ կուսին Մարիամու ընծայեանն, որ եղև ի տաճարն սրբութեան, զամս երկոտասան։

Դ.— Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ տալ զնա Յովսեփայ ի կնութիւն՝ ըստ օրինի աւանդութեան իւրեանց, պահել զկոյսն սուրբ զգուշութեամբ, և յանձնելոյ զնա հաւատով ի Տէր. ամէն։

Ե.— Վասն աւետաւոր հրեշտակի ձայնին, որ քարոզեաց զյղութիւն սրբոյ կուսին Մարիամու։

Զ.— Վասն տրտմութեան Յովսեփայ, և զրպարտելոյ զկոյսն սուրբ անմեղութեամբ և դատապարտելոյ զնա։

Է.— Վասն Մարիամու յանդիմանելոյ զկուսութիւնն սուրբ, և պարկեշտութիւնն Յովսեփայ, և տալ նոցա երկոցունց զջուրն փորձութեան։

Ը.— Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յայրին։

1 Հմմտ. աստ, հտ. Ա, էջ XXXIX։

2 Հմմտ. աստ, հտ. Ա, էջ XL։

Թ.— Վասն նախամօրն Եւայի և Յովսեփայ փութով հասանել նոցա, և տեսանել զծնունդ ամենագովեալ սուրբ կուսին Մարիամու։

Ժ.— Վասն հովուացն՝ որ տեսին զծնունդ Տեառն մերոյ։

ԺԱ.— Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին մանկանն Յիսուսի։

ԺԲ.— Վասն քառասնօրեայ գնալոյն ի տաճարն բազում ընծայիւք։

ԺԳ.— Վասն Հերովդէի և կոտորելոյ նորին զմանկունս ի Բեթղեհէմ և խաբելոյ ի մոգուցն։

ԺԴ.— Վասն սպանման Հերովդի զԶաքարիա քահանայապետն ի տաճարին։

ԺԵ.— Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ՝ գնալ նոցա փախստական ի ձեռաց չար Հերովդէի յերկիրն յԵգիպտոս։

ԺԶ.— Վասն գնալոյ յերկիրն Իսրայէլի և բնակելոյ յաշխարհն Գալիլեացւոց ի Նազարէթ։

ԺԷ.— Վասն փոխելոյ անտի և գնալոյ յերկիրն Ասորոց։

ԺԸ.— Վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու, և տղայութիւնն, զոր առնէր Յիսուս։

ԺԹ.— Վասն երթալոյ նոցա յերկիրն Իսրայէլի և տալոյ յուսումն դպրութեան։

Ի.— Վասն տալոյ զՅիսուս Գամաղիելի՝ յուսումն գրոց։

ԻԱ.— Վասն գնալոյ ի քաղաքն Տապարիա, և տալոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան։

ԻԲ.— Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զտղայութիւնն զոր առնէր Յիսուս մահու և յարութեան։

ԻԳ.— Վասն գնալոյ նոցա յարտևան լերին. տղայութիւն զոր առնէր Յիսուս։

ԻԴ.— Վասն գնալոյ նոցա ի գիւղն յԷմաուս, և բժշկէր զհիւանդս, և զսքանչելիսն զոր առնէր Յիսուս։

ԻԵ.— Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարէթ։

ԻԶ.— Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յիսուս ի քաղաքն և ի գիւղն և յայլ տեղիս տեղիս, զոր առնէր բժշկութիւն Յիսուս։

ԻԷ.— Վասն մարգարէիցն աւանդութեան զգրեալսն կատարելոյ, և օրինացն՝ զոր առնէր Յիսուս։

ԻԸ.— Վասն դատաւորութեան զոր առնէր ի մէջ երկու զինուորաց։

Ես. Տայեցին Վենետիկի ձեռագրերից հրատարակել է նաև Մանկության աւետարանի մի ուրիշ օրինակ, որը ներկայացնում է խմբագրական տարբերություններ և սկզբից ու վերջից թերի է (տպ. անդ, էջ 127—235)։

Բացի այդ, «Հատակոտորք ի Գրոց Տղայութեան Քրիստոսի» ընդհանուր խորագրի տակ, Ես. Տայեցին հրատարակել է մի շարք այլ հատվածներ՝ դարձյալ վենետիկյան ձեռագրերից։ Դրանք են՝

— Յիշատակ Յովակիմայ և Ովսաննայի. ծնունդ Մարիամու կուսին և ծնունդ փրկչին. «Եւ էր Յովակիմ մեծատուն յոյժ և մատուցանէր Տեառն կրկին զպատարագ իր ամենայնի...», էջ 237—250։

— Մեծի աստուածայայտնութեան ճրագալուցին, Յովակիմայ և Աննայի ծնօղացն Մարիամու Աստուածածնի. «Ի թուոյ պատմութեանց երկոտասան ազգին էր Յովակիմ, մեծատուն յոյժ, և մատուցանէր կրկնակի զպատարագս իւր...», էջ 250—264։

— Յաղագս ծննդեան ամենասրբուհւոյ Աստուածածնին և ամենօրհնեալ կուսին Մարիամու ի ծնօղաց իւրոց ի Յովակիմայ և յԱննայէ. ի պատմութենէ գրոց Ս. Յակոբայ եղբօր Տեառն. «Ի թուոյ և ի տոհմէ երկոտասան ազգաց Իսրայելի էր Յովակիմ, այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, և մեծատուն յոյժ. հատուցանէր կրկին զընծայսն Աստուծոյ...», էջ 264—267։

— Վասն աւետաւոր հրեշտակին և քարոզելոյ զյղութիւն սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնին. «Յայնժամ եղև առ նա բարբառ հրեշտակին, որ ասէր ցնա. Ուրախ լեր, կոյս Մարիամ: Յանկարծակի զարհուրեցաւ և երկեաւ յոյժ...», էջ 267—277։

— Գալուստ մոգուցն յերկրպագութիւն Քրիստոսի. «Ի թագաւորութեան Հռոմայեցւոց Աւգոստոս կայսեր՝ քառասուն և երեք, և Աբգարու Հայոց և Ասորոց՝ քսան և մի, և Հերովդէի Հրէից արքայի՝ երեսուն և ութ. «Տէրն մեր Յիսուս օծեալն ծնաւ ի Բեթղեհէմ Հրէաստանի...», էջ 278—284։

— Յաղագս մոգուց թագաւորաց թէ ո՛րպէս եկին զօրօքն իւրեանց յԵրուսաղէմ. «Ահա մոգ[ք] յարևելից եկին, որք ելեալ էին յաշխարհէն իւրեանց բազում զօրօք, և եկեալ հասին ի քաղաքն Երուսաղէմ ամիս ութ, և էին թագաւորք երեք...», էջ 284—295։

— Պատմութիւն գալստեան մոգուց թագաւորացն յերկրպագութիւն նորածին թագաւորին. «Ահա մոգք յարևելից եկին հասին յԵրուսաղէմ, թագաւորք երեք. մինն՝ Պարսից թագաւորն Մելքոն, և միւս՝ թագաւորն Հնդկաց Գասպար, և երրորդ՝ թագաւորն Արաբացոց Պաղդասար...», էջ 296—306։

— Պատմութիւն յաղագս փախստեան Տեառն յԵգիպտոս ի Հերովդէ. «Եւ երեւեցաւ հրեշտակ Տեառն Յովսեփայ, և ասէ. Արի՛, առ զմանուկդ և զմայր իւր և փախիր յԵգիպտոս, զի խնդիր է Հերովդէս վասն մանկանդ՝ կորուսանել զդա...», *էջ 306—312։*

☐ *«Տղայության» ավետարանի անտիպ օրինակներից տեսնել Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8241՝* «Պատմութիւն յաղագս մարդեղութեան մարմնացելոյն ի սրբոյ կուսէն զոր Յակոբայ եղբօր Տեառն ասացեալ, որ ի սկզբանէ ականատես եղև Բանին Աստուծոյ, սկիզբն արարեալ կարգաւ գրել փոքր ի շատէ զյիշատակս որ եղև ի ժամանակին յայնմիկ մի ըստ միոջէ» *(էջ 1ա, սկ.* «Եւ եղև [յ]առաջին ամի տէրութեան Օգոստոս կայսեր Հռոմայեցոց աշխարհին») *և հետևյալ ձեռագրերը՝ №№ 1520, 1667, 1668, 5144, 5599, 5688, 6514, 6572, 6980, 7059, 7574, 8482, 8812, 9100, 9256, 9705 են։ Կան նաև մասնակի օրինակներ և հատվածներ։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ.*[1] *ձեռ. №№ 1432, 3062, 3164, 3364. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. №№ 186, 224 (մասեր), 498, 960, 985. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201. Նոր-Ջուղայի Ս. Կատար. վանքի ձեռ. № 467. Մոնտրեալի* Mc Gill *համալս. կենտր. գրադարանի*[2] *ձեռ. № 2 են։*

«Տղայության» ավետարանի հայ. բնագրերից թարգմանություններ են հրատարակվել անգլ., ֆրնս. և լատ. լեզուներով. տես՝ F. C. Conybeare, „Protevangelium Iacobi; from an armenian manuscript in the Library of the Mechitarists in Venice", *The American Journal of Theology*, vol. I, 1897, p. 424—442.—P. Peeters, „Évangiles apocryphes. II. L'Évangile de l'Enfance, rédactions syriaques, arabe et arméniennes traduites et annotées", Paris, 1914.—É. de Strycker, „La forme la plus ancienne du Protévangile de Jacques... En appendice: Les versions arméniennes traduites en latin par Hans Quecke", Bruxelles, 1961.

[1] *Հմմտ. Ս. Մխսյան,* Սիոն, *1972, էջ 122—131 և 235—239։*

[2] *Հմմտ. Ա. Արզումանյան,* Սիոն, *1972, էջ 171։*

ԱՒԵՏԱՐԱՆ ՆԻԿՈԴԵՄՈՍԻ*
(Evangelium Nicodemi)

Նոր Կտակարանի անվավերականների շարքին պատկանող այս գիրքը հուն. և լատ. հնագույն ձեռագրերում կրում է «Յիշատակարանք» (Ὑπομνήματα Πιλάτου) *կամ* «Գործք Պիղատոսի» (Acta Pilati) *խորագիրը և միայն Թ/Ժ դարերից սկսած պատահում է Նիկոդեմոսի անունով։ Այս գրքից հայ. թարգմանությամբ հայտնի են մասեր*[1]*, որոնք ներկայացնում են խմբագրական տարբերություններ։ Ն. Մառը ցույց է տվել, որ Նիկ. ավետարանի վրաց. թարգմանությունը, որն անտիպ է, հայ. սկզբնագիր է ունեցել*[2]*։*

* * *

1ա. Պատմութիւն և կտակ չարչարանացն Քրիստոսի, որ եղև առաջի Պոնտացոյ Պիղատոսի ի յիշխանութեան[3] Հրէաստանի, և [ի] քահա[նայա]պետութեան Աննայի և Կայիափայի, արարեալ երանելոյն Յակոբայ Տեառն եղբօրն որդւոյն Յովսէփայ. «Ի յերրորդի իշխանութեան Տիբերեայ կայսերն Հռոմայեցւոց, ինն և տասներորդի իշխանութեան նորա, և ի չորրորդ քահանա[յա]պետութեան երկուց առաջնորդացն Աննայի և Կայիափայի, զոր

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Litteratur", Bd. I, Freiburg i. Br., 1902, S. 409—410.—B. Altaner u. A. Stuiber, „Patrologie", Freiburg i. Br., 1966, S. 127—128.

[1] F. C. Conybeare, "Acta Pilati", *Studia Biblica et Ecclesiastica*, vol. IV, 1896, p. 59—132.—*Գ. Զարբհանալյան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 199—202։— Բ. Սարգիսյան, «Եղիշէի և Զաքարիա կաթողիկոսի ի թաղումն Քրիստոսի ճառերն և Նիկոդիմոսի Աւետարանը», Վենետիկ, 1910։*

[2] Н. Марр, «Армянские слова в грузинских Деяниях Пилата», *Записки Восточного Отделения Имп. Русск. Археол. Общ-ва*, т. XVII, вып. I, 1906, стр. 024—029.

[3] *Ձեռագրերում՝* և իշխանութիւն։

և յետ չարչարանացն խաչի պատմեաց Յակոբոս Տեառն եղբայրն յանօրէն Հրէից ժողովոյն և այլոցն ամենեցունցն...», *տես՝ «Գիրք։ Գրգումս այս պատմէ՝ նախ վասն գալստեանն Յիսուսի Երուսաղէմ, երկրորդ՝ վասն չարչարանացն, որ կրեաց առաջի Պիղատոսի դատաւորի և քահանայապետիցն Աննայի և Կայիափայ, ասացեալ երանելոյն Յակոբայ Տեառն եղբօրն», Կ. Պոլիս, 1710, էջ 9—112։*

1բ. Յիշատակարանք որ եղեն վասն Քրիստոսի, առաջի Պոնտացւոյ Պիղատոսի իշխանին Հրէաստանի. «Յամս ութուտասներորդի իշխանութեանն կայսեր թագաւորին Յունաց Տիբերեայ և Հերոդիայ որդւոյ Հերոդի, որ էր թագաւոր Գալիլէացւոց, իննուտասներորդի իշխանութեան նորա և յառաջ քան զութ կաղանդացն առնու, որ ի քսան և հինգերորդ Հռոմայ, յառաջ Բարբելոնի, ի չորրորդ ամին իւրոյ և երկուց առաջնորդացն քահանայապետիցն Հրէից՝ Աննայի և Կայիափայ։ Եւ որ ինչ յետ խաչին և չարչարանաց Տեառն, և պատմեաց Նիկոդիմոս զեղեալ իւրն քահանայապետիցն և այլոց Հրէիցն...», *տես՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց» (Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ), Վենետիկ, 1898, էջ 313—345։*

□ *Ձեռագրերում այս բնագիրը ներկայացնում է զգալի տարբերակներ։ Բնագիրը մեծ մասամբ պատահում է Հակոբ Կրտսերի (Տյառնեղբոր) անունով. տես՝ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1573՝* «Պատմութիւն և կտակ չարչարանացն Քրիստոսի, որ եղև վասն Քրիստոսի առաջի Պոնտացոյ Պիղատոսի իշխանութեան Հրէաստանի, և քահանայապետութեան Աննայի և Կայիափայի. երանելոյն Յակոբայ Տեառն եղբօրն և որդւոյն Յովսեփայ ասացեալ է» *(էջ 210—250, սկ.* «Ի երրորդի իշխանութեան Տիբերեայ կայսերն Հռոմայեցւոց, ինն և տասներորդի իշխանութեան նորա, և ի չորրորդ քահանայապետութեան երկուց առաջնորդացն»), *№ 1433՝* «Պատմութիւն և կտակ... ասացեալ ի թագաւորութեան Հերովդէի Գալիլեացւոց» *(էջ 75—166, սկ.* «Զոր առնէր Յիսուս ի մարդկային բնութեանս, ի վերայ հիւանդաց և ախտացելոց»). *Զմմառի վանքի ձեռ. № 134՝* «Երանելոյն Յակոբայ եղբօր Տեառն՝ որդւոյն Յովսեփայ արարեալ պատմութիւն և յիշատակարանք որ եղեն վասն Քրիստոսի առ Պոնտացոյ Պիղատոսի իշխանութեանն և ի քահանայութեանն Աննայի և Կայիափայ, ի թագաւորութեանն Հրէաստանի Գալիլեացոյ» *(էջ 251բ—298ա, սկ.* «Յամս ութևտասներորդի իշխանութեանն Տիբերեայ կայսեր Հռոմայեցւոց»). *Արմաշի վանքի ձեռ. № 11՝* «Պատմութիւն և յիշատակարանք որ եղեն վասն Քրիստոսի առաջի Պոնտացոյ Պիղատոսի իշխանութեանն Հրէաստանի և ի քահանայութեանն Աննայի և Կայիափայի, երանելոյն Յակոբայ եղբօրն Տեառն ասացեալ որդու Յովսեփու ի թագաւորութեանն Հերովդի Գալիլեացոց» *(էջ 116ա, սկ.* «Յամս ութուտասներորդի իշխանին Տիբերիայ կայսեր Հռոմայեցոց»)։ *Որոշ ձեռագրերում բնագիրը Նիկոդեմոսի անունով է. տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 993՝* «Յիշատակարան չարչարանաց և յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ եղև առաջի Պիղատոսի, զոր պատմեաց Նիկոդիմոս» *(էջ 625բ—629բ, սկ.* «Յամս ութևտասներորդի յիշխանութեան թագաւորին կայսեր Յունաց, և Հերովդէի որդւոյ Հերովդիայի Գալիլիացւոյ, ի չորրորդ ամին երկուց քահանայիցն Աննայի և Կայիափայ, երանելին Նիկոդիմոս պատմեաց մեզ»), *№ 1521՝* «Պատմութիւն չարչարանացն տեառն և վկայութեանն, զոր վկայեաց առաջի Պոնդացւոյ (sic) Պիղատոսի։ Յաւետարանէն Նիկոդիմոսի զաղտ աշակերտին» *(էջ 352բ—355ա, սկ.* «Յամս ութուտասներորդի Տիբեր[ե]այ կայսեր Աննա և Կայիափա, Սիմոն և Դովդաս, Գամաղիէլ և այլք ի Հրէիցն առաջնորդաց եկին յառաջի Պիղատոսի»). *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2՝* «Յիշատակարանք, որ եղեն» *ևն, նույն ընդ տպ. (էջ 40ա—51բ?, սկ. նույն ընդ տպ.), № 224՝* «Պատմութիւն չարչարանաց տեառն մերոյ վկայութեանն, զոր վկայեաց առաջի Պիղատոսի» *(անանուն, էջ 389ա—393ա, սկ.* «Յամս ութուտասներորդի արքայութեանն Տիբերեայ կայսեր Աննա և Կայիափա, Սիմովն և Գովտաս (sic)... եկին առաջի Պիղատոսի և ամբաստան լինէին»), *№ 313՝ խոր. նման (էջ*

163ա—167բ?, սկ. «Ի ժամանակս ութևտասաներորդի ի թագաւորութեան Տիբերեայ»)։

Այս բնագրի որոշ օրինակներ վերջում ունեն «Պատմութիւն վասն թաղմանն և յարութեան» հավելվածը (տես՝ § 2)։

Բնագրի հուն. և լատ. թարգմանությունները տես՝ F. C. Conybeare, *Studia Biblica et Ecclesiastica*, vol. IV, 1896, p. 73—132.

2. Պատմութիւն վասն թաղմանն և յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ. «Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն, որում անունն էր Յովսէփ, որ էր քաղաքապետ. այր բարեգործ և արդար, յազգէն Հրէից...», տես՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 345—358։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1521՝ «Պատմութիւն թաղման ի բանէն Նիկոդիմոսի» (էջ 355ա—357ա, սկ. նույն). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224՝ խոր. նույն ընդ տպ. (էջ 395ա—395բ?, սկ. նույն ընդ տպ.)։

3. Թուղթ Պիղատոսի դատաւորի առ Տիբեր կայսրն, զոր գրեաց յետ խաչելութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. «Ինքնակալիդ սեբաստիայ՝ փառաւորի և հզօրի Տիբերեայ կայսեր, ի Պիղատոսէ դատաւորէ [յ]արևելից կողմանս Պաղեստինոյ և Փիւնիկոյ...», Բազմավէպ, 1857, էջ 279—285։

Զուգահեռաբար հրատարակված են երկու բնագրեր, որոնք նույն խոր. և սկ. ունեն, բայց խմբագրական տարբերություններ են ներկայացնում։

Այլ տպ.— Թուղթ Պիղատոսի են. «Ինքնակալդ սեբաստեայ փառաւորի...», Հանդէս Ամսօրեայ, 1894, էջ 278—280։

Այլ տպ.— Թուղթ Պիղատոսի դատաւորի, զոր գրեաց յաղագս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և առաքեաց առ Տիբերոս (sic) կայսրն ի Հռոմ. «Ի ժամանակին յայնմիկ, յետ խաչելութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առ Պոնտացով Պիղատոսիւ, այն՝ որ ունէր զդատաւորական իշխանութիւն Պաղեստինացոց և Փիւնիկեցոց աշխարհին...։ Ինքնակալ մեծի սեբաստոսիդ, փառաւորի...», տես՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 359—378։

Զուգահեռաբար տվել է մի երկրորդ բնագիր, որը խմբագրական տարբերություններ է ներկայացնում. խոր. «Թուղթ Պիղատոսի դատաւորի առ Տիբերոս (sic) կայսրն» են (սկ. «Ինքնակալդ սեբաստեայ փառաւորի»)։

Այլ տպ.— Թուղթ Պիղատոսի դատաւորի, զոր յետ խաչելութեանն Քրիստոսի գրեաց առ Տիբերիոս կայսրն Հռոմայ. «Ինքակալդ սեբաստեայ փառաւորի...», Բանասէր, 1901, էջ 189—191։

Այլ տպ.— (Անխորագիր) «Եւ իբրև եհաս հռովարտակն ի Հռոմ, և ընթերցան առաջի կայսերն, լինելն ընդ նմա բազումք ի մեծամեծաց, զոր իբրև լուան...», Բանասէր, 1902, էջ 337—340։

Բնագրի այն հատվածն է, որը նկարագրում է Պիղատոսի մահը, բայց՝ վերախմբագրման ենթարկված։

□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4716 (էջ 14բ) են. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2 (էջ 51բ), № 257 (էջ 29ա), № 791 (էջ 391ա), № 808 (էջ 96ա). Զմմառի վանքի ձեռ. № 156 (էջ 191ա), № 563 (էջ 281բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 235 (էջ 119)։

Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը տվել է այս բնագրի ռուս. թարգմանությունը՝ «Послание судьи Пилата к Тиверию Кесарю по роспятии на кресте Господа Бога нашего (по рукописи XVII века)», հետևյալ գրքում. «Юбилейный Сборник в честь В. Ф. Миллера», Москва, 1900, стр. 97—99.

Այլ նյութեր տես նաև ՊԻՂԱՏՈՍ ՊՈՆՏԱՑԻ անվան տակ։

4. [Այլ օրինակ թղթոյն Պիղատոսի առ Տիբեր] «Ի ժամանակս Տիբերեայ կայսեր, եղև փրկարար և կենսաբեր չարչարանքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ի սորա ի հնգետասաներորդ ամին, գայ ի մկրտութիւն Քրիստոս՝ ի Յորդանան, երեսուն ամաց, և ի վեշտասաներորդ ամին՝ գլխատեցաւ Մկրտիչն Յովհաննէս...», տես՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 379—380։

ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ

Այս անունն են կրել պատարագի և ժամերգության ընթացքում ավետարանների ընթերցման կարգը նշող ուղեցույցները։

Վ. Հացունին բազմիցս անդրադարձել է արարողությունների մեջ եղած ավետարանական ընթերցումների կարգի հարցին[1]։ Նրա հետազոտություններից երևում է, որ այդ կարգն անփոփոխ չի եղել ժամանակի ընթացքում։ Այսպես՝ «Գիշերային ժամ»-ի մասին խոսելիս նա նշում է, որ, ըստ 1284 թ. մի աղբյուրի, որը կոչվում է «Հարցնացոյց բովանդակ տարւոյն» *(Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. հին № 677, էջ 297), քարոզների կարգը կապված էր ավետարանների հետ, իսկ ավետարանները՝ ութ ձայների հետ. այդպես է եղել դրությունը մինչև ԺԵ դ. վերջերը, իսկ այնուհետև, հետզհետե, քարոզների հետ եղած այդ կապը ենթարկվել է փոփոխությունների, բայց անփոփոխ է մնացել ավետարանների և ութ ձայների կապը[2]։*

Ի հարկե՝ եթե ավետարանական ընթերցումները կապված էին ժամասացության ընդհանուր համակարգի հետ, ապա և պարզ է, որ ավետարանացույցն ըստ էության մի ինքնուրույն համակարգ չէր կարող կազմել և պիտի շաղկապված լիներ տօնացոյց *կոչված ցուցակների հետ։ Տոնացույցները թե՛ տոների օրացուցային կարգի և թե՛ արարողությունների կատարման ուղեցույցներն էին, որոնք նշում էին յուրաքանչյուր օրվա ներքին կարգը, թե ո՛րն էր հերթականությունը կատարման համար սահմանված նյութերի՝ քարոզների, աղոթքների, շարականների ևն, հատկապես սուրբգրական ընթերցվածների և, նրանց թվում, ավետարանների, որոնք զգալիորեն ավելի ստվար թիվ էին կազմում քան մյուսները։ Ընթերցելի հատվածները նշանակվում էին սկզբի և վերջի բառերով։ Գուցե նրա համար, որ ավետարանները, ութ ձայների հետ ունեցած իրենց կապակցությամբ, կարևոր տարր էին հանդիսանում այդ համակարգի կառուցվածքում, տոնացույցներին հաճախ տրվում էր նաև* աւետարանացոյց *անունը, և կամ՝ տոնացույցների խորագրերում երբեմն գերիշխող դիրք էր տրվում* աւետարանացոյց *բառին։ Իբրև օրինակ՝ մենք կարող ենք նշել Երևանի Պետ. Մատենադարանից այդպիսի մի քանի ձեռագրեր։*

№ 7734-ը, որը 1219 թ. գրված Ավետարան է, վերջում ունի «Ցոյցք Աւետարանի և հրանանկաց» *(էջ 356ա—358բ)։*

№ 7534-ը, որը 1274—1275 թթ. գրված Ավետարան է, վերջում ունի «Աւետարանացոյց» *(էջ 278ա—288ա)։*

№ 5453-ը, որը ճառընտիր է, ԺԳ դ., այլ նյութերի շարքում ունի «Աւետարանացոյց և խրատք ժամակարգութեանց կարգեալ սրբոցն» *(էջ 189ա—195բ)։*

№ 182-ը, որն Աստվածաշունչ է, գրված 1303—1304 թթ., երկու անգամ ընդօրինակված ունի «Աւետարանացոյց և այլ խրատք բովանդակ տարւոյն» *(էջ 743բ և 744ա—754բ). առաջինը, որ այդ խորագիրն ունի, գրչի ձեռքով է, իսկ երկրորդը, որ խորագիր չունի, ԺԵ դ. ընդօրինակություն է։*

№ 3722-ը, որը 1304 թ. գրված Ավետարան է, վերջում ունի «Աւետարանացոյց բաւանդակ» *(էջ 358բ—363ա)։*

№ 7740-ը, որը 1356—1357 թթ. գրված Ավետարան է, սկզբում ունի «Աւետարանացոյց» *(էջ 7բ—9ա)։*

Այս ձեռագրերում ավետարանացույց կոչվող բնագրերն ուրիշ ձեռագրերում, և ընդհանրապես, կրում են տոնացույց անունը։

Սակայն ենթադրելի է, որ սկզբնաբար առանձին եղած լինեն ավետարանացույցները, իսկ վերևում մեր նշած ձեռագիր օրինակները հավանաբար տոնացույցի և ավետարանացույցի միաձուլման ժամանակաշրջանի նմուշներից են։ Ինչպես ասվեց արդեն՝ այդ տօնացոյց-աւետարանացոյց*-ներում հիմնական տեղը գրավում են ավետարանները. երբեմն նույնիսկ, օրեր շարունակ, նշվում են միմիայն ավետարանական ընթերցումները և նրանք են գերակշռում։ Այս տեսակետից հետաքրքրական է, որ 1278 թ. Սկևռայում գրված տոնացույցը, որը կրում է* «Տաւնա-

---

[1] Վ. Հացունի, «Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին», Վենետիկ, 1965։

[2] Անդ. էջ 243։

Հնում Քարոզ *էին կոչվում* գանձերը *(երգեր)։*

ցոյց և հարցնացոյց բովանդակ տարոյ զհայ և զհոռոմ ամսոցն կարգաւորեալ ընդ իրեարս...» *խորագիրը (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 759, էջ 168բ—180բ), տոների դասավորման հետ միասին, տալիս է միայն «հարց»-երը, իսկ ընթերցվածներն առհասարակ չի տալիս, ուստի նաև՝ ավետարանները: Այնտեղ մենք նկատում ենք «հարց»-երը* «Տօնացոյց»*-ի մեջ մուծելու ձեռնարկումը: Պետք է այս ձևով ծնունդ առած լինեն նաև մեր մատնանշած տոնացույց-ավետարանացույցները՝* «Աւետարանացոյց»*-ի մուծմամբ* «Տօնացոյց»*-ի մեջ:* Տոնացույց կամ ավետարանացոյց *կամ* տոնացոյց-ավետարանացույց *կոչվող այս բնագրերը հետզհետե նյութերի այլ տեսակների նորանոր ընդգրկումներով աճել են և վերածվել ընդհանուր ուղեցույցի՝ ամբողջ տարվա համար և այժմ հայտնի են* «Տօնացոյց» *միակ անունով*[1]*: Լիակատար տեղեկությունների համար տես՝ ՏՕՆԱՑՈՅՑ:*

Անկախ վերոհիշյալ հանգամանքներից՝ կարելի է, մեր օրերում, ավետարանացույց *անունը տալ նաև* «Տօնացոյց»*-ի հիման վրա կազմված այն մասնակի ուղեցույցներին, որոնք ավետարանական ընթերցումների հատուկ խմբավորումների կազմն ու օգտագործման եղանակն են ցույց տալիս, նշանակելով հատվածների սկիզբն ու վերջը: Այդպիսիներ նախ սկսել են հրատարակվել* «Ցուցակ աւետարանաց, ըստ արարողութեանց Հայաստանեայցս առաքելական Ս. Եկեղեցւոյ» *խորագրով՝* առենի *կոչված Ավետարանների* («Աւետարան առենի, ըստ իւրաքանչիւր աւուրց յիշատակաց, ընդ որս և ցուցակ մի յամենայն աւուր ի ժամ սուրբ պատարագին ընթերցեալ աւետարանաց», *տպ. Երուսաղեմ 1873 և 1899) վերջում*[2]*. և ապա,* «Ցուցակ աւետարանաց Հանգստեան, Տաճարի, Իւղաբերից, Բժշկութեան և Անդաստանի, որ պաշտին ի կարգաւորութեան հասարակաց աղօթից ըստ ձայնին» *խորագրով, տպագրվել են Ավետարանի մի քանի այլ հրատարակությունների վերջում*[1]*: Այդ ցուցակներն ունեցել են նաև առանձին հրատարակություններ, որոնց մեջ կան նաև նոր հավելումներ՝* «Խաչելութեան», «Քառասնօրեայ գալստեան», «Ս. Զատկի», «Խաչվերացի» *են*[2]*:*

«Աւետարան ճաշու» *կոչված հրատարակություններն ըստ էության նույնպես ավետարանացույցներ են, որոնցում լրիվ բնագրով տպագրված են պատարագի մեջ ընթերցվող բոլոր հատվածները՝* «Տօնացոյց»*-ի կարգով, ամբողջ տարվա համար: Այդպիսի հրատարակություններ կատարվել են Պետերբուրգում՝ 1786 թ., Թիֆլիսում՝ 1867 թ. և Երուսաղեմում՝ 1868 թ.*[3]*:*

Այս բոլորն Ավետարանի տարեկան ընթերցումների ուղեցույցներ են:

Ավետարանացույց է նաև Ներսես Շնորհալու հորինած մի յուրատեսակ ցուցակը՝ «Շաբաթականք աւետարանք, ըստ խորհրդոյ արարչութեան շարականաց, զոր տէր Ներսէս է շինեալ» *(Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1495, էջ 156բ—157ա), որն Ավետարանի ընթերցումներ է նշում ըստ օրերի և ըստ տարբեր առիթների՝* «Վասն կանանց», «Վասն ննջեցելոց», «Վասն պատերազմի», «Վասն սովի» *են:*

ԱՒԵՏԻՍ (Տէր) [I]

Անծանոթ տաղերգու, որի անունով մեզ հայտնի է մի ներբողական անտիպ տաղ, նվիրված «Տէր Գրիգորիսին»: Հայտնի չէ նաև այս վերջինիս ինքնությունը: Տաղը բովանդակող ձեռագիրը ԺԸ դարից է:

---

[1] *Տոնացույցի հրատարակությունները բազմաթիվ են. տես, օրինակ, Ոսկան Երևանցու հրատարակությունը.* «Տօնացոյց տէրունական տօնից», *Ամստերդամ, 1669: Ի դեպ՝ նշենք, որ հետագայում Տոնացույցի մի քանի հրատարակություններ, հին ավանդույթի համաձայն, անվանաթերթում կրում են* «Տօնացոյց և Աւետարանացոյց» *խորագիրը (Կ. Պոլսի 1701, 1722, 1725, 1740 և 1782 թթ. տպագրությունները):*

[2] *Հմմտ. աստ, էջ 490, տող 29. էջ 494, տող 10:*

[1] *Հմմտ. աստ, էջ 492, տող 25. էջ 493, տող 28:*

[2] *Հմմտ. աստ, էջ 498, տող 15, 31. էջ 499, տող 3, 9, 16, 31. էջ 500, տող 3, 10, 18:*

[3] *Հմմտ. աստ, էջ 496, տող 33. էջ 497, տող 30. էջ 498, տող 1:*

* * *

[Ողերձ առ տէր Գրիգորիս] «Ի մթացեալ և յերեկոյացեալ ժամանակիս|Լոյս գերազանց ծագեցար մերոյի զարմիս.|Տուեկ շըքեղազարդ վերարկոյս կազմիս|Ի շառաւիղաց Լուսաւորչին Տէր Գրիգորիս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 737, էջ 179ա։*

ԱԻԵՏԻՍ (Տէր) [II]

Հայոց նոր վկաներից (1509 թ.)։ Տես՝ ԱԻԵՏԻՔ ԿՐՕՆԱՒՈՐ։

ԱԻԵՏԻՍ ԵՐԷՑ ՎԿԱՅԱԳԻՐ

Գրել է հայոց նոր վկաներից Սարգիս Կարսեցու նահատակության (1796 թ.) պատմությունը։

* * *

Սարգիս քահանայ Ղարսեցի. «Թիւըն 1245, յուլիսի ամսոյ 25, օրն վարդավառի պասի ուրբաթն: Այս է Ղարսցի Տէր Սարգիսն որ է նահատակ և մարտիրոս, որդի Յոհան վարդապետի: Այս լուսայհոգի էրէցն վերոյգրեալ թարըղի օրն գնացեր բաղանիսն...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (գիտ. հրատ.), Վաղարշապատ, 1903, էջ 722—724։*

Վկայաբանության վերջում կա հետևյալ հիշատակագրությունը. «Յարմարեցաւ ձեռամբ անելածու Աւետիս իրիցու ևէթ քահանայի»։

ԱԻԵՏԻՍ ԷՋՄԻԱԾՆԵՑԻ

Էջմիածնի կաթողիկոս 1594(?)—1623 թթ.։ Գրական գործունեություն չի ունեցել։ Նրա անունով հայտնի են միայն մի կոնդակ, որ նա գրել է Գրիգոր Գանձակեցու՝ Երուսաղեմի եպիսկոպոս և պատրիարք ձեռնադրության առթիվ 1613 թ., և մի քանի հիշատակարաններ։ Աւ. կաթողիկոսի մասին տես՝ Ն. Ակինյան, «Աւետիս կաթողիկոս Էջմիածնեցի 1594՞—1623», Հանդէս Ամսօրեայ, *1935, էջ 24—33, 189։ Գ. Գալեմքյարյան, «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք», Վիեննա, 1915, էջ 6, 44—49 և 51։ Մ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, Կ. Պոլիս, 1914, §§ 1582, 1587, 1598, 1606 և 1618։*

ԱԻԵՏԻՍ ՈՍՏԱՆՑԻ

Հայոց նոր վկաներից։ Նահատակվել է Վասպուրականում 1656 թ.։ Վկայաբանության հեղինակն անհայտ է։ Տպագրվել է Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ, որպես նրա ԽԸ գլուխը։ Տպագրվել է նաև առանձին։

* * *

Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին. «Այր ոմն ազգաւ Հայ և հաւատովն քրիստոնեայ որոյ անունն էր Աւետիս և էր յերկրէն Ոստանայ...», *տես՝ «Գիրք Պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրէժացւոյ», Ամստերդամ, 1669, էջ 527—531։*

Վերջում՝ «...Եւ եղև կատարումն նահատակութեան երանելւոյ առնս Աւետիս ի թուականութեանս մերում հազար և հարիւր և հնգին յամսեանն մարտի քսան, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն»։

Այլ տպ.— Պատմութիւն *են.* «Այր ոմն ազգաւ Հայ...», *տես՝ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 425—428։*

Այլ տպ.— Աւետիս Ոստանցի. «Այր ոմն ազգաւ Հայ...», *տես՝ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 552—556։*

Այլ տպ.— Աւետիս Ոստանցի. «Այր ոմն ազգաւ Հայ...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (ժող. հրատ.), հտ. Բ, Վաղարշապատ, 1902, էջ 141—145։*

Այլ տպ.— Աւետիս Ոստանցի. «Այր ումն ազգաւ Հայ...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (գիտ. հրատ.), Վաղարշապատ, 1903, էջ 478—483։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր.—*«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա., Երևան, 1942, էջ 340 § 110։*

Չամչյան Միք.—*«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 652։*

Օրմանյան Մաղ.—*«Ազգապատում», հտ. Բ, Բեյրութ, 1960, § 1800։*

ԱՒԵՏԻՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ

ԺԸ դարի հեղինակ։ Ունի 1755—1758 թթ. ընթացքում Նոր-Ջուղայում գրված անտիպ մի աշխատություն՝ «Բանք բազմահաւաք շարադրութեանց և գումարումն զանազանից վկայութեանց», *որը գտնվում է Օքսֆորդում*[1], Bodl. Libr. Arm. Ms. E. 38. *Գրքի բովանդակության մասին գաղափար է տալիս նրա ենթախորագիրը՝* «Այլ և Համառօտ ասացուածք՝ խրատք հոգեշահք սրբոց հարց հոգևորաց, վեհագունից վարդապետաց։ Այլ և հակիրճ քարոզք՝ Ողջունի, ի Ջրօրհնեացն, ի Քառասնօրեայ գալստեան Տեառն ի տաճարն, ի Ծաղկազարդին, ի Դռնաբացէքին, ի Մեծի Հինգշաբաթի հաղորդութեանն, և Ոտնալուային, և ննջեցեալ քահանային պատույն՝ և օծեցմանն, և ի չբամբասելոյ զքահանային, այլև պատուելոյ։ Աշխատասիրեալ՝ ի ումեմն ստրկէ՝ ծառայի ձեռոյ բանասիրէ, նօտար Աւետիս՝ մեղսամակարդ անարժան իրիցոյ պարտաւորէ։ Ի յաստուածաշունչ տարից՝ Հնոց և ի Նորոց Կտակարանաց, ի սրբազնից աստուածաբան վարդապետաց, և ի արտաքնոց յիմաստնոց, առ ի պէտս յեղբարց հոգևորաց բանասիրաց։ Ի դառն և անբարի ամանակի, ի ներում Նոր Ջուղայոյ քայքայելոյ, ի Ղարագեղ կոչեցեալ նահանգի, առ դրան Սրբուհւոյ Աստուածածնի։ Ի թուոյ փրկչին ՌէՃԾԲ (=1752 թ.) և ի Հայոց ՌԲՃԴ (=1755 թ.), յամսեանն ապրիլի տասնին»։

Ձեռագիրը հեղինակի ինքնագիրն է։ Աշխատությունը հավաքածո է մատենագրական նյութերի։ Կան նաև Ավ. Ջուղայեցու գրչին պատկանող նյութեր, որոնց մի մասը չափածո է։ Վերջիններիս մեջ իր պատմական բովանդակությամբ ուշագրավ է հետևյալը՝ Նոր-Ջուղայում և Պարսկաստանի հայաբնակ այլ վայրերում 1750-ական թթ. հայերի կրած տառապանքների վերաբերյալ.

(Անխորագիր) «Ամբս յետնոց ժամանակի,|Զազգըս Հայոց կայր ի վտանգի...» *(էջ 3ա—3բ)։*

Գրքի առաջին հիշատակարանում (էջ 225ա—225բ) գրում է, որ «...Յայսմ վրդովեալ չար դիպուածի, Զամըս բազումս մըթնամիգի... Իւծեալ մատամբ գըծագրեցի, Ի ծերութեան ժամանակի, Թիւըն Հայոց մու հազարի Երկհարիւրի եւ երկակի (=ՌՄԶ= 1757 թ.), ի վեշտասանըն յունիսի, Տօնի սըրբոյն Մեծ Ներսիսի... Գիրքս այս ոչ թէ մի հետ գրեցի, Այլ չորս ամաւ յառաջ սկսեցի (=1753 թ.), Բամբ նեղութեանցս էր մըշտածնի, Բռնաւորացն ազգի ազգի, Երբէք հանգիստ մի ոչ ասի, Պահանջողացն անպարտ դրամի...»։

Երկրորդ հիշատակարանում (էջ 293ա—293բ) նույնպես գրում է. «Ի վերջ գըրքիս զայս ես եդի. Զար պատահմանց ազգի ազգի, Աւուրքս էին յոյժ անբարի, Նեղ և անձուկ վըշտօք միշտ լի, Իւծեալ մաշեալք սովալըլուկ, Որովք մեռան անթըւելի, Եղև Ջուղայս ողորմելի, Յոյժ աւերակ և ամայի... Տանջիմք յար օր ձեռաց նեղչի, Պահանջողաց անիրաւի, Ի սկըզբանէ մինչ ցայս վայրի, Զամս երեսուն ութերորդի, Սուղ ինչ չառաք շունչ և ոգի... Եմք հանապազ ի վըտանգի... Հայոց ազգըս յոյժ ողբալի, Ցրուեալք վարեալք յօտար երկրի։ Արդ ես մեղօք մեռեալ ոգի, Ի ծերութեան ժամանակի, Ներ յայսմ վըշտաց սովու միջի, Բանքս այսօրիկ ժողովեցի, Անկար մատամբ գըծագրեցի, Ի պէտս եղբարց պայազայի... Իսկ այժմ ողբամ դառն ար-

[1] *Հմմտ. Երևանի Պետ. Մատ., Տիրայր վրդ.ի դիվան, թղթ. 122, վավ. 1ժթ, էջ 1701—1713։*

տրտմի... Սաստիկ սովյա քաղց ու փաստի, Ուրաստ եղեն սուրբ հաւատի... Յոլով կանայք, հարք վասն սովի, Վաճառեցին զդուստր և զորդի... Բազումք... գնացին յերկիր հեռի, Պանդըխտեցան ներ այլ ազգի, Նոքա որք մնացին յիւրեանց տեղի, Զունին զապրուստ զառօրէի... Այլ և կանայք բազմաւք տեղի, Որք են զըրաւք սակըս դրամի... Տըւող ո՛չ գոյ այնչափ դրամի, Թուրք լօռ ազգաց պահանջողի... Այժմ աստըստին աւարտեցի, Սակաւ վիպամբ զըրաւեցի, Թըւոյ Հայոց մերոյ ազնի, Մու հազար երկ հարիւր եօթնի (=1758 թ.)»։

ԱՒԵՏԻՍ [ԱՒԵՏ] ՍԱՐԿԱՒԱԳ ՏԱՂԵՐԳՈՒ

Ժամանակն անհայտ։ Հեղինակ է հոգևոր երգերի, որոնք հայտնի են ԺԸ դարի մի ձեռագրից։

* * *

1. Տաղ ի նոյն անարժան Աւետէ. «Աստուածածին կոյս Մարիամ,|Աստղ արուսեակ առաւօտեան...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5954, էջ 30ա—30բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիս»։ Վերջին տունը՝ «Սարկաւագիս այս եղկելոյս,|Թըշուառացեալ մեղօք գերոյս,|Աղաղակեմ առ քեզ Յիսուս,|Հայցմամբ մօր քոյ լեր, Տէր, ինձ լոյս»։

2. Ի նոյն անարժան Աւետէ տաղ. «Աստուածածին զքեզ դաւանիմ,|Մայր Աստուծոյ խոստովանիմ...», անդ, էջ 30բ—31ա։

Սկզբնատառերը՝ «Աւետիս»։

3. Տաղ ի նոյն մեղաւոր Աւէտ սարկաւագէ. «Արդ պաղատիմ առ քեզ արքայ,|Յիսուս Քրիստոս ինձ ողորմեայ...», անդ, էջ 31ա—31բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիսէ»։

4. Տաղ ի նոյն մեղաւոր Աւետէ. «Անմահ արքայ, տէր երկնային,|Անեղ, անճառ և անքննին...», անդ, էջ 32ա—32բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիսէ երգ»։

5. Տաղ ի նոյն Աւետէ անարժանէ. «Առ քեզ գոչեմ արտասւելով|Եւ պաղատիմ զայս ասելով...», անդ, էջ 32բ—33բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիսէ»։

6. Տաղ ի նոյն Աւետէ մեղսայսիրէ. «Առ քեզ գոչեմ սրտիւ մեղայ,|Յիսուս Քրիստոս ինձ ողորմեայ...», անդ, էջ 33բ—34ա։

Սկզբնատառերը՝ «Աւետիս»։

7. Տաղ ձայնիւ Աւետ անարժանէ յաղագս իւրոյ մեղաց անձին ասացեալ։ Հայր աղաղակեմի ձայնեն է. «Առ քեզ գոչեմ մեղայ[1],|Յիսուս Քրիստոս և ինձ ողորմեայ...», անդ, էջ 34ա—35ա։

Սկզբնատառերը՝ «Աւետիսէ»։

8. Տաղ ի մեղաւոր Աւետէ ասացեալ անարժան սարկաւագէ. «Աստուած իմ Յիսուս Քրիստոս,|Աղբիւր բարութեան և լոյս...», անդ, էջ 35ա—35բ։

Սկզբնատառերը՝ «Ավետիս f է»։

9. Տաղ ի նոյն Աւետէ. «Վա՜յ զիս՝ մեղացս որ միշտ մեղայ,|Զպատուիրանաւքն fո յանցեայ...», անդ, էջ 35բ—36բ։

Ընդամենը 7 տուն է։ Վերջին տունը՝ «Այլ մեղաւորս գոչեմ մեղայ,|Ողորմութեամբըդ քոյ շնորհեայ,|Աւետ անուն որ քոյ ծառայ,|Ի քոյ տեսոյտ (sic) արժան արայ։ Ամէն»։

ԱՒԵՏԻՍ ՏԱՂԱՍԱՑ

Հեղինակն է «Պիլպիլն է ճագեր ի յոտքն կօշիկ» սկզբնավորությամբ տաղի՝ ըստ Ար. Տեկանցի հրատարակության, «Հայերգ», Թիֆլիս, 1883, էջ 72—73։ Այստեղ՝ կարդում ենք «Աւետիս տայիր ծառայն իմ մեղաց» են, որ պետք է անշուշտ լինի «Աւետիս դպիր»։ Բայց այս տաղի մյուս հրատարակություններն ունեն «Կարապետ դպիր», տես՝ ԿԱՐԱՊԵՏ ԴՊԻՐ ՏԱՂԵՐԳՈՒ։

Երևանի Պետ. Մատ. № 2436 ձեռագրում ամն Ավետիսի անունով կա մի այլ տաղ վարդի և սոխակի մասին (էջ 55ա—56ա), բայց սկզբից թերի. այժմյան սկ. է՝ «Տիպն է վարդին նրման յարփոյն,|Յողն իջանէ յառաւօտուն»։ Այս տաղի վերջում՝ «Յիշեմք զԱւետիսն ի փոսոյն|Եւ մեք մայլիմք միմեանց սիրուն»։ Ձեռագիրը ԺԸ դարից է։

[1] Տողի վերջավորությունը հավանաբար պիտի լինի՝ մեղայ մեղայ։

ԱՒԵՏԻՍ ՕԳՈՍՏԻՆՈՍ

Տե՛ս ԱՒԵՏԻՔ ՕԳՈՍՏԻՆՈՍ։

ԱՒԵՏԻՔ (Բոնաւենտուրա)
(Bonawentura Awedyk)

Լեհահայ մշակութային գործիչ, ԺԸ դ.։ Դոմինիկյան ուխտի Լեհաստանի կազմակերպության անդամ։ Եղել է աստվածաբանության և իմաստասիրության դասախոս։ Մեռ. 1762 թ.։ Հեղինակ է լեհերեն գրված մի քանի երկերի, որոնք տպագրված են 1734—1739 թթ. շրջանում՝ Պոզնանում, Լվովում և Լուբլինում։

* * *

1. Akademia niebieska w serafiiczney Pannie y Matce Teresie Ś-tey wystawiona Kazaniem w kościele WW. OO. Karmelitów bosych konwentu posn. ogłoszona; a potym Illustri et admodum Rndo Dno Francisco Antonio Idkiewicz ecclesiarum parochialis Pawłovicensis curato, hospitali S. Barbarae in Poniec praeposito dedykowana przez X. Bonawenturę Awedyka, dominikana, Ś. teologii lectora, onejże professora, kaznodzieję domowego. Cum licentia Superiorum do druku podana roku 1734, d. 3 Sept. W Poznaniu, w drukarni akademickiej.

2. Konsolacya w smutku przy expulsyi wszystkich strachow w życiu y po śmierci, Józef S. kazaniem w kościele WW. OO. Karmelitów bosych kowentu poznanskiego ogłoszona; a potym clarissimo et excellentissimo DD. Joanni Francisco Barszczewski utriusq' juris Doctori S. R. M. Secretario, apostolico et officii consularis posnaniensis notario, confraternitatis Stmi patriarchae Joseph praefacto cum licentia superiorum ofiarowana przez X. Bonawenturę Awedyka dominikana, św. teologii lektora, filozofii professora, kaznodzieję domowego r. p. 1734, dnia 19 Marca. W Poznaniu, w drukarni akademickiej.

3. Zodiak oyczystego Rogali JW. JM. Pana Alexandra Ferdynanda z Biberszteynow hr. Krasickiego kasztelanica Halickiego z ziemskiego parowu na niebieski firmament przyniesiony funebralnym kazaniem w bazylice koszyrskiego kamienia demonstrowany, a na uśmierzenie żałów JW. JMci Panu hrabiowi z Bibersztеynow hrabi Krasickiemu kasztelanowi Chelmskiemu jako żałośnemy po utraconym synowcu stryjowi konsekrowany, przez X. Bonawenturę Awedyka prowincyi polskiej dominikana, Ś. theologii lektora, professora, prymaryusza ordynaryjnego w konwencie Luckim Kaznodzieję r. p. 1737, d. 16 Maja. We Lwowie, w drukarni Brackiej Troycy Świętey r. 1737.

4. Donatywa bez aggrawacyi familii nie z krzywdą herbowey Rzewuskich krzywdy od Boga samego mile ekceptowana, śmierć JW. JMość Pani Eleonory z Rzewuskich hrabiny Krasicki kasztelanowy Chełmskiej na solennym pogrzebie w kościele WW. OO. Dominikanów Lubelskich in praesentia JO. Trybunału funebralnym kazaniem demonstrowana, a na póskromienie żałów JJ. WW. Ichm. Panom Janowi kasztelanowi Chelmskiemy, Wincentemy staroście Korytnickiemy, Felixowi, Dominikowi y Jackowi z Sieczyna na Krasiczynie hrabiom Krasickim kasztelanicom Chełmskim żałosnym po utraconej matce synom konsekrowana przez X. Bonawenturę Awedyka prowincyi polskiey dominicana św. theol. lektora, natenczas przeora konwentu Włodzimirskiego r. p. 1739, dnia 15 Octobr., z pozwoleniem starszych do druku w Lublinie podana. W Lublinie, w druk. S. J. Acad. 1739.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Estreicher K. — „Bibliografia polska", t. XII, Kraków, 1891, str. 309—310.

ԱՒԵՏԻՔ (Կոստանդին)
(Konstantyn Awedyk)

Լեհահայ հասարակական գործիչ և մանկավարժ, ծն. 1708 թ.։ Իմաստասիրության և կանոնական իրավունքի դասախոս, միաժամանակ հայտնի բեմբասաց և հեղինակ լեհերեն բազմաթիվ երկերի, որոնք 1745—1766 թթ. շրջանում լույս են տեսել Պոզնանում, Լուբլինում, Կալիշում և, գլխավորապես, Լվովում։ Իր գրվածքներում անդրադարձել է Լեհաստանի քաղաքական և հասարակական կյանքի շատ հարցերին. ի միջի այլոց մասնակցել է Տալմուդականների դեմ կազմակերպված բուռն պայքարին։ Մեռ. 1771 թ.։

* * *

1. Kazanie na pogrzebie JW. JM. P. Michała na Xstwie Poryckim Czackiego, kasztelana Wołyńskiego, woysk JKM. y Rzpitey znaku pancernego rotmistrza, miane przez X. Konstantego Awedyka Soc. Jesu dnia pierwszego pogrzebu w kościele Luckim OO. Jezuitów roku pańzkiego 1745. dnia 17 Maja. W Lublinie, w drukarni JKM. Coll. Soc. Jesu 1745.

2. Kazanie na powitaniu Jasnie Wielmoznych Wielmosnych Jasnie Oswieconego Trybunału koronnego deputatow, po ufundowany w gornych wojewodztwach głownych sądów jurysdykcyi. Miane w kościele farnym Piotrkowskim przez X. Konstantego Awedyka Societatis Jesu, tegoż kościoła káznodzieję roku 1747. dniá 15 Pàździernika. W Kaliszu, w drukarni JKM. Coll. Kaliskiego Societatis Jesu. 1747.

3. Nagroda długo umartwionych wieków, w prześwietnym województwie Sieradzkim wybor tak godnego ziemstwa, godni sędziowie ziemscy Sieradzcy W. Jegomość Pan Szymon. Zaremba sędzia ziemski Sieradzki, W Jegomość Pan Woyciech Kolumna Walewski, podsędek ziemski Sieradzki. W Jegomość Pan Floryan Lubienski, pisarz ziemski Sieradzki, przy nowo ufundowaney sądów swoich jurysdykcyi publicznym kazaniem na solenney wotywie w kościeie Xięży Jezuitow mianey, powitani przez X. Konstántego Awedyka S. J. Kaznodzieię kościoła farnego Piotrkowskiego roku 1747. dnia 24 Kwietnia. W Kaliszu, w drukarni JKM. Collegium Kaliskiego Societatis Jesu.

4. Mądrość każdego kondycyi proporcyonalna JO. Trybunałowi koronnemu y innym stanom za kalendę dana, to jest: Kazanie kolendowe w dzień S. Agnieszki miane wielkim i dystyngwowanym imionom prześw. palestry Piotrkowskiey trybunalskiey przypisane przez X. Konstantego Awedyka Societ. Jesu kaznodzieję ordynaryusza farnego Piotrkowskiego r. 1748. 21 Stycznia. W Kaliszu, w drukarni JKM. Coll. Kaliskiego Soc. Jesu 1748.

5. Kazania w niektórych materyach tego politycznieyszego i uczeńszego wieku wielce potrzebnych. Wielkich zasług imieniem JW. Szczęsnego Czackiego, podczaszego koronnego, starosty Nowogrodzkiego, rotmistrza znaku pancernego woysk J. K. Mci i R. P. zaszczycone. Wydane przez X. Konstantyna Awedyka Soc. Jesu, r. 1757. w drukarni J. K. Mci i Colleg. lwows. Soc. Jesu.

6. Kazanie na zaczęcie Trubunału koronnego, miane przez X. Konstantego Awedyka S. J. r. 1758. W drukarni Coll. Lubelskiego.

7. Kazanie gdy pierwsza wiadomość przyszła o nominacii J. W. X. Wacława Hieronima z Bogusławic Sierakowskiego biskupa Przemyślkiego na arcybiskupstwo Lwowskie miane w Archi-Katedrze Lwowskiey, na wotywie publiczney przez X. Konstantego Awedyka Soc. Jesu za rozkazem y nakładem Jw. Antoniego Rozwadowskiego, kasztelana Halickiego do druku podane roku 1759. in Septembr. W drukarni JKM. Colleg: Lwow: Soc. Jesu (1759).

8. Kazanie miane w katedrze Lwowskiej d. 10 Maja 1759 r.

9. Kazanie po dysputach Contra Talmudystów w Lwowie w kościele katedralnym Lwowskim miane. Przytem historia o Contra Talmudystach wszystkie dwornieysze okoliczności, nawrócenia ich do wiary św. i dalszych postępków opisująca, imieniem JW. JM. Pana Ignacego na Wielkiem Rozwadowie Rozwadowskiego, kasztelana Halickiego, starosty Ostrowskiego, generała majora buławy polnej koron. zaszczycona. Lwów, w drukarni Akad. S. J. 1760.

10. Opisanie wszystkich dwornieyszych okoliczności nawrocenia do wiary s. Contra-Talmudystów albo historya krotka ich początki i dalsze sposoby przystępowania do wiary s. wyrażająca. Za pozwoleniem s. zwierzchności do wiadomości publiczney podana. We Lwowie, w drukarni akademickiey JKM. Coll. Soc. Jesu roku 1760.

Սույնը այլ տպագրությունն է „Kazanie po dysputach Contra Talmudystów“ *աշխատության (տես նախորդը, § 9)։*

11. Kazania na niedziele całego roku wielkim imieniem W. JM. P. Michała z Grabowa Grocholskiego sędziego ziemskiego Braclawskiego, rotmistrza JKM. y Rzpltey znaku pancernego zaszczycone. Przez X. Konstantego Awedyka Soc. Jesu wydane r. 1766. W drukarni JKM. akademickiey Coll. Lwows. Soc. Jesu 1766.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Estreicher K. — „Bibliografia polska“, t. XII, Kraków, 1891, str. 310—312.

Petrowicz Gr. — „I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVIII“ (Estratto da Mélanges Eugène Tisserant, vol. III = Studi e Testi, 233), Città del Vaticano, 1964, p. 167—168.

ԱՒԵՏԻՔ (Միքայէլ)
(Michał [Michael] Awedyk)

Լեհահայ հասարակական գործիչ և մանկավարժ, ԺԸ դ.։ Մասնակցել է Կրակովի քաղաքային խորհրդի գործունեությանը՝ խորհրդականի և այլ պաշտոններով (radca i lonher miasta Krakowa, prowizor lazaretu...). *Երկար տարիներ եղել է նույն քաղաքի համալսարանի իմաստասիրության ամբիոնի դասախոս։ Ունի լատիներեն և լեհերեն աշխատություններ, որոնք 1728—1751 թթ. շրջանում տպագրվել են Կրակովում։ Մեռ. 1780 թ.։*

* * *

1. Conchylium gemmas Aristotelici Euripi in praemium V. VV. DD. primae laureae candidatis, dum in alma Universitate Cracoviensi per illustrem clarissimum et admodùm reverendum Dominum D. M. Stanislaum Venceslaum Panisium philosophiae doctorem, ejusdemq; in Collegio minori seniorem professorem, ecclesiarum collegiatae S. Annae canonicum, parochialis in Kromołow curatum, in numerorissima nobilissimorum hospitum et senatus academici praesentia, artium liberalium et philosophiae baccalaurei ritu solenni creantur proferens, applausûs gratulatorij ergo à Michaele Joanne Nepomuceno Awedyk Crac: ejusdem laureae candidatô, pöetico calamô explicatum. Anno quem hic Cabalisticon refert.... Cracoviae, typis haeredum Francisci Cezary S. R. M. Illustrissimi ac Reverendissimi Domini Episcopi Cracoviensis, Ducis Severiae necnon Scholarum Novodvorscianarum ordinarii typographi [1728].

2. Epaminondas pro domo vitae humanae et felicitatis bono decertans, S. Joannes Nepomucenus metropolitanae ecclesiae Pragensis canonicus, Thaumaturgus martyr Christi, regni Bohemiae et famâ periclitantium patronus, dum ad solennem canonizationis suae pompam, ex cathedrali

Cracoviensi Basilica, per Confraternitatem Literatorum sub titulo Assumptionis B. V. M. et ejusdem S. patrocinio gaudentem ad ecclesiam S. Adalberti, in circulo Cracoviensi introduceretur. Praesente magnorum hospitum corona, a M. Michaele Joanne Nepomuceno Awedyk, in alma Universitate Cracoviensi philosophiae doctore et professore, devoto cultu panegyrico adoratus annô quô MagnVs De CaeLo VenIt heros a VXILI arl humanae vitae maximus ille Deus. Die 22 Septembris. 1729. Cracoviae, typis Jacobi Mátyaszkiewicz S. R. M. typographi [1729].

3. Pantheon veri numinis Dei ter Optimi Maximi, sub titulo SS. Theressiae et Joannis à Cruce ignibus aelianis clarissimum, rosis gentilitiis, illustsissimi (sic) et excellentissimi domini, D. Joannis comitis in Slupow Szembek, supremi Regni Poloniae cancellarii, Graudentinensis, Lubaczoviensis, Capinensis etc. etc. etc. capitanei, fundatoris munificentissimi, florentissimum; inter solennia consecrationis encaenia, festivo laetitiae publicae plausu: à M. Michaele Joanne Nepomuceno Awedyk, in alma universitate Cracoviensi philosophiae doctore et professore, celebratum. Anno quô opus salutis humanae, Deus homo fundavit 1730. die 16. Aprilis. Cracoviae, typis Jacobi Matyaszkiewicz S. R. M. typographi.

4. Praesidium universi cracias inter turres D. Joannes Nepomucenus, Sacrae Theologiae et I. V. doctor, canonicus cathedralis Pragensis, thaumaturgus ob servatum Sanctae Confessionis sigillum martyr, famâ periclitantium singularis patronus, dum ejus Sacrae Reliquiae ad ecclesiam Divi Adalberti Archiepiscopi et martyris ex Basilica cathedrali Cracov.: ritu solenni introducerentur? Architecta pietate Archiconfraternitatis literatorū et aliorum cultorum erectum et devota panegyri a M. Michaele Joanne Nepomuceno Awedyk in alma Universitate Crac.: AA. LL. ac philosophiae docto: et profes: scholae B. V. Mariae in circulo Cracov.: seniore, delineatum. Annô quô praesidium ad reparandam salutem humanam, Deus homo factus 1731. die 22. Septembris. Cracoviae, typis Jacobi Matyaszkiewicz S. R. M. celsissimi, illustrissimi et reverendissimi episcopi Cracoviensis, ducis Severiae ordinarij typographi.

5. Hospes in urbe metropolitana Cracoviensi P. Onufrius magnus anachoreta, regis Persarum filius, thaumaturgus circa solennem reliquiarum introductionem ex Basilica Cathedrali Cracoviensi, ad ecclesiam S. Adalberti Archiepiscopi Gnesnensis, patroni principalis Regni Poloniae, per Archiconfraternitatem Literatorum sub titulo Assumptionis B. M. V. et S. Joannis Nepomuceni Martyris, invitatus ab universo devoto populo Annô Domini 1741. die 11 Julij per 4 dies perseverante solennitate cum summa veneratione et cultu in numerosissimo concursu adoratus, synopsi, breviq; compendio posteritati per M. Joannem Nepomucenum Awedyk, in alma Universitate Cracoviensi philosophiae doctorem et professorem orbi christiano praesentatus. Cracoviae, typis Universitatis [1741].

6. Memoryał potomności, to iest opisanie porządku w lazarecie krakowskim zá brámą nową podczas jubileuszu wielkiego w roku tysiącnym siedmsetnym pięćdźiesiątym pierwszym, przez sześć mieśięcy, to iest od dnia siodmego miesiąca marca do dnia piątego września zachowanego. Do druku podany roku pańskiego 1751. W Krakowie, w drukarni Michała Jozefa Antoniego Dyaszewskiego J. K. JMCJ typografa.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Estreicher K. — „Bibliografia polska", t. II, Krakow, 1891, str. 312—314.

ԱՒԵՏԻՔ (Տէր)

Դավիթ-բեկի շարժման (1722—1728 թթ.) ղեկավարներից մեկը, Ղարաբաղում։ Ք. Պատկանյանը գրում է նրա մասին. «Այն ժամանակուայ անցքերի նկարագրութիւնը, ինչպէս հաւատացնում է Գարեգին Զարպհանալեանը[1], գրի է առնուել նոյն իսկ Տէր Աւետիքի բերանից և պահպանուում է Վենետիկի Մխիթարեանց գրադարանում»[2]։ Պատկանյանը միտում է այս գրվածքը նույն համարելու «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին և պատերազմաց Հայոցն խափանու» անունով երկի՝ հետ (տպ. Վաղարշապատ, 1871)։

ԱՒԵՏԻՔ (Օխսուզ)

Տաղասաց, որի մասին կենսագրական տեղեկություններ չկան։ Ապրել է հավանաբար ԺԷ դարում։ Այս հեղինակի անունով հայտնի են մեկ հայերեն և մեկ հայատառ թուրքերեն սիրային տաղեր։

* * *

1. Տաղ սիրոյ. «Տեփ ղաֆիլ ճայեցայ, աւելցաւ բոցս,|Ատ քու քընքուշ, բըխբոջ ձեռացըրտ մեռնիմ...», *տես՝ «Գիտական նյութերի ժողովածու», № 2, 1950, էջ 199—200։*

Վերջին տունը՝ «Իմ անունն Աւետիք ու քուկն է Սառայ,|Դուն ինձի պարոն ես՝ ես քեզի ծառայ.|Ճանէ ծոցուտ՝ հայիմ, թէ չէս մեռայ,|Ատ քու քընքուշ բըղըբոջ ձեռացըրտ մեռնիմ»։

Հրատարակված է Երևանի Պետ. Մատ. № 9271 ձեռագրից (էջ 146բ—147ա)։ Հրատարակիչ՝ Աս. Մնացականյան։

2. Տաղ սիրոյ. «Պէնի սէվտիկիմտէն այրը տիւշիւրտում,|Իլլէ սանայ տայ գալմասըն օճ մէճէլ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9271, էջ 147ա—147բ։*

Վերջին տունը՝ «Աւբզուզ (sic) Աւետիքին տէրտի յեկին տիր.|Ճէքէ սօզու իւրէկիմտէ տօկուն տուր.|Կէչէն կիւն սայըլմազ, կիւնիմ պօկուն տուր.|Պէն սէնի պու հալտայ կեօրտում օճ մէճէլ օլտու»։

ԱՒԵՏԻՔ ԱՄԴԵՑԻ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ [ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ]

Տես՝ ԱՒԵՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ։

ԱՒԵՏԻՔ ԴԱՇՏԵՑԻ

ԺԷ դարի հայ աշուղ, որը գրել ու երգել է հայերեն և ադրբեջաներեն լեզուներով։ Աշուղական անունով հաճախ իրեն անվանում է Արդի, *մանավանդ իր ադրբեջաներեն տաղերում։ Ապրել է Նոր Ջուղայում և հավանաբար Շահ-Աբաս Ա-ի բռնագաղթի ժամանակ Արարատյան դաշտից դեպի Պարսկաստան տարված հայերից էր։ Իր ադրբեջաներեն երգերում Ավետիք Դաշտեցին իրեն անվանում է* Այգիխլու, Այգլուալու, *այսինքն՝* Ագուլեցի։ *Երևանի Պետ. Մատ. № 3692 ձեռագիրն Աւետիք Դաշտեցու տաղարանն է։ Այդ ձեռագրում, ինչպես երևում է, նրա կողմից հավաքված են եղել զանազան տաղերգուների գործեր, իսկ վերջում նա գրել է իր սեփական հեղինակությունները։ Ձեռագրի սկզբի մասը,— հավանորեն մեծագույնը,— կորել է և ուրիշ տաղերգուների երգերից այժմ մնացել է միայն Գրիգորիս Աղթամարցու մի սիրային տաղը, որն սկզբից թերի է, ինչպես և, վերջից, թերի են Ավետիքի երգերը[1]։ Այդ երգերը մենք նշում ենք ստորև՝ ըստ ձեռագրում եղած հերթականության։*

---

1 Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն հայերէն դպրութեան. Բ. Նոր մատենագրութիւն», Վենետիկ, 1878, էջ 444. «Մեր դիւանաց յիշատակագիրք կը հաւատարմացընեն թէ այն արուեստից նախկին հեղինակ ու իրեն հետ միաբանող կտրիճ գնդերու առաջնորդ Աւետիք երիցուն՝ բուն իր բերնովը պատմուած դէպքեր են, զորս մեր ծերունեաց մէկը փութացեր է գրով արձանագրել»։

2 Ք. Պատկանյան, «Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակը», տես՝ Փորձ, *1880, № 1, հավելված էջ 39։*

1 Այս ձեռագրի թերի նկարագրությունը տես՝ Հ. Թոփճյան, «Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի», մաս Ա, Վաղարշապատ, 1898, էջ 110, № 97ա։

* * *

1. Զատկին վրէն ասացեալ Աբդին. «Հաւքերըն կու կարդան խանտան|Նալայի դումրի սադ շանդան|Բըլբուլ շըրշու բիր յանդան|Յորժամ Յայոց զատիկըն գայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3692, էջ 4բ—5ա։*

Ընդամենը 5 տուն, հայերեն և ադրբեջաներեն խառը։ Վերջին տան մեջ՝ «Դաշտիցի Աւետիք էուր բեղուրս|Մրովամ փէի նուր ալամ քուշ յաշիլ գէինուր,|Յորժամ...»։

2. Հաղ Դաշտիցի Աւետիքի ասացեալ. «Ալ դանայ բոյարսան դաստն.|Աշխիլանդայ շաշմի մաստն.|Հայրաթ ջան ալմաքղուր դաստն|Շիխի թարլանում, թարլանում...», *անդ, էջ 5ա։*

Ընդամենը 5 տուն, ադրբեջաներեն։ Վերջին տան մեջ՝ «Այգլխսլու Աբդինըն ահի|Սանի աղլադուր վալայի...»։

3. Հաղ Աւետիքի ասացեալ Դաշտեցի. «Անբարավ շայ քաքուլն ոլմիշսան բուշվառէ հան.|Աբդինըն դիբլայգայի սանսան, գենայ նիշուն դինմասան...», *անդ, էջ 5բ—6ա։*

Ընդամենը 5 տուն ադրբեջաներեն։ Սկզբնատառերը կազմում են՝ «Ավդի ա»: *Վերջին տան մեջ՝ «Այգլուսլու Աբդի ոլդի...»։*

4. Այլ հաղ Աւետիքի ասած. «Եազ ֆասլի շքուֆայ շիշայք չոխսալսն|Ղումրիլար սասլանսըն, բլբուլ չոխ ոլսն...», *անդ, էջ 6ա։*

Ընդամենը 5 տուն, ադրբեջաներեն։

5. Յայերին Դաշտիցի Աւետիկի ասացեալ. «Աշքերդ է կանդթեղ կազմեալ ունգերտ է կամար հոգիս. ցընծութիւն բերկրութիւն եղեր ինձ համար...», *անդ, էջ 6բ—7ա։*

Ընդամենը 6 տուն, ամբողջովին հայերեն։ Սկզբնատառերը կազմում են՝ «Ավեիքդ» *(sic)։ Վերջին տան մեջ՝ «Դաշտեցի Աւետիկ քեզ եղէ գերի հոգիս ոչինչ...»։*

6. Հաղ դիւան Աւետիկի ասած. «Ալբաթտայ ռահիմ ռահման հումք Երմիշտի շանիեայ.|Քի հատի վար մուի զիլֆն վարի, յաք յաք սանիեայ...», *անդ, էջ 7ա—7բ։*

Ընդամենը 7 տուն, ադրբեջաներեն։ Սկզբնատառերը՝ «Աղվիզաե» (sic), *որ պետք է լինի՝* «Ավեդիգ ա»:

7. Այլ հաղ դիւան, Դաշտեցի Աւետիկի ասած. «Աղիքան ալմիշ բայդայի դոլդուր փիալալար.|Զինիլար ալմիշ դաստինայ դահի դոլսա լալալար...», *անդ, էջ 7բ—8ա։*

Ընդամենը 5 տուն, ադրբեջաներեն։ Սկզբնատառերը՝ «Ավդիք» (sic):

☐ *Սրանց հաջորդում են մի քանի ադրբեջաներեն երգեր ևս, որոնք սակայն Ավետիք Դաշտեցու հեղինակությունը չեն երևում։*

ԱՒԵՏԻՔ ԵՒԴՈԿԻԱՑԻ [I]

Կ. Պոլսի հայոց պատր. (1702—1706 թթ.), ծն. 1657 թ. Եվդոկիայում (այժմ Թոքաթ)։ Մի ժամանակ եղել է Սեպուհ լեռան Կայիփոսի վանքի առաջնորդ, հետո՝ Երզնկայի առաջնորդ։ Ըստ Օրմանյանի ճշտումների՝ նա երկու անգամ է բազմել Կ. Պոլսի պատրիարքական աթոռի վրա, առաջին անգամին՝ 1702 թ. մարտի 7—1703 թ. սեպտ. 8, իսկ երկրորդ անգամին՝ 1704 թ. դեկտ.—1706 թ. փետր. 12։ Նույն միջոցին նա ձեռք է բերել և իր անձի մեջ միացրել նաև Երուսաղեմի հայոց պատրիարքությունը սուլթանական հրովարտակով, 1702 թ. հուլիսի 13։

Chamich Mich.—„History of Armenia... Translated from the original armenian by Johannes Audall", vol. II, Calcutta, 1827, p. 441—456.

Craon (De) Const.—„Le projet d'union de 1701 entre les Arméniens catholiques et les Arméniens dissidents, d'après la correspondance Hyacinthe-François, capucin supérieur de Saint-Louis de Péra", Բազմավէպ, *1949,* № *7—12,* էջ *47—67։*

Dufey (De l'Yonne) — „Avédik", *Հետևյալ հրատ. մեջ.* „Dictionnaire de la conversation et de la lecture", t. III, Paris, Belin-Mandar, 1833, p. 495—496.

Dupont Ét. — „La Bastille des mers. Les éxilés de l'ordre du roi au Mont-Saint-Michel (1685—1789)", Paris, Perrin et Cie, 1920, p. 84—92.

Funck-Brentano Fr. — „L'Homme au masque de velours noir, dit le Masque de fer", *Revue Historique*, Paris, t. LVI, 1894, p. 253—303.

Funck-Brentano Fr. — „Légendes et archives de la Bastille", Paris, Libr. Hachette, 1935, p. 91.

Hammer (De) J. — „Histoire de l'Empire Ottoman" (trad. de l'allemand par J. J. Heller), t. XIII, Paris, 1839, p. 187.

Iung Th. — „La vérité sur le Masque de fer (Les empoisonneurs) d'après des documents inédits des Archives de la guerre et autres dépôts publiques (1664—1703)", Paris, Henri Plon, 1873, p. 109—110.

Lacroix Paul — „L'Homme au masque de fer", Paris, Victor Magen, 1837, p. 174—177, 182—183. *Ստորագր.՝* „Paul L Jacob, bibliophile".

Loiseleur Jules — „Un dernier mot sur le Masque de fer", *Revue Contemporaine*, t. LXXII, 1869, p. 385--405.

Macler Fr. — „La France et l'Arménie à travers l'art et l'histoire", Paris, Impr. H. Turabian, 1917, p. 21.

Motraye (De la) Aubry — „Voyage du Sr. A. de la Motraye en Europe, Asie et Afrique" etc., t. I, La Haye, 1727, chap. XV, XVI et XVII.

Taulès (Chevalier de) — „Du Masque de fer, ou Réfutation de l'ouvrage de

M. Roux-Fazillac, intitulé 'Recherches historiques sur le *Masque* de fer', et réfutation également de l'ouvrage de M. J. Delort, qui n'est que le développement de celui de M. Roux-Fazillac, publié le 15 octobre 1825, chez Delaforest, libraire à Paris, et qui a pour titre 'Histoire de l'Homme au masque de fer'", Paris, 1825.

Taulès (Chevalier de) — „L'Homme au masque de fer; mémoire historique où l'on réfute les différentes opignons relatives à ce personnage mystérieux et où l'on démontre que ce particulier fut une victime des Jésuites", Paris, 1825.

Topin Marius — „L'Homme au masque de fer", *Le Correspondant*, 1869, t. LXXVII et LXXVIII (nouv. série t. XLI et XLII).

Topin Marius — „Au R. P. Turquant, de la Compagnie de Jésus", *Le Correspondant*, 1869, t. LXXIX (nouv. série t. XLIII), p. 919—944.

Պատասխան՝ L. Turquant-*ի* „À propos du Masque de fer" *հոդվածին։*

Topin Marius — „L'Homme au masque de fer", Paris, Dentu et Didier, 1869.

Ունեցել է բազմաթիվ հրատարակություններ։ Նրա 6-րդ տպագրությունը եղել է 1883 թ.։ Մենք ձեռքի տակ ունեցել ենք 2-րդ տպագրությունը, որ է՝

Topin Marius — „L'Homme au masque de fer", Paris, E. Dentu—Didier et Cie, 1870.

Գիրքը տալիս է Le Correspondant-*ում հրատարակված նյութերը։ Նրա XI—XIV գլուխները նվիրված են Ավետիքի հարցին (էջ 141—201). իսկ հավելվածում վերահրատարակված է հեղինակի պատասխանը* L. Turquant-*ի հոդվածին (էջ 375—410)։*

Վերոհիշյալ XI—XIV գլուխները հայերենի թարգմանված և հրատարակված են հետևյալ անվանաթերթով.

Երկաթէ դիմակով մարդը և Հայոց Աւետիք պատրիարքը: Գրեց Պ. Մարիոս Թօբէն և թարգմանեց գաղղիական բնագրէն Կ. Ս. Իւթիւճեան: Կ. Պոլիս, ի տպարանի Մասեաց, 1870:

Հատորի սկզբին՝ թարգմանչի առաջաբանն է (էջ Ա—ԺԵ), ուր խոսվում է երկաթյա դիմակին վերաբերող զանազան կարծիքների մասին, հատկապես ծանրանալով Ավետիք պատրիարքի և Տոպենի աշխատության բովանդակության ու արժեքի վրա։ Հետո՝ տալիս է թարգմանությունը Տոպենի գրքի XI—XIV գլուխների, որոնք նոր համարակալմամբ դարձել են Ա—Դ գլուխներ (էջ 17—123)։

Բովանդակութիւն.

Գլուխ Ա. Ընդհանուր խորհրդածութիւն Հայոց Աւետիք պատրիարքին դաւով վերցուելուն վրայ։— Ֆէրիօլ մարքիզին Կ. Պօլիս դեսպան ղրկուիլը։— Սոյն պաշտօնին յատուկ դժուարութիւնները։— Ֆէրիօլի նախորդներէն ոմանց անխորհուրդ վարմունքը։— Քիւլէյի արկածը։— Ֆէրիօլի նկարագիրը։— Կ. Պոլսոյ մէջ ունեցած գոռոզ վարմունքն և տարօրինակ ձեւերը։— Կրօնական գործոց մէջ բռնած ընթացքը։— Հայոց եկեղեցին։— Իր պատմութեան համառօտ քննութիւն մը։— Կաթոլիկ քարոզչաց եռանդուն ջանքը հայերն ի կաթոլիկութիւն դարձնելու։— Իրենց անխոհեմութիւնը։— Ֆէրիօլ նախ կը ջանայ այս անխոհեմութիւնը դարմանել։— Հ. Պրաքօնիէ ճիզվիթին յամառ ընդդիմութիւնը։ — Ճիզվիթաց բռնացումն ու պահանջումները։

Գլուխ Բ. Աւետիք։— Իր ծագումը։— Իրեն պաշտպանը՝ դենպետ Ֆեյզուլլահ էֆէնտի։— Հայոց և Կաթոլիկաց եկեղեցիները կատարեալ հաշտութեան մէջ կը կենան։— Սուլթան Մուստաֆա Բ.ի անկումը։— Դենպետին մահը։— Աւետիք պատրիարքութենէ կիյնայ և կը բանտարկուի։— Հայերն ստակի զօրութեամբ կաղատեն զայն։— Ֆէրիօլի անհաշտ ատելութիւնն ու անողոք թշնամութիւնն Աւետիքի դէմ։— Կը յաջողի երկրորդ անգամ ձգել զայն պատրիարքութենէ։— Աւետիքին Քիոս կղզիէն վերցուելուն պատմութիւնը։— Գաղղիական նաւու մը մէջ փակուիլը։— Ճանբան պատահած անցքերը։— Աւետիք իր վրայ լուր տալու փորձ կընէ։— Փորձին անյաջողութիւնը։— Մարսիլիա հասնիլը։

Գլուխ Գ. Տը Թօլէս ասպետը։—Ի՞նչ պատճառաւ կարծեց թէ Երկաթէ դիմակով մարդն Աւետիք Պատրիարքն էր։— Այս կարծեաց նիւթապէս անհնար ըլլալը կապացուցուի։— Տը Թօլէս կը պնդէ և ճիզվիթ հայրերը խարդախութիւն ըրած կամբաստանէ։— Տիւժօնքայի օրագրութեան քննութիւնը։— Անոր կատարեալ ստուգութիւնը և հեղինակին պարզ և անկասկածելի անկեղծութիւնը։— Այն ստուգութեան և Տիւժօնքայի ճշդութեան նոր ապացոյցներ։

Գլուխ Դ. Աւետիք նախ նաւարանին բանտերուն մէջ կը փակուի։— Մարսիլիայէն Սէն-Միշէլ լեռը կը տարուի։— Սէն-Միշէլ լեռան նկարագիրը։— Հոն Աւե-

տիքի կրած անտանելի նեղութիւնը։— Իր ունայն բողոքներն այնպիսի բռնութեան մը դէմ։— Արեւելից մէջ ծագած ընդհանուր սրտայուզութիւնը։— Օսմանեան դրան գանգատները։— Ֆէրիօլի անմօթութիւնը։— Կաթոլիկաց դէմ ելած սարսափելի վրէժխնդրութիւնը։ — Սուտ Աւետիքները։— Ֆէրիօլի գործած առհարկի հնարքները։— Հռովմի արքունեաց երկիւղը։— Լուի ԺԴ-ի կառավարութեան խարէութիւնը։— Աւետիք Պաստիլի բերդը կը փոխադրուի։— Իրեն եղած թելադրութիւնները։— Կրօնքն ուրանալ և ազատութիւն գտնելը։ — Փարիզի Ֆէրու փողոցը վախճանիլը։— Իր մահուան վրայ շինուած սուտ վկայագիրը։— Ջինքը դաւաճանողներուն իւրաքանչիւրին վրայ ինկած պատասխանատուութեան բաժինը։

Turquant L. — „À propos du Masque de fer“, *Etudes Religieuses et Littéraires*, t. IV, 1869.

Այս հոդվածի արտատպությունը տես ի *Le Correspondant*, 1869, t. LXXX (nouv. série t. XLIII), p. 871—918.

Ubicini A. — „Lettres sur la Turquie“, IIe partie, Paris, 1854, p. 255—256.

Vardanian A. — „Avédik“, *հետևյալ հրատ. մեջ.* „Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique“, t. V, p. 998—1000.

ԱՒԵՏԻՔ ԵՒԴՈԿԻԱՑԻ [II]

Կեսարիայի առաջնորդ (1738—1744 թթ.)[1]*։ 1743 թ. իր աշակերտ՝ Ղափանի Կեղվածոր գյուղացի Հովհաննեսին վարդապետական աստիճան շնորհելով՝ այդ առթիվ ստորագրել է մի կոնդակ, որով խնդրում է՝ նրան ամենուրեք ընդունել սիրով և պատվով (Երևանի Պետ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 9)։ Այս կոնդակում Ավետիքը հայտնում է, որ ինքը եղել է Կ. Պոլսեցի Խաչատուր «աստուածաբանութեան վարդապետի» աշակերտ, և իրեն անվանում է «առաջնորդ մայրաքաղաքին մեծին Կեսարիոյ, վերատեսուչ և սպասաւոր սրբոյն Յովհաննու Կարապետի շնորհածութեան դամբարանի» են։ Կնիքի վրա կարդացվում է՝ «Յս.ի Քս.ի ծառայ Աւետիք վրդ. ՌՃՁԳ» (=1734 թ.)։*

ԱՒԵՏԻՔ (Մահտեսի) ՀԱԼԵՊՑԻ

Որդի Բաբաքի և Ուլուխաթունի։ Գլխավոր գրիչն է Երևանի Պետ. Մատենադարանի № 1870 ձեռագրի, որը զանազան նյութերի ժողովածու է։ Ձեռագիրը գրված է Հալեպում 1602—1604 թվականներին և պարունակում է Ավետիքից հիշատակարանային ձևով գրված երեք տաղեր։

* * *

1\. *(Անխորագիր)* «Ես Աւետիս մրտօք խաւար,|Բարեաց ունայն մեղօք զարդար...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1870, էջ 257բ—259ա։*

2\. *(Անխորագիր)* «Բանք պիտանի ոչ եմ կարող,|Թէ պատմեմ ձեզ, ո՛վ պանծալի...», *անդ, էջ 259ա—260ա։*

3\. *(Անխորագիր)* «Մեղաւորիս է յիշատակ,|Զայս գրեցի Հալապ քաղաք...», *անդ, էջ 260—262ա։*

ԱՒԵՏԻՔ ՂՐԻՄԵՑԻ

Հայոց Նոր վկաներից (1509 թ.)։ Տես՝ ԱՌԱՔԵԼ ՂՐԻՄԵՑԻ, «Տաղ տէր Աւետիք կրօնաւորին, որ նահատակեցաւ ի ձեռաց Թաթարաց ագեղնաւորաց»։

ԱՒԵՏԻՔ ՆՈՒԻՐԱԿ

Հեղինակ է էջմիածնին նվիրված մի ներբողական տաղի, որի՝ ստորև նշվող ձեռագիր օրինակները ԺԷ/ԺԸ դարերից հին ընդօրինակություններ չեն։ Ավետիք անունով մեզ ծանոթ են էջմիածնի մի քանի նվիրակներ, տարբեր ժամանակներում։ Նրանցից առաջինը 1515 թվի առաջին ամիսներին գտնվել է Կիպրոսում, ինչպես այդ մասին խոսում է Կիպրոսի Դավիթ եպիսկոպոսն իր հիշատա-

[1] *Արշ. Ալպոյաճյան, «Պատմութիւն հայ Կեսարիոյ», հտ. Բ, Կահիրե, 1937, էջ 923—924։*

կարաններում (տես՝ ԴԱՒԻԹ ԿԻՊՐԱՑԻ)։ Երկրորդը՝ 1656 թ. հիշատակվում է Կաֆայում՝ Խաչատուր Կաֆայեցու Տարեգրության մեջ[1]։ Երրորդը՝ որպես նվիրակ հիշատակվում է 1730-ական թթ. սկզբներին (տես՝ ԱԲՐԱՀԱՄ ԲԱՂԻՇԵՑԻ անվան տակ)։

* * *

Տաղ ի վերայ սրբոյ էջմիածնի, ասացեալ ի յԱւետիք նուիրակ վարդապետէ. «Յարմար ձևօք պատուական,|Խորհրդով կերտեալ խոռան...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2436, էջ 7բ—10բ։

Սկզբնատառերը՝ «ՅԱվետիք նվիրակէ ե»։ Վերջում՝ «Ես Աւետիք անպիտան, անպիտան,|Յարմարողիս քեզ այս բան,|Որոյ լեր միշտ օգնական» են։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 5954՝ խոր. նույն (էջ 2բ—3ա), № 4285՝ անխոր. (էջ 66բ—67բ. որոշ տարբերություններով նաև՝ էջ 152բ—153ա), № 3860՝ անխոր. (էջ 185բ—186ա), № 7515՝ անխոր. (էջ 111ա—111բ) և Թբիլիսիի Ձեռագրերի ինստ. հայ. ձեռ. № 129 (էջ 63բ—64ա), № 183 (էջ 9ա—11ա), № 205 (էջ 12ա—12բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 412 (էջ 68բ). Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 160 (էջ 230)։ Երևանի № 7701 ձեռագրում այս տաղն ունի խոր.՝ «Տաղ գեղեցիկ գունով, ասացեալ ի Ղազարու հայրապետէ Հայոց [Ջահկեցւոյ]» (էջ 55բ—56բ)։

Որոշ ձեռագրեր ունեն սկ. «Յարմար ձևով»։

⊠ Հավանաբար այս տաղի հեղինակի գրչից է նաև հետևյալը.

Տաղ յայտնութեան և ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի գոյն Յարմար ձևովին. «Այսօր տօն է ծննդեան, ծննդեան,|Փրկչին մերոյ յայտնութեան,|Վասն մերոյ փրկութեան, աւետիս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7259, էջ 21բ—22ա։

Սկզբնատառերը՝ «Աւետիքե»։

[1] Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, Երևան, 1952, էջ 227։

ԱՒԵՏԻՔ ՇՈՌՈԹԵՑԻ

Տաղերգու, ապրած՝ հավանաբար ԺԸ դ. առաջին կեսում։ Նրա անտիպ տաղերը գտնվում են Նաղաշ Հովնաթանի տաղարաններում։ Մեզ հայտնի են հետևյալները։

* * *

1. Տաղ վասն հոգւոց. «Անձն իմ թըշւառական վասն էր յուլացար,|Քրնով դանդաղեցար մեղօք թըմ[ր]եցար...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3263, էջ 75բ—76բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիք տ»։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 4426՝ «Տաղ Շոռոթեցի Աւետիքէ ասացեալ վասն հոգոյ» (էջ 98բ—99ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 156 (էջ 59ա), № 537 (էջ 91բ)։

2. (Անխորագիր) «Աննառելի Հօր միածին,|Փառօք լուսովն յաստուածային.|Իջեալ ուտամբ եհար ուժգին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 523, էջ136ա—136բ։

Սկզբնատառերը՝ «Աւետիքէ»։

Այս տաղը, աղավաղված կառուցվածքով և «Աիգյէ», «Ագէգէ» և «Ագգէ» սկզբնատառերով, գտնվում է ուրիշ մի շարք ձեռագրերում. տես՝ նույն մատ. ձեռ. № 3263՝ «Տաղ ի վերայ սուրբ էջմիածնայ» (էջ 76բ—77ա և էջ 105ա—105բ), № 597՝ «Տաղ սուրբ էջմիածնայ» (էջ 198ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 537 (էջ 92բ)։ Որոշ ձեռագրերում տաղի սկ. է՝ «Աննառելոյ Հօր միածին»։ Տես նաև՝ ԱԳԳԷ։

3. (Անխորագիր), «Անեղ անժամանակ ծընեալ ի Հօրէ|Եւ ժամանակաւ սուրբ յայտնեալ ի մօրէ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 523, էջ 136բ—137ա։

Սկզբնատառերը՝ «Աւետիքէ»։

4. Տաղ առ սուրբ Աստուածածին ի յԱւետիք բահանայէ ասացեալ է. «Առ ոտդ անկեալ զքեզ աղաչեմ, ո՜վ սրբուհի կոյս.|Վասըն մեր բարեխօսեայ առ փրկիչն Յիսուս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3263, էջ 67ա—67բ (թերի)։

Սկզբնատառերը՝ «Ավեվիfrեց»։ Ինչպես երևում է, մեր այս օրինակը ոչ միայն թերի է, այլև կառուցվածքով աղավաղված։ Ըստ

երևույթին ավելի լավ օրինակ է Վիեննայի Մխ. Մատ. № 537 ձեռագիրը՝ խոր. նույն (էջ 80բ), որի սկզբնատառերն են՝ «Ավետիք գրեց»:

ԱՒԵՏԻՔ ՋԱՀԿԵՑԻ

ԺԸ դարի երկրորդ կեսի հայ հոգևոր և գրական գործիչ, հայտնի մանկավարժ-թարգմանիչ Փիլիպպոս Ղայթմազյանի ուսուցիչը: Եղել է վրահայոց թեմի առաջնորդ: Գրել է չափածո «Ներբողեան առ թագաւորն Հերակլ» *(Հերակլ Բ), որի հայերեն բնագիրը չի հայտնաբերվել. պահպանվել է միայն վրացերեն թարգմանությամբ, կատարված՝ Տեր Պետրոսի ձեռքով (Թբիլիսիի Կ. Ս. Կեկելիձեի անվ. Ձեռագրերի ինստ. ձեռ. S—3723, էջ 154բ—155ա:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Мурадян П. М. — «Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке», Ереван, 1966, стр. 37—38, 100, 125, 126, 178, 180, 194. *Հրատարակել է «Ներբողեան»-ի վրաց. թարգմանությունը:*

ԱՒԵՏԻՔ [ԱԳԳԷ] ՏԱՂԵՐԳՈՒ

Տես՝ ԱՒԵՏԻՔ ՇՈՌՈԹԵՑԻ, «Տաղ ի վերայ սուրբ էջմիածնայ»:

ԱՒԵՏԻՔ [ԱՒԵՏ] ՏԱՂԵՐԳՈՒ

Տաղասաց, ապրած հավանաբար ԺԶ դարում և կամ՝ ԺԷ-ի սկզբին: Կենսագրական տեղեկություններ չունենք նրա մասին: Հեղինակ է հոգևոր անտիպ տաղերի:

* * *

1. Այբբենի վրայ լաւ մաղթանք է խօջայ Աւետիքի: Ո՛վ պատուական հայրք և եղբարք, թողութիւն արարէք լիրբ Աւետիս՝ որ մոլար մտօքս համարձակեցայ զմաղթանս շարագրել են. «Անչափ չար[ե]օք լցեալ եմ,|Թելովլս ոչ գոյ համար...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 285, էջ 107ա—110բ:*

2. (Անխորագիր) «Վա՛յ որ խոր անդունդըս իջայ՝|Զարագործ գերի Աւետիս...», *անդ, էջ 111ա—113ա:*

3. (Անխորագիր) «Տէր՝ դու գիտես զօգուտն իմ,|Ի քեզ յանձն առնեմ զամենայն զկեանս իմ...», *անդ, էջ 113ա—114ա:*

ԱՒԵՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ [ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ]

Հայտնի է նաև Աւետիք բըբերցող անունով: Հայ գրական գործիչ, որի աշխատանքները մեզ ծանոթ են 1684—1719 թվականներից: Հոր անունը՝ Բաղդասար (Պաղտասար), մոր անունը՝ Նորխաթուն: Ծն. է Դիարբեքիրում, այդ պատճառով ինքն իրեն անվանում է Տիգրանակերտցի: Կատարել է երկար ուղևորություններ և նյութեր հավաքել՝ իր աշխատանքների համար: Ունի պատմաժամանակագրական, աշխարհագրական, երաժշտագիտական և համարողական (աստղագիտական, տոմարագիտական) երկեր: Նա իր երկերը շարադրելիս թարգմանաբար օգտագործել է օտարալեզու աղբյուրներ և թարգմանել է նաև ամբողջական երկեր[1]: Գիտեր արևելյան և արևմտյան մի քանի օտար լեզուներ: Նրա թարգմանությունները երբեմն օտարալեզու բանավոր աղբյուրներից են, ինչպես մի տեղ գրում է, թե «շղագիր և խառնիխուռ գրելուն պատճառն այն է՝ որ շուտ շուտ գրէի և ժողովէի, զի մի՛ ձանձրացին վարպետքն ի դաս տալն» («Տէֆտէր գրքի» նախաբանում, տես ստորև § 5): Ասում է նաև, որ թարգմանաբար շարադրելիս «մէկ քանի բան այլ իմ շինածն է՝ որպէս Պարզատոմար և Տօմար և այլ մեկնութիւնք» (անդ): Խոշոր և տաժանելի աշխատանք է կատարել՝ հայ գիտական գրականությունը հարստացնելու համար: Հավանաբար Ավ. Տիգրանակերտցու հետ նույն է պատմական և աստղագիտական երկերով ծանոթ Ավետիք Ամդեցին, որի ինքնության մասին առանձին տեղեկություններ չունենք: Մենք առաջին հերթին նկարագրում ենք նրա այն երկերը, ո-

---

[1] *Հակոբ Վիլոտը նրա խնդրանքով թարգմանել է «Յաղագս աշխարհագրութեան պատմութիւնք համառօտաբար»-ը, հմմտ. սույն հտ. Ա, էջ 1012, § 20:*

րանք մեզ մատչելի են. իսկ նրա մի քանի այլ աշխատությունները նշում ենք Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությունների հիման վրա։

* * *

1. [Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք: Համառաւաքեցեալ ի հին գաւազանագրաց և ի վիպաբանութեանց՝ ի մի, բազմօք երկամբք: Յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ եւդոկացւոյ: Ի հայրապետութեան ամենայն Հայոց և սրբոյ էջմիածնի լուսանկար աթոռոյ տեառն Աստուածատրոյ: Յամի տեառն 1714, և ի Հայոց ՌՃՀ և Գ թուին] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1492, էջ 5ա—216բ։*

Սկ. «Ադամ ստեղծեալ ի դաշտն Քեբրոնի, ի յագարակին որ կոչի այժմս սուրբ Սիոն, և ի դրախտն վերափոխեալ, ուստի Դ (4) գետք ելանեն, ընդ որ և կինն ի կողէ առն ննջելոյ եղեալ»:

Աղյուսակաձև ժամանակագրություն է, սկսած Ադամից՝ մինչև էջմիածնի Աստվածատուր Համադանեցու կաթողիկոսությունը (1715 թ.)։ Վերջին հոդվածը, որը նվիրված է Աստվածատուր Համադանեցուն, միաժամանակ հեղինակի հիշատակարանն է, որ է՝

«Ի թվին Հայոց ՌՃԿԴ (=1715) ամին մայիսի Ը (8) օծանի կաթողիկոս ամենայն Հայոց տէր Աստուածատուր Համատանցին, որում հրամանաւ նորին գրեցաւ Նորատիպ գիրքս գաւազանապատում, որ կոչի ածանց ի յայլ գրոց Աղիւսակապատմագիր, *որ ժողովեցեալ եղև և հաւաքեալ աստ ի Աւետիք նուաստագոյն ծառայէդ։ Խնդրեմ ի սրբազան վեհապետէդ, զի վասն Աստուծոյ և պետական գագաթանէդ որ անդատապարտ թողու զհողս և զփոշի ոտիցդ, քանզի հարուստ գրատուն ոչ կայր մօտս և պատմագիրքք, որ զամենեսեան յաճախ պատմութեամբք լնանէի զգիրքս, այլ զոր ինչ այսր և անդր գտեալ պատմութիւնք հազիւ թէ կարացի ձեռք բերել և այնիւ գրեցաւ այսքանս մինչև յայս վայր. որով մաղթեմ ի մեծութենէ սրբութեանդ զի ընկալցիս ի փանագէս ծովդ անհուն զայս փոքրիկ և բարակ առուիկս, և բարով վայելես շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, երկար աւուրբ և յար ամօք, և եղիցի առաքելաշնորհ օրհնութիւնդ ի վերայ մեր ամենեցուն։*

Աստանօր աղաչեմ զպատուելի ընթերցողքդ զհայրքդ և զեղբայրքդ, որ յիշման արժանի արասջիք ի սուրբ յաղօթս ձեր Թոխաթու Կաթնապուր կոչեցեալ Սուրբ Ստեփաննոս անուն եկեղեցոյ տէր Մխիթարի թոռ տէր Յոհանն որ մականունն Թուշուն վերաձայնեն։ Եւ պատճառ յիշման զնա արժանի գոլոյն այս է, զի մինչ խնդրող գրքիս տէր Աստուածատուր աստուածաբան վարժապետն ի Թոխաթ քաղաքիս էր, յարկ եղեալ զգիրքս ի վերայ յիմար գրչիս՝ Աւետիք կոչեցեալ Տիգրանակերտցի, թէ պարտիս զգիրքս նորաձևութեամբ ի լոյս հանել որպէս ի վեր անդր պատմեցաւ, և յանձն արար զիս տէր Յոհան յարգոյ բարեկամ և սպասաւորին իւր ասէ՝ Հոգ տարեալ յիմս կողմանէ վերակացու լիցիս դմա, գրեցուսցես զգիրքս. և այսպէս պատուիրեալ նմա՝ ինքն գնաց էջմիածին և անդուստ կրկին գիր յղեալ Թուշունին, թէ Մի՛ յամեցուսցես, գրել տուր. և տէր Յոհան աւագ եղբայրն իմ յամենայն ժամ հրաւիրէր ղտառապեալ գրիչս ի յետս ընկրկելոյ, պատճառելով զդժուարագտութիւն թուականացս, այլ ժիր և արիաջան կալ և գրել, զի տէր մեծ է, ասէ։ Եւ այսպէս թելադրութեամբ նորին յանգ ելեալ կատարեցաւ երկայնատարած նոր աղիսակատիպ պատմագիրս, բարեխօսութեամբ տիրամօր սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոցն Աստուծոյ և աղօթիւք համեղբարցդ։

Այլ և երես ի գետին եդեալ հող և փոշիս ոտից ձերոց պաղատիմ ըղձանօք՝ մի՛ զանց առնել յիշելոյ յաղօթս ձեր զԱւետիք ծառայ ծառայիցդ Աստուծոյ զնորակերտող դժուարագիտ մատենիս և զիմ ծնողս՝ զհանգուցեալ հայրն իմ զմահտեսի Բաղտասարն և զմայրն իմ Նորխաթունն, և զլինողք պատճառ գրքիս մաղթեմ յիշել, զոր և հայցեմք ի Տեառնէ զի զձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս վարձս բարիս պարգևեսցէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և գրեսցէ զանուն ձեր յիշողացդ յաննիւթական ենթակայի յիմանալին քաղաքի, ամէն։ Հայր՝ մեր որ»։

Այս ձեռագրում, որը 1715 թվին է գրված Թոխաթում, կ հեղինակի ինքնագիրն է,

գաւազանագիրքը խոր. չունի։ Խորագիրն առել ենք նույն մատ. № 7424 ձեռագրից, որն ավելի ուշ ժամանակի արտագրություն է։

Սույն № 1492 ձեռագրում գաւազանագիրքը կամ էջմիածնի կաթողիկոսների պատմությունը շարունակվել է Աստուածատուր Համադանեցուց սկսած մինչև Ղազար Ջահկեցի կաթողիկոսի մահը՝ 1751 թ. (էջ 217ա—220բ) Հակոբ Շամախեցու կողմից. ապա շարունակվել է երրորդ հեղինակի՝ Ղունկիանոս գրչի կողմից, սկսելով Մինաս Ակնեցի կաթողիկոսից՝ 1751 թ. և հասնելով մինչև Սիմեոն Երևանցու կաթողիկոսությունը՝ 1763 թ. (էջ 220բ—223ա)։ Այս երկու հավելվածները տարբեր գրչով են։

Տես նաև № 7424 ձեռագիրը՝ «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք» *են (էջ 1ա—207բ), որին հաջորդում են Հակոբ Շամախեցու և Ղունկիանոս գրչի շարունակությունները (էջ 208ա—213ա)։ Ձեռագիրն ամբողջությամբ Ղունկիանոսի ինքնագիրն է, 1763 թվականից։ Հավանաբար, այս ձեռագրից են արտագրվել № 1492 ձեռագրի վերոհիշյալ երկու հավելումները կամ շարունակությունները։*

Տես դարձյալ № 6243 ձեռագիրը՝ «Գիրք պատմութեանց» *են (էջ 2ա—206բ), որին հաջորդում են Հակոբ Շամախեցու և Ղունկիանոս գրչի շարունակությունները (էջ 207ա—213ա)։ Ձեռագիրը 1847 թ. ընդօրինակություն է։*

Ավետիքի սույն ժամանակագրությունից մի հատված է՝

Ժամանակագրութիւն կամ Գաւազանագիրք՝ աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ. «Օսմանցւոց թագաւոր սուլթան Մուրատ, որդի Սէլիմին. սերասկերք սորա առին զՆախչըվան, և միւս ամին էառ զՏէմուր-Ղափուն...», *հետևյալ հրատ. մեջ. Վ. Ա. Հակոբյան (հրատ.), «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 516—518։*

Սույն հատվածի մասին հրատարակիչը գրում է. «Պրոֆ. Լեոյի արխիվի[1] № 11 գործի 202 էջում գտնվում է այս բնագիրը հետևյալ վերնագրով. 'Ժամանակագրութիւն կամ Գաւազանագիրք աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ'*: Ժամանակագրությունը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Թուրքերի գերիշխանության տակ գտնվող հայերի վիճակի մասին։ Բնագրի երկրորդ մասը, որը վերաբերում է Ջալալիների ելույթներին, գտնում ենք ինչպես Մատենադարանի № 5959 ձեռագրում[1], այնպես էլ Ա. Դավրիժեցու Պատմության մեջ[2]։ Վերջին երկու բնագիրը համեմատեցինք առաջարկվող ժամանակագրության հետ և նկատեցինք զգալի շեղումներ, իսկ սովի պատմությունը սույն բնագրում հիշվում է առանց մանրամասնությունների։ Ամենայն հավանականությամբ այս ժամանակագրությունը առանձին բնագիր է և կապ չունի Ա. Դավրիժեցու մեջբերածի հետ» (էջ 506—507)։*

2\. Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ՝ այսպէս է. «Մըսրայ կ՚ելնաս՝ 20 կ՚երթաս՝ Մանֆլութ քաղաքն՝ Նիլի ջուր ի վեր, որ Մսրայ հողն է...» *(հրատ. Ղ. Ալիշան),* Բազմավէպ, *1897, էջ 459—463։*

Բնագրի իտալ. թարգմանությունը.

Un viaggiatore armeno traverso l'Abissinia; per cura del P. L. Alishan, M. O. del R. Istituto Veneto di scienze, lettere ed arti. Venezia, Tip. Ferrari, 1897. [Dagli Atti del R. Istituto Veneto di scienze, lettere ed arti, Tomo VIII, Serie VII.—1896—97].

Առանձնատիպ՝ 1—10 էջ (պարբերականի էջերով՝ 1220—1229)։ Սկզբում՝ Ղ. Ալիշանի տված կենսագրական տեղեկությունները Ավետիքի գրական վաստակի և ուղևորությունների մասին (էջ 1—3), որից հետո տրվում է նրա դեպի Եթովպիա կատարած ուղևորության լրիվ բնագիրը՝ „Per chi volesse andare al paese dell'Abissinia" *(էջ 4—10)։ Գիրքն ամբողջությամբ թարգմանությունն է* E. T[eza]*-ի։*

---

1 *Գտնվում է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում։*

1 *էջ 95ա—102ա։*

2 *«Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 86—87։*

Բնագրի ռուս. թարգմանությունը.

Армянский памятник XVII-го века с данными о географии Абиссинии и северной Африки вообще (Itinerarium Аветика Багдасариана, чтеца из Тигранакерта). [Печатано с разрешения Совета Императорского Общества Любителей Естествознания, Антропологии и Этнографии. Товарищество типографии А. И. Мамонтова, в Москве]. [Москва, 1898].

Հրատարակված է միայն ուղեգրության բնագիրը, որը կազմում է 6 էջ։ Հեղինակի մասին տեղեկություններ չեն տրվում։ Թարգմանիչն է՝ Г. А. Халатьянц: *Դժբախտաբար չի նշված, թե սույն առանձնատիպը ո՛ր պարբերականից է։*

3. Թէսվիէի պիուր արապի, որ ֆարսին խութանիա ասէ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10095, էջ 1ա—26բ։*

Խոսում է 12 կենդանակերպերի և լուսնի ու արևի խավարումների մասին. ունի և աղյուսակներ՝ «Աղիւսակ մաթալեհ կենդանակերպից առ լայնութեան ատիճանն 39» *և օրերի ժամերը որոշող աղյուսակ։ Վերջում՝ հիշատակարան.*

«Գրեցաւ ԻԴ (24) ժամուց մաթալեհքն և ժամացուցի աղիւսակքն, լուսնի և արեգական խաւարմանց պատճառքն իւր գծերովն, և ԺԲ (12) կենդանակերպից ձևն աստեղաց շարօքն, որ այս շարօքն ճանաչեն զկենդանակերպն ի յերկինն աստեղօք։ Թարգմանեցեալ ի Լատինացոց իմաստասիրաց, ձեռամբ Աւետիք ընթերցօղի, ի խնդրոյ Սմբակում իմաստակի. և է այս նոր թարգմանութիւնն որ չկայ ի մէջ Հայոց տումարաց պատճէ[ն]ին» (էջ 26բ)։

4. Լուսնացոյց մշտնջենական, թարգմանեալ ի Ֆռանկաց՝ ձեռամբ Տիարպաքիրցի ընթերցող Աւետիքայ Պաղտասարեան, յամի տեառն ՌՈՂԷ, և ի համարութեան Հայկազունեաց ՌՃԽԴ նոեմբերի ԺԶ. իսկ ի օրինակել գրոյս ՌՃԿԸ ին գրեցաւ ձեռամբ Մալաքիացի Աբգարէն: *Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 2625, fol. 6—30.

5. Տէֆտէր գիրք[1]:

Գրքի նախաբանում հեղինակը գրում է. «Այս գիրքս ամենայն տումարական արուեստից և աստղաբաշխական ճէտվէլից (աղիւսակաց) և մեկնութեանց տէֆտէր է. զոր ես նուաստ Աւետիք ընթերցող ծնունդ Տիգրանակերտեան, որ և սնեալ եղէ ի բազում քաղաքս, այսինքն՝ նախ ի Էրզրում քաղաք, կացի անդ ամս ԺԴ (14), և յետոյ ի Տիգրանակերտ քաղաքն փոխեցայ, ի Բաղեշ, ի Վան, ի Պարսից երկիրն, ի Քրդաստան, ի Արապիստան, ի Անատօլի, ի Սեբաստիա, ի Թոխաթ։ Պատճառ իմ շրջիլն այսքան աշխարհ, վասն գրասիրութեանս և մէրէֆէթի (արուեստ, գիտութիւն) աղագաւ. ոչ թէ ի Հայոց գրոց միայն, այլ ամենայն ազգաց գրոց, այսինքն՝ Արապաց, Պարսից, Ջհտաց, Ղըպտից, Ասորոց, Ֆրանկաց, ի Յունաց գրոց և վարպետաց. հարցեալ և ժողովեալ անհամար մեկնութիւն և ճէտվէլ աղիւսակք, մեծաւ տաժանմամբ, ամառ և ձմեռ դեգերելով, այս գրքիս աղտոտն՝ յառաջ և յետև առանց կարգի և շղագիր և արագ և թէզ գրով գրէի և լնուի զգիրքս. և արարի որպէս տէֆտէր։ Եւ շղագիր և խառնիխուռ գրելուն պատճառն այն է՝ որ շուտ շուտ գրէի և ժողովէի, զի մի՛ ձանձրասցին վարպետքն ի դաս տալն։ Թէ Աստուած կամենայ և ողջութիւն տայ՝ աղօթիւք ձեր, այս գիրքս ըստոյգ սրբագրութեամբ ի պէ֊յազ գիրքն գրելոյ է, ամէն բան իւր կարգն, և ամէն ճէտվէլ իւր մեկնութենովն։ ... Շատ տառապանք և աշխատանք քաշեցի այս գրքիս վերայ, որ այլոց ազգաց այլասեռից դժուարութեամբ և տաժանելի աշխատութեամբ թարգմանեցի ի հայ բարբառ և ի գիր։ Բայց շատ անուանք աստեղաց կայ որ մնաց թարգմանելոյ՝ վասն դժար լինալուն. և շատ ճէտվէլ կայ այս գիրքս որ լմնալոյ է և գրելոյ, վասն ոչ գտանելոյ կատարեալ գիտող այսմ արուեստի. և մէկ քանի բան այլ իմ շինածն է՝ որպէս Պարզատօմար և Տօմար և այլ մեկնութիւնք։ Եւ եղև սկիզբն գրքիս ժողովելոյ և հետևելոյ իմ այս արուեստիս՝ ի թվին Հայոց ՌՃԼԳ և մինչ ի ՌՃՇԸ

---

1 *Այս երկի մասին՝* Բազմավէպ, *1897, էջ 317—321։*

(=1684—1709) ամն՝ այս գիրքս գեւ կու գրվի և կու ժողովվի. և զապագայն Աստուած գիտէ» ևն։

6. Ըստուռլապի առուեստ[1]:

Վերջում՝ «Զայս Ուստուռլապի գիրքս յառաջն Էրզռում քաղաքն օրինակեցի, ի Թուին Հայոց ՌՃԽԴ (1695) մարտի Ե (5) աւարտեցաւ. իսկ այժմս Թուին ՌՃԾԸ (1709) յուլիսի Զ (6) աւարտեցաւ ի քաղաքն Թոխաթ այս գիրքս գրեցի մըսէվվէտէ»։

Ձեռագիր հատորում սույն երկի վերջում կան «Ումեմն իմաստասիրի մեկնեալ է զայս, զատ ի Ուստուռլապի մեկնութենէն, ա՛յլ նեշտ, ի տաճիկ լեզուէ ի հայ բառ փոխարկեցաք», «Այլ ազգ արուեստ վասն Ուստուռլապին, ի այլ գրոց թարգմանած է Արապկաց»:

7. Թուրքին Ջինն գիրքն այս է, որ թարգմանեցի ես տիրացու Աւետիքս, բայց գին սորա եղև ինձ վերայ Ձ (80) դուռուշ[2]:

Թարգմանության հիշատակարանում գրում է. «Թարգմանեցի ի Տաճկաց ի Հայս, ի թվին Հայոց ՌՃԿԷ (1718) ամին, ի յամսոյն ապրիլէ մինչ ի սեպտեմբեր, ի քաղաքն Թոխաթ, ես նուաստ Աւետիք ընթերցող, ծնունդ Տիգրանակերտեան. և զօրինակ սորա խընդրեցի ի քաղաքս այս՝ Եուսուֆ էֆէնտի մուֆտիէն, զոր բազում անգամ գնալով և գալով առ նա և զրոյց տալով սակս երկնային մարմնոց շրջմանն ի բազում օր, և նորա տեսեալ շնորհօք Տեառն իմոյ Քրիստոսի՝ զպատշաճ պատասխանատրութիւնս և մերթ ստիպելոյն զնա, շնորհեաց զօրինակն»։

8. Երաժշտականութիւն, որ Թուրքն Իլմ-ըլ մըսուզի ասէ[3]:

Ունի առաջաբան. «Յաղագս չորս արուեստին, որ են իմաստութիւն զգալական ի աշխարհս. Նախ՝ Աստղաբաշխութիւն, Բ. Երկրաչափութիւն, Գ. Համարողականութիւն, Դ. Երաժշտականութիւն, որ Թուրքն Իլմ-ըլ մըսուզի ասէ, և ի գիրքս այս երեք արուեստէն մասն ինչ ժողովեալ գրեցաք ամենայն ազգաց, և ըստ յատուկ Իլմ-ըլ մըսուզուն զարուեստն և զմըզամըն (եղանակը) գրեմք, որ է Սազն, և զգոյնքն սազերաց, զԹեմպուրն, Սենթուրն և զՄուղնին գրեցաք, որ է ի կողմանէն. և զՖէրտէլից զանուանքն՝ ի դէմն գրեցաք. այլ և զՓէշրովքն, թէ ամէն փէշրով՝ որ է գոյնք՝ ի յոր ֆէրտէլէ առնու սկսուածք, և զբարձրութիւն և ցածութիւն եղանակաց և աճէնկից. զոր ի երկուց բևեռաց աշխարհի գնդոյ երկնից, մանաւանդ երկեակ բևեռաց կենդանակերպից գօտոյն, և 63 կենդանաշար աստեղաց գնացից և ընթացմանցն՝ գտան, և յարմարեցին Գոյնք 12, Ուսուլ 24, և Շօպա 48։ Եւ ի ընթացմանէ մոլարականաց և ի թաւալմանէ արեգական, ներգործութեամբ չորս տարերաց՝ ի ծանրութենէ հողոյն, ի հնչմանէ հողմոյն, ի շաչմանէ ջրոյն, և ի բառաչմանէ կրակին, յիրար խառնեալ կազմեցին զգոյն երաժշտական, և զգիլ և զբամբ և զճիգն և զթոյլ պօռոցն՝ գունից, ֆէլէկ ըլ-աթլասին (երկնագնտի) գտան. և ձեռնէ ձեռն անցեալ գոյնքս՝ աճեցուցին և յաւելին ի պէսպէս երգարանս. ոմանք ի փողս, ոմանք ի թելս, և ոմանք ի յաղիաթելս, և այլք ոմանք յայլ ինչ նիւթս յօդեալ յարմարեցին։ Եւ ի բազմաց երգարանաց զմէկ երկուքն գրեցաք զկերպն, որպէս ի դէմն տեսանես։ Եւ այս ասացեալ գունիցս և մըզամացս զպիտանին առեալ նախնիք մեր եկեղեցականք՝ և շարայարեցին ի խազս և յերգս, մեղեդիս, տաղս, գանձս և շարականս, և մուծին յեկեղեցին...։ Եւ ոմանք՝ զգոյնքն ի ձայնէ կենդանեաց և զազանաց և ի թռչնոց առին. և ոմանք ի ձայնաւոր նիւթեղինաց առին, այսինքն՝ ի փայտէ, ի պղնձէ և յերկաթէ և ի քարէ և այլ նիւթոց. որոց մինն ի բազմաց՝ մեր Որք զքռոբէից *խազն ի գայլի ոռնալէն առին զգունն. և այլք՝ այլ տեղեաց։ Եւ են գտողք ձայնիցս և մըզամացս, յառաջ՝ Քաղդէացիք, և յետոյ փոխեցաւ արուեստս ի Հելլենս, և անդուստ Արաբացիս, և ի նոցանէ Պարսիկք, և ի Պարսից ի Յոյնք, և ի Յունաց ի Հայս, և ի Հայոց գողացեալ Հագարացիք. և նորա առաւելեալ հետևեցան ի կչիռ մտուցանել զմըզամքս. և շինեցին զանազան գոյն, և անուանս կարգեցին» ևն։*

1 Բազմավէպ, *1897, էջ 375։*

2 *Անդ, էջ 375—376։*

3 *Անդ, էջ 376—377։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — *«Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 324, 326 և 329 (Աւետիք Ամդեցի):*

Ալիշան Ղև. — *«Աւետիք Պաղտասարեան ընթերցող Տիգրանակերտցի»,* Բազմավեպ, *1897, էջ 317—321, 375—380, 423—425, 459—463:*

Ալիշան Ղև. — *«Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց», Վենետիկ, 1910, էջ 122 և 143 (Աւետիք Ամդեցի), 135—136 (Աւետիք Տիգրանակերտցի):*

Աճառյան Հր. — *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 342 (§ 115):*

Գաբրիելյան Հենրի — *«Հայ փիլիսոփայական մտքի պատմություն», հտ. Բ, Երևան, 1958, էջ 268—269:*

Լեո — *«Հայոց պատմություն», հտ. Գ, Երևան, 1946, էջ 421—424:*

Լեո — *«Երկերի ժողովածու», հտ. Գ, Երևան, 1969, էջ 413:*

Չոբանյան Պ. Ա. — *«Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին»,* Լրաբեր Հասարակական Գիտությունների *(ՀՍՍՀ Գիտութ. Ակադ.), 1973, № 7 (367), էջ 96—107:*

Ռուս. ամփոփումը՝ П. А. Чобанян, „Новые материалы об Аветике Тигранакертском“ *(էջ 104):*

Պետրոսյան Գ. Բ. — *«Հայկական մաթեմատիկական գրականությունը XVII—XVIII դարերում»,* Պատմա-բանասիրական Հանդես, *1959, № 1 (4), էջ 188:*

Խաչիկյան Լ. Ս. — *«Հայ բնագիտական միտքը 14—18-րդ դարերում»,* Պատմա-բանասիրական Հանդես, *1971, № 2, էջ 42—43:*

ԱՎԵՏԻՔ ՕԳՈՍՏԻՆՈՍ ԿԱՐՆԵՑԻ

ԺԴ դ. դոմինիկյան հայ կրոնավոր, ծն. Կարինում 1332 թ.: Հոր անունը՝ Մարուքե, մոր անունը՝ Գոհարխաթուն: Ըստ երևույթին 1348 թ. մահտարաժամից հետո նրա ընտանիքը փոխադրվել է Կաֆա, ուր 1356 թ. Ավետիքը քահանայական կարգ է ընդունել տեղի հայազգի Թադեոս եպիսկոպոսից, իսկ 1363 թ. դարձել է Դոմինիկյան միաբանության անդամ[1]: 1380—1383 թթ. եղել է և Վենետիկում: Մի քանի ձեռագրերի ընդօրինակողն է: Նշում ենք նրա գրչին պատկանող մատենագրական հետևյալ մանր երկերը:

* * *

1. (Անխորագիր) «Չորս են կարգ գիտութեան գիտնականացն: Նախ՝ որ գիտէ. և թէպէտ գիտէ՝ զի գիտէ, ասէ. Չեմ բաւական խօսելոյ. սայ իմաստուն է և ճեզ. ուսիր ի նմանէ...», *տես՝ Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», պրակ Դ, Վաղարշապատ, 1903, էջ 54:*

Հրատարակվել է 1381 թ. մի ձեռագրից:

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 697՝ անխոր. (էջ 55ա) են. հմմտ. նույն մատ. ձեռ. № 1924՝ «Բանք գիտութեան և զչափ անձին գիտելոյ» *(էջ 349բ, սկ.* «Չորք են կարգ գիտութեան. առաջին գիտէ՝ և գիտէ զի գիտէ»), *№ 1926՝ խոր. նույն (էջ 369ա, սկ. նույն), № 1927՝ խոր. նույն (էջ 324ա, սկ. նույն):*

Տես դարձյալ Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 1՝ անխոր. (էջ 35ա). Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 241 (fol. 159r). ***Օքսֆորդի*** Bodl. Libr. Ms. Arm. E. 34 (fol. 309v):

Սույն բնագրի համար հորդորակ է հետևյալը.

2. Ոտանաւոր յաղագս վերոյասացեալ բանիցդ. «Քանզի գիտունն ընդ անգիտին| Ի միասին մարդիկք կոչին...», *տես՝ Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», պրակ Դ, էջ 54—56:*

Վերջին երեք տները կազմում են հիշատակարանը. «Սա Աւետիքն է Օգոստին|Քա-

---

1 Ավետիքի ընտանիքի պատմության վերաբերյալ տեղեկություններ գտնում ենք նրա հոր՝ Մարուքե երեցի գրած ժամանակագրության մեջ, տես՝ Տ. Պալյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեսարիա», Վիեննա, 1963, էջ 4—5:

բազըղայն եղրայր կարգին,|Զգակասութիւնն իւրումն անձին|խոստովանել գրէ ինքնին։ |Կամ ի ծննդեան[1] մերոյ Փրկչին|Ռայի և Զա թըվականին,|Փետրրուարի օրըն վերջին,|Էր բաններին ըստ նաՀանջին։|Յորում աւուր բանըս յարգին|ի Վընէժոյ եկեղեցին. |Զձեզ աղաչեմ զամենեսին,|Ինձ շնորհեցէ՛ք զՈղորմեային»[2]։

Հրատարակվել է 1381 թ. մի ձեռագրից։

Այլ տպ. (Անխորագիր) «Քանզի...», *տես՝* Հանդէս Ամսօրեայ, *1948, էջ 590—591։*

Այլ տպ. Յորդորակ է վերասացեալ բանիցդ. «Քանզի...», *տես՝ Ս. Տեր-Ավետիսյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», Վիեննա, 1970, էջ 686։*

Հրատարակվել է Նոր-Ջուղայի № 1 ձեռագրից (էջ 35բ—36ա)։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 697 (էջ 55բ—56բ), № 771 (էջ 100բ—101բ), № 607 (էջ 110ա—110բ). Օքսֆորդի* Bodl. Libr. Ms Arm. E. 34 (fol. 310v—311r):

3. (Անխորագիր) «Ուսումնատենչ համակ անձին|Աշխոյժ մրտաց բանասիրին...», Հանդէս Ամսօրեայ, *1948, էջ 590։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 607 (էջ 110ա) են։ Տես նաև Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. E. 34 (fol. 209v—210r):

4. Բանք Աւետիք արեղայի Ակուստինոսի կոչեցեալ, ի կարգէ եղբարցն Քարոզ[ողաց] ասացեալ վասն տնօրէնութեանն Քրիստոսի և վասն գալստեան Նեռինն և կատարածի աշխարհի. «Առաջին մարդըն որ Ադամ անուանեցաւ|Ի հողոյ ի յուրբաթոջ աւուր ստեղծաւ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 771, էջ 89ա—100բ։*

Բնագիրն ունի և բաժանումներ՝ «Աստ սկսանի վասն Նեռինն» *(էջ 94բ),* «Աստ սկսանի վասն կատարածի աշխարհի» *(էջ 98ա) ենթավերնագրերով։ Առաջին մասի տըները հոդում են՝* «Աւետիք Ակուստինոսն զայս բան ոտանաւոր հաւաքեալ արագրեաց սիրոյ»։

Այս ձեռագրում որպես սույն բնագրի հորդորակ է գրված վերոնշյալ «Քանզի գիտունն» *չափածոն (§ 2)։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2448՝ խոր. նույն (էջ 128ա—140բ) են. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատ. ձեռ. № 1՝ «Բանք Աւետիս արեղայի» *են (էջ 26բ—35ա)։*

---

[1] Ուրիշ օրինակներում՝ յամի ծնընդեան։

[2] Ուրիշ օրինակներում՝ զողորմեցինն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — *«Սիսական», Վենետիկ, 1893, էջ 389։*

Ալիշան Ղև. — *«Հայ-Վենետ», Վենետիկ, 1896, էջ 155—156։*

Ակինեան Ներս. — *«Ֆրա Աւգուստինոս Աւետիք»,* Հանդէս Ամսօրեայ, *1921, էջ 638—639։*

Oudenrijn (Van den) M. A. — „Der armenische Dominikaner Fr. Awetiq Augustin von Erzerum", Հանդէս Ամսօրեայ, *1948, էջ 588—596։*

Oudenrijn (Van den) M. A. — „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum...", Bernae, 1960, §§ 564, 569, 583 et p. 334—335.

ԱՒԵՏԻՔԵԱՆ

Տես՝ ԳԱԲՐԻԵԼ ԱՒԵՏԻՔԵԱՆ։

ԱՒԵՏԻՔՈՎ

Տես՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԱՒԵՏԻՔՈՎ։

ԱՒԻՐ ԽԱՌԱՔԱՍՏԵՑԻ

Հայ նոր վկայուհի՝ Արճեշի Խառաքաստ գյուղից։ Բուն անունով՝ Եղիսաբեթ։ Նահատակվել է Վանում՝ 1391 թ., մահմեդական ամբոխի կողմից քարկոծմամբ։ Նրա վկայության համառոտ պատմությունը գտնվում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքում (սկ. «Դարձեալ համառօտեցից զպատմութիւն

միւս այլ կնոջ՝ Աւերաղջան որ էր ի խառաբաստայ»). *տես 1706 թ. տպագր., էջ 694. 1706—1708 թթ. տպագր., էջ 769. և 1730 թ. տպագր., էջ 529—530։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 148։*

ԱՒԵՐՐՈՅԷՍ ԿՈՐԴՈՒԲԱՑԻ
(Averroes Cordubensis)

Արաբ նշանավոր իմաստասեր և բժիշկ։ Իսկական անունն է՝ Իբն-Ռոշդ: *Ծն. 1126 թ. Կորդուբայում և մեռ. 1198 թ. Մարրաքեշում։ Միջին դարերում մեծ համբավ է վայելել Արիստոտելի երկերին նվիրված իր մեկնություններով։ Իմաստասիրության մեջ նրա մեկնություններին հետևող ուղղությունը կոչվել է* ավերռոյականություն:

Ավերրոյեսի իմաստասիրական երկերից հայ. թարգմանություններ մեզ հայտնի չեն, բայց հայ մատենագրության մեջ հիշատակություններ կան նրա մասին։ ԺԴ դ. առաջին կեսում Բարթողիմեոս Բոնոնիացին իր «Մեկնութիւն Վեցօրէից» աշխատության մեջ, խոսելով Աստուծու կամքի բնույթի մասին, վիճում ու հակադրվում էր Ավերրոյեսի տեսակետին և ասում. «Այսպէս երևի մոլորութիւն Ավերօիսի փիլիսոփայի և հերետիկոսի, որ ասաց թէ...»[1]։ Այս աշխատությունը, սակայն, լատիներենից է թարգմանված։ Նույն դարի երկրորդ կեսում Գրիգոր Տաթևացին, իր «Ոսկեփորիկ»-ի առաջին հատորում, Աստուծու գոյության մասին բնական ապացույցներ բերելիս, հիշատակում էր և Ավերրոյեսին. «Յա՛յտ է, որպէս ասէ Աւէռօիս մեկնիչն Արիստոտէլի, թէ ոչ կարէ բազում հակառակութիւն և անկարգութիւն ի մի կցորդութիւն գալ, եթէ ոչ լինի մի ոմն կարգաւորիչ որպէս զօրավարն ի զօրս»[2]։ Իսկ իր «Լուծումն համառօտ յառաջաբան Աւետարանին Յովհաննու» աշխատության մեջ Տաթևացին, աստվածաբանության էությունը բացատրելիս, խոսելով այն մասին, թե ինչպիսի՛ հակառակորդներ ունի քրիստոնեական աստվածաբանությունը, ասում էր. «Զի նախ կրեաց զաստիկ բախումն ի նուրբ և ի խորին գետոյն, այսինքն արտաքին իմաստասիրաց, մանաւանդ յանիծելոյն Աւեռիոսէ, որ մեկնիչն է Արիստոտէլի գրոցն, որ զհաւատ մեր և զաստուածաբանութիւն ծաղր առնէ» են[1]։ Դժվար է ասել՝ Տաթևացին ունիթորական գրականության հայ. թարգմանությունների՞ց էր ծանոթ Ավերրոյեսի իմաստասիրական գործերին, թե նրանց լատ. հրատարակություններից. կամ թե՝ արդյոք նրա ձեռքում ուղղակի եղե՞լ են Ավերրոյեսի իմաստասիրական երկերի հայ. թարգմանություններ։ Այս վերջին պարագան հավանական չի թվում մեզ։

Սակայն ԺԸ դ. Ավերրոյեսի բնագիտական երկերի լատիներենից թարգմանությանը ձեռնամուխ է եղել Ղուկաս Խարբերդեցին։ Նրա այդ աշխատանքներից մեզ հասել է Արիստոտելի «Զմասանցն կենդանեաց» *երկի թարգմանությունը՝* «ընդ ռնիւ Աւէռոսի Գոռտուպէնսիոյ», *որի նկարագրությունը տես ԱՐԻՍՏՈՏԷԼ ՍՏԱԳԻՐԱՑԻ անվան տակ (Ա.— Արիստոտելի երկերը, § 7)[2]։*

Ղուկաս Խարբերդեցին սկսել էր Արիստոտելի «Զեռգւոյ» *գրքի հետ միասին թարգմանել նաև նրա ավերռոյան մեկնությունները՝* «Արիստոտէլի Զեռգւոյ գիրք երեք, ընդ մեկնութեանցն Աւերիոսի» *են, բայց հայտնի չէ՝ թարգմանությունը շարունակվել ու ավարտվե՞լ էր, թե ոչ[3]։*

Ավերրոյեսի անունը Ղուկաս Խարբերդեցու հայ. այդ թարգմանություններում հանդես է գալիս Աւերիոս *և նման այլայլված ձևերով։*

Ավելացնենք, որ մինչև Ի դ. Սովետական Միության ուրիշ լեզուներով թարգմանություններ չեն եղել Ավերրոյեսի գործերից։

1 *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1659, էջ 34ա։*

2 *«Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացոյն եօթնալոյս վարդապետի», Կ. Պոլիս, 1746, էջ 31։*

1 *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1394, էջ 15բ։*

2 *Տես աստ, էջ 837։*

3 *Հմմտ. աստ, էջ 843, § 9։*

ԱԻԻԿ

ԺԷ դարի հայ տոմարագետ-հեղինակ, որից մեզ հասել է մի փոքրիկ երկ՝ ծռազատկի մասին։

* * *

Ապիկար և եղեռնագործ Աւիկս՝ սակս ծռազատկին, որ զայս քանի բանս գրեցի։ Ով հանդիպողք ուշիմմիտ, ա՛յլ Յունաց ազգին ծռազատիկ չի հանդիպիր. «Ո՛վ երկայնամիտ, բազմաշնորհ, ամենակեցոյց, պարգևատու առատ ողորմութեան, խնդրեմ և հայցեմ ի·քէն, մարդասէր, մի՛ արգելցես զշնորհս ամենազօր տէրութեանդ ի յեղկելի և ի թարմատար տգէտ և ի տկար, եղեռնագործ, կրկնամեռ անպիտանէս։ Յորժամ եղաւ թուական Հայոց՝ թուական ՅԴ. էր Հռոմայեցոցն, որ է[ր] ԺՉ. Թժ. երեկ (sic)...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1971, էջ 118բ—122բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 7104՝ անխոր. (էջ 211ա—216ա), № 2018՝ անխոր. (էջ 431ա—433բ, սկ. «Յորժամ եղաւ թուական հայոց՝ թուական Հռոմայեցոց ՅԴ. էր») *ևն։*

ԱԻՆՈՓՐԻՈՍ

Տես՝ ՈՆՈՓՐԻՈՍ։

ԱԻՇԻՆ ԻՇԽԱՆ

Տես՝ ՕՇԻՆ ԻՇԽԱՆ։

ԱԻՏԱ

Տես՝ ԱԻԴԱ։

ԱԻՏՈՒԼ ԱԶԻԶ

Տես՝ ԱԲԴԼԱԶԻԶ, ԱՄԻՐԱՅ ՏԻԶԲՈՆԻ։

ԱԻՐԱԻՋԻՈՍ [ԱԻՐԵՋԻՈՍ]
(այն է՝ ՊՈՂՈՍ ՈՐՈՍԻՈՍ)

Տես՝ ՕԳՈՍՏԻՆՈՍ ՀԻՊՊՈՆԱՑԻ, «Հարցմունք Օրևզիու և պատասխանիք սրբոյն Օգոստինոսի»։

ԱԻՐԵՂԻԱՆՈՍ ՀՌՈՄԱՅԵՑԻ
(Aurelianus Romanus)

Լատին հեղինակ, ինքնությունն՝ անծանոթ։ Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ» *դավանաբանական ժողովածուում նրա անունով գտնում ենք քաղկեդոնականների դեմ բերված մի վկայություն՝ այսպիսի խորագրով.* «Ի գրոցն Աւրեղիանոսի Հռոմայ հայրապետին որ կանոնաց լրմունք կոչի» *(սկ.* «Արդ յաւուրս առաքելոցն յաւուր չորեքշաբաթու [և ուրբաթու] նախ ասէին՝ Սուրբ Աստուած որ խաչեցար վասն մեր, և ապա սկսանէին ի ժամ պատարագին...»), *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 374ա—374բ։ Հատվածը վերաբերում է երեքսրբյան օրհնաբանությանը։*

Երևում է, որ այս հատվածը մի անվավերական գրվածք է, որի անանուն հորինողն օգտագործել է Աւրեղիանոս Արելատեցի (Aurelianus Arelatensis, *499—551 թթ.) լատին մատենագրի*[1] *անունը։ Վերջինս ունի վանական երկու կանոնախմբեր՝ արանց և կանանց համար*[2]*. այդ կանոնների վերջում տրվում են նաև ծիսական կարգի ցուցմունքներ, սակայն երեքսրբյանի մասին խոսք չկա և, ի հարկե, չէր էլ կարող լինել։*

ԱԻՐԵՆԴԻՈՍ ՎԿԱՅ

Տես՝ ՈՐԵՆԴԻՈՍ ՋՈՐԱԿԱՆ։

ԱԻՐԷՆՔ

Տես՝ ՕՐԷՆՔ։

ԱԻՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Տես՝ ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ։

ԱԻՐՍԻԿԻՆՈՍ ՎԿԱՅ

Տես՝ ՈՒՐՍԻԿԻՆՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ։

---

[1] *Տես՝* „Nouvelle biographie générale... publiée par MM. Firmin Didot frères", t. III, Paris, 1855, p. 754.

[2] *Տես՝* „Lucae Holstenii, Vaticanae basilicae canonici e. bibliothecae praefecti, Codex regularum monasticarum et canonicarum", t. I, Augustae Vindelicorum, 1759, p. 147—151 et 368—374.

ԱԻՔՍԵՆՏ [-ԻՈՍ]

Տես՝ ՕՔՍԵՆՏ [-ԻՈՍ]։

ԱԻՔՍՈՒԶ...

Տես՝ ՕՔՍՈՒԶ...

ԱՓՍՈՆ ՎԿԱՅ

Տես՝ ԱՅԻԹԱԼԱ ՔՈՒՐՄ։

ԱՓՏՈՆԻՈՍ ՎԿԱՅ

Տես՝ ԱԿԻՆԴԻՆՈՍ ԵՒ ԸՆԿ.։ ԱՊՏՈՆՈՄՈՍ։

ԱՓՐԱ կամ ԱՓՐԱՍ*
(Afra)

Բավարացի վկայուհի՝ Ավգուստա (Augusta Vindelicorum) *քաղաքից, որ է՝ Աուգսբուրգ։ Վկայացել է Դիոկլետիանոս կայսրի հալածանքների ժամանակ, 304 թվին։ Հայ մատենագրությունը պահել է նրա վկայաբանությունը։*

* * *

Վկայաբանութիւն սրբոյն Ափրասայ. «Ի քաղաքի միում որում անուն էր Օգոստեա, հրամայէր իշխանն ըմբռնել զքրիստոնեայսն և ածել, զի զոհեսցեն պիղծ դիւացն. և եկեալ սպասաւորքն յափշտակեցին կին մի պոռնիկ ի հրապարակէն...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց», հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 146—148։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից. համտ. № 200՝ «Վկայաբ. սրբոյն Ափրասայ որ էր յառաջագոյն պոռնիկ» *(էջ 511բ—512ա, սկ.* «Ի քաղաքի միում որում անուն էր Ոգոստեա») *և № 205՝* «Վկայութիւն սրբոյն Ափրասայ որ էր յառաջ պոռնիկ» *(էջ 118բ—120բ, սկ.* «Ի քաղաքի միում, որում անուն էր Աւգոստայ»)*։ Վերջինիս նկարագրությանը հետևյալ ծանոթագրությունն է կցել Բ. Սարգիսյանը.*

«Վկայութիւնս ունի զգալի տարբերութիւններ Ա. օրինակէն (ձեռ. № 200), որուն վրայէն եղած է թե՛ հայերէն տպագրութիւնն և թէ՛ գերմաներէնը, թարգմանութեամբ դոկտ. Սեբաստիէն Էյրինկէնի։ Թէպէտև հայերէն երկու խմբագրութիւնքս իսկ համառօտ են, սակայն երկուստեք եղած հոծ տարբերութիւններէն, և յատկապէս անուանձևերէն դատելով կարելի է ըսել որ առաջինն յունարէն բնագրէ յեղեալ է ի հայ, իսկ միւսն՝ ասորերենէ, և կա՛մ լատիներէն նախնական և համառօտ բնագրէ մը. վասն զի այժմու լատիներէն խմբագրութիւններն՝ ասկէց քառապատիկ աւելի ընդարձակ են։ Թեր և դէմ քննադատութեանց և վիճաբանութեանց նիւթ եղած է վկայաբանութիւնս և է տակաւին (օրինակի աղագաւ And. Bigelmair, *Die Afralegende*, Dillingen, 1910.—Prof. B. Sepp, *Ein neuer Text der Afralegende*, 1908.—H. Gussen, *Beiträge zur Hagiologie*, 1909: *Die ältesten Akten über die hl. Afra*, 791—4.—O. Redner, *Zur Afralegende*, in Literarische Beilage zur Augsburger Postzeitung (1909), 9—11, 115—7; 124 f.; 141—3, 147—50)»[1]։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522՝ «Վկայութիւն սրբոյն Ափրասայ, որ յառաջ պոռնիկ էր» *(էջ 367ա—368ա, սկ.* «Ի քաղաքի... Ոգուստա»)*, № 3777՝* «Վկայութիւն... յառաջ պոռնիկ էր» *(էջ 96ա—96բ, սկ.* «Ի քաղաքի... Աւգուստա»)*, № 6196՝* «Վըկայաբանութիւն ... յառաջն պոռնիկ էր» *(էջ 583բ—584բ, սկ.* «Ի քաղաքի... Ոգոստեա»)* են։*

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* P. Boschius, „De S. Afra martyre Augustae Vindelicorum", *Acta Sanctorum*, Augusti t. II. Parisiis, 1867, p. 39—59.—L. de Tillemont, „Mémoires pour servir à l'histoire ecclésiastique des six premiers siècles", t. V, Bruxelles, 1722, p. 116—118.—„Wetzer und Welte's Kirchenlexikon", 2. Aufl., Bd. I, Freiburg i. Br., 1882, S. 299—300.—„Realencyklopädie für protestantische Theologie und Kirche„ (hrsg. von A. Hauck), Bd. I, Leipzig, 1896, S. 233.—*Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 72—74։*

[1] *Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 152։*

Հայ. բնագրի գերմ. թարգմանությունը, որ կատարել է Սեբ. Էվրինգենը և որի մասին խոսում է Բ. Սարգիսյանը՝ վերևում բերված իր ծանոթագրության մեջ, մենք չենք տեսել։ Մեզ հայտնի է գերմ. մի ուրիշ թարգմանություն, որ հրատարակել է H. Gussen-*ը*, „Die ältesten Akten über die hl. Afra“, *Theologie und Glaube*, Bd. I, 1909, S. 791—794.

Աֆրայի վկայաբանության հուն. բնագրեր չկան։ Հմմտ. լատ. վկայաբանությունը՝ „Acta [S. Afrae] ex editione Velseri collata cum pluribus exemplaribus mss. et excusis“, *Acta Sanctorum*, Augusti t. II, p. 55—59. *Տես նաև լատ. այլ ապագր.՝* „Passio S. Afrae martyris, ex compluribus codd. mss. et edit.“, *հետևյալ հրատ. մեջ.* Th. Ruinart, „Acta primorum martyrum sincera et selecta“, Amstelaedami, 1713, p. 455—457.

ԱՓՐԱՀԱՏ [ԱՓՐԱԱՏ]
(Aphrahates)

Գ—Դ դարերի պարսիկ կամ ասորի քրիստոնյա մատենագիր (ասոր. Afrahaṭ, *հուն.* Ἀφραάτης). *նաև* **Փռահատ** *(ասոր.* Frahaṭ, *հուն.* Φραάτης), *հայացած ձևով՝ Հռահատ։ Նրա անունով գտնվել ու հրատարակվել են ասորերեն 22 ճառեր, որոնց մի կարևոր մասը ծանոթ էին արդեն հայկական թարգմանությամբ՝ «Զգօն» կամ «Զգօն գիրք» անունով։ Այս գիրքը, ըստ հայ մատենագրական ավանդության, վերագրվում է Հակոբ Մծբնացուն։ Ընդարձակ տեղեկություններ տես ԶԳՕՆ անվան տակ։*

ԱՓՐԻԿԱՆՈՍ ԱՓՐԻԿԵՑԻ ՎԿԱՅ

Տես՝ ՏԵՐԵՆՏԻՈՍ ԱՓՐԻԿԵՑԻ։

ԱՓՐԻԿԵՑԻ

Տես՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՓՐԻԿԵՑԻ։
ՄԱԿԱՐԻՈՍ ԱՓՐԻԿԵՑԻ։
ՏԵՐԵՆՏԻՈՍ ԱՓՐԻԿԵՑԻ։

ԱՓՐԻԿԷ

Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 23։

ԱՓՐՈՍ ՀԱՅԿԱԶՆ
(Aphrus Armenus)

Ըստ Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությունների, «Արաբացի և եթովպացի լեզուաւ թարգմանած Ս. Հարց հին հաւաքածոյ գրոց մէջ՝ գտուին և բանք Ս. Ափրոս հայ հայրապետի կամ եպիսկոպոսի մը, Ե դարէն առաջ. այլ բուն ժամանակն... յայտնի չէ»[1]*, Արաբալեզու քրիստոնեական գրականության մեջ, ըստ Աբուլ-լ-Բարաքաթի կազմած ցուցակի, երկու ճառեր են հիշատակվում Հայաստանի եպս. Ափրոսի անվամբ*[2]*։*

ԱՓՓԵԼԻԱՆՈՍ ՎԿԱՅՐԱՆ

Տես՝ ԱՊԵԼԻԱՆՈՍ։

ԱՔԻՒՂԱՍ [ԱԿԻՒՂԱՍ]

Տես՝ ԲԵԿՏՈՐ ԵԳԻՊՏԱՑԻ։
ԵՒԳԻՆԷՈՍ ՏՐԱՊԵԶՈՆՏԱՑԻ։

ԱՔՈՒԻՆԱՑԻ

Տես՝ ԹՈՎՄԱՍ ԱԿՈՒԻՆԱՑԻ։

ԱՔՍԵՆՍ ԿԱՄԵՆԱՑԻ

Տես՝ ՕՔՍԵՆՍ ԿԱՄԵՆԱՑԻ։

ԱՔՔԵՐՄԱՆՑԻ (Նիկ.)

Տես՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՔՔԵՐՄԱՆՑԻ։

ԱՔՔԷԼ ՎԿԱՅ

Տես՝ ԱԳԱՊԻՈՍ ԳԱԶԱՑԵՑԻ։

---

1 *Ղ. Ալիշան, «Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ», 1873, էջ 175։*

2 W. Riedel, „Katalog der Christlichen Schriften in arabischer Sprache von Abul-l-Barakat“, *Nachrichten von Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen*, 1902, S. 665.

Բ

ԲԱԲԳԷՆ ՈԹՄՍԵՑԻ

Հայոց կթղ. 490—516 թթ., ծն. Վանանդ գավառի Ոթմուս գյուղում։ Գումարել է Դվինի 506 թ. ժողովը՝ Նեստորականության դեմ։ Մեզ հայտնի են Պարսկաստանի ասորի «ուղղափառներին» (միաբնակներ) ուղղված դավանական երկու նամակներ, որոնք պատմագիտության մեջ հայտնի են նրա անունով։ Առաջին նամակը գրված է 506 թ. ի դիմաց վերոհիշյալ ժողովի՝ «ի Բաբգենայ ի Հայոց եպիսկոպոսապետէ և ի նորին աթոռակցաց»։ Այդ նամակով, պատասխանելով ասորիների դիմումին, հայերը հայտնում են, որ իրենք, վրացիների և աղվանների հետ միասին, միաբան են հույների հետ և մերժում են նեստորականների տեսակետը, թե Հայրն Աստված ունեցել է երկու որդիներ՝ մեկը «Աստուածն Բանն հաւասար Հաւր», իսկ մյուսը՝ «Յիսուս՝ մարդ մահկանացու նման մեր» և թե «արժանի է բաժանել և ասել յայտնապէս՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ» են։ Երկրորդ նամակը, որ գրված է մոտ. 507/508 թվականներին, ժողովական թուղթ չէ, բայց նույնպես Բաբգենի և աթոռակիցների կողմից է՝ ի պատասխան ասորիների մի նոր դիմումի։ Նկատի ունենալով, որ նեստորականներն իրենց գաղափարների հաստատումն են տեսնում Քաղկեդոնի ժողովի որոշումների մեջ, այս նամակում հայերն ասում են. «Փախչիմք ուրացեալ զ՚ի Քաղկեդոնի ատուեին Նեստորի և այլոցն նըմանից»։

* * *

1. Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս. «Սրբասէր և ճշմարտասէր, և սուրբ հաւատոց, և առաւել Քրիստոսի ծառայեցելոց՝ տէրանց մերոց և եղբարց սրբոց հաւատակցաց: Տէր Դանիէլ Քարմայ եպիսկոպոս, և Մաղքայ և Շաւտայ քովրեպիսկոպոսունք...», *տես՝ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 41—47։*

Տես նաև ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, § 109։

Նույն բնագրից մի հատված է հետևյալը.

Երանելոյն Բաբգէնի Հայոց կաթուղիկոսի, որ էր յաւուրս Անաստասայ ուղղափառ թագաւորի՝ ի թղթոյն առաջնոյ, զոր գրեաց ի Պարսս ուղղափառն, հանդերձ աթոռակցօքն ի գաւառէ եպիսկոպոսօք. «Արդ, հարկաւոր է մեզ գրգխումն սրբոյ հաւատոցն, զոր երանելի հարքն մեր, որ ի Նիկիայ ժողովեցանն ՅԺԸ եպիսկոպոսացն ընկալեալ բարեպաշտութեամբ և առանց զայթակղութեանն զսոյն և աւետարանել...», *տես՝ «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 133—135։*

2. Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս. «Եղբարց մերոց սիրելեաց ուղղափառաց և հաւատարմաց, մտերիմ ծառայից Աստուծոյ, եպիսկոպոսաց և վիճակաւորաց, վանականաց և ժողովրդականաց. Բաբգէն Հայոց եպիսկոպոսապետ, Մերշապուհ եպիսկոպոս Տարօն գաւառի ի Հայս...», *տես՝ «Գիրք թղթոց», էջ 48—51։*

Տես նաև ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, § 110։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աքճյան Լ. — «Ազգային եկեղեցական բանաստեղծութեան պատմական զարգացումը», Բազմավէպ, 1915, էջ 161—169:

Ակինյան Ներս. — «Կիւրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910:

Ակինյան Ներս. — «Յունաբան դպրոցը (572—603)», Հանդէս Ամսօրեայ, 1932, էջ 271—292:

Ակինյան Ներս. — «Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւնն Աղուանից», Վիեննա, 1970, էջ 171—176:

Նոյն հատվածը տես նաև Հանդէս Ամսօրեայ-ում, 1953, էջ 581—583:

Ակինյան Ներս., Տեր-Պողոսյան Պ. — «Մատենագրական հետազօտութիւններ. Մի քանի մանր մատենագիրներ», Հանդէս Ամսօրեայ, 1973, էջ 404—419:

Անասյան Հր. — «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 352, § 4:

Գալանոս Կղ. — «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ»: Տես սորին՝ Galanus Cl.

Գեորգ-Մեսրոպ — «Պատմութիւն հայ եկեղեցւոյ», հտ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 190—197:

Ջամինյան Աբր. — «Հայոց եկեղեցու պատմութիւն», Նոր-Նախիջևան, 1910, էջ 57:

Կ. Բ. — «Բաբգենի մասանին», Սիոն, 1946, էջ 193—194:

Հացունի Վարդ. — «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն», Վենետիկ, 1927, էջ 185, 358—367:

Չամչյան Միք. — «Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 218, 223—226, 490—493:

Պողարյան Նոր. — «Հայ գրողներ, Ե—ԺԷ դար», Երուսաղէմ, 1971, էջ 37—38:

Տեր-Մինասյան Երվ. — «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ» Էջմիածին, 1908, էջ 65—72, 78—84:

Տեր-Մինասյան Երվ. — «Բաբգէն կաթողիկոսի ժողովի թուականը և տեղը», Արարատ, 1908, էջ 691—707: — Նույնը տես նաև՝ հեղինակի «Պատմա-բանասիրական հետազոտություններ»-ում, Երևան, 1971, էջ 31—44:

Տեր-Մինասյան Երվ. — «՛Կնիք հաւատոյ՝ և Հայոց եկեղեցու դավանաբանական գիրքը Զ և Է դարերում», Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի, գիրք Ա-Բ, 1921—1922, էջ 262—263 և 270: — Նույնը տես նաև՝ հեղինակի «Պատմա-բանասիրական հետազոտություններ»-ում, Երևան, 1971, էջ 89—90 և 102:

Տեր-Մինասյան Երվ. — «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու ապացույցի շուրջը», Տեղեկագիր (ՍՍՀՄ ԳԱ Հայկ. ֆիլիալ), հաս. գիտ., 1943, № 2, էջ 74—77 (§ 6): — Նույնը տես նաև՝ հեղինակի «Պատմա-բանասիրական հետազոտություններ»-ում, Երևան, 1971, էջ 136—138 (§ 6):

Տեր-Մինասյան Երվ. — «Նեստորականությունը Հայաստանում», էջ 199—210 և 224 ծան. 2, տես հետևյալ հրատ. մեջ. «Գրական-բանասիրական հետախուզումներ» (ՀՍՍՀ ԳԱ Գրակ. Ինստ.), գիրք Ա, Երևան, 1946: — Նույնը տես նաև՝ հեղինակի «Պատմա-բանասիրական հետազոտություններ»-ում, Երևան, 1971, էջ 353—363 և էջ 376 ծան. 74:

Տեր-Միքելյան Արշ. — «Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոց պարագայք», Մոսկվա, 1892, էջ 97—98:

Տեր-Մկրտչյան Կար. — «Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ և Բաբգէն կաթողիկոս», Արարատ, 1898, էջ 431—436: Ստորագր.՝ «Կ. Վ.»:

Տեր-Մկրտչյան Կար. (հրատ.) — «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, Ներածություն՝ էջ LXI—LXIX:

Օրմանեան Մաղ. — *«Ազգապատում», հտ. Ա., Կ. Պոլիս, 1912, §§ 326—347: — Նույնի այլ տպ.՝ հտ. Ա., մասն Ա., Բեյրութ, 1959, §§ 326—347:*

Ֆերհաթյան Պետր. — *«Ցուցակ հայագիտական հրատարակութեանց յԵւրոպա (1896—1910)», Վիեննա, 1919, էջ 243—244, §§ 2312—2313:*

Адонц Н. — «Ампелий, епископ Херсонский. (К критике армянской 'Книги посланий'», *Христианский Восток,* т. I', 1913, стр. 175—186.

Galanus Cl. — „Conciliatio Ecclesiae Armenae cum Romana, ex ipsis Armenorum patrum et doctorum testimoniis", pars I, Romae, 1650, cap. IX. — *Նույնի այլ տպ.* Romae, 1690, cap. IX.

Հրատարակությունը հայերեն-լատիներեն է։ Հայ. վերնագիրն է. «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ ...ի կարգէ Թէատինոսաց Կղեմէս վարդապետէ»։

Galanus Cl. — „Historia armena ecclesiastica et politica", Coloniae, 1686, cap. IX.

Caritte G. — „La Narratio de rebus Armeniae. Édition critique et commentaire" (Corpus scriptorum christianorum orientalium, vol. 132=Subsidia, t. 4), Louvain, 1952:

Serpos (De) Giov. — „Compendio storico di memorie cronologiche concernanti la religione e la morale della nazione armena suddita dell'Impero Ottomano", t. II, Venezia, 1786, p. 19—27 (§ V).

Ter-Minassiantz Erw. — „Die Beziehungen der Armenischen Kirche zu den Syrischen bis zum Ende des 6. Jahrhunderts", Leipzig, 1904, S. 31—40.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. P. Peeters, *Analecta Bollandiana,* t. XXIV, 1905, p. 269—272.

Ter-Minassiantz Erw. — „Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts" (Texte und Untersuchungen, N.F. XI 4), Leipzig, 1904, S. 30—49.

Tournebize Fr. — „Histoire politique et religieuse de l'Arménie", Paris, 1900 (?), p. 88, 92, 320—323, 339, 565—566.

Vernier D. — „Histoire du patriarcat arménien catholique", Paris, 1891, p. 156—160.

ԲԱԲԵԼԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ
(Babylas Alexandrinus)

Անծանոթ հեղինակ, որից մեզ հայտնի է «Յաղագս սրբոյ Կարապետին և Մկրտչին Յովհաննու» *կամ* «Ի գլխատումն Կարապետին» *խորագիրը կրող մի անտիպ ճառ։ Որոշ ձեռագրերում ճառը կրում է* Բարսեղ *(կամ նույնիսկ՝* Բարսեղ Կեսարացի) *հեղինակային անունը, որը հավանաբար* Բաբելաս-Բաբեղաս *անվանաձևի աղավաղումից է առաջացել։ Հեղինակի անունը պատահում է ուղղագրված նաև* Բաբիլաս *և* Բաբիղաս *ձևերով։*

Գ. Զարբհանալյանը նշում է, որ հայտնի է նաև այս ճառի հուն. բնագիրը (Montfaucon, *հտ. Ը, էջ 39)՝ Հովհան Ոսկեբերանի անհարազատ երկերի շարքում։*

* * *

Յաղագս սրբոյ Կարապետին և Մկրտչին Յովաննու, ասացեալ Երանելոյն Բաբիղայ եպիսկոպոսի Աղեքսանդրու. «Որպէս ոք անապատասէր յանտառախիտ տեղւոջ ուրեք ընդ ծառով հովանացեալ, հաւուցն գեղեցկաձայնութեանց հնչմամբ և ջրոյն բարեշաչուն հոսանօքն հեշտացեալ առ ի հանգարտութիւն ձայնիցն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1525, էջ 459ա—461բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3782՝ «Սրբոյն Բաբիղասայ եպս.ի Աղեքսանդրու» *(էջ 186ա—187բ, սկ. նույն), № 6228՝* «Սրբոյն Բաբիղասայ եպս.ի Աղեքսանդրի» *(էջ 28ա—29բ, սկ. նույն) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 218՝ խոր. նույն (էջ 38ա—40ա, սկ. նույն), № 228՝* «Բաբեղասայ եպս.ի ասացեալ» *(էջ 249բ—251բ, սկ.* «Որպէս այր ոք անապատասէր»*), № 232՝* «Ի յիշատակ Յո-

վաննու Մկրտչի, ասացեալ Բարսղի (sic) հայրապետի» (էջ 90ա, թերի, սկ. «Որպէս ոչ այր անապատասէր»). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1549՝ «Սրբոյն Բարսղի արքեպս.ի Կեսարու Կապադովկեցւոյ ասացեալ ի սուրբ Մկրտիչն և ի Կարապետն Յովհաննէս» (էջ 1790, սկ. «Որպէս ոչ անապատասէր»):

ԴԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարբհանալյան Գար. — «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 324—325։

Առաջնորդվելով Հ. Կարենյանցի հրատարակած ցուցակի անորոշ տեղեկություններով, հեղինակը թյուրիմացաբար Բաբելասին վերագրում է մի երկրորդ ճառ՝ իբր թէ խորագրված «Պատմութիւն սուրբ և պատուական գլխոյն Յովհաննու Մկրտչի թէ ուստի՛ բերաւ յԱմասիայ քաղաք»: Այս թյուրիմացությամբ էլ հասնում է այն ենթադրության, թե Ս. Ղազարի ձեռագրում «Պատմութիւն Յովհաննու Մկրտչի և Կարապետի Քրիստոսի, և գիւտ գլխոյն ի Հերովդիայ քաղաքի ի ձեռն միայնակեցաց, և ո՛րպէս բերին յԱմասիայ քաղաք ըստ տեսչութեանն Աստուծոյ» խորագիրը կրող բնագրի հետ նույն պիտի լինի այն։ Հ. Կարենյանցի նշանակած ձեռագիրն (Էջմ. Մատ. № 917) ուրիշ բան չէ, եթե ոչ այժմյան՝ Երևանի Պետ. Մատ. № 1525 ձեռագիրը (էջ 459ա—461բ), որ նկարագրեցինք վերևում։

ԲԱԲԵԼԱՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ*
(Babylas Antiochenus)

Անտիոքի աթոռի պատրիարք, վկա՝ Նումերիանոս կայսրի (283—284 թթ.) օրով։ Ոմանք, հիմնվելով Եվսեբիոս Կեսարացու այն տեղեկության վրա, թե Բաբ. Անտիոքացու նահատակությունը տեղի է ունեցել Դեկիոս կայսրի (249—251 թթ.) օրով (Զ, 39)[1], համարում են, որ վկայաբանություններում հիշատակվող Նումերիանոսը պետք է եղած լինի Անտիոքում գործող դատավորի անունը և ոչ թե օրվա կայսրի. իսկ ուրիշներ ենթադրում են, որ դեպքը տեղի ունեցած լինի Դեկիոսի նախորդ Փիլիպպոս կայսրի օրով։ Հայ մատենագրության մեջ ունենք Բաբ.ի վկայաբանության մի քանի խմբագրություններ և նրան նվիրված ճառեր։ Ձեռագիր աղբյուրներում անունը պատահում է Բաբելաս, Բաբեղաս, Բաբիլաս, Բաբիղաս, Բաբիւղաս ձևերով։

* * *

Ա.—ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն Բաբելայ եպիսկոպոսի և երից մանկանցն. «Եկեալ ի քաղաքն Անտիոքացւոց Նոմերիանոս թագաւորն՝ և անդ զոհս պղծոց դիւացն մատուցանէր. կամեցաւ ի տուն Աստուծոյ մտանել: Իսկ երիցս երանելին Բաբելաս...», տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 149—157։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 200=ճառընտիր Ա (էջ 101բ—103բ) ձեռագրից։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6196 (էջ 129ա, սկ. նույն), № 1522 (էջ 67ա—71բ, սկ. «Ի քաղաքին Անտիոքացւոց եկեալ Նումերիանոս թագաւոր»), ևն։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1039՝ «Վկայաբանութիւն Բաբելայ եպիսկոպոսի եւ երից մանկանցն» (էջ 17ա). Անկյուրիայի ձեռ. № 1՝ «Վկայաբանութիւն սրբոյն Բաբելայ եպիսկոպոսին և երից մանկանցն» (էջ 10)։

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայաբանութիւն Բաբեղայ Անտիոքայ հայրապետին և երից աշակերտաց նորին. «Ի ժամանակս Նումերիանոսի ամբարիշտ արքային՝ էր սուրբ հայրապետն Անտիոքայ Բաբեղաս: Եւ յաւուր միում բռնաւոր արքայն կամեցաւ մտանել յեկեղեցին՝ նախատինս առնել քրիստոնէիցն...» (հրատ. G. Bayan),

---

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. *Acta Sanctorum*, Septembris t. II, Parisiis, 1862, p. 2.

[1] «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 490։

Patrologia Orientalis, Paris, t. V, 1910, p. 489—490.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre de Babylas, patriarche d'Antioche, et de ses trois disciples" անունով անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 27բ—28ա)։

Նույն բնագիրը խմբագրական որոշ փոփոխություններով մտել է նաև Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքի մեջ. տես՝

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն Բաբելայ սուրբ հայրապետին և երեք աշակերտացն. «Յամս Նումերիանոսի անօրէն արքային էր սուրբն Բաբելաս հայրապետ յԱնտիոք քաղաքի...», տես՝ «Ծառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 62։

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Յամս Նումերիանոսի անօրէն արքային...», տես՝ «Յայսմաւուր», 1706 (—1708), էջ 71—72։

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Յամս Նումերիանոսի անօրէն արքային...», տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 51։

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Վկայութիւն սրբոյն Բաբելայ հայրապետին և երից աշակերտաց նորին. «Յամս Նումերիանոսի անօրէն արքային՝ սուրբն Բաբելաս էր հայրապետ յԱնտիոք քաղաքի...», տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, մասն Բ, էջ 113—114։

Այլ տպ.— Վկայութիւն են. «Յամս Նումերիանոսի...» (հրատ. G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 490—493.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre de saint Babylas, le patriarche d'Antioche, et de ses trois disciples" անունով անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։

5 (Համառոտ Դ խմբագր., անանուն).

Բաբեղայ հայրապետին և վկայիցն Ոսկէանոսի, Թէոդորոսի, Ամիանոսի և Յուլիանոսի. «էր սուրբն Բաբեղաս ի ժամանակ[ս] Նումերիանոսի արքայի, որ կամեցաւ բռնութեամբ մտանել յեկեղեցին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 23բ—24ա։

⧆ Վարքի հուն. բնագիրը („Μαρτύριον τοῦ ἁγίου καὶ ἐνδόξου ἱερομάρτυρος Βαβυλᾶ ἀρχιεπισκόπου Ἀντιοχείας, καὶ νηπίων τριῶν", հրատ.՝ Α. Παπαδόπουλος-Κεραμεύς), В. В. Латышев-ի կատարած ռուս. թարգմանության հետ միասին, տես ի *Православный Палестинский Сборник*, т. XIX, вып. III, 1907, стр. 75—96. Սիմեոն Մետափրաստեսի խմբագրությունը („Ἄθλησις τοῦ ἁγίου ἱερομάρτυρος Βαβυλᾶ ἀρχιεπισκόπου Ἀντιοχείας"), լատ. թարգմանության հետ միասին, տես՝ J. P. Migne-ի մատ. „Patrologiae cursus completus", ser. gr., t. CXIV, Parisiis, 1864, p. 967—981.

Բ.— ՃԱՌԵՐ

1. Տես՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ, «Գիրք յերանելին Բաբելաս և ընդդէմ Յուլիանոսի և Հելլենացւոցն»։

2. Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ, «Յաղագս սրբոյն Բաբելայ վկային»։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ.—«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ե, Վենետիկ, 1813, էջ 26—52։

ԲԱԲԵՂԱՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ*
(Babylas Nicomediensis)

Վկա՝ հռոմեական կայսրեր Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի (286—305 թթ.) օրով, Նիկոմեդիայում։ Իրեն վկայակից են եղել իր 84 աշակերտները։ Հայոց ճառընտիրները նրանց վկայաբանությունը պահպանել են ընդարձակ խմբագրությամբ, որից և առաջացել են Հայսմավուրքներում եղած համառոտ խմբագրությունները։ Անունը ձեռա-

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. *Acta Sanctorum*, Septembris t. II, Parisiis, 1862, p. 2.

գրերում պատահում է այն նույն տարբերակներով, որ նշեցինք ԲԱԲԵԼԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ և ԲԱԲԵԼԱՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ հոդվածներում։

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն մեծին Բաբելայ և ութսուն և չորից աշակերտացն. «Մախսիմիանոս թագաւոր մտեալ ի քաղաքն Նիկոմիդեայ՝ զոհեաց Ապողոնի. և իբրև կատարեաց զգործ պղծութեանն՝ ել արտաքս ի տաճարէ կռոցն...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր ի ճառընտրաց», հտ. Ա., Վենետիկ, 1874, էջ 158—166։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից, բայց հայտնի չէ, թե ո՛ր օրինակից. հմմտ. № 201=ճառընտիր Բ՝ «Վկայութիւն սրբոցն որ կատարեցան ի Նիկոմիդացւոց քաղաքին՝ մեծին Բաբելայ և որոց ընդ նմա ՁԴ աշակերտացն որք կատարեցան ի Քս.» *(էջ 242ա—245բ) և № 200= ճառընտիր Ա՝* «Վկայաբանութիւն սրբոյն Բաբեղայ (ծերոյն) և որք ընդ նմա կատարեցան վկայք ի Նիկոմիդացւոց քաղաքին Ձ. և Դ.ից մանկանցն» *(էջ 103բ—105բ)։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6196՝ «Վկայաբանութիւն սրբոյն Բաբեղայ և որք ընդ նմա կատարեցան վկայք ի Նիկոմեդացւոց քաղաքին ութսուն և չորք մանկանցն» *(էջ 132ա—134բ, սկ. նույն), № 3787՝* «Վկայաբանութիւն սրբոյ Բաբելայ և ՁԴ մանկանցն որք ընդ նմա կատարեցան վկայք ի Նիկոմիդացւոց քաղաքին» *(էջ 471բ—474բ, սկ. նույն). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1039՝* «Վկայաբանութիւն... և չորից մանկանցն» *(էջ 20ա, սկ. նույն)։*

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Յայսմ աւուր կատարեցաւ և միւս Բաբիլաս վարդապետ ծերունի սրով ի Նիկոմիդեայ քաղաքն, և ութսուն և չորս մանկունք աշակերտք նորա ընդ նմա. «Սուրբն ծերունին և վկայն Բաբելաս քահանայ էր ի քաղաքին Նիկոմիդա երեց եկեղեցւոյն Աստուծոյ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 114—115։*

Այլ տպ.— Յայսմ աւուր կատարեցաւ եւ միւս Բաբիլաս վարդապետ ծերունի ի Նիկոմիդեայ քաղաքն եւ ութսուն եւ չորս մանկունք աշակերտք նորա ընդ նմա. «Սուրբ ծերունին եւ վկայն Բաբելաս քահանայ էր ի քաղաքին Նիկոմիդիա, երեց եկեղեցւոյն Աստուծոյ եւ ամենեցուն քարոզէր զաւետարանն...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 493—495.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour mourut également par l'épée un autre Babylas, maître d'école fort âgé, dans la ville de Nicomédie, avec ses quatre-vingt-quatre élèves tous enfants" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

3) Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբոյն Բաբելայ դպրին և ՁԴ աշակերտացն նորին. «Սա դպիր էր Քրիստոսի հաւատովն և ուսուցանէր մանկանց քրիստոնէից գիր և սաղմոս...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 842։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Սա դպիր էր Քրիստոսի հաւատովն...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 937—938։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Սա դպիր էր Քրիստոսի հաւատովն...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուր», Կ. Պոլիս, 1730, էջ 640։*

⊠ *Բաբ. Նիկոմեդացու վկայաբանության հուն. անտիպ բնագրերի մասին տես* Fr. Halkin, „Bibliotheca hagiographica graeca", t. III, Bruxellis, 1957, p. 13.

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ.,— *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ը, Վենետիկ, 1813, էջ 109—123։*

Հեղինակը ուսումնասիրում է Բաբ. Նիկոմեդացու վկայաբանությունը և հայկ. ճառընտիրների հիման վրա տալիս նրա վկայա-

կիցների անվանացանկը. Թէոփիլոս, Պետրոս, Փիլիպպոս, Սերապիոն, Սևերիոս, Զոյիանոս, Աղեքսանդրոս, Ագաթոն, Մովիտոս, Սարգիպնէոս, Տիրանէոս, Արտեմիոս, Մաքսիմոս, Ամնոնիոս, Սերապիոս, Նէոփիտոս, Տորիոն, Պիկիդիանոս, Կինարիոս, Բիտոն, Դոնատոս, Բիքտորիոս, Դուղկիտիոս, Դորոթէոս, Եւտիքիոս, Փիլիպպոս, Զենոբիոս, Եւգրաբիոս, Անտոնիոս, Քրիստարիոս, Ղիբիոս, Անտիգոնոս, Դեներդիոս, Սքողաստիգոս, Թէոդոս, Փղորենդիոս, Դիկերիոս, Կեղսիոս, Պատրիկիոս, Ստեփաննոս, Բամբիանոս, Ուղղադենդինոս, Թէոդորոս, Եւտիքոս, Եւփսեբիոս, Եւագրիոս, Սևերիանոս, Ղևոնդիոս, Մարկիանոս, Փոտիոս, Փիդիկիրոս, Դիոմիտիոս, Նէոփիտոս, Իպատիոս, Ակակիոս, Զոտիկոս, Փիմինոս, Պանքարիոս, Մարկոս, Արքեղիոս, Իրինոս, Հուպեղիոս, Ասկանիոս, Եղևթերիոս, Այետիոս, Ամովսիոս, Դոնադոս, Անտիգոնոս, Իպատիոն, Պերմոն, Կիւրիա, Սոփի, Եւսեբիա, Թէոդոտի, Փաւստոսի, Մաղիկիս, Թէոդուղէ, Թէոփիլուսի, Պատրիկոսի, Թէոդորա, Դիոնիսուսի, Սիմբղիա, Տրիփենա, Դոմնա։

ԲԱԲԵԼՈՆԻ ՄԱՆԿՈՒՆՔ

Տես՝ ԱՆԱՆԻԱՆՔ և ԴԱՆԻԵԼ ՄԱՐԳԱՐԷ։

ԲԱԲԵՐԴԱՑԻ

Տես՝ ԳՐԻԳՈՐ ԲԱԲԵՐԴԱՑԻ։
ՂԱԶԱՐ ԲԱԲԵՐԴԱՑԻ։

ԲԱԳԱՐԱՆԵՑԻ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱԳԱՐԱՆԵՑԻ։

ԲԱԳԱՐԱՏ ԲԺԻՇԿ

Տես՝ ՀԻՊՊՈԿՐԱՏԷՍ։

ԲԱԳԱՐԱՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Թարգմանիչ, ապրած մոտ. Ժ դարում։ Տարոնի իշխան Գրիգորիկ Մամիկոնյանի որդին։ Մի ժամանակ ապրել է Կ. Պոլսում, ուր արժանացել է պատրիկ տիտղոսին, ապա նշանակվել Տարոնի սպարապետ։ Հունարենից թարգմանել է Հովհաննես Դամասկացու «Ներածութիւն իմաստասիրութեան» *աշխատության առաջին մասը, որը ձեռագրերում պատահում է* «Յաղագս գոյի, էութեան», «Յաղագս գոյի, էութեան և պատահման», «Յաղագս էութեան և պատահման» *խորագրերով։ Տես նաև՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ։*

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ներս.—*«Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերէնէ», Վիեննա, 1951, էջ 69—81։ Նույն հատվածը տես նաև՝* Հանդէս Ամսօրեայ, *1947, էջ 200—208։*

ԲԱԳԱՐԱՏ ՊԱՏԱՆԻ

Հայազգի վկա 362 թ.։ Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒԼՆԵՑԻ։

ԲԱԳԱՐԱՏ ՏԱՒՐՈՄԵՆԱՑԻ [ՏՈՐՈՄԵՆԱՑԻ]*
(Pancratius Taurומeniensis)

Վկա մ. թ. Ա դարում։ Համարվում է Պետրոս առաքյալի աշակերտը և նրանից եպս. ձեռնադրված՝ Սիկիլիայի Տավրոմենիոն (ըստ հայ. աղբյուրների՝ Տորոմենա) քաղաքի, ուր և նահատակվել է։ Հայ մատենագրության մեջ ունենք նրա վկայաբանության մի քանի խմբագրություններ։ Անունը ձեռագրերում պատահում է, բացի Բագարատ-*ից, նաև* Բագարատիոս *և* Բագրատ *ձևերով։*

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսի. «Սուրբն Բագարատ աշակերտ էր սրբոց առաքելոցն և ձեռնադրեցաւ ի սրբոյն Պետրոսէ՝ եպիսկոպոս, և առաքեաց յարևմուտս ի Սիկիլի կղզին ի քա-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Պատմական ու մատենագրական տեղեկություններ տես՝* God. Henschenius, „De S. Pancratio episcopo, martyre Tauromenii in Sicilia", *Acta Sanctorum*, Aprilis t. I, Parisiis, 1865, p. 237—243.

ղաքն Տոռոմենի...», տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 167—180:

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից:

Վերջում ունի առանձին մաս՝ «Վասն կատարման սրբոյն Բագարատայ» խորագրով (էջ 179, սկ. «Էր ի քաղաքին այր մի մեծատուն»):

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայութիւն սուրբ հայրապետին Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսի և լուսաւորչի՝ աշակերտի Պետրոսի. «Սուրբն Բագարատ աշակերտ էր սուրբ առաքելոյն Պետրոսի և ձեռնադրեցաւ ի նմին առաքելոյ եպիսկոպոս...», տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 17—23:

Այլ տպ.— Վկայութիւն Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին. «Սուրբն Բագարատ աշակերտ էր...» (հրատ. G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1928, p. 706—725.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Martyre de Pancrace. évêque de Tauromène“ տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 382ա—388ա):

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Պատմութիւն սրբոյն Բագարատայ եպիսկոպոսին. «Սուրբն Բագարատ աշակերտ էր սուրբ առաքելոցն և հետևող նոցին վարուց...», տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 860:

Այլ տպ.— Պատմութիւն նն. «Սուրբն Բագարատ աշակերտ էր...», տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 958—963:

Այլ տպ.— Պատմութիւն նն. «Սուրբն Բագարատ աշակերտ էր...», տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 653—657:

4 (Համառոտ Դ խմբագր., անանուն).

Բագարատայ եպիսկոպոսին. «Սա ձեռնադրեցաւ ի Պետրոսէ առաքելոյ եպիսկոպոս, առաքեցաւ յարևմուտս ի քաղաքն Տոռոմենոյ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 236ա—237ա:

⊠ Ընդարձակ և համառոտ խմբագրությունների պատկանող օրինակներ տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 992 (էջ 121ա—125բ), № 1520 (էջ 130ա—135բ), № 1522 (էջ 74բ—81ա), № 1791 (էջ 32բ—52բ), № 3477 (էջ 91բ—105ա), № 4822 (էջ 20բ—25բ), № 6196 (էջ 137ա—143բ) նն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 200 (էջ 108ա—112ա), № 201 (էջ 294ա—301ա), № 204 (էջ 280ա—292ա), № 223 (էջ 342ա—347ա), № 315 (էջ 96ա—108ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224 (էջ 15ա—19ա) նն. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 333 (էջ 506բ—512ա). Տյուբինգենի KUB Ma XIII 38 (fol. 52^{v}—59^{r}).

Համարյա բոլոր ձեռագրերում, ներառյալ Հայսմավուրքները, բնագիրն ունի «Վասն կատարման սրբոյն Բագարատայ» հավելվածը:

Ձեռագրերում բնագրի խոր. պատահում է նաև՝ «Պատմութիւն Բագարատայ Տոռոմենոյ եպս.ին ի Սիկիլի (կամ ի Սիկիլիդւոյ) կղզւոջն», «Պատմութիւն երանեալ և սքանչելագործ եպս.ին Բագարատայ Տոռոմենոյ քաղաքին»: Իսկ սկ. պատահում է նաև՝ «Սուրբն Բագարատ աշակերտ էր սրբոց առաքելոցն, ձեռնադրեաց զնա», «Սուրբն Բագարատ աշակերտ էր առաքելոյն Պետրոսի և հետևող նոցին հետոցն», «Սուրբն Բագարատ էր աշակերտ սրբոց առաքելոցն», «Իսկ սուրբն Բագարատ էր աշակերտ սրբոց առաքելոցն», «Երանելին Բագարատ էր աշակերտ»:

Բագ.ի վարքի և վկայաբանության հուն. սկզբնագիրը, որի հեղինակությունը վերագրվում է ոմն Եվագրիոս եպս.ի, հայտնի է երկու խմբագրություններով, որոնք անտիպ են. դրանց մասին տես F. Halkin, „Bibliotheca hagiographica graeca“, t. II, Bruxellis, 1957, p. 165. Հուն. մի այլ տարբե-

բակի, որն անանուն է („Μαρτύριον τοῦ ἁγίου ἱερομάρτυρος Παγκρατίου ἐπισκόπου Ταυρομενίου"), *տես՝* Bas. Latyšev, „*Menologii* anonymi byzantini saeculi X quae supersunt", fasc. II, Petropoli, 1912. p. 156—158. *Հմմտ. նաև Բյուզանդական Հայսմավուրքը.* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 807—809.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ.—*«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Թ, Վենետիկ, 1813, էջ 130—143։*

ԲԱԳՈՍ [որ և ԲԱԿՔՈՍ] ՎԿԱՅ

Տես՝ ՍԱՐԳԻՍ ՀՌՈՄԱՅԵՑԻ ՎԿԱՅ։

ԲԱԳՐԱՏ ԲԺԻՇԿ

Տես՝ ՀԻՊՊՈԿՐԱՏԷՍ։

ԲԱԳՐԱՏ ՎԿԱՅ

Տես՝ ԲԱԳԱՐԱՏ ՏԱՒՐՈՄԵՆԱՑԻ։

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԱՐԱՍ ԹԱԳԱՒՈՐ

Պատմական թատերգություն, որը 1799 թ. ներկայացվել է Ս. Ղազարի վանքում (Վենետիկ)՝ աշակերտության ուժերով։ Լրիվ խորագիրն է՝ «Բագրատունեաց Արաս թագաւորի առնլութիւնն, և նորակառոյց եկեղեցին»: *Հեղինակն անհայտ է։ Հմմտ. Բ. Սարգիսյան, «Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան», Վենետիկ, 1905, էջ 195։*

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Տես՝ ՄՈՒՇԵՂ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ։
ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ։
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՎՐԿԱՆԱՅ ՄԱՐԶՊԱՆ։

ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ

Տես՝ ԴԱՒԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ։
ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ։

ԲԱԳԱԼ [ԲԱՏԱԼ]

Երգիչ, ապրած՝ հավանաբար ԺԸ դարում։ Մեզ հայտնի է միայն մեկ տաղով։

* * *

Տաղ վասն գրօսանաց լերանց. «Բղխեալ աղբիւր յորդորական,|Տեսեալ ծաղկանց ուրախանան,|Անա եկեալ մայրըս գարնան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4296, էջ 32ա—32բ։*

Սկզբնատառերը՝ «Բատալ»:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 5292 (էջ 14բ—15ա)։

ԲԱԴԻՄՈՍ [ԲԱՍԻՄՈՍ] ՎԿԱՅ*
(Badimus Persa)

Պարսիկ վկա՝ Շապուհ Բ-ի հալածանքների ժամանակ, Բիթլապատում։ Հայոց Հայսմավուրքներում ունենք նրա վկայաբանությունը։

* * *

1 (Կիրակոս Արևելցու խմբագր.).

Վկ[այութիւն] սուրբ Բարսիմոսի (sic). «Այս երանելի վկայս Քրիստոսի Բարսիմոս կրաւնաւոր էր և հայր վանաց ի յերկիրն Պարսից ի քաղաքն Բիթլապատ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433, էջ 282բ—283ա։*

2 (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Բասիմոսի. «Սա աբեղայ էր և հայր վանաց յերկիրն Պարսից ի Բիդլապատ քաղաքին...», *տես՝* «Ճառ սրբոց վկայիցն...» *(«Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 645—646։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* God. Henschenius, „De S. Badimo, seu Bademo, archimandrita, martyre in Perside", *Acta Sanctorum*, Aprilis t. I, Parisiis, 1866, p. 821—823. *Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 75—76։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Սա աբեղայ էր...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 711։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Սա աբեղայ էր...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուր», Կ. Պոլիս, 1730, էջ 492—493։*

3 (Անանուն խմբագր.).

Բասիմոսի Պարսկի. «Սա կրօնաւոր էր և հայր վանաց և մեծազգի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 170բ—171ա։*

☒ *Վկայաբանության ասոր. բնագիրը տես՝* S. E. Assemani, „Acta sanctorum martyrum orientalium et occidentalium“, pars I, Romae, 1748, p. 165--167. *Նաև՝* P. Bedjan, „Acta martyrum et sanctorum“, t. II, Parisiis, 1891, p. 347--351. — *Իսկ հուն. բնագիրը* („Μαρτύριον Βαδήμου ἀρχιμανδρίτου“, *ըստ Վատիկանյան ձեռագրի) տես՝* *Acta Sanctorum*, Aprilis t. I, p. LXXIII *(հուն. բնագրերի բաժնում)։ Նույնը վերահրատարակված տես՝* H. Delehaye, „Les versions grecques des actes des martyrs persans sous Sapor II“, *Patrologia Orientalis*, t. II, Paris, 1905, p. 473—477.

ԲԱԳՈՒԿ (Յակ.)

Տես՝ ՅԱԿՈԲ ԲԱԹՈՒԿՆԵՑ։

ԲԱԳՐԱՆ

Եթովպական գրականության մեջ հայտնի է Հայաստանցի Սիմոնի որդի Բագրանի (Վարդան?) նամակները պարունակող մի ձեռագիր, որի մասին տես՝ „Catalogue raisonné des manuscrits éthiopiens appartenant à Antoine d'Abbadie“, Paris, 1859, p. 90 (Ms. № 77).

ԲԱՁԵՆ

Տես՝ ԹԵՈԴՈՐՈՍ ԲԱՁԵՆ։

ԲԱԶՄԱՎԵՊ (Աղ.)

Տես՝ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԲԱԶՄԱՎԵՊ։

ԲԱԹՈՒԷԼ ԵՒ ԸՆԿ.*

(Bathuses, Verikas et socii)

Գոթացի վկաներ, թվով 28, որոնք Դ դարի 70-ական թթ. հրակեզ են արվել գոթերի թագավոր Բինգուրիքոսի (Վինգուրիքոս) կողմից։ Հայոց Հայսմավուրքներից միայն Տեր-Իսրայելի խմբագրությունն է, որ ունի նրանց վկայաբանությունը։ Ըստ գրչական տարբերակների՝ վկաների անուններն են. Բաթուէլ (Բաթոյիլ, Բաթոյի), Վիրկոս (Հերկոս), Արպիլան (Արպիլաս), Աբիպաս, Կոնատոս, Ագէաս, Ովիաս, Իգաթրաս, Իսկոյիս, Սիլաս (Լիսաս), Սիգիսաս, Սուիրիլոս, Սուինալաս, Թերթաս, Փիլիգաս (Փիլիդաս), Աննա, Ադաս, Վարկա, Անեմայի, Մայիկոյ, Մամիկոյ, Մովիկիոյ (Մովիկոյ), *և ուրիշներ, որոնց անունները չեն հիշատակվում։*

* * *

Վկայութիւն սրբոց վկայիցն Քրիստոսի Բաթուէլի և Վիրկոսի ընկերացն, և քսան և ութ ընկերացն, և սուրբ Փօրկանն. «Բինճուրիկոս կռապաշտ արքայն Գօթացւոց գնաց զինուորօք ի մայրի և հատին փայտ յոյժ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 121։*

Այլ տպ.— Նահատակութիւն սուրբ վկայիցն, որ ի Գաւթացւոց կատարեցան. «Բինճուրիկոս կռապաշտ արքայն...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1927, p. 169—170.

Բնագրի ֆրանս. թարգմանությունը՝ „Martyre des saints martyrs qui furent exécutés par les Goths“ *անունով անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433* «Նահատակութիւն սուրբ վկայիցն որ ի Գօթացւոց կատարեցան» *(էջ 260ա—260բ)։*

☒ *Վկայաբանության հուն. բնագիրը* („'Ἄθλησις τῶν ἁγίων μαρτύρων τῶν ἐν Γοτθίᾳ

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 114։*

μαρτυρησάντων") տես ի „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 559—560.

ԲԱԹՈՒԿԵՆՑ

Տես՝ ՅԱԿՈԲ ԲԱԹՈՒԿԵՆՑ։

ԲԱԺՆԱԳԻՐ

Տես՝ ՀՄԱՅԻԼՆԵՐ։

ԲԱԼԵՓԱՍՈՍ

Տես՝ ՊԱԼԵՓԱՏՈՍ։

ԲԱԼԻ (Շամչի)

Տես՝ ՇԱՄՉԻ ԲԱԼԻ։

ԲԱԼԻ [ՊԱԼԻ] ԹՈԽԱԹՑԻ

ԺԷ դ. տաղերգու։ Ունի մի անտիպ ներբող՝ նվիրված Մովսես վրդ. Տաթևացուն (հետագայում էջմիածնի կաթողիկոս, 1629—1632). տես Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 154՝ «Ականջ դրէք և լըսեցէք|Բանս որ ասեմ վարդապետին|Այս գովասանքս որ ասացաւ|Մեր Տէր Մովսէս վարդապետին» *(էջ 249—250, սկ.* «Գըլուխն էր դըրեր ոսկէ թագ.|Մատուցանէր սուրբ պատարագ»)*։ Բաղկացած է 8 քառատողերից, որոնցից վերջինը՝ «Սէֆիլ Պալի և Թօխաթցի,|Այս մէկ քանի բանս ասացի, Ով ընկայ ըզմեղքըս լացի.|Մեր Տէր Մովսէս վարդապետ[ի]ն»)։*

ԲԱԼԻ [ՊԱԼԻ] ԿԱՐՆԵՑԻ

Հայոց նոր վկաներից, Կարինի Ջինիզ գյուղացի։ Նահատակվել է մոտ 1780—86 թթ. Կարինում։ Նրա նահատակության պատմությունը գտնվում է Սահակ Մսրը Կարնեցու վկայաբանության մեջ։ Տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (գիտ. հրատ.), Վաղարշապատ, 1903, էջ 573—574 և 603—604։ Տես նաև նույնի ժողովրդական հրատարակությունը, Վաղարշապատ, 1902, հտ. Բ, էջ 222 և 251։ Հմմտ. նաև Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Գ, Երուսաղեմ, 1927, § 2480։

ԲԱԼԻ ՀԱԼԵՊՑԻ

Հայոց նոր վկաներից։ Նահատակվել է Հալեպում 1696 թ. հուլ. 16-ին։ Նրա նահատակության մասին կան միսիոնարական փաստաթղթեր. տես՝ Fr. Tournebize, „Le catholicisme à Alep au XVIIe siècle (1625—1703)", *Etudes* (revue fondée en 1856 par des PP. de la Compagnie de Jésus), t. 134, № du 5 Février 1913. A. Rabbath, „Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVI—XIX siècles)", t. II, Paris, p. 3, 24—26. *Արտ. Սյուրմեյան, «Պատմութիւն Հալէպի հայոց», հտ. Գ, Փարիզ, 1950, էջ 535։*

ԲԱԼԻՆԱՍ ԽՄԱՍՏԱՍԷՐ

Մեզ անծանոթ բժիշկ, որի գործերից հատվածներ են գտնվում հայերեն բժշկարաններում։ Տես՝ Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Բ, էջ 288։ Մ. Քեշիշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», Վիեննա, 1964, էջ 571։

ԲԱԼՈՒԵՑԻ

Տես՝ ԳՐԻԳՈՐ ԲԱԼՈՒԵՑԻ։
ԴԱՒԻԹ ԲԱԼՈՒԵՑԻ։
ՍԱՐԳԻՍ ԲԱԼՈՒԵՑԻ։

ԲԱԼՍԱՄ (Գասպար)

(Gaspar [Kasper] Balsam)

Հայագետ հեղինակ Լեհաստանում։ Ծն. 1716 թ., մեռ. 1759 թ.։ Հիսուսյան ընկերության անդամ։ Եղել է իմաստասիրության և կանոնական իրավունքի դասախոս։ Գրել է լատիներեն և լեհերեն լեզուներով։ Հեղինակ է հատորավոր քարոզների, որոնք աչքի են ընկնում ոճի հռետորականությամբ։

* * *

1. Oratio in Isaiae XLVIII. anno 1748 Cracoviae, habita et impressa.

2. Kazanie pobudzające do modlitwy na uproszenie szczęśliwego powodzenia sejmowi walnemu w r. 1754 d. 30 Września poczynającemy się w Warszawie, w kościele katedr. krakowskim podczas solennej wotywy przedsejmowej miane przez jednego kapłana Soc. J. i za pozwoleniem starszych, tegoż roku do druku podane. W Krakowie, w drukarni JO. Xięcia biskupa krak.

3. Kazanie o troiakiey iedności do publicznych obrad potrzebney, pobudzaiące ku ziednaniu przez modlitwy seymowi walnemy ná rok páński 1758. przypadáiącemu w Warszawie, teyże potrzebney iedności podczas wotywy przedsejmowey, w Krakowie miane przez X. Kaspra Balsama Societatis Jesu, kościolá SS. Piotra y Paula kaznodzieie, tegoż roku zá pasterskim rozkazem do druku podane. W Krakowie, w drukarni JO. Xięcia JMci biskupa krakowskiego wydrukowane r. 1758.

4. Kazania ná niedzie le cáłego roku X. Gaspra Balsama Soc: Jesu ná dwá tomy podźielone. W Poznaniu, w drukarni J. K. M. clar. Collegii Soc. Jesu. Roku p. 1761.

Tom I. str. 6 + 507.
Tom II. kart. 2 + str. 564.

5. Kazania na święta całego roku X. Kaspra Balsama Soc: Jesu po śmierci jego za szczegulnym J. K. Mci przywileiem i pozwoleniem zwierzchności wydane. W Poznaniu, w drukarni J. K. M. i Rplt. Societatis Jesu.

Tomik I. 1762. str. 2 + 447 + 4.
Tomik II. 1764. str. 753 + 9.

6. Kazania przygodne W. X. Kaspra Balsama Soc. Jesu o cnotach: wiary, nadziei, miłości y obowiazkach z nich wynikaiacych. Za pozwoleniem starszych do druku podane. W Poznaniu, w drukarni J. K. M. y Rplt. Soc. Jezu.

Tom I. Kazania o cnotách, wiáry, nadziei, miłości, y obowiazkach z nich wynikáiących. 1764. Kart 3 + str. 304.

Tom II. Kazania o występkach ludzi młodych y obowiazkach. 1765. str. 351 + 1.

Tom III. 1767. str. 400.

Tom IV. 1767. str. 551 + 1. (O czwartej cnocie kardynalnej).

Tom V. 1768. str. 534 + 2.

Tom VI. 1769. str. 2 + 761 + 3.

Tom VII. 1772. str. 2 + 646 + 2.

Այլ տպ. Kazania przygodne...Tom I—VII. Poznań, w drukarni J. K. M. i Rzpltej 1765—1778. str. 785, 402, 400, 555, 534, 761 i 649.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Barącz Sad. — „Żywoty sławnych Ormian w Polsce“, Lwów, 1856, str. 59—64.

Estreicher K. — „Bibliografia polska“. t. XII, Kraków, 1891. str. 347—348.

Petrowicz Gr. — „I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVIII“ (Estratto da Mélanges Eugène Tisserant, vol. III=Studi e Testi, 233), Città del Vaticano, 1964, p. 167—168.

ԲԱԽՈՒՄՆԵՑԻ

Տե՛ս ՍԻՄԷՈՆ ՈՇՏՈՒՆԻ ԲԱԽՈՒՄՆԵՑԻ։

ԲԱԿՈՒՐԵԱՆ

Տե՛ս ԳՐԻԳՈՐ ԲԱԿՈՒՐԵԱՆ։

ԲԱԿՔՈՍ ԿՐՏՍԵՐ ԵՐԵՂԱՑ*
(Bacchus Iunior Monachus)

Վկա Երուսաղեմում՝ Ը դ. վերջերին։ Հայոց Հայսմավուրքները պահել են նրա վկա-

** ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 74—75։*

յարանության համառոտությունը։ Անունը **ձեռագրերում** *պատահում է նաև* **Բագոս** *և* **Բաքոս** *ձևերով։*

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Նահատակութիւն սրբոյն Բաքոսի. «Սուրբ մարտիրոսն Քրիստոսի Բագոս նախ իսմայէլացի էր ոչ ազգաւ, այլ հաւատով...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 297—298։*

Այլ տպ.— Վկայութիւն սրբոյն Բաքոսի. «Սուրբ մարտիրոսն Քրիստոսի Բաքոս...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XVIII, 1924, p. 69—71.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «En ce jour martyre de saint Bacchus“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 172բ—173ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 307 (էջ 77բ)։*

2 (Գրիգոր Շերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Բագոսի աբեղային. «Սա էր յԵրուսաղէմ քաղաքին, որդի հօր տանկի և մօր քրիստոնէի...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 338—339։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Սա էր յԵրուսաղէմ քաղաքին...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 363—364։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն նն. «Սա էր յԵրուսաղէմ քաղաքին...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 258։*

⊠ *Հմմտ. վկայաբանության հուն. ընդարձակ բնագիրը՝* F. Combefis-*ի մոտ,* „Christi martyrum lecta trias“, Parisiis, 1666, p. 61—126. *Հմմտ. նաև բյուզանդական Հայսմավուրքը՝* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano“ (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 310—312.

ԲԱԿՔՈՍ ՀՌՈՄԱՑԵՑԻ

Տես՝ ՍԱՐԳԻՍ ՀՌՈՄԱՅԵՑԻ ՎԿԱՅ։

ԲԱՀԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐ

Տես՝ ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐ («Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին»)։

ԲԱՀՏ

Տես՝ ԲԱՍՍ ՊԵՐԳԱՄԱՑԻ։

ԲԱՂԴԱՍԱՐ [ՊԱՂՏԱՍԱՐ] (խոջայ)

Նրա 1666 թվակիր երկու նամակներ, որոնք ուղղված են Եղիազար Այնթապցուն։ Շոշափում են ազգային-հասարակական խնդիրներ։ Տես՝ Սիոն, *1940, էջ 202—203 (ԻԶ) և 282—283 (ԻԷ)։ Երկրորդ նամակը ստորագրված է խոջա Ռուհիճանի հետ միասին։ Տես նաև հետևյալ առանձին հրատարակությունը՝ Մկ. Աղավնունի, «Դիւան Ս. Յակոբայ», Երուսաղեմ, նամակներ ԻԶ և ԻԷ։*

ԲԱՂԴԱՍԱՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ

ԺԸ. դ. եկեղեցական գործիչներից։ Նրանից մեզ հայտնի են՝ Հռոմից Մխիթար Սեբաստացուն ուղղված երեք նամակներ (21 հունվ. և 22 հոկտ. 1724 թ., և 19 մարտի 1727 թ.), որոնք տեղեկություններ են պարունակում ժամանակի իրադարձությունների մասին։ Տես՝ Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 284, 286 և 288։

ԲԱՂԴԱՍԱՐ ԲԱՂԻՇԵՑԻ

Անծանոթ հեղինակ, որից մեզ հասել է մեկնաբանական մի փոքրիկ երկ, սկ. «Եւ այս է նմանութիւն չորեքկերպեան կենդանեացն, լուսեղէն տեսիլք նոցա, խաչանման կառք նոցա...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 883 (էջ 225ա—227ա)։ Վերջում հիշատակագրված է՝ «Գրեալ է Բաղիշեցի ի Բաղտասար վարդապետէ»։ Ձեռագիրը ԺԸ դ. գրչություն է։*

ԲԱՂԴԱՍԱՐ [ՊԱՂՏԱՍԱՐ] ԹՈԽԱԹԵՑԻ [I]

Անծանոթ անձնավորություն (1625 թ.)։ Տես՝ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԽԱՐԲԵՐԴՑԻ, «Թոխաթցի Պաղտասարի հարցմունք ումեմն վասն անգիտելի աւուրն և ժամուն... Պատասխանի Արիստակէս վարդապետի»։

ԲԱՂԴԱՍԱՐ [ՊԱՂՏԱՍԱՐ] ԹՈԽԱԹԵՑԻ [II]

Կոչված նաև՝ Եւդոկիացի։ *Հայոց նոր վկաներից։ Նահատակվել է Կարինում՝ 1672 թ.։ Նրա մասին ունենք երեք տարբեր վկայաբանություններ։*

* * *

1. Բաղտասար Թոխաթցի. «Սուրբ և սիրելի վկայն Քրիստոսի մանուկն Բաղտասար էր ի մեծ քաղաքէն Հայոց Եւդոկիոյ, որ այժմ ասի Թօխաթ, որդի առն բարեպաշտի Հայ ազգաւ՝ Փիրզատայ անուն...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (գիտ. հրատ.), Վաղարշապատ, 1903, էջ 490—494։*

Այլ տպ.— Բաղտասար Թոխաթցի. «Սուրբ և սիրելի...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (ժող. հրատ.), հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 152—156։*

2. Նահատակութիւն Բաղդասար պատանւոյն. «Պատանիս այս Բաղդասար էր յԵւդոկիա քաղաքէ՝ որ այժմ ասի Թուխաթ...», *տես՝ «Ջաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», հտ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 120—125։*

Այլ տպ.— [Նահատակութիւն նն] «Պատանիս այս...», *տես՝ Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները» (գիտ. հրատ.), էջ 494—499։*

3. Յաղագս նահատակին Պաղտասարայ Թոխաթցւոյ, որ է կատարեալ ի քաղաքս Կարին, ասացեալ ի Յակոբ քահանայէ Արզրումեցւոյ. «Յամենայն ժամ օրհնեալ՝ Հայրն անեղական,|Գովեալ Որդին անճառ՝ անհաս, անսահման...»։ *Տես՝ ՅԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻ։*

⊠ *§ 3 բնագիրը հաստատորեն Հակոբ Կարնեցու հեղինակությունն է (հմմտ. Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9414, էջ 3ա—6ա)։*

Կարծում ենք, որ նույն Հակոբ Կարնեցին է հեղինակը նաև §§ 1 և 2 արձակ վկայաբանությունների, որոնց մեջ հիշատակվում է նահատակի թուրք ընկերոջ կողմից նրան հաղորդելու համար կանչված «քահանայ մի Յակոբ անուն» և «երէց մի Յակոբ անուն, որ երբեմն լեալ էր մաքսապետ», որը և § 2 բնագրի վերջում գրում է. «Իսկ իմ գոլով անդ ամ մի, բայց ի ժամ նահատակութեան սորբոյն ոչ պատահեցայ. այլ ի վաղին հարցի ցԹուրք ընկեր նորա, և նա պատմեաց զամենայն ի ծննդենէն մինչև ի նահատակութիւնն, և ես գրեցի որպէս լուայ»։

ԲԱՂԴԱՍԱՐ [ՊԱՂՏԱՍԱՐ] ԿԱՐՆԵՑԻ

ԺԸ դ. հեղինակ, որդի Մելքոնի և Մարգարտի։ Թողել է Կարինի և շրջակայքի 1718 թ. երկրաշարժի մանրամասն նկարագրությունը։ Հետագայում՝ 1756 թ. նույն Կարին քաղաքում, ընդօրինակելով Կիրակոս Գանձակեցու Պատմությունը, Բաղդ. Կարնեցին իր վերոհիշյալ պատմական աշխատությունը կցել է նրան։

* * *

Վասն յանագին շարժին որ եղև ի մայրաքաղաքս Կարին որ Արզրում վերաձայնի. «Ի թուականիս Հայոց ՌՃԿԷ-ին և ի ամսեանն յուլիսի ԺԹ-ին, Երկուշաբթի գիշերն ընդ լուսանալ Երեքշաբաթին ի մէջ գիշերին որ ամենեւին ննջեալ կային ըստ սովորութեան բընութեանս մարդկայնոյ, եղև յանկարծակի իր ինչ հնչումն սաստիկ և որոտումն անլուր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9277, էջ 151ա—152բ։*

ԲԱՂԴԱՍԱՐ [ՊԱՂՏԱՍԱՐ] ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Ընդհանրապես կոչվում է Բաղդասար (Պաղտասար) դպիր։ ԺԸ դարի մանկավարժ, գիտնական և տաղերգու, ծն. Կ. Պոլսում

1683 թ. և մեռ. 1768 թ.[1]։ Կեսարացի հյուսն Գրիգորի որդին էր, այդ պատճառով երբեմն նրան անվանել են «Կեսարացի», և ինքն իսկ երբեմն ստորագրում էր «Պաղտասար դպիր Կեսարեան»։ Աշակերտել է Ցահրաբաղեցի Աստուածատուր Աղավնի վարդապետին, որը, որպես էջմիածնի կաթողիկոսական նվիրակ, Կ. Պոլիս էր եկել 1706 թ. և այնտեղ ուսուցում էր «զգիտութիւնս արտաքին գրոց»[2]։ Ժամանակակիցների կողմից Բաղդասարը հիշատակվում է որպես «փիլիսոփայ», «իմաստուն». կոչվում է հավասարապես «դըպիր», «վարժապետ», «տիրացու» մակդիրներով։ Պետրոս Ղափանցին, որը մի դրվատական ոտանավոր է նվիրել Բաղդասարին՝ նրա մահվան առթիվ[3], նրան անվանում է «Քերթող համեստ անհաւասար.|Ի Հայկազնեայս աշխարհամար»։ Բաղդասար դպիրը 1792 թ. Քում-քափույում (Կ. Պոլիս) հաստատված պատրիարքական Մայր-դպրատան ղեկավար է նշանակվել Հակոբ Նալյան պատրիարքի կողմից[4], այնտեղ դասախոսական պաշտոն է վարել երկար տարիներ և հասցրել բազմաթիվ աշակերտներ։ Գրել է մի շարք աշխատություններ, որոնք թե՛ մի կողմից որպես դասագրքեր նրա մանկավարժական արդյունավոր գործունեության պտուղներն են հանդիսանում և թե՛ մյուս կողմից ժամանակի հայ գիտական գրականության մեջ արժեքավոր ավանդներ։ Նրա երկհատոր Քերականությունը երեք անգամ է տպագրվել ԺԸ դարի ընթացքում։ Մանկավարժական օգտագործման համար գրել է նաև «Համառօտ իմն մեկնութիւն յաղագս տրամաբանութեան» իմաստասիրական աշխատությունը, որովհետև քերականությունից հետո Բաղդասար դըպիրն այս գիտությունը համարում էր որպես ուղի դեպի մյուս գիտությունները, այդ պատճառով էլ նա տպագրել էր տվել արդեն, 1728 թվին, Սիմեոն Ջուղայեցու «Գիրք տրամաբանութեան»-ը, որի համար գրած իր վերջաբանում ասում էր. «Ապա ուրեմն յայտնի է՝ թէ որք ուսանին զսա բարւոք մտառմամբ, դիւրաւ ճանապարհորդին առ ամենայն իմաստասիրութեան ուսմունս. իսկ առանց օժանդակութեան սորին՝ կարի դժուարաւ. Վասն որոյ ըստ կարգի ուսման՝ զկնի Քերականութեան՝ է գիտութիւն Տրամաբանութեան. քանզի նովաւ ուղղի ասացուածն, և սովաւ լուսափայլի միտն առ ի ճանաչել զընութիւնս էակացն»[1]։ Նույն հատորի վերջում նա տպագրել է նաև հայ իմաստասիրական գրականությունից մի շարք նյութեր[2], որ ինքն ըստ երևույթին օգտագործում էր դասավանդման համար։ Բաղդասար դպիրը գրել է նաև պատմական և բանասիրական աշխատություններ, որոնցից է այբբենական կարգով մի ժամանակագրութիւն («Ժամանակացոյց պատմութիւն»)[3] և, թուրքերեն լեզվով, Գրիգոր Լուսավորչի պատմությունը։ Սակայն Բաղդասար դպրի համբավն իր ժամանակակիցների

---

1 Թաղված է Բալըքլըի հայկական գերեզմանատանը։ Բաղդասար դպրի տապանագիրը, որը հորինված է նրա թոռ Մեսրոպ վարժապետի կողմից, տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8216, էջ 261ա։ Մեսրոպ վարժապետը հորինել է նաև Բաղդասար դպրի որդիներ տեր Անտոնի (մեռ. 1785 թ.) և Արսեն դպրի (մեռ. 1771 թ.) տապանագրերը, տես՝ անդ, էջ 261բ։

2 Խաչատուր Ջուղայեցի, «Պատմութիւն Պարսից», Վաղարշապատ, 1905, էջ 215։

3 Պետրոս Ղափանցի, «Գրքոյկ կոչեցեալ Երգարան», Կ. Պոլիս, 1772, էջ 102—104՝ «Դրուատ ողբերգաբար առ հանգուցեալ ընտիր դպիրն Պաղտասար»։

4 Հիշյալ Մայր-դպրատան և Բաղդասար դպրի գործունեության մասին չափածո նյութեր կան Երևանի Պետ. Մատ. № 8216 ձեռագրում։ Այդ նյութերից առաջինն է՝ «Երգ ո՞յք եղեն գլխաւորապէս պատճառ հաստատութեան դպրատանս, ոտանաւորաւ ցուցանին և զանուանս նոցա գլխատառքն յայտ առնեն. եղև ի 1241 թուականիս Հայոց և ի 2 ապրիլի ամսոյն յաւուրն աւագ ուրբաթի» (էջ 225ա—230բ, սկ. «Յառաջին մեզ այսմ բարւոյ հեղինակ»), հեղինակ՝ Հարություն Կարնեցի։ Երկրորդը անխորագիր է և անհեղինակ (էջ 237ա—239ա, սկ. «Ազգիս Հայոց սա վարժարան»)։ Երրորդը նույնպես անխորագիր է և անհեղինակ (էջ 239ա, սկ. «Աշակերտ ըզգաստ քաջէ միշտ զիմաստ»)։

---

1 Այս վերջաբանի մասին տես՝ Բաղդասար դպրի իմաստասիրական երկերի շարքում։

2 Այն է՝ Դավիթ Ներգինացու մի քանի աշխատությունները, Պորփյուրի «Ներածութիւն»-ը, Մելիտոս և Մովսես փիլիսոփաների վիճաբանությունը, են։

3 Ժամանակագրության այն օրինակը, որը մեզ ծանոթ է Վ. Ա. Հակոբյանի հրատարակությամբ, նրա համառոտությունն է, որ կատարված է 1766 թվին Ակնեցի Ստեփանոս Պետրոսյան ամիրայի ձեռքով։

մոտ մեծ է եղել գլխավորապես իր բանաստեղծական ստեղծագործություններով։ Նրա տաղերի մասին Պետրոս Ղափանցին գրում էր. «Երգեր քոյին՝ երգոց նարօտ,|Եւ դիպակեայ ձիր պարեգօտ.|Իւրաքանչիւր բառքն ոսկեզօղ|Արանց գիտնոց անհատ արօտ»։ Թողել է թվով մոտավորապես 185 տաղեր ու այլ ոտանավորներ՝ աշխարհիկ և հոգևոր թեմաներով։ Տաղերի մեծ մասն առանձին հատորներով հրատարակվել է մի քանի անգամ, հեղինակի կենդանության ժամանակ և հետո։ Նրանց մեջ պակաս չեն իսկապես հաջող կտորներ։ Առանձնապես արժեքավոր են աշխարհիկ տաղերը, որոնց մի որոշ մասն աչքի է ընկնում իր իմաստասիրական խորքով։ Աշխարհիկ տաղերի թեման ընդհանրապես սիրային է, բայց կան նաև թեմատիկայով իրական կյանքը շոշափող բանաստեղծություններ, որոնք, եթե չեն փորձում տալ երևույթների վերլուծությունը, համենայն դեպս տալիս են նրանց հարազատ պատկերը։ Այդպիսիներից է, օրինակ,՝ «Առ մամօնայն» տաղը։ Բաղդասար դպրի հոգևոր երգերի մեջ միստիկականություն և քրիստոնեական ինքնուրացության ոգին են տիրում. Նրա խրատական-բարոյախոսական երգերի մեջ, որոնք հոգևոր տաղերի խմբի հետ են կապված, կա որոշ հոռետեսություն։ Թե ի՛նչ նպատակով պետք է Բաղդասար դպիրը գրած լինի իր հոգևոր տաղերը՝ այդ մասին Գար. Լևոնյանը գրում է հետևյալը. «Մեզ թվում է, թե Պաղտասարը իր հոգևոր երգերը գրել է միայն ժամանակի պահանջին գոհացում տալու համար և նրանց հետ միասին անցկացնելու իր անձնական, իր 'սիրոյ և կարօտանաց' երգերը։ Նա իր ժամանակն ու միջավայրը լավ ճանաչելով նույնիսկ քաշվում է աշխարհիկ երգերն հրապարակ հանելուց և արդարանում է, թե այդ երգերն էլ 'ըստ ներքին զօրութեան' հոգևոր են»[1]։ Իր աշխարհիկ տաղերի համար Բաղդասար դպիրը օգտվել է ժողովրդական ստեղծագործություններից, իսկ հոգևոր տաղերի համար օգտվել է եկեղեցական հին բանաստեղծություններից. Հոգեվոր տաղերի մի մասը, գլխավորապես տնօրինական տոներին նվիրվածները, ունեն շարականային տիպի կառուցվածք։

Լինելով ծագումով կեսարացի և թուրքախոս միջավայրի ծնունդ, Բաղդասար դպիրն իր թուրքախոս հայրենակիցների կրթության համար մշակել է նաև որոշ չափով հայատառ թուրքերեն գրականություն։ Նրա հեղինակությունների մի մասը թուրքերեն է, ինչպես Գրիգոր Լուսավորչի պատմությունը, սրան կցված «Հարցմունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ընդ հրեշտակին» բնագրի թարգմանությունը և հայ ժողովրդի ծագման համառոտ պատմությունը. թուրքերեն է գրել նաև իր «Կրթութիւն քրիստոնէական պաշտօնի» գիրքը և նրան կցված հայկական տոմարի բացատրությունը. թուրքերեն լեզվով է գրել նաև մի քանի աշխարհիկ տաղեր. իսկ որոշ տաղեր գրել է հայերենով ու թուրքերենով խառն։ Բայց Բաղդասար դպրի այդ թուրքերենը յուրահատուկ դրոշմ ունի՝ ըստ հնարավորին առավել չափով պահելով իր մեջ հայկական ոչ միայն առատ բառապաշար, այլև քերականական ձևեր, որոնք ճարպիկ ձևով օգտագործված են թուրքերեն շարադրության մեջ։

Բաղդասար դպիրը կարևոր աշխատանք է կատարել նաև մատենագրական բնագրերի հրատարակության գործում։ Հովհաննես Կոլոտ պատրիարքի հրամանով նա պատրաստել է Մաշտոցի համեմատական բնագիրը, ինչպես ինքն է ասում՝ «հարկօղ հրամանաւ սրբազան պատրիարգին մեծի Պօլսոյս, ձեռնամուխ եղէ ի գործս այս, շարելով առաջի իմ Ե Զ հնագոյն ընտիր օրինակս, և համեմատելով զնոսա ընդ իրեարս բազում աշխատութեամբ և անհանգիստ տքնութեամբ»[1]։ Հրատարակել է Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց»-ն ու Զենոբ Գլակի Պատմությունը և գրել է նրանց առաջաբանները[2]։

1 Գ. Լևոնյան, «Պաղտասար դպիր», էջ 12։

1 «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց», Կ. Պոլիս, 1726, տես՝ Բաղդասարի հիշատակարանը, էջ 376—379։ Այս Մաշտոցը հետագայում վերահրատարակվել է մի քանի անգամ ևս։

2 «Գիրք պարապմանց», Կ. Պոլիս, 1717, առաջաբանը էջ 2—10։ «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ», Կ. Պոլիս, 1717, առաջաբանը էջ 2—6։

Հրատարակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ը, Գրիգոր Լուսավորչին վերագրված «Յաճախապատում»-ն ու Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեայց»-ը, և կազմել է նրանց ցանկերը[1]*։ Սրանցից բացի՝ Բաղդասարը հանդես է գալիս որպես հրատարակիչ և կամ սրբագրիչ ժամանակակից ուրիշ բազմաթիվ հրատարակություններ*[2]*։*

* * *

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1. Ժամանակագրություն.

[Բաղդասար դպրի ժամանակագրության համառոտությունը] «Աբգար հաւատաց ի Քրիստոս ի թուին Քրիստոսի 40։ Աբրահամ կաթուղիկոս նստաւ, այն էր Բաղիշեցի, 1730...», *տես՝ Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Ա, Երևան, 1951, էջ 333—349։*

Հրատարակչի նախաբանով և ծանոթագրություններով։ Հրատարակված է Երևանի

[1] «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, 1729, տես հիշատակարանը էջ 808։ «Գիրք սահմանաց Դաւթի անյաղթ փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի», Կ. Պոլիս, 1731, տես հիշատակարանը էջ 335։ «Գիրք որ կոչի Յաճախապատում», Կ. Պոլիս, 1737, տես հիշատակագրությունը էջ 357։ «Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից, արարեալ սրբոյ վարդապետին Սարգսի Հայոց իմաստասիրի, և կոչի Սարգիս գիրք», Կ. Պոլիս. 1743, տես հիշատակարանը էջ 881—883։

[2] Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յոհաննու», Կ. Պոլիս, 1717, Բաղդասարի հիշատակարանը էջ 972—974։ «Գիրք որ կոչի Հարանց վարք», Կ. Պոլիս, 1720, տպագրության հիշատակարանը էջ 568։ Առաքել Սյունեցու «Ադամգիրք»-ը, Կ. Պոլիս, 1721, հիշատակարանը էջ 284։ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հաետորի», Կ. Պոլիս, 1726, հիշատակարանը էջ 431։ «Գիրք Տրամաբանութեան Սիմէօնի Ջուղայեցւոյ գերիմաստ վարդապետի արարեալ», Կ. Պոլիս, 1728, հավելվածի հիշատակարանը էջ 56։ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս», 1730, հիշատակարանը էջ 712։ «Գիրք աղօթից Գրիգորի Սկեւռացւոյ գիտնական վարդապետի», Կ. Պոլիս, 1742, հիշատակարանը էջ 187։

Պետ. Մատ. № 6691 ձեռագրից։ Ձեռագրում գտնվում է նաև Բաղդասար դպրի ժամանակագրության սույն համառոտությունը կատարողի հիշատակարանը. «Ժամանակացոյ[ց] պատմութիւնքս այսորիկ ի գրուածոցն տիրացու Պաղտասարին ընդրեալ գրեցան ձեռամբ յԱկնայ Պետրոսեան Ստեփաննոս ամիրային. ոչ զբան բուն օրինակին այլայլելով, այլ զոմանց իրաց պատմութիւն գիտել կամելով, որոյ և բուն այբբենակարգ պատմութիւնն եղեալ է իբր երկիցս այսքան զհարկաւորսն, օրինակեալ 1215 Հայոց թուին ի փետրվարի ամսոյն»[1]*։*

Հրատարակիչը սույն համառոտության բնագրին կցել է նաև 6691 ձեռագրում ժամանակագրության բնագրից առաջ և հետո գտնվող էջերի վրա արված՝ 1793—1799 թվականներին վերաբերող ժամանակագրական հավելվածները, որոնք կատարված են Ստեփանոս Գյումուշխանեցու և Մանուել Սեվակրի ձեռքով։

2. Վարք Գրիգոր Լուսավորչի.

Տպ. Կ. Պոլիս, անթվական.

Պու պատմութիւն գիրքի օ՛լտուր քի, Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչին էվէլինտէն ախըրընատաք պատմութիւնունու վէ պու Հայոց ազգըն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատքնա կէլիպ լուսաւորել օլմասընը, տիյնէյէնէ նագլ էտէր։

160 էջ (շարվ. 13.2×7.3 սմ)։ Տպագրության վայրը և տարեթիվը չեն նշված։ Սկզբում ունի նախաբան՝ «Իզզէթլի վէ մուհապպէթլի եղբայրլարըմըզա, վէ սուրբ Լուսաւորիչին սէվկիլի օղուլլարընա, պու ազիզ գիրքին սէպէպի մալիմ օլա» *(էջ 2—6), որն ստորագրված է՝ «Պաղտասար ճիմլէնին՝ այագ թիւրապի|Տիւզտի պի ավնիլ բէպպ՝ իշ պու քիթապի»։ Վարքը՝* «Սուրբ Գրիգոր Հայոց Լուսաւորիչին վէ եռանելի ճայրապետիմիզին պատմութիւնու տուր» *(էջ 9—97)։ Հատորում կան նաև հետևյալ նյութերը.* «Հարցմունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ընդ ճրեշտակին» *բնագրի թրք. թարգմանու-*

[1] Տես «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 333։

թյունը (էջ 113—145), հայ ժողովրդի ծագման համառոտ պատմությունը՝ «Պիզիմ Հայոց ազգըն բիմտէն զունուրա կէլտիկի նագլ օլունուր» (էջ 146—157), և հայերեն-թուրքերեն խառն մի քանի խրատական խոսքեր (էջ 158—160)։ Գրքի վերջում (էջ 160) գտնվում է հետևյալ նշումը՝ հիշատակագրության ձևով. «Պատմութիւնուն պէշինճի ըստամփասը տըր պու» (Պատմության հինգերորդ տպագրությունն է այս)։

Այս գրքի առաջին չորս տպագրությունները ծանոթ չեն մեզ։

Այլ տպ. Կ. Պոլիս, անթվական.

Պու պատմութիւն գիրքի օ՛լտուր քի, Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչին էվէլինտէն ախըրընատաք պատմութիւնունու, վէ պու Հայոց ազգըն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատըրընա կէլիփ՝ լուսաւորել օլմասընը, տիյնէյէնէ նագլ էտէր։

159 էջ (չափ. 13.4×8.1 սմ)։ Տպագրության վայրը և տարեթիվը չեն նշված։ Բովանդակությամբ նույն է նախորդ տպագրության հետ՝ վարքը (էջ 9—109), «Հարցմունք»-ը (էջ 111—142) են։ Վերջում (էջ 159) կա հետևյալ հիշատակագրությունը. «Իշպու պատմութիւնուն՝ ալթընճը քըրրէ ստամփասը տըր պու» (Սույն պատմության վեցերորդ տպագրությունն է այս)։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1820 թ.

Պու պատմութիւն գիրքի օ՛լտուր քի, Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչին էվէլինտէն ախըրընատաք պատմութիւնունու, վէ պու Հայոց ազգն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատըրընա կէլիփ լուսաւորել օլմասընը, տիյնէյէնէ նագլ էտէր: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի, տեառն տեառն Եփրեմի աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Գաբրիէլի նգնազգեաց արքեպիսկոպոսի: Իսկ և ի պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ՝ տեառն Պօղոսի արքեպիսկոպոսի: Ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, ի Քիւրքճի խանն, ի Կոստանդնուպօլիս, 1820:

134 էջ (չափ. 13.2×8.3 սմ)։ Բովանդակությամբ նույն է նախորդ տպագրությունների հետ՝ վարքը (էջ 8—94), «Հարցմունք»-ը (էջ 95—122) են։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1831 թ.

Պու պատմութիւն քիթապը Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչ հայրըմըզըն էվվէլինտէն ախըրընատաք օլան նագլինի, վէ պիզիմ Հայոց ազգըն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատըրնա կէլիփ լուսաւորել օլմասընը պէյան իտէր: Տպագրեալ ի պատրիարգութեան թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ տեառն Կարապետի ամենապատիւ և վեհափառ արքեպիսկոպոսի: Յօրթագիւղ, ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1831—ՌՄՁ:

132 էջ (չափ. 12×7 սմ)։ Բովանդակությամբ նույն է նախորդների հետ՝ վարքը (էջ 8—93), «Հարցմունք»-ը (էջ 94—120) են։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1841 թ.

Պու պատմութիւն քիթապը Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչ հայրըմըզըն էվվէլինտէն ախըրընատաք օլան նագլինի, վէ պիզիմ Հայոց ազգըն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատըրնա կէլիփ լուսաւորել օլմասընը պէյան իտէր: Տպագրեալ ի պատրիարգութեան թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ՝ տեառն Աստուածատրոյ ամենապատիւ և վեհափառ արքեպիսկոպոսի: Յօրթագիւղ, ի տպարանի [Պօղոսի] Արապեան Ապուչեխցւոյ, 1841—ՌՄՂ:

132 էջ (չափ. 12×7 սմ)։ Բովանդակությամբ նույն է նախորդ տպագրությունների հետ՝ վարքը (էջ 7—93), «Հարցմունք»-ը (էջ 94—120) են։

Այլ տպ. Կ. Պոլիս. 1850 թ.

Պու պատմութիւն քիթապը Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչ հայրըմըզըն էվվէլինտէն ախըրընատաք օլան նագլինի, վէ պիզիմ Հայոց ազգըն նէ՛ սէպէպտէն քրիստոնէական հաւատըրնա կէլիփ լուսաւորել օլմասընը պէյան իտէր: Տպագրեալ ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տ. տ. Ներսէսի սրբազնակատար կաթողիկոսի ամենայն Հայոց: Ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տ. Կիրակոսի սրբազան արքեպիսկոպոսի: Ի պատրիարգութեան Կոստանդնու-

պօլսի՝ տեառն Յակոբայ ազգասէր սրբազան արքեպիսկոպոսի: Ի Կոստանդնուպօլիս, յՕրթագիւղ, ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1850:

147 էջ (չափ. 12.2×7 սմ)։ Բովանդակությամբ նույն է նախորդների հետ՝ վարքը (էջ 7—102), «Հարցմունք»*-ը (էջ 103—132) են։*

□ *Բաղդասար դպրի այս աշխատությունը լույս է տեսել նաև Երուսաղեմում 1867, 1884, 1889, 1901 և 1909 թթ.՝ 112 էջով. իսկ 1928 թ.՝ 147 էջով*[1]*։ Մեզ հայտնի է վերջին՝ 1928 թ. տպագրության նկարագրությունը*[2]*, որ է՝*

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին էվվէլին-տէն ախըրընատէք օլան թարիխի վէ էրմէնի միլլէթինին տինի Իսավիյէ իլէ շաֆքլանմասը պէյանընտէ: Ալթընճը տէֆա: Գուտս շէրիֆ, էրմէնի Մար Եագուպ մանասթըրը թապխանէսինտէ, 1928: *(Կազմի վրա՝* «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին մուխթասար թարիխի վէ միլլէթի էրմէնիյանըն տինի Իսավի իլէ շաֆգլանմասը: Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1928):

147 էջ (չափ. 12.5×7.5 սմ)։ Վերջում՝ «Սուրբ Լուսաւորիչին հրեշտակ իլէ միւքեալէմէսի», *որ է* «Հարցմունք» *(էջ 107—134) են։*

Երուսաղեմի այս հրատարակությունները, ի տարբերություն Կ. Պոլսի հրատարակությունների, ներկայացնում են խմբագրական որոշ տարբերություններ։

3. Համաբարբառ Նոր Կտակարանի.

Անուամբ Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Գրքոյկ որ կոչի Ցանկ գիրք Նոր Կտակարանին: Որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երևելիս, եղեալ ըստ այբբենական կարգին հանդերձ համարաթուով գլխոցն և համարացն տրնատմանց: Առ ի դիւրապէս գտանել զոր ինչ և խնդրիցէ ոք բանս ի սուրբ Նոր Կտակարանին: Ի փառս միշտ փառաւորեալ անուանն վերեղելոյ գեր քան զգեր վեհագոյն միոյ գերագոյական աստուածութեան ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ամէն:

176 էջ (չափ. 16.9×12.6 սմ)։ Այբբենական համաբարբառ է։ Գիրքն առանձին անվանաթերթ չունի. վերոնշյալ վերնագիրը գտնվում է առաջին էջի առաջին սյունակում, իսկ երկրորդ սյունակից սկսվում է համաբարբառի բնագիրը (էջ 1—163), որին հաջորդում են Նոր Կտակարանի բովանդակության հետ կապված մի քանի առարկայական ցուցակներ (էջ 164—172)։ Վերջում՝ «Առազդեցութիւն ինչ առ բանասէր ընթերցողսդ» *(էջ 173—176), որ է հեղինակի բացատրությունները իր համաբարբառի կազմության և օգտագործման ձևի մասին, և տպագրության հիշատակարանը.*

«Եւ արդ՝ եղև կատարումն տպեցման սորին ի թվին Հայոց՝ ՌՄԲ (=1753 թ.), յորն՝ որոյ վաղուեան օրն էր փառաւոր համբարձումն Քրիստոսի։ Ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի՝ տեառն Մինասայ երից երջանիկ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Թորոս գեր երջանիկ և սրբազան վարդապետի։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի։ Հրամանաւ նորին վեհազուն պատրիարգի՝ տեառն Յակոբ սրբազան և յոյժ գիտնական վարդապետի, յատուկ անուամբ Աստուածաբան կոչեցելոյ։ Ի տպարանի տիրացու Յօհաննիսի որդւոյ հանգուցեալ մահտեսի Աստուածատուրի» են։

□ *Բաղդասար դպիրը նպատակ է ունեցել գրելու նաև մի հայոց պատմություն ընդարձակ, աշխարհաբար լեզվով («մուֆասսալճա վէ աչըքճագ հայճա իլէ»)*[1]*, բայց մեզ հայտնի չէ, թե նա արդյոք գրե՞լ է այդ աշխատությունը*[2]*։ Բաղդասար դպիրն ունեցել է մի ուրիշ պատմական աշխատություն, այն է՝ 1710 թվին Կ. Պոլսում նահատակված Աստվածատուր Մալգարացու*

---

1 Հմմտ. «Լիակատար ցուցակ գիրքերու Սրբոց Յակոբեանց տպարանին», Երուսաղեմ, 1933, էջ 29։

2 Գ. Բամպուքճյանի մեզ ուղղած նամակից։

1 Տես նրա գրած՝ Գրիգոր Լուսավորչի թուրքերեն պատմության վերջը։

2 Հ. Մրմրյանը գրված է համարում այդ, տես նրա «Մասնական պատմութիւն հայ մեծատուններու», էջ 88 ծան.։

պատմությունն ու չափածո ներբողը, որոնց բնագրերը մեզ չեն հասել[1]։

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1. Գրաբարի քերականություն՝ գրաբարով գրված.

Տպ. Կ. Պոլիս, 1736 թ.։

Պարզաբանութիւն Քերականութեան կարճառօտ և դիւրիմաց։ Յաղագս նոր եկելոց ի ուսումն գրոց գիտութեան։ Օգնեա՛ Աստուած։ [Հատոր առաջին]։

304 էջ (չափ. 12.3×7.2 սմ)։

— Հատոր Երկրորդ Քերականութեան։ Կիրառութիւն մասանցն բանին։ Որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն։

305—608 էջ (նույն ծավալով)։ Սույն հատորի վերջում՝ կա տպագրության հիշատակարանը.

«Եւ արդ տպեցաւ գիրքս Քերականութեան ի թվին ՌՃՁԵ (=1736), ի հայրապետութեան գերահռչակ աթոռոյն և մօրն մերոյ սուրբ էջմիածնի՝ Թէքիրտաղցի տեառն Աբրահամու երիցս երանեալ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի սուրբ տնօրինական տեղեացն Քրիստոսի, և Կոստանդնուպօլսի մեծի քաղաքիս՝ տեառն Գրիգորի և տեառն Յօհաննիսի սրբազան հովուացն և աստուածաբան վարդապետացն։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի, ի տպարանի խօճայ Կարապետի որդի մահտեսի Աստուածատուրի և որդւոյ նորա տիրացու Յօհաննիսի, որ մինչ չարէր զկապարեայսն, թէ որքան աշխատանս կրեաց ընդ իս զգուշութեամբ և նուրբ մտածմամբ, թէ գլխաւոր բանքն ի գլուխ տողիցն անկանիցին, այն նկատողացն է գիտելի։ Արդ՝ յիշեսջիք զսոսա ի մաքուր աղօթս ձեր, որք ըստ բարեսէր բարուցն իւրեանց տպեցին զգիրքս զայս և արդեամբ իսկ օգնելով։ Նաև զհլու աշխատաւոր մշակն սոցին մրահար և գրադարկ զՎանեցի Սարուխանն։ Եւ յիշողացդ և յիշեցելոցն տացէ աղբիւրն ողորմութեան, զներումն յանցանաց, ամէն» (էջ 600—601)։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1771 թ.։

Պարզաբանութիւն Քերականութեան կարճառօտ և դիւրիմաց։ Յաղագս նոր եկելոց ի ուսումն գրոց գիտութեան։ Օգնեա՛ Աստուած։ [Հատոր առաջին]։

304 էջ (չափ. 12.9×7.3 սմ)։

— Հատոր Երկրորդ Քերականութեան։ Կիրառութիւն մասանցն բանին։ Որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն։

305—608 էջ (նույն ծավալով)։

Սույն հրատարակությունը նույնությամբ արտատպություն է նախորդից՝ տող առ տող և էջ առ էջ։ Տարբեր է միայն Բ հատորի վերջում գտնվող հիշատակարանը.

«Եւ արդ՝ վերստին տպեցաւ գիրքս Քերականութեան ի թվին ՌՄԻ (= 1771), ի հայրապետութեան գերահռչակ աթոռոյն և մօրն մերոյ սուրբ էջմիածնի՝ յաջորդի երիցս երանելւոյ սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի սուրբ տնօրինական տեղեացն Քրիստոսի, և Կոստանդնուպօլսի մեծի քաղաքիս՝ տեառն Պօղոսի և տեառն Գրիգորի սրբազան և աստուածաբան վարդապետացն երջանկաց։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի։ Ըստ խնդրոյ ուսումնասէր մանկանց եկեղեցւոյ։ Արդեամբ և գոյիւք Նուաստ Գասպարիս Մուրատեան, և հայրապատիւ եղբօրն իմոյ Պաղտասար ամիրային. իբրու տրիտուր լուսահոգի պատուելի մեծ վարժապետին՝ հեղինակի գրքոյս և բազմերախտին հայկական ազինս. և մանաւանդ իմս անարժանութեան. երկասիրութեամբ թոռան նորին՝ դեռաբողբոջ հեզաբարոյ Մեսրոպ դպրի։ Ի տպարանի հանգուցեալ մահտեսի Աստուածատուրի որդւոյ Յօհաննիսի բարեմիտ դպրի. և որդւոյ նորա տիրացու Կարապետի։ Աշխատակցութեամբ մշակացս նոցին՝ Գալստին, Պօղոսին և Նիկողոսին։ Ուրեմն խնդրի ի վայելողացդ

---

[1] Այդ մասին գրում է Բաղդասարի ժամանակագրության համառոտը. «Մալղարացի Աստուածատուրն նահատակեցաւ 1159 (=1710) յունվ[ա]րի 10, երեքշաբթի։ Տիրացու Պաղտասարն զպատմութիւնն գրեաց ճառապէս և երկար գովք ասաց վերան չափեալ ոտիւք», տես՝ «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա., էջ 340։

յիշել զհոգի նոցին և մեր և ծնողաց և զաւակաց և մերձաւորաց մերոց միով Աստուած ողորմեայիւ։ Որ և յիշօղքդ յիշեալ լիջիք ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն, այժմ և յաւէտ և յաւիտեանս» (էջ 600—602)։

Այլ տպ. Մադրաս, 1791 թ.

Պարզաբանութիւն Քերականութեան կարճառօտ և դիւրիմաց: Յաղագս նոր եկելոց ի ուսումն գրոց գիտութեան: Օգնեա՛ Աստուած: [Հատոր առաջին]:

304 էջ (չափ. 10.1×6.2 սմ)։

— Հատոր երկրորդ Քերականութեան: Կիրառութիւն մասանցն բանին: Որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն:

305—608 (նույն ծավալով)։

Նույնությամբ արտատպված է Կ. Պոլսի 1771 թ. հրատարակությունից՝ տող առ տող և էջ առ էջ։ Նույնությամբ ունի նաև նրա տպագրության հիշատակարանը (էջ 600—602)։

Այս հրատարակությունը, երկու հատորների միացմամբ, թողարկված է նաև մեկ գրքով, որն ունի հետևյալ ընդհանուր անվանաթերթը.

Գիրք Քերականութեան: Շարադրեցեալ ի տիրացու Բաղդասար դպրէ Կոստանդնուպօլսեցւոյ: Եւ ի նմանէ օրինակեցեալ ջանիւք և աշխատութեամբ տէր Յարութիւն Շմաւոնի Շիրազցւոյ: Ի հայրապետութեանն տեառն Ղուկասու կաթուղիկոսի ամենայն Հայոց որ ի Վաղարշապատ: Եւ ի յառաջնորդութեանն Նոր Ջուղայու տեառն Յակոբայ արք եպիսկոպոսին: Եւ ի թագաւորութեանն յօգոստափայլ տեառն Երկրորդի Հերակլեայ արքայի ի Թիֆլիս: Յամի մարդեղութեան փրկչին մերոյ 1791: Եւ ի թուականութեանս Հայոց 1240: Եղև ի Հնդիկս ի մայրաքաղաքն Մադրաս: Ի տպարանի տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազցւոյ:

Այս թողարկումը ունի նաև հավելյալ էջեր՝ 609—619, ուր տեղավորված են սույն վերատպագրության հատուկ հիշատակարանը և վրիպակների ցանկը։

Հիշատակարան.

«Փառք...։ Արդ ի վախճանի բանիս յիշել մաղթեմ ի լուսափայլ յաղօթս ձեր, յատկապէս արժանին յիշման զսրբակրօն տէր Եփրեմ արքեպիսկոպոսն և ծայրագոյն Նուիրակ աստուածաէջ գահին և մօրն մերոյ սրբոյ էջմիածնի, զոր (sic) վասն նուիրակութեան եկեալ էր ի Մադրաս և եղև յատկապէս յորդորող յառաջացուցանելոյ տպեցման գրոյս։ Նաև զհամայն բնակիչս քաղաքիս զազգս Հայոց ևս առաւել զգերապատուելի մանկունս նոցա զի յարաժամ կալով մնասցեն ի սէր և ի յուսումն բարեաց։ Այլ և յիշեսջիք զՋուղայեցի պարոն Յարութիւն Կարապետեանն և պարոն Մանուկ Յակոբջանեանն, հանդերձ կենդանեօք և ննջեցելովք վասն առատաձեռնութեան և օգնական լինելոյ ծախուցն գործարանիս։ Նաև զձեռնասուն աշակերտն իմ և զհոգևոր որդեակն զվաստակակիցն համայն գործոց զտպարանիս զխաչիկ Ծատուր Ջարիֆեանն ի Նոր Ջուղայու Թարվիզեցին (sic) հանդերձ իւրովք համայնօքն։ Այլ և զարեանառուն իմ զԿիրակոս Կարապետեանն Շիրազցին քրտնաջան զաշխատաւորն գործարանիս և զկապարաշարն գրոյս։ Նաև զՅակոբն ցրուող կապարեաց տպարանիս զհոգևոր որդեակն պարոն Սհակին Աբրահամեան Թարվիզեցւոյ։ Հուսկ յետոյ և ինձ արարէք յիշման արժանի զի աղօթիւք ձերովք բարձցէ տէր զհիւանդութիւնս հոգւոյս անըմբերելի զառնութեան կազմողի տպարանիս Յարութիւն քահանայիս որդւոյ Շմաւոնի ի Պերսապօլսէ ամենայնվայելուչ քաղաքէն Շիրազւոյ հանդերձ համայն ընտանեօքս հոգևորօք և մարմնականօք զի տացէ կարողութիւն վաստակել միշտ անձանձրոյթ յաղագս ամենապայծառ ազգին Հայոց մինչ չև է զատեալ հոգիս ի մարմնոյ և այսու զհինգ գիրս յառաջ ածի, ողորմութեամբն Աստուծոյ ամէն» (էջ 609—617)։

2. Գրաբարի քերականություն՝ աշխարհաբարով գրված.

Գիրք Քերականութեան [Կ. Պոլիս, 1760]:

176 էջ (չափ. 12.9×7.6 սմ)։ Անվանաթերթ չունի։ Առաջին էջից, «Գիրք Քերակա-

նուրեան» վերնագրի տակ, տրվում է գրքի առաջաբանը, ուր ի միջի այլոց հեղինակը գրում է. «... ասկից առաջ ողորմութեամբն Աստուծոյ՝ մեր տկար խելքին կեօրէ քերականութիւն մի շարադրեցինք բացկեկ շարադրութենով որ փէք ղօլայ կու հասկըցվի. անճախ ինչ ղատար բաց շարադրութիւն լինի նէ, կէնէ չինքի գրոց շարադրութիւն է, փոքր տղայքն կամ այլք՝ որ տաճկա գրոց լեզուն չեն գիտեր՝ դիժարիկեկ կու հասկընան։ Անոր համար թէքրար ղայս փոքրիկ քերականութիւնս ալ նոր շարադրեցինք աշխարհի բառով, որ գրոց բան հասկընալու սէր ունեցող փոքրիկ տիրացուներն կամ թէ ո՛վ որ և իցէ՝ ասով մտնեն ի մեծ քերականութիւն և հեշտ ուսանին զնա շնորհօքն Աստուծոյ։ Մեղաւորիս ջանքը միշտ այս եղև թէ՝ ամէն մարդ զգրոց բանն հեշտ հասկընայ։ Զէրէ գիտութիւնն լոյս է, և չգիտութիւնն խաւար. որպէս որ բարի գործքն լոյս է, և մեղքն խաւար»։

Վերջում ունի տպագրության հիշատակարան, որ է՝

«Տպեցաւ գրքոյկս փոքրիկ... ի Կոստանդնուպոլիս քաղաքի...։ Հրամանաւ նորին գերապատիւ պատրիարգի տեառն Յակոբայ առատամիտ և բազմիմաստ վարդապետի՝ բազում գրեանց հեղինակի յատուկ անուամբ (sic) Աստուածաբան կոչեցելոյ։ Արդեամբ և յորդորմամբ ուսման կարի սէր ունողի մահտեսի Մերկերիոսի՝ որդւոյ մահտեսի Սեղբոսի ի տէր հանգուցելոյ։ Առ ի լինիլ յիշատակ ծնողացն և համօրէն զարմիցն հոգւոց։ Աղաչեմ ուրեմն յիշել զտպելուօղն (sic) և զտպօղսն սորին ընդ մեղաւոր իմոյ հոգւոյս Պաղտասարի միով Հայր մերիւ ի Տէր։ Եւ զանձանձիր վարժապետն իմ հեզահոգի՝ զԱստուածատուր աստուածաբան վարդապետն Ջուղայեցի, ընդ ծնողացն իմ մարմնաւոր. և ողջ լերուք։ Թիւ Հայոցս 1209, հոկտեմբերի 25» (էջ 175—176)։

3. Օրինակք բարևագրաց (Նամակագրական ձևեր).

Տպ. Կ. Պոլիս, 1752 թ.

Օրինակք բարևագրաց նորապէս շարադրեցեալ։

160 էջ (շարվ. 12.9×8 սմ)։ Անվանաթերթ չունի։ Բովանդակում է նամակի ձևեր և շարադրության գործնական վարժություններ (էջ 1—143)։ Որպես հավելված՝ «Համառօտ դաւանութիւն ուղղափառ քրիստոնէի» *(սկ.* «Խոստովանիմք և հաւատամք», *էջ 144—149), բարոյախոսական մի չափածո (սկ.* «Միտ դիր գրոց զոր ինչ ասեն», *էջ 150), հայատառ հունարենով բնագրեր* («Հայր մեր», «Հաւատամք» *և* «Ողջոյն քեզ», *էջ 151—153), և ապա՝ չափածո հայերեն-թուրքերեն անխորագիր բառարան (սկ.* «Կըղզի անունն է՝ ատա», *էջ 154—160)։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Տպեցաւ գրքոյկս ողորմութեամբն Աստուծոյ՝ ի թվին Հայոց ՌՄԱ, և լմնցաւ ի նոյեմբերի վեց» (էջ 160)։*

Այլ տպ. Կ. Պոլիս, 1786 թ.

Օրինակք բարևագրաց նորապէս շարադրեցեալ։

168 էջ (շարվ. 13.1×8.3 սմ)։ Անվանաթերթ չունի։ Ունի նախորդ հրատարակության նույն հավելվածները, որոնցից բացի՝ չափածո հայերեն-թուրքերեն անխորագիր մի նոր բառարան ևս (սկ. «Առնել տալն է՝ ալտըրմագ», *էջ 155—166), որին հաջորդում է խրատաբարոյական մի թուրքերեն ոտանավոր (սկ.* «Նէրտէ գաւկա կեօրիւրսէն գաչ օրատան», *էջ 166—168)։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Տպեցաւ գրքոյկս ողորմութեամբն Աստուծոյ՝ ի թվին Հայոց ՌՄԼԵ, և լմնցաւ ապրիլի Բ» (էջ 168)։*

Այլ տպ. Կ. Պոլիս, 1807 թ.

Օրինակք բարևագրաց նորապէս շարադրեցեալ։

148 էջ (շարվ. 12×7.6 սմ)։ Անվանաթերթ չունի։ Ունի նախորդ հրատարակության հավելվածները. բայց այստեղ, «Համառօտ դաւանութ՛ւն»*-ից հետո, կա նաև խրատաբարոյական մի անխորագիր ոտանավոր՝ սկ.* «Միտ դիր գրոց զոր ինչ ասեն՝ և խոկալով ի միտ առ» *(էջ 127—128)։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Տըպեցաւ գրքոյկս ողորմութեամբն Աստուծոյ՝ ի թուին Հայոց ՌՄԾԶ, և կատարեցաւ ի փետրվարի ԺԲ» (էջ 148)։*

Այլ տպ. Կ. Պոլիս, 1827 թ.

Օրինակք բարեագրաց նորայէս շարադրեցեալ:

148 էջ (չափ. 12.5×7.6 սմ)։ Անվանաթերթ չունի։ Շարվածքով, էջ առ էջ, և բովանդակությամբ նույն է նախորդ հրատարակության հետ։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Տպեցաւ գրքոյկս ողորմութեամբն Աստուծոյ՝ ի թուին Հայոց ՌՄՀԶ, և կատարեցաւ ի յունիսի ԺԴ» (էջ 148)։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8213 (էջ 1ա—32ա), № 8216 (էջ 7ա—220բ)։

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1. Համառօտ իմն մեկնութիւն յաղագս տրամաբանութեան, արարեալ ի Պաղտասար դպրէ Կոստանդնուպօլսեցւոյ. «Տրամաբանութիւնն յունարէն ասի դիալիքդիկէ որ է ասել երկուց ասացուած. զի այն է տրամաբանութիւնն որ մի ոմն հարցանէ և մի ոմն պատասխանէ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2216, էջ 126ա—140ա։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1650 (էջ 141ա—169ա), № 2215 (էջ 90ա—108բ), № 2216 (էջ 126ա—140ա), № 2835 (էջ 108բ—123բ), № 3136 (էջ 2ա—20բ), № 3351 (էջ 1ա—9բ, վերջից թերի), № 3638 (էջ 110ա—147բ), № 4511 (էջ 1ա—15բ), № 6006 (էջ 49ա—83ա)։ Ձեռագրերում հաճախ խորագրված է՝ «Յաղագս տրամաբանութեան»:

Ըստ Մկ. Պոտուրյանի՝ Բաղդասարի այս երկը հրատարակված է 1822 թ. Կալկաթայում[1], բայց, ինչպես նկատում է Հ. Դավթյանը, «այս թվականին հրատարակված լինելը կասկածելի է, որովհետև ըստ տեղեկությունների Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի տպարանը բացվել է 1823—1824 թթ.»[1]։

2. Մեկնութիւնք խրթնաբանութեանցն տիրացու Պաղտասարին այս է իրաւապէս. «Նախ որ ասէ թէ՝ զօրեղ կապոյն՝ որ է սէրն. այլ իմն են կենդանականն սեռի. որք են չունք...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8638, էջ 158ա—188բ։

Տես նաև հաջորդը (§ 3).

3. Եւ դարձեալ մեկնութիւն ըստ յառաջնոյն կերպի օրինակացն. «Ամուռն. այսինքն որ է երկարքն. ի ծայրագոյն կակղէն, այսինքն որ է ջուրն, որ քան զջուրն կակուղ չեկայ (sic)...», անդ, էջ 188բ—192ա։

Վերջում՝ «Վերջ մեկնութեան խրթնաբանութեան»։

Այս և նախորդ բնագրերը միասին տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6006՝ խոր. նույն (էջ 83բ—106բ)։ Հմմտ. նաև նույն մատ. ձեռ. № 879՝ «Խրթնաբանութիւնք ոմանք ըստ շարադրութեան և իմացք բարոյականք վասն եղբարց ոմանց շարադրասիրաց, ի տիրացու Պաղտասարէ» (էջ 123ա—124բ, սկ. «Որք զզօրեղ կապոյն չծանեան զնաշումն, են թէպէտ և ասին ի բանեացն հաշվի (sic) ոչ արտեղեալ սակայն այլ իմն են ի կաւարուն տեսակէ կենդանականն սեռի որոց հաշումն է ուրոյն...»):

4. Յաւելցի և առաջիկայս համառօտեալ ի չնչնոյս, ի բանից նոյնոյ Դաւթի սրբոյ փիլիսոփայի ի Մեկնութենէն Պորփիւրի, թէ վասն էր հինգ են ընդհանուր ձայնքն՝ և ոչ աւելի կամ պակաս. և ցուցանի ի բաժանմանէ ըստ այսմ եղանակի. «Ձայն երկակի է՝ յօդեալ և անյօդ: Երկաճանչիւրն դարձեալ երկակի՝ կա՛մ նշանական, կա՛մ աննշան...», տես՝ Սիմեոն Ջուղայեցի, «Գիրք տրամաբանութեան», Կ. Պոլիս, 1728, հավելված՝ էջ 55—56։

Համառոտություն է Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի»

---

1 Բազմավէպ, 1912, էջ 336։ Նկատի ունի հետևյալը, որ մենք չենք տեսել. «Համառօտ մեկնութիւն Տրամաբանութեան, որ՛ ըստ Յունաց ասի Տիալիքթիկէս: Կալկաթա, ի տպ. Մարդասիրական ճեմարանի, 1822», հմմտ. Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 319։

1 Հ. Դավթյան, «Հայ գիրքը 1801—1850 թվականներին», Երևան, 1967, էջ 105—106։

երկի Բ պրակից. Համմտ. «Դավթի անհաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք», Բ տպ., Վենետիկ, 1932, էջ 161—162։

Այլ տպ. Յաւելցի ևն. «Զայն երկակի է...», *տես՝ Սիմեոն Ջուղայեցի, «Գիրք տրամաբանութեան», Կ. Պոլիս, 1794, էջ 274—275։*

□ *Բաղդասար դպիրը 1728 թվին հրատարակելով Սիմեոն Ջուղայեցու «Գիրք տրամաբանութեան»-ը և նրան կցելով իմաստասիրական երկու ուրիշ բնագրեր, իր կողմից ավելացրել է մի վերջաբան, որն սկսվում է հետևյալ խոսքերով.* «Եւ արդ գիտելի՛ է, զի գիրս այս Տրամաբանական՝ ո՛չ է ըստ ինքեան գիրք իմն յատուկ բնաբանական, այլ՝ է՛ մեկնութիւն և դուռն գրոցն Պորփիւրի և Արիստոտէլի»[1]։

Այս վերջաբանն առանձին ընդօրինակված գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 1964 ձեռագրում՝ «Յաղագս տրամաբանութեան, արարեալ Պաղտասար դպրի» *(էջ 115ա—115բ)։*

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ

1. Շահաւէտ.

Տպ. Կ. Պոլիս (1715 և 1725 թթ. միջև).

[Գրգուկս Շահաւէտ, ունի յինքեան բազում ինչ հաւաքեցեալ աստի և անտի. յաղագս օգտի որոց միտս ունին և լսելիս։

Տպեցեալ կարողութեամբ Աստուծոյ, ի հայրապետութեանն սրբոյն էջմիածնի՝ տեառն Աստուածատրոյ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Գրիգորի շնորհազարդ եպիսկոպոսի։ Ի հռչակաւոր մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի։ Հրամանաւ նորին առաջնորդի՝ տեառն Յօհաննիսի աստուածաբան վարդապետի]։

Այս հրատարակությունից որևէ օրինակ հայտնի չէ մեզ։ Նրա մասին գիտենք միայն հաջորդ հրատ. տվյալներից։ Անվանաթերթի ճշգրիտ պատկերը հայտնի դարձավ նույնից արտագրված մի ձեռ. օրինակից, որը գտնըվում է Երևանի Պատմության թանգարանի գրադարանում (ՀՆ. 741)։ Սույնի առաջին տպագրություն լինելու ապացույցն այն է, որ այստեղ բացակայում են Բ տպագրության անվանաթերթին հատուկ հավելումները՝ «յառաջ քան զայս» և «իսկ այժմ նորապէս տպեցեալ...»։

Ձեռագրից չի երևում, թե քանի՛ էջ է ունեցել տպագիրը։ Ձեռագիրն ունի 69 թերթ կամ 138 էջ։

Այլ տպ. Կ. Պոլիս (1749 և 1751 թթ. միջև).

(Առաջին էջում) Գրգուկս Շահաւէտ, ունի յինքեան բանս ինչ հաւաքեցեալ աստի և անտի. յաղագս օգտի որոց միտս ունին և լսելիս։

(Երկրորդ և երրորդ էջերում) Տպեցեալ կարողութեամբն Աստուծոյ յառաջ քան զայս, ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի՝ տեառն Աստուածատրոյ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց։ Ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Գրիգորի շնորհազարդ եպիսկոպոսի։ Ի հռչակաւոր մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի։ Հրամանաւ նորին առաջնորդի՝ տեառն Յօհաննիսի աստուածաբան վարդապետի։ Իսկ այժմ նորապէս տպեցեալ ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի՝ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի։ Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ տեառն Յակոբայ սրբազան եպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի։ Հրամանաւ նորին վերադիտողի՝ տեառն Մինասայ սրբազան եպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի։ Ծառայ ծառայից տեառն Պաղտասար չնչին դպիր Կեսարեան, Կոստանդնուպօլսեցի։

96 էջ (չափ. 12.8×7.4 սմ)։ Վերջում՝ տպագրության հիշատակարանում կարդում ենք.

«Փառք... որ ետ կարողութիւն ողորմութեամբն իւրով՝ մերոյս նուաստութեան, տպել և ի լոյս ածել զփոքրիկ տետրակս շարադրեցեալ ի տկարացու Պաղտասար դպրէ

---

[1] Տես՝ «Գիրք տրամաբանութեան, Սիմէոնի Ջուղայեցւոյ գերիմաստ վարդապետի արարեալ», Կ. Պոլիս, 1728, էջ 292—295։

աւելի քան վերեսուն ամս յառաջ քան զայս և տպեցեալ, և կոչեցեալ ի շահողացն Շահաւէտ։ Իսկ այժմ նոր եղև տպեալ բղձանօք և արդեամբ տէր Ղուկասի որդի տիրացու Գասպարին։ Ի տպարանի հանգուցեալ մահտեսի Աստուածատուրին և որդւոյ նորին՝ գիտնոց ծառայ տիրացու Յօհաննիսիս» են[1]։

Բաժանված է հետևյալ գլուխների.

Տեսութիւն վասն հաւատոյ։
Յաղագս յուսոյ։
Յաղագս սիրոյ։
Յաղագս առաքինութեան։
Յաղագս եօթն պարգևաց Հոգւոյն սրբոյ։
Յաղագս ինն երանութեանց։
Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ։
Յաղագս մեղաց։
Յաղագս զղջման։
Խրատ խոստովանահարց։
Դարձեալ խրատ համառօտ վասն կատարելոյ զեկեղեցւոյ սուրբ խորհուրդսն։

Վերջում՝ երկու ճառեր Եփրեմ Խուրի Ասորւոյ։

2. Կրթութիւն քրիստոնէական.

Տպ. Կ. Պոլիս, 1742 թ.

Պու գիրք օլտուրքի քրիստոնէական հավատքըմըզա իգթիզալը կերէք օլան պիր գաչ էօյրէնիլէնէքլէր՝ հայճա պիլմէյէն քրիստոնեայ եղբայրլարըմըզ իչին թիւրքճէ շարադրել օլունտու, վէ ատընը Կրթութիւն քրիստոնէական տէտիք։ [Կ. Պոլիս, 1742]։

192 էջ (շարվ. 12.9×7.5 սմ)։ Բովանդակում է, հայատառ թուրքերենով, կրոնաբարոյական գիտելիքներ և խրատներ (էջ 3—175), հետո՝ գիտելիքներ հայկ. տոմարի և տոնացույցի մասին՝ առանց հատուկ վերնագրի (էջ 175—191)։ Տոմարագիտական մասում հիշատակվում է գրքի տպագրության թվականը՝ «Նիճէքի պու եըլ՝ Հայոց թվական՝ 1191 տիր» (ինչպես որ այս տարին հայոց թվականով 1191 է), «պու եըլ՝ քի Հայոց թվական պին իւզ տօգսան պիր տիր» (այս տարին, որ Հայոց թվականով հազար հարյուր իննսուն մեկ է)։ Գրքի վերջում կա հեղինակի հետևյալ հիշատակագրությունը. «Աչ կեօզինիւյ պիլ եօլունու, |Աղնա սաղընը սօլունու.|Անղ պիր խայըր տուվա իլէ|Պաղտասար հագիր գուլունու»։

Այլ տպ. Կ. Պոլիս, 1777 թ.

Պու գիրք օլտուրքի քրիստոնէական հաւատքըմըզա իգթիզալը կերէք օլան պիր քաչ էօյրէնիլէնէքլէր՝ հայճա պիլմէյէն քրիստոնեայ եղբայրլարըմըզ իչին թիւրքճէ շարադրել օլունտու, վէ ատընը Կրթութիւն քրիստոնէական տէտիք։ [Կ. Պոլիս, 1777]։

192 էջ (շարվ. 13.2×7.3 սմ)։ Ինչպես էջերի քանակով, այնպես էլ բովանդակությամբ և ամեն ինչով նման է նախորդ հրատարակությանը։ Տարբեր է միայն թվականը՝ «Նիճէքի պու եըլ՝ Հայոց թվական՝ 1226 տըր» (ինչպես որ այս տարին Հայոց թվականով 1226 է), «պու եըլ՝ քի Հայոց թվական պին իքի իւզ իկիրմի ալթը տր» (այս տարին, որ Հայոց թվականով հազար երկու հարյուր քսան վեց է)։

Այլ. տպ. Կ. Պոլիս, 1816 թ.

Կրթութիւն քրիստոնէական պաշտօնի։ Յօրինեալ ի հոգելոյս Պաղտասար պատուելի վարժապետէ ի Տաճկաց բարբառ։ Ի հայրապետութեան սրբոյ գահին էջմիածնի՝ տեառն Եփրեմայ քրիստոսապսակ կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ սրբոյ աթոռոյն Երուսաղեմի՝ տեառն Թէոդորոսի երջանկազարդ պատրիարքի։ Հրամանաւ կայսերապսակ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ պատրիարք՝ տեառն Պօղոսի աստուածաբան արք եպիսկոպոսի։ Վերստին տպագրեալ։ Յամի տեառն **1816** և ի մերում թուականի ՌՄԿԵ։ Ի տպարանի մահտեսի Մարտիրոսի Վանեցւոյ, որ ի Վեզիր խանն։

192 էջ (շարվ. 13.2×7.3 սմ)։ Բովանդակությամբ և ամեն ինչով նման է նախորդ հրատարակությանը։ Տարբեր են միայն անվանաթերթը և էջերի շրջագիծը կազմող զարդանշերը։ Տոմարագիտական մասում թվականի վերաբերյալ ասվում է. «Նիճէքի պու եըլ՝ հայոց թվական՝ 1265 տըր» (ինչ-

---

[1] Տպագրության տարեթիվ չկա նշված ինչպես անվանաթերթում, այնպես և տպագրության հիշատակարանում. Գ. Զարբհանալյանի մոտ տպագրության տարեթիվ նշանակված է 1750 թ., չգիտենք ի՛նչ հիման վրա, տես՝ «Հայկական մատենագիտություն», էջ 511։

պես որ այս տարին Հայոց թվականով 1265 է), «պու եըլ՝ քի հայոց թվական պին իքի իւզ ալթմշ պէշ տիր» (այս տարին, որ Հայոց թվականով հազար երկու հարյուր վաթսուն հինգ է):

Այլ տպ. Կ. Պոլիս, 1816 թ.

Պու գիրք օլտուրքի քրիստոնէական հաւատքըմըզա իգթիզալը կերէք օլան պիր գաչ էօյրէնիլէճէքլէր՝ հայճա պիլմէյէն քրիստոնեայ եղբայրլարըմըզ իչին թիւրքճէ շարադրել օլունտու, վէ ատընը Կրթութիւն քրիստոնէական տէտիք: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ տեառն և տեառն Եփրեմի աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Թէոդորոսի ճգնազգեաց արք եպիսկոպոսի: Վեհափառ հրամանաւ տեառն Պօղոսի սրբազան արհի եպիսկոպոսի՝ բարեջան և ազգասէր պատրիարգի թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ: Ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի, ի Քիւրքճի խանն, ի Կոստանդնուպօլիս, 1816:

170 էջ (շարվ. 13.4×8.2 սմ): Բովանդակությամբ նույնն է նախորդ հրատարակությունների հետ:

Այլ տպ. Կ. Պոլիս, 1820 թ.

Պու գիրք օլ տուր քի քրիստոնէական հաւատքըմըզա իգթիզալը կերէք օլան պիր գաչ էօյրէնիլէճէքլէր՝ հայճա պիլմէյէն քրիստոնեայ եղբայրլարըմըզ իչին թիւրքճէ շարադրել օլունտու, վէ ատընը Կրթութիւն քրիստոնէական տէտիք: Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի՝ տեառն և տեառն Եփրեմի աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի՝ տեառն Գաբրիէլի ճգնազգեաց արք եպիսկոպոսի: Հրամանաւ տեառն Պօղոսի արք եպիսկոպոսի՝ բարեջան և ազգասէր պատրիարգի: Ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, որ ի Քիւրքճի խանն, ի Կոստանդնուպօլիս, 1820:

170 էջ (շարվ. 13.4×8.2 սմ): Շարվածքով նույնն է նախորդ հրատարակության հետ:

Այլ տպ. Կ. Պոլիս (Օրթագյուղ), 1843 թ.

Կրթութիւն քրիստոնէական: Պու քիթապ քրիստոնէական հաւատքըմըզա իքթիզալը օլան պիրգաչ էօյրէնիլէճէքլէր՝ հայճա պիլմէյէն քրիստոնեայ եղբայրլարըմըզ իչին թիւրքճէ շարադրել օլունտու: Վերստին տըպեալ ի պատրիարգութեան թագաւորեալ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ՝ տեառն Աստուածատրոյ ամենապատիւ և վեհափառ արքեպիսկոպոսի: Յօրթագիւղ, ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1843—ՌՄՂԲ:

160 էջ (շարվ. 11.7× 7 սմ): Բովանդակությամբ նույնն է նախորդ հրատարակությունների հետ:

ՉԱՓԱԾՈ ԵՐԳԵՐ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ

Տաղարան Ա=*Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց և այլ: Ի Պաղտասար դպրէ ի վերայ զանազան գունոց:*

136 էջ (շարվ. 8×5.5 սմ): Բովանդակում է 61 տաղեր: Տպագրության հիշատակարան չունի:

Տաղարան Բ=*[Տաղարանիկ]:*

112 էջ (շարվ. 8×5.5 սմ): Կազմակից է նախորդին (Տաղարան Ա-ին) և առանձին անվանաթերթ չունի: Ինչպես շարվածքով, այնպես էլ զարդերով ու ձևավորմամբ նման է նրան: Բովանդակում է 62 տաղեր: Վերջում՝ տպագրության հիշատակարանը.

«Եւ արդ՝ փոքրիկ իմն Տաղարանիկս՝ որ ունի տաղս ԿԲ, տպեցաւ կարողութեամբն Աստուծոյ՝ ի տպարանի Յօհաննիսի և Յակոբայ. ի թվին 1217 ի փառս միոյն Աստուծոյ: Ծառայ ծառայից Աստուծոյ՝ Պաղտասար պարտաւոր դպիր»[1]*:*

Տաղարան Գ=*Տաղարան փոքրիկ: Պաղտասար դպրի ասացեալ զանազան գունով:*

128 էջ (շարվ. 8×5.5 սմ): Ինչպես շարվածքով, այնպես էլ զարդերով ու ձևավորմամբ նման է երկու

---

1 Այս տաղարանի Ա տպագրությունը, որ մենք չենք տեսել, եղել է 1723 թվականին նույն վայրում, հետևյալ հիշատակարանով. «Եւ արդ՝ փոքրիկ իմն Տաղարանիկս՝ որ ունի տաղս ԿԲ. տպեցաւ կարողութեամբն Աստուծոյ ի տպարանի մահտեսի Գրիգորին, ի թուին 1172 ի փառս միոյն Աստուծոյ: Ծառայ ծառայից Աստուծոյ՝ Պաղտասար պարտաւոր դպիր», հմմտ. Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 659: Այս տպագրությունը հիշատակում ենք «1723 թ. տաղարան» անունով և նրա նյութերը նշում՝ Մկ. Պոտուրյանի տված նկարագրության հետևողությամբ (Բազմավէպ, 1912, էջ 338—339):

նախորդներին (Տաղարան Ա և Բ) և հաճախ կազմակից է նրանց։ Բովանդակում է 62 տաղեր, որոնց թիվը սխալ համարակալումով հասել է 64-ի։ Վերջում՝ տպագրության հիշատակարանը.

«Տպեցաւ փոքրիկ տաղարանս ի հայրապետութեան սրբոյ էջմիածնի՝ տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի՝ և Կոստանդնուպօլսի՝ տեառն Պօղոսի և տեառն Գրիգորի սրբազան և աստուածաբան վարդապետացն։ Ի տպարանի Յօհաննիսի և Յակոբայ։ Ի թուին 1217ին։ Ապր. 12»[1]։

Տաղարան Դ=Տաղարան փոքրիկ։ Զանազան գունով ասացեալ ի Պաղտասար դպրէ, արդէն առ տէր հանգուցելոյ։ Որոյ զհոգին տէր Աստուած լուսաւորեսցէ։ Ամէն։

148 էջ (շարվ. 8×5.7 սմ)։ Բովանդակում է 83 տաղեր, որոնք «Տաղարան Բ»-ից և «Տաղարան Գ»-ից են։ Տպագրության հիշատակարան չունի։ Հ. Քյուրտյանի ունեցած օրինակն այս հրատարակությունից է (Հմմտ. § 21 տաղի ծանոթագրությունը)։ Վերջում սրան կցված է հաջորդը (Տաղարան Ե)։

Տաղարան Ե=Տաղիկներ սիրոյ և կարօտանաց և այլ։

110 էջ (շարվ. 8×5.7 սմ)։ Առանձին անվանաթերթ չունի։ Տպակից է նախորդին (Տաղարան Դ-ին) և ինչպես շարվածքով, այնպես էլ զարդերով ու ձևավորմամբ նման է նրան։ Վերոնշյալ խորագիրը գտնվում է առաջին էջի վրա։ Բովանդակում է 61 տաղեր։ Բովանդակությամբ նույն է «Տաղարան Ա»-ի հետ։ Տպագրության հիշատակարան չունի։

Տաղարան Զ=Պաղտասար դպիր։ Տաղիկներ սիրոյ և կարօտանաց։ Հրատարակության պատրաստեցին Շուշանիկ Նազարյան և Աստղիկ Մնացականյան։ Երևան, 1958։ (Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատուն—Մատենադարան)։

286 էջ (շարվ. 17×10.9 սմ)։ Հրատարակիչների նախաբանով և ծանոթագրություններով։ Բովանդակում է 64 տաղեր և այլ քերթվածներ։ Քննական հրատարակություն է։

Գիրք պարապմանց=Գիրք պարապմանց [Կիւրղի Աղեքսանդրացւոյ]։ [Կ. Պոլիս, 1717]։

[1] Այս տաղարանի Ա տպագրությունը, որ մենք չենք տեսել, եղել է 1734 թվականին նույն վայրում, հետևյալ հիշատակարանով. «Տպեցեալ փոքրիկ Տաղարանս... ի տպարանի Կարապետի որդւոյ Աստուածատուրի։ Ի Կոստանդնուպօլսի։ Ի թուին 1183ին։ Յուլիսի 31», հմմտ. Ա. Ղալայճյանի տված նկարագրությունը, Սիոն, 1969, էջ 165։ Հմմտ. նաև Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 659։ Այս տպագրությունը հիշատակում ենք «1734 թ. տաղարան» անունով և նրա նյութերը նշում՝ ըստ Մկ. Պոտուրյանի տված նկարագրության (Բազմավէպ, 1912, էջ 338—339)։

Ջենոր=Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Ջենոր։ [Կ. Պոլիս, 1719]։

Գիրք աղօթից=Գիրք աղօթից Գրիգորի Սկեւռացւոյ գիտնական վարդապետի...։ Ի Կոստանդնուպօլիս քաղաքի... ի տպարանի մահտեսի Աստուածատուրի. ի թուին Հայոց ՌՃՂԱ, մարտի քսան։

Հայ էջեր=Արշակ Չօպանեան։ Հայ էջեր։ Մեր նախնեաց բանաստեղծութիւնն ու արուեստը։ Փարիզ, տպ. Կ. Ներսէսեան, 1912։

Հատուածներ = Հատուածներ միջնադարեան հայ բանաստեղծութիւնից։ Թիֆլիս, 1916։

Տեղեկագիր=Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի։ № 2։ Երևան, 1927։

Աշխ. գրակ.=XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն։ Ընտիր նմուշներ։ Կազմեց Մ. Մկրյան։ Երևան, 1938։

Ընտիր էջեր=Ընտիր էջեր հայ գրականության, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, խմբագրությամբ Գրիգորյան Հրաչյայի, Զարյան Նայիրու...։ Երևան, ՌՋԽԶ (1946)։

Մարգարիտներ=Մարգարիտներ հայ քնարերգության։ Հատոր առաջին։ Հնագույն շրջանից մինչև ԺԸ դար։ Երևան, 1971։

Ա. ՏԱՂԵՐ

1. Յորդորակ. «Անա զարունն եկեալ է–հաս,|Արի պիւպիւլ լեր զուարճաղէմ...», տես՝ «Տաղարան Գ», էջ 110—112։

Գրված է որպես հորդորակ «Սիրով սիրեցելոյդ» տաղի (§ 156)։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 139—141։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 128—129։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7701 (էջ 66բ—67ա)։

2. Առ. Սուրբ էջմիածին մայրն եաւատոյ Հայաստան երկրի. «Անեղ զօշմամբ ուռն ի ձեռին.|Իջեալ որդին եօր միածին...», տես՝ «Տաղարան Գ», էջ 74—75։

Սույնի որպես հորդորակ է գրված «էմմանուէլ աստուած Հօր Բան» տաղը (§ 49)։

Այլ տպ. (խոր նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 69—71։

☐ Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7159 (էջ 86—89), № 7701 (էջ 69ա—69բ)։

3. Դարձեալ առ կոյսն տիրածին: Ողոբեալ գունով. «Ամենայն որ սիրիցէ|Ըզքեզ իմոյ սիրոյս նըման...», *տես՝ «Տաղարան Գ», էջ 51—52:*

Սույնի հորդորակն է՝ «էական լուսոյն կրող» (§ 48):

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 47—48:

☐ *Տես նաև 1734 թ. տաղարանը: Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7701 (էջ 7ա), № 10253 (էջ 78բ—79ա):*

4. *(Անխորագիր)* «Այ իմ աչաց լոյս գովելի|Մի՛ մոռանար զիս քո գերիս...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 14—15:*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 12—14:

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 75—77:

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 4ա—4բ), № 8735 (էջ 31բ—32ա):*

Տաղի ռուս. թարգմ. „Свет моих очей" (*թարգմանիչ՝* Н. Гребнев), *հետևյալ գրքում.* „Армянская средневековая лирика" (Библиотека поэта, основана М. Горьким. Большая серия. Второе издание), Советский писатель—Ленинградское отделение, 1972, стр. 345—346.

5. Ծաղկազարդին. «Այսօր բազմեալն ի քերոբէս անտեսն էից,|Նըստի ի յէշ և յաւանակ խոնարհութեամբ...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 7—8:*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 12—13:

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը:*

6. Տաղ Տեառնընդառաջին. «Այսօր ի տաճարն ի յընծայումն եկեալ,|Անպարագրելին ի յամենայն էից...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 6—7:*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 9—10:

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը:*

7. Տաղ Ջրօրհնեաց. «Այսօր մաքրիչն ամենեցուն ի Յորդանան գայ մկրտիլ.|Աստիս ձեզ արարածք ամենեքեան...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 4—5:*

Այլ տպ.—Տաղ Ջրօրհնեաց, *տես՝ «Տաղարան Գ», էջ 6—8:*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 6—8:

☐ *Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները:*

8. *(Անխորագիր)* «Անդադար և միշտ գոհութիւն|Քեզ կենարար կեցուցիչ...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 73—74:*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 66—67:

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 17ա—17բ), № 8735 (էջ 44բ):*

9. Երգ պաղատանաց առ Հայրն երկնաւոր, Պաղտասար մեղաւոր դպրի ասացեալ. «Անեղ Աստուած և անսահման,|Հայր անըսկիզբն և անվախճանն...», *տես՝ «Գիրք աղօթից», էջ 188—189:*

10. Դարձեալ ի նոյն միտ.[1] «Անկեալ ի ձեռս աւազակաց խոցեցայ գերիս,|Ահա վասն այն աղաղակեմ, հառաչեմ և լամ...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 28—29:*

Այլ տպ.—Դարձեալ ի նոյն միտ, *տես՝ «Տաղարան Գ», էջ 37—38:*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 33—35:

☐ *Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները: Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7701 (էջ 62ա—62բ):*

11. *(Անխորագիր)* «Անձն իմ առ քեզ աղաղակէ, ո՛վ բըժիշկ հոգւոյ իմոյ,|Թըշնամին զիս յոյժ խոցոտեաց, ժա՛մ է ինձ ողորմելոյ...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 66—68:*

Այլ տպ.—Առ փրկիչն իմ, *տես՝ «Տաղարան Բ», էջ 22—24:*

[1] *Նախորդ տաղը խորագրված է՝* «Առ եղկութիւն հոգւոյս»:

Այլ տպ.—Առ փրկիչն իմ Յիսուս, *տես՝ «Տաղարան Դ», էջ 22—24։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 60—62։

☐ *Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № 597 (էջ 202ա—202բ), № 4226 (էջ 77բ—78ա), № 4285 (էջ 151բ—152ա), № 7159 (էջ 22—25), № 7701 (էջ 15ա—16ա), № 7710 (էջ 15բ—16ա), № 8735 (էջ 43ա—43բ)։

12. Սփոփանք վշտացեալ ոգւոյ. «Անձն իմ ընդէ՞ր հառաչմամբ ի հոգ մըտաց վարանիս,|Կամ զի՞ ի խոր տըրտմելով ոգոց հանեալ տառապիս...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 80—81։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 115—116։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 138։

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը։*

13. Դարձեալ առ տաճարն երկնանման [առ Աստուածամայրն]. «Անճառին խորան, անճառին խորան,|Անեղ Հօր բանին բանաւոր բնակարան...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 74—75։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ Տաղարան Դ», էջ 111—112։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № 4426 (էջ 108ա—108բ)։

14. Բան ներբողեան առ սուրբն Կիւրեղ։ Առ երջանկազարդ սուրբ հայրըն Կիւրեղ, փայլեալն ի մարմնի որպէս ըզբիւրեղ. «Աստուածաձայն հօտին հովիւ սրբազան,|Վերադիտող անքուն ակամբ արթնական...», *տես՝ «Գիրք պարապմանց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղէքսանդրու հայրապետի», Կ. Պոլիս, 1717, էջ 518—522։*

Տների սկզբնատառերը՝ «Առ սուրբն Կիւրեղ եպիսկոպոս Աղէքսանդրի»։

Սույն ներբողականին որպես վերջաբան է գրված հետևյալը.

— Դարձեալ ի սոյն փոքրիկ ճառիս, քեզ ի դըրւատ խօսեալ տառիս, ցուցցի անուն անպիտանիս, սըրբոյդ անուան երգաբանիս. «Ո՞վ երջանիկ տէր սուրբ Կիւրեղ Իմաստաբան,|Ցանկ տիրաշէն քաղաք ամուր՝ որմ անսասան...», *անդ, էջ 523։*

Տողերի միջից հավաքված որոշ տառեր հոդում են՝ «Ոտից քոց հող և մոխիր Պաղտասար չընչին դըպիր»։

15. Երգ ներբողական առ սուրբն Յօհան Ոսկիբերան, ի Պաղտասար չնչին դպրէ. «Արգոյ մըշակ մըշտավաստակ յարահետ,|Քաջ երկրագործ գերան դանդաղ և անյետ...», *տես՝ Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յոհաննու», Կ. Պոլիս, 1717, էջ 976—978։*

Տների սկզբնատառերը՝ «Առ սուրբն Յօհան Ոսկիբերան»։

Սույն ներբողականին որպես վերջաբան է գրված հետևյալը.

— Ընդ սոյն և այս համառօտ, ըստ տառից զովեցելոյ՝ զովերգողի. «Ոսկիբերան սըրբասըքնունդ կերպարան.|Ի մէջ երկրի առատ աղբիւր բանական...», *անդ, էջ 980։*

Տողերի միջից հավաքված որոշ տառեր հոդում են՝ «Ոսկիբերան վարդապետիդ չնչին ծառայ Պաղտասար»։

16. *(Անխորագիր)* «Արևս առնեմ երթամ, իմ սիրուն, ի յերկիր օտար, աւա՜ղ,|Շրջիմ ի լեռնէ լեռ, նազելի, լալով անդադար...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 6—8։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 5—7։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 68—69։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Մարգարիտներ», էջ 250։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ.* № 4285 (էջ 178բ—179ա), № 4335 (էջ 74ա—74բ), № 6588 (էջ 17ա), № 6998 (էջ 9բ), № 7670 (էջ 37բ—38ա), № 7673 (էջ 8ա—8բ), № 7710 (էջ 2ա—2բ), № 8735 (էջ 30ա—31ա)։

17. *(Անխորագիր)* «Արի իմ քաղցրիկ աղաւնի,|Ոսկի խընծոր (sic) զարմանալի...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 25—26։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 22—23։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 88—89։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3417 (էջ 86բ), № 4335 (էջ 65բ—66ա), № 4426 (էջ 77ա), № 5934 (էջ 21բ), № 5946 (էջ 10ա—10բ), № 6440 (էջ 8բ—9ա), № 6514 (էջ 23բ), № 6588 (էջ 18բ), № 6998 (էջ 83ա—83բ), № 7670 (էջ 35բ), № 7673 (էջ 6բ), № 7702 (էջ 51բ), № 7710 (էջ 6բ), № 8129 (էջ 36բ—37բ), № 8655 (էջ 16ա—16բ), № 8735 (էջ 34ա—34բ), № 9362 (էջ 15ա—15բ), № 9536 (էջ 15բ), № 9846 (էջ 45ա), № 10179 (էջ 41բ), № 10230 (էջ 35ա—39ա), № 10293 (էջ 5ա—5բ)։*

Թրք. թարգմանություններ.

ա. (Անխորագիր) «Գէլ պէնըմ տաթլի գէօգէրչըմ|Ալթուն էլմայ չեօհնէմ իչիւն...», *տես՝ «Տաղարան Զ», էջ 245։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5946՝* «Աւազ էշկիայ սեֆայի» *(էջ 10ա—10բ)։*

բ. (Անխորագիր) «Կեալ պէնըմ կիւզալ թաւուզըմ,|Ալթուն ալմայ սավտուճակըմ...», *տես՝ «Տաղարան Զ», էջ 245։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3417 (էջ 86բ)։*

18. *(Անխորագիր)* «Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,|Արի, հովիւ բարի, բարի...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 43—45։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 39—40։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4426 (էջ 63ա—63բ), № 7710 (էջ 10ա—10բ), № 7673 (էջ 8բ—9ա), № 8129 (էջ 35բ—36բ), № 8735 (էջ 37բ—38ա), № 9536 (էջ 11ա)։*

19. Երգ ուրախութեան. «Արիք որ երթամք|Սոխակաց երամք...», *տես՝ Մ. Միանսարյանց, «Քնար հայկական», Պետերբուրգ, 1868, էջ 373—374։*

Հրատարակիչն այս տաղը վերագրում է Բաղդասար դպրին (հմմտ. էջ XI), բայց մեզ կասկածելի է թվում։

Այլ տպ.—Արիք որ երթամք. «Արիք որ երթամք|Բիւլբիւլի երամք...», *տես՝ «Նոր ազգային երգարան» (կազմող՝ Պ. Թ. Հալլաճյան), Ռոստով, 1878, էջ 33։*

20. Դարձեալ նոյնոյ [Պաղտասար դըպրի]. «Աւա՛ղ անձինս թէ այս ո՞րքան խելագարեցայ,|Որ իմ կամաւս իմ թշնամոյն գերի վարեցայ, վարեցայ...», *տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 65ա—65բ։*

Տես նաև Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 1896 (էջ 131)։

21. Տաղ Աւետեաց. «Աւետիս քեզ կոյս՝ ձայնիւ զըւարթնոյն,|Լի շնորհօք հոգւոյն Մարիամ, ուրախ լեր բերկրեալ...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 1—2։*

Այլ տպ.— Տաղ սրբոյ կուսին, *տես՝ «Տաղարան Գ», էջ 3—4։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ»[1], էջ 3—4։

□ *Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։*

22. *(Անխորագիր)* «Աւէր քաղաք եղև անձն իմ ի թըշնամեաց պատերազմէն, աւա՛ղ,|Յորում և ո՛չ տեղի մի բնաւ...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 84—86։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 76—78։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 163—164։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 19բ—20ա), № 8735 (էջ 46բ—*

---

[1] *Այս հրատ. մեջ ևս տաղի սկ. նույն է* («Աւետիս քեզ կոյս, ձայնիւ զըւարթնոյն»), *բայց տաղերի 1958 թ. հրատ. կից տրված նկարագրության մեջ թյուրիմացաբար նշված է՝* «Աւետիս քեզ, կոյս Մարիամ» *(տես՝ «Տաղարան Զ», էջ 278, հմմտ. նաև էջ 267), իսկ այս թյուրիմացությունը տարակուսանք է առթել Հ. Քյուրտյանին (տես՝* Բազմավէպ, *1963, էջ 152)։*

47ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 156 (էջ 13ա)։

23. Դարձեալ առ Յիսուս Քրիստոս. «Բաժակարբու աշակերտացդ մաղթանօք,|Յիսուս փրկիչ, Հօր զօրութիւն, զօրացո՛ զիս...», տես՝ «Տաղարան Գ», էջ 32—33։

Այլ տպ. (խոր. նոյն), տես՝ «Տաղարան Դ», էջ 32—33։

☐ Տես նաև 1734 թ. տաղարանը։

24. (Անխորագիր) «Բարի եկիր, իմ պատուական սիրելի.|Բարի եկիր, իմ ինձ պիտան սիրելի...», տես՝ «Տաղարան Ա», էջ 41—43։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 37—39։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 107—108։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6588 (էջ 18ա), № 7673 (էջ 16բ—17ա), № 7689 (էջ 5ա—5բ), № 7710 (էջ 9բ—10ա), № 8083 (էջ 49բ), № 8129 (էջ 34ա—34բ), № 8735 (էջ 37ա—37բ), № 9536 (էջ 20ա—20բ), № 10230 (էջ 12բ—16ա), № 10293 (էջ 5բ—6ա)։

25. (Անխորագիր) «Բարկ արեղ ի շող ձեղունէն ցայտաբերեալ ծագեցար առ մեզ.|Ողջունելով ըզսիրելիդ երգաբանեմք...», տես՝ «Տաղարան Ա», էջ 39—41։

Այլ տպ.— Տաղ սիրոյ ի գալուստ սիրելւոյն, տես՝ «Տաղարան Գ», էջ 113—115։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 35—37։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 105—106։

☐ Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6998 (էջ 84ա—84բ), № 7701 (էջ 57ա—57բ), № 7710 (էջ 9բ), № 8735 (էջ 37ա)։

26. Նորին [Պաղտասար դպրի] երգ պաղատանաց առ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս. «Բարձրեալ Աստուած անզրենական,|Հօր միածին Որդի և Բան...», տես՝ «Գիրք աղօթից», էջ 189—190։

27. (Անխորագիր) «Բերանալիր քեզ գոհութիւն, որ արարիչդ ես արարածոց տէր իմ.|Որ արարիչդ ես արարածոց...», տես՝ «Տաղարան Ա», էջ 74—76։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 67—69։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 17բ—18ա), № 8735 (էջ 44բ—45ա)։

28. Նորին [Պաղտասար դպրի] երգ մաղթանաց առ սուրբ Հոգին ճշմարիտ. «Գանձ գիտութեան անհամեմատ,|Հոգիդ Աստուած աղբիւր առատ...», տես՝ «Գիրք աղօթից», էջ 190—191։

29. Տաղ ուրախութեան. «Գարուն գարուն հասեալ էհաս,|Ե՛կ, սիրելի, ուրախացի՛ր...», տես՝ «Տաղարան Բ», էջ 100—101։

Այլ տպ.— Դարձեալ գարնան, տես՝ «Տաղարան Գ», էջ 103—104։

Այլ տպ. (խոր. նոյն), տես՝ «Տաղարան Դ», էջ 133—134։

Այլ տպ.— Տաղ ուրախութեան, տես՝ «Տաղարան Զ», էջ 117—118։

Այլ տպ. (խոր. նոյն), տես՝ «Մարգարիտներ», էջ 246։

☐ Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 25բ), № 7673 (էջ 11ա—11բ), № 8064 (էջ 18բ), № 9117 (էջ 129ա), № 10293 (էջ 3ա)։

30. (Անխորագիր) «Գարունն եկեալ անուշ հովերն հընչեցին,|Սիրով վառեալ երեկ պիւլպիւլն ի յայգին...», տես՝ «Տաղարան Ա», էջ 20—21։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 18—19։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 82—83։

Այլ տպ.— Տաղ, տես՝ «Հայ էջեր», էջ 93։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տեղեկագիր», էջ 126։

Այլ տպ.— Տաղ, *տես՝ «Աշխ. գրականություն», էջ 277։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ Կ. Սասունի, «Գրական գոհարներ», Բեյրութ, 1949, էջ 325։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Մարգարիտներ», էջ 246—247։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4335 (էջ 65բ), № 5934 (էջ 24բ), № 6514 (էջ 23ա—23բ), № 6998 (էջ 82բ), № 7009 (էջ 3բ), № 7670 (էջ 19ա—19բ), № 7673 (էջ 11բ—12ա), № 7710 (էջ 5բ), № 7716 (էջ 39բ—40ա), № 8735 (էջ 33ա—33բ), № 9020 (էջ 11բ), № 10293 (էջ 2ա)։*

Տաղի ռուս. թարգմանությունը՝ „Пришла весна“ *(թարգմանիչ՝* С. Шервинский), **տես հետևյալ գրքում.** „Антология армянской поэзии с древнейших времен до наших дней“ (под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпотина), Москва, 1940, стр. 314. *Այլ տպ. տես հետևյալ գրքում.* „Армянская средневековая лирика“ (Библиотека поэта, основана М. Горьким. Большая серия. Второе издание), Советский писатель—Ленинградское отделение, 1972, стр. 347—348.

31. Դարձեալ առ կոյսն տիրածին։ Ոլորեալ գունով. «Գերագոյն մայր անապական, |Տաղաւար անտանելւոյն...», *տես՝ «Տաղարան Գ», էջ 44—45։*

Տաղը վերջում ունի հորդորակ, սկ. «Վիրօք մեղաց հարայ, ո՜վ կոյս» *(տես՝ § 164)։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 42—44։

□ *Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 34ա—34բ), № 7701 (էջ 10բ—11ա)։*

32. Առ սուրբն Սաղիմ. «Գերապայծառ ընտրեալ տեղի սուրբդ Սաղիմ Սիօն սըխրալի,|Քաղաք ըզքեզ տեառն Աստուծոյ պատուեալ գիտեմք որպէս և լըւաք...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 98—100։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Ե», էջ 90—92։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 23ա—23բ), № 8735 (էջ 50ա)։*

33. Առ եղկութիւն հոգւոյս. «Գերի եղկելի ողբալի, ո՜հ,|Յիրաւի՛ լալի եմ լալի...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 26—28։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 87—89։

□ *Տես նաև 1723 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6998 (էջ 62բ—63ա), № 7670 (էջ 37ա—37բ), № 7673 (էջ 9բ)։*

34. (Անխորագիր) «Գերիս գերեալ գոռամ գոչեմ,|Աղաղակեմ լամ հառաչեմ...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 88—90։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 81—82։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 144։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 21ա), № 8735 (էջ 47բ—48ա)։*

35. (Անխորագիր) «Դիմելս առ քեզ տաժանելիքս բողոքեմ արտասուելով,|Պատմեմ զանցանքս իմ ակամայ և օգնութիւն խնդրելով...», *տես՝ «Տաղարան Զ», էջ 168։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3751՝ «Բաղդասար» *(էջ 45ա, սկ.* «Դիմելս առ քեզ տաժանել[օ]քս»)։

36. Առ Երկոքին համաչան ամոլքն այժմուս Գ. և Յ. Ա. Վ. «Դիտօղք արքունք, մըտօք բարձունք,|Երկու ակունք լուսափայլունք...», *տես՝ «Տաղարան Բ», էջ 96—98։*

Նվիրված է Գրիգոր Շիրվանեցուն (Շղթայակիր) և Հովհաննես Կոլոտին։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Գ», էջ 99—101։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 128—130։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 147—148։

□ Տես նաև 1723 թ. տաղարանը։

37. (Անխորագիր) «Դու իմ սրտին պայծառ արև, սէր իմ, սէր իմ, աւա՜ղ.|Սիրով տամ քեզ հազար բարև, կարօտիմ քեզ դարև դարև...», տես՝ «Տաղարան Ա», էջ 29—30։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 25—26։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 92—93։

□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 7ա—7բ), № 8735 (էջ 35ա)։

38. Տաղ առ սուրբ կոյսն Աստուածածին: Ոլորեալ գունով. «Դու տիրածին յայն իմանալի արևուն լուսափայլեցար, տիրուհի, լուսափայլեցար.|Տենչալի ես, տարփալի ես, զի կարի յո՛յժ լուսափայլեցար...», տես՝ «Տաղարան Գ», էջ 42—43։

Սույն տաղի հորդորակն է. «Տիրուհի, տիրեցին ինձ...» (§ 168)։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 40—41։

□ Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 34բ—35ա)։

39. (Անխորագիր) «Ելի ի լուսագեղ վայրէն, յերանելեացըն երամէն,|Եղէ լալի ոչ ապաքէն, լուարուք ինձ լերինք...», տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 64բ։

Տես նաև Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 1896 (էջ 130)։

40. (Անխորագիր) «Ելի ի խընդրել ըզսէրն իմ,|Յուցել նըմա զսիրոյ վէրն իմ...», տես՝ «Տաղարան Ա», էջ 16—17։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 14—15։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 78—79։

□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 4բ), № 8735 (էջ 32ա—32բ)։

41. Դարձեալ առ Յիսուս Քրիստոս. «Եկի յերկիրս այս ախտալի,|Մածեալ մեղօք եղէ ողբալի...», տես՝ «Տաղարան Գ», էջ 31—32։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 31—32։

□ Տես նաև 1734 թ. տաղարանը։

42. Առ նոյն դարձեալ[1]. «Երանելի հովիւ ընտրեալ,|Հայոց Մեծաց լուսաւորիչ...», տես՝ «Տաղարան Գ», էջ 65—66։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 61—62։

□ Տես նաև 1734 թ. տաղարանը։

43. Առ զգայութիւնս մեր, և այլ մասունս. «Զարմանալով զարմացայ ես ի մըտի,|Զի բընաւ ինչ ձեզ նըման այլ ո՛չ գըտի...», տես՝ «Տաղարան Ա», էջ 112—114։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Ե», էջ 103—105։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 149—150։

Այլ տպ.—Տաղ առ զգայութիւնս մեր և այլ մասունս, տես՝ «Հայ էջեր», էջ 99։

□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 25բ—26ա), № 8274 (էջ 100բ—101բ)։

44. Առ ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցին. «Զինու հոգւոյն զինուորեցեալ ընդդէմ երից պատերազմողաց...», տես՝ «Տաղարան Գ», էջ 67—69։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 62—64։

□ Տես նաև 1734 թ. տաղարանը։

45. (Անխորագիր) «Զիս ի սէր քո կապելով միշտ՝ ի յայլ սիրոյ հեռացո՛|Լինիլ առ քեզ յար յանդիման՝ զմիտս իմ առ քեզ վերացո՛...» տես՝ «Տաղարան Ա», էջ 45—46։

Այլ տպ. (անխոր.) տես՝ «Տաղարան Ե», էջ 41—42։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Հայ էջեր», էջ 94—95։

---

1 Նախորդ տաղը խորագրված է. «Առ սուրբ Գրիգոր՝ լուսաւորիչն հոգւոց մերոց»։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6998 (էջ 61բ—62ա), № 7710 (էջ 10բ—11ա), № 8735 (էջ 38ա)։*

46. (Անխորագիր) «Զիս քո սիրոյն, ո՞վ նազելի, հովերն առեր կու մաղէ,|Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր զիս կու տաղէ...», *«Տաղարան Ա», էջ 2—4։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 1—3։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 63—65։

Այլ տպ.— Տաղ ի վերայ սիրոյ, *տես՝ Ար. Տևկանց, «Հայերգ», Թիֆլիս, 1882, էջ 81—82։*

Այլ տպ.— Տաղ սիրոյ, *տես՝ «Հայ էջեր», էջ 92—93։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Հատուածներ», էջ 10։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տեղեկագիր», էջ 124—125։

*Այլ տպ.—*Տաղ սիրոյ, *տես՝ «Աշխ. գրականություն», էջ 278։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Ընտիր էջեր», էջ 311—312։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ Կ. Սասունի, «Գրական գոհարներ», Բեյրութ, 1949, էջ 324։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Մարգարիտներ», էջ 247—248։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3417 (էջ 18բ—19ա), № 4285 (էջ 172ա—173ա), № 4296 (էջ 41ա—41բ), № 4335 (էջ 72բ—73ա), № 5292 (էջ 14ա—14բ), № 6440 (էջ 2ա—2բ), № 6588 (էջ 18բ). № 6998 (էջ 10ա—10բ), № 7670 (էջ 12ա), № 7673 (էջ 7բ—8ա), № 7710 (էջ 1ա—1բ), № 8255 (էջ 95ա—95բ), № 8274 (էջ 58ա—58բ), № 8701 (էջ 48բ), № 8735 (էջ 29ա—29բ), № 9020 (էջ 11ա), № 9536 (էջ 22բ—23ա), № 10239 (էջ 92ա—93ա), № 10293 (էջ 6ա—6բ)։ Տես դարձյալ Վիեննայի* **Մխիթ.** *Մատ. ձեռ. № 1042 (էջ 477ա, սկ.* **«Զիս վասն սիրոյն ո՞վ նազելի»**)։

Տաղի ֆրնս. թարգմանությունը՝ „Chanson“ *տես հետևյալ հրատ. մեջ.* A. Tchobanian, „La Roseraie d'Armenie“, t. II, Paris, 1923, p. 273։

47. Այլ տաղ Բաղտասար (sic) դպրէ. «Զօրեղ փրչումն յուժգին հողմոյ|եկն ի լերանց հիւսիսոյ.|Հարան համայն ծառքն ի տապոյ...», *Արվեստի և Գրականության Թանգարան, Հայ աշուղների ֆոնդ, № 46, էջ 26—27։*

48. Յորդորակ. «էական լուսոյն կրող աններման կոյս.|Անպարագիր անտանելոյն օթարան կոյս, կոյս...», *տես՝ «Տաղարան Գ», էջ 52—53։*

Գրված է որպես հորդորակ «Ամենայն որ սիրիցէ» *տաղի (§ 3)։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 48—49։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7701 (էջ 7ա—8ա)։*

49. Դարձեալ վերաբերումն առ նոյն ըստ յորդորակի. «Էմմանուէլ Աստուած Հօր Բան, ծագումն աններման,|Որ գըթացար ի Հայաստան...», *տես՝ «Տաղարան Գ», էջ 76—77։*

Տես վերևում էջմիածնին նվիրված տաղը. «Անեղ գոչմամբ» *(§ 2)։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 71—73։

☐ *Տես նաև 1734 թ. տաղարանը։*

50. (Անխորագիր) «Ըզքեզ ի միտ բերեալ ողբամ որ հեռացար դու յինէն.|Արժանապէս արգամ կոծամ, զըրկեցայ զի ես ի քէն...», *տես՝ «Տաղարան Ա», էջ 47—48։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 42—44։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 11ա), № 8735 (էջ 38բ)։*

51. Յարութեանն. «Թաղեալ մարմնով օծեալ փրկչին իւղըս բերելով,|Ի գերեզմանն եկեալ սիրով այսօր սուրբ կանայքն...», *տես՝ «Տաղարան Գ», էջ 11—12։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 13—15։*

☐ *Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6998 (էջ 33բ)։*

52. *(Անխորագիր)* «Թէ ում ունիս զետ Ռըստամ և Շահրապան,|Ժակոչիկ մի դրնէ ըզինզ ի տապան...», *Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 1896, էջ 133։*

53. *(Անխորագիր)* «Թըշնամիքն անձինըս որք պատեցին զիս,|Լեզուաւ նենգաւորաւ նախատեցին զիս...», *տես՝* «*Տաղարան Ա*», *էջ 91—93։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «*Տաղարան Ե*», *էջ 83—85։*

Այլ տպ. (անխոր.), տես՝ «*Տաղարան Զ*», *էջ 134—135։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 21բ—22ա), № 8274 (էջ 92ա—92բ), № 8735 (էջ 48բ)։*

54. Զինէն գանկատ. «Ի բոլոր բընաւ ի կենաց իմ, ի կենցաղս այս բեռնեցայ,|Իբրու քէ արածեալ ըզինողմս, ունայնութեանց հետևեցայ...», *տես՝* «*Տաղարան Գ*», *էջ 85—86։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 80—81։*

☐ *Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7701 (էջ 63ա—63բ), № 9536 (էջ 75բ—76ա)։*

55. Ի սրբազան հայրն մեր երանելին Գրիգորիոս, Պաղտասար պարտաւոր դպրի ասացեալ ի թուին 1158. «Ի գերազանց լուսոյն՝ գերափայլեցեալ,|Իմաստութեամբ նորին՝ գերապէս լըցեալ...», *տես՝* «*Գիրք որ կոչի Յաճախապատում*», *Կ. Պոլիս, 1737, էջ 336—347։*

Տների սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ ումեմնէ բան գովեստական շինեցեալ ոտամբ չափիլով (sic) առ սուրբն Գրիգորիոս՝ լուսաւորիչն Հայոց»։

56. Իբր ի պիւլպիւլէն առ վարդն. «Ի դէմ քո վարդ քանի լամ,|Արշա չըքոր պու ահիմ...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 102—104։*

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Գ*», *էջ 107—109։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 136—138։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Զ*», *էջ 124—125։*

☐ *Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9117 (էջ 122ա)։*

57. Դարձեալ առ վարուցս վատութիւն. «Իժըս եղեռնային օձըս ժանտական.|Իսկական բարույդ չարաչար մեղա՜յ...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 46—48։*

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտ»։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 97—98։*

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7689 (էջ 10ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1042 (էջ 478ա)։*

58. Առ նոյն դարձեալ[1]. «Ի խորխորատ տըղմի մեղաց՝ գերիս անկեալ թաւալիմ,|Քանի ջանամ քէ ազատիմ՝ այլ առաւել ներմըղիմ...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 24—26։*

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 37—39։*

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը։*

59. Դարձեալ վէպ կրից եղկելի հոգւոյս. «Իկարօն լեալ ապօժանդակ,|Ջրնջմամբ խրիմ նապաւառի...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 56—58։*

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «*Տաղարան Դ*», *էջ 101—102։*

---

1 *Նախորդ տաղը խորագրված է.* «Առ փրկիչն իմ»։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 161։

60. (Անխորագիր) «Ի կենաց նախկին վայելմանց զրկեցին զիս, զրկեցին|Այնոքիկ որք ի կապանս այս պրկեցին զիս, պրկեցին...», տես՝ «Տաղարան Ա», էջ 64—66։

Այլ տպ.— Առ եղկութիւն անձին իմոյ, տես՝ «Տաղարան Բ», էջ 39—41։

Այլ տպ.— Առ եղկութիւն անձինս, տես՝ «Տաղարան Գ», էջ 35—37։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 58—60։

☐ Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4285 (էջ 150բ—151ա), № 5954՝ «Ողբ ասացեալ սրբազան տեառն Ղազարու կաթուղիկոսի» (էջ 39ա—39բ, բնագիրը զգալիորեն վերախմբագրված է), № 6998 (էջ 60ա—61բ), № 7710 (էջ 15ա—15բ), № 8274 (էջ 63ա—63բ), № 8735 (էջ 42բ—43ա)։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1042 (էջ 479ա)։

61. Դարձեալ ի նոյն ոճ[1]. «Ի կէտ գարնան եղանակին նօշար պիւպիւլ տէշէր տէրտին, ո՜ն.|Զայս ասելով շրջի յայգին...», տես՝ «Տաղարան Բ», էջ 105—107։
Տների սկզբնատառերը՝ «Ի Պաղտ»։

Այլ տպ.— Դարձեալ գարնան, տես՝ «Տաղարան Գ», էջ 106—107։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 135—136։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Զ», էջ 120—121։

☐ Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6440 (էջ 11բ, բնագիրը որոշ խմբագրման է ենթարկված), № 7670 (էջ 25բ), № 7716 (էջ 10ա—11ա), № 8764 (էջ 9բ—10ա), № 9117 (էջ 121ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 781 (էջ 5ա)։

[1] Նախորդ տաղը խորագրված է. «Դարձեալ իբր ի պիւպիւլէն վասն վարդին երգեցեալ»։

62. (Անխորագիր) «Ի կիսատ սիրելեաց անհաւատարմաց,|Ի սուտ այս կենցաղոյս ձանձրացայ անձն իմ...», տես՝ «Տաղարան Ա», էջ 114—116։

Այլ տպ. (անխոր.), տես՝ Տաղարան Ե», էջ 105—107։

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 131։

Այլ տպ.—Տաղ, տես՝ «Հայ էջեր», էջ 100։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Աշխ. գրականություն», էջ 281։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 26ա—26բ), № 8274 (էջ 101բ—102ա)։

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Chant sur l’amitié“ հետևյալ հրատ. մեջ. A. Tchobanian, „La Roseraie d’Arménie“, t. II, Paris, 1923, p. 277։

Այս տաղից 3 տների ֆրնս. նոր թարգմանությունը՝ „D’amours imparfaits, d’amours infidèles“ (թարգմանիչ՝ Jacques Gaucheron), կցված է «Որքան եմ կացեալ ի կենցաղս» տաղի թարգմանությանը (տե՛ս § 140)։

63. Առ Հայրն երկնաւոր, զղջական ձայնիւ. «Ի հարսանիս Որդւոյ քոյին կոչեցայ,|Բայց աղտեղի գըտայ՝ մեղա՛յ, տէր, մեղա՛յ...», տես՝ «Տաղարան Բ», էջ 61—63։
Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 106—108։

☐ Տես նաև 1723 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6998 (էջ 65ա)։

64. Առ սուրբն Ստեփաննոս Նախավկայն. «Ի հընձանի նոր տունկ այգւոյ,|Ողկոյզ ճըմլեալ դու վաղանաս...», տես՝ «Տաղարան Գ», էջ 78—80։

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 73—75։

☐ Տես նաև 1734 թ. տաղարանը:

65. Առ մայրն երանոյն աղերս մաղթանաց, ներբողիւ խառնեալ. «Ի հողային նիւթոյս՝ ոսկի մաքրական,|Ի ծովային բերմանց՝ ակն արփիական...», տես՝ «Գիրք պարապմանց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրու Հայրապետի», Կ. Պոլիս, 1717, էջ 13—14:

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»:

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 25ա—25բ), № 10253 (էջ 75ա—75բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1042 (էջ 476ա):

66. Դարձեալ առ մայրն երանութեան [առ Աստուածածինն]. «Ի հրեղինաց երանեալ,|Ծաղիկ լուսագեղ փայլեալ...», տես՝ «Տաղարան Բ», էջ 71—72:

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 110—111:

☐ Տես նաև 1723 թ. տաղարանը:

67. Վէպ կրից հոգւոյս և աղերս առ տէր. «Ի մամռապատ գոլով գբի,|Ի կեղարեանն եմ վրանի...», տես՝ «Տաղարան Բ», էջ 54—56:

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»:

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Գ», էջ 82—84:

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 77—79:

☐ Տես նաև 1723 և 1734 թթ. տաղարանները:

68. (Անխորագիր) «Իմ անիրաւ դատաւորըն քաղաքիս|Ո՛չ իրաւամբ վարեալ ընդ իս դատ առնէ...», տես՝ «Տաղարան Ա», էջ 82—83:

Այլ տպ. (անխոր.), տես՝ Տաղարան Ե», էջ 75—76:

Այլ տպ.— Ասացեալ ոտանաւոր խորհրդաւոր մեծագոյն իմաստնայինձ քերթողի եւ Հայոց նոր Հոմերոսի եւ վարժապետաց պետ Բաղդասարի (sic), տես՝ «Տաղարան Զ», էջ 156—157:

Այլ տպ. (անխոր.) տես՝ «Տեղեկագիր», էջ 127—128:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 19բ), № 8216 (էջ 244ա), № 8735 (էջ 46բ):

69. Առ վարուցս վատթարութիւն. «Իմ անյարմար արարքս յորժամ ի միտ գան,|Սասանին ոսկերք իմ սարսին և սոսկան...», տես՝ «Տաղարան Բ», էջ 44—46:

Այլ տպ. (խոր. նույն), տես՝ «Տաղարան Դ», էջ 94—96:

☐ Տես նաև 1723 թ. տաղարանը:

70. (Անխորագիր) «Իմ աններման յոյժ գովելի,|Արարեր զիս ողորմելի...», տես՝ «Տաղարան Ա», էջ 33—34:

Այլ տպ. (անխոր.), տես՝ Տաղարան Ե», էջ 29—30:

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 96—97:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4285 (էջ 171բ—172ա), № 5943 (էջ 180ա), № 7316 (էջ 17բ), № 7670 (էջ 18բ), № 7673 (էջ 10ա—10բ), № 7710 (էջ 8ա), № 8735 (էջ 35բ):

71. (Անխորագիր) «Իմ աններման սիրելագոյն սիրելի,|Քան ըզբընաւ գովելիսըն գովելի...», տես՝ «Տաղարան Ա», էջ 8—10:

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 7—9:

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Զ», էջ 70—71:

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4285 (էջ 178ա—178բ), № 7710 (էջ 2բ—3ա), № 8735 (30բ—31ա):

72. (Անխորագիր) «Իմ արևակն, իմ առուսեակն, իմ արեգակն, իմ լուսին,|Ելար յինէն և զիս թողիր յոյժ կարօտ քո երեսին...», տես՝ «Տաղարան Ա», էջ 31—32:

Այլ տպ. (անխոր.), տես՝ «Տաղարան Ե», էջ 27—28:

Այլ տպ. (*անխոր.*), *տես՝* «*Տաղարան Զ*», *էջ 94—95*։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 23բ), № 7710 (էջ 7բ—8ա), № 8735 (էջ 35ա—35բ)*։

73. (*Անխորագիր*) «Իմ առուեակն այսօր մրթացաւ...»: *Տես և հմմտ.* «Պայծառագոյն ուղեակ իմ սիրուն» *տաղը* (§ 143)։

74. Դարձեալ ի նոյն միտ[1]. «Ի մեծ տագնապի անձն իմ տառապի.|Զերծիլ ըշտապի, ֆանգի յոյժ տապի...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 58—59*։

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտասարէ»:

Այլ տպ. (*խոր. նույն*), *տես՝* «*Տաղարան Դ*», *էջ 103—104*։

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1042 (էջ 480ա)*։

75. Դարձեալ տաղ ուրախութեան. «Ի մերձիլ գարնան, այգիք ծաղկեցան,|Բուրաստանքն ամէն գոյն բզգոյն երփնազարդեցան...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 101—102*։

Սկզբնատառերը՝ «Ի Պաղ»:

Այլ տպ. (*խոր. նույն*), *տես՝* «*Տաղարան Գ*», *էջ 105*։

Այլ տպ.—Դարձեալ գարնան, *տես՝* «*Տաղարան Դ*», *էջ 134—135*։

Այլ տպ.—Դարձեալ տաղ ուրախութեան, *տես* «*Տաղարան Զ*», *էջ 119*։

☐ *Տես նաև 1734 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9117 (էջ 129ա—129բ)*։

76. (*Անխորագիր*) «Ի մէջ երկօքին ներհակաց անկեալ տարաբերիմ գերիս, ո՜հ, ո՜հ, տարաբերիմ.|Երբեմըն միոյն երբեմըն միոյն խնդնալապէս, ո՜հ, գերի գերիմ գերիս...», *տես՝* «*Տաղարան Ա*», *էջ 86—88*։

Այլ տպ. (*անխոր.*), *տես՝* «*Տաղարան Ե*», *էջ 79—81*։

Այլ տպ. (*անխոր.*), *տես՝* «*Տաղարան Զ*», *էջ 165—166*։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 20բ—21ա), № 8735 (էջ 47ա—47բ)*։

77. Առ դատողութիւն խղճիս. «Ի միտ բերեալ զիմ արարմունս պատկառիմ գերիս, պատկառիմ,|Եւ հիանամ թէ տակաւին բարբառիմ, ո՜հ, բարբառիմ...», *տես՝* «*Տաղարան Բ*», *էջ 49—51*։

Այլ տպ. (*խոր. նույն*), *տես՝* «*Տաղարան Դ*», *էջ 99—101*։

☐ *Տես նաև 1723 թ. տաղարանը։ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7670 (էջ 35բ—36ա)*։

78. (*Անխորագիր*) «Իմ հեռաբնակ հոգւոյս հատոր,|Զքեզ գըտած օրերս ուր գընաց.|Որ այժմ յինէն եղեր խոտոր...», *տես՝* «*Տաղարան Ա*», *էջ 36—37*։

Այլ տպ. (*անխոր.*), *տես՝* «*Տաղարան Ե*», *էջ 32—33*։

Այլ տպ. (*անխոր.*), *տես՝* «*Տաղարան Զ*», *էջ 100—101*։

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7710 (էջ 8բ—9ա), № 8735 (էջ 36ա—36բ)*։

79. Նորին [Պաղտասար դպրի] դարձեալ առ սուրբն Յօհաննէս. «Ի յարգանդէ մաքրազարդեալ,|Զայն բարբառոյ անուանեցեալ...», *տես՝* «*Ջենոբ*», *հավելվածում՝ էջ 28—29*։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3403 (էջ 110բ—111ա)։

80. (*Անխորագիր*) «Ի նրընջմանէդ արֆայական|Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր...», *տես՝* «*Տաղարան Ա*», *էջ 34—35*։

Սկզբնատառերը՝ «Ի Պաղտէ»:

Այսօր կան մասնագիտական երկեր, որոնք նվիրված են գոյություն ունեցող բառարանագրական նյութերի մի որոշ մասի ուսումնասիրությանը՝ Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները», երկու հատոր, և Գ. Կ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն»։ Այս աշխատություններում ընդգրկված նյութերը սիստեմավորված են և ըստ բնույթի ու բովանդակության վերլուծման ենթարկված. պարզված ու նկարագրված են նրանցում կիրառված բառարանագրական սկզբունքները։ Իսկ մեր «Համաբարբառային գրականություն» աշխատությունը նվիրված է քննարկմանը հայ բառարանագրության մի ուրույն բնագավառի, որը ուշադրության չի արժանացել նախորդների կողմից, այն է՝ հայ համաբարբառային բառարանագրությունը, ընդ որում և ժամանակի ընթացքում նրա կրած կառուցվածքային կերպարանափոխությունները։ Այսպես, ի տարբերություն նախորդների, մեր աշխատության մեջ ուշադրություն է դարձված այն երևույթի վրա, որ հայ այբբենական բառարանագրության մեջ գոյություն են ունեցել կառուցվածքային մի քանի տարբերակներ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս բառարանագրությունը համաբարբառային գրականության պահանջներին հարմարեցնելու ուղղությամբ կատարված որոնումների ուղին։ Տրված լինելով, որ համաբարբառությունը կայանում էր տարբեր բնագրերի միջև ըստ լեզվի և ըստ բովանդակության համեմատություններ կատարելու մեջ, բառարանագրությունը մշակում էր բառային միավորների այբբենական դասավորման նորանոր միջոցներ՝ բնագրային առադրումների և համադրումների համար[1]։

Այդ ուղու վրա ԺԷ դ. Ղազար Բաբերդացու կազմած համաբարբառային բառացանկը մեզ տալիս է առաջին տարբերակը։ Այս տարբերակը բառային միավորները դասավորում էր տառային հերթականությամբ, ինչպես արվում էր մինչև այդ եղած այբբենական բառարաններում, օրինակ՝ ԱՆՁՆ, ԱՆՁուկ, ԱՆՁրև, ԱՆՂեկ, ԱՆՃառ, ԱՆՃետ, ԱՆՃիտեմ *ևն. բայց բառերի դիմաց փոխանակ բացատրություններ կամ հոմանիշներ տալու, հղումներ էր տալիս դեպի այն տարբեր աղբյուրներն, ուր կարելի էր տեսնել տվյալ բառի գործածության հետ կապված քերականական և կամ պատմական վկայությունները։*

ԺԸ դ. առաջին կեսում Արզրումեցի Անանիա Ալլահվերդյանի և Բաղդասար դպիր Կ. Պոլսեցու համաբարբառներով հանդես էր

---

[1] *Համաբարբառային բառարանագրությունը բառերին բացատրություններ չէր տալիս, այլ միայն ցույց էր տալիս, թե այս կամ այն երկում քերականական ինչպիսի՛ կապակցությունների մեջ է գործածված տվյալ բառը և թե այդ բառի հետ առնչված մտքերն ինչպիսի՛ ձևերով են արտահայտված տարբեր հեղինակների մոտ։ Համաբարբառային բառարաններ կազմվում ու հրատարակվում են նաև այսօր՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Կենտրոնական գրադարանին կից գործող Քարտարանային բաժնի կողմից։*

եկել այբբենական դասավորման մի այլ տարբերակ, որն առաջացել էր բառի հետ մատենագրական վկայությունների համատեղման պայմաններից: Աղբյուրներից բառերը բերվում էին բնագրում նրանց ունեցած քերականական առկա ձևերով ու հետադաս կապակցություններով և բառաշարում դասավորվում էին ըստ բառաձևերի առաջին տառերի, ուստի և նույն բառի տարբեր ձևերն ընկնում էին տարբեր տեղեր: Օրինակ բերենք Անձն *բառը.*

Ա *տառի տակ էին ընկնում՝*

Անձամբ անձին զօտի ածէիր.
Անձին իւրում զանձնեցէ.

Զ *տառի տակ էին ընկնում՝*

Զանձինս առ արդարս ունել.
Զանձն իւր կեցուցանել.

Յ *տառի տակ էին ընկնում՝*

Յանձինս իւրեանց ընդունէին.
Յանձն իւր զզօրութիւնն.

ԺԸ դ. երկրորդ կեսում Գրիգոր Նարեկացու երկերի համաբարբառով, որի հեղինակությունը Հակոբ Նալյանին է վերագրվում, հրապարակ էր եկել այբբենական դասավորման ևս մի տարբերակ, որը, նախորդի համեմատությամբ, ավելի տրամաբանական ու գիտական էր՝ ձգտելով իրար մոտեցնել տվյալ բառի տարբեր ձևերը, որոնք հեռու էին ընկած: Այստեղ ևս բառերը բերվում էին նրանց ունեցած քերականական առկա ձևերով ու հետադաս կապակցություններով, բայց դասավորման համար հաշվի էր առնվում միայն բառի հիմքը, իսկ նրա սկզբին գտնվող նախդիրները կամ ածանցները թողնվում էին աննկատ: Օրինակ՝

Անձամբ անձին զօտի ածէիր.
Անձին իւրում զանձնեցէ.
զ-Անձինս առ արդարս ունել.
յ-Անձինս իւրեանց ընդունէին.
յ-Անձն իւր զզօրութիւնն.
զ-Անձն իւր կեցուցանել.

Այս տարբերակներն իրենց ավելի ևս տրամաբանական և ավելի գիտական ձևին հանգեցին միայն ԺԹ դ. հրատարակված համաբարբառներով, որոնցում բառը մատենագրական աղբյուրից բերվում էր իր քերականական հիմնական ձևով (օրինակ՝ Անձն*) և այդ միակ բառի տակ տեղադրվում էին նույն բառը պարունակող բոլոր վկայությունները.*

Անձն

Որ կամիցի զԱնձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա.

Գիտաց Յիսուս յԱնձն իւր զզօրութիւնն որ ել ի նմանէ.

Առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս՝ զԱնձինս առ արդարս ունել.

Մինչ մանուկն էիր՝ Անձամբ անձին զօտի ածէիր.

Իւրաքանչիւր ոք ի ձէնջ Անձին իւրում զանձնեցէ որ ինչ և յաջողեսցի.

Զդարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յԱնձինս իւրեանց ընդունէին.

Լայն ծավալով հետազոտության դեպքում երևան կգան, անշուշտ, նշված տարբերակների մեջ ուրիշ ներքին տարբերակումներ ևս:

Համենայն դեպս այբբենական համաբարբառները հայ բառարանագրության մեջ մի ուրույն բնագավառ են կազմում և նյութեր են տալիս այբբենական բառարանների կառուցվածքային պատմության համար:

Ստորև ներկայացնում ենք բառարանագրական այն նյութերը, որոնք մեզ հայտնի են, անտիպ կամ տպագիր:

* * *

1. Բառք Քերականին *կամ* Մեկնութիւն բառից Քերականութեան. «Վերծանութիւն՝ ընթերցողութիւն: Ներկուռ՝ ըստկուռ, կամ կոխ, կամ կիրթ: Ըստ ներ գոյս՝ ըստ ներքս գոլոյ: Առձեռն՝ ձեռն ի ձեռն...», *տես՝* **Н. Адонц** *(հրատ.)*, «Дионисий Фракийский и армянские толкователи», Петроград, 1915, стр. 57—64.

Բովանդակում է Դիոնեսիոս Թրակացու Քերականության հայ. թարգմանության բացատրելի բառերը՝ ըստ գլուխների։

Այլ տպ. տես՝ N. Adontz (հրատ.), „Denys de Thrace et les commentateurs arméniens“ (trad. du russe), Louvain, 1970, p. 57—64.

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 266 (էջ 82բ—86ա), № 267 (էջ 242բ), № 529 (էջ 144), № 2291 (էջ 325բ), № 2331 (էջ 29ա), № 2335 (էջ 2բ), № 2372 (էջ 2ա), № 2381 (էջ 1ա), № 3197 (էջ 159բ), № 3200 (էջ 202ա), № 3202 (էջ 174ա), № 3286 (էջ 305ա), № 3467 (էջ 105բ), № 5596 (էջ 225բ), № 5925 (էջ 102ա), № 5947 (էջ 117բ), № 6624 (էջ 101ա), № 7014 (էջ 143բ), № 7117 (էջ 94ա), № 7250 (էջ 82ա), № 7995 (էջ 90բ), № 8198 (էջ 67բ), № 8354 (էջ 94) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 110 (էջ 1272), № 657 (էջ 3ա), № 769 (էջ 175), № 847 (էջ 462բ), № 857 (էջ 238ա), № 1004 (էջ 212բ), № 1138 (էջ 234ա), № 1372 (էջ 171բ), № 1666 (էջ 180բ), № 1672 (էջ 59 և 330), № 1682 (էջ 439ա). Լվովի Bibl. Univ. Cod. Arm. 50 (p. 135). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5273 (fol. 1^{r}). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Minut. 273 fol. 74^{v}). Թբիլիսիի Ձեռագրերի ինստիտ. Հայ. ձեռ. № 175 (էջ 122բ)։

Խոր. պատահում է նաև՝ «Այս բառք քերականի», «Բառ քերթողական քերականի», «Մեկնութիւն բառից քերականի (քերականից)», «Մեկնութիւն քերական բառի», «Մեկնութիւն քերականի», «Լուծումն բառից քերականին»: Սկ. պատահում է՝ «Վերծանութիւն՝ է ընթերց.»:

Համեմատաբար ուշ շրջանի ձեռագրերում վերոհիշյալ բառացանկը պատահում է նաև այբբենականի վերածված, ինչպես է հետևյալ օրինակը.

— Մեկնութիւն բառիցն և քերականին. «Ածանցական՝ յայլմէ ածեալ կամ անցուցեալ օրինակ: Ամանակ՝ մասն նուազ ժամանակի: Աղօտ՝ նուազ կամ փոքր: Անգեցեալ՝ ի գլուխ ելեալ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 451, էջ 2ա—15ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1495 (էջ 72ա), № 1995 (էջ 244ա), № 2016 (էջ 147բ), № 3199 (էջ 188բ), № 3824 (էջ 55ա), № 5925 (էջ 102ա)։

Սկ. պատահում է նաև՝ «Առձեռն՝ ձեռն ի ձեռն: Առաջբերութիւն՝ առաջի բերում», «Առձեռն՝ ի ձեռն: Առաջբ.», «Առասանութիւն՝ առասացութիւն: Առձեռն», «Անվթար՝ անքոգ»:

2. [Բառք Պիտոյից գրոց] «Առատանել՝ ցասնուլ կամ զայրանալ: Անքասքնելի՝ Տեառն երկիւղ կամ անզարհուրելի: Արտատեղի՝ անտեղի: Անընդոստ՝ անզարհուրելի: Անբաղա՝ անպատճառ: Աղուեն՝ խարդաւանս կամ չարութիւնս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7035, էջ 88բ—91բ։

Այբբենական բառարան է, որի վերջում ուրիշ բառեր են ավելացված այլ աղբյուրներից (մինչև էջ 92ա)։

3. Այս բառք ի յունականէն ի մերս յայտնեալ. «Առոգանութիւն՝ առասացութիւն, յայտարարութիւն: Առկացուցեալ՝ յանդիման կացուցեալ: Առոգելով՝ առնելով...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2331, էջ 164ա—170ա։

Հայերենի բացատրական բառարան է, որի հնագույն ձեռագրերը ԺԴ դարից են։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 529 (էջ 120բ—129ա), № 2019 (էջ 171ա—176բ), № 2369 (էջ 245ա—254ա), № 3200 (էջ 169բ—179բ), № 5919 (էջ 196ա—203ա), № 8198 (էջ 41ա—48բ) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657 (էջ 344ա—359ա?), № 1448 (էջ 246—262?), № 1666 (էջ 111բ—117ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 42 (էջ 750բ—757ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 75 (էջ 33բ—44բ). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5273 (fol. 192^{r}-?). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 145 (fol. 48^{r}—59^{r})։

Բնագրի խոր. պատահում է՝ «Այս բառք յունարէն ի մերս յայտնեալ», «...ի յունականն առ մեր յայտնեալ», «...ի յունարէն առ մեզ յայտնեալ»: Սկ. պատահում է՝ «Առոգանութիւն՝ առագութիւն», «Առոգանութիւն՝ ասացութիւն»:

4. Յունարէն այսոքիկ անուանք թարգմանեալք. «Իսակոկի՝ ներածութիւն: Կենօս՝ սեռ: Դիափորա՝ տարբերութիւն: Իդօս՝ տեսակ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1806, էջ 61ա—61բ:*

Հունարեն-հայերեն իմաստասիրական տերմինների ոչ-այբբենական բառացանկ է:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 80 (էջ 195բ—196ա), № 543 (էջ 193ա—193բ):

5. Բառեար Յունաց ի մերս թարգմանեալ. «Ընկեցել՝ յանդիման կացուցանել...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1682, էջ 446բ—451բ?:*

6. Այս բառք են քերթողականք վասն չափոյ հոմերական տաղիցն, վասն զի քերթողական արհեստքն չափաբերականք են և չափով վարին, և են որ գեղջուկք են որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանից և հարկ է յոքնահամար եղանիլ. «Աստուածազան՝ աստուածազարդ: Աստուածարեալ՝ յԱստուած զօրանալ: Աստուածահրաշ՝ աստուածասքանչ կամ աստուածահրահանգ: Աստուածերանգ՝ յԱստուծոյ լուսոյ կամ ի տեսումն ածող կամ ի մէջ բերող...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2291, էջ 264ա—315բ:*

Այբբենական բացատրական բառարան է: Հնագույն ձեռագրերը ԺԴ դարից են:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 266 (էջ 1ա—72բ), № 267 (էջ 24ա—128բ), № 529 (էջ 3ա—77ա), № 2019 (էջ 176բ—231ա), № 2331 (էջ 170ա—226ա), № 2370 (էջ 140ա—204բ), № 2372 (էջ 201ա—330բ), № 2381 (էջ 152ա—226ա), № 3170 (էջ 19ա—140ա), № 3197 (էջ 2ա—103ա), № 3200 (էջ 2ա—132բ), № 3202 (էջ 37բ—172ա), № 5596 (էջ 150բ—201բ), № 5919 (էջ 121ա—178ա), № 5925 (էջ 21բ—89ա), № 5947 (էջ 27բ—116ա), № 5995 (էջ 96բ—203բ), № 6624 (էջ 20ա—99բ), № 7014 (էջ 25ա—127ա), № 7117 (էջ 218ա—305ա), № 7250 (էջ 2ա—72բ), № 7995 (էջ 10ա—37ա), № 8198 (էջ 1ա—30ա), № 8354 (էջ 42ա—94ա) են: Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657 (էջ 129ա), № 847 (էջ 341ա), № 857 (էջ 122ա), № 859 (էջ 73), № 1004 (էջ 29բ), № 1008 (էջ 15բ), № 1173 (էջ 31ա), № 1372 (էջ 60ա), № 1506 (էջ 36), № 1666 (էջ 136ա), № 1672 (էջ 73), № 1682 (էջ 238ա), № 1699 (էջ 71). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 42 (էջ 665ա—718ա), № 72 (էջ 266բ—379ա), № 337 (էջ 158բ), № 1017 (էջ 16բ). Վիեննայի KKHB Cod. Arm. 3 (fol. 118r). *Թբիլիսիի Ձեռագրերի ինստիտ. հայ. ձեռ. № 175 (էջ 45). Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 72 (էջ 49). Լվովի* Bibl. Univ. Cod. Arm. 50 (p. 31). *Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 75 (էջ 44բ). Կարինի Սանասարյան վարժ. ձեռ. № 35 (էջ 1ա). Բեռլինի* Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 145 (fol. 59r), Ms. Or. Minut. 273 (fol. 17v). *Վրոցլավի* Zakł. Nar. im. Ossolińskich Ręk. Or. 21 (s. 71). *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 302 (fol. 93v): *Հմմտ. Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 5273: «Բառք զանազան մեկնեալ ի Հայոց լեզու յիմաստնոց» (fol. 185r):

Ձեռագրերում բնագրի սկ. պատահում է՝ «Աստուածազան՝ աստուածազարդ: Աստուածապարակք՝ ասին յեղյեղուկք որ զգիրս սուրբս կամակորեն», «Աստուածարեալ՝ յԱստուած զօրանալ», «Աստուածահրաշ՝ աստուածասքանչ», «Աստուածերանգ՝ լուսոյ կամ ի տեսումնածոց (sic)»:

7. Հանդէս բանաստեղծաց *(երկու տարբեր խմբագրությամբ՝ այբբենական և ոչ-այբբենական).*

ա. Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ. «Աստուածազան, աստուածասքանչ, աստուածազգեաց, աստուածասէր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 268, էջ 302ա—312ա:*

բ. Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ. «Պարտ՝ պատշաճ, ի դէպ, ի ճահ, յանգ, նման: Բարւոք՝ վայելուչ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2372, էջ 331ա—349բ:*

☐ *Այբբենական և ոչ-այբբենական օրինակներ տես նաև նույն մատ. ձեռ. № 266 (էջ 74բ—82բ), № 267 (էջ 183ա—194բ), № 529 (էջ 129ա—137բ), № 2019 (էջ 162բ—170ա և 231ա—239բ), № 533 (էջ 2ա—14բ), № 2291 (էջ 316ա—325ա), № 2331 (էջ 226ա*

—234ա), № 2335 (էջ 251բ—256ա), № 2369 (էջ 254բ—265բ), № 2372 (էջ 331ա—349բ), № 2381 (էջ 226բ—235բ), № 3170 (էջ 143ա—153բ և 166ա—178ա), № 3197 (էջ 145ա—?), № 3200 (էջ 180ա—192բ), № 3261 (էջ 227ա—240բ), № 3286 (էջ 293ա—300բ), № 5008 (էջ 119ա—124ա), № 5596 (էջ 217ա—225բ), № 5919 (էջ 203ա—210ա), № 5995 (էջ 203բ—218բ), № 6624 (էջ 136ա—154ա), № 7014 (էջ 127ա—143բ), № 7117 (էջ 305բ—318ա), № 7250 (էջ 74ա—82ա), № 7995 (էջ 40ա—45ա), № 8198 (էջ 54ա—59ա) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657 (էջ 359բ), № 847 (էջ 448ա), № 857 (էջ 220բ), № 1008 (էջ 107բ), № 1173 (էջ 140), № 1372 (էջ 191բ), № 1666 (էջ 185ա), № 1682 (էջ 413բ), № 1699 (էջ 503). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 42 (էջ 757ա—770ա), № 72 (էջ 380ա—390բ), № 337 (էջ 239բ—249բ), № 672 (էջ 122ա—148ա), № 916 (էջ 2ա—10ա?), № 1017 (էջ 74ա—83բ). Վիեննայի KKHB Cod. Arm. 3 (168^r—172^r). Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 72 (էջ 244—266). Ղալաթիայի Ազգ. Մատ. ձեռ. № 95 (էջ 19—28). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 75 (էջ 141ա—152բ). Թավրիզի առաջն. ձեռ. № 14 (էջ 3ա—25բ). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 145 (fol. 34^r—47^r և 149^v—161^r). Մյունխենի BSB Cod. Arm. 22 (fol. 238^v—244^r). Վրոցլավի Zakł. Nar. im. Ossolińskich Ręk. Orm. 21 (s. 339—385). Թբիլիսիի Ձեռագրերի ինստիտ. հայ ձեռ. № 175 (էջ 108ա—120ա)։

Սկ. պատահում է նաև՝ «Անհաս, անն., անպ., անբաւ», «Ապարանք՝ աշտարակ կամ յանք։ Տեղիք, քաղաք»։

Հոմանիշների բառարան է, որի ձեռագիր հնագույն օրինակները ԺԲ դարից են։ «Այս բառարանը նորավարժների, երիտասարդ բանաստեղծների, հավանաբար և ճարտասանների, գեղարվեստական խոսքի կատարելագործման և բառապաշարի հարստացմանը նպաստող բառարան է, մի հետաքրքիր ուսումնական ձեռնարկ» (Հ. Ամալյան)։

8. Բառք նորավարժ[իցն]. «Անհաս՝ անճառ, անպատում։ Անպարագրելի՝ անսահմանելի, անըմբռնելի։ Անպարունակ՝ անձև, անորակ, անքանակ, անչափ, անժամանակ, անուր...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8198, էջ 63բ—67բ։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4149՝ «Հանդէսք բանաստեղծաց փաղանունաբար ատորգիլ նորավարժիցն» (էջ 351ա—363բ) են. Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5273: «Բնութքըն սրտ վարժ (sic)» (fol. 322^v, սկ. նույն). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1506 (էջ 191, սկ. «Անվրար՝ անահեկ կամ անբիծ կամ անախտ»)։

9. Բառք գովասանական ոգեալ. «Անեղանելի՝ անարատապէս։ Անյեղլի գոլով՝ անվրդովելի։ Արբուցող յուսոյ՝ առաքինութեան սահման։ Արի՝ քաջաբոյս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8198, էջ 69ա—71բ։

Այբբենական բառարան՝ հիմնականում ոճաբանական։ Հնագույն ձեռագրերը ԺԴ դարից են։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 5925 (էջ 133բ—141ա), № 7117 (էջ 53ա—60ա) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1372 (էջ 3—15?). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5273 (fol. 348^r—370^v)։

Խոր. պատահում է նաև՝ «Բանք գովասական ոգեալ», «Բառք գովանանազանք» (sic)։

10. Բառք գովասանական վասն տղայոց ուսման. «Արփոյն հասակ՝ ապաստանի տուն։ Ամրութեան պարիսպ՝ աշտարակ հզօր։ Անեղաշէն յարկ՝ արմաւենի բարձրագոյն։ Բազմագոյն ծաղիկ՝ բարետես հասակ։ Բաժակ քաղցրահամ՝ բղխումն յորդաբուխ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7117, էջ 50ա—53ա։

Ոճաբանական բառարան է։ Ձեռագիրը ԺԵ դարից է։

11. Նշանագիր անուանց. «Աբրահամ, Ահարոն, Ամբակում, Աղեքսանդր...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8198, էջ 59ա—60բ։

Նշանագիր ունեցող հատուկ և հասարակ անունների այբբենական բառարան է։ Յուրաքանչյուր բառի դիմաց դրված է նրա

նշանագիրը։ Ձեռագրում նույն բնագիրն ընդօրինակված է երկրորդ անգամ՝ «Նշանագիր այբուբենից» խորագրով (էջ 62ա—63բ)։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 267՝ «Նշանագիր» (էջ 314ա—318ա), № 2291՝ «Նշանագիր» (էջ 371ա—374ա), № 7250՝ անխոր. (էջ 92բ—94բ) ևն։

12. (Անխորագիր) «Աստուածակերտ՝ աստուածատունկ: Աստեաց՝ զօրաւորաց: Աստրստին՝ ըստ այսմ իրաց: Ասպատակք՝ աւազակք...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3202, էջ 182ա—214ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 5947՝ անխոր. (էջ 123ա—144բ), № 6624 (106բ—125ա)։ Տես դարձյալ Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Minut. 273 (fol. 78^{v}—91^{r}, սկ. «Աստուածակերտ, աստից, ասպատակ»)։

Բացատրական բառարան է, որի հնագույն օրինակը վերոնշյալ № 3202 ձեռագիրն է, ԺԴ դար։ Այս ձեռագրի ընդօրինակողն է ոմն Զաքարիա քհ., որի անունով էլ սույն անխոր. բառարանին տալիս են Զաքարիա գրչի բառարան անունը, բայց այս վերագրման համար ոչ մի հիմք չի ներկայացնում ձեռագիրը։

13. Բառ գիրք որ է լուծումն գրոց. «Աստուած՝ արարիչ անտես: Անգեղին՝ անճենելի: Աղօստու՝ աշխարհակալ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8704, էջ 108ա—155բ։

Բառարան՝ գրաբարից աշխարհաբար։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 739 (էջ 274ա—311բ), № 744 (էջ 89բ—146բ), № 1424 (էջ 208բ—243բ), № 2331 (էջ 260ա—305բ), № 7017 (էջ 125բ—161ա) ևն։ Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 276 (էջ 289ա—365ա), № 1072 (էջ 212բ—233բ)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Արարիչ կամ անտես: Աւգոստոս՝ աշխարհակալ», «Արարիչ կամ անտես: Աղաատու՝ աշխարհակալ», «Աբբայ՝ մեծ հայր, հօր [հայր] կամ պապ»։

14. Անյայտին նիշ նիւթեղէն կոչմամբ իբր ի սոցունց զննա (sic), յորմէ առկա[յ]ացան, կարեմք բակձանել, զոր ինչ ի տարրեղէնս սուրբս և հաճելիս, պատկանաւորս և յարմարս, մտաւորականաւ, անօրհւ և թանձրական բբբով բոլորիւ բերեալ բարդեմք բեղն աւետողին յարաբարդողին զբաւանդակ զէս յորոց առանց յոքունց ներհակաց զո[յ] ի յիմացւածս, յարակերտողն իբր իր և անուն, զոր ի ստորակացս ըստիքիրոնիւս ցուցաք [զք]անիօնութիւն դրականացս, շարագրիւ շարամանեալ, որ ունի թիւս ժանց և ծից և Ռաց և մի[ակի]ւն դարձեալ անյայտիւ. ուրոյն ի նոյնն. «Աստուած, արարիչ, արդար անմահ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. 3937, էջ 46ա—52ա։

Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1372 (էջ 177ա)։

15. Բառք խորանին կամ Բառք Փիլոնի.

Բառք որ ինչ ի խորանն, և այլոց անյայտից. «Անկուած՝ հանած: Ախս՝ փակս: Ապառում և Ապաւանդակ՝ ստորոտ խորանին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5925, էջ 107ա—125ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 266 (էջ 116ա—122բ), № 267 (էջ 128բ—152ա), № 529 (էջ 77բ—88ա), № 2019 (էջ 247ա—?), № 2331 (էջ 241բ—249բ), № 2335 (էջ 238ա—243ա), № 3937 (էջ 41ա—44ա), № 4149 (էջ 343բ—349ա), № 5008 (էջ 124բ—127բ), № 5919 (էջ 178բ—186բ), № 5925 (էջ 107ա—125ա), № 7250 (էջ 105բ—111ա), № 7995 (էջ 45բ—47բ), № 8198 (էջ 49ա—53բ) ևն։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657 (էջ 267ա—284բ?), № 1004 (էջ 149բ—171բ), № 1666 (էջ 117ա—123բ), № 1672 (էջ 305—329?). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 42 (էջ 718ա—726ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 75 (էջ 190բ—195ա). Լվովի Bibl. Univ. Cod. Arm. 50 (p. 142—163). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. 5273 (fol. 297^{v}—310^{r}?). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 145 (fol. 173^{r}—199^{r}). Հմմտ. Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 72 (էջ 193—212?, սկ. «Անկուած՝ հանած: Արոյր՝ ոսկէպղինձ: Աղխ՝ մարդ և անասուն»)։

Բնագիրը ձեռագրերում պատահում է խորագրված նաև՝ «Բառք խորանին և այլոցն» (Երևանի № 5008), «Բառք Փիլոնի» (Երևանի №№ 266, 3937 և № 7250)։ Իսկ սկ. պատա-

հում է՝ «Անկուած՝ խանած», «Անկված՝ որ է ճանած», «Անգուած՝ ճանած», «Անուած՝ ճանած», «Արխափակս, Ապարումն»:

Այս բառարանը կազմված է երկու տարբեր բառացանկերի միացումով՝ «Բառք Փիլոնի», որը Փիլոնի երկերի բառերի բացատրությունն է տալիս, և «Բառք խորաճին»: Այդ պատճառով միավորված այս բառացանկը ձեռագրերում կրում է կրկնակ խորագրեր: «Բառք խորաճին բառարանն իրեն նախորդող՝ Բառք Փիլոնի բառարանի հետագա ընդարձակումն է և երկու բառարանների այս կապն է, որ հաճախ պատճառ է դառնում նրանց շփոթման» (Հ. Ամալյան):

Բառարանի ձեռագիր հնագույն օրինակները ԺԴ դարից են:

16. Բառք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն. «Ազանիլ՝ մեկտեղ կենալ, օթևանիլ, օթուռաք: Աղին՝ եղեմ դրախտին տեղն: Աղոնայի՝ տեարք, եբրայեցերէն Աստուծոյ անունն է: Ազատազնեայ՝ ալզատէ որպէս ազնիւ որդի...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3996, էջ 123—207:

Սույն բառարանը կապ չունի «Նարեկ»-ի որոշ հրատարակությունների վերջում գտնվող «Նշանակութիւնք խրթին բառից ինչ մատենիս» բառացանկի հետ:

17. Դաւթի Հայոց փիլիսոփայի և Փիլիկեայ Հռոմոց վարդապետի և Հոմրեայ առուեստաւորի և Մովսէսի քերթաւղի խնդիր փափագման իմաստասիրականիս: Իմաստութիւն քերթողական տառից, ըստ այբուբենից: Բանակապս ի լեզուս և ի խաւսս, և ի ձայնս եղանակաց և յերաժշտականսն առուեստ գիտուն առնելով զընթերցաւղս, զկնի լուսաիրձ և բազում արեգակնօք լցեալ երկին. «Յաղագս վարժողական ուսմանց, մանաւանդ որք ջերմեռանդն սիրաքորոք գրով զհետ եղեալ իմաստական բանից, կոռովամիտ սլացմամբ գետաճետեալք...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7117, էջ 3ա—46ա:

Բնագիրն սկսվում է խմբագրի առաջաբանով, որին հաջորդող նախադրության մեջ խոսվում է տառերից մի քանիսին վերագրվող խորհրդավոր իմաստների և զորության մասին: Այնուհետև շարադրված է բուն բնագիրը կազմող այբբենական բառարանը (էջ 11ա—35ա), որն արտահայտում է յուրաքանչյուր տառի գաղտնիքները: Այստեղ հայկական այբուբենի 36 տառերը բաժանված են չորս խմբի՝ ա–թ, ժ–ղ, ճ–ջ և ռ–ք, և յուրաքանչյուր խմբին հեղինակ է ցույց տրված խորագրում հիշված անուններից մեկը, հետևյալ ենթավերնագրերով.

ա. Դաւձ[ց]ուք անդրէն ի քերական այբիս և սկիզբն առասցուք այլ խորհրդոյ. Դաւթի փիլիսոփայի. «Անեղանելին Աստուած: Անարատապէս գոլով: Անվրդովելի...», էջ 11ա—16ա:

Վերջում՝ «Այս են տառք առաջաբանութեան Դաւթի փիլիսոփայի շարակարգեալ բանս ի պէտս իններեակ գրիս»:

բ. Եկեսցուք ի պատճէնս Փիլիկեայ և բուռն ճարցուք զէ̄րդ բանաւորութիւն տառիցս: Ժէին ժողովէ զբանս իմաստից և ասա. «Ժամանակ լրման եճաս: Ժողովել ժամանեցուք: Ժամանեալք ի լոյսն...», էջ 16ա—22ա:

Վերջում՝ «Այս Բ. գրովս՝ Ղատին և Լինին կատարեցան վարժմունք Դաւթի փիլիսոփայականք և Փիլիկեայ արտաբերական, խաղտաղիցս եղական, և ճարտասանական առուեստիցս: Երկակիս երրեակ եռահիւս գրենիցս զոր ի սոցանէ կարգեցան»:

գ. Եկեսցուք ի տառս Հոմրեայ փիլիսոփայի և բուռն ճարցուք զերրորդ պատճենէս իմաստասիրիս: Ճէիւս ճարտասանական դպրութեամբս ճանապարհորդեսցուք ի ճանապարհս ճանաչողական ճառիցս յիմաստասիրական գոյոյ Հոմրիայի. «Ծոխանձն ճասակ: Ճեմարան լուսատու: Ճշմարիտ ճովիւ...», էջ 22ա—30ա:

Վերջում՝ «Կատարեցաւ տառս Հոմրեական տաղիցս, երգոյս քերթողական իմաստից»:

դ. Մովսեսի քերթողի վեճիմաստական տաղիցս տառս Թ., այս գրերոյս թելք բանից առուեստականաց, որք յաւժարամիտ փափագմամբ փութան ճասանել. «Ռաբբիական ճմտութեանցն ճասեալ: Ռաբբի գաւեղ: Ռաբբի մեծահրաշ...», էջ 30ա—35ա:

Վերջում՝ «Այս են քերականութիւնք ԼԶ. գրիս, ըստ այբուբենիցն տառից: Սովաւ հասանիս ամենայն իմաստութեան»։

Այս այբբենական գլխավոր բնագրից հետո կան նմանօրինակ մի շարք ուրիշ մանր նյութեր, մեծ մասամբ այբբենական ցանկեր՝ «Այլ ինչ բան ըստ այբուբենից իմաստիցս», «Այլ ինչ իմաստք», «Այլ եւս իմաստութեան այբուբենից ըստ արփիցն բազմազանեալ իմաստ» և նման խորագրերով։ Բոլորից հետո կա հետևյալ հիշատակագրությունը. «Կատարեցաւ (sic) իմաստութիւնք մեծ և փառաւոր վարդապետացն Հայոց Դաւթի անյաղթ փիլիսոփայի և Մովսիսի քերթողի, և Հոմերեայ իմաստասիրի և Փիլիկեայ երաժշտապետի, որ ունին յինքեանս զամենայն զանձս աստուածայինս ամբարեալ առ ի պէտս ուսումնասիրաց անձանց»։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 599 (էջ 1ա—41բ) և № 1267 (էջ 328ա—341ա)։ Վերջինս աղավաղված օրինակ է։

18. Բառք գրոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն. «Ադոնիայի՝ տէր, տերանց տէր: Ազդել՝ շարժել կամ խաղալ կամ յայտնել կամ ծանուցանել: Ազդումն՝ զօրութիւն: Ալէլուիայ՝ օրհնեցէք զՏէր կամ գովեցէք զՏէր: Ախեալ՝ փակեալ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3172, էջ 189ա—215ա։

Այս բառարանը նմանություն չունի նախորդի հետ[1]. թեև նրանից ավելի համառոտ է, բայց ինքնուրույն է։ Կապ չունի նաև վերոնշյալ «Նշանակութիւնք»-ի հետ։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 3286՝ խոր. նույն (էջ 271ա—292ա)։

19. Ղալաթիայի (Կ. Պոլիս) հայոց նախկին Ազգ. Մատենադարանի № 28 ձեռագիրը Գր. Նարեկացու երկերի մի անտիպ համաբարբառ է, որի հեղինակությունը վերագրվում է Հակոբ Նալյանին, ունի այբբենական-բառարանային կառուցվածք[2]։ Տես՝ ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ։

20. Բառք վարդապետացն սրբոց հաւաքեալ ի միասին. «Առակաւոր է՝ նշանակէ: Առարկուած՝ առակ կամ առասպել: Առաջոյն՝ առաջին: Առած՝ արհեստ: Առաքուր՝ առ ոտն կոխել...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7117, էջ 60ա—79բ։

Ձեռագիրը ԺԸ դ. է։

21. Եւթներորդ գլուխ գրոցս որ կոչի բառագիրք, զոր (sic) այժմ մեկնէ զմնացուածն. «Առանցեալ՝ խելագարեալ: Անտիղ՝ անխոնարհելի կամ անզիջանելի: Աստուածարեալ՝ տեսանել զհանդերձեալն...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 530, էջ 71ա—77բ։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2331 (էջ 249բ—257բ), № 3200 (էջ 166բ—169բ), № 5919 (էջ 193բ—195բ) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657 (էջ 338բ, սկ. «Առանցեղ»), № 1666 (էջ 129ա, սկ. «Առան»)։

Ինչպես ցույց է տալիս խորագիրը՝ այս բառարանն եղել է վեց գլուխներից բաղկացած մի աշխատության հավելվածը։ Հնագույն օրինակները ԺԴ դ. են։

22. Բառ է Հայոց լեզուէ պարզ և յստակ. «Աբբայ՝ մեծ հայր, [հայր] հօր կամ պապ: Աբենեզեր՝ վէմ օգնականի: Ագարակ՝ արտ: Ագաւ՝ կեցաւ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 744, էջ 89բ—146բ։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 9110 (էջ 1ա—11բ, սկզբից թերի)։

Տարբեր է հետևյալ բառարանը.

23. Բառ է Հայոց լեզուէ պարզ և յստակ. «Աստուած՝ արարիչ կամ անտես: Ագոստոս՝ աշխարհակալ: Անզգնին՝ անքննին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1424, էջ 208բ—243բ։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 739 (էջ 274ա—311բ) են։ Տես՝ § 13։

24. Աղօթք պահպանութեան. «Անսկիզբն Աստուած: Անեղ Աստուած: Անիմանալի Աստուած: Անպարագրելի Աստուած...», տես՝ «Գիրք աղօթից որ կոչի Կիպրիանոս վասն ամենայն ազգ պատահարաց որք գան ի վերայ մարդոյ», Կ. Պոլիս, 1875, էջ 21—45։

Կազմված է այբբենական կարգով (Ա—Ք)։ Գտնվում է նաև «Կիպրիանոս-գրքի» ուրիշ տպագրություններում։ Տես նաև Թբիլիսիի

[1] Համեմ. սխալ տեղադրված § 16 բնագրի հետ։

[2] Համեմ. Հ. Ս. Անասյան, «Հայ համաբարբառային գրականությունը», էջ 53—55։

Ձեռագրերի Ինստ. Հայ. ձեռ. № 162 (էջ 14ա—18ա)։

25. Բառ գիրք. «Նաւթ՝ կուպր կամ ձիւթ: Ձեղուն՝ առիք կամ առաստաղ կամ ուրճանք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8255, էջ 2բ—6բ (թերի)։*

Ունի բառերի ոչ-այբբենական դասավորություն։

Ձեռագիրը ԺԸ դ. է։

26. Բառարան մեկնութիւն բառի. «Մեկան՝ թանաք, միւռաքեաւ: Երկնալի՝ շնորհալի, իմաստուն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8540, էջ 3ա—3բ։*

Քսանումի բառերի ոչ-այբբենական ցանկ է, ԺԸ դ.։

27. *(Անխորագիր)* «Անծան՝ անգէտ: Ապազէն՝ անզէն կամ վա[ռ]թարազէն...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1448, էջ 139—245?։*

Ձեռագիրը ԺԶ դ. է։

28. *(Անխորագիր)* «Անյարիր՝ անյարմար: Անյեղլի՝ անփոփոխելի: Անյեղաբար՝ անայլաբար կամ անփոփոխ: Աններհո[ւ]ն՝ անիմաստ կամ անտեղեակ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3261, էջ 1ա—176բ։*

Ձեռագիրը ԺԷ դ. է։

29. Այս բառք գեղջուկք որ կարի պիտոյ է վարժասիրաց ներխոհեմից. «Անկումն՝ վճարումն: Հանգիստ՝ ելք: Վախճան՝ աւարտ: Սահման՝ դադարումն: Վերջ՝ կատարումն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2291, էջ 344ա—347ա։*

Ձեռագիրը 1665 թ. է։

30. Բառք ոմանք հաւաքեցեալք ի գրոց ըստ այբուբենից. «Ագի՝ պոչ, դմակ, ձեթ, տուտն: Ադիճնասարաս՝ արքունի պաղատ, ապարանք, տաճար մեծաշէն, խոյակապ: Ագբն՝ շաղամաթ, թեզան, մանած թել: Ագնիւ՝ աղէկ...», *տես՝ «Բառգիրք Հայոց, արարեալ ի սուրբ Էջմիածին, Երեմիա վարդապետէ», Կ. Պոլիս, 1728, էջ 536—572։*

31. *(Անխորագիր)* «Արաղչին՝ գլխարկ: Աւռն՝ պիսակութիւն կամ պիսակ: Արդարոյ տեղ՝ յորդոյ (sic) մասին: Անհամբեր՝ ապաժոյժ: Աղբել՝ գլգլդանս յորովայնին արտաքս վարել: Աղտայնպու՝ թաղասմաւոր ձի: Աբլագ՝ ակիտ. Աշխանայ՝ խոհակեր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3357, էջ 63ա—68ա։*

Պարունակում է նաև աշխարհաբար և թուրքերեն բառեր։ Լրիվ է՝ Ա—Օ։

32. *(Անխորագիր)* «Աբեղայ՝ կրօնաւոր կամ մոնոզոն, իբր թէ ապեղայ, այսինքն ի բաց եղէ յաշխարհէ: Ագարակ՝ ռամկ. չիֆտլիկ կամ գեղ: Ագանիլ՝ օթեանիլ, ռամկ. դօնմիշ ըլլալ կամ կօշիկ հագնիլ»: *Տես՝ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԵԲԱՍՏԱՑԻ։*

33. Վասն գովութեան այբից. «Այբն՝ բաւոր է: Բենն՝ առաքեալ է և սպասաւոր: Գիմն՝ գանձարան է: Դայն՝ դռնապան է և դեսպան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7117, էջ 120ա—122ա։*

Ձեռագիրը ԺԵ դ. է։

Հայկ. այբուբենի մասին գովասանք՝ տառերի հերթականությամբ։ Նմանօրինակ այլ նյութեր տեսնել նաև ԱՅԲՈՒԲԵՆ բառի տակ։

34. *(Անխորագիր)* «Արքանեակ՝ սպասաւոր...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 657, էջ 374բ—384ա?։*

Ձեռագիրը հավանաբար ԺԸ դ. է։

35. *(Անխորագիր)* «Առաջապահեստ՝ յառաջ պահօղ զպահսն: Աղիս՝ բրծած քեարպին: Անկուած՝ աղաւուր գործած պարշմեղէն: Ապարում՝ կապայի շատրի փէշ, ստոռոտ: Ապարօշ՝ սուրբ սեղանոյ զգենոց, ծածկոց, սաղավարդ...», *Երևանի Պետ Մատ. ձեռ. № 4335, էջ 104ա—135բ։*

Գրաբար-աշխարհաբար բառարան է։ Անհեղինակ։ Բառերի այբբենական դասավորումը խիստ չէ։ Ձեռագիրը ԺԹ դ. է, բայց բառարանը ծագումով ավելի հին է։

36. Բառարան Հայոց ժողովեալ համառօտ. «Ագահ՝ անյագ: Ագանիլ՝ օթեանիլ կամ զգենուլ: Ագարակ՝ փոքր գիւղ կամ այգի: Ադիճնասարաս՝ նման դրախտին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3996, էջ 7—122։*

Գրաբար-աշխարհաբար բառարան է։ Ձեռագիրը ԺԹ դ. է, բայց բառարանն ավելի հին է։

37. *(Անխորագիր)* «Ազատ՝ էզատ, ազատական, զերծ, ձեռնարձակ, արձակ, ընդար-

ձակ, ընդհատ, քաւեալ, զօր օրինակ մեղքէ ազատ, ընդհատ յանօրէնութենէ, քաւեալ ի մեղաց…», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1131, էջ 2ա—50բ։*

Գրաբար-աշխարհաբար բառարան է։ Ձեռագիրը ժէ դ. է։

38. *(Անխորագիր)* «Ագանիլ՝ տեղ մը իջնել, խոնախ ըն[ել], մեհեան բռնել, քովը մնալ, ինչպէս՝ Մի՛ ազգին առ քեզ վարձք վարձանի, այսինքն բանուորին հախը քովըդ չմրնայ…», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1131, էջ 116ա—145բ։*

Գրաբար-աշխարհաբար բառարան է։

39. Յառաջարկութիւն բանիցս այս. «Ածել՝ տանիլ, բերել, զարնել, դրբեցնել։ Ածել զրցով՝ կրակը մառնել, աքէշէ կիրմէք կամ սալմաք…», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1131, էջ 146ա—169բ։*

Գրաբար-աշխարհաբար բառարան է։

40. *(Անխորագիր)* «Աբբայ, յի՝ մեծ հայր, պապ։ Աբբանայ՝ բաղանիք կամ լուացման տեղիք։ Աբդլմսեհ՝ ծառայ Քրիստոսի։ Աբդիու՝ ծառայ տեառն։ Աբթաթայ կամ Աբթթայ՝ դիու՝ ծառայ տեառն։ Աբթաթայ կամ Աբթթայ՝ ազգ…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9776, էջ 2ա—290ա։*

Հայերենի բացատրական ճոխ բառարան է, որի կազմման համար օգտագործված են այլ բառարաններ։ Պարունակում է շուրջ 25.000 բառ։ Հեղինակն անհայտ է։ Վերջում անծանոթ գրիչը նշանակել է ընդօրինակման տարեթիվը՝ «Փառք քեզ տէր իմ Յս. Քս., շնորհակալ եմ ի քէն, ներմարմնութեան տեառն 1701, յունիս 30»։

Պողոս Պիրոմալլին, բառերի լատ. համարժեքների ավելացումով, սույն հայ. բառարանը վերածել է հայերեն-լատիներեն բառարանի (տես ստորև § 93)։

41. *(Անխորագիր)* «Արաժամ՝ երեկոյ կամ երիկուն։ Անաղամոն՝ անաղօտ կամ անճնեմ։ Անաղարտելի՝ անեղանելի կամ անխախտելի։ Անանէքաք (sic) անկարօտ աշխարհի կամ օտարացեալ յաշխարհէ իւրմէ։ Անբաւ՝ անհուն կամ անթիւ։ Անգայթ՝ անկայթակղ (sic)։ Ազդր՝ պուտ, խալաչայ (sic)։ Անտանօր՝ յայսմ տեղուջ (sic)։ Ա[ն]դեղայ՝ դեղքափ։ Անդրժելի՝ անուրանալի։ Անդոյր՝ հանդարտութիւն…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3357, էջ 21ա—58բ։*

Հայերենի բացատրական բառարան է, հիմնականում՝ գրաբար բառերի, բայց ունի նաև նոր և նորակերտ բառեր՝ Վիմագրել՝ ի վիմի գրել, Վիպասաց՝ հեքեաթ ասօղ, Վիսական՝ խոխտանքով կամ գոռոզանշան, Վիսկոտ՝ խոխտ կամ գոռոզ, Վնոաբան՝ վնիռ հատանօղ և սահմանադրօղ, Տապառան՝ խորշակ հողմ, Տնատել՝ բաժանել զբանս ի բազում տունս. *ևն։ Ունի նաև բարբառային և ազգագրական բառեր՝* Սողակուտ՝ սահիլ կամ լպրծումն կամ յանախ սողացօղ, Սարայ՝ ձող գաւազանաձև հարեալ յերկիր ճեցուկ որթուն խաղկաց (sic), Փամգամ՝ ծածկոյթ գլխոյ կանանց որ հասանէ մինչև ցոտս այսինքն մանդիլ կամ սաւան, իսկ երբեմն փոքր պատառակ է որ հասանէ մինչև ցմէջս այսինքն լաչակ *ևն։ Ունի նաև հատուկ անուններ։ Լրիվ է՝ Ա-Ք։ Ձեռագիրը ժԹ դ. է, բայց բառարանն ավելի հին է։*

42. Յաղակս (sic) լծորդ տառիցն և վանգիցն (sic) և հեգիցն, թէ ո՞րպէս անվրէպ յարին ընդ միմեանս ոմանք սեպհական տեղեաւ, և այլք փոփոխին ի հոլովսն, և դու, ո՞վ եղբայր, զոր ինչ ի սմա գտցես՝ աներկբայ գրեսցես, և մի՛ զտառս կամ զբառս փոփոխեսցես, զի այսպէս սրբագրեալ են զսա սուրբ և ընտրեալ վարդապետքն մեր։ Եւ ես անարժանս տեսի և աստ գրեցի զգուշութեամբ. «Անդստին։ Ասլրստամբ։ Ախտաժէտ, ախտաժետաց։ Անդրնդով։ Անըրշից։ Աղջկունք արծւոյ։ Անդ։ Անդանաւր…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 267, էջ 177ա—182ա։*

Քերականական բառարան՝ բառերի այբբենական դասավորությամբ։ Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1004 (էջ 203բ—209բ)։

43. Վասն ստուգութեանց տառից յաղագս լծորդագրոց ուղղեալ յոգնակի աշխատութեամբ ի վերայ այբուբենից. «Աբրահամ, Աբէլի աստուածպաշտութեամբ, աստուածսիրութեամբ։ Աստուածեան նշան։ Աստուածատես։ Աստուածայնոյ։ Աղամանդ, քար…»,

Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3467, էջ 110ա—118բ։

Ձեռագիրը ԺԷ դ. է։

44. Բառք բերականութեան պարզեալք ըստ այբուբենից (*սկ.* «Ագուգայ՝ այն տեղին յորմէ ջուրն թորելով և ծորելով իջանէ: Ագգան՝ ռամկ. բերբեթին, այսինքն՝ բևեռաքարշ: Ազատորդի՝ որդի իշխանի, այսինքն՝ պէյզատէ»)։ *Տես՝ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ։*

Բառարանի այլ օրինակներում՝ խոր. «Գումարք բառից որք գտանին ի Քերականութեան» (*սկ.* «Ագգան՝ ռամկ. բէլփէթին»)։ *Սույն բառարանը կապ չունի Մխիթարի* «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուի» *գրքի (Վենետիկ, 1727) վերջում գտնվող բառգրքի հետ, ոչ էլ նրա* «Բառգիրք հայկազեան լեզուի»*-ի հետ։*

45. Մասընկունք բաղադրականք և ըսկըզբնատառք բաղադրելեաց բազումք. «Ամէն՝ ամենաժողով տօն, ամենաքազաւոր, ամէնանեցուն, ամենաստեղծ, ամէնիշխան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3110, էջ 113ա—127ա։*

Տալիս է, այբբենական կարգով, բաղդրյալ բառերի առաջին մասերը։ Ընդգրկված են նաև որոշ թվով նախածանցներ՝ «Ան՝ անայցելու, անսայթաք...», կամ «Ապ՝ ապարդիւն, ապաժոյժ...» *ևն։*

Ձեռագիրը ԺԸ դ. է։ Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1038 (էջ 281—322)։

Նույն հեղինակի գործեր են նաև հաջորդ երկու բնագրերը (§§ 46 և 47)։

46. Վերջնաբառք բաղադրեալ բառից, բաժանեալք ըստ ձայնաւոր տառիցն, որք ի վերջին վանկս նոցա. «Արձակ՝ սանձարձակ, հերարձակ, ձիարձակ, ընդարձակ, համարձակ: Աւանդ՝ աստուածաւանդ, յիսուսաւանդ, արարչաւանդ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3110, էջ 127բ—140ա։*

Ձեռագիրը ԺԸ դ. է։ Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1038 (էջ 325—360)։

47. Ածանցական անուանց վերջք, ըստ զանազան ձայնաւորաց տառից, որք ի նոսա են. տեղերին բաժանմամբ եղան ի մի վայր. «Ած՝ առած, կատարած, կազմած, ողորմած, գրած, վիժած, կոխած, արտալած: Ակ՝ յուդակ, խնդրակ, գտակ, անուշակ, հրաւիրակ, նախահոգակ, գահաւորակ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3110, էջ 140բ—146բ։*

Ձեռագիրը ԺԸ դ. է։ Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1038 (էջ 363—377)։

48. Հաւաքումն բառից, որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են կամ բառք նոյնանշանք ժողովեալք ըստ այբուբենից (*սկ.* «Ագանիլ՝ օթևանիլ կամ օթևանս առնել» *կամ* «Ագահ՝ ընչասէր, արծաթասէր»)։ *Տես՝ ՄԱՏԹԷՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ։*

49. Գանձ Հայոց լեզուի կամ բառարան Ստեփանեան (*սկ.* «Այբ՝ իբր աբբայ, որ է հայր, զի է առաջին ձայնաւոր գիր ամենայն լեզուաց: Ի թիւ արժէ մի»)։ *Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ։*

50. Ստ. Ռոշքայի նամակներից մեկում (3 օգոստ. 1731 թ.) հիշատակվում է, որ Մաղաքիա Չելեբին պատրաստում էր հայերեն լեզվի մի բառարան։ Այդ մասին նա գրում է. «Արդ՝ ով ոք և իցէ, գովելի արդեօք, այն չելէպի Մաղաքիասն, որ ԺԸ տարիս ցայժմ ի վերայ բառարանին իւրոյ մաշեաց, ասեմ, թէ և զհազար գլուխս ունիցի, ոչ կարէ զկատարեալ բառարանն շինել, եթէ ոչ հիմնաբար տեղեակ իցէ Յունաց և Լատինացւոց լեզուին, և զԵբրայեցւոցն ևս մեկնութիւնն ունիցի, որոց ամենեցուն բաղում բառք գտանին յԱստուածաշունչն, և յայլ գրեանս Հայոց. բաց յայսցանէ պիտոյ է գիտել և զփիլիսոփայութիւնն, զաստուածաբանութիւն և զայլ գիտութիւնս, ապա թէ ոչ զի՞արդ կարասցէ մեկնել, զոր ինքն ոչ հասկանայ»[1]։

51. Երևանի Պետ. Մատ. № 3913 ձեռագիրը 240 թերթերից կամ 480 էջերից բաղկացած մի ընդարձակ բառարան է, որի վերջում կա գրչի 1698 թվակիր հիշատակարանը՝ գրված Աստապատում, Ավետիսի որդի Հովսեփ վարդապետի ձեռքով։ «Միջնադարյան հայ բառարանագրության վերջին շրջանի հետաքրքրական նմուշներից է Հովսեփ վարդապետի անունով հայտնի բառարանը։ Բառամթերքի հարստությամբ այդ բառա-

1 Հ. Տաշյան, «Ցուցակ հայ. ձեռ. Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», հտ. Ա, էջ 23։

բանը, որ ավելի քան 10300 բառ է պարունակում, գերազանցում է ցարդ մեզ հայտնի բոլոր հին բառարաններին, որոնցից և ոչ մեկին էլ նման չէ իր կազմության յուրահատուկ բնույթով։ Բառարանի 1698 թ. գրված միակ գրչագիրը (որը հավանաբար նախագաղափար օրինակ է) պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 3913 թվահամարի տակ։ ...Հիշատակարանը որոշակի տեղեկություն չի տալիս բառարանի հեղինակի մասին, հիմք չկա հաստատելու ձեռագրի գրիչ Հովսեփ վարդապետի միաժամանակ հեղինակ լինելը կամ չլինելը (Մատենադարանի ձեռագրացուցակը իրավացի կերպով հարցականի տակ է դնում հեղինակ բառը)։ Բնագրի պրպտումներն էլ զորեղ փաստեր չեն ընձեռում հարցի լուծման համար։ Կարող ենք ենթադրել, որ եթե Հովսեփ վարդապետը չի կազմել ամբողջ բառարանը, ապա նա գրել է բառարանի մի մասը միայն, միաժամանակ խմբագրելով ու ամբողջական տեսք տալով բառարանին։ Այսպիսի ենթադրություն մենք անում ենք հենվելով բառարանի արտաքին կողմի, գրչագրական վիճակի ու կառուցվածքի հետ կապված հանգամանքների վրա» (Հ. Ամալյան)։

52. Բառգիրք հայկազեան լեզուի, բաժանեալ յերկուս հատորս: Յորոց յառաջնումն որ է տպագրեալս այս, պարունակեալ գոն յոգնախուռն բազմութիւնք բառից Աստուածաշունչ գրոց, և այլոց երեւելի մատենից լեզուագէտ դպրապետաց: Մեկնեալ ի սմա մասնաւորապէս՝ մանրակտիտ բացատրութեամբ անուանք կենդանեաց, տնկոց, ականց, չափուց, դրամոց, գործեաց, և այլոց կահուց, և կարասեաց: Իսկ յերկրորդում հատորի որ հանդերձեալ է տպագրիլ, հաւաքեալ կան բազմութիւնք մնացորդաց բառից: Նաև բառգիրք արարեալ ի գրաբառէ յաշխարհաբառն, և յաշխարհաբառէ ի գրաբառն: Այլ և բառարան յատուկ անուանց: Արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ՝ աբբայ հայր կոչեցելոյ՝ աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց: Եւ յոգնաջան երկասիրութեամբ տպագրեալ ի նոյնոյ ի փառս ամենափրկչին, և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ: Ի հայրապետութեան տեառն Ղազարու Հայոց կաթուղիկոսի: Յամի փրկութեան մերոյ՝ 1749, մայիսի 19: Իսկ ի թուականութեան Հայոց՝ ՌՃՂԸ: Ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

1251 էջ (չափ. 20.5×12.8 սմ)։ Սկ. «Ա՝ է առաջին գիր հայկական լեզուի, որպէս և Լատինացւոց, Յունաց, Եբրայեցւոց, Արաբացւոց, և այլ ազգաց, կարգեալ ի թիւ եօթանց ձայնաւորաց...»: *Հատորի ներածության («Բան առ ընթերցողս») մեջ, բառարանի կազմության սկզբունքները բացատրելուց հետո, Մխիթար Սեբաստացին իր և յուրայինների կողմից գրում է. «Այլ զոր այժմ արժան է ինձ ասել՝ այս է, զի խոնարհամիտ սրտիւ ընծայեմ քեզ զպտուղ բազմամեայ աշխատութեանս՝ նուէր սիրոյ. զի ցանկալի է ինձ յինէն առնուլ և քեզ տալ, և որոց քում սակի են, վասն զի որ ինչ իմ է, քոյ է, և որ ինչ քո՝ իմ. վասն որոյ և ծառայելս իմ քեզ՝ պարծանք են ինձ, մանաւանդ թէ՝ և լրումն պաշտաման իմոյ և իմոցս. վասն զի ի սկզբանէ անտի որպէս ես, նոյնպէս և միաբանութիւնս մեր կարգեալ կայ ի սպասաւորութիւն բանի Հայկազեան տոհմի» են։*

Այս հատորը հայտնի է Մխիթար աբբայի բառարան *անունով։*

53. Բառգիրք հայկազեան լեզուի: Հատոր երկրորդ: Յորում նախ պարունակին մնացորդք գրաբառ բառից. երկրորդ՝ բառարան յատուկ անուանց. երրորդ՝ բառգիրք ի գրաբառ լեզուէ յաշխարհաբառն, և չորրորդ՝ յաշխարհաբառ լեզուէ ի գրաբառն. որոշեալք ի միմեանց հատուածովք այբուբենից: Արարեալ բազմատքուն և աշալուրջ եզանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբային և րաբունապետին Սեբաստացւոյ: Եւ յոգնաջան երկասիրութեամբ տպագրեալ՝ հրամանաւ գերապատիւ տեառն Ստեփաննոսի աբբայի՝ նորուն յաջորդի՝ վարդապետին Կոստանդնուպօլսեցւոյ: Ի փառս ամենափրկչին՝ տեառն բոլորեցունց, ի պատիւ ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին, և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ: Ի հայրապետութեան տեառն Սիմոնի հայոց կաթուղիկոսի: Յամի փրկութեան մե-

րոյ՝ 1769, սեպտեմբերի 8: Իսկ ի թուականութեան Հայոց՝ ՌՄԺԸ: Ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

1—263, 1—371, 1—416, 1—700 էջ (չափ. 20.5×12.8 սմ)։ Հատորը պարունակում է հետևյալ առանձին բառարանները.

ա. Մնացորդք գրաբառ բառից Հայկազեան լեզուի համառօտ մեկնութեամբ: *1—263 էջ։ Սկ.* «Աբբաս կամ Աբաս, սու, ու, ուց, ուք...»:

բ. Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր Կտակարանաց: *1—232 էջ։ Սկ.* «Աբաիա, այ՝ հայր տեառն կամ կամք տեառն...»:

գ. Բառարան յատուկ անուանց որք զատանին յայլ և այլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրից: *233—371 էջ։ Սկ.* «Աբանդ կամ Հաբանդ, այ, աւ՝ ռամկօր. խաբան...»:

դ. Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն, ուր մեկնին բառք հայկազեան լեզուի սոսկ աշխարհաբառ, կամ տանկական բառիւք: *1—416 էջ։ Սկ.* «Աա՝՝ վա՛յ վայ: Աբ՝ Եբրայեցւոց ամսու անուն...»:

ե. Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն, նոյնանշան բառից յարադրութեամբ: *1—700 էջ։ Սկ.* «Աբբայ կամ Աբբայ հար՝ ...աբբայ, աբբաս, աբաս, աբբայ հայր, վանահայր...»:

54. Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբահօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան: Տպագրեալ յառաջնորդութեան տեառն Սուքիասայ արհիեպիսկոպոսի Սոմալեան ընդհանրական աբբայի Մխիթարեան ուխտին: Հատոր առաջին: Ա—Կ: Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամին 1836 ՌՄՁԵ:

20+1140 էջ (չափ. 25.2× 17.1 սմ)։ Հատորի սկզբում զետեղված է նախադրությունը՝ բաղկացած հետևյալ մասերից.

Ա. Յիշատակ առաջնորդի նախկին բառարանին, այն է մեծն Մխիթար Աբբահայր *(էջ 6)։*

Բ. Յօրինուած նոր բառարանիս *(էջ 6—7)։*

Գ. Հանգամանք գործոյս *(էջ 7—8)։*

Դ. Հանրական բնութիւն բուն հայկաբանութեան *(էջ 8)։*

Ե. Խտրութիւն մատենից և մատենագրաց, յորոց քաղեցան բառք բառարանիս *(էջ 8—9)։*

Զ. Ցուցակ մատենից և մատենագրաց, ըստ կարգի համառօտագրութեանց՝ զոր վարեմք յընթացս գործոյս *(էջ 9—20)։*

Սկ. «Ա՝ առաջին նշանագիր հայկական՝ ձայնաւոր, անուանեալ՝ Այբ, որ և Ալփ որպէս յայլ բարբառս...»:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի...: Հատոր երկրորդ: Հ—Ֆ: Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամին 1837 ՌՄՁԶ:

1067 էջ (նույն չափ.)։ Վերջում՝ «Մնացորդք նորագիւտ բառից և վկայութեանց յաւուրս տպագրութեան ի վեր երևելոց» *(էջ 1041—1059) և* «Յաւելուած. Աշխարհիկ բառք անվկայք ի գրոց առ մեզ եղելոց» *(էջ 1060—1067)։*

55. Համառօտ բառգիրք հայկազեան լեզուի, ի պէտս ուսումնասէր համբակաց, աշխատասիրութեամբ եղբայր Զաքարիայ Տօնոկանեան, գրեալ յամի տեառն 1795, ի սեպտեմբերի 15, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու: *Կլուժի* Muzeul Ardelean, ms. № 1080.

56. Գումարք խմբից զանազան ոճից և անուանց յոգնանց շարակցելոց ընդ բայից ԼՆ (*սկ.* «Ազատորեար՝ այսինքն ազատ արք արհազունք»)։ *Տես՝ ԳԷՈՐԳ ՊԱԼԱՏԵՑԻ, «Գիրք փոքրիկ, յորում պարունակին պէսպէս իրք պիտանիք և օգտակարք»։*

57. Հաւաքումն բառից ոմանց՝ հանդերձ մեկնութեամբ, շարադասեալ ըստ կարգի այբուբենից (*սկ.* «Ագըրգարհա՝ է սա իր ինչ ի դեղորէից անտի, որ թուրքերէն ասի իւտիւլգահր: Ազէրպայճան՝ նոյն է ընդ բառին Ատէրպայկեան: Աբապէկեան արքայք՝ էին սոքա անձինք մեծասան, որոց վերջինն եղև կին մի ի զարմէ նոցին»)։ *Տես՝ ԳԷՈՐԳ ՊԱԼԱՏԵՑԻ։*

58. [Սահմանք իմաստասիրականք] «Վսեմական և ինքնաբուն գոյութիւն: Աս-

տուած՝ ծայրագոյն և եռանեալ բարի: Աստուած՝ բոլորակերտող և նախախնամիչ յոչէից էացելոցս, և նոյնինքն եռականութիւն եզականութեամբ երկրպագեալ, և միականութեամբ երրորդութեամբ բարեպաշտեալ ի բոլոր եղանակաց՝ իմանալեաց և զգալեաց գոյութիւն գո[յ]ածէ և մշտնջենաւոր: Անուն՝ է ձայն արարողի կամ կրողի, կամ ձայն նշանական ըստ գոյգ շարադրութեան առանց ամանակի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6897, էջ 397բ—410ա:*

Իմաստասիրական բառարան է, որի հնագույն օրինակն է այս ձեռագիրը, գրված Գլաձորի համալսարանում 1317 թ.:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 267 (էջ 152ա—176ա), № 1213 (էջ 155—181) ևն[1]. *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 263 (էջ 340ա—347ա). Վիեննայի* KKHB Cod. Arm. 3 (fol. 159^{r}—168^{r}).

Խոր. պատահում է նաև «Սահմանք իմաստասիրականք իբր հարցմամբ», «Դաւթի փիլիսոփայի Սահմանք իմաստասիրութեան ըստ այբուբենիցն տարից ոգեալ»: *Սկ. պատահում է՝* «Զի՞նչ Աստուած — Աստուած՝ վսեմական և ինքնաբուն գոյութիւն»:

59. (Անխորագիր) «Ագահութիւն՝ է մեղք մահկանացու: Բնախօս փիլիսոփայքն գրեն թէ ի մէջ չորքոտանի կենդանեաց շունն առաւել ագահ է քան զայլ կենդանիս, բայց ոչինչ ունի ո՛չ տուն, ո՛չ հաց...», *Լոնդոնի* Brit. Mus. Ms. Or. 5462, fol. 1^{r}—165^{r}.

Կրոնական ու բարոյական տերմինների բառարան է:

60. Գումարումն յոգնադիմի իրողութեանց Սահմանաց Դաւթի փիլիսոփայի և այլոց իմաստասիրաց, ըստ տարից դասաւորութեան շարակարգեալ: *Տես՝ ՄՈՎՍԷՍ (ՏԱԹԵՒԱՑԻ?):*

61. Բառք իմաստասիրականք և աստուածաբանականք համառօտաբար իբր սահմանօրէն արտադրեալք և հաւաքեալք ըստ այբուբենից (*սկ.* «Աբրահամ՝ է առաջին օրինակ հաւատոյ եւեք կերպիւ. այսինքն՝ նախկնաբար ի բաց կալով յանհաւատից. երկրորդ նախկնաբար հաւատալով յա՛յն ինչ որ ի վեր էր քան զբնութիւն»): *Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ:*

Իմաստասիրական և աստվածաբանական նյութերի այբբենական բառարան է:

62. Յոգնադիմի աստուածաբանական, բարոյական և քաղաքական իրողութեանց սահմանք, երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր ըստ կարգի այբուբենիցն հաւաքեցեալք: Ի լոյս ածեալ տպիւ և արդեամբք առաքելաշաւիղ Թօմայ եռամեծ վարդապետի Վանանդեցւոյ: Ամստերդամ, 1704:

58 էջ: Տերմինաբանական անանուն բառարան: Բուն խորագիրն է՝ «Սահմանք ըստ դասաւորութեան տարից». *սկ.* «Ագահութիւն՝ է, ըստ սեռականին, անյագ և անհամեստ ցանկութիւն փառաց, կամ այլ իւրաքանչիւր իրաց: Ագահութիւն՝ է, ըստ տեսականին, անկարգ սէր արծաթոյ, կամ այնց իրաց, որք ընդ արծաթոյ վաճառին...»: *Բառարանից հետո կա՝* «Արիստոտէլի յաղագս առաքինութեանց և Չարութեանց, ըստ կարի ի բուն յոյն օրինակէ գաղափարեալ և կարգադրեցեալ յումեմնէ ապիկար դպրէ Վանանդեցւոյ»:

Հետագայում այս բառարանի նյութերն օգտագործել է Արսեն Կ. Պոլսեցին՝ իր «Գիրք

---

[1] *Երևանի ձեռ. № 3082՝* «Գրիգորի Երուսաղէմացւոյ Սահմանք զանազանք արտորոշեալք ըստ սրբոց և ծայրագոյն վարդապետաց յաղագս տարբերական և այլևայլ անուանց» *(էջ 431ա—442բ, սկ.* «Զի՞նչ Աստուած»):

Գրիգոր Երուսաղեմացու կազմած այս ժողովածուն շարունակության մեջ պարունակում է բառարանագրական ուրիշ մի քանի մանր գործեր ևս.

ա. Բարոյականի յեղանակի սահմանք. «Արդ բաղձականին յարձակման գոլով սկիզբն...» *(էջ 442բ—443բ):*

բ. Սահմանք իմաստասիրականք միջակք. «Ողջութիւն՝ է չափակցութիւն ի մարմնի...» *(էջ 443բ—444ա):*

գ. Բանականի մասին սահմանք. «Սկիզբն մարմնոյ բնաւորական...» *(էջ 444ա—445բ):*

դ. Մասունք մարմնոյ. «Ուղեղ է մասն մարմնոյ...» *(էջ 445բ):*

ե. Յաղագս տնկոց վերջին գլուխ. «Տունկն կենդանի երկրային կամ էութիւն շնչաւոր...» *(էջ 445բ—446ա):*

զ. Նիւացւոյ. «Եռանութիւն է պարառութիւն...» *(էջ 446ա):*

սահմանաց յոգնադիմի իրողութեանց»-ը *կաղմելիս։*

63. Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց ըստ կարգի այբուբենիցն ի մի վայր հաւաքեցեալ *կամ* Յոգնադիմի աստուածաբանական, բնական, բարոյական և քաղաքական իրողութեանց գիտութիւնք (*սկ.* «Աբսիդիոսն՝ է խոտ իմն դառնագոյն»)։ *Տես՝ ԱՐՍԷՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ։*

64. Բառք ոմանց կենդանեաց՝ ըստ բնազննունց, ըստ որում հետևի. «Ագռաւն և գայլագռաւն՝ բարուքն են երկչոտք և յափշտակողք. և ագռաւն է յոյժ բղջախոհ, և յոյժ անհեթես և լեզուագար։ Աղուէսն՝ բարուքն է խաբշիկ, ճենճաւոր, չարագործ և դաւաճող...», *տես Հետևյալ հրատ. մեջ. «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց... երկասիրութեամբ նուաստագունեղ և չնչին բանասիրէ՝ Արսէն դպրոյ Կոստանդնուպոլսեցւոյ», Կ. Պոլիս, 1749, էջ 520—521։*

Այբբենական բառարան է։ Բաղկացած է 44 բառահոդվածներից։

65. Անուանք խեցեմորթացն. «Պիննա՝ ոստրիտին։ Մեռիսկտէն՝ կտէնիկոն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4149, էջ 350բ—351ա։*

Ձեռագիրը ԺԴ դ. է։

66. Բառք խոտոց, ծաղկանց և բուսոց ոմանց. «Ագրակէզ՝ խոտատանձ։ Ագրիտիս՝ սէզ։ Ալգոնա՝ խոտ։ Ալխոզագ՝ մշկանն եղինչ, որ է լելեղակ...», *տես՝ «Բառգիրք հայոց, արարեալ ի սուրբ Էջմիածին, Երեմիա վարդապետէ», Կ. Պոլիս, 1728, էջ 565—572։*

67. Յաղագս բուսոց և տնկոց պտղոց, որոց զօրութիւնն խաւլիաքն ցուցանէ և գտանես ի վերայ այբուբենական գրոյ կարգաւ. «Անանուխն տաք է և չոր. երկու դարանայ ստամոքսն զօրացնէ։ Արճնուկն տաք է և զէն, մէկ դարանայ, ջերմերուն և սրկան օգտէ և ախորժէ ստամոքին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 550, էջ 93ա—100ա։*

Ձեռագիրը ԺԸ դ. է։

68. Տնկաբանութիւն կամ Փղորայ Հայաստանի (*սկ.* «Աբարբին։ Այս անուն տնկաբանական յարանուանեալ ի յնփորբեայ»)։ *Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՇԱՀՐԻՄԱՆԵԱՆ։*

69. Լուծումն բառից ըստ կարգի այբուբեն տառից (*սկ.* «Ագռ՝ քաղցու կամ մեղր և կամ միս մինչ եփի և ընդ եփելն արտահանէ զկղկղանս և պարգի»)։ *Տես՝ ԳԷՈՐԳ ՊԱԼԱՏԵՑԻ։*

Գյուղատնտեսական բառարան է։

70. (Անխորագիր) «Ապէնիազ՝ անկարոտ։ Աղոստու (sic)՝ աշխարհակալ։ Աւչ՝ երանի։ Աւնիր՝ չար։ Առաքուր՝ ոտից ներքև կոխ անել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2370, էջ 274ա—289բ։*

Ձեռագիրը ԺԷ դ. է։

71. Բառգիրք Հայոց... և բառք Աստուածաշունչ գրոց ընդ սմա միաւորեալ (*սկ.* «Աբաքովբ՝ անչէն։ Աբբանայ՝ հօր օրհնութիւն»)։ *Տես՝ ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑԻ։*

Այս բառարանը սկզբնատողի բազմազանություններ ունի ձեռագրերում։

72. (Անխորագիր) «Բամ՝ բլուր, բարձունս, սեղանս։ Բակեղթաւ՝ շալակաւ։ Բեթեկար՝ տուն հովուաց։ Բեթեկ՝ կազմած։ Բուք՝ է որ ի թևքն ունի զգիծն, և ուր բութ ու շէշտ խառնին, պարոյկ կոչին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3200, էջ 193—202։*

Աստվածաշնչի օտար և հայ. խրթին բառերի բառարան։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 529 (էջ 137բ—144ա), № 5919 (էջ 210ա—216ա)։

73. Այս բառք յեռանիւսական բաղաձայնք հոմանուանց բազձանե[ա]լ ամենայն ինչ որ միանգամ անուանք եբրայեցի յօրէնսն և ի մարգարէսն և ի Նոր Կտակարանսն թարգմանե[ա]լ և մեկնե[ա]լ յեբրայեցոցն ի Յոյն և ի Յունէն ի Հայ, կարգաւ ըստ նշանագրաց աղփաբետիցն Եբրայեցոցն, թէ զի՛նչ միաբանութիւն անուանցն ունի. «Աղիփ՝ ուսումն նշանագրաց։ Բեթ՝ բնակեա ի դմա։ Գամեղ՝ լրումն վերագոյն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3197, էջ 105ա—144բ։*

Աստվածաշնչի հայ. թարգմանության մեջ գտնվող եբրայական անունների և բառերի բացատրական բառարան է, որի հնագույն ձեռագրերը ԺԴ դ. են։

Վերոնշյալ սկզբնատողով բերվում են եբրայական տառերի անվանումներն իրենց

ստուգաբանություններով։ Հաջորդում է բուն բառարանը՝ այբբենական կարգով.

Բառք Երայեցւոց. «Ադամ՝ երկիր կամ երկիր կոյս, կամ երկիր մարմնացեալ, կամ երկիր կարմիր, կամ յերկրէ։ Աբէլ՝ յԱստուծոյ առեալ մարգարէութիւն։ Աղէն՝ վայելեալ ի վկայութիւն նոցա...»։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 532 (էջ 60ա—72բ), № 2291 (էջ 329բ—344ա), № 2372 (էջ 168ա—200բ), № 2381 (էջ 133ա—152բ), № 3261 (էջ 180ա—216բ), № 5008 (էջ 76ա—115ա), № 5596 (էջ 201բ—216բ), № 5947 (էջ 4բ—27բ), № 5995 (էջ 71ա—96բ), № 7014 (էջ 1բ—25ա), № 7117 (էջ 190ա—218բ) են. Հմմտ. նաև № 4419 (էջ 262ա—280ա և 350բ)։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 847 (էջ 315ա), № 857 (էջ 101ա), № 1004 (էջ 2ա), № 1008 (էջ 1ա), № 1173 (էջ 3ա), № 1372 (էջ 29ա), № 1666 (էջ 96բ), № 1672 (էջ 5), № 1682 (էջ 185ա), № 1699 (էջ 10). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 337 (էջ 137ա), № 672 (էջ 93ա), № 1017 (էջ 2ա). Վիեննայի KKHB Cod. Arm. 3 (fol. 108r). Թբիլիսիի Ձեռագրերի ինստ. հայ. ձեռ. № 175 (էջ 2ա). Թավրիզի առաջն. ձեռ. № 14 (էջ 30բ). Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 72 (էջ 5). Նոր-Ջուղայի վանքի ձեռ. № 75 (էջ 4ա). Լվովի Bibl. Univ. Cod. Arm. 50 (p. 1). Վրոցլավի Zakł. Nar. im. Ossolińskich Ręk. Orm. 21 (s. 1). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Peterm. I. 145 (fol. 3r), Ms. Minut. 273 (fol. 1r).

Ձեռագրերում բնագրի ընդհանուր խոր. պատահում է նաև՝ «Այս բառք բաղաձայնք հոմանուանց...», և մեկ անգամ էլ՝ «Զամենայն որ ինչ միանգամ անուանք...» (Երևանի № 3261)։ Իսկ սկ. նույնպես պատահում է տարբեր ձևերով՝ «Աղիփ (Ալիփ, Այլիփ, Ալփ) ուսումն բանագրաց և նշանագրաց» և երբեմն, բացթողումով, նաև՝ «Նշանագրաց» կամ «Բեթ՝ բնակեա ի դմա»։

Բառարանային մասի խոր. պատահում է նաև՝ «Բառք Երայեցի», «Բառք ըստ Երայեցւոց», «Բառք Երայեցոցն թարգմանեալ ի մերս». իսկ սկ. պատահում է՝ «Ադամ՝ երկիր կամ կոյս», «Ադամ՝ որ է երկիր»։

Բնագրի սկզբում՝ եբրայական այբուբենին վերաբերող մասը ձեռագրերում հաճախ պատահում է նաև առանձին։ «Հետագայում բառարանին նախորդող այս այբուբենն անջատվել է նրանից, մատյաններում զետեղվել առանձին, որպես մի ինքնուրույն ցանկ, իսկ բառարանն էլ մնացել է իր 'Բառք Եբրայեցւոց' վերնագրով։ Մի շարք ձեռագրերում, օրինակ՝ № 4149-ում, բառարանը զետեղված է այդ ժողովածուի 262ա—278բ (sic) էջերում, ապա գալիս են հինգ ուրիշ բառարաններ և, վերջապես, 350բ էջում, բերվում է այբուբենը՝ 'Մեկնութիւն նշանագրաց ալֆաբենից Եբրայեցւոց, թէ զի՞նչ միաբանութիւն անուանց ունիցին կամ որպէս' վերտառությամբ։ Այդ վերնագրով էլ հանդես է գալիս այբուբենը բոլոր այն ձեռագրերում, որոնց մեջ նա բերված է որպես մի անկախ, ինքնուրույն գործ» (Հ. Ամալյան)։

74. [Բացատրութիւն անուանց] «Յուդա՝ խոստովանութիւն թարգմանի։ Ռուբէն՝ տեսութիւն անուանի...», Թբիլիսիի Ձեռ. Ինստ. հայ. ձեռ. № 175, էջ 41բ—42ա։

75. [Երայերէն—հայերէն բառարան] «Զի՞նչ է ապպիու։ Պտ. Մի յանուանցն Աստուծոյ. նշանակէ ապ, այսինքն հայր...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8725, էջ 41բ—43բ։

Տալիս է Հին Կտակարանի եբրայական բնագրից քաղված բառերի բացատրություններ։

76. Ցանկ սրբոց չորից աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու [և] Յոհաննու, հաւաքեցեալ ի վերայ յայբբենի, գեմի և դայի մինչև վերջ քէի և օյի։ Տես՝ ԱՆԱՆԻԱ ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ։

Չորս ավետարանների համաբարբառային բառարան է[1]։

77. Գրքոյկ որ կոչի Ցանկ գիրք Նոր Կտակարանին, որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երևելիս, եղեալ ըստ այբբենական կարգին հանդերձ համարաթուով գլխոցն և համարացն տնատմանց։ Տես՝ ԲԱՂԴԱՍԱՐ

[1] Հմմտ. Հ. Ս. Անասյան, «Հայ համաբարբառային գրականությունը», էջ 29—33։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Պատմական և բանասիրական երկեր, § 3:

Նոր Կտակարանի համաբարբառային բառարան է[2]:

78. Թարգմանութիւն Պարսիկ բառից (երկու տարբեր խմբագրությամբ՝ այբբենական և ոչ-այբբենական).

ա. Թարգմանութիւն Պարսիկ բառից ի Վարդան գրոց. «Ամբարտքաշն՝ ջահակրօն կամ լուսամիտ: Բազպայիտ՝ մեղաց քաւարան կամ քօշիցն զենումն: Գոմէզն՝ օշնան, խոտ է զոր այլ փիրք օճառ ասէ լուալեաց...», Երևանի Մեա. Մատ. ձեռ. № 3172, էջ 215բ—216բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 5925 (էջ 106ա—107ա). Վիեննայի KKHB Cod. Arm. 3 (p. 172—173) են:

բ. Թարգմանութիւն Պարսիկ բառից ի Վարդան գրոց. «Զրադաշտական՝ գրուն բան կամ զկարևոր ուխտ: Վգրուկ՝ մեծ: Երան և տաներան՝ մեծարոյ և պատուական: Դենիմազդէ՝ հաւատոյ հաւատ...», Երևանի Մեա. Մատ. ձեռ. № 2372, էջ 350ա—351բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 266 (էջ 73ա), № 267 (էջ 194բ—195ա), № 532 (էջ 86բ—87ա), № 533 (էջ 15ա—15բ), № 2291 (էջ 329ա—329բ), № 2335 (էջ 4ա—5բ), № 2372 (էջ 350ա—351բ), № 2381 (էջ 236ա—236բ), № 3170 (էջ 140բ—143ա), № 3197 (էջ 165ա—166բ), № 3202 (էջ 172ա—174ա), № 3261 (էջ 177ա—178ա), № 4149 (էջ 349ա—350բ), № 5008 (էջ 124ա—124բ), № 5947 (էջ 116ա—117բ), № 6624 (էջ 99բ—101ա), № 7117 (էջ 318ա—319բ), № 7250 (էջ 73ա), № 7995 (էջ 45ա—45բ), № 8198 (էջ 74ա—74բ) են: Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 857 (էջ 234բ—?), № 1008 (էջ 105բ—106ա), № 1422 (էջ 317ա), № 1682 (էջ 452ա—454բ?), № 1699 (էջ 3—5?). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 72 (էջ 390բ—392ա), № 337 (էջ 249բ—250ա?), № 916 (էջ 10ա—11ա?). Թավրիզի առաջն. ձեռ. № 14 (էջ 26ա—27բ). Լվովի Bibl. Univ. Cod. Arm. 50 (p. 141—142?). Բեռլինի Kön. Bibl. Ms. Or. Minut. 273 (fol. 73v—78r). Թբիլիսիի Ձեռագրերի ինստիտ. հայ. ձեռ. № 175 (էջ 120ա—121ա):

□ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի պարսկ. բառերի բացատրական բառարան է: Հնագույն օրինակները ԺԴ դարից են:

Ձեռագրերում խոր. պատահում է նաև այսպիսի ձևերով. «Թարգմանութիւն Պարսից բառից...», «Թարգմանութիւն պարսիկ բառի Վարդան վրդ.ի ասացեալ», «Մեկնութիւն Պարսից բառից ի Վարդան գրոց», «Բառք Պարսից՝ Վարդանանց», «Բառք Պարսից վարդապետաց», «Բառք Վարդան գրոց» են: Սկ. պատահում է նաև՝ «Զրադաշտական բուն», «Զրադաշական գրուն», «Զրադեշտական գրուն», «Զրադեշտական այս է գրուն բանն», «Զիադեշտական այսինքն բուն», «Զրաշդաշական գրուն», «Զագեշտական այսինքն բուն բան», «Արադաշտական գրուն», «Բուն բան կամ զկարևոր ուխտ», «Ամբարտքաղն ջահակրօն» են:

79. Բառգիրք պարսկական լեզուի կամ Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից (սկ. «Ա՝ է հր. Ամէտէն բային և նշ. եկ, Կէլ: Գոլով թեբևացուցեալ ի բուն հր. Այ»: Տես՝ ԳԷՈՐԳ ՊԱԼԱՏԵՑԻ:

80. (Անխորագիր) «Ազէր՝ հուր, աթէշ. նար...», Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 769, էջ 3—50:

Պարսկերեն-հայերեն-թուրքերեն-արաբերեն բառարան է: Ձեռագիրը ԺԷ դ. է:

81. Քիրար ալֆաս: Բար ու ալիֆ: Գիրք ալֆասին և համաշարումն ալիֆին: Զի իբր հայկազեան լեզուոյ յորջորջումն զառ ի հրմտասիրացն զգտեալն բառք-գիրք մակագրէ: Սոյն գունակ Արաբացոց կոռովիքն զշաղաշարեալ ալփաբետոս ալֆաս անձայնեն. «1. Իբթիդա վա իֆթիթա վը ինիշայ՝ Աղազի քարէ Բիդըն՝ Սկիզբն գործոյ առնել: 2. Ինթիհա՝ Բըփայան չիզէ րըսիդըն՝ Զկնի իրի հասանել...», Բանբեր Մատենադարանի, № 9, 1969, էջ 392—399:

Արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարան է: Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ.

2 Հմմտ. անդ., էջ 33—35:

№ 7151 և № 1770 ձեռագրերի հիման վրա։ Հրատարակիչ՝ Հ. Ամալյան։

Բովանդակում է 204 բառ՝ ըստ արաբական այբուբենի հերթականության և ընդգրկում նրա միայն ա, բ և տ (ا, ب, ت) տառերը։ Վերոնշյալ վերնագրից առաջ բնագիրն ունի հետևյալ առաջաբանը.

«Այս բառք են որ շարամանեալ են եռակի ոճիւք և եղանակաւք զընթացս լեզուաց երրակի ազանց՝ զԱրաբացոց, զՊարսից և զՀայկազեանց, զոր բացերևապէս ենթադրեալ եղև անուանք և բայք ըստ կարգի և աստիճանի և պարունակեալ հոմանունապէս ի տարրականն տառի յԱլիֆէ սկսեալ մինչև ցԻէ, իբր թէ յԱյբէ մինչև ցՔէ։ Եւ այս յԱրաբացոց իմաստնոցն, զոր թարգմանեալ եղև ի բանասիրացն Պարսից և սակս կարճառստ և բազմահայեաց երագասահ հոլովմանցն պատուեալ եղև ի նոցունց ի մատեանս տառից և ի մարզարանս խաւսից, որով և յեղափոխեալ ի նոցունց ի հայկականս բարբառ յաղագս ուսումնասէր հասակաց, քանզի կարաւտ գոլով անաւսրաթեիցն մեղուացն յոքնազանից հիւթից ներհակաց առ ի լրումն արուեստաստեղծն հնարից որ զճաշակս ճաշակողաց քաղցրացուցանէ»։

Բ. Լ. Չուգասզյանը տվել է սույն բնագրի մի նոր հրատարակություն՝ արաբերեն և պարսկերեն բառերի տակ նշանակելով նրանց լատինական տառադարձությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3 (50), էջ 161—183։

82. [Բառարան արաբերէն—հայերէն—թուրքերէն] «Ըրբըլ իլահ, ալահ, իլահ, րոբբ — տէր Աստուած...», Լրաբեր Հասարակական Գիտությունների (ՀՍՍՀ Գիտութ. Ակադ.), 1968, № 9, էջ 84—91։

Հրատարակել է Բ. Լ. Չուգասզյանը՝ Երուսաղեմի Հայկ. Մատ. № 428 ձեռագրից։ Պարունակում է, ոչ այբբենական դասավորությամբ, 93 բառ։

83. Մեր թվականության 900 թվականից հասած լատիներեն մի ձեռագրում (Bibliothèque du grand séminaire d'Autun, Ms. 17A) գտնվում է լատիներեն—հայերեն մի բառարան, որը բովանդակում է 90 բառեր։ Հայ. բառերը գրված են լատինական տառերով և ենթարկված խոշոր աղավաղումների։ Բառերի դասավորումն այբբենական չէ, այլ գնում է խմբավորումներով՝ օրերի անուններ, թվական անուններ և այլ իրերի անուններ։ Այս բառարանը հանդիսանում է արևմտյան աշխարհի պատմական գրավոր աղբյուրներում հանդիպող փաստական հնագույն նյութը՝ հայ. լեզվի վերաբերյալ։ Այս բառարանի բնագիրն առաջին անգամ հրատարակել է Հ. Օմոնը[1], իսկ Օգ. Կարիերը նույնը վերահրատարակել է՝ ուսումնասիրությամբ և լատինատառ հայ. բառերը ճշտելով ու վերականգնելով[2]։

84. Բրյուսելի Արքայական Մատենադարանում գտնվում է մի եռահատոր հայերեն—լատիներեն բառարան (Bibliothéque Royale, Mss. №№ 21882, 21883, 21884), որի հեղինակը հայտնի չէ, ԺԸ դ.։ Այս բառարանի մասին Ա. Սարուխանը գրում է. «Մի խոշոր մեծադիր (in folio) Բառարան՝ 3 հատորից բաղկացած, կաշեկազմ, հայերէնից լատիներէն, բայց երբեմն պատահում են նաև հայերէն բացատրութիւններ եւ գաղղիերէն։ Տառերի ձևը բոլորգիր է։ Այս տարօրինակ բառարանը բովանդակում է ոչ միայն հայերէն գրաբար եւ ռամկական բառեր, թէեւ ոչ ամբողջական, կիսատ, այլ եւ ամէն տեսակ հին ու նոր, գրական եւ ժողովրդական օտար բառեր, որոնք այս կամ այն ձեւով եւ հնչումով մտել են գործածութեան մէջ։ Բառերի առջեւը դրուած են, ոչ բոլորի, նրանց նշանակութիւնը լատիներէն։ Օտար բառերի առջեւ՝ նրանց հայերէնը։ Բոլոր օտար եւ ռամկական բառերը գրուած են այն ձեւով, ինչպէս որ հնչւում են ժողովրդեան բերանում։ ... Ոչ մի տեղ յիշատակութիւն չկայ, թէ ո՞վ է նրա հեղինակն եւ ե՞րբ կամ ո՞ւր է գրուած։ Ա. հատորի սկիզբը կայ միայն հետեւյալ տարօրինակ գաղղիերէն մակագրութիւնը. տարօրինակ՝ իր ուղղագրու-

[1] H. Omont, հետևյալ հրատ. մեջ. „Bibliothèque de l'École des Chartes", Paris, 1882, p. 563–564.

[2] Aug. Carrière, „Un ancien glossaire latin-arménien", Paris, 1886.

թեամբն եւ անելի տարօրինակ՝ իր ստորագրութեամբը. "Le présent diquetionaire (dictionnaire) a tête (a été) trôve (trouvé) chez un bokiniste (bouquiniste) de ia rue St. Severin—St. Jacque". *Ստորագրված է—* Thonderterthroukh. Armenian de Erzerum. *Առեղծված է այդ «Էրզրումցի հայի» անունը:*

Արդեոք սա այն հայ-լատին բառարանը չէ՞, որ յօրինել է Ամստերդամի հայ եկեղեցու հովիւ Ամասիացի Տէր Յովհաննեսը, որ Ամստերդամ է եկել 1733-ին, մասնակի վերանորոգել է սոյն եկեղեցին 1749-ին եւ յիշւում է իբրեւ հայ-լատին բառգրքի հեղինակ»[1]:

85. Բառգիրք ամենայն իմաստասիրական բառից Հայոց և լատինացւոց. Dictionarium armeno-latinum omnium scholasticarum dictionum *(ակ.* «Ագահութիւն, թենի՝ avaritia. Ազատական արհեստ՝ liberalis ars»). *Տես՝ ԳԱԼԱՆՈՍ (Կղ.), § 4:*

86. Dictionarium armenico-latinum. *Տես՝ ԼԱԿՐՈԶ Մ. Վ.):*

87. Հայտնի է Ս.-Պ. Լուրդեի կողմից հորինված հայերեն—լատիներեն մի ընդարձակ բառարան (ԺԸ դ.), որը մնացել է անտիպ[2]*: Տես՝ ԼՈՒՐԴԷ (Ս.-Պ.):*

88. ԺԸ դ. հիշատակվում են Հովհաննես Ամասիացու հեղինակած հայերեն—լատիներեն և լատիներեն—հայերեն բառարանները, որոնց ձեռագրերն այժմ գտնվում են Վենետիկի Մխիթ. մատենադարանում[3]*: Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԱՍԻԱՑԻ:*

89. Հիշատակվում է Հովհաննես-Մկրտիչ անուն լատին վեղարավորի հորինած հայերեն—լատիներեն—իտալերեն բառարանը, որի հիմքը կազմել է Մխիթար Սեբաստացու բառարանը: Այդ մասին Հակոբ Շահան Ջրպետը գրում է.

„Vers l'an 1760, le Père Jean-Baptiste, capucin et missionnaire en Arménie, traduisit le dictionnaire de Mikhitar [de Sébaste] en langues latine et italienne; mais il n'y rapportait le plus souvent que les mots arméniens qui se trouvent dans la Bible, et qui sont cités par les lexicographes arméniens, avec les indications des livres, chapitres et versets. Il supprimait presque tous les mots qui ne se trouvent pas dans la Bible, et ceux particulièrement dont le sens lui était inconnu. Cet ouvrage manuscrit forme un gros volume in-folio[1]. *Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՎԵՂԱՐԱՒՈՐ «ի Դոկսիչիոյ»:*

Այս բառարանը հետագայում լրացվել ու ավարտվել է Գաբր. Վիլլաֆոռայի կողմից (տես ստորև՝ § 97):

90. Lexicon armenicum. *Տես՝ ՇՈՒԼՑԷ*[2]*: Հայերեն—լատիներեն բառարան է:*

91. ԺԸ դ. սկզբներում հիշատակվում է Լուդովիկոս ԺԴ-ի արքունի թարգման Պետիս դը լա Կրուայի եռահատոր հայերեն—լատիներեն բառարանը: Տես՝ ՊԵՏԻՍ ԴԸ ԼԱ ԿՐՈՒԱ (Ֆր.):

92. Dictionarium armeno-latinum. *Տես՝ ՊԵՏՐԷՈՍ (Թէոդ.):*

93. [Vocabularium armeno-latinum] *(ակ.* Աբբայ, յի՝ Մեծ հայր կամ պապ՝ Avus: Աբբանայ, նի՝ Բաղանիք կամ լուացման տեղիք՝ Balneum, lavatoriu[m]"). *Տես՝ ՊԻՐՈՄԱԼԼԻ (Պօղ.):*

Համա. վերևում՝ § 40:

94. Բառագիրք Հայոց *կամ* Dictionarium armeno-latinum *(ակ.* «Աբագուք՝ Abacuch. Աբդիայ՝ Abdias Աբեթ՝ Japheth. Աբեթա-

---

[1] *Ա. Սարուխան, «Բելգիա և հայերը», Վիեննա, 1937, էջ 202—204:*

[2] J.-Ch. Cirbied, „Grammaire de la langue arménienne", Paris, 1823. p. XLII—XLIII. *Գ. Ա. Տրումպֆ և Գ. Զարբհանալյան, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս», Վենետիկ, 1895, էջ 97, 99—101:*

[3] *Տես՝ Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն հայերէն դպրութեան», հտ. Բ, Վենետիկ, 1878, էջ 409—410:*

[1] J.-Ch. Cirbied, „Grammaire de la langue arménienne", p. XLI—XLII. *Համա. նաև Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն հայերէն դպրութեան», հտ. Բ, էջ 413—414: Գ. Ա. Տրումպֆ և Գ. Զարբհանալյան, «Ուսումնասիրութիւնք», էջ 99—100:*

[2] *Համա.* J. Assfalg, „Armenische Handschriften", Wiesbaden, 1962, S. 112. *Հեղինակն է՝* Johann Heinrich Schulze-*ն (1687—1744 թթ.) կամ նրա որդին՝* Johann Ludwig Schulze-*ն (1734—1799 թթ.):*

ծինք՝ Progenies Japheth. Աբեդնագովր՝ Abdenago"). *Տես՝ ՌԻԽՈԼՍ (Փրանկ.)։*

95. Հիշատակվում է Ստեփանոս Ռոշքայի հեղինական հայերեն—լատիներեն մի բառարանը, որն անտիպ է մնում, հավանաբար Լվովում[1]*։ Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ։*

96. Հիշատակվում է Հովակիմ Սքրոդերի հեղինակությամբ մի անտիպ հայերեն—լատիներեն բառարան (Index vocum in Lexico armeno-latino comprehensarum), *որը գտնվում է Կասսելի (Գերմանիա) Հանր. գրադարանում* (Landesbibliothek)[2]. *Տես՝ ՍՔՐՈԴԵՐ (Յով.)։*

97. Բառգիրք հայ—լատին—իտալական, ի Յոհաննու Մկրտչէ աստուածաբան վարդապետէ Գաբուչինաց կարգին սկսեալ, և բազմատքուն աշխատասիրութեամբ հօր Գաբրիէլին Վիլլափոր Աղեքսանդրացւոյ, նոյնոյ կարգի վարդապետին, կատարեալ *կամ* Dictionarium quatuor linguarum, armeniae scilicet literalis, armeniae vulgaris, latinae, atque italicae[3]. *Տես՝ ՎԻԼԼԱՖՈՐԱ (Գաբր.)։*

Հմմտ. վերևում՝ § 89։

98. (*Անխորագիր*) «Քերականութիւն՝ grammatica. Ուղղագրութիւն՝ orthographia. Գիր՝ litera. Տառ[ք]՝ elementum. Գրակազմութիւն՝ literarum...», *Երևանի Պետ. մատ. ձեռ. № 7560, էջ 41ա—64բ։*

Հայերեն—լատիներեն քերականական բառարան է։ Հեղինակը հայտնի չէ։

99. [Բառարան լատիներեն—հայերեն] «Ֆիլանթրոփոս՝ այսինքն Աստուած մարդասէր։ Ակիրոլոգիայ կամ Աչիրոլոգիայ՝ այսինքն անյատկաբանութիւն. զոր օրինակ՝ Յուսամ ի Տէր, փոխանակ ասելոյ՝ Երկնչիմ ի Տեառնէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8725, էջ 44ա—49բ։*

100. Dictionarium latino-armenum (*սկ.* „A—Ա, ա. A, ab—'ի, յ. Aaron—Ահարոն, եհ, այսինքն լեառն կամ լեռնական, եհ. Abagio, nis—առակ, կի, բառակապ"): *Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍԵԱՆ [ՆԵՐՍԵՍՈՎԻՉ]։*

101. Dictionarium novum latino-armenium, ex praecipuis armeniae linguae scriptoribus concinnatum (*սկ.* „Abactor pecorum—խաշնավար, խաշնատար, խաշնագող, խաշնահալած"): *Տես՝ ՅԱԿՈԲ ՎԻԼԼՈՏ։*

102. Հիշատակվում է, 1771/72 թթ., ֆրանսիացի Գաբրիել անուն վեղարավորի կազմած անտիպ բառարանը՝ «ի լատին լեզուէ ի հայ բարբառ իբրև զՎիլօթն»[1]*։ Տես՝ ՎԻԼԼԱՖՈՐԱ (Գաբր.)։*

103. Բառարան ի լատինէ ի հայ, ընդօրինակեալ ի բառարանէ Վ. Հ. Խաչատուր վարդապետի Սիւրմելեան, համեմատութեամբ բառարանի Տրումելեայ (Drummel) ի լատինէ ի Գերմանացւոց բարբառ, ի Հայր Յակոբ վարդապետէ Ստեփանեան Ջէմինցւոյ, յաբբայութեան գերապատիւ տեառն Ստեփաննոս վարդապետի Մելքոնեան, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, սկսեալ յամի տեառն 1793 ՌՄԽԲ ի մայիսի 1, և աւարտեալ յամին 1795 ՌՄԽԴ ի փետրվարի 28։ *Կլուժի* Muzeul Ardelean, ms. № 1045.

104. Selecta vocabularum lat. et armen. Ծաղկաքաղ հատընտիր բառից լտ. և հայ. ի պէտս համբակաց, աշխատասիրութեամբ եղբայր Զաքարիայ Տօնոկանեան, գրեալ յամի տեառն 1801, ի վանս Սրբոյն Ղազարու, ի Վենետիկ։ *Կլուժի* Muzeul Ardelean, ms. № 1073.

105. [Բառարան հայերեն—իտալերեն] «Արքահայր՝ փատրէ ապաթէ...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 46, fol. 301—306.

ԺԸ դ. ձեռագիր է։

106. Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. № 212 ձեռագրում գտնվում են հայերեն—իտալերեն երկու բառարաններ՝ «Բառգիրք հայերէն և դալեաներէն» (*էջ 1—127*) *և* «Փոքրակոխ բառգրքին օրինակն այս է.

---

1 S. Barącz, „Rys Dziejów Ormiańskich", Tarnopol, 1869, s. 193.

2 *Տես՝ «Յուշարձան» (ժողովածու), Վիեննա, 1911, էջ 182—183։*

3 *Տես՝ Թբիլիսիի Ձեռագրերի ինստ. հայ. ձեռ. № 245։ Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 44.

1 *Ղ. Տայյան, «Մայր ցուցակ Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 277 (№ յե)։*

Բառգիրք հայերէն և դալեաներէն» (էջ 129—162), որոնցից հետո տրված են իտալերեն բայերի այբբենական ցանկը (էջ 167—211) և մի շարք իրերի բառացանկեր՝ «Յաղագս մրգաց», «Յաղագս խոտեղինաց», «Յաղագս պահարից», «Յաղագս կերակրոց և ըմպելեաց» են (էջ 216—262)։ Իտալերեն բառերը տրված են հայերեն տառերով։

107. Գեռլայի հայ. № 54 (39) ձեռագիրը բովանդակում է մի «Բառարան հայերէն—իտալերէն»[1]։

108. ԺԸ դ. վերջերում կազմվել է հայերեն-իտալերեն այբբենական մի համառոտ բառացանկ, որը պարունակում էր Աստվածաշնչի գրքերի հայ. անվանումները և 167 հայ. բառեր՝ լատինական տառերով։ Այս բառացանկը, որ կազմել էր Բ. Պիանզոլան, հրատարակվել է նրա «Քերականութիւն, բառարաններ և խոսակցութիւններ...» աշխատության 3-րդ հրատարակության Դ հատորում, որը լույս է տեսել 1801 թվականին[2]։ Տես՝ ՊԻԱՆԶՈԼԱ (Բեռն.)։

109. Մոտ. ԺԷ/ԺԸ դդ. հիշատակվում է «յիտալականէ ի հայ Փոքր Բառարան մը, բայց բոլորն ալ հայերէն գրով ու ջուղայեցւոց լեզուով. և թէպէտ տպագրութեան քաղաքն ու թուականը չի յիշատակուիր, բայց հաւանական կ'երևայ թէ ի Վենետիկ եղած ըլլայ անոր տպագրութիւնը»[3]։

110. Փարիզի Ազգ. Մատենադարանում պահվում է Պետիս դը լա Կրուայի կազմած ֆրանսերեն—հայերեն անտիպ բառարանը (Bibl. Nat. Ms. Arm. 262)։ Տես՝ ՊԵՏԻՍ ԴԸ ԼԱ ԿՐՈՒԱ (Ֆր.)։

111. Ստ. Ռոշքան ունի հայերեն—լեհերեն և լեհերեն—հայերեն անտիպ բառարան, որի օրինակներից մեկը գտնվում է Վենետիկի Մխիթ. Մատենադարանում, իսկ մի ուրիշ օրինակ՝ Լվովի հայոց մայր-եկեղեցու գրադարանում[1]։ Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ։

112. Գեռլայի հայ. № 54 (39) ձեռագրում գտնվում է մի «հայերէն—լեհերեն—լատիներէն» բառարան[2]։

113. Մի «հայերէն—նեմեձնակ» բառարան է հայտնի՝ Գեռլայի հայ. № 54 (39) ձեռագրից[3]։

114. ԺԳ դարում Կիրակոս Գանձակեցին իր Պատմության ԼԲ գլխում տալիս է հայկ. տառերով գրված մոնղոլերեն մոտ. 60 բառերի մի ցանկ՝ հայ. համարժեքներով[4]։ Էդ. Դյուլորիեն այս բառացանկը համարել է որպես մոնղոլերեն լեզվի գոյություն ունեցող նմուշների մեջ հնագույնը և, հրատարակելով ամբողջությամբ, մոնղոլերեն բառերի դիմաց մեծ մասամբ նշանակել է մոնղոլերեն ճշգրիտ ձևերը[5]։ Հ. Աճառյանը նույնպես մոնղոլական գրականության հնագույն հիշատակարանն է համարում այս բառացանկը[6]։

115. Մեկնութիւն՝ Այիրմա եա աչմախ. «Քերական՝ կրամադիքա եա խրմախ, էկրիսընը դողրուդմա, եանըշնը չըխարմա, եա քօրքուզնը գօրքլու էդմախ...», Լենինգրադի Библ. им. Салтыкова-Щедрина, арм. рук. № 8, стр. 138а—139б.

Քերականական տերմինների հայերեն—կոմաներեն բառացանկ է։ Տես նաև Վիեն-

---

[1] Ա. Քոլանջյան, Բանբեր Մատենադարանի, № 9, 1969, էջ 466։

[2] „Grammatica, dizionarij e colloquij per imparare le lingue itallana, greca-volgare e turca e varie scienze, opere del p. maestro B. Pianzola", Venezia, A. Zatta, 1801.

Այս մասին տես՝ Ն. Տեզա, «Ի՞նչ բան ըրաւ հայերէնի համար Պիանզոլան», Բազմավէպ, 1896, էջ 570—571։

[3] Գար. Զարբհանալյան, «Պատմութիւն հայերէն դպրութեան», հտ. Բ, Վենետիկ, 1878, էջ 407։

---

[1] Հմմտ. S. Barącz, "Żywoty sławnych Ormian w Polsce", Lwów, 1856, s. 283. Idem, „Rys Dziejów Ormiańskich", Tarnopol, 1869, s. 193—194.

[2] Ա. Քոլանջյան, Բանբեր Մատենադարանի, № 9, 1969, էջ 466։

[3] Ա. Քոլանջյան, նշվ., էջ 466։

[4] Տես՝ «Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 273—275։

[5] Éd. Dulaurier, „Les Mongols d'après les historiens arméniens; fragments traduits sur les textes originaux", *Journal Asiatique*, 1858, février-mars. p. 251—252.

[6] Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հտ. Բ, էջ 625, § 39։

նայի Մխիթ. Մատ. ձեռ. № 84 (էջ 4ա—8բ) և № 95 (էջ 74բ—78ա)։

116. Երևանի Պետ. Մատ. № 2267 ձեռագրում, որը լեհաստանում է գրվել ԺՁ դ. վերջերին, գտնվում է կոմաներեն—հայերեն մի ընդարձակ բառացանկ (էջ 29ա—42բ), որը տալիս է նաև բառերի հոլովական և խոնարհման ձևերը՝ երկու լեզուներով։

117. Պատմութիւն ճայի և խըբչախ լեզուի մեկնեալ (սկ. «Եռանեալ է...: Ի ժամու՝ վախղնա: Մի՛ թափեսցի՝ դօfլմակայ եա սիլfմակայ»)։ Տես՝ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԿԱՒԱԳ։

118. Երևանի № 3522 ձեռագրում «Ցանկ գրոցս, զոր գրեալ է և ունի յինfեան զհոլովս անուանց և զխոնարհմունս բայից ի ճայ և ի թաթար լեզու» խորագրի տակ (էջ 226ա—351բ) կան բառարանագրական և քերականական բնույթի հայերեն—կոմաներեն կարևոր նյութեր։ Բառարանային մասում հայերեն—կոմաներեն տողերի դիմաց փորձեր են արվել նաև լեհերեն համարժեքները տեղադրելու՝ ինծ-խափլան-րըս, շուն-իդ-բեէս, աղուէս-դոզfու եա դիլfի-լիս, մուկ-սըշխանմըշ են։

Ձեռագիրը 1634 թ. է։

119. [Բառf Երրայեցւոց, կոմաներեն] «Աբբա՞՝ աղալարնըեկ աթասը, Սարգիստա: Աբբան՝ պիյիfլիf. Եզեկ Ի...», Լվովի հայ. ձեռ. № 22, էջ 21—354։

«Բառգրքիս թաթարերէն թարգմանութեան առաջին փորձն է, հաւանօրէն սկզբնագիրը, տեղ տեղ տողեր դատարկ ձգուած՝ թերևս յաւելուածներու համար։ Կան երկրորդ գրչէ այլ աւելցուած բառեր՝ լեհերէն բացատրութեամբ» (Ն. Ակինյան)[1]։ Ձեռագիրը 1628 թ. է։

Հմմտ. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 311՝ անխոր. (էջ 1ա—300բ, սկ. «Աբաբովք՝ չէնսիզ: Աբանա՝ աթանըեկ ալղըը, նը, կա, տա: Աբբա՝ աթալարնը[ն]կ աթասը, նը, կա, տա...»)։ Հմմտ. նաև Լենինգրադի Библ. им. Салтыкова-Щедрина, арм. рук. № 8 (стр. 1а—138а).

1 Տես՝ Ն. Ակինյան, «Ցուցակ հայ. ձեռ. Լվովի համալսարանի Մատենադարանի...», Վիեննա, 1961, էջ 28։

120. Բառարան հայերեն—կոմաներեն, Վիեննայի KKHB Cod. Arm. 3, fol. 1^r—106^r.

Հ. Տաշյանը, որ այս երկը նկարագրել է՝ նրան տալով «Բառագիրf ճայերէնէ ի թաթարերէն» խորագիրը, ասում է. «Նոր մէկը տեղ տեղ լատիներէն ալ գրեր է դիմացը, բայց ոչ շատ հաճախ։ Օրինակ. (թղ. 86a, ա). 'Զմուշկ. խաթուն քիշի բաբուճու'։ 'Պաստառակալ. չարշօվ Syndon' եւն։ Նոր ձեռք մ'ալ քանի մը տեղ սրբագրութիւններ գրած է»[1]։ Ձեռագիրը ԺԶ/ԺԷ դդ. է։

121. Գեռլայի հայ. № 53 (61) ձեռագիրը, ԺԸ դ., բովանդակում է մի «Բառարան ճայերէն—ղփչաղերէն» (հայերեն—կոմաներեն»)[2]։

122. ԺԷ/ԺԸ դդ. վրացի մատենագիր Սուլխան-Սաբա Օրբելյանը, որը «Վրացական բառափունջ, որ է բառարան» (სიტყვის კონა ქართული, რომელ არს ლექსიკონი)[3] երկի հեղինակն է, հին վրացերենի որոշ բառերի բացատրության համար օգտագործել է հայ. 1850 բառ՝ ձեռքի տակ ունենալով, ինչպես ինքն է ասում, «հայերեն մի փոքր բառարան», որը, մասնագետների կարծիքով, պետք է եղած լինի Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը. նա որոշ քաղումներ կատարել էր նաև հայկ. Աստվածաշնչի Ոսկանյան հրատարակությունից[4]։ Տես՝ ՍՈՒԼԽԱՆ-ՍԱԲԱ ՕՐԲԵԼՅԱՆ։

123. Հայերեն—վրացերեն բառարան, որը կազմված է Մխիթար Սեբաստացու՝ 1730 թ. տպագրված քերականության վերջում գտնըվող բառացանկի հիման վրա, տես՝ Երևանի

1 Հ. Տաշյան, «Ցուցակ հայ. ձեռ. Կայս. մատ. ի Վիեննա», էջ 9։

2 Ս. Քոլանջյան, Բանբեր Մատենադարանի, № 9, 1969, էջ 466։

3 Նրա վերջին հրատարակությունը լույս է տեսել Ի. Աբուլաձեի խմբագրությամբ, 2 հատորով, Թբիլիսի, 1965—1966։

4 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Սուլխան-Սաբա Օրբելիանին և հայագիտությունը», տես՝ «Կամուրջ» (ալմանախ), Թբիլիսի, 1961, էջ 344—349։ П. Мурадян, «Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке", Ереван, 1966, стр. 133—146.

Պետ. Մատ. ձեռ. № 7174, էջ 1ա—213բ։ Ձեռագիրը ԺԸ դ. է[1]։

124. Հայերեն — վրացերեն բառարան[2] *նույնպես կազմված Մխիթար Սեբաստացու բառացանկի հիման վրա, անկախ նախորդից, տես՝ Թբիլիսիի Պետ. Պատմ. Կենտր. Արխիվ, ձեռ. № 627։*

125. Հայերեն — վրացերեն բառարան[3] *նույնպես կազմված Մխիթար Սեբաստացու բառացանկի հիման վրա, անկախ նախորդներից, տես՝ Թբիլիսիի Պետ. Պատմ. Կենտր. Արխիվ, ձեռ. № 639։*

126. Հայերեն — վրացերեն բառարան[4] *նույնպես կազմված Մխիթար Սեբաստացու բառացանկի հիման վրա, անկախ նախորդներից, տես՝ Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվ. գրադ. ձեռ. № 5317։*

127. Հայերեն—վրացերեն բառարան, տես՝ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինյան գրադարան, արքայորդի Հովհան Բագրատիոնու վրաց. ձեռագրերի ժողովածու, №.346։ Այս ձեռագիրը, որը ԺԸ դ. վերջերից է, ներկայացնում է հայերեն—վրացերեն բառարանի համար սոսկ նյութերի հավաքում և վերջնականապես դասավորված ու ավարտված չէ։ Բառարանի վրացերեն մասը վրացատառ է։ Հավանական է համարվում, որ վրաց արքայորդին ինքը եղած լինի սույն բառարանի հեղինակը[5]։

128. Լոնդոնի Բրիտանական Թանգարանի եթովպերեն ձեռագրերում կան հայերեն—եթովպերեն բառացանկեր[6]։

129. Հայտնի է ասորերեն—հայերեն մի բառարան, որը ԺԶ/ԺԷ դդ. արաբերենից կատարված թարգմանություն է համարվում՝ ըստ Մարգոլիութի ուսումնասիրության[1]*։ Բառարանի հայ. մասը գրված է ասորական տառերով։ Նրա մասին Մարգոլիութը գրում է. «Այն ձեռագիրը, որուն վրայ հիմնուած է այս յօդուածը, սեփականութիւնն է պրոֆ. Րենդել Հարրիսի* (Rendel Harris), *որուն պարտական ենք այլևայլ ուրիշ միակ բնագիրներու ալ գիտր։ Ձեռագիրը Բար-Բահլուլի ասորական—արաբերեն բառագրոց թարգմանութիւն մ'ըլլալու է ըստ ինքեան, բայց այժմ իրականապէս բաղադրութիւն մըն է բառագրոց Բար-Ալիի, Բար-Բահլուլի և ուրիշներու. միայն թէ բացատրութիւնք սովորաբար հայերէն դրուած են արաբերենի տեղ։ ...Քիչ ձեռագիր կայ որ ասոր պէս թուական և ուրիշ տեղեկութիւններ ունենայ առատօրէն։ Ամէն տառի սկիզբը գրիչը գրչութեան տարին, ամիսն ու օրը կը նշանակէ, և ձեռագրին վերջը շարք մը յիշատակարաններ կը գրէ ասորերէն, արաբերէն և հայերէն»*[2]։

130. Գիրք որ կոչի Բանալի գիտութեան։ *Տես՝ ԿՂԵՈՊԱՏՐԱ ՍԱՐԱՖԵԱՆ։*

Ունի ընդարձակ բառարաններ՝ հայերեն—ռուսերեն և ռուսերեն—հայերեն։

131. Գիրք որ կոչի Շափդ լեզուագիտութեան կամ Բառք ընտիրք ազգիս Հայոց և պանծալի լեզուին Ռուսաց, համառօտապէս դէմընդդէմ միմեանց թարգմանեցեալք։ *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐԵԱՆ։*

132. Российские слова. „Бог—Ած։ Оц (отец)—հայր։ Мать—մայր։ Дитя—որդէկ...», Տեղեկագիր *(ՀՍՍՀ գիտ. ակադ.), հաս. գիտ., 1945, № 5, էջ 75—78։*

Հրատարակել է՝ Ս. Սուքիասյանը։ Հայ—ռուսերեն բառացանկ է ոչ-այբբենական դասավորությամբ։ Պարունակում է 375 բառ։ Կազմվել է ԺԸ դ. վերջերում։ Ձեռագիրը գտնվում է Չկալովի (Օրենբուրգի) մարզային արխիվում (Фонд Оренбургской Пограничной Экспедиции, № 118. Том Че-

---

1 *Փ. Մուրադյան,* Բանբեր Մատենադարանի, *№ 5,* **1960, էջ 325—331։** П. Мурадян, стр. 146, 147, 151—154.

2 *Լ. Մելիքսեթ-Բեկ* Բանբեր Մատենադարանի, *№ 4, 1958, էջ 405—406։* П. Мурадян, стр. 147, 151—157.

3 *Լ. Մելիքսեթ-Բեկ, էջ 408։* П. Мурадян, стр. 146, 151—157.

4 П. Мурадян, стр. 146—147, 151—157.

5 П. Мурадян, стр. 146—149.

6 *Հմմտ.* Արարատ, *1912, էջ 543։*

1 D. S. Margoliouth, „The syro-armenian dialect", *Journal of the Royal Asiatic Society*, 1898, October, p. 839—861. **Տես նաև՝ Հ. Տաշյան, «Ասորատառ հայերէն բառգիրք մը», Հանդէս Ամսօրեայ, 1899, էջ 22—23։**

2 Հանդէս Ամսօրեայ, *1899, էջ 22։*

лобитных дел 1785 года, л. 182—л. 280: Дело о переводе на разные азиатские языки российских слов).

133. ԺԸ դ. վերջերին փորձ է կատարվել հայերենի թարգմանելու Ռուսական Ակադեմիայի վեցհատորյա բառարանը («Словарь Академии Российской», чч. I—VI, С.-Петербург, 1789—1794 гг.). *Այդ ձեռնարկումից մեզ հասել է մի նմուշ՝ Երևանի Պետ. Մատ. № 2661 ձեռագրով, որը պարունակում է բառարանի մի մասը։ Ձեռագրի թերթերը բաժանված են երկուական սյունակների, որոնցից առաջինում հերթականորեն ընդօրինակված են ռուս. բառերն՝ իրենց բացատրություններով. իսկ երկրորդը հատկացված է ռուս. բացատրությունների հայ. թարգմանությանը։ Թարգմանության փորձը կանգ է առել B տառի վրա, որից թարգմանված են միայն 27 բառեր։*

134. [Բառարան հայերէն—թուրքերէն] «Արղարեւ՝ հագաքի վէ հաքիքէթտէ...», *Մյունխենի* BSB Cod. Arm. 22, fol. 244ᵛ—257ᵛ.

Ձեռագիրը ԺԸ դ. է։

135. [Բառարան հայերէն—թուրքերէն] «Աղօթք՝ աղօթքլար, եանի եպատէթլէր։ Աղթարք՝ եէնմէքլէր...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm. 14, fol. 69ʳ—99ᵛ.

Ձեռագիրը ԺԸ դ. է։

136. [Բառարան հայերէն—թուրքերէն] «Աբբայ՝ պապա, կրօնաւորլարըն, եգնաւորլարըն պաշը։ Աբեղայ՝ թէրքի տիւնեայ...», *Հռոմի* Bibl. Vat. Cod. Borg. Arm1 14. fol. 20ʳ—68ʳ (?).

Ձեռագիրը ԺԸ դ. է։

137. [Ոտանաւոր բառարան հայերէն—թուրքերէն] *(սկ.* «Առնել տալն է՝ ալտըրմագ. |Գողացընել՝ չալտըրմագ.|Բառնալն ասի՝ գալտըրմագ»): *Տես՝ ԲԱՂԴԱՍԱՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Ջափածո երկեր, Բ, § 3։*

138. [Ոտանաւոր բառարան հայերէն—թուրքերէն] *(սկ.* «Կրդգի անունն է՝ ատա. |Հասեալ փորձանքն է՝ գատա.|Ծուռ մի՛ նայիք օտարին՝ | էյրի պագմայնըզ եատա»): *Տես՝ ԲԱՂԴԱՍԱՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Ջափածո երկեր, Բ, § 6։*

139. Մի հայերեն—թուրքերեն բառարան, որը պատրաստված է 1628 թ. և կրում է «Megendicz» *խորագիրը, գտնվում էր Լվովի Կայսերական գրադարանում*[1]*։*

140. (Անխորագիր) «Խիսիփ, Քիսիփ՝ ի լրմանն խաւարի լուսին, իսկ ի ծննդեանն խաւարի արեգակն։ Նըսֆի նէհար՝ միջօրեայ շրջանակ. է գիծ մեծ որ ի միոյ բևեռէ աշխարհի ձգի ի միւսն։ Ուֆիւգ՝ հորիզոն, այսինքն եզր, ծայր, կամ սպառուած. է շրջանակն այն մեծ որ աւարտէ զտեսութիւնն մեր առ եզերօք երկրի շուրջանակի, ուր երևի կցիլ երկնից անմիջապէս ընդ երկիր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 23ա—24բ։*

Անանուն բառարան է թուրքերենից հայերեն՝ տեղագրական, պատմա-աշխարհագրական, օդերևութաբանական և այլ տերմինների։ Բառերի դասավորումն այբբենական չէ։ Հավանաբար «Ջիհաննումա»-ի բառերի հավաքածու է։

Ձեռագիրը ԺԹ դ. է, բայց բառարանը թվում է ԺԸ դարից։

141. Համահաւաքումն բառից համառօտ լուծմամբ ըստ դասաւորութեան այբբենական կարգի. «Ագիլ՝ իփրէտմէնտ։ Ագըլլի — մտացի, խելացի։ Ագիլպալիղ՝ պիլիւղէ էրմիշ, էրլէնմիշ — այրացեալ։ Ագլի էվվէլ՝ կիրկին (sic) ագըլի, եա՛նի պիր սէօզիւն նէքթինէհինտէն էվվէլ էսրարինէ տախիլ օլունու — այսինքն՝ նախ քան զբանին եզրակացութիւն՝ մտօք ի խորս մտանօղ իրին գիտելւոյ, խելամուտ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 452, էջ 9ա—30ա։*

Թուրքերեն—հայերեն բառարան է։ Վերջում ունի մի քանի հավելումներ՝ էջ 30ա—31ա։

Ձեռագիրը ԺԸ դ. է։

142. Տետրակ համառօտ բառարանի՝ յօրինեալ չափաբերմամբ *(սկ.* «Ապանօս փայտն՝ է ոպնիազ։ Այազ ասի՝ երբ օդն է պարզ։ Ապուռնուպուռն՝ է խառնախորք։ Ասմա տնկոյն՝ ասեր են որք»): *Տես՝ ՊՕՂՈՍ ՏԻՐԻԿԵՑԻ ԹՈՐՈՍԵԱՆ։*

[1] S. Barącz, „Rys Djiejów Ormiańskich", tr. 191,

Թուրքերէն—հայերէն բառարան է։

143. Հազա քիթապի թիւճիֆէի Շահիտի։ *Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 317, fol. 1^r—32^v.

Մակլերը նկարագրում է այսպես. „Vocabulaire turc-persan, par Šahiti, traduit en arménien par Georges dpir Têr Ohannessian; achevé de copier le 14 juillet 1772“[1].

144. *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Land. Or. 202 *բովանդակում է եռալեզվյան մի անանուն բառարան՝ թուրքերէն—ֆրանսերէն—հայերէն, ԺԶ դ. վերջերից։*

145. *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. March 187 *բովանդակում է մի բազմալեզվյան անանուն բառարան (լատիներէն, հունարէն, թուրքերէն, թաթարերէն, հայերէն, սլավոներէն, ռուսերէն, վալախերէն, մոլդավերէն)։*

146. Թարգմանութիւն դեղոց (*երկու տարբեր խմբագրությամբ՝ այբբենական և ոչ-այբբենական*)։

ա. Թարգմանութիւն դեղոց[2], զոր ընտրեալ են իմաստունքն և կարգեալ [յ]այլ լեզուաց ի մեր լեզու. «Աբհող՝ ցրթնի պտուղ։ Ազատ՝ դրախտ ջանտարի։ Աբրուճջան՝ ձագի դեղ։ Աթխար՝ վաղամեռուկ…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3261, էջ 216բ—222բ։*

բ. Թարգմանութիւն դեղոց, զոր ընտրեալ են իմաստունքն և կարգեալ ճշմարտութեամբ ի յայլ լեզուաց ի մերս. «Նեախաւր՝ կարաւս։ Ջանդիոն՝ եռջանուկի տակ։ Կրդմանա՝ վայրի չաման։ Ռաբասուս՝ մարախի քամուքս…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2381, էջ 144ա—146բ։*

☐ *Այբբենական և ոչ-այբբենական օրինակներ տես նաև նույն մատ. ձեռ. № 268 (էջ 299բ—302ա), № 3170 (էջ 161ա—165ա) են։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1008 (էջ 121ա), № 1372 (էջ 221ա), № 1699 (էջ 557). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 916 (էջ 116ա), № 1017 (էջ 88ա). Թավրիզի առաջն. ձեռ. № 14 (էջ 364բ). Թբիլիսիի Ձեռագրերի ինստ. հայ. ձեռ. № 175 (էջ 135ա)։*

Ձեռագրերում սկ. պատահում է նաև՝ «Աբոլ՝ ցրղնի պտուղ», «Ասկալոնոս՝ դարիշան։ Ակր կահրահ՝ կոտիմն», «Նեախօր՝ քարօս», «Մոլկազրակ՝ քարախունկ։ Նեախօր՝ կարօս», «Կեախօր՝ կարոս»։

Դեղաբանական բառարան է, որի հնագույն օրինակը ԺԴ դարից է։

147. Բառք Գալիանոսի բժշկապետի (*սկ.* «Աթխար՝ վաղամեռուկ։ Ակիկահայ՝ բողկի տակ։ Արիստողոքիայ՝ սղանկն։ Ասրոզոդիկ՝ է արջընդեղ, որ է սոնճի»)։ *Տես՝ ԳԱԼԻԱՆՈՍ (կլ.)։*

148. Բառք Գալիանոսի բժշկապետին (*սկ.* «Արջտակն՝ պուհուրմեյրեմ և գոյնն ծիրանի է։ Արբուզայ՝ շահբարանն։ Աւելուկն՝ լապատայ։ Անաղած ծարուր՝ որ է թութիայն»)։ *Տես՝ ԳԱԼԻԱՆՈՍ (կլ.)։*

149. Բառք Գալիանոսի բժշկապետի, թարգմանութիւն դեղերոց (*սկ.* «Աբաբիթոն՝ որ է ֆարֆիոնն, որ է լապան մաղրիպի։ Աբիոն՝ որ է աֆիոն։ Աբկող՝ ցտի պտուղ հապոպղրան է։ Աբսնթին և ստրին՝ որ է օշինտր որ է աֆսանթին»)։ *Տես՝ ԳԱԼԻԱՆՈՍ (կլ.)։*

150. Բառք են այսոքիկ, որ յայժմ կոչի բառարան։ Շարայարեցեալ բժշկական վարդապետաց հնոց և նորոց, արարալեալ ի վերայ այբուբենի. «Ալուսան՝ որ է ալուսանք։ Ատրիլալ՝ որ է ագռաւու ճանկ։ Ատրիլալ ի ղալպ՝ որ է ատրիլան որ կապուտ է։ Աղիս՝ որ է ծորին տակի կեղեն, որ է դեղնո տակ…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6275, էջ 183ա—239բ։*

Բժշկական բառարան է, այբբենական կարգով։ Ձեռագիրը ԺԷ դարից է։

151. Յիշեմք ի վերայ այբուբենից զինչ որ խառնուած դեղեր կայ, և յառաջն յիշեմք զայարինն, որ են օգտակար և պիտանի ամենայն ցեղ ցաւերոյն. «Այարին, որ է բրիղանիս. և ասէ Զաքարիային որդին թէ ինքս ընտրած է ի յամենայն մատբուխնոյ…», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9837, էջ 332—450։*

Այբբենական բժշկարան է։ Ձեռագիրը 1676 թ. է։

---

[1] Fr. Macler, „Catalogue“, p. 165.

[2] *Ձեռագրում՝* թարքմանութիւն դեղոյ։

152. Բառք ի գրոց մեկնած ամենայն ցաւի որ ի մարդոյ լինի. «Ագըլ ֆալջ՝ որ է կաթուած շունն: Աթաշի փարս՝ գետ ունեց ի յանձն լինի և գետ կրակ այրի. ազգ մի այլ դուլինն որ է լաօս ասեն: Այտուց՝ ունեցն է ամենայն ցեղ...», *անդ, էջ 478—483։*

Ախտաբանական բառարան է, այբբենական։ Ձեռագիրը 1676 թ. է։

Հմմտ. նաև նույն մատ. ձեռ. № 9845՝ «Անուանք ցաւոց» *(էջ 95բ—97ա, սկ.* «Աթէշ փարասի՝ անձն՝ որպէս կրակի այրի: Աղլաբ՝ տարերաց խառնօծք»):

153. Եւ կու յիշեմք զդեղերուն զփոխանորդն որ զինքն բժշկապետքն շիներ են, վասն այն պատճառին որ զինքն ճաստատ առնեն իմաստութեամբ. որ թէ մէկ դեղն չգտվի, վասն իրաց առնեն և պակաս լինի, նա զայն փոխանակ դնեն որ բանն կատարի, և բան մի պակաս չմնայ, և զօրութիւն առնէ անխափան. «Ակակիայ՝ և իւր փոխանն բռամաքն է, և ասացած է թէ սանտալն է, և մէկ բաժին ոսպն կտուած: Աղարիկոն՝ և իւր փոխանն ֆարպիոնն է, և ոմանք ասացել են աֆթիմոնն և խարբախ սպիտակ...», *անդ, էջ 483—489։*

Դեղաբանական բառարան է։ Ձեռագիրը 1676 թ. է։

154. Վասն դեղերուն զօրութեան որ մէկ մեկ առնու *կամ* Անգիտաց անպէտ *(սկ.* «Ապուսան՝ ճուանիւ իւսուֆ այլ կու ասեն. որ ճայ. վարվռուկ ասեն, և ինքն խոտ մըն է»): *Տես՝ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, § 2։*

155. Բառ ի վերայ ամենայն բժշկական վարդապետացն: Պատմութիւն վասն դեղերուն *(սկ.* «Աշրաս որ խնդրեն, որ է պրուխն, որ է փայլկտուկ»): *Տես՝ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, § 6։*

Դեղաբանական բառարան է։

156. Բառ և պատմութիւն մեկնած ամենայն ցաւոց *(սկ.* «Արաղանն՝ դեղնութիւն է: Արծուիք՝ որ է աղեց ունեց, որ է սիսխայն»): *Տես՝ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, § 7։*

Ախտաբանական բառարան է։

157. [Բժշկական բառգիրք] «Աբիոն որ է աֆիոն, որ է սև խաշխաշն և ճազրին խէժն և կաթն. և ինքն երկու ազգ կու լինի...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 40, էջ 9ա—24բ։*

Քաղվածք է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ից՝ հավանաբար մի ուրիշի ձեռքով։

158. Փարսի, Արաբի, Հայոց. «Բաղեան՝ անիսոն՝ անիսոն. ինքն ճունդ է անուշաճոտ և երկու ազգ լինի՝ մէկ կարմիր, մէկ սպիտակ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7872, էջ 6ա—43բ։*

Դեղաբույսերի այբբենական բառարան է պարսկերեն—արաբերեն—հայերեն։ Տալիս է 383 դեղաբույսերի նկարագրությունն ու բուժական հատկությունները։ Պարսկերենն ու արաբերենը հայատառ են։ Բնագրից առաջ դրված է բառարանում օգտագործված բույսերի հայկ. անունների այբբենական ցանկը (էջ 1բ—5բ)։ Հավանաբար ԺԷ կամ ԺԸ դ. գործ է։

159. (Անխորագիր) «Աթպանայ՝ որ է լապլապ, զայսինքն խոտ մէ, դերեն նման է լապլապի. սորա դերեն մանր է...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6594, էջ 1ա—87ա։*

Դեղաբույսերի բացատրական բառարան է՝ Ա—Ֆ։ Ձեռագիրը ԺԸ դ. է։

160. (Անխորագիր) «Անձրուք ճայերէն՝ յարապի յանձրուք՝ պարսից անձրուք. ինքն խոտ է, եօթն ազգ լինի, ծաղիկն դեղին և կապուտ որպէս պապունաճի տերև...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9845, էջ 60ա—95ա։*

Դեղաբույսերի բացատրական այբբենական բառարան է։ Բովանդակում է 320 անուն։ Ձեռագիրը ԺԸ դ. է։

161. Անուանք դեղերոյ՝ ճայերէն և յարապկերէն, և լադին բառով. «Անիսոն՝ արապկերէն անիսուն, լադինն անիսում. տաք և չոր, գ. տարաճ[ան]: Աւշինգր՝ արապկերէն աֆսընթին, լադին աֆսընդիում. տաք ա. տարաճան, չոր բ.: Աւթխոր՝ յարապկերէն ատխր, լատին սկինանդում. տաք ու չոր ի ա. տարաճան...», *Zeitschrift für Armenische Philologie*, Bd. II, 1903, S. 120—136:

Հրատարակվել է Վիեննայի Մխիթ. Մատ. № 310 ձեռագրից (էջ 10բ—24բ), որը

1438 թ. է։ Հրատարակիչ՝ J. Karst։ *Հմմտ. նաև Բուլղարիայի հայ. ձեռ. № 26՝* «Վասն այլ դեղեր ի վերայ այբուբենի քաղուած կարճառօտաբար» *(էջ 75ա, սկ.* «Անիսոնն, տաք է և չոր, Բ տարանան բզշարն տանի»)։

162. Միրֆայտաք (sic) զարմանալի և բտոյզ *(սկ.* «Ալմասն շատ ցեղ է և ինքն սպաննօղ դեղերուն է»)։ *Տես՝ ԳԱԼՈՒՍՏ ԱՄԱՍԻԱՑԻ։*

163. Այս է իմաստասիրաց ասացած դեղերու անուն. «Աստղյարգ՝ որ է յուլբրէն, որ է տերևատն, որ է մաղարիոն։ Աւրմիոն՝ որ է թարասիկն...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 442, մասն ԺԴ, § 6։*

Դեղաբանական բառարան է։

164. [Ղարաբաղին] *(սկ.* «Անուն Աստուծոյ շնորհք հոգուն սրբուն...։ Անարին՝ լօղայ զիայ, որ օգտէ մալիխոլիայ, փալէջ սաքթէ»)։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 372, էջ 1ա—136բ։*

Բժշկական բառարան է, թարգմանված՝ պարսկերենից 1758 թ.։ Թարգմանիչ՝ Հովհաննես Մելքումյան։

165. (Անխորագիր) (սկ. «Աթրիլալ՝ այիտրի լալ՝ այիթրի լալ։ Աբ՝ մայի՝ ջուր։ Աբի նամաք՝ մայօլ մէլէ՝ աղայջուր։ Աբի գուշտ՝ մայօլ լահամ՝ մսի ջուր»)։ *Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵԼՔՈՒՄԵԱՆ։*

Բժշկական բառարան՝ պարսկերեն—արաբերեն—հայերեն։

166. Այս բառքս Հայու և Տաճկի բառ է որ զցաւերուն անուններն յայտներ է տանկերէն. «Հազազ՝ որ ի գլուխն թեփուկ լինի։ Տայու սալապ՝ աղիսացաւն է։ Շաղիղայ՝ կէս գլխացաւն է...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 550, էջ 120ա—122բ։*

Ձեռագիրը ԺԸ դ. է։

167. Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. *245 բժշկական ձեռագիրը, որ գրված է 1682 թ. Մարունանում, Մալխաս գրչի ձեռքով, 147*ʳ*—177*ʳ *էջերում ունի բժշկական նյութերի մի ընդարձակ բառացանկ.* „un lexique contenant plus de deux mille mots de substances médicales; et une centaine de noms des différentes maladies"[1]։ *Այս վերջին մասը կա նաև նույն մատ. № 244 հայ ձեռագրում։*

168. Այս են անուանք Նիգ գաւառին, որ ասի Ապարանք. «Ի վերայ Քասախ գետոյն ականցն, ըստ անուանն գետոյն կոչի և գեօղն Քասախ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2180, էջ 416բ։*

Քասախ գետի առափնյա վայրերի հին և նոր անունների ոչ-այբբենական բառացանկ է։ Ձեռագիրը ԺԸ դ. է։

169. Աշխարհացուց դուզնաքեայ ինչ ի գրոց *(սկ.* «Դուին քաղաք՝ ի Նախչուանայ հարաւակողմն է։ Ըռուծափ քաղաքն՝ Համայու և Համսայ մէջն է աւերակս»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 35։*

170. Բառարան Նոր Աշխարհին որ ասի Ամերիգա *(սկ.* «Արքլ Թամանեան ծոց՝ է ծոց ինչ յարևելից կողմանէ Նոր Զելանդիոյ»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 27։*

171. (Անխորագիր) «Գետ՝ է քաղցր և հոսանուտ ջուր, բղխեալ ի միոյ և ի բազմաց ականց։ Առաջք գետոյ՝ նիւղ որ բաժանի մի և նոյն գետ։ Վտակ՝ է գրնիկ (sic) նիւղն մի և նոյն գետոյ, որ է մասն նորա...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 18ա—18բ և 22ա—22բ։*

Բացատրական անանուն բառարան աշխարհագրական հայերեն տերմինների։ Բառերի դասավորումը այբբենական չէ։ Վերջին մասերում, բացի բացատրություններից, բառերի դիմաց նշանակված են նաև նրանց հուն. կամ լատ., իտալ., թուրք. համազորները։ Ձեռագիրը ԺԹ դ. է, բայց բառարանը հավանաբար ավելի հին է։

172. Այլ անուանք քաղաքաց որք յիշատակին ի գիրս. «Միտիլէ՝ Մէտիլու ատասին է, Իզմիրու մօտն։ Քիա՝ Սախըզն է...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8743, էջ 42ա—42բ։*

Հին և նոր տեղանունների ոչ-այբբենական բառացանկ է։ Ձեռագիրը ԺԸ դ. է։

[1] K. J. Basmadjian, *Journal Asiatique*, 1915, mars-avril, p. 385—386.

173. Աշխարհացոյց (*սկ.* «Աւետեաց երկիրն՝ Երուսաղէմ է։ Արաբիայ՝ Ուռում ղալայէ։ Անտիոք՝ Անթաքիայ է։ Ասորեստան՝ Համիթ է և Մերտին է»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 32։*

174. Այս են անուանք քաղաքաց աշխարհաբառէ ի գրաբառն (*սկ.* «Սաղիմ՝ Յերուսաղէմ, Ղուդսի շարֆ»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 38։*

175. Դարձեալ յայլմէ ասի. «Մաժաք՝ որ է Կեսարիա։ Նիկկիսար՝ որ է Նէօկեսարիա։ Կոնիա՝ որ է Յիկոնիոն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5950, էջ 204բ—205բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1459 (էջ 177ա—177բ)։ Հին և նոր տեղանունների ոչ-այբբենական բառացանկ է։ Նշված ձեռագրերը ԺԷ/ԺԸ դդ. են։

176. Բառք յատուկ անուանց (*սկ.* «Աբանդ՝ Խապան գաւառն Հայոց։ Աբգար՝ Հայոց թագաւոր է ԼԹ տարի։ Ագրիայ՝ Մաջառստան երկիր։ Ազագ՝ Ասորոց երկիրն»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 33։*

177. Յաղագս քաղաքաց և գաւառաց անուանք ի վերայ այբուբենից եդեալ և սահմանեալ. «Ագովտոս՝ Ղազա։ Աթենա՝ Աթէն։ Ակռականդիա՝ Մծբին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1495, էջ 159բ—160բ։*

Ձեռագիրը ԺԷ դ. է։

178. Ի վերայ այբուբենից անուանք քաղաքաց (*սկ.* «Ագաթափարթ՝ որ է Մծբին, և այժմ Մսեպին կոչի, որ է աթոռ սրբոյն Յակոբայ։ Աղովիտ և Քաջբերունի՝ Արճեշ է»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 31։*

179. Անուանք քաղաքաց և գիւղից Հայաստանեաց յայտնի (*սկ.* «Եկեղեաց՝ Եզնկա։ Դարանաղեաց՝ Կամախ։ Սեբաստիա՝ Սեւաստ»)։ *Տես՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, § 39։*

180. Յուցակ անուանց մեծ և փոքր առ հասարակ գիւղորէից Վարանդայ գաւառակին, յորոց բաղկացութիւն մտանեն և նախկին մասնաւոր գաւառակքն Դիզաղու, Խաչենու, Ջրաբերդու և Գիւլիստանու։ *Երևանի Պետ. Մատ. Կթղ. դիւան, թղթ. 241, վավ. 204։*

Հին և նոր տեղանունների ոչ-այբբենական բառացանկ է։

181. (Անխորագիր) «Ճիհաննիմա՝ երկրագրութիւն, յուն. կէօկրաֆիա կամ տիեզերագրութիւն, յուն. քոսմոկրաֆիյա (sic) կամ աշխարհացոյց, զի նիհան նշանակէ աշխարհ, և ի յաներևոյթ բայէն որ է նիմուտէն, որ է ցուցանել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 19ա—19բ։*

Անանուն բառարան, որը տալիս է հուն. և լատ. աշխարհագրական տերմինների հայերեն բացատրությունը։ Պարսկերեն է միայն առաջին բառը՝ «ճիհաննիմա», մնացածները հուն. և լատ. են։ Թվում է՝ ԺԸ դ. բնագիր է։

182. Բառք Հայոց. «Սահանք կամ սահանակարկաչ՝ լատ. քասքադա։ Քարավագ՝ այսինքն վազօղ ի քարէ։ Ջրվէժ՝ այսինքն վիժումն և անկումն ջուրց սահանաց ի բարձանց։ Վտակ՝ է այն որ բազում գետս խառնին ի միմեանս [և] գործեն գետս մեծամեծս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 25ա—25բ։*

Հայ. անանուն բացատրական բառարան է պատմա-աշխարհագրական տերմինների։ Դասավորումը՝ ոչ այբբենական։ Հավանաբար ԺԸ դ. բնագիր է։

183. Բառք Յունաց և Լատինացւոց. «Լատ. Հէլլէսբօնդուս՝ Պօղազ հիսար, Կէլիպօլու պօղազը, Չանագ գալէսի պօղազը. ասեն ևս Քանալ տի Տարտանէլլի յանուն Տարտարոն քաղաքին հնոյ. Պռաչչիօ տի Սան Ճիօռճի, այսինքն բազուկ սրբոյն Գէորգայ։ Յուն. Աքսինոս՝ այսինքն անասպնջական։ Էւքսինոս՝ այսինքն քաջասպնջական։ Եւս է Էւքսինոս՝ է անուն կրտսեր որդւոյն Յաբեթի որ կոչեմք Ասքանազ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 10097, էջ 26ա—26բ։*

Անանուն բառարան է պատմա-աշխարհագրական տերմինների։ Դասավորումը՝ ոչ-այբբենական։ Հավանաբար ԺԸ դ. բնագիր է։

184. Երևանի Պետ. Մատ. № 9646 ձեռագիրը ներկայացնում է 415 մեծադիր թերթերից կամ 830 էջերից բաղկացած այբբենական մի հանրագիտարան, որը կազմված է ԺԸ դարում։ Դժբախտաբար՝ նրա սկզբից ու, հավանաբար նաև, վերջից ընկել են մի քանի թերթեր։ Արդի հանրագիտարանների

նման բովանդակում է գիտության և մարդկային գիտելիքների վերաբերյալ բազմապիսի նյութեր՝ իմաստասիրական ու աստվածաբանական, պատմական ու աշխարհագրական են։ Հոդվածները, որոնք շարադրված են մատենագրական վկայությունների հիման վրա և աղբյուրների նշումով, մեծ մասամբ ընդարձակ են։ Օրինակ՝ Ապահարզան բառը գրավում է երեքուկես էջ, Վաշխ բառը՝ չորսուկես էջ, Ջուր բառը՝ հինգ էջ։

185. Ոսկան Երևանցու կենսագրության մեջ նշվում է, որ նա սկսել էր լատիներենից հայերենի թարգմանել հանրագիտական բնույթի մի բառարան, որը, ինչպես երևում է, մնացել է անավարտ։ Այդ մասին գրված է. «Նաև ձեռնարկեալ է ի թարգմանութիւն բառգրոց՝ զոր ինքեանք Կալէպինում վերաձայնեն. զոր մինչև ի ղէ տառն թարգմանեալ է։ Եթէ տէր տացէ յաւարտ հասուցանել՝ է գանձարան և շտեմարան ամենայնի իմաստութեան, և ճանապարհ և վերածօղ առ ճշմարիտ հանճարն և գիտութիւն, քանզի դուռն և բանալի է ամենեցուն գրոցն՝ թէ՛ ներքից և թէ՛ արտաքնոց, զի զբառս սահմանաւ բացատրէ»[1]։

Այս անավարտ աշխատությունը մեզ չի հասել։

☒ Այստեղ ավելացնում ենք բառարանագրական ուրիշ նյութեր, որ նպատակահարմար չենք համարել տեղավորել վերևում թվարկված միավորների շարքում։

Ա. Սուրբգրական բառարանագրությանը վերաբերող ընդհանուր նյութեր.

Աստվածաշնչի բառերը բացատրող բառարանների տեսակներ շատ կան ձեռագրերում։ Դրանք մեծ մասամբ Հին և Նոր Կտակարանների գրքերի և նրանց գլուխների հերթականության ընթացքով կազմված բառացանկեր են։

«XVII դարի հայ մատենագրության մեջ, ըստ ձեռագիր աղբյուրների, առայժմ մեզ հայտնի է Ս. Գրոց երեք բացատրական և մեկ հատուկ անունների բառարան։ Բացատրական բառարանները սովորական բառարանների նման միասնական, մի ընդհանուր այբբենական համակարգի ենթարկված բառաշարք չունեն, այլ բաղկացած են առանձին մեծ ու փոքր բառացանկերից (գլոսարիաներից), որոնք բացատրում են Աստվածաշնչի այս կամ այն գրքի (երբեմն նաև առանձին գլուխների) բառերը՝ համապատասխան խորագրերի տակ՝ 'Բառք ի գրոց Ելիցն', 'Բառք ի գրոց Թուոց', 'Բառք ի գրոց մարգարէին Դանիէլի', 'Թագաւորաց առաջին', 'Յառակացն Սողոմոնի', 'Գաղատացւոց գլխոյն' և այլն։ Ուրեմն մեր խնդրո առարկա բառարանները Աստվածաշնչի գրքերին վերաբերող մատենակից բառացանկերի ամբողջություն են՝ առանց ընդհանուր այբբենական բառաշարքի։ Բառերն այբբենական կարգով չեն դասավորված նաև առանձին բառացանկերում» (Հ. Ամալյան)։

Աստվածաշնչի բացատրական բառարաններ պարունակող ձեռագրերի մի խումբ են ներկայացնում Երևանի №№ 2292, 2450, 5132, 6162, 8255 են, որոնք ընդգրկում են Հին և Նոր Կտակարանների որոշ գրքերը։ Բովանդակության կամ բառերի ընտրության առումով՝ այս օրինակների միջև նկատվում են զգալի տարբերություններ,— մեկի մեջ եղած բառերը հաճախ չկան մյուսի մեջ կամ ընդհակառակն,— իսկ այդ հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ այս բառացանկերը հավանաբար տարբեր հեղինակների ձեռքով են կազմվել։ Այս խմբի բառացանկերի մեջ Երևանի № 3286 ձեռագիրը, ի տարբերություն մյուսների, Աստվածաշնչի յուրաքանչյուր գրքի բառացանկը տալիս է այբբենական դասավորությամբ՝ «[Բառք ի գրոց Արարածոց]» (սկ. «Աստուածդ անուն՝ յաս-

---

[1] «Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրէժացւոյ», Ամստերդամ, 1669, էջ 636—637։

Կալեպինում-ը (Calepinum) լատիներենով կազմված մի ընդարձակ բառարան էր, որում լատ. բառերի ու գիտական տերմինների բացատրությունները միաժամանակ տրվում էին նաև բազմաթիվ այլ լեզուներով։ Բառարանն այդպես էր կոչվում իր հեղինակի՝ իտալացի նշանավոր բառագրող Ա. Կալեպինոյի (Ambr. Calepino, 1435—1511 թթ.) անունով։ Կալեպինում-ը նախ լույս է տեսել 1502 թ. և հետզհետե ունեցել շատ հրատարակություններ՝ լեզուների թիվը հասցնելով տասնմեկի։

տիս ա՛ծ և կամ աստ էած»), «Բառք ի գրոց Եղիցն» (սկ. «Աղիւս՝ կղմ[ի]նդր կամ քարբիչ»), «Բառք ի գրոց Ղևտացւոց» (սկ. «Անդեայ՝ նախիր») են։— Մի այլ խումբ են ներկայացնում Երեմիա Մեղրեցու կազմած ոչ-այբբենական և այբբենական բառարանները։ Սրանցից առաջինները դարձյալ Աստվածաշնչի գրքերի բաժանումներով ընթացող ոչ-այբբենական բառարաններ են, որոնք ձեռագրերում (Երևանի №№ 268, 451, 528, 2466, 3171, 7035 են) ընդհանրապես կրում են «Համառօտ գումարումն և լուծումն բառից Աստուածաշունչ գրոց յումեմնէ Երեմիայէ» կամ նման խորագրեր. իսկ այբբենական բառարանն արդեն հայտնի է տպագրությամբ՝ «Բառգիրք Հայոց» անունով (տես՝ ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑԻ)։— Ձեռագրական նյութերի երրորդ խումբը պարունակում է հետևյալ բառարանը. «Այս բառ Աստուածաշունչ գրոց, սկսեալ յԱրարածոց գրոց, մինչև ի [յ]Աւետարանն Քրիստոսի, ՀԲ գրոց ժողովեալ և շարագրեալ ի մի, վասն դիւրեաւ գտանելոյ խնդրողացն ի Սաղմոսն և յայլն» (տես Երևանի ձեռ. № 2291, էջ 142բ—204ա, սկ. «Աբբայ՝ հայր։ Աբբանայ՝ ի բաղանիս կամ ի քար երկրպագէին։ Աբդիու՝ ծառայ խոստովանելի։ Աբ ի բերան՝ լուռ». տես նաև ձեռ. № 2265՝ խոր. նույն, էջ 260բ—335ա, սկ. նույն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 396, էջ 4բ—104բ)։

Բ. Օտար լեզուների ուսումնասիրության հետ կապված մանր նյութեր.

Վիեննայի Մխիթ. Մատ. № 105 ձեռագրում կան մի քանի փոքրիկ բառացանկեր հետևյալ խորագրերով. «Բառք Հեբրայեցւոց», «Բառք Ասորոց», «Բառք Արաբացւոց», «Պարսից և Պարթևաց», «Յունաց» (էջ 24ա—24բ?)։

Նույնպիսի մանր նյութեր կան նաև Երևանի № 771 ձեռագրում՝ «Համարողութիւն արապերէն» (էջ 195ա), «Համարողութիւն բուլղարաց» (էջ 195ա), «Ոմանք բառք քըրդականք» (էջ 198)։

Երևանի № 7151 ձեռագրում գտնվում է՝ «Այս բառք են որ շարամանեալ են եռակի ոճիւք և եղանակաւ զընթացս լեզուաց երրակի ազ[գա]ց զԱրաբացւոց, զՊարսից և զՀայկեանց» են (էջ 1ա—1բ, թերի)։

Գ. Այլ նյութեր.

Կան այբբենական բառարաններ, որոնք որոշ հեղինակների երկերի մեջ առանձին գլուխ են կազմում։ Այդպիսիներից է, օրինակ, Արիստակես Հռետորի «Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարադրութեամբ» երկի Ժ կանոնը կամ գլուխը, որն ուղղագրական բառարան է (տես՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀՌԵՏՈՐ)։ Գադիկ Հեթումյան բժշկարանի ԼԵ գլուխը՝ «Թարգմանութիւն անուանց դեղոց» (տես՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, § 2) են։

Կան նաև այբբենական բառարաններ, որոնք կցված են այս կամ այն հեղինակի երկին՝ նրանում բովանդակված դժվարիմաց բառեր, տերմիններ և առարկաներ բացատրելու համար։ Այսպես՝ Ջուղայեցի Պետրոս Քալանթարյանի բժշկարանի վերջում[1] զետեղված է բացատրական մի ընդարձակ բառարան, որը կրում է «Բառարան համառօտ սոյնոյ բժշկարանիս» խորագիրը և կազմում է աշխատության երկրորդ բաժինը (սկ. «Արսինիքիում՝ է խոտ իմն, որ ըստ Հայոց օշինդր ասի և ըստ Յունաց ափսինք»). տես՝ ՊԵՏՐՈՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ։ Հովհաննես Բոնայի «Ձեռբածութիւն յերկինս» երկի հրատարակության վերջում[2] թարգմանիչ Վարդան Հունանյանը զետեղել է իր կազմած ընդարձակ բառարանը՝ «Բառարան գրքիս» խորագրով (սկ. «Ախտաչեր՝ եռան։ Յոգնակի Ախտաչերունք։ Սեռական իմն անուն դժնդակի հիւանդութեան, զոր Լատինացիք Ցէ՛պոիս յարանուանեն»). տես՝ ՎԱՐԴԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆ։

Կան նաև նույն բնույթի բառարաններ՝ ոչ-այբբենական հորինվածքով։ Ղալաթիայի

---

1 «Բժշկարան համառօտ, շարադրեալ ի ներհուն բժիշկ Ջուղայեցի Յոհան Քալանթարեան պարոն Պետրոսէ, յամի տեառն 1789-ին», Նախիջևան, 1793, էջ 85—134։

2 «Ձեռբածութիւն յերկինս... յօրինեցեալ աշխատասիրութեամբ տեառն Յոհաննու Բոնայի վանմագունոյ քարտինալի Ս. Ե. Հ.», Հռոմ, 1674, հավելված՝ էջ 1—81։

(Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. № 235 ձեռագիրը պարունակում է Թովմաս Ակուինացու «Աստուածաբանութեան» հայ. թարգմանության բառերը՝ ըստ գրքի շարադրանքի հերթականության, գլուխ առ գլուխ։

Բառարանային կառուցվածքի զարտուղի օգտագործման նմուշներից է ԺԸ դ. վերջերում կազմված և Բաղդասար դպիր Կ. Պոլսեցուն վերագրված մի ժամանակագրություն, որի հատվածները գնում են պատմական անունների և կարևոր տերմինների այբբենական հերթականությամբ. «Աբգար հաւատաց ի Քրիստոս ի թուին Քրիստոսի 40», կամ՝ «Աբրահամ կաթողիկոս նստաւ...», «Աթոռն հայոց փոխեցաւ...», «Աջն սուրբ Լուսաւորչի գողացեալ եղև...», «Աստուածածնի դրսի դիհն նորոգեցաւ...» ևն[1]։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամալյան Հ. Մ. — «Հայերենի առաջին ուղղագրական բառարանը», Բանբեր Մատենադարանի, № 6, Երևան, 1962, էջ 121—133։

Ամալյան Հ. Մ. — «Մատենադարանի ձեռագիր բառարանները», Պատմա-բանասիրական Հանդես, № 3, 1964, էջ 204—212։

Ամալյան Հ. Մ. — «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V—XV դդ.)», Երևան, 1966։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ա. Ջեյթունյան, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում (ամս.), 1967, № 3, էջ 61—64։— Հ. Մխիթարյան, Երեկոյան Երևան, 5 հուլիսի, 1967, № 155(2890)։—Հ. Ոսկյան, Հանդէս Ամսօրեայ, 1967, էջ 117—120։— Հ. Քյուրտյան, Սիոն, 1969, էջ 459—461։

Ամալյան Հ. Մ. — «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI—XVII դդ.)», Երևան, 1971։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ռ. Ա. Իշխանյան, Լրաբեր Հասարակական Գիտությունների (ՀՍՍՀ ԳԱ), 1972, № 4(352), էջ 90—93։

Ամալյան Հ. Մ. — «Երեմիա Մեղրեցու բառարանը հայ բանասիրության մեջ», Բանբեր Մատենադարանի, № 10, 1971, էջ 251—258։

Այվազյան Աբր. — «Շար հայ կենսագրութեանց», հտ. Ա, Կ. Պոլիս, 1893, էջ 29—37։ Հտ. Բ, Կ. Պոլիս, 1898, էջ 94։

Անասյան Հ. Ս. — «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը», Էջմիածին, 1972։

Արտատպ. է Էջմիածին ամսագրի 1971 և 1972 թթ. համարներից։

Խոսվում է մի շարք համաբարբառային բառարանների և նրանց այբբենական կառուցման տարբեր համակարգերի մասին։

Առաքելյան Ա. Գ. — «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», հտ. Բ, Երևան, 1964, էջ 217, 426, 440։

Ղազարյան Գ. Ն. — «Հայ բառարանագրության պատմություն», Երևան, 1968։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ս. Անթոսյան, Պատմա-բանասիրական Հանդես, 1969, № 4(47), էջ 267—270։

Ղազարյան Մամ. — «Առաջին հայ-ռուսերեն բառարանը», Ավանգարդ, 1941, № 7(3761)։

Դրիգորյան Մ. Գ. — «Դիտողութիւններ միջնադարեան եռալեզուեան (արաբերէն-հայերէն-թրքերէն) բառարանի մը մասին», Հանդէս Ամսօրեայ, 1968, էջ 499—503։

Դուրեան Եղ. — «Պատմութիւն հայ մատենագրութեան», Կ. Պոլիս. 1885, էջ 83, 88, 92—93։

Զարբհանալյան Գար. — «Պատմութիւն հայերէն դպրութեան», հտ. Բ, Վենետիկ, 1878, էջ 405—421։

Զարբհանալյան Գար.: Տես՝ Շրումփ Գ. Ա.։

Թորգոմյան Վահր. — «Հայ բժշկական ձեռագիրք», Արևելք, № 1929, 1890 թ., 21 հունիսի։

Նկարագրում է Ս. Խաչի Մատենադարանի № 319 ձեռագիրը (բժշկ. բառարան)։

[1] Տես՝ Վ. Ա. Հակոբյան (կազմող), «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Ա, էջ 336—343։

Թիրյաքյան Միհր. — *«Հայկազեան բառարանի հարիւրամեակը»,* Հայաստ. Կոչնակ, *ԼԷ տարի, № 21, 1937, մայիս 22, էջ 506—507։*

Իրազեկ — *«Հայ բառարանագիտութիւնը և հայերէն անդրանիկ բառարանը»,* Հայրենիք *(ամս.), 1935, մայիս, էջ 75—90։*

Ղազարյան Ռ. Ս. — *«Մխիթար Սեբաստացու 'Բառգիրք Հայկազեան լեզուի' աշխատութիւնը»,* Բանբեր Երևանի Համալսարանի, *1967, № 1, էջ 225—230։*

Ղազարյան Ռ. Ս. — *«Նոր Հայկազյան բառարանը», անդ, 1968, № 2 (5), էջ 234—238։*

Ղազարյան Ռ. Ս. — *«Ե. Մեղրեցու բառարանը և նրա աղբյուրը»,* Լրաբեր Հասարակական Գիտությունների *(ՀՍՍՀ ԳԱ), № 5, 1968, էջ 48—56։*

Խոսվում է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ի և «Բառք քերթողականք» բառարանի առնչությունների մասին։

Ղազիկյան Ա. — *«Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հտ. Ա., Վենետիկ, 1909, էջ 308—314։*

Ճանաչյան Մ. — *«Հ. Մկրտիչ Աւգերեան»,* Բազմավէպ, *1954, էջ 170—171։*

Ճանաչյան Մ. — *«Ստեփանոս Ռօշքեանի բառարանը», անդ, 1955, էջ 129—138, 185—191, 249—255։*

Մարքայան Հակ. — *«Համայնապատկեր հայ մշակոյթի։ Ը. Վերածնունդ (1715—1852)»,* Մարմարա *(թերթ), Կ. Պոլիս, 1963, նոյ. 28—30, դեկտ. 1—8, №№ 7056—7066։*

Մելիքսեթ-Բեկ Լ. — *«Հայ-վրացական գրական կապերի պատմությունից»,* Էջմիածին *(ամս.), 1957, № 7—8, էջ 40։*

Մելիք-Փարսադանյան Խ. Հ. — *«Համառոտ տեղեկություններ մեզ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին»,* Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի *(ՀՍՍՀ ԳԱ), № 2, Երևան, 1949, էջ 67—76։*

Մուրադյան Պ. Մ. — *«Մի էջ հայ-վրացերեն բառարանագրությունից»,* Բանբեր Մատենադարանի, *№ 5, 1960, էջ 325—331։*

Մուրադյան Պ. Մ. — *«Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից»,* Էջմիածին *(ամս.), 1966, № 11—12, էջ 57։*

Մուրատյան Պ. Հ. — *«Հանրագիտակ անտիպ բառգիրք մը»,* Բիւզանդիոն, *17 հլս. 1902 թ., № 1755։*

Տրումպֆ Գ. Ա., Զարբհանալյան Գար. — *«Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս», Վենետիկ, 1895, էջ 8—11, 48, 69, 97, 99—101։*

Ոսկյան Համ. — *«Ստեփանոս վարդապետ Ռօշքա»,* Հանդէս Ամսօրեայ, *1966, էջ 139—150։*

Ոսկյան Համ. — *«Դարձեալ Ստ. Ռօշքա», անդ, 1967, էջ 478—480։*

Ջուգասզյան Բ. Լ. — *«Եռալեզվյան միջնադարյան մի նոր բառարան»,* Լրաբեր Հասարակական Գիտությունների *(ՀՍՍՀ ԳԱ), 1968, № 10, էջ 81—91։*

Ջուգասզյան Բ. Լ. — *«Պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի հայատառ միջնադարյան մի բառարան»,* Պատմաբանասիրական Հանդես, *1970, № 3(50), էջ 149։*

Սուքիասյան Ս. — *«Հնագույն հայ-ռուսերեն բառարանը»,* Տեղեկագիր *(ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1945, № 5, էջ 73—78։*

Սուքրյան Ս. — *«Հոմերական բառգիրք և հոմերական տաղք»,* Բազմավէպ, *1877, էջ 15—30։*

Տաշյան Հակ. — *«Ասորատառ հայերէն բառգիրք մը»,* Հանդէս Ամսօրեայ, *1899, էջ 22—23։*

Փափազյան Վրթ. — *«Պատմութիւն հայոց գրականութեան», Թիֆլիս, 1910, էջ 285։*

Ֆեյգի Ֆր. — *«Անդրադարձութիւններ Մխիթար Աբբահօր բառարանին շուրջ»,*

Բազմավէպ, *1949, № 7—12, էջ 308—312։*

Амалян А. Г. — „Армянская средневековая лексикография“ (Автореферат диссертации, представленной на соискание ученой степени доктора филологических наук), Ереван, 1973. На правах рукописи.

Григорян К. Н. — „Армянская культурная колония в Петербурге в XVIII веке“, Տեղեկագիր *(ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1953, № 9, էջ 61—62։*

Bąrącz Sad. — „Żywoty sławnych Ormian w Polsce“, Lwów, 1856, str. 283.

Bąrącz Sad. — „Rys Dziejów Ormiańskich“, Tarnopol, 1869, str. 191, 193—194, 201.

Boyle John Andrew — „Kirakos of Ganjak on the Mongols“, *Central Asiatic Journal*, 1963, p. 199—214.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, D. Kouymjian, *Revue des Études Arméniennes*, nouv. série, t. VI, 1969, p. 441.

Cirbied J.-Ch. — „Grammaire de la langue arménienne“, Paris, 1823, p. XXXVI—XLIV.

Dubińska Żof. — „Z badań nad psałterzami ormiańskimi w języku kipczackim„, *Przegląd Orientalistyczny*, 1961, str. 203.

Karst J. — „Das trilingue Medizinalglossar aus Ms. 310 der Wiener Mechitharisten-Bibliothek“, *Zeitschrift für Armenische Philologie*, Bd. II, 1903, S. 112—148.

Lacroze M. A. — „Thesaurus epistolicus Lacrozianus“. t. I, Lipsiae, 1742, p. 336, 357, 362, 365; t. II, Lipsiae, 1743, p. 39, 273, 299; t. III, Lipsiae, 1746, p. 16, 54, 282.

Legati Louis — „Le lexique mongol de Kirakos de Gandzak“ (Dissertationes Sodalium Instituti Asiae Interioris—9), *Acta Orientalia Hungariae*, t. XVIII, 1965, p. 241—297.

Margoliouth D. S. — „The syro-armenian dialect“, *Journal of the Royal Asiatic Society*, 1898, october, p. 839—861.

Oudenrijn (Van den) M. A. — „Linguae haicanae scriptores ordinis Praedicatorum congregationis Fratrum Unitorum...“, Bernae, 1960, §§ 520, 521.

Petrowicz Gr. — „I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVIII“, *Տոնական հրատ. մեջ.* „Mélanges Eugène Tisserant“, vol. III, Romae, 1964, p. 157—161.

Reychman Jan, Tryjarski Ed. — „Z leksykografii Ormian polskich XVII i XVIII w.“, *Przegląd Orientalistyczny*, 1961, str. 473—478.

Roszko Kaz. — „Ormianie polscy jaco autorzy słownikow ormiańskich“, ibidem, 1961, str. 479—483.

Wutz Fr. — „Onomastisches in einem armenischen Homerlexikon?“, *Տոնական հրատ. մեջ.* „Orientalische Studien Fritz Hommel zum sechzigsten Geburtstag am 31. Juli 1914, gewidmet vom Freunden, Kollegen und Schülern“, Bd. II, Leipzig, 1918, S. 252—259.

Ուսումնասիրում է «Այս բառք են քերթողական վասն չափոյ հոմերական տաղի» բնագիրը։

ԲԱՌՆԱԲԱՍ ԱՌԱՔԵԱԼ*

(Barnabas apostolus)

Նորկտակարանային դեմքերից։ Կոչվում էր նաև Յովսէփ։ Հուդայի Ղևտական ցեղից էր, ծն. Կիպրոսում։ Բառնաբասի վարք-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Պատմական և մատենագրական տեղեկություններ տես՝* D. Papebrochius, „De S. Barnaba apostolo, Salamine in Cypro“, *Acta Sanctorum*, Iunii t. II, Parisiis, 1867, p. 415—454. O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Litteratur“, Bd. I, Freiburg i. Br., 1902, S. 86—98. B. Altaner—A. Stuiber, „Patrologie“, 1966, S. 53—55. G. Krüger, „Geschichte der altchristlichen Litteratur in den ersten drei Jahrhunderten“, Freiburg i. Br., 1898, S. 12. Idem, „Nachträge zu Geschichte der altchr. Litt...“, Freibnrg i. Br., 1897, S. 10.

վկայաբանությունը, որ ունենք հայ. թարգմանությամբ, պատկանում է առաքելական անվավերականների շարքին։ Այն կազմված է հունարեն երկու տարբեր աղբյուրներից։ Դրանցից մեկը՝ Հովհաննես Մարկոսը, որը գրի է առել Բառնաբասի կյանքի ու վկայության պատմությունը, համարվում է նրան ժամանակակից, Ա դ., իսկ մյուսը՝ Աղեքսանդր Կիպրացին, որը ներբողաբար գրի է առել նրա նշխարների գյուտի պատմությունը, ապրել է Ե դ.։ Հայ. ընդարձակ բնագրից առաջացել են Հայսմավուրքներում գտնվող համառոտ խմբագրությունները։ Գոյություն ունի նաև դավանաբանական ու բարոյախոսական բնույթի մի անվավերական «Թուղթ Բառնաբայ», որը ծագած է համարվում 80—130 թթ. միջև և որի հայ. թարգմանված լինելու մասին կա հիշատակություն։

* * *

Ա.—ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1 (ընդարձակ խմբագր.).

Վկայութիւն Բառնաբայ սուրբ առաքելոյն. «Առաքեալն Քրիստոսի սուրբն Բառնաբաս՝ անուանի որդի մխիթարութեան, Ղևտական ազգաւ Իսրայէլացի...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 205, էջ 69բ—71բ։*

«Յոյժ հետաքրքրական է Վկայութիւնս, զի այնպիսի վկայութիւններ կու տայ Բառնաբասի դարձին, առաքելութեան և քարոզութեան, Անտիոքայ նորադարձները առաջին անգամ քրիստոնեայ անուանելոյն, մատթէոսեան կոչուած Աւետարանի մը՝ իր հետ շրջեցնելուն, ի Կիպրոս հրով այրուելուն և այրի մը մէջ թաղուելուն—ձեռամբ Տիմոնի, Մարկոսի և Ռոդոնի—և ապա նշխարաց յայտնուելուն, Զենոն կայսեր օրով, ևն։ Վկայութեանս հայերէնը միայն ծանօթ է, և տպագրուած չէ...։ Զ դարուն և նշխարաց գիւտի առթիւ խմբագրուած ըլլալու է հաւանօրէն։ Յունարէնը դեռ կը մնայ անյայտ»[1]։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 201 (էջ 76բ—77բ)։

---

[1] Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ...», հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 41։

2 (Համառոտ Ա խմբագր., տեր Իսրայելի).

Վկայութիւն սուրբ առաքելոյն Բառնաբայ. «Առաքեալն Քրիստոսի Բառնաբաս որդի մխիթարութեան անուանեցաւ, էր յազգէն Ղևեայ՝ յորմէ Մովսէս և Ահարոն և Սամուէլ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 251—252։*

Այլ տպ.— Վկայութիւն սուրբ առաքելոյն Բառնաբայ. «Առաքեալն Քրիստոսի Բառնաբաս որդի մխիթարութեան էր յազգէն Ղեւեայ...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1929, p. 562—564.

Բնագրի ֆրանս. թարգմանությունը՝ „Martyre du saint apôtre Barnabé“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 349ա—349բ)։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Բառնաբայ. «Սուրբ առաքեալն Բառնաբաս որդի մխիթարութեան անուանեցաւ. էր նա եբրայեցի գաւառաւ Կիպրացի...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 801—802։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Սուրբ առաքեալն Բառնաբաս...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 890—891։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *ևն.* «Սուրբ առաքեալն Բառնաբաս...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուր», Կ. Պոլիս, 1730, էջ 608—609։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Բառնաբայ առաքելոյն. «Բառնաբաս մխիթարութիւն անուանի. էր յազգէն Ղևեայ, ծնեալ ի Կիպրոս կղզին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 210ա—210բ։*

⊠ *Հմմտ. Բառն.ի վկայաբանության հուն. բնագիրը՝* „Περίοδοι καὶ μαρτύριον τοῦ ἁγίου Βαρνάβα τοῦ ἀποστόλου“ *(հեղինակ՝ Հովհաննես Մարկոս) տես հետևյալ հրատ. մեջ.*

R. A. Lipsius et M. Bonnet, „Acta apostolorum apocrypha“, partis alterius, volumen alterum, Lipsiae, 1903, p. 292—302. Նույնը տես՝ C. Tischendorf, „Acta apostolorum apocrypha“, Lipsiae, 1851, p. 64—74. Նաև՝ *Acta Sanctorum*, Iunii t. II, p. 425—430.

Հմմտ. նաև նշխարների գյուտի պատմության հուն. բնագիրը՝ „Laudatio S. Barnabae apostoli, auctore Alexandro monacho Cyprio“, *Acta Sanctorum*, Iunii t. II. p. 431—447.

Բ. — ԹՈՒՂԹ

ԺԳ դարում՝ Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1500) պահված՝ նորկտակարանային անվավերականների ցուցակում հիշատակվում է «Կաթուղիկէ թուղթն Բառնաբայ»[1]: Նույն տեղում պահված մի ուրիշ ցուցակում, որը կրում է Կղեմես Հռոմայեցու անունը, «Թուղթն Բառնաբայ» հիշատակվում է որպես ընդունելի կամ Նոր Կտակարանի կանոնական գրքերից մեկը[2]: Սակայն այս ցուցակների հիման վրա դժվար է պնդել, թե Բառն.ի թուղթը հնում թարգմանված էր հայերենի: ԺԲ դ. վերջերին, հավանաբար 1197 թ., Ներսես Լամբրոնացին այս թուղթը Կ. Պոլսում թարգմանել էր հունարենից՝ ինչպես պարզվում է հայ. այն հիշատակարանով, որը գտնվում է Հռոմի Վատիկանյան Մատեն. հուն. № 859 ձեռագրում, Բառնաբասի թղթի հուն. բնագրի վերջում.

«Ես Ներսէս թարգմանեցի զԹուղթս զայս ի հայ բարբառ ի թագաւորական քաղաքս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն»[3]:

Լամբրոնացու թարգմանության բնագիրն առայժմ չի հայտնվել:

Հմմտ. Թղթի հուն. բնագիրը՝ լատ. թարգմանության հետ միասին՝ «Sancti Barnabae apostoli Epistola catholica“, հետևյալ հրատ. մեջ. J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. II, p. 727—782.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. — *«Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 91—92:*

Ակինեան Ներս. — *«Ներսէս Լամբրոնացի», Վիեննա, 1956, էջ 316—317:*

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Է, Վենետիկ, 1813, էջ 88—120:*

Զարբհանալյան Գար. — *«Պատմութիւն մատենագրութեան Յունաց, Հռովմայեցւոց և հարց եկեղեցւոյ», Վենետիկ, 1856, էջ 580—581:*

Զարբհանալյան Գար. — *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 205—206:*

ԲԱՍԱ

Տես՝ ԲԱՍՍԱ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ:

ԲԱՍԴԱՍԽԱՆ (ԱՆՆԱ ԹՈՐՈՍԻ)

Տես՝ ՈՒԼԽԱԹՈՒՆ ԱԳՈՆՑ:

ԲԱՍԵՆԱՑԻ

Տես՝ ՆԱԶԱՐ ԲԱՍԵՆԱՑԻ:

ԲԱՍԻԼԻԱ ՀՌՈՄԱՅԵՑԻ

Տես՝ ԵՒԳԻՆԷ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ:

ԲԱՍԻԼԻԴԷ [ՎԱՍԻԼՈՒՀԻ] ՆԻԿՈՄԵԴԱՑԻ

(Basilissa Nicomediensis)

Իննամյա վկայուհի Դիոկղետիանոս կայսեր օրով՝ 303—305 թթ. շրջանում: Հայ մատենագրության մեջ նրա վկայաբանությունը պահված է ընդարձակ և համառոտ խմբագրություններով: Անունը ձեռագրերում պատահում է Բասիլիդէ, Բասիլիդա, Բասիլիսա, Վասիլիդէ, Վասիլիսա, Վասիլուհի ձևերով:

---

1 Աստ. հտ. Ա, էջ XL: Տես և հմմտ. նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1288 (էջ 111ա):

2 Աստ. հտ. Ա, էջ XL: Տես և հմմտ. նաև Երուսաղեմի ձեռ. № 1288 (էջ 254բ):

3 Լուսապատկերը տես Ալիշան, էջ 92: Ակինյան, էջ 83:

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյ կուսին Վասիլուհեայ. «Աղեքսանդրոս դատաւոր Նիկոմիդայ քաղաքի մոլորեալ ի սնոտի կուռս, հրամայեաց զամենայն զքրիստոնեայս, որք ի քաղաքին իցեն կամ ի գաւառին...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», հտ. Բ, Վենետիկ, 1874, էջ 366—369։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. երկու ձեռագրերի համեմատությամբ. № 200՝ «Վկայաբանութիւն սրբոյ կուսին Վասիլուհեայ» *(էջ 444ա—445ա, սկ.* «Աղեքսանդրոս դատաւոր Նիկոմիդայ քաղաքի մոլորեալ զհետ ի սնոտի կուռս») *և № 201՝* «Վկայութիւն սրբոյ կուսին Վասիլիդեայ» *(էջ 148բ—150բ, սկ.* «Աղեքսանդրոս դատաւոր Նիկոմիդեայ քաղաքի մոլեալ ի սնոտի կուռս»)։

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Տօն է սրբուհւոյն Բասիլիսայ. «Սրբուհի կոյս վկայն Քրիստոսի էր ինն ամաց ի Նիկոմեդեայ քաղաքէն...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 134։*

Այլ տպ.— Տօն է սրբուհւոյն Բասիլեայ. «Սրբուհի եւ կոյս վկայն...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. VI, 1911, p. 189.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «En ce jour, fête de sainte Basilissa», *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 35ա)։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբուհւոյն Բասիլիդեայ. «Սա էր Թ ամաց ի Նիկոմիդեայ քաղաքին, զաւակ քրիստոնեայ ծնողաց, որ մնացեալ որբ ի ծնողացն յայտնապէս պաշտէր զՔրիստոս Աստուած...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»),* Կ. *Պոլիս, 1706, էջ 76։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն եւն. «Սա էր Թ ամաց...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 86։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն եւն. «Սա էր Թ ամաց...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 61—62։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Բասիլիսիա. «Սրբուհի կոյսն էր ինն ամաց ի Նիկոմիդայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 28ա։*

⊠ *Բաս.-ի վկայաբանության հուն. անտիպ խմբագրությունների մասին տես* F. Halkin, „Bibliotheca hagiographica graeca", t. III, p. 14. *Հմմտ. Նաև բյուզանդական Հայսմավուրքը՝* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 9—10.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ.— *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Թ, Վենետիկ, 1813, էջ 82—89։*

ԲԱՍԻԼԻԴԷՍ [ԲԱՍԻԼԻՈՍ] ՆԻԿՈՄԵԴԱՑԻ

Տես՝ ԲԱՍՍՈՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ ԵՒ ԸՆԿ.։

ԲԱՍԻԼԻՈՍ [ՎԱՍԻԼԻՈՍ] (Հայր)

(Pater Basilius)

Մեզ անծանոթ հեղինակ, որից հայտնի է հետևյալ մեկնաբանական երկը։

* * *

Սրբոյ հօրն Վասիլիու Մեկնութիւն յաղագս եկեղեցւոյ. «Եկեղեցի իցէ տաճար Աստուծոյ, մեհեան սուրբ, տուն աղօթից, ժողովարան ժողովրդեան...», *տես հետևյալ հրատ. մեջ. «Հատուկտոր բանք և ճառք ի մատենագրութեանց նախնեաց ի վերայ ժամասացութեանց և ս. պատարագին», Վենետիկ, 1910, էջ 11—24։*

Ըստ երևույթին հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 253 ձեռագրից (էջ 95բ—98բ)։

tanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 629–632.

ԲԱՍԻԼԻՈՍ [ՎԱՍԻԼԻՈՍ] ԱՆԿԻՒՐԱՑԻ

(Basilius Ancyranus)

Դ դարի վկա՝ Հուլիանոս Ուրացողի հալածանքների ժամանակ։ Հայոց Հայսմավուրքները նրա հիշատակությունն ունեն հունվարի 2 կամ 14 ամսաթվի տակ։ Հմմտ. Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. է, Վենետիկ, 1813, էջ 562—574 և 577 ծան. 3։

ԲԱՍԻԼԻՈՍ [ՎԱՍԻԼԻՈՍ] ԿԵՍԱՐԱՑԻ

Տես՝ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ։

ԲԱՍԻԼԻՈՍ ՔԵՐՍՈՆԱՑԻ

Տես՝ ՎԱՍԻԼԻՈՍ ՔԵՐՍՈՆԱՑԻ։

ԲԱՍԻԼԻՍԱ [ՎԱՍԻԼԻՍԱ[

Տես՝ ԲԱՍԻԼԻԴԷ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ։
ՂԵՒՈՆԻԴԷՍ ԱԹԵՆԱՑԻ ԵՒ ԸՆԿ.։

ԲԱՍԻԼԻՍԿՈՍ ԱՄԱՍԻԱՑԻ ԶՕՐԱԿԱՆ*

(Basiliscus Amasenus)

Վկա՝ Կապադովկյան Պոնտոսի Ամասիա քաղաքի շրջաններից, Մաքսիմիանոս կայսեր օրով, Դ դ. սկզբին։ Եղբորորդին էր Թեոդորոս Տյուրոնի։ Մեզ ծանոթ են նրա վկայաբանության հայ. ընդարձակ և համառոտ խմբագրությունները։ Ձեռագրերում անունը պատահում է նաև Բարսիլիսկոս *և* Բասիլիկոս *ձևերով։*

* * *

1ա (Ընդարձակ խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Բարսիլիսկեայ նահատակի Քրիստոսի. «Ի ժամանակս թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Մաքսիմինայ, եկն ոմն փոխանակ դատաւորին Ասկղեպիդեայ (sic) Ագրիպպոս անուն, և երթայր ի գաւառն Արևելից ժողովել զամենայն քրիստոնեայսն, զի հաւանեցուսցէ զոհել աստուածոցն։ Իսկ երանելին Բասիլիսկոս էր ի բանտի, լայր և աղօթս առնէր ասելով. Տէր, յիշեա՛ զիս և յայտնի արա զկոչումն իմ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522, էջ 161բ—164բ։*

1բ (Ընդարձակ խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Բասիլիսկոսի, որ էր եղբօրորդի սրբոյն Թէոդորոսի. «Իբրև վախճանեցաւ Մաքսիմիանոս թագաւոր՝ եկաց ի տեղի նորա Ագրիպպաս դատաւոր...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201, էջ 198բ—201ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 205 (էջ 146ա—150բ)։

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայութիւն սրբոյն Բասիլիսկոսի. «Մարտիրոսն Քրիստոսի Բասիլիսկոս էր ի ժամանակս Մաքսիմիանոսի կռապաշտ արքային, ի սահմանաց Ամասիոյ քաղաքին...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 230—231։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոյն Բասիլիսկոսի. «Մարտիրոսն Քրիստոսի սուրբն Բասիլիսկոս էր ի ժամանակս...» (*Հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1928, p. 493—495.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Martyre de saint Basiliscus" *տեսնել տպ. նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 330բ—331ա)։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբոյն Բասիլիսկոսի. «Սուրբ վկայն Քրիստոսի Բասիլիսկոս էր ի ժամանակս Մաքսիմիանոսի թագաւորին ի քաղաքէն Ամասիոյ...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 771։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. է, Վենետիկ, 1813, էջ 547—561 և 575—577։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Սուրբ վկայն Քրիստոսի Բասիլիսկոս...», *տես՝ «Յայսմաւուրք», 1706 (—1708), էջ 856։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն են. «Սուրբ վկայն Քրիստոսի Բասիլիսկոս...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 585—586։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Բասիլիսկոսի. «Յամս Մաքսիմիանոսի արքային էր ի սահմանաց Ամասիոյ քաղաքէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 200ա—200բ։*

⊠ *Հմմտ. վկայաբանության հուն. մի բնագիրը՝* „Μηνὶ τῷ αὐτῷ κβ' μαρτύριον τοῦ ἁγίου μάρτυρος Βασιλίσκου" (*հրատ.* W.Lüdtke), *տես՝ Archiv für Slavische Philologie*, Berlin, Bd. XXXV, 1913/14, S. 45—51. *Հուն. մի այլ, ավելի ընդարձակ, բնագրի մասին տես՝* F. Halkin, „Bibliotheca hagiographica graeca", t. I, Bruxelles, 1957, p. 85.

Տես նաև ԵՒՏՐՈՊԻՈՍ ԱՄԱՍԻԱՑԻ ԵՒ ԸՆԿ.։

ԲԱՍԻՄՈՍ

Տե՛ս ԲԱԴԻՄՈՍ ՎԿԱՅ։

ԲԱՍԼԵՑԻ

Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՍԼԵՑԻ։

ԲԱՍՈՍ

Տե՛ս ԲԱՍՍՈՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ։

ԲԱՍՍԱ [ՎԱՍՍԱ] ՄԱԿԵԴՈՆԱՑԻ ԵՒ ՈՐԴԻՔ

(Bassa et filii tres)

*Վկայուհի՝ Մակեդոնիայի Եդեսիա (այսօր՝ Վոդինա) քաղաքից, ուր նահատակվել է Մաքսիմիանոս կայսեր օրերին՝ իր երեք որդիների (*Թէոգնիոս, Ագապիոս, Պիստոս*) հետ միասին։ Վկայաբանությունը հայտնի է մեզ հայ. ընդարձակ և համառոտ խմբագրություններով։ Անունը պատահում է նաև* Բասա, Վասա, Վլասա *ձևերով։*

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Բասսայ և որդւոց իւրոց Թէոգնեի և Ագապի և Պիստեի. «Մաքսիմիանոս թագաւոր եկեալ ի քաղաք մի երևելի, զոր կոչեն Բերով, որ է յարևմուտս և կայ ի մէջ Գալլեայ և Հռոմեայ, և կոչեցեալ զհուրմսն անուանելոց աստուածոցն՝ առնէր ուրախութիւն մեծ...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», Վենետիկ, 1874, հտ. Ա, էջ 180—187։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. երկու ձեռ. օրինակների հիման վրա. № 201=Ճառընտիր Բ (էջ 120բ—126բ) և № 200=Ճառընտիր Ա (էջ 98ա—100բ)։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522՝ «Վկայութիւն սրբոյն Բասայ և որդւոց իւրոց Թէոգնեի և Ագապի և Պիստոսի» *(էջ 356ա—358բ, սկ.* «Մաքսիմ. թագ. եկեալ ի քաղաք մի երևելի, զոր կոչէին Բիքով»), *№ 6196՝* «Վկայաբ. սրբոյն Բասայ և երեք որդւոցն՝ Թէոգնեի և Ագապի և Պիստոսի» *(էջ 126բ—129ա, սկ.* «Մաքսիմ. թագ.ն եկեալ ի քաղաք մի երևելի, որում անուն էր Փիքով») *են։*

2 (Տեր-Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն Բասայ և որդւոց իւրոց. «Սրբուհին Բասսա՝ էր յաւուրս Մաքսիմիանոսի անօրէն արքային՝ յերկրէն Եդղաղա ի քաղաքէն Եդեսեայ...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 88—89։*

Այլ տպ.—Վկայաբանութիւն սրբոյն Վլասայ և երեք որդւոցն նորա՝ Թէոգնիոսի, Ագապիոսի, Պիստոսի, «Սրբուհին Վլասա էր յաւուրս...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 406—408.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour martyre de sainte Basse [Vlas] et de ses trois fils Théognis, Agapius et Fidèle [Pistos[" *տեսնել տպ. նույն էջի ստորին կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 12ա—12բ)։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Մեռենցի).

Վկայաբանութիւն սուրբ մօրն Վասայի և երեք որդւոցն նորա. «Սրբուհին Վասայ էր յամս Մաքսիմիանոսի անօրէն արքային յերկրէն Ելլադայ ի քաղաքէն Եդեսիոյ և էր ճաւատովն քրիստոնեայ...», *տես՝ «Ծառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 25—26։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *են.* «Սրբուհին Վասայ...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 35—36։*

Այլ տպ.—Վկայաբանութիւն *են.* «Սրբուհին Վասայ...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 23—24։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Վասայ (sic) և երից որդոց իւրոց Թէոգնիոսի, Ագապիոսի և Պիստոսի. «Սա էր յաւուրս Մաքսիմիանոսի արքային, յերկրէն Ելլադայ ի քաղաքէն Եդեսեայ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 11բ—12ա։*

⧆ *Հուն. ընդարձակ վկայաբանությունը* (Μαρτύριον τῆς ἁγίας μάρτυρος Βάσσης καὶ τῶν τριῶν υἱῶν αὐτῆς Θεογνίου καὶ Ἀγαπίου καὶ Πιστοῦ) *տես՝* B. Latyšev, „Hagiographica graeca inedita“, *Mémoires de l'Académie Imp. des Sciences de St.-Pétersbourg*, VIIIe série, t. XII, 1914, p. 133—146.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 359—360։*

ԲԱՍՍՈՍ ՆԻԿՈՄԵԴԱՑԻ ԵՎ ԸՆԿ.
(Bassus Nicomediensis et socii)

Վկաներ՝ Դիոկղետիանոս կայսրի օրով, մոտ 290 թ.։ Ճառընտիրներում ունենք նրանց ընդարձակ վկայաբանությունը, որի հուն. սկզբնագիրը չի հայտնված. իսկ Հայսմավուրներում՝ համառոտ խմբագրությունները։ Վկաների անունները են՝ Բասսոս, Եւսեբիոս, Եւտիքիոս *(կամ* Եւտիքոս*) և* Բասիլիդէս *(աղավաղմամբ՝ նաև* Բասիլիոս):

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոց վկայիցն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասլի չորից զինուորացն. «Յետ վկայութեան սրբոյ եպիսկոպոսին Թէոպոմպեայ և Թէովնեայ կախարդի, այս չորք զինուորքս Բասսոս, Եւսեբիոս, Եւտիքոս և Բասիլիոս (sic) եկին ի միասին առաջի թագաւորին...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», Վենետիկ, 1874, հտ. Ա, էջ 188—192։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 200=Ճառընտիր Ա (էջ 521ա—522բ) ձեռագրից։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6196՝ «Վկայաբ. սրբոց վկայիցն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասլի՝ չորից զինուորացն. որք էին պահապանք աստուածոցն Դէոկղետիանոսի» *(էջ 593բ—595բ, սկ. նույն ընդ տպ.)։*

2 (Համառոտ Ա խմբագր., Տէր Իսրայէլի).

Տօն չորից զինուորացն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիոսի (sic) և այլոցն, որք ընդ նոսա կատարեցան. «Այս սուրբ վկայքս և երանելի մարտիրոսքս մեծամեծ իշխանք էին Դիոկղետիանոսի կրապաշտ արքային...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 38—39։*

Այլ տպ.— Տօն չորից զինուորացն Բասսոսի, Եւսեբի, Եւտիքի եւ Բասիլիոսի և այլոցն. որք ընդ նոսա կատարեցան. «Այս սուրբ մարտիրոսքս մեծամեծ իշխանք էին Դիոկղետիանոսի կրապաշտ արքային...» *(Հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XIX, 1925, p. 60—62.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „Fête des quatre soldats Bassus, Eusèbe, Eutychius et Basilide (Basilios) et des autres qui furent martyrisés aves eux“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 203ա—203բ), սկ.* «Այս սուրբ մարտիրոսքս մեծամեծ...»)։

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն չորից զինուորացն՝ Բասոսի, Եւսեբեայ, Եւտիքեայ և Բասիլիդեայ. «Սոքա մեծամեծ իշխանք էին Դիոկղետիանոսի կռապաշտ արքային և նահատակութեամբ Թէոպոմպեայ եպիսկոպոսին ի Քրիստոս հաւատացին...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 433—434։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Սոքա մեծամեծ իշխանք էին...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 464—465։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Սոքա մեծամեծ իշխանք էին...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 329—330։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Բաս[ոս]ի, Եւսեբի, Եւտիքեայ և Բասիլիդի. «Սուրբքս այս մեծամեծ իշխանք էին Դէոկղիտիանոսի և մեծատուն յոյժ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 125բ—126ա։*

☐ *Հմմտ. Բասսոսյանների հուն. վկայաբանության մի համառոտությունը՝ բյուզանդական Հայսմավուրքում.* «Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano» (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 405—406.

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ժ, Վենետիկ, 1914, էջ 133—141։*

Հեղինակը շարադրել է Բասսոսյանների պատմությունը՝ ըստ վենետիկյան Ա ճառընտրի, որ է ձեռ. № 200 (էջ 251ա), գրեթե բառ առ բառ։ Ծանոթագրությունների մեջ գրում է բնագրի մասին. «Յետ ունելոյ մեր ի ձեռին զայսպիսի ընտիր վկայաբանութիւն ի մեծ ճառընտրի՝ ոչ կարօտացաք այլոց. թո՛ղ զի Բոլլանդեանք ոչ այլ ինչ յառաջ բերեն, բայց զհամառօտութիւն ժամագրոց յունաց, որ է քաղուած վկայաբանութեանս մերոյ. զնոյն խմա՛ և զյայսմաւուրաց հայոց որ փոքր մի ընդարձակ քաղէ»։ Նաև Հայսմավուրքների՝ նույն բնագրից ունեցած շեղումները մատնանշելով ասում է. «Այլ մեր ուրեք փոփոխութիւն արարաք ի բանս ճառընտրին, որ է աղբիւր յայսմաւուրաց. և եթէ կայցէ ինչ թեթև վրիպակ, չէ՛ մարթ ուղղել նախ քան զգտանել զայլն բնագիր, որ չերեւի ի միջի»։

ԲԱՄԲԱՑԻ

Տես՝ ՄԻՔԱՅԵԼ ԲԱՄԲԱՑԻ։

ԲԱՏԱ [ԲԱՏՈՍ] ՊԵՐԳԱՄԱՑԻ
(Bata Pergamensis)

Պարսիկ վկա Բիզանդաղոնում, ըստ ոմանց՝ Մծբինում։ Մեզ հայտնի են նրա վկայաբանության հայ. համառոտ խմբագրությունները։ Ձեռագրերում անունը պատահում է նաև Բատ, Բահտ, Վատ *ձևերով։*

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վարք և վկայութիւն Բատայ ճգնաւոր կրօնաւորի և մարտիրոսի. «Աստուածահաճոյ կրօնաւորն Բատա էր յերկրէն Պարսից ի գեղջէն Բիրգամայ, ծնեալ քրիստոնէական հաւատով...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 190—191։*

Այլ տպ.— Վարք եւ վկայութիւն Բատայ ճգնաւորի. «Աստուածահաճոյ կրօնաւորն եւ ճգնաւորն Բատայ...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1928, p. 364—366.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Vie et martyre de Bata l'ascète» *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 303ա—303բ)։*

2 (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վարք և պատմութիւն Բատայ ճգնաւորին. «Աստուածահաճոյ կրօնաւորն Բատ էր ազգաւ պարսիկ, ծնեալ և սնեալ քրիստոսական հաւատովս ի գեղջին Պերգամայ...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 706—707։*

Այլ տպ.— Վարք և պատմութիւն *նն.* «Աստուածահաճոյ կրօնաւորն Բատ...», *տես՝*

«Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 783—784։

Այլ տպ.— Վարք և պատմութիւն նն. «Աստուածահաճոյ կրօնաւորն Բաստ...», *տե՛ս «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 537։*

3 (Անանուն խմբագր.).

Կրօնաւոր վկային Բաստայ. «Էր սա յերկրէն Պարսից, ծնեալ և սնեալ հաւատովն Քրիստոսի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 184ա—184բ։*

⊠ *Համմ. հուն. Հայսմավուրքները՝* «Synaxarium Ecclesiae Constantinopolitanae" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 645—646, 647—648.

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 76—77։*

ԲԱՐԱՂԱՄ ԱՆՏԻՈՔԱՑԻ*
(Barlaam Antiochenus)

Վկայացել է Դ դ. 80-ական թթ. Ասորական Անտիոքի կողմերում, հռոմեական կայսր Նումերիանոսի հալածանքների ժամանակ։ Նրա վկայաբանության ընդարձակ բնագիրը գտնում ենք հայկ. Ճառընտիրներում, իսկ համառոտը՝ Հայսմավուրքներում։ Ձեռագրերում անունը պատահում է Բարաղամ, Բարղամ, Բարղաամ, Բարլաամ *ձևերով։*

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայաբանութիւն սրբոյն Բարղամու. «Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ թագաւորել Հռոմայեցւոց Նումերիանոսի ամպարշտի. և յերկրորդում ամի արքայութեան իւրում հալածանս յարոյց ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ...», *տե՛ս «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի Ճառընտրաց», Վենետիկ, 1874, հտ. Ա, էջ 212—219։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից. հմմտ. № 200=Ճառընտիր Ա՝ «Վկայաբանութիւն սրբոյն Բարղամու՝ որ վկայեաց յԱնտիոք մայրաքաղաքին Ասորւոց» *(էջ 105բ—108ա) և № 202=Ճառընտիր Գ՝* «Վկայաբանութիւն սրբոյն Բարղամու Անտիոքացւոյ, նոյեմբերի ԻԲ» *(էջ 546ա—548բ)։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6196՝ «Վկայաբ... Ասորւոց» *(էջ 134բ—137ա, սկ. նույն ընդ տպ.), № 3787՝* «Վկայաբ... յԱնտիոք մայրաքաղաքին» *(էջ 212—219, սկ. նույն)։*

Հայ. բնագրի ռուս. թարգմանությունը՝ „Мученичество святого Варлаама" *տես՝* Н. Марр, „Армянско-грузинские материалы для истории душеполезной повести о Варлааме и Иоасафе", С.-Петербург, 1897, стр. 67—72.

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Յայսմ աւուր սուրբ վկայն Քրիստոսի Բարղամ ծերունին հրով կատարեցաւ յԱնտիոք Ասորւոց. «Տարան զնա բռնութեամբ ի տաճար կռոցն և արկին ի ձեռսն հուր և կնդրուկ, զի խնկեսցէ դիցն...», *տե՛ս «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 247։*

Այլ տպ.— Յայսմ աւուր նն. «Տարան զնա բռնութեամբ...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XVI, 1922, p. 77.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «En ce jour le saint martyr du Christ, le vieillard Barlaam, mourut par les flammes à Antioche de Syrie" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Յայսմ աւուր զուրբ վկայն Քրիստոսի զուրբ ծերունին Բարաղամ յԱնտիոք Ասորւոց. «Կալան անօրէնքն և տարան ի տաճար կռոցն, եդին ի ձեռն նորա հուր և կնդրուկ, զի խնկեսցէ դիցն...», *տե՛ս «Ճառ. սրբոց*

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. H. Delehaye, „S. Barlaam, martyr à Antioche", *Analecta Bollandiana*, t. XXII, 1903, p. 129—145.

վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 259։

Այլ տպ.— Յայսմ աւուր են. «Կալան անօրէնքն և տարան...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 278—279։*

Այլ տպ.— Յայսմ աւուր են. «Կալան անօրէնքն և տարան...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 198։*

4 (Համառոտ Գ խմբագր., անանուն).

Բարղամու ծերունոյն. «Հրով կատարեցաւ յԱնտիոք. տարան ի տաճար կռոցն և արկին ի ձեռն հուր և կնդրուկ, զի ծխեսցէ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 86ա։*

⊠ *Բար. Անտիոքացու վկայաբանության հուն. ընդարձակ բնագիրը* („Μαρτύριον τοῦ ἁγίου καὶ ἐνδόξου μάρτυρος τοῦ Χριστοῦ Βαρλαάμ", *հրատ.* H. Delehaye), *տես՝ Analecta Bollandiana*, t. XXII, 1903, p. 139—145. *Հմմտ. նաև բյուզանդական Հայսմավուրքը՝* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 567—570.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ը, Վենետիկ, 1813, էջ 124—142։*

Марр Н. — „Армянско-грузинские материалы для истории душеполезной повести о Варлааме и Иоасафе", С.-Петербург, 1897, стр. 64—72 (§§ IV и V).

ԲԱՐՂԱՄ ԱՇԽԱՐՀԱԳԻՐ

Ըստ Ղ. Ալիշանի՝ ԺԸ դ. հայ հեղինակ, որի մասին նա գրում է. «Նման իմն Նալեանի՝ Աշխարհագրութիւն մի գրած է **Բարաղամ** *կամ* **Բաղրամ:** *Յետ Պատմութեան Ռուբինեանց և Արցախոյ իշխանաց, այսինքն մելիքաց Ղափանու, զՄեծ և Փոքր Հայս քան աշխարհք հաշուէ ըստ նախնեաց, յորս երկու հարիւր յիսունևութ գաւառներ նշանակէ։ Լեզուն աւելի յստակ է քան զպատրիարքին։ Այս գործս տպագրված է ի Մադրաս Հնդկաց, յամին 1772»[1]։*

Ալիշանի նշած աղբյուրն է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» (տպագր. Մադրաս, 1772) երկի Զ գլուխը՝ «Յաղագս թէ ընդ որո՞յ իշխանութեամբք է այժմ աշխարհն Հայոց. և կամ թէ ո՞րքան աշխարհս և գաւառս ունին Հայք մանրամասնաբար գիտելի է», էջ 122—156։ Տես նաև՝ ՄՈՎՍԷՍ ԲԱՂՐԱՄԵԱՆ։

ԲԱՐՂԱՄ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ

Տես՝ ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ, «Տաղ Յովասափու»։

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ, «Նկարագրութիւն հոգևոր վարուց Յովասափու, որդւոյ թագաւորին Հնդկաց»։

ԲԱՐՂԱՄ ՎԱՀԱՆԵԱՆ

Ռուսական բանակի հայազգի զինվորական, որը ծառայել է Պետերբուրգում 1780-ական թթ.։ Եղել է Հայաստանի մասին ռուս. լեզվով լույս տեսած առաջին գրքերի թարգմանիչը։ Դրանցից առաջինն է՝ «Плачь о Армении. Из сочинений славного армянского историка Мосеса Хоринацеса. Перевел с армянского на российский язык В[арлаам] В[аганов]"[2], С.-Петербург, у Шнора, 1786. *Սա Խորենացու «Ողբ»-ն է (Գիրք Գ, գլ. ԿԸ)։ Բ. Վահանյանի թարգմանած երկրորդ գործն է՝* „Краткое историческое и географическое описание Царства Армянского, из древних писателей сего народа, яко верных источников, собранное и на армянском языке в Индии изданное Яковом Шамировым, а ныне с армянского на российский язык переведенное подпоручиком Варлаамом Вагановым"[3], С.-Петербург, у Шно-

---

1 *Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 137 (§ 150)։ Նույն, «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 63։ Նույն, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 283։*

2 *Հմմտ.* «Сводный каталог русской книги гражданской печати XVIII века, 1725—1800», т. II, Москва, 1964, стр. 253 (§ 4286).

3 Там же, т. III, Москва, 1966, стр. 369.

ра, 1786. *Այս երկրորդը, որ մենք չենք տեսել, հավանաբար թարգմանությունն է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» երկի (տպագր. Մադրաս, 1772)։*

Բ. Վահանյանը եղել է նաև 1784 թ. հայ մելիքների, ինչպես նաև էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների, կողմից ուղարկված պաշտոնական նամակների թարգմանիչը[1]*։*

Բ. Վահանյանի գործունեության մասին տես՝ К. Н. Григорян, „Армянская культурная колония в Петербурге в XVIII веке". Տեղեկագիր *(ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1953, № 9, էջ 66—68։*

ԲԱՐԱՌՆՈՒԹԻՒՆՔ

Տես՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ։ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ։

ԲԱՐԱՔԻԱՍ [ԲՐՔԻՇՈՅ]

Տես՝ ՅՈՒՆԱՆ ԵՒ ԲԱՐԱՔԻԱՍ։

ԲԱՐԲԱՇՄԻՆ*

(Barbasemin vel Barbasymas)

Արևելյան վկաներից, 346 թ.։ Քեռորդին էր Շմավոն Բար-Սաբոյեի, որին հաջորդել էր Սղակի և Տիզբոնի եպիսկոպոսության մեջ։ Նրա վկայաբանությունն ունենք ընդարձակ և համառոտ խմբագրություններով։

* * *

1 (Ընդարձակ խմբագր.).

Վկայութիւն Բարբաշմենայ եպիսկոպոսի և վեշտասան այլես վկայից, որ ընդ նմին վկայեցին. «Յամի վեցերորդի հալածանաց մերոց եղին չարախօս զԲարբաշմենայ եպիսկոպոսէ Սղակայ և Տիզբոն քաղաքի...», *տես՝* *«Աբրահամու խոստովանողի Վկայք Արևելից», էջմիածին, 1921, էջ 166—172։*

Հրատարակվել է էջմ. Մատ. № 936 և № 939 ձեռագրերից (այժմ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522 և № 3777)։

2 (Համառոտ Ա խմբագր., Տեր Իսրայելի).

Վկայութիւն սրբոյն Բարբաշմենայ եպիսկոպոսին Պարսից. «Սուրբ եպիսկոպոսն Բարբաշմէն քեռորդի էր սրբոյն Շմաւոնի՝ որդւոյն Նարոտաներկաց, որ վկայութեամբ կատարեցաւ ի Շապհոյ Պարսից արքայէն...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 250։*

Այլ տպ.— Վկայութիւն սրբոյն Բարբաշմենայ եպիսկոպոսի. «Սուրբ եպիսկոպոսն Բարբաշմէն քեռորդի էր...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, p. 559—560.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Martyre du saint évêque Barbasemin" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 348ա—348բ)։*

3 (Համառոտ Բ խմբագր., Գրիգոր Ծերենցի).

Վկայաբանութիւն սրբոյ եպիսկոպոսին Բարբաշմենայ. «Սա քեռորդի էր սրբոյ Շմաւոնի Պարսից եպիսկոպոսին, որ վկայութեամբ կատարեցաւ ի Շապհոյ Պարսից արքայէն...», *տես՝ «Ճառ սրբոց վկայից...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 800։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *սն.* «Սա քեռորդի էր...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 889։*

Այլ. տպ.— Վկայաբանութիւն *սն.* «Սա քեռորդի էր...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 607—608։*

⊠ *Հմմտ. Բարբ.-ի վկայաբանության ասոր. բնագիրը՝* S. E. Assemanus, „Acta sanctorum martyrum orientalium et occidentalium", Pars I, Romae, 1748, p. 111—116. *նաև* P. Bedjan, „Acta martyrum et sanctorum", t. II, Parisiis, 1891, p. 296—303.

---

[1] *Տե՛ս* А. Р. Иоаннисян, «Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия», Ереван, 1947, стр. 253—255, 259—262, 264—266, 272—273 (№№ 38, 43, 45, 52, 53).

* **ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.** R. Duval, „La littérature syriaque" (Anciennes littératures chrétiennes, II), 3e éd., Paris, 1907, p. 126.

Գրականություն տեսնել ՄԱՐՈՒԹԱ ՆԸՓՐԿԵՐՏՑԻ անվան տակ։

ԲԱՐԲԱՍ ՎԿԱՅ

Տես՝ ԱՅԻԹԱԼԱ ՔՈՒՐՄ։

ԲԱՐԲԱՐԻՍՄՈՍՔ

Տես՝ ԱՂԱՆԴՆԵՐ, § 7։

ԲԱՐԴԱԾԱՆ [ԲԱՐԴԵԾԱՆ] ԵԴԵՍԱՑԻ
(Bardesanes Edessenus)

Ասորի գնոստիկյան աղանդավոր, ծն. Եդեսիայում 154 թ. և մեռ. 222 թ.։ Սկզբում հանդես է եկել որպես եկեղեցու ուղղափառության ջատագով՝ «այր երևելի և իմաստուն, և լեզուաւ կորովի ընդդէմ ամենայն հերձուածողաց»[1], բայց հետո, Ասորիքում, ինքն իսկ հիմնել է գնոստիկյան ուղղության իր սեփական դպրոցը։ Եդեսիայի կործանումից հետո, 216 թ., անցել է Հայաստան, բայց այնտեղ, իր գաղափարների տարածման համար հաջողություն չգտնելով, քաշվել է Անի ամրոցը, ուր և հայոց մեհենական պատմությունները թարգմանել է ասորերենի՝ ավելացնելով իր ժամանակի անցքերը։ Բարդ.ի այս աշխատանքը, որ հետո հունարենի թարգմանվելով պահվում էր Եդեսիայի դիվանում, եղել է Խորենացու պատմական աղբյուրներից մեկը։ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Բ գրքի ԿԶ գլխում կարդում ենք.

«Զրուցէ մեզ զայս՝ Բարդածան, որ յԵդեսիայ։ Քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երևեցաւ պատմագրող. որ յառաջ աշակերտեալ էր աղանդին Վաղենտիանոսի, զոր յետոյ անարգեալ յանդիմանեաց. ոչ գալով ի ճշմարտութիւն, այլ միայն ի նմանէ զատուցեալ, ա՛յլ հերձուած յարդարեաց յինքենէ։ Սակայն զպատմութիւնս ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիւք. որ և առ Անտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ, և բազում ասացուածս արար ընդդէմ աղանդոյն Մարկիանացւոց և բաշխից և կռոց պաշտաման, որ ի մերում աշխարհիս։ Վասն զի եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի յոյն բան։ Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրևանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք։ Յորում և զկնի Վաղարշ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամին նորոյ, ի մուտն Նաւասարդի։ Յայսմ պատմութենէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»[1]։

Վ. Լանգլուան Խորենացու Բ գրքի ԿԱ—ԿԵ գլուխները (որոնց աղբյուրը Բարդ.ն է) և ԿԶ գլուխը (որը Բարդ.ին է վերաբերում) հրատարակել է ֆրնս. թարգմանությամբ՝ նրա անունը կրող հուն. և ասոր. մի շարք այլ հատվածների հետ միասին, V. Langlois, «Bardesane. Oeuvres historiques et philosophiques» (տես՝ ստորև՝ գրականության բաժնում)։ Բարդ.ին, որպես պատմական աղբյուրի, հիշատակում են նաև Զենոբ Գլակը[2] և Ուխտանեսը[3]։ Բարդ.ի ժամանակակից Հիպպոլիտոս Հռոմայեցին նրան համարում է հայ[4], բայց հայտնի չէ, թե ինչ հիման վրա։ Այդ տեղեկությունը կարելի է համարել ոչ-անստույգ, որովհետև Բարդ.ը լինելով Հայկական Միջագետքի ծնունդ, ազգությամբ էլ հավանաբար հայ էր և պիտի այնքան լավ իմացած լիներ հայ. լեզուն, որ

---

1 Տես՝ «Անանիայի Շիրակացւոյ համարողի մատենագրութիւնք» (հրատ. Ա. Գ. Աբրահամյանի), Երևան, 1943, էջ 381։

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 201—202։

2 «Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի», Վենետիկ, 1889, էջ 22։

3 Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 80։

4 Philosophumena VII, 31։

կարողացել էր հասկանալ ու թարգմանել մեհենական հայալեզու գրականությունը։ Հայ մատենագրության մեջ նրա անունը պատահում է Բարդածան, Բարդայծան, Բարդեծան, Բարդէծան, Բարդէնան, Բարդինան, Բարդընծան, Բարդե[ծ]ան, Բարդա *ձևերով։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 22։*

Զարբհանալյան Գար. — *«Պատմութիւն հայ հին դպրութեան» (Դ տպագր.), Վենետիկ, 1932, էջ 176—180։*

Մսերյան Զար. — *[«Պատմութիւն հայ գրականութեան»] Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8803, էջ 9բ--11բ։*

Մռմռյան Հ. Գ. — *«Պատմութիւն հայ գրականութեան», մասն Ա, Կ. Պոլիս, 1910, էջ 61—65։*

Սարգիսյան Բարս. — *«Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը», Վենետիկ, 1890, էջ 275—280։*

Սարգսյան Գագ. — *«Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը»,* Պատմա-բանասիրական Հանդես, *1969, № 1(44), էջ 124—125։*

Տեր-Մինասյան Երվ. — *«Հայ եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 6—8։*

Տեր-Մինասյան Երվ. — *«Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից», Երևան, 1968, էջ 54—57։*

Տեր-Մինասյան Երվ. — *«Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 293։*

Օգանյան Գագ. — *«Պատմութիւն հայ լեզուի և բանահիւսութեան», Մարզվան, 1913, էջ 177։*

Халатянц Гр. — „Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского", ч. I, Москва, 1903, стр. 99—100.

Drijvers H. J. W. — „Bardaisan of Edessa", Assen, 1966.

Duval R. — „La littérature syriaque" (Anciennes littératures chrétiennes, II), 3e éd., Paris, 1907, p. 235—240.

Այս հատվածի հայ. թարգմանությունը՝ «Բարդեծան Ասորի» տես՝ Բազմավէպ, *1902, էջ 68—73։*

Langlois V. — „Étude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khorĕn", *Bulletin de l'Académie Imp. des Sciences de St.-Pétersbourg*, t. III, 1861, p. 531—583.

Langlois V. — „Bardesane. Oeuvres historiques et philosophiques publiées d'après les sources arméniennes, grecques et syriaques, avec des notes historiques, critiques et philologiques", *հեղինակի հետևյալ հրատ. մեջ.* „Collection des historiens anciens et modernes de l'Arménie", t. I, Paris; 1867, p. 55—95.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Գ. Ա., Հայկական Աշխարհ, *1868, № 12, էջ 412—419։*

Tixeront L.-J. — „Les origines de l'église d'Édesse et la légende d'Abgar", Paris, Maisonneuve et Ch. Leclerc, 1888, p. 10—13.

ԲԱՐԴԻՇՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(Bardiesus ep.)

Պարսիկ վկա՝ Շապուհ Բ. Մեծի (310—379 թթ.) հալածանքների ժամանակ։ Հայկ. Ճառընտիրներում ունենք նրա վկայաբանությունը, իսկ Հայսմավուրքներում՝ սոսկ հիշատակությունը։ Ձեռագրերում անունը պատահում է Բարդիշոյ, Բարդիշաւ, Բարդիսոյ, Բարդէս *ձևերով։*

* * *

Վկայաբանութիւն երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ. «Յամս Շապհոյ արքայի արար հալածումն սաստիկ, դառնագոյն քան զամենայն թագաւորս, և անթիւ եղեն վկայք Քրիստոսի: Եւ ի ժամանակին յայնմիկ Բարդիշոյ...», *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», Վենետիկ, 1874, հտ. Ա, էջ 193—199։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. հետևյալ ձեռագրերից. № 231=Ճառընտիր ԼԲ՝ «Վկայութիւն երանելւոյ եպիսկոպոսին Բարդիշոյի ի Պարս՝ ի Շապհոյ արքայէն» *(էջ 62ա—64ա) և № 200=Ճառընտիր Ա՝* «Վկայաբանութիւն երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ՝ որ ի Պարս վկայեաց» *(էջ 96ա—98ա)։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6196՝ «Վկայաբ... որ ի Պարս վկայեաց ի Շապհոյ արքայէ» *(էջ 124բ—126բ, սկ. նույն ընդ տպ.), № 1522՝* «Վկայութիւն երանելի եպս.ի Բարդիսոյ ի Պարսս, ի Շապհոյ արքայէ» *(էջ 449ա—451ա, սկ.* «Անօրէն թագաւորն Շապուհ արար հալածումն սաստիկ դառնագոյն») *և ուրիշներ։*

Հայսմավուրքները միայն հիշատակություն են անում. Տեր-Իսրայելը՝ հոկտ. 26-ին, իսկ Գրիգոր Ծերենցը՝ հոկտ. 19-ին։ Կիրակոս Արևելցու Հայսմավուրքն ու համառոտ անանուն Հայսմավուրքը (ձեռ. № 3658) բոլորովին չեն հիշատակում։

Բարդիշոյի վկայաբանության ասոր. և կամ հուն. բնագրեր մեզ հայտնի չեն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց» (միհատորյակ), Վենետիկ, 1810, էջ 1113—1114։*

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 77—78։*

Тер-Петросян Л. А. — „Два сирийских агиографических памятника, известных по армянскому переводу“, *Палестинский Сборник*, вып. 25 (88), Ленинград, 1974, стр. 144—151.

ԲԱՐԴԻՇՈՅ [ԱԲԴԻՇՈՅ], ՍԱՀԱԿ ԵՒ ՍԻՄԷՈՆ*
(Bardiesus, Isaacius et Symeon)

Պարսիկ վկաներ՝ Շապուհ Բ.ի (310—379 թթ.) օրով։ Հայկ. Հայսմավուրքներն ունեն նրանց համառոտ վկայաբանությունը, որը հունարենից է թարգմանված։ Ձեռագրերում առաջին անունը պատահում է նաև Բարդիշաւ *ձևով, իսկ վերջինը՝* Շմաւոն։

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 78։*

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն Բաքդիշոյի (sic), Սահակայ, Սիմէոնի, որք ի Պարսիկս կատարեցան. «Սուրբ վկայքն Քրիստոսի էին յաւուրս Սաբուհոսի հրապաշտ արքային Պարսից և յոյժ նեղէին զնոսա ուրանալ զՔրիստոս...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մաս Ա, էջ 221։*

Այլ տպ.— Վկայութիւն Աբդիշոյի (sic), Սահակայ և Սիմէոնի որք ի պարսիկս կատարեցան. «Սուրբ վկայքն Քրիստոսի էին յաւուրս Սաբուհոսի հրապաշտ արքային Պարսից, և յոյժ նեղէին զնոսա ուրանալ զԱստուած և պաշտել զարեգակն և զլուսին...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, t. XXI, Paris, 1928, p. 466—468.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «En ce jour martyre d'Abdišo, d'Isaac et de Siméon qui furent exécutés en Perse“ *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 323ա—323բ)։*

2 (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն Բարդիշաւի, Սահակայ և Շմաւոնի. «Սոքա էին յամս Սաբհոսի հրապաշտ արքային Պարսից, զորս կացոյց առաջի իւր և ասաց, թէ ուրացիք զոր դուք պաշտէք...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 750—751։*

Այլ. տպ.— Վկայաբանութիւն նն. «Սոքա էին յամս Սաբհոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 832—833։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն նն. «Սոքա էին յամս Սաբհոսի...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 570։*

3 (Անանուն խմբագր.).

Բագդիշոյի (sic), Սահակայ, Սիմեոնի. «էին յամս Սաբուռիոսի արքային Պարսից և նեղէին պաշտել զարեգակն և զայլ լուսատրսդ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 196ա։*

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ

(զանազան անձեր)

Տես՝ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ։

ԲԱՐԵԿԱՄ

Գրական կեղծանուն, որով մի քանի չափածոներ է ստորագրել Մադրասի «Ազդարար» պարբերականի թղթակիցներից մեկը։

* * *

1. Նախ՝ բան առ բարեսէր ընթերցողաց (sic) նորածին Ազդարարիս։ Երկրորդ՝ խրատ նոյնոյ Ազդարարին յաղագս վարուց իւրոց. «Նախ առ ընթերցողդ՝ է զիմ ըզբան.|Ոչ թէ խրատ՝ այլ զաղաչան.|Օրինակօf՝ բանասիրաց...», Ազդարար, *թիրայ ամիս 1794, էջ 42—46։*

2. (Անխորագիր) «Ողբամ Ազդարար տրտմութեամբ մեծաւ, զի յոյժ ծանըր գործ զիս (sic) վիճակեցաւ.|Ոչ վիճակեցաւ, այլ ես յանձն առի...», *անդ, ազամ ամիս 1794, էջ 77—81։*

3. (Անխորագիր) «Նմանեալ Ազդարար հարց խոհականաց,|Որf յետ կրրթելոյ զաւակաց իւրեանց,|Ըստ սովորութեան նախնեաց մեր հրճոց...», *անդ, համիրա ամիս 1794, էջ 115—121։*

4. (Անխորագիր) «Ի յերրորդ ամ կեանս տըղայութեան իմ,|Փոխըն Համբարձի ուսուց (sic) ինձ հայր իմ,|Նաև ժողովեալ համայն ընտանեաց...», *անդ, արամ ամիս 1794, էջ 186—190։*

5. (Անխորագիր) «Այր մի ազդարար ծեր և խոհական,|Զարդարեալ վարուf առաքինական,|Ըստ բանի Դաւթի երկիւղած առ տէր..., *անդ, ովդան ամիս 1795, էջ 27—35։*

6. (Անխորագիր) «Թէ չաչողի մին՝ փորձեա վերըստին.|Զայս (sic) էր պատիրան իմ վարժապետին.|Ի մահնի մահու կոչեալ պատիրեաց...», *անդ, նիրհան ամիս 1795, էջ 71—78։*

7. (Անխորագիր) «Պարտիս Ազդարար գիտել և զայս բան,|Այսպէս ասութեանց լըսել ժըրաչան,|Որ բանիւ գիտնոց լինիցիս ներհուն...», *անդ, շամս ամիս 1795, էջ 144—146։*

Այս չափածոներից յուրաքանչյուրին նախորդում են հեղինակի կողմից «Ազդարարի» խմբագրին ուղղված նամակներ՝ «Ուրախակից» ստորագրությամբ։

ԲԱՐԵՁՈՐԵՑԻ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԵՁՈՐԵՑԻ։

ԲԱՐԵԽՕՍԻՒԹԻՒՆ

Տես՝ ԲԱՂԴԱՍԱՐ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, «Օրինակք բարեագրաց»։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ (Պատրի)

Մեզ անծանոթ գրական գործիչ՝ «ի կարգէ Քարոզողաց», հավանաբար լատին։ Հիշատակվում է որպես թարգմանիչ հետևյալ երկի. «Վկայ հաւատարիմ յաջորդացն Պետրոսի՝ պետին առաքելոց, շարադրեցեալ ի հայր Մոնֆորթէ Անափոլիթանէ Յիսուսեան կարգէ... և թարգմանեցեալ յումեմնէ զերիմաստ թարգմանչէ պատրի Բարդուղիմէոսէ ի կարգէն Քարոզողաց։ Ի թուին Հայոց ՌՃՂԶ.ին, Հռ. 1747։ Ի Կոստանդինուպոլիս քաղաքի» *(Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1668)։*

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ (Սուրբ)

Անանուն և անտիպ թատերգություն, որը 1774 թ. ներկայացվել է Ս. Ղազարի վարժարանի (Վենետիկ) սաների ուժերով[1]։

---

[1] Բ. Սարգիսյան, «Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան», Վենետիկ, 1905, էջ 192։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱԲԳԱՐԵԱՆ

Տես՝ ՍՈՒԼԹԱՆՇԱՀ ԱԲԳԱՐԵԱՆ։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՆՁԵՒԱՑԻ

Անձևացյաց թագավոր (Ը դ.?)։ Արաբերենից հայերենի է թարգմանել «Հարցմունք Տիզրոնու ամիրային» կամ «Պատմութիւն Մակարայ միայնակեցին» անունով հայտնի գրվածքը. տես՝ ՄԱԿԱՐ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ։ Այս գրության՝ Երևանի Պետ. Մատ. № 1665 ձեռագրում պահված օրինակի վերջում գտնվում է Բարթողիմեոս-Աբուսահլի հետևյալ հիշատակագրությունը. «Ես Բարդողիմէոս Անձևացեաց թագաւոր ի սնընդականութենէ Աբուսահլ կոչեցեալ, թարգմանեցի զպատմութիւնս ի տաճիկ գրոց ի հայ լեզուս, յորժամ ծովացեալ մեղքն իմ ընկղմեցին զիս յանդունդս և մատնեալ եղէ ի ձեռս անօրինաց, մինչև գերեզմանի արժանի չեղէ» են (էջ 173ա)։ Նույն մատ. № 7324 ձեռ. օրինակի համաձայն՝ «Ես Բարդուղիմէոս Հայոց թագաւորի որդի, ի ծնընդաբանութենէ Աբուսահլ կոչեցեալ, ի ժամանակի բարկութեան իմոյ յորժամ ծովացեալ մեղքն ընկղմեցին զիս որ մատնեցայ ի բանդ և ի կապանս և թարգմանեցի զչահաւէտ պատմութիւնս ի տաճիկ գրոց, որք կարդայք և օրինակէք՝ յիշեսջիք զիս ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն» (էջ 131ա)։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ [1]

«մի յերկոտասանիցն»

(Bartholomaeus apostolus, unus ex Duodecim)

Նոր Կտակարանի դեմքերից։ Համարվում է հայ եկեղեցու հիմնադիրներից մեկը, որը, ըստ ավանդության, հայոց Սանատրուկ թագավորի 29-րդ տարում եկել է Գողթն գավառը, այնտեղից քարոզությամբ անցել է Հեր և Զարևանդ գավառները, հետո՝ Անձևացյաց գավառն ու Հայաստանի այլ կողմերը, և նույն Սանատրուկի հրամանով նահատակվել Արեբանոս (կամ Ուրբանոս) քաղաքում։ Նրա՝ Հայաստանում քարոզած և այնտեղ մեռած լինելու մասին հիշատակություններ կան նաև ասորական ու լատինական աղբյուրներում, ինչպես ցույց է տալիս G. Moesinger-*ն իր ուսումնասիրության մեջ՝* «Testimonia Syrorum» *(Վկայութիւնք Ասորւոց) և* «Lectiones Breviarii Romani» *(Ընթերցմունք Հռոմէական ժամագրոց) խորագրերի տակ։ Ըստ Օրմանյանի՝ Հայաստանում նրա գործունեության ժամանակաշրջանը 60—68 թթ. են։ Ստորև նշում ենք Բարթ.ին վերաբերող մատենագրական նյութերը։*

* * *

1. Վկայութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէսի. «Գլխաւորք սրբոց առաքելոցն երկոտասան աշակերտքն, վիճակեցան յազգս ազգս՝ յիջանելն ի նոսա Հոգւոյն սրբոյ ի վերնատանն երկնագործել...», *տես՝ «Սոփերք Հայկականք»» հտ. ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 5—30։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի. «Գլխաւորք սրբոց առաքելոցն...». *տես՝ «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց», Վենետիկ, 1874, հտ. Ա., էջ 200—211։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 201 ձեռագրից։

Այլ տպ.— Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի. «Գլխաւորք սրբոց առաքելոցն...». *տես՝ «Անկանոն գիրք առաքելականք» (Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Գ), Վենետիկ, 1904, էջ 333—357։*

Հրատարակվել է հիմք ընդունելով նախորդ տպագրությունը և օգտագործելով Վենետիկի Մխիթ. Մատ. №№ 228, 234, 212 ձեռագրերը։

□ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1525 (էջ 493բ—498բ, սկ.* «Գլխաւորք սուրբ առաքելոցն ընտրեալ, երկոտասան աշ.»). *№ 1520 (էջ 172ա—176բ, սկ.* «Գլխաւորք առաքելոցն ընտրեալ երկոտասան աշ.»), *№ 3787 (էջ 599բ—604բ, սկ.* «Գլխաւորք սուրբ առաքելոցն Քրիստոսի երկոտասան

---

[1] *Այս աշխատությունը տես ստորև՝ Գրականության բաժնում։*

աշ.»), № 993 (էջ 668ա—671ա, սկ. «Գլխաւորք սրբոց առաքելոցն՝ ընտրեալ երկոտասան աշ.»). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1Դ (էջ 729, սկ. նույն), № 182 (էջ 215, սկ. նույն). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 222 (էջ 389բ, սկ. «Գլխաւորք սրբոց ընտրեալ երկոտասան աշակերտք»). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 333 (էջ 462բ, սկ. նույն)։ Հմմտ. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2՝ «Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Բարթողոմէոսի, որ վկայեաց ի պարտէզս Ելլացւոց» (էջ 234ա, սկ. «Գլխաւորք սուրբ առաքելոցն որ վիճակեցան ընդ ամենայն ազգս, երկոտասան աշակերտքն»)։

Այս բնագրից մի հատված՝ «Կատարումն Ս. Բարթողիմեայ առաքելոյ» (սկ. «Բայց Բարթողոմէոս գնացեալ ի Հեր և ի Զարևանդ»), տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 53—54։

Բնագրի անգլ. թարգմանությունը տես հետևյալ հրատ. մեջ. S. C. Malan, „The life and times of S. Gregory the Illuminator, the founder and patron saint of the Armenian Church“, Rivingston, 1868, p. 99—104. Լատ. թարգմանությունը տվել է G. Moesinger-ը, „Vita et martyrium sancti Bartholomaei apostoli...“, Salisburgi, 1877, p. 1—19. Տես նաև ռուս. թարգմանությունը՝ „Сказание о мученической кончине святого апостола Варфоломея“ հետևյալ հրատ. մեջ. Н. О. Эмин, „Сказания о святых Фаддее и Варфоломее, апостолах Армении“, Москва, 1877, стр. 27—36. Նույնի այլ տպ. տես՝ „Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859—1882 гг.), Москва, 1897, стр. 133—142.

2ա. Վկայաբանութիւն սրբոցն Բարթողիմէոսի և Յուդայի առաքելոցն Քրիստոսի. «Գլուխն ամենեցուն Քրիստոս Աստուած մեր, ընտրեաց երկոտասան առաքեալս և առաքեաց զնոսա քարոզել զաւետարանն արքայութեան ընդ ամենայն տիեզերս...», տես՝ «Անկանոն գիրք առաքելականք» (Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Գ), Վենետիկ, 1904, էջ 358—364։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 223 ձեռագրից։ Բնագիրը ներկայացնում է միայն Բարթողիմեոսի վկայաբանությունը, իսկ վերնագրում հիշատակվող Հուդայի վկայաբանությունը ձեռագրերում միշտ առանձին է և գտնվում է Բարթողիմեոսի վկայաբանությունից հետո։

2բ. Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի. «Գլուխն ամենեցուն Քրիստոս Աստուածն մեր ընտրեաց իւր յաշխարհի երկոտասան աշակերտս և առաքեաց զնոսա քարոզել զաւետարանն Աստուծոյ ընդ ամենայն տիեզերս...», տես՝ «Ճառ սրբոց վկայիցն... («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 304—307։

Այլ տպ.—Վկայաբանութիւն են. «Գլուխն ամենեցուն Քրիստոս Աստուածն մեր...», տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 326—329։

Այլ տպ.—Վկայաբանութիւն են. «Գլուխն ամենեցուն Քրիստոս Աստուածն մեր...», տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 231—234։

☐ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4774 (էջ 23ա—26բ), № 4822 (էջ 53բ—57ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224 (էջ 39բ)։

3. Տաւն է սուրբ առաքելոյն Բարդողիմէոսի. «Առաքեալն Քրիստոսի Բարդողիմէոս մի էր յերկոտասանիցն, հրամանաւ Հոգոյն սրբոյ գնաց ի վ[ի]ճակ ընդրութեան իւրոյ, եմուտ յեղոմ քաղաքի սահմանս Հնդկաց...», տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (Յայսմաւուրք Կիրակոսի Արևելցւոյ), էջ 158բ—159բ։

4. Գիւտ նշխարաց սրբոյ առաքելոյն Բարթողովմէոսի. «Յամս Յազկերտի Փոքու Պարսից արքայի, այր ոմն անուն Մարութայ, ազգաւ ասորի, քրիստոնեայ ճշմարիտ, բարեպաշտօն և վկայասէր...», տես՝ «Անկանոն գիրք առաքելականք», էջ 365—368։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. №№ 201 և 228 ձեռագրերի հիման վրա։

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 993 (էջ 671ա—671բ), № 1525 (էջ 498բ—499ա), № 3787 (էջ 604բ—605ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 201 (էջ 71ա—72ա)։

5. Գիւտ նշխարաց սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի. «Յամս Թէոդոսի Փոքու կայսեր և Յազկերտի հրապաշտ արքային Պարսից այր ոմն անուն Մարութա, որ թարգմանի տէր աշխարհիս...», *տես՝ «Ճառ սրբոց վկայից...», Կ. Պոլիս, 1706, էջ 514—515։*

Այլ տպ.— Գիւտ նշխարաց են. «Յամս Թէոդոսի Փոքու կայսեր...», *տես՝ Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 555—556։*

Այլ տպ.— Գիւտ նշխարաց են. «Յամս Թէոդոսի Փոքու կայսեր...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 390—391։*

6. Վերադարձումն պատուական նշխարացն սուրբ առաքելոյն Բարդողիմէոսի. «Սուրբ առաքեալն Բարդողոմէոս ի զանազան քաղաքս և ի գաւառս զանուն տեառն յայտնապէս մարդկան քարոզեաց...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 96—97։*

Այլ տպ.— Վերադարձումն են. «Սուրբ առաքեալն...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. V, 1910, p. 430—432.

Արտատպ. է նախորդ հրատարակութիւնից։

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Retour des précieux restes du saint apôtre Barthélemy“ *տեսնել անդ. նույն էջերում, հրատարակչի կողմից։*

7. Յայլոյ ումեմնէ նուաստ վարդապետէ վասն գալստեան սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի ի յերկիրն Գողթնեաց, թըղթովն Թովմայի առաքելոյն. «Սուրբն Թադէոս մեր առաքեալ,|Վաղվաղակի նահատակեալ,|Յերկիրըն մեր չէր ժամանեալ,|Ջուկան բանին չէր գործ ածեալ...», *տես՝ «Պատմութիւն Թովմայի առաքելոյն ոտանաւոր չափիւք, արարեալ յումեմնէ Թովմայ երիցէ Ագուլեցւոյ ի լիակատար պատմութենէ նորին», Կ. Պոլիս, 1734, էջ 55—59։*

8. Վասն գնալոյ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի ի յԱգուլիս և վասն զնոսա լուսաւորելոյն և զամենագով վանքն նոցա շինելոյն յանուն սրբոյ առաքելոյն Թումայի. «Եւ ի յանտի առ մեզ եկեալ,|Որ Ագուլիս է կոչեցեալ.|Ի յարևելըս ժամանեալ.|Ի ի տափարակ վայրի ագեալ...», *տես անդ, էջ 59—62։*

9. Վասն գնալոյն սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյն ի վայելուչ քաղաքն Վանանդ և անտի յԵրևանդ և ի Մարս. «Եւ ի վաղիւն անտի չուեալ,|Ի մեծ քաղաքն Վանանդ հասեալ,|Յորմէ Վահան արին ընտրեալ,|Մեծաւ ջանիւ նահատակեալ...», *տես անդ, էջ 62—64։*

10. Քարոզ առաքելոցն Քրիստոսի՝ Թադէոսի և Բարդողիմէոսի, Յուդայի Յակոբեան և Շմաւոնի Նախանձայուզի, ի Խաչատուր վարդապետէ, ի խնդրոյ Պաւղոսի վարդապետի Կիլիկեցւոյ. «Խորհուրդ հարաշարժ անշարժ շարժողիդ|Ի ծընունդ Որդւոյ քո աննիւթական...»։ *Տես՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԵՑԻ(?)։*

11. Տաղ առաքելոցն Քրիստոսի՝ Թադէոսի, Բարդողիմէոսի, Յուդայի և Շմաւոնի Նախանձայուզի, քաղցրաձայն Խաչատրոյ վարդապետի ասացեալ ի խնդրոյ շնորհազարդ Դրագին Պաւղոսի. «Խաչին Յիսուսի ճըշմարիտ քարոզք,|Ի լրումն աւրինաց յայտնիչ խորհրդոյ...»։ *Տես՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԵՑԻ(?)։*

12. Փոխ. «Վարդք վայելուչք խունկերամք,|Աստուածատես պետականք,|Քարոզք Բանին ուղղականք...»։ *Տես՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԵՑԻ(?)։*

13. [Գանձ] Թադէոսի և Բարդողիմէի. «Գերարփի պայծառ,|Դոյիցըս պատճառ|Գերունականփառ...»։ *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՄԵՐԵՆՑ։*

Որոշ ձեռագրերում այս գանձը, տների տեղափոխմամբ, ունի այսպիսի սկ. «Ի գալ Թադէին,|Հրամանաւ փրկչին,|Յաշխարհըս վերին»։

14. Տաղ ազնիւ և անոյշ. «Բանն որ ի Հօրէ ծագեալ,|Ծագմամբ առաքեաց յաշխարհըս...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ:*

15. *(Անխորագիր)* «Ի լրծակցութիւն գործոյ Թումայի առաքելոյ,| Ի Հայք կատարեալ զընթացըս փոխան Թադէի լինել...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ:*

16. *(Անխորագիր)* «Արեգակն արդար որ ի Հօրէ ծագեալ.|Զառաքեալսըն սուրբ անճառ շնորհօք լըցեալ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ:*

17. Գանձ առաքելոցն Բարդողիմէոսի և Յակոբայ և Յուդայի, ի յԱռաքելէ. «Ամենագով գունդըն սըրբազան,|Առաքելոց դասքն երկոտասան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6527, էջ 154բ—156ա:*

Վերագրում ենք Առաքել Բաղիշեցուն (տես աստ, էջ 137, § 121):

18. Նորին քարոզ Բարթուղիմէոսի առաքելոյն, ի բանն՝ Եղեւուք խորագէտք ևն. «Նախ պարտ է գիտել՝ թէ զի՞նչ է խորագիտութիւն օձին ի դէմս առաքելոցն...», *տես՝ «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 469—474:*

19. Քարոզ ի մէջ պահոց սրբոյն Յակոբայ յերեքշաբաթին, ի վերայ առաքելոցն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, ի վերայ Սիրաքայ ԽԴ, ուր ասէ վասն նահապետաց. «Գովեսցուք զարս փառաւորագոյնս և զծնօղս մեր ի սերականութեան իւրեանց...», *Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 37, էջ 132—142(?):*

20. Քարոզ վասն առաքելոցն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյն Գրիգորի մերոյս լուսաւորչի. «Զի որովհետև տէր և արարիչ ամենայնի Աստուած է, և նախապետարար նա ինքն միայն է ամենից արարածոց իւրոց նախախնամօղ՝ կեցուցիչ՝ բարեւարար և պարգևիչ ողորմութեան. վասն որոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2257, էջ 77ա—81ա:*

21. Քարոզ Բարթուղիմէոս առաքելոյն. «Հրամայեաց թագաւորն Աղեքսանդր...»: *Տես՝ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԱՑԻ (Ա 8, բ-ի § ծբ):*

22. Աղօթք վասն բժշկութեան ջերման և տենդի. «Սուրբ առաքեալն Բարդուղիմէոս ել ի լեառն Դատուանայ և ետես անդ զդևն ջերմնց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8720, էջ 12ա—12բ:*

Տես նաև Ջմմառի վանքի ձեռ. № 86 (էջ 42ա):

⊠ *Կան նաև մի շարք բնագրեր, որոնք վերաբերում են, ի միջի այլոց, նաև Բարթողիմեոսին, տես՝ ԱՌԱՔԵԱԼՆԵՐ անվան տակ:*

Ձեռագրերում կան որոշ բնագրեր, որոնց ինքնությունը մեզ լիովին հայտնի չէ: Այդպիսիներից է «Յաղագս սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյն մերոյ», *որի առաջին գլուխը խորագրված է՝* «Բան առաջին, վասն արեանց և վարձու նորա». *տես՝ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 625 (էջ 110—132) և Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 3 (էջ 104—109?): Բաղկացած է չորս գլուխներից:*

Այսպիսի մի բնագիր է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 229՝ «Պատմութիւն Բարթուղիմեոսի առաքելոյ շրջաբերական քարոզութեամբն ի Հայս և յայլ ազգս նշանիւք և զօրութեամբ և բժշկական մատակարարութեամբ վկայութիւն նորա և մահ նորա յԱրբանոս քաղաքի Հայոց, ի տեղւոջ, որ կոչի Բարմ» *(էջ 543ա—548ա):*

Տես դարձյալ Բարթողիմեոսի հիշատակին նվիրված շարականներ հետևյալ հրատարակություններում. «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ», Վենետիկ, 1898, էջ 1081:—Ս. Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 37—39:

Տես նաև՝ «Հրց. Ո՞ր են անընդունելի գրեալք: *Պտ.* Ա. որ պրծոցն Պաւղոսի կոչի: Բ. Յայտնութիւն Պետրոսի: Գ. Թուղթն Բառնաբայ: Դ. Աւետարանն Եբրաեցոց: Ե. Գիրքն Թովմայի: Զ. Բարթողիմեի: Եւ որ սոցին նման են, Տեսիլն Աստուածածնին, և

Տեսիլն Սբ. Գրիգորի», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1288, էջ 111ա—113ա:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղեւ. — *«Արշալոյս քրիստոնէութեան հայոց», Բ տպ., Վենետիկ, 1920, էջ 32—43՝ «Ս. Բարթողիմէոս և աշակերտքն»:*

Ավգերյան Հովհ. — *«Առաքելական քարոզութիւնը հայոց մէջ»,* Բազմավէպ, *1928, էջ 81—92, 193—199 և 1942, էջ 19—34:*

Գրված է Վ. Հացունու «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն» գրքի առթիվ:

Ավգերյան Մկ. — *«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Թ., Վենետիկ, 1813, էջ 425—462՝ «Վարք և վկայութիւն սրբոյն Բարթողիմէոսի առաքելոյ»:*

Գաթրճյան Հովս. — *«Տիեզերական պատմութիւն, ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս», հտ. Բ, Վիեննա, 1852, էջ 464:*

Գևորգ-Մեսրոպ — *«Պատմութիւն հայ եկեղեցւոյ», հտ. Ա., Կ. Պոլիս, 1913, էջ 32—36:*

Երեց — *«Անտեսուած շարականը (Ս. Թադէոսի և Ս. Բարդուղիմէոսի տօնին առթիւ)»,* Հասկ, *1943, էջ 272—273:*

Համեյան Պ. — *«Քննական ակնարկ հայկական վաւերաթուղթի մը՝ Տիրամօր վերափոխման մասին»,* Բազմավէպ, *1951, էջ 49—57:*

Հացունի Վարդ. — *«Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն», Վենետիկ, 1927, էջ 56—88՝ «Բարթողոմէոս»:*

Սույն հատվածը տես նաև Բազմավէպ-ում, 1926, էջ 292—294 և 1927, էջ 9—14, 38—41 («Հայաստանեայց եկեղեցին Լուսաւորչէն առաջ»):

Հացունի Վարդ. — *«Պատմութիւն և զգացում»,* Բազմավէպ, *1927, էջ 274—281:*

Հացունի Վարդ. — *«Պատասխան մ'ալ առաքելականութեանց մասին», անդ, 1928, էջ 24—29:*

Հացունի Վարդ. — *«Քննադատներուս», անդ, 1928, էջ 181—192, 242—249:*

Հացունի Վարդ. — *«Գործս և քննադատս», անդ, 1928, էջ 313—318:*

Հացունի Վարդ. — *«Ազդարար օրագրին», անդ, 1929, էջ 56—62:*

Մարկվարտ Հ. — *«Էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն»,* Հանդէս Ամսօրեայ, *1906, էջ 33—44:*

Խմբագրության կողմից հոդվածին տրված է հետևյալ ծանոթագրությունը. «Այս տիտղոսը տալ պատշաճ համարեցանք պրոֆ. Մարքուարտի 'Յաւելուածք և սրբագրութիւնք' անուան տակ իր Untersuchungen zur Geschichte von Eran (Philologus Supplementband X, erstes Heft) *ուսումնասիրութեան կցած այն կտորին, որ 218—240 էջերը կը բռնէ»:*

Ումուշյան Հ. — *«Հայոց աշխարհի առաջին լուսաւորիչները»,* Գլաձոր, *Բ տարի, 1958, № 1, էջ 87—89:*

Չամչյան Միք. — *«Պատմութիւն Հայոց», հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 297—298:*

«Սիոն»-ի խմբագրություն — *«Առաքելականութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ»,* Սիոն, *1927, էջ 161—165:*

Վ. Հացունու «Կարևոր խնդիրներ» գրքի առթիվ:

«Սիոն»-ի խմբագրություն — *«Առաքելականութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ (Հ. Վ. Հացունիի նոր յօդուածին առթիւ)», անդ, 1927, էջ 325—330:*

Պատասխան՝ Վ. Հացունու «Պատմութիւն և զգացում» հոդվածին:

«Սիոն»-ի խմբագրություն — *«Առաքելականութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ (Հ. Վ. Հացունիի երկրորդ յօդուածին առթիւ)», անդ, 1928, էջ 70—75:*

«Սիոն»-ի խմբագրություն — *«Սիոն և Հ. Վ. Հացունի», անդ, 1929, էջ 133—135:*

Գրված է Հ. Վ. Հացունու «Ազդարար օրագրին» հոդվածի առթիվ:

Օրմանյան Մաղ. — *«Ազգապատում», հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 9—16: Նույնի այլ տպ.՝ հտ. Ա., Բեյրութ, 1959, § 9—16:*

Халатянц Гр. — „Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского“, ч. I, Москва, 1903, стр. 91—95.

Эмин Н. О. — „Сказания о святых Фаддее и Варфоломее апостолах Армении", Москва, 1877. (Из „Православного Обозрения").

Նույնի այլ աշխ. տես՝ „Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859—1882 гг.)", Москва, 1897, стр. 109—142.

Moesinger G. — „Vita et martyrium sancti Bartholomaei apostoli ex sinceris fontibus armeniacis in linguam latinam conversa a D[re] Geogio Moesinger, professore studii biblici A. T.", Salisburgi, 1877. X+*64 էջ։*

Բովանդակում է հետևյալ նյութերը.

— „Martyrium s. apostoli Bartholomaei", *էջ 1—19։ Հայերեն բնագրի թարգմանությունն է՝ ըստ առաջին հրատարակության։*

— „Adnotata ab Aucherio", *էջ 20—34։*

— „Inventio reliquiarum Bartholomaei apostoli in diebus regum nostrorum secundum Homiliarum. (Ex Martyrol. Auch. t. IX. pag. 447)", *էջ 34—36։*

— „Translatio reliquiarum s. Bartholomaei in urbem Anastasiopolin, in Liparim et Beneventum et Romam. (Ex. Martyr. Auch. t. IX, p. 450)", *էջ 37—47։*

— „Acta fabulosa auctore Pseudo-Abdia Babylonio. (Ex Ms. Martini Treviris, collato cum aliis Mss. et editis exemplaribus)", *էջ 48—63։*

— „Testimonia Syrorum de s. apostolo Bartholomaeo", *էջ 63։*

— „Lectiones Breviarii Romani in festo s. Bartholomaei apostoli die 24 Augusti", *էջ 64։*

Tournebize Fr. — "Histoire politique et religieuse de l'Arménie", Paris, 1900, p. 412—413.

Weber Simon — „Die katholische Kirche in Armenien; ihre Begründung und Entwicklung vor der Trennung", Freiburg i. B., 1903, § 3: „Die Nachrichten über die ersten drei Jahrhunderte" (S. 55—104).

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ [II]

«մի յեօթանասնիցն»

(Bartholomaeus discipulus, unus ex Septuaginta)

Տես՝ ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔԵԱԼ անվան տակ, «Վկայաբանութիւն սրբոյն Փիլիպպոսի առաքելոյն և աշակերտին Բարթողիմէոսի, և Փիլիպպոսի քորն Մարիամնի»։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԲՈՆՈՆԱՑԻ կամ ՄԱՐԱՂԱՑԻ

(Bartholomaeus Bononiensis, ep. Maraghensis)

Լատին դոմինիկյան կրոնավոր, ծն. Իտալիայի Բոնոնիա (այժմ՝ Բոլոնիա) քաղաքում։ Թովմա Ակվինացու աշակերտներից է, միսիոնարական առաքելությամբ 1318—1330 թթ. գործել է Մարաղայում (Ատրպատական), որից և ստացել է Մարաղացի *մականունը։ Հայտնի է նաև* Փոքր (Parvus) *մականվամբ։ Մարաղայից Հովհաննես Քռնեցու և Հակոբ Քռնեցու հրավերով 1330 թ. տեղափոխվել է Նախիջևանի Երնջակ գավառի Քռնայի վանքը՝ վերջնականապես հայերի մեջ գործելու նպատակով և այնտեղ էլ մահացել է 1333 թ.։ Բարթ.ը Մարաղայում սովորել էր պրսկ. լեզուն. 1328—1330 թթ. ընթացքում այնտեղ էր սկսել սովորել նաև հայերենը՝ Հովհաննես Քռնեցու և Հակոբ Քռնեցու ջանքերով։ Ունի մի շարք աշխատություններ, որոնք հայերենի են թարգմանվել։ Թարգմանական գործունեություն ունեցել է նաև ինքը։*

* * *

Ա.—ԵՐԿԵՐ

1. Համառօտ ճաւաքումն և յօժ օգտակար ի դիալեքթիկէն, որ է տրամաբանութիւնն, ի վարժումն ուսումնասիրաց. «[Եւ] զի խօսելոց եմք ի դիալեքթիկայէն։ Նախ տեսցուք թէ զի՞նչ է դիալեքթիկայն։ Իսկ դիալեքթիկայն սահմանի այսպէս։ Դիալեքթիկայն է արհեստ արհեստից առ ամենայն մեթոդայիցն, այսինքն գիտութեանց սկզբունս ճանապարհ ունել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3902, էջ 190բ—247ա։*

ԿՐԿԻՆ ՀԱՐՑՈՒՄՆ ԲԺ։ ԱՌԱՋԻ ԱՒՈՒՐՆ.— Ա. Թէ լոյսն յատկապէս առնուլ լինի ի վերայ հոգևորաց, թէ միայն ըստ նմանութեան։ Բ. Թէ լոյսն է մարմին։ Գ. Թէ լոյսն գոյացութիւն է թէ պատահումն։ Դ. Թէ լոյսն է որակութիւն։ Ե. Թէ պատշաճ է առաջին աւրն լինել լոյս։ Զ. Թէ լոյսն եղեալ առաջին աւրն էր հոգևո՞ր թէ մարմնաւոր։ Է. Թէ զի՞նչ եղև լոյսն այն, որ եղև առաջին աւրն։ Ը. Թէ ո՞րպէս բաժանեցաւ լոյսն այն ի խաւարէ։ Թ. Թէ լոյսն այն եղեալ առաջին աւրն, ո՞պէս առնէր զտիւն և զգիշերն։ Ժ. Թէ զի՞նչ պատճառաւ ի սկիզբն աշխարհիս առաջանայր աւրն գիշերոյն։ ԺԱ. Թէ զի՞նչ է, որ ասէ՝ Եղև աւր մի, և երկրորդ, և երրորդ, և ոչ առաջին։ ԺԲ. Թէ ո՞րպէս ասաց Աստուած՝ եղիցի լոյս, զգալի ձայնի՞ւ, թէ իմանալի։

ԵՐԿՐՈՐԴ ԱՒՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆ Է ԺԲ.—Ա. Թէ հաստատութիւն եղեալ է առաջի աւրն։ Բ. Թէ քանի՞ են երկինք։ Գ. Թէ զո՞ր ազգ ձև ունի հաստատութիւնն և այլ երկինք։ Դ. Թէ վասն է՞ր երիս բանս խաւսի Մօսէս ի հաստատութենէ։ Ե. Թէ հաստատութիւնն և այլ երկինք շարժին ի յիւրեանց յատուկ տեսակէն կամ թէ ի հրեշտակէ։ Զ. Թէ Աստուած զամենայն գործս զոր արար՝ յաւել, թէ բարի են, վասն է՞ր ոչ ասէ ի գործ[ս] երկրորդ աւուրն զնոյն բան, թէ էտես Աստուած զհաստատութիւնն, զի բարի է հաստատութիւնն։ Է. Թէ վասն է՞ր ի հաստատութիւնն կան բազմաստեղք, քան ի յայլ ստորին երկինս։ Ը. Թէ հաստատութիւն ունի աջ կողմն կամ ձախ։ Թ. Թէ ի վերոյ հաստատութեանն կա՞ն ջուրք թէ ոչ։ Ժ. Թէ որպէս հաստատութիւնն անջրպետեաց ի մէջ ջուրցն։ ԺԱ. Թէ ջուրք որ են ի վերոյ հաստատութեանն, վասն որո՞յ օգտի եղեալ կան անդ։ ԺԲ. Թէ զո՞ր բնութիւն ունի հաստատութիւնն։

ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ՎԵՑ ՀԱՐՑՈՒՄՆ.— Ա. Թէ ժողովումն ջուրցն պատշաճ էր, որ եղև յերրորդ աւրն։ Բ. Թէ բխումն տնկոցն պատշաճ [էր] յերրորդ օրն։ Գ. Թէ դրախտն է տեղի զգալի։ Դ. Թէ երկիրս ի սկզբանէ ստեղծմանն իւրոյ ունէր լերինս և ձոր, որպէս և այժմ։ Ե. Թէ ծովք ի սկզբանէ աշխարհիս էին աղտաղտուկ, և դառն, որպէս և այժմ։ Զ. Թէ ամենայն մարմինք ունին հիմն ինչ ի ներքոյ իւրեանց, բայց յերկրէ, որ ոչ ունի ինչ ի ներքոյ։

ՉՈՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ Ի. Ժ ՀԱՐՑՈՒՄՆ.— Ա. Թէ պարտ էր լուսաւորացդ լինել ի չորրորդ աւրն։ Բ. Թէ երևի պատճառ լուսաւորացդ լինելութեան ոչ բարուք եղեալ ի գրեալսն։ Գ. Թէ լուսաւորքն ունի՞ն հոգի թէ ոչ։ Դ. Թէ ամենայն աստեղքն են եղեալ ի մարմին մի շարունակ։ Ե. Թէ աստեղքն շարժին այլ շարժմամբք զոր ունին յիւրեանց բոլորակս։ Զ. Թէ ամենայն աստեղքն են համատեսակ թէ զանազանք։ Է. Թէ լուսաւորքն են պատճառ լինելութեան և ապականութեան ստորնայնոցս։ Ը. Թէ երկնային մարմինքն ի հարկէ լինին պատճառ ստորնային մարմնական պատճառելեացս։ Թ. Թէ լուսաւորքն են պատճառ զի լինին մարդիկ առաքինիք և մոլիք, չարք և բարիք։ Ժ. Թէ աստեղքն կարեն ազդել ինչ ի դևսն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ Է Դ ՀԱՐՑՈՒՄՆ.—Ա. Թէ գործ հինգերորդ աւուրն պատշաճաբար պատմի ի գիրս։ Բ. Թէ մարմինք ձկանց և թռչնոց և այլոց կենդանեաց են բաղադրեալ ի չորից տարերաց։ Գ. Թէ ի մարմինս կենդանեաց է աւելի ի կրակա՞ն տարերացն, թէ ի ներգործական տարերացն։ Դ. Թէ է լօղակք (sic) և կենդանիք վասն մարդոյն եղեն։

ՎԵՑ ԱՒՈՒՐ ԳՈՐԾՆ ՈՒՆԻ ԺԶ ՀԱՐՑՈՒՄՆ.—Ա. Թէ գործ վեց աւուրն պատշաճաբար դնի ի գիրս սուրբս։ Բ. Թէ հոգի մարդոյն է յառաջ եկեալ ի գոյացութենէն Աստուծոյ։ Գ. Թէ հոգին յառաջ կազմեցաւ յԱստուծոյ քան զմարմինն։ Դ. Թէ բանական հոգին պատշաճաբար է միաւորեալ ընդ հողեղէն մարմինն։ Ե. Թէ մարմին առաջին մարդոյն էր խառնեալ հաւասարապէս խառնուածով, այսինքն զի լինէին տարերքն զուգակշիռ ի նմա։ Զ. Թէ պատշաճ է, զի մարմին առաջին մարդոյն լինէր ի յերկրային կաւոյ։ Է. Թէ մարմին մարդոյն էր պատշաճաբար կազմեալ։ Ը. Թէ կազմութիւն մարդոյն պատշաճաբար եղեալ եղև ի գիրս։ Թ. Թէ պատշաճ էր կազմել զկինն ի սկիզբն կացուցման էակացս։ Ժ. Թէ պատշաճ էր կնոջն լինել յառնէ։ ԺԱ. Թէ պատշաճ էր զկինն կազմել ի կողէ առն։ ԺԲ. Թէ մարդն է ի պատկեր Աստուծոյ։ ԺԳ. Թէ պատկերն Աստուծոյ գտանի յանբան ստեղծուածս։ ԺԴ. Թէ հրեշտակ առաւել է պատկեր Աստուծոյ քան զմարդն։ ԺԵ. Թէ պատկերն Աստուծոյ գտանի յամենայն մարդ։ ԺԶ. Թէ զի՞նչ տարբերութիւն է ի մէջ պատկերին Աստուծոյ և նմանութեանն, զի ասէ գիրն թէ՝ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան։

ԵՒԹՆԵՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ Գ ՀԱՐՑՈՒՄՆ.— Ա. Թէ կատարումն աստուածային գործոցն պիտոյ էր նշանակել ի յեօթներորդ աւրն, թէ ոչ։ Բ. Թէ Աստուած հանգեաւ յամենայն գործոց յեօթներորդ օրն։ Գ. Թէ կարէր Աստուած զաշխարհս՝ Ե՛ս լաւագոյնս առնել քան զոր արար։

ՅԱՂԱԳՍ ԴՐԱԽՏԻՆ ԼԵ ՀԱՐՑՈՒՄՆ.— Ա. Թէ դրախտն իմանալի է թէ զգալի։ Բ. Թէ դրախտն էր պատշաճ տեղի և ի դէպ՝ ի բնակութիւն մարդոյն։ Գ. Թէ մարդն եդաւ ի դրախտին գործել զնա և պահել։ Դ. Թէ մարդն ի դրախտին նախ քան զմեղանչելն էր մահկանացո՞ւ, թէ անմահ։ Ե. Թէ Ադամ ի դրախտին ունէր կրողական զբնութիւնն, թէ անկրողական։ Զ. Թէ մարդն ի դրախտին կարաւտանայր կերակրոյ և ըմպելեաց։ Է. Թէ ծառն կենաց էր պատճառ անմահութեան մարդոյն։ Ը. Թէ յետ մեղացն Ադամ կերեալ էր ի կենաց փայտէն, կարէր միշտ մնալ կենդանի։ Թ. Թէ մարդն ի դրախտին տիրէր ի վերայ կենդանեաց։ Ժ. Թէ մարդն ի դրախտին ունէր իշխանութիւն ի վերայ ամենայն կենդանեաց։ ԺԱ. Թէ ամենայն մարդիկ ի դրախտին լինէին համահաւասար։ ԺԲ. Թէ ի դրախտին իշխէր մարդ ի վերայ մարդոյ։ ԺԳ. Թէ յո՞ր ժամանակս փոխէին մարդիք ի դրախտէն յերկնից արքայութիւնն, համանգամա՞յն, թէ մի զկնի միոյ։ ԺԴ. Թէ յորպիսութեան անմեղութեան Ադամ տեսանէր

զԱստուած ըստ էութեանն։ ԺԵ. Թէ Ադամ ի դրախտին ունէր զգիտութիւն ամենայն իրաց, գիտելով զամենայն ինչ։ ԺԶ. Թէ Ադամ կացեալ էր ի դրախտին, աճեցեալ լինէր գիտութեամբ։ ԺԷ. Թէ մարդն ի դրախտն կարէր խաբիլ։ ԺԸ. Թէ Ադամ ի դրախտին ունէր զշնորհս։ ԺԹ. Թէ ի դրախտին կային կիրք ցասմնականին և ցանգականին։ Ի. Թէ Ադամ ի դրախտին ունէր զամենայն առաքինութիւնս։ ԻԱ. Թէ գործք առաջին մարդոյն էր առաւել վարձաւոր քան զոր այժմս են գործք մեր։ ԻԲ. Թէ ի դրախտին լինէր ծնունդ զուգաւորութեամբ արուի ընդ իգի, որպէս և այժմս։ ԻԳ. Թէ ի միաւորութիւն արուին և իգին ի դրախտն լինէր խառնումն սերմանց։ ԻԴ. Թէ ի դրախտին ի խառնումն սերմանցն լինէր հեշտութիւն։ ԻԵ. Թէ ի դրախտին ի միաւորութիւն արուին և իգին ամբողջականութիւն լինէր, ապականութիւն կամ բեկումն։ ԻԶ. Թէ ի դրախտին յիւրաքանչիւր միաւորութիւն արուին և իգին լինէր ծնունդ զաւակի։ ԻԷ. Թէ ի դրախտին հաւասար լինէին թուով ծնեալքն, արու և էգքն։ ԻԸ. Թէ ի դրախտն արդի ծնեալ մանգունքն իսկոյն ունէին զկատարեալ զաւրութիւն։ ԻԹ. Թէ դրախտին ծնանէին ամենեքեան արդարք։ Լ. Թէ ի դրախտին արդի ծնեալ մանգունքն առժամայն հաստատեալ լինէին ի սկզբնական արդարութիւնն, մինչ զի ոչ կարէին բնաւ մեղանչել։ ԼԱ. Թէ ի դրախտն արդի ծնեալ մանգունքն լինէին կատարեալ գիտութեամբ։ ԼԲ. Թէ պատշաճ էր Աստուծոյ կազմել զմարդն յաղթելի և մեղանչական ի դիւական փորձութեանն, թէ ոչ։ ԼԳ. Թէ պատշաճ է Աստուծոյ թոյլ տալ մարդոյն ի դրախտին՝ փորձիլ ի սատանայէ։ ԼԴ. Թէ որպէս Ադամ ցանգացաւ լինել ի դրախտն նման Աստուծոյ։ ԼԵ. Թէ մեղքն Ադամայ ծանրագոյն էր քան զԵւային, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք ընդ Հաւր և սուրբ Հոգւոյն, ամէն։

Այս բովանդակության ցույց տված վերջին մասը, որը կրում է «Յաղագս դրախտին» խորագիրը և բաղկացած է 35 հարցումներից, «Վեցօրէից»-ի օրինակներից շատերի մեջ գտնվում է, ու թեև նրա ընդհանուր կառուցվածքից հայտնապես դուրս է երևում, բայց իր բնույթով կարող է համարվել և համարվել է նրա հավելվածը։ Այդ պատճառով մենք «Յաղագս դրախտին»-ի նկարագրությունը չենք անջատել «Վեցօրէից»-ի նկարագրությունից, որքան էլ ուրիշներ հակված են եղել անջատելու[1]։ «Յաղագս դրախտին»-ը ունի այսպիսի սկ. «Բայց ի գործոց վեցօրէից ասացաք ինչ։ Եւ զի դրախտն տընկեցաւ յերրորդ օրն, վասն այսորիկ պարտ է…»։

[1] M.-A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores", § 449.

«Վեցօրէից»-ի բազմաթիվ օրինակներ ունի Երևանի Պետ. Մատենադարանը. տես ձեռ. № 1656 (էջ 1ա—111բ), № 3877 (էջ 4ա—135բ), № 2594 (էջ 70ա—128բ), № 1940 (էջ 2ա—197ա), № 1658 (էջ 1ա—126ա), № 1942 (էջ 2ա—145բ), № 5790 (էջ 2ա—120բ) ևն։

Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 49 (էջ 127—202?), № 456 (էջ 3—429?), № 538 (էջ 7ա—107ա), № 539 (էջ 5—358), № 613 (էջ 1ա—224բ), № 879 (էջ 1—202), № 921 (էջ 3ա—424ա), № 1314 (էջ 1—416). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 249 (էջ 87ա—237բ), № 263 (էջ 123բ—124բ), № 794 (էջ 1ա—150բ?), № 900 (էջ 3ա—119բ). Վիեննայի Bibl. des Benedictiner-Stiftes Schotten № 52. H 15 (fol. 10ʳ—196ᵛ). Օքսֆորդի Bodl. Libr. Ms. Arm. F. 20. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 263 (էջ 5ա—121բ). Զմմառի վանքի մատ. ձեռ. № 177 (էջ 2ա—255ա), № 178 (էջ 2ա—173բ), № 179 (էջ 1ա—76ա), № 409 (էջ 1ա—143բ), № 421 (էջ 43ա—44բ), № 429 (էջ 2ա—103ա), № 448 (էջ 8ա—141ա), № 464 (էջ 5ա—133բ), № 477 (էջ 56ա—71բ, սկզբից և վերջից թերի), № 545 (էջ 205ա—324բ), № 618 (էջ 2ա—41ա). Սեբաստիայի Ս. Նշանի վանքի ձեռ. № 169 (էջերն անհայտ). Գալատի (Կ. Պոլիս) Ս. Հրեշտ. եկեղ. ձեռ. № 76. Օրթագյուղի (Կ. Պոլիս) ձեռ. № 144, Թբիլիսիի Ձեռագրերի ինստ. (Նախկին Պետ. Թանգ.) հայ ձեռ. № 12, Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. 149 (fol. 2ᵛ). Լեյդենի Համալս. ձեռ. Or. 5494 (H. 177)[1]. Նշվում են նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. №№ (հին?) 226 և 484։

Ձեռագրերում բնագիրը պատահում է հետևյալ խորագրերով. «Գիրք վեցօրեայ գործոց արարչութեան», «Գիրք յաղագս վեցօրեայ գործոց արարչութեան», «Յաղագս վեցօրէից արաչութեան», «Գիրք վեցօրեայ գործոց Աստուծոյ, շարադրեալ ի Բարդուղիմեայ Մարաղտոյ եպիսկոպոսէ», «Ի Բարդու-

[1] Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 345—346։

դիմէ աստուածաբան վարդապետէ՝ Գիր յաղագս վեցօրեայ արարչութեան», «Գիրք վեցօրէից ֆրա Բարթուղիմէոս եպիսկոպոսի ի կարգէ Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի», «Գիրք Բարդուղիմեայ վեցօրեայ գործոց արարչութեան Աստուծոյ, հաւաքեալ և շարադրեցեալ ի Բարդուղիմէոսէ վարդապետէ ի կարգէ Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, ազգաւ Հռոմայեցի, եպիսկոպոս քաղաքին Մարաղոյ, յամի տեառն 1330 և թարգմանեցեալ ի լատին լեզուէ ի հայ բարբառ ի Յակոբ վարդապետէ ի կարգէն Դոմինիկոսի, ազգաւ հայ, յամի տեառն 1332», «Գիրք վեցօրեայ գործոց արարչութեան Աստուծոյ, շարադրեալ ի Բարդուղիմէոս վարդապետէ ի կարգէ Քարոզողաց...»—*(շար. նման է նախորդին)*, «Գիրք վեցօրէից հաւաքեցեալ և մեկնեցեալ ի սրբազանից և աստուածաբանից վարդապետաց Հռոմայեցւոց, և թարգմանեցեալ ի լատինականէ բարբառէ ի հայկական բարբառ ի Բարթուղիմէոսէ լատին եպիսկոպոսէ Ջահկեցւոյ (sic) նահանգին», «Գիրք յաղագս վեցօրէից ստեղծման արարածոց, շարադրեալ յերանելւոյն Բարդուղիմէոսէ աստուածաբան վարդապետէ, ի կարգէ Քարոզողաց և արհի եպիսկոպոսէ քաղաքին Մարաղոյ, ազգաւ Հռոմայեցի, թարգմանելով ի լատին բարբառոյ ի հայկազեան լեզու... յամի փրկչին մերոյ 1331», «Վայելուչ իմն վարդապետութիւն ի վերայ վեցօրեայ արարչութեան՝ զոր արարեալ է վարդապետաց Ջահկաց ըստ շաւղաց սրբոյն Թովմայ Ակուինացւոյն»:

Սկ. պատահում է նաև՝ «Սքանչելի եղև», «Առաջին աւուրն: Սքանչելի եղև», «Առաջաբանութիւն: Սքանչելի եղև», «Առաջաբանութիւն վեցօրեայ գործոց Աստուծոյ: Սքանչելի եղև», «Առաջին հարցումն է այս, թէ՝ զի՞նչ տայ իմանալ ասելն Մովսէսի», «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Վարդապետք ասեն թէ՝ Աստուած ի սկզբանէ լինելութեան», «Զերկին և զերկիր. վարդապետք ասեն թէ Աստուած»:

Երևանի ձեռագրերի ցուցակում «Վեցօրէից»-ի №№ 3877 և 5790 ձեռագիր օրինակները թյուրիմացաբար Հակոբ Ջուղայեցուն են վերագրված[1]*: Այս թյուրիմացությունը ծագել է բնագրի նախաբանի վերջում գտնվող հետևյալ աղավաղված տողերից. «Վասն այսորիկ ի զանազան մեկնութեանց սրբոց հաւաքեցի զսակաւ բանքս զայսոսիկ և կարգեցի ի մի՝ դատապարտեալս Յակոբ կաթողիկոս Հայոց, թարգմանելով ի լատին բարբառոյն ի հայ լեզու, ի փառս Աստուծոյ և ի յօգնութիւն ընթերցողաց: Եւ արդ սկսանիմք նախ զսկիզբն բանից Ծննդոց գրոցն որ ասէ. Ի սկզբանէ արար»:*

3. Գիրք յարութեանն, [ի բանն] Զի ինքն Տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի և ի փող Աստուծոյ իջանէ յերկնից *ևն.* «Սուրբն Գրիգորիոս ասէ թէ՝ Գալուստ Որդւոյն Աստուծոյ երկու է, առաջին և վերջին: Առաջին գալուստն է մարմնանալն ի Կուսէն. երկրորդն՝ յորժամ գայ յընդհանուր հանդերձեալ դատաստանին...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9624, էջ 126բ—137ա:*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2183՝ խոր. նույն (էջ 409ա—433բ, սկ. նույն), № 3654՝ «Գիրք յաղագս համօրէն յարութեանն հարցումն և պատասխանի» *(էջ 278բ—294ա, սկ.* «Սուրբ գիրք ասեն թէ գալուստ Որդւոյն Աստուծոյ»), *№ 2981՝* «Ընդդէմ պիղծ Սադուկեցւոց յաղագս համօրէն յարութեան հարցումն և պատասխանի» *(էջ 308ա—319բ, սկ.* «Զի ինքնին տէր հրամանաւ»):

Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 263 (էջ 92ա—102ա). Զմմառի վանքի ձեռ. № 173 (էջ 437բ—461ա), № 421՝ (էջ 1ա—17բ). Տյուբինգենի KUB Ma XIII 58 (fol. 221^{r}—239^{v})*: Նշվում է նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № (հին?) 1026:*

Ձեռագրերում բնագիրը պատահում է նաև «Գիրք յաղագս հասարակաց յարութեան» *խորագրով:*

4. Գիրք դժոխոց. «Հարցումն՝ եթէ հոգիքն բաժանեալք ի մարմնոյն ի նմին ժամու կարե՞ն հասանել ի տեղիս իւրեանց: Պատասխանեմ՝ թէ ոչ: Վասնզի ասէ Աւետա-

---

[1] *«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա, էջ 1102: Նույնը հտ. Բ, էջ 184:*

ռան, եթե Եկայք աւրհնեալք հօր իմոյ. և մեղաւորացն ասէ, թէ Գնացէք ի տանջանս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5097, էջ 196ա—213բ։*

Վերջում՝ «Կատարեցաւ Գիրք դժոխ[ոցն] Թարգմանութեամբ և սրբագրութեամբ ձեռամբ Յովհաննու Քռնեցոյն և սուրբ եպիսկոպոսին Բարթողիմէի, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն» (էջ 213բ)։ Ձեռագիրը ԺԴ դ. ընդօրինակություն է, գրիչ՝ Դանիէլ Կուբեցի։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2183՝ խոր. նույն (էջ 433բ—461ա, սկ. «Հարցումն՝ թէ հոգիք բաժանեալք»), *№ 9624՝ խոր. նույն (էջ 137ա—148ա, սկ. նույն)։*

Տես դարձյալ Զմմառի վանքի ձեռ. № 173 (էջ 461բ), № 421 (էջ 18ա), № 429՝ «Գիրք յաղագս դժոխոցն» *(էջ 103ա—114ա, սկ.* «Հարցումն՝ թէ հոգիքն բաժանեալք») *№ 579՝ խոր. նույն (էջ 38բ, սկ. նույն)։*

Երևանի Պետ. Մատ. № 5375 ձեռագրում այս երկը տրված է երկու տարբեր բնագրերի ձևի տակ. այսպես՝ «Յաղագս դժոխոց որ է առաջին հարց և պատասխանի: *Հարցումն* առաջին: Թէ հոգիքն բաժանեալք ի մարմնոյն ի նմին ժամու հասանե՞ն ի տեղիս իւրեանց թե ոչ» *(էջ 143բ—148ա, սկ.* «Պատասխանեմ. Վասնզի ասէ սուրբ Աւետարանն ի դատաստանի օրն թէ՝ Եկայք օրհնեալք հօր իմոյ, և մեղաւորացն թէ՝ Գնացէք ի տանջանս») *և* «Դարձեալ յաղագս դժոխոց որ է երկրորդ հարց և պատասխանի: *Հարցումն* երկրորդ: Թէ մեղաւորքն ե՞ն ի ներքին դժոխս: Աղօթք և պատարագ սրբոց օգո՞ւտ է նոցա թէ ոչ» *(էջ 148բ—164ա, սկ.* «Պատասխանեմ թէ՝ զանազան ասեն վարդապետք: Եւ նախ՝ ասէ Որոգինէս թէ՝ յոյժ օգուտ է նոցա աղօթք և պատարագ»)։

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ № 263 (էջ 108ա), № 507 (էջ 95ա)։ Նշվում են նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 244 և № (հին?) 681։

Խորագիրը ձեռագրերում պատահում է նաև՝ «Քարոզ յաղագս դժոխոց, որ է առաջին հարց և պատասխանի», *իսկ սկ.՝* «Հարց առաջին թէ հոգիքն բաժանեալք»։

5. [Գիրք ի վերայ երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս] «Խնդրի թէ զի՞նչ է բնութիւն և քանի՞ յեղանակաւ ասի: Պտ. Ասեմ թէ անունս այս բնութիւն զբազումս նշանակէ, և բազում յեղանակաւ առեալ լինի, քանզի ընդ յեղանակաւ ասի: Նախ անուն բնութիւն եղեալ եղև ի նշանակել զծնունդ կենդանի իրաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3640, էջ 121ա—150ա։*

Վերջում՝ «Կատարեցաւ գիրք երկուց բնութեանց և մի անձնաւորութեանն ի Քրիստոս՝ ի ձեռն Յովհաննու Քռնեցւոյ և սուրբ Բարդուղիմէոսի եպիսկոպոսի, ի փառս Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն» (էջ 150բ)։

Տես նաև նույն մատ. ձեռ. №. 842՝ «Գիրք երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս» *(էջ 1ա—142ա, սկ.* «Ի մէջ ամենայն ընդհանրականացն է յոյժ և գերագոյն՝ ընդհանուր էակն») *և ուրիշներ։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 486՝ անխոր. (էջ 321—443, սկ.* «Խնդրի թէ զի՞նչ է բնութիւն»), *№ 574՝ անխոր. (էջ 505ա—578ա, սկ. նույն), № 666՝ անխոր. (էջ 305—422, սկ. նույն), № 1357՝* «Ի սրբոյն Թոմայէ վարդապետէ ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի» *(էջ 1—197, սկ.* «Յաղագս բնութեան: Խնդրի թէ զի՞նչ է բնութիւն և քանի՞ յեղանակաւ ասի»: *Ըստ այս վերջին ձեռագրի՝ երկի բովանդակությունն է.*

1. Զի՞նչ է բնութիւն։
2. Քրիստոս է միայն մի բնութիւն։
3. Զի՞նչ է անձն։
4. Զանազանութիւն անձին։
5. Որո՞վ եղանակաւ տարբերի բնութիւնն և անձն։
6. Որդի Աստուծոյ զա՞նձն մարդոյ էառ, թէ զբնութիւնն։

Ձեռագրերում այս բնագիրը երբեմն պատահում է նաև «Վիճաբանութիւն ի վերայ երկուց բնութեանց...» *խորագրով։*

6. Գիրք յաղագս ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ, [ի բանն որ ասէ] Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ. «Արդ ի չորից աւետարանչացն՝ պատուականագոյն գտանի Յովհաննէս, որպէս ցուցանէ արծուաձևն պատկեր ի կառն եզե-

կիէլի. վասն զի ի ձեռն բարձրագոյն տեղեացն յայտնի լինի բարձրագոյն բան նորա՝ ասելովն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3654, էջ 268ա—278բ։*

Ձեռագիրը 1354 թվականից է։ Տես նաև նույն մատ. ձեռ. № 2183՝ «Գիրք վասն բանին մարմնացելոյ» *(էջ 255ա—267ա, սկ.* «Արդ ի չորից աւետարանչացն պատուականագոյն գտանի աւետարանիչն Յոհաննէս»...):

Տես դարձյալ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 263 (էջ 117ա—123ա). Զմմառի վանքի մատ. ձեռ. № 421 (էջ 34ա—42բ), № 429 (էջ 114ա—120բ), № 579 (էջ 2ա—38ա). Տյուբինգենի KUB Ma XIII 58 (fol. 209^{r}—221^{r}). *Միլանի* Bibl. Ambr. Ms. H 1 Super (fol. 88). *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1274 (էջ 1). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 244 (էջ 238բ):*

Բնագրի խորագիրը ձեռագրերում առհասարակ նման է երևանյան վերոնշյալ ձեռագրերի խորագրերին։ Սկզբնատողը պատահում է նաև՝ «Արդ չորից աւետարանչացն»:

Ուդենրիյնի կարծիքով այս բնագրից կատարված մի քաղվածք կարող է լինել Միլանի Bibl. Ambr. Ms. H 1 Super (fol. 173^{r}) *ձեռագրում գտնվող անխոր. բնագիրը, որի սկ. է՝* «Վասն ի՞նչ պատճառի զԲանն առաքեաց և ոչ Հայր և Հոգի»[1]:

Ուդենրիյնը դարձյալ ենթադրում է[2], *որ մեր այս բնագրի հետ կարող է նույն լինել Մոսկվայի Լազարյան Ճեմարանի հայ. ձեռագրերի ցուցակում հիշատակված այն գրչագիրը, որը կրում է* «Գիրք մարդեղութեան Բանին Աստուծոյ» *խորագիրը*[3]։ *Լազարյան Ճեմարանի այդ ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում՝ 6585 թվահամարի տակ, և Մատենադարանի ձեռագրացուցակի կազմողներն էլ, Ուդենրիյնի*

[1] *Հմմտ.* M. A. van den Oudenrijn, „Scriptores linguae haicanae“, § 508.

[2] Ibidem, § 453.

[3] *Տես՝ «Ցուցակ գրչագիր հայ մատենից գրադարանի Լազարյան Ճեմարանի Արևելյան Լեզուաց», էջ 10, հետևյալ հրատ. վերջում.* „Catalogue des livres de la Bibliothèque fondamentale de l'Institut Lazareff des langues orientales“, Moscou, 1861.

հետևողությամբ, նրա հեղինակությունը վերագրել են Բարթ. Բոնոնացուն[1]։

Անձամբ քննելով այդ ձեռագիրը՝ գտանք, որ նրա ոչ մի մասում հեղինակի անուն չկա, բնագիրը ոչ մի նմանություն չունի Բարթ.ի «Գիրք վասն Բանին մարմնացելոյ» *երկի հետ. գիրքը խորագիր էլ չունի, իսկ* «Գիրք մարդեղութեան Բանին Աստուծոյ» *խորագիրը հորինված է Լազարյան Ճեմարանի ձեռագրացուցակը կազմողի կողմից, ուստի՝ աշխատությունն անխորագիր է։ Թեև այս երկը Բարթ.ի հեղինակությունը չէ, բայց հետագայում նոր թյուրիմացությունների տեղի չտալու համար անհրաժեշտ ենք համարում այստեղ տալ նրա նկարագրությունը։ Աշխատությունը բաղկացած է երկու մասերից կամ հատորներից.*

Մասն առաջին՝ «Յաղագս Բանին Աստուծոյ ներմարմնութեանն ընձեռուած» *(էջ 2ա—89բ, սկ.* Ո՛չ է բաւական զԱստուած ճանաչել, որպէս է Աստուած. այլ հարկաւոր է նաև՝ յայտնի և պարզ հաւատն Քրիստոսի միջնորդին, որքան նս առ երկաքանչիւր բնութիւնն...»): *Բաղկացած է 15 գլուխներից։*

Մասն երկրորդ՝ «Ընձեռուած յաղագս շնորհացն Քրիստոսի» *(էջ 90ա—190ա, սկ.* «Որպէս մարդն հայի ի կրկին վախճանն, մինն ի բնականն, որ նկատեալ լինի ի բնութենէ, և միւսն գերբնական՝ յԱստուծոյ մեզ ներսեղմեալ...»): *Բաղկացած է 10 գլուխներից։*

7. Գիրք վասն գալստեան Մեսիային, զոր ասեն անհաւատ Հրեայքն, թէ Մեսիայն ոչ է եկեալ, այլ գալոց է. «Խնդրի, թէ Մեսիայն որ խոստացաւ յօրէնս և ի մարգարէս՝ եկեալ է։ Պատասխանեմ և ասեմ, թէ ի հարցուածս այս կրկին ինչ տեսանելի է։ Նախ թէ Հրեայքն, թշնամիք ճշմարտութեանն, ո՞րպէս վկայութիւնս բերեն ի Կտակարանացն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2183, էջ 461բ—477բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 9624՝ խոր. նույն (էջ 148ա—155բ, սկ. նույն). Զմմառի

[1] *Տես՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Բ, էջ 350։*

Մատ. ձեռ № 173՝ խոր. նույն (էջ 488բ—505ա, սկ. նույն)։

8. «Քարոզգիրք»։ *Բարթ.ի անվամբ կան քարոզների այլազան ժողովածուներ, որոնք բովանդակությամբ իրարից տարբերվում են այս կամ այն չափով։ Բավարարվում ենք նշելով հետևյալները։*

ա. Գիրք խրատական և հոգեշահ քարոզք, շարադրեցեալ ի պարսիկ լեզու յերանելոյն Բարդուղիմէոսէ և յարհի եպիսկոպոսէ քաղաքին Մարաղոյ, որ էր ի կարգէ Քարոզչաց սրբոյն Տիմինիկոսի (sic), ազգաւ Հռովմայեցի, ի կաթողիկոսութեան ամենայն Հայոցս տեառն տեառն Յակոբայ: Եւ եղև սա թարգմանեցեալ ի պարսիկ լեզուէ ի Հայոցս բարբառ ի Յակոբ վարդապետէ ի կարգէ վերոյ գրեալ սրբոյն Տիմինիկոսի (sic), որ էր ազգաւ Հայ: Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ, ի փառս Աստուծոյ և ի յօգուտ եղբարց: Յամի մարդեղութեան փրկչին մերոյ՝ 1331: Իսկ այժմ վերստին գաղափարեցաւ ի տէր Յակոբ մեղսաներկ և անիմաստ աբեղայէս Վանեցւոյ Թօփուզեանց կոչեցելոյ, ի միաբանութենէ Լիմ կոչեցեալ սրբոյ անապատի, որ երբեմն միաբան և իբր գրագիր Մշոյ Սուրբ Կարապետի գերահռչակ մեծի աթոռոյն: Յամի տեառն Յիսուսի փրկչին մերոյ՝ 1841, ի 10 ապրիլի: Ընդ հովանեաւ նոյնոյ Լիմ անապատի Սրբոյն Գէորգայ հրաշալի ուխտին: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5375, էջ 4ա—227բ։*

Ընդօրինակության հիշատակարանում կարդում ենք. «...Աստանօր, յետ բաւական գրուածոց մատենից ոմանց, ձեռնարկ եղէ և ի գրութիւնս հաւասարութեամբ Բարդուղիմէոս-քարոզգրքին, որ կայր ի սուրբ անապատս՝ ընդօրինակել ըստ նմա լրապէս, յորում կային 48 քարոզք, յամի Տեառն 1831-ին։ Յետ անցանելոյ ամաց տասնից, այսինքն 1841-ին, ի դիպիլն մեր ի Կտուց սուրբ անապատն, գտի զնոյն Բարդուղիմէոս-քարոզգիրք մի անդ, զոր խնդրեալ բերի համեմատել ընդ իմ գրեալսն, տեսան ի նմա 37 քարոզք, որք չգոյին ի գրեալսն իմ, թէև բազումք էին յիմս, որք չկային ի նմա։ Վասն այսորիկ ի՛սկ և իսկ զգրիչս եդի ի գործ՝ գրել և զայնոսիկ՝ առնել և որոշ հատոր մի զայս գիրքս» են (էջ 226ա—227բ)։

Ըստ այս հիշատակարանի, գրիչը՝ Լիմ անապատի միաբան Հակոբ վարդապետ Թոփուզյանը կազմել է Բարթուղիմէոսի քարոզների երկու տարբեր ժողովածուներ, որոնցից առաջինը պարունակելիս է եղել 48 քարոզներ, իսկ երկրորդը՝ ուրիշ քարոզներ. որոնք նախորդի մեջ չեն գտնվել։ Առաջին ժողովածուն այժմ մեզ անհայտ է. իսկ երկրորդը, որ մեր սույն օրինակն է, պարունակում է հետևյալ 37 քարոզները.

ա. Քարոզ վասն աղօթից՝ յաղագս Հայր մերին, [ի բանն] Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր *են*. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Կոյսն նման է ծաղկի՝ վասն բազում պատճառի: Առաջին պատճառն, զի ծաղիկն ի ժամանակս ձմերայնոյ ոչ երևի...», *էջ 6ա—12բ։*

բ. Այլ քարոզ վասն աղօթից, յաղագս Հայր մերին, [ի բանն] Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք Հայր մեր *են*. «Եւ օր մի էանց Եղիսէ ի Սոմնայ, և անդ էր կին մի մեծ...», *էջ 12բ—18ա։*

գ. Քարոզ պահոց, [ի բանն] Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ *են*. «Իմաստունքն ասեն թէ՝ գող ոմն առնէր բազում գողութիւն, և ոչ ոք կարէր տեսանել զնա...», *էջ 18բ—25բ։*

դ. Այլ քարոզ յաղագս պահոց, [ի բանն] Եւ հանէր դև մի համր, և եղև յելանել դիւին *են*. «Վարդապետք ասեն թէ՝ յաշխարհս մի մեծ վիշապ երևեցաւ յոյժ զազիր և աղտեղի, մահաշունչ, զազրահոտ և կարի գազան...», *էջ 26ա—33ա։*

ե. Քարոզ յաղագս ողորմութեան, [ի բանն] Ահա ել սերմանահան սերմանել և ի սերմանելն իւրում *են*. «Գրեալ է ի կանոնս կայսերաց թէ՝ սերմ որ յերկիրս սերմանեն, պտուղն ագարակին տեառն լինի...», *էջ 33բ—42ա։*

զ. Քարոզ յաղագս գթածութեան, [ի բանն] Եղերուք գթածք, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է. «Գրեալ է յԵսթեր վասն սուրբ Աստուածածնին. Եւ ասէ թագաւորն Արտաշէս ցԵսթեր. Զի՞ է քեզ Եսթեր տիկին, և զի՞նչ է խնդրուած քո և կամ աղաչանքդ...», *էջ 42բ—48ա։*

է. Դարձեալ քարոզ յաղագս գթածութեան, [ի բանն] Եղերուք գթածք որպէս և հայրն ձեր *են*. «Վարդապետք ասեն թէ բազում պատճառաւ պարտ է մեզ ողջոյն տալ սուրբ Աստուածածնի: Առաջին պատճառն, զի բարի կամօք...», *էջ 48ա—54ա։*

ը. Քարոզ յաղագս սիրոյ, [ի բանն] Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս *են*. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է աղբեր վասն երկու պատճառի: Նախ՝ զի թէպէտ աղբիւրն ինքն ըստ ինքեան լցեալ է, բայց թէ արտաքս ո՛չ հեղու՝ ոչ դալարանան ծաղկունք...», *էջ 54ա—56բ։*

թ. Դարձեալ քարոզ յաղագս սիրոյ, [ի բանն] Այս է պատուէրն իմ, զի սիրեսջիք զմիմեանս ևն. «Ասեն վարդապետք եկեղեցւոյ թէ՝ ո՞րպէս մարդն բաժանի յանբան կենդանեացն. և դարձեալ պատասխանեն թէ՝ բանականութեամբն որ է սահման բնութեան մարդոյն...», *էջ 57ա—58ա։*

ժ. Քարոզ յաղագս խոնարհութեան, [ի բանն] Այնպէս ընթացարուք, զի հասանիցիք ևն. «Վարդապետք ասեն թէ՝ պարտ է որք յայլոց պաշտօն առնուն, ինքեանք այլոց պաշտօն տանին...», *էջ 58ա—62ա։*

ժա. Քարոզ վասն պտղոյ ծառոյն, [ի բանն] Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն ևն. «Գրիգոր պապն ասէ՝ եթէ նետ արձակեալ յաղեղանէ, թէ ոք յառաջագոյն տեսանէ՝ հնար է զերծանիլ...», *էջ 62ա—65բ։*

ժբ. Այլ քարոզ վասն պտղոյ ծառոյն, [ի բանն] Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ. «Վարդապետք ասեն թէ՝ ծառ ինչ է ի լատին անքնուսպասքուս որ թարգմանի զառն ողջախոնհի, և ծառս այս ցուցանէ զսուրբ Կոյսն...», *էջ 65բ—69բ։*

ժգ. Այլ քարոզ վասն պտղոյ ծառոյն, [ի բանն] Ոչ կարէ ծառ բարի զպտուղ չար առնել ևն. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է պալասան ծաղկոյ վասն երեք պատճառի։ Առաջին պատճառ, զի զանազանութիւն է ի մէջ այլ ծառոց...», *էջ 70ա—73բ։*

ժդ. Այլ քարոզ վասն պտղոյ ծառոյն, [ի բանն] Ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի ևն. «Սիրելին իմ եկն ի պարտէզ իւր, զի կերիցէ պտուղս։ Որդին Աստուծոյ յոյժ սիրէ զպտուղս հոգւոյս...», *էջ 74ա—77ա։*

ժե. Քարոզ յաղագս մեծատան, [ի բանն] Այր ոմն էր մեծատուն ևն. «Ասեն իմաստունք թէ՝ ակն ինչ որ կոչի տպազիոն, յոյժ ծանրագին և պատուական է, և միայն թէ հազիւ գտանի ի գանձատունս թագաւորաց...», *էջ 77ա—82ա։*

ժզ. Այլ քարոզ յաղագս մեծատան, [ի բանն] Այր ոմն էր մեծատուն և ագանէր բեհեզս և ծիրանիս ևն. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է աղբեր և պտղաբեր առնէ։ Բայց զանազանութիւն է ի մէջ այլ աղբերաց և ի մէջ այն աղբերն որ ի դրախտէն ելանէր...», *էջ 82բ—86ա։*

ժէ. Այլ քարոզ յաղագս մեծատան, [ի բանն] Այր ոմն գործեաց ընթրիս և հրաւիրեաց զբազմութիւնս ևն. «Իմաստունք ասեն թէ՝ է ակն մի, որոյ անունն կոչի ակաթէս, որ է յոյժ պատուական...», *էջ 86բ—90բ։*

ժը. Քարոզ յաղագս թէ՝ ոչ կարէ ոք երկուց տերանց ծառայել, [ի բանն] Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել ևն. «Վարդապետք ասեն թէ՝ Աստուած բարձրեալն ոչ այնպէս հանգչի յամենայն արարածս՝ որպէս ի մարդս...». *էջ 91ա—94բ։*

ժթ. Քարոզ յաղագս արդարութեան և բամբասանաց, [ի բանն] Բայց ասեմ ձեզ, զի եթէ ո՛չ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոցն ևն. «Վարդապետք ասեն թէ՝ միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին ամենայն բարութիւնք իջանեն առ մեզ...», *էջ 95ա—98բ։*

ի. Քարոզ յաղագս սերմանն որոման. [ի բանն] Տէ՛ր, ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակի քում ևն. «Վարդապետք օրինակ բերեն սուրբ Աստուածածնին. ասեն թէ՝ էր ոմն զօրագլուխ մեծ և ննջեաց յապարանս իւր...», *էջ 98բ—107բ։*

իա. Քարոզ յաղագս աշխատելոց, [ի բանն] Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք ևն. «Երեք են կոչողք մեր յայսմ աշխարհիս, որ ունին լուծ և բեռն...», *էջ 107բ—108բ։*

իբ. Քարոզ յաղագս օգտութեան հոգւոց, [ի բանն] Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն ևն. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է այգաստղին, որ է արուսեակն, վասն հինգ պատճառի...», *էջ 109ա—114բ։*

իգ. Յաղագս օգտութեան հոգւոց, [ի բանն] Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է ևն. «Գրեալ է ի գիրս Չորրորդ Թագաւորութեանցն թէ՝ Եւ կին մի ի կանանց որդւոց մարգարէիցն աղաղակէր առ Եղիսէէ...», *էջ 115ա—120ա։*

իդ. Քարոզ յաղագս այգւոյ տանուտեառն, [ի բանն] Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն ևն. «Գրեալ է ի գիրս Արարածոցն թէ՝ Եւ տնկեաց Նոյ այգի և էարբ ի գինւոյն, և արբեցաւ և մերկացաւ ի տան իւրում...», *էջ 120ա—127բ։*

իե. Քարոզ յաղագս քնոյ, [ի բանն] Զի՞ ննջէք, արի՛ք կացէ՛ք յաղօթս ևն. «Վարդապետք ասեն թէ՝ չորս եղանակաւ ասի քունն՝ երկու բարի և երկու չար...», *էջ 127բ—132բ։*

իզ. Դարձեալ քարոզ յաղագս հովուաց, [ի բանն] Ես եմ հովիւն քաջ ևն. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է ոչխարի, որ ունի յատկութիւն, որ ոչ երբէք վնասէ ումեք...», *էջ 132բ—138ա։*

իէ. Դարձեալ քարոզ յաղագս ննջեցելոց մխիթարութեան, [ի բանն] Սակաւ լաց ի վերայ մեռելոյն և ապա մխիթարեաց. «Երրորդ պատճառաւ քարոզ տամք վասն ննջեցելոցն, զի կենդանիքն մի՛ անյուսաբար և անպատշաճաբար սգասցեն ի վերայ մեռելոցն...», *էջ 138ա—142բ։*

իը. Քարոզ յաղագս համբարձմանն Քրիստոսի, [ի բանն] Եւ եղև յօրհնելն նորա զնոսա մեկնեցաւ ի նոցանէ ևն. «Զկնի ջրհեղեղին՝ որ ամենայն մարդիկ մի լեզու էին, ժողովեցան և կամեցան շինել քաղաք և աշտարակ մինչև յերկինս...», էջ *164ա—173ա։*

իթ. Քարոզ յաղագս Հոգւոյն սրբոյ գալստեան, [ի բանն] Հուր եկի արկանել յերկիր ևն. «Վարդապետք օրինակ բերեն վասն սուրբ Աստուածածնին և ասեն թէ՝ Թագաւոր ոմն շինեաց գեղեցիկ դարպաս և կամեցաւ նկարել զնա...», *էջ 173ա—180բ։*

լ. Քարոզ յաղագս երկրորդ գալստեանն Քրիստոսի, [ի բանն] Զի որպէս փայլակն որ ելանէ յարևելից և երևի մինչև ի մուտս արևու ևն. «Սովորութիւն է թագաւորաց և իշխանաց, զի յորժամ ինքեանք անողորմք և ագահք լինիցին, կացուցանեն ի վերայ գանձուց իւրեանց զանողորմս և զագահս...», *էջ 180բ—187ա։*

լա. Դարձեալ քարոզ յաղագս երկրորդ գալստեանն Քրիստոսի, [ի բանն] Զի որպէս փայլակն որ ելանէ յարևելից ևն. «Վարդապետք ասեն թէ՝ սուրբ սէրն որ հաստատ է, պարտի, զի երկու ոտք ունիցի. զի սէրն, որ մի ոտն ունիցի, կաղ է...», *էջ 187ա—194բ։*

լբ. Քարոզ յաղագս հասարակ կիրակէից, [ի բանն] Տէ՛ր, եթէ կամիս կարող ես զիս սրբել ևն. «Հիւանդն յորժամ ծանր ունի զցաւն, ոչ է պարտ առ անգէտ և փոքր բժիշկ երթալ, որ ոչ կարէ առողջացուցանել...», *էջ 194բ—203ա։*

լգ. Քարոզ յաղագս եօթանասնից, [ի բանն] Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք ևն. «Վարդապետք ասեն թէ՝ յանցեալ աւուրսն մարդկային սեռս կրկին կերպիւ ի վիշտ կայր...», *էջ 203ա—210բ։*

լդ. Քարոզ յաղագս պսակի խորհրդոյն, [ի բանն] Եւ հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց ևն. «Գրեալ է ի Հռութ թէ՝ կին ոմն անուն Նոյեմի մեծատուն էր յառաջ, բայց յետոյ աղքատացաւ...», *էջ 211ա—218ա։*

լե. Դարձեալ քարոզ յաղագս պսակի խորհրդոյն, [ի բանն] Եւ հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց ևն. «Գիտելի է, զի է ինչ ի խորհուրդս այս, որ էութիւն է, և է ինչ որ այս է՝ արարողութիւն...», *էջ 218ա—223բ։*

Քարոզների այս շարքից մենք դուրս թողեցինք երկու բնագրեր, որոնք քարոզներ չէին, այլ հեղինակի «Գիրք դժոխոց» խորագրված երկի մասերը (Այս մասին տես Ա 4)։

բ. [Քարոզգիրք արարեալ և շարադրեալ ի Բարթողիմէոսէ լատին եպիսկոպոսէ] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2183, էջ 2ա—409ա։*

Բովանդակություն.

ա. Նախերգան քարոզի, [ի բանն] Գնացէք այսուհետև և աշակերտեցէք ևն. «Վասն բազում պատճառաց անպատեհ է զբանն Աստուծոյ ծածկել...», *էջ 4ա—10ա։*

բ. Քարոզ աղօթից, [ի բանն] Հայր մեր որ յերկինս. «Վարդապետք ասեն թէ աղօթքն է յօգուտ վասն երեք պատճառի...», *էջ 10բ—13բ։*

գ. Այլ քարոզ աղօթից, [ի բանն] Հայր մեր յերկինս ես. «Ի տունն Աստուծոյ պարտ է մեզ աղօթել վասն երեք պատճառի...», *էջ 13բ—19բ։*

դ. Դարձեալ ի նոյն բանն՝ Զի որպէս փայլակն որ ելանէ ևն. «Գիտելի է զի Քրիստոս երկու անգամ գայ ի դատաստան, այսինքն յոր մահու մարդոյն և ի կատարածի աշխարհիս...», *էջ 19բ—22բ։*

ե. Քարոզ խոստովանութեան, [ի բանն] Երթիցուք երից աւուրց ճանապարհ ևն. «Մարդ որ ընթանայ ի ճանապարհ ինչ և զճանապարհն ոչ գիտէ...», *էջ 22բ—25բ։*

զ. Դարձեալ ի նոյն քարոզ, [ի բանն] Երթիցուք երից աւուրց ճանապարհ. «Ոմն թագաւոր ՚ոչ կարէր տասն հազարաւ պատերազմել ընդ այն որ գայր ի վերայ նորա...», *էջ 25բ—32ա։*

է. Դարձեալ ի նոյն բանն՝ Երթիցուք երից աւուրց ճանապարհ. «Զանազանութիւն է ի մէջ ճանապարհի արքայութեան և դժոխոց...», *էջ 32ա—36ա։*

ը. Այլ քարոզ խոստովանութեան, [ի բանն] Խոստովան եղէց քեզ տէր ևն. «Ապաշխարութիւն, զօրութիւն, մեծութիւն, վասն բազում պատճառի...», *էջ 36ա—39ա։*

թ. Քարոզ աւետեաց, [ի բանն] Առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակն Աստուծոյ ի քաղաքն. «Սուրբ Աստուածածինն նման է սաղաֆի, սաղաֆս այս լինի յատակս ծովուն...», *էջ 39ա—42բ։*

ժ. Դարձեալ քարոզ աւետեաց, [ի բանն] Ուրախ լեր բերկրեալ, տէր ընդ քեզ. «Ըստ Օգոստինոսի՝ առ այսպիսի պատուական խորհուրդս պարտ էր պատգամաւոր լինել հրեշտակն վասն երեք պատճառի...», *էջ 42բ—47ա։*

ժա. Քարոզ ծննդեան Քրիստոսի, [ի բանն] Բանն մարմին եղև ևն. «Ասի թէ կայսր ոմն նստաւ յաթոռ և էր առատ յոյժ...», *էջ 47ա—52ա։*

ժբ. Այլ քարոզ ծննդեանն, [ի բանն] Բանն մարմին եղև ևն. «Յորժամ գիտութիւն ինչ դժուարին է, և բանիւ միայն ոչ կարեն ուսուցանել...», *էջ 52ա—57բ։*

ժգ. Քարոզ թլպատութեանն, [ի բանն] Իբրև լցան աւուրք ութ ևն. «Յորժամ բժիշկք յաշխարհն իւրեանց վաստակ ոչ ունենան, զի ոչ գոյ հիւանդութիւն...», *էջ 57բ—62բ։*

ժդ. Քարոզ մկրտութեանն Քրիստոսի, [ի բանն] Ի քէն է տէր աղբիւր կենդանութեան. «Երկիր ոչ տայ պտուղ վասն երկու պատճառի. այսինքն վասն երաշտութեան և կամ վասն ցրտութեան...», *էջ 62բ—67ա։*

ժե. Քարոզ Յովհաննու Մկրտչի, [ի բանն] Ես ձայն բարբառոյ յանապատի ևն. «Պատմի թէ թագաւոր մի կայր [որ ունէր] երկու քաղաք, մինն շինեալ ի բարձր տեղիք, և այն էր ի խաղաղութեան...», *էջ 67ա—71ա։*

ժզ. Քարոզ Պետրոսի առաքելոյն, [ի բանն] Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեալ. «Պատշաճ է, զի որ տայ բարի խրատ, և ինքն զնոյնն առնէ գործով...», *էջ 71ա—76ա։*

ժէ. Քարոզ տեառնընդառաջին, [ի բանն] Իբրև լցան աւուրք սրբութեան նորա ըստ օրինացն Մովսէսի ևն. «Աստուած խոստացաւ որդոցն Իսրայէլի զերկիրն պարգևաց, և նոքա ծուլացեալ ոչ կամէին երթալ անդր...», *էջ 76ա—81բ։*

ժը. Այլ քարոզ տեառնընդառաջին, [ի բանն] Իբրև լցան աւուրք սրբութեան նորա. «Յորժամ ի կարգ ինչ մտանէ ոք որ չար ունի զվարս, աւրէ (sic) զանուն կարգին...», *էջ 81բ—85բ։*

ժթ. Քարոզ կիրակէի ութօրէիցն, [ի բանն] Ահաւասիկ սա կայ ի գլորումն ևն. «Աստուած ունի յաջ ձեռին իւրում զերանութիւն, զուրախութիւն և զփառս, և ի ձախ ձեռին իւրում...», *էջ 85բ—90ա։*

ի. Քարոզ ութօրէից յայտնութեան, [ի բանն] Ոչ հայր քո և ես տառապէաք ևն. «Սուրբ Կոյսն ի Քրիս-

տուէ եօրն մեծութիւն ընկալաւ և ընդդէմ այսմ՝ եօրն տրտմութիւն...», *էջ 90ա—95ա*։

իա. Քարոզ ճարտանեաց, [ի բանն] Հարսանիք էին ի Կանայ Գալիլեացոց. «Գրեալ է ի Հռութ, թէ կին ոմն անուն Նուէմի, էր մեծատուն և անզաւ յաղքատութիւն...», *էջ 95ա—101ա*։

իբ. Քարոզ սերման ագարակին, [ի բանն] Տէր, ոչ սերմն բարի սերմանեցաք յագարակի. «Բազում մարդիկ հարցանեն, թէ չարն և բարին ուստի՞ է։ Ոմանք ասացին, թէ չարն և բարին յԱստուծոյ է...», *էջ 101ա—108ա*։

իգ. Դարձեալ քարոզ սերման, [ի բանն] Ել սերմանահան սերմանել զսերմանիս. «Արդ վասն այսմ՝ երկու իրս տեսանելի է. նախ՝ թէ ո՞ւր սերմանեցաւ. երկրորդ՝ թէ Քրիստոս վասն է՞ր առակօք խօսի...», *էջ 108ա—112բ*։

իդ. Այլ քարոզ, [ի բանն] Այնպէս ընթացարուք զի հասանիցէք. «Սովորութիւն էր առաջնոցն զի ի մեծամեծ տօներն գնային յասպարէզն և իր ինչ պատուական դնէին ի վերայ բարձր տեղոյ...», *էջ 112բ—115ա*։

իե. Առաջաւորի կիրակէին, որ կոչի ըստ Հռոմայեցոց եօթանասներորդ, [ի բանն] Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ. «Ամենայն ինչ որքան ազնուագոյն է, այնքան առաւել ներգործէ, որպէս ի մէջ անդամոցն սիրտն հանապազ ի շարժումն կայ...», *էջ 115ա 120ա*։

իզ. Զորեքշաբաթին որ է սկիզբն պահոցն, [ի բանն] Հող էիր և ի հող դարձցիս. «Ըստ Օգոստինոսի՝ ընդ մեղանչելն Ադամայ, ա՛ռ երիս մեծամեծ պատիժս։ Նախ զի մերկացաւ ի շնորհացն։ Երկրորդ, զի արտաքսեցաւ ի դրախտէն։ Երրորդ, զի բազում ելաց ապաշխարութեամբ...», *էջ 120ա—125ա*։

իէ. Քարոզ պահոցն, [ի բանն] Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ, «Ասէ Յոբ՝ Պատերազմ է կեանք մարդոյ ի վերայ երկրի, որոյ պատճառ է, զի քաղաք, որ ի մէջ երկու թշնամեաց շինեալ է, միշտ է ի կռիւ...», *էջ 125ա—128բ*։

իը. Այլ քարոզ պահոց, [ի բանն] Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ. «Հաւատացեալք որք կան պահօք և աղօթիւք, բազում կերպիւ փորձէ զնոսա սատանայ, զի թուլասցին...», *էջ 128բ—132բ*։

իթ. Դարձեալ այլ քարոզ պահոց, [ի բանն] Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ. «Ըստ [վարդապետաց] մեղքն չորս աստիճանաւ առնու զկատարումն, այսինքն ի խորհուրդն, ի գործն, ի հաւանումն, և ջատագովութեամբ, և այս չորս կերպս երևեցաւ ի դրախտն...», *էջ 132բ—135բ*։

լ. Քարոզ չորրորդ կիրակէի քառասնորդաց, [ի բանն] Եւ հանէր Յիսուս դև մի համր. «Գրեալ է Յովհաննու ի Կաթուղիկեայցն. Վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործսն սատանայի։ Ասէ Օգոստինոս, թէ սատանայն երիս գործս արար...», *էջ 135բ—138բ*։

լա. Քարոզ ծաղկազարդին, [ի բանն] Եւ ածին զէշն և զյաւանակն. «Վասն Ադամայ մեղացն բազում պակասութիւն եղև մարդկային բնութեանս։ Առաջին՝ զի նախ քան զմեղանչելն մարդս փոքր ինչ խոնարհ էր քան զհրեշտակս ըստ Սաղմոսին...», *էջ 138բ—142բ*։

լբ. Քարոզ յարութեանն Քրիստոսի, [ի բանն] Արդարև յարեաւ տէր և երևեցաւ. «Քրիստոս յորժամ էր յաշխարհիս, գիտաց, զի փոխելոց էր առ Հայր, կարգեաց զկտակս իւր ընդ ազգ մարդկան, որպէս և երևեցաւ նոցա յարուցեալ ի մեռելոց...», *էջ 142բ—145ա*։

լգ. Այլ քարոզ յարութեանն Քրիստոսի, [ի բանն] Երանի որոցն որ ունիցին բաժին ի յարութեան *ևն*. «Սովորութիւն է, յորժամ մեծ տօն լինի, յամենայն գաւառաց ժողովին անդ, զի առնուցուն թողութիւն որ լինի ի տօնն յայն...», *էջ 145ա—150ա*։

լդ. Քարոզ հովուացն, [ի բանն] Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ. «Սատանայն նման է գայլոյ, զի գայլն ի կատարածի աւուրն առաւել առնէ վնաս, քան ի կէս օրն, զի ցերեկն թաքչի ի մայրին...», *էջ 150ա—153բ*։

լե. Այլ քարոզ վասն հովուաց, [ի բանն] Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ. «Գիտելի է զի Քրիստոս է բարի հովիւ վասն չորս պատճառի։ Նախ զի բարի հովիւն ճանաչէ զոչխարս իւր, որպէս ասէ յԱւետարանի...», *էջ 153բ—156ա*։

լզ. Երկրորդ կիրակէի քառասնորդացն, [ի բանն] Ահա կին մի Քանանացի աղաղակեաց *ևն*. «Կինս այս կալովն առ Քրիստոս երիս իրս եցոյց։ Նախ զի խոստովանեցաւ զնա կատարեալ Աստուած և կատարեալ մարդ՝ ասելով. Յիսուս որդի Դաւթի...», *էջ 156ա—159բ*։

լէ. Քարոզ համբարձմանն, [ի բանն] Համբարձաւ Քրիստոս յերկինս և նստաւ ընդ աջմէ հօր. «Ի համբարձմանէս Քրիստոսի երիս իրս տեսանելի է։ Առաջին, թէ ո՞րչափ բարձրացաւ։ Երկրորդ, թե ո՞րչափ ժամանակս յամեաց ի համբառնալն իւրում...», *էջ 159բ—163բ*։

լը. Դարձեալ քարոզ համբարձմանն, [ի բանն] Որ էջն նոյնն է, որ ելն ի վերոյ, քան զամենայն երկինս *ևն*. «Ամենակալն Աստուած Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս, զի վարդապետութիւն արասցէ և ուսուցէ զմարդիկ...», *էջ 163բ—166բ*։

լթ. Քարոզ Հոգոյ գալստեանն, [ի բանն] Երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ի հրոյ *ևն*. «Վարդապետք ասեն, թէ երկու ազգ հուր կայ աշխարհիս։ Առաջինն է վերին, որ է բոլորակութիւն գնդին իւրոյ ի ներքոյ երկնի լուսինն...», *էջ 166բ—170բ*։

խ. Այլ քարոզ Հոգոյ գալստեանն, [ի բանն] Լցան ամենեքեան Հոգւով սրբով *ևն*. «Գիտելի է զի որպէս հոգիս մեր առնէ մարմնոյս մերոյ, զնոյնն Հոգին Աստուծոյ ներգործէ ի հոգիս մեր...», *էջ 170բ—173բ*։

խա. Քարոզ մարմնոյն Քրիստոսի, [ի բանն] Այս է մարմին իմ. «Ըստ Օգոստինոսի՝ սէրն է պատճառ միաւորութեան, վասն այնորիկ երկու ոմանք, որ զմիմեանս սիրեն, ոչ կամին բաժանիլ ի միմեանց...», *էջ 174ա—178ա*։

խբ. Այլ քարոզ պատարագի և վասն մարմնոյ Քրիստոսի, [ի բանն] Փորձեսցէ մարդ զանձն իւր *ևն*.

«Ըստ բժշկաց որիչ կերակուր պարտ է տալ այնմ, որ հիւանդ է, այսինքն՝ դառն դեղ և այլ ազգ այնմ, որ դարձեալ է ի հիւանդութենէն...», *էջ 178ա—181բ։*

խգ. Քարոզ մեծատանն, [ի բանն] Այր ոմն էր մեծատուն և ագանէր. «Գրեալ է յԱրարածքն, թէ Յովսէփ տարաւ զորդին իր առ Յակոբ...», *էջ 181բ—185բ։*

խդ. Քարոզ ընթրեացն, [ի բանն] Այր ոմն գործեաց ընթրիս մեծ. «Ըստ իմաստասիրաց որ ինչ լաւագոյն է և պայծառագոյն՝ առաւել սփռէ և բաշխէ զգեղեցկութիւնս իւր...», էջ *185բ—189բ։*

խե. Այլ քարոզ ական, [ի բանն] Եթե ակն քո գայթակղեցուցանէ զքեզ. «Ըստ Օգոստինոսի՝ յերկու բարոյն պարտ է զմեծ բարին ընտրել և յերկու չարէն՝ զփոքրն...», *էջ 189բ—194ա։*

խզ. Այլ քարոզ ի նոյն, [ի բանն] Ճրագ մարմնոյ ակն է *ևն.* «Ըստ Գրիգորի՝ յամենայն գործս Աստուծոյ ոչ գոյ պակասութիւն, զի ի գործ մարդոյն գոյ պակասութիւն վասն չորս պատճառի...», *էջ 194ա—196բ։*

խէ. Քարոզ ողորմութեան, [ի բանն] Եղերուք ողորմած որպէս և հայրն ձեր երկնային. «Յորժամ տեսանէ հայրն զորդին, թէ յո՛ր արհեստ փոյթ ունի, ի նոյնն տայ ուսումն...», *էջ 196բ—200ա։*

խը. Քարոզ բամբասանաց, [ի բանն] Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. «Ըստ Գրիգորիոսի՝ հոգևոր զողութիւն ծանր է քան զմարմնաւորն վասն երեք պատճառի...», *էջ 200ա—202բ։*

խթ. Քարոզ հինգետասաներորդ կիրակէի յետ տօնի Երրորդութեան, [ի բանն] Ոչ կարէք երկուց տէրանց ծառայել. «Եսայի ասէ. նեղ է մահիճքն և կարճ է վերարկուն մինչ զի մինն ազգի։ Մահիճքս այս է, հոգին բանական...», *էջ 202բ—205ա։*

ծ. Քարոզ գողեացն չորեքտասաներորդ կիրակէի յետ տօնի Երրորդութեան, [ի բանն] Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել *ևն.* «Ըստ բժշկաց մեծ ցաւն պարտ է խնդրել մեծ բժիշկ, ապա թէ ոչ՝ ոչ կարէ բժշկել...», *էջ 205ա—208ա։*

ծա. Քարոզ, [ի բանն] Զի՞ ննջէք, արի՛ք. «Գիտելի է, զի չորս ազգ է քունն՝ երկու բարի և երկու չար, և բարի քունն կրկին է՝ աստիս և հանդերձեալն...», *էջ 208բ—210ա։*

ծբ. Քարոզ Բարդուղիմ[է]ոս առաքելոյն[1], [ի բանն] Հրամայեաց թագաւորն Աղեքսանդր *ևն.* «Յոհանէս ասէ. Ի տես եցոյց ինձ տէր գետ ջրոյ կենդանութեան լուսաւոր, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ...», *էջ 210բ—212բ։*

ծգ. Քարոզ Մատթէոսի աւետարանչին, [ի բանն] Ոչ է պիտոյ բժիշկ ողջաց, այլ հիւանդաց. «Ողորմութիւն Աստուծոյ ի վերայ մեղաւորաց յայտնի լինի բազում կերպիւ...», էջ *212բ—216բ։*

ծդ. Քարոզ ութներորդ կիրակէի, յետ տօնի Երրորդութեան, [ի բանն] Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն, որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց *ևն.* «Ըստ Գրիգորիսի՝ ձգեալ նետ յանկարծակի, դժուարաւ ոք զերծանի...», *էջ 216բ—221ա։*

ծե. Քարոզ ծառի, [ի բանն] Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի *ևն.* «Վարդապետք ասեն, թէ մարդս է ծառ, բայց շրջեալ զարմատն ի վեր կոյս...», *էջ 221ա—224բ։*

ծզ. Այլ քարոզ ծառի, [ի բանն] Ծառ բարի պտուղ բարի առնէ *ևն.* «Որպէս մարմնաւոր ծառն ունի արմատ, բուն, ճեղ և տերև, և պտուղ, սոյնպէս մարդս է իբրև զծառ...», *էջ 224բ—228ա։*

ծէ. Քարոզ տանուտեառն որ տնկեաց այգի, [ի բանն] Եւ տնկեաց Նոյ այգի և արբ ի գինոյ. «Նոյ՝ թարգմանի հանգիստ և նշանակէ զԱստուած, որ է անշարժ և զամենայն շարժէ...», *էջ 228ա—232բ։*

ծը. Դարձեալ այլ քարոզ ի նոյնն վասն այգոյ, [ի բանն] Դուք արարէք ընդ իս և ընդ այգիս իմ *ևն.* «Արդ, վասն այսմ երիս իրս տեսանելի է։ Նախ յապերախտիցն, որք ոչ եսուն պտուղ, այլ փուշ...», *էջ 232բ—235ա։*

ծթ. Քարոզ սիրոյ, [ի բանն] Մի՛ ումեք պարտապան գտանիցիք *ևն.* «Ըստ Օգոստինոսի՝ բնութիւն է սիրոյն միացուցանելն, վասն զի ամենայն ինչ սիրով միանայ...», *էջ 235ա—238բ։*

կ. Այլ քարոզ սիրոյ, [ի բանն] Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակի. «Ըստ Արիստոտէլի՝ ի յայնս որ կարգին առ վաղճանն, որչափ թեթևագոյն է, այնչափ լաւագոյն է...», *էջ 238բ—242ա։*

կա. Այլ քարոզ սիրոյ, [ի բանն] Ինքն իսկ Հայր սիրէ զձեզ *ևն.* «Թէպէտ սիրէ Աստուած զամենայն որ են, որպէս ասէ սիրեցէքն...», *էջ 242ա—246բ։*

կբ. Քարոզ մեծի ուրբաթին սգոյ, [ի բանն] Ո՞վ դուք ամենեքեան անցաւորք ճանապարհի *ևն.* «Սովորութիւն է վարդապետաց, զի յորժամ քարոզեն, նախ խօսին բան ինչ վասն գովութեան...», *էջ 246բ—253ա։*

կգ. Քարոզ մեծի շաբաթին, [ի բանն] Եկն Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն *ևն.* «Մեծ է պատիւ աւուր շաբաթուն, վասն զի ի նա հանգեաւ բոլոր Երրորդութիւն, քանզի Հայրն որում վերաբերի ստեղծումն աշխարհի...», *էջ 253ա—255ա։*

կդ. Քարոզ առաջի կիրակէի գալստեանն, [ի բանն] Աւրհնեալ որ եկն յանուն Տեառն. «Սահման էր ի հինն, զի Հրեայքն առնէին տօն տաղաւարահարացն ի յիշատակ այնմ, որ Աստուած եկն առ նոսա...», *էջ 267ա—268բ։*

կե. Քարոզ վասն ննջեցելոց, [ի բանն] Ողորմեցարուք ինձ, ողորմեցարուք զոնեայ դո՛ւք, ո՛վ բարեկամք իմ *ևն.* «Վարդապետք ասեն, թէ վասն երեք պատճառի քարոզ տուեալ լինի վասն ննջեցելոցն։ Նախ զի կենդանիքն ուղղեսցեն զկեանս իւրեանց...», *էջ 269ա—272ա։*

կզ. Այլ քարոզ վասն ննջեցելոցն, [ի բանն] Որպէս այսօր եղև ընդ իս, վաղն ընդ քեզ լինելոց է *ևն.* «Վարդապետք ասեն. թէ Աստուած ոչ անփոյթ առնէ վասն փրկութեան մարդկան, զի առաքէ...», *էջ 272ա—274բ։*

---

[1] *Ըստ երևույթին գրչական վրեպ է առաքելոյն բառը և պետք է լինի՝* եպիսկոպոսին։

կէ. Այլ քարոզ վասն ննջեցելոցն, [ի բանն] Սակաւ լաց ի վերայ մեռելոցն և յետոյ մխիթարեաց. «Վարդապետք ասեն, թէ պարտ է սակաւ լալ ի վերայ մեռելոյն, վասն բազում պատճառի: Առաջին՝ զի որք սակաւ լան...», *էջ 275ա—279ա:*

կը. Քարոզ աւետեաց Աստուածածնին, [ի բանն] Մտի ի պարտէզ իմ, քոյր իմ, հարսն. «Վարդապետք ասեն, թէ յոյժ հարկաւոր է, զի յորժամ ոք մեծ իշխան կամի կոչել զթագաւորն առ ինքն...», *էջ 279ա—283ա:*

կթ. Քարոզ փոխման Աստուածածնին, [ի բանն] Եւ նշան երևեցաւ յերկինս, կին մի արկեալ զիւրեաւ *ևն.* «Գրեալ է յերկրորդ Թագաւորութեանցն Զ. չոգաւ Դաւիթ և էհան զտապանակն Տեառն ի տանէն Աբեդդարայ...», *էջ 283ա—287բ:*

հ. Քարոզ Աստուածածնի ծննդեանն, [ի բանն] Եղև նա իբրև զնաւ շահաբեր *ևն.* «Ասեն վարդապետք, թէ յորժամ թագաւոր ոք թշնամի է ընդ այլ երկիր, զնաւս վաճառականացն...», *էջ 287բ—294ա:*

հա. Այլ քարոզ Աստուածածնի ծննդեանն, [ի բանն] Ծագեսցէ աստղ ի Յակոբայ *ևն.* «Վարդապետք ասեն, թէ աստղս այս, որ անգաւ յերկնից՝ Սաղայէլ էր, որպէս ասէ Աւետարանն...», *էջ 294ա—299ա:*

հբ. Քարոզ սուրբ խաչին, [ի բանն] Այլ ինձ քաւ լիցի պարծիլ *ևն.* «Ասեն վարդապետք, թէ մարդիկ որ կամին երթալ ուրեք և հասանեն ի տեղի ինչ, որ բաժանի չորս ճանապարհ և ոչ գիտեն, թէ ո՛ր է ճշմարիտ ճանապարհն...», *էջ 299ա—302ա:*

հգ. Քարոզ հրեշտակապետացն, [ի բանն] Ոչ ոք է, որ օգնէ մեզ, բայց միայն հրեշտակապետն Միքայէլ *ևն.* «Ասեն վարդապետք, թէ որպէս մեղուք նստելով ի վերայ ծաղկանց՝ կազմեն զեղեցիկ զգործս իւրեանց...», *էջ 302ա—306բ:*

հդ. Այլ քարոզ վասն հրեշտակացն, [ի բանն] Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ *ևն.* «Ըստ Դիոնեսիոսի՝ երկնային քահանայապետութիւնն բաժանի յերիս, այսինքն՝ ի վերնագոյն, ի միջինն, և ի ստորնագոյնն...», *էջ 306բ—310ա:*

հե. Քարոզ առաքելոցն Սիմոնի և Յուդայի, [ի բանն] Որդիք քո որպէս նորատունկ ձիթենի *ևն.* «Աբրահամ, հայրն հաւատոյ, յորժամ կամէր բաշխել զինչս իւր որդոց իւրոց...», *էջ 310ա—317ա:*

հզ. Քարոզ մեծի ուրբաթին, [ի բանն] Տե՛ս և արա՛ ըստ օրինակին որ ցուցաւ քեզ ի լերինն. «Քրիստոս է որպէս զիրք օրինակի, եդեալ ի գրակալ խաչին, որով զկեանս մեր պարտիմք ուղղել հայելովն ի նա...», *էջ 317ա—319բ:*

հէ. Քարոզ ամենայն սրբոց, [ի բանն] Երանի՛ ամենեցուն, որ բնակեալ են ի տուն Տեառն *ևն.* «Վարդապետք ասեն, թէ երեք զանազանութիւն կայ ի մէջ մարդոյս և այլ կենդանեաց...», *էջ 319բ—324բ:*

հը. Այլ քարոզ ամենայն սրբոց, [ի բանն] Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք *ևն.* «Արդ տօն ամենայն սրբոց վասն երեք պատճառի կացուցեալ եղև...», *էջ 324բ—329բ:*

հթ. Քարոզ վասն փառաց արքայութեանն, [ի բանն] Մուտ յուրախութիւն տեառն քո. «Ըստ առաքելոյն վարձ սրբոցն այնպիսի է, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ...», *էջ 329բ—336ա:*

ձ. Քարոզ Պետրոսի և Պօղոսի առաքելոցն, [ի բանն] Արար Աստուած երկուս լուսաւորս մեծ *ևն.* «Արեգակն և լուսինն նշանակէ զառաքեալսն Պետրոս և Պօղոս, զի ի մէջ լուսաւորացն երկնից են մեծ, զօրաւորագոյն և առաւել խնամեն զերկիրս...», *էջ 336ա—339ա:*

ձա. Քարոզ Յովհաննու Մկրտչին, [ի բանն] Ես ձայն բարբառոյ յանապատի *ևն.* «Ի բնաբանս յայս երեք ինչ իմանի: Առաջին որ ասէ՝ ես ձայն, երկրորդ որ ասէ՝ բարբառոյ, երրորդ որ ասէ յանապատի...», *էջ 339ա—342բ:*

ձբ. Քարոզ վասն սիմոնականութեան, [ի բանն] Զրի առէք և ձրի տուք. «Արդ վասն այսմ երիս իրս տեսանելի է. նախ՝ ի վաճառելոյ զհոգևորն, երկրորդ՝ յագահութենէ քահանայիցն, երրորդ՝ թէ վասն է՞ր առնեն զագահութիւնն...», *էջ 342բ—345ա:*

ձգ. Քարոզ այլակերպութեան, [ի բանն] Եւ առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս, զՅակոբոս *ևն.* «Արդ վասն այսմ երիս իրս տեսանելի է: Նախ թէ՝ որո՞ց յայտնեցաւ, երկրորդ՝ թէ ո՞ւր եղև, երրորդ՝ յայնցանէ որ ասէ...», *էջ 345բ—347ա:*

ձդ. Քարոզ յարութեանն Քրիստոսի, [ի բանն] Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց *ևն.* «Քրիստոս յարեաւ ի մեռելոց յաւուր երրորդի առնելով զմարմինն իւր ոչ այնպիսի, որպէս յառաջն ունէր, այլ անչարչարելի և անմահ...», *էջ 347ա—349բ:*

ձե. Քարոզ նոր կիրակէին, [ի բանն] Եկաց Յիսուս ի մէջ աշակերտացն *ևն.* «Ի բնաբան յայս ցուցանի երիս իրս: Առաջին զի ասէ՝ եկաց Յիսուս, երկրորդ որ ասէ՝ ի մէջ նոցա, երրորդ որ ասէ՝ խաղաղութիւն ընդ ձեզ...», *էջ 349բ—352ա:*

ձզ. Քարոզ երկրորդ կիրակէի յետ յարութեան Քրիստոսի, [ի բանն] Զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց. «Ծառայքն Աստուծոյ զորս գնեաց Քրիստոս հեղմամբ արեամբն իւրով, նմանին ոչխարի...», *էջ 352բ—354բ:*

ձէ. Քարոզ երրորդ կիրակէի յետ յարութեանն Քրիստոսի, [ի բանն] Կինն յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա *ևն.* «Ըստ Օգոստինոսի՝ թէպէտ ապաշխարութիւնն յոյժ դժուարին թուի սուրբ արանցն, բայց պարտին նկատելի փառքն...», *էջ 355ա—358ա:*

ձը. Քարոզ չորրորդ կիրակէի յետ յարութեանն, [ի բանն] Լաւ է ձեզ թէ ես երթամ *ևն.* «Ըստ Ոսկեբերանին՝ երեք են որ արգելուն, զի մի կարասցէ ոք ընդունել զհոգևորն...», *էջ 358ա—361ա:*

ձթ. Քարոզ հինգերորդ կիրակէի յետ յարութեանն, [ի բանն] Ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք *ևն.* «Եթէ ոք ի յորդոյ թագաւորին և կամ զեղբայր և կամ զիմաստուն ոք ունենայ...», *էջ 361ա—363բ:*

ղ. Դարձեալ չորրորդ կիրակէի, յետ յարութեան, [ի բանն] Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ *ևն.* «Առաքեալքն Քրիստոսի չորք իրք բաղձային յոյժ: Առաջին՝

թլ, Աստուած կամէր լսել զխնդրուածս նոցա...», *էջ 364ա—367բ։*

ղա. Քարոզ կիրակէի ի մէջ ութօրէից համբարձման, [ի բանն] Յորժամ եկեսցէ մխիթարիչն զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ *ևն.* «Գիտացեալ գթած տէրն, զի սիրտ առաքելոցն տրտում էին վասն երթալոյն Քրիստոսի, վասն այնորիկ գթացեալ մխիթարեաց զնոսա...», *էջ 367բ—370բ։*

ղբ. Քարոզ սուրբ Երրորդութեանն կիրակէին, [ի բանն] Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. «Ասեն վարդապետք թէ որ կարօտանայ աչից, պարտի հաւատալ տեսողացն գոլ զանազան գոյնս...», *էջ 370բ—374բ։*

ղգ. Քարոզ մարմնոյն Քրիստոսի, [ի բանն] Մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի. «Վարդապետք ասեն թէ ամենայն կերակուր նախ մեռանի և ապականի, և ապա ուտի: Որպէս զենումք զանասունս և աղամք զցորենս, նոյնպէս և կերակուրն առ սակաւ սակաւ...», *էջ 374բ—377բ։*

ղդ. Քարոզ առաջին կիրակէի յետ տօնի սուրբ Երրորդութեան, [ի բանն] Այր ումն էր մեծատուն *ևն.* «Ասեն իմաստունք թէ յերկիրն Հնդկաց է անձաւ մի մեծ, և այնպէս մեծ և խոր ձոր է...», *էջ 377բ—382ա։*

ղե. Քարոզ սուրբ Երրորդութեանն կիրակէին, [ի բանն] Այր մի էր մեծատուն *ևն.* «Բազում անգամ Տէրն մեր զոր ինչ ուսուցանէր բանիւ, զնոյն և յետոյ հաստատէր...», *էջ 382ա—385բ։*

ղզ. Քարոզ երկրորդ կիրակէի յետ տօնի սուրբ Երրորդութեան, [ի բանն] Այր ումն արար ընթրիս մեծ. «Տէրն մեր իմանալ տայ աստ մեզ գոլ այլ ընթրիս որ ոչ է իւրն, վասն այն ասէ՝ այր ումն արար ընթրիս...», *էջ 385բ—389ա։*

ղէ. Դարձեալ այլ քարոզ ի նոյն կիրակէի, [ի բանն] Այր ումն գործեաց ընթրիս մեծ *ևն.* «Ասեն վարդապետք թէ զգայութիւնքն մարդոյս են դուռն, որով միտք մեր ճանաչեն զստեղծական բարիս...», *էջ 389ա—393ա։*

ղը. Քարոզ երրորդ կիրակէին, յետ տօնի սուրբ Երրորդութեանն, [ի բանն] Եւ էին մերձ առ տէր մեր Յիսուս Քրիստոս ամենայն մաքսաւորք *ևն.* «Ասէ Ամբրոսիոս ի գիրս Կուսութեանն, թէ պարտ է ամենայն հոգւոյ առ Քրիստոս մերձենալ...», *էջ 393ա—396բ։*

ղթ. Դարձեալ այլ քարոզ ի նոյն կիրակիս, [ի բանն] Ով ոք ի ձէնջ, մարդ որոյ իցէ հարիւր ոչխար *ևն.* «Վարդապետք ասեն թէ յորժամ Աստուած նախասահմանէ, այսինքն ընտրէ, զի արժանի լիցին արքայութեանս...», *էջ 396բ—399ա։*

Ճ. Քարոզ չորրորդ կիրակէիս յետ տօնի սուրբ Երրորդութեան, [ի բանն] Եղերուք ողորմած, որպէս հայրն ձեր *ևն.* «Ի մէջ աւրինացն Մովսէսի և Աւետարանին է զանազանութիւն, զի անդ ունէր յոյժ զարդարութիւնն, աստ զողորմութիւնն...», *էջ 399ա—402բ։*

Ճա. Քարոզ հինգերորդ կիրակէի յետ տօնի սուրբ Երրորդութեանն, [ի բանն] Վարդապետ զամենայն զիշերս *ևն.* «Քարոզողքն Աստուծոյ կոչին ձկնորսք, որսորդք և այգեպանք: Արդ առաջին քարոզողքն էին որպէս ձկնորսք, զի ի միանգամն և մի ցանցիւ...», *էջ 402բ—406ա։*

Ճբ. Քարոզ վեցերորդ կիրակէին յետ տօնի սուրբ Երրորդութեան, [ի բանն] Եթէ մատուցանիցես զպատարագն քո ի վերայ սեղանոյ *ևն.* «Ըստ Օգոստինոսի՝ յամենայն գործս մեր պարտ է նկատել երիս իրս, այսինքն փառքն և պատիւն Աստուծոյ...», *էջ 406ա—409ա։*

գ. Խրատականք եւ հոգեշահք քարոզք շարադրեալ յերկոցունց աստուածաբանից և յոգնահանճարից վարդապետաց ի կարգէ Քարոզողաց, այսինքն երանեցելոյն Բարդուղիմէոսի և Պետրոսի Արագոնացւոյ, Վենետիկ, 1704:

Անտարակույս այս հրատարակությունն է Ղ. Ալիշանի հիշատակածը՝ «Յաղագս խոստովանութեան, ի Բարդողիմեայ և յԱրագոնացւոյն»[1]: *Այս հատորում Բարթ.ին պատկանող քարոզները հետևյալներն են.*

ա. Քարոզ խոստովանութեան, առաջի չորեքշաբաթի աղուհացիցն, [ի բանն] Արի ի խոստովանութիւն ի սկիզբն և ի գլուխ պահոյ քո *ևն.* «Ասէ երանելին Հերոնիմոս. Նախահայրն մեր Ադամ վասն կերակրոյ ծառոյն գիտութեան...», *էջ 9—21։*

բ. Քարոզ խոստովանութեան՝ Տէր թող զմեղս իմ. [ի բանն] Ապա եթէ խոստովան լինիմք զմեղս մեր *ևն.* «Ոմն կամեցաւ որսալ աղաւնի և նախ սնոյց ընտանի աղաւնի մի մեղրով եփած ցորենով...», *էջ 22—53։*

գ. Քարոզ խոստովանութեան, [ի բանն] Արդ երթիցուք երից աւուրց ճանապարհ և զոհեսցուք *ևն.* «Վարդապետք ասեն թէ սրբուհի Աստուածածինն նման է լերին՝ վասն երկու պատճառի...», *էջ 53—78։*

դ. Վասն խոստովանութեան. «Եւ ի խոստովանութենէս այս ինչ ասելի է: Նախ ասելի է թէ զի՞նչ օգտէ խոստովանիլն: Պատասխանեմ և ասեմ թէ բազում օգտութիւն ունի...», *էջ 78—117։*

ե. Քարոզ վասն ապաշխարութեան. «Այժմ ասասցուք յերրորդ աւուր ճանապարհէս, որ ապաշխարութիւնն է, այսինքն հատուցումն, և այս ևս երեք մի է...», *էջ 118—140։*

□ *Բարթ. Բոնոնացու «Քարոզգրքի» օրինակներ պարունակող ձեռագրեր շատ կան Երևանի Պետ. Մատենադարանում: Վերևում նկարագրված օրինակներից բացի տես նաև №№ 2184, 2185, 2199, 2233, 2259, 2260, 3037, 3164, 3321, 5097, 5932, 6372, 6929, 7342, 9624 և ուրիշներ: Այսպիսի ձեռագրերի շարքում կան օրինակներ, որոնք բովանդակությամբ իրարից հաճախ տարբերվում են*

1 *Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 385։*

այս կամ այն չափով։ Տես նաև նույն մատ. հետևյալ ձեռագիր ժողովածուները, որոնց մեջ նույնպես կան Բարթ.ի «Քարոզգրքից» օրինակներ և կամ որոշ թվով քարոզներ. №№ 683, 725, 1012, 1409, 2200, 2240, 2264, 2854, 3372, 3900, 3982, 4230, 4898, 6564, 6577, 6685, 8068։

Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 147 (էջ 78), № 294 (էջ 1ա, սկզբից թերի, ունի հիշատակարան), № 364 (էջ 1, մի քանի քարոզներ), № 867 (էջ 1), № 1064 (էջ 1), № 1325 (էջ 3). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 312 (էջ 2ա), № 507 (էջ 4ա, ունի հիշատակարան). Զմմառի վանքի մատ. ձեռ. № 172 (էջ 1ա, ընդարձակ քարոզգիրք, ունի հիշատակարան), № 173 (էջ 2ա), № 174 (էջ 1ա, ընդարձակ քարոզգիրք), № 175 (էջ 1բ, ընդարձակ քարոզգիրք), № 421 (էջ 44բ), № 470 (էջ 8բ), № 627 (էջ 3ա, մի շարք քարոզներ). Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 8 (էջերի քանակն անհայտ, ընդարձակ քարոզգիրք, ունի հիշատակարան), № 27 (էջերի քանակն անհայտ, ընդարձակ քարոզգիրք, ունի հիշատակարան). Նիկոսիայի ձեռ. № 20 (էջ 344ա, մի քանի քարոզներ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 302 (էջ 3ա). Միլանի Bibl. Ambr. Ms. H 1 Super. Նշվում են նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. №№ (հի՞ն) 48, 219, 231, 313, 374, 397, 681, 682, 690, 792, 1026, 1610 և 1861։

Ձեռագրերում բնագրերը կրում են այլազան խորագրեր. «Քարոզգիրք, շարադրեալ ի մեծէն և յերանելւոյն Բարդուղիմէոսէ, պարսիկ լեզուաւ, յորում պարունակին բազմազան քարոզք վասն ամենայն տէրունական տօնից և բազմաց կիւրակէից տարոյն, յոյժ պարզ և դիւրաւ ոճով ի փառս Աստուծոյ, ի պատիւ Կուսին և ի յօգուտ հաւատացելոց և թարգմանեցեալ եղև ի հայս ի Յակոբայ Հաղբատացւոյ աստուածաբան վարդապետէ ի գաւառն Երնջակու, յամի տեառն 1331», «Քարոզգիրք զոր արարեալ և շարադրեալ է ի Բարդուղիմէոսէ լատին եպիսկոպոսէ, և ի նոյնոյ հեղինակէ թարգմանեալ ի հայ լեզու ի վաղնջուց ժամանակաց», «Քարոզգիրքս այս որ ծաղկաքաղ արարեալ է ի Քարոզգրքոյն մեծի Բարդուղիմէոսի եպիսկոպոսին ի կարգէ Քարոզողաց», «Գիրք խրատականք և հոգեշահք քարոզք, շարադրեցեալ ի պարսիկ լեզու երանեցելոյն Բարդուղիմէոսէ», «Նախադրութիւն Քարոզի գրոց, զոր յարմարեալ է Բարդուղիմէոսի եպիսկոպոսի իմաստուն վարդապետի և թարգմանեալ ի լատինացւոց», «Նախերգանք քարոզգրքի Բարդողիմէոսի եպիսկոպոսին Մարաղայ, որ էր ազգաւ լատին, և ետինքն թարգմանեալ ի հայ լեզու»։

Բնագրի սկ. պատահում է նաև՝ «Սէր է Աստուած և սիրոյ աղբիւր», «Նախերգան քարոզից։ Լցեալն ի շնորհաց», «Նախերգանք քարոզի։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք», «Նախերգանք քարոզի...։ Յաղագս վասն Քրիստոսի։ Երանելի բնութիւն և աննախանձ բարութիւն», «Յառաջաբանութիւն սրբոյ մատենիս ի հեղինակէն։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք։ Վարդապետք ասեն թէ՝ անպատշան է», «Գրեալ է ի Մատթէոսի վերջն՝ Երթայք քարոզեցէք...։ Վարդապետք ասեն թէ՝ անպատշան է», «Վարդապետք ասեն թէ՝ անպատշան է զգիտութիւնս խնայել», «Ես եմ հովիւն քաջ...։ Վարդապետք եկեղեցւոյ ասեն թէ՝ սուրբ Աստուածածինն նման է ոչխարի», «Քարոզ քահանայից...։ Թէ լինէր երկիր մի որ լցեալ լինէր հիւանդութեամբ»։

Ձեռագրերում հաճախ պատահում են նաև Բարթ.ի անվամբ առանձին քարոզներ, ինչպես են, օրինակ, Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7581՝ «Վասն եկեղեցւոյ, ի Բարթուղիմէոսէ» (էջ 86բ—88բ, սկ. «Աստուծոյ իմաստութեանն ոչ գոյ բաւ, զի ամենայն ստեղծուածոց զանազան յարկ և բնակութիւն կազմեաց» և նույն ձեռ.՝ «Բարդուղիմէոսի՝ [ի] Ծառ բարի զպտուղ» (էջ 88բ—90բ, սկ. «Է ծառ ինչ ի աշխարհն Ինկլէզացւոց՝ աննիւսգաստիս, որ թարգմանի զառն ողջախոհի»)։

Կան նաև առակատիպ և զրուցատիպ ժողովածուներ՝ կազմված Բարթ.ի քարոզներից։ Այդպիսիներից է հետևյալ ժողովածուն.

Ի Բարթուղիմէոսի գրոցն հաւաքեալ. «Թագաւոր ոմն ունէր ակն մի յոյժ պատուական, և օր մի անկաւ ի ձեռնէն ի խոր ծո-

վուն, և լևիաթան ձուկն զնա...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7581, էջ 75ա—86բ։*

Բարթողիմեոսի գործերից քաղված զրույցներ կամ այլ բնույթի հատվածներ են։ Հաջորդ հատվածների սկ. են՝ «Արքունի կոյսն նման է ոստրէոսի...», «Յորժամ պատերազմ լինի ի մէջ մեծամեծաց, անտի բազում պակասութիւն լինի...», «Բանն մարմին եղև և բն.: Խորհուրդ մարմնանալոյն Քրիստոսի խոր էր», «Ասեն իմաստունք, թէ սուրբ Աստուածածինն նման է աղբեր...», «Սուրբ Աստուածածին նմանի ալբիոն հաւու», «Էր ոմն որ ունէր զշորս...», «Վասն եօթն կնքոյն: Տեսի յաջոյ ձեռին, որ նստիր յաթոռն...», «Ասեն իմաստունք, թէ կայ ձուկն մի փոքրիկ՝ կէս թզաչափ...», «Հաւալասան (sic) թռչունն շինէ զբոյն իւր ի վերայ ծառին և հանէ ձագս...», «Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի: Ի ծով աշխարհիս այսորիկ շինեաց տէրն յերկոտասան քարանց աշտարակ մի», «Ընդէ՞ր Աստուած որոց ոչ գոյր զաւակ՝ աւետեօք ուստր ծնանիլ ետ...», «Գրեալ է, թէ ումեմն սիրելի գնաց յեզր ծովուն...», «Տանուտէր ոմն ի Հռոմ ունէր շուն մի...», «Սոմնացի կինն, որոյ իւղն Եղիսէի աճեցաւ», «Ճրագ մարմնոյ ակն է: Վարդապետք ասեն, թէ ի գործս Աստուծոյ ոչինչ է պակասութիւն...», «Մարդս ի վիշտ կայր՝ վասն առ յապայ բարեացն...», «Ես եմ հովիւն քաջ: Նաթան մարգարէի առակի բազում ոչխարն՝ նշանակէ զբազմութիւնս անհաւատից...», «Ես ձայն բարբառոյ: Էր թագաւոր մի, որ ունէր երկու քաղաք...», «Արդարև յարեաւ տէր և երևեցաւ Սիմոնի, Ղուկաս վերջ: Սուրբ Աստուածածինն նմանի արծւոյ...», «Գրեալ է ի գիրս Թագաւորացն, թէ օրս այսօր բարի աւետեաց է...», «Դարձեալ կենդանի մի կայ, որ կոչի պանթերա...», «Սուրբ Աստուածածինն նման է ոսկւոյ...», «Հուր եկի արկանել յերկիր: Երկրագործքն նախ այրեն զխոպանացեալ երկիրն...», «Ասեն վարդապետք, թէ մարդ որ երթայ ի պատերազմն՝ մինչև ի վերջն մնայ...», «Քրիստոս եօթն մարդոյ նմանութիւն ունէր մի մի մասամբ...», «Ասէ Պօէցիոս, զմահն էջիսրոսի աշակերտին Զենոնի բոլորովին ողբաց Հռոմ...», «Իմաստութիւն շինեաց իւր տուն...», «Էզեն զզենլիս իւր և խառնեաց...»:

Սույն ժողովածուի հետ հմմտ. Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5056՝ «Ի Բարթողիմէոսի գրոց հաւաքեալ» *(էջ 108ա—109բ, սկ.* «Թագաւոր ոմն ունէր ակն մի պատուական», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 364՝* «Բարդուղիմէոսի քարոզ» *(էջ 1, սկ. նույն)։*

9. Գիրք Դատաստանաց։

Բարթ.ի այս երկի բնագիրը հայտնի չէ։ Նրա մասին հեղինակն ինքը, իր «Գիրք դժոխոց» *աշխատության մեջ, հիշատակում է՝ գրելով. «Եւ թէ զիա՞րդ լինին դատաստանն մանական և ընդհանրական, կատարելագույն ասելո՛ց եմք ի Գիրս Դատաստանաց»[1]. Կղեմես Գալանոսը, խոսելով Բարթ.ի քարոզների և այս գրքի մասին, գրում է. «...զբազումս ի մի ժողովեալ զբանս հոգեշահս և զԳիրս Դատաստանաց հայ բարբառով շարակարգեաց»* („multa in unum congessit sermonum, et casuum conscientiae librum, armeno compositum idiomate")[2].

10. Գիրք կամ քարոզ վասն հաւատոյ դաւանութեան, [ի բանն] Առանց հաւատոյ անհնար է *ևն.* «Վարդապետք ասեն թէ, որպէս մարմնոյ աչքն առանց զգալի լուսոյ ոչ կարեն տեսանել...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № (հին?) 397, էջ 209—212*[3]*։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № (հին?) 1610 (էջ 68ա—73բ)։

⊠ *Մենք այստեղ հաշվի չենք առել մի շարք ուրիշ երկեր, որոնք թեև ամենայն հավանականությամբ Բարթ.ի գրչին են պատկանում, բայց նրա անունը չեն կրում։ Այդպիսիներից է, օրինակ,* «Գիրք յարութեան Քրիստոսի» *(սկ.* «Խնդրի թէ պատշա՞ճ էր Քրիստոսի յառնել ի մեռելոց»)[4]:

Երևանի Պետ. Մատ. №№ 3902 (էջ 247ա), 7151 (էջ 132բ), 2382 (էջ 370բ), 2276 (էջ 197ա) և 2269 (էջ 72բ) ձեռագրերից մեզ հայտնի է «Յաղագս հնգից ընդհանրից» *խորագրով իմաստասիրական մի երկ (սկ.* Եւ արդ զի վասն հնգից ընդհանրիցն հանդերձեալ եմք խօսել աստ»), *որի հեղինակությունը Մատենադարանի ձեռագրացուցակում վերագրված է Բարթ.ին, որովհետև ձեռագրերից առաջին երեքում այդ բնագիրը հաջորդում է Բարթ-ի* «Դիալեկտիկայ»*-ին՝ թեև առանց հեղինակի անվան. իսկ վերջին երկուսում առանձին է։ Տվյալ ձեռագրերում մենք հիմքեր չենք գտնում այդ վերագրումը հրաշխավորելու։*

ԺԵ դ. կազմված մատենագիտական մի ցուցակում հիշատակվում է ոմն Օգոստինոս լատին վարդապետ, որի երկերը Հովհաննես

---

1 *Տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5375, էջ 164ա։*

2 Cl. Galanus. „Conciliatio", pars I, Romae, 1650, p. 510.

3 *Հմմտ.* Van den Oudenrijn, § 452.

4 Van den Oudenrijn, § 457.

Որոտնեցու օրով հայերենի էին թարգմանվել. «Օգոստինոս վարդապետն արար հակաճառութիւնք ընդդէմ Հայոց և Յոյնաց, թէ Հռոմայ պապն է՛ գլուխ ամենայն ազգաց, նա և Հայոց...։ Եւ արար Օգոստինոս քարոզգիրք մի այլ, յոյժ պիտանի և լի իմաստասիրական բանիւք։ Եւ արար մեկնիչ մի այլ Զ. օրեայ գրոցն Բարսղի Կեսարացւոյն», և այս երկերի թարգմանիչը եղել է ոմն Հակոբ վարդապետ Կողբացի[1]։ Ինչպես երևում է այստեղ պարզապես անունների շփոթություն կա. Օգոստինոսն ուրիշ մեկը չէ, եթե ոչ Բարթ. Բոնոնացին, իսկ նրա երկերի թարգմանիչը՝ Հակոբ Քռնեցին, որը ցուցակում անվանվում է Կողբացի։

Բ.—ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ունիտորական գրականության թարգմանությունների առաջին շրջանում Բարթ. Բոնոնացին լայնորեն մասնակցել է թարգմանչական գործունեությանը։

Նա 1330 թ. լատիներենից հայերենի է թարգմանել Քարոզողների կարգի ժամագիրքը, որից մի օրինակ այժմ պահվում է Փարիզում (Bibl. Nat. Ms. Arm. 105)։ Այս թարգմանությունը վերախմբագրման և լրացումների ենթարկվելով ԺԷ դարում Գրիգոր Ծործորեցու կողմից, իսկ ԺԸ դարում՝ Պետրոս Խոշկաշինեցու և Գրիգոր Ճահկեցու կողմից, տպագրվել է. «Գրէվիար որ է ժամագիրք սրբազանի կարգին Եղբարց Քարոզողաց» (Վենետիկ, 1714)[2]։ Տես և համտ. նաև Վիեննայի ձեռ. օրինակը (KKHB Cod. Arm. 8)։

1333 թ. նա լատիներենից թարգմանել է նաև Քարոզողների Կարգի Պատարագամատույցը և այդ թարգմանությունը, նույնպես վերախմբագրումների ենթարկվելով Գրիգոր Ծործորեցու և Թովմաս Խոշկաշինեցու կողմից, հրատարակվել է ԺԸ դարում. «Միսալ որ է Պատարագամատոյց սրբազանի կարգին Եղբարց Քարոզողաց» (Հռոմ, 1728)[3]։ Այս հրատարակության հիշատակարանում է, որ ասվում է, թե «Նախկին թարգմանութիւնն սորա եղև ի երանելւոյն Բարթողոմէոսէ, զարհեպիսկոպոսէ (sic), յերկրէն Իտալիոյ, ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի, յամի Տեառն ՌՅԼԹ, յորժամ հիմնեալ հաստատեաց զսրբազան կարգն Քարոզողաց ի Մեծն Հայաստան, ի գաւառն Նախիջևանու»[1]։ Սակայն, ըստ երևույթին, այս առաջին թարգմանությունը դեռ 1337 թ. սրբագրության էր ենթարկվել և կամ, գուցե, կիսատ մնացած լինելով, լրացվել Պետրոս Արագոնացու և Հակոբ Քռնեցու ձեռքով, ինչպես ենթադրել է տալիս Պատարագամատույցի այն ընդօրինակությունը, որը գտնվում է այժմ Փարիզում (Bibl. Nat. Ms. Arm. 106)։

Բարթ.ի Քարոզգրքի ձեռագրերում եղած հիշատակարաններից երևում է, որ ինքը և Հակոբ Քռնեցին միասին են թարգմանել քարոզները պարսկերենից։ Հիշատակարանում Բարթ.ը գրում է. «Եւ թէ սղալումն ինչ գտցէ [ընթերցողն]՝ թողութիւն արասցէ, վասն զի օտար լեզուով, որ ոչ գիտէի կատարեալ, թարգմանեցի, այսինքն պարսիկ լեզուով ի Հայս...։ Եւ թարգմանեցաւ գիրքս այս ի ժամանակին՝ յորում էր թիւ մարդեղութեանն Քրիստոսի Աստուծոյն մերոյ Ռ. ԳԾ. ԼԱ (1331)»[2]։ Իսկ Հակոբ Քռնեցին ավելացնում է. «Զի տէր Բարդողիմէոս ուսեալ էր զպարսիկ լեզուն, նաև ես սակաւ մի ծանօթ էի այն լեզուին, որով և զգիրքս զայս բազում ջանիւ փոխեցաք ի հայս, ի գեղեցկանիստ երկիրս որ կոչի Երնջակոյ գաւառ, ի գեղս Քռնա»[3]։

Ըստ այսմ՝ Բարթ.ի քարոզները պարսկերենից են թարգմանվել, բայց անհավանական չէ, որ որոշ քարոզներ էլ թարգմանված լինեն լատիներենից և կամ՝ գուցե սկզբում պարսկերենից թարգմանվածներն էլ հետագայում վերանայված լինեն նրանց լատ. բնագրերի հիման վրա։ Մեզ թվում է, որ այդպիսիներից է, օրինակ, «Զգոյշ լերուք

---

1 Աստ, հտ. Ա., էջ LVIII.

2 Համտ. Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա., էջ 859—862։

3 Համտ. անդ, էջ 1176—1178։

1 Համտ. անդ, էջ 1177։

2 Van den Oudenrijn, § 162. Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 216։

3 Van den Oudenrijn, § 162. Լ. Ս. Խաչիկյան, էջ 216։

ի սուտ մարգարէից» բնաբանով գրված քարոզը, որը տարբեր ժողովածուներում գտնվում է երկու տարբեր խմբագրությամբ[1]:

Ղ. Ալիշանի հիշատակած տեղեկությունների համաձայն Բարթ.ը թարգմանած պիտի լինի նաև Թովմաս Ակուինացու «Յաղագս խորհրդոց սուրբ եկեղեցւոյ» գիրքը: Այդ մասին նա ասում է. «Զորմէ գրէ Արագոնացին [Պետրոս] ի Դատաստանագիրսն, եթէ բոլոր թարգմանեալ է յեպիսկոպոսէն Բարդողիմէ»[2]: Սակայն, ինչպես հայտնի է, «Յաղագս խորհրդոց սուրբ եկեղեցւոյ» երկի թարգմանիչը Յովհաննես Ծործորեցին է, որին հավանաբար օգնել է Բարթ.ը: Այդ թարգմանության համար իր գրած նախաբանում նա ասում է. «Մեք որ հանդերձեալ եմք բուռն հարկանել զաստուածային խորհրդոց շարադրութեանս ի ձեռն թարգմանութեանս, եթէ կարիցեմք ըստ կարողութեան արտաքս բերել զաստուածային մարգարիտն յանատակ ծովէն ի գանձուցն Աստուծոյ... յորում զծաղիկս զայս հաւաքեցաք ի հոգևոր բուրաստանէն, յաւելլով իրս ինչ ի սրբոց վարդապետաց և յիմաստասէր փիլիսոփայից»[3]: Այս խոսքերից պարզվում է, որ թարգմանված գործը Բարթ.ի ձեռքով կատարված մի քաղվածք է Ակուինացու գրքից՝ ուրիշ հեղինակներից ևս կատարված ինչ ինչ հավելումներով, իսկ խմբագրական այս աշխատանքը կատարելիս Բարթ.ը պետք է օժանդակած լինի նաև թարգմանչի աշխատանքին: Այսպես պետք է հասկանալ նաև Թովմա Ակուինացու «Գիրք ընդդէմ հեթանոսաց» երկի թարգմանությունը՝ «սատարութեամբ Բարդողիմեայ»[4]:

Բարթ.ի երկերում առհասարակ շատ են թարգմանական մասերը: Ղ. Ալիշանի գնահատմամբ՝ նրա «Ի վերայ երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս» գիրքը համարվում է «թարգմանօրէն յօրինեալ» մի գործ[1], կամ թե նրա «Գիրք Դժոխոց»-ը՝ «թարգմանութիւն Բարդողիմեայ և Քոնեցւոյն»[2]: Այս իրողությունը շատերին թելադրել է նաև այն սխալ կարծիքը, թե Բարթ.ը լատ. Վուլգատայից թարգմանել էր նաև Սաղմոսարանը և ամբողջ Աստվածաշունչը[3]: Այնու հանդերձ՝ ամենայն հավանականությամբ նրա թարգմանությունն է «Կանոնք երանելոյն Օգոստինոսի եպիսկոպոսի վասն վարուց կրօնաւորաց» երկը[4]:

1 Հմմտ. վերևում՝ Քարոզգրքի երկու ժողովածուները. ձեռ. № 2183, § ծզ, և ձեռ. № 5375, § ժա:

2 Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 384:

3 Բ. Կյուլեսերյան, «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի Հայոց», Անթիլիաս, 1961, էջ 493—494:

4 Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 3844:

1 Անդ, էջ 384:

2 Անդ, էջ 385:

3 Van den Oudenrijn, §§ 154, 433.

4 Ibidem, § 461.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև. — «Սիսական», Վենետիկ, 1893, էջք 374—375, 383—384, 386 և 479:

Անդրիկյան Ներս. — «Ուրուագիծ հայ մատենագրութեան», Բազմավէպ, 1911, էջ 433—443:

Գաբրիելյան Հ. — «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն», հտ. Բ, Երևան, 1958, էջ 115—119:

Գալանոս Կղ. — Տես ստորև՝ Galanus Cl.

Դուրյան Եղ. — «Պատմութիւն հայ մատենագրութեան», Կ. Պոլիս, 1885, էջ 67—68 և 73:

Զարբհանալյան Գար. — «Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց», հտ. Բ (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 9—12, 197—202:

Թոփճյան Հակ. — «Կաթոլիկ գրականութիւնը Արմաշի ձեռագիրներուն մէջ», Հասկ (հայագիտ. տարեգիրք), Անթիլիաս, Բ տարի, 1949/50, էջ 294—309:

Հովհաննիսյան Աշ. — «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», հտ. Ա, Երևան, 1957, էջ 489:

Հովսեփյան Գար. — «Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ», հրատ.

Բ, Անթիլիաս, 1969, էջ 284—286, 288—289 և 388—389։

Ոսկյան Գևորգ — *«Համառոտ ակնարկ մը քարոզող և միաբանող եղբարց պատմութեան Հայաստանի մէջ»,* Բազմավէպ, *1922, էջ 19—21, 49—51։*

Սույն հոդվածի շարունակությունն է հետևյալը.

Ոսկյան Գևորգ — *«Հայ-դոմինիկեան մատենագիտական ծանօթագրութիւններ», անդ, 1922, էջ 138—139, 229—231, 262—263. 1923, էջ 35—39։*

Տալիս է M. A. van den Oudenrijn-*ի* „Annotationes bibliographicae Armeno-Dominicanae" *երկի (Հռոմ, 1921) ամփոփումը։*

Չամչյան Միք. — *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 326—328։*

Պետրովիչ Գր. — *«Միաբանող եղբայրները և հայ եկեղեցին (1330—1360)»,* Հանդէս Ամսօրեայ, *1969, էջ 357—370 և 466—486։*

Օրմանյան Մաղ. — *«Ազգապատում», հտ. Բ, Բեյրութ, 1960, §§ 1273—1275։*

Galanus Cl. — „Conciliatio Ecclesiae Armenae cum Romana *(Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ)»,* pars I, Romae, 1650, p. 508—522.

Lagier Ch. — „L'Orient chrétien des apôtres jusqu'à Photius (de l'an 33 à l'an 850)", Paris, 1937.

Սույն գրքի մասին տես Կ. Ամատունու հոդվածը, Բազմավէպ, *1937, էջ 193—201։*

Oudenrijn (Van den) M. A. — „Annotationes bibliographicae Armeno-Dominicanae", Romae, 1921.

Արտատպ. *Analecta Ordinis Praedicatorum* *պարբերականից, 1921 թ., էջ 29—36, 97—102։*

Oudenrijn (Van den) M. A. — „L'évêque dominicain fr. Barthélemy, fondateur supposé d'un couvent dans le Tigré au 14ᵉ siècle", *Rassegna di Studi Etiopici*, 1946, p. 7—16.

Oudenrijn (Van den) M. A. — „La lettre encyclique de Jean de Qrhnay dans la 'Conciliatio' de Galanus", *Neue Zeitschrift für Missionswissenschaft*, 1947, S. 25—38.

Հայ. թարգմանությունը՝ «Յովհաննէս Քռնեցիի ընդհանրական թուղթը Կալանոսի 'Conciliatio'-*ին մէջ»,* Հասկ *(հայագիտ. տարեգիրք), Անթիլիաս, Բ տարի, 1949/50, էջ 199—208։ Թարգմանիչ՝ Գնել ծ. վարդապետ [Ճերեճյան]։*

Oudenrijn (Van den) M. A. — „Les Frères Uniteurs de l'Arménie Orientale", *Catholica Unio*, t. XIX, 1951, p. 43—47.

Oudenrijn (Van den) M. A. — „Notes sur quelques ouvrages arméniens de provenance dominicaine", Բազմավէպ, *1951, էջ 40—43, 61—65, 113—117։*

Oudenrijn (Van den) M. A. — „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum", Bernae, 1960, §§ 14—6, 19—20, 45, 125, 161—64, 167—68, 171, 180—81, 184, 187, 189, 277, 356—57, 430, 433—34, 436—37, 440, 447—59, 461, 480, 512, 560, 583 et p. 304.

Quetif J. et Echard J. — „Scriptores Ordinis Praedicatorum recensiti", t. I, Lutetiae Parisiorum, 1719, p. 581—582.

Somal P. S. — „Quadro delle opere di vari autori anticamente tradotte in armeno", Venezia, 1825, p. 38.

Tournebize Fr. — „Les Frères-Uniteurs ou Dominicains arméniens", *Revue de l'Orient Chrétien*, t. II, 1920/21, p. 145—161.

ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԾԻԴՈԿԻԱՑԻ

ԺԴ դ. եկեղեցական-հասարակական գործիչ, Խաչատուր Կառնեցի Առաքելյանի մերձավորներից։ Երկար ժամանակ գործել է Լիվոռնոյի (Իտալիա) և Կրայովայի (Վալախիա) հայ գաղութներում հռոմեական եկեղեցու օգտին՝ «առաքելական միսիոնար» կամ «նուիրակ առաքելական» տիտղոսով. Եռանդուն աշխատանք է կատարել լատինական

եկեղեցու կարգերն ու սովորույթները հայերի մեջ տարածելու (նոր տոմարն ընդունել տալ, տերունական տոները լատինների հետ միասին կատարել են)։ Տպագրությամբ նրանից մեզ հայտնի են Մխիթար Սեբաստացուն ուղղված չորս նամակներ, որոնցից առաջին երեքը գրված են Լիվոռնոյից (15 հոկտ. 1717 թ.—23 հունվ. 1719 թ.—22 մայ. 1719 թ.), իսկ չորրորդը՝ Վիեննայից (23 հունս. 1733 թ.)։ Տես՝ Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, §§ Թ, ԺԵ, ԺԸ և ԽԷ (էջ 10—11, 17, 19—20 և 47—48)։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ (Յովհաննէս) ԼՈՄԲԱՐԴԱՑԻ
(Joannes Bartholomaeus Lombardus)

Հայերենագետ լոմբարդացի, անդամ Քարոզող եղբայրների միաբանության (Ordo Praedicatorum). ապրել է ԺԷ/ԺԸ դդ.։ Գործել է նաև Պարսկաստանում, ուր շփման մեջ է եղել հայերի հետ։ Հռոմի Ս. Սաբինայի վանքում թարգմանաբար և համառոտելով վերաշարադրել է Մովսես Խորենացու Պատմությունը՝ լատ. լեզվով. „Breve commentariolum (sic) de origine nationis Armenorum et eorum Parthorumque regibus; ex commentariis Moysis Grammatici, inter Armenos doctoris celeberrimi, qui circa annum Domini nostri Jesu Christi 430 floruit, breviori stylo compositum per fratrem Johannem Bartholomaeum a Sancto Hyacinto Italum Longobardum Ordinis Praedicatorum“.

Այս աշխատությունը ծանոթագրություններով հրատարակված է շվեդացի արևելագետ Հենրիկոս Բրենների կողմից. տես՝ „Epitime commentariorum Moysis Armeni, de origine et regibus Armenorum et Parthorum, item Series principum Iberiae et Georgiae, cum notis et observationibus Henrici Brenneri“, Stockholmiae, 1723, p. 1—23.

Հեղինակի մասին տես նաև Գ. Ա. Շրումպֆ և Գ. Զարբհանալյան, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», Վենետիկ, 1895, էջ 46—47։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ՇՈՒՇԱՆԵՑԻ

Ծնվել է Վանի Շուշան գյուղում։ Վարագում աշակերտել է Կարապետ Կալո Մոկացի «քաջ և անյաղթ վարդապետին»։ Եղել է Վասպուրականի առաջնորդ և Վարագի վանահայր. հիշատակվում է 1711—1724 թթ.[1]։ Վերաշինական աշխատանքներ է կատարել Վարագում և վերականգնել նրա քայքայված տնտեսությունը։ Ղ. Փիրղալեմյանը վրիպմամբ նրան է վերագրել և այդպես էլ Գ. Աղանյանը հրատարակել է պատմական մի հիշատակարան (տես՝ «Դիւան հայոց պատմութեան», հտ. 10, էջ 153—156), ուր նկարագրվում է 1679—1721 թթ. ընթացքում Վարագի վանահայրերի, որոնց թվում նաև Բ. Շուշանեցու, գործունեությունը. ըստ այսմ պարզ է, որ հիշատակարանի հեղինակը ոչ թե նա է, այլ Վարագի միաբաններից մեկը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղանյան Գ. — «Բարթուղիմէոս Շուշանցի», Դիւան, հտ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ ԽԶ։

Ոսկյան Համ. — «Վասպուրական-Վանի վանքերը», մաս Ա, Վիեննա, 1940, էջ 325—330։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ՍԱԼՈՒՏԻԱՑԻ [ՍԱԼՈՒԿԻԱՑԻ]
(Bartholomaeus a Salutio)

Իտալացի հեղինակ։ Ծն. Տոսկանայում՝ Սալուտիոնի (Salutium, իտալ. Saluzzo) մոտ, մեռ. 1617 թ. Հռոմում։ Նրանից ԺԷ և ԺԸ դարերի հայ. թարգմանությամբ մեզ հայտնի են երկու աշխատություններ։

* * *

1. Գիրք կոչեցեալ Նօրնփողեան առ ի զարթուցանել զմեղաւորն ի յապաշխարութիւն և հանգուցանել զսիրտ նորին ի զարհուրելի նէշմանց, յոյժ շահաւէտ վասն փըր-

[1] Նա 1711 թվականից աթոռակից էր դարձել վանահայր Ստեփանոս Մոկացուն (տես «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 365. հտ. Բ, էջ 485)։

կութեան հոգւոց մեղաւորաց: Շարադրեալ ի պատուելի հօրէ Բարթուղիմէոսի Սալուցիոյ, եղբայր և միաբան փոքրագոյն և խոնարհ կարգին կրօնաւորականի: Թարգմանեալ ի Պետրոս վարդապետէ Կոստանդնուպօլ[սեցւոյ], ի յիտալական լեզուէ ի հայ բարբառ ի փառս Աստուծոյ և ի պատիւ ամենաստ[ւ]րբ կուսին Մարիամու, և ի յօգուտ ազգին իւրոյ: *Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 101, էջ 1—214։*

Խորագրին հաջորդում են լրացուցիչ տեղեկություններ. «Եւ նախկին գաղափարն եւ թարգմանիչն՝ շնորհ. Յոնան վարդապետին սրբազան առնն Աստուծոյ և յիշատակ սուրբ վանիցն Մշու Սուրբ Կարապետի, որ ի Տարօն։ ՌՄԺԶ (=1767), մարտի ԻԲ, յորմէ օրինակեցաւ եղև այս», «Յամի տեառն 1767 և մարտի ԻԲ ի Բիւզանդիայ (sic), երկրորդաբար եղև օրինակեցաւ ի մանկատան սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետի»։

Բնագրի վերջում կա թարգմանչի հետևյալ հիշատակագրությունը. «Եղերեցաւ փոքր գրքուկս այս Եօթնափողեան 1612 և ապրիլի 13, հնազանդ ամենայն պատրաստութեամբ մօր սրբոյ կաթուղիկէ եկեղեցւոյ։ Ո՛վ մայրդ իմ ցանկալի, սուրբ եկեղեցի Հայաստանեայց, ահա զայս երրորդ գիրքս աշխատութեան, որ ի յիտալական ծովածոցէ արտահանեալ քեզ ընծայի թարգմանութեամբ իմով ի փառս սուրբ փեսային քոյ և տեառն իմոյ և ի պատիւ քեզ, ընկալցես իբրև զլումայն այրւոյն ի գանձարանս քո»։

Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 529 (էջ 7), որն ընդօրինակվել է 1766 թ., և № 685 (էջ 211), ընդօրինակություն 1812 թ.—Զմմառի վանքի ձեռ. № 378 (էջ 1ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 723 (էջ 2ա—67բ?), № 1060 (էջ 1ա—120բ?)։

Ձեռագրերում խոր. պատահում է նաև՝ «Գիրք Եօթնփողեան», «Գիրք Եօթնափողեան», «Փող Եօթնատեսակ» *ձևերով։*

2. Խղճահար: Շարադրեալ ի վերապատուելի հայր Բարդուղիմէոսէ Սալուկիացւոյ, ի փոքր կարգէն սրբոյն Ֆռանչիսկոսէ (sic): Թարգմանեցեալ ի Յօ[վ]հաննէսէ աստուածաբան վարդապետէ Նիկոմիդացւոյ Մինասեան տէր Աստուածատրոյ: Եւ ի փառս և ի պատիւ աստուածային հանդիսավեհութեանն, և ի մխիթարութիւն հոգւոյ աղքատաց նեղելոց և տանջեցելոց, ի յայսպիսւոյ պատժական, և ի նեղիչ հիւանդութենէ խղճահարաց: *Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռ. № 76։*

Ձեռագիրն ունի Դ+44 էջ։ Վերջում՝ հիշատակարանը.

«Ի գովութիւն և ի պատիւ... վերջացաւ այս փոքրիկ գրգուկս, թարգմանեցեալ ի լեզուէ իտալականէ և ի լատինէ առ հայկական բարբառս կոչեցեալ Խղճահար, յամի Տեառն 1723 Յունվարի 1, որ էր տարեմուտ։ Ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլսի, ի տան ումեմն քրիստոնէի, ի փառս խաչեցելոյն Յիսուսի։ Թարգմանեցեալ ի Յօ[վ]հաննէսէ վարդապետէ Նիկոմիդացւոյ։ Յանուն Հօր և Որդւոյ և Ոգւոյն Սրբոյ. ամէն»։

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԱՐՈԶԳԻՐ

Հայ հեղինակ մի շարք քարոզների, որոնք մեզ հայտնի են Երուսաղեմի № 1842 ձեռագրից[1]։ Ինքնությունն անհայտ է։ Ենթադրում ենք, որ ապրել է Կ. Պոլսում՝ մոտ. ԺԷ դ. վերջերում կամ ԺԸ դ. սկզբներում, որովհետև ձեռագրում կան նաև «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկը՝ Երեմիա Չելեբիի թրք. թարգմանությամբ։ Նույն ձեռագրում Բարթ. վրդ.-ի քարոզների հետ մեջ ընդ մեջ կան նաև քարոզներ ուրիշ երկու հեղինակներից (Հովհաննես պատրիարք և Թադեոս վարդապետ)։

* * *

1. Քարոզ ի խորհուրդ Մեծահրաշ Կիւրակէին. «Զմռսալիր երկիւղածութեամբ...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1842, էջ 46։*

2. Քարոզ վասն գալստեան Հոգւոյն Սրբոյ. «Աղբիւրն կենաց...», *անդ, էջ 61։*

3. Քարոզ զկնի Պենտեկոստէի, դարձեալ Եղիա մարգարէին Կիւրակէի. «Եւ եղև ի վերացուցանել Տեառն զեղիա շարժմամբ յերկինս...», *անդ, էջ 71։*

1 *Տես՝ Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Զ, էջ 219—220։*

4. Քարոզ դարձեալ յաւուր Ելմանն Լուսաւորչին ի վիրապէս, և ի վերայ Թադէոսի. «Ի վերայ այնր բանի կայծակնամաքուր մարգարէին Եսայեայ...», անդ, էջ 80։

5. Քարոզ Գիւտի նշխարաց սուրբ Լուսաւորչին. «Ի վերայ այնր բանի զոր ասէ արքունին ի մարգարէս աստուածահայրն Դաւիթ...», անդ, էջ 101։

6. Քարոզ համառօտ ի վերայ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. «Ի վերայ այնր բանի զոր ասէ մարգարէն Միքիա...», անդ, էջ 111։

7. Քարոզ ի վերայ Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին. «Ի վերայ այնր բանի զոր արքայածինն Սողոմոն ասէ...», անդ, էջ 136։

8. Քարոզ յաղագս հեզութեան և պատուիրանապահութեան. «Ի վերայ այնր բանի զոր ասէ աստուածաբանն ի մարգարէս կայծակնամաքուրն Եսայիաս...», անդ, էջ 174։

Բացի սրանցից՝ Բարթ. վրդ.ն ունի ուրիշ 8 քարոզներ ևս, որոնց նկարագրությունը չի տրված ցուցակագրողի կողմից։

ԲԱՐԹՈՒՄԱ

Տես՝ ԲԱՐՍՈՒՄԱ ՄԾԲՆԱՑԻ։
ԲԱՐՍՈՒՄԱ ՊԱՏՄԱԳԻՐ։

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԷՔ

Տես՝ ԴԱՒԻԹ ՀԱՐՔԱՑԻ (?), «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ»։

ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ

Տես՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ։
ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ։

ԲԱՐՈՅԱԽՕՍ

Տես՝ ԲԱՐՈՒԱԽՕՍ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Տես՝ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԹԵՍԱԻՐՈՍ, «Իմաստասիրութիւն բարոյական»։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՔ

Բարոյական խնդիրք համառօտաբար ծաղկաքաղ արարեալք ի պէսպէս երևելի և ընդունելի և հաստատուն հեղինակաց. և ի մի գիր բովանդակեալ յօգտասէր անձնէ ումեմնէ։ Հռոմի Լևոնյան հայ վարժարանի ձեռ. № 26։

Ձեռագիրը 1829 թ. ընդօրինակություն է։

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՑԵՂԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆՔ

Տես՝ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ, § 58. ծան.։

ԲԱՐՈՆՉ (Նիկողայոս)
(Mikolaj Barącz)

Լեհահայ եկեղեցեական-հասարակական գործիչ, ԺԸ դ. երկրորդ և ԺԹ դ. առաջին կեսում։ Երկար ժամանակ եղել է Լվովի հայկական դրամատան տնօրենը։ Ունի 1782 թ. Լվովի արքեպիսկոպոսին ուղղված լեհ. մի նամակ, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ղրիմի հայերի վերաբերյալ, ինչպես և Ղրիմի թաթարների դեմ կազակների մղած պայքարի մասին։ Մեռ. 1831 թ.։ Այդ նամակի ամբողջական բնագիրը, հեղինակի մասին կենսագրական տեղեկություններով, տես՝ Sad. Barącz, „Żywoty sławnych Ormian w Polsce“, Lwów, 1856, str. 64—67.

ԲԱՐՈՒԱԽՕՍ
(Physiologus)

Կոչվում է նաև Բարոյախօս *կամ* Բնախօս*։ Առակների և առակատիպ զրույցների հունական հին ժողովածու, որն ըստ երևույթին մեր թվականության Բ դարում է կազմվել Ալեքսանդրիայում (Եգիպտոս)։ Ունի հայտնապես քրիստոնեական դրոշմ, բայց նրա ծագումն անտարակույս հին աշխարհի հեթանոսական ու թալմուդական աղբյուրներից է։ Բար.ն սկզբնաբար իր նյութն առել է,*

ինչպես ցույց են տալիս նրա հնագույն խմբագրությունները, միայն կենդանական աշխարհից, բայց հետնագույն խմբագրություններում պատահում ենք որոշ չափով նաև ծառերի ու քարերի անունների և նույնիսկ զուտ մարդկային հերոսների. այնուհանդերձ կենդանաբանական նյութը մնում է գերակշռող և կազմում նրա հիմնական նկարագիրը: Ցամաքային կենդանիներից նկարագրված են, օրինակ, մողեսը, առյուծը, գայլը, աղվեսը, հովազը, բորենին, իժը, օձը ևն. օդայիններից՝ ագռավը, քարադրոսը, հավալուսնը, բուն, արծիվը, փյունիկը ևն. ջրայիններից՝ սղոց ձուկը, վահանակրիան ևն. Նկարագրված են նույնիսկ հուշկապարիկները, որոնց «մինչև ի պորտն կնոջ մարդոյ և միւսն թռչնոյ է» կամ «կէսն իշոյ և կէսն ցլոյ» ևն: Բար.ը, նկարագրելով իրական և երևակայական կենդանիների բարքերն ու հատկությունները, նրանց օրինակով այլաբանորեն հանում է ուսանելի եզրակացություններ: Օգտագործելով հայերեն թարգմանության բնագիրը՝ ասենք, որ առակներին և զրույցներին երբեմն տրվում է կենցաղային բնույթի մեկնաբանություն՝ «Խրատէ առասպելս ի թշնամեացն խրատուէ զգուշանալ», «Ցուցանէ առակս, թէ ամենայն մարդ, որ գրկէ զոք, զինչ և իցէ գրկանքն, հուր լինի իրքն այն» ևն. իսկ երբեմն կրոնաբարոյական բնույթի մեկնաբանություն՝ «Նոյնպէս և սատանայ քծնի կերպարանօք, զբազումս կորուսանէ» ևն: Այս ժողովածուի անունն առնված է նրա մաս կազմող առակների և զրույցների սկզբին հաճախակի կրկնվող առաջին բառերից՝ «Բարուախօսն (կամ Բարոյախօսն, Բնախօսն) ասէ», «Որպէս ասէ Բարուախօսն (կամ Բարոյախօսն. Բնախօսն)» ևն: Հայ. ձեռագրերում հավասարապես պատահող անվանաձևերից Բարուախօս-ը կերտված է «բարք» բառից, Բարոյախօս-ը՝ «բարոյք» բառից, իսկ Բնախօս-ը՝ «բուն» (բնություն) բառից. դրանք հուն. Φυσιολόγος բառի տարբեր թարգմանություններն են և ներկայացնում են միևնույն իմաստը:

Բար.ի հունարեն բնագրի քննական հրատարակություններ են տվել J.-P. Migne-ն (տես „Patrologia Graeca“, t. XLIII, p. 517—534), F. Lauchert-ը (տես նրա „Geschichte des Physiologus“, Strassburg, 1889, S. 229—279) և A. Karnejev-ը (տես *Byzantinische Zeitschrift*, Bd. III, 1894, S. 32—63). Բար.ը միջին դարերում տարածված էր շատ լեզուներով: Նրանց մեջ հնագույններից մեկը լատիներենն է, որը համարվում է Գ դարից: Հին թարգմանություններ ու խմբագրություններ հայտնի են նաև ասորերեն, հայերեն, ղպտերեն, եթովպերեն, արաբերեն, միջին-հունարեն, վրացերեն, բուլղարերեն, սերբերեն, ռումիներեն, ռուսերեն, հին-ֆրանսերեն, հին-գերմաներեն, անգլոսաքսոներեն, իսլանդերեն և այլ լեզուներով: Բար.ի հայ. թարգմանությունը կատարված է համարվում Ե/Զ դարերում: Այդ թարգմանությունից այժմ մեզ հայտնի են ձեռագիր բազմաթիվ օրինակներ, որոնք այլազան խորագրեր են կրում և ներկայացնում են մի քանի խմբագրություններ: Հայ. Բար.ի առաջին հրատարակությունը եղել է 1885 թվականին Հ. Բ. Պիտրայի կողմից: Հետագայում Ն. Մառը տարբեր ձեռագրերի հիման վրա տվել է երկու նոր հրատարակություններ, որոնք և բնագրի տարբեր խմբագրություններ են ներկայացնում: Մառն ապացուցել է, որ վրացերեն Բար.ն անառարկելիորեն հայերենից է թարգմանվել: Մառը նաև ուշադրություն է հրավիրել այն երևույթների վրա, որոնք Բար.ի ազդեցությունն են մատնանշում հայ միջնադարյան գրականության և արվեստի բնագավառներում: Որպես գրական ազդեցության նմուշներ նա փաստեր է ցույց տվել Ե դարի մատենագիրներ Եզնիկի և Եղիշեի մոտ, ինչպես և ուրիշների, իսկ հայկ. ճարտարապետության բնագավառից՝ ԺԲ/ԺԳ դարերի եկեղեցիների պատերը զարդարող կենդանական քանդակները և նույնիսկ Աղթամարի դեռ Ժ դարում կառուցված Ս. Խաչ եկեղեցու պատերին քանդակված կենդանական կերպարները ևն: Բար.ի ազդեցության հետքեր երևում են նաև հայ մանրանկարչության մեջ:

Բար.ի հայ. և այլ լեզուներով հրատարակությունների և հայ. ձեռագիր օրինակ-

ների մասին, ինչպես և նրանց վերաբերող գրականությունը տես՝ ԱՌԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ։ Այստեղ կարող ենք ավելացնել նաև հետևյալ ձեռագրերը. Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2174՝ «Խօսք Եպիփանու Կիպրացոյ» (էջ 10ա—28ա, սկ. «Բարիոք ասաց Բարիախաւսն յաղագս առիւծու»), № 4749՝ «Խրատք իմաստնասիրաց և ուղղափառ վրդ.աց վասն գազանաց և սողնոց և ոյք ի նոսա սահմանեալ կան։ Յաղագս օրինակի մեղաւորաց և արդարոց որ կան ի սահմանին Աստուծոյ» (էջ 442բ—448ա, սկ. «Բարւախօսն ասէ զառիւծէ որ թագաւոր է ի վերայ ամենայն անասնոց»). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 31՝ անխոր. (էջ 95ա—105բ, սկ. «Կենդանի մի կայ կարի անոխակալ»). № 791 (էջ 412ա—415բ?, սկզբից թերի), № 988՝ «Բանք առակաւոր, զոր ասացեալ է Բարուախօսն։ Զբարս իւրաքանչիւր անասնոց քննել արտասահմանել ունի յինքեան տաւս և զանազան կերպարանօք նշանակէ զմանս զերազանցեալ» (էջ 10ա—30ա, սկ. անհայտ), № 1130՝ «Սրբոյն Եպիփանու Կիպրացւոյ արքեպս.ի Խօսք յաղագս բարուախօսին» (էջ 25ա—35բ?, սկ. «Բարիոք ասաց Բարուախօսն յաղագս առիւծոյն»), № 1133՝ անխոր. (էջ 150բ—158ա, «Քանզի Յակոբ յորժամ օրհնեաց զորդի իւր զՅուդա»), № 1299 (էջ 1ա—17բ, սկզբից թերի). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 251՝ «Յաղագս վասն ազգի մարդկան, որ Բարուագիրք»[1] (էջ 296ա—313բ, սկ. «Է գազան մի մեծ ի ծովն»), № 265՝ [«Առակ յԵրեմիայ մարգարէութենէ»] (էջ 418ա—418բ, սկ. «Զայն առար կաքաւն և ժողովեաց զձագսն՝ զոր ոչ իւր ծնեալ։ Բարուախօսն ասէ զկաքաւէ թէ զայլոց ձուս թխ[ս]է և ձագս հանէ, քանզի զօտարին ձուն գողանայ»)[2]. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 372՝ «Բանք առակաւորք զոր ասացեալ է Բարւախօսն» (էջ 797ա, սկ. «Զբարս իւրաքանչիւր անասնոցն»), № 536՝ «Բարուախօս քաջ փիլիսոփայէ խրատ և իմաստութեան առիթ՝ ասացեալ յաղագս կարգաւորաց և կրօնաւորաց» (էջ 317ա, սկ. «Զբարս իւրաքանչիւր ազգաց զաղափարելով»), № 792՝ «Խրատք իմաստա[սի]րաց և ուղղափառ վարդապետաց վասն գազանաց և սողնոց և ոյք ի նոսա սահմանեալ կան, յաղագս օրինակի մեղաւորաց և արդարոց» (էջ 435ա, սկ. «Բարուախօսն ասէ զառիւծէ, որ թագաւորէ ի վերայ ամենայն անասնոց»), № 1352՝ «Բանք առակաւորք զոր ասացեալ է Բարուախօսն» (էջ 263ա, սկ. «Զբարս իւրաքանչիւր անասնոցն քննել արտասահմանել ունի յինքեան տաւս»), № 1622՝ «Բարուախաւս ասէ վասն առիւծուն» (էջ 697ա, սկ. «Քանզի Յակոբ յորժամ աւրհնեաց զորդի իւր զՅուդա»). Զմմառի վանքի ձեռ. № 503՝ «Բարսեղի Բարուախօսի ասացեալ վասն բարուց իւրաքանչիւր կենդանեացն ի խրատ և ի յօգուտ որդոց մարդկան ի յամօթ և ի նախատինս այնոցիկ որ քան զգազանս և զանասունս վատթար են և անպիտանն գտանիցի» (էջ 73ա—76ա, սկ. «Է զեռուն ինչ որ կոչի մողեզ. արագագնաց է նա»)։

Բար.ի հեղինակը հայտնի չէ։ Այդ մասին բանասիրության մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ, ըստ որոնց նա վերագրվում է Եպիփան Կիպրացուն կամ Պետրոս Աղեքսանդրացուն, Բարսեղ Կեսարացուն, Հովհան Ոսկեբերանին և ուրիշների։ Հայ. ձեռագրերում այս երկը մեծ մասամբ անանուն է և հաճախ խորագրված է՝ «Խրատ իմաստասիրաց և ուղղափառ վարդապետաց», «Բանք խրատականք ասացեալ յիմաստասիրաց» են. բայց երբեմն պատահում է Եպիփան Կիպրացի, Բարսեղ Կեսարացի և Փիլատոս (Փիլոտոս, Փիլոստոս) հեղինակային անուններով։

Փիլատոս-Փիլոտոս անվան կապակցությամբ նշենք, որ Միքայել Ասորու Ժամանակագրության հայ. թարգմանության մեջ, որպես Բար.ի հեղինակ, հանդես է գալիս ոմն Փիլոտոն Արգիւացի. այսպես՝ «Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Արգիացւոցն Պալապոս, ուստի և Փիլօտոն երևեցաւ, բարո-

[1] Ձեռագրում՝ փարուագիրք։

[2] Բ. Սարգիսյանի կարծիքով այս բնագիրը «Թուի լինել ի Բարուախօսէն Ս. Եպիփանի» (տես՝ «Մայր ցուցակ», հտ. Բ, էջ 855—856)։ Մեր կարծիքով այս բնագիրը կարող է պարզապես լինել Երեմիայից առնված բնաբանի մեկնության համար Բարվախոսից բերված մի օրինակ։

յախօսն անասնոց և թռչնոց»[1], կամ՝ «Յայսմ ժամանակի թագաւորեաց Արգիացւոցն Պալամպոս, որ է սկիզբն թագաւորութեան նոցա։ Ի նոցանէ էր Փիլոտոնոսն՝ բարոյախօսն անասնոց և թռչնոց»[2]։

Սակայն այստեղ թյուրիմացություն կա։ Ժամանակագրության ասոր. բնագրում հայերենի վերոհիշյալ հատվածին համապատասխանող մասն այսպես է՝ «Մելամպոս կախարդ ծաղկէր յայսմ ժամանակի։ Թագաւորեաց Արգիացւոցն Պելոպս ամս իննևտասն։ Ի նմանէ առնու Պելոպոնես զանուն իւր»[3]։

Երևում է, որ թարգմանչի ձեռքի տակ եղած ասոր. բնագիրը եղել է մի եղծված օրինակ, ուր իրար են խառնված եղել «ծաղկէր յայսմ ժամանակի», «թագաւորեաց Արգիացւոցն Պելոպս», «ի նմանէ» և «Պելոպոնես» բառերը, որոնց մեջ «Պելոպոնես» աշխարհագրական անունը, ըստ երևույթին ձուլվելով «Մելամպոս»-ի հետ, դարձել է մարդ՝ «Փիլոտոն». վերջինիս «ծաղկիլ»-ը արտահայտվել է «երևիլ» բառով, նրա կախարդ լինելը հասկացվել է որպես «բարոյախօս», իսկ այս բառին, որպես լուսաբանություն, կցված են եղել, կամ թարգմանիչն է կցել, «անասնոց և թռչնոց» բառերը, քանի որ Փիլոտոն (Փիլոտոս) անունն արդեն հայտնի էր որպես Բար.ի հեղինակի անուն։

Հայ. հիշյալ թարգմանությունից փոխառվելով՝ թյուրիմացությունն անցել է Վարդան Արևելցուն՝ «Աստ թագաւորեաց Արգիացւոցն Պելապոս, ուստի Փիլադոսն էր, բարոյախօսն ամենայն կենդանեաց»[4] և Մխիթար Այրիվանեցուն՝ «Աստ Փիլարտոսն բարոյախօս ամենայն կենդանեաց»[5]։

1 «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոց ժամանակագրութիւն» (ընդարձակ խմբագր.), Երուսաղեմ, 1870, էջ 53։

2 «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի» (համառոտ խմբագր.), Երուսաղեմ, 1871, էջ 34։

3 *Հմմտ.* „Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166—1199), éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot“, t. I, Paris, 1963, p. 47.

4 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 20։

5 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 35։

ԲԱՐԹԻՆԱԿ ԱՄԴԵՑԻ

Հայոց նոր վկաներից (1524 թ.)։ Տես՝ ՄԿՐՏԻՉ ԱՄԴԵՑԻ (Հեղինակ Բարունակ կամ Բուդաղ Ամդեցու վկայաբանության)։

ԲԱՐՈՒՆԱԿ ՏԵՂԵՐԳՈՒ

Հեղինակ է սիրային բնույթի մի տաղի, որը, հրատարակչի կարծիքով, ժողովրդական երգերից է մշակված։ Հեղինակի ինքնությունն ու ժամանակն անհայտ են։ Հավանաբար ապրել է ԺԸ դարում։

* * *

Տաղ անուշ. «Առաւօտուն հաւն խօսի, |Զրուցէ, պլպուլ, զրուցէ...» (հրատ. Աս. Մնացականյան), տես՝ «Գիտական նյութերի ժողովածու» (Երևանի Պետ. Մատենադարան), № 2, էջ 197—198։

Հրատարակչի ծանոթագրություններով։ Հրատարակված է Երևանի Պետ. Մատ. № 7708 ձեռագրից։ Վերջին տունն է՝ «Բարունակն կանէ ֆէս[ֆէս],|Դուն այլ չէս պահեր ի պօֆէս,|Քեզի շինած է արծաթէ ղէֆէս,|Զրուցէ, պլպուլ, զրուցէ»։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 9362՝ «Տաղ վարդի և պուլպուլի» (էջ 1ա—2ա), որը նույն տաղի մի բոլորովին ուրիշ տարբերակն է և անանուն է։ Ինչպես երևում է՝ տաղն իսկապես ժողովրդական երգերից է և Բարունակը հավանաբար նրա արտագրողներից մեկն է։

ԲԱՐՈՒՔ
(Baruch)

Հին Կտակարանի գործող դեմքերից, Երեմիա մարգարեի մտերիմն ու գործակիցը, որը գրի է առել նրա մարգարեությունը՝ հրեաների գերեվարման վերաբերյալ, և նրա հետ միասին Եգիպտոս է գնացել՝ Երուսաղեմի առումից հետո։ Հին Կտակարանի գրքերից մեկն է՝ «Թուղթ Բարուքայ»։ Կան նաև Բարուքի անունը կրող պարականոն գրվածքներ, որ հրատարակել են Կար. Տեր-Մկրտչյանը (Էջմիածնում) և Սարգ. Հովսեփյանցը (Վենետիկում)։

* * *

1. Թուղթ Բարուքայ. «Եւ այս են բանք թղթոյն զոր գրեաց Բարուք որդի Ներեայ որդւոյ Մաասայ որդւոյ Սեդեկիայ որդւոյ Ասագայ որդւոյ Քեղկեայ ի Բաբելոն։ Յամին հինգերորդի՝ որ օր եւթն էր ամսոյն, ի ժամանակի յորում առին Քաղդէացիքն զԵրուսաղէմ և այրեցին զնա հրով։ Եւ ընթերցաւ Բարուք զբանս թղթոյս այսորիկ յականջս Յեքոնիայ, որդւոյ Յովակիմայ արքայի Յուդայ, և յականջս ամենայն ժողովրդեանն...»։ *Տես՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ։*

Բաղկացած է Ա—Ե գլուխներից։ Սույն թղթի Զ գլուխն է համարվում Հին Կտակարանի հայ. անվավերական գրքերի շարքին պատկանող «Թուղթ Երեմիայ» *(սկ.* «Վասն անօրէնութեան մեղացն, զոր յանցեայք դուք առաջի Աստուծոյ»)։ *Տես՝ ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷ։ Բայց Ոսկան Երևանցին իր հրատարակած Աստվածաշնչում (Ամստերդամ, 1666 թ.), այս գլուխը լատ. Վուլգատայից թարգմանելով զետեղել է Բարուքի թղթի վերջում՝ Ե գլխից հետո։*

2. Յիշատակ Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարուք[այ]. «Յորժամ հանդերձեալ էին Քաղդեացիքն պաշարել զԵրուսաղէմ, խօսեցաւ Տէր ընդ Երեմիայ և ասէ. Երեմիա՛, ընտրեալդ իմ, ելէ՛ք ի քաղաքէս յայսմանէ՝ դու և Բարուք ընթերցող, քանզի տալոց եմ ի ձեռութիւն զորդիսն Իսրայէլի...», Արարատ, *1895, մարտի հավելված, էջ 1—3։*

Հրատարակվել է էջմ. Մատ. ձեռագրերից։

Այլ տպ.— Վասն Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարուքայ. «Յորժամ հանդերձեալ էին...», *տես՝ «Անկանոն գիրք Հին Կտակարանաց» (Թանգարան հին և նոր նախնեաց, Ա), Վենետիկ, 1896, էջ 349—357։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից՝ համեմատությամբ նախորդ հրատարակության։

3. Պատմութիւն սրբոյն Երեմիայ մարգարէին և աշակերտաց նորա Բարուքայ և Աբիմելեքայ. «Յորժամ կամեցաւ Աստուած մատնել զԵրուսաղէմ ի ձեռութիւն, խօսեցաւ ընդ Երեմիայի և ասաց. Ե՛լ ի քաղաքէս դու և Բարուք դպիրն քո, քանզի տալոց եմ ի ձեռութիւն զքաղաքդ Երուսաղէմ և զորդիսն Յուդայ...», *տես՝ «Անկանոն գիրք Հին Կտակարանաց», էջ 358—364։*

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռագրերից։

4. Ի Մնացորդաց գրոց զոր գտի ի գիրս Հռոմոց. «Եւ եղև յորժամ գերեցան որդիքն Իսրայէլի ի ձեռս թագաւորին Քաղդեացւոց, խօսեցաւ Աստուած ընդ Երեմիայ և ասէ. Երեմիա՛, ընտրեալդ իմ, արի՛ և ե՛լ ի քաղաքէս յայսմանէ դու և Բարուք, քանզի կորուսանեմ զքաղաքս վասն բազմութեան մեղաց բնակչաց դորա...», Արարատ, *1895, մարտի հավելված, էջ 3—8։*

Հրատարակվել է էջմ. Մատ. ձեռագրերից։

Այլ տպ.— Ի Մնացորդաց գրոց *ևն.* «Եւ եղև յորժամ գերեցան...», *տես՝ «Անկանոն գիրք Հին Կտակարանաց», էջ 364—377։*

Արտատպ. է նախորդ հրատարակությունից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սարգիսյան Բարս. — *«Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ», Վենետիկ, 1898, էջ 280—317։*

Տեր-Մկրտչյան Կար. — *«Յաւելուած Արարատ-ի»,* Արարատ, *1895, էջ 81—82։*

ԲԱՐՍԱՄ ԱՆՏԻՈՔՑԻ

Տես՝ ԲԱՐՍՈՒՄԱ ԱՆՏԻՈՔԱՑԻ։

ԲԱՐՍԱՄ ԵԴԵՍԱՑԻ

Տես՝ ԲԱՐՍՈՒՄԱ ԵԴԵՍԱՑԻ։

ԲԱՐՍԱՄ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ կամ ՍԱՄՈՍՏԱՑԻ

Տես՝ ԲԱՐՍՈՒՄԱ ՍԱՄՈՍՏԱՑԻ։

ԲԱՐՍԱՄ [ՊԱՐՍԱՄ] ՏՐԱՊԻԶՈՆՑԻ

ԺԶ դ. հայ տաղասաց, որդի Աստվածատուրի։ Եղել է Լվովի հայոց թեմի առաջ-

նորդը (1579—1583 թթ.)[1]*: Լեհ. աղբյուրներում անվանվում է* Barsumas Bogdanowicz *(Աստվածատրյան): Միքայել երեց Լովեցու խնդրանքով գրել է մի գավեշտական տաղ՝* «Վասն ակռայի»:

* * *

Վասն ակռայի. «Ակռաներս ճալ մի չունի,|Կու խոստէ յիս, չի մնար հոգի,|Թէ տամ քաշել, նա կու ցաւի...», *տես՝ Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», պրակ Ա. Թիֆլիս, 1892, էջ 57—60:*

Հրատարակվել է 1695 թ. մի գրչագիր տաղարանից: Այս օրինակի վերջից երկու տուն՝ հիշատակարանային մասը պակաս է. հմմտ. հաջորդ հրատարակությունը:

Այլ տպ.— Տաղ վասն ակռայի, զոր ասացեալ է Պարսամ Տրապիզոնցի. «Ակռայեկրս ճալ մի չունի.|Կու խոստէ յիս, չի մնաց հոգի...» *(հրատ. Ն. Ակինյան),* Հանդէս Ամսօրեայ, *1930, էջ 594—596:*

Վերջում՝ «Ես մեղաւոր Պարսամ գերի.| Որ զակռանիս իմ գովեցի.|Ընաւ զհոգիս իմ չյիշեցի.|Ո՛րպէս ճուղապ տամ Քրիստոսի: |Տէր Միքայէլըն Լովեցի|Յինէն խնդրեաց, ես գրրեցի.|Ինձ մեղաւոր անարժանի|Դուք ասացէք Տէր ողորմի»:

Հրատարակվել է Վիեննայի Մխիթ. Մատ. № 1002 ձեռագրից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ներս. — *«Պարսամ տաղասաց (Պարսամ Տրապիզոնցի, արքեպիսկոպոս Լէօպոլսոյ) և իւր տաղն ի վերայ ակռայի»,* Հանդէս Ամսօրեայ, *1930, էջ 590—596:*

Հոդվածի գերմ. ամփոփումը տես անդ, էջ 635—636:

Խաչիկյան Լ. Ս. — *«Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI—XVII դարերում»,* Տեղեկագիր *(ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1954, № 4, էջ 76:*

Պետրովիչ Գր. — *«Լեհ կղերի միութենական փորձերը և լեհահայերը (1550—1600)»,* Հանդէս Ամսօրեայ, *1968, էջ 308—309:*

Barącz S. — „Żywoty sławnych Ormian w Polsce“, Lwów, 1856, str. 68.

Petrowicz Gr. — „I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVIII“, *հոբելյան հրատ. մեջ.* “Mélanges Eugène Tisserant“, vol. III, Roma, 1964, p. 152.

ԲԱՐՍԵՂ ԱՂԲԱԿՑԻ

Կոչված նաև Բաղիշեցի, Գաւառեցի, Կարպելացի*: Ծնողներն են՝ տեր Ներսես և Մեհրշահ: Բաղեշի Ամրտոլի վանքի առաջնորդ*[1]*: Հովհաննես Բրգուտ Ոստանեցու աշակերտն էր: Ապրել է ԺԶ դարի վերջերում և ԺԷ-ի սկզբներում: Ինչպես Առաքել Դավրիժեցին է ասում՝ Բարսեղ Բաղիշեցին էր «այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտաց տէր» և «պատճառ եղև գտանելոյ արտաքին գրոց գիտութեան»*[2]*: Ինքնաշխատությամբ ուսումնասիրելով Դավիթ Անհաղթի Սահմանաց գիրքը, Պորփյուրի Ներածությունը և այլ երկեր, նա ոչ միայն ինքը տիրացավ իմաստասիրական գիտություններին, այլև սովորեցրեց իր աշակերտներին և նրանց միջոցով տարածեց վանական ուսումնարաններում, այսպիսով սկիզբ դնելով արտաքին գիտությունների վերածնման գործին Հայաստանում: Վարդան Հիզանեցին Ամրտոլում Բարսեղ Բաղիշեցու պատվերով իր ընդօրինակած «Պատճառաց» գրքի հիշատակարաններում,— ընդօրինակությունն ավարտվել է 1617 թվին,— տեղեկություններ է հաղորդում մեզ նրա մասին. «Ո՛վ ուսումնասէրք և բանի սպասաւորք, յորժամ որ աշխոյժ մտօք վերծանէք զայս ամէնունակ շտեմարանս՝ զլուծմունքս նոցին և արտաքին գրոց, հմտանաք և օգտիք, յիշեցէք ի Քրիստոս Յի-*

[1] *Որպես Ամրտոլի առաջնորդ՝ նա Վարդան Բաղիշեցու ժամանակագրության մեջ հիշատակվում է դեռևս 1599 թ., տես՝ Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 394:*

[2] *«Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Գ տպ., Վաղարշապատ, 1896, էջ 390—394:*

[1] *Հմմտ. Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 136: «Ստեփանոսի Ռօշքայ Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք», Վիեննա, 1964, էջ 166:*

սուս զտէր Բարսեղ՝ զնրիցս նրանեալ մեծ րաբունապետն ... որ եւ ի յարդար վաստակոց իւրոց ինչս բազում՝ զգիրքս զայս ետ գաղափարել հոափափաք սիրով և յօժար կամօք անջինջ յիշատակ իւրն և իւր հոգևոր երկանց ծննդոց, որք առ ոտս բազմերջանկին ի ներկրթութիւն, և նոցա որք են առեալ հրաման իշխանութեան ուսուցանելոյ» ևն[1], *«յիշեցէք առաջի զենման անմահ գառինն Աստուծոյ զլուսատուն հայկական տոհմիս զտէր Բարսեղ բազմահանճար զանյաղթ պուետիկոսն, որ է յերկրէն Գաւառոյ և ի սուրբ աթոռոյն Բարդուղիմէոսի որ ի յԱղբակ նահանգի, մարմնաւոր ծնողիւքն, այլ և զհոգևոր որդիսն՝ զաշակերտեալ մանկունսն, նախ զտէր Հայրապետն, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ յերկիրն կենդանեաց ի կայանս անդրանկաց և եթող զմեզ [ի] սուգ անմխիթար, և զտէր Յովսէփ բազմահանճար հռետորն, և զտէր Կիրակոս Արարադեցին, և զտէր Անանիա Նախավկայեցին, և զտէր Ներսէս՝ զեղբօրորդի հանգուցեալ Հայրապետ վարդապետի, և զՅոհան տրուպ Բաղիշեցին՝ լուացող նոցին ոտի, այլ և որք տակաւին դեռ ևս են ի հրահանգ վարժման՝ [զ]տէր Յովաննէս կորովամիտն, և զտէր Մատթէոս Անթափցի՝ եղբօրորդի Յովաննէս Սսայ կաթողիկոսին» ևն*[2]*։ Բարսեղ Բաղիշեցու աշակերտների մեջ ամենից նշանավորը հանդիսացավ Ներսես Մոկացի Բեղլուն, որը մի ժամանակ դասախոսել է Սյունյաց Մեծ-անապատում և հետո, անցնելով Վասպուրական, այնտեղ վերանորոգել է Լիմ անապատը՝ այն դարձնելով լուսավորության նոր կենտրոն։ Բարսեղ Բաղիշեցին մեռ. ու թաղվել է Ամրտոլի վանքում 1615 թվին*[3]*։ Գրել է հիշատակարաններ, որոնք տեղեկություններ են տալիս ժամանակի քաղաքական և այլ իրադարձությունների մասին։*

---

1 *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1480, էջ 43ա։*

2 *Անդ, էջ 48ա։*

3 *Տապանագիրը տես Բ. Կյուլեսերյանի մոտ, «Կոլոտ Յովհաննէս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 201։ Տես նաև Վարդան Բաղիշեցու Ժամանակագրությունը, էջ 394. նաև՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1480, էջ 575ա։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալպոյաճյան Արշ. — *«Գրիգոր Կեսարացի պատրիարք և իր ժամանակը»,* Սիոն, *1936, էջ 84—85։*

Ակինյան Ներս. — *«Բաղէշի դպրոցը 1500—1704», Վիեննա, 1952, էջ 70—92։*

Նույն հատվածը տես նաև Հանդէս Ամսօրեայ*-ում, 1951, էջ 207—219։*

Աճառյան Հր. — *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 402, § 98։*

Իրազեկ — *«Հայ մտքի վերածնունդը»,* Հայրենիք *(ամս.), 1930, նոյ., էջ 127—129։*

Կյուլեսերյան Բաբգ. — *«Կոլոտ Յովհաննէս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 2—3 և 201։*

Մովսիսյան Արգ. — *«Բաղեշի Ամրդոլի դպրոցը»,* Բանբեր Երևանի Համալսարանի, *1967, № 1, էջ 81—85։*

Չամչյան Միք. — *«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 610։*

Քասունի Եղ. — *«Էջեր հայ հին դաստիարակութեան պատմութենէն. Ուսերմունք և վերապրումներ (1375—1638)»,* Հասկ *(հայագիտ. տարեգիրք), Բ տարի, 1949—50, էջ 93—94։*

Քասունի Եղ. — *«Պատմութիւն հին հայ դաստիարակութեան», Պէյրութ, 1959, էջ 288։*

Օրմանյան Մաղ. — *«Ազգապատում», մասն Բ, Կ. Պոլիս, § 1710։*

Назарянц С. — „Обозрение истории гайканской письменности", Казань, 1846, стр. 27—28.

Neumann C. F. — „Versuch einer Geschichte der armenischen Literatur", Leipzig, 1836, S. 231—232.

Somal P. S. — „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 148—149.

ԲԱՐՍԵՂ ԱՆԿԻՒՐԱՑԻ
(Basilius Ancyranus)

Անկյուրիայի եպիսկոպոս (Դ դ.)։ Մեզ հայտնի է նրա մի երկը՝ «Վասն ճշմարիտ և անապական կուսութեան» (Liber de vera virginitate), *որի հեղինակությունը ոմանք վերագրում են Բարսեղ Կեսարացուն*[1]*։*

* * *

Վասն ճշմարիտ և անապական կուսութեան, թէ որպիսի՛ առաքինութեամբ կատարեալ լիցի, կամ յորո՛ց ախտից լուծցի. «Բազումք յայնցանէ, որք փեսային մերոյ Քրիստոսի հետևեալ եղեն, զորս երկնայինն տրփութիւն առաքինութիւն բարեաց իւրոց խոցոտեաց...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 652, էջ 397—404?։*

Հմմտ. հուն. բնագիրը հետևյալ հրատ. մեջ. J.-P. Migne, „Patrologiae cursus completus", ser. gr., t. XXX, Parisiis, 1888, p. 669—810.

ԲԱՐՍԵՂ ԱՐԶՐՈՒՄԵՑԻ

ԺԷ դ. հռոմեադավան հայ քարոզիչ, Հռոմի Պրոպագանդայի աշակերտ։ 70-ական թթ. գործել է Կարինում, Նոր-Ջուղայում և Թավրիզում։ Պրոպագանդային ուղղած մի նամակով (Թավրիզ, 22 սեպտ. 1679 թ.) նա տեղեկացնում է, որ «զճշմարտութիւնն Հռոմայ եկեղեցւոյն ուսուցի և քարոզեցի, և զբաղումս առ այս հաւատս ածի դաւանութեամբ նոյնոյ եկեղեցւոյն, յաղագս այսորիկ ի քաղաքէ քաղաք հալածեցայ և մանաւանդ ի Թարվէզ» են։ 1678 թ. նա Նոր-Ջուղայում էր։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, որն այդ ժամանակ Էրզրումում էր գտնվում, Նոր-Ջուղայի հայերին գրած մի թղթով (28 սեպտ. 1678 թ.) պահանջում էր որ լռեցնեն «ի յԱստուծոյ ատելի Բարսղին հաչմունքն» և նրան վտարեն այնտեղից։ Հաջորդ տարին՝ Թավրիզում նրա գործունեությունը խափանելու համար նամակներով պայքարել են Նոր-Ջուղայից՝ տեղի առաջնորդ Դավիթ Ջուղայեցին (10 մայ. 1679 թ.) և Կ. Պոլսից՝ Էջմիածնի աթոռակալ Միքայել վարդապետը (27 մայ. 1679 թ.)։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, որն այդ ժամանակ Կ. Պոլսում էր գտնվում, Թավրիզի հայերին ուղղած երկու կոնդակներով (երկուսն էլ 24 մարտի 1680 թ.) հայտնում է, թե բանադրանքի է ենթարկել Բարսեղին՝ ասելով, որ «այդ անիծեալդ ուրացութիւն առնելով, միշտ և հանապազ արհամարհէ զազգս և զկրօնս մեր»։ Հայոց եկեղեցական պատմությանը վերաբերող սույն վավերագրերը, որոնք Հռոմի Պրոպագանդայի դիվանում են պահվում (Armeno. V. III), *հրատարակվել են Հ. Քյուրտյանի կողմից*[1]*։*

ԲԱՐՍԵՂ ԱՐԾՐՈՒՆԻ [ԱՐԾՐՈՒՆԵՑԻ]

*Մանկավարժ և հասարակական գործիչ, ԺԶ/ԺԷ դդ.։ Կոչված է նաև Բաղիշեցի, Գա*ռնեցի: *Ծնողներն են՝ Ապուհար և Եղիկ։ Եղել է Ամիդի եպս.։ Ն. Ակինյանը նրան է վերագրել հետևյալ անտիպ տաղերը։*

* * *

1. Գովասանք ի վերայ սուրբ Աստուածածնին, ասացեալ ի Բարսեղ վարդապետէ. «Երգ զարմանազան ձայնիւ հրաշազան| Նուագեմք կուսին յոյժ վայելչական...»:

Սկզբնատառերը՝ «Երգ ի Բարսեղէ»:

2. Ի Բարսեղ վարդապետէ ասացեալ ի վերայ սուրբ Աստուածածնին. «Աստուածածին մայր անարատ իսկուհի|Ներ խընկարան անեղ բանին Յիսուսի...»:

Սկզբնատառերը՝ «Այս ի Բարսեղէ»:

3. Երգս զայս Բարսեղի է ասացեալ գովասանութիւնն սուրբ հարանց անապատի. «Երգ սրբութեանն այս գովեստի դուրական|Վայելչաբար առ վայելուչսն գրեցան...»:

Սկզբնատառերը՝ «Երգ ի Բար[սեղ]ի»:

---

[1] B. Altaner—A. Stuiber, „Patrologie", Freiburg—Basel—Wien, 1966. S. 289 u. 292.

[1] *Հ. Քյուրտյան, «Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի», Անթիլիաս, 1965, էջ 32—39 և 41—43։ Գրքույկն արտատպ. է Հասկ ամսագրից։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ներս.—«Բարսեղ վ. Արծրունի, եպիսկոպոս Ամիթի և վերատեսուչ Մուշի Առաքելոց վանքի (ծն. 1575—մեռ. 1640?)», Հանդէս Ամսօրեայ, 1956, էջ 417—451:

Քյուրտյան Հար.— «Ա. Ալպօյաճեանի Պատմութիւն հայ Կեսարիոյ», Բազմավէպ, 1947, էջ 135:

ԲԱՐՍԵՂ ԱՐՃԻՇԵՑԻ

ԺԶ դ. ժամանակագիր, որի մասին կենսագրական տեղեկություններ չկան: Հեղինակն է պատմական մի արժեքավոր տարեգրության, ուր ժամանակակցի ու մասամբ նաև ականատեսի գրչով նկարագրված են 1501—1504 թթ. դեպքերը՝ Շահ Իսմայիլ Ա-ի գահակալության կռիվները և նրանից հետո Վասպուրականում ու Տուրուբերանում տեղի ունեցած ասպատակությունները ու սրտաճմլիկ ավերածությունները:

* * *

Տարեգրութիւն տէր Բարսեղի. «Յայսմ ամի որ էր թուականն Հայոց ՋԾ (=1501 թ.) եղև բազում ռճիր պատերազմի, զի դարձեալ զօրացան ազգն Դանիշմանեաց...», տես՝ Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Ա, Երևան, 1951, էջ 125—130:

Հրատարակչի նախաբանով և ծանոթագրություններով: Հրատարակված է Երևանի Պետ. Մատ. № 4515 ձեռագրից:

ԲԱՐՍԵՂ ԱՒԱՆԵՑԻ կամ ՎԱՐԱԳԵՑԻ

Հայ հիշատակագիր, Վանա ծովի Ավան գյուղից, որդի Ստեփանոսի և Բեգիջանի: Ապրել է ԺԶ դ. վերջերին և ԺԷ-ի սկզբներին: Ուսանել է Վարագա վանքում և ապա գրչություն և երաժշտություն է դասավանդել նույն վայրում: Նրա գրած կարևոր հիշատակարաններից մեկը վերաբերում է 1580-ական թթ. թուրք-պարսկական փոխադարձ արշավանքներին, որոնք ավերեցին հայաբնակ գավառները՝ Կարինից մինչև Երևան (տես՝ Դիւան Հայոց Պատմութեան, հտ. Ժ, էջ 33—38: Եր. Լալայան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, էջ 719—722): Այդ հիշատակարանն օգնում է լուսաբանելու Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության նույն շրջանի դեպքերը (հմմտ. Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 244—247):

Նրա գրվածքների մասին Ն. Ակինյանն ասում է. «Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 129 կը յիշատակէ Վարագեցի Բարսեղ վարդապետ, գրած է ԺԶ դարու վերջերը, Շահից և Սուլտանաց հակամարտութիւնը: Իր աղբիւրն է առանց տարակուսի Փիրղալէմեան, որ իր հաւաքած մանր մատենագիրներու թուին մէջ ներս առած է 'Բարսեղ Վ. Վարագեցի. Պատմում է 1581—1591, Պարսից և Օսմանցւոց պատերազմների մասին. զԱռումն Թաւրիզոյ յՕսման փաշայէն...'. Հմմտ. Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, Վաղարշապատ, 1898, Բ., էջ 58ա: Եւ Գիւտ քահանայ Աղանեան հրատարակած է Դիւան Հայոց պատմութեան, Ժ., էջ 33—38 'Բարսեղ Վարագեցու յիշատակարան': Որ ուրիշ բան չէ, բայց եթէ Աւանց գիւղի Խուլուշ կոչուած բոլորգիր Աւետարանին յիշատակարանը, ուր կը պատմուի 1581—1584 տարիներու պատերազմները: Այսպիսի յիշատակագիրներ չեն կրնար իբրև մատենագիր նկատի առնուիլ»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ներս.—«Բարսեղ վ. Աւանեցի, կոչուած Վարագեցի, 1591—1608», Հանդէս Ամսօրեայ, 1951, էջ 516—520:—Նույնը տես նաև հեղինակի հետևյալ գրքում. «Տաղասացներ և տաղեր», Վիեննա, 1968, էջ 141—149:

Աղանյան Գյուտ—«Բարսեղ Վարագեցի», տես հետևյալ ժողովածուի մեջ. Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ ԻԹ-ԼԱ:

Աճառյան Հր.—«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 402, § 97:

Առաքելյան Ա. Դ.—*«Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն», հտ. Բ, Երևան, 1964, էջ 468—469։*

Ոսկյան Հ.—*«Վասպուրական-Վանի վանքերը», մաս Ա, Վիեննա, 1940, էջ 311—312, ծան. 49։*

ԲԱՐՍԵՂ ԲԱՂԻՇԵՑԻ

Տե՛ս ԲԱՐՍԵՂ ԱՂԲԱԿԵՑԻ։
Տե՛ս ԲԱՐՍԵՂ ԱՐՃՐՈՒՆԻ։

ԲԱՐՍԵՂ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Տե՛ս ԲԱՐՍԵՂ ՀՈՒԼՈՎ։

ԲԱՐՍԵՂ ԳԱՌՆԵՑԻ

Տե՛ս ԲԱՐՍԵՂ ԲԱՂԻՇԵՑԻ։
ԲԱՐՍԵՂ ԱՐՃՐՈՒՆԻ։

ԲԱՐՍԵՂ ԳԻՏՈՒՆ

Տե՛ս ԲԱՐՍԵՂ ԻՄԱՍՏՈՒՆ։

ԲԱՐՍԵՂ ԳՐԻՉ ԵՒ ՄԵԼԻՔ ՔԵՄԱԼ

ԺԷ և ԺԸ դդ. մանր ժամանակագիրներ։ Երևանի Պետ. Մատ. № 713 ձեռագրում (էջ 139բ—140բ) պահված են նրանց թողած ժամանակագրական ինքնագիր տեղեկությունները, որոնց առաջին մասը (1660—1703 թթ.) Բարսեղ գրչից է, իսկ երկրորդը (1703—1706 թթ.) Մելիք Քյամալից։ Ամբողջը հրատարակված է որպես մեկ բնագիր՝ «Բարսեղ գրչի և Մելիք Քյամալի ժամանակագրությունը (XVIII դ.)» *խորագրի տակ, տե՛ս Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Ա, Երևան, 1951, էջ 288—291։ Հրատարակչի նախաբանով և ծանոթագրություններով։*

ԲԱՐՍԵՂ ԻՄԱՍՏՈՒՆ [ԳԻՏՈՒՆ]

Համարվում է հեղինակը կամ մշակողներից մեկը Ֆրիկի անունով հայտնի «Գանգատ» (սկ. «Աստուած արդար և յիրաւի») *տաղի։ Տես Տիրայր արքեպս. (հրատ.), «Ֆրիկ. Դիւան», Նյու-Յորք, 1952, էջ 86, 108—110, 120, 225, 529—540։ Ա. Գ. Աբրահամյան, «Ֆրիկի Դիվանի հրատարակության առթիվ»,* Էջմիածին *(ամս.), 1954, № 1, էջ 36—39 (§§ 12—13)։ Ն. Մովսիսյան,* Սիոն, *1961, էջ 109։*

ԲԱՐՍԵՂ ԼԱՍԼՈՎԵԱՆ ԳԵՈԼԱՑԻ

Վենետիկյան մխիթարյան, ծն. 1735 թ. Գեոլայում, մեռ. 1809 թ.։ Ունի թարգմանություններ՝ «Համառօտութիւն վարդապետութեան հաւատոյ և բարոյական աստուածաբանութեան, արարեալ տեառն Լուդովիկոսի Հաբերտի Սորբոնեան աստուածաբան վարդապետի Փարեզեան համալսարանի» *(տպ. Տրիեստ, 1791) և* «Վարք սրբոյ հօրն մերոյ Անտոնի աբբայի մեծի, շարադրեալ ի սրբոյն Աթանասէ Աղեքսանդրացւոյ, և վերածեալ ի յոյն բարբառոյ ի լատին ի ձեռն Եւագրի Անտիոքացւոյ, և անտի ի հայ» *(տպ. Վենետիկ, 1794)։ Հեղինակ է նաև հետևյալ երկի՝* «Յաւելուած բանից և գործոց սրբոյ հօրն մերոյ Անտոնի աբբայի, որ ինչ արտաքոյ վարուց նորա պատմին, բովանդակեալ ի չորեքտասան գլուխս» *(տպ. Վենետիկ, 1800)։*

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ*
(Basilius Magnus Caesariensis)

Կոչված նաև Մեծ։ Հունական եկեղեցու նշանավոր հայրերից մեկը, ծն. 329 թ. Կապ-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* L. de Tillemont, „Mémoires pour servir à l'histoire ecclésiastique des six premiers siècles", Bruxelles, t. IX, 1732, p. 1—136.—Fr. Baertius, „De S. Basilio Magno, episcopo Caesareae in Cappadocia", *Acta Sanctorum*, Junii t. III, Parisiis et Romae, 1867, p. 295—436.—E. Fialon, „Étude historique et littéraire sur S. Basile", Paris. 1869.—K. Krumbacher, „Geschichte der byzantinischen Literatur von Justinian bis zum Ende des Oströmischen Reiches (527—1453)", 2. Aufl., München, 1897.—G. Krüger, „Basilius der Grosse, Bischof von Cäsarea", *հետևյալ հատորում.* „Realencyklopädie für protest. Theologie und Kirche" (hrsg. von Albert Hauck), Bd. II, Leipzig, 1897, S. 436—439.—Wilh. Christ, „Geschichte der griechischen Litteratur bis auf die Zeit Justinians", 3. Aufl., München, 1898, S. 901—902.—Paul Allard, „Saint Basile", 3e éd., Paris, 1900.—P. Batiffol, „La littérature grecque"

պադովկյան Կեսարիայում։ Ուսանել է Կ. Պոլսում և Աթենքում, հռետորության դասախոս և իրավաբան է եղել Կեսարիայում, 370 թվին նույն քաղաքի մետրոպոլիտ է ընտրվել և մեռ. 379 թվին[1]։ Աշխատել է եկեղեցու մեջ կրոնավորական կարգերի վերակառուցմանը և կանոններ է հաստատել վանականության համար։ Պայքարել է արիոսականության դեմ և խոշոր դեր է խաղացել քրիստոնեության կերպավորման ժամանակաշրջանում։ Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, ինչպես և Հովհան Ոսկեբերանի հետ, Բարսեղ Կեսարացին հանդիսանում է իր ժամանակի եկեղեցական ականավոր մատենագիրներից մեկը, որի գրական մի շարք երկերը թարգմանվել են նաև հայերենի։

Հայ մատենագրության մեջ նրա անունով ծանոթ երկերի մի կարևոր մասը, ինչպես, օրինակ, Վեցօրյա ճառերի և Պատարագի թարգմանությունները,— խոսքը Պատարագի առաջին թարգմանության մասին է,— անվիճելիորեն Ե դարի թարգմանիչների գործ է համարվում, իսկ մնացած մասը՝ ավելի հետագա դարերի։ Հետագա թարգմանություններին վերաբերող պատմական միակ տվյալը «Ի ծնունդ փրկչին» ճառի վերջում գտնվող հիշատակարանն է, ըստ որի՝ այդ ճառի թարգմանիչն է Դավիթ Տարոնացին կամ Բագրևանդացին (է դ.)։

Մենք հայ մատենագրության մեջ Բարսեղի անունով գտնվող մեծ ու փոքր գրվածքները բաժանել ենք խմբավորումների։ Պետք է նշել, որ նրանցից մի մասը ծանոթ չէ հունական մատենագրության մեջ, մի մասն էլ ծանոթ է միայն լատիներեն թարգմանությամբ։ Կան նաև այնպիսիներ, որոնց հարազատությունը երկբայելի է։ Բացահայտորեն անհարազատ երևացող մի քանի գրվածքների մասին մենք կխոսենք սույն հոդվածի վերջին մասում (⊠ նշանի տակ), գրականության բաժնից առաջ։

Բարսեղ Կեսարացու աշխատությունների հունարեն սկզբնագրերը տպագրվել են մեկից ավելի անգամներ, հաճախ նաև լատիներեն թարգմանության հետ միասին։ Հունարեն-լատիներեն ընտիր հրատարակություն է՝ „Sancti Basilii opera omnia quae extant, vel quae sub ejus nomine circumferuntur, graece et latine, opera et studio Juliani Garnier [et D. Prud. Maran]“, t. I—III, Parisiis, J.-B. Coignard, 1721—1730. Նմանապես՝ „S. P. N. Basilii, Caesareae Cappadociae archiepiscopi, opera omnia quae extant, vel quae sub ejus nomine circumferuntur (J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. XXIX—XXXII)[1], t. I—IV, Parisiis, apud J.-P. Migne editorem, 1857—1886.

Բարսեղի գործերից՝ հին թարգմանություններ, բացի հայերենից, գոյություն ու-

(Anciennes littératures chrétinnes, 1), 4e éd., Paris, 1901.—Maximilianus princeps Saxoniae, „Praelectiones de liturgiis orientalibus“, t. I—II, Friburgi Brisgoviae, 1908—1913.—S. Y. Rudberg, „Études sur la tradition manuscrite de saint Basile“, Uppsala, 1953.—J. Gribomont, „Histoire du texte des ascétiques de saint Basile“, Louvain, 1953.—Hans-Georg Beck, „Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich“, München. 1959,—B. Altaner—A. Stuiber, „Patrologie“, Freiburg i. B., 1966, S. 290—298.—Մ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ժ, Վենետիկ, 1814, էջ 324—368։— Հ. Գաթըրճյան, «Տիեզերական պատմութիւն», հտ. Բ, Վիեննա, 1852, էջ 344—347։— Վ. Ըստկարյան, «Եկեղեցական պատմութիւն համդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ», Վիեննա, 1872, էջ 152—153։— Ս. Նազարեթյան, «Պատարագամատոյց», Պատկեր, Ե տարի 1894/95, էջ 10—17, 42—44, 61—68, 84—88 և 100—105։— Ե. Տեր-Մինասյանց, «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն», հտ. Ա, Էջմիածին, 1908, էջ 269—270։

[1] Կենսագրական տեղեկությունների կապակցությամբ կարելի է հիշել Գրիգոր Նազիանզացու հաղորդած այն տեղեկությունը, որի համաձայն երբ Բարսեղը ուսանող էր Աթենքում, այնտեղ գտնվող հայ ուսանողները մի անգամ բուռն բանավեճ են ունեցել նրա հետ ուսումնական հարցերի շուրջ, և, ինչպես կարելի է հետևեցնել արված նկարագրությունից, հաղթական են դուրս եկել, տես՝ Ղ. Ալիշան. «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 111—112. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 775—776։

[1] Այս հրատարակության իրր հավելված տես՝ J. Gribomont, „In tomos 29, 30, 31, 32 Patrologiae Graecae ad editionem operum Sancti Basilii Magni Introductio“, Romae—Turnholti, 1959—1961. Բաղկացած է չորս առանձին պրակներից։

նեն նաև ասորերեն, արաբերեն, վրացերեն և ղպտերեն լեզուներով։ Նորագույն թարգմանություններից՝ տես ռուսերենը. «Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийской", որը լույս է տեսել „Творения святых отцов, в русском переводе" մատենաշարում, Մոսկվայի Հոգևոր ճեմարանի հրատարակությամբ, 1845—1848 թթ. (Բ տպագր. 1891—1892 թթ.)։ Նոր թարգմանություններ կան նաև եվրոպական ուրիշ լեզուներով։

Բարսեղ Կեսարացու գրականության, հատկապես նրա Վեցօրյա ճառերի, ազդեցությունը կրել են Ե և հաջորդ դարերի մի քանի հայ մատենագիրներ (Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի ևն)։ Բարսեղ Կեսարացին հեղինակություն է եղել նաև հայ վանականության կազմակերպության սիստեմում. Հայաստանում և այլուր գոյություն ունեցող հայկական որոշ միաբանություններ ղեկավարվում էին Բարսեղ Կեսարացու վանական կանոններով[1]։

* * *

ՃԱՌԱԿԱՆ ՈՒ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՐԿԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ

1. Պահոց գիրք։ Բաղկացած է հետևյալ 33 բնագրերից։ Հիմնական նկարագրությունը տալիս ենք ըստ Երևանի Պետ. Մատ. № 822 ձեռագրի։

ա. Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարոյ Կապադովկացւոյ յաղագս պահոց. «Փողեցէ՛ք, ասէ, ի նոր ամսեան փողով ի բարենշան յաւուրս տօնի մերոյ։ Այս հրաման մարգարէ[ակա]ն՝ մեզ բան զամենայն փող մեծաձայնագոյն և գործի երաժշտական բարենշանագոյն...», էջ 1ա—13ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 879ա), № 436 (էջ 127ա), № 1924 (էջ 127ա), № 1521 (էջ 159բ), № 3956 (էջ 8ա), № 1330 (էջ 230ա), № 4822՝ «Բուն բարեկենդանին» ևն (էջ 236ա), № 4774՝ նման խոր. (էջ 210ա), № 1525՝ նման խոր. (էջ 205ա), № 3239՝ նման խոր. (էջ 4ա), № 993՝ «Առաջին կիրակէին բուն բարեկենդանին... յաղագս պահոցն պնդութեան ի սկզբան քառասնորդացն մեծի պահոցն» (էջ 264ա), № 996՝ նման խոր. (էջ 319ա), № 5595 (էջ 229ա), № 4070 (էջ 191ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202 (էջ 180ա), № 212 (էջ 206բ), № 224 (էջ 39ա), № 227 (էջ 45ա),

---

[1] Այդպիսիններից էին Մեծ Հայքում՝ Սևանա վանքը, և մի քանի ուրիշ վանքեր. հմմտ. Հ. Շահխաթունյանց, «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի» ևն, հտ. Բ, Էջմիածին, 1842, էջ 217։ Միք. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, հավելվածում՝ էջ 140։ Բարսեղի վանական կանոններն ամփոփված են նրա «Հարցողաց» գրքում (տեսնել ստորև՝ ճառական ու մեկնողական երկեր, § 2)։ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում ևս գտնվում է մի ընդարձակ հոդված, որը Բարսեղյան կարգի վանականներին է վերաբերում, այն է՝ «ԿԳ. Հարց անապատաւորաց և նոցունց եղբարց սահմանն, որ եդաւ ի սրբոյն Բարսղէ», տես՝ «Դատաստանագիրք Սմբատ Իշխանի», Էջմիածին, 1918, էջ 43։ Բարսեղյան կանոններով ղեկավարվող հայկական զանազան միաբանությունների մասին տես՝ Gr. Bitio, „Relatione del Principio e stato continuato della Sagra Religione de' Frati di San Basilio degli Armeni in Italia, composta dal R. P. F. Gregorio Bitio, Genouese, dell'istesso Ordine", Pavia, Giov. Andr. Magri, 1640. G. Moroni, "Dizionario di erudizione storico-ecclesiastica", vol. IV, Venezia, 1840, p. 180—181. Մ. Ուղուրլյան, «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ Նոցա ի Լիվոռնոյ քաղաքի», Վենետիկ, 1891, էջ 240—250։ Հ. Գ. Ս., «Հայ հին նշմարներ Իտալիայի մէջ», Բազմավէպ, 1928, էջ 336—339։ Հ. Ոսկյան, «Վասպուրական-Վանի վանքերը», մասն Գ, Վիեննա, 1947, էջ 1020—1021։ M. A. van den Oudenrijn, „Les constitutions des Frères Arméniens de Saint Basile en Italie; études avec introduction et notes" (Orientalia christiana analecta 126), Rome, 1940. Այս մասին՝ Վ. Ինգլիզյան, «Հայ Բարսեղեանց միաբանութիւնն Իտալիա և անոնց սահմանադրութիւնը», Հանդէս Ամսօրեայ, 1948, էջ 426—434։ M. A. van den Oudenrijn, „Die Messe des hl. Basilius bei den 'Frati Armeni' in Italien", Հանդէս Ամսօրեայ, 1952, էջ 91—96։ Idem, „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum et Fratrum Armenorum Ordinis S. Basilii citra mare consistentium" etc., Bernae, 1960. Gr. Petrowicz, „La Chiesa Armena in Polonia", Roma, Istituto degli studi ecclesiastici, 1970, p. 12—14, 16, 18, 25, 161. Գր. Պետրովիչ, «Հայ եկեղեցին Լեհաստանի մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1974, էջ 181—198։

№ 234 (էջ 261ա), № 239 (էջ 1ա, սկզբից թերի), № 314 (էջ 1ա) և № (հին) 1913 (էջ 2ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1 (էջ 158բ), № 217 (էջ 2ա), № 224 (էջ 229ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1Ա (էջ 334բ), № 71 (էջ 514ա), № 154Բ (էջ 631), № 173 (էջ 625), № 764 (էջ 181), № 918 (էջ 286). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 431 (էջ 43ա), № 464 (էջ 241ա), № 189 (էջ 592ա, սկզբից թերի). Նիկոսիայի ձեռ. № 4 (էջ 97բ). Նոր-Բայազետի մասն. անձանց ձեռ. № 1 (էջ 201ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Փող հարէք, ասէ», «Փոխեցէք»։

բ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ի պահսն քառասներորդս. «Մխիթարեցէ՛ք, ասէ, քահանայք զժողովուրդն. խօսեցարո՛ւք յականջս Երուսաղէմի։ Բաւական է բանի բնութիւն[1] զառաքինեացն, յարձակմունս վեր ձգել...», *էջ 13ա—21ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 881բ), № 5595 (էջ 236ա), № 1924՝ «Նորին ի պահսն քառասնորդացն» *(էջ 134ա), № 993՝* «Երկրորդ երեքշաբաթին... յաղագս պահոց» *(էջ 301բ), № 436՝* «Տեառն Բարսղի յաղագս պահոց և բարեկենդանի *(էջ 130ա), № 1330 (էջ 234բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202 (էջ 184բ), № 212 (էջ 137ա), № 314 (էջ 9ա, սկզբից թերի), № (հին) 1913 (էջ 14ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1 (էջ 179բ), № 2 (էջ 179բ), № 217 (էջ 6ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154Բ (էջ 638).*

Որոշ օրինակներ ունեն սկ. «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք, ասէ, քահանայք»։

գ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի զարբեցողաց. «Շարժէ զիս առ բանս երեկորնեայք տեսութիւնք, և արգելու զիմ դարձեալ զյորդորումն և բլշեցուցանէ զյօժարութիւնս...», *էջ 21ա—31բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 882բ) և 436 (էջ 143ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 11բ), № (հին) 1913 (էջ 14ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 9ա)։

[1] *Ուրիշ օրինակներում՝* բան ի բնութիւն։

դ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ի Հայեա[ց] ի քեզ. «Բանիւ ետ մեզ զպէտսն ստացողն մեր Աստուած, որպէսզի զխորհուրդս սրտից միմեանց յայտնիցեմք, և ի ձեռն հասարակաց բնութեանս իւրաքանչիւր ոք մերձաւորին փոխադրիցեմք...», *31բ—43ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ № 1500 (էջ 885ա), № 436 (էջ 145բ), № 5595 (էջ 247ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 211 (էջ 18ա), № 212 (էջ 233բ), № 224 (էջ 49ա), № 302 (էջ 169ա), № 314 (էջ 21բ), № (հին) 1913 (էջ 22բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 13ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 23ա)։

ե. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի յերեսներորդ եօթներորդ Սաղմոսն՝ յաղագս ապաշխարութեան. «Որոց զապաշխարութիւնս բառնալ իշխեն՝ զհպարտութիւնն ո՛չ բերելով, պատուական եղբայր. Երկրորդ մեզ հրաման ետ զայն ամբարհաւանութիւն տեսանելով զողջախոհ եղբարց, զաջդ կարկառեցես յապաշխարութիւն...», *էջ 43ա—50ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 887ա), № 1525 (էջ 299ա), № 436 (էջ 148բ), № 5595 (էջ 254ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 211 (էջ 27բ) և № 212 (էջ 253բ), № 314 (էջ 32բ), № (հին) 1913 (էջ 31բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 17ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 32ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Որոշ զապաշխարութիւնն»։

զ. Նորին սրբոյն Բարսղի ի Քակեցից զիմ շտեմարանս. «Կրկին տեսակ փորձութեանցն. քանզի կա՛մ նեղութիւն[ք] տանջեն զմիտս, որպէս զոսկի ի բովս, և ի ձեռն համբերութեան զփորձ նոցա յանդիմանելով, և կա՛մ բազում անգամ նոյն իսկ լիութիւնք կենցաղոյս փոխանակ փորձարանի լինին յոլովից...», *էջ 50ա—59բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 888բ), № 436 (էջ 150բ), № 5595 (էջ 258բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 39բ), № (հին) 1913 (էջ 39ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 20ա). Նոր-

Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 38բ)։

է. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի առ ընչեղս. «Ասացաւ և յառաջագոյն մեզ յաղագս երիտասարդիս այսորիկ. և յիշէ ամենայն իրօք աշխատասէր լսող զհնութիւնն յայնժամ...», *էջ 59բ—72բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 890բ), № 436 (էջ 153ա), № 5595 (էջ 264բ) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 49ա), № (հին) 1913 (էջ 49բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 23բ)։

ը. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի զվաշխողաց. «Երեկ ի չորեքտասան սաղմոսն խօսելով, եկեալք ի սպառուած բանին, ի ժամէն ոչ յորդորեալք եղեաք. իսկ այժմ եկաք բարեմտութեամբ պարտապանք զպարտս նուազացելոցն ի ձէնջ պահանջիմք...», *էջ 72բ—81ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 893բ), № 436 (էջ 157ա), № 5595 (էջ 282ա) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 62ա), № (հին) 1913 (էջ 60ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 28բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 59ա)։

թ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի վասն բարկացողաց. «Զոր օրինակ ի բժշկական պատուիրանսն յորժամ բարւոք կարծելով և ըստ բանի արուեստին լինի զկնի հմտութեանն առաւել ի նոցանէ օգտակարութիւնն ցուցանէ, սոյնպէս և ի հոգևոր խրատսն...», *էջ 81ա—91բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 895ա), № 436 (էջ 159բ), № 5595 (էջ 278ա) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 70բ), № (հին) 1913 (էջ 66բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 31բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 66բ)։

ժ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի զմախանաց. «Բարի [է] Աստուած և բարեացն արժանաւորաց տուող. չար [է] բանսարկուն և չարեաց ամենայնի արարիչ։ Եւ զոր օրինակ յարմարի բարւոյն անմախողութիւն, սոյնպէս զկնի երրայ բանսարկուին յաշաղանք...», *էջ 91բ—99բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 897ա), № 436 (էջ 162բ), № 5595 (էջ 285բ) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 81ա), № (հին) 1913 (էջ 75բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 35բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 76բ)։

ժա. Նորին սրբոյ Բարսղի ի Սաղմոսն առաջին. «Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք յաղագս այնորիկ շարադրեալք ի Հոգւոյն, որպէս զի իբր ի հասարակաց հոգւոց բժշկարանի՝ ամենայն մարդ զբժշկութիւն իւրոց ախտից իւրաքանչիւր ոք ընտրիցեմք...», *էջ 99բ—109բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 900ա), № 436 (էջ 165ա), № 5595 (էջ 291ա) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 90ա), № (հին) 1913 (էջ 84ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 41ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 84բ)։

ժբ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ի Սաղմոսն յիսներորդ իններորդ. «Ի յօժարամտութիւն հայելով ձերոյ լսելեաց, և իմոյ զօրութեանս տկարութիւն, եկն յիս պատկեր իմն մանկան հզօրագունի։ Այսուհետև ոչ ևս զատուցեալ ի կաթանէ, խանդելով զմօրն զստինս, ի տկարութիւնս փախչիցիմք...», *էջ 110ա—115ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 902ա), № 436 (էջ 168ա), № 5595 (էջ 298ա) Եվ. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 100բ), № (հին) 1913 (էջ 94ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 45ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 93ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Ի յօժարմտութիւն հայելով»։

ժգ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի վաթսներորդ առաջներորդ Սաղմոսն, ի կատարած յաղագս Իդիթումայ[1] սաղմոս Դաւթի. «Երկուս սաղմոս[ս] ծանեաք յա-

---

[1] *Ձեռագրում՝* իդիթումա։

ղագս Իդիթումայ, որք ունին զվերնագիրն զԵրեսունն և ութն և որ ի ձեռինս է, և վարկանիմք Դաւթայ գոլ զկարգ իրաց...», *էջ 115ա—122բ*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 899ա), № 436 (էջ 169բ), № 5595 (էջ 301բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ № 314 (էջ 106ա), № (հին) 1913 (էջ 98բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 39ա), Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 97բ)։

ժդ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի հարիւրերորդ տասներորդ և չորրորդ Սաղմոսն. «Վաղ ժամանեալք ի քահանայական յայս տեղի, ի մէջ գիշերի զԱստուած վկայից օրհնութեամբք հաշտեցուցանելով՝ ժուժկալեցէք մինչև ի հասարակօրեայս ի մեր գալս մնացեալք...», *էջ 122բ—128ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 906բ), № 436 (էջ 172ա), № 5595 (էջ 306ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 113բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 53բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 104բ)։

ժե. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի Սաղմոսն հարիւրերորդ տասներորդ և հինգերորդ. «Հաւատացի յաղագս որոյ խօսեցայ. և ես նուաստացայ յոյժ։ Ես ասացի ի զարմանալ իմում՝ ամենայն մարդ սուտ։ Հաւատ առաջնորդեսցէ յաղագս Աստուծոյ բանիցն. հաւատ և ոչ ցոյց...», *էջ 128ա—134բ*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 904ա), № 436 (էջ 173բ), № 5595 (էջ 310ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 119ա), № (հին) 1913 (էջ 106ա, հատված՝ սկ. «Զի և ոչ ըստ կարգին ի վերայ ածել նմա կարողութիւն է»). *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 48բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 110ա)։*

ժզ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի յաղագս սուրբ Երրորդութեանն. «ԶԱստուած յիշել հանապազ՝ բարեպաշտութիւն է և յագումն ոչ ունի աստուածասէր հոգի։ Բայց բանիւ անցանել յաղագս Աստուծոյ՝ յանդգնութիւն է մտօք...», *էջ 134բ—139ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 905բ), № 436 (էջ 141բ), № 5595 (էջ 314ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202 (էջ 14բ, թերի), № 228 (էջ 5բ, թերի), № 314 (էջ 126ա), № (հին) 1913 (էջ 110բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 51ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154 (մասն Բ, էջ 5). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 115բ)։

Կան օրինակներ, որոնք ունեն սկ. «ԶԱստուած յիշել հանապազ՝ բարերարութիւն է»։

Այս բնագիրը տպագրված է.

— Սրբոյն Բարսղի, եպիսկոպոսի Կեսարու Կապուտկացոց՝ (sic) յաղագս սուրբ Երրորդութեանն. «ԶԱստուած յիշել հանապազ բարեպաշտութիւն է և յագումն ոչ ունի զաստուածասէր (sic) հոգի. բայց բանիւ անցանել յաղագս Աստուծոյ՝ յանդգնութիւն է...», *տես՝ Կար. Տեր-Մկրտչյան (հրատ.), «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 78—84*։

ժէ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի [յ] Ի սկզբանէ էր բանն. «Ամենայն աւետարանչացն ձայն մեծարուսագոյն այլոցն հոգւոյն վարդապետութեան. վասն զի յայլս մարգարէիւք, իսկ յԱւետարանսն ինքնադիմաբար խօսեցաւ մեզ տէրն...», *էջ 139ա—144բ*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 907բ), № 436 (էջ 175բ), № 5595 (էջ 317ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 130ա), № (հին) 1913 (էջ 114բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 55ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 119ա)։

ժը. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի ծնունդ փրկչին. «Քրիստոսի ծնունդն իւրականն և առաջինն և յատուկ իւրոյ աստուածութեանն՝ լռութեամբ պատուեսցի...», *էջ 144բ—155բ*։

Ճառի վերջում գտնվում է հետևյալ ծանոթությունը. «*Դաւիթ թարգման Տարօնացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ ի Դամասկացոց քաղաքին՝ հրամանաւ Համազասպայ կուրապաղատի* (sic)

Մամիկոնենից տեառն։ Եւ եղիցի օրհնութիւն տեառն ի վերայ նոցին» (էջ 156ա)[1]։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 908բ), № 996 (էջ 61բ), № 993 (էջ 24բ), № 5244 (էջ 31ա), № 5595 (էջ 320բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 210 (էջ 1բ), № 212 (էջ 19ա), № 215 (էջ 3բ), № 224 (էջ 10ա), № 233 (էջ 54ա), № 314 (էջ 135բ), № (հին) 1913 (էջ 119բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 57բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 71 (էջ 443ա). Արմաշի վանքի ձեռ. № 12 (էջ 62բ)։

Այս բնագիրը տպագրված է.

— Երանելւոյն Բարսղի եպիսկոպոսի Կապադովկացւոյ ասացեալ ի ծնունդն Քրիստոսի. «Քրիստոսի ծնունդն իւրականն և առաջինն...», *Հանդէս Ամսօրեայ, 1968, էջ 419—438։*

Հրատարակել է Պ. Տեր-Պողոսյանը Վիեննայի Մխիթ. Մատ. № 217 և № 808 ձեռագրերի հիման վրա։

ժբ. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի և Ապողինարին հերձուածողի տեսութիւն ի մարմնաւորութիւն փրկչին. «Բարսեղ ասէ. Մարմին մարդկայի՞ն ունէր Քրիստոս, թէ ոչ։ Ապողինար ասէ. Ոչ։ Բարսեղ ասէ. Իսկ այլ զո՞ր։ Ապողինար ասէ. Աստուածային...», *էջ 156ա—166ա։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1500՝ նույն խոր. (էջ 911բ), № 436՝ նույն խոր. (էջ 177ա), № 5595 (էջ 327բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 265 (էջ 471ա), № 314 (էջ 145ա), № (հին) 1913 (127ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1211 (էջ 3ա). Ղալաթիայի Ազգ. Մատ. ձեռ. № 54 (էջ 280)։

Այս բնագիրը տպագրված է.

— Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի և Ապօղինարի հերձուածողի վիճաբանութիւն. «Բարսեղ ասէ. Մարմին մարդկայի՞ն ունէր Քրիստոս, թէ ոչ...», *տես՝ Կար. Տեր-Մկրտչյան (հրատ.), «Կնիք հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 84—98։*

Հունական մատենագրության մեջ տարբեր կարծիքներ կան այս գրվածքի հեղինակության վերաբերյալ։ Գ. Զարբհանալյանը գրում է. «Այս տրամախօսութիւն ընդ Ապօղինարի՝ որ ի մեր հայ գրչագիրս սրբոյն Բարսղի կ'ընծայուի, յունական քանի մը հեղինակաց քով Աթանասի տրուած է և անոր անունովն ալ հրատարակուած։ Ոմանք ի քննադատից Մաքսիմոսի վկայի ընծայեցին՝ որ եօթներորդ դարուն մէջ էր. այլք Թէոդորետոսի։ Հայկական հին թարգմանութիւնն՝ այս ամէն կարծիք և երկմտութիւն կը փարատէ։ Վավերականութեանն վկայէ և սուրբ հայրապետն Շնորհալի ի թուղթս իւր» ևն[1]։

ի. Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ երանելեացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի. «Բարսեղ ասէ. Կարողութիւն իցէ՞ արդեւք պատմել ինձ յաղագս Որդւոյ նախ քան զլինել աշխարհի։ Գրիգոր ասէ. Եթէ ոք զկնի Հօր և յետ Որդւոյ էր պատմեսցէ. քանզի պարտ և արժան է նախ պատմողին զոլ, զորոյ զծնելութիւնն պատմէ...», *էջ 166ա—175բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 913բ), № 436 (էջ 180ա), № 5595 (էջ 333բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 154ա), № (հին) 1913 (էջ 136ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 14բ)։

Սույն գրվածքի հետ պետք չէ շփոթել «Հարցմունք սրբոյն Բարսղի Կեսարացւոյ առ սուրբն Գրիգոր» *խորագրով մի ուրիշ բնագիր, որը բոլորովին տարբեր է սրանից (տես՝ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵՒ ԲԱՐՍՂԻ ՀԱՐՑՄՈՒՆՔ անվան տակ)։*

իա. Ոպտիմեայ եպիսկոպոսի՝ Բարսիլիոս (sic) եպիսկոպոս. «Եւ այլազգաբար ախորժելով տեսեալ զբարիս մանկունս ի ձեռն առաւել քան զհասակն իւրեանց բարուցն բարեկեցութիւնս, և առ քո երկիւղածութիւնս ընտանի...», *էջ 175բ—181բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 916ա), № 436 (էջ 182բ). № 5595 (էջ 340ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314

---

1 *Դավիթ Քոբայրեցին այս հիշատակարանը հաջորդ ճառին է տալիս, հմմտ. Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 231։*

1 *Գ. Զարբհանալյան, «Մատենադարան», էջ 330։*

(էջ 163ա), № (հին) 1913 (էջ 145ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 125ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Եւ այղագգարար ախորժելով»։

իբ. Բարսիղիոս եպիսկոպոս՝ Նսեսրու եպիսկոպոսի. «Յորժամ առ իւրն հայիմք և զգծուարութիւն տեսանեմք, յորոց ամենայն բարոյն ներգործութիւն իբրև ի կապանաց իմէք խափանեալ արգելանի, ի բաց հրաժարումն ինքեանց զամք ամենեին...», *էջ 181բ—182բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 917բ), № 436 (էջ 184ա), № 5595 (էջ 344բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 169բ), № (հին) 1913 (էջ 150ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 124ա)։

իգ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան եպիսկոպոս Նազիազու, յաղագս վարուց. «Ծանեայ զքո թուղթն, զոր օրինակ որք զբարեկամացն մանկունս յերևման նոցա նմանութեան առ կենդանիս ճանաչեն...», *էջ 182բ—188ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 917բ), № 5595 (էջ 345ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 170բ) և № (հին) 1913 (էջ 151ա)։

իդ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան, եպիսկոպոս Նազիազու, յաղագս կրօնաւորական վարուց. «Եւ գրելով և լուռ լինելով հաստատեալ ունիմք ի սիրտս մեր պահել զյիշատակ քո բարեզարդութեանդ, և այսօր առ տէր՝ տալ քեզ կատարել զընթացս բարոյ քաղաքավարութեանն որպէս բնտրեցեր...», *էջ 188ա—191բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 919ա), № 436 (էջ 186ա), № 5595 (էջ 349ա), № 659 (էջ 208բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 176ա) և № (հին) 1913 (էջ 157ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 130բ)։

Դրիսենը նկատում է, որ այս ճառը կապ ունի Բարսեղի հուն. 173 և 22 նամակների (PG *32, էջ 648 և 292*D) *հետ, և ավելացնում է. «Հայր Կրիպոմոն* (J. Gribomont) *մեր ուշադրութիւնը կը դարձնէ այս 173 և 22 նամակներու կապակցութեան վրայ, որու կը հանդիպինք շատ անգամ յոյն ձեռագիրներու մէջ»*[1]*։*

իե. Բարսղի եպիսկոպոսի Կեսարու մեծի Դիոդորայ երիցու Անտ[ի]ոքացւոյ. «Եհաս առ մեզ գիր որ ունէր զվերնագիրն Դեոդորայ. իսկ որ զկնի այնորիկ գոյր՝ ա՛յլ ումեմն վայելուչ էր քան Դեոդորայ...», *էջ 191բ—195ա։*

Այս բնագրի մասին տես ստորև՝ Կանոնական երկեր, § *2ա։*

իզ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի յաղագս գոհութեան. «Լուարուք զբանսն առաքելոյ ի ձեռն որոց ընդ Թեսաղոնիկեցիսն խօսի, ամենեցուն միտս դնէ որ ի կենցաղումս. քանզի վարդապետութիւնն առ այնոսիկ որ հանապազ նմայն հանդիպէին...», *էջ 195ա—205ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 920բ), № 436 (էջ 188ա), № 5595 (էջ 354ա) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 61բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 184բ) և № (հին) 1913 (էջ 164ա). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 141բ), № 63 (էջ 84բ)։

իէ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի վկայսն Յուղիտա. և յառաջասացեալ խօսսն յաղագս գոհութեան. «Պարծանք եկեղեցւոյս են երանելոյ վկայիս քաջութիւն լեալ. քանզի խոստացայ ձեզ յաւուրս յայսմիկ իբրև յիշատակարան ունելով զմեծ ճգնութեան զոր կանացի մարմնով առնի արութիւն...», *էջ 205ա—218ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 923ա), № 5595 (էջ 361ա), № 436 (էջ 191ա) ևն. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 65բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 194ա), № (հին) 1913 (էջ 173ա)։

Ձեռագրերում ճառի սկ. մեծ մասամբ պատահում է՝ «Պատճառք եկեղեցւոյս են» *կամ* «Պատճառք ժողովոյս եկեղեցւոյս են»։

1 Բազմավէպ, *1954, էջ 238։*

իը. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի սուրբ նահատակն Քրիստոսի Ստեփանոս. «Ամենեքեան որ սիրելեացն ճաշոցն յօրինեցեն պատրաստութիւն, զանազան խորտակացն պատրաստեն խումբս. ոչ միայն զտեսակս հեշտալիս արտակերտելով փրփրականս և կամ ծաղկերանգս արարակերտս[1], այլ առաւել...», *էջ 218ա—222ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 436 (էջ 134բ), № 1525 (էջ 509բ), № 993 (էջ 694ա), № 2224 (էջ 171ա), № 8420 (էջ 102ա) և. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 210 (էջ 48ա), № 212 (էջ 464ա), № 215 (էջ 99ա), № 224 (էջ 17ա), № 314 (էջ 207բ), № (հին) 1913 (էջ 185ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 2 (էջ 253ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 154Դ (էջ 2301). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 137բ). Արմաշի վանքի ձեռ. № 12 (էջ 324ա). Նիկոսիայի ձեռ. № 4 (էջ 291ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Ամենեքեան որք սիր.»։

իթ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի սուրբ քառասուն վկայսն. «Մարտիրոսաց յիշատակ զի՞րդ արդեօք յագուրդ եղիցի մարտիրոսասիրին. վասն զի առ ի բարի ծառայակցացն պատիւ տարացոյց ունի զառ ի հասարակաց տեառնն միամտութիւն...», *էջ 222ա—230բ*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 926ա), № 436 (էջ 132ա), № 1525 (էջ 271բ), № 993 (էջ 356բ), № 5595 (էջ 370ա), № 3787 (էջ 232բ) և. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 211 (էջ 38բ), № 212 (էջ 282բ), № 314 (էջ 212բ), № (հին) 1913 (էջ 190ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1 (էջ 231բ), № 217 (էջ 70բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 120 (էջ 238), № 154Բ (էջ 776). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 156բ), № 310 (էջ 62)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Մարտիրոսաց յիշատակ», «Սկայից յիշատակ» *և, թյուրիմացաբար,* «Ակայից յիշատակ»։

լ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի Գորդիոս վկայն. «Օրէնք են բնութեան մեղուաց՝ ոչ ի բաց ամբառնալ ի մեղուանոցացն, նախ թէ թագաւորն՝ նոցա քոչման առաջնորդե[սցէ]...», *անգ, էջ 230բ—240ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 928ա), № 436 (էջ 195ա), № 5595 (էջ 376բ) և. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 74ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 222ա), № (հին) 1913 (էջ 199բ)։

լա. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի խօսք յորդորականք ի մկրտութիւնն. «Իմաստունն Սողոմոն, ըստ կենցաղոյս իւրաց զժամանակս բաժանելով և իւրաքանչիւր ումեք եղելոցն պատշաճագոյն որոշելով, ասէ. Ամենեցուն ժամանակ է...», *էջ 240ա—251բ*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 930բ), № 436 (էջ 197բ), № 5595 (էջ 388բ) և. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 77բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 232ա), № (հին) 1913 (էջ 209ա)։

Նույն ճառը՝ ավելի հին խմբագրությամբ ու թարգմանությամբ (սկ. «Ո զի իմաստուն էր Սողոմոն, ըստ իրս աշխարհիս կենաց») *վերագրված է Սեբերիանոս Գաբաղացուն (տես՝ ՍԵԲԵՐԻԱՆՈՍ ԳԱԲԱՂԱՑԻ անվան տակ՝* «Նորին սրբոյն Սեբերիանոսի ի հրաւիրեալսն ի մկրտութիւն»)։

լբ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի թէ չէ պատճառ չարեաց Աստուած. «Բազում են վարդապետութեան օրինակք, որք ի ձեռսն զքահանայականսն սաղմոսողին Դաւթայ ի զօրացելոյն ի նմա հոգոյն ցուցան մեզ...», *էջ 251բ—264ա*։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1500 (էջ 933ա), № 436 (էջ 201ա), № 5595 (էջ 381բ) և. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217 (էջ 81բ). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 244ա), № (հին) 1913 (էջ 220բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 164ա)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Բազումք են վարդ.»։

լգ. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի յաղագս ողորմածութեան և յաղագս աղօթից. «Գիտացի իսկ յառաջագոյն զառ ի յինէն ե-

[1] *Որոշ օրինակներում՝* արակերտս *կամ* արակերպս։

ղեալ առ ձեզ մխիթարութեան խրատ վասն բարեգործութեան...», *էջ 264ա—270ա*:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 436 (էջ 204բ) են. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 314 (էջ 256բ). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61 (էջ 150բ):

□ *Պահոց գրքի այլ օրինակներ տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. №№ 436, 2549, 1500 են. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 406, № 619. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 217. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 61. Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 54 (էջ 264—275, ոչ լրիվ օրինակ) են*:

2. Հարցողաց գիրք: *Բաղկացած է երեք մասերից: Ա և Բ մասերը կազմում են գրքի առաջաբանը. Գ. մասը բաղկացած է հարցուպատասխաններից*:

ա. Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոց յառաջաբան գրոցս յաղագս կրօնաւորաց, «Զգուշական կենցաղոս մի դիտաւորութիւն ունի, զոգոյն փրկութիւն. և ամենայն որ կարէ առ նա՛ գործակցել զյօժարութիւնն այսպէս իբրև զաստուածային պատուիրանն, հանդերձ երկիւղի պահել...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1330, էջ 142ա—144ա*:

բ. Նորին հրամանք կրօնաւորականք. «Քանզի Աստուծոյ շնորհօքն յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեծ եկաք յայսոսիկ, որք [զ]մի և զնոյն տեսութիւն վարուց բարեպաշտութեան հաստատեալք, և դուք բարեաւք յայտնի էք ուսանել ինչ...», *էջ 144ա—147ա*:

գ. Հարցումն եղբաւրացն, պատասխանի սրբոյ Բարսղի. «Հարցողին. Քանզի ետ մեզ բանն իշխանութիւն հարցանել, նախ զան զամենայն աղաչեմք ուսանել, եթէ [կարգ իցէ և հետևումն ի պատուի]րանս Աստուծոյ...: Ասողին. Հարցումդ ձեր առաջնոցն է, և նախ տուեալ յաւետարանսն, յորժամ մատուցեալ առ Տէրն օրինականն՝ Վարդապե՛տ, ասէ, ո՞ր առաջին պատուիրան յօրէնսն է...», *էջ 156ա—229ա*:

Այս մասը բաղկացած է 361 հարցուպատասխաններից, որոնց ցանկը գտնվում է բնագրից առաջ՝ «Սրբոյն Բարսղի հարցողաց ցանկն» *(էջ 148ա—155ա): Հետնադարյան գրչագրերում այս թիվը երբեմն հասցվել է 362-ի կամ 363-ի*:

Որոշ օրինակներում այս Գ մասն սկսվում է «Նախ զան զամենայն աղաչեմք ուսանել» *բառերով*:

□ *Հարցողաց գրքի ամբողջական կամ մասնակի այլ օրինակներ տես նաև նույն մատ. ձեռ. №№ 146, 436, 524, 707, 829, 1130, 1500, 1924, 1952, 5595, 5610, 6590, 6708 են. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №№ 336, 406, 619. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № (հին) 1209, № (հին) 590. Զմմառի վանքի ձեռ. № 139 (Բ մասի սկ.* «Վասն զի Աստուծոյ շնորհօք յանուն». *Գ մասի սկ.* «Զի ետ մեզ Բանն իշխանութիւն»*), № 474. Ղալաթիայի Ազգ. Մատ. ձեռ. № 84 (խոր.* «Ճըգնողականացն կրօնաւորաց»*). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 136. Փարիզի* Bibl. Nat. Ms. Arm. 109. *Հռոմի* Bibl. Casanat. Ms. 2053.

Ձեռագրերում ընդհանրապես Հարցողաց գրքին կից կան 11 հոդվածներից բաղկացած հետևյալ վանական կանոնները, որոնք որոշ ձեռագրերում գտնվում են նաև առանձին.

— Կանոնք սուրբ հօրն Բարսղի սահմանեալ. «Ա. Եթէ [որ] ողջ իցէ մարմնով և անփոյթ արասցէ զաղօթից կամ զժամանց սաղմոսաց՝ պատճառելով զպատճառս մեղաց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1330, էջ 229ա—229բ*:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1924՝ խոր. նույն. (էջ 125բ), № 829՝ «Կանոնականք և որչափ պատուհասք» *(էջ 242բ), № 5595՝ նույն խոր. (էջ 227բ), № 436՝* «Նորին Բարսղի արտաքոյ թուոցն» *(էջ 270բ) են. Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 84՝* «Նորին Բարսղի արտաքոյ թուոցն» *(էջ 590)*:

Այս հավելյալ 11 կանոնները նույնն են հեղինակի «Գիրք կանոնական ...առ սուրբն Ամփիլոքոս Իկոնացւոց եպս.» *կանոնախմբի Խ—Ծ հոդվածների հետ (տես ստորև՝* Կանոնական երկեր, *§ 1)*:

Դրիսսենը գտնում է, որ հայերեն Հարցողաց գիրքը կազմված է հունարեն ընդարձակ կանոնների (Regulae fusius tractatae,

PG 31, *էջ 889—1052)* և համառոտ կանոնների (Regulae brevius tractatae, PG 31, *էջ 1051—1306) շարունակյալ թվարկումով: Եվ ապա ավելացնում է. «Հարցումներու այս խումբին կը յաջորդեն... 10 կանոններ՝ ամփոփուած* 'Կանոնք սուրբ հօրս Բարսղի սահմանեալ' *խորագրի տակ. այս հատուածի սկզբնաւորութիւնը ցոյց կուտայ թէ մէկ քանի* կանոնականքի *ամփոփումն է* (synthèse), *ինչպես որ կը գտնուին* PG 31, *էջ 1305 և յաջորդ էջերու մէջ»*[1]:

3. Վեցօրեայք:

Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց ճառք վասն վեցօրեայ արարչութեանն: Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյ Ղազարու, յամի 1830—ՌՄՀԹ:

Հրատարակիչներն առաջաբանում հայտնում են, որ տպագրությունը կատարել են իրենց ունեցած միակ ձեռագիր օրինակից, որը ոչ հին է եղել, ոչ ընտիր, այլ վրիպագիր և աղավաղված, «զորոյ թէպէտ ըստ կարի սրբեցաք ի բաց զսխալանսն զգուշութեամբ՝ ըստ յոյն բնագրին և մանաւանդ ըստ կարգի բանիցն պահանջելոյ, սակայն մնաց տակաւին ոչ սակաւ մթութիւն և երկբայութիւն աստ և անդ»:

Բնագիրը բաղկացած է հետևյալ 9 ճառերից.

ա. Ճառք սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարոյ Կապադովկացւոյ յաղագս վեցօրեայ աւուրց արարչութեանն: Ճառ առաջին. «Լուաք ի գիր՝ զի ասէ. Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Քանզի վայելուչ է և գեղեցիկ սկիզբն...», *էջ 1—22:*

բ. Ճառ երկրորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Ի սակաւ բանս պատմագրացն ի հարուստ ժամ աշխատ եղեաք ընդ այգ ընդ առաւօտս...», *էջ 22—42:*

գ. Ճառ երրորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Գործք աւուրն առաջնոյ, որ և կոչեցաւ՝ որպէս էն ճշմարտի՝ մի...», *էջ 43—65:*

[1] Բազմավէպ, *1954, էջ 283:*

դ. Ճառ չորրորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Ազգի ազգի տեսիլք մոլեգինք լինին ի քաղաքս բազումս, և յայգուէ մինչև ցերեկոյ միտ եդեալ պշուցեալ հային իբրև ի դարման իմն և ի կերակուր աչաց ցանկութեամբք բնակիչք նոցա...», *էջ 66—81:*

ե. Ճառ հինգերորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Եւ ասաց, ասէ, Աստուած. Բղխեսցէ երկիր բանջար խոտոյ...: Պատշաճող յօրինուածով յետ հանգչելոյ երկրի ի ծանրութենէ ջուրցն, որ ունէին զերեսս նորա, եղև ի վերայ նորա հրաման արարչին՝ բխել նախ զբոյսս...», *էջ 82—105:*

զ. Ճառ վեցերորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Որ երբեալ նստիցի լինել տեսող նահատակացն մարտի, պարտի այնուհետև ժուժկալութիւն համբերութեան ունել յանձին...», *էջ 106—136:*

է. Ճառ եօթներորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Եւ ասաց, ասէ, Աստուած. Բղխեսցեն, ասէ, ջուրք զեռուն կայտառ...: Յետ լինելոյ լուսաւորացն, ապա և ջուրքն առնոյին հրաման բղխել զեռուն կայտառ շունչ կենդանի...», *էջ 137—155:*

ը. Ճառ ութերորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Եւ ասաց, ասէ, Աստուած. Բղխեսցէ երկիր զեռուն կայտառ...: Արդ եկն հրամանն և հորդեցաւ ճանապարհ գործով երագընթաց ակնարկելովն, առնոյր և երկիր զարդ անդստին յիւրմէ հաստատել անասնոցն ամենայնի...», *էջ 156—179:*

թ. Ճառ իններորդ վասն վեցօրեայ աւուրց արարչութեանն. «Սեղան որ առաջի ձեր կազմեցաւ ընդ առաւօտս՝ աստուածեղէն բանին, որպիսի՞ ինչ արդեւք ձեզ ճաշակեցաւ...», *էջ 180—201:*

□ *Վեցօրյա ճառերի օրինակներ տեսնել Երևանի Պետ. Մատ. ձեռ. №№ 620, 1243, 1657, 1939, 3275, 3457, 4001, 5032, 5353, 5595, 5686, 5919, 6731, 7028, 8352, 10258 են: Տես դարձյալ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № (հին?) 352 (ծաղկաքաղ), № (հին) 177 և № (հին?) 1459. Վիեննայի Մխիթ.*

Մատ. ձեռ. №№ 249[1]*, 612, 1075, 1121. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №№ 68, 406, 470, 1062, 1093, 1801. Ղալաթիայի Հայոց Եկղ. Մատ. ձեռ. № 87. Զմմառի Մատ. ձեռ. №№ 429, 605։*

Թ. Թոռնյանը Վեցօրյա ճառերից քաղվածաբար հրատարակել է ընդարձակ հատվածներ՝ դրանք խմբավորումների վերածելով ըստ բնույթի. տես՝ Թ. Թոռնյան, «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց», հտ. Բ, Վիեննա, 1910, էջ 1—94։ Հրատարակիչը հատորի նախաբանում ասում է. «Մեր առջևն ունէինք յունարէն բնագիրն, որուն ինչպես նա՛և մեր Մատենադարանին երկու ձեռագրաց օգնութեամբ կարելի եղաւ ճշդել տպագրին քանի մը անճշդութիւններն, որոնց մէջէն նշանակալիցն է յաջորդը։ Տպագիրն ունէր՝ Զոր ինչ խորհիցիմք ներգործել, *իսկ մեր օրինակն ունի՝* Զոր ինչ խորհիցիմքն գործել»։

4. Առանձին երկեր։

ա. Բարսղի Կեսարացւոյ ասացեալ. «Զտօն յայտնութեանն և ծննդեանն միաւորէ, վասն մի բնութեան լինելոյ Աստուծոյ և մարդոյ, և խառնուածին ճշմարտանալոյ և Աստուծոյ մարդ լինելոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 948, էջ 36բ—37բ։*

բ. Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու ի գալուստ տեառն ի տաճարն, ի մեկնութենէ Ղուկայ Աւետարանին ի տատրակն և յաղաւնին. «Զամենայն տօնախմբութիւնս պարտ է մեզ կատարել սաղմոսիւք և օրհնութեամբ. և զպրութեամբք ընթերցուածոցն որ ինչ է խորհրդոյն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 436, էջ 138ա—141բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1798՝«Ի մեծի աւուր գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի տաճարն առ ծերունին» *են (էջ 452ա), № 1525՝* «Ի մեծի աւուր տեառնընդառաջին» *են (էջ 152բ), № 5244՝ խոր. նույն. (էջ 103բ), № 993՝ խոր. նման. (էջ 178ա) են. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202 (էջ 142բ), № 212 (էջ 158բ), № 224 (էջ 59ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 1 (էջ 95բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 71 (էջ 475ա), № 154Ա (էջ 452). Արմաշի վանքի ձեռ. № 12 (էջ 142բ). Անկյուրիայի ձեռ. № 1 (էջ 236)։*

Որոշ օրինակներում սկ. պատահում է նաև՝ «Զամենայն տօնախմբութիւնս Աստուծոյ պարտ է», «Զամենայն տօնս և զօրհներգութիւնս պարտ է», «Ամենայն տօնախմբութիւնս պարտ է»։

գ. Բարսղի Կեսարու ի բան Աւետարանին որ ասէ՝ Վարդապետ, զի՞նչ գործեցից, զի զկեանս ժառանգեցից. «Արարիչ Բանն Աստուած անքննելի զօրութեամբ, ահագնակերպ տեսլեամբ երևեալ Յովբայ յամպոյ և ցուցանէ ասելով. Քո հասեալ իցէ յակն ծովու...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3940, էջ 245ա—253բ։*

Տես նաև Տյուբինգենի KUB Ma XIII 95 (fol. 134^{r})։

դ. Խօսք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկեցւոյ ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդւոյն Աստուծոյ քան զՀօրն, և իջուցանեն զՀոգին սուրբ ի հնազանդութիւն, և հաւասարեն ընդ հաւասարութիւն արարածոց. «Գովեցի ես զփոյթ յօժարութեան ուսումնասիրութեան քո և զմեծ աշխատութիւն վաստակոյդ, զոր ունիս դու յաւելուած ի վերայ վարուցդ քոց. և ուրախութիւն մեծ եղև ինձ վասն քո...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1315, էջ 21ա—59բ (թերի)։*

Վերջին բառերն են՝ «այլ ցամաքեցաւ»։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1798՝ խոր. նույն (էջ 332ա—406բ, վերջից նույն թերությունն ունի)։

ե. Խրատք սրբոյն Բարսեղի (sic) Կեսարացւոյ հայրապետի ասացեալ վասն ամենայնի. «Իսկ բարիշուք այրն Աստուծոյ տեսեալ ժողով զմանկունսն՝ ուսուցանէր նոցա անձանց մաքրութիւն, և անախտութիւն մտաց [և] մարմնոյ, զնացք հեզութեան, ձայն փառաւոր և խօսք բաւական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4749, էջ 185բ—188բ։*

---

1 *Վիեննական այս օրինակն ունի նաև մի համառոտ* «Յառաջաբանութիւն» *(սկ.* «Մի՛ ոք ի քննողաց զրպարտեսցէ»), *որը չկա վենետիկյան տպագրության մեջ։ Սույն առաջաբանի մասին և ձեռագրի նկարագրությունը տես Հ. Տաշյան, «Ցուցակ», էջ 639—640։ Այսպիսի առաջաբան ունեցող օրինակներ կան նաև Երևանի Պետ. Մատ. ձեռագրերում։*

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 257 (էջ 215ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 791 (էջ 201ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 11 (էջ 326)։

գ. Երանելոյն Բարսեղի (sic) Կեսարու հայրապետի ասացեալ վասն պահոց. «Շաբաթ տուաւ Հրէից ազգին և ասացաւ թէ՝ Հանգիցէ գրաստ քո և եզն քո, ծառայ քո և վարձաւոր քոյ. լիցին և պահք շաբաթ և հանգիստ քրիստոնէից...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4749, էջ 233ա—235բ։*

Տես նաև նոյն մատ. ձեռ. № 700 (էջ 62ա), № 4822 (էջ 293ա) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 257 (էջ 259բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224 (էջ 274ա) և № 313 (էջ 78ա), № 791 (էջ 238բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 9 (էջ 570), № 11 (էջ 392), № 243 (էջ 149). Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 464 (էջ 298ա). Զմմառի վանքի ձեռ. № 447 (էջ 178բ)։

Որոշ օրինակներ ունեն սկ. «Շաբաթ Հրէից ազգին ասացաւ»։

Ըստ Գ. Զարբհանալյանի՝ Երուսաղեմի ձեռագիր օրինակներից մեկի համաձայն այս ճառը թարգմանված է «ի յունականէն ի հայ՝ ի Ստեփաննոսէ քահանայէ և յետին կրօնաւորէ»[1]։

է. Խրատք Երանելոյն Բարսղի՝ վասն ապաշխարութեան. «Պահօք ոսկեհուռն ծաղկացն հիւսուածովք զհաւատացելոցն փառաւորել, և պաճուճեալ կամեցեալ զգլուխս...», *Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 209, էջ 211բ—223ա։*

ը. Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոյ խրատ յաղագս կրօնաւորաց առ միաբանակեացս և որ առանձին ճգնին. «Ըստ Քրիստոսի իմաստասիրութեանն յանձն առեալ, և յաշխարհական ցանկութեանց և մտադիւրութեանց և հոգւոց վերագոյն համբարձեալ զխորհուրդս, և ի մարմնաւոր ախտից ամենայն իրօք զմիտս անջատել և որոշել փութացեալ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 787, էջ 12ա—13բ։*

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 304 (էջ 14բ)։

1 Գ. Զարբհանալյան, «Մատենադարան», էջ 335։

թ. Հարցումն եթէ պարտ է զաղօթս նախագրել քան զամենայն ինչ. «Ամենայն գործ, ո՞վ սիրելի, և ամենայն բան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի կրօն է բարեպաշտութեան և առաքինութեան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 787, էջ 13բ—19ա։*

Սույն ճառը թեև ձեռագրում («Հարանց վարք») Բարսեղի վերոնշյալ «Խրատ յաղագս կրօնաւորաց» ճառին է հաջորդում, բայց նրա անունը չի կրում։ Այնու ամենայնիվ մենք այդ տեղավորում ենք Բարսեղի ճառերի շարքում, նկատի ունենալով, որ այդպես է վարվել Գար. Զարբհանալյանը, թերևս մի որևէ հիմք ունենալով[1]։

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 304 (էջ 15ա, սկ. «Ամենայն գործս, ո՞վ սիրելի»)։

ժ. Նորին Բարսղի սրբոյ ի մայր որդւոցն Զեբեդեայ. «Վկայիցն մեզ տօն ժամանեաց, և Քրիստոսի սէրն և շնորհն ժողովեաց զմեզ։ Քանզի յաղագս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սիրոյն ի վկայիցն ճեպիմք ի պատիւ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 436, էջ 206բ—209բ։*

ժա. Բարսղի արք եպիսկոպոսի Կեսարու թուղթ առ Տերենտիոս Ստրատելատ, վասն մահուան դստերաց նորա. «Եւ արդ առ քեզ են իմ բանքս, ո՞վ քաջդ և առաքինի նահատակդ։ Նա և ես իսկ յոյժ զարմացեալ եմ ընդ քեզ, զի երբեմն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 996, էջ 293բ—294ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1525՝ «Բարսղի... առ Տերինտինոս ստրատեղատ» *ևն (էջ 185բ) ևն. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 202 (էջ 174բ), № 212 (էջ 185բ) և № 224՝* «Բարսղի... առ Տերինտինեա ստրատելատ» *(էջ 194ա)։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1Ա (էջ 267ա), № 154Ա (էջ 554). Անկյուրիայի ձեռ. № 1 (էջ 348)։*

Որոշ օրինակներ ունեն սկ. «Եւ արդ առ քեզ բանքս իմ», «Արդ առ քեզ են բանքս»։

ժբ. Սրբոյն Բարսղի թուղթ առ հաւատաւորս. «Քոյրք սուրբք և առաքինիք, ճգնաւորք և արգելաւորք, որք զանկաշառն (sic) և

1 Անդ, էջ 337։

զհանապազամեռ մրցումն կուսութեան ստացեալ ունիք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1330, էջ 229բ—230ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1924՝ խոր. նույն (էջ 126բ) են։

ժգ. Երանելոյն տեառն Բարսղի մեծի թուղթ զղջման առ կուսանն անկեալ ի կուսութենէ իւրմէ. «Այժմ ժամանակ է ինձ զմարգարէականն զայն գոչել և ասել. Ո՞վ տացէ գլխոյ [իմոյ] ջուր և աչաց իմոց աղբերս արտասուաց, և լացից զբեկումն դստեր ժողովրդեան իմոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 988, էջ 278ա—283բ։*

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 232 (էջ 218ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 62 (էջ 146ա)։

ժդ. Վասն ճշմարիտ և անապական կուսութեան. «Բազումք յայնցանէ, որք փեսային մերոյ Քրիստոսի հետևեալ եղեն...»։ *Տես՝ ԲԱՐՍԵՂ ԱՆԿԻՐԱՑԻ։*

ժե. Տեառն Բարսեղի (sic) ասացեալ յաղագս ողորմութեան և անողորմութեան. «Մի՛ որք տղայաբարոք և անընտրական ինչ մտօք ժպրհեսցի...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 362, էջ 75—89?։*

Այս ճառը նույն է Հովհան Մանդակունու անունով հրատարակված «Թուղթ յաղագս ողորմութեան տնանկաց» (սկ. «Մի՛ որք տղայաբար բարուք և անընտրողական ինչ մտօք») ճառի[1] հետ և հավանաբար Հովհան Մայրագոմեցու գրչին է պատկանում։ Նույն ճառը գրչագրերում երբեմն պատահում է նաև Յովհ. Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու անուններով[2]։

Թորոսյան Հովհ. — *«Հ. Արսէն Սուքրի», անդ, 1932, էջ 343—353, 517—523։*

Տալիս է Բարս. Կեսարացու մատենագրության ուսումնասիրության բնագավառում Ա. Սուքրյանի կատարած աշխատանքների գնահատականը։

Թորոսյան Հովհ. — *«Ս. Բարսեղ Կեսարացի. իր 'Վեցօրեայ' ճառերը և հայ թարգմանութիւնը», անդ, 1934, էջ 327—336 412—422։*

Ստորագրված՝ «Հ. Յ. Թ.»։ Համեմատություններ է կատարում Վեցօրյա ճառերի հուն. բնագրի և հայ. թարգմանության միջև։ Համեմատություններ անելով նաև նույն ճառերի և Եզնիկի միջև՝ գտնում է, որ վերջինս կրել է Վեցօրյա ճառերի ազդեցությունը՝ նրանց հայ. թարգմանության միջոցով։

Խաչիկյան Լ. Ս. — *«Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար)», Երևան, 1951, էջ 84—85։*

Հակոբյան Վ. *(հրատ.)* — *«Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, Երևան, 1964, էջ LXXVI, 329—362, 613—622։ — Նույնի հտ. Բ, Երևան, 1971, էջ LVI—LVII, LXV—LXX, 101—180. 348—377։*

Հացունի Վարդ. — *«Կենսագիր և նկարագիր Եզնկայ վարդապետի Կողբացւոյ»*, Բազմավէպ, *1893, էջ 329—334։*

Ստորագրված՝ «Հ. Վ. Ս[ոմունճեան]»։ Մի շարք համեմատություններ է կատարում Եզնիկի և Բարսեղի Վեցօրյա ճառերի միջև։

Ղազիկյան Արս. — *«Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հտ. Ա, Վենետիկ, 1909—1912, էջ 330։*

Ճերենյան Գնել — *«Հայ պատարագի ծագումն ու զարգացումը»*, Հասկ *(հայագիտ. տարեգիրք), Անթիլիաս, Ա տարի, 1948, էջ 130—144։*

Մարքսյան Հակ. — *«Մեծն Բարսեղ Կեսարացի»*, Փարոս, *Սոֆիա, 1929, № 28։*

Մելիք-Թանգյան Ներս. — *«Հայոց եկեղեցական իրաւունքը», գիրք Ա, Շուշի, 1903, էջ 236—249։*

Մուրադյան Կ. Մ. — *«Բարսեղ Կեսարացին և հայերը (Կապադովկյան գործունեության շրջան)»*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, *1968, № 9(304), էջ 49—61։*

Մուրադյան Կ. Մ. — *«Բարսեղ Կեսարացու 'Վեցաւրեայ'-ն», անդ, 1970, № 1(320), էջ 79—88։*

Մուրադյան Կ. Մ. — *«Ս. Բարսեղ Կեսարացի»*, Էջմիածին *(ամս.), 1970, № 3, էջ 33—39։*

Մուրադյան Կ. Մ. — *«Բարսեղ Կեսարացու 'Վեցօրեայ'-ի և Անանիա Շիրակացու որոշ երկերի տեքստաբանական առնչակցությունը»*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, *1971, № 3(339), էջ 99—107։*

Մուրադյան Կ. Մ. — *«Սրբագրություններ Բարսեղ Կեսարացու 'Վեցօրեայ'-ում»*, Բանբեր Մատենադարանի, *№ 10, 1971, էջ 43—54։*

Մուրադյան Կ. Մ. — *«Գրչագիր վկայություններ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների մասին»*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, *1972, № 10(358), էջ 49—57։*

Մուրադյան Կ. Մ. — *«'Վեցօրեայ'-ի հայերեն թարգմանության ժամանակն ու բնագիրը»*, Պատմա-բանասիրական Հանդես, *1973, № 3(62), էջ 161—173։*

Մուրադյան Կ. Մ. — *«Ս. Բարսեղ Կեսարացու ճառերը»*, Էջմիածին *(ամս.), 1973, № 8, էջ 20—25։*

Մուրադյան Ն. Մ. — *«Ընդհանուր հատվածներ ու արբագրություններ Կեսարացու և Շիրակացու գործերում»,* Լրաբեր Հասարակական Գիտությունների, *1975, № 1, էջ 55—72:*

Մուրադյան Ն. Մ. — *«Կեսարացու 'Վեցօրեայ'-ն Շիրակացու տիեզերագիտական աշխատությունների աղբյուր», անդ, 1975, № 3, էջ 95—114:*

Մուրադյան Ն. Մ. — *«Բարսեղ Կեսարացին և նրա 'Վեցօրեայ'-ն հայ մատենագրության մեջ», Երևան, 1976:*

Նազարեթյան Սահ. — *«Ակնարկ Ս. Բարսեղի 'Վեցօրէից' վրայ»,* Պատկեր, *Գ տարի 1892/93, էջ 397—401, 443—449, 481—485, 518—527, 534—545. Դ տարի, 1893/94, էջ 15—24, 34—40, 56—62, 86—92, 116—120, 128—134, 162—165, 178—183, 210—216, 234—239, 249—254, 284—288, 298—302:*

Նահապետյան Գաբր. — *«Ս. Բարսեղի Կեսարացւոյ 'Յաղագս վեցօրեայ առարչութեան'»,* Բազմավէպ, *1907, էջ 395—399, 494—498, 536—538. 1908, էջ 11—18:*

Նոյնը լրացումներով վերահրատարակված է հեղինակի հետևյալ հատորում.

Նահապետյան Գաբր. — *«Ուղղագրութիւնք ազգային մատենագրաց», Վենետիկ, 1907, էջ 179—248, 424—427:*

Նորայր Ն. Բյուզանդացի — *«Հայկական բառաքննութիւն», Կ. Պոլիս, 1880, էջ 52, 61—69:*

Նորայր Ն. Բյուզանդացի — *«Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս, 1900, էջ 25—26, 30, 471—472:*

Չախպարունյանց Հովհ. — *«Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», հտ. Բ, Էջմիածին, 1842, էջ 217—220:*

Ոսկյան Համ. — *«Վասպուրական-Վանի վանքեր», մասն Գ, Վիեննա, 1947, էջ 1020—1021:*

Պողարյան Նոր. — *«Հայ գրողներ (Ե—ԺԷ դար)», Երուսաղեմ, 1971, էջ 75 և 266—267:*

Սարգիսյան Բարս. — *«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1269—1270:*

Խոսում է Բարսեղ Կեսարացու վարքի հեղինակության մասին (Ամփիլոքոս Իկոնացու՞, թե Հելլադիոս Կեսարացու):

Սողոմոնյան Սող. — *«Հայոց եկեղեցական եղանակները»,* Արարատ, *1894, էջ 222—227 և 256—260:*

Սուքրյան Արս. — *«Ս. Բարսեղ և իր երկասիրութիւնքն»,* Բազմավէպ, *1873, էջ 112—126:*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Հ. Թորոսյան, Բազմավէպ, *1932, էջ 348—350:*

Սուքրյան Արս. — *«Մեծն Ներսէս Պարթև», անդ, 1877, էջ 319—338:*

Օգտագործում է Բարս. Կեսարացու նամակներում եղած տեղեկությունները Հայաստանի պատմության վերաբերյալ:

Վարդանյան Ար. — *«Բառաքննական դիտողութիւններ», մասն Ա, Վիեննա, 1913, էջ 22—23 ևն: Նոյնը՝ մասն Բ, Վիեննա, 1914, էջ 10—11 ևն: Նոյնը՝ մասն Դ, Վիեննա, 1923, էջ 38—39 ևն:*

Վարդանյան Ար. — *«Նիւթեր հայերէն բառագրութեան», Վիեննա, 1920:*

Տաշյան Հակ. — *«Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», հտ. Բ, Վիեննա, 1901, էջ 208—212:*

Տեր-Մկրտչյան Գալ. — *«Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896, էջ 34:*

Տեր-Պողոսյան Պ. — *«Սուրբ Բարսեղ Կեսարացի և իր գրութիւնները հայերէն թարգմանութեամբ»,* Հանդէս Ամսօրեայ, *1968, էջ 386—438. 1969, էջ 129—158, 257—292, 385—398:*

Абегян М. — „История древнеармянской литературы", т. I, Ереван, 1944, стр. 80—81, 89, 91—92, 100, 263, 444.

Мурадян К. М. — „Василий Кесарийский и его 'Шестиднев' в древнеармянской литературе" (Автореферат диссерт. на соискание ученой степени кандидата филологических наук), Ереван, 1970.

Оганесян Л. А. — „История медицины в Армении с древнейших времен до наших дней", ч. I, Ереван, 1946, стр. 164—169.

Bardenhewer O. — „Geschichte der altkirchlichen Literatur", Bd. III, Freiburg i. B., 1912. S. 130—162.

Cavallera Ferd. — „Le dossier patristique de Timothée Aelure", *Bulletin de Littérature Ecclésiastique*, Toulouse. t. XL, 1909, p. 342—359.

Driessen W. — „Les recueils manuscrits arméniens de saint Basile", *Le Muséon*, t. LXVI, 1953, p. 65—95.

Հայ. թարգմանությունը՝ «Ս. Բարսղի հայ ձեռագիրներու հաւաքածոն» (թարգմանիչ՝ Քեր. Զրաքյան), Բազմավէպ, *1954, էջ 6—10, 65—70, 237—242, 281—287։*

Lebon J. — „Les citations patristiques grecques du Sceau de la Foi", *Revue d'Histoire Ecclésiastique*, t. XXV, 1929, p. 5—32.

Mariès Louis — "Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de 'Contre les sectes'", Paris, Impr. Nationale, 1924, p. 37.

Նույն հատվածը տես նաև ի Revue des *Études Arméniennes*, t. IV, 1924, p. 149.

Oudenrijn (Van den) M. A. — „Die Messe des hl. Basilius bei den 'Frati Armeni' in Italien", Հանդէս Ամսօրեայ, *1952, էջ 91—96։*

Peeters Paul — „Un miracle des SS. Serge et Théodore et la Vie de S. Basile dans Fauste de Byzance", *Analecta Bollandiana*, t. XXXIX, 1921, p. 65—88.

Somal P. S. — „Quadro delle opere di vari autori anticamente tradotte in armeno", Venezia, 1825, p. 18—20.

ԲԱՐՍԵՂ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼՍԵՑԻ

Տես՝ ԲԱՐՍԵՂ ՀՈԼՈՎ։

ԲԱՐՍԵՂ ՀԱՂԲԱՏԵՑԻ

Էջմիածնի միաբան, ԺԷ դ.։ 1681 թ. ստորագրել է այն կոնդակի տակ, որով Էջմիածնի միաբանությունը Եղիազար Այնթապցուն հրավիրել է բազմելու ամենայն հայոց կաթողիկոսական գահի վրա։ Բարսեղ Հաղբատեցու անունը՝ ստորագրող միաբանների շարքում առաջինն է։ Տես՝ Խ. Մխիթարյան, «Համառօտ պատմութիւն Երուսաղէմի...», Երուսաղեմ, 1867, էջ 106—111։ Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Բեյրութ, 1960, § 1808։ Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 480—481։

ԲԱՐՍԵՂ ՀՈԼՈՎ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կոչված նաև Կ. Պոլսեցի *կամ* Ստամպոլցի: *ԺԷ դարի թարգմանիչ և հայ եկեղեցական գրքերի սրբագրող։ Լատինական կրթություն է ստացել Արևմուտքում, և որոշ ժամանակ Արևելքում միսիոնարական պաշտոն վարելուց հետո անցել է Հռոմ, ուր 1670 թվից,—և կամ այս թվականից քիչ առաջ,— սկսել է զբաղվել թարգմանությամբ ու եկեղեցական գրքերի սրբագրության գործով։ Մեռ. 1693 թ. Հռոմում և թաղվել Հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցում։ Բարսեղ Հոլովի հայերեն թարգմանությունները հանդիսանում են հայերեն լեզվի օրենքների և կանոնների բռնաբարման բարբարոսական փորձ։ Բարսեղ Հոլովը, իր բարեկամ Հովհաննես Հոլովի հետ, հայերեն լեզվի աղավաղման և աղճատման ուղղությամբ վնասաբեր աշխատանք է թափել՝ հայերենի քերականությունն ու բառային նյութը սրբագրության ենթարկելով լատիներենի առանձնահատկությունների համաձայն։ Բարսեղի նպատակն էր, ինչպես նկատում է Գարբ. Ավետիքյանը, «ստեղծել մի նոր լեզու» և դրանով «կազմել մի նոր ազգություն»[1]։ Այդ*

[1] *Տեսնել նրա ներքոնշյալ աշխատությունը, էջ 30։*

ազգությունը բաղկացած էր լինելու կաթոլիկություն ընդունած դավանափոխ հայերից: Ահա այս նպատակով էլ Բարսեղը ձեռնամուխ էր եղել նաև սրբագրության ենթարկելու հայոց եկեղեցական գրքերը: Իր թե ենելով հռոմեական եկեղեցու դավանական «ուղիղ» սկզբունքներից, նա աստվածաբանական խնդիրների մասին իր խակ ու թերի հասկացողությունների համաձայն սրբագրել է հայկական Խորհրդատետրը 1670-ական թթ. սկզբներին, և նույնպիսի փորձեր է կատարել Ժամագրքի և Շարակնոցի վերաբերմամբ: Խորհրդատետրի հայերեն սրբագրված բնագիրը և նրա լատիներեն թարգմանությունը 1677 թ. տպագրությամբ լույս են ընծայվել Հռոմում, Պրոպագանդայի տպարանից. նրանց վերջում տրվել են նաև Ժամագրքի և Շարակնոցի համար առաջարկվող սրբագրությունների ցուցակները („Correctiones officii divini Armenorum“ և „Correctiones hymnorum Armenorum“)[1]. Իր սրբագրություններում Բարսեղը հանդես է բերել թե՛ լեզվի և թե՛ նյութի ծանոթության բնագավառում անհանդուրժելի տգիտություն, որը ձեռնհասորեն ցույց է տըրված Գարբ. Ավետիքյանի քննադատական աշխատության մեջ: Բարսեղ Ճուռվն իր այս ձեռնարկումները կատարում էր այն ժամանակ, երբ Լեհաստանում տեղի էր ունենում հայ գաղութի բռնի կաթոլիկացումը, և չի կարելի անտեսել այն գաղափարական կապը, որը միացնում էր նրան լեհահայության նույնպես դավանափոխ ղեկավարների հետ, որոնց վստահության և հիացմունքին առարկա էր Բարսեղը: Սխալ է այն կարծիքը, թե «Ճուռվ» մականունը Բարսեղի թշնամիներն են տվել նրան այն իմաստով, որ ճուռվ նշանակում է գլռում, անկում, և իբր թե այն պատճառով, որ Բարսեղը հայերեն լեզուն տանում էր դեպի անկում: Ընդհակառակն՝ հայտնի է, որ Բարսեղը ինքն էր ընտրել իր «Ճուռվ» մականունը՝ արտահայտելու համար լեզուն փոփոխելու, փոփոխության ենթարկելու, իր ձգտումը (ճուռվ=փոփոխում): Մեզ հայտնի է Հովհաննէս Մրքուզի մի քննադատական-հակաճառական նամակն առ Բարսեղ Ճուռվ՝ դավանական հարցերի շուրջ, 1682 թ. (Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՐՔՈՒԶ, «Յովհաննու բանի սպասաւորի առ Բարսեղ տրամաբան վիպի երկաբնակի գրեցելոյդ պատասխանի»):

* * *

Բարսեղ Ճուռվի՝ հայերենից լատիներեն կատարած թարգմանությունները տես հետևյալ անունների տակ. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ (տպ. Հռոմ, 1677) և ՏՕՆԱՑՈՅՑ (Վատիկանյան Մատ. Cod. Borg. Arm. 51):

Լատիներենից հայերեն կատարած թարգմանություններից տես՝ ՊԻՐՈՄԱԼԼԻ (Պօղ.), «Յաղագս ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէականի, առ Շահ Ապպաս արքայն Պարսից», ՓԵՐՈՒՐ (Միք.), «Մանաւանդականք առարկութիւնք որք հասարակապէս սովորք են լինել ի մահմետականաց, ի Յուդայեանց և ի հերետիկոսաց աւելականաց, ըստ կերպի և եղանակի հարցման, ընդդէմ կաթուղիկեայց ուղղափառաց, և ճոցին իսկ լուծմունք»: Նաև՝ «Տաղ ջերմեռանդագունեղ ի գովութիւն ամէնէրանունոյ կուսին Մարիամու Աստուածածնին, շարադրեցեալ լատինէրէն և յոր որէ երգեցեալ ի փառաւորագունեղէ իշխանէն՝ արքայորդւոյն սրբոյն Գազիմիրոսէ» (սկ. «Ո՜վ հոգի իմ հաւատարիմ»), Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1653, էջ 263բ—266բ:

Իտալերենից հայերեն թարգմանություններից տես՝ ԲԵԼԼԱՐՄԻՆՈՍ (Ռոբ.) «Վարդապետութիւն քրիստոնէական»:

Իտալերենից է թարգմանել նաև լատինական եկեղեցու արարողությունների վերաբերյալ մի շարք բնագրեր՝ «Գառն Աստուծոյ, որ իրալերէն կոչի Ակնուս Տէի» (սկ. «Զօրութիւն այսոցիկ Գառն Աստուծոյց վերաքաղեցեալ ի գրքէն, որ կոչի Արարողարան»), «Զօրութիւնք և օրհնութիւնք զորս խնդրէ վերագունեղ վեհապետն ի յԱստուծոյ օրհնեցութեան Գառն Աստուծոյց, են այսոքիկ որք հետևին» (սկ. «Զի տարաչնչիցին մեղք, առստանային ներողութիւնք, և ներբերիցին շնորհք»), «Կերպ ինտուլճէնցիայից, այսինքն ներողութեանց, զորս սրբու-

[1] Հայերեն հրատարակության մեջ տես էջ 21. լատիներեն հրատարակության մեջ՝ էջ 29:

թիւնն տեառն մերոյ փափին Իննոչենցիոսի Մետասաներորդի շնորհէ համպարից վարդարանից, խաչից և պատկերաց ոսկեղինաց կամ արծաթեղինաց, և կամ այլոց մատենականաց, որք իթալերէն կոչին մետալեայ, նորապէս հաստատեցեալ, առ ի հաւաքել զայլ իմն կերպ զանազան յայնմանէ, որով զարդ վարիւր եկեղեցին» (*տե՛ս* «Որ ոք սովոր է ասել, յոյժ սակաւ զոնեայ մի անգամ ըն եօթն երեկոյ զհամպար»), *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1653, էջ 246ա—255ա։ Այս բնագրերի վերջում նշված է՝ «Միքայէլ Անճէլօ Ռիչչի խորհրդական, ի Հռոմ, ըն տպարանում գերապատիւ սենեկին առաքելականի, 1679։ Զոր թարգմանեաց Բ[արսեղ] Վ[արդապետ] Հ[ոլով], յաւուր տասն նոյեմբերի, ըն նմին ամի» (էջ 255ա)։*

Այսպիսի մի թարգմանություն է նաև, ապահովաբար դարձյալ իտալերենից, «Յաղագս սրբազնութեան վերջնոյ օծման» *խորագրով փոքրիկ երկը (տե՛ս* «Վերջնոյ օծման սրբազնութիւն ի Քրիստոսէ տեառնէ ,ներկայացուցեալ իբրև զերկնային բժշկութիւն ոչ միայն ի յառողջութիւն հոգւոյն, այլև մարմնոյն ևս»), *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 72, էջ 67ա—79ա։ Բնագրի վերջում կա հիշատակագրություն՝ «Զսոյն թարգմանեաց Բարսեղ վարդապետ Հոլով յաւուր Ե հոկտեմբերի 1670, ի մեծն Հռոմայ, ըն գերապատիւ սենեկի առաքելականի» (էջ 79ա)։ Այստեղ ևս նույնությամբ կա վերոբերյալ նշումը՝ «Միքայէլ Անճէլօ Ռիչչի... 1679» (էջ 79բ)։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաթրճյան Հովս.—*«Հանգամանակ հաւաստոյ որով վարի Հայաստանեայց եկեղեցի», Վիեննա, 1891, էջ 43—46։*

Գաթրճյան Հովս.—*«Սրբազան պատարագամատոյցք Հայոց», Վիեննա, 1897, էջ 5—6, 595, 599—600, 607—613։*

Ղազիկյան Արս.—*«Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 1160—1161, 1174—1175։*

Տերոյենց Հովհ.—*«Իրաւախոհ», հտ. Գ, Կ. Պոլիս, 1869, էջ 69—101։*

Назарянц С.—„Обозрение истории гайканской письменности», Казань, 1846, стр. 47—48.

Avedichian Gabr.—„Sulle correzioni fatte ai libri ecclesiastici armeni nell'anno 1677“, Venezia, 1868.

Neumann C. F.—„Versuch einer Geschichte der armenischen Literatur“, Leipzig, 1836, S. 253—254.

Petrowicz Gr.—„L'unione degli Armeni di Polonia con la Santa Sede“, Roma, 1950, p. 199, 296.

Somal P. S.—„Quadro della storia letteraria di Armenia“, Venezia, 1829, p. 161--162.

ԲԱՐՍԵՂ ՃՈՆ

Է դարի երաժիշտ և շարականագետ, Շիրակ գավառի Դպրեվանքի առաջնորդ։ Ներսես Գ Շինող կաթողիկոսից հրաման ստացավ որոշել շարականների տեսակն ըստ պատշաճի և սահմանել կանոնները, ինչպես ասում են Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին՝ «ընտրել զարժանն» կամ «զպիտանին և զօգտակարն»[1]։ Այսպիսով, Բարսեղ Ճոնը կազմեց հայկական Շարակնոցի առաջին խմբագրությունը, որը նրա անունով կոչվեց Ճոնընտիր*։ Բարսեղ Ճոնին վերագրվում է Զատկի տոների մի քանի շարականների հեղինակությունը ևս[2]։ Ոմանք Բարսեղ Ճոնին շփոթել են Բարսեղ Մաշկեվորցու հետ և վերջինիս գրած՝ Մարկոսի Ավետարանի մեկնությունը Ճոնի հեղինակությունն են համարել (տե՛ս ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՎՈՐՑԻ)։*

Ձեռագրերից մեզ հայտնի է մի ճառական անխորագիր հատված, որի լուսանց-

---

1 Տես «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 69։ Համա. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 59։

2 Գ. Ավետիքյան, «Բացատրութիւն շարականաց», Վենետիկ, 1814, էջ 284—285 և 464։ Համա. և Ս. Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 101։ Բարսեղին վերագրվող շարականների մասին խոսվում է նաև նրան վերաբերող գրականության մեջ։

քում նշված է հեղինակի անունը՝ «Բարսեղ Ճոն» (սկ. «Երէ այնոՐիկ օտարՔ էին և ճեռի ի խաչէն, և միայն վարդապետական բանից նորա և ի սՔանչելիսն վայելեալՔ էին. զայնպիսի կիրս կրեցին. ապա զի՞նչ պարտ էր ասել զմօրէ նորա, որ ինՆամսեայ ժամանակաւ յորովայնին կրեաց...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1960, էջ 18ա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Ման.—«Հայոց հին գրականության պատմություն», գիրք Ա, Երևան, 1944, էջ 477—478։

Աբնյան Լ.— «Ազգային եկեղեցական բանաստեղծութեան պատմական զարգացումը», Բազմավէպ, 1915, էջ 132—138։

Ալիշան Ղև.— «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 16։

Աճառյան Հր.—«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 392—393 (§ 2)։

Դուրյան Եղ.—«Պատմութիւն հայ մատենագրութեան», Կ. Պոլիս, 1885, էջ 29։

Թահմիզյան Նիկ.—«Բարսեղ Ճոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դարում», Բանբեր Երևանի Համալսարանի, 1973, № 1 (19), էջ 211—217։

Խաչկոնց Դավ.— «Հայոց կրօնական բանաստեղծութիւն», Լումայ, 1901, գիրք Ա, էջ 238—240։

Բարսեղ Ճոնին վերագրվող շարականների մասին է։

Կյուլեսերյան Բաբգ.—«Ճոն Բարսեղ և Բարսեղ Մաշկևորցին ու Մարկոսի Աւետարանին մեկնութիւնը», Լոյս, Կ. Պոլիս, նոր շրջան, ԺԱ տարի 1905, էջ 1093—1096։

Չամչյան Միք.—«Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 347։

Սարգիսյան Բարս.—«Անանիա Թարգմանիչն և իւր գրական գործոց նմոյշներ», Վենետիկ, 1899, էջ 29—30։

Տեր-Հովհաննիսյանց Աստ.—«Ճոն Բարսեղ», Բազմավէպ, 1899, էջ 384—386։

Օրմանյան Մաղ.— «Ազգապատում», մասն Ա, Կ. Պոլիս, 1912, § 482։

Костанянц К.—„Предисловие к II изданию Шаракана», հետևյալ հրատ. մեջ. «Шаракан. Богослужебные каноны и песни Армянской восточной церкви», II изд., Москва, 1914, стр. XXIV—XXV.

Худабашев А.—„Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях», С.-Петербург, 1859, стр. 446.

Neumann C. F.—„Versuch einer Geschichte der armenischen Literatur“, Leipzig, 1836, S. 99—100.

Somal P. S.—„Quadro della storia letteraria di Armenia“, Venezia, 1829, p. 40—41.

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ [ՄԱՇԿՈՒՈՐԵՑԻ]

Կոչված նաև Բարսեղ Շնորհալի։ ԺԴ դարի հեղինակ։ Իր անունն ստացել է Կիլիկիայի Մաշկևոր կամ Մաշկվոր վանքից։ Մասնակցել է Սսի 1343 թվի ժողովին[1]։ Գրել է, 1325 թ., Մարկոսի Ավետարանի մեկնությունը, որի միայն երկրորդ հատորն է մեզ ծանոթ։ Այս աշխատության մեջ ժամանակակից կենցաղային բարքերի և հասարակական երևույթների մասին կան տվյալներ, որոնք օգտագործվել են խրատական ձևի տակ։ Բացի այդ՝ աշխատության հիշատակարանում և տեղ-տեղ նաև բնագրում հեղինակը պատմական որոշ տեղեկություններ է տալիս ժամանակի դեպքերի մասին[2]։ Ոմանք Բարսեղ Մաշկևորցուն շփոթել են է դարում ապրած Բարսեղ Ճոնի հետ։ Այդ շփոթության մեջ ընկել են Մաշկևորցու մեկնությունն արտագրող գրիչներից մի քանիսը, ինչպես կարելի է տեսնել մեկնության ձեռագիր օրի-

---

1 Մ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, Կ. Պոլիս, 1914, § 1291։ Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 341։

2 Հիշատակարանը և մի քանի քաղվածքներ տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 534—536։

նակներում, և ապա նաև մի քանի հետագա հեղինակներ, ինչպես Մ. Չամչյանը[1], Մեկնության հրատարակիչները[2], են։ Բարսեղ Սարգիսյանն աշխատել է այս շփոթությունը հարթել այն ենթադրությամբ, թե Ճոնը է դարում հավանաբար գրել էր Մարկոսի Ավետարանի Ա—Ը գլուխների մեկնությունը, որը պետք է ծանոթ եղած լիներ Մաշկևորցու օրերում, իսկ Մաշկևորցին գրել է մնացած մասի մեկնությունը՝ այդ անվանելով «Երկրորդ հատոր», որպես շարունակություն Ճոնի գրածի։ Այս տեսակետից նշանակալից է, որ Մաշկևորցու անունով մեկնության «Առաջին հատոր» ոչ մի տեղ չի հայտնվել մինչև այժմ։ Բարսեղ Մաշկևորցուն շփոթում են նաև Դրազարկի առաջնորդ Բարսեղ արքայեղբոր հետ, որը մեռ. 1275 թ.։

* * *

Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի: Արարեալ Երանելւոյն Բարսղի շնորհալի վարդապետի Ճոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն, լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք: Յօգուտ հասարակութեան մանկանց Սիովնի՝ եկեղեցականաց և աշխարհայնոց՝ ամենայն չափու և հասակի: Հատոր Երկրորդ: Տպագրեալ հրամանաւ ամենապատիւ և վեհափառ պատրիարգի Կոստանդինուպօլսոյ՝ տեառն Կարապետի Երանաշնորհ արքեպիսկոպոսի: Արդեամբ գերապատիւ և ազնուաշուք մահտեսի Աբրահամ աստուածասէր և մեծահաւատ հոգելոյս ամիրայի Թէրզեանց Ակնեցւոյ: Յիւրումն իսկ սեպհական տպարանի: Ի Հասանփաշայ խանն: 1826, ի Կոստանդինուպօլիս, ՌՄՀԵ: Աշխատութեամբ Տ. Անդրէաս վարդապետի Նարինեան Ակնեցւոյ:

499 էջ (չափ. 23.4×14.7 սմ.)։ Մեկնությունը վերաբերում է Մարկոսի Ավետարանի Թ—ԺԶ գլուխներին և սկսվում է հետևյալ բառերով. «Գլուխ Թ.: Հարցին զնա և ասեն. Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն...: Մեկնութիւն: Պարտ և արժան էր ամենայն հաւատացելոց այնքան գիտող և ծանօր լինել» են։ Բնագրի վերջում հեղինակն ունի հիշատակարան.

«Շնորհօք...։ Եւ արդ՝ եղև վճար այսր մեկնութեան՝ ի թագաւորութեանն Լևոնի որդւոյ Օշնի նորընծայ և դեռաբոյս մանկանն յո՛յժ երկիւղածի և աստուածասիրի։ Զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղայութեան իւրոյ՝ խնամեն և հոգան երեք մեծազօրն և փառաւոր իշխանքն. երկու եղբարքն հարազատ՝ պարոն Օշին և պարոն Կոստանդին, որք աստիճանաւ ազգ պարոն և գունդստապլ կոչին, և երրորդն՝ պարոն Հեթում Նղրցի, որ խառնեալ և միացեալ է ընդ նոսա՝ որպէս միտք ընդ հոգի և ընդ մարմին, ուղղելով զբոլոր տունն արքունի ի բարին...։ Եւ գրեցաւ սա ի վանս՝ որ կոչի Մաշկու, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ կաթուղիկոսի Դրազարկեցւոյ...։ Եւ էր ի ժամանակիս յայսմիկ վերակացու և առաջնորդ սուրբ ուխտիս՝ տէր Հայրապետ եպիսկոպոս...։ Եւ ի գրութեանս՝ էր թիւն Հայոց ՉՀԴ (=1325 թ.)»։

Հրատարակիչները հատորի սկզբում ունեն առաջաբան, իսկ վերջում՝ տպագրության հիշատակարան, ուր բնագրի մասին ասվում է. «Այլ սակայն առ ժամս առ ձեռն պատրաստական գտեալ գաղափարն՝ է՛ր երկրորդ հատոր նոյն մեկնութեան, ըստ որոյ ի յինն գլխոյ ի տասն համարէ սկսեալ՝ ժամանէ մինչև ի վերջն. յորմէ անկարծիք երևի, թէ է և այլ՝ առաջին անուանեալ, սկսեալ ի յառաջին գլխոյ մինչև ցիններորդ գլխոյ վերջն իններորդ համարին, որպէս և ստուգեն ոմանք արդարև գոլ և առաջին հատոր սորայս մեկնութեան։ Իսկ որովհետև անհնարին անկարելութիւն եղ ընդառաջ մեր ի յուզել ի հեռաւոր տեղիս՝ ի գլխաւոր աթոռս և ի վանորայս. և յոչ գտանիլն, զի մի՛ ի պատճառս ոչ գտանիլոյ նորա՝ և սա խափանեսցի ի տպագրութենէ, եդաք ի միտ յետ այսորիկ հետաքրքիր խուզողութեամբ քննել զառաջին հատորն՝ և գտանել, և զնա ևս ի լոյս ընծայել տպագրութեամբ, սակս որոյ յորջորջեցաք զսա՝ հատոր երկրորդ»։

---

1 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 347։

2 Տեսնել Մեկնության հրատարակության առաջաբանը, էջ 3։

Մեզ ծանոթ ձեռագիր օրինակներում ևս միշտ սույն երկրորդ հատորն է միայն և առաջին հատորը երբեք չի պատահել մեզ։

Հեղինակի ինքնագիր օրինակն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում՝ ձեռ. № 1314 (Նախկին Կարինյան՝ № 1292)[1]*։ Տես նաև նույն մատ. հետևյալ ձեռագրերը. №№ 1383, 1384, 1889 (էջ 126ա—266բ), 2982, 3125, 4033, 6493, 8962, 9050։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №№ 126, 129, 172, 663, 801, 894, 904, 931, 949, 1025. Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 73. Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. № 190. Արմաշի վանքի ձեռ. №№ 21, 111. Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 47. Անկյուրիայի ձեռ. № 85. Տյուբինգենի* KUB Ma XIII 11. *Լեյդենի Համալս.* Ms. Or. 5494 (H 177)[2]*։*

Ձեռագիր օրինակներից մի քանիսը վերնագրում հեղինակի անվան կից ունեն «Ճոն կոչեցեալ», «Ճոն անուանեցեալ» կամ «Ճոն մականուանեալ» հավելումը, բայց մեծ մասը չունեն։

Բարգ. Կյուլեսերյանը Բարսեղ Մաշկևորցու այս աշխատությունից երկու հատվածներ տվել է աշխարհաբար թարգմանությամբ, Լոյս, *1905, էջ 1096—1100 և 1117—1121։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղև.—*«Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 390, 408 և 517։*

Աղավնունի Մկ.—*«Ս. Մարկոսի Աւետարանին հայ մեկնիչ մը, 1325-ին»,* Հայ Աստղ*ակ*, *Բ տարի, № 5, փետր. 1926, էջ 109—111։*

Աճառյան Հր.—*«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 397—398, § 38։*

Կյուլեսերյան Բաբգ.—*«Ներսես Շնորհալի»,* Բիւրակն, *1903, էջ 145—146։*

Ստորագրված՝ «Բաբգէն վարդ.»։ Խոսում է և Բարս. Մաշկևորցու մասին։

Կյուլեսերյան Բաբգ.—*«Ճոն Բարսեղ և Բարսեղ Մաշկևորցին ու Մարկոսի Աւետարանին մեկնութիւնը»,* Լոյս, *Կ. Պոլիս, Նոր շրջան, ԺԱ տարի, 1905, էջ 1093—1096։ Հոդվածն անստորագիր է։*

Պողարյան Նոր.—*«Մաշկևոր»,* Սիոն, *1953, էջ 243—244։ Ստորագր.՝ «Ն. եպս. Ծովական»։*

Պողարյան Նոր.—*«Հայ մատենագրութեան յայտնի կորուստները (Ե—ԺԴ դար)», անդ, 1968, էջ 368—369։ Ստորագր.՝ «Ն. եպս. Ծովական»։*

Պողարյան Նոր.—*«Հայ գրողներ Ե—ԺԷ դար», Երուսաղեմ, 1971, էջ 377—378։*

Սարգիսյան Բարս.—*«Անանիա Թարգմանիչն ու իր գրական գործոց նմոյշներ», Վենետիկ, 1899, էջ 29—30. հմմտ. նաև առաջաբան էջ ԻԱ։*

Տեր-Հովհաննեսյանց Ասք.—*«Ճոն Բարսեղ»,* Բազմավէպ, *1899, էջ 384—386։*

Խոսում է Ճոնի և Մաշկևորցու շփոթման խնդրի մասին։

ԲԱՐՍԵՂ ՄԱՐԱՇԵՑԻ կամ ՔԵՍՈՒՆԵՑԻ

ԺԲ դարի հեղինակ։ Ինչպես Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակող Գրիգոր Երեցն է հաղորդում՝ Բարսեղը գրել է մի ողբ՝ Մարաշի և Քեսունի իշխան Պաղտինի (Balduinus de Mares) *մասին, որը, որպես Եդեսիայի կոմս Ժոսլինի զինակից, մասնակցելով երկրորդ խաչակրությանը, ընկավ նույն քաղաքի պաշտպանության համար Նուր-էդ-Դինի դեմ մղված կռիվներում 1147 թ.*[1]*։ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության ձեռագիր որոշ օրինակներում կա նաև Բարսեղ վարդապետի ողբի բնագիրը և այդ կերպով տպագրված է նաև ժամանակագրության երկու հրատարակություններում*[2]*։ Սկսվում է հետևյալ բառերով.*

---

1 *Տես ձեռագրի նկարագրությունը Գ. Հովսեփյանի կողմից,* Շողակաթ *(հայագիտ. ժողովածու), գիրք Ա, Վաղարշապատ, 1913, էջ 211։*

2 Հանդէս Ամսօրեայ, *1937, էջ 346։*

1 *«Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869, էջ 472—473։*

2 *Անդ, էջ 473—500։ Տես նաև Բ հրատարակությունը, Վաղարշապատ, 1898, էջ 375—395։*

«Բարսեղ, նուաստ ծառայ, գրեմ մեծակական ողբովք և բազմահառաչ արտասուօք համօրէն հաւատացելոց Քրիստոսի, մանաւանդ մերձակայից մերոց՝ Քեսնոյ, Պեհեսնոյ, Ռաբնայ, Գերմանիկոյ, և որք ընդ սոքօք զեօղականք և կոճաստանք իցեն յիւրաքանչիւր ազգս և լեզուս» են։ Այս ողբի բնագիրն առանձին և նրա ֆրանսերեն թարգմանությունը, նախաբանով ու ծանոթագրություններով, հրատարակել է Éd. Dulaurier-ն. „Recueil des historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-lettres. Documents arméniens", t. I, Paris, Impr. Impériale, 1869, p. 203—222: „Oraison funèbre de Baudouin, comte de Marasch et de K'éçoun, par Basile, docteur en théologie, son confesseur". Որոշ կրճատումներով հայերեն բնագիրը հրատարակել է նաև Ղ. Ալիշանը, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 368—370՝ «Ողբք Բարսղի վարդապետի ի Սիր Պաղտին տէրն Մարաշայ և Քեսնոյ»:

Թվում է, թե Բարսեղ Մարաշեցին նույն է այն «ամենագովելի» Բարսեղ վարդապետի հետ, որը մեռ. և թաղվել է Դրազարկի վանքում[1]։ Վերջինիս տալով Դրազարկեցի մականունը, Ն. Պողարյանը նրան հեղինակն է համարում խնկարկության շարականի (սկ. «Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս»):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղեվ.—*«Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 231։*

Աճառյան Հր.—*«Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1942, էջ 394 (§ 14)։*

Զարբհանալյան Գար.—*«Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 705—706։*

Չամչյան Միք.—*«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 67։*

Պողարյան Նոր.—*«Հայ գրողներ Ե—ԺԷ դար», Երուսաղեմ, 1971, էջ 223—225։*

[1] *«Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869, էջ 546։*

ԲԱՐՍԵՂ ՆԵՍՏՈՐԵԱՆ

Վենետիկյան մխիթարյան, որից մնացել է մի նամակ՝ ուղղված Մխիթարյան միաբանության աբբահայր Ստեփանոս Մելքոնյանին (8 հնվ. 1772 թ., Եղիսաբեթուպոլիս)։ Տեղեկություններ է հաղորդում ռուս-թուրքական պատերազմի գործողությունների մասին։ Հմմտ. Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 276 (№ յդ)։

ԲԱՐՍԵՂ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՆԱՊԵՏ ԵՒ ԹԱԼԱՍԻՈՍ ԸՆԹԵՐՑՈՂ

(Basilius diaconus et Thalasius lector)

Կ. Պոլսի վանականներ, որոնք 430 թ. նամակ են գրել Բյուզանդիոնի Թեոդոս Բ և Վալենտինիանոս Գ կայսրերին։ Այս նամակը Եփեսոսի տիեզերական ժողովի (431 թ.) նախապատմության աղբյուրների շարքին է պատկանում։ Նամակի հեղինակները, որոնք Կ. Պոլսի ամբողջ վանականության անունից են գրում, բողոքելով Նեստորի անհանդուրժելի վերաբերմունքի դեմ և ըստ էության կանգնելով Կյուրեղ Աղեքսանդրացու գլխավորությամբ նույն 430 թ. Աղեքսանդրիայում գումարված ժողովի տեսակետների վրա՝ ընդդեմ Նեստորի դավանական տարբերությունների (հերձվածի), խոսում են տիեզերական նոր ժողով գումարելու անհրաժեշտության մասին և կայսրերից խնդրում են փութացնել այդ։

* * *

Խնդրոյ գիր Բարսեղ սարկաւագի և այլոց վանականաց։ Գեր ի վերոյ բարեպաշտ և պատուելի և առ ի յԱստուծոյ և ի մարդկանէ սիրելի թագաւորացդ քրիստոնէից՝ Թէոդոսի և Վաղենտինիանոսի՝ խնդիրք, այսինքն աղաչանք Բարսեղ սարկաւագի և վանապետի, և Թալասիոսի ընթերցողի և միայնակեցի և այլոց միաբանեցելոց քրիստոնէից. «Մարդասիրութիւնն Աստուծոյ՝ որ զազգս մարդկան լցոյց և միշտ լցուցանէ բարիօք և պարգևօք, յայտնի է յամենայն

և յաղագս ամենեցուն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1490, էջ 140բ—144բ։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2620 (էջ 118բ—120բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 23 (էջ 162), № 44 (էջ 128)։

Վավերագրի հուն. և լատ. բնագիրը տես հետևյալ հրատ. մեջ. J. D. Mansi, „Sacrorum conciliorum nova et amplissima collectio", t. IV, Graz, 1960, p. 1102—1107.

ԲԱՐՍԵՂ [ԲԱՐՍԻՂ] ՍՍԵՑԻ

Թարգմանիչ, որ ապրել է ԺԲ—ԺԳ դդ.։ 1203 թ. Գրիգոր Սկևռացու հետ միասին կատարել է Հովհան (կամ Վահան) Նիկիացու առ Զաքարիա Ձագեցի կաթողիկոս թղթի թարգմանությունը[1]*։*

ԲԱՐՍԵՂ ՍՏԱՄԲՈԼՑԻ

Տես՝ ԲԱՐՍԵՂ ՀՈԼՈՎ։

ԲԱՐՍԵՂ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՑԻ

Էջմիածնի Միքայել Սեբաստացի կաթողիկոսի աթոռակիցներից մեկը, որ հիշատակվում է 1557—1567 թթ.[2]*։ Մեռ. 1567 թ.*[3]*։ Նրանից մեզ ծանոթ է մի անթվական կոնդակ՝ Թիֆլիսի և Փաշիվանից թեմին ուղղված, Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3031, էջ 178—183։*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Չամչյան Միք.—*«Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 519։*

Օրմանյան Մաղ.— *«Ազգապատում», մաս Բ, Կ. Պոլիս, 1914, §§ 1554 և 1566։*

---

[1] *Հմմտ. Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4337 (էջ 112բ)։ Նաև՝ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 623 (էջ 264բ) և № 731 (էջ 78ա)։*

[2] *«Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Գ տպ., Վաղարշապատ, 1896, էջ 437—438։ Բաբս. Սարգիսյան, «Մայր ցուցակ», հտ. Ա, էջ 529։*

[3] *Գար. Սրվանձտյանց, «Թորոս աղբար», մաս Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 256։*

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ ՑԻԾԱՏԱԿԱԳԻՐ

Տես՝ ԲԱՐՍԵՂ ԱԻԱՆԵՑԻ։

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ ՏԱՂԵՐԳՈՒ

Ունի վարդ ու սոխակին նվիրված մի բանաստեղծություն՝ ադրբեջաներեն լեզվով։ Հայերեն է միայն տաղի հիշատակարանը։ Հեղինակի անձնավորությունն ու ապրած ժամանակը մեզ հայտնի չեն, բայց հավանաբար ԺԷ դարի հեղինակ է և թվում է, թե նույն է այն «վարպետ» (քերթող) Բարսեղի հետ, որը հիշատակված է Խոջամիր Վարագեցու բանաստեղծություններում, և հետևաբար աշխարհիկ անձնավորություն է։ Այս երգիչը կարող է նույն լինել նաև համանուն այն անձի հետ, որը, ընդօրինակելով Առաքել Բաղիշեցու «Ականջ դրէք բանիս» տաղը (վարդ ու սոխակի թեմայով), նրա վերջում իր կողմից ավելացրել է երկու տուն (Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 663, էջ 12ա). այս դեպքում ներքոնշյալ ադրբեջաներեն տաղը գուցե և գրվել է Առաքել Բաղիշեցու տաղի ազդեցության տակ։

* * *

Բարսղի Վարագեցոյ. «Բահար օլդի բուլբուլ գալդի|Գալդի բաղչասինայ ղօնդի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 5623, էջ 177բ—180բ։*

Վերջում՝ «Գերի Բարսեղ Վարագեցի| Բուլբուլ գուլիյան խօշ օգդի.|Ղուրբան օլում քլխայլարայ,|Քի ադի չըխըփ տուր Եդի։| Գերի Բարսեղ Վարագեցի,|Զի գործեցիր բան մի բարի.|Օմարամ ռահմատ էյրասզ,|Եօխսայ տահի ջան ղալմատի»։

Սույն բանաստեղծության մի թերի օրինակ է՝ նույն մատ. ձեռ. № 6185, էջ 81ա—82բ։

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՂԵՐԳՈՒ

Այս պայմանական անվան տակ միացնում ենք այն մի քանի հոգևոր երգերը, որոնք կարող են տարբեր հեղինակների գործեր լինել։

* * *

1. Բարսեղ վարդապետէ ասացեալ գովասանք ի վերայ սուրբ Աստուածածնին՝ անուշ. «Երգ զարմանազան ձայնիւ հրաշազան,|Նուագեմք կուսին յոյժ վայելչական...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 41, էջ 154բ—155բ։*

Սկզբնատառերը՝ «Երգ ի Բարսեղէ»:

Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 807 (էջ 28ա—28բ). Անկյուրիայի ձեռ. № 225 (էջ 360—363). Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 154 (էջ 284—285)։

2. Այս ի Բարսեղէ (sic). «Աստուածածին մայր անարատ խկուհի,|Ներխբնկարան անեղ բանին Յիսուսի...», *Զմմառի վանքի ձեռ. № 672, էջ 49ա—49բ?։*

3. Տաղ սրբոց Քառասնիցն, Բարսղի ասացեալ. «Երգ ներբողական քաղցրանուագ հնչմամբ ձայնիւ ցնծութեամբ երգեմք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7785, էջ 155բ—156բ։*

Սկզբնատառերը՝ «Երգ Բարսղի երգ փ ն ց»: *Տես նաև Տյուբինգենի* KUB Ma XIII 61 (fol. 176V).`

4. Երգս զայս Բարսեղի (sic) է ասացեալ Գովասանութիւն սուրբ հարանց յանապատի. «Երգ սրբութեանն այս գովեստի դուրական, |Վայելչաբար առ վայելուչսրն գրեցան.| Յանապատիս Հիւանէի (sic) բստ անուան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2361, էջ 333ա—333բ։*

ԲԱՐՍԵՂ ՓԱՌԱԿԵՑԻ

Էջմիածնի միաբան, ԺԸ դար։ Ղազար Ջահկեցի կաթողիկոսի (1737—1751 թթ.) օրով եղել է Աստրախանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ՝ մինչև 1749 թ.[1]։ Թողել է երկու հատոր մատենագրական նյութեր, որոնց մի մասը թեմատիկ քաղվածք է Աստվածաշնչից և օտար ու հայ եկեղեցական մատենագիրներից (Հովհան Ոսկեբերան, Աթանաս Աղեքսանդրացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Ներսես Շնորհալի, Վահրամ Րաբունի, Գրիգոր Տաթևացի են), իսկ մեծագույն մասը նրա սեփական քարոզներն են։ Գլխավոր թեմատիկան կրոնական-աստվածաբանական է։ Մենք տալիս ենք սույն երկու հատորները, ցույց տալով նրանց պարունակած նյութերը, որոնցից ամեն մեկն առանձին աշխատություն է։

[1] «Ջամբռ գիրք... համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 39։

* * *

1. Սուրբ գիրք, որում անուն եղաւ Ծառ մեռոնի։ Յամի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1751-ին։ Եւ ի մերս մեծ թւին 1200։ Ի հայրապետութեան ամենայն Հայոց սրբազան կաթողիկոսի տեառն Մինասայ Ակնեցւոյ, սրբոյ և մեծի երկնահանգիտի և ադինաասարասի աթոռոյն Էջմիածնի։ Որոյ տրուպ միաբանի տեառն Բարսղի բազմամեղ արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ երկասիրութեամբն ռոտեալ եղև լոմասարաս բանքդ ի փառս Աստուծոյ։ *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 776։*

Բովանդակություն.

— Բարսղի արքեպիսկոպոսի Փառակեցւոյ հոգաբարձութեամբ ժողովեալ գրանս ի սուրբ գրոց, յաղագս առանձին աղօթելոյ. «Տէր, տէր զօրութեանց, յիշեա զիս...», *էջ 4ա—9ա։*

— Նորին Բարսղի եպիսկոպոսի, զի թէպէտ միանգամայն պատուականագունեղք են բանք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, սակայն ի բերան սերտելոյ յաղագս զսուղ բանքդ ժողովեցեալ եղև ի նորա սուրբ գրոցըն. «Սրբոյն Գրիգորի Նարեկայ վանից վանականի և նգնաւէր հսկողի...», *էջ 9ա—37բ։*

— Եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ Գոշի խստակրօն ճգնաւորի և բան ի բուն հռետորի ասացեալ զաղօթս ի ժամ սուրբ պատարագին, և ասէ. «Տէր Աստուած իմ...», *էջ 37բ—48բ։*

— Նորին տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ հոգաբարձութեամբն ժողովեցեալ եղև սակաւ բանքս ի սուրբ

գրոց, յաղագս քարոզի բնաբան ի սուրբ Աւետարանին որ ասէ. Հաւատք քո կեցուցին զքեզ. «Այլ արդ՝ ըստ բանին հաւատ է այն, որով զայն, զոր աչօք ոչ տեսանեմք, և զգայութեամբ ոչ շօշափեմք, բայց հաւատամք թէ է՛ այնպէս...», *էջ 50ա—56ա:*

— Նորին քարոզ ասացեալ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ. «Աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բարեշնորհութեամբ պարգևացն, ըստ որում և ուսաք զբանս ի հոգեկիր արանց...», *էջ 56ա—66բ:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի ասացեալ յաղագս բանին ընդունելութեան, որ ասի ծնօղ, ըստ որում խոստացայ ասել. «Այլ արդ՝ ծնօղ հասարակօրէն ասի հօր և կամ մօր, այսինքն՝ որ ծնօղ լինի ոք ումեք, որպիսի է հայրութիւն և կամ մայրութիւն...», *էջ 66բ—69ա:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ յաղագս բանին ածանցականի որ ասի ծնունդ, ըստ որում խոստացայ ասել. «Եւ բառն ծնունդ հասարակօրէն առեալ, նշանակէ զծնեալն յումեքէ և կամ զծնեալ լինելն ի կենդանւոյ ըստ նոյնոյ բնութեանն...», *էջ 69ա—73բ:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի եպիսկոպոսի ասացեալ [ի] բանն Կիւրղի որ ասէ. Եւ արդ՝ զառաջին երկինս որ երևին, փոքրագոյնք են ևն. «Երբ ոք յօժարիցէ ասել վասն Աստուծոյ, նախ գիտացէ և պատմեցէ մեզ...», *էջ 73բ—76բ:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի յաղագս ծննդեան. «Ոչ սակս յայնմ, ըստ որում ասացաք զնա անճառ և անպատում, այլ և ծնունդ ասեմք զիջումն Բանին յարգանդ կուսին...», *էջ 76բ—80ա:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի ասացեալ վասն ծննդեանն Քրիստոսի որ ի մօրէ. «Ըստ որում և հրեշտակն երգաբանէ. Ծնաւ ձեզ փրկիչ որ է օծեալ տէր և այլն: Այն որ ի սկզբանէ յառաջ քան զամենայն յաւիտեանս...», *էջ 80ա—87բ:*

— Նորին քարոզ յաղագս անուան Հօր և Որդ[ւ]ոյ. «Եւ զի անուն Հօր և Որդւոյ հասարակաց է, բայց առ մեզ փոփոխմամբ...», *էջ 87բ—91ա:*

— Նորին քարոզ վասն մարդկային բնութեան մերոյ, յոր և հաւատացաք Որդւոյն Աստուծոյ, և շնորհօք նորին որդեգրեցաք Հօրն յերկնաւորի, ի յորում մեկնի և Հայր մերն. «Ըստ որում և շնորհալի սուրբ վարդապետն մեր Սարգիս ասէ. Եւ որպէս հաւատացաք...: Նմանապէս հաւատամք նովին չափով բնութեամբ...», *էջ 91ա—101ա:*

— Նորին քարոզ զբան մարգարէին որ ասէ. Լուարուք, արբեցարուք. «Եւ ի նոյն տեղւոջն զկնի պահելոյ զօրէնսն...», *էջ 101ա—105բ:*

— Նորին քարոզ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի ասացեալ վասն Հոգւոյն Սրբոյ. «Եւ ըստ դաւանելոյ սրբոյ վարդապետին մերոյ Վահրամայ հաւատամք հոգւով...», *էջ 105բ—108բ:*

— Նորին քարոզ, որով և զգալուստ Սրբոյ Հոգւոյն, զի չև էր Հոգի, քան Յիսուս չէր փառաւորեալ. «Իսկ ի Նոր Կտակարանսն ինքնադիմաբար խօսեցաւ Սուրբ Հոգին...», *էջ 108բ—118ա:*

— Նորին քարոզ Բարսղի արհւոյ եպիսկոպոսի բանք յաղագս սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. «Աստուածային գիրք խօսին յաճախապէս վասն արարչութեանն Աստուծոյ պէսպէս խնամոցն...», *էջ 120ա—135բ:*

— Քարոզ նորին Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ. «Եւ զկնի ասելոյ առաջներորդ աստուածաբանութեանն տպաւորականի, երկրորդաբար ասեմք և վասն աստուածաբանութեանն պատճառականին, որ առաւել է քան զառաջինն...», *էջ 137ա—140բ:*

— Քարոզ տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի ասացեալ, ըստ որում ասէ Դաւիթ. Որ խոստովանութիւն և զմեծվայելչութիւն զգեցար Տէր. «Եւ այս ասէ աստուածախօսն Մովսէս. Ի սկզբանէ արար...», *էջ 140բ—144բ:*

— Քարոզ նորին տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ: Յորմէ դարձեալ

ի վերայ նոյնոյ աստուած[աբան]ութեան պատճառաբանականի. «Այլ արդ զօրութեամբ պատճառաբանականի աստուածաբանութեանն զգեղեցիկսն արարածոց տեսեալ...», *էջ 144բ—149բ*։

— Քարոզ նորին տեառն Բարսղի արհւոյ եպիսկոպոսի Փառակեցւոյ: Յորմէ դարձեալ ի վերայ նոյնոյ աստուածաբանութեան պատճառաբանականի. «Արդարև զովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն ըստ որում ասէ փիլիսոփայն Արիստոտէլ, քան զի [ի] գեղեցկացն յառաջեալ լինին առաքինութիւնքն...», *էջ 149բ—155ա*։

— Յորմէ դարձեալ քարոզ առ նոյն բան. «Եւ ըստ կարծեացն Պղատոնի փիլիսոփային, եռամասնեայ է հոգին...», *էջ 155ա—158բ*։

— Յորմէ քարոզ դարձեալ ի վերայ նոյնոյ աստուածաբանութեանն. «Եւ ըստ սրբոյն Յոհաննու Ոսկեբերանին՝ ամենայն ուրեք հաւատոյ (sic) պէտք են մեզ ասէ, սիրելիք, հաւատոյ (sic), որ մայրն է ամենայն բարութեանց...», *էջ 158բ—164ա*։

— Յորմէ քարոզ դարձեալ ի նոյն բան. «Եւ նորին սրբոյն Կիւրղի որ ասէ՝ Տեսեր ի մեծէ մեծութենէ անտի...», *էջ 164ա—169բ*։

— Յորմէ դարձեալ քարոզ ի վերայ այնմ խորհրդոյ. «Եւ ըստ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյն՝ զայ այնուհետև կամաւորապէս ի չարչարանս և ի խաչ...», *էջ 170ա—177ա*։

— Յորմէ դարձեալ ի վերայ նոյնոյ աստուածաբանութեանն. «Ըստ որում ասացաք անդանօր թէ պատճառաբանականքս՝ տեսանելով զգեղեցկութիւն պատճառելեացս, այսինքն՝ արարածոցս, զարարիչն և զպատճառն ամենայնի օրհնաբանեմք...», *էջ 177ա—194ա*։

— Յորմէ քարոզ դարձեալ ի վերայ նոյնոյ աստուածաբանութեանն. «Աղին ասէ դրախտն, և սարաս որ է նման. կամի ասել թէ սուրբ աթոռն էջմիածին նման է դրախտին...», *էջ 194ա—198ա*։

— Նորին Բարսեղի արհւոյ եպիսկոպոսի ի մի վայր ժողովեալ յաղագս քարոզի, նշանական աստուածաբանութեամբ. «Եւ ի կարգնոյ՝ գիտել նախ վասն բառին, որ ասի նշանական...», *էջ 199ա—201ա*։

— Յորմէ բան ինչ յաղագս Աբելի, քան զի ասէ գիր. Հայեցաւ Աստուած *ևն*. «Յաբէլ ամենայնիւ կատարեալ գոլով ի սէրն Աստուածոյ...», *էջ 201ա—203ա*։

— Նորին Բարսղի ի նոյն չափի յաղագս Աբրահամու և նշանակութեան իւրին. «Զի թէպէտ Աստուած անփորձ է ի չար[ե]աց, փորձէ նա և ոչ զոք, ասէ առաքեալն Յակոբոս, սակայն ասէ գիրն թէ փորձեաց Աստուած զԱբրահամ...», *էջ 203ա—207ա*։

— Յորմէ քարոզ յաղագս Յոբայ, որ էր օրինակ հնոյն Ադամայ և նորոյն. «Եւ ըստ աստուածաբան վարդապետաց Յոբ էր յազգէն Եսաւայ...», *էջ 207բ—209ա*։

— Յորմէ քարոզ յաղագս Մովսէսի որ էր օրինակ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն որոյ ասաց՝ Մարգարէ յարուսցէ *ևն*. «Զի որպէս ի ծնունդն իւր Մովսէս ապրեցաւ յարուախնդող մանուանէն փարաւոնի...», *էջ 209ա—210բ*։

— Յորմէ քարոզ զոր ի նոյն չափի զօրանայ. «Քան զի յետ Մովսէսի անուանակիր, ապացոյց և օրինակ տեառն մերոյ Յիսուսի եղև Յեսու Նաւեայն որ առաքեաց զլրտեսս ի տիպ առաքելոյն...», *էջ 211ա—216բ*։

— Յորմէ քարոզ առ ի նոյն չափի յաղագս մարգարէին Յովնանու. «Եւ քան զամենայն զոր ասացաք, յայտնի օրինակ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղև մարգարէն Յոնան...», *էջ 216բ—219բ*։

— Յորմէ քարոզ յաղագս բաժանման աստուածաբանութեան. «Եւ զի ամենայն աստուածաբանութիւն յերկուս բաժանի, այսինքն դրութեամբ և բացբարձմամբ...», *էջ 219բ—222ա*։

— Յորմէ ժողովեալ բանք յաղագս անուանցն արարչի: Նաև առ միմեանս համեմատութիւնս առաջնոյ և երկրորդի արարչութեանն այլ և նշանակութիւն սքանչելագործութեանն Քրիստոսի. «Եւ ըստ տրամախոհ Առաքեալ սուրբ վարդապետին Սիւնեցւոյ զի թէպէտ հաւասարակ, արարիչք կոչին Աստուած, բնութիւնն և արհեստն, սակայն ու-

նին սոքա զբազում զանազանութիւնս...», *էջ 222ա—224բ*։

— Յորմէ քարոզ վասն յանցանացն Դաւթի և նշանակութեան նորայ. «Եւ բստ սրբոյն Կիւրղի, քան զի ասէ՝ Յանցեաւ մեծ մարգարէն յերեկօրոյին առ ընդերեկս...», *էջ 224բ—227ա*։

— Յորմէ ժողովեալ քարոզ յաղագս թագաւորին Եզեկիայ. «Եկ դու և առ Եզեկիա, ասէ սուրբն Կիւրեղ...», *էջ 227ա—228բ*։

— Յորմէ քարոզ վասն Մանասէի. «Եւ ընդ սրբոյն Գրիգորի Նարեկայ վանից վանականի գլխ. ԾԱ. վասն Մանասէի ասէ...», *էջ 228բ—230բ*։

— Յորմէ քարոզ վասն երից մանկանցն և Նաբուգոդոնոսորայ. «Նորին Կիւրղի որ ասէ. Այլ և ած զմտաւ քով. ո՞վ էր այն որ էջ ի հնոցն ընդ Անանիասն...», *էջ 230բ—233ա*։

— Յորմէ ժողովե[ա]լ քարոզ յչորրորդ թագաւորութեանցն. «Ասէ վասն Բորովամու՝ թէ կայր ի վերայ բարձանց...», *էջ 232բ—234ա*։

— Յորմէ քարոզ առ եօթն բանսն Քրիստոսի, որ խօսեցաւ ի վերայ խաչին, առ ի կատարել զմարգարէին Դաւթի՝ Աստուած խօսեցաւ ի բարձանց *ևն*. «Եւ բստ ձայնի սրբոց աւետարանչացն առաջներորդ բանն է՝ Հայր, թող սոցա, զի ոչ գիտեն...», *էջ 234ա—237ա*։

— Նորին քարոզ տեառն Բարսղի արհիոյ եպիսկոպոսի բանք յաղագս չորրորդ կերպի աստուածաբանութեանն՝ խորհրդականի. «Եղանակ աստուածաբանութեան վերլուծանելով ի չորս մասունս, ընդ որոց և ի կարգի է խորհրդական աստուածաբանութիւնն, որ ոչ է առակաւ և նշանակաւ իբրև զառաջին աստուածաբանութիւնսն, այլ սա ի ներքուստ ի վեր և ի բազմութենէ առ միենն ընթանայ...», *էջ 238ա—241բ*։

— Նորին բանք ի նոյն շաւիղ. բայց նախ յաղագս գրոց և սահմանաց նորին, և զկնի բանք վասն աւետման ծննդեան, քառասնօրեայ գալստեան տեառն ի տաճարն. «Զաստուածային անճառահրաշ խորհրդոյն խորհրդազգածս եղեաք ի ձեռն սուրբ գրոց...», *էջ 242ա—248ա*։

— Նորին քարոզ յաղագս խորհրդոյ մկրտութեանն, որ է կրկին արարչութիւն. «Աստուածպետականն Յիսուս Քրիստոս բստ Յոհաննու որ ասէ. Սուրբ, մաքուրն, յստակն, անարատն...», *էջ 248ա—251բ*։

— Նորին քարոզ յաղագս խորհրդոյ քառասնօրդաց պահոց ի բանն. Եւ պահեալ, ասէ, Յիսուս զքառասուն տիւ և զքառասուն գիշեր *ևն*. «Աստուածային գիրք յանախապէս խօսին յաղագս պահոց, զորս և փրկիչն մեր...», *էջ 251բ—259ա*։

— Նորին ի յայսմ տեղւոջ յստակապէս քարոզ յաղագս սգոյ մեծի ուրբաթ գիշերոյն. «Աստուածային գիրք յանախապէս խօսին վասն սարսափելի աւուրս ուրբաթու...», *էջ 259ա—277բ*։

— Նորին քարոզ յաղագս յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. «Եւ բառն յարութիւն յստակապէս առեալ նշանակէ զզարձումն ի մահուանէ ի կեանս, ի մե[ռե]լութենէ ի կենդանութիւն...», *էջ 277բ—280ա*։

— Նորին քարոզ յաղագս Թումայի ի բանն. Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն. «Աստուածպետական արարիչն ամենայնի Յիսուս Քրիստոս զկնի հրաշափառ յարութեանն բազում անգամ երևեցաւ...», *էջ 281ա—284ա*։

☐ *Տես նաև Երուսաղեմի Հայոց Մատ. ձեռ. № 1899*՝ «Սուրբ գիրք... ի հայրապետութեան ամենայն Հայոց սրբազան կաթողիկոսին տեառն Աղբքսանդրի (sic) Կեսարացւոյն» *ևն. (էջ 197—584)*։

2. [Տէր Բարսղի արքեպիսկոպոսի Փառակեցւոյ համառօտ հաւաքումն ի գրոց սրբոց] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 615*։

Բովանդակություն.

— Տէր Բարսղի արքեպիսկոպոսի Փառակեցւոյ համառօտ հաւաքումն ի գրոց սրբոց յաղագս քարոզի ի բանն՝ Զաստուած ո՛չ ոք ետես երբեք *ևն*. «Աստուածեղէն շնորհօքն շարժեալ զսուրբ լեզուն երանելի առաքելոյն և աւետարանիչն Յոհաննէս...», *էջ 3ա—42ա*։

— Չկնի այսոցիկ ժողովեմ կարճառօտ բանք պիտանիք յաղագս քարոզի: Նորին Բարսղի արքեպիսկոպոսի Փառակեցւոյ. «Հրամանաւ Հոգւոյն Սրբոյ վիճակեցան սուրբ առաքեալքն, և ելին մշակքն բարի...», *էջ 42բ:*

— Վասն աւետարանչին Յոհաննու, որ բարքմանի շնորհք և հնազանդութիւն. «Զի առաւել զովելի է սա քան զամենայն աշակերտսն տեառն, քանզի սիրեցաւ ի Քրիստոսէ յատուկ սիրով...», *էջ 42բ—43ա:*

— Յաղագս սիրոյ բաժանմանն. «Սէրն բաժանի ի կամաւորն և յակամայն, ի չարն և ի բարին...», *էջ 43ա—44ա:*

— Բան վասն պահոց որ եղաւ յԱստուծոյ օրէնք առաջին. «Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ. և ըստ նեքաղատութեան սուրբ վարդապետացն մերոց մեծ է զօրութիւն պահոց...», *էջ 44ա:*

— Հարց վասն ռոպէից. «ռոպէն այս է, զի ընդ օրն և ընդ գիշեր քսան և չորս ժամ է...», *էջ 44բ:*

— Բան վասն երկոտասան պարգևացն Ադամայ. «Որ է տեսութիւնն Աստուծոյ, և խօսակցութիւնն ընդ նմա...», *էջ 44բ:*

— Եւ յաղագս հրաժարական ողջունի. «Երթալով երթային և լային ոյք բարձեալ տանէին զսերմանս...», *էջ 44բ—45ա:*

— Բան վասն Յովսեփայ որ կոչի այր Մարիամու. «Արդ՝ ասէ, զայրն Մարիամու, առ ի ցուցանել՝ թէ ընդ Յովսեփայ պսակեցեալ էր կոյսն Մարիամ...», *էջ 45բ:*

— Եւ վասն մոգուց որք եկին յարևելից. «Գիտել պարտ է, զի ի հնումն զիմաստունս և զհմուտ աստեղաբաշխս մոգ անուանէին...», *էջ 45բ—47ա:*

— Վասն զի փորձիլ կամեցաւ տէրն մեր ի սատանայէ. «Զի այն էր կամք Հօր, և ինքն եկեալ էր յաշխարհ առ ի առնել զկամս Հօր...», *էջ 47ա:*

— Եւ վասն բանին որ ասէ՝ Առեալ ածէ զնա. «Որպէս հրեշտակն էած զԱմբակում ի Բաբիլոն, սոյնպէս տարեալ եղև տէրն մեր ի սատանայէ...», *էջ 47բ:*

— Սրբոյն Յակոբայ եպիսկոպոսի ասացեալ ի թերահաւատութիւն Թումայի առաքելոյն, և ես ըստ իմոյ ախորժակիս ժողովեցի. «Միածինն Հօր Աստուծոյ, փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, յորժամ յարեաւ ի մեռելոց...», *էջ 48ա—49բ:*

— Քարոզ[ք] ներբողականք տէրունական տօնից, նաև սրբոցն վեհագունից, ըստ իմոյս ախորժակին ժողովեցի. «Այսօր աստուածային և երկնային, սուրբ և պատուական է տօնս, քանզի ծագումն աստուածային ճառագայթից լուսոյ Սուրբ Հոգւոյն պայծառմամբ յաշխարհս ծագէ...», *էջ 50ա—51ա:*

— Վասն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն. «Բազում եղեն սքանչելիք, և զի ամենայն քաղաքն դղրդեցաւ այլ և փակեալ դուռն տաճարին ինքնին բացաւ...», *էջ 51ա—52բ:*

— Անուանք մեղաց, միանգամայն խորհրդոց, բանից և գործոց, այբուբենական տաղի. «Ակնառութիւն երեսաց, ատելութիւն աղքատաց և այլոց անձանց, անկարգ ինքնասիրութիւն և ազգասիրութիւն...», *էջ 53ա—53բ:*

— *(Անխորագիր)* «Այլ արդ զԱստուածն Հայր, որ սքանչելեօք տուեալ էր զորդի ծերոյն Աբրահամու և ամուլ կնոջ նորին Սառայի, և արարեալ նովաւ զմեծամեծ խոստմունսն...», *էջ 54ա—54բ:*

— *(Անխորագիր)* «Յիսուս Քրիստոս փրկիչն մեր շրջէր և քարոզէր ասելով՝ եկայք առ իս. և ոչ զայս միայն, այլ և ի վերայ խաչին գոլով, եօթն անգամ խօսեցաւ, ըստ որում ասէ՝ Աստուած խօսեցաւ ի բարձանց...», *էջ 55բ—56բ:*

— Աստուծով սուղ ինչ յայտարարութիւն յաղագս սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին թէ յորմէ՞ սերեցաւ նա. «Աստուած ասաց Աբրահամու թէ՝ Ես՝ աճեցուցից զքեզ յոյժ և եղից զքեզ յազգ, և թագաւորք ի քէն ելցեն: Եւ ըստ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ՝ յԱդամայ ԻԱերրորդ նահապետ մեզ Աբրահամ, և ի նմանէ եղեն ազգ Պարթևաց...», *էջ 57ա—58բ:*

ԲԱՐՍԵՂ ՔԵՍՆԵՑԻ

Տե՛ս՝ ԲԱՐՍԵՂ ՄԱՐԱՇԵՑԻ։

ԲԱՐՍԵՂ ՔԵՐԱԿԱՆ

Ինքնությունն ու ժամանակն անհայտ։ Գրել է քերականության մի մեկնություն, որի մասին հիշատակում է Հովհաննես Երզնկացին 1281 թվին գրած իր հիշատակարանում՝ Դավիթ փիլիսոփայի, Մովսես Քերթողի և ուրիշների մեկնությունների հետ միասին[1]։ Ն. Ադոնցը միտում է նրան նույնացնելու Հեթում Ա-ի եղբայր Բարսեղ արքեպիսկոպոսի հետ, որը Դրազարկի առաջնորդն էր և մեռ. 1275 թ.[2]։

ԲԱՐՍԻՄԷՈՍ ԵԴԵՍԱՑԻ

Տե՛ս՝ ԲԱՐՍՈՒՄԱ ԵԴԵՍԱՑԻ։

ԲԱՐՍԱՒՄԱ [ԲԱՐՍԱՄԱ] ԱՆՏԻՈՔԱՑԻ
(Barsauma Antiochenus)

Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ» ժողովածուից մեզ հայտնի է այսպիսի հեղինակային անվամբ մի դավանական հակաճառություն՝ նրա և Հռոմի Կելեստինոս Ա. պապի (422—432 թթ.) միջև։ Մեզ թվում է, որ սա այն հակոբիկյան միաբնակ ասորին է, որը Քաղկեդոնի ժողովի նախօրյակին, 449 թ., Թեոդոս Բ և Վաղենտիանոս Գ կայսրերի հրամանով մասնակցեց Եփեսոսի ժողովին, իսկ հետո, 451 թ., մասնակցեց նաև Քաղկեդոնի ժողովին[3]։ Այս Բարսուման, որը մեռ. 458 թ., անհաջող փորձեր է կատարել հայ եկեղեցու հետ հարաբերություններ հաստատելու[1] (տես նաև ԲԱՐՍՈՒՄԱ ՍԱՄՈՍՏԱՑԻ)։ Կարծում ենք, որ «Արմատ հաւատոյ»-ում որպես հեղինակ հանդես եկող Բարսումա կամ Բարսամ Անտիոքացին այս հակոբիկյան ասորին է և ոչ թե մի նեստորական, ինչպիսին էր Բարսումա Մծբնացին։ Այս կարծիքի համար կարելի է հիմք համարել այն փաստը, թե «Արմատ հաւատոյ»-ի հատվածում Կելեստինոսը, Բարսումայի հետ վիճաբանելիս, հակոբիկյանների խմբում հացը ճաշակողներին արժանի է համարում այն նզովքին, որով Նեստորն է նզովվում. «Ոչ թէ միայն ես չառնուի զհացն [խմորուն], այլ և թէ ոք ի տգիտաց առնոյր զնա, զնզովքն Նեստորի կարդայի նմա, և յեկեղեցւոյ հանէի» (Երևանի ձեռ. № 3295, էջ 372ա)։ Եթե վիճաբանող Բարսուման նեստորական եղած լիներ, Կելեստինոսն արդյունավետ չէր համարի նրան դեմ անել Նեստորի նզովքը՝ որպես ազդեցիկ միջոց։ Ձեռագրերում անունը պատահում է Բարսամ, Բարսամա, Բարսումա, Պարսումա *ձևերով։*

* * *

1. «Բարսամա ասէ. Զձեզ պատարագին ո՞րպէս ասէք Աստուած, ասա ինձ զառոյգն: Կելեստիանոս Հռոմայ հայրապետն ասէ. Ասեմ և հաւատամ... *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 343բ։*

Հատվածը բաղկացած է միայն 1 հարցուպատասխանից։

2. Ի հարցմանցն Կղեստիանոսի Հռոմայ հայրապետի և Բարսամայի Անտիոքայ եպիսկոպոսի. «Բարսամա ասէ. Ապա մինչ այն ջուրն որ ի կողիցնել՝ չէր ապականութիւն զոր մեք ի գինին խառնեմք, ընդէ՞ր դառավէք: Կղեստիանոս ասէ. Մի՛ թիւրէր անմտութեամբ զբանդ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 371բ—372ա։*

Հատվածը բաղկացած է 8 հարցուպատասխաններից։

---

[1] *Այս հիշատակարանը տես՝ Ղ. Ալիշան, «Հայապատում», մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 510. և* Н. Адонц, „Дионисий Фракийский и армянские толкователи", Петроград, 1915, стр. LXXXIX *(նույնը ֆրնս.* N. Adontz, „Denys de Thrace et les commentateurs arméniens", Louvain, 1970, p. LXXXVI).

[2] Н. Адонц, „Дионисий Фракийский" и т. д., стр. LXII—LXIII и CXVI—CXVII *(նույնը ֆրնս.* LXII, CX—CXI). *Դրազարկի առաջնորդ Բարսեղ արքայեղբոր մասին տես՝ Ղ. Ալիշան, «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 144 և 233։*

[3] *Հմմտ.* Ch.-J. Héfélé, „Histoire des Conciles d'après les documents originaux" (trad. de l'allemand par Goschler et Delarc), t. II, Paris, 1869, p. 541—542, 567; t. III, Paris, 1869, p. 51.

[1] *Հմմտ. Երվ. Տեր-Մինասյան, «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», էջմիածին, 1908, էջ 120 և 172։*

☐ *Կելեստինոսի և Բարսումայի վիճաբանությունը հիշատակում է նաև Վարդան Այգեկցու ժամանակակից Հովհաննես Վանականը՝ բերելով մի ուրիշ հատված, որը չի օգտագործվել «Արմատ հաւատոյ»-ում. «Բազում ինչ այլայլեցին յառաքելական կարգաց, որպէս զտաւն ծննդեանն և զջուրն՝ որ ի խորհուրդն արկանեն։ Թո՛ղ ցուցանեն մեզ զվէճն Կեղեստիանոսի ընդ Բարսումայի՝ թէ չվկայէ մեզ, որ ասաց Բարսումայ թէ զո՛ւք միայն էք անխմոր և անջուր խորհրդով, և ասէ. Մի՛ բարի քեզ, ահա ազգն Հայոց Մեծաց ընդ մեզ են, որք ուսան ի սուրբ Գրիգորէ որ հրեղէն սիւն է և երկնահաս լեառն» են*[1]*։*

ԲԱՐՍՈՒՄԱ ԵԴԵՍԱՑԻ*

(Barsamias [Barsimaeus] Edessenus)

Հայոց Հայսմավուրքները պահել են Բարսամ Եդեսացու վարքի և նրա հետ միասին Սարբյուլոս (Շարբել) քրմի ու վերջինիս քույր Բավեասի վկայության պատմությունը Տրայիանոս կայսեր օրով, 105 թ.։ Անունները ձեռագրերում պատահում են այլազան ձևերով. Բարսամ, Բարսամոյ, Բարսեմ, Բարսեմիոս, Բարսիմ, Բարսիմա, Բարսիմէոս, Բարսումա, Պարսամ, Պարսաւմա, Պարսումա. Սարբիւլոս, Սարբելոս, Սարբիլիոս, Սաբիւլոս, Սաբիլոս. Բաւէա, Բաւէաս:

* * *

1 (Տեր Իսրայելի խմբագր.).

Վկայութիւն սրբոյն Բարսիմեայ եպիսկոպոսին և որոց ընդ նմա ի յԵդեսեայ. «Սուրբ եպիսկոպոսն Բարսիմեա էր ի ժամանակս կռապաշտ արքային Տրայիանոսի...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 280—282։*

Այլ տպ.—Վկայաբանութիւն սրբոյն Բարսիմեայ եպիսկոպոսին Եդեսիայ քաղաքին, որ է Ուռհայ, եւ Սարբիլիոս քրմի, որ Թութայէլ անուանեցաւ, և քեռն իւրում Բաւէաայ. «Սուրբ եպիսկոպոսն Բարսիմեա...» (*հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XVIII, 1924, p. 5—10.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ „En ce jour martyre de saint Barsamias évêque de la ville d'Édesse, qui est Ourfa, du prêtre des idoles Sarbel (Sarbilios), qui fut nommé Toutaël, et de sa soeur Bebaïa (Bavias)“ *տեսնել, անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 155ա—156բ)։*

2. (Գրիգոր Ծերենցի խմբագր.).

Վկայաբանութիւն Բարսումայ եպիսկոպոսին և Սաբիլոսի քրմին և քեռն իւր Բաւէասայ. «Եպիսկոպոսն Բարսումայ էր յամս Տրայիանոսի և յաւուր միում տեսանէր ի քաղաքն Ուռհայ...», *տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 321—323։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Եպիսկոպոսն Բարսումայ էր յամս Տրայիանոսի...», *տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 345—347։*

Այլ տպ.— Վկայաբանութիւն *նն.* «Եպիսկոպոսն Բարսումայ էր յամս Տրայիանոսի...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 245—246։*

3 (Անանուն խմբագր.).

Բարսեմայ եպիսկոպոսի և Սաբիլոսի քրմի և քեռ իւր Բաւէասայ. «Սուրբ եպիսկոպոս էր յամս Արիանոսի արքայի ի քաղաքէն Եդեսացոց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 99բ—100բ։*

☒ *Չմմտ. Սարբյուլոսի (Շարբիլի) և Բարսումայի (Բարսամիայի) ասոր. վկայաբանությունները՝ հետևյալ հրատ. մեջ.* W. Cureton, „Ancient syriac documents relative to the earliest establishment of christianity in Edessa and the neighbouring

[1] *«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 535։*

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. J. Bollandus, „De S. Barsamaeo episcopo Edesseno in Mesopotamia“, *Acta Sanctorum*, Januarii t. III, Parisiis, 1863, p. 641. Idem, „De sanctis martyribus Edessenis Sarbelio et Barbea“, ibidem, p. 538—539. R. Duval, „La littérature syriaque“ (Anciennes littératures chrétiennes, II), 3e éd., Paris, 1907, p. 113—115.

countries", London—Edinburg, 1864, բնագրերի բաժնում՝ էջ 41—63 և 63—72 (ասոր. բնագիր), իսկ թարգմանությունների բաժնում՝ էջ 41—62 և 63—67 (բնագրի անգլ. թարգմ.)։ Նույնի Բ հրատարակությունում (Amsterdam, 1967) պահպանված են նույն էջերը։— Տես նաև՝ P. Bedjan, „Acta martyrum et sanctornm", t. I, 1890, p. 95—119 և 120—130։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավգերյան Մ.—«Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. Ա, Վենետիկ, 1810, էջ 371—385։

ԲԱՐՍՈՒՄԱ [ԲԱՐԾՈՒՄԱ] ՄԾԲՆԱՑԻ*
(Barsauma Nisibenus)

Ասորի աղանդավոր, Ե դ.։ Եղել է Մծբնի նեստորական մետրոպոլիտ (435—489 թթ.)։ Հայկ. աղբյուրներում հաճախ հիշատակվում է Հնծիհնայ, Ընծիհնայ աղավաղված ձևերով (փխ. Մծբնացի)։ Նեստորականություն տարածելու նպատակով եկել է Հայաստան, բայց հալածվել է Արծրունյաց Մերշապուհ իշխանի կողմից։ Այդ անցքերի նկարագրությունն է նվիրված Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկի Բ դպրության Բ գլուխը, որը ձեռագրերում երբեմն պատահում է նաև որպես առանձին բնագիր։

* * *

Վասն արիւնահեղին Բարծումայի. «Ընդ ժամանակս Պերոզի արքայի ոմն յաղանդոյն Նեստորի, Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2559, էջ 304ա—304բ (վերջը թերի)։*

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 298 (էջ 70բ—71բ)։ Ղալաթիայի (Կ. Պոլիս) Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 136 (էջ 341—343)։

Հմմտ. «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 140՝ «Գլուխ Բ. Պատմած յիշատակի վասն արիւնահեղին Բարսումայի»։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինյան Ն.—«Եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւնն Հայոց պատերազմին», մասն Ա, Վիեննա, 1932, էջ 21—22 («Թովմա Արծրունի և Եղիշէ»), 60—68 («Եղիշէ և Բարծումա»)։

Գրիգորյան Մ. Գ.—«Անձնանուններու աղաւաղումներ դաւանաբանական գրութեանց մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1970, էջ 324—326 (§ 5)։

Դուրյան Եղ.—«Եղիշէ և Բարծումա», Երկրագունտ (ամս.), Կ. Պոլիս, Զ տարի, 1888, էջ 14—26։— Նույնը տես նաև հեղինակի հետևյալ գրքում. «Ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք», Երուսաղեմ, 1935, էջ 37—46։

Տեր-Մինասյան Երվ.—«Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 80—81, 111, ևն։

Տեր-Մինասյան Երվ.—«Նեստորականությունը Հայաստանում», տես հետևյալ հրատ. մեջ. «Գրական-բանասիրական հետախուզումներ» (ՀՍՍՀ ԳԱ, Գրակ. ինստ.), գիրք Ա, Երևան, 1946, էջ 194—197։— Նույնը տես՝ հեղինակի հետևյալ գրքում. «Պատմա-բանասիրական հետազոտություններ» (ՀՍՍՀ ԳԱ, Լեզվի ինստ.), Երևան, 1971, էջ 348—351։

Халатянц Гр.— «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского»,, ч. I, Москва, 1903, стр. 112—113, 117—118, 372.

Ter-Minassiantz Erw.—„Die Armenische Kirche in ihren Beziehungen zu den Syrischen Kirchen", Leipzig. 1904, S. 37 etc.

ԲԱՐՍՈՒՄԱ [ԲԱՐԾՈՒՄԱ] ՊԱՏՄԱԳԻՐ
(Barsauma historiographus)

Դ դ. ասորի հեղինակ, ըստ ոմանց՝ պարսիկ, որի պատմական մի երկը Հունաստանում թարգմանվել էր հունարենի՝ Խոռոհբուտի կողմից։ Մովսես Խորենացին, որ օգտվել

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. I. Ortiz de Urbina, „Patrologia syriaca", Romae, 1958, p. 110—111. A. Baumstark, „Geschichte der syrischen Literatur", Bonn, 1922, S. 108—109.

է Բարսումայի այդ երկից, իր Պատմության Բ գրքի Հ գլխում գրում է.

«Այս Խոռոհբուտ՝ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից... յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանոսի։ Ընդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս, մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստսոհոմ կոչեն. յորմէ մեր ուսեալ՝ երկրորդեմք այժմ ի գիրս յայսմիկ, թողլով զառասպելաց նոցա բաբբաջմունս։ Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափագոյ, և արտադատութեան հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատումն զհօտիւն, և լուսնակն, և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաւդեայք, և որ ինչ զկնի այսորիկ. և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դստեր վասն նախազին, և որ ինչ այլն ամենայն։ Նա և այծին դիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծւոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն. և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ։ Այլ մեք ասասցուք միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն»[1]։

Այս տեղեկությունից հետո Խորենացին ՀԱ գլխից սկսում է գրի առնել Խոսրով Ա-ի պատմությունը՝ ըստ Բարսումայի։

ԲԱՐՍՈՒՄԱ ՍԱՄՈՍՏԱՑԻ [ՄԵԼԻՏԻՆԵՑԻ] ՄԻԱՅՆԱԿՅԱՑ*

(Barsauma Samosatenus [Melitinensis] solitarius)

Ասորի հակոբիկյան միայնակյաց՝ Թեոդոս Փոքր և Մարկիանոս կայսրերի օրով, մեռ. 458 թ. (տես նաև ԲԱՐՍՈՒՄԱ ԱՆՏԻՈՔԱՑԻ)։ Նրա վկայաբանության հայ. թարգմանությունը, որը կատարված է ասորերենից, մեզ հայտնի է զանազան խմբագրություններով։ Ձեռագրերում անունը պատահում է Բարսամ, Բարսամա, Բարսամաւ, Բարսամոյ, Բարսում, Բարսումա, Պարսամ, Պարսամաւ, Պարսամոյ, Պարսոմոյ, Պարսում ձևերով։

* * *

1. Վարք և քաղաքավարութիւն երիցս երանեալ ճգնազգեաց վկա[յ]ին Քրիստոսի սրբոյն Պարսամու միայնակեցի, որ եղև ի Միջագետս Ասորւոց յամս ամպարիշտ թագաւորին Մարկիանոսի. «Ամենայն ժամանակ ընդունելի է ընտրելոց Աստուծոյ. քանզի և յամենայն ժամանակի արդարք, որք յերկրի պայծառանան զանազան առաքինութեամբք, ոչ համեմատ գոլով միմեանց և հաւասար ըստ արդարութեան մասին, այլ ոմն նուազ, իսկ ոմն առաւելեալ գործանութեամբ յայսոսիկ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1522, էջ 465բ—482բ։

Վերջում՝ թարգմանութեան հիշատակարանը.

«Ես Գրիգոր նուաստ քահանայ ի բազում գթոյ գրեցի զվարս մեծի ճգնաւորին Քրիստոսի Պարսամաւի, զորս զհոլովագոյն նշանածն զանց արարեալ զոր ի կեանս իւր և յետ մահուան իւրոյ արար, և առնէ մինչև ցայսօր ժամանակի, վասն զի յայտնի է ամենեցուն։ Բայց այս այնչափ գրեցաւ, որպէսզի հաւատարիմ լիցի ճշմարտասիրաց։ Արդ որք հաւատով զյիշատակս նորա կատարէք եկեղեցիք ուղղափառաց, հաղորդս արասջէ զձեզ Աստուած մասին ժառանգութեան սրբոց իւրոց, պաղատիմ և ես սիրոյն ձեր՝ թողութիւն մեղաց հայցել ինձ ի Քրիստոսէ։

Այս պատմութիւն վարուց երանեալ ճգնաւորին Քրիստոսի նախ գոլով թարգմանեալ ի հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Հայոց Մելիտինւոյ, հրամանաւ և ծախիւք մեծին Գրիգորիսի կաթողիկոսի և վկայասիրի, ի ձեռն Գրիգորի ուրում[ն] քահանա[յ]ի։ Եւ քանզի դեռևս ըստ Ասորւոց

---

[1] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 206—207։

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ. A. Vööbus, „Early monasticism in Mesopotamia and Syria" (Corpus script. christ. orient., vol. 197), Louvain, 1960, p. 196—208. E. Honigmann, „Le couvent de Barsauma et le patriarcat jacobite d'Antioche et de Syrie" (Corpus scr. chr. or., vol. 146), Louvain, 1954, p. 6—23.

շաղփաղփ և ծամածուռ, անյարմար և աշխարհաւրէն բանիցն գոյր, և ոչ ըստ մերո[յ]ին ազին սիղոբա[յ]ից պայծառ և յոգնապաճոյճ բանից, յաղագս որոյ հրաման հասեալ առ իմ նուաստութիւնս, որ ոչ ըստ արժանւոյն կոչեցեալ Ներսէս, ի գերահռչակ և ի վսեմական տեառնէ իմմէ և յեղբաւրէ Գրիգորիսէ, գոլով նախնոյն մերոյ լուսաւորչի արեան աթոռակալի անուանակիր, որպէսզի ձեռն արկեալ ի սմա, վերստին փոխարկեցից ըստ մերո[յ]ին լեզուի յարմարութեան ըստ գրեցելումն լնուլ զպակասութիւն հարց՝ որդւոց։

Եւ արդ, իմ առեալ և առաւելեալ ըստ չայլայլութեան բանի և կետի (sic). մինչ գրի, գոլ ի սմա այժմ ի նորոյն անտի, բայց միայն զաւրութիւն բանին և պատմողականն, և այս ոչ ըստ ապիկար իմոյ զաւրութեան, այլ ըստ Հոգւոյն Աստուծոյ տըւչութեան, մանաւանդ եթէ ի սիրո[յ] աստի ածանդակութեանց։ Վասն որոյ պաղատիմք հանուրց եկեղեցւո[յ] մանկանց որք միանկամ (sic) յաւրինակ առեալ վերստին գրէք զայս պատմութիւն երանելւոյն, որպէսզի փոքրաբանս (sic) զյիշատակարանս գրեցէք իւրաքանչիւր. ընդ նմին և թողութիւն մեղաց հայցեցէք ի Քրիստոսէ առաջնոյն (sic) աշխատողաց և վերջնոցս, և ծնողաց մերոց և եղբարց ամենայն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւ[իտեանս]» (էջ 482բ)։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 6196՝ «Վարք և քաղաքավարութիւն երանեալ ճգնաւորին Քրիստոսի՝ սրբոյն Բարսամոյի միայնակեցի... Մարկիանոսի» (էջ 105բ—120ա, սկ. «Ամենայն ժամանակք ընդունելի է»)։

Տես դարձյալ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 200 (էջ 79ա—92բ), № 276 (էջ 25բ—53ա) և № 282 (էջ 58ա—107բ). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 99 (էջ 19ա—48ա)։

2. Պատմութիւն յաղագս վարուց և սքանչելեաց սրբոյն Բարսամոյի՝ որդի պահոց, զոր առեալ ի յԱսորոց թարգմանութեամբ. «Սուրբս այս և սքանչելահրաշ և մեծավաստակ առաքինութեամբ զարդարեալ, ճգնող նահատակս Բարսամաւ էր ի ժամանակս Թէոդոսի թագաւորի ի սահմանս Միջագետաց...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3787, էջ 57բ—68ա։

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 224 (էջ 153բ—158ա, սկ. «Սուրբն Պարսում ասորի էր ի Միջագետաց ի ժամանակս բարեպաշտ կայսերն Թէոդոսի»)։

3. Վարք և պատմութիւն Պարսամայ ճգնաւորին որ եղև ի Միջագետս Ասորոց. «Արդ ասացուք փոքր-ինչ յաղագս երանելոյն Պարսամայ թէ ուստի՛ և յորո՛ց և կամ յորո՛ւմ ժամանակի. Եւ արդ էր այս երանելիս Պարսամ ասորի ի Սամոսատացւոց քաղաքէն, ի գեղջէն, որ կոչի Հարք, մեծատուն ազգաւ. և հայրն վախճանեալ և երանելին մնայր տղայ գոլ հասակաւ, բայց կատարեալ իմաստութեամբ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1952, էջ 163ա—172ա։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 4822՝ խոր նույն (էջ 144ա—156բ, սկ. նույն)։

4. Վարք Պարսամաի (sic) սքանչել[ա]գործ ճգնաւորին. «Սուրբ և արի ճգնաւորն Քրիստոսի Պարսամաւ ասորի էր ազգաւ ի Միջագետաց ի ժամանակս փոքր Թէոդոսի սուրբ թագաւորին...», տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (Հայսմավուրք Կիրակոս Արևելցու), էջ 219ա—219բ։

5. Վարք և յիշատակ Պարսումայ ճգնաւորին. «Սուրբն Պարսամ որ թարգմանի որդի պահոց. էր սա ազգաւ ասորի, ի քաղաքէն Հայոց Մելտենոյ...», տես՝ «Ճառ սրբոց վկայիցն...» (Հայսմավուրք Գրիգոր Ծերենցի), Կ. Պոլիս, 1706, էջ 460—462։

Այլ տպ.— Վարք և յիշատակ նն. «Սուրբն Պարսամ որ թարգմանի որդի պահոց...», տես՝ «Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 493—495։

Այլ տպ.— Վարք և յիշատակ նն. «Սուրբն Պարսամ որ թարգմանի որդի պահոց...», տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 349—351։

□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 84 (էջ 182բ—185ա), № 1661 (էջ 199բ—203ա)։

6. Պարսոմոյի ճգնաւորի որ է որդի պահոց. «Ասորի էր ազգաւ, յամս փոքր Թէոդոսի եղև կրաւնաւոր և զամս ԾԴ ոչ նստաւ ոչ զտիւ և ոչ զգիշեր...» *(անանուն համառոտ Հայսմավուրք), տես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 135բ (վերջից թերի)։*

⊠ *Ձեռագրացուցակներում կան նաև վարքի ուրիշ օրինակներ, որոնք հայտնի չէ, թե վերոհիշյալ խմբագրություններից որի՞ն են պատկանում. օրինակ՝ Հալեպի Քառ.-մանկ. եկեղ. ձեռ. № 146 (էջ 266ա—277ա?, սկ.* «Սուրբ և երանելին Պարսումա»):

Բարսամ Սամոստացու վարքի ասոր. բնագիրն անտիպ է (Լոնդոնի Brit. Mus. Ms. Add. 14,734 *և* Add. 12,174). *դպտերենը տես՝* S. Grébaut, „Vie de Barsoma le Syrien“, *Revue de l'Orient Chretien*, 1908, p. 338—340.

Վարքի ասոր. բնագրի մասին Հ. Տաշյանը հետևյալն է գրում, Վիեննայի հայ. № 99 ձեռագիրը նկարագրելիս. «Ընդարձակ այս Վարքն այլևայլ հրաշքներու կոյտ մըն է, որ կը համաձայնին անոնց հետ՝ որ կը գտնուին Պարսումայի ասորական Վարուց մէջ։ Վերջինս կը յիշէ Բար-Հեբրէոս (հմմտ. նաև Assemani, Bibl. Or., II, 296) *և Պարսումայի Սամուէլ աշակերտին կ'ընծայէ, և որուն համար կ'ըսէ թէ ՚առաքեցաւ ի Հայս ի վարդապետէն իւրմէ, որպէս պատմէ ինքն իսկ ի ԼԵ.րորդ սքանչելիս՝։ Մերինն այսչափ ընդարձակ չէ, և սակայն կրնայ նոյն ասորականէն համառօտուած ըլլալ»*[1]*։*

Մի «Շարական սուրբ Պարսամայ ճգնաւորի» *(սկ.* «Ճգնաւոր Քս.ի համապայծառ և գերագոյն») *տես՝ Ս. Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 159։*

ԲԱՐՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ

Բարք ոմանց կենդանեաց. «Առիւծն է՝ ազատական, հանոյական, ընտելական, յաղթասէր, հզօր, արդար, գթոտ, հպարտ և գիշատող: Փիղն կամ ֆիլն է՝ խոհեմ, դաւաճան և նախանձայոյզ: Ուղտն վրէժխնդրու և շարացող...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1786, էջ 58ա—58բ։*

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ կամ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆ

Մեկնողական որոշ երկեր կրում են այսպիսի խորագրեր. օրինակ՝ Հովհաննես Վարդենեցու «Բացայայտումն բանից... Գրիգորի Նարեկացւոյ», Սահակ Ձորոփորեցու «Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգեւոր հարցն սրբոց», Խոսրով Անձևացու «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ, քարոզութեանց և աղօթից, ըստ իւրաքանչիւր ժամուց», Հովհաննես Հոլովի «Բացայայտութիւն իսկականի ճշմարտութեան սակս խառնման ջրոյ ընդ գինւոյ՝ ի սրբազնութեան պատարագի», Պողոս Սենիերիի «Բացայայտութիւն Հայր մերին, բաժանեալ ի չիսուն և վեց մտածմունս» ևն։ Տես նաև ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Տես՝ ԱԳԱԹԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ, «Բացատրութիւն յորդորական գլխոցն Աղաբիգոսի սարկաւագի»։

ԲԱՒԼԱ [ԲԱՒԼԱՍ] ՎԿԱՅՈՒՀԻ

Վկայաբանությունը տես ԲԱՐՍՈՒՄԱ ԵԴԵՍԱՑԻ անվան տակ։

ԲԱՒՈՆԵՑԻ

Տես՝ ՍԻՈՆ ԲԱՒՈՆԵՑԻ։

ԲԱՔՈՍ [որ է ԲԱԿՔՈՍ] ՎԿԱՅ

Տես՝ ՍԱՐԳԻՍ ՀՌՈՄԱՅԵՑԻ ՎԿԱՅ։

ԲԵԳԹԱՐԲԵԳ ԳՈՐԵՑԻ

Վրաստանի հայազգի Բեգթաբեգյան իշխանական տոհմից, ԺԷ դ. վերջերին և ԺԸ դ. սկզբներին։ Եղել է Գեորգ ԺԱ թագավորի (1676—1678 թթ.) դիվանադպիրը։ Վրացերեն լեզվով գրել է քառյակներ՝ նվիրված նույն թագավորին։ Մեզ հասել է նաև, նրա

---

1 Հ. Տաշյան, «Ցուցակ...», էջ 369։

ընդօրինակությամբ, «Ընձենավոր»-ի մի ձեռագիր, որի նկարազարդումներն ինքն է կատարել։ Նրա մասին տես՝ П. М. Мурадян, «Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке», Ереван, 1966, стр.19—20. *Նաև՝* Л. М. Меликсет-Беков, «Усыпальница кн. Бектабеговых», Тифлис, 1914.

ԲԵԳԼԱՐ ՎԱՆԵՑԻ

Ժամանակագիր, որը գրի է առել Վասպուրականի կողմերում տեղի ունեցած դեպքերը՝ 1635—1732 թթ.։ Տես՝ Հ. Թոփճյան, «Ցուցակ ժողովածուաց Դաղեան խաչիկ վարդապետի», մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 59. Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 129։

ԲԵԴԱ ԵՐԱՆԵԼԻ*
(Beda Venerabilis)

Անգլիացի բազմահմուտ գիտնական, ծն. մոտ. 675 թ. և մեռ. 735 թ.։ Նրա ամենակարևոր աշխատությունն է Անգլիայի եկեղեցական պատմությունը (Historia ecclesiastica gentis Anglorum), *որը թարգմանվել է շատ լեզուների։ Հայ ունիթորական գրականության մեջ Բեդան հաճախ է հիշատակվում և վկայակոչվում։ Բեդայի երկերից հայ. թարգմանությամբ մեզ հայտնի են* «Գիրք Կայծականց»-*ը և մի փոքրիկ գրվածք՝* «Յղ. մեծարելւոյ հաղորդութեան սրբազնականի», *որոնք անտիպ են։* «Գիրք Կայծականց»-*ը լատիներենից է թարգմանվել Կաֆայում՝ ԺԴ դ. առաջին կեսում, Թովմաս Ջահկեցու ձեռքով։ Թարգմանիչը հետագայում Նախիջևանի եպս. է ձեռնադրվել Իննովկենտիոս Զ-ի կողմից և մեռ. 1358 թ.։*

* * *

1. Գիրք Կայծականց.

Աստ սկսանի գիրք զանազան վճռոց՝ ի զանազան ճառից. «Ասէ Տէրն յԱւետարանն. Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2037, էջ 153ա—187ա։*

Բովանդակություն.

*Ա. Յղ. սիրոյ։—Բ. Վկայութիւնք սրբոց վասն համբերութեան։—Գ. Յղ. սիրոյ Աստուծոյ և ընկերին։—Դ. Վկայութիւնք սրբոց վասն խոնարհութեան։—Ե. Յղ. թողութեան։—Զ. Յղ. զղջման։—Է. Յղ. աղօթից։—Ը. Յղ. խոստովանութեան։—Թ. Յղ. ապաշխարութեան։—Ժ. Յղ. պարկեշտութեան։— ԺԱ. Յղ. թողողացն զաշխարհ։— ԺԲ. Յղ. երկիւղի։— ԺԳ. Վս. կուսութեան։— ԺԴ. Յղ. արդարութեան։— ԺԵ. Յղ. Նախանձու։— ԺԶ. Յղ. լռութեան։— ԺԷ. Յղ. հպարտութեան։— ԺԸ. Յղ. իմաստութեան։— ԺԹ. Յղ. *բարկութեան։— Ի. Յղ. սնափառութեան։— ԻԱ. Յղ. պոռնկութեան։— ԻԲ. Յղ. ժուժկալութեան։—ԻԳ. Յղ. անհոգութեանց։—ԻԴ. ՅՂ. յիմարութեան։—ԻԵ. Յղ. ագահութեան։—ԻԶ. Յղ. զօրութեանց որ կոչի առաքինութիւն։— ԻԷ. Յղ. մոլութեանց։— ԻԸ. Յղ. արբեցութեան։— ԻԹ. Յղ. տասանորդաց։— Լ. Յղ. ցանկութեան։— ԼԱ. Յղ. խրատու։— ԼԲ. Յղ. ուսուցչաց և վարդապետաց։— ԼԳ. Յղ. հաւատոյ։— ԼԴ. Յղ. յուսոյ։— ԼԵ. Յղ. շնորհաց։— ԼԶ. Յղ. տարաձայնութեան։— ԼԷ. Յղ. երդման։— ԼԸ. Յղ. խորհրդոյ։— ԼԹ. Յղ. ստութեան։— Խ. Յղ. արեղաջից։— ԽԱ. Վասն բամբասանաց։— ԽԲ. Յղ. կամաց։— ԽԳ. Յղ. զգեստից։— ԽԴ. Յղ. ողորմութեան։— ԽԵ. Յղ. ցաւակցութեան ընկերին։— ԽԶ. Յղ. բարձրամտութեան։— ԽԷ. Յղ. կենաց մարդոյն։— ԽԸ. Յղ. կաշառուց։— ԽԹ. Յղ. մարմնաւոր ողորմութեան։— Ծ. Յղ. նեղութեան։— ԾԱ. Յղ. երախայրեաց և պատարագաց։— ԾԲ. Վս. տրտմութեան։— ԾԳ. Յղ. գեղեցկութեան։— ԾԴ. Յղ. խրախութեան։— ԾԵ. Վս. ծիծաղելոյ և ուրախութեան։— ԾԶ. Յղ. պատուոյ ծնողացն։— ԾԷ. Յղ. որդոց։—ԾԸ. Վս. մեծատանց և աղքատաց։— ԾԹ. Յղ. աչառութեան։— Կ. Յղ. ճանապարհի։— ԿԱ. Յղ. զգայութեանց։— ԿԲ. Վս. ծառայից և տերանց։— ԿԳ. Յղ. վիճակակցութեան չարեաց և բարեաց։— ԿԴ. Յղ. բարեկամութեան և թշնամութեան։— ԿԵ. Յղ. խորհրդոց։— ԿԶ. Յղ. ննջեցելոց։— ԿԷ. Յղ. աստուածային օգնականութեան։— ԿԸ. Յղ. ծերոց և տղայոց։— ԿԹ. Վս. հակառակութեանց, որ է վիճաբանութիւն։— Հ. Վս. ճոխութեան։— ՀԱ. Յղ. հեզոց և երկիւղածաց։— ՀԲ. Յղ. դատաւորաց և ուղղչաց։— ՀԳ. Յղ. պարզամտութեան։— ՀԴ. Յղ. բժշկաց։— ՀԵ. Յղ. կապանաց։— ՀԶ. Յղ. օրինակաց։— ՀԷ. Յղ. խրատուց։— ՀԸ. Յղ. փորձութեան և մարտիրոսութեան։*

«Յիշատակարան թարգմանչի գրոցս Կայծականց։

[Յիշեցէք] զթարգմանող սոյն գրոցս ի լատին լեզուէ ի Հայս զՖրա Թումայն Ճահկեցի, ի կարգէ Միաբանողացն, որ մինչդեռ ծաղկէրն երիտասարդական տիօք, լի ամե-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* „Real-Encyklopädie für protestantische Theologie und Kirche" (hrsg. von J. J. Herzog u. G. T. Plitt), Bd. II, Leipzig, 1878, S. 204—209. B. Plaine. „Le Vénérable Bède, docteur de l'Église", *Revue Anglo-Romaine*, t. III, 1896, p. 49—96.

նայն իմաստութեամբ և շնորհօք, թարգմանեաց զգիրքս զայս ի քաղաքն Կաֆայ։ Եւ ապա ընդ երիցագոյն հարազատ եղբօր իւրոյ Աւագտէր[1], շարժեալք նախանձով բարեաց, դիմեցին յաթոռն Հռոմայ առ ծայրագոյն քահանայապետն և հովիւն հանուրց աշխարհի պապն Ձ.րդ Իննոցենցիոս վասն հաստատութեան սուրբ կարգին Միաբանողաց։ Զոր իբրև ետես վերոյասացեալ սուրբ պապն զջերմեռանդութիւն նոցա և զխնդիր, որ էր ի փրկ[ութիւն] հոգոց, հաւանեցաւ առնել զհայցու[ածս] նոցա։ Եւ շնորհեաց նոցա բովէլէն վասն նախաս[ացեալ] կարգին, կենցաղավարիլ և կեալ ըստ կ[ան]ոնաց երանելոյն Օգոստինոսի և ըստ կացուցմանց կարգին Քարոզողաց։ Նաև զասացեալ ֆրա Աւագտէրն հաստատեաց գուբեռնաթոր, այսինքն վերախնամող ասացեալ կարգին և զեղբայր իւր զվերոյասացեալ զԹոմասն եպիսկոպոս ձեռնադրեաց Նախիջևանայ։ Եւ սոքա յուղի անկեալք անցին ընդ ծովն մեծ և հասին ի Կոստանդինուպոլիս և անդի նաւեալք կամեցան չուե[լ] ի Կաֆայն և ալէկոծեալք ծովահեղձ եղեն ընդ յայլոց բազմաց, յամի տեառն Ռ. Յ. Ծ. Զ., յապրիլ Ա։ Այլ ըստ ասացելոյն յԱռակսն, եթէ արդարն իւ իւիք և մեռցի՝ փրկեսցի. վասն որոյ աղաչեմ զձեզ, զի որ կարդայք զգիրքս զայս, յիշեսցիք ի տէր Յիսուս զվերոյասացեալ եղբարսն, և Աստուած զձեզ յիշ[եսցէ]» (էջ 187ա)։

Տես նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № (հին) 397 (էջ 1—98)։

2. Պետայի քահանայի յաղագս մեծարելոյ հաղորդութեան սրբազնականի. «Քահանայ ոչ ըստ իրաւանց արգելեցեալ, մինչ հրաժարի ի պատարագելոյ, յիւրմէ կողմանէ զսուրբ Եւրողութիւնն նուազեցուցանէ ի գովութենէ…», *Օքսֆորդի* Bodl. Libr. Ms. Balliol College № 4, fol. 136ᵛ—137ʳ (?).

Այս գրվածքը «Կայծականց» գրքից չէ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղևոնդ.—*«Սիսական», Վենետիկ, 1893, էջ 385։*

Ոսկյան Գ.—*«Համառոտ ակնարկ մը Քարոզող և Միաբանող եղբարց պատմութեան Հայաստանի մէջ»,* Բազմավէպ, *1922, էջ 49—51։*

Brosset M.—„Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847—1848", 1re livraison, St.-Pétersbourg. 1849, p. 44—45.

Խոսում է էջմ. մատ. այն ձեռագրի մասին, որն այժմ կրում է Երևանի Պետ. Մատ. 2037 համարը։

Oudenrijn (Van den) M. A.—„Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum" etc., Bernae, 1960, §§ 62, 105, 159, 488, 489.

Somal P. S.—„Quadro delle opere di vari autori anticamente tradotte in armeno", Venezia, 1825, p. 39.

ԲԵԹԼԱՊԱՏ ՊԱՐՍԻԿ ՎԿԱՅ
(Bethlapat Persa)

Հիշատակվում է հայոց Հայսմավուրքներում՝ նոյ. 12 ամսաթվի տակ, աղավաղված անվանաձևերով՝ Բէթլաթ, Բիթլաբաթ, Բիդլաբադ, Բեդշաբա։ *Հմմտ. նրա հուն. վկայաբանությունը՝ ի* „Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice Sirmondiano" (Propylaeum ad Acta Sanctorum Novembris), Bruxellis, 1902, p. 220—221.

ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԱՆԿՈՒՆՔ

Տես՝ ՄԱՆԿՈՒՆՔ ԲԵԹՂԵՀԵՄԻ։

ԲԵԹՐԷ[1], այն է՝ ՊԵՏՐԷ

ԺԸ դ. հայ երգիչ, որից մեզ հայտնի է բարոյախոսական մի բանաստեղծություն՝ հայատառ թուրքերեն։

* * *

(Անխորագիր) «Սապահտան օղրատըմ էօլիւմ կեօչիւնէ,|էօլիւյի կեօրիւրտիւյէր պիր տամ իչինտէ,|Պու սրա վարտը եարանլարն

---

[1] *Ձեռագրում՝* աւաք աբ (sic)։

[1] *Այս անունը գրված է արևմտահայ ուղղագրությամբ, պետք է արտասանվի՝* Պետրէ։

սուչունէ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9834, էջ 27ա—28բ։

Ընդամենը 11 տուն։

ԲԵԼԼԱՐՄԻՆՈՍ (Հռոբէրտոս)*
(Robertus Bellarminus)

Իտալացի աստվածաբան և կարդինալ, ծն. Մոնտեպուլչիանոյում (Իտալիա) 1542 թ. և մեռ. Հռոմում 1621 թ.։ Հիսուսյան ընկերության անդամ։ Եղել է բողոքականության դեմ ուղղված պայքարագրական գրականության կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որի բազմաթիվ հեղինակությունների մեջ ամենակարևորն է „Disputationes de controversiis fidei adversus huius temporis hoereticos» (լավագույն հրատարակությունը՝ Հռոմ, 1832—1840 թթ., 5 հատորով)։ Բել.-ի „Dichiaratione più copiosa della Dottrina Christiana composta per ordine di Clemente VIII» երկը (տպ. Հռոմ, 1603 թ.), որը թարգմանվել է մի քանի տասնյակ լեզուների, ԺԷ դ. ունեցել է ամբողջական բնագրի հայ. 3 տարբեր թարգմանություններ, իսկ ԺԸ դ.՝ համառոտության 4 տարբեր թարգմանություններ, որոնք և հետզհետե ունեցել են բազմաթիվ տպագրություններ ու տպագրվում են նաև մեր օրերում։

* * *

Ա.—ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ

1. Թարգմանություն Պետրոս Պողոս Կոպոսի.

Առաւել պարզաբանութիւն Քրիստոնէակայն Վարդապետութեան թարգմանեալ ի Ֆրանգաց լեզվէ ի Հառ՛յց բառն ձեռամբ տէր Պէտրո՛ս Պողոսի Հառ՛ց քահա՛նային և հրամանաւ (sic) սրբազան փափին Ութէրորդ Ուրբանոսի և Սուրբ Ժողովոն (sic) որ վասն հաստատութեան հաւատո՛յ կա՛րգեալ է։ Կազմեալ էղեւ ի թվ. ծրննդեան Քսի. ՌՈԼ։ Dichiaratione più copiosa della Dottrina Christiana tradotta dalla italiana nella lingua armena dal P. Pietro Paolo sacerdote Armeno. Stampata per ordine della Stà di N. S. Papa Vrbano Ottavo e della Sagra Congregatione de Propaganda Fide. In Roma, Nella Stampa della Sagra Congregatione de Propaganda Fide, MDCXXX. Con licenza de' Superiori.

[Ը]+279 էջ (չափ. 18.5×11 սմ.)։ Էջերը շարված են երկու սյունակով, որոնցից մեկում՝ իտալ. բնագիրը, մյուսում՝ հայ. թարգմանությունը։ Աշխատության բուն խորագիրն է՝ «Պարզաբանութիւն (sic) Քրիստոնէական Վարդապէտութեան (sic) վասն այնոցիկ որք ուսուցանեն (sic) զմանգոնս (sic) և զայրս միամիտս իբրև ի հարցմոնս (sic) և ի պատասխանըս արարեալ է» *(իտալ.* «Dichiaratione della Dottrina Christiana...)*։ Գրքի սկզբում կան թարգմանության ճշգրտության մասին վկայություններ հայ., իտալ. և լատ. լեզուներով. «Տէր Ներսէս արք էպիսկոպոս Բաղէշո՛յ քաղաքին», «Ֆըրա Աւգոստինոս Բաջենց ի կարգէն Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի» (և իտալ.* «Fr. Agostino Bagezzi Domenicano»), *«Ըստեփանոս աւաք սարկավարք Յամթէցի Գազպարի որդին»,* „Fr. Gio. Battista di Constantinopoli di natione Armeno, Predicatore de' Minori Osservanti di S. Francesco", „Fr. Gaspar Manugties Armenius S. Theologiae Doctor, Tertij Ordinis S. Francisci de Poenitentia nuncup. Reg. Obseru. Armeniae Nationis Confessarius in Alma Vrbe". *Վկայություններին հաջորդում է* Acchille Venerio-*ի իտալ. ձոնը, ուղղված՝* „Alla Santità di N. S. Papa Vrbano Ottavo, Beatissimo Padre".

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն.

Վս. որպիսութեան քրիստոնէից վարդապետութեան և թէ որք իցեն գլխավոր բաժինք։ Կանոն առաջ-ջին։— Պարզաբանութիւն նշանի սուրբ խաչին։— Պարզաբանութիւն հաւատամքին։— Պայմութիւն Հայր մեղին։— Վս. Ողջոյն Մարիամին։— Վս. տասն պատգամաց տեառն Աստուծոյ։— Վս. առաջին պատգամին։— Վս. էրկրորդ պատգամին։— Վս. էրրորդ պատգայմին։— Վս. չորրորդ պատգամին։— Վս. հինգէրորդ պատգամի[ն]։— Վս. վեցէրորդ պատգամին։— Վս. իօթընէրորդ պատգամին։— Վս. ութէրորդ պատգա-

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* M. Cervinus, „De vita et moribus Bellarmini", Sienae, 1622. J. B. Couderc, „Le vênèrable Robert Bellarmin", Paris, 1893.

մին։— Վս. իններորդ պատգամին։— Վս. տասներորդ պատգամին։— Վս. հրամանաց սուրբ եկեղեցւոյ։— Վս. ավետարանական խրատոց։— Վս. իօթն խորհրդեան սուրբ եկեղեցւոյ։— Վս. սուրբ մկրտութեան։— Վս. հաստատութեան որ է կընունք։— Վս. սուրբ հաղորդութեան։— Վս. ապաշխարութեան։— Վս. վերջին օծման։— Վս. սուրբ կարգի քահանայից։— Վս. սուրբ պսակին։— Վս. այլ ամենայն շընորհաց։— Վս. զօրութեան աստուածաբանութեայն։— Վս. գըլխավոր զաւրութեան։— Վս. իօթն շընորհայց հոգոյն սըրբոյ։— Վս. ութերորդ երանութեան։— Վս. իօթներորդ գործոյց ողորմութեան հոգեւոր և մարմնավորի։— Վս. չարեայց ամէն մեղաց։— Վս. ըսկըզբնական մեղաց։— Վս. մահոյ չափ մեղացն և ներելեացն։— Վս. իօթն գըլխաւոր մեղացն։— Վս. մեղաց որ հակառակ են հոգոյն սըրբոյ։— Վս. մեղաց որ գոչեն առ Աստուած։— Վս. չորրորդ սոսկալի վերջի իրացըն։

Այլ տպ. — Doctrina Christiana a Petro Pavlo sacerdote Armeno versa in linguam armenam. Առաւել պարզաբանութիւն Քրիստոնէական Վարդապետութեան թարգմանեալ ի Ֆրանգաց լէզվէ ի Հայոց բառն ձեռամբ տէր Պէտրոս Պօղոսի Հայոց քահանային եւ հրամանաւ սրբազան փափին Ուրբանոսի եւ սուրբ ժողովոյն որ վասն հաստատութեան հաւատոյ կարգեալ է: Կազմեալ էղեւ ի թվ. ծննդեան Քրիստոսի ՌՈԼ: Lutetiae Parisiorum, impensis Societatis Typographicae Librorum Officii Ecclesiastici, jussu Regis constitutae. M.DC.XXXIIII. Cum Privilegio Majestatis Suae Christianissimae.

[Ժ]+279 էջ (շարվ. 19.3×12.5 սմ.)։ Էջերը շարված են երկու սյունակով, որոնցից մեկում՝ լատիներեն բնագիրը, մյուսում՝ հայերենը։ Հայերենը լատիներենից կատարված նոր թարգմանություն չէ, այլ իտալերենից թարգմանված բնագիրն է, որն այստեղ նույնությամբ արտատպված է նախորդ հրատարակությունից։ Գրքի սկզբում կա Տպագրական Ընկերության (Societas Typographica) *ուղերձը, ուղղված՝* „Armando Ioanni, Eminentissimo S. E. R. Cardinali, dvci de Richeliev, et pari Franciae". *Դրան հաջորդում են նախորդ հրատարակության առթիվ տրված միևնույն վկայությունները՝ թարգմանության մասին։ Վերջում՝ բովանդակության ցանկը։*

□ *Թարգմանիչ Պետրոս Պողոսը, որը լատինական վավերագրերում կրում է Կոպոս մականունը* (Petrus Paulus Copus)[1], *պատկանում էր «Համբարձման» կոչվող մենակյացների ընկերությանը, որը հաստատված էր Հռոմ քաղաքում, Հրեշտակային Դուռ անվանվող վայրում։ Նա իր թարգմանությունը կատարել է իտալերենից, Հռոմում. նույն ժամանակ այս թարգմանությունն ըստ էության ստուգվել է Բարթողիմեոս (Սուլթանշահ) Աբգարյանի կողմից, իսկ տպագրության ժամանակ, 1630 թ., նորից է ստուգվել ու լեզվական սրբագրության ենթարկվել Օգոստինոս Բաջենցի կողմից՝ ինչպես նշված է նրա գրավոր վկայության մեջ, հրատարակության սկզբում։*

Թարգմանչի ինքնագիր օրինակը պահվում է Հռոմի Վատիկանյան Մատենադարանում (Cod. Borg. Arm. 25): *Մեզ հայտնի եղող ձեռ. մի քանի ուրիշ օրինակներ ընդօրինակվել են 1630 և 1634 թթ. հրատարակություններից։ Մի օրինակ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում, ձեռ. № 3573 (էջ 1ա—155ա և 230ա—230բ), որի վրա բացակայում է թարգմանչի անունը։ Մակլերը Փարիզի ձեռագրերից նշում է երեք հատ՝* Bibl. Nat. Ms. Arm. № 28 (=Suppl. Arm. 73), № 155 (=Suppl. Arm. 74) *և* № 157 (=Suppl. Arm. 116)[2], *որոնցից վերջինում հայ. բնագրի հետ միասին տողամիջում դրված է նրա լատ. թարգմանությունը, իսկ թերթերի մյուս երեսի վրա՝ նրա ֆրանս. թարգմանությունը. ըստ երևույթին այս թարգմանությունների նպատակը եղել է ստուգել հայ. թարգմանության ճշգրտությունը։ Մակլերը թյուրիմացաբար Կոպոսի թարգմանությունը համարում է կատարված լատիներենից՝ գուցե հիմնվելով 1634 թ. հրատարակության վրա, ուր հայերենի կող-*

[1] E. Tisserant, „Codices armeni Bybliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani", Romae, 1927, p. 31—32. M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores" etc., Bernae, 1960, § 518.

[2] F. Macler, „Catalogue...", Paris, 1908, p. 14, 84—85, 85. *Այդ ձեռագրերից առաջինը մանրամասնորեն նկարագրել է Կ. Հ. Բասմաջյանը,* Բանասէր, *1900, էջ 144—145։*

քին գրված է լատիներենը։ Մյուս կողմից զարմանալի է նաև, որ Մակլերը հիշյալ ձեռագրերն ընդօրինակված է համարում «Հռոմի 1680 թ. տպագրությունից», այն ինչ, որքան մենք գիտենք, Հռոմում 1680 թ. տպագրվածը ոչ թե այս թարգմանությունն էր, այլ Բարսեղ Հոլովի կատարածը, և մեզ հավանական չի երևում, որ Հռոմի Պրոպագանդայի տպարանը միևնույն տարում երկու թարգմանություններն էլ տպագրած լինի զատ-զատ։

Ուդենրիյնի կարծիքով[1] Պետրոս Պողոս Կոպոսի այս թարգմանության հետ պետք է նույն լինի այն «Քրիստոնէական վարդապետութիւն»-ը, որն Ալիշանի մոտ հիշատակվում է որպես հեղինակություն Պողոս Կիտադինիոսի[2]։

2. Թարգմանություն Հաքիբ Բերիացու.

Պարզաբանական մեկնութիւն Քրիստոնէական Վարդապետութեան, այսինքն՝ բացատրութիւն ուսման հարկաւորին ամենայն քրիստոնէից, որում առադրեցան բանի խոկմունք աւգտակարք զքրիստոնէական հաւատոց: Շարադրեաց զսա անուամբ միայն տէր Սիրեալ (Հապիպ)[3] անարժան աբեղայ ի Յիսուսեանցն: Եւ գրեաց զնա ի Բերիայ մայրաքաղաքն, ի ՌՂԷ թուականի Հայոցն, յետ ծննդեան տեառն մերում Յիսուսի Քրիստոսի ՌՈԽԷ ամ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ № 3976, էջ 3ա—149ա։*

Բելլարմինոսի երկի լիակատար թարգմանությունն է։ Թարգմանիչը հատուկ գրությամբ այս գիրքը նվիրում է Կիլիկիայի հայոց կթղ. Սիմոն Սեբաստացուն (1633—1648 թթ.), հույս ունենալով, որ նրա հավանությամբ այն ընդունելության կարժանանա հայերի կողմից.

«Առ հոգևոր տէր Սիմոն Սիսա կաթուղիկոս։

Քրիստոնէական վարդապետութիւն թուի ինձ նման ոսկւոյ կամ արծաթոյ, որ մինչդեռ թաքուցեալ մնայ ի մահտան և ոչ արտադրի, ոչ աւգուտ է մարդկան, քանզի մինչդեռ յԱստուածաշունչ, որ է՛ իբրև զմահտան ոսկւոյ այսորիկ, այս վարդապետութիւն կամ ուսումն մնայ և ոչ բացատրի և մեկնի, աւգտութիւն չունի վասն հոգւոց։ Վասն այսորիկ բազում վարդապետք և մեկնիչք ջան արարին արտադրել և բացատրել զայսպիսի խորհրդական ոսկի ի մահտանական աղեաց Աստուածաշնչի։ Թուեցաւ ինձ վասն Հայոց, որոց տեսուչ ես, պիտոյ գոլ զայս ոսկի բացադրեալ և մեկնեալ հաւաքել և յառաջի աչաց նոցա դնել, զի իւրաքանչիւր կարասցէ առնուլ և վարել և ի կիր արկանել, զոր ինչ պատկանի նորա։ Բայց զայս գիրս հաւաքումն ուսմանց Քրիստոսի և սուրբ եկեղեցւոյ նախ քո հրամանոց ընծայեմ, զի տեսցես, թէ ոչինչ ունի զոր ուղղափառ քրիստոնէից ոչ ընդունելի իցէ. յաւժարագունաբար նոքա կարդալոց և լսելոց են[1] զայս գիրս եթէ գիտեալ իցեն թէ զսա ընդունիս, իսկ յոյս ունիմ, թէ ընդունելոց իցէ հրամանքդ ոչ միայն վասն բարեկամութեանդ առ իս, այլ մանաւանդ վասն քո աստուածասիրութեան։ Ողջ լեր» (էջ 7բ)։

Հետո՝ մի երկրորդ ձոն, որը խորագրված է՝ „Au glorieux St. Joseph le plus aymable, le plus aymé et le plus releué en dignité de tous les saints après Jesus et Marie, le tres digne espoux de la sainte Vierge mere de Dieu, tres-prudent pere nourrissier et gouuerneur du Verbe incarné“ (էջ 8ա—14բ) և նույնությամբ թարգմանված է հայերենի՝ «Յսուրբ Յովսէփ սիրելի սիրեալ փառաւորեալ...» (էջ 17ա—22ա)։ Այստեղ ի միջի այլոց ասվում է. «Ահաւասիկ մատչիմ և համարձակիմ մատուցանել և նուիրել գերազանցութեանդ զայս գիրքս իբր հարկս ծառայութեանս մեծութեանդ», «գուցէ թէ սա յառաջին է, որ հայերէն լեզուով գրած մատուցեալ լինի գերազանց մեծութեանդ, որով պատահի սրտիս առանձնաւոր մխիթարութիւն. ապա որ ինչ յիմմէ կայ յայս գիրք, թէպէտ սակաւ է, սակայն քեզ պարտի, այլ ինչ մեծագոյն ոչ

1 M. A. van den Oudenrijn, § 518.

2 Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 394։

3 Ձեռագրերում հապիպ անունը գրված է տողից դուրս, սիրեալ անվան վերևում. մենք այն դրեցինք կողքին՝ առնելով փակագծերի մեջ։ Սիրեալ-ը արաբ. հապիպ (հաբիբ) անվան թարգմանությունն է։

1 Ձեռագրում՝ լսելոց եմք:

գոլով ինձ յայժմ զոր մատուցանիցիմ քեզ» և քանիցս բաղձանք է հայտնվում, որ այս գիրքը տարածվի հայերի մեջ։

Այս երկու գրվածքների հետ միասին հատորի վերջում (էջ 149ա—155բ) գտնվող կրոնական մանր նյութերը Հաբիբ Բերիացու սեփական հեղինակությունն են։ Այդ հավելումների մասին է, որ ակնարկում է նա գրքի անվանաթերթում, թե «առաղբեցան քանի խոկմունք ազատակարք զբրիստոնէական հաւատոց»։ Անվանաթերթի «շարադրեաց» բառըն էլ պետք է այդ իմաստով հասկանալ, միաժամանակ նկատի ունենալով, որ ձեռագիրն ամբողջությամբ նրա ձեռքով է ընդօրինակված։

3. Թարգմանություն Բարսեղ Հոլովի.

(Առաջին անվանաթերթ) Վարդապետութիւն Քրիստոնէական: Գերազանցագունեղի կարտինալի տեառն Ռուպերթոսի Պէլլարմինոսի: Թարգմանեցեալ ի Բարսղէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ, ի լեզուէ իտալականէ ի հայկական բարբառ: Յամի տեառն 1669 նոկտեմբերի երեսուն, յԱլիկոռնա:

(Երկրորդ անվանաթերթ) Տպեցաւ տառս աստուածային յամին, որ ի ծնընդենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ հազար և վեց հարիւր և եօթանասուն: Ի թուականութեանս Հայոց հազարի հարիւրի և տասներընի, յԱլիկոռնայ: Ի փառս մեծագոյնս Աստուծոյ:

[Դ]+362 էջ (շարվ. 11×6.7 սմ.)։ Աշխատության բուն խորագիրն է՝ «Պարզաբանութիւն Քրիստոնէականի Վարդապետութեան, ի պէտս այնոցիկ, որք ուսուցանեն զմանկունս և զայլս անձինս պարզամիտս, շարադրեցեալ ըն կերպի տրամախօսութեան»:

Գրքի վերջում՝ հետևյալ հիշատակագրությունը.

«Ներ տպարանում սրբոյ էջմիածնի։ Հաճութեամբ տեառն Ոսկանի արք եպիսկոպոսի Հայոց։ Սրբագրութեամբ Կարապետի վարդապետի Անդրիանացւոյ։ In Livorno. Con Licenza de' Superiori“ *(էջ 362)*[1]։

Այլ տպ.—(Առաջին անվանաթերթ) Dichiaratione più copiosa della Dottrina Christiana. Composta dal Card. Bellarmino, e tradotta dalla Italiana nella lingua Armena dal D. Basilio Barsech, sacerdote Armeno. In Roma, nella Stampa della Sac. Cong. de Prop. Fide, M DC LXXX. Con licenza de' Superiori.

(Երկրորդ անվանաթերթ) Վարդապետութիւն Քրիստոնէական: Գերազանցագունեղի կարտինալի տեառն Ռուպերթոսի Պէլլարմինոսի: Թարգմանեցեալ ի Բարսղէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ, ի լեզուէ իտալականէ ի հայկական բարբառ: Յամի տեառն 1680, ի մեծն Հռոմ:

454 էջ (շարվ. 11.7×7.7 սմ.)։

☐ *Այս թարգմանության մի ձեռ. օրինակ կա Երևանի Պետ. Մատենադարանում, № 1151 (էջ 72ա—162ա)։*

Պետք է թյուրիմացություն համարել Աղ. Երիցյանի նշած այն տեղեկությունը, թե Բարսեղ Հոլովի այս գործը, «լատիներէնից թարգմանուած», 1699 թ. Լիվոռնոյում տպագրվել է Երեմիա Մեղրեցու ջանքով[1]*։*

Բ. ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թարգմանություն Բարթողիմեոս (Սուլթանշահ) Աբգարյանի.

Ի կարճառօտ Վարդապետութենէ Քրիստոնէից հրամանաւ Կղեմէնթոսի Ը.երրորդ սուրբ փափին եւ մեծապայծառ կարդինարին Ռոբերթօ Բելարմին ի լատին բառս գրեալ, եւ հրամանաւք մեծապայծառ Ջինթոսի կարդինար սուրբ Գէորգի Հայոց ազգի հովուապետութեան թարգմանեցաւ ի Հայոց լեզուն եւ կազմեցաւ ի Հռոմ ի կազմատան սուրբ Պետրոսի ի թվին ծնընդեան Տեառն ՌՈԴ. *(=1604)։* Հրամանաւ սրբազան տեառն մերոյ Գրիգորի Հրնգետասաներորդի եւ սուրբ ժողովոյն որ վասն Հաստատութեան Հաւատոյս են կարգեալ՝ կրկին անգամ կազմեալ

---

[1] *Սույն տպագրության մասին տես* G. Chiappini, „Il primo tipografo di Livorno fù un sacerdote armeno", *Liburni Civitas*, anno X, fasc. I, 1937, p. 33—47. *Հայ. թարգմանությունը՝ Գ. Քիապպինի, «Լիւոռնոյի առաջին տպագրիչը հայ քահանայ մըն էր», Բազմավէպ, 1937, էջ 229—237։*

[1] Փորձ, *1881, № 4, էջ 15։*

եղև ի թվին ՌՌԻԳ *(=1623)*[1]: *Զմմառի վանքի ձեռ. № 167, էջ 2բ—8ա:*

Վերջում՝ «Այս է Վարդապետութիւն հաւատոյ քրիստոնէից որ ի լաթին աւրինակէ ի Հայոց լեզու տէր Բարդողիմէոսի Աբգար (sic) սուրբ...[2] *աւրհնեալ քահանայն սրբագրեալ բազում անգամ յաւժարութեամբ պարոն տէր Լուտովիկոսի մաճ վերակացոյ տնտեսութեան Հայոց. ի Հռոմ սուրբ...*[3] *վարդապետ եւ աթոռակալ: Վերջն է բանիս որ գրեցի»:*

2. Թարգմանություն Ստեփանոս Ռոշքայի.

Քրիստոնէական Վարդապետութիւն արտահանեալ ի շարագրելոյն վսեմագունի Պէլլարմինոս կարտինալին, շարադրեալ նախ ի յամենապատիւ տեառնէ Ստեփաննոս Ստեփանեան սրբազան աստուածաբանութեան վարդապետէ, յամի տեառն 1722, և ապա թարգմանեալ գրաբար ի նորին աշակերտէ Յոհաննու Մխիթարայ էրզրումեցւոյ յամի 1726 ի Ստանիսլավով քաղաքն Լեհաստանեայց: *Զմմառի վանքի ձեռ. № 390, էջ 1ա—104բ:*

Հատորի սկզբում՝ «Հեղինակն առ սիրելի ընթերցողն»: *Աշխատության բուն վերնագիրն է.* «Մեկնութիւն Քրիստոնէական Վարդապետութեան»:

Անվանաթերթում եղած տեղեկության հիման վրա կարելի է ենթադրել, որ Ստեփանոս Ռոշքան հավանաբար աշխարհաբարով (լեհահայ բարբառով) շարադրել է Բելլարմինոսի համառոտությունը, իսկ հետո նրա աշակերտ Հովհաննես Մխիթարն այն վերածել է գրաբարի:

3. Թարգմանություն Աթանաս Մերասյանի[4]*:*

Համառօտ Քրիստոնէական Վարդապետութիւն արարեալ ըստ հրամանի պապին Կղէմայ Ութերորդի, ի յարգելի հօրէ Հռուբերտոսէ Բէլլարմինոսէ՝ յԸնկերութենէն Յիսուսի, որ ապա եղեւ կարտինար սրբոյ եկեղեցւոյ: Իսկ այժմ թարգմանեալ հաւատարմութեամբ, ի լեզուէ Իտալացւոց ի հայկական և ի տանկական բարբառ ի Աթանաս վարդապետէ Մէրասեան Կոստանդնուպօլսեցւոյ՝ յեպիսկոպոսէն Հռօմկլայու ի փառս Աստուծոյ և ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ: Եւ տպեցեալ յամի տեառն 1768, մարտի 1. և ի թուին Հայոց ՌՄԺԷ: Ի հայրապետութեան տեառն Սիմոնի Հայոց կաթուղիկոսի: Ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

Բնագրի հայ. թարգմանությունը հասնում է մինչև 37 էջը, իսկ նույնի թրք. թարգմանությունը՝ մինչև 73 էջը. այլ կարգի հավելվածներ՝ մինչև 80 էջը, որ է վերջ:

4. Թարգմանություն Զաքարիա Ալեքսանյանի[1]*:*

Քրիստոնէական Վարդապետութիւն համառօտ, հաւաքեալ ի Քրիստոնէական Վարդապետութենէ Պէլլարմինոսի և այլոց, և արարեալ աշխարհաբառ լեզուաւ վասն փոքրիկ մանկանց՝ առ ի սերտողաբար առնուլ նոցա զայն ի բերան: Տպեալ յամի տեառն 1770, ի մայիսի 14, ի Վէնէտիկ, ի տպարանի Անտոնի Պօրթօլի: Հրամանաւ մեծաւորաց:

Թարգմանությունը հասնում է մինչև 32 էջը, որից հետո այլ հավելվածներ՝ մինչև 46 էջը, որ է վերջ:

Այլ տպ.— Քրիստոնէական... ի բերան: Տպագրեալ յամի տեառն 1776 և ի թուականութեան Հայոց տումարի՝ ՌՄԻԵ, ի Թրեւ-

---

1 *Մ. Քեշիշյան, «Ցուցակ հայ. ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», հտ. Ա, Վիեննա, 1964, էջ 378:*

2 *«Անունը սրբուած՝ բայց կը կարդացուի Դաւիթ» (Մ. Քեշիշյան):*

3 *«Նոյնպէս Դաւիթ անունը սրբուած» (Մ. Քեշիշյան):*

4 *Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատենագիտութիւն», հտ. Ա, էջ 333: Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 717:*

1 *Ա. Ղազիկյան, հտ. Ա, էջ 333—334: Գ. Զարբհանալյան, էջ 717: «Լիակատար ցուցակ գրոց Մխիթարեան տպարանին (1716—1934)», Վենետիկ, 1934, էջ 112: «Գրացուցակ Մխիթարեան տպարանին», Վենետիկ, 1965, էջ 73: «Ցուցակ գրոց Մխիթարեան տպարանի ի Տրիեստ և ի Վիեննա (1776—1912)», Վիեննա, 1912, էջ 31: «Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի ի Տրիեստ, ի Վիեննա և ի Պոլիս (Ֆիլիպէ) 1776—1936», Վիեննա, 1936, էջ 51:*

տէ, ի տպարանի Միաբանութեան Հարց Մխիթարեանց: Հրամանաւ և Արտօնութեամբ կայսերաթագաւորական հռովմէական կայսրութեան:

☐ *Այս գիրքը հետագայում բազմաթիվ անգամներ հրատարակվել է Տրիեստում, Վենետիկում (Ս. Ղազար) և Վիեննայում՝ նույն խորագրով և կամ բարեփոխված խորագրերով.*

1801 թ., Տրիեստ:
1807 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1818 թ., Վիեննա:
1831 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1838 թ., Վիեննա:
1839 թ., Վիեննա:
1840 թ., Վիեննա:
1850 թ., Վիեննա:
1873 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1882 թ., Վիեննա:
1885 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1892 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1895 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1899 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1902 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1904 թ., Վիեննա:
1909 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1913 թ., Վենետիկ (Ս. Ղազար):
1931 թ., Վենետիկ (Ս. Ղազար):

ԲԵԿԱՆ [ԲԵԿԱՆԵԱՆ] (Մարտինոս)
(Martinus Becanus)

Հոլանդացի հեղինակ, Հիսուսյան ընկերությունից, ծն. 1561 թ. Հիլվարենբեկում, մեռ. 1624 թ.: Մայնցի, Վյուրցբուրգի և Վիեննայի հիսուսյան ուսումնարաններում դասախոսել է իմաստասիրություն և աստվածաբանություն: Գրել է կրոնա-դավանական և պատմական բազմաթիվ երկեր, որոնցից երկուսը („Analogia Veteris et Novi Testamenti“ *և* „Summa theologiae“) *հայտնի են ԺԸ դ. հայ. թարգմանություններով: Թարգմանիչները հեղինակի անունը հայացրել են* Բեկանեան *կամ* Պեքանեան *(արևմտահայ) ձևով:*

* * *

1. Անալօճիա: Այսինքն՝ համեմատութիւն Հնոյ և Նորոյս Կտակի: Յորում նախ կացութիւնն Հնոյ Կտակին, յետոյ համակամութիւն, յարմարութիւն և միաբանութիւն ընդ Նորոյս Կտակի մեկնաբանի: Շարադրեցեալ նախ ի Մարտինոսէ Պեքանեան յաստուածաբան վարդապետէ, ի Յիսուսեան կարգէ, լեզուաւ լատինականաւ: Եւ անտի թարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 163:*

Ձեռագրում՝ խորագրին հաջորդում է գրչի հիշատակագրությունը. «Եւ ի վայելս Ստեփաննոս վարդապետի Տփխիսեցւոյ նորոգ ընդօրինակեցաւ ի Միրզայեան Յովհաննէ Վանանդեցւոյ, ի 1812 յապրիլի 6, ի Զմիւռնիա»:

Բովանդակություն.

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ (սկ. «Այնպէս տարբերի Հին Կտակն ի Նորոյս, որպէս տարբերի պատկերն Քրիստոսի ի յինքենէ Քրիստոսէ...»):

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ի ԹԱՐԳՄԱՆՉԷ:

ԱՆԱԼՕՃԻԱ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ ԿՏԱԿԻ: Գլ. Ա. Յաղագս գրուածոց և աւանդութեանց Հնոյ Կտակի:— Գլ. Բ. Յաղ. հաւատոյ և Հաւատամքին:— Գլ. Գ. Յաղ. յուսոյ, խոստման և աղօթից:— Գլ. Դ. Յաղ. սիրոյ և հրամանի սիրոյ:— Գլ. Ե. Յաղ. մովսիսական օրինաց:— Գլ. Զ. Յաղ. սինակոկային, այսինքն ժողովարանին Հնոյ Կտակին:— Գլ. Է. Յաղ. հասարակաց պաշտօնէիցն սինակոկային, որք էին Ղեւտականքն՝ քահանայքն և քահանայապետքն:— Գլ. Ը. Յաղ. պաշտօնէիցն սինակոկային, այսինքն յաղագս մարգարէիցն, որք էին յատուկ և մանաւանդ պաշտօնեայք:— Գլ. Թ. Յաղ. կրօնաւորացն սինակոկային, որք էին Նազովրականք և Ռեքաբիթեանք:— Գլ. Ժ. Յաղ. աղանդաւորացն, որք էին Փարիսեցիք, Սադուկեցիք և Եսսեանք:— Գլ. ԺԱ. Յաղ. դատաւորին հակաճառութեան Հնոյ Կտակին:— Գլ. ԺԲ. Յաղ. գործեացն աստուածային պաշտօնին:— Գլ. ԺԳ. Յաղ. մովսիսական պատարագաց:— Գլ. ԺԴ. Յաղ. սրբագնութեանցն մովսիսականաց:— Գլ. ԺԵ. Յաղ. օրինական պահեցողութեանց:— Գլ. ԺԶ. Յաղ. թագաւորաց Հնոյ Կտակի:— Գլ. ԺԷ. Յաղ. պատերազմի բանակաց և մաքրութեան նոյն բանակաց:— Գլ. ԺԸ. Յաղ. գողութեան և տոկոսի:— Գլ. ԺԹ. Յաղ. մարդասպանութեան և քաղաքացն ապաւինի:— Գլ. Ի. Յաղ. պսակի Հնոյ Կտակին:— Գլ. ԻԱ. Յաղ. պոլիգամեայ, որ է բազմակնութիւն:— Գլ. ԻԲ. Յաղ. ամուսնական նախանձաւորութեան:— Գլ. ԻԳ. Յաղ. ապահարզանի, այսինքն գրոյն կնաթողութեան: Գլ. ԻԴ. Յաղ. շնացողութեան և կուսապղծութեան:— Գլ. ԻԵ. Յաղ. ծառայից, աղախնեաց, վարձկա-

նաց, պանդխտաց և աղքատաց։— Գլ. ԻՁ. Յղ. վերանորոգման։

Տես նաև նույն մատ. ձեռ. №№ 4, 13, 14, 15, 16, 17, 86, 87, 88, 89, 162, 2216, 2854, 2967, 3092, 5366, 6619։ Տես դարձյալ Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 117, № 330, № 809, № 839, № 851, № 986, № 1100, № 1164, Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 13, № 917, № 1085. Ղալաթիայի Հայոց Ազգ. Մատ. ձեռ. № 65, № 89, № 98. Սեբաստիայի Ս. Նշանի վանքի ձեռ. № 187. Վիեննայի KKHB Cod. Arm. 2։

Որոշ օրինակների վերնագրերում կա նաև հայ. թարգմանության թվականը՝ «...ի Պետրոս վարդապետէ Թիֆլիզեցւոյ, ի Վենետիկ, յամի տեառն 1714, և Հայոց՝ 1163» *(Վիեննայի ձեռ. № 113) կամ* «...ի թվին փրկչին 1720 յունիսի 20» *(Վիեննայի ձեռ. № 917)։*

2. Համառօտութիւն ուսումնական աստուածաբանութեան կամ ճշմարիտ պատասխանատրութիւն ուղղափառաց և մոլար պատասխանի չարափառաց: Առ հանապազորդութեան հարցումն ի խնդիրս հաւատոյ թէ՝ Ո՞ւր է գրեալ: Հաւաքեալ յաստուածաբանէ յումեմնէ ի միաբանութենէ Յիսուսեանց: Յաւելեալ յայսմ յետին տպագրութեան զվինաբանութիւն նախաշաւիղ՝ Յաղագս անտարբերութեան կրօնի: Եւ թարգմանեալ ի Լատինացւոց լեզուէ ի Հայկազեան բարբառ յաշակերտէ յումեմնէ Մխիթարայ մեծի աբբայի ի Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, յամի տեառն 1754, ի յունվարի 2: *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 602, էջ 2ա—162բ։*

Սկզբում ունի նախաբան «Առ ընթերցողս» *(սկ.* «Դիտում գրոյս ոչ է գրգռել զմարդ ընդ չարափառս ժամանակիս»)*: Բաղկացած է Ա—ԽԵ գլուխներից։ Ձեռագրի վերջում գրիչը, տեր Հովհաննես Անկյուրացին, որը 1782 թ. այս գիրքն ընդօրինակել է Վենետիկում (Ս. Ղազարի վանքում?), ասում է, թե «[Գրոցս] հեղինակ հասարակաց հաւանութեամբ համարի հայրն Մարտինոս Բեկանեան ի Յիսուսեանց կարգէ մեծանուն աստուածաբան» (էջ 311ա)։*

ԲԵԿՏՈՐ [ԲԵԿՏՈՐԻՈՍ] ՀՌՈՄԱՑԵՑԻ

Տես՝ ԲԻԿՏՈՐ ՀՌՈՄԱՅԵՑԻ։

ԲԵԿՏՈՐ ԵԳԻՊՏԱՑԻ ԵՒ ԸՆԿ.

Զենոբ Գլակի մոտ պահված է Բեկտորի, Անաստասի, Աքյուղասի և Մարկեղիոսի անունով մի թուղթ՝ առ Գրիգոր Լուսավորիչ. տես՝ «Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի», Վենետիկ, 1889, էջ 16—18։

ԲԵՆԴԻԷՆՈՍ [ԲԵՆԴԻՄԻԱՆՈՍ]

Տես՝ ՎԵՆԴԻԱՆՈՍ։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՆՈՒՐՍԻԱՑԻ*

(Benedictus Nursinus)

Անվանվում է նաև Բեն. աբբայ *և* Բեն. Եգնաւոր: *Արևմտյան վանականության բարենորոգիչն ու նահապետը, ծն. մոտ. 480 թ. Նուրսիայում (այժմ՝ Նորչիա, Իտալիայում)։ Նախ նվիրվել է միայնակեցության, հետզհետե հիմնել է բազմաթիվ վանքեր, որոնց թվում, 529 թ., Մոնտե-Կասսինոյի աբբայարանը, որ օրրանն եղավ Բենեդիկտյան ուխտի։ Մեռ. մոտ. 550 թ.՝ նույն վայրում։ Նրա մշակած* «Սահման վանաց»*-ը* («Regula monasteriorum») *կարգավորում էր վանական կյանքի պայմանները, ընդ որում վանականների համար հոգևոր կրթության և ձեռական աշխատանքների հետ միասին սահմանվում էին տևական ընթերցանություն ու սերտողություն և նախադրյալներ էին ստեղծվում մշակութային ու գիտական գործունեության, որով հետագայում այնքան նշանավոր դարձավ Բենեդիկտյանների կարգը։ Բեն.-ի վանական սահմանադրությունը ժամանակի ընթացքում լայն ծավալում ու-*

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* Ph, Schmitz, „Histoire de l'Ordre de S. Benoît", Innsbruck, 1942. B. Altaner u. A. Stuiber, „Patrologie", Freiburg i. Br., 1966, S. 481—482. *Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 78—81։*

նեցավ արևմտյան երկրներում՝ նրանով ղեկավարվող կազմակերպությունների թվի անհամեմատ աճմամբ և դրանով էլ ենթարկվեց խմբագրական վերափոխությունների։ Բեն.ի «Սահման»-ը 1179 թ. լատիներենից հայերենի է թարգմանվել Ներսես Լամբրոնացու ձեռքով՝ Անտիոքի մոտ Ս. Պողոսի բենեդիկտյան լատինական վանքում, տեղի միաբաններից մեկի օգնությամբ։ Բեն.ի այս կանոնագրության հետ պետք չէ շփոթել Վրնջերի հեղինակությունը հանդիսացող բենեդիկտյան այն սահմանագրությունը, որի թարգմանիչը նույնպես Լամբրոնացին է (տես՝ ԲԵՐԵՆԳԱՐ ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ)։

Բանասիրական գրականության մեջ Բեն. Նուրսիացու կենսագրության հիմնական աղբյուրը Գրիգոր Մեծի Տրամախոսության («Բանք պատմողականք») Բ գիրքն է, որը նույնպես թարգմանված է հայերենի՝ Լամբրոնացու կողմից, բայց՝ ոչ լատիներենից, այլ հունարենից։ Հայ մատենագրության մեջ կան Բեն.ի վարքի ուրիշ՝ ավելի համառոտ խմբագրություններ ևս, որոնք նույն աղբյուրից են առաջացել տարբեր ուղիներով (հայ. թարգմանությունից, հուն. թարգմանական բնագրից, լատ. բնագրից)։

* * *

Ա.—ՎԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սրբոյ հաւրն Բենեդիկտոսի Սահման առաջին ընթացից կրաւնաւորաց. «Ունկն դիք, որդեակք, խրատու հաւր ձեր, խոնարհեցուցէք զլսելիս[1] սրտից ձերոց՝ զհրամանս հաւր ձեր և առաջնորդի բարւոյ յաւժարութեամբ ընդունել և դառնալ ի հնազանդութիւնն, յորմէ անկաւ անհնազանդն։ Քեզ ասեմ, որ ախորժելով լսես զբանս...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4947, էջ 114ա—163ա։*

Ընդարձակ նախաբանից հետո՝ բովանդակություն.

Թէ յո՞րքանս բաժանեալ զանազանի կրաւնաւորութեանս կարգ։

Ո՞րպէս արժան է լինել առաջնորդին։— Երկրորդ վասն նորին։ Եր[ր]որդ։— Չոր[ր]որդ։

Վասն կոչելո[յ] զեղբարսն ի խորհուրդ։

Զի՞նչ է բարւոք կարգաւորութիւն։

Յաղագս հնազանդութեան։

Յաղագս լռութեան։

Վասն խոնարհութեան։

Կարգք ժամուց աղաւթից գիշերոյն։

Թէ քանի՛ սաղմոս պարտ է ասել ի կէսգիշեր։

Ի Զատկէն մինչև յառաջին աւրն նո[յ]եմբերի։

Կիւրակէի կէսգիշերոյն սահման։

Սաղմոսք առաւաւտին աղաւթիցն։

Թէ ո՛րպէս լինի կարգն ի լոկ աւուրսն յորս ոչ հ[անդիսպ]ի տաւն։

Թէ ո՛րպէս ի տաւնսն լինի աղաւթիցն կարգ։

Թէ յո՛ր ժամանակս պարտ է ասել ալէլուիայ։

Թէ ո՛ր են յաւուրն ժամք հարկաւոր աղաւթիցն։

Թէ քանի՛ սաղմոսս պարտ է ասել յայսոսիկ [աւուրս?]։

Ո՞յք են սաղմոսք աւուրցն ժամուցն։

Երեկոյին ժամուն սաղմոսք այս են։

Ո՞յք սաղմոսք կէսգիշերին զոր ասեմք։

Թ[է] ո՛րպէս ասի սաղմոս ի քաղաքաց եկեղեցիս։

Թէ ո՛րպէս արժան է սաղմոսել։

Թէ զի՛արդ պարտիմք կալ յաղաւթս։

Թէ ո՛րպէս կարգեն զվերակացուս վանացն։

Թէ ո՛րպէս ննջեն կրաւնաւորքն։

Թէ ո՛րպէս պարտ է հաւրն որոշել զյանցաւորն։

Զանազանութիւն պատժոցն։

Թէ ո՛ր է պատիժ ծանր յանցաւորին։

Թէ զի՛նչ լինի այնոցիկ, որք առանց հրամանի հաւրն խաւսին կամ հաղորդին ընդ այս յանցաւորս։

Թէ զի՞արդ առաջնորդին պարտ է ունել զկամս և զգուշ ի վերայ այսպիսի յանցաւորիս։

Թէ զի՛նչ արասցեն [ն]ոցայ, որ յետ խրատուն անզեղջ մնան։

Թէ պա՞րտ է զգնացեալսն ի վանիցն ի դառնալն ընդունել։

Թէ զմանգունսն ո՛րպէս պարտ է սնուցանել։

Ո՛րպէս պարտ է նմա լինել, որ բրուտսան է ի վերայ գեւղիցն կացոցնոյն և մշակացն։

Վասն գործաւորաց և անաւթից եկեղեցոյն։

Զի ո՛չ ունի իշխանութիւն կրաւնաւորն ստանալ ինչ իւր առանձինն։

Թէ ուստի՛ արժան է եղբարցն առնուլ զհարկաւոր պէտսն։

Վասն այնոցիկ որ պաշտեն զսեղանն։

Վասն հիւանդացն։

Վասն ծերոցն և տղա[յ]ոցն։

Թէ քանի՛ ապուր պարտ է ունել եղբարցն։

Չափ և սահման ըմպելոյն։

Թէ յո՛ր ժամ աւուրն պարտ է ճաշակել եղբարցն։

Զի ո՛չ է արժան խաւսել յետ խաղաղական աղաւթիցն։

Վասն այնոցիկ, որ յետոյ գան յաղաւթսն։

Նոցա որք նզովեալ են, թէ ո՛րպէս պարտ է դառնալ և ողորմութեան արժանաւորել։

---

1 *Ձեռագրում՝* զլսելիս:

Վասն նոցայ որք սխալեն յեկեղեցոյն պաշտաւնն։

Վասն նոցա որք յոր և իցէ գործ սխալեն։

Վասն ւանտեալ ժամուց աղաւթիցն, և թէ ո՛րպէս պարտ է զնոսին սահմանել։

Վասն հասարակաց աշխատութեան և գործոյն։

Թէ ո՛րպէս արժան է պահել զսուրբ քառասնորդսն։

Վասն եղբարցն որ լինին հեռի յեկեղեցոյն։

Յաղագս՝ որք մաւտաւոր ճանապարհ գնան։

Վասն տեղեացն յոր սովորութիւն է եղբարցն առանձին աղաւթել։

Վասն հիւրոցն որ գան ի վանսն։

Զի ո՛չ է պարտ աբեղա[յ]ի առնուլ թուղթ յընտանեացն կամ այլ ինչ զոր բերեն։

Վասն զգեստու (sic) անձին և աւգոյ ոտից կրաւնաւոր եղբարցն։

Վասն սեղանոյ հաւրն։

Վասն նոցա որք արուեստս գիտեն ի վ[երա]յ եղբարցն։

Թէ ո՛րպէս պարտ է ընդունել զեկեալսն մտանել նորոգ ի վարսս (sic) կրաւնաւորութեան։

Թէ ո՛րպէս ընդունին ի վանսն զմեծատանց զաւակսն և զաղքատացն։

Վասն երիցանց որ գան յաշխարհէ՝ լինել կրաւնաւորս։

Թէ զեկամուտ աբեղայսն ո՛րպէ[ս] պարտ է ընդունել։

Վասն երիցանց եկեղեցւոյն, որ են ի վանիցն, զոր ձեռնադրել տան։

Թէ ո՛րպէս կացցեն հասարակաց ամենայն եղբարքն առ միմեանս։

Ընտրութիւն հաւրն։

Թէ ո՛րպէս կարգեսցեն զքրոմատրն (sic), որ [է] էկաւնամ ի վերայ սառացուածոց եկեղեցոյն որ արտաքոյ։

Վասն դռնապանի վանիցն։

Վասն որոց հանդիպի գնալ յեղբարցն հեռի ճանապարհ։

Յաղագս եղբաւր որ ոչ կարէ զհրամա[յ]եալն քառնալ։

Թէ ո՛չ է պարտ իրերաց վրէժխնդիր լինել եղբարցն ընդդէմ առաջնորդին հրամանի։

Զի ո՛չ ունին իշխանութիւն եղբարքն զմիմեանս արհամարհել կամ այպանել։

Եթէ պարտ է ամենայն եկեղեցոյն միմեանց հնազանդս լինել։

Եթէ զսուրբ և զճշմարիտ սէրն ո՛րպէս պահեսցեն եղբարքն առ միմեանս։

Զի ո՛չ է ամենայն սահման կրաւնաւորաց գրեալ ի գիրս յայս։

Սույն ձեռագիրը ԺԳ դ. ընդօրինակություն է։

Տես նաև նույն մատ. ձեռ. № 2236 (էջ 196ա—198ա, սկ. «Ունկն դիք որդեակք», *հատված)։ Տես դարձյալ Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 305 (էջ 192բ—208ա). Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 307 (էջ 2ա—18բ). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. №№ 300 և 1207։*

Սույն բնագրի թարգմանության մասին 1179 թ. Լամբրոնացին գրում է. «...թարգմանեցի զնորին Բենեդիքտոսի կարգ և զսրբենս կրաւնաւորաց նոյնժամայն ի լատին լեզուէն ի փռանգ վանս սուրբ Պաւղոսի որ ի քաղաքն Անտիոք, ի ձեռն հաւասակկից կրաւնաւորի միոյ ի նոցանէ Կիլամ անուն»[1]*։*

☐ *Տպագրությամբ հայտնի է Բեն.ի սահմանադրության հայ. մի թարգմանություն, որը Մխիթարյանների կողմից է կատարված, ըստ երևույթին՝ ԺԹ դարում.* «Սրբոյ հօրն Բենեդիկտոսի Կանոնք, զոր թարգմանեալ է աշակերտաց մեծի հօրն Մխիթարայ», *Վիեննա, 1842։*

Այս հրատարակության առաջաբանում, Լամբրոնացու հին թարգմանության հիշատակությունից հետո, ասվում է, որ «էր և այլ թարգմանութիւն յութևտասներորդ դարու անդ, որ... չէր օրինօք թարգմանութիւնն և բնաւ իսկ դժուարին առ իմանալ միտք բանիցն էին» (էջ Զ)։ ԺԸ դարի այդ թարգմանությունը մեզ հայտնի չէ։

Բ.—ՎԱՐՔ

1. Սրբազան հայրապետին Հռոմայ Գրիգորի առ Պետրոս նախասարկաւագ՝ պատասխանի վասն քաղաքավարութեան սուրբ հաւրն Բենեդիքտոսի. «Այր ոմն էր շնորհօքն Աստուծոյ զարդարեալ ի վարս պարկեշտս, անուն նորա Բենեդիքտոս (sic) ի տղայութենէ սրտին մաքրութեամբ պայծառացեալ և զմարմինն ի գեղեցկութիւն ամբծութեան պահեալ...»: *Տես՝ ԳՐԻԳՈՐ ՊԱՊ [Ա], «Բանք պատմողականք», § 2։*

2. Վարք սուրբ և մեծ հօրն Բենեդիքտոսի նգնաւորի. «Սուրբ հայրն Բենեդիքտոս էր ի Կամբանիոյ երկրէն, յոյժ տեղեակ և

[1] Այս հիշատակարանի մասին մանրամասներն տես ԲԵՐԵՆԴԱՐ և ԳՐԻԳՈՐ ՊԱՊ [Ա] անունների տակ։ Հմմտ. նաև՝ Գ. Զարբհանալյան, «Մատենադարան հայկ. թարգմանութեանց նախնեաց», էջ 360։

վարժ աստուածային կտակարանաց...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, մասն Ա, էջ 128։*

Այլ տպ.— Վարք սուրբ հօրն Բենեդիքտոսի. «Սուրբ հայրն Բենեդիքտոս...» *(հրատ.* G. Bayan), *Patrologia Orientalis*, Paris, t. XXI, 1927, p. 188–190.

Բնագրի ֆրնս. թարգմանությունը՝ «Vie du saint père Benoît" *տեսնել անդ, նույն էջերում, հրատարակչի կողմից։*

☐ *Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433՝* «Վարք սուրբ հաւրն Բենեդիքտոսի» *(էջ 266ա—266բ)։*

3. Վարք և յիշատակ սուրբ հօրն Բենետիքտոսի. «Պարկեշտ և հրեշտակակրօն բարեհամբաւ հայրն մեր սուրբն Բենետիքտոս էր ի մեծ քաղաքէն Հռոմայ, զաւակ բարեպաշտ և երկիւղած ծնողաց...», *տես՝ «Ճառ սրբոց վկայից...» («Յայսմաւուրք»), Կ. Պոլիս, 1706, էջ 588—591։*

Այլ տպ.— Վարք և յիշատակ *նն.* «Պարկեշտ և հրեշտակակրօն...», *տես՝ «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706 (—1708), էջ 645—647։*

Այլ տպ.— Վարք և յիշատակ *նն.* «Պարկեշտ և հրեշտակակրօն...», *տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 447—449։*

Այլ տպ.— Վարք և յիշատակ *նն.* «Պարկեշտ և հրեշտակակրօն...», *տես հետևյալ հրատ. մեջ.* „Statutum monasticum Benedictinum a magistro Berenger concinnatum", Venetiis, 1880, p. 113–118. *(Հայ. խորագրով՝* «Սահման Բենեդիկտեան վանաց...», *Վենետիկ, 1880, էջ 113—118)։*

Բնագրի լատ. թարգմանությունը՝ «Vita et memoria Sancti Patris nostri Benedicti. Ex Martyrologio armeniaco, die XXI Martii", ibidem, p. 119–123. *(Անդ, էջ 119—123)։*

4. Սրբոյն Բենեդիքդոսի ճգնաւորին. «Էր ոմն վարուք զովելի և անուն նորա Բենեդիքդոս, որ թարգմանի օրհնեալ: Սա ի մանկութենէ իւրմէ, ունելով զմիտս ծերունւոյ, ոչ իմիք հեշտութեան ետ զմիտս իւր...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2180, էջ 47ա—48բ։*

Թարգմանված է լատիներենից։

5. Սուրբ հօրն Բենե[դի]քտոսի. «Սուրբս հռոմայեցի էր և բնակէր միայնութեամբ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3658, էջ 160բ (վերջից թերի)։*

⊠ *Հավանաբար Բեն. Նուրսիացուն է պատկանում հետևյալ ծիսական բնագիրը.*

— Յաղագս զգեցման ճգովեցացից ըստ կանոնօք ամէներանեալ հօրն Պէնէտիքթոսի. «Աւուր միով յառաջ քան զգեցուցանել զճգովիցեացն...», *Լվով-Ստանիսլավովի հայ. ձեռ. № 42, էջ 35—42(?)։*

Ձեռագիրը ձեռնադրության Մաշտոց է, գրված՝ Լվովում, 1724 թ.։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ներս.— *«Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի», Վիեննա, 1956, էջ 283—289։*

Նույն հատվածը տես նաև Հանդէս Ամսօրեայ-ում, 1954, էջ 211—215։

Զարբհանալյան Գար.— *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 359—361 և 730—731։*

Ոսկյան Համ.— *«Վասպուրական-Վանի վանքերը», մասն Գ, Վիեննա, 1947, էջ 1021—1022։*

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՊ [ԺԳ]

(Benedictus XIII papa)

Հռոմի պապ (1724—1730 թթ.), որի անունով հայտնի է հայ-դոմինիկյան ժամագրքի կարգավորմանը վերաբերող հետևյալ հրատարակությունը.

— Ժամք կարգի նորայէս շնորհեցեալ ի սրբազանէ տեառնէ մերմէ Պէնէտիքտոսէ ԺԳ, ենթ աւուր ԺԸ և Ի յունիսի 1727, զանազան սրբոց և սրբուհեաց:

Մեր տեղեկությունները մատենագիտական աղբյուրներից են[1]*։ 56 էջերից բաղկա-*

[1] Ա. Ղազիկյան, «Հայկ. նոր մատենագիտութիւն», հտ. Ա, էջ 859։ Գ. Զարբհանալյան, «Հայկ. մատենագիտութիւն», էջ 237։

ցած այս գրքույկը տպագրված է համարվում Վենետիկում, Անտոն Բորտոլիի տպարանում։ Վերջում ունի հետևյալ հիշատակարանը, որը տալիս է և տպագրության տարեթիվը (1730 թ.). «Լոյս ածող սորա Ֆր. Ալէքսանդր Ալէքսանդրեցի, ի գիւղաքաղաքին Ճահուկոյ, և որդի Շահբայնեաց վանից։ Ամի տեառն ՌՉԼ»։ Բովանդակությունը տես Ուդենրիյնի մոտ[1]*։*

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՊ [ԺԴ]
(Benedictus XIV papa)

Հռոմի պապ (1740—1758 թթ.), որից հայ. թարգմանությամբ մեզ հայտնի են հետևյալ երկերը։

* * *

1. Սրբազան տեառն մերոյ տեառն Բենեդիկտոսի պապին Չորեքտասաներորդի Թուղթ հանրական առ միսիոնարս կարգեալս ընդ Արևելս։ Յաղագս պահպանութեան ծիսից եկեղեցւոյն Յունաց և այլոց արևելեայց։

Այս հրատարակությունը մեզ հայտնի է մատենագիտական աղբյուրներից[2]*, որոնց համաձայն լույս է տեսել Հռոմում, 1755 թ., և ունի 104 էջ։*

Ժամանակի հայ. գրագրություններում այս գիրքն անվանվում է «Էնչիքլիքայ» *կամ* «Լեթթերայ էնչիքլիքայ» (Lettera enciclica), *այսինքն՝* Թուղթ ընդհանրական։ *Նրա հայ. թարգմանությունը պապի հրամանով կատարել է Մխիթարյան միաբան Վրթանես Ասկերյանը՝ նույն 1755 թ.։ Այս գրքի մասին Ստեփանոս Մելքոնյան աբբահայրը Վենետիկից միաբանության անդամ Միքայել Մուրատյանին գրած նամակում ասում է.*

«Այս փոքրիկ գիրքս է շարադրեալ ի նոյն սրբազան հայրապետէն, ըստ կերպի Կաթուղիկեայց Գրոց առ միսիոնարս որք գնան յԱրևելս, և կամ միսսիոնարութիւն առնեն ի

1 M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores", § 113.

2 *Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, էջ 336։ Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 111։*

վերայ այլոց ազգաց. յորում խօսի Վճռովք, և այլ փաստիւք պարտաւորելոյ զամենեսին, զի իւրաքանչիւր ազգ ի ընդունեալ և ի թոյլ տուեալ ծիսի կացցէ և մնասցէ, և զի միսսիոնարք ոչ լիցին կարողք փոփոխել տալ զծէսս ուղղափառ լինողաց, և զի եկեղեցին սուրբ կամի, զի իւրաքանչիւր ազգ ուղղափառք լիցին, և ոչ թէ լաթինք» (Վենետիկ, 23 օգոստ. 1755)[1]*։*

2. Սրբազան տեառն մերոյ Բենեդիկտոսի պապի ԺԴ Սահմանադրութիւն, որով ընկերութիւնք ոմանք՝ Ֆռամազոնաց կոչեալք՝ կրկին դատապարտին և արգելանին, կոչմամբ ևս օգնութեան բազկի աշխարհային իշխանաց և պետաց։ Վճռով սրբոյ ժողովոյն Տարածման Հաւատոյ, ի հայ տպեալ թարգմանութեամբ Գրիգորի Բաղինեան անդպիր քահանայի Ախցխացւոյ։ Ի Հռոմ, յամի տեառն ՌՉԴԴ, ի տպարանի նոյն սրբոյ ժողովոյն։

Մեզ հայտնի է մատենագիտական աղբյուրներից[2]*, որոնց համաձայն բաղկացած է 23 էջերից։ Գիրքը լատիներեն մակագրված է* „Benedicti Papae XIV. Constitutio Liberorum Muratorum Damnatoria".

3. Սահմանադրութիւն Բենեդիկտոս[ի] եպիսկոպոս[ի]. «Նախ վասն խորհրդոյ առաքելութեան, զոր սուրբ հարք կոչեցին երկրորդ տախտակ նաւակոծութեան յետ շնորհացն կորուսելոց, ես բէպէտ ապիկար, այլ սակայն ի վերին տնտեսութեան կոչեցեալ ի վերակացութիւն տէրունական հօտի պարաւանդիմ ունիլ զամենայն զհոգ և զհո-

1 *Ղ. Տայան, «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Սուրբ Ղազար 1707—1773», Վենետիկ, 1930, էջ 165 (ՃՀԸ)։*

Այս հրատարակության մեջ նույն գրքի և ընդհանրապես Բենեդիկտոս ԺԴ-ի մասին տես նաև հետևյալ էջերը. 106—109 (ՃԺԵ—ՃԺԷ), 111 (ՃԻԱ), 115 (ՃԻԴ), 122—123 (ՃԼԲ), 125—126 (ՃԼԶ), 136—137 (ՃԽԸ), 137 (ՃԽԹ), 168 (ՃՁԲ), 170—171 (ՃՁԵ), 171—172 (ՃՁՁ), 173—174 (ՃՁԹ—ՃՂ), 175—176 (ՃՂԲ), 184 (ՄԲ), 301 (ՀԹ), 304 (ՋԹ), 307 (ՃԴ), 320 (ՃԿԲ)։

2 *Ա. Ղազիկյան, էջ 336։ Գ. Զարբհանալյան, էջ 111։*

վուական խնամ...», *Երևանի, Պետ. Մատ. ձեռ. № 6494, էջ 354ա—368ա։*

Գրությունը սահմանված է խոստովանահայրերի պատասխանատվությունը ճշտելու («Յաղագս խոստովանահարց, որք հրապուրեն առ վաւաշոտութիւն»):

4. Բենեդիկտոս պապ Չորեքտասաներորդ առ ի յիշատակ յաւիտենական իրացն. «Քաջ գիտելով, թէ պարտականութիւն առաքելական պաշտօնիս մերոյ գլխաւորապէս կայանայ ի հոգաբարձութեան բոլորովին մաքուր և ամբիծ մատակարարութեան սրբազան իրաց ոչ միայն անձանձիր յորդորանօք և արդար իրաւացի խստութեամբ օրինաց ուր իրն պահանջէ...», *անդ, էջ 368ա—369բ։*

Գրությունը նվիրված է խոստովանանքի հարցերին՝ ընդհանրապես։

5. Կարգ ի սրբազան տեառնէ մերմէ Բենեդիքտոսէ պապէն ԺԴ.երորդէ հաւանեալ, զոր պահելոց են ըստ պարապոյ ժամանակի (որպէս ստորև ի կանոնս նշանակի) ի տալն զօրհնութիւն հոգեվարաց, այնք որք առեալ զիշխանութիւն առաքելական յաթոռոյ. «Զօրհնութիւն հոգեվարաց քանզի սովորութիւն է տալ յետ խորհրդոյ ապաշխարութեան...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 781, մասն Ը, էջ 1ա—2բ։*

Նույնն է՝

— Կանոն և եղանակ հաստատեալ և սահմանեալ ի բարեյիշատակ պապէն Բենեդիքտոսէ Չորեքտասաներորդէ ևն, *տես՝* «*Կրթութիւն աղօթից... շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ*», *Վենետիկ, 1772, հավելվածում՝ էջ 4—8։*

Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 958՝ «Կանոն և եղանակ հաստատեալ...» *(էջ 15բ), № 1192՝* «Կանոն համահաստատեալ...» *(էջ 155ա), № 1237՝* «Կարգ ի սրբազան տեառնէ մերմէ...» *(էջ 155ա?). Կլուժի* Muzeul Ardelean ms. № 1056: «Կանոն լիակատար ներողութեան համահաստատեալ...» *(սկ.* «Օգնութիւն է մեր յանուն Տեառն...»):

□ *Ջմմառի Մատենադարանի № 416 ձեռագրում կան երկու վավերագրեր (էջ 90ա և 95ա), որոնցից առաջինն ուղղված է Բենեդիկտոս ԺԴ-ի կողմից* «առ եպիսկոպոսունս և ուղղադաւան ժողովուրդ ազգին Հայոց»՝ *Աբրահամ Արծիվյանի կաթողիկոս հաստատման առթիվ (Հռոմ, 25 ապր. 1743 թ.). իսկ երկրորդը կոնդակ է, որով Արծիվյանն ստանում է հռոմեական ազնվականի տիտղոս (Հռոմ, 26 հնվ. 1743 թ.)։*

Երևանի Պետ. Մատ. № 8369 ձեռագրում (էջ 1ա—1բ), որը Թովմաս Քարմյանի Աստվածաբանությունն է, Բենեդիկտոս ԺԴ պապն ունի երկու նամակներ՝ ուղղված նույն հեղինակին (Հռոմ, 25 սեպտ. 1751 թ. և 24 սեպտ. 1755 թ.)։

ԲԵՆԵԴԻՄՈՍ ԱԹԵՆԱՑԻ ՎԿԱՅ

Տես՝ ՀԵՐԱԿԼԻՈՍ ԱԹԵՆԱՑԻ ԵՎ ԸՆԿ.։

ԲԵՆԵՒԵՆՏԱՑԻ

Տես՝ ԳԵՆԱՐԻՈՍ ԲԵՆԵՎԵՆՏԱՑԻ։

ԲԵՆԻԱՄԻՆ ՊԱՐՍԻԿ ՎԿԱՅ

Տես՝ ԱԲԴԱ ԵՊՍ. ՇՈՇԻ։

ԲԵՆԻԱՄԻՆԻ (Կտակ)

Տես՝ ԿՏԱԿՔ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՆԱՀԱՊԵՏԱՑ։

ԲԵՆԻԿ

Տես՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԵՆԻԿ ՎԱՆԱՆԴԵՑԻ։
ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ։

ԲԵՋԱՐԱՑ ՄԻՆԱՍ

Տես՝ ՄԻՆԱՍ ԲԵՋԱՐԱՑ։

ԲԵՌՆԱՏՈՎԻԿԵՆՑ (Ստեփանոս)

Տես՝ ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, թարգմանիչ Արիստոտելի «Բնազանցութեան», «Հայելի վարուց»-ի ևն։

ԲԵՌՆԱՏՈՎԻՉ (Զաքարիա)
(Zacharyasz Bernatowicz)

Լեհահայ հասարակական և մշակութային գործիչ, ԺԷ դարի երկրորդ կեսում։ Որդի

Լվովի ավագերեց Գասպարի։ Ծն. ԺԶ դարի վերջին քառորդում։ 1612 թ. քահանա է ձեռնադրվել Մեսրոպ եպս. Կաֆայեցու կողմից[1] *և կրթությունը կատարելագործել է հավանաբար Իտալիայում*[2]*։ Օտար աղբյուրներում հիշատակվում է* Զաքարիա Բեռնատովիչ *անունով, իսկ հայկ. աղբյուրներում՝* Տէր Զաքարիա, Զաքարիա քահանա, Զաքարիա աւագերէց։

Լեհաստանի հայ գաղութի բռնի կաթոլիկացման շրջանում եղել է դիմադրական պայքարի պարագլուխներից մեկը, որի թեկնածությունը Լվովի հայերի կողմից հակադրվում էր Նիկոլ Թորոսովիչի ընտրությանը[3]*։ Որպես մասնակից Լվովում 1630 թ. լեհերեն լեզվով գաղտնի տպագրված հակամիութենական մի պարսավագրի, որը կրում էր* "Pokazanie prawdziwe y krótkie brzydkiego y smierdzącego błądu kościoła Rzymskiego" *(«Ճշմարիտ և հակիրճ ցուցմունք Հռոմեական եկեղեցու նողկալի և գարշահոտ սխալանքի մասին») խորագիրը, նա հակառակորդների և տեղական իշխանությունների կողմից երկար ժամանակ ենթարկվել է խիստ հալածանքների։ Այնուամենայնիվ 1633 թ., երբ Մովսես Տաթևացի կաթողիկոսի նվիրակը Հռոմ էր գնացել լեհահայերի դժբախտ դրության մասին Ուրբանոս Ը պապին բողոք ներկայացնելու*[4]*, Զաքարիան ևս Լվովի հայերի կողմից այնտեղ էր ուղարկվել՝ Թորոսովիչի հալածողական գործունեության դատապարտման համար աշխատելու։*

Զաք. Բեռն.-ի գիտական հետաքրքրությունների մասին վկայում են Երևանի Պետ. Մատ. երկու գրչագիր հատորներ։

№ 1916 ձեռագիրը, որն իմաստասիրական և քերականական նյութերի ժողովածու է, նրա ձեռքով է ընդօրինակված 1633 թ. Լվովում։ Այդ ձեռագրում նա զետեղել է նաև քառահատոր մի աշխատությունից թարգմանաբար հանված հինգ անջատ գրվածքներ, որոնց մեջ ամփոփված են նշանավոր մարդկանց արժեքավոր խոսքեր, պատմական այլևայլ տեղեկություններ ևն։ Դրանք են.

1. «[Առաջին հատոր] Բանք իմաստասիրացն, պիտանի ամենայն մարդոյ» *(սկ.* «Պղատոնս ասէ. Որք մեծամեծաց առաջի կան...», *էջ 378բ—389ա։*

2. «Բանք իմաստասիրաց, ասացեալ կարճառօտ ի յաւգուտ ուսումնասիրաց» *(սկ.* «Սոկրատէս: Էր ծնեալ յԱթէնս...»), *էջ 389ա—405ա։*

3. «Ի յերկրորդ հատորի: Բանք եղեալ են կայսերաց, թագաւորաց, իշխանաց, զաւրավարաց և այլ իշխեցողաց» *(սկ.* «Ոփիոս կայսր Հռովմայ: Երբեմն անյայտ կամէր ի վերայ ծովու նաւել...»), *էջ 405ա—414բ։*

4. «Երրորդ հատոր: Կարճառօտ բանից՝ Լեակեդոմնացոց» *(սկ.* «Լեակեդոմնացիք: Որքան Յունաց թագաւորութիւն կայր...»), *էջ 414բ—419բ։*

5. «Չորրորդ հատոր: Կարճառօտ գրեալ բանք, որ եղեալ են ի սմա: Կնոջ ազգի իմաստուն ասացեալ բանքն» *(սկ.* «Ողոմպիա, մայր Աղեքսանդրու թագաւորի Մակեդոնացոյն...»), *էջ 419բ—421բ։*

Վերջում՝ թարգմանության հիշատակարանը. «Թարգմանեցաւ այս՝ Իմաստասիրաց ասացեալ կարճառաւտ բանքս ի հայ բարբառ, ի ձեռն Զաքարիա Լովայ աւագիրիցուն, թվին ՌՁԲ, յուլիս ամսոյ ԻԲ, ի հալածական ժամանակս մեր որ վասն ուղղափառ հաւատոյ: Եւ զաւրինակողքս խնդրեմ, զի զայս սակաւ զյիշատակարանս գրէք, և զմեզ՝ մե-

---

[1] *Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 169։*

Մեսրոպ Կաֆայեցին մեռ. 1624 թ., տես՝ Ղ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 110։

[2] *Տե՛ս* „Украинско-армянские связи в XVII веке" (сборник документов), Киев, 1969, стр. 51—55. *Այստեղ ասվում է, որ նա լավածանոթ էր իտալացիների լեզվին, սովորույթներին ևն։*

[3] *Այս մասին Գ. Պետրովիչը հետևյալ վավերագրերն է նշում Վատիկանի արխիվներից.* Archivium Sacrae Congregationis de Propaganda Fide, Scritture Referite nelle Congregazioni Generali, vol. 73, fol. 38; vol. 293, fol. 183 seq *Իսկ Գ. Պինգիրյանը մատնանշում է Լվովի արխիվները.* Центральный Гос. Исторический архив Украинской ССР во Львове, фонд 9, оп. 1, т. 382, лист. 270—271.

[4] *Ն. Ակինյան, «Մովսէս Գ. Տաթևացի Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը», Վիեննա, 1936, էջ 281—283։*

ղաւք տառապեալս [ի] սրբափայլ յաղաւթս ձեր մի՛ մոռանայք։ Նոյնպէս և դուք առաջի Քս.ի յիշեալ լիջիք» (էջ 421բ)։ Թարգմանությունն, ըստ երևույթին, լատիներենից է կատարված։

№ 778 ձեռագիրը, որի պարունակությունն է Կանոնագիրք և այլ նյութեր, ընդօրինակված է 1635 թ. Լվովում, Ղազարի որդի Մկրտչի ձեռքով, Զաքարիայի պատվերով։ Կանոնագրքի այս օրինակը որոշ բարեփոխումների է ենթարկվել նույնինքն Զաքարիայի կողմից, որը կազմել է նաև նյութերի այբբենական ցանկը։ Գրիչը հիշատակարանում նրան անվանում է «ախոյեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ տէր Զաքարիայ, Լովայ քաղաքի աւագ քահանայն, որդի տէր Գասպար նոյն քաղաքի աւագիրիցու» և ապա խնդրում է հիշել «զյառաջ անուանեալ տէր Զաքարիայն, որ բազում աշխատութեամբ և ջատագովութեամբ պարզեաց և սրբագրեաց զկանոնս, և յաւելեալ ի նոյն ցանկ գեղեցիկ նորայարմար ի վերայ այբուբենի, վասն դիւրաւ գտանելոյ կամեցողին զխնդրելին իւր» (էջ 290բ և 291բ)[1]։

Գիտական նյութերի որոնմանն ու հավաքմանը հետամուտ է եղել Զաքարիան իր գործունեության դեռևս վաղ շրջանից։ Այդ մասին է վկայում Երևանի Պետ. Մատ. 6731 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1614 թ. Լվովում Գրիգոր Տոմաժիրսկու ձեռքով՝ «ի վայելումն տէր Զաքարիայի սրբազան քահանային, և յիշատակ ծնօղաց նորին՝ տէր Գասբար աւագիրիցուն և մօրն, և ամենայն արեան մերձաւոր ազգականաց» ևն, ինչպես նշում է գրիչն իր հիշատակարանում (էջ 187բ)։ Այս ձեռագիրը պարունակում է Բարսեղ Կեսարացու Վեցօրյան և տոմարագիտական բազմազան նյութեր (Դավիթ Ջեյթունցի, Հակոբ Ղրիմեցի, Անանիա Շիրակացի, Հովհաննես Երզնկացի, Առաքել Սյունեցի, Սարգիս փիլիսոփա ևն ևն)[2]։ Նմանապես՝ Զաքարիան 1637 թ. գտնվելով Երուսաղեմում, տեղի Ս. Հակոբա վանքում ընդօրինակել է տվել մի հարուստ ճառընտիր, որն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում (ձեռ. № 202=հին № 512). Նրա հիշատակագրություններից մեկում գրիչը խնդրում է հիշել «զտէր Զաքարիա, Լովայ աւագէրէցն, որդի տէր Գասպար աւագիրիցուն, որ ետ գրել զայս սուրբ տառս մեծաւ տենչմամբ և եռանդասէր սրտիւ, որ հանդիպեցաւ սորին աւրինակի՝ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի դուռն Սուրբ Յակոբայ առաքելոյն, որ ետ աւրինակել» ևն[1]։

Զաք. Բեռն.ը մեռ. Լվովում 1652 թ. «ի թվականութեան Հայոց Մեծաց ՌՃԱ, և ամսեանն սեպտեմբեր ԻԴ, օրն չորեքշաբթի գիշեր, վաղճանեցաւ տէր Զաքարիեա Լովու աւագէրէց ծեր քահանայ, և փոխեցաւ առ Քրիստոս. բարերար ումն, այլ և էր շնորհօքն Աստուծոյ զարդարեալ առաքինութեամբ Հոգոյն Սրբոյն, և գնացեալ էր ի սուրբ Երուսաղեմ» ևն[2]։

Զաք. Բեռն.ի մասին գրել են հետևյալ հեղինակները (ժամանակագր. կարգով). Մ. Աղավնունի, «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 144։ Ն. Ակինյան, «Մովսէս Գ. Տաթևացի Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը», Վիեննա, 1936, էջ 249—250 և 265—266։ Gr. Petrowicz, „L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626—1686)", Roma, 1950, p. 15—16, 52. Г. П. Пінгір'ян, „З історії боротьби українських вірмен проти насильницького запроваждения унії в 30-х роках XVII ст.», *Науково-інформаційний бюлетень Архівного управління УРСР*, Київ, 1963, № 5, стр. 46—51. Г. П. Пингирян, «Новые материалы об армянских авторах антиунятского памфлета. изданного во Львове в 1630 г.» (հոդված՝ պատրաստության ընթացքում)։

---

1 Այս ձեռագրի մասին տես նաև «Կանոնագիրք Հայոց» (հրատ. Վ. Ա. Հակոբյանի), հտ. Ա, Երևան, 1964, էջ LXXIII—LXXIV։

2 Համա. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հտ. Բ, Երևան, 1970, էջ 382։

1 Տես՝ Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայ. ձեռագրաց...», հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 113։ Նույնը տես նաև՝ Մ. Աղավնունի, էջ 144։

2 Ղ. Ալիշան, «Կամենից», էջ 112։

ԲԵՌՆԱՏՈՎԻՉ (Նիկողայոս)
(Mikołaj Grzegorz Bernatowicz)

Լեհահայ գրական գործիչ, 1690—1752 թթ.։ Հիսուսյան ընկերության անդամ։ Թողել է լեհերեն գրված երկու աշխատություններ, որոնք 1726/27 թթ. տպագրվել են Վարշավայում։

* * *

1. Życie ś. Kajetana. Warszawa, druk. Koll. S. J. 1726.

2. Kazania panegiryczne. Warszawa, 1727.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Estreicher K.—„Bibliografia polska“, t. XII, Kraków, 1891, str. 505.

Petrowicz Gr.—„I copisti e scrittori armeni di Polonia nei secoli XV—XVIII“ (Estratto da Mélanges Eugène Tisserant, vol. III=Studi e Testi, 233), Città del Vaticano, 1964, p. 167.

ԲԵՌՆԱՏՈՎԻՉ (Քրիստափոր)
(Krzysztof Józef Bernatowicz)

ԺԸ դ. լեհահայ հասարակական և գրական գործիչ։ 1709 թ. ավարտել է Լվովի Թեատինյանների ուսումնարանը։ Վատիկանյան Մատենադարանի հայ. ձեռագրերից մեկի վերջում, 1725 թ., վկայության կարգով ստորագրում է՝ „Christophorus Ioseph Bernatowicz, alumnus pontificus, sacrae theologiae licentiatus, ecclesiarum S. Annae et S. Iacobi episcopi Nisibensis in monasteris Armeno Leopoliensi praepositus, publicus Sancta Authoritate Apostolica notarius“[1]. *Մեզ հայտնի է նրա ձեռքով իտալերենից լեհերեն թարգմանված հետևյալ գիրքը։*

* * *

Życie cnoty i cuda wielkiego w kościele Chrystusowym wyznawcy S. Jedrzeia Awellina, Zakonu Kleryków pod regula żyjących Teatyna z włoskiego ięzyka na polski przez X. Krzysztofa Jozefa Bernatowicza Alumna Papieskiego, S. Th. Licencyata, Proboszcza S. Anny y S. Jakoba w Monasterze Ormianskim Lwowskim, Notaryusza Apostolskiego przetłumaczone i do druku podane. Roku, którego w ciele ludzkiem żyć, heroicznych cnót nauczać i przedziwne cuda czynić zaczęło przedwieczne słowo 1772. we Lwowie w Druk. Brackiey SSS. Troycy.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Barącz Sad.— „Żywoty sławnych Ormian w Polsce“, Lwów, 1856, str. 78—79.

Estreicher K.— „Bibliografia polska“, t. XII, Kraków, 1891, str. 505.

[1] E. Tisserant, „Codices armeni Bybliothecae Vaticanae“, Romae, 1927, p. 86.

ԲԵՌՆԱՐԴՈՍ ԿԼԱՐԱՎԱԼԼԵՑԻ*
(Bernardus Claravallensis)

Հռոմեական եկեղեցու հայրերից, ծն. 1091 թ. Դիբիական Փոնտանայի գյուղակում (Բուրգունդիա, այժմ Ֆրանսիա) և մեռ. 1153 թ.։ Հիմնադիրն է Կլարա-Վալլիսի (Clervaux) *նշանավոր աբբայարանի։ Իր աշխատությունները գրել է լատ. լեզվով։ ԺԸ դ. Ղուկաս Խարբերդեցին նրա հեղինակություններից հայ.-ի է թարգմանել մի շարք քարոզներ և այլ երկեր՝ հավանաբար օգտագործելով նրա լիակատար երկերի այն հրատարակությունը, որը լույս էր տեսել Փարիզում 1690 թ., 2 հատորով։ Հայ. թարգմանությամբ հայտնի են նաև նրա գրչին պատկանող մանր հատվածներ։*

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* C. L. Clémencet, „Histoire littéraire de S. Bernard et de Pierre le Vénérable“, Paris, 1774. Abel Desjardins, “Etudes sur S. Bernard“, Dijon, 1845. *Մկ. Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 83—92։ Ղ. Ալիշան, «Շնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 174—179, 196—198, 276, 279—281, 484։*

* * *

Ա.—ԵՐԿԵՐ

1. Սրբոյն Բեռնարտոսի մեղրածորան վարդապետի և առաջնոյ աբբայի Քլառավալէնսիոյ վանացն գործ յերկուս հատորս բաժանեալ: Ընդ որոց առակցեցաւ զգործսն նոյնոյ հեղինակի, որք զի այլ նորին գրեանքն զերկնային և զաստուածային պարունակեն վարդապետութիւնս և զխրատս: Այժմ նորապէս ներտպիլով, նրբապէս վերաճանաչեալ, և սրբագրեալ, և վճիտ բաղդատմամբ և շարակարգութեամբ ըստ հաւատարմութեան հնագոյն օրինակաց առ բնածին ամբողջութիւնն կացուցաւ: Լայնատարած և առաւել յաճախ ցանկօք, որք ծառայեն երկուց հատորոց: *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2310, էջ 4ա—292բ:*

Բովանդակություն.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ: Զգալստենէ Տեառն և զվեց պարագայից նորին (սկ. «Այսօր, եղբարք, հռչակեցուք զգալուստն»): *Բան 1—7:*

Սկսի յառաջաբանութիւն երանելոյն Բեռնարտոսի աբբային զգովութեանց Մօրն կուսին: Պրակ 1—4:

Անմեղադրութիւն նորին, որ զայս աւետարանական տեղիս, որ զկնի այլոց մեկնչաց մեկնել կամեցաւ: Ի հսկման ծննդեան Տեառն: Բան 1—6:

Յաւուր ծննդեան Տեառն, զաղբերացն Ամենափրկչին: Բան 1—5:

Ի ծննդեան սրբոց մանկանց, զչորից շարունակ հանդիսից, այսինքն՝ ծննդեան Տեառն, և սրբոյն Ստեփաննոսի, Յոհաննու, և անմեղ մանկանցն: Բան 1:

Ի թլփատութեան Տեառն, զթլփատութենէ մերոյ, և զերրեակէ վկայութեան, զոր պարտիմք ունիլ: Բան 1—3:

Ի յայտնութեան Տեառն: Բան 1—4:

Յառաջնում կիւրակէի զկնի ութօրէից յայտնութեան զարարեալ սքանչելւոյ ի հարսանիս: Բան 1—2:

Ի դարձման սրբոյն Պօղոսի, որպէս օրինակաւ նորին պարտիմք դառնալ: Բան 1—2:

Ի մաքրութեան երանուհւոյ Մարիամու, զերրեակ ողորմութենէ: Բան 1—3:

Յեօթանասուն երրորդում: Բան 1—2:

Ի գլուխս պահոց, որպէս պարտիմք օծանել զգլուխս մեր, և զերեսս մեր լուանալ, [և զքառասնորդական պահոց]: Բան 1—7:

Զսրբոյ Պենետիքտոս աբբայի: Բան 1:

Յաւետման երանուհւոյ Կուսին: Բան 1—3:

Ի կիւրակէի ծաղկազարդի, զերից կարգաց հետեւողացն Քրիստոսի: Բան 1—3 (կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի):

Չորրորդ լուր օր պատժական շաբաթու, զչարչարանաց Տեառն: Բան 1:

Յընթրիսի (sic) *Տեառն, զմկրտութենէ, և զխորհրդոյ սեղանոյ, և զլուացմանէ ոտից: Բան 1:*

Յաւուր սրբոյ զատկին: Բան 1—3:

Ութնօրէնքում զատկի, զերից վկայութեանցն ի յերկինս և ի յերկրի: Բան 1—2:

Զխնդրողաց զերիս հացս: Բան 1:

Ի համբարձման Տեառն: Բան 1—6:

Ի տօնի պենտեկոստէի: Բան 1—3:

Ի ծննդեան սրբոյ Յոհաննու Մկրտչին: Բան 1:

Ի հսկման սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Բան 1:

Յաւուր տօնի նոցին: Բան 1—3:

ԶԴաւթայ և զԳողիաթու, և զհինգ քարանցն: Բան 1:

Զաւետարանական ընթերցմանէ, ուր Տէրն եօթն հացիւք կերակրելով զամբոխն յագեցուցանէ: Բան 1—3:

Ի ծննդեան սրբոյ Վիքթորինոսի մարտիրոսի, թաղեցելոյ ի վանս Առեմարեսթինոյ, նահանգի Դռեչենսիոյ, որ մեռաւ [ի] չորրորդ աւուրն մարտի: Բան 1—2:

Ի տօնի երանուհւոյ Մարիամու Մագդաղենացւոյն: Բան 1:

Ի վերափոխման երանուհւոյ Մարիամու: Բան 1—5:

Զերանուհւոյ կուսէն Մարիամու: Բան 1:

Ի ծննդեան երանուհւոյ Մարիամու. զջրմուղէ: Բան 1:

Ի տօնի սրբոյ Միքայէլի հրեշտակապետի: Բան 1—2:

Ի տօնի ամենայն սրբոց. զաւետարանական ընթերցմանէ: Բան 1—5:

Զանցմանէ սրբոյ Մաղաքեայ եպիսկոպոսի: Բան 1:

Զբանիցն Եսայեայ մարգարէին: Բան 1—5:

Ի տօնի սրբոյն Մարթինոսի, և զօրականացն հնազանդութեան ամենից սրբոց: Բան 1:

Զսրբոյ Կղեմէս պապէ և մարտիրոսէ. զերից ջրոց: Բան 1:

Ի հսկման սրբոյ Անդրէային առաքելոյն: Բան 1—2:

Զննջմանէ ջերմեռանդ Հիմպերթոսի կրօնաւորի: Բան 1:

Ի տեառնագրութեանն եկեղեցւոյ: Բան 1—6:

Վերջում մակագրված է. «Վերջն քարոզութեանց սրբոյն Բեռնարտոսի, թարգմանեցեալ ի Ղուկասու վարդապետէ Խարբերթացւոյ» (էջ 292բ):

Ձեռագիրը թարգմանչի ինքնագիրն է. միայն որոշ մասերում նկատվում է մի երկրորդ ձեռք:

Ձեռագրում ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ նշումը բացակայում է, ուստի և հայտնի չէ՝ սա միայն Ա հատորն է, թե Ա և Բ հատորները միասին են:

2. [Մեկնութիւն Սաղմոսի Որ բնակեալն է] *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2310, էջ 292բ—342բ։*

Սկզբում ունի «Յառաջաբանութիւն մեկնութեանն սաղմոսին՝ Որ բնակեալն է» *(սկ.* «Նկատեմ յաշխատանս ձեր, եղբարք, ոչ առանց մեծի ողորմածութեանն ըղձի, խնդրեմ զմխիթարութիւնն»)։

Բնագիրը բաղկացած է 17 հատվածներից, որոնք կոչվում են «Բան»։

Այս երկը ձեռագրում հաջորդում է Բեռն.ի նախորդ աշխատությանը, որի վերնագրում եղած նշումը, թե «ընդ որոց առակցեցաք զգործսն նոյնոյ հեղինակի» են, ցույց է տալիս, որ սա ևս նրա հեղինակությունն է։ Թարգմանիչը նույն Ղուկաս Խարբերդեցին է, և ձեռագիրը նրա ինքնագիրն է։

3. Մեկնութիւն Երգոց Երգոյն, արտադրեցեալ ի սրբոյն Բեռնարդոսէ Գլարավալլենսիոյ աբբայէ, թարգմանեցեալ ի լատինական բարբառոյ ի հայկական բարբառ ի Ղուկասու վարդապետէ Խարբերթացւոյ՝ ի զուարճութիւն և ի պայծառութիւն Հայկազնեան [ազգի], ըստ խնդրոյ Ղուկասու ողջի տիրացու Ստեփաննոսի Կոստանդնուպոլսեցւոյ, ի յիշատակ իւրն և ծնողացն, ի փառս ամենամեծին Աստուծոյ: *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 199, էջ 1—539։*

Այս գործը ևս բաղկանում է հատվածներից, որոնք կոչվում են «Բան»։

Վերջում՝ գրչի հիշատակարանը, որը բերում է նաև Թարգմանչի հիշատակարանը.

«Մեկնութիւնս այս որ է ի վերայ Երգոց երգոյն Սողոմոնի, մեկնեալ ի սրբոյն Բեռնարդոսէ գերազանց վարդապետէ և պանծալի եպիսկոպոսէ ի լատինական բարբառ, և ի լատինականէ թարգմանեցեալ եղև ի հայկական բարբառ ի Ղուկասու վարդապետէ Խարբերթացւոյ, արդեամբ և գոյիւք տիրացու Ստեփաննոսի նոտարի Կոստանդնուպոլսեցւոյ, յամի տեառն 1748-ին, և ի Հայոց Թուին ՌՃՂԷ-ին, ի նոյեմբերի ամսոյ 3-ին, ի փառս ամենամեծին Աստուծոյ, և ի պատիւ ամէնօրհնեցելոյ միշտ կուսին Մարիամու, ի վայելումն ազգիս Հայոց, և ի յօգուտ բանասիրաց։ Որք ընթեռնուք և թէ յօրինակէք՝ յիշեսջիք զվերոյ գրեալ թարգմանողս, և զսիրով սրտի խնդրողն գրգոյս, և որք յիշէք՝ յիշեալ լիցիք ի միւսանգամ գալստեան Փրկչին. ամէն։

Եւ վերստին գաղափարեցեալ եղև ձեռամբ անպիտան և մեղսամած Յոհաննէս չնչին դպրէ Կոստանդնուպոլսեցւոյ, յամի տեառն 1749, ի մայիսի ամսոյ 8-ին։ Մաղթեմ յիշել միով Հայր մերիւ, որ և յիշողքդ յիշեալ լիցիք ի Քրիստոս. ամէն»։

4. Աստուածային առն սրբոյն Բեռնարտոսի ջերմեռանդագոյն մտածութիւնք զթէութենէ մարդկային ճանաչման [թարգմանութիւն ի Ղուկասու վարդապետէ Խարբերդացւոյ]: *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1393, էջ 275—320։*

Սկ. «Ապա թէ ոչ գիրք զհոգւոյ»։

Բ.—ՀԱՏՎԱԾՆԵՐ

1. Վկայութիւնք Բեռնարդոսի Ֆռանկաց. «Թէ զչարչարանքն Քրիստոսի ի միտ ածեմք, նաև մեք դիւրաւ քաշեմք չարչարանք...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8233, էջ 132ա—132բ։*

2. Ի Բեռնարդոսէ ասացեալ. «Առաքինութիւնն աշխատութեամբ խնդրի, խոնարհութեամբ ուսուցանի և սիրով ստացեալ լինի...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2220, էջ 179բ—180ա։*

Տես նաև նույն մատ. ձեռ. № 1983 (էջ 28ա—29ա), № 1984 (էջ 21ա—22ա), № 7170 (էջ 66բ—68ա). Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1545 (էջ 40—42?)։

3. *(Անխորագիր)* «Յըսկման ծննդեան զերիս գործս և զխառնուածս արար այն ամենակարող հանդիսավենութիւնն յառեգման մարմնոյ մերոյ...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1960, էջ 15ա։*

4. Հրճուանք սրբոյն Պեռնարտոսի... «Յիսուս քաղցրիկ յիշողութիւն տըւող սրտի զստոյգ խնդութիւն...», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 512, էջ 231ա։*

5. Այցելութիւն Ե. սրբոյ կուսին: Աղօթք սրբոյն Բեռնարդոսի. «Առ քեզ համբառնամք զաչս մեր, թագուհի ամենայն ծագաց երկրի...», *Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1392, էջ 22։*

6. Աղօթք սրբոյն Բեռնարդոսի աբբայի, քաղցրաբան վարդապետի. «Եւ արդ համբառնամք զաչս մեր առ քեզ, ո՜վ թագուհի երկնի և երկրի, տիրամայր սուրբ Աստուածածին. զի դու միայն կարես արդարացուցանել զմեզ...», *տես հետևյալ հրատ. մեջ. «Գիրք հրաշից ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին, հաւաքեալ... ի հայր Զաքարիայ վարդապետէ Ակնեցւոյ» ևն, Վենետիկ, 1772, էջ 636—638։*

Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. հմայիլ № 30։

□ *ԺԸ դ. մի ձեռագրում հիշատակվում է* «Զգացումն Պեռնարտոսի ի բանահիւսութիւնն յաղագս ծննդեան Մարիամայ», *Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 512 (էջ 271ա)։ Բեռնարդոսից բազմաթիվ վկայակոչումներ՝ կան Երևանի Պետ. Մատ. № 4307 ձեռագրում, որ է* «Յառաջաբանութիւն և հաւաքումն սրբոց առաքինութեանց, որ է քաղուած սահմանեալ սրբոց հայրապետաց» *ևն։*

ԲԵՍԱՐԻՈՆ ԱԲԲԱՅ ԵՒ ԸՆԿ.
(Bessarion abbas et socii)

Եգիպտական անապատականներ, որոնք առհասարակ չեն հիշատակվում հայոց Հայսմավուրքներում։ Միայն Տեր-Իսրայելի Հայսմավուրքի 1834 թ. հրատարակության մեջ գտնում ենք հետևյալ հիշատակությունը՝ փետր. 7 ամսաթվի տակ. «Ի սմին աւուր ճգնութիւն սուրբ հօրն Բեսարիոնի, և աշակերտի նորա Դուլասայ, և սուրբ հօրն Ղուկասու յեքսինիկոս կղզին»: *Բայց, ըստ երևույթին, այս հիշատակությունը Հայսմավուրքի հրատարակիչ Գրիգոր Փեշտըմալճյանի կատարած հավելումներից է։*

Բեսարիոնի և ընկ. մասին հմմտ. «Վարք սրբոց հարանց», հտ. Ա—Բ, Վենետիկ, 1855 (տես անվանացանկը)։

ԲԵՐԴԱԿՑԻ
Տես՝ ՍԱՐԿԱՒԱԳ ԲԵՐԴԱԿՑԻ։

ԲԵՐԴՈՒՄԵԱՆ
Տես՝ ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ։

ԲԵՐԵՆԳԱՐ [-ԻՈՍ] ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ
(Berengarius Benedictinus)

Բենեդիկտյան վանական, որը ԺԱ դ. Փիսկանի (Fiscamnum, *այժմ* Fécamp, *Ֆրանսիայում) Բենեդիկտյան աբբայարանում վանական նոր սահմանադրություն է մշակել և, գնալով Անտիոք, կիրառության է դրել այն՝ տեղի Ս. Պողոսի լատինական վանքում, որը լոմբարդացի բենեդիկտյաններին էր պատկանում։ Մեզ հասել է պատմական այդ վավերագրի հայ. թարգմանությունը, որ 1179 թ. Հռոմկլայում կատարել է Ներսես Լամբրոնացին՝ Հերապոլսի հույն մետրապոլիտ Կոստանդնի գործակցությամբ։*

Կարծվում էր, որ այս թարգմանությունը լատիներենից է կատարվել, ինչպես կարելի է տեսնել ստորև նշվող հրատարակության լատ. անվանաթերթի վրա, և այլուր[1]*։ Այդ կարծիքը թյուրիմացաբար առաջացել էր նրանից, որ Լամբրոնացին բենեդիկտյան երկու տարբեր սահմանադրություններ է թարգմանել, մեկը՝ Բենեդիկտոս Նուրսիացունը, որ նա իրոք լատիներենից է թարգմանել, իսկ մյուսը՝ Բերենգարի սահմանադրությունը, որ հունարենից է թարգմանել։ Այս տարբերությունը նկատելի դարձնելու համար մենք այստեղ առաջ ենք բերում երկու հիշատակարաններ, որոնք վերաբերում են հիշյալ երկու սահմանադրությունների հետ միաժամանակ երեք այլ երկերի թարգմանությանը։*

1. Լամբրոնացու հիշատակարանը, որը մեզ հասել է Երևանի Պետ. Մատ. № 4947 ձեռագրով։ Այս ձեռագիրը պարունակում է Գրիգոր Ա պապի Տրամախոսության («Բանք

---

[1] *Այդ կարծիքին է եղել նաև Բ. Սարգիսյանը, «Մայր ցուցակ հայ. ձեռագրաց... ի Վենետիկ», հտ. Բ, էջ 1168։*

պատմողականք») և բենեդիկտյան երկու սահմանադրությունների թարգմանությունները։ Հիշատակարանը թեև զետեղված է Տրամախոսության թարգմանության մեջ, բայց խոսում է նաև մյուսների մասին[1].

«...Այսպէս և որ մեծ է ի սուրբս հայրս մեր ամէնհրջանիկ Գրիգորիոս՝ մեծանուն քաղաքին Հռովմայ եղեալ պապ, ընդ այլ գիրս բազումս զորս պաճուճարանս և խոր մտածութեամբ խաւսեցաւ, երեեցոյց և զվարս որք յԻտալիա փայլեցին սուրբ արք, և զժամանակս յորում էին և զտեղիս յոր եղեն։ ...Իսկ ապա ի հուսկ յետին ժամանակս ըստ թուոյ Հայոց վեցհարիւր և քսան և ութ ամի՝ (=1179 թ.) իմոյ Ներսէսի Տարսոնի եպիսկոպոսի ի մանկական հասակ ուսումնասիրութեան և բարեկարգութեան տենչանաւք շրջելով ի վանորայսն որք առընթեր մեծի քաղաքին Անտիոքայ՝ ի լեառն որ Ռասխանձիր կոչի յափն ծովուն, հիանայի ի տեսանելն զառաքինազարդ միայնութիւնն և զճգնութիւն Հռովմայեցի միաբանակեաց վանորէիցն, որ այժմ կոչին Փռանգք։ Եւ իբրև ընդ անընդել իրս սխրացեալ՝ հարցի ընդ ումն իմաստուն կրաւնաւոր որ ի Յունաց Բասիլ անուն՝ Ուստի՞ սոցա այսքան ուղղութեան կարգացս շնորհ, որով գերազանց գտանին այսաւր ձեզ և մեզ, պատասխանեաց՝ Ի Բենեդիքտոսէ (sic) երանեալ հաւրէն, զորոյ զվարսն պատմէ սուրբն Գրիգոր պապն։ Եւ ունի՞ս արդեօք զնոյն գիրս, ասացի։ Պատասխանեաց՝ Այո՛։ Եւ եբեր առաջի իմ. և իմ փոքր մի վարժ գոլով Հելլենացի գրոյն՝ ընթերցայ ասա անդ. և բորբոքեցաւ յիս ցանգութիւն աստուածային գրոցս թարգմանութեան։ Այլ զի ոչ կամէի անձամբ վճարել զգործն, խափանեցաւ յայնժամ. և թարգմանեցի զնորին Բենեդիքտոսի (sic) կարգ և զաւրէնս կրաւնաւորաց նոյնժամայն ի լատին լեզուէն ի փռանգ վանս սուրբ Պաւղոսի, որ ի քաղաքն Անտիոք՝ ի ձեռն հասակակից կրաւնաւորի միոյ ի նոցանէ Կիլամ անուն։ Իսկ ապա եկեալ ի վանսն որ Սիմանակլա կոչի հուպ Անարզաբոյ, յորում բազում գրեանք ի յունական գիրս աւանդեալ է, մանրամասնաբար խուզեալ գտի զայս գիրսս... առեալ գնացի ի Հայրապետական աթոռն՝ որ կոչի Հռոմկլայ յափն Եփրատայ, և կամաւք տեառն իմոյ կաթուղիկոսին Գրիգորոյ թարգմանեցի զսա և զՄեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու ի ձեռն առաքինի մետրապաւլտին Յերապաւլսի՝ Կոստանդեայ»։

2. Լամբրոնացու հիշատակարանը, որ գտնվում է Անդրեաս և Արեթաս Կեսարացիների «Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու» երկի վերջում[2]։

«Ես Ներսէս Նուաստս...։ Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք, և շրջելով յորս անդ վանորայք Հոռոմոց և Փռանգաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ. ուստի և քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտի սրբոյն Պօղոսի ի քաղաքի անդ զՄեկնութիւն Յայտնութեանս ի լունպարտ բարբառ, ի նոյն գիր՝ որով վարին Փռանգք, երկուց մեկնչաց արարեալ Անդրէի և Արետասայ, և փափագելով թարգմանել՝ ոչ գտի զոք որ յայսմ բարբառոյ ի հայս կարէր յեղաշրջել։ Ապա եղեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառնն՝ որ ի հիւսիսոյ կողմն անդր, ի մի վանորէիցն Հոռոմոց՝ որում անուն էր Բէթիաս, առ ումն արգելական միայնակեաց՝ որոյ անուն Բասիլ, կնքեալ գտի զցանկալին ի Հելլենացի բարբառ և ի գիր, ուղղաբան և վայելուչ, որ լեալ էր Աթանասի պատրիարգի նորին քաղաքի։ Եւ խնդրեալ աղաչանօք ի բարեմիտ առնէն՝ առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն, առ տէրն իմ կաթողիկոս՝ սուրբ Գրիգորիս, զոր ծանուցեալ՝ ուրախ եղև յոյժ, և հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապոլտին Յերապոլսի՝ Կոստանդեայ, որ անդ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանեաւ հանգչէր. և սկսեալ օգնականութեամբն Աստուծոյ և սրբոյ տանն՝ նա ի թարգմանել և ես ի գրել, վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեայց ուսումնասէր մանկանց զայս սքանչելի և աստուածային Յայտնութեանս մեկնութիւն։ ...Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս մեկնութիւն ի թուիս Հայոց ՈԻԸ (=1179 թ.), ի սուրբ և ի հայրապետական աթոռն՝ որ կոչի Հռոմկլայ» ևն։

Այս հիշատակարանների համադրությամբ պարզվում է, որ՝

ա. Լամբրոնացին 1179 թ. հետազոտական ուղևորություն է կատարել Անտիոքի կողմերում, այցելել է Ս. Պողոսի լատինական վանքը, որը բենեդիկտյաններին էր պատկանում, և հունական Բեթիաս վանքը։

բ. Լամբրոնացին Ս. Պողոսի վանքում լատ. բնագրով գտնելով Բենեդիկտոս Նուրսիացու սահմանադրությունը, որը հիշատակարանում անվանվում է «Բենեդիքտոսի կարգ և աւրէնք կրաւնաւորաց», այնտեղ էլ հայերենի է թարգմանում այն՝ տեղի միաբաններից Կիլամ անունով մեկի օգնությամբ։

գ. Ս. Պողոսի վանքը թեև ղեկավարվում էր Բերենգարի սահմանադրությամբ, բայց, երևում է, որ այդ սահմանադրության լատ. բնագիր չկար վանքում, այլ միայն նրա լոմբարդերեն բնագիրը, ինչպես և Հայտնության գրքի մեկնության միայն լոմբարդերեն թարգմանությունը, որովհետև վանքի բնա-

[1] Այս հիշատակարանը Երևանի ձեռագրից ծագած մի օրինակի հիման վրա հրատարակվել է Գ. Զարբհանալյանի կողմից, «Մատենագ. հայկ. թարգմ. նախնեաց», էջ 358—360։

[2] Տես սատ, հտ. Ա, էջ 874—875։

կից բենեդիկտյանները լամբրոնացիներ էին և իրենց լեզվով էին վարվում։

դ. Լամբրոնացին հունական Բեթիաս վանքում Բասիլ կրոնավորի միջոցով գտնում է Բերենգարի երկի հուն. թարգմանությունը, ինչպես և Հայտնության գրքի մեկնության հուն. բնագիրը, բայց չցանկանալով մենակ միջամուխ լինել հայ. թարգմանության գործին, թույլտվություն է խնդրում և ստանում՝ դրանք հետը տանելու Հռոմկլա։

ե. Լամբրոնացին նույն 1179 թ. մեկնելով Անտիոքից և հանդիպելով Անարբազայի մոտ գտնվող Սիմանակլա վանքը, ուր հուն. շատ ձեռագրեր կային, այնտեղ ձեռք է բերում նաև Գրիգոր պապի Տրամախոսության հուն. թարգմանության մի օրինակ և ուղղվում դեպի Հռոմկլա։

զ. Լամբրոնացին Հռոմկլայի կաթողիկոսարանում, նույն 1179 թ., Հերապոլսի մետրապոլիտ Կոստանդնի օգնությամբ հունարենից հայերենի է թարգմանում Գրիգոր պապի Տրամախոսությունը, Բերենգարի սահմանադրությունը և Հայտնության գրքի մեկնությունը։

Արդ՝ այս հիշատակարաններից պարզվում է, որ Բերենգարի սահմանադրության հայ. թարգմանությունը կատարվել է ոչ թե լատիներենից, այլ հունարենից։ Դրա ապացույցն է նաև այն, որ հեղինակի անունը հայ. բնագրում հանդես է գալիս Վրնջէր *ձևով, որը կարող էր առաջ գալ ոչ թե լատ.* Berengar(ius)*-ից, այլ հունարենի միջոցով ֆրնս.* Berenger*-ից, իբր* Βερεγγέρ[1]։

* * *

Սահման վանից զոր արարեալ է աշակերտաց սրբոյ հօրն Բենեդիկտոսի մանրամասն զգուշութիւն օրինաց նորին. զոր գրեաց վարդապետն Վրնջէր ի կողմ Իտալիոյ, ի վանքն Փիսկանի, և բերեալ յԱնտիոք՝ ուղղեաց ըստ այսմ օրինաց զհռչակաւոր ուխտ սրբոյն Պաւղոսի։ *Տես հետևյալ հրատ. մեջ.* „Statutum monasticum Benedictinum a magistro Berenger concinnatum a Sancto Narsete Lambronensi olim ex latina in armeniam linguam conversum, et recens latinae fidei rursus redditum“, Venetiis, 1880, p. 10—111. *(Հայ խորագիրը՝ «Սահման Բենեդիկտեան վանաց...», Վենետիկ, 1880, էջ 10—111)։*

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.

Ա. Ո՞պէս շինեն զվանս (սկ. «Ուր հանդերձեալ է միաբանութիւն եղբարցն բնակել ի միասին»)։

Բ. Թէ ո՞րպէս կարգաւորի եկեղեցի։

Գ. Թէ ո՞րպէս լիցի[ն] երգքն և ընթերցուածքն յեկեղեցին։

Դ. Ո՞րպէս առնէ քահանայն զաղաւթս ժամուցն յեկեղեցւոջն։

Ե. Ո՞ր ժամք են աղաւթիցն։

Զ. Թէ ո՞րպէս լինի ջաբիդրն աւր ըստ աւրէ, այսինքն՝ դատաստանն։

Է. Թէ ո՞րպէս կատարի պատարագն սուրբ։

Ը. Թէ ո՞րպէս կարգաւորի սեղանոյն տուն։

Վերջին գլխին հաջորդում են այլ կարգի հրահանգներ՝ առանց խորագրերի։

Հրատարակվել է Վենետիկի Մխիթ. Մատ. № 305 ձեռագրից (էջ 208ա—219ա), որն ընդօրինակված է Կոուց անապատի ձեռ. օրինակից։ Վերջինս, որն այժմ գտնվում է Երևանի Պետ. Մատենադարանում, ձեռ. № 4947 (էջ 163ա—198բ), ընդօրինակված է Ներսես (Ներսիսուկ) և Առաքել գրիչների ձեռքով և եղել է Հովհաննես Արքայեղբոր սեփականությունը։

Հայ. բնագրի լատ. թարգմանությունը՝ „Statutum monasticum a S. Patris Benedicti discipulis confectum, in quo regularum suarum observatio minutim describitur: Statutum hoc a magistro Berenger in Italia fuit exaratum in monasterio Fiscamense; qui inde digressus perrexit Antiochiam, ubi celebrem S. Pauli congregationem ad haec instituta direxit“ *տեսնել նույն հրատարակության մեջ, նույն էջերում։*

[1] *Հունարենի միջոցով լինելը հայտնի է անվան սկզբի* վ *հնչյունից (հուն.* β), *փխ.* բ*-ի (լատ.* b)*. իսկ ֆրանսերենից առաջ եկած լինելը երևում է անվան վերջավորությունից, որ է* -էր *(ֆրնս.* -er), *փոխ.* -ար *կամ* -արիոս*-ի (լատ.* -arius)։ *Պարզ է, որ խաչակիրների շրջանում Անտիոքի բենեդիկտյանների սահմանադրությունը թարգմանվել է հունարենի և նրա վերանորոգողի անունը բյուզանդական Արևելքում հայտնի է եղել ֆրանսիական* Berenger *ձևով ու գրվել է* Βερεγγέρ=Վրնջէր։

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ներս. — *«Ներսէս Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի», Վիեննա, 1956, էջ 285—289:*

Զարբհանալեան Գար. — *«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 730—731,*

Ղազիկեան Արս. — *«Հայկական նոր մատենագիտութիւն», հտ. Ա, Վենետիկ, 1909—1912, էջ 335:*

ԲԵՐԻԱՑԻ

Տես՝ ԱԿԱԿԻՈՍ ԲԵՐԻԱՑԻ:
ԴԱՒԻԹ ԲԵՐԻԱՑԻ [ԿԱՐԿԱՌԵՑԻ]:
ՀԱԲԻԲ ԲԵՐԻԱՑԻ:
ՅԱԿՈԲ ԲԵՐԻԱՑԻ ՅՈՎՍԵՓԵԱՆ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԵՐԻԱՑԻ:
ՍԱՐԳԻՍ ԲԵՐԻԱՑԻ ՍԻԳԱՋԱՆ:

ԲԵՐԻՏԱՑԻ

Տես՝ ԱՆԱՍՏՈԼԻՈՍ ԲԵՐԻՏԱՑԻ:

ԲԵՐԿՐԵՑԻ

Տես՝ ԵՂԻԱ ԲԵՐԿՐԵՑԻ կամ ԱՐԳԵԼԱՆԵՑԻ:

ԲԵՐՏՐԱՆԴՈՍ

Տես՝ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԲԵՐՏՐԱՆԴՈՍ:

ԲԷԱՏՐԻԿԷ ՀՌՈՄԱՅԵՑԻ
(Beatrix Romana)

Յաղագս վարուց և ելից սրբուհւոյն Պէաթրիքսեայ... յաւուր քսան և հինգերորդում յուլիսի ամսոյն: *Տես՝ ԱՌԱՔԱՍՏ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆ, գլ. ԻԲ:*

ՀԱՎԵԼՎԱԾ*

ԱԴԵԼՓԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Adelphius episcopus)

Ը դ. առաջին կեսում հիշատակվում է, Փոքր Հայոց հայազգի այլ եպիսկոպոսների հետ միասին, որպես հեղինակներից մեկը դավանական մի թղթի, որն ուղղված էր Բյուզանդիոնի Լևոն Գ. Կայսրին (717—741 թթ.)։ Մեզ համար տեղեկության միակ աղբյուրն այդ մասին՝ Վարդան Հունանյանի «Թուղթ քաջալերական»-ն է, որի ԺԲ պրակում գրված է. «Ի նոյնում ժամանակի եպիսկոպոսունք Փոքրին Հայաստանի՝ Ոտրիոս, Ակակիոս, Յոհաննէս, Ադէլփիոս (sic), *Որմզդայ և Ղունկինոս գրեցին առ նոյն կայսրն (Լևոն Գ), և ի միջի այլոց հաւատոյ իրաց և զայս նախայարեցին. 'Նաև զուրբ հարսն որք ի Քաղկեդոն ժողովեցան, իբրև զնոյնս ՅԺԸ հարսն պատուեմք. քանզի ոչինչ յաւելեալ նոցա դաւանութեանն, դատապարտեցին զչարախօս բերանն'»*[1]*։*

ԱԼԹԵՐԻՈՍ? (Լաւրենտիոս)

(Laurentius Altherius?)

Անծանոթ հեղինակ, որի մի երկի հայ. թարգմանությունն ունենք ԺԸ դարից։

* * *

Համառօտ տեսաբանութիւն հօրն Լաւրենտիոսի Ալթերեայ։ Բացատրութիւնք ինչ ի վերայ տեսանելեաց։ *Կլուժի* Muzeul Ardelean, ms. № 1077.

Ձեռագիրը ԺԸ դ. գրչություն է։ Բաղկացած է 100 էջերից։ Մակլերը, որ նկարագրել է այս ձեռագիրը[1]*, նրա հեղինակի մասին գրում է հետևյալը.*

„Il s'agit peut-être ici du *Լաւրենտիոս սարկաւագ* (diacre Laurentios) ou *Լօրենտիոս*, mentionné dans le grand catalogue des manuscrits arméniens de la Bibliothèque des PP. Mkhitharistes de Vienne, par le P. Dashian et qui figure dans le *Յայսմաւուրք*. — Pour moi, la lecture d'Althéri est douteuse. On pourrait lire: Alfieri où Alféri".

ԱՄՈՆ ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ

(Ammonius Adrianopolitanus)

Այս հեղինակից երկու հատվածներ են պահպանված Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց» գրքում։

* * *

1. Ամոնի եպիսկոպոսի Անդրիանուպոլսի. քանզի ասաց և սա ուրեմն յաղագս Աստուծոյ Բանին. «Իսկ եթէ ինքն Աստուած

---

* *Բազմաթիվ նյութերից տալիս ենք միայն մի քանի կարևորները։*

1 *Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», հտ. Ա, Վիեննա, 1895, էջ 109։*

1 F. Macler, „Rapport sur une mission scientifique en Transylvanie (Sept.—Oct. 1934). Manuscrits arméniens de Transylvanie", Paris, 1935, p. 48, № XXXVI.

բնութեամբ գոլով որպէս Աստուծոյ միածին Որդի...», *տես՝ «Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի», Կ. Պոլիս, 1717, էջ 211։*

2. Եւ ի վերայ բերէ այսոցիկ. «Ահա ցուցի զամպարշտութիւն յոր անկանին Արիանոսքն...», *անդ, էջ 211։*

Սույն հատվածների հուն. բնագիրը՝ „Ἄμμωνος ἐπισκόπου Ἀδριανουπόλεως. Ἔφη γὰρ που καὶ αὐτὸς περὶ τοῦ Θεοῦ Λόγου“ (*սկ.* „Εἰ δὲ αὐτὸς Θεὸς τὴν φύσιν ὑπάρχων...“) *և* „Προσεπάγει δὲ τούτοις“ (*սկ.* „Ἤδη μὲν ἔδειξα τὴν ἀσέβειαν, ᾗ περιπίπτουσιν οἱ Ἀρειανοί...“) *տես՝* J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. LXXVI, Parisiis, 1859, p. 1213.

ԱՆԱՆՈՒՆ ՔԵՐԱԿԱՆ

Հեղինակ քերականական երկու մանր աշխատությունների, որոնք նվիրված են Արիստակես Հռետորի և Գեորգ Սկևռացու երկերի մեկնությանը։

* * *

1. Արիստակիսի Բառագրոցն քաղեալ և այս վասն լծորդութեան. «Եւ այս են առաջին լծորդութիւնք՝ **բեն**, **մեն**, **պէ**, **փիւր**: Եւ սոքա ի բառից բանին. **անբիծ**, **ամբարտաւան**...», *տես՝ Լ. Գ. Խաչերյան, «Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը» են, էջ 366—371։*

2. Յաղագս վանկի և փաղառութեանց և հեգի և հասարակ շաղաշարաց և բառի, ասացեալ սուրբ հօրն Գէորգեայ և խրատ կէտիւք բաժանման հեգիցն. «Երեսուն և վեց գիրս բովանդակ նիւթ է խօսից...», *անդ, էջ 371—374։*

Հրատարակվել են Երևանի Պետ. Մատ. № 2382 ձեռագրից (էջ 261բ—271բ), որը 1403 թվականից է։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչերյան Լ. Գ. — *«Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում», Երևան, 1962, էջ 194—204 («Անանուն»)։*

ԱՆՏԻՈՔՈՍ ՊՏՂՈՄԱՅԵՑԻ*

(Antiochus ep. Ptolemaidis)

Փյունիկեի Պտղոմայիս քաղաքի եպս.։ Կ. Պոլսում համբավ ձեռք բերեց որպես քարոզիչ-հռետոր և մեռ. մոտ. 408 թ.։ Այս հեղինակից մեզ հայտնի են հայ. թարգմանությամբ դավանաբանական երկու հատվածներ։ Դրանցից առաջինը գտնվում է Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց» գրքում, որը Ը դ. թարգմանություն է՝ Ստեփանոս Սյունեցու ձեռքով։ «Պարապմանց» գրքի ձեռագրերում այս հեղինակի անունը մեծ մասամբ աղավաղված ձևեր է կրում (Աղոքտոս, Ատոքտոս, Առոքտոս, Անադիոքոս, Անտիքոր)[1] *և այդպես աղավաղված էլ կա նաև «Պարապմանց» գրքի տպագրության մեջ։ Երկրորդ հատվածը, որը գտնվում է Քաղկեդոնի ժողովի գործերում (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1777), ԺԸ դ. թարգմանություն է՝ Գեորգ Մխլայիմի ձեռքով։*

* * *

1. Ատոքտոսի (sic) եպիսկոպոսի. «Զոր երեկ անարատ ծննդեամբ փրկչին...», *տես՝ «Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի», Կ. Պոլիս, 1717, էջ 210։*

Հուն. բնագիրը՝ „Ἀντιόχου ἐπισκόπου“ (*սկ.* „Ὃν χθὲς ἀχράντοις λοχείαις σωτῆρα ἡμῖν ἡ ζωοτόκος...“) *տես՝* J.-P. Migne, „Patrologiae cursus completus“, ser. gr., t. LXXVI. Parisiis, 1859, p. 1213.

2. Անտիոքոս եպիսկոպոսին Պտողեմայիսոյ. «Մի՛ շփոթեր զբնութիւնսն և մի՛ հիանայր ընդ տնօրէնութիւնն...», *Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1777, էջ 249ա։*

---

* *ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿ.* O. Bardenhewer, „Geschichte der altkirchlichen Literatur“, Bd. III, Freiburg i. B., 1912, S. 363. B. Altaner—A. Stuiber, „Patrologie“. Freiburg—Basel—Wien, 1966, S. 331. P. Batiffol, „La littérature grecque“, 4e éd., Paris, 1901, p. 250—251.

1 *Այդպես էլ մեր Ա հատորում նշված էր ԱԴՈԿՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ անունով (էջ 1172, տող 4—15)։*

Հուն. բնագիրը՝ „᾿Αντιόχου ἐπισκόπου Πτολεμαΐδος“ (*սկ.* „Μὴ συγχέῃς τὰς φύσεις...“) *տես՝* J. D. Mansi, „Sacrorum conciliorum nova et amplissima collectio“, t. VII, Florentiae, 1762, p, 469. *Նաև՝* J.-P. Migne, „Patr.“, ser. gr. t. LXXXIII, Parisiis, 1859, p. 205.

ԱՌԱՔԵԼ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ

Թարգմանիչ ԺԴ դ.: Նախիջևանի ունիտորներից: 1335 թ. լատիներենից հայերենի է թարգմանել Պետրոս Արագոնացու կազմած «Գիրք Դատաստանաց և Կանոնաց» *ժողովածուն, ավելի ճիշտը՝ վերանայել է այդ գրքի արդեն գոյություն ունեցող թարգմանությունը: Այս ժողովածուի առաջին թարգմանությունը Հակոբ Քռնեցի Թարգմանի ձեռքով էր կատարվել 1331 թ. և կրում էր* «Գիրք Դատաստանաց հաւաքեալ ըստ կանոնաց եկեղեցւոյն Հռոմայ» *խորագիրը (սկ.* «Տէր Յս., թագաւոր խաղաղարար և քահանայապետ գթած»)[1]. *այս թարգմանությունից հայտնի են բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. №№ 2495 և 484: Ըստ երևույթին՝ Հակոբ Քռնեցու թարգմանությունը համարվել է անբավարար և այդ պատճառով Պետրոս Արագոնացու խնդրանքով Առ. Նախիջևանցու կողմից հիմնովին վերանայման է ենթարկվել՝ ինչպես պարզվում է երկու թարգմանությունների համեմատությունից: Այս երկրորդ թարգմանությունը ներկայացնող օրինակներ են Ջմմառի Մատ. ձեռ. № 184=հին № 261 և № 251=հին № 258. Նրա խորագիրն է՝* «Գիրք Դատաստանաց և Կանոնաց, թարգմանեցեալ ի լատին լեզուէ ի հայ բարբառ, ի նուաստ[1] եղբայր Պետրոսէ ի կարգէն Եղբարցն քարոզողաց, միջնորդութեամբ Առաքել վարդապետի ի մեր զարմէ՝ նոցին դպրութեան հետևողի» *(ձեռ. № 184) կամ՝* «Գիրք Դատաստանաց և Կանոնաց, թարգմանեալ ի լատին լեզուէ ի հայ բարբառ, նպաստաւորութեամբ ֆրա Պետրոսի ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի, միջնորդութեամբ Առաքել վարդապետի...» *(ձեռ. № 251): Վերջում կա թարգմանչի հիշատակարանը.*

«Կատարեցաւ շնորհիւն Աստուծոյ Գիրք Դատաստանի և Կանոնաց...: Հաճոյ լիցի պատուական և հոգևոր հօրն, էպսկոպոսի և մեծ դիտապետին Հայոց և այլոց առաջնորդաց՝ այս փոքրիկ և երանգ երանգ ընծայս ընդունիլ ի փանաքի Բանին սպասաւորէ եղբարցն Դոմինիկոսի՝ ի քարոզողաց կարգէն...: Թարգմանեցաւ գիրս՝ ձեռամբ ապիկար Առաքելի Բանի սպասաւորէ յամի մարդեղութեան տեառն մերոյ Յս.ի Քս.ի 1335 ի Նախիջևան քաղաքի: Աղաչեմ յիշել» են (ձեռ. № 184):

---

1 *Հմմտ.* M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum...“, Bernae, 1960, § 463.

1 *Կարծում ենք, որ օրինակներից մեկում եղած այս ի* նուաստ *բառը գրչի վրեպ է և պիտի լինի* նպաստաւորութեամբ, *ինչպես է մյուս օրինակներում:*

ՑԱՆԿ ԲՆԱԳՐԵՐԻ ՍԿԶԲՆԱՏՈՂԵՐԻ

Արաբական սև թվանշանները ցույց են տալիս էջերը, իսկ սպիտակները՝ տողերը: Փակագծերի մեջ առնված բառերը ցույց են տալիս փակագծից առաջ գտնվող բառի այն տարբերակները, որոնք պատահում են տարբեր տեղերում:

Ա.

Աալուսան՝ հուսնիւ խուսուֆ — 1227 *30։*
Աբաբիթոն՝ որ է ֆարֆիոնն — 1226 *19։*
Աբագուք՝ Abacuch — 1214 *35։*
Աբաթովթ՝ անշէն — 1206 *14։*
Աբաթովթ՝ շէնսիզ — 1219 *38։*
Աբախա՝ հայր տեառն կամ կամք տեառն — 1201 *14։*
Abactor pecorum — խաշնավար, խաշնատար, խաշնագող — 1216 *6։*
Աբանդ՝ խապան գաւառն Հայոց — 1231 *18։*
Աբարբիոն։ Այս անուն տնկաբանական — 1205 *44։*
Աբբահայր՝ փատրէ ապաթէ — 1216 *35։*
Աբբայ՝ ադալարընըկ աթասը — 1219 *27։*
Աբբայ կամ աբբայ հայր՝ աբբայ, աբբաս — 1201 *27։*
Աբբայ՝ հայր — 1235 *25։*
Աբբայ՝ մեծ հայր — 1187 *41.* 1192 *23.* 1195 *20.* 1214 *29։*
Աբբայ՝ պապա, կրօնաւորլարըն ըզնաւորլարըն պաշը — 1223 *31։*
Աբբաս կամ աբաս — 1201 *10։*
Աբգար հաւատաց ի Քրիստոս — 1067 *14։*
Աբեղայ՝ կրօնաւոր կամ մոնոզոն — 1194 *6։*
Աբէլ Թամմանեան ծոց — 1230 *18։*
Աբիոն որ է աֆիոն — 1227 *44։*
Աբհուլ՝ ցրթնի պտուղ — 1225 *24։*
Աբոլ՝ ցրդնի պտուղ — 1226 *2։*
Աբսիդիոսն՝ է խոտ իմն — 901 *45.* 1205 *7։*
Աբսինթիում՝ է խոտ իմն — 1236 *25։*
Աբրահամ, Աբէլի աստուածպաշտութեամբ — 1196 *43։*
Աբրահամ, Ահարոն, Ամբակում, Աղեքսանդր — 1186 *39։*
Աբրահամ է առաջին օրինակ հաւատոյ — 1204 *15։*
Աբրահամ, հայրն հաւատոյ, յորժամ կամէր — 1307 *40։*
Ագաթափարթ՝ որ է Մծբին — 1231 *30։*
Ագահ՝ անհագ — 1194 *37։*
Ագահ՝ ընչասէր, արծաթասէր — 1198 *10։*
Ագահութիւն՝ avaritia — 1213 *18։*
Ագահութիւն՝ է ըստ սեռականին — 1204 *33։*
Ագահութիւն՝ է մեղք մահկանացու — 1203 *26։*
Ագանիլ՝ մէկտեղ կենալ — 1189 *18։*
Ագանիլ՝ տեղ մը իջնել — 1195 *7։*
Ագանիլ՝ օթեւանիլ կամ օթեւանս առնել — 1198 *9։*
Ագըրգարհա՝ է սա իր ինչ ի դեղորէից — 1202 *37։*
Ագի՝ պոչ, դմակ, ձեթ, տուտն — 1193 *35։*
Ագիլ՝ իփրէտմէնտ — 1224 *26։*
Ագուգայ՝ այն տեղին յորմէ ջուրն — 1197 *5։*
Ագուան եւ գայլագուան բարուքն են երկշոտք — 902 *4.* 1205 *11։*
Ագո՝ քաղցու կամ մեղր և կամ միս — 1206, *2։*
Ագրակէզ՝ խոտատանծ — 1205 *29։*
Ագցան՝ ռամկ. քէլփէթին — 1197 *12։*
Ադամ՝ երկիր կամ երկիր կոյս — 1207 *3։*
Ադամ՝ երկիր կամ կոյս — 1207 *46։*
Ադամ որ է երկիր — 1207 *47։*
Ադամ ստեղծեալ ի դաշտն Քեբրոնի — 1015 *15։*
Ադին սաէ դրախտն եւ սարաս որ է նման — 1425 *39։*
Ադոնիայի՝ տէր, տերանց տէր — 1191 *23։*
Ազատ՝ էզատ, ազատական, զերծ — 1194 *45։*
Ազատորեար՝ այսինքն ազատ արք արհազունք — 1202 *31։*
Ազգի ազգի տեսիլք մոլեգինք — 1364 *2։*
Ազգիս Հայոց սա վարժարան — 1063 *47։*
Ազդմամբ խնամոց ամենակալ Հոգւոյն — 290 *30։*
Ազէր՝ հուր, աթէշ, նար — 1210 *28։*
Ազըլ քալպ՝ որ է կատղած շունն — 1227 *2։*
Ազովտոս՝ Ղազա — 1231 *25։*
Աթէշ փարասի — 1227 *10։*
Աթխար՝ վաղամեռուկ — 1226 *9*
Աթպանայ՝ որ է լապլապ — 1228 *20։*
Աթրիլալ՝ այիտրի լալ՝ այիթրի լալ — 1229 *24։*
Ալբաթտայ ռահիմ ռահման — 979 *38։*

Ալիֆ՝ ուսումն բանագրաց — 1207 39։
Ալ ղանայ բոյարսան դաստն — 979 11։
Ալմասն շատ ցեղ է — 1229 7։
Ալուսան՝ որ է ալուսանք — 1226 28։
Ալֆ՝ ուսումն բանագրաց — 1207 40։
Ախտաչեր՝ երան — 1236 32։
Ածանցական՝ յայլմէ ածեալ — 1181 42։
Ած՝ առած, կատարած, կազմած, ողորմած — 1197 45։
Ածել՝ տանիլ, բերել, զարնել, դորեցնել — 1195 14։
Ակակիայ՝ եւ իւր փոխանն բռամարն է — 1227 20։
Ակայից յիշատակ զիա՞րդ արդեւք — 1359 43։
Ականջ դրէք եւ լսեցէք — 1055 18։
Ակնառութիւն երեսաց, ատելութիւն — 1430 21։
Ակռայեկս հալ մի չունի — 1335 16։
Ակռաներս հալ մի չունի — 1335 6։
Ահա այժմ նորահրաշ տոշորեցան — 287 27։
Ահա բաղձամ քեզ ցանկալի — 2 7. 40 41. 41 4. 58 35։
Ահա զարունն եկեալ եհաս (էհաս) — 1088 25. 1134 29. 1144 3։
Ահա եկեալ [է] զարուն — 175 9։
Ահա եհաս ինձ օր մահու մարմնոյս նիւթական — 92 31։
Ահա եղեւ օրհնեալ զարուն 983 43. 984 17, 23, 26, 30։
Ահա մեծ եւ անճառելի քաղցրութիւն — 74 29։
Ահա մեծ լեառն եւ ահագին — 2 8. 3 14. 41 30, 36։
Ահա մերկացաւ ուռն վաղակուոր — 908 4. 912 27։
Ահա մերկացաւ վաղակուորն ի պատենից — 910 18։
Ահա մի ծառ տեսի ծաղկեալ — 11 30։
Ահա մօգք յարեւելից եկին — 952 36, 42։
Ահա յառաջագոյն ծանուցեալ — 300 16։
Ահա վասն ահի եւ երկիւղի Աստուծոյ — 291 25։
Ահա ցուցի զամպարշտութիւն — 1491 5։
Ահեղ Աստուած եւ անսահման — 1090 20։
Ահեղ գուշմամբ ուռն ի ձեռին — 1088 37. 1102 26։
Աղաղական ձայն արձակեմ լալագին, լալագին — 97 44։
Աղաչեմ զքեզ. ընթերցի՛ր՝ որ զքրիստոնէական — 259 38. 260 7, 12, 16։
Աղբիւրն կենաց — 1324 36։
Աղեքսանդր թագաւոր որդի էր բնութեամբ Սոփր.— 851 32։
Աղեքսանդրոս դատաւոր Նիկոմիդայ — 1247 3, 13, 17։
Աղիս՝ կղմինդր — 1235 2։
Աղիփ՝ ուսումն բանագրաց — 1207 39։
Աղիփ՝ ուսումն նշանագրաց — 1206 37։
Աղիքան ալմիշ բայղայի դուլդուր — 980 2։
Աղնա ախլ էյիլէ բէմի — 1139 31։
Աղօթք՝ աղօթքլար, եանի եպատէթլէր — 1223 26։
Ամաչեսցէ Թէոդորիտոն եւ նմանք նոցա — 232 5։
Ամբարտաքշն (ամբարտաքաղն)՝ ջահակրոն — 1209 9. 1210 21։
Ամենաբարեպաշտ եւ բարեյաղթող — 291 22։
Ամենազով գունդն սրբազան — 137 12. 1279 13։
Ամենագովելոյ եւ փառաւորելոյ եւ աստուածաշնորհ — 254 6, 26։
Ամենազօր անմահիցն արքայ — 143 19։
Ամենազօր Աստուած Սուրբ Հոգին — 144 2. 1386 9։
Ամենազօր Որդին միածին — 120 16։
Ամենազօր տէր Աստուած Հոգի — 135 12։
Ամենազօր տէր թագաւոր — 985 25։
Ամենախնամ Հայրն երկնաւոր — 140 12։
Ամենակալ անարատ Աստուած, անսկիզբն Հայր — 1381 40։
Ամենակալ արքայն երկնաւոր — 120 26։
Ամենակալն Աստուած Յիսուս Քրիստոս — 1304 38։
Ամենայն ազգք քրիստոնէից — 283 22։
Ամենայն աստուածային բանք — 81 2։
Ամենայն աւետարանչացն ձայն — 1354 23։
Ամենայն բանականութեան անկ եւ պատշաճ է — 298 1։
Ամենայն բան ջանիւ — 290 8։
Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգտակարք — 1352 11։
Ամենայն գործ (գործս), ո՞վ սիրելի, եւ ամենայն բան — 1368 2, 16։
Ամենայն էիցս բնութիւն բարի — 852 27։
Ամենայն ժամանակ (ժամանակք) ընդունելի է — 1438 14. 1439 36։
Ամենայն իմաստութիւն ի Տեառնէ — 369 49։
Ամենայնի յոյս վախճանի — 945 10։
Ամենայն ինչ որքան ազնուագոյն է — 1303 24։
Ամենայն մարդիկք բնութեամբ ցանկան գիտել — 823 40։
Ամենայն որ ինչ զգեստաւորելոյ է — 1376 7։
Ամենայն որ սիրիցէ — 1089 2. 1102 15։
Ամենայն ուրեք ամենայն իրիք ժամանակ — 370 9։
Ամենայն պատճառ նախկին է — 846 38։
Ամենայն փառք մարդոյ (մարդոց) դատարկ — 38 37. 39 4, 9։
Ամենեցուն ճարտարապետն Աստուած — 674 1, 9։
Ամենեքեան ի մի բերան — 135 39։
Ամենեքեան որք սիրելեացն — 1359 3, 21։
Ամէն՝ ամենաժողով տօն, ամենաթագաւոր, ամէնաճեցուն — 1197 19։
Ամէն առտու կ՚ելլաս սէհրան — 743 5։
Ամուրն, այսինքն որ է երկաթն — 1080 11։
Ամպ լուսոյ հրածին, ցօղ քո քաղցրագին — 55 39, 45։
Ամս յետնոց ժամանակի — 966 14։
Այարիճ, որ է ըրիղանիս — 1226 39։
Այրէն մինչեւ ի Քէն, Այրէն մինչեւ ի Քէն գոհանամ ես — 3 15։
Այրէն մինչեւ ի Քէն, Այրէն մինչեւ ի Քէն զովեմ քանի յիմ լեզուէն — 16 35։
Այրէն մինչեւ ի Քէն զանգատ անեմ ես — 16 30։
